ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂ ՍԻՔՈՅՏԵՐՈՎ

Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն

ՅՈՀԱՆ ԳԱԼԹՈՒՆԳ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Սույն գիրքը հրատարկվել է Եվրոպական Միության «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնություն» (The European Initiative for Democracy and Human Rights / EIDHR) ծրագրի օժանդակությամբ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Դեպի նոր առաջնորդություն» ծրագրի շրջանակներում:

Հրատարակության բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Հրատարկության բովանդակությունը չի կարող մեկնաբանվել որպես Եվրոպական Միության տեսակետների արտացոլում:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն

ՅՈՀԱՆ ԳԱԼԹՈՒՆԳ

Սևակ Լալայանի ընդհանուր խմբագրությամբ անգլերենից (գերմաներենից) թարգմանեց ՄԶՄԿ փորձագետների խումբը

Խաղաղություն խաղաղ միջոցներով.
խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն

Հեղինակ՝ ՅՈՀԱՆ ԳԱԼԹՈՒՆԳ

Գիրքը թարգմանվել է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության փորձագիտական խմբի կողմից՝ Սևակ Լալայանի ընդհանուր խմբագրությամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի կողմից հաստատված է որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար (հրաման № 20, 10/05/2005թ.):

«Խաղաղություն խաղաղ միջոցներով» գիրքը գաղափարների, տեսական ու ենթադրական մոտեցումների լայն համայնապատկեր է և ուղղված է խաղաղության կերտման խնդիրներին՝ կենտրոնանալով խաղաղ միջոցներով խաղաղարար գործողությունների վրա: Այս աշխատությունը նախատեսված է խաղաղության, միջազգային հարաբերությունների, սոցիոլոգիայի, հոգեբանության, տնտեսագիտության և մշակույթի ասպարեզների ուսանողների, ինչպես նաև հակամարտությունների կարգավորման և խաղաղարար գործընթացներում ընդգրկված անձանց համար:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
www.ichd.org

Երևան – 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայերեն հրատարակության նախաբան .....1.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. խաղաղության տեսլականները 21րդ դարի համար 10

ՄԱՍ I. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1 Խաղաղության ուսումնասիրություններ. Իմացաբանական հիմքը 23

2 Խաղաղության ուսումնասիրություններ. որոշ հիմնարար պարադիգմներ 47

3 Կին : Տղամարդ = Խաղաղություն : Բռնությո՞ն.....73

4 Ժողովրդավարություն : բռնատիրություն = խաղաղություն : պատերա՞զմ.....89

5 Պետական համակարգը՝ դիսոցիացված, ասոցիացված, համադաշնային, դաշնային, ունիտար, թե՞ անհույս բան է 107

ՄԱՍ II. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1 Հակամարտության ձևավորումը 124

2 Հակամարտության կենսացիկլերը 141

3 Հակամարտության փոխակերպումներ.....154

4 Հակամարտությունների միջամտություններ 176

5 Հակամարտությունների ոչ բռնի փոխակերպում 193

ՄԱՍ III. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1 Զարգացման տեսության և պրակտիկայի տասնհինգ դրույթները.....214

2 Վեց տնտեսագիտական դպրոցներ 233

3 Արտաքին դրսևորումները.....257

4 Էկլեկտիկ զարգացման տեսության տասը դրույթները 294

5 Զարգացման տեսություն. հարթություններից անդին մոտեցում.....308

ՄԱՍ IV. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1 Մշակութային բռնություն 325

2 Վեց տիեզերաբանություններ. իմպրեսիոնիստական ներկայացում.....350

3 Հետևություններ՝ խաղաղություն, պատերազմ, հակամարտություն, զարգացում 369

4 Հատկորոշումներ՝ հիտլերիզմ, ստալինիզմ, ռեյգանիզմ 398

5 Հետազննություններ. Կա՞ն, արդյոք, բուժումներ պաթոլոգիական տիեզերաբանությունների համար 416

ԱՄՓՈՓՈՒՄ. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն 436

Անգլերեն- հայերեն օժանդակ բառարան 453

Անգլերեն բնօրինակում օգտագործված ոչ-անգլերեն բառերի, արտահայտությունների, ինչպես նաև առանձին հասկացությունների բացատրական ցանկ.....458

ՏԻՏԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

(հայերեն հրատարակության առթիվ)

Հաճախ, երբ կարդում ենք Արիստոտել ու Սպինոզա, Դոստոևսկի ու Ֆրոյդ, ափսոսում ենք, որ տիտանների ժամանակն անցել է, որ չենք ունեցել նրանց հետ շփվելու, մտքերն ավելի բացելու, «իսկ ի՞նչ կլինի, եթե…» անվերջ հարցը տալու հնարավորություն: Ու տիտանները թվում են միայն անցածին պատկանող, իսկ ներկայում միայն պարզ պրոֆեսիոնալներն ու ռացիոնալ-սոցիալիստներն են:

Այս մտայնությունները կցրվեն, եթե ծանոթանաք Յոհան Գալթունգի հետ: Նրա մտածողությունը մի իրապես նոր տարածություն է բացում ստեղծագործության համար՝ ընդհանրապես և խաղաղության մասին հետազոտություններում՝ մասնավորապես: Միգուցե բախտն ինձ իսկապես երես է տվել, սակայն ես չափազանց երախտապարտ եմ, որ հնարավորություն եմ ունեցել ոչ միայն Գալթունգի հոդվածներն ու գրքերը կարդալ, այլև դասախոսությունները լսել, անձնապես շփվել ու, հայերեն ասած, հետը մի բաժակ բան խմել:

Յոհան Գալթունգը նորովի է մոտենում այն ամենին, ինչ թվում է մեկընդմիշտ տրված: Նա կտրում-ձևում է հավերժությունը, չափում խաղաղությունն ու գնահատում նրա ավելցուկն ու պակասը, բաղդատում քաղաքակրթությունների աստվածներին և մեկնաբանում ժամանակակից քաղաքականության հիմնական մոտիվը՝ ամերիկյան արմատականությունը: Գալթունգի կարևորագույն հայտնագործությունը, թերևս, տրանսցենդի տեսությունն է, ընկալումը, որ հակամարտությունների համար կարող են լինել ոչ միայն զիջելու, նահանջելու կամ փոխզիջման գնալու պահանջ, այլև այնպիսի լուծումներ, որից գոհ և ուրախ կլինեն բոլոր կողմերն էլ: Խնդիրը միայն հակամարտությունների փոխակերպման և գիտակցման մակարդակի բարձրացման մեջ է:

Ներկայացվող գիրքը՝ «Խաղաղություն խաղաղ միջոցներով», որքան էլ թվում է վերնագրից, դժվար է դիտարկել որպես զուտ կոնֆլիկտոլոգիայի բնագավառի գիրք: Գալթունգի մոտեցմամբ, խաղաղությունը ոչ թե հակամարտության բացակայությունն է, այլ մի դինամիկ գործընթաց. «Խաղաղություն ունենք միայն այն ժամանակ, երբ ունենք հակամարտության ստեղծագործական տրանսֆորմացիա առանց բռնության կիրառման»: Այս գրքում Գալթունգը ներմուծում է մի նոր գիտություն, նոր մասնագիտություն՝ «խաղաղության ուսումնասիրություններ», ընդ որում, այն չի սահմանափակվում ոչ միջազգային հարաբերությունների, ոչ էլ կոնֆլիկտոլոգիայի (սոցիոլոգիական առումով) բնագավառներով, այլ ինտեգրացիոն մի մոտեցում է, որն ընդգրկում է մարդուց ու ընտանիքից մինչև Երկիր մոլորակ ու Տիեզերք, մինչև Օյկումենա և Կոսմոս:

Առաջին հայացքից նման գրքին ու գիտությանը ծանոթանալն անհնար է թվում: Եվ իսկապես, գիրք կարդալիս որոշակի գիտելիքներ են պահանջվում տարբեր գիտությունների բնագավառներում՝ համաշխարհային պատմությունից մինչև էնդոկրինոլոգիա, տարբեր կրոններից՝ «աբրահամականներից» (հուդայականություն, կաթոլիկություն, ուղղափառություն, իսլամ), մինչև ջայնիզմ ու սինտուիզմ, անգամ որոշակի մաթեմատիկական ձիրք՝ ընդհուպ

մինչև մատրիցների հետ գործողություններ, սակայն գիրքը շարադրված է այնպիսի կուռ տրամաբանությամբ, որ չունեցած գիտելիքներն ակամա հասանելի են դառնում: Միաժամանակ, պետք է նշել, որ այնպիսի պանթեիզմ՝ բնության պաշտամունք, ինչպիսին քարոզում է Յոհան Գալթունգը, դժվար է հանդիպել այլ ստեղծագործողների ու քարոզիչների մոտ: Թերևս, կա նաև որոշակի ակնածանք ու սուբյեկտիվ շեղում դեպի Մահաթմա Գանդիի անձն ու ուսմունքը: Սակայն Գալթունգը չի ժխտում այդ փաստը, և նրա ուսումնասիրած գիտությունը՝ խաղաղության մասին գիտությունը, չի կարող լինել զգացմունքներից զուրկ և զգացմունքներից դուրս:

Ընդհանրապես, Գալթունգը բարդ է գրում և շատ սեղմ, այդ պատճառով էլ խորհուրդ կտայի որոշ հատվածներ վերընթերցել, քանի որ մատուցվող ինֆորմացիայի ծավալը հսկայական է, մեթոդը՝ նոր և յուրօրինակ: Միաժամանակ, տեքստը լեցուն է աղյուսակներով, համեմատական գրաֆիկներով, սահմանումներով, ինչը կոտրում է թե՛ տեսության, և թե՛ շարադրման անընդհատականության սկզբունքը, առկա է դիսկրետություն և ֆորմալացում, բայցև կարևոր մեթոդական հնարք է առանձին հատվածների վրա ուշադրություն բևեռելու և տեսությունը դյուրամարս դարձնելու համար: Խիստ տեսական, վերացական դատողություններին ամեն բաժնում ու ենթաբաժնում հետևում են որոշակի պատմական օրինակները և/կամ նոր կիրառման հնարավորությունները (policy recommendations), ինչը Գալթունգին ներկայացնում է ոչ միայն որպես տեսաբան, այլև՝ քաղաքականության մարդ, ճիշտ է՝ ոչ ինչ-որ որոշակի երկրի, այլ համաշխարհային: Միաժամանակ, այդ կիրառական օրինակներն այս գիրքը սովորական տեսական շարադրանքից վերածում են քաղաքագետի ու կոնֆլիկտոլոգի համար սեղանի գրքի, աշխատանքային ձեռնարկի:

Գիրքը բաղկացած է չորս գլխից, որտեղ ամեն մեկում Յոհան Գալթունգը ներկայացնում է այն հիմնական տեսությունները, որոնք բացատրում են ամբողջական (holistic) խաղաղությունը. խաղաղության տեսություն, հակամարտությունների տեսություն, զարգացման տեսություն և քաղաքակրթության տեսություն: Առաջին գլխում ներկայացվում են հիմնական մեթոդական գենքը՝ ախտորոշում-կանխատեսում-բուժում եռանկյունին, ինչպես նաև հիմնական հարթությունները, որտեղ հետագայում տարվելու են հետազոտությունները՝ բնության, անհատի, սոցիալական, համաշխարհային, մշակութային, ժամանակի, նկարագրվում է տարբեր մակարդակներում ներքին և արտաքին բռնության էությունը: Այնուհետև այս արտածումները կիրառվում են երեք տարբեր կարևոր դեպքերի՝ միջսեռային (ընտանեկան) հակամարտության, ժողովրդավարություն-պատերազմ հարաբերությունների, ինչպես նաև՝ պետական-դաշնային կառուցվածքի լավագույն ձևի փնտրտուքի համար: Այս գլխի կարևոր հետևություններից նշեմ, օրինակ, որ մերժվում է կանտյան հայտնի դրույթը, թե ժողովրդավարությունները հակված չեն պատերազմելու, ավելին՝ ցույց է տրվում, որ հաճախ հենց ժողովրդավարական կառույցն է պատերազմի համար նպաստող գործոն հանդիսանում:

Հակամարտությունների տեսությանը նվիրված գլխում ևս հետաքրքիր ու անսպասելի մոտեցումներ կան, սկսած հակամարտության ընկալումից՝ ոչ միայն որպես կործանիչ, այլև՝ որպես արարիչ ուժ, մինչև հակամարտությունների մատրիցի ու նրա ռանգի գաղափարի ներմուծումը, խնդրի գերբարդացման վտանգից (Գալթունգի տերմինով՝ Սցիլլա) մինչև գերպարզունակացման վտանգը (Քարիբդիս), տարբեր չափորոշիչներով հակամարտու-

թյունների վերլուծությունը, քրիստոնեական և բուդդայական ժամանակի ընկալումը և այլն, սակայն ժամանակակից մարդու և վերլուծաբանի համար առավել անսպասելի է երրորդ գլուխը՝ նվիրված զարգացման տեսությանը, որտեղ մերժվում է ժամանակակից տնտեսագիտությունը, ոչ թե միայն որպես Ադամ Սմիթի ու Կարլ Մարքսի տեսությունների հերքում, այլև՝ նրա ողջ արժեքային համակարգը՝ փողը, շահույթն ու սեփականությունը, որպես կոնֆլիկտածին և մարդու ներդաշնակ զարգացմանը խոչընդոտող:

Չորրորդ գլխում քաղաքակրթությունների տեսությունը վերլուծված է բացարձակ այլ մոտեցումներով, քան Հանթինգտոնի կամ Թոյնբիի առավել հայտնի մոդելներն են, և ցույց է տրված հակամարտությունների արմատները ներ- և միջ-քաղաքակրթական մակարդակներում: Սակայն այս գլխում առավել կարևոր են որոշակի օրինակների վերլուծությունները (օրինակ՝ Հիտլերի, Ստալինի և Ռեյգանի ու նրանց քաղաքակրթությունների համեմատական բնութագիրը), քան տեսությունը, քանի որ Յոհան Գալթունգը խոստացել է առանձին գիրք նվիրել քաղաքակրթությունների տեսությանը: Մինչ այդ նոր գրքի հայտնվելը վայելենք ներկայացվողը՝ «Խաղաղություն խաղաղ միջոցներով», ոչ միայն որպես մտավարժանքների փայլուն դաշտ, այլև նրա միջոցով փորձենք նորովի ընկալել կոնֆլիկտները, և ով գիտե, միգուցե հենց այս մեթոդները մեզ մոտեցնեն մեր տարածաշրջանի կոնֆլիկտների հանգուցալուծմանը: Նշեմ միայն, որ Գալթունգը և նրա դպրոցը նաև զգալի աշխատանք են տարել (ոչ այս գրքում) ղարաբաղյան հակամարտության լուծման մոդելների մշակման ուղղությամբ:

Առանձին երախտիքով կցանկանայի ընգծել այս գրքի թարգմանիչների կատարած հսկայական աշխատանքը: Գալթունգի լեզուն ինքնին բարդ է, մինչդեռ այս գրքում այն նաև հագեցած է բազմաթիվ լեզուներից և տարբեր գիտություններից մեջբերումներով, հաճախ է առաջանում հայերեն նոր տերմիններ ներմուծելու և սահմանելու անհրաժեշտություն: Գիրքը կարդալիս կհամոզվեք, որ թարգմանիչները պատվով են դուրս եկել այդ փորձությունից:

Աղասի ԵՆՈՔՅԱՆ
քաղաքագետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՄԱՐ

1. Խաղաղություն. «ախտորոշում-կանխատեսում-բուժում» եռանկյունին

Խաղաղության տեսություններն այնքան նման են առողջության տեսություններին, որ *«ախտորոշում-կանխատեսում-բուժում»* եռանկյունին առաջինի դեպքում նույնպես կարող է կիրառական լինել: Որևէ համակարգ[1] (դերակատարների, բջիջների) սովորաբար ընդունված է բնութագրել որպես «առողջ» կամ «հիվանդ»: Առողջապահական ուսումնասիրություններից առողջություն-հիվանդություն, իսկ խաղաղության տեսություններից խաղաղություն-բռնություն բառազույգերը կարող են դիտարկվել որպես վերոնշյալ վիճակների առավել յուրահատուկ բնութագրիչներ:

Իրականում թե՛ բռնությունը, և թե՛ հիվանդությունը *ախտորոշման* (կամ վերլուծության) կարիք ունեն: Միաժամանակ, խաղաղությունն ու առողջությունն ունեն իրենց նախապայմաններն ու բնույթը, որոնք չնայած տարբեր են բռնության և հիվանդության պատճառներից, սակայն կարող են առնչվել վերջիններիս: Այսպես, խաղաղության անհրաժեշտ պայմաններից կարելի է համարել հավասարազոր հարաբերությունները, սակայն հարկ է նկատել, որ բռնությունը կարող է գոյություն ունենալ նաև շահագործման վրա չխարսխված համակարգում այն դեպքում, երբ այդ համակարգի մասը կազմող դերակատարներից որևէ մեկի մոտ ամեն բան չէ, որ հարթ է ընթանում: Նմանապես, մարդու մարմնի հիմնական չափորոշիչների ներդաշնակությունն առողջության գրավականն է, մինչդեռ հնարավոր է, որ որևէ բջիջ կամ բջիջների խումբ սխալ ուղղությամբ զարգանա, օրինակ՝ բնականոն համամասնությունների համեմատ ավելի մեծ չափեր ստանա:

Խաղաղության հարցերով զբաղվող հետազոտողը պետք է քննության առնի խնդրի պատճառները, պայմաններն ու բնույթը տարբեր հարթություններում՝ բնության, մարդկային, սոցիալական, համաշխարհային, ժամանակի, մշակութային: Դիտարկումների այս լայն շրջանակը դժվարացնում է խաղաղության վերլուծությունը, այն դարձնում տեսականորեն բարդ և գործնականում խնդրահարույց: Միևնույն ժամանակ նեղ-միակողմանի մոտեցումն այստեղ դատապարտված է ի սկզբանե[2]:

Եթե ինչ-ինչ պատճառներով համակարգը դուրս գա իր «առողջ» վիճակից և դրսևորի «հիվանդ» վիճակի ախտանշաններ, ապա ճիշտ *կանխատեսման* համար հարկ կլինի պատասխանել ակնհայտ հարցին. «առողջ» վիճակին դառնալու համար արդյո՞ք համակարգն ի վիճակի է բավարար չափով *ինքնավերականգնվելու,* թե որոշ *այլ միջամտություններ* են անհրաժեշտ:

Արտաքին միջամտությունը չպետք է նույնականացնել բուժման հետ: Նախ, այդպիսի ներազդեցությունն իրականում կարող է ի վերջո համակարգն ավելի վատը դարձնել, երկրորդ, այն նույնպես կարող է ի վիճակի լինել հա-

մապատասխան բուժում տրամադրելու, և վերջապես, ինքնավերականգնումը պարտադիր չէ, որ նշանակի գիտակցված, կանխամտածված միջամտություն: Համակարգը կարող է պարզապես «ինքն իր մասին հոգ տանել»: Մարդկային մարմինը գերհամալիր մեխանիզմների միջոցով հավասարակշռությունը վերականգնելու հրաշագործ կարողություն ունի, ինչը, եթե մի կողմ թողնենք դրանց վրա ներազդելը, մենք դժվար թե կարողանանք լիովին հասկանալ: Լավագույնը, ինչ մենք կարող ենք անել, այդպիսի վերականգնող գործառույթների համար դրական պայմանների ապահովումն է:[3]

Անդրադառնանք եռանկյունու երրորդ անկյանը՝ *բուժմանը*, որը ենթադրում է համակարգը «առողջ» վիճակի վերադարձնելու համար նրա կամ այլոց կանխամտածված ջանքեր: Այնպես, ինչպես մենք տարբերակում ենք բացասական և դրական խաղաղությունն ու առողջությունը, նմանապես կարող ենք առանձնացնել նաև առողջացնող և կանխարգելող բուժումը: Վերոհիշյալ չորս որակումներն էլ առնչվում են «առողջ» վիճակին՝ առանց (կամ նվազագույն) հիվանդության կամ բռնության: Այս դեպքում համակարգերն ախտանշաններ չեն դրսևորում (կամ գրեթե չեն դրսևորում): Սակայն բացասական առողջության (խաղաղության) դեպքում համակարգի հավասարակշռությունն այնքան անկայուն է, որ նույնիսկ աննշան հարվածը կարող է համակարգը հասցնել «հիվանդ» վիճակի: Դրական առողջության (խաղաղության) դեպքում հավասարակշռությունն ավելի կայուն է. սա նշանակում է, որ ինքնավերականգնման ավելի շատ կարողություններ կան, նույնիսկ եթե համակարգն ամբողջությամբ զերծ չէ ախտանշաններից: Առողջացնող բուժումը նպատակաուղղված է բացասական, իսկ կանխարգելողը՝ դրական դեպքերին: Երկուսն էլ անհրաժեշտ են և՛ առողջության, և՛ խաղաղության համար:

2. Ուղղակի-կառուցվածքային-մշակութային բռնության եռանկյունին

Խաղաղության կերտումն ակնհայտորեն առնչություն ունի բռնության նվազեցման (բուժման) և բռնությունից խուսափելու (կանխարգելման) հետ: Իսկ բռնություն կիրառել՝ նշանակում է վնաս և/կամ ցավ պատճառել: Հետևաբար գոյություն ունի նաև այդ ցավը կամ վնասը կրողը, իսկ վերջինս, եթե հետևենք բուդդայական ավանդույթին, ըստ էության հենց կյանքն է: Կյանքն է, որ ֆիզիկական և մտավոր բռնությունների արդյունքում համապատասխանաբար մարմնին ու մտքին պատճառված վնասից կարող է տառապանք կրել *(dukkha)*: Բայց կյանքն ի վիճակի է նաև երանության *(sukha)*՝ հաճույքի, որ հաղորդվում է մարմնին ու մտքին: Այս դեպքի համար հնարավոր է գործածել «դրական խաղաղություն» տերմինը[4]:

Մինչ այս պահը մենք դիտարկել ենք բռնությունը՝ այն կրողի տեսանկյունից: Եթե կա հասցեագրող՝ դերակատար, որը կանխամտածված իրագործում է բռնությունը, ապա մենք կարող ենք խոսել *ուղղակի* բռնության մասին, եթե ոչ՝ ապա անուղղակի կամ *կառուցվածքային* բռնության մասին[5]: Թշվառությունը տառապանքի տարատեսակ է, հետևաբար բռնությունը գոյություն ունի նաև այլ հարթություններում: Այս դեպքում ընդունելի դիրքորոշումն այն է, որ *անուղղակի բռնությունը* հավասարազոր է *կառուցվածքային բռնությանը*: Անուղղակի բռնությունը բխում է սոցիալական կառուցվածքից: Այն առաջանում է մարդկանց, մարդկանց խմբերի (հասարակությունների), տարբեր հա-

սարակությունների (դաշինքների, տարածաշրջանների) միջև: Մարդ արարածի մեջ նույնպես գոյություն ունի անուղղակի, չկանխամտածված, ներքին բռնություն, որ բխում է նրա անհատականության կառուցվածքից:

Քաղաքականությունից ու տնտեսագիտությունից հայտնի են արտաքին կառուցվածքային բռնության երկու հիմնական ձևեր՝ *ճնշում (repression) և շահագործում (exploitation)*: Երկուսն էլ ներգործում են մարմնի և մտքի վրա, բայց պարտադիր չէ, որ կանխամտածված լինեն: Տուժողի համար այդ փաստն, այնուամենայնիվ, բավարար սփոփանք լինել չի կարող:

Այս ամենի հետևում *մշակութային* բռնությունն է՝ իբրև խորհրդանիշերի ամբողջություն կրոնում և գաղափարախոսության մեջ, լեզվում և արվեստում, գիտության և իրավունքի ասպարեզներում, մամուլում և կրթության ոլորտում: Մշակութային բռնությունը լուծում է բավականաչափ պարզ խնդիր. այն, ըստ էության, լեգիտիմացնում է ուղղակի և կառուցվածքային բռնությունները: Փաստորեն, մենք նախ գործ ունենք մշակութային, քաղաքական ու տնտեսական հարթություններում առկա բռնությունների, և նոր միայն՝ ուղղակի բռնության հետ: Մեզ անհրաժեշտ է առավել ընդգրկուն հասկացություն. առավել, քան «բռնությունն» է կամ «խաղաղությունը»: *Ուժն է* այդ հասկացությունը: Մշակութային ուժը ներազդում է դերակատարների վրա՝ համոզելով նրանց, թե ի՞նչն է ճիշտ և ի՞նչը՝ սխալ, տնտեսական ուժը՝ փոխհատուցման *(quid pro quo)* սկզբունքով, ռազմականը՝ մտրակի մեթոդով, իսկ քաղաքականը՝ որոշումների արտադրության ճանապարհով:

Այսպիսով մենք տարանջատում ենք ուժի չորս տեսակ՝ *մշակութային, տնտեսական, ռազմական և քաղաքական.* իրականում շատ հայտնի բառեր, որոնք, սակայն, կարիք չկա ամեն պատեհ կամ անպատեհ առիթով օգտագործել: Դրանք բնութագրում են ուժի չորս ոլորտներն ու բռնության չորս տեսակները (կառուցվածքային բռնությունն ունի քաղաքական և տնտեսական կողմեր), ինչպես նաև անուղղակիորեն՝ խաղաղության չորս ձևերը: Մինչ «ինչպիսի՞ կոնկրետ տեսք ունեն դրանք» հարցին պատասխանելը՝ կարճ անդրադառնանք ուժի չորս տեսակների միջև գոյություն ունեցող հարաբերություններին:

Դրանք իրականում ազդեցության բոլոր տասներկու հնարավոր ուղղություններով փոխներգործության մեջ են: Ճշմարիտ լինելով հանդերձ՝ այսպիսի դիտարկումն, այնուամենայնիվ, լոկ մակերեսային է, քանզի խարսխված չէ լուրջ հենքի վրա: Թերևս նոր ճշմարտություն է հարկավոր ավելացնել: Այսպիսով, ուժի համակարգում գոյություն ունի նաև համընդհանուր շարժիչ. ուղղակի բռնության առանձին դրսևորումներն ի հայտ են գալիս քաղաքական որոշումների և տնտեսական գործարքների կառուցվածքից, իսկ վերջիններս փոխպայմանավորված են: Եվ այս ամենի ներքո մշակույթն է, որ լեգիտիմացնում է առանձին կառուցվածքներն ու գործողությունները և ապալեգիտիմացնում մյուսները:

«Իրատեսական» այն ենթադրությունը, թե ռազմական ուժն է ամենաազդեցիկը, իրականում հենց ամենաքիչ իրատեսականն է: Այդուհանդերձ, դժվար է պնդել նաև, որ ազատական համոզմունքները համապատասխան քաղաքական կառուցվածքում և մարքսիստական մոտեցումները համապատասխան տնտեսական կառուցվածքում առավել ազդեցիկ են: Դրանք բոլորն էլ իրենց ուրույն դերակատարումն ունեն, մասնավորապես՝ մշակույթը: Խնդիրն իրականում պետք է դիտարկել բոլորովին այլ, մասնավորապես մշակութային, հարթության մեջ: Սակայն, զուտ մշակութային մոտեցումը ևս

բավարար չէ: Անձամբ իմ դիրքորոշումն առավել էկլեկտիկ է. պատճառահետևանքային կապերի ուղղվածությունը ես դիտարկում եմ առավելապես մշակութայինից դեպի ռազմականը (քաղաքականության և տնտեսավարման ճանապարհով) և ոչ թե հակառակը: Այսպիսով, բռնության հիմնական պատճառահետևանքային ուղղվածությունը մշակութայինից դեպի ուղղակի բռնությունն է՝ կառուցվածքային բռնության միջով:

3. Դեպի խաղաղություն տանող ճանապարհները. ութածալ ուղի

Մենք արդեն նշել ենք բուժման կամ դեղատոմսերի երկու տեսակ՝ առողջացնող և կանխարգելիչ, որոնք համապատասխանաբար վերաբերում են բացասական և դրական խաղաղություններին: Ամրագրվել են նաև բռնության չորս տեսակ (երկու ենթատեսակներով): Արդյունքում մենք ստանում ենք ութ համադրություն կամ, ինչպես նշված է այս ենթագլխի վերնագրում, «ութածալ ուղի»: Յուրաքանչյուր համադրություն, օրինակ՝ «մշակութային ուժ, դրական խաղաղությունը», մեր առջև խնդիր է դնում՝ ի՞նչ է հնարավոր անել: Ընթերցողը որոշ պատասխաններ կգտնի աղյուսակ 1-ում, որում նա նաև կարող է որոշ ավելացումներ կամ պակասեցումներ անել: Աղյուսակի վեց բաժինների անվանումները, թերևս, ավելի կարևոր են, քան դրանց բովանդակությունը: Այդ բաժինները կոչված են օգնելու մեր որոնումներին: Անշուշտ, խաղաղության քաղաքականության այլ դասակարգումներ ևս հնարավոր են. օրինակ՝ դրանք կարող են դիտարկվել բնություն-անհատ-հասարակություն-աշխարհ-ժամանակ-մշակույթ հարթությունների համատեքստում:

Խաղաղությանն ուղղված քաղաքականությունները չունեն սկիզբ և ակնհայտորեն չունեն նաև վերջ: Այստեղ լավագույն խորհուրդն է՝ աշխատել բոլոր ութ ուղղություններով միաժամանակ: Գերադասելի է շարժվել թեկուզ փոքր քայլերով, սակայն բոլոր ուղղություններով միաժամանակ, քան լուրջ առաջընթաց գրանցել մեկ ոլորտում՝ ակնկալելով, որ մնացած ոլորտներում խնդիրները կլուծվեն ինքնուրույն կամ ի վերջո հեշտությամբ կկարգավորվեն: Միագործոն խաղաղության տեսությունների փորձը հիմնականում բացասական է եղել: Կանտն իր հույսը կապում էր հանրապետությունների և ժողովրդավարության հետ, լիբերալները՝ ազատ առևտրի և ժողովրդավարության, մարքսիստները՝ հասարակական արտադրության և ուղղորդվող ժողովրդավարության, մոնդիալիստները՝ ուժեղ ՄԱԿ-ի հետ: Խաղաղությունն այդ գաղափարախոսությունների միջոցով հասանելի չէ:

Առկա մոտեցումները գերազանցապես դիտասևեռվում են աշխարհի՝ որպես երկրների համակարգի վրա, որտեղ ամփոփված են պետությունները: Աննշան փոփոխություններով այդ մոտեցումները կիրառելի են նաև միջսեռային, միջսերնդային, միջդասային և ազգամիջյան /էթնիկ/ համակարգերում: Դրանք բոլորն էլ այսօր արդիական են:

Աղյուսակ 1-ն, անշուշտ, բազմաթիվ պարզաբանումների կարիք ունի: Մարդիկ, ովքեր պետական կամ ոչ-պետական կազմակերպություններում աշխատում են աշխարհին խաղաղություն բերելու նպատակի համար, որոշ բաներ կհասկանան, քչերը կհասկանան ամբողջը և միանշանակ չէ, որ կհամաձայնեն: Այսպիսի բանավեճն անչափ կարևոր է, եթե խաղաղությանն ուղղված շարժումը պետք է կարողանա թափ հավաքել և դառնալ առնվազն նույն-

չափ ազդեցիկ, որքան ժամանակին ստրկատիրության դեմ կամ հակագաղութատիրական շարժումներն էին: Պատերազմին դեմ արտահայտվելը բարոյականության տեսանկյունից ճիշտ և անհրաժեշտ, սակայն ոչ բավարար դիրքորոշում է *պատերազմի այլընտրանքները* և *պատերազմի բացառման* պայմաններն ապահովելու համար: Դրանց հարկ է առանձին անդրադառնալ:

Աղյուսակ 1: 21-րդ դարի խաղաղության քաղաքականությունները

	Բացասական խաղաղություն	Դրական խաղաղություն
Քաղաքական	*Պետությունների ժողովրդավարացում*	*ՄԱԿ-ի ժողովրդավարացում*
	Մարդու իրավունքներ ամենուր, բայց՝ ապաարևմտացում,	Մեկ երկիր՝ մեկ քվե, Մեծ տերությունների վետոյի համակարգի վերացում,
	Նախաձեռնություն, հանրաքվե, ուղղակի ժողովրդավարություն,	ՄԱԿ-ի երկրորդ վեհաժողով, Ուղիղ ընտրություններ /մեկական տեղ աշխարհի յուրաքանչյուր մեկ մլն. բնակչի համար/,
	Ապակենտրոնացում	Համադաշնություններ
Ռազմական	Պաշտպանողական պաշտպանություն,	Խաղաղապահ ուժեր,
	Զենքի ապաօրինականացում,	Ոչ-ռազմական հմտություններ,
	Ոչ-ռազմական պաշտպանություն	Միջազգային խաղաղարար բրիգադներ
Տնտեսական	*Ինքնաբավարարվածություն I*	*Ինքնաբավարարվածություն II*
	Արտաքին դրսևորումների վերակազմավորում ներքինների,	Արտաքին գործոնների համատեղ հաղթահարում,
	Սեփական գործոնների օգտագործում,	Հորիզոնական փոխանակում,
	Նաև տեղում	Հարավ-Հարավ համագործակցություն
Մշակութային	*Մարտահրավեր*	*Համաշխարհային քաղաքակրթություն*
	եզակիություն (singularism),	բազմակենտրոնություն,
	համընդհանրություն (universalism),	լիցքաթափված ժամանակ,
	ընտրյալ մարդկանց գաղափարներ,	հոլիստական[i], համաշխարհային,
	բռնություն, պատերազմ	գործընկերություն բնության հետ,
	Երկխոսություն	հավասարություն, արդարություն,
	կոշտի և փափուկի միջև	կյանքի բարելավում

Առավելագույն արդյունքի հասնելու համար այս դրույթները հարկ է միաժամանակ հրամցնել: Այդուհանդերձ, հաղորդակցվելու այդպիսի ձևն արդյունավետ հաղորդակցություն անվանել չի կարելի, ուստի, համոզված լինելով, որ առաջնահերթությունների և ոչ մի կանոն իրականում սահմանված չէ, մենք առաջ կշարժվենք տող առ տող սկզբունքով:

[i] holistic - հոլիստական, ամբողջապաշտական /թարգ./

4. Քաղաքական տիրույթը

Ժողովրդավարությունը հոյակապ գաղափար է, բայց միջպետական հարաբերությունների համատեքստում այն սխալ է հասկացվել: Եթե ժողովրդավարությունը լավ է գործում որևէ երկրի ներսում, այն, սկզբունքորեն, պետք է ձևավորի համեմատաբար գոհ բնակչություն, որի հիմնական զանգվածը ժամանակի ընթացքում հայտնաբերում է, որ առկա հնարավորության սահմաններում սեփական ցանկությունների մեծամասնությունը բավարարված է: Կրկին, դա երկրի ներսում սկզբունքորեն պետք է հանգեցնի «խաղաղության ավելցուկի», երբ ժողովրդավարությունը գործում է որպես խաղաղ դատավոր իշխանության և բնակչության՝ արտոնությունների համար միմյանց հետ մրցակցող տարբեր խավերի միջև: Չկա, սակայն, երաշխիք, որ խաղաղության այդ ներպետական ավելցուկը կհանգեցնի խաղաղ գործունեության միջպետական համակարգում: Ժողովրդավարությունը պետք է համաշխարհային լինի՝ գոյություն ունենա միջպետական համակարգի տիրույթում, համաշխարհային համակարգում: Սակայն այդ համակարգն այսօր պահպանողական-ֆեոդալական է և ոչ թե՝ ազատական-ժողովրդավարական:

Դա երկու մոտեցման հնարավորություն է ստեղծում՝ ավելի ժողովրդավար դարձնել միջպետական համակարգը և ժողովրդավարական միջոցներով էլ ավելի խաղաղ դարձնել ներպետական համակարգը: Երկուսն էլ դրվատելի են որպես նպատակներ ու մոտեցումներ. կարիք չկա ավելի ժողովրդավարական երկրներին արդարացնել այն ենթադրությամբ (որը լավագույն դեպքում չապացուցված, իսկ վատագույն դեպքում՝ ակնհայտորեն սխալ է), թե ներպետական խաղաղությունն ինքնըստինքյան հանգեցնում է միջպետական խաղաղության: Եթե դա լիներ խնդիրը, ապա աշխարհի ներկայիս առաջատար ժողովրդավարությունները ստրկացնող, գաղութացնող և առհասարակ պատերազմող կողմեր եղած չէին լինի՝ բացառությամբ փոքր ժողովրդավարությունների, որոնք խաղաղասեր են՝ հավանաբար, ավելի շուտ փոքր, քան ժողովրդավար լինելու պատճառով: Վերոնշյալն այլ կերպ էլ է գործում՝ միջպետական ժողովրդավարական համակարգն ինքնըստինքյան չի երաշխավորում, թե դրա բոլոր բաղկացուցիչները մեկ օրվա ընթացքում կդառնան ժողովրդավարություններ:

Ամենակարճ ճանապարհը միջպետական համակարգը ժողովրդավարացնելն է: *«Մեկ երկիր- մեկ ձայն»* բանաձևն, օրինակ, հնարավոր էր կիրառել բրեթոնվուդսյան հաստատություններում՝ նվազեցնելով աշխարհի ամենահարուստ երկրների՝ փողի իշխանությունը: Դա, ամենայն հավանականությամբ, կնվազեցներ նաև վարկային հնարավորությունները: Խնդիրն այն է, թե արդյո՞ք դրա արդյունքում Համաշխարհային բանկի հաշվետվությունները ողբալի տեսք չեն ստանա: Ակնհայտ է, որ այս բանաձևը բացառում է Մեծ տերությունների վետոյի իրավունքը. այն պետք է վերացվի:

Ժողովրդավարությունը, սակայն, ավելի շուտ առնչվում է *«մեկ անձ- մեկ ձայն»* բանաձևին, ինչն ուղղակիորեն հանգեցնում է համաշխարհային խորհրդարանի գաղափարին, ինչպիսին էր ՄԱԿ-ի երկրորդ վեհաժողովը՝ *Միացյալ ազգերի ժողովուրդների վեհաժողովը* (Unites Nations Peoples' Assembly/ ՄԱԺՎ), ուր անդամ երկրներին, որպես ընտրատարածքների, հատկացվում է մեկական տեղ յուրաքանչյուր մեկ միլիոն բնակչության համար (մեկ միլիոնից պակաս բնակչություն ունեցող երկրներին՝ մեկ տեղ), սակայն միայն ժողովրդի կողմից գաղտնի քվեարկությամբ ընտրվելու, այլ ոչ թե

պետության կողմից նշանակվելու պայմանով: Դա մի հավելյալ հնարավորություն կլիներ, որը զուգահեռ կլիներ Միավորված ազգերի կառավարությունների վեհաժողովին (United Nations Government Assembly/ ՄԱԿՎ): Երկու վեհաժողովները հնարավորություն կունենային մշակել ժամանակացույց, որով ՄԱԿՎ-ից ավելի ու ավելի շատ լիազորություններ կփոխանցվեն ՄԱԺՎ-ին, ինչի արդյունքում կառավարությունները պատասխանատու կլինեն ժողովրդի առջև և ոչ թե հակառակը:

Մարդու իրավունքները մատնացույց են անում նույն ուղղությունը, թեև դրանք նույնպես ամրապնդում են պետական համակարգը՝ պետություններին դարձնելով մարդու իրավունքների երաշխավորներ, որոնք պատասխանատու են ՄԱԿ-ի կառույցների առջև: Այսօր դրանք կրում են անսխալական տղամարդկանց, չափահասների, մարդ տեսակի, Արևմուտքի ակնհայտ կնիքը. այդ ամենը կարող է բարեփոխվել՝ առանց կորցնելու ուղղակի և մշակութային բռնության դեմ գոյություն ունեցող լավագույն ավանդույթները:

Օգտակար կարող է լինել նաև երկրների ներսում ապակենտրոնացման գործընթացների, ինչպես նաև նախաձեռնությունների ու հանրաքվեների միջոցով կառավարության մերձեցումը ժողովրդին՝ համագործակցության համադաշնային ձևերը գերադասելով դաշնություններին ու միասնական պետություններին: Սրանք, սակայն, համադարման չեն. ժողովուրդը ոչ միշտ է խաղաղասեր: Ժողովուրդը՝ հետևաբար և «քաղաքացիական հասարակությունը», կարող է նաև սպանել:

5. Զինված ուժերի տիրույթը

Այստեղ մենք կհիմնավորենք ոչ թե զինված ուժերի վերացման, այլ դրանց համար նոր աշխատանք գտնելու դրույթը: Այս ինստիտուտն անցյալում շատ վատ սովորություններ է ունեցել, ինչպես, օրինակ, այլ երկրների ու ազգերի, կամ այլ դասակարգերի վրա (սովորաբար կառավարող վերնախավի հրամանով) հարձակվելը՝ ներքին ու արտաքին պատերազմներում սպանելով ու ավերելով: Արժանիքներ նույնպես եղել են՝ լավ կազմակերպվածություն, արիություն, անձնազոհության պատրաստակամություն: Վատ սովորությունները պետք է մնան անցյալում. բայց պարտադիր չէ, որ զինված ուժերն էլ մնան անցյալում, առավել ևս՝ դրանց դրական կողմերը:

Եկեք զինուժին նոր առաջադրանք տանք, ագրեսիվ արտաքին պատերազմական գործողությունները փոխարինենք պաշտպանական միջոցներով պաշտպանողական պաշտպանությամբ (տեղային բնույթի պայմանական-ռազմական, կիսառազմականացված և ոչ ռազմական պաշտպանություն): Պաշտպանությունն ինքնին որևէ մեկին չի սադրում և վախ չի առաջացնում, այդուհանդերձ, հստակ հասկացնում է, որ հարձակումները վճռական հակահարված կստանան:

Խաղաղապահ ուժերը կարող են օգտագործվել ագրեսիաները կանխելու համար անգամ այնտեղ, ուր բռնության բացահայտ դրսևորումներ չեն արձանագրվել (սակայն կան հիմնավոր պաճառներ ենթադրելու, որ այդպիսիք հնարավոր են): Հնարավոր է նաև կանխարգելիչ նպատակներով դրանք տեղակայել զինված ուժեր չունեցող (մոտ 30) փոքր երկրներում, ինչը թույլ չի

տա, որ որևէ «Մեծ եղբայր» ճգնաժամի դեպքում «պաշտպան» կանգնելու պահանջ ներկայացնի:

Դա, սակայն, բավարար չէ: Բռնությունը բացառելու ուղղությամբ հարկավոր է ավելի հեռուն գնալ. օրենքից դուրս հայտարարել սպառազենը, հոգուտ բռնությունը բացառող կարողությունների զարգացման նվազեցնել պայմանական ու կիսառազմականացված բաղադրիչները և միաժամանակ կայացնել ոչ ռազմական պաշտպանություն՝ անցնելով քաղաքացիական խաղաղապահության, ինչպես նաև միջազգային խաղաղապահ զորախմբեր տեղակայել «տաք» տարածքներում: Այսօր մենք նմանօրինակ կարևորագույն ջանքերի շեմին ենք, որոնք հետագա նոր զարգացումների կարիք ևս կունենան: Այստեղ է, որ զինվորականները կարող են ներգրավվել:

Այս ամենը բացասական կողմ էլ ունի: Հեռահար նպատակը պատերազմի՝ որպես ինստիտուտի, վերացումն է, ճիշտ այնպես, ինչպես ստրկատիրության ու գաղութատիրության՝ որպես ինստիտուտների, վերացումը: Սա միանգամայն իրատեսական նպատակ է՝ բարդ, սակայն և անվերապահորեն անհրաժեշտ: Իհարկե, մեր շրջապատում դեռ կլինեն բռնության դեպքեր, որոշները՝ պատերազմների նման կոլեկտիվ կազմակերպված: Սակայն այդօրինակ բռնությունները չեն լինի ինստիտուցիոնալացված, ոչ էլ ընդունելի կամ լեգիտիմ:

Պատերազմները խրախուսող բազմաթիվ գործոններ կարելի է առանձնացնել: Նշենք դրանցից երեքը. հայրիշխանությունը (արական սեռի ներկայացուցիչների տիրապետությունը), պետական համակարգը՝ բռնության իր մենաշնորհով, և գերտերությունների կամ գերուժի համակարգը՝ գերիշխանության գերագույն մենաշնորհով: Կանանց համեմատ տղամարդիկ ավելի են հակված բռնության: Իսկ նրանք, ովքեր զենք ունեն, հակված են մտածելու և գործելու ըստ հին ասացվածքի, թե՝ մուրճ ունեցողի աչքին ամբողջ աշխարհը մեխ է երևում: Ի դեպ, սա չի նշանակում, որ այդպիսի մարդը մշտապես բռնանում է: Պարզապես, նրա համար զինված ուժի գործադրումը և՛ մասնագիտություն է, և՛ մենաշնորհ, և նա լոկ իր դերն է ուզում խաղալ:

Հայրիշխանության դեմ պայքարը ենթադրում է պայքար հայրիշխանական մշակույթների և կառույցների դեմ՝ իշխանությունը սեռերի միջև ավելի անաչառ բաշխելու նպատակով: Վտանգն այստեղ այն է, որ պայքարի ընթացքում կանայք կարող են ընդօրինակել տղամարդկանց այն հատկանիշները, որոնց դեմ պայքարում են:

Զինուժի համար ռեսուրսներ հայթայթելու՝ պետությունների նկրտումների դեմ պայքարում հարկ է գտնել այնպիսի այլընտրանքներ, որոնք ստիպողական բնույթ ունեն: Իսկ հասարակությունների համաշխարհային հանրույթի մեջ գերիշխանության միտումների դեմ հարկ է պայքարել այդ հանրույթի ժողովրդավարացման, ընդհանուր շահերի հենքի վրա ոչ գերիշխող երկրների դաշինքների ստեղծման և «մեկ երկիր՝ մեկ ձայն» սկզբունքով որոշումների կայացման ճանապարհով: Սրան կանդրադառնանք ավելի ուշ՝ առաջին մասի 4-րդ գլխում:

6. Տնտեսական տիրույթը

Խնդիրն այստեղ վերաբերում է ոչ միայն տնտեսավարման գործընթացին, այլ նաև տնտեսագիտության տեսությանը, որը հետևողականորեն հերքում է տնտեսական գործունեության վրա կողմնակի ազդեցությունները՝ այսպես կոչված *արտաքին դրսևորումները:* Դրանցից մի քանիսը դրական են, ինչպես, օրինակ, նոր *մարտահրավերը,* որն առաջ է եկել ուղղակի, հայտնի լուծումներ չունեցող համալիր հիմնախնդիրներ հանձն առնելուց, իսկ մի քանիսն էլ՝ բացասական, ինչպես, օրինակ, *բնապահպանական դեգրադացիան*, եթե նույնիսկ անտեսենք *մարդկային դեգրադացիան*: Դրանք արտացոլված չեն տնտեսագիտական տեսություններում, կամ լավագույն դեպքում արտացոլված են որպես, այսպես ասած, զուգահեռ կամ հավելյալ մտորումներ: Տնտեսագետները կենտրոնանում են շուկայում առաջարկվող արտադրանքի, ապրանքների ու ծառայությունների քանակների ու գների վրա՝ առանց ավելորդ մտահոգության, թե դրանք կարող են և վատ ապրանքներ ու ծառայություններ լինել: Այսպիսի գործոններն առնչվում են այսպես կոչված *ներքին դրսևորումներին*, որոնք գործում են պարադիգմի ներսում: Օրինակ կարող են ծառայել «փոխանակման պայմանները»՝ որևէ ապրանքի այն քանակը, որը պահանջվում է մեկ այլ ապրանքի որոշակի քանակի հետ փոխանակելու համար, ինչպես ասենք՝ որքան նավթ է հարկավոր մեկ տրակտորի հետ փոխանակելու համար: Մեկ այլ մոտեցում է փոխանակվող արտադրանքների թողարկման համար պահանջվող աշխատաժամերի համեմատության տարբերակը:

Շահագործում նշանակում է՝ կողմերից մեկը գործարքից շատ ավելին է ստանում, քան մյուսը: Դա չափվում է արտաքին և ներքին դրսևորումների գումարով: Փոխանակման պայմանները կարող են լինել վատ և է՛լ ավելի վատթարանալ: Արդյունքում կողմերից մեկը ստանձնում է մարտահրավերը՝ ընթացիկ աշխատանքը թողնելով մյուս կողմին, որին նաև բաժին է հասնում բնապահպանական և մարդկային դեգրադացիան: Քանի որ սա հարուստ (ոչ բացառապես Հյուսիսի) և աղքատ (ոչ բացառապես Հարավի) երկրների միջև այսօր տեղի ունեցող համաշխարհային առևտրի բավական ճշգրիտ նկարագրությունն է, ուստի մենք գործ ունենք կառուցվածքային բռնության առանցքային դեպքի հետ: Նման իրավիճակը հաճախ հանգեցնում է ուղղակի բռնության, ինչի նպատակը կառուցվածքի փոփոխությունը կամ պահպանումն է: Այն հիմնավորապես պաշտպանվում է տեսությամբ ապահովված մշակութային բռնությամբ: Բռնության բավական ծանր մի եռանկյունի…

Ելքի ուղիներից մեկն առևտրի ծավալները նվազեցնելն է՝ ապավինելով առավելապես սեփական ռեսուրսներին (գործոններին): Սա նշանակում է, որ դրական արտաքին դրսևորումները կմնան երկրի ներսում, իսկ բացասականները տառապանք կբերեն լոկ մեկին՝ առանց դրանց հետևանքները մյուսների վրա տարածելու: Հույս կա, որ սեփական շահը կուղղորդի տնտեսական գործունեության ավելի լավ ոլորտներ: Եթե սա *«Ինքնապավինում 1»*-ն է, ապա *«Ինքնապավինում 2»*-ն ավելի հեռուն է գնում՝ ընդգրկելով նաև այլ երկրների հետ իրականացվող փոխանակումը և, որ առավել կարևոր է, ավելի զգուշորեն վերաբերելով արտաքին դրսևորումներին: Պարզագույն բանաձևը դրանք կիսելն է: Գործնականում դա նշանակում է փոխանակել դրական

արտաքին դրսևորումները և համագործակցել՝ նվազեցնելու համար բացասականները[6]:

Այստեղ առաջանում է «Հնարք 22» *("Catch-22")*[i] հիմնախնդիրը: Սրտացավությունը, այլոց վրա միջազգային տնտեսական գործարքների ազդեցությունն (առնվազն) նույնքան մոտ ընդունելը, որքան կընդունվեր սեփական երկրի վրա ազդելու դեպքում, որոշակի մերձեցման, բարիդրացիական զգացումների առաջացման հիմքեր կստեղծեր՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին ներդաշնակ ընտանեկան հարաբերությունները պիտի լինեն: Բանաձևերից մեկը կարող է լինել «հարևան երկրները», մյուսը՝ «միանման մտածող երկրները», երրորդը՝ «զարգացման նույն մակարդակի վրա գտնվող երկրները»: «Ինքնապավինում 2»-ը կարող է նման սերտ կապեր զարգացնել, ավելին՝ այդպիսի կապերը միաժամանակ իրենց գոյության նախապայմանն են:

Այնուամենայնիվ, լավագույն մոտեցումը պարզապես սկսելն է: Սկանդինավյան, Հարավարևելյան Ասիայի երկրների ընկերակցության *(ASEAN)* և Եվրոպական Միության երկրները հենց այդպես վարվեցին: Սա, թերևս, հարավի թույլ զարգացած/աղքատ երկրների համար զարգացման լավագույն, հավանաբար նաև միակ ուղին է՝ բարձրացնել ոչ միայն իրենց, այլև համատեղ քայլերով՝ միմյանց: Այս համատեքստում Հարավ–Հարավ համագործակցությունը, ինչպես այն քարոզվում է Նիերերեի հանձնաժողովի կողմից, ոչ միայն զարգացման քաղաքականություն է, այլև խաղաղության՝ առնվազն Հարավի շրջանակներում[7]:

7. Մշակութային տիրույթը

Ինչո՞ւ են մարդիկ սպանում: Մասամբ՝ որովհետև այդպես դաստիարակվել են՝ ոչ թե ուղղակիորեն սպանելու, այլ որոշակի հանգամանքներում սպանությունն ընդունելի համարելու իմաստով: Սա մեզ բերում է դեպի մշակույթը՝ բռնության, ինչպես նաև խաղաղության այդ մեծ լեգիտիմացնողը: Եվ հարց ենք դնում՝ մշակույթի ո՞ր դրսևորումներում փնտրել բռնության առանցքային կրողներին: Դյուրին պատասխանը հետևյալն է՝ կրոնում և գաղափարախոսության մեջ, քանի որ մարդիկ սպանել են հանուն երկուսի էլ: Այնուամենայնիվ, ոչ բոլոր կրոններն ու գաղափարախոսություններն են բռնացող. դրանցում կան այնպիսիք, որ հայտնի են իբրև բռնությունից հրաժարվելու ջատագովներ: Եթե դառնանք ձևակերպման իմ նախընտրելի ձևին՝ կրոններն ու գաղափարախոսությունները կարող են հանդես գալ *կոշտ* և *մեղմ* տարբերակներով: Կոշտ տարբերակները կենտրոնանում են որևէ վերացական, վերիմացական նպատակի, իսկ մեղմ տարբերակները՝ հուզակցման, անգամ կարեկցանքի վրա: Առաջին տարբերակի օրինակներ են. վերիմացական Աստծո անվերապահ հաղթանակը (ինչպես, ասենք, «երկնքում» տղամարդկանց աստվածության արևմտյան ձևը), որոշ քաղաքական ուտոպիաների (կապիտալիզմի, սոցիալիզմի, ժողովրդավարության, ֆաշիզմի) հաղթանակն ամբողջ աշխարհում կամ որոշ «գերտերությունների» հաղթանակը: Ավելի մեղմ նպա-

---

[i] Հեղինակի կողմից օգտագործված այս հասկացությունը կիրառական դաշտ է մտել Ջոզեֆ Հելլերի համանուն գրքի հրապարակումից հետո: Այն իմաստային առումով շատ մոտ է հայտնի «հավի-ձվի պատմությանը» և ենթադրում է երկու երևույթների (գործոնների) փոխնախորդելիության հետևանքով առաջացող փակ շղթա /թարգ./:

տակների օրինակներ են իմանենտ Աստվածն, իբրև «ինքնին Աստված» յուրաքանչյուրի հոգում, կոնկրետ մարդ արարածների կոնկրետ հիմնական կարիքների բավարարումը, հարգանքը կյանքի հանդեպ և այլն:

Ակնհայտ է, որ արևմուտքում առկա մեծ կրոններն ու գաղափարախոսությունները՝ իսլամն ու քրիստոնեությունը, լիբերալիզմն ու մարքսիզմը (վերջինս, թերևս, ինչ-որ չափով դեռ վերադարձ կապրի), կրում են երկուսի հատկանիշներն էլ, ուստի պետք է խոսել ավելի շուտ կոշտ և մեղմ «տեսանկյունների», քան կոշտ և մեղմ կրոնների ու գաղափարախոսությունների մասին, կամ անգամ՝ կոշտ և մեղմ տարբերակների մասին: Ավելին, վերոնշյալ չորսն էլ *եզակիական* են, այսինքն՝ պնդում են, որ իրենք են ճշմարտության միակ կրողը, և *համընդհանրական*, իմա՝ տարածվում են ամբողջ աշխարհի և ողջ ապագայի վրա:

Այսպիսի հավատները մասնավորապես վտանգավոր են դառնում, երբ առանձնացնում են *ընտրյալների* (սեռ, սերունդ, ռասա, դասակարգ, ազգ), որոնց իրավունքն ու պարտականությունը՝ հավատը տարածելն ու պաշտպանելն է: Արևմտյան կրոնները կամ գաղափարախոսությունները (և ոչ միայն դրանք) պարունակում են այսօրինակ տարրեր՝ որպես նախատիպ ունենալով Ավետյաց երկրի Ընտրյալ ժողովրդի մասին հրեական պատկերացումները:

Նման միտումների դեմ հարկավոր է պայքարել, քանզի դրանք լի են բռնությամբ ու պատերազմներով: Եվ ուղղակիորեն պետք է պայքարել բուն բռնության դեմ: Պրագմատիկ Արևմուտքում դա ամենաարդյունավետն է իրականացվում՝ մատնացույց անելով *«բռնությունը բռնություն է ծնում»* պնդումը, որը, թերևս, ամենահիմնավորվածն է հասարակական գիտություններում: Իսկ պայքարի լավագույնը ձևը երկխոսությունն է: Քրիստոնեությունը ներկայանում է կոշտ և մեղմ տարբերակներով. նույն կրոնի երկու ուղղությունների միջև երկխոսությունը հավատացյալների համար առավել իմաստալից կլինի, քան էկումենիկ երկխոսությունը տարբեր հավատների միջև: Այնուհանդերձ պարտադիր չէ, որ մոտեցումներից մեկը բացառի մյուսը:

Ինչպես սովորաբար լինում է, լավագույնը, թերևս, պոզիտիվ մոտեցումն է: Վերը քննադատված չորս համակարգերն առավելագույն հավատի կրիչներ են՝ ունենալով (գրեթե) ցանկացած հարցի պատասխան: Բոլորից նույն հավատը պահանջելը նույնն է, թե բոլորին ստիպել նույն համարի կոշիկ հագնել: Եվ այդուհանդերձ, համաշխարհային քաղաքակրթությունը որոշակի նվազագույն հավատի կարիք ունի:

Աղյուսակ 1-ը տալիս է գաղափարներ, որոնք կարող են օգտակար լինել: Աշխարհ, ուր ցանկացած վայր կենտրոն է, և որևէ վայր ծայրամաս չէ: Պակաս փքուն ժամանակային հայեցակարգ. վերելքներն ու անկումներն ընկալվում են բնական, սակայն դրանք որոշակի սահմանների մեջ պետք է պահվեն: Աշխարհը կարելի է հասկանալ միայն հոլիստական ու գլոբալ ձևով: Գործընկերություն բնության հետ, երբ մարդիկ ու բնությունը ծառայում են միմյանց՝ ապահովելով մեկմեկու հիմնական պահանջները: Հավասարություն և արդարություն հասարակությունների ներսում և դրանց միջև: Կյանքի՝ որպես նպատակի և միջոցի, բարելավում: Բառեր, բառեր, բառեր, որոնք, սակայն, մշտապես կարևոր են:

8. Ովքե՞ր են խաղաղության ռազմավարությունների կրողները

Ըստ էության, պատասխանը հետևյալն է՝ բոլորը: Գործնականում, սակայն, խնդիրներ են առաջանում պետական համակարգի՝ այդպիսիք կրող լինելու հարցում: Պատճառներից մեկն արդեն հիշատակել ենք, այն է՝ համակարգը կամ առնվազն դրա պատկերը վերափոխելու միտումն այնպես, որ առկա միջոցները համապատասխան դառնան կամ առնվազն համապատասխան թվան: Այստեղ հանգում ենք մտրակի, այսինքն բռնության, հատուցման և բանակցող վերնախավի:

Մյուս կողմից, լուրջ խնդիրներ կան նաև ոչ պետական համակարգը խաղաղության ռազմավարության կրող դարձնելու ճանապարհին: Մարդիկ, ինչպես արդեն նշվել է, ոչ միշտ են խաղաղասեր. եթե անգամ խաղաղասեր են, ապա իրենց տրամադրության տակ ունեն լոկ մշակույթի ուժը՝ ի տարբերություն պետական համակարգի, որը տիրապետում է տնտեսական և ռազմական լծակների: Ոչ պետական համակարգը նույնպես միտում ունի աշխարհը դիտել որպես մեխ՝ անգամ եթե իր մուրճը համեմատաբար մեղմ է (խոսքի միջոցով կամ օրինակ ցույց տալով համոզելը): Սա կարող է օգտակար լինել, բայց կարող է և չլինել: Առկա է երկաղուր համակարգ՝ գումարած ներկայում հզորանալու միտում ցուցադրող պոտենցիալ խաղաղարարը՝ անդրազգային կորպորացիան:

Փոխանակ երկու մեծագույն սխալներն անելու (խաղաղությունը հասանելի է միայն վերնախավերի կամ միայն ոչ-վերնախավերի միջոցով)՝ խնդիրը կարելի է լուծել խուսափելով այդ սխալներից՝ փորձելով երկու աղուրն էլ օգտագործել: Որպես օրինակ, թերևս, կարող է ծառայել Սառը պատերազմի ավարտը: Պետական համակարգը ձեռնարկեց կարևորագույն քայլեր. խոսքը մասնավորապես վերաբերում է Հելսինկյան գործընթացին: Սակայն էլ ավելի կարևոր էին ոչ-պետական համակարգի ձեռնարկած քայլերը. այլախոհական շարժումն Արևելքում մերկացրեց (հետ)ստալինիզմի ոչ-լեգիտիմությունը, իսկ խաղաղության շարժումն Արևելքում ու Արևմուտքում նույն բանն արեց միջուկային սպառնալիքի հանդեպ: Այս երկու ուղղությունները միավորվեցին Գորբաչովի անձի ու գործունեության մեջ՝ բաղձալի ավարտին հասնելով 1989-ի աշնանը[8]: Մի՞թե այսպիսի հաջողություն էլ չի կրկնվելու:

Ծանոթագրություններ

---

[1] Մարդը կարող է լավ զգալ կամ մարդը կարող է վատ զգալ. ակնհայտ է, որ համակարգերն այդկերպ «զգալ» չեն կարող: Այդուհանդերձ, դրանց կարող են վերագրվել առողջ ու հիվանդ կամ «լավ գործող» ու «վատ գործող» վիճակներ: Բժշկագիտությունից եկող հիվանդություն բառը նույնպես կարելի է կիրառել վերջիններիս նկատմամբ: Սակայն ո՞վ է որոշում, թե ի՞նչ չափանիշներով: Մենք հակված ենք սուբյեկտիվիզմի՞ (մարդիկ իրենք, սեփական չափանիշներով են որոշում՝ տառապո՞ւմ են, թե ոչ), թե՞ օբյեկտիվիզմի (ուրիշներն իրենց չափանիշներով են որոշում, որ նախորդները պիտի որ տառապելուց լինեն): Ես ընդունում եմ երկուսն էլ, և դրանց երկխոսությունը՝ միակ հնարավոր ելքն *հն/յան* հեռանկարում (տառապանք կա երանության մեջ, և երանություն՝ տառապանքի մեջ): Մարդիկ երբեմն ավելի խորաթափանց են դառնում հիվանդությունից հետո, հասարակությունը կարող է բռնության բերած ցնցումների հետևանքով ավելի լավ ճանաչի իր ուժեղ ու թույլ կողմերը: Արդյո՞ք դա նշանակում է, որ մենք միշտ պետք է նման գին վճարենք:

[2] Որպես օրինակ կարող է ծառայել Սառը պատերազմի ընթացքում նեղմիտ կենտրոնացումն ահաբեկչության ու քարոզչության հավասարակշռության վրա, ինչպես նաև այն, ինչ սկսվեց Սառը պատերազմի պաշտոնական ավարտից հետո: Բազմապատճառ ու բազմապայման հիմնախնդիրները պահանջում են բազմածավալ/բազմամակարդակ/բազմաշերտ լուծումներ: Բժշկագիտության մեջ գործածվող «պսիխոսոմատիկ» բանաձևն ասվածի վկայությունն է՝ թերևս «սոցիո-պսիխո-սոմատիկ» բանաձևն ավելի տեղին կլիներ: Միևնույն ժամանակ, նախկին Հարավսլավիայի տարածքում առկա հակամարտությունների պաշտոնական վերլուծությունները կատարվում են Սառը պատերազմի ավանդույթներին համապատասխան՝ գոյություն ունի միայն երկու հակամարտող կողմ, դրանք իրենցից ներկայացնում են պետություններ. ով չի ճանաչվել «վատ», մեխանիկորեն դառնում է «լավը», և այլն:

Իհարկե, նման պարզունակ մտածելակերպ գոյություն է ունեցել նաև Սառը պատերազմից առաջ (տե՛ս՝ 52-րդ մաս, 4-րդ գլուխ): Սակայն լավ ենթադրություն կարող է ստացվել, եթե հարավսլավական հակամարտությունը սառըպատերազմյան մտածելակերպով մարդկանց ներկայանա իզոմորֆ տարբերակով. Սերբիան համապատասխանում է Ռուսաստանին՝ կոմունիզմի հայրենիքին, Սլովենիան՝ Բալթյան պետություններին, կաթոլիկ Խորվաթիան՝ կաթոլիկ Լեհաստանին, և, վերջապես, կան նաև որոշակի քանակությամբ մուսուլմաններ՝ Հարավում:

[3] Առողջության վերականգնման համար հատկանշական օրինակներ են ճիշտ սնվելն ու ֆիզիկական վարժությունները, այլ կերպ ասած՝ առողջ կենսակերպը: Խաղաղության վերականգնման համար համարժեք օրինակը հաղորդակցության ուղիները բաց պահելն է:

[4] Այստեղ դա չկիրառելու պատճառներից մեկն այն է, որ խաղաղությունը ավելի շուտ հատակ, քան առաստաղ տեսնելու ջանք է, ինչի հետ շատերը կհամաձայնեն: Ինչքան խաղաղությունն ավելի է սահմանվում, այնքան ավելի բովանդակալից է դառնում, և այնքան ավելի քիչ համաձայնություն գոյություն ունի դրա շուրջ:

[5] Այլ կերպ ասած, կառուցվածքն այն միջավայրն է, որի միջոցով տարածվում է բռնությունը, և այդ միջավայրի դերը նման է ֆիզիկայում ձգողականության, էլեկտրականության կամ մագնիսական ուժի համար դաշտերի ունեցած դերին: Գաղութատիրությունը կարող է օրինակ ծառայել՝ սկզբից լինում էր մեգա-բռնության սկզբնական օգտագործումը, որն ուղղվում էր «գաղութատիրություն» անվանմամբ կառուցվածքի ստեղծմանը, ինչն ապագաղութականացումից հետո էլ մեծ ծավալներով շարունակում էր գործել:

[6] Եթե Ա-ն Բ-ից որևէ արտադրանք է պահանջում, որը խթանում է Բ-ին, վերջինս, ի պատասխան, պետք է Ա-ից պահանջի նույնքան խթանող արտադրանք: Եվ եթե այդ գործընթացներից մեկը կամ երկուսն էլ հանգեցնում են էկոլոգիական և/կամ մարդկային դեգրադացիայի, ապա Ա-ն ու Բ-ն պետք է համագործակցեն դրանց հետևանքները նվազեցնելու ուղղությամբ՝ որտեղ էլ որ դրանք ի հայտ գան:

[7] Տե՛ս՝ *The South Commission Report* (Geneva: South Center, 1990)

[8] Վերլուծելու համար տե՛ս իմ *'Eastern Europe Fall 1989 – What Happened, and Why?,* pp.76-97 in L.Kriesberg &D.R.Segal, *Research in Social Movements, Conflicts and Change,* vol. 14 (Greenwich, CT: JAI Press, 1992)

ՄԱՍ I

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1
Խաղաղության ուսումնասիրություններ. Իմացաբանական հիմքը

1.1 Ելակետ. խաղաղություն խաղաղ միջոցներով

Սկսենք խաղաղության երկու համադրելի սահմանումներից.

- *խաղաղությունը ցանկացած բռնության բացակայությունը կամ դրա թուլացումն է,*
- *խաղաղությունը հակամարտության ոչ բռնի և ստեղծագործ փոխակերպումն է:*

Երկու սահմանումներն էլ նկատի ունեն հետևյալը.

- *խաղաղարար աշխատանքը խաղաղ միջոցներով բռնության թուլացմանն ուղղված աշխատանքն է,*
- *խաղաղության ուսումնասիրությունը խաղաղարար աշխատանքի պայմանների ուսումնասիրություն է:*

Առաջին սահմանումն առնչվում է բռնությանը (խաղաղությունը դրա հակառակն է): Խաղաղության մասին գաղափար կազմելու համար մենք պետք է ծանոթանանք բռնության էությանը: Երկրորդ սահմանումը կապված է հակամարտության հետ (խաղաղությունը միջավայր է հակամարտությունների ոչ բռնի և ստեղծագործ հանգուցալուծման համար): Խաղաղության մասին գաղափար կազմելու համար մենք պետք է գաղափար ունենանք հակամարտության և դրա ոչ բռնի ու հնարամիտ փոխակերպման վերաբերյալ: Այս վերջին սահմանումն ակնհայտորեն ավելի ճկուն է, քան նախորդը:

Երկու սահմանումներն էլ մարդուն դիտարկում են որպես հասարակական էակ: Սրանով խաղաղության ուսումնասիրությունը դառնում է հասարակական գիտություն, ավելի կոնկրետ՝ կիրառական հասարակական գիտություն՝ դեպի արժեքային համակարգ ընդգծված ուղղվածությամբ:

Իմացաբանական առումով խաղաղության ուսումնասիրություններն առանձին դեպքերում հիմնվում են այլ գիտություններում ընդունված ենթադրությունների վրա: Դա վերաբերում է ինչպես հասարակական գիտություններին, այնպես էլ այլ կիրառական գիտություններին, ինչպիսիք են, օրինակ, բժշկությունը, ճարտարագիտությունն ու ճարտարապետությունը:

Այսպիսով, խաղաղության ուսումնասիրությունները ենթարկվում են գիտական հետազոտությունների այնպիսի ընդհանուր կանոնների, ինչպիսիք են սուբյեկտների միջև հաղորդակցությունը և փոխըմբռնումը: Ելակետային պայմանները (տվյալներ, արժեքներ, տեսություններ), եզրակացություններն ու դրանց միջև առկա կապերը պետք է բաց լինեն հանրային քննարկման համար: Գիտությունն ու յուրօրինակությունն անհամատեղելի են: Նմանապես անհամատեղելի են նաև գիտությունն ու գաղտնիությունը, ինչպես «գաղտնի» դրոշմագրով սահմանափակվում է անվտանգության խնդիրներին առնչվող ուսումնասիրությունների մատչելիությունը: Գիտությունը հանրային բնույթ ունի:

1.2 Խաղաղության ուսումնասիրությունների եռաբաժանումը

Սկսելու համար նախ տարանջատենք խաղաղության ուսումնասիրությունների երեք ուղղությունները[1].

1. *Խաղաղության էմպիրիկ ուսումնասիրություններ*, որ հիմնված են էմպիրիզմի վրա՝ էմպիրիկ իրականության (տվյալների) հետ տեսությունների համակարգված համեմատություն, որի արդյունքում տեսությունները վերանայվում են, եթե դրանք չեն համընկնում փաստերի հետ (տվյալները տեսություններից ուժեղ են):
2. *Խաղաղության քննադատական ուսումնասիրություններ*, որ հիմնված են *քննադատականության* վրա՝ էմպիրիկ իրողության (տվյալների) հետ արժեքների համակարգված համեմատություն, որի նպատակն է փորձել խոսքով և/կամ գործով փոխել իրողությունը, եթե այն չի համապատասխանում արժեքներին (արժեքները տվյալներից ուժեղ են):
3. *Խաղաղության կառուցողական ուսումնասիրություններ*, որ հիմնված են *կառուցողականության* վրա՝ արժեքների հետ տեսությունների համակարգված համեմատություն, որի նպատակն է համապատասխանեցնել տեսությունները արժեքներին՝ արդյունքում ստեղծելով նոր իրողության տեսլականներ (արժեքները տեսություններից ուժեղ են):

Լայն առումով, վերը նշված խմբերը համապատասխանում են խաղաղության ուսումնասիրությունների անցյալ, ներկա և ապագա ժամանակներին կամ եղանակներին: Էմպիրիզմի տրամաբանությունից ելնելով՝ տվյալները գերակա են տեսության նկատմամբ, քննադատական մոտեցման տրամաբանությամբ՝ արժեքները գերակա են տվյալների նկատմամբ, իսկ կառուցողականության տրամաբանության (անցումային) եզրակացությունն այն է, որ արժեքները գերակա են տեսությունների նկատմամբ: Հետևաբար, խաղաղության ուսումնասիրություններում «խաղաղություն» խորագրի ներքո ժողովված արժեքներն առաջնային դեր ունեն՝ ուղղորդելով տեսությունների կառուցվածքը դեպի տվյալների ուսումնասիրություն: Միևնույն ժամանակ, տվյալները ևս առաջնային են, քանի որ տեսություններն օգտագործվում են հենց դրանց ուսումնասիրության համար:

Ինչպե՞ս կարող են երկուսն էլ «առաջնային» լինել: Դա կարելի է բացատրել այն իրողությամբ, որ խաղաղության ուսումնասիրությունները, ինչպես ցանկացած կիրառական գիտություն, հիմնվում են այն համոզմունքի

վրա, որ աշխարհը փոփոխական է և հեշտ վերափոխվող՝ առնվազն մինչև որոշակի կետ: Մենք դեռևս կանդրադառնանք այն հարցին, թե ինչպես է այս ամենը հասնում կիրառական գիտության իմացաբանական հարթություն:

Խաղաղության էմպիրիկ ուսումնասիրությունները մեզ տեղեկություններ են հաղորդում անցյալում խաղաղության/բռնության չափերի ու պայմանների մասին, քանի որ միայն անցյալը կարող է տալ տվյալների ուսումնասիրության հնարավորություն: Հետազոտության կանոնները նույնն են, ինչ այլ հասարակական գիտություններում՝ տեղեկատվության մանրազնին հավաքագրում, մշակում, վերլուծություն և ինդուկտիվ տեսության ձևավորում, կամ հակառակը՝ դեդուկցիայի ճանապարհով, փաստերի և տեսության համեմատությամբ առաջինը երկրորդին հարմարեցնելով՝ դրանց համապատասխանության ձեռքբերում:

Այս ճանապարհով շատ բան կարելի է բացահայտել, հատկապես՝ անցյալի վերաբերյալ: Սակայն այն (դրական) ենթադրությունը, որ ինչ ճշմարիտ էր անցյալում՝ ճշմարիտ է նաև ապագայի համար, շինծու է և հենվում է մի պատկերացման վրա, համաձայն որի սոցիալական գործոնն ունի ժամանակի միատարրություն. առանց հիմնարար փոփոխությունների շարունակվում և ավարտվում (ընդհատվում) է ժամանակի մեջ: Անընդհատ փոփոխությունները կարող են կանխատեսվել արտարկման միջոցով, հատկապես եթե դրանք միօրինակ են՝ առանց վայրիվերումների: Խզվող փոփոխություններն ավելի խնդրահարույց են: Կարո՞ղ էին Հռոմեական կայսրության բնակիչները հասկանալ «Միջնադարը», կալվածատիրական կամ ֆեոդալական ժամանակահատվածները, հասկանո՞ւմ էին արդյոք միջնադարի մարդիկ «Արդի ժամանակաշրջանը», իրականում հասկանո՞ւմ ենք արդյոք մենք հետարդին (պոստմոդեռնը): Ապագաները, չտեղավորվելով էմպիրիկ ուսումնասիրությունների միջոցով հայտնի դարձած փորձի շրջանակներում, անհայտ են և, հնարավոր է, անճանաչելի: Դրանք նոր տեսակի *sui generis*[1] են: Պատմությունը՝ հասարակությունները կամ մարդիկ, ի տարբերություն ֆիզիկական բնության՝ «քվանտային թռիչքներ» չի կատարում: Նույնը, համաձայն էվոլյուցիոն տեսության, վերաբերում է կենսաբանական բնությանը:

Ապագան հասկանալու համար անհրաժեշտ հայեցակարգային և այլ գործիքները միշտ չէ, որ առկա են ներկան ու անցյալն ուսումնասիրելու համար օգտագործվող գործիքների շարքում, թեև մակրո-պատմաբանական ուրվանկարը կարող է օգտակար լինել: Սա մի փաստարկ է ապագան ոչ-գիտական միջոցներով, երազանքներով ու առասպելներով, կանխազգացողությամբ հասկանալու օգտին, ուր դերասաններն ու մոգերը նախընտրելի գիտնականներն են: Սա ավելի շատ երևակայություն է:

Խաղաղության քննադատական ուսումնասիրությունները խաղաղության/բռնության արժեքների լույսի ներքո վերլուծության են ենթարկում փաստերը կամ ներկայի մասին տեղեկատվությունն ընդհանրապես և ներկա քաղաքականությունը՝ մասնավորապես: Նման համեմատությունները կարող են հանգեցնել կոնսոնանսի կամ դիսոնանսի (համաձայնության կամ անհամաձայնության): Վերջին դեպքում եզրակացությունը ոչ թե էմպիրիկ է՝ «տեսությունները/արժեքները սխալ էին», այլ քննադատական՝ «իրականությունը վատն է/սխալ է», ինչպես գրաքննադատության կամ (քրեական) իրավագի-

[1] sui generis (լատ.)- իր տեսակի, յուրօրինակ /թարգ./

տության մեջ է: Դիսոնանսը ոչ թե արժեքները, այլ իրականությունը փոխելու առիթ է: Փոփոխության նպատակը փաստերն ապագայում կոնսոնանսի բերելն է: Խաղաղության քննադատական ուսումնասիրությունները, ինչպես արվեստի քննադատությունը, չպետք է անհրաժեշտաբար հանգեցնեն բացասական եզրակացությունների, թեև «քննադատություն» բառը հաճախ հենց այդպես էլ մեկնաբանվում է: Ողջունելի քաղաքականությունը կարող է և պետք է ողջունվի: Մեղադրյալները երբեմն արդարացվում են: Բայց օրենքը հազվագյուտ է խրախուսանք նախատեսում, և քննադատությունն էլ հազվագյուտ է հանգում «ոչ լավ, ոչ վատ» գաղափարին:

Խաղաղության կառուցողական ուսումնասիրությունները համադրում են «ինչը կարող է աշխատել» հարցին պատասխանող տեսությունները «ինչը կաշխատի» հարցին պատասխանող արժեքների հետ: Դա նույնն է, ինչ անում են ճարտարապետներն ու ինժեներները, երբ նոր բնակատեղեր ու հարակից կառույցներ են նախագծում: Եթե նրանք միայն էմպիրիկ մոտեցում ցուցաբերեին, ապա սահմանափակված կլինեին քարանձավների և մարդու բեռնափոխադրական կարողությունների էմպիրիկ ուսումնասիրություններով: Եթե նրանք միայն քննադատաբար մոտենային՝ զբաղված կլինեին միայն քարանձավների և մարդկանց թերությունների մասին հայտարարություններ անելով: Կառուցողականությունն ավելին է, քան այն, ինչ բացահայտում է էմպիրիզմը. այն նաև կառուցողական լուծումներ է առաջարկում: Քննադատական մոտեցումն այդ երկուսի միջև անփոխարինելի կամուրջ է: Արժեքների վրա խարսխված մոտիվացիա պիտի լինի:

Խաղաղության էմպիրիկ ուսումնասիրությունները գերակայող հասարակական գիտություն են: Օրինակ, երբ այն կիրառվում է միջազգային հարաբերությունների ոլորտում, արդյունքը հենց դա է՝ «միջազգային հարաբերությունները»:[2] Խաղաղության քննադատական ուսումնասիրությունները որդեգրում են հստակ դիրքորոշումներ: Դրանում հետազոտությունների մոտիվացիան ոչ միայն փաստերի, այլև արժեքների հստակությունն է. հստակեցվում է, թե ի՞նչն է լավ/ճիշտ և վատ/սխալ, ինչպե՞ս և ինչու՞: Հաճախ դա պետք է անել՝ հղում կատարելով ապագային. այն, ինչ այսօր դիտվում է որպես համոզիչ քաղաքականություն, վաղը կարող է դառնալ ավերիչ, այն, ինչ այսօր անընդունելի է, ավելի երկարաժամկետ հատվածում կարող է գործել:

Սրան ավելանում են կանխատեսումներն իրենց բոլոր անորոշություններով: Եվ խաղաղության կառուցողական ուսումնասիրություններն էլ սրան ավելացնում են բուժման կամ փոխհատուցման երանգ՝ ստեղծելով ապագայի ուրվագիծ՝ տեսլականներ, պատկերներ: Կանխատեսողները շահարկում են բացասական կանխատեսումն իբրև ինքնամերժ գուշակություն, իսկ բուժողները՝ տեսլականի բուժիչ բաղադրիչի ինքնաբավ էությունը: Որպես իմացաբանության սահմաններն ընդլայնող մեխանիզմ՝ երկուսն էլ առաջ են անցնում էմպիրիզմից՝ մի կողմից պահպանելով, մյուս կողմից՝ խախտելով այն: Ինչևէ, դա չի նշանակում, որ խաղաղության ուսումնասիրության յուրաքանչյուր տարր պետք է արտացոլվի քաղաքականության վրա հստակ ներազդեցության տեսքով: Խաղաղությունն անհրաժեշտաբար կարիք ունի համոզիչ էմպիրիկ ուսումնասիրությունների: Բայց դա վերջնական արդյունքը չէ, այլ ընդամենը՝ բարդ գործընթացի սկիզբ, որը շատ ավելի բարդ է, քան զուտ էմպիրիկ ուսումնասիրությունը:

1.3 Եռակողմ գիտություն. տվյալներ - տեսություններ - արժեքներ եռանկյունին

Այս երեք մոտեցումները փոխլրացնում են իրար, քանի որ տվյալներ-տեսություններ-արժեքներ եռանկյան մեջ գոյություն ունի ներքին կապ (տե՛ս՝ գծանկար 1.1):

Գծանկար 1.1. Տվյալներ - տեսություններ - արժեքներ եռանկյունին



Տվյալներն աշխարհը բաժանում են *ուսումնասիրվածի* և *չուսումնասիրվածի,* տեսությունները՝ *կանխատեսելիի* (այսինքն՝ «տեսության համար հաշվառվածի», որը կարող է լինել կամ չլինել կանխատեսման բաղադրիչ) և *անկանխատեսելիի*, իսկ արժեքները բաժանում են աշխարհը *ցանկալիի* ու *մերժելիի*: Էմպիրիզմի տրամաբանությունն այն է, որ տեսությունները հարմարեցվեն՝ ուսումնասիրվածը դարձնելով կանխատեսելի, իսկ անկանխատեսելին՝ չուսումնասիրված: Քննադատական մոտեցման տրամաբանությունն այն է, որ իրականությունը հարմարեցվի՝ ապագայում այնպիսի տվյալներ ստանալու նպատակով, որ ուսումնասիրվածը դառնա ցանկալի, իսկ մերժվածը՝ չուսումնասիրված: Իսկ կառուցողականության տրամաբանությունն այն է, որ ստեղծվեն նոր տեսություններ, որոնք կհամապատասխանեցվեն արժեքներին՝ ցանկալին դարձնելով կանխատեսելի, իսկ մերժվածը՝ անկանխատեսելի: Այս ամենը նոր չէ. բուժաշխատողները, ճարտարապետներն ու ինժեներները դա արել են սերնդե-սերունդ, դարերի ընթացքում:

Եթե ուսումնասիրվածը կանխատեսելի և ցանկալի է, իսկ չուսումնասիրվածը՝ անկանխատեսելի և մերժված, ապա մենք ապրում ենք իդեալական աշխարհում: Երկրորդ լավագույն տարբերակն այն աշխարհն է, որում ցանկալին չուսումնասիրված, բայցև երկարատև առումով էվոլյուցիոն գործընթացի միջոցով կանխատեսելի է որոշակի ավտոմատիզմով (օրինակ՝ «մենք դատապարտված ենք խաղաղության»): Այս երկու դեպքերն էլ քիչ հավանական են:

Մնացյալ վեց համադրություններն անհամապատասխանություն են պարունակում: Էմպիրիզմը փորձում է լուծել կանխատեսելի/չուսումնասիրված և անկանխատեսելի/ուսումնասիրված անհամապատասխանությունը: Քննադատական մոտեցման կողմնակիցները ուշադրությունը սևեռում են ուսումնասիրված/մերժված և չուսումնասիրված/ցանկալի անհամապատասխանությունների վրա: Կառուցողական մոտեցման կողմնակիցները փորձում են

ստեղծել նոր իրողություն՝ այս երեքը համապատասխանեցնելով իրար: Սկզբնակետը ցանկալի/անկանխատեսելի կամ մերժված/կանխատեսելի անհամապատասխանությունն է, որը կյանքի է կոչում նոր տեսություններ, որոնք կդարձնեն ցանկալին կանխատեսելի:

Ինչևէ, ախորժակն ուտելիս է բացվում, և վաղ թե ուշ կանխատեսելին ևս կուսումնասիրվի: Մի բան է կանխատեսել («պատկերացնել» ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը (ՄԱԽՈՒ), որոնց ձեռքին զենքը լոկ ուժի խորհրդանիշ է, որտեղ համատեղվում են երկու ցանկալին՝ բռնության բացակայությունն ու խաղաղապահությունը), այլ խնդիր է, թե արդյո՞ք դա գործում է կամ իրականում իրագործելի՞ է:

Այս նպատակով օգտակար է վերհիշել *էմպիրիկ իրականության*, այսինքն՝ նախկինում կամ ներկայում արդեն իսկ տեղի ունեցածի, *պոտենցիալ իրականության*, այսինքն՝ ապագայում տեղի ունենալիքի և *անիրականության*, այսինքն՝ երբևէ անիրականալիի միջև: Կիրառական գիտությունն ուսումնասիրում է էմպիրիկ իրականությունը պոտենցիալ և, ենթադրաբար, ավելի լավ իրականության համար գաղափարներ քաղելու նպատակով: Ճանաչողական կամուրջը մի տեսություն է, որը բավականաչափ բաց է չուսումնասիրվածը կանխատեսելու համար: Դա փակ համակարգ չէ, որը հաշվի է նստում միայն ուսումնասիրված էմպիրիկ իրականության հետ: Այդ կամուրջը կազմված է արժեքներից, որոնք բնորոշում են մերժվածի և ցանկալիի միջև ընկած աստիճանականությունները՝ մշտապես հնչող հարցով. «արդյո՞ք դա չի կարող ապագայում ևս գործել»: Դա անիմաստ հարց է այնպիսի աշխարհում, որը ենթադրաբար փոփոխական չէ կամ ուղղորդվում է անփոփոխ լինելու կանոններով: Այդպես մեզ սովորեցրել են մտածել ֆիզիկական աշխարհի մասին, սակայն ոչ կենսաբանական, սոցիալական և անհատական աշխարհների:

Վերջնական ստուգումը կարող է գտնվել միայն էմպիրիզմի տրամաբանության մեջ, ուր վերջին խոսքը փաստացի տվյալներինն է: Սակայն, քանի որ իրականությունը վերջնական չէ, այլ մշտապես նորովի է ստեղծվում (բուդդիստ/հումանիստ, ոչ թե քրիստոնյա/ֆիզիկոս ենթադրություն[3]), ապա շարունակական այս գործընթացում միշտ գոյություն ունի նոր մոտեցում, նոր իրականություն, նոր տվյալներ: Սրա ժխտումը դոգմատիզմ է, երբ հայտարարվում է, որ ցանկալի պոտենցիալը երբևէ էմպիրիկ լինել չի կարող, որովհետև, օրինակ՝ «բռնությունը մարդկային բնության մեջ է» կամ ցանկալի պոտենցիալն արդեն իսկ իրագործվել է, քանի որ «մենք հեղափոխական ենք/ունեցել ենք հեղափոխություն»:

Թեև պարուրաձև այս գործընթացը կարող է սկիզբ առնել եռանկյան ցանկացած կետում և ընթանալ ցանկացած ուղղությամբ, սակայն առավել հաճախ ելման կետ է դառնում ուսումնասիրված/կանխատեսելի/ժխտված անհամապատասխանությունը: Էմպիրիկ տվյալները լիովին հաշվի են առնվում և «բացատրվում» տեսականորեն: Բայց «սխալ է» նաև դրանք պարզ տերմիններով բնորոշել, օրինակ՝ «պատերազմ»: Հենց այստեղ է, որ պետք է գործի *երևակայությունը*: Էմպիրիկն ուսումնասիրելու համար այս միջոցը ևս անհրաժեշտ է: Սակայն գոյություն չունեցողը կամ դեռևս գոյություն չունեցողն ուսումնասիրելու համար դա շատ ավելի անհրաժեշտ է, քանի որ այդ դեպքում գոյություն չունի էմպիրիկ իրականություն, որից կարելի է խթաններ ստանալ կամ որի վրա կարելի է հենվել:

Շատ հաճախ է պատահում, որ վեր է հանվում հասարակության, պատմության և աշխարհագրության հեռավոր արմատներում տեղ գտած մի չնչին էմպիրիկ իրականություն և ուսումնասիրվում դրա գոյության պայմաններն (կամ դրանց վերանալու պարագայում՝ գոյություն չունենալու պայմաններն) ու փորձ է արվում ընդհանրացնել դրանք:[4] Մեկ այլ՝ առավել հեռանկարային մոտեցում է այնպիսի ամբողջական էմպիրիկ իրականության ուսումնասիրությունը, որն իզոմորֆ (կառուցվածքային տեսանկյունից նույնաձև) է հնարավոր իրականության հետ, օրինակ՝ առողջ ապրելակերպից խաղաղության հիպոթեզին հանգելը:

1.4 Գիտությունը որպես անփոփոխություն որոնող և վերացնող գործունեություն

Էմպիրիկ իրականության շուրջ տեսությունների ստեղծած պատը (և որքան ավելի բարձր է համապատասխանությունը, այնքան ամուր է պատը) հաղթահարելու բանաձևերից մեկը երրորդ (ընդհանուր դեպքում՝ n+1-երորդ) փոփոխականի կամ փոփոխականների շարքի ներմուծումն է: Այդ դեպքում հետաքրքիր է հասկանալ, թե ո՞ր պայմաններում է էմպիրիկ այս կամ այն բացահայտումը գործում: Արդյո՞ք այդ բացահայտումն իրոք անփոփոխ կմնա բոլոր փոփոխականների փոփոխությունների դեպքում: Օրինակ՝ արդյո՞ք իրականությանն իրոք համապատասխանում է այն մոտեցումը, որ պահանջարկն աճում է սպառողական գների նվազմանը զուգընթաց: Կարո՞ղ են որոշ ապրանքներ հատկապես գրավիչ լինել հարուստների համար, որոնք դրանք օգտագործում են իբրև իրենց սոցիալական դիրքը հաստատող ապրանքներ, և, հետևաբար, այդ ապրանքների հանդեպ պահանջարկը կաճի դրանց գների աճին զուգընթաց: Այո՛, այդպիսիք են, օրինակ, Գիֆֆենի ապրանքները:[5]

Այլ խոսքով, անկախ նրանից, փոփոխականները կարող են տրամաբանորեն երկատվել անկախների և կախյալների, թե ոչ, «բացահայտումը», որը կապում է այդ փոփոխականների շարքն աննկատ կորով («օրենք») կամ խմբավորում՝ համապատասխան կորելյացիոն համադրություններով («միտում»), երբեք էլ իրականում անփոփոխ չէ, այն իմաստով, որ ճշմարիտ կլինի ցանկացած դեպքում: Միշտ էլ գոյություն ունի «մնացյալ աշխարհը», մի համատեքստ, որը կարող է դիտարկվել իբրև փոփոխականների խումբ և կոչվել «պայմաններ»: Դրանք, իրենց հերթին, կարող են բաժանվել կիրառելի կամ ոչ-կիրառելի փոփոխականների՝ կախված այն բանից, թե որքանո՞վ է դրանց փոփոխությունը ներազդում բացահայտման վրա: Խնդիրն այն չէ, թե անփոփոխ բաղադրիչները ռետինե՞ են, թե՝ պողպատյա: Խնդիրն այն է, որ նախ մատնանշվեն այն պայմանները, որոնցում դրանք ներկայանում են իբրև պողպատե, և նոր ուսումնասիրվեն այն պայմանները, որոնց փոփոխման դեպքում ի հայտ են գալիս առավել ռետինանման որակները: Այդպիսով մենք փորձում ենք ձևավորել իրականություն, որն առավել մոտ է ցանկալիին՝ մտնելով ցանկալի/չուսումնասիրված հարթություն:

1.5 Արժեքները խաղաղության ուսումնասիրություններում

Եթե խաղաղության ուսումնասիրությունների գործընթացում փաստացի տվյալների վերաբերյալ հատուկ ենթադրությունների անհրաժեշտություն չկա (ինչպես և հասարակական այլ գիտություններում, ընդհանրապես փաստացի տվյալները հարկ է, որ հավաքագրվեն ճշգրիտ և արժանահավատ ձևով, այնուհետև վերամշակվեն ու վերլուծվեն), ապա արժեքներն ունեն յուրահատուկ, եթե չասենք՝ բացառիկ նշանակություն: Համեմատությունները կարող են արվել հասարակական աշխատանքի և քրեաբանության հետ: Սկսենք առանձին թեզերից:

Արժեքային թեզ 1.

> *Խաղաղության ուսումնասիրություններն առանց արժեքների դառնում են հասարակական ուսումնասիրություններ ընդհանրապես և աշխարհի ուսումնասիրություններ՝ մասնավորապես:*

Խաղաղության ուսումնասիրությունների՝ որպես առարկայի, արժեքային կողմնորոշումն այն դարձնում է *sui generis*: Առանց «խաղաղություն» արժեքի խաղաղության քննադատական և կառուցողական ուսումնասիրություններն ընդհանրապես անհնար կլինեին: Արդյունքում մնում է միայն տեսությունների համապատասխանեցումը փաստացի տվյալներին, որը, թեև կարևոր, բայց խաղաղության ուսումնասիրությունների լոկ մի մասն է: Այլ տերմինաբանությամբ, որը մենք դեռ կզարգացնենք հետագա տեքստում, կանխատեսումն ու բուժումը ևս անհնար կլինեին, իսկ դրա հետ մեկտեղ անհնար կլիներ խաղաղությունն ուսումնասիրողի մասնագիտությունն ընդհանրապես: Այստեղ պետք է նկատել, որ կանխատեսումն ավելին է, քան գուշակումը. այն արժեքային կողմնորոշում ունեցող գուշակություն է, որ ընդգրկում է խաղաղությունբռնություն հակադրությունը: Իսկ բուժումն, անշուշտ, նպատակային միջամտություն է, որն ուղղված է կանխատեսումների ուղեծիրը վեր՝ առավել խաղաղ շրջաններ ուղղորդելու նպատակին:

Այս տրամաբանությունը կառուցողական է, որը խթանվում է քննադատականության և փորձարկվում՝ էմպիրիզմի տրամաբանությամբ: Առողջապահության տեսությունից ու պրակտիկայից արվող փոխառությունները լոկ լեգիտիմացման փորձ են, որ հենվում են այն փաստի վրա, որ բժշկագիտությունն ավելի ճանաչված է, քան խաղաղության ուսումնասիրությունները: Այսօր: Երեկ բժշկագիտությունը ևս հայտնի չէր: Իսկ վա՞ղը:

Արժեքային թեզ 2.

> *Խաղաղությունը՝ որպես հիմնարար արժեք, պետք է լավ, բայց ոչ շատ լավ սահմանված լինի:*

Եթե «խաղաղություն» արժեքը խաղաղության էմպիրիկ, քննադատական և կառուցողական ուսումնասիրությունների խորհրդանիշն է, ապա այդ տերմինն անհրաժեշտ է սահմանել: Հարկ է մեծ աշխատանք կատարել «խաղաղություն» տերմինն իր ցուցանիշներով, չափորոշիչներով բավականաչափ

հստակեցնելու համար այնպես, որ որոշակի «իրավիճակը» (համապատասխան բժշկական տերմինը «դեպքն է») հնարավոր լինի դասակարգել և հասկանալ որպես խաղաղություն կամ խաղաղության բացակայություն: Մեզ անհրաժեշտ է իմանալ ինչի մասին ենք խոսում ու մտածում, որպեսզի կարողանանք հավուր պատշաճի գործել:

Արժեքը, վերոնշյալ տեսքով, մի չափանիշ է, որը բաժանում է բոլոր հնարավոր վիճակները ցանկալիի և մերժելիի, ինչպես նաև երրորդ՝ անտարբեր/անորոշ կատեգորիայի հնարավորություն է թողնում: Բնորոշել նշանակում է նաև տարակարգել, խոսել տարբեր աստիճանների մասին, ներկայացնել գիտական դասակարգումը՝ միամակարդակ կամ բազմամակարդակ: Այս ամենը մենք կանենք հետագա նյութի մեջ՝ հուսով ենք, առանց կորցնելու խորհրդանիշը:

Արժեքային թեզ 3.

Արժեքներն իմանալ չի նշանակում դրանք աներկբա ընդունել:

Գիտությունը հանրային, միջանհատական բնույթ ունի: Դա նշանակում է, առնվազն, որ այն կարող է փոխանցվել և գրեթե անփոփոխ ընկալվել: Խաղաղության արժեք(ներ)ի պատշաճ իմացությունը խաղաղության ուսումնասիրություններ կատարելու, դրանք ընկալելու, իրավիճակն ու գործընթացը ճիշտ գնահատելու նախապայմանն է: Այստեղ հարկ է մի կարևոր տարբերակում մտցնել. լիովին հնարավոր է իմանալ արժեքը՝ առանց այն ընդունելու: Կարելի է իմանալ խաղաղությունը՝ առանց «խաղաղասեր» լինելու, առանց խաղաղությանը հավատալու, կամ, նույնիսկ, առանց խաղաղություն ցանկալու (արժեքը յուրացնելու տեսանկյունից):

Արժեքը գիտակցված չափանիշ է, որ գիտակցվում է հաղորդման և ընկալման պահին. խնդիրն այն է, թե տվյալ իրավիճակն ընկալվում է որպես խաղաղությո՞ն, թե՞ խաղաղության բացակայություն: Գիտելիք ստանալը ճանաչողական գործընթաց է՝ խնդիրն այն է, թե արդյո՞ք այն ճիշտ է ընկալվել, թե՝ ոչ: Ընկալումը զգացական գործընթաց է. խնդիրն այն է՝ արդյո՞ք խաղաղության (այդ թվում մարդու ներքին խաղաղության) բացակայությունը վնասում է, թե՝ ոչ: Դա նույն տարբերությունն է, ինչ առկա է գիտակցության ու խղճի միջև: Պաուլո Ֆրեյրիի «գիտակցականացումը» *(conscientisation)* համադրում է այս երկուսը, քանի որ դրանք չեն հակասում միմյանց:

Արժեքային թեզ 4.

Անհրաժեշտ է առնվազն նվազագույն համաձայնություն արժեքների շուրջ, սակայն այդպիսի առավելագույն համաձայնությունը ցանկալի չէ:

Նվազագույն համաձայնությունն անհրաժեշտ է մտքերի, խոսքի և գործելու համար, ընդ որում՝ ոչ միայն տվյալ ոլորտի մասնագետների, այլ բոլոր շահագրգիռ կողմերի միջև: Հաղորդակցության տեսակետից էական չէ, արդյո՞ք այդ արժեքներն ընդունվում են, թե՞՝ լոկ իմացվում: Շատ ավելի կարևոր է, որ առանձին կոնկրետ իրավիճակները շատ թե քիչ նույնակերպ դասակարգվեն: Խնդիրն այն է, որ այս ոլորտում կրթության և ուսուցման ջրբաժանը չափա-

զանց նուրբ է: Որքան ավելի զտված և հարստացված է «խաղաղություն» արժեքը (բուն նշանակության նվազում լրացուցիչ նշանակությունների աճի պայմաններում), այնքան ավելի շատ իրավիճակներ կարելի է լիովին բացառել: Այլ խոսքով՝ որքան շատ չափորոշիչներ ներառենք խաղաղության բնորոշման մեջ, այնքան ավելի քիչ է հավանականությունը, որ կհանդիպենք էմպիրիկ իրավիճակների, ուր բոլոր չափորոշիչները կբավարարվեն: Ստացվում է, որ խաղաղության մասին պետք է մտածել հոգնակիով՝ խաղաղություններ: Սակայն խաղաղություն բառն ընդունված չէ հոգնակիով գործածել, չնայած որ, օրինակ, անգլերենում և գերմաներենում պատերազմներ (“wars” և “Kriege” համապատասխանաբար) բառը հանգիստ կարելի է կիրառել, ինչն էլ, ի տարբերություն նախորդի, հնարավորություն է ընձեռում դրա գիտական դասակարգման համար:[6]

Հետևաբար, անգամ նախընտրելի է, որ խաղաղությունն ուսումնասիրողների և այլոց միջև տարակարծություն լինի: Օրինակ՝ մարդկանց մեծամասնությունը համաձայն է (բացասական) խաղաղության բնորոշման հետ, ըստ որի այն ուղղակի բռնության բացակայությունն է: Միևնույն մարդիկ միշտ չէ, որ կհամաձայնեն լրացուցիչ բնորոշման հետ, որը (դրական) խաղաղությունը սահմանում է որպես հավասարություն և ներդաշնակություն մարդկային փոխհարաբերություններում, կամ այն բնորոշման հետ, ըստ որի դրական խաղաղությունը կառուցվածքային և մշակութային բռնությունների բացակայությունն է: Սրանք և շատ ուրիշներ՝ ընկալված անհամաձայնության օրինակներ են: Տարբեր բնորոշումների և թեզերի շուրջ ձևավորվում են դպրոցներ: Գիտնականների ու մասնագետների անհամաձայնությունները կարող են բարդացնել խնդիրները և խառնաշփոթ ստեղծել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շրջանակներում՝ ընդհուպ մինչև ոլորտի հանդեպ վստահության կորուստ: Բայց տվյալ բնագավառի գիտնականների և մասնագետների համաձայնությունը բոլոր խնդիրների շուրջ, այլ խոսքով՝ առավելագույն համաձայնությունը, շատ ավելի վտանգավոր է: Այն հեշտությամբ վերաճում է զանգվածային դոգմատիզմի՝ դասագրքային և ահանդուրժողական:

Բժշկագիտության հետ զուգահեռների անցկացումն այստեղ կրկին գայթակղիչ է: Խնդիր չէ, որ կարող են բժշկագիտության տարբեր դպրոցներ գոյություն ունենալ: Խնդիր է, երբ գոյություն ունի միայն մեկ դպրոց: Ներքին և արտաքին շրջանակներն ընտրության հնարավորություն պիտի ունենան: Բազմակարծությունից բնագավառը կշահի այնքան ժամանակ, քանի դեռ այն փոխներգործության մեջ է և բաց այնպիսի երկխոսության համար, որը հակված է փոխհարստացման, իսկ առանձին դեպքերում՝ սինթեզի: Կայուն սինթեզը հենց առավելագույն համաձայնությունն է՝ այնպես, սակայն, որ կրկին խրախուսվեն նոր բաժանումները: Թող փթթե՛ն հարյուրավոր դպրոցներ, բայց ոչ աղանդներ: Աղանդները փակ են օտարների համար և հավակնում են ճշմարտության մենաշնորհի:

Արժեքային թեզ 5.

> *Օբյեկտիվությունը համասուբյեկտիվությունն է, իսկ համասուբյեկտիվության նախապայմանը հստակությունն է:*

Հարց է ծագում. արժեքներով այդքան հարուստ ոլորտը կարո՞ղ է օբյեկտիվ լինել: Այդ հարցի հիմքում ընկած է գիտության շատ յուրօրինակ մի ըմբռնում,

ըստ որի գիտությունը նպատակ ունի բացահայտելու «օբյեկտիվորեն գոյություն ունեցող» իրականությունը և դրա վրայից հանելու շղարշը (*պատրանքը*): Իսկ դա, իր հերթին, ենթադրում է «դիտարկող-իրականություն» փոխհարաբերության գրեթե զրոյական մակարդակ: Դա էլ մի ենթադրություն է, որը կարող է դեռևս որոշ ժամանակ արդյունավետ լինել բնական գիտությունների տեսակետից, բացառությամբ ներատոմային երևույթների (այս դեպքում հայսենբերգյան անորոշության սկզբունքներն օբյեկտիվությանն այլ նշանակություն են տալիս): Ինչևէ, կենսաբանական, սոցիալական և ընդհանրապես մարդկային կյանքի ամենատարբեր բնագավառներին առնչվող ուսումնասիրություններում փոխհարաբերությունների զրոյական կամ ցածր մակարդակը չի կարող արդյունավետության առումով արդարացված համարվել, բացառությամբ այն դեպքերի, երբ արհեստական հեռավորություն է ստեղծվում դիտարկողի և դիտարկման օբյեկտի միջև՝ վերջինն օբյեկտիվ դարձնելու նպատակով:

Այս ամենը չի նշանակում, որ հասարակական գիտությունը պետք է ընկալվի որպես սուբյեկտիվ գործընթաց, նույնիսկ այն իրողության դեպքում, որ միևնույն երևույթն ուսումնասիրող երկու հասարակագետ հազիվ թե նույն եզրակացությանը հանգեն և համանման շարադրեն: Հասարակական գիտությունը, ինչպես գիտությունն ընդհանրապես, հանրային է՝ բոլորի կողմից քննարկման ենթակա: Որպեսզի դա հնարավոր լինի, ամեն ինչ պետք է հստակ լինի: Վերևում կիրառական գիտությունը բնորոշվեց որպես դիալեկտիկական գործընթաց, որը համադրելի է դարձնում դիտարկվողը, կանխատեսելին և ցանկալին: Ընդհանուր կանոն է, որ կանխատեսելին պետք է տեղի տա ուսումնասիրվածին, իսկ ուսումնասիրվածը՝ ցանկալիին. առաջինը՝ տեսությունն էմպիրիկ իրականությանը համապատասխանեցնելու, վերջինը՝ էմպիրիկ իրականությունն արժեքներին համապատասխանեցնելու միջոցով: Այդ մասին մենք բազմիցս արդեն խոսել ենք նախորդող տեքստում:

Այս երեքը միշտ էլ կարող են հստակ ներկայացված լինել՝ բնորոշելով վեց տրամաբանական ուղղություններ և դրանց միջև առկա երեք միջանկյալ տարածքներ: Հաղորդակցությունը հնարավոր է դառնում, երբ հստակություն կա, իսկ հաղորդակցվելու դեպքում հնարավոր է դառնում համասուբյեկտիվությունը, համեմատությունը, երկխոսությունը, տեղեկացված բանավեճը: Եթե այդ հիմնական ենթադրությունները հստակ չեն, կարևոր չէ՝ դրանք առնչվում են ուսումնասիրվածին, կանխատեսելիին թե ցանկալիին, կարելի է խոսել լոկ սուբյեկտիվության մասին: Սա կարող է բացթողման արդյունք լինել, երբ ենթադրություններ անելիս հստակությունը բացակայում է այն պատճառով, որ ենթադրողին կա՛մ թվում է, թե դրանք այնքան ակնհայտ ու բնական են, որ չարժե անգամ խոսել դրանց մասին, կա՛մ երբեմն ենթադրողը դրանց վրա պարզապես ուշադրություն չի դարձնում: Այլ դեպքերում դա նպատակային է արվում, և ենթադրությունը գիտակցաբար անուշադրության է մատնվում (գորգի տակ է թաքցվում):

Երբ հիմնարար ենթադրությունները թաքնված են, տրամաբանական եզրահանգումների շղթայում ի հայտ են գալիս չուսումնասիրված խզումներ: Այն համատեքստում, որում մենք այստեղ դիտարկում ենք օբյեկտիվությունը, կարևոր է դուրս բերել թաքնված ենթադրությունները: Հաջորդ քայլը կլինի ենթադրությունների փոխշաղկապումը տրամաբանական և համոզիչ պատմության մեջ, որն անվանվում է *պարադիգմ:*

Չորրորդ և հինգերորդ արժեքային թեզերից բխող եզրակացություններն արդեն իսկ ամփոփված են երրորդ արժեքային թեզում՝ արժեքները պահանջում են նույնքան ուշադրություն, որքան փաստացի տվյալներն ու տեսությունները: Խաղաղության ուսումնասիրությունների վերաբերյալ համաժողովներն ազատորեն կարող են «Խաղաղության բնորոշումը» օրակարգի մշտական հարց դարձնել:

Կարճ ասած, խորքային անփոփոխ իրականության առումով «օբյեկտիվությունը», որքան էլ դինամիկ լինի, ժխտված է և այժմ լքում է նաև բնական գիտությունների ոլորտը: Այստեղ մենք հիմնավորում ենք օբյեկտիվությունը որպես ակնհայտ ենթադրությունների վրա խարսխված համասուբյեկտիվ երկխոսություն. այլ խոսքով, սեփական ենթադրությունների գիտակցում:

1.6 Տեսությունը խաղաղության ուսումնասիրություններում

«Խաղաղության տեսություններ» խորագիրը նույնպես մշտապես կարող է տեղ գտնել խաղաղության ուսումնասիրություններին նվիրված համաժողովների օրակարգում: Հարցն այն է, թե արդյո՞ք խաղաղության բնագավառում տեսությունների զարգացումը յուրահատկություններ ունի, թե՝ ոչ: Ես կարծում եմ, որ ոչ: Խաղաղության լավ տեսությունը պարզապես հասարակագիտական լավ տեսություն է, թեև հակառակը միշտ չէ, որ ճիշտ է: Սակայն, այնքան էլ հստակ չէ, թե ինչ է իրենից ներկայացնում «հասարակագիտական լավ տեսությունը»: Իմ որոշ դիտարկումները, որ հիմնված են ոչ թե կանխակալ փիլիսոփայական տրամաբանության, այլ առավելապես սեփական փորձի վրա, կարող են արտահայտվել ներքոհիշյալ թեզերով կամ դիրքորոշումներով:

Տեսություն-թեզ 1.

Անցում երկվությունից[i] հն/յանի և տրամաբանական քառակուսիներից՝ կրկնակի դիալեկտիկայի:

Դիտարկենք խաղաղություն-բռնություն հակադրությունը: Այս երկու բառն, անշուշտ, կարող են բնորոշվել ինչպես միմյանց բացառող, այնպես էլ մեկ տրամաբանական շղթայի օղակներ: Սակայն դառիստական իմացաբանությունն առավել մանրակրկիտ մոտեցում է որդեգրում՝ մատնանշելով բռնությունը խաղաղության մեջ (օրինակ՝ չափազանց պասիվ լինելով) և խաղաղությունը բռնության մեջ (օրինակ՝ ակտիվ լինելով): *Հնն* առկա է *յանում* և *յանը՝ հնում*, *յանն* առկա է *հնում*, որն առկա է *յանում*, իսկ *հնը՝ յանում*, որն առկա է *հնում*, և այսպես շարունակ: Ավելին, մշտապես պետք է հաշվի առնել «և՛, և՛» ու «ո՛չ, ո՛չ» հնարավորությունները, որ ավելի շատ առկա են հնդուիստական/բուդդայական/ջայնիստական մոտեցումներում: Իրականությունը կառուցելիս կոշտ արիստոտելյան *tertium non datur*-ը[ii] վատ ուղեցույց է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա տրամաբանական խաղ է: Տղամարդ-կին տարբերակումն անշուշտ օգտակար է, սակայն սահմանափակում է մեր

[i] հուն. dichotomia- դիխոտոմիա /թարգ./
[ii] tertium non datur (լատ.)- երրորդը տրված չէ /թարգ./

տեղեկացվածությունը գենդերային արդի, եթե ոչ պոտենցիալ, իրականության լայն դաշտի վերաբերյալ:

Երկվություններին հարկ է խնամքով վերաբերել: Միևնույն ժամանակ, երկվությունները կարող են շատ օգտակար վերլուծական գործիք հանդիսանալ, անգամ եթե դրանք սպառիչ չեն (չկա «ո՛չ, ո՛չ» տարբերակը) և ոչ էլ բացառիկ (չկա «և՛, և՛» տարբերակը, նույնիսկ չափազանց նուրբ *հն/յան* դեպքերի համար): Նույնը կիրառելի է տրամաբանական քառակուսիների կամ կրկնակի երկվությունների համար, ինչը թույլ է տալիս տեսնել մի երկվությունը մյուսի լույսի ներքո (ինչպես, օրինակ, խաղաղություն/բռնության դիտարկումը կին/տղամարդ լույսի ներքո):

Երկվությունը, որպես այդպիսին, մեռած բան է. չկա գործընթաց: Միևնույն ժամանակ, հաստատապես կյանք կա Մանիքեյան երկվության մեջ (արտահայտություն, որ հաճախ կարելի է հանդիպել արևմտյան դպրոցների աշխատություններում), քանի որ մի կողմում բարին է, մյուսում՝ չարը, և դրանց միջև պայքար է ընթանում, որի ելքը կանխորոշել հնարավոր չէ: Այստեղ գոյություն ունի աստիճանականություն: Իդեալական տարբերակում բարին պետք է հաղթի, բայց չար ուժերը կարող են շատ զորեղ գտնվել: Յուրաքանչյուր դեպքում երկվությունը հանգում է մոնոտոմիայի (շատ մոտ է մոնոտոնիայի՝ մտավոր լոբոտոմիայի տարատեսակի): Կասկածից վեր է, որ խաղաղության ուսումնասիրությունները, ինչպես բժշկագիտությունը, հենվում են բռնության և խաղաղության, հիվանդության և առողջության ընդգծված հարաբերակցության վրա: Միևնույն ժամանակ, դրանք պետք է բաց լինեն այդ հակասությունների *հն/յան* տրամաբանության համար:

Հն/յան հակադրությունը կամ հակասությունն իր մեջ շատ ավելի կյանք է պարունակում: *Հն* ու *յանը* միմյանց հակադիր են, սակայն ավելի շուտ փոխլրացման, մեկը մյուսի մեջ լինելու, քան թե մյուսին հաղթելու առումով: Մեկը հավասարակշռում է մյուսին, ոչ թե գերակայում՝ ստեղծում է հավասարակշռություն: Բայց այդ հավասարակշռությունը կայուն չէ: Ձիջող կողմն աստիճանաբար սկսում է արագություն հավաքել մինչև առաջատարի դիրքը զբաղեցնելը: Հետո մյուսն է սկսում արագություն հավաքել և դառնում առաջատար, այնուհետև՝ կրկին նախորդը և այդպես շարունակ:

Արդյունքում ստանում ենք անկայուն գործընթաց՝ երկու ծայրահեղ բևեռների անկայուն հավասարակշռությամբ: Ի հակառակ Մանիքեյան գծային գործընթացի, ցիկլային (պարուրաձև) *հն/յան* գործընթացը վերջ չունի, չկա բարու համընդհանուր հաղթանակ չարի նկատմամբ (կամ հակառակը): Ապագայի հնարավոր տարբերակներն ավելի շատ են և հենց դա էլ սահմանափակում է գործողությունների հնարավորությունը՝ գործընթացը թողնելով *հն/յանի* կամայություններին: Ի հեճուկս ասվածի, պարզունակ արևմտյան մտածողությունը փորձում է ուղղորդել գործողությունները՝ լրջագույն սխալներ գործելու սպառնալիքի տակ խառնվելով բարու/չարի պայքարին:

Լրագրողները մշտապես հարցնում են. «Վերջապես աշխարհում խաղաղություն լինելո՞ւ է»: Այդ հարցը ենթագիտակցաբար հանգում է բռնության (ավելի հստակ՝ պատերազմի) և խաղաղության միջև Մանիքեյան երկվությանը՝ վերջապես մեկը հաղթելո՞ւ է մյուսին: Նույն կերպ կարելի է հարցնել՝ 2000 թվականին առողջություն լինելո՞ւ է: Իհա՛րկե ոչ: Ո՛չ 2000 թվականին, ո՛չ էլ որևէ այլ թվականի ո՛չ համընդհանուր խաղաղություն, ո՛չ էլ համընդհանուր առողջություն չի լինելու: Կարող է ունենանք խաղաղության և բռնության ավելի լավ հավասարակշռվածություն, այսինքն՝ ավելի շատ և ավելի լավ խա-

դաղություն և ավելի քիչ ու ավելի «լավ» (այսինքն՝ քիչ չարիք պարունակող) բռնություն՝ մարդկային պայմանների լավացում: Նույնը վերաբերում է առողջապահությանը. որոշ հիվանդություններ հնարավոր է վերացնել, կարող են հայտնվել նորերը, ճիշտ այնպես, ինչպես որոշ բռնություններ (հոգնակի) կարող են վերացվել, և կարող են ի հայտ գալ նորերը: Խաղաղության ուսումնասիրության խնդիրը նույնն է, ինչ բժշկագիտությանը. բարու լիակատար հաղթանակը չարի նկատմամբ հնարավոր չէ, բայց հնարավոր են ավելի լավ համադրություններ, որոնք որպես բռնության կամ հիվանդության հետևանք ավելի քիչ տառապանք են պարունակում:

Ինչպե՞ս են երկու այդպիսի անկայուն *հն/յան* գործընթացները համադրվում երկակի դիալեկտիկայում՝ արիստոտելյան-քարտեզյան տրամաբանական քառակուսիների[i] դառիստական տարբերակում: Վերցրեք աշխարհի ուսումնասիրության համար շատ հաճախ օգտագործվող երկու երկվությունները՝ Հյուսիս-Հարավ և Արևմուտք-Արևելք: Երկուսն էլ այստեղ վերծանվում են իբրև գերակայողը ստորադասվողի նկատմամբ: Ոչ մասնագետների համար սա նույնքան կայուն կարող է թվալ, որքան աշխարհագրությունն է՝ իր կայուն, կողմնացույցի ցուցմունքի վրա հիմնված ճշմարտություններով:

Սակայն *հն/յան* փոխաբերությունն անմիջապես մեր ուշադրությունը հրավիրում է այդպիսի երկվությունների անհամասեռությունների վրա: Հյուսիսում ևս կան «ստորադասվողներ», օրինակ՝ ոչ-սպիտակներն ու կանայք Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայում, ոչ-ռուսները նախկին Խորհրդային Միությունում, և կան «գերակայողներ» Հարավում, օրինակ՝ սպիտակներն Արգենտինայում/Բրազիլիայում, Հարավային Աֆրիկայում և Ավստրալիայում: Կան «ստորադասվողներ» Արևմուտքում, կրկին՝ ոչ-սպիտակները, կանայք, ազգային փոքրամասնությունները և «գերակայողներ» Արևելքում, օրինակ՝ ռուսները, հան-չինացիները, ճապոնացիները: Այս բաժանումներում ևս հնարավոր է ենթաբաժանումներ հայտնաբերել, օրինակ՝ *հնը հնի* ներսում գտնվող *յանում* և այլն: Չինական արկղերի տրամաբանությունը լավ ուղեցույց է, որը սոցիալական իրականությունը ներկայացնում է շատ ավելի լավ, քան որևէ արիստոտելյան երկվություն: Բայց դա չպետք է դոգմատիկ թռիչքի արիստոտելյան մտածողությունից մեզ մղի դառիստականին: Շատ ավելի արդյունավետ է այդ երկուսն էլ դիտարկել իբրև մտածողության տեսակներ, որոնք հաճախ սկսվում են արիստոտելյան անկենդան երկվություններից և ձգտում դառիստական կյանքի:

Ամենաէականն այստեղ դառիստական տրամաբանությունից բխող դիալեկտիկական գործընթացն է: *Հն/յան* պոստուլատները, որոնք ներկառուցված են հասկացողության այս տեսակի մեջ որպես ակնհայտ (ի սկզբանե սինթետիկ) գիտելիք, այստեղ հասկացվում են որպես ենթադրության աղբյուր, ինտուիցիա, որը մշտապես պիտի փորձարկվի գալիք էմպիրիկ իրականությամբ:

Ավելի հստակ՝ ենթադրությունները պահանջում են հավասարակշռություն, հարմոնիա գերակայողների և ստորադասվողների միջև կամ գերակայողների և դրանց հարաբերությունների ստորադասվող ասպեկտների միջև: Այնուամենայնիվ, եթե չհոգանք և չպաշտպանենք, ապա հավասարակշռությանը չի կարող երկար կայուն մնալ ու կդադարի գոյություն ունենալուց:

---

[i] տրամաբանական քառակուսի- «հակադրությունների քառակուսի», ունի դիագրամի ձև և ծառայում է դատողությունների չորս հիմնական տեսակների միջև եղած հարաբերությունները դիտարկելու համար /թարգ./

Հետևաբար, կարելի է կանխատեսել որոշակի հավասարակշռությունից հետո Հյուսիսի նկատմամբ Հարավի և Արևմուտքի նկատմամբ Արևելքի գերակայության հաստատման երկարատև միտում: Պատմությունն ալիքներով է շարժվում դեպի ապագա: Յուրաքանչյուր *ազդեցություն* ծնում է *հակազդեցություն*:

Բայց այդ դեպքում Հարավ-Արևելքը, հատկապես՝ բուդդայական-կոնֆուցիական երկրները (Չինաստան և Ճապոնիա, Կորեա և Վիետնամ) կրկնակի ալիքներով են առաջ սլանում: Մենք պետք է ակնկալենք, որ կրկնակի գերակայողին մարտահրավեր են նետելու կրկնակի ստորադասվածները՝ նվաստացված Չինաստանը, պարտված/ճառագայթված Ճապոնիան, Կորեան ու Վիետնամը՝ երկուսն էլ մասնատված Հյուսիսի կողմից: Մենք նաև պետք է ակնկալենք, որ հավասարակշռության փորձերը մերժվելու են նրանց կողմից, ովքեր սովոր են գերակայող դիրքում գտնվել: Արդյունքում, մակընթացությունները ու տեղատվությունները կշարունակվեն այնքան ժամանակ, մինչև կողմերն ավելի հեռավոր ապագայում չփոխվեն դիրքերով:

Այսպիսով, դառիստական տրամաբանությամբ՝ կյանքը տրոհվում է երկվությունների: Փաստարկն այն է, որ բոլոր երկվությունները և այլ դասակարգումները պետք է դիտարկվեն այդ տեսակետից և ոչ որպես ի սկզբանե տրված գիտելիք, այլ առավելապես էվրիստիկա տարբեր հիպոթեզերի համար: Մասնավորապես, մենք պետք է դիտարկենք տրամաբանական քառակուսու անկյունագծերը, քանի որ առկա է երկու՝ սովորաբար միմյանցից տարբերվող գործընթաց: Այս համատեքստում, սառըպատերազմյան Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք հակամարտությունների՝ որպես երկու տարբեր երևույթների ստատիկ ուսումնասիրությունը դառիստական տրամաբանության մեջ անհնար կլիներ, քանզի այդպիսի ուսումնասիրություններն անտեսում են բոլոր կատեգորիաների ներքին հակասությունները, դրանց անցողիկ բնույթը՝ մոռանալով Հյուսիս-Արևմուտք/Հարավ-Արևելք հակամարտությունը, ինչպես նաև այն փաստը, թե ինչպես մեկ հակամարտությունը կամ անկյունագիծը կարող է ներազդել մյուսին: Հյուսիս-Արևելքը և Հարավ-Արևմուտքը, ինչպես նաև դրանց միջև առկա փոխհարաբերությունները, նույնպես հետաքրքիր կատեգորիաներ են դառնում: Սակայն այս դեպքում ականատես ենք լինելու հակադիր ուղղություններով ընթացող երկու ալիքների՝ Հյուսիս-Արևելքի դեպքում նվազում է «Հյուսիս» մասը և աճում «Արևելք» մասը (և Հարավ-Արևմուտքի դեպքում աճում է «Հարավ», և նվազում «Արևմուտք» մասը): Սրանք մասամբ չեզոքացնում են միմյանց:

Թվում է՝ արդի աշխարհաքաղաքականությունը հաստատում է այսպիսի հեռանկարները՝ լիովին ծաղրելով Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ երկվությունները:

Տեսություն-թեզ 2.

Մատնանշե՛ք գործընթացները, իրադարձություններն ու անընդհատությունները. օգտագործեք դրանք խզումները հայտնաբերելու համար:

Գործընթացը, փոփոխության առումով, ինքնին նորմալ և բնական է՝ ամեն ինչ շարժվում է, հոսում, *panta rhei*[i]: Բայց արագությունները կարող են տարբեր լինել: Հաշվի առնելով մարդկային կյանքի տևողությունը և մեր սահմա-

[i] Panta rhei (հուն.) - ամեն ինչ հոսում է /թարգ./

նափակ ընկալունակությունը՝ սարերի փլուզման, սառցադաշտերի հալելու և էլեկտրոմագնիսական ալիքների արագությունների տարբերություններն էական են: Կա սարերի ժամանակ, սառցադաշտերի ժամանակ, կենսաբանական ժամանակ, հասարակական ժամանակ (պատմություն), մարդու ժամանակ (կենսագրություն), էլեկտրոնի ժամանակ: Եթե մարդու ժամանակում չափվող երևույթը «բոլոր գործնական առումներով» անփոփոխ է, ապա մենք կարող ենք այն համարել *անընդհատություն*: Փոփոխականը, որպես ֆունկցիա ժամանակից, հաստատուն է:

Անհրաժեշտ է ևս մեկ տարբերություն ընդգծել: Ժամանակագրության տեսակետից փոփոխությունները կարող են համարվել շարունակական կամ ոչ շարունակական: Շարունակական փոփոխությունը փոքր է այնքան, որքան այն սահմանափակող ժամանակահատվածը: Խզվող փոփոխությունը, ընդհակառակը, չի նվազում ժամանակահատվածի նվազմանը զուգընթաց: Այն խուսափում է, «թռիչքաձև է»: Այդ թռիչքը հանդես է գալիս որպես *իրադարձություն*: Փոփոխականը խզվող ֆունկցիա է ժամանակից:

Այսպիսով, մենք գործ ունենք իրադարձությունների, գործընթացների (որպես անընդհատ ֆունկցիա ժամանակից) և անընդհատությունների հետ: Երեքն էլ էական են մարդու և հասարակական ժամանակի տեսանկյունից: Արդի ֆրանսիական պատմագիտության, մասնավորապես *Անալի ու Բրոդելի* աշխատություններում դրանք համապատասխանաբար կոչվում են՝ *événementielle, conjoncturelle* և *la longue durée*: Սա առավել հետաքրքիր է դառնում, երբ միմյանց հետ ենք համադրում ժամանակավոր երևույթի այս երեք եղանակները, ինչը մենք պարտավոր ենք անել՝ արտացոլելու համար իրականությունը, որում բոլոր բաղադրիչները մշտական շարժման մեջ են, բայց տարբեր եղանակներով:

Աղյուսակ 1.1. Փոփոխության եղանակները. երկու փոփոխականներ

	Իրադարձություններ	**Գործընթացներ**	**Անընդհատություններ**
Իրադարձություններ	Ազդեցություն-հակազդեցություն Իրադարձությունների երկխոսություն	Արագացնող Դանդաղեցնող	Ցերբազատում անկայուն հավասարակշռությունից, իրադարձություններ
Գործընթացներ	Խթանող, Զսպող	Համակցող +, 0, -	Իրադարձություններ ծնող *խզումներ*
Անընդհատություններ	Զսպող իրադարձություններ	Զսպող գործոններ՝ գծայինից դեպի պարբերաշրջանային	Համագոյակցություն

Ինչպե՞ս են իրադարձությունները (արագ), գործընթացները (դանդաղ) և անընդհատությունները (շատ դանդաղ) նույն համակարգում ներազդում իրադարձությունների, գործընթացների և անընդհատությունների վրա: Դա կախված է երևույթների համադրության աստիճանից ու եղանակից: Որոշ ենթադրություններ արծարծված են աղյուսակ 1.1-ում:

Նախ և առաջ, *նույնակերպ* երևույթների հիմնական առանցքը, սկիզբ առնելով *երկու խումբ իրադարձություններից*, ի հայտ է բերում համակարգի եր-

կու մաս կամ «անկյուն»: Մարդկային գործողություններն ընդհանրապես, և խոսքը՝ մասնավորապես, հանդիսանալով ոչ շարունակական երևույթներ և տոպոլոգիական առումով արտացոլելով միմյանց, առաջ են բերում միասնական գործողություն կամ երկխոսություն՝ յուրաքանչյուր դեպքում հանդես գալով որպես *ազդեցություն–հակազդեցություն:* Հնարավոր է, որ դրանք փոխկապված չլինեն, սակայն փոխկապվածության մեջ դրանք դիտարկելը կարող է նոր հարթություններ բացել:

Նույնը վերաբերում է նաև *երկու գործընթացներին* համակցումը կարող է զրոյի հանգեցնել, բայց պետք է հաշվի առնվի և գալիք իրականության մեջ փորձարկվի նաև այն ենթադրությունը, որ դրանք կարող են խթանել կամ խաթարել միմյանց (անգամ եթե չհիշատակենք, որ համակցումը կարող է խթանել մեկին և խաթարել մյուսին): Ինչևէ, երկու *անընդհատությունների* դեպքում դժվար է կանխատեսել որևէ այլ բան, քան համագոյակցություն: Ինչ-որ չափով հաստատուն է մի կողմը, ինչ-որ չափով՝ մյուս կողմը, և առանձնահատկությունը հենց դրանում է. ճիշտ այնպես, ինչպես մարդու ժամանակում չափվող աշխարհագրությունն ու ռասան են:

Երևույթների առաջընթացը *տարբեր եղանակներով* ամեն ինչն ավելի աշխույժ է դարձնում: Իրադարձությունները կարող են մեծ ազդեցություն ունենալ գործընթացների և անընդհատությունների վրա: Ճիշտ պահերին սկսվելով՝ դրանք կարող են լինել պրոցիկլային կամ հակացիկլային, գործընթացներն արագացնող կամ դանդաղեցնող: Եվ դրանք առավել մեծ ներազդեցություն կարող են ունենալ անընդհատությունների վրա, օրինակ՝ ինչպես հնուիթները, ըստ առասպելի, անկայուն հավասարակշռությամբ անշարժացած այսբերգը թեթևակի հրումով օվկիանոս նետեցին:

Ամենահետաքրքիրն այն ազդեցությունն է, որ գործընթացը կարող է թողնել անընդհատության վրա: Եթե որևէ բան աստիճանաբար (շարունակական կերպով) է փոխվում, իսկ մեկ այլ բան ընդհանրապես չի փոխվում, և այդ երկուսը փոխշաղկապված են, ապա վաղ թե ուշ ինչ-որ բան պետք է տեղի ունենա: Մեկը պետք է զիջի:

Զիջող անընդհատությունը հայտնի է որպես *խզում*[i]: Եթե կրկին դիմենք ավանդապատումներին, ապա բալենու ճյուղին հավաքվող ձյունը լավ օրինակ է այստեղ: Սովորաբար, քանի որ բալենու ճյուղերը կլորավուն ու ողորկ են, ձյունը դրանց վրայից հեշտությամբ թափվում է: Բայց եթե ձյունը թաց է, ապա դառնում է կպչուն և մնում ճյուղից կախված: Ճյուղը, թեքվելով ձյան ծանրության ներքո, ավելացնում է ձյան թափվելու հնարավորությունը: Սակայն եթե ճյուղը բավականաչափ ճկուն չէ, կարող է ջարդվել: Այստեղից են հենց սկիզբ առել մարտարվեստները:

Սա նաև ցույց է տալիս, թե ինչպես է անընդհատությունն ազդում գործընթացի վրա՝ մերժելով դրա գծայնությունը: Գծային կուտակումը (ձյունը ճյուղի վրա) հասնում է առավելագույն չափին (սպառվում է առկա տարածքը), ճյուղը թեքվում է, և ձյունը թափվում է, հալում, գոլորշիանում, որ վերադառնա ճյուղի վրա երկրորդ, երրորդ, չորրորդ անգամ: Գծային երևույթը դառնում է ցիկլային, այսինքն՝ խաթարված: Դա կարևոր է, քանի որ լինելով սահմանափակ՝ աշխարհը չի կարող տեղավորել անսահմանափակ գծայնություններ: Այն կարող է կարգավորել *խզումները*, ցիկլայնությունը կամ երկուսն էլ:

---

[i] ֆրանս. rupture- խզում, խաթարում /թարգ./

Վերոնշյալ *խզման* սկզբունքը հայտնի է նաև հեգելյան դիալեկտիկայից, որպես քանակից (կուտակում) անցում որակի (թռիչք, իրադարձություն, *խզում*): Դա, օրինակ, կարող է պատճառ դառնալ, որ խաղաղությանն ուղղված շարժումները երբեք չդադարեն, քանի որ վաղ թե ուշ բռնության առանձին դրսևորումներով տեղի կունենա խզում: Միևնույն ժամանակ, դրանք՝ որպես քողարկված քաղաքականություն, երկար ճանապարհ ունեն միասին անցնելու, *la longue durée*:

Ինչպե՞ս են գործընթացներն ու անընդհատությունները ներազդում իրադարձությունների վրա: Անընդհատությունները խաթարում են դրանց արդյունքները: Փոփոխե՛ք ուսումնական ծրագրերը կամ ավելացրե՛ք ուսուցչի աշխատավարձը կրթության ոլորտի անփոփոխ, գերազանցապես հակակրթական տեղեկատվական համակարգի պայմաններում և տեսեք, թե ինչ կկատարվի: Մեծ է հավանականությունը, որ անընդհատությունները կչեզոքացնեն իրադարձությունները: Դա ցինիկ, բայց իրատեսական *plus ça change, plus c'est la même chose*[i] սկզբունքի մեկնաբանություններից մեկն է:

Բայց գործընթացներն իրադարձությունների վրա այլ ազդեցություն կարող են ունենալ: Դրանք կարող են խթանել իրադարձությունը, ասենք՝ հետևելով դրան, կամ նախորդելով իրադարձությանը՝ խաթարել այն այնպես, ինչպես իրադարձություններն են ներազդում գործընթացների վրա: Քաղաքական գործիչներին այս երևույթը հայտնի է որպես *հասունացած պահ* կամ *ճիշտ ժամանակ*, որ իրադարձությանը հնարավորություն է ընձեռում տեղի ունենալ ճիշտ գործընթացում: Կամ, որոշակի հաջողությամբ, գործընթացը կարող է ինքնուրույն տեղի ունենալ: Երկու դեպքում էլ կարող են գիտակցված համակցումներ արվել:

Տեսություն-թեզ 3.

Կառուցեք տեսությունները՝ հիմնվելով կառուցվածքի և հիմնօրինակի գիտակցման/իզոմորֆիզմի և ոչ թե առանձին փոփոխականների վրա:

Միևնույն ժամանակ, կենտրոնանալով դիաքրոնիայի վրա (երևույթը ժամանակի մեջ) պետք չէ անտեսել սինքրոնիան (երևույթը կոնկրետ ժամանակում): Եթե դիաքրոն երևույթի մաթեմատիկական տերմինը (միակցված) հետագծերով *ժամանակային շարքն* է, ապա սինքրոն երևույթը մաթեմատիկական լեզվով կարելի է կոչել *երկրաչափական*: Ընդհանրացնող հասկացությունը կառուցվածքն է (Կ), որը բնորոշվում է որպես բաղադրիչների (Բ) և դրանք շաղկապող հարաբերությունների (Հ) հավաքածու՝ *Կ=Կ (Բ, Հ)*: Հարաբերությունները կարող են բաժանվել սինքրոնի և դիաքրոնի՝ հետագա խորացման տեղ թողնելով երկուսի համար էլ:

Կառուցվածքի փոխարեն կարելի է օգտագործել նաև *հիմնօրինակ* բառը: Նույն կառուցվածքն ունեցող համակարգերը, որ նաև նույնաձև են, իզոմորֆիկ են: Խնդիրն այն է, թե երկու համակարգերի համապատասխան բաղադրիչներն արդյո՞ք համապատասխանորեն են հարաբերվում, օրինակ՝ ինչպես տեղանքն ու քարտեզը: Իրական կյանքում, հակառակ մաթեմատիկայում առ-

[i] plus ça change, plus c'est la même chose (ֆրանս.)- որքան փոխվում, այնքան նույնն են մնում իրողությունները /թարգ./

կա բացառիկության (և ստերիլության), իզոմորֆիզմները երբեք իդեալական չեն: Դրանք մոտավոր են, ինչպես փոխաբերությունները:

Տեսություն-թեզ 4.

Գերադասեք պոլիթեիստական և պանթեիստական տեսությունները մոնոթեիստական և աթեիստական տեսություններին:

Բոլոր տիպի տեսություններում ինչ-որ բան (*բացահայտյալը)* բացատրվում է մեկ այլ բանով (*բացահայտիչով):* Կապն ունենում է տրամաբանական բնույթ և կառուցվում է եզրահանգումների ճանապարհով: Ինչպե՞ս բացատրել, որ «Սոկրատեսը մահկանացու է»: Նախ, որովհետև (գլխավոր փաստարկ) «բոլոր մարդիկ մահկանացու են» և (երկրորդական փաստարկ) «Սոկրատեսը մարդ է»: Հետևաբար, «Սոկրատեսը մահկանացու է» (*«Բարբարա»* սիլլոգիզմ): Ինչո՞վ կարելի է բացատրել սկանդինավյան պետությունների միջև առկա խաղաղությունը: «Անկանխակալ համակեցության բարձր աստիճանով» ու «կոնֆլիկտների հանգուցալուծման բարձրակարգ համակարգով». սրանք խաղաղության մեխանիզմներ են, որոնք սկանդինավյան ժողովուրդները ունեն:

Բացահայտիչը որոշակի բացատրական ուժ ունի: *Բացահայտիչների* հիմքում մենք հայտնաբերում ենք աքսիոմներ՝ անառարկելի համոզմունքներ, որ հետագա բացատրության կարիք չունեն: Ընդհանուր առմամբ, մենք այստեղ խոսում ենք տրամաբանական շղթաների մասին, որոնց որևէ համատեքստում հանդես եկող *բացահայտիչը* մեկ այլում դառնում է *բացահայտյալ:* Աքսիոմը չունի *բացահայտիչներ,* քանի որ հենց ինքն է իր բացատրությունը: Այն ոչ թե ինքնին բացատրող, այլ ինքնաբացատրող է:

Սակայն դա աքսիոմներին աստվածահարիր առանձնահատկություններ է տալիս: Նրանք ինքնաբավ են, նրանց բացատրությունը հենց իրենք են, ինչպես Աստված ինքն է իր պատճառը *(causa sui)*: Նրանք ամենագետ են, այն իմաստով, որ պարունակում են ողջ գիտելիքը, նույնիսկ եթե դա մասամբ քողարկված է: Նրանք ամենազոր ու ամենագթ են և ի վիճակի են բացատրել ամեն ինչ, ամենուր: Նրանք իմաստ են սփռում: Ինչպես ամենազոր Աստված է մարդկային գոյության գլխավերևում, այնպես աքսիոմներն են գերիշխում աքսիոմատիկ բուրգի՝ դեդուկտիվ համակարգի վերևում: Նույնիսկ նվազագույն ու ամենահամեստ էմպիրիկ բացահայտումն իր մեջ աքսիոմից բխող իմաստ է պարունակում և դրանով էլ տեղավորվում է մեծ պատկերում՝ ճիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուր փոքր մարդ տեղավորվում է Աստծո համակարգում:

Յուրաքանչյուր տեսության հիմքում հավատի գործոն կա, և դա պարզ պատճառ ունի: Նույնիսկ եթե *բացահայտյալը* տրամաբանորեն բխում է *բացահայտչից*, ստանալով իր էմպիրիկ գոյության իմաստը, իմա՝ գոյություն ունենալու իրավունքը, հակառակը միշտ չէ, որ ճշմարիտ է: «Ա-ից բխում է Բ-ն» միշտ չէ, որ նշանակում է «Բ-ից բխում է Ա» (հակառակը), այլ միայն այն, որ «միայն ոչ-Բ-ից է բխում ոչ-Ա» (հակապոզիտիվ): Արդյունավետությունն ու օգտակարությունը, որպես *բացահայտիչներ*, նոր փաստարկ չեն ավելացնում ո՛չ աքսիոմների, ո՛չ էլ Աստծո (աստվածների) դեպքում:

Միշտ էլ կարող են այլընտրանքային բացատրություններ լինել, և հենց դա է պատճառը, որ այս գիրքը կոչվում է «խաղաղության ուսումնասիրու-

թյուն*ներ»* և ոչ թե «խաղաղության ուսումնասիրություն»: Սա ուժեղ փաստարկ է այս բնագավառում տեսությունների մշակման պոլիթեիստական, ոչ թե մոնոթեիստական հայեցակարգ որդեգրելու համար, ուր բացատրական ուժը/լույսը գալիս է բազմաթիվ աղբյուրներից, ոչ թե միայն մեկից:

Կարող է գոյություն ունենալ մի քանի մոդել՝ մեկ աստված/տեսություն այս երևույթի և մեկ ուրիշը՝ այլ երևույթի համար, կամ նույնիսկ մի քանի աստվածներ/տեսություններ՝ միևնույն երևույթի համար: Անշու՛շտ, հնարավոր է՝ դա շատ է մի երևույթ բացատրելու համար, բայց հետո՞ ինչ: Եթե սկանդինավյան խաղաղ համայնքի գոյությունը բացատրվում է ինչպես անկանխակալ համակեցությամբ (եթե սա փոխկախվածություն է նշանակում, ապա առնվազն հարկ է ավելացնել «ուղղահայաց» որակումը), այնպես էլ կոնֆլիկտների մշակման համակարգի առկայությամբ, ապա ընդգծվում են երկու գործոններ, որոնք բացատրում են համակարգի տարբեր, բայց առնվազն մասնակիորեն համընկնող հատվածները: Կամ թեկուզ նույն բանին երկու բացատրություն տվեք: Միայն մոնոթեիստական մտածելակերպում է, որ տեսությունները բացառում են միմյանց:

Այդ դեպքում, ի՞նչ է համապատասխանում պանթեիզմին և աթեիզմին: Պանթեիզմն ամենաթող է՝ Աստված վերևում չէ, այլ ամենուր, ներսում: Մեկնաբանությունը. իմաստը հենց *բացահայտության* մեջ է, բացատրության կարիք ունեցողը հենց ինքն էլ բացատրությունն է, այն վերևից չի տրվում, այլ իր իսկ ներսից է գալիս: Բուդդայական անիվը, փոխկապակցելով մոտեցումները՝ առանց դրանցից որևէ մեկը գերակա համարելու, առանց որևէ մեկն անտեսելու, վկայում է, որ իմաստը մոտեցումների պտույտի դաշտում է: Մոնոթեիստական բացատրության համար համապատասխանող սիմվոլն այստեղ կլինի բուրգը կամ եռանկյունին:

Աթեիզմը հայտարարում է, որ Աստված գոյություն չունի: Մեկնաբանությունը. իմաստ գոյություն չունի: Բոլոր մոտեցումները ցրված են, բացահայտումները՝ մեկուսի, և դրանցում բացակայում է ներքին կապը: Չկա բացատրություն, չկա բացատրելու բան: Հասարակագիտության մեջ սա կարող է համապատասխանել «բոկոտն էմպիրիզմին». հանե՛ք ձեր բացահայտումները համակարգչից, ցուցակագրե՛ք դրանք, մեկ առ մեկ, նույնիսկ մի՛ դասակարգեք, քանի որ դա արդեն իսկ լույս է սփռում:

Այս չորս դիրքորոշումներից երկու ծայրահեղները հարկ է մերժել: Մեկ տեսության (*միակ* տեսության) գաղափարը մշակութային բռնության բացահայտ հրավեր է. բոլոր այլ ճշմարտություններն անտեսվում են, փորձ է կատարվում իրականությունը տեղավորել միայն մեկ ճշմարտության ներքո, իսկ մնացյալը խառնվում է մի կույտի մեջ որպես «ոչ-արևմտյան», «ոչ-քրիստոնեական», «ոչ-մարքսիստական» և այլն: Դա գրեթե անխուսափելիորեն հանգեցնում է մեկ դպրոցի, *միակ* դպրոցի՝ որպես առաջնորդ հանդես եկող մարգարեով: Իսկ քանի որ այդ դպրոցը կամ եկեղեցին դիտվում է որպես միակ իսկական աստծո ներկայացուցիչ՝ մենաշնորհային և համընդհանուր, կառուցվածքային բռնությունն այդպիսի կազմակերպաձևում անխուսափելի է: Միամարգարեությունը մոնոթեիզմի գրեթե անխուսափելի ուղեկիցն է, թեև մոնոթեիզմը բազմամարգարեության հետ համատեղելու հետաքրքիր օրինակ է հուդայականությունը, երբ տարբեր մարդիկ Ճշմարտության տարբեր երեսներ են տեսնում: Հենց այստեղից էլ գալիս է Թալմուդի՝ երկխոսության մեծ հակումը:

Բայց իմաստի, ճշմարտության, լույսի բացակայության գաղափարը նույնպես անհամատեղելի է խաղաղության ուսումնասիրությունների հետ: Մեկուսի էմպիրիկ բացահայտումները, երբ դրանց իմաստ վերագրված չէ, գայթակղիչ կարող են լինել, թերևս այն պատճառով, որ դրանք չեն հրամցվում բացատրություններով՝ հրավիրելով ընթերցողին/հանդիսատեսին հանդես գալ ուրույն մեկնաբանություններով: Գայթակղությունը պայմանավորված է ոչ թե իմաստի բացակայությամբ, այլ այդ իմաստն ստեղծելու՝ մեռած գաղափարի մեջ կյանք դնելու անհրաժեշտությամբ:

Խաղաղության ուսումնասիրությունների տեսանկյունից աշխարհը չեզոք չէ: Այն լեցուն է իմաստով և բռնությունից խաղաղություն կամ, առավել պատկերավոր ներկայացնելու դեպքում, մահից կյանք տանող աստիճանականություն է, նույնիսկ եթե աշխարհը մեծամասամբ *adiaphora*[i] է՝ կազմված չեզոք բաղադրիչներից:

Արդյունքում մնում են պոլիթեիզմ և պանթեիզմ տարբերակները, որոնք հենվում են տեսությունների բազմակարծության և ընդհանուր իմաստի վրա: Հարկ չկա երկուսի միջև ընտրություն կատարել՝ դրանք բավականին լավ փոխլրացնում են միմյանց:

1.7 Խաղաղության ուսումնասիրությունների մտավոր ոճի մասին

Իր էությամբ, մտավոր ոճն ինչ-որ առումով կոչված է ի մի բերելու վերը շարադրվածը՝ փորձելով այն տեղավորել համապարփակ շրջանակներում: Համեմատաբար շատ են շեշտադրվում *պարադիգմերը* (հիմքերը), *փաստացի տվյալները* (նկարագրություններ՝ ի՞նչ կա աշխարհում), *տեսությունները* (բացատրություններ՝ ինչու՞ է աշխարհում դա այդպես), *մեկնաբանությունը* (ի՞նչ են ուրիշներն ասում դրա մասին, նաև թալմուդյան ավանդույթը), *քննադատությունը* (իրականության դիտարկում խաղաղության արժեքների լույսի ներքո), *կառուցողականությունը* (կենսունակ և իրատեսական ապագայի համար հնարավորությունների ստեղծում), *կրթությունը* (խաղաղությունն ուսումնասիրողների և հետազոտողների թվաքանակի ավելացում), *գործողությունը* (այս ամենի փոխակերպումը խաղաղամետ գործունեության):[7]

Այսպես կոչվող *անգլոսաքսոնական* ոճը շեշտը դնում է փաստացի տվյալների, *տնտոնական* ու *գալիական* ոճերը՝ տեսության ու պարադիգմերի, *նիպպոնական* ոճը՝ մեկնաբանության վրա (վերջինս մի ժամանց է, որ օգտագործվում է նաև մյուս ոճերում): Ի հավելումն թվարկվածների՝ ներկայում ուսումնասիրվում են նաև հրեական, իսլամական, հնդկական և չինական մտավոր ոճերը: Բոլորը ներգրավվում են կրթության գործընթացում, քանզի դա թերևս հենց այն գինն է, որ հարկ է վճարել համալսարանական աշխատանքի անցնելու համար: Եվ բոլորը սովորում են ձեռնպահ մնալ քննադատությունից, կառուցողականությունից ու գործողություններից, քանի դեռ կիրառական գիտությունների բնագավառի՝ վկայագիր ունեցող գիտնականներ չեն: Եթե ոչ՝ ստիպված են բարդություններով հարթել իրենց ճանապարհը:

Ի՞նչ է հետևում նախորդ հատվածից վերոնշյալ ութ կետերի համար: Ընդհանուր առմամբ մեկ բան. հարկ է ընդլայնել մտավոր շրջանակները՝ բոլոր

[i] հուն. adiaphora- անտարբեր /թարգ./

ութը ներառելու համար: Ջարդե՛ք արժեքների այդ արհեստական պատնեշը՝ առավոտյան 9-ից մինչ երեկոյան 5-ը զբաղվելով փաստացի տվյալներով, տեսություններով ու կրթությամբ և երեկոյան 5-ից մինչև առավոտյան 9-ն այն ամենով, ինչն առնչվում է արժեքներին: Փորձե՛ք դառնալ լիարժեք ուսանող/հետազոտող:

Սկզբունքորեն սա էկլեկտիցիզմի կոչ է, տարբեր ոճեր ստեղծագործաբար համադրելու կոչ: Դա հատկապես ընդգծվում է տեսությունների կառուցման ժամանակ, իսկ տեսությունների կառուցումն իրականությունը հասկանալու գործառույթ ունի:

Այստեղ կարելի է երկու մոտեցում առանձնացնել: Առաջինն առավելապես արևմտյան է. իրականությունն ատոմիստական (դիսկրետ) է, այն ընդհատ կառուցվածք ունի, և մասերը կարող են առանձին-առանձին ուսումնասիրվել: Ենթադրությունները, որ արվում են էմպիրիկ փորձի հիման վրա, այնուհետև համակարգվում են ու փոխշաղկապվում դեդուկտիվ տեսությունների ներքո: Երկրորդն առավելապես արևելյան է. իրականությունն հոլիստական (ամբողջական) է, և դրա մասերը կարող են ուսումնասիրվել միայն որպես ամբողջի մասեր: Այդ ամբողջում գոյություն ունեն լարվածություններ, ընդ որում *ին/յանը* հակադրություններն արտահայտելու ձևերից միայն մեկն է:

Խաղաղության ուսումնասիրությունները երկու հոլիստական մոտեցում են պարունակում՝ մեկն առնչվում է մասերին, մյուսը՝ փոփոխականներին: Անիմաստ է ուսումնասիրել երկրները (կամ աշխարհում առկա այլ դերակատարներին) այնպես, կարծես դրանք հակամարտության կամ համագործակցության կապերով կապված չեն այլ երկրների (և այլ դերակատարների) հետ: Խաղաղության ուսումնասիրությունները ոչ միայն միջպետական կամ միջազգային, այլև համաշխարհային ընդգրկում ունեն այն իմաստով, որ դրանք փորձում են որպես համակարգ դիտարկել ողջ աշխարհը: Միևնույն ժամանակ, անիմաստ է նաև այդ համակարգն ուսումնասիրել միայն ռազմական կամ քաղաքական, միայն տնտեսական կամ մշակութային փոփոխականների տեսանկյունից. հարկ է ամեն ինչ հաշվի առնել: Ոչ միայն ոլորտային, այլ հոլիստական ուսումնասիրությունների ճանապարհով պետք է փորձել հասկանալ ամբողջի (*holon*)՝ հակասություններով լեցուն համակարգը:

Մյուս կողմից, թերևս որպես առաջին մոտեցում, չափազանց արդյունավետ է նաև ատոմիստական-դեդուկտիվ համադրությունը (նույնը վերաբերում է հոլիստական-դեդուկտիվ և ատոմիստական-դիալեկտիկական համադրություններին): Հենց այդ պատճառով է, որ այստեղ մենք մանրամասն կանդրադառնանք բոլոր համադրություններին՝ ուսումնասիրելով յուրաքանչյուրի բովանդակությունը: Սա դեդուկտիվ մոտեցում է: Եվ իմաստավորված:

Այժմ՝ որոշ նկատառումներ խորհելու համար: Խաղաղության հետազոտության պարադիգմերն առանձնահատուկ կարևորություն ունեն: Գործնականում դա նշանակում է «խաղաղություն» կատեգորիայի հետազոտման անվերջ գործընթաց, «խաղաղությանն» ուղեկցող դատողությունների ստուգում թերագնահատումների և գերագնահատումների տեսանկյունից, հատկապես՝ աստիճանակարգ սահմանելու նպատակով: Մենք պիտի վեր հանենք «խաղաղության» բոլոր իմաստները պատմության ու աշխարհագրության բոլոր անկյուններում՝ առավելագույնս օգտագործելով խաղաղության ուսումնասիրությունների վերազգային բնույթը:

Ինչ վերաբերում է փաստացի տվյալներին, պիտի նշենք, որ խաղաղության ուսումնասիրությունների՝ գիտության առանձին ճյուղից վեր բնույթը

հնարավորություն է տալիս օգտագործել հարակից գիտությունների կողմից հավաքագրված տվյալները: Դա ճիշտ է մինչև որոշակի սահման: Ավելիի համար եռագագաթ պարուրագիծը հաստատող նոր տվյալներ անհրաժեշտ կլինեն (1.3 ենթագլխի 1.1 գծանկար):

Տեսությունների կառուցումը (հոգնակի) անվերջ նախաձեռնություն է և վերոհիշյալ պարուրագծի համար ունի բացառիկ նշանակություն: Մեկնաբանությունները, մյուս կողմից, նվազ կարևոր են: Կան չմիջնորդված գիտելիքի կողմնակիցներ, որոնք համարում են, որ ամեն անգամ անհրաժեշտ է զրոյից սկսել. քանի դեռ սեփական ջանքերը հաջողությամբ չեն պսակվել, չուսումնասիրել «ոլորտի գրականությունը»՝ դրա ազդեցությունից խուսափելու նպատակով:

Քննադատականությունն ու կառուցողականությունը խաղաղության ուսումնասիրությունների համար նույնքան կարևոր են, որքան էմպիրիզմը: Հետևաբար, երկուսն էլ նույնքան ուշադրություն են պահանջում, որքան էմպիրիզմը: Այն, որ դա ծառայում է խաղաղության կրթությանը, վեր է կասկածից: Սակայն խաղաղության համար վճռորոշ է կարողությունների վրա հիմնված գործունեությունը:

Այս պահին առավել կիրառելի դերային մոդելները ոչ թե ճարտարագետներն ու ճարտարապետներն են, այլ՝ բժիշկները, որի պատճառներին մենք դեռ մանրամասն կանդրադառնանք: Այդ նպատակով, ինչպես նաև գործողություն իրականացնելու համար, մեզ անհրաժեշտ են պարադիգմեր: Ելակետ կարող է հանդիսանալ ախտորոշում-կանխատեսում-բուժում կապը, ինչին մենք կրկին կհանդիպենք հաջորդ գլխում:

Խաղաղության ուսումնասիրությունները պատկանում են իմացաբանության այն ճևին, որն աշխարհը ճկուն է դիտարկում և արդյունքում տալիս աշխարհի նույնչափ ճկուն պատկերներ:

Ծանոթագրություններ

---

[1] Տե՛ս Johan Galtung, *Methodology and Ideology* (Copenhagen, Ejlers, 1977), գլուխ 2:

[2] Իրականում ոլորտի «միջազգային հարաբերություններ» (հակիրճ՝ ՄՀ) անվանումը սխալ է: Սովորաբար դրա ներքո հասկացվում են «միջպետական հարաբերությունները», թեև ավելի լավ կլիներ օգտագործել «միջերկրային հարաբերություններ» տերմինը, քանի որ պետությունը երկրի ներսում առկա կառույցներից միայն մեկն է, որը միջազգային կորպորացիաների (կապիտալի առումով), միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ու միջազգային հասարակական կազմակերպությունների (քաղաքացիական հասարակության առումով) մեր դարաշրջանում չունի «արտաքին գործերի» մենաշնորհ: Մարդ արարածները կազմավորում են ազգեր, և այդ ազգերը ևս հարաբերվում են, ինչպես սերբերն ու խորվաթները նախկին Հարավսլավիայում: Այդ բնագավառն ուսումնասիրող գիտությունը կոչվում է «միջ-ազգային» հարաբերություններ»՝ շրջանցելով «էթնիկ» տերմինը, որն առավել հաճախ օգտագործվում է այլ ազգությունների նկատմամբ (ինչպես «ցեղեր»): «Միջազգային հարաբերություններ» տերմինն այնպիսի հնչեղություն ունի, կարծես բոլոր երկրները դարձել են ազգային պետություններ, թեև իրականում գոյություն ունեցող միայն շուրջ 20 երկիր (ավելի քան 200-ից) կարելի է մոնոազգային համարել: Ինչո՞ւ չի կարելի այս ողջ ոլորտն ընդգրկելու նպատակով օգտագործել «աշխարհի ուսումնասիրություններ» տերմինն այնպես, ինչպես օգտագործում ենք, օրինակ, «հասարակական գիտություններ» կամ «հումանիտար գիտություններ» տերմինները:

[3] Քրիստոնեությամբ և բուդդայականությամբ ներշնչված իմացաբանությունների տարբերությունների վերաբերյալ տե՛ս Johan Galtung, 'Back to the Origins: on Christian and Buddhist Epistemology', pp. 15-27 in *Methodology and Development* (Copenhagen: Ejlers, 1988), գլուխ 1.1:

[4] Այսպես, Մարգարեթ Մեդը (Margaret Mead) խաղաղ կղզիներում (շատերի համար չափազանց հեռավոր) տիրող սոցիալական իրավիճակի վերաբերյալ իր պատմություններով շարժեց սերունդների երևակայությունը՝ *Grown Up in New Guinea, Sex and Temperament in Three Primitive Societies, Coming of Age in Samoa:* Այս բոլոր ուսումնասիրությունները տեղ գտան նրա կողմից հրապարակված *Male and Female: a Study of the Sexes in a Changing World* (New York: Dell, Sixth Laurel Printing, 1973) աշխատությունում: Մեդն առանց դժվարությունների կհաղթահարի իրեն հասցեագրված քննադատությունների ալիքը՝ շնորհիվ իր այն հիմնարար դրույթի, համաձայն որի գոյություն ունեն մարդկային մարմնի օգտագործման անհավատալի բազմազանություններ, և սեռը, դիրքորոշումներն ու վարքագիծը տարբեր հասարակություններում տարբեր համադրություններով են ի հայտ գալիս:

[5] Դրանք այսպես են անվանվել Սըր Ռոբերթ Գիֆֆենի /1837-1910/ անունով, թեև նա ուսումնասիրում էր, թե ինչպես են աղքատ մարդիկ հաց գնում, երբ հացի գներն աճում են (նրանք ավելի շատ էին գնում, քանի որ պճնանքի առարկաներ չէին կարող իրենց թույլ տալ), ոչ թե այն, թե ինչպես են հարուստները գնումներ կատարում՝ ելնելով պճնամոլությունից:

[6] Անվիճելի է անշուշտ, որ խոսքը միանշանակորեն բնորոշում է միտքը: Ցանկացած հետազոտող սովոր է աշխատել (խաղաղության կամ որևէ այլ բնագավառում) ձևերի (Ա ձև, Բ ձև և այլն) հետ: Սակայն հասարակական գիտակցության մեջ առկա է խաղաղության եզակի ձև, ինչը նաև հանգեցնում է խաղաղության վերաբերյալ եզակիացված մտածողության: Վերցնենք, օրինակ, խաղաղությունը պատկերող դասական մանկական նկարը՝ դաշտ, կապույտ երկինք, պայծառ արև, կենդանիներ և խաղացող երեխաներ. առյուծի և գառնուկի պատկերված լինելը պարտադիր պայման չէ:

[7] Տե՛ս Johan Galtung, *Methodology and Development* (Copenhagen, Ejlers, 1988), գլուխ 1 և *Essays in Peace Research,* vol. VI (Copenhagen: Ejlers, 1988), գլուխ 14:

2
Խաղաղության ուսումնասիրություններ. որոշ հիմնարար պարադիգմներ

2.1 Դարձյալ ախտորոշում-կանխատեսում-բուժում եռանկյունին

Ձևակերպումներն, ակնհայտորեն, վերցված են բժշկական տերմինաբանությունից՝ կիրառական գիտություն, որ մի քանի հարյուրամյակների ընթացքում չճանաչելու Սցիլլայից (Scylla)[i] հասավ գերկիրառելիության Քարիբդիսին (Charybdis)[i]: Խաղաղության ուսումնասիրությունները նշված երեք փուլերից ընդօրինակելու շատ բան ունեն: Չճանաչելն ընդունում էր երկու հիմնական ձևերը, որոնք հեշտությամբ տեղավորվում են վերոհիշյալ վերլուծական շղթայում. նախ՝ ի դեմս մերժվածի, այսինքն՝ հիվանդության, ինչն իրականում պետք է դառնա ցանկալի, քանզի իմաստ է պարունակում՝ Աստծո ծրագիր (դժվար է ընկալել, սակայն տառապանքն ազնվացնում է մարդուն), ապա՝ ի դեմս ընդգծված դոգմատիզմի, որ արյունառություն է նախատեսում բազմաթիվ հիվանդությունների դեպքում՝ հռչակելով, որ մեթոդն աշխատում է և այն միակ հասանելին է՝ ընդսմին չստուգելով կամ չընդունելով, որ հաջողության հասնելու հավանականությունը փոքր է: Սխալ էր նաև նոր իրականության նոր տվյալների հիման վրա մրցակցային, այլընտրանքային մոտեցումների դիտարկումն էմպիրիզմի, քննադատականության ու կառուցողականության օգնությամբ՝ եռագագաթ պարուրաձև գործընթացն ընդունելով որպես հավերժական:

Ստանալով մի մասնագիտություն, որն, ամենայն հավանականությամբ, նույնքան դոգմատիկ է, որքան այն մասնագիտությունները, որոնց այն եկել է փոխարինելու՝ մենք այնժամ արդեն հայտնվում ենք մյուս ծայրահեղության մեջ՝ դառնալով սեփական հաջողությանը հեշտությամբ զոհ գնացող, նոր մոտեցումների համար փակ և «դպրոցական բժշկությունից» կառչած մեկը: Այս պատմությունը միաժամանակ և՛ ուսանելի, և՛ վիատեցնող է: Եվ այնուամենայնիվ, ինչո՞ւ որևէ կոնկրետ մոտեցում կամ որևէ որոշակի խումբ պետք է հավիտենական կյանք ստանա: Կամ նույնիսկ՝ վերամարմնավորու՞մ: Ինչո՞ւ ոչ վերածնունդ որևէ այլ տեսքով՝ միտված միևնույն՝ մարդկային կենսապայմանների բարելավման նպատակին: Անցյալի շարունակականությունն ընդհատող խզումների պատճառով հին պարադիգմներն այլևս անհամատեղելի են նոր տվյալների, մասնավորապես, նոր տեսությունների հետ. սա գիտության զարգացման տեսանկյունից միանգամայն բնական գործընթաց է:

Այժմ արդեն խաղաղարարի կայացող մասնագիտությունը զգուշորեն թակում է հիմնականում ազգ-պետությունների իշխող խավի շահերին ծառայող այնպիսի գիտությունների դուռը, ինչպիսիք են միջազգային իրավունքն ու

---

[i] *Սցիլլա և Քարիբդիս*- հունական դիցաբանության մեջ ամենահայտնի առասպելներից մեկի հերոսներն են՝ երկու հրեշ, որոնք ապրում էին նեղուցի երկու ափերին և կործանում անցնող նավերն ու ոչնչացնում նավաստիներին /թարգ./:

միջազգային հարաբերությունները, զգուշացնելով՝ *ձեր ժամանակը լրացել է*: Ուժեղ փաստարկներ կան միջազգային իրավունքի ու անվտանգության տեսությունների դեմ, որոնք, իրենց ծիսական հավատքով առ «ազգային շահեր» և «ուժերի հավասարակշռություն» հասկացություններ, դիտարկում են դրանք որպես պետական համակարգի ներսում իշխող ուժի համադարման՝ չնայած արյունառության հանրահայտ մեթոդին, որ, կարծես, ծառայում է իշխանության կենտրոնացմանը: *Նախազգուշացում.* եթե խաղաղության ուսումնասիրությունները պարփակվեն իրենք իրենցով, ինչ-որ մեկն անպատճառ կգա թակելու այդ դուռը ևս…

Վերադառնանք ախտորոշում-կանխատեսում-բուժում եռանկյունուն, որից շատ բան ունենք սովորելու: Այն տվյալներ-տեսություն-արժեքներ եռանկյունու հայելային արտապատկերումն է: Ախտորոշումը տվյալների վերլուծությունն է, ընդ որում՝ տվյալների մի մասը հայտնի է որպես «ախտանշան», մյուս մասը՝ որպես «անամնեզ» (խնամյալի առողջության-հիվանդության պատմություն՝ զուգորդված բովանդակային տեղեկատվությամբ): Կանխատեսումը բաղկացած է հիվանդության հնարավոր ընթացքի տեսական նախագուշակություններից՝ ելնելով առկա փոփոխականների արժեքներից: Բուժումը տեսության և արժեքների վրա հիմնված միջամտություն է, որ հիմնվում է նմանօրինակ այլ դեպքերի ընդհանրացման վրա և ուղղորդվում բացասական (ախտանշաններից զերծ) և դրական (դիմադրողականության աճի) առողջության արժեքներով:

Ախտորոշման խնդիրը հիվանդի, առավել կոնկրետ՝ հիվանդության առանձին հայտանիշների բնութագրումն է համապատասխան պաթոլոգիայի համատեքստում: Կան նաև ստորաբաժանումներ, ինչպես, ասենք, հարվածների դասակարգումն ըստ վնասված արյունատար անոթների: Բժշկության՝ որպես գիտության զարգացմանը զուգընթաց կատարելագործվել է նաև դասակարգման համակարգը՝ ներառելով ավելի շատ բնութագրեր (զուգամիտություններ) և ավելի քիչ հիվանդություններ (անվանումներ) յուրաքանչյուր դասում կամ ենթադասում (ենթա-ենթադասում):

Նպատակն այստեղ այնպիսի համակարգի ձևավորումն է, ուր միևնույն հիվանդությամբ տառապողներն այլ հավասար պայմաններում միաժամանակ դասակարգվեն նաև միևնույն կանխատեսումներով՝ *ceteris paribus*, և միևնույն բուժման ենթակա խմբերում՝ դարձյալ *ceteris paribus*: Սա նշանակում է ախտորոշման (D), կանխատեսման (P) ու բուժման (T) գործողությունների փոխհամաձայնեցում: Հիշյալ գործողություններից մեկի փոփոխությունը (ասենք, բուժման նոր մեթոդների կիրառումը) կպահանջի մյուս երկուսի համապատասխանեցում: Իհարկե, միշտ առկա է ախտորոշման գործընթացի հետևանքով բուժման նոր մեթոդների կիրառման հնարավորություն, երբ բուժման արդյունքները (նյութական կամ բարոյական) բավականաչափ շոշափելի են մռայլ կանխատեսումների ֆոնի վրա: Այս թեզը քաջ հայտնի է խաղաղության ուսումնասիրություններից (սպառազինությունների նոր համակարգի ձևավորումը նոր ռազմավարության զարգացման արդյունքում, որն էլ, իր հերթին, հետևանք էր հակամարտության ընթացքի մասին մռայլ կանխատեսումների): D, P, T եռանկյունին բացառիկ շարժունակ է:

Կանխատեսումը գալիք ժամանակներով անցնող հետագիծ ունի (նշված հետագծի անցյալով անցնող հատվածը հիշողությունն է), որն ավարտվում է խնամյալի հիվանդության/առողջության վերաբերյալ հնարավոր լավագույն գնահատականներով: Հիվանդության և առողջության միջև ընկած խավար

գոտին օրդինատների առանցքի վրա մեզ տալիս է հիվանդության ընդունելի ու անընդունելի մակարդակների նվազագույն և առողջության անընդունելի ու ընդունելի մակարդակների առավելագույն սահմանների միջև ընկած զրոյական տարածք: Աբսցիսների առանցքի վրա t=0 ցույց է տալիս Ներկան: Որքան լուրջ է դեպքը, անընդունելի հիվանդության տարածքում այնքան ավելի ցածր կետից է սկիզբ առնում հետագիծը: Վարընթաց կամ կայուն հետագիծը բուժման նպատակով միջամտություն է պահանջում, ընդ որում որքան ցածր է հետագծի սկզբնակետն ու որքան կտրուկ է հետագծի կորը, այնքան ավելի հրատապ միջամտություն է պահանջվում: Նվազագույն սահմանը մահն է՝ ոչնչացումը, ճիշտ ինչպես բռնության դեպքում: Ի հակադրություն դրա՝ առողջության, ինչպես և խաղաղության համար սահմանափակումներ չկան:

«Ես»-ի (հիվանդի) կամ Այլոց (բժշկի) միջամտության համար նախանշված նպատակը հետագծի կորն ուղղում է դեպի վեր.

լավագույն արդյունքը. հայտնվել «ընդունելի առողջության» տիրույթում՝ խնամյալը ոչ միայն բուժվել է, այլ նաև դուրս է եկել դրական առողջությամբ, «լավ» լինելու ավելցուկով,

երկրորդ լավագույն արդյունքը. հայտնվել «անընդունելի առողջության» տիրույթում՝ խնամյալն ախտանշաններից զերծ է, բայց առանց առողջության ավելցուկի,

երրորդ լավագույն արդյունքը. հայտնվել «ընդունելի հիվանդության» տիրույթում՝ հիվանդը քրոնիկ, երկարատև, բայց տանելի հիվանդությամբ է տառապում,

չորրորդ լավագույն արդյունքը. մահվան տիրույթից դուրս՝ հիվանդն անընդունելի հիվանդությամբ է տառապում, բայց ողջ է, ինչը նշանակում է կյանքի երկարաձգում:

Վերոհիշյալ չորս դեպքն էլ կարելի է որակել որպես տարբեր աստիճանի «հաջողություն»՝ չորրորդ դեպքի ստանդարտ չափանիշ դարձնելով մահից խուսափելու հնգամյա հաջողված ջանքերը:

Վերջինիս ընդգծումը կհանգեցնի չորս հետագծերի մեկ այլ դասակարգման:

Ինքնասպանություն. հետագիծն ուղղությունը դեպի վեր է փոխում ինքնաբերաբար, ինքնասպանության միջոցով՝ օգտագործելով մարդկային մարմնի, մտքի ու հոգու ունակությունները:

Բուժում. իրականացվում է արտաքին միջամտությամբ, քանզի հիվանդի ինքնասպանության հնարավորությունները բավարար չեն:

Աուտիստական դեպքը. հետագիծը զգայունակ չէ «Ես»-ի կամ Այլոց միջամտությունների նկատմամբ: Այն հաստատուն է կամ վարընթաց:

Մահացու դեպքը. չնայած «Ես»-ի և Այլոց միջամտություններին՝ հետագծի կորն ինքնաբերաբար դառնում է վարընթաց՝ ձգտելով ստորին սահմանագծին:

Ի վերջո, տարիքն անխուսափելիորեն մոտեցնում է մեզ այդ սահմանագծին:

Այս մտածելակերպը մի շարք թերություններ ունի: Եթե հիվանդության դեպքում կա դասակարգման համակարգ, ապա առողջ կենսավիճակի համար դասակարգման համակարգ գոյություն չունի: Ինչո՞ւ հիվանդությունը հոգնակի թիվ ունի, իսկ առողջությունը՝ ոչ: Ինչո՞ւ մարդը կարող է տառապել բազմաթիվ հիվանդություններով, բայց չի կարող հաճույք ստանալ բազմաթիվ առողջություններից: Ինչո՞վ բացատրել այս ասիմետրիկությունը, որը տեղի ունի նաև պատերազմի և խաղաղության պարագայում:

Ինչպես ցանկացած ճշմարիտ դասակարգում, առողջություն-հիվանդություն-ընդունելի-անընդունելի այս քառակի բաժանումը նպատակամիտված է համապարփակության և փոխադարձ բացառման: Խնդիրն այն է, որ առողջ կենսավիճակի մեջ կարող է լինել հիվանդություն (գերակայությա՞ն իմաստով, անփութությա՞ն, «Ես»-ի և Այլոց հիվանդության նկատմամբ անտարբերությա՞ն), ինչպես նաև հիվանդություն՝ առողջ կենսավիճակի մեջ (վերը հիշատակվածների բացասումը, ինչպես նաև տառապանքից, մարդկային կարողությունների ներքին ու արտաքին սահմանների փորձարկումից ծնված հոգևոր արժեքները):

Այնուհետև ի հայտ է գալիս հիմնական խնդիրը՝ D, P, T եռանկյունին հանգում է կոնկրետ մարդկային կյանքին՝ իր ողջ բարդությամբ, ահռելի բազմազանությամբ ու բազմաբովանդակությամբ: Ելակետը հիվանդությունը չէ, այլ տվյալ անհատը՝ բժշկության միանգամայն որոշակի համատեքստում: Անհատին բնորոշելով որպես *հիվանդ (խնամյալ)՝* նրան վերապահվում է Այլոց կողմից իրականացվող բուժումն ընդունող խիստ որոշակի վարքագիծ, նա դիտարկվում է սովորական սոցիալական համակարգի ենթատեքստից դուրս, առողջապահության համակարգի ենթատեքստում՝ պակաս նշանակություն տալով նախորդին և առավել ուշադրություն հատկացնելով վերջինին:

Արտարկման գործընթացն այնուհետև շարունակվում է՝ հիվանդին (որը դեռևս մարդ էակ է) բնորոշելով որպես անամնեզով, ախտորոշմամբ, կանխատեսմամբ ու առաջարկվող բուժմամբ համալրված *դեպք:* Ընդհանրացումը հնարավոր է միայն արտարկման միջոցով, որ նշանակում է տվյալ անհատի արտապատկերում D-ի տարրերի վրա, որոնք, իրենց հերթին, արտապատկերված են P-ի և T-ի մեջ: Նմանօրինակ արտարկում/ընդհանրացումն անհրաժեշտ է համակարգի գործունեության ապահովման համար: Խնդիրն այն է, թե որքա՞ն ենք մենք կորցնում այդ գործընթացում՝ համապատասխանեցնելով կոնկրետ մարդունը/հասարակականին կամ առողջությունը/հիվանդությանը:

Այդուհանդերձ, այս պարադիգմի շրջանակներում հեշտությամբ կարելի է լուծել միայն մեկ խնդիր: Դժվար է, սակայն, ենթադրել, որ մենք գործ ենք ունենում լոկ միաչափ արտապատկերումների հետ, որ հիվանդը տառապում է միայն մեկ ախտով, որ հիվանդությունն ունի միայն մեկ կանխատեսում, որ տվյալ հիվանդություն/կանխատեսում համակցությանը համապատասխանում է միայն մեկ բուժում: Հիվանդը կարող է տառապել մեկից ավելի հիվանդություններով, որոնք կարող են ունենալ էական համալիր հետևանքներ: Օրինակ՝ տարեց մարդիկ հաճախ են տառապում մի շարք սուր, քրոնիկ հիվանդություններով: Տարիքն ինքնին ենթադրում է բազմաթիվ ախտերի կուտակում, որոնցից ոչ մեկը, սակայն, չի կարելի որակել որպես այլ հիվանդությունների առաջացման սկզբնաղբյուր հանդիսացող հիվանդություն: Եթե նույնիսկ լոկ մեկ հիվանդություն է բացահայտված, միևնույն է, հնարավոր են բազմաթիվ կանխատեսումներ, այսինքն՝ ապագան անորոշ է: Իհարկե, տար-

բեր բուժումներ կարող են առաջադրվել ոչ միայն տարբեր, այլև միևնույն հիվանդության համար, այսպես ասած, «ապահովության համար»: Ի վերջո, այս ամենին պետք է հավելել նաև դրական և բացասական առողջության տարբերակումը:

Խաղաղության տեսություններն ուսանելի շատ բան կարող են քաղել այս պարադիգմից: Մատնանշենք միայն մեկը՝ ախտորոշումը, կանխատեսումն ու բուժումը պատկերացնենք հոգնակի թվով և փորձենք դրանք հարմարեցնել միմյանց: Բռնության/խաղաղության ոլորտին առնչվող մտքերի, խոսքի ու գործողությունների մեծ մասն ախտորոշում է բռնությունը, սակայն՝ միայն ուղղակի կամ ֆիզիկական և առավելապես սուր դեպքերը: Կանխատեսումը պնդում է, որ բռնությունը կրկնվելու է, եթե դրա դեմ ոչինչ չի ձեռնարկվում: Բուժումը կա՛մ մարմինն անկարող դարձնելն է ամորձատման, լոբոտոմիայի կամ քիմիական թերապիայի միջոցով (ծայրահեղ դեպքերում, անգամ, ոչնչացնելը), կա՛մ էլ դատավճռի հիման վրա անհատական և/կամ ընդհանուր կանխարգելման նպատակով պատժելը (հաճախ իրականացվում է բանտարկության կամ աքսորի ձևով, որոնք միաժամանակ ծառայում են նաև անկարող դարձնելու նպատակին):

Պարզագույն սխեման, անշուշտ, հետևյալն է՝ մեկ ախտ, մեկ կանխատեսում, երկու բուժում: Ժողովրդական բանահյուսության լեզվով այդ երկու բուժումներն են՝ *լավագույն պաշտպանությունը հարձակումն է* և *բռնությունն այն միակ լեզուն է, որ նա ունակ է հասկանալու*: Իսկ իբրև կանխարգելում՝ *si vis pacem, para bellum*: Թարգմանությունը՝ ես չեմ խոսում նրա իմացած լեզուներից որևէ մեկով:

Խաղաղության ուսումնասիրություններում բոլոր երեք ուղղությունների համար հարկավոր է դասակարգման առավել տարբերակված համակարգ: Բռնության «որսալ ամբողջը» բանաձևը պետք է էական զտման ու դասակարգման ենթարկվի: Ինչ վերաբերում է կանխատեսմանը, ապա վերը թվարկված բոլոր հետագծերն իմաստ են ստանում միայն այն ժամանակ, եթե սահմանում ենք «խաղաղության ավելցուկ» և «խաղաղության պակասուրդ» հասկացությունները: Մենք կարող ենք եզրակացնել, որ *բռնությունը բռնություն է ծնում* ժողովրդական կանխագուշակությունն ավելի շուտ տարածվում է էմպիրիկ, քան թերապևտիկ դեպքերի վրա. երկուսն էլ մենք արդեն նկարագրել ենք վերևում և երկուսն էլ բռնություն են ենթադրում: Սակայն իրականում մենք կարիք ունենք միայն ոչ բռնի բուժման:

Սակայն խաղաղության ուսումնասիրությունների կայացման վերջնական փորձություն կարող է հանդիսանալ միայն բուժումների համակարգը՝ «և ի՞նչ. ի՞նչ եք պատրաստվում անել դրա համար» հարցի պատասխանների ամբողջությունը: Անհրաժեշտ է ակտիվ միջամտության՝ ախտորոշումների համակարգին համապատասխանող ձևերի հարուստ բազմազանություն, որից մենք դեռ շատ հեռու ենք: Իսկ գուցե հիմնական խնդիրն այստեղ ցիրուցան գիտելիքների համակարգու՞մն է: Կամ՝ տարբեր ոչ բռնի բուժումների կիրառու՞մը:

Գուցե նաև առավել ռազմավարակա՞ն խնդիր է՝ իմանալ ի՞նչ անել, ինչո՞ւ և ինչպե՞ս, ի հավելումն նաև՝ ե՞րբ և որտե՞ղ, ո՞ւմ միջոցով կամ ո՞ւմ հետ, թերևս նաև՝ ո՞ւմ դեմ: Ի՞նչ-ը և ինչո՞ւ-ն խաղաղության հետազոտողների խնդիրն է՝ կիրառելով վերոհիշյալ D, P, T մոտեցումը՝ որպես նկարագրված իմացաբանության հիմնավորում: Իսկ խաղաղարարության հիմնահա՞ցը: Սակայն ե՞րբ և որտե՞ղ, ումի՞ց և ո՞ւմ հարցադրումներն ընդամին մնում են քննարկվող խաղաղարարության հիմնական տեսության բաղկացուցիչ մասը:

Այդ նպատակով անհրաժեշտ է քարտեզագրել հասարակական իրականությունը, որտեղ էլ հենց կարող են փթթել խաղաղությունն ու բռնությունը:

2.2 Ինչպե՞ս կարող են խաղաղության հետազոտողները զբաղվել խաղաղարարությամբ (բուժմամբ)

Նախ փորձենք պարզել, թե խաղաղության հետազոտողները խաղաղության ամրապնդման նպատակով ե՞րբ պետք է գործնական քայլեր ձեռնարկեն: Օգտագործելով հասարակության պարզագույն քարտեզը՝ բազմաթիվ հնարավոր պատասխաններից հնարավոր է առանձնացնել մի քանիսը, որոնք կարող են ծառայել որպես նախնական մոտավորեցում: Հետագայում կքննարկվեն առավել համալիր քարտեզներ:

Դիտարկենք երկու դասակարգերից և երկու երկրներից բաղկացած մոդելը. տվյալ դեպքում իբրև «դասակարգեր» ընդունենք «վերնախավն» ու «ժողովուրդը», իսկ իբրև երկրներ՝ Ա-ն և Բ-ն (ավելի մեծ քանակով դասակարգերի ու երկրների դիտարկումը էական փոփոխությունների չի հանգեցնի): Ա-ի և Բ-ի մեջ խաղաղության հետազոտողների ներառելով՝ կստանանք 2.1 գծանկարը.

Գծանկար 2.1. Ազդեցության խողովակները

	Ա ԵՐԿԻՐ	Բ ԵՐԿԻՐ
ՎԵՐՆԱԽԱՎԵՐ	Ա վերնախավեր	Բ վերնախավեր
ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ	Ա խաղաղության հետազոտություն	Բ խաղաղության հետազոտություն
ԺՈՂՈՎՈՒՐԴ	Ա ժողովուրդ	Բ ժողովուրդ

Խաղաղության հետազոտողները գործելու բազմաթիվ հնարավորություններ ունեն: Բայց նախ և առաջ մենք պետք է բացառենք անհնարինությունը. խաղաղության հետազոտողները միմյանց հետ շփվում են բացառապես համալսարանական սեմինարներում, ազգային կամ միջազգային ակադեմիական ասոցիացիաներում և այլն: Այժմ կարող ենք զարգացնել մեր միտքը՝ նշելով վեց հնարավորությունները:

1. *Խաղաղության հետազոտություն – վերնախավ, սեփական երկիր.* Սա ներգործելու դասական խողովակն է *dem Kurfürsten etwas in die Ohren flüstern*[i]-անկախ այն բանից, թե ով է նախաձեռնության հեղինակը՝ վերնախավե՞րը, թե՞ հետազոտողները: Նպատակը պետք է լինի երկխոսությունը, սակայն վերնախավերը հակված են լոկ այնպիսի խորհուրդներ լսելու, որոնք կտեղավորվեն իրենց սեփական պարադիգմերի շրջանակներում և ոչ թե խորհուրդներ, որոնք կարող են նույնական լինել/թվալ ընդդիմության կամ ընդդիմադիր երկրների մոտեցումների հետ: Ընդհանուր առմամբ, նրանք հետազոտողներին դիտարկում են որպես նախաղրյալներ ստեղծողների՝ ոչ թե որպես

[i] *dem Kurfürsten etwas in die Ohren flüstern-* (գերմ.) «կուրֆյուրստի (իշխանի) ականջին ինչ-որ բան շշնջալ»: Համազոր արտահայտությունը՝ «ականջը լցնել»: /թարգ./

եզրահանգումներ կատարողների, և որպես ծառայողների՝ ոչ որպես երկխոսության համար հարմար գործընկերների:

Եթե ընդունենք, որ վերնախավերի հետևությունները տեղավորվում են «խաղաղություն խաղաղ միջոցներով» բանաձևի շրջանակներում, ապա խնդիր չկա, քանի դեռ խաղաղության գիտելիքների հասարակական բնույթը մոռացված չէ: Եթե գիտելիքները պետք է գաղտնի պահվեն, ապա դրանք չեն կարող դիտարկվել որպես խաղաղության գիտելիքներ, քանի որ այդ դեպքում ուրիշները չեն կարող մասնակցություն ունենալ: Դա մեկուսացնում է այլոց, այլ խոսքով՝ գործադրվում է կառուցվածքային բռնություն: Դրա հետևում թաքնված է ուղղակի և/կամ մշակութային բռնության (բռնության մտածելակերպի կամ միջոցների իմացության ձևով և այլն, որը դուրս է մնացել հասարակության ուշադրությունից) գործադրման հնարավորությունը կամ, առնվազն, կասկածը: Կասկածն ամենևին էլ անիմաստ չէ այս աշխարհում, ուր քաղաքական խավը, պետությունների տերերն ու ղեկավարներն իրենց մենաշնորհն են համարում իշխանության հիմնական լծակներն ու արտաքին հարաբերություններում վերջնական որոշումներ կայացնելը: Պատերազմական դրության ժամանակ այս երկուսը հեշտությամբ համակցվում են:

2. *Խաղաղության հետազոտություն – ժողովուրդ, սեփական երկիր.* Սա հայտնի է նաև որպես խաղաղության ուսուցանում կամ հանրակրթություն: Արտաքին քաղաքականության ճգնաժամային պահերին, ինչպես, ասենք, Սառը պատերազմի կամ Պարսից Ծոցի ճգնաժամերի ժամանակ էր, այն կարող է խաղաղությանն ուղղված շարժման հանդեպ առանձնահատուկ դիրք գրավել երեք հիմնական ուղղություններով:

Մոդել 2.1-ը կարող է խաղաղությանն ուղղված շարժումը դիտարկել որպես ըստ էության անկիրթ, անգամ անկրթելի, և իրականացնել վերից վար միակողմանի կրթություն՝ բացառապես դասախոսությունների ձևով:

Մոդել 2.2-ը կարող է խաղաղությանն ուղղված շարժումը դիտարկել որպես ճիշտ, լայն ժողովրդայնություն վայելող և ներքաշվել դրա նախադրյալների (օրինակ՝ սպառազինությունների զսպում) արտադրության վերընթաց գործընթացի մեջ:

Մոդել 2.3-ը կարող է մերժել 2.1-ն իբրև ոչ-ժողովրդավարական և 2.2-ն իբրև զավթողական՝ հրաժարվելով ուսումնասիրությունների, ապա նաև հետազոտությունների ակադեմիական ազատությունից: Այլընտրանքը երկխոսությունն է ակադեմիական ազատություններից մշտապես օգտվող մարդկանց հետ:

3. *Խաղաղության հետազոտություն-ժողովուրդ-վերնախավեր, սեփական երկիր.* Սա երկաստիճան խողովակ է. հետազոտողները հաղորդակցվում են մարդկանց հետ, որոնք այնուհետև ճնշում են գործադրում վերնախավերի վրա: Սա, թերևս, ամենաարդյունավետ խողովակն է, գոնե այն դեպքում, երբ լրատվամիջոցները հասանելի են, երկիրը չափազանց մեծ չէ, և առկա է ժողովրդավարության ընդհանուր ոգին: Այս վերջինը չի կարելի նույնացնել ժողովրդավարական ընտրահամակարգի հետ, քանզի ընտրարշավի ելած անհատներն ու կուսակցությունները մեկի փոխարեն կարող են առաջ քաշել մի շարք նախընտրական կարգախոսներ, որոնց բազմազանության մեջ խաղաղության թեման մարդկանց գիտակցության մեջ չի տպավորվի որպես

առաջին գերակայության գերխնդիր: Խաղաղության հիմնահարցը կարող է առաջ մղվել հանրաքվեի միջոցով:

4. *1, 2, 3 մոդելները, այլ երկիր.* Սա կարող է նույնը լինել, որը, սակայն, գործում է այլ երկրում: Քանի որ երկրների միջև խաղաղության հիմնահարցը *(problématique)* միջազգային բնույթ ունի, դրան պետք է սատարել բոլոր կողմերից: Այս գլոբալ հիմնահարցի ուղղությամբ տարվող աշխատանքները մեկ երկրով սահմանափակելու որևէ հիմնավոր պատճառ չկա. երկիրը կարող է ունենալ ծայրահեղ կամ համեմատաբար անհաշտ վերնախավեր նույնիսկ այն դեպքում, երբ այդ վերնախավերը ստիպված են ընդունել խաղաղության ռազմավարությունը: Այլ երկրների վերնախավերի հետ երկխոսությունը կարող է նպատակահարմար լինել նաև այն պատճառով, որ այն չի ընդգրկում ազգային դիմություն-ընդդիմություն երկընտրանքը: Մյուս երկրում առկա նույն երկընտրանքի պատճառով այլ երկրների ժողովուրդների հետ երկխոսությունը կարող է միևնույն արդյունքն ունենալ: Իրենց ժողովրդի միջոցով դեպի վերնախավեր տանող անուղղակի խողովակները երբեմն ավելի արդյունավետ են գործում, քան սեփական երկրում նոր հեռանկարներ բացելը: Եթե գործում է կրկնակի ընդդիմություն, այսինքն՝ B երկրի ժողովուրդն ընդդեմ B երկրի վերնախավի, վերջինս էլ, իր հերթին, ընդդեմ A երկրի վերնախավի, ապա վերջինս կարող է անգամ ողջունել շփումները B երկրի ժողովրդի հետ «իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» սկզբունքով: Այնուհանդերձ, այս ամենն այնքան էլ խաղաղ չէ:

5. *Մոդել 4-ը միջազգային մակարդակում.* Սա նշանակում է, որ խաղաղության հետազոտողներն աշխատում են միասին՝ սերտորեն համագործակցելով (այդ թվում նաև խաղաղության միջազգայնացված շարժման շրջանակներում, որն ընդգրկում է ժողովրդական դիվանագիտությունն ու քաղաքացիական հասարակության դիվանագիտությունը), նպատակ ունենալով ճնշում գործադրել վերնախավերի վրա՝ անկախ դրանց գտնվելու վայրից և այն հանգամանքից՝ դրանք ունե՞ն ընդհանուր շահեր, թե՞ ոչ: Սա հենց այն է, ինչ տեղի ունեցավ Սառը պատերազմի ավարտին, երբ խաղաղության հետազոտողները հանդես եկան որպես խաղաղությանն ուղղված շարժման մտավորականություն՝ երկու ճամբարների երերուն միավորմամբ ճնշում գործադրեցին ստալինյան ու միջուկային վերնախավերի վրա այն դեպքում, երբ վերջիններս ընդհանրապես միավորված չէին: Առաջինը տեղի տվեց ավելի թույլը. նրան կհետևեր երկրորդը, եթե ճնշման գործադրումը շարունակվեր:

6. *Բոլոր մոդելները համակցված.* Ակնհայտորեն լավագույն մոտեցումն այստեղ էկլեկտիկությունն է: Մենք ապրում ենք ռազմականացված աշխարհում, որը հակված է ուղղակի բռնության կիրառման, ինչն էլ, իր հերթին, սատարվում է ռազմական-բյուրոկրատական-կորպորատիվ-մտավորական ամբողջապես ինստիտուցիոնալացված համալիրների ու ծայրահեղ ռազմականացված գաղափարախոսությունների կառուցվածքային ու մշակութային բռնությամբ: Բռնության հակաարարիչ էության և առկա այլընտրանքները բացահայտելն իմաստ ունի բոլոր խողովակներում: Դրանք կարող են միայն ամրապնդել միմյանց: Իրոք, Սառը պատերազմից քաղած դասերից մեկն այն է, որ խաղաղությունը չի կարող հաստատվել ոչ բացառապես վերնախավերի գործողությունների արդյունքում (հելսինկյան գործընթացը, շատ տեսանկ-

յուններից ազդեցիկ լինելով, ինչ-որ տեղ մտնում է փակուղի), ոչ էլ միայն ժողովրդական շարժումների հետևանքով (այլախոհական և խաղաղության շարունակական շարժումները). այն հնարավոր է միայն այդ երկուսի համակցության դեպքում (այլախոհական շարժում-խաղաղության շարժում-Գորբաչով եռանկյունին): Այստեղ մի շատ կարևոր դիտարկում՝ չափազանց հազվագյուտ դեպքերում ծայրահեղությունը կարող է նախընտրելի լինել այս ոլորտում:

2.3 Խաղաղության հետազոտության թիվ 1 պարադիգմը. վեց տիրույթ, միջ-/ներ- համակարգը

Համակարգումը ցանկացած գիտության պարտադիր կիրառական բաղկացուցիչն է: Այն կիրառվել է գիտության այնպիսի ականավոր գործիչների կողմից, ինչպիսիք են Լիննեյն ու Մենդելեև-Մայերը՝ համապատասխանաբար բուսաբանության ոլորտում և տարրերի պարբերական համակարգի համար: Որևէ կոնկրետ գիտության թեմատիկ ուղղվածությունը ենթաբաժանված է, և այդ բաժանումը պետք է բավարարի լավ դասակարգման ավանդական չափանիշներին՝ լինելով հիմնավորված կերպով միմյանց բացառող, համապարփակ և *fundamentum divisionis*[1] (Լիննեյի մոտ ծաղկաբույլերի քանակը, որոնք արտադրում և ստանում են արական սեռաբջիջներ, Մենդելեևի տեսության մեջ՝ ատոմական համարը): Ճիշտ համակարգումը պետք է ծառայի չորս նպատակի. դառնա տվյալ գիտության քարտեզը, որ կառուցված է դրա ուսումնասիրությունների տիրույթում գտնվող ենթաբաժինների ցանկով, ծառայի որպես տվյալների հավաքագրման, տեսության ձևավորման և հետազոտությունների արդյունքների ամփոփման հասանելի ուղեցույց: Հիշյալ չորս նպատակները պետք է ուղղվեն միևնույն ծրագրին՝ առաջին երեքը ծառայեցնելով նոր հետազոտությունների իրականացմանը, իսկ չորրորդը՝ հների համակարգմանը:

Նախ, մի քանի խոսք այն ուղղությունների մասին, որոնք պետք *չէ* քննարկել:

Աշխարհագրական տեղաբաշխվածության հիման վրա կոնցեպտուալացումը (անկախ այն բանից, թե հիմնահա՞րցն է քննարկվում, թե՞ հեղինակը) հակասում է խաղաղության ուսումնասիրությունների *գլոբալացմանը:* Իսկ ըստ գիտության ճյուղերի կոնցեպտուալացումը հանգեցնում է այլ գիտությունների (հոգեբանության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, մարդաբանության, միջազգային հարաբերությունների/իրավունքի) դրույթների հետ համակարգման, ինչն իրականում հակասում է խաղաղության ուսումնասիրությունների *հոլիստականության* գաղափարին: Այդ դեպքում նախկին ճյուղից կառանձնանա գիտության նոր ճյուղ, որը կսկսի որոնել իր իսկ սեփական հեռանկարները և կկոչվի վերճյուղային կամ նոր գիտություն: Նախնական փուլում օգտակար է նաև բազմաճյուղայնությունը՝ ճյուղերի անդրսահմանային երկխոսություններով:

Մեկ այլ մոտեցում, որն, օրինակ, իր արտահայտությունն է գտել Խաղաղության հետազոտողների միջազգային ասոցիացիայի (IPRA) հանձնարա-

[1] fundamentum divisionis (լատ.) - բաժանման, տարանջատման հիմք, սկզբունք /թարգ./

րականներում, կարող է հանդիսանալ տվյալ ոլորտի հետազոտողներին հարցնելը, թե ինչպես են իրենք ձևակերպում այն, ինչով զբաղվում են: Այս մոտեցումը ժողովրդավարական է և շատ հարմար ուսումնասիրությունների հանձնարարականներ սահմանելու տեսանկյունից: Այնուհանդերձ դրա հիմքում ընկած չէ որևէ հայեցակարգային ծրագիր, ոչ էլ *fundamentum divisionis*, կամ էլ համընդհանուր, հնարավոր է նաև հոլիստական տեսակետ: Մյուս կողմից, հոլիստական տեսակետը կարող է արհեստական լինել, անգամ զսպաշապիկ դառնալ տվյալ ճյուղում աշխատասիրությամբ կամ մասնագիտական հմտություններով աչքի ընկած մարդկանց համար: Երկու մոտեցումներն էլ ողջամիտ են, երկուսն էլ կարող են կիրառվել թե՛ երկխոսության, և թե՛ փոխադարձ ստուգումների համար:

Ես առաջարկում եմ մի երրորդ մոտեցում, համաձայն որի խաղաղության ուսումնասիրությունները կիրառական գիտություն են, ինչպես, ասենք, բժշկագիտությունը կամ առողջապահական ուսումնասիրությունները D, T, P (ախտորոշում, կանխատեսում, բուժում) պարադիգմի համատեքստում: Եկեք մեկ անգամ ևս անդրադառնանք դրանց:

Ախտորոշումն էմպիրիկ համակարգի քարտեզագրումն է՝ տառապանքի (*dukkha*, հիվանդ-ություն, ախտ, բռնություն) *և* երանության (*sukha*, առողջություն, խաղաղություն) վիճակների ամրագրմամբ: Այս վերջինը տարբերակվում է որպես բացասական՝ իբրև տառապանքի բացակայություն, կամ դրական՝ իբրև կյանքի բարելավում: Կամ երկուսը միասին:

Կանխատեսումը ժամանակի ընթացքում այդ համակարգի զարգացման հետագծի մասին կանխագուշակությունն է, սովորաբար *dukkha*-ից դեպի *sukha*, հիվանդությունից դեպի առողջություն, բռնությունից դեպի խաղաղություն ուղղվածությամբ՝ տարբերակելով ինքնաապաքինումն ու բժշկական միջամտությունը:

Բուժումը սեփական «Ես»-ի կամ Այլոց կողմից միջամտությունն է և սերտորեն կապված է ախտորոշման ու կանխատեսման հետ: Բուժումը կարող է լինել կանխարգելիչ՝ *ex ante (dukkha)*, կամ առողջացնող՝ *ex post*: Կամ երկուսը միասին, սակայն ոչ երբեք՝ ոչ մեկը, ոչ մյուսը:

Կիրառական գիտության հասունությունը կարող է չափվել տարբերակման նրա մակարդակով՝ կոպիտ ասած, հիմնարար այն չափանիշով, որ ենթարկվում է ախտորոշման, կանխատեսման և բուժման: Չափանիշների շարքում երկրորդն այդ երեքը համադրելու ճշգրտությունն է, երրորդը՝ կանխատեսման իրավացիությունն է՝ միջամտելով կամ առանց դրա, չորրորդը՝ բուժման համապատասխանությունը: Խաղաղության ուսումնասիրությունների դեպքում մենք դեռ շատ հեռու ենք այս ամենից, և ցանկությունների ու հնարավորությունների հստակեցման փիլիսոփայական գերխնդիրը դեռևս բաց է մնում:

Սակայն իրերի ներկա աննախանձելի դրությունն (ախտորոշում՝ վիճարկելի է, կանխատեսումներ՝ իրերի դրությունն առավել բարդանում է, բուժում՝ հայցել ոստիկանության/նավատորմի/ՄԱԿ-ի միջնորդությունը) այլևս *Մարդ էակին* արժանի չէ:

Այսպիսով, մեր ելակետը հետևյալն է.

- ախտորոշումը. բռնության վիճակ,
- կանխատեսումները. բռնի գործընթացներ՝ աճ, հաստատուն զարգացում,

անկում,

- բուժումը. բռնի գործընթացների թուլացում (բացասական խաղաղություն), կենսապայմանների բարելավման գործընթացներ (դրական խաղաղություն):

Խաղաղության հետազոտությունների համար որպես ելակետ կարելի է ընդունել բռնության կամ տառապանքի հասկացությունների պարզաբանումը հետևյալ տեսանկյուններից.

ո՞րն է բռնության պատճառը, որո՞նք են բռնության հետևանքները:

Մենք կարող ենք նաև որպես ելակետ ընդունել խաղաղության ավարտը՝ հարցնելով.

ո՞րն է խաղաղության պատճառը, որո՞նք են խաղաղության հետևանքները:

Որ ուղին էլ ընտրելու լինենք, ի հայտ է գալու բոլոր պատասխանները պարունակելու համար բավականաչափ ընդգրկուն տիպաբանության անհրաժեշտություն: Նվազագույն տիպաբանությունը կարող է օգտագործել բոլոր վեց՝ *բնության, անհատի, սոցիալական, համաշխարհային, մշակութային, ժամանակային* տիրույթները (հարթությունները): Ի հավելումն այս ամենի է գալիս տարբերակման *ներ-/միջ- համակարգումը*, օրինակ՝ *ներանհատական դիալեկտիկայի* և *միջանհատական հարաբերությունների* միջև:

Համակցելով հարթությունները ու համակարգերը՝ ի վերջո հանգում ենք 12 գործոններին, ինչպես նշված է 2.1 աղյուսակում: Վերջինիս առավել մանրամասն նկարագրությունը տրված է 2.2 աղյուսակում:

Աղյուսակ 2.1. Խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների I համակարգումը

Հարթությունը	Ներ-	Միջ-	Բռնություն	Բացասական խաղաղություն	Դրական խաղաղություն
բնության					
անհատի					
սոցիալական					
համաշխարհային					
մշակութային					
ժամանակային					
	ներքին դիալեկտիկա	այլ հարաբեր.	կենսանվազում	բռնության կրճատում	կենսախթանում

Այժմ բոլոր վեց տիրույթների համար կարելի է առաջարկել ենթատիպաբանություններ.

բնության (N).	մարդիկ, կենդանիներ, բույսեր, միկրոօրգանիզմներ, հարուցիչներ,
անհատի (P).	գոյատևման, բարեկեցության, ազատության, ինքնության (այս կատեգորիաները կիրառելի են նաև գիտակից էակների համար) կարիքներ,
սոցիալական (S).	էություն, սեռ, սերունդ, ռասա, դաս, ազգություն, երկիր,
համաշխարհային(W).	Հյուսիս-Արևմուտք, Հյուսիս-Արևելք, Հարավ-Արևմուտք, Հարավ-Արևելք (պետական համակարգ), ոչ-տարածքային (կապիտալ, քաղաքացիական հասարակություն, ժողովուրդ),
մշակութային (C).	Արևմուտք I, Արևմուտք II, հնդկական, բուդդայական, չինական, ճապոնական[1],
ժամանակային (T).	ներժամանակային, *կայրոս* (*Kairos*)[i], միջժամանակային, *քրոնոս (Chronos)*[ii]*:*

Այս սխեման այնուհետև կարող է պարզեցվել՝ տարանջատելու համար բնությունը, դերակատարներին, կառուցվածքը, մշակույթը, ժամանակը, բռնությունն ու խաղաղությունը:

Բնական բռնությունը կարող է սկզբնավորվել բնության հարթությունում՝ ներառյալ մարդկային մարմինը, ընդ որում՝ առանց մարդ էակի կողմից ծրագրման:

Դերակատարների կամ ուղղակի բռնությունը ձևավորվում է անհատի, սոցիալական և համաշխարհային հարթություններում՝ ծրագրվելով միայնակ կամ կոլեկտիվում գործող անհատների կողմից:

Կառուցվածքային կամ անուղղակի բռնությունը ձևակերպվում է որպես անհատի, սոցիալական կամ համաշխարհային տիրույթներում ներկառուցված՝ առանց որևէ մեկի կողմից ծրագրման:

Մշակութային բռնությունը ծառայում է ուղղակի և կառուցվածքային բռնությունների լեգիտիմացման նպատակին՝ դերակատարներին մղելով ուղղակի բռնության իրականացման կամ կառուցվածքային բռնությանը հակազդելուն: Կարող է լինել ծրագրված կամ չծրագրված:

Ժամանակային բռնությունը բացասական ազդեցություն է թողնում գալիք սերունդների վրա. ծայրահեղ դրսևորումը՝ կյանքն այլևս ինքնավերականգնվող («ինքնահարատ») չէ:

Ուղղակի բռնությունը տարանջատվում է *խոսքայինի (վերբալ)* և *ֆիզիկականի*, ինչպես նաև բռնության, որ վնասում է *մարմինը, միտքն ու հոգին*: Բռ-

---

[i] Kairos (հուն.)- «ճիշտ կամ պատեհ պահ»: Աստվածաբանության մեջ այն այժմ օգտագործվում է որպես ժամանակի որակական ձև /թարգ./:

[ii] Chronos (հուն.)- «ժամանակ»: Օգտագործվում է որպես ժամանակի քանակական ձև, որը չափելի է (վայրկյաններով, բոպեներով, ժամերով և այլն) /թարգ./:

լոր այս համակցությունների արդյունքում մնում են վնասվածքներ (զեղումներ), որոնք ժամանակի մեջ կարող են վերարտադրել բռնությունը:

Հնարավոր է առանձնացնել կառուցվածքային բռնության *քաղաքական, ճնշողական*, ինչպես նաև *տնտեսական, շահագործողական* ձևերը: Այն հենվում է կառուցվածքային *ներազդման, սեգմենտավորման, ֆրագմենտավորման* և *մարգինալացման* վրա: Ի հավելումն սրան՝ գոյություն ունի նաև *հորիզոնական կառուցվածքային բռնություն*, որն արդյունք է չափազանց մեծ փոխկապակցվածության կամ չափազանց մեծ անկախության, երբեմն նույնիսկ որևէ հարաբերության բացակայության: Կառուցվածքները կարող են լինել չափից ավելի գերիշխող (ուղղաձիգ), չափից ավելի կապակցված/սերտաճած (հորիզոնական), չափից ավելի մեծ (երկուսն էլ) և չափից ավելի փոքր (ոչ մեկը, ոչ մյուսը):

Մշակութային բռնությունը կարող է դասակարգվել ըստ բովանդակության՝ *կրոնի, օրենքի կամ գաղափարախոսության, լեզվի, արվեստի, էմպիրիկ/ֆորմալ գիտության, տիեզերաբանության*[i] *(խորը մշակույթ)*, ինչպես նաև ըստ կրողների՝ *դպրոցների, համալսարանների, լրատվամիջոցների*:

Միտումնավոր բռնությունը կարող է սկզբնավորվել միայն անհատ կամ կոլեկտիվի մաս հանդիսացող անձից (մարդուց) սոցիալական և համաշխարհային հարթություններում, ընդ որում՝ երբեմն օգտագործելով բնական, կառուցվածքային կամ մշակութային բռնությունը: Սակայն միտումնավոր բռնության ցավագին հետևանքները կարելի է գտնել ամենուր՝ մարդ էակների, գիտակից և անգիտակից բնության, վնասված կառուցվածքների ու մշակույթների մեջ, նաև ժամանակային բռնության տեսքով: Բռնությունը նաև վնասում է աշխարհի անգիտակից մասերը, որոնք ավելի լայնարձակ են, քան dukkha էությունը: Գոյություն ունեն ծայրահեղ դեպքերի կոնկրետ տերմիններ.

էկոսպանություն.	ծայրահեղ բռնություն բնության հանդեմ,
ինքնասպանություն.	ուղղակի վերջնական բռնություն «Ես»-ի հանդեպ,
մարդասպանություն.	ուղղակի վերջնական բռնություն Այլոց հանդեպ,
ցեղասպանություն.	ուղղակի վերջնական բռնություն համայն մարդկության հանդեպ,
կառուցվածքասպանություն.	կառուցվածքների բնաջնջում, ապակառուցվածքայնացում[2],
մշակութասպանություն.	մշակույթների բնաջնջում, ապամշակութայնացում[3],
ամենասպանություն.	վերը նշված բոլորը միասին:

Բացասական խաղաղությունը ցանկացած տիպի բռնության բացակայությունն է:

Կառուցվածքային բռնությունը չի կարող մեկնաբանվել որպես կառուցվածքի բացակայություն ընդհանրապես, ինչը ենթադրում է ներքին և արտա-

[i] Տիեզերաբանություն (cosmology) եզրը հեղինակը ողջ գրքում օգտագործում է իբրև խորը/խորքային մշակույթ/գաղափարախոսություն, մշակույթի մեջ արմատացած տեսակետներ, հասարակական աշխարհընկալում /թարգ./:

քին հարաբերությունների բացակայություն: Մարդկային ներքին դիալեկտիկան հավերժ է. որպես մարդ էակներ՝ մենք կարող ենք փախչել ուրիշներից, բայց ոչ երբեք ինքներս մեզնից: Արտաքին հարաբերությունների բացակայությունը ևս լուծում չէ, հետևաբար լուծում չէ նաև հորիզոնական կառուցվածքների որոնումը՝ ներսում կամ դրսում:

Ստորև ներկայացնենք դրական խաղաղության տիպաբանությունը՝ նաև *sukha*-ից անդին:

Բնական խաղաղությունը տեսակների համագործակցությունն է, ոչ պայքարը:

Ուղղակի դրական խաղաղությունը բաղկացած է խոսքային և ֆիզիկական բարությունից, «Ես»-ի և Այլոց հոգու, մտքի ու մարմնի նկատմամբ հոգատարությունից՝ ուղղված գոյատևման, բարօրության, ազատության և ինքնության հիմնարար կարիքների բավարարմանը: Սերն է այս ամենի էությունը՝ մարդկանց մարմնի, մտքի և հոգու միությունը:

Կառուցվածքային դրական խաղաղությունը կոչված է ճնշումները փոխարինելու ազատությամբ և շահագործումը՝ հավասարությամբ, այնուհետև ամրապնդելու այս ամենը *երկխոսությամբ* (ներազդման փոխարեն), *ինտեգրմամբ* (սեգմենտավորման փոխարեն), *միասնականացմամբ* (ֆրագմենտավորման փոխարեն) և *մասնակցությամբ* (մարգինալացման փոխարեն): Հնարավոր է՝ որոշակի ծավալուն, ուղղաձիգ (ալֆա) կառուցվածքների անհրաժեշտություն առաջանա, սակայն փոքր, հորիզոնական (բետա) կառուցվածքներն ավելի գեղեցիկ են (քանզի բացառում են գերկառուցվածքայնացումը): Ասվածը կիրառելի է նաև *ներքին խաղաղության* համար. խնդիրն այստեղ մարմնի, հոգու և մտքի ներդաշնակ համադրությունն է: Բանալին՝ արտաքին ու ներքին երկխոսություններ սեփական «Ես»-ի հետ:

Մշակութային դրական խաղաղությունը կարող է բռնության լեգիտիմացումը օրենսդրության, կրոնի, գաղափարախոսության, լեզվի, գիտության և արվեստի բնագավառներում, դպրոցներում, համալսարաններում ու լրատվամիջոցներում փոխարինել խաղաղության լեգիտիմացմամբ՝ ընդսմին կայացնելով դրական խաղաղ մշակույթ: «Ես»-ի ներքին տիրույթում սա նշանակում է մարդկային հակումների ու ունակությունների բացահայտում:

Վեցերորդ հարթությունը՝ *ժամանակը,* միջավայր է, ուր ցանկացած համակարգ փոփոխվում կամ ենթարկվում է գործընթացների («Ես»-ի և/կամ Այլոց ներազդեցությամբ կամ էլ անկախ մարդկային գործոնից) ավելացնելով կամ նվազեցնելով բռնությունը կամ խաղաղությունը կամ *dukkha*-ն և *sukha*-ն: Ժամանակային կամ «ժամանակավոր» բռնությունն իմաստ ունի նաև այն դեպքում, երբ խաղաղարար գործընթացները չափազանց դանդաղ են ընթանում, կամ, ընդհակառակը, բռնության գործընթացներն են չափազանց արագ ընթանում, կամ էլ երբ գործընթացները վատ են համակարգված: Խաղաղությունը սահմաններ չունի, ճիշտ այնպես, ինչպես սահմաններ չունի բռնությունը: Համատարած խաղաղությունը նույնքան իմաստալից է, որքան հա-

մատարած սպանությունը: *Pax omnium cum omnibus*[i]-ը պետք է լինի մեր մշակույթի հիմնական կարգախոսը, և ոչ թե *Bellum omnium contra omnes*[ii]-ը: Սակայն դա դեռևս այդպես չէ:

Վեց հարթությունների ու ներ-/միջ- համակարգերի (տասներկու համակցություն) մասին այս քննարկումը շատ օգտակար է: Քննարկումը մի մտավոր միջավայր է, ուր կարող են այլընտրանքային տեսություններ ձևավորվել: Տեսությունը կազմված է միմյանց շղթայակցված վարկածներից: Առանձին վարկածը բացառում է կապակցությունների հնարավորությունը և դրանց ի հայտ գալու դեպքում էմպիրիկորեն հերքվում է: Սակայն քննարկումը բացառում է այն ամենն, ինչ անհնար է ձևակերպել, հետևաբար, դրանց պետք է մտքային տեսք տալ՝ փոխանակ մերժելու կամ լռության մատնելու:

Հաջորդող թեորեմները հեշտությամբ տեղավորվում են այս քննարկման շրջանակներում.

- *ցանկացած բռնություն բռնություն է ծնում,*
- *ցանկացած խաղաղություն խաղաղություն է ստեղծում,*
- *բռնության դեմ լավագույն պաշտպանությունը դրական խաղաղությունն է:*

Ավելի կոնկրետ՝ ուղղակի բռնությունը բազմանում է վրեժի ու հանցավոր ահաբեկման միջոցով, կառուցվածքային և մշակութային բռնությունը՝ կլոնավորման և կատարելագործման ճանապարհով: Ուղղակի բռնությունը կարող է օգտագործվել կառուցվածքային բռնության ձևավորման համար, վերջինս էլ, իր հերթին, հանգեցնում է հեղափոխական և հակահեղափոխական ուղղակի բռնության, իսկ մշակութային բռնությունն օրինականացնում է այդ ամենը:

2.2 աղյուսակում բերված գծապատկերն իրականում շատ պարզ է: DV և SV, DP և SP-ն ունեն վեց ենթաբաժանումներ (N, P, S, W, C, T): CV և CP-ից յուրաքանչյուրն ունի տասնմեկ, միասին՝ 4 x 6 + 2 x 11 = 46: Այնուհետև գալիս են ենթաբաժանումները N, P, S, W, C, T-ի համար, ինչպես նաև մշակութային ենթաբաժանումները և այլն:

Հիմնական դրույթն այն է, որ խաղաղության ուսումնասիրությունները ենթադրում են բռնության ուսումնասիրություններ: Եթե բռնությունը խնդիրն է, իսկ խաղաղությունը՝ լուծումը, համադարմանը, ապա երկուսն էլ կարիք ունեն ուսումնասիրության, կրթության և գործողությունների:

Աղյուսակը փորձարկելու համար տեսնենք, թե ինչպես կհարմարեցվեն այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ռազմատենչությունը, բնապահպանությունը, ժողովրդավարությունն ու հայրիշխանությունը:

Զավթողականությունը կարող է գտնվել DV-SV-CV սյունակում՝ W ռազմական ներխուժման համար սպառազինությունների կիրառմամբ, աջակցություն ստանալով S-ի այնպիսի կառուցվածքներից, ինչպիսիք են արդյունաբերական համալիրները, լեգիտիմացվելով C-ում հայրենասիրական ու հայրիշխանական տարրերով, ինչպես նաև դպրոցներում հայրենասիրական դաս-

---

[i] Pax omnium cum omnibus (լատ.) -«բոլորի խաղաղությունը բոլորի համար» /թարգ./:
[ii] Bellum omnium contra omnes (լատ.)- «բոլորի պատերազմը բոլորի դեմ»: Իր «Լևիաթան» աշխատության մեջ Թոմաս Հոբսն այսպես է բնութագրել մարդկանց գոյածևը նախքան պետությունների առաջացումը /թարգ./:

տիարակության, իսկ համալսարաններում՝ զինվորական վերապատրաստումների միջոցով: Ձավթողականությունը պետք է ուսումնասիրվի ժամանակի ու տարածության մեջ, աշխարհագրության ու պատմության, ինչպես նաև DP-SP-CP սյունակի դիալեկտիկայի համատեքստում. *ապազավթողականություն*:

Աղյուսակ 2.2. Խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների II համակարգումը. Կրթության, հետազոտությունների ու գործողությունների ոլորտների մի քանի օրինակներ

Ուղղակի բռնություն (DV)	*Ուղղակի (դրական) խաղաղություն (DP)*
N: «ամենահարմարվողների գոյատևումը»	N: «փոխօգնություն և համագործակցություն»
P: բռնություն «Ես»-ի նկատմամբ, ինքնասպանություն	P: միջ-, ներ-անհատական զարգացում
S: բռնություն բաժանարար գծերի շուրջ	S: ոչ բռնի ազատագրում
W: պատերազմի աշխարհագրություն, ցեղասպանություն	W: խաղաղության շարժում, այլընտրանքային պաշտպանություն
C: մշակութասպանություն	C: մշակութային ազատագրում
T: բռնության պատմություն և ապագա, պատերազմ	T: խաղաղության պատմություն և ապագա
Կառուցվածքային բռնություն (SV)	*Կառուցվածքային (դրական) խաղաղություն (SP)*
N: էկոսպանություն	N: ոչ-հոմոկենտրոն էկո-խաղաղություն
P: հոգեկան շեղումներ	P: միջ-, ներ-անհատական խաղաղություն
S: հայրիշխանություն, ռասիզմ, դասակարգեր	S: զարգացում, իրավահավասարություն
W: իմպերիալիզմ, առևտուր	W: խաղաղ տարածաշրջաններ, կառավարում, ՄԱԿ
C: մշակութային իմպերիալիզմ	C: մշակութային համակեցություն
T: շահագործման ու ռեպրեսիաների պատմություն և ապագա	T: վերոհիշյալի ինքնահարատություն
Մշակութային բռնություն (CV)	*Մշակութային (դրական) խաղաղություն (CP)*
Կրոն. վերիմացական (տրանսցենդենտ)	Կրոն. ներիմացական (իմանենտ)
Օրենք. ժողովրդավարություն, մարդու իրավունքներ	Օրենք. ժողովրդավարություն, մարդու իրավունքներ
Գաղափարախոսություն. համակողմանիություն, միակողմանիություն	Գաղափարախոսություն. յուրակարծություն, այլակարծություն
Լեզու. սեռախտրական, ռասիստական	Լեզու. մարդասիրական/ոչ մասնագիտական
Արվեստ. հայրենասիրական, հայրիշխանական	Արվեստ. մարդասիրական/ոչ մասնագիտացված
Գիտություն I. արևմտյա՞ն տրամաբանություն	Գիտություն I՞. դառիստակա՞ն, բուդդայակա՞ն
Գիտություն II. կյանքի ոչնչացում	Գիտություն II. կյանքի բարելավմանն ուղղված
Տիեզերաբանություն. Արևմուտք I՞, չինակա՞ն, ճապոնակա՞ն	Տիեզերաբանություն. Արևմուտք II, հնդկակա՞ն, բուդդայակա՞ն

Դպրոց. ռազմականացում	Դպրոց. խաղաղության կրթություն
Համալսարան. ռազմականացում	Համալսարան. խաղաղության ուսումնասիրություն և հետազոտում
Լրատվամիջոցներ. պատերազմի-բռնության լրագրություն	Լրատվամիջոցներ. խաղաղության լրագրություն

Բնապահպանությունը և էկո-ճգնաժամն ընդհանրապես ուղղակի բռնություն է ընդդեմ բնության, ինչպես օրինակ պատերազմը, արդյունաբերության և ագրոարդյունաբերության կառուցվածքային բռնությունն ու այս ամենը լեգիտիմացնող մշակութային ավանդույթները՝ կրկին առնչվելով խաղաղության համապատասխան կատեգորիաներին:

Ժողովրդավարությունը (ինչպես *մարդու իրավունքները*) որոշակի կառուցվածք է, այսինքն՝ իրավական ակտերի համակարգ, որը, ինչպես և մշակույթը, կարող է կամ չի կարող օրինականացնել ուղղակի կամ կառուցվածքային խաղաղությունը կամ բռնությունը/պատերազմը: Ասվածը պետք է քննարկել բոլոր վեց տիրույթներում և չի կարող ապրիորի որոշվել:

Հայրիշխանությունը կառուցվածքային բռնություն է, որի գլխին կանգնած են տղամարդիկ, իսկ կանայք տեղաբաշխված են ավելի ցածր հարթություններում: S-ում և W-ում այն իրենից ներկայացնում է կանանց դեմ ուղղված բռնության անհամար դրսևորումների ամբողջություն՝ լեգիտիմացված որոշակի մշակութային ավանդույթներով, որոնք ևս պետք է ընկալվեն իրենց իսկ խաղաղարար բացասումների համատեքստում:

Այսպիսով, թեման ընդգրկում է համակարգի բազմաթիվ բաղկացուցիչներ, սակայն կոնկրետ հետազոտությունը կարող է շատ ավելի սահմանափակ լինել: Պարբերականությունը հետազոտության ամբողջականությունն ապահովող մարտահրավեր է, որ համատեղում է բազմաթիվ ասպեկտներ:

Այդժամ ինչպե՞ս դասակարգել Խաղաղության ուսումնասիրությունների միջազգային ասոցիացիայի (IPRA) կողմից ձևավորված տասնութ հանձնաժողովները.

- *Հաղորդակցություններ.* փոխգործակցության ձև S-ում և W-ում, ինչպես նաև լրատվամիջոցների՝ որպես խաղաղության/պատերազմի մշակույթի կրողների ուսումնասիրություն:
- *Վերակազմավորման հարցեր.* ռազմական սարքավորումների և ծրագրային փաթեթների ապառազմականացում և նպատակաուղղում քաղաքացիական նպատակների:
- *Պաշտպանություն և զինաթափում.* անվտանգություն (W-ում պատերազմի նվազագույն հավանականություն), հարձակողական պաշտպանության նվազեցում և պաշտպանողական պաշտպանության ուժեղացում:
- *Բնապահպանական անվտանգություն.* N-ում առկա էկո-ճգնաժամի հետևանքով P, S և W համակարգերում առաջացած հակամարտությունների լուծում բռնության բռնկումների կանխարգելման նպատակով:
- *Սննդի քաղաքականություն.* P-ի ամենահիմնարար անհրաժեշտություններից մեկը՝ DV/DP-ի, SV/SP-ի ու CV/CP-ի ողջ համակարգի առնչությամբ:
- *Մարդու մարգինալացում գլոբալ քաղաքատնտեսության մեջ.* W-ում կառուցվածքային բռնության և դրա դրսևորումների հիմնարար ասպեկտներից մեկը:

- *Մարդու իրավունքներ ու զարգացում.* կոնկրետ ինստիտուտ (իրավական ակտերի համակարգ) և դրա առնչությունները կառուցվածքային խաղաղությանը P-ում և S-ում, հավանական է նաև N-ում, W-ում և T-ում (ինքնահարատություն):
- *Ներքին հակամարտություններ ու դրանց լուծում.* հակամարտությունների ստեղծագործական փոխակերպումը՝ որպես այլընտրանք բռնությանը S-ում (ոչ W-ում):
- *Միջազգային հակամարտությունների կարգավորում.* հակամարտությունների ստեղծագործական փոխակերպումը՝ որպես այլընտրանք բռնությանը W-ում (ոչ S-ում):
- *Միջին Արևելքում պատերազմի ավարտ ու խաղաղության կերտում.* Վերոհիշյալն ու ներքոշարադրյալը (նույնիսկ ավելին) Միջին Արևելքում:
- *Ոչ-բռնություն.* խաղաղ միջոցներով ուղղակի խաղաղություն բոլոր ասպարեզներում՝ մեծ բռնությունների (վտանգների) համատեքստում:
- *Խաղաղության կրթություն և խաղաղության համալսարանական ուսումնասիրություններ.* որպես մշակույթի փոխակերպման միջոց կրթություն և հետազոտություններ բոլոր մակարդակներում:
- *Խաղաղության շարժում.* ուղղակի, կառուցվածքային ու մշակութային խաղաղությանն ուղղված խաղաղության շարժումներ քաղաքացիական հասարակության շրջանում՝ S-ում և W-ում:
- *Փախստականներ.* մարդկանց այն վիճակը, երբ նրանք N-ի, S-ի և W-ի ճգնաժամերից դրդված՝ ստիպված լքել են իրենց կացարանները. ընդհանրապես՝ բռնության զոհեր:
- *Կրոն և հակամարտություններ.* մշակույթի հիմնական կողմը՝ ուղղակի կամ կառուցվածքային բռնության կամ խաղաղության լեգիտիմացման իր դերով:
- *Արևելյան Եվրոպայի երկրներում իրականացվող փոփոխություններ.* Վերոհիշյալ բոլոր կետերը (նույնիսկ ավելին) Արևելյան Եվրոպայում՝ վերափոխումների ներկա գործընթացում:
- *Կանայք և խաղաղություն.* Վերոհիշյալ բոլոր կետերը (նույնիսկ ավելին) S-ի մեկ բաժանման համատեքստում. հայրիշխանություն և դրա քանդում:
- *Խաղաղություն և Ճապոնիա.* Վերոհիշյալ բոլոր կետերը (նույնիսկ ավելին) Ճապոնիայում:

Այս տասնութ հանձնաժողովներն ունեն իրենց սահմանումները, (վերա)սահմանման խնդիրը հետազոտական գործունեության հիմնական կողմն է: Խնդիրն այն է, որ IPRA-ի բոլոր հանձնաժողովները կարող են հարմարեցվել ներկայացված դատողություններին: Դրանցից երեքը կարելի է որակել որպես ոչ-գլոբալ, քանզի դրանք միտված են որոշակի տարածաշրջանի (Միջին Արևելք, Արևելյան Եվրոպա, Ճապոնիա), ինչն սկզբունքորեն արդարացված է: Հանձնաժողովներից ոչ մեկը չի կարելի անվանել ոչ-հոլիստական, նեղ մասնագիտացված: Կարելի է առաջարկել նաև այլ հանձնաժողովներ (P-ներքին խաղաղության, T-մակրո-պատմության, C-մշակույթի բազմաթիվ ասպեկտների): Դեռ շատ աշխատանք պետք է կատարել:

Բազմաթիվ թերություններ կան. *խաղաղության ընդհանուր տեսությունը* (բնության և մարդկության հիմնական կարիքների պահպանությունն ու զարգացումը), *հակամարտությունների ընդհանուր տեսությունը* (ի՞նչ է տեղի ունե-

նում, երբ նպատակամետ համակարգերի նպատակներն անհամատեղելի են) և *զարգացման ընդհանուր տեսությունը* (կարիքների ու նպատակների վերարտադրողական իրագործումը): Նույնը կարելի է ասել նաև *սկզբունքների* ու *իմացաբանության/մեթոդաբանության* վերաբերյալ, որոնք ևս պետք է գումարվեն վերը ներկայացված երկու նախագծերին: Որպեսզի խաղաղության ուսումնասիրություններն ընդգրկեն նոր խնդիրներ (Պարսից Ծոց, Արևելյան Եվրոպա, Սոմալի, Ռուանդա, Չիապաս), անհրաժեշտ է ընդհանուր փորձառություն: Սառը պատերազմի ավարտը բազմաթիվ հետազոտողների գործունեության համար նույնպես նշանավորվեց իբրև ավարտ[4]: Ներկայում կայանում է Խաղաղության ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի *Խաղաղության տեսության* հանձնաժողովը:

2.4 Խաղաղության ուսումնասիրություններ. խաղաղության մասին գիտելիքներից դեպի խաղաղարար հմտություններ

Խաղաղությունը խաղաղության ուսումնասիրությունների ձախից աջ փոխակերպումն է I և II համակարգումներում: Խաղաղության ուսումնասիրությունները կարող են խթանվել հետազոտությունների վրա հիմնված գիտելիքների միջոցով: Բայց միայն ուսումնասիրությունները չեն կարող դադարեցնել ուղղակի բռնության գործադրումը, քայքայել բռնության կառուցվածքները, ոչ էլ կարող են ձևավորել ուղղակի, կառուցվածքային կամ մշակութային խաղաղություն: Հմուտ մարդիկ կարող են, իսկ *հմտությունը = գիտելիքներ (ինչպե՞ս անել) + երևակայություն + կարեկցանք + համառություն:*

Ուղղակի կամ կառուցվածքային խաղաղության կերտման համար անհրաժեշտ են գործողություններ, իսկ դրանց կատարման միջավայրը ժամանակն է՝ ինչպես *կայրոսը,* այնպես էլ *քրոնոսը*: Ճարտարապետները թերևս գիտեն, թե տվյալ կամուրջն ի՞նչ թերություններ ունի և ինչպիսի՞ն պիտի լինի կամուրջը: Բայց Ա-ից Բ գնալու համար անհրաժեշտ է գործողություն, ասենք զանգվածային եռակցումներ, որ կատարում են «բանվորները», թեև բժշկության մեջ վիրաբույժն իր դանակով կարող է իրականացնել բոլոր երեքն էլ: Երկուսն էլ մասնագիտություններ են: Ճարտարապետությունը պահանջում է բարձր գիտելիքներ և պակաս հմտություններ, հետևաբար նաև՝ ցածր գիտելիքներով ու բարձր հմտություններով բանվորներ: Բժշկագիտությունը պահանջում է թե՛ բարձր գիտելիքներ, թե՛ հմտություն, իհարկե, ներառյալ բուժքույրերին ու աշխատանքի ներքին բաժանման օղակները:

Գիտելիքներն ու հմտությունները մեկ անձի մեջ միավորելու օգտին են խոսում մի շարք անառարկելի փաստարկներ՝ տեսության և փորձի միջև փոխադարձ ուղղակի անցումները, ուրիշներից գործողություններ պահանջելու փոխարեն անձնական պատասխանատվության ստանձնումը. դա ճիշտ է նաև առավել խաղաղ աշխարհի կերտման ճանապարհին: Մինչդեռ գոյություն ունեն նաև փաստարկներ աշխատանքի բաժանման օգտին:

Այս ամենից զատ, չկաղապարվելով անհապաղ և արդյունավետ իրագործման պահանջով, զուտ խաղաղության ուսումնասիրությունների, խաղաղության հետազոտությունների, խաղաղության գիտության դեմ իրականում փաստարկներ չունենք: Փորձը ցույց է տալիս, որ ճշմարիտ գիտելիք տարածելու ճանապարհը, որպես կանոն, ուղեկցվում է անսպասելի հայտնություն-

ներով՝ չծրագրված փորձի արդյունքներով: Բացի խաղաղության գիտելիքներից որևէ լուրջ փաստարկ չունենք նաև ընդդեմ խաղաղարարար հմտությունների:

Հիմնվելով վերը շարադրված երկրորդ համակարգման վրա՝ եկեք ուրվագծենք գիտելիքների ու խաղաղարար հմտությունների որևէ մեկամյա դասընթացի ծրագիր.

Հիմունքներ	Բռնության ընդհանուր տեսություն	Խաղաղության ընդհանուր տեսություն
	Հակամարտության ձևավորում	Հակամարտությունների փոխակերպում
	Իմացաբանություն	Մեթոդաբանություն
Մասնագիտացում	Ուղղակի բռնություն	Ուղղակի խաղաղություն
	Կառուցվածքային բռնություն I *Շահագործում*	Կառուցվածքային խաղաղություն I *Տնտեսական արդարություն*
	Կառուցվածքային բռնություն II *Ճնշումներ*	Կառուցվածքային խաղաղություն II *Քաղաքական արդարություն*
	Մշակութային բռնություն	Մշակութային խաղաղություն

Կառուցվածքային բռնությունն ու խաղաղությունն այստեղ բաժանվել են տնտեսական և քաղաքական իշխանության խաղաղ կամ բռնի կիրառման: Այնուհետև վեց հիմնական ուղղություններ են հավելվել: Միասին ստացվեց տասնչորս ուղղություն: Առավել կարճ տարբերակում *ին* և *յան* կողմերը՝ խնդիրներն ու լուծումները, կարող են համախմբվել մեկ ուղղության մեջ. այնժամ մենք կունենանք յոթ ուղղություններ: Կամ կարող ենք դիտարկել միայն առաջին չորս ուղղությունները՝ ստանալով գերկարճ ներածություն:

Դիվանագիտական ակադեմիաների կողմից առաջարկվող դասական դասընթացներն անտեսում են գլոբալացումը՝ կենտրոնանալով միայն տարածաշրջանային ուսումնասիրությունների վրա, որոնք, սակայն, սահմանվում են Կենտրոնի և Ծայրամասերի մտավոր սահմանազատման սկզբունքով («Լատինական Ամերիկան» առանց Միացյալ Նահանգների, կամ «Արևելյան Եվրոպան» առանց Եվրամիության ուսումնասիրության), ինչն, իր հերթին, անտեսանելի է դարձնում կառուցվածքները: Մենք առհամարում ենք հոլիզմը, երբ գիտության կոնկրետ ուղղությունից արմատապես կառչած մեկին «փորձագետ» ենք անվանում: Խաղաղությունն ու հակամարտությունն ընդունված է դիտարկել իրավական տեսանկյունից՝ առանց հարցականի տակ դնելու օրենքն՝ իբրև կառուցվածքային և մշակութային բռնության ևս մի աղբյուր (նաև կառուցվածքային և մշակութային խաղաղության հնարավոր աղբյուր): Այլընտրանքների մասին անբավարար գիտելիքների և դրանց նկատմամբ անբավարար ուշադրության հետևանքով ռազմական ուժն ու ներխուժումը լեգիտիմացվել են իբրև վերջին միջոց: Տնտեսական իշխանությունը (հարկադրանքի միջոցներ և դրական առաջարկ՝ ինչպես մտրակն ու բլիթը) գերակայող տնտեսագիտության մեջ ինքնին ներկայացված է իբրև տնտեսական կառուցվածքային բռնության լեգիտիմացում: Քաղաքական իշխանությունը դիտարկվում է անքննելի ժողովրդավարության տեսության տեսանկյունից, իսկ մշակութային իշխանությունը կա՛մ առհասարակ անտեսվում է, կա՛մ ամրապնդվում է բացառապես «մենք ուսումնասիրում ենք մարդկանց» (ոլորտային ուսումնասիրություններ) ձևակերպմամբ: Միով բանիվ, դիվանագետ-

ների այսօրինակ վերապատրաստումը, ըստ էության, գաղափարախոսական առումով ոչ միայն կանխակալ է՝ միանգամայն կանխատեսելի եզրահանգումներով, այլև պարզապես հնացած է:

Արդիականացման համար դեռևս մեծ ասպարեզ կա, և ներկայացված տարբերակը կարող է հնարավորություններից մեկը լինել: Ոլորտային ուսումնասիրությունների (ներառյալ լեզվաբանական իրազեկությունը), իրավունքի, «ռեալիզմի» (ավելի շատ կանգ է առնում բռնության, քան ոչ-բռնության խնդիրների վրա) դասական համակցումը կենտրոնանում է միջպետական հակամարտությունների ու մեկ կամ երկու գերակայող գիտությունների վրա, ինչն, ինքնին, անհամարժեք մոտեցման բաղադրատոմս է:

Ներկա աշխարհի համար ծայրահեղ անհրաժեշտ ենք համարում *խաղաղության և հակամարտությունների կարգավորման մագիստրոսի* կոչում (ինչպես, ասենք, գործարար մագիստրոսի որակավորումն է) շնորհող հետհամալսարանական կրթության տրամադրումը հնարավորին չափ շատ կրթօջախների կողմից: Խաղաղության հաստատման ճանապարհին հակամարտությունների ստեղծագործաբար կարգավորման սկզբունքն այլընտրանք չունի: Չկարգավորված հակամարտությունը կարող է հանգեցնել հուսալքման, որն, իր հերթին, կբերի ագրեսիայի, վերջինս էլ՝ բռնության: Խաղաղության ու հակամարտությունների կարգավորման հետագա ամրապնդման նպատակով մենք պետք է հավելենք նաև զարգացումը (զարգացման հետազոտումը), բայց այս ասպարեզն այնքան վիթխարի է, որ ավելի լավ է կիրառել առանձին աստիճանավորում: Երկու աստիճանում էլ պատշաճ ուշադրություն պետք է հատկացնել խաղաղության և զարգացման սահմանազատմանը, ինչպես նաև քաղաքակրթության (մշակույթի) կարևորությանը՝ որպես համատեքստ և որպես բռնության ու խաղաղության սկզբնապատճառ:

Բոլոր այս դասընթացներում էլ կարող են հաղորդվել թե՛ գիտելիքներ, և թե՛ հմտություններ: Գիտելիքները կարող են զարգացվել ուղղաձիգ (դասախոսություններ), հորիզոնական (սեմինարներ և քննարկումներ), և հորիզոնական՝ դասախոսների և ուսանողների շրջանում (համատեղ քննարկումներ): Վերջին երկուսը Միացյալ Նահանգների համալսարաններում հաճախ բացակայում են, ինչը թանկ է նստում ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների վրա: Իսկ ի՞նչ ասել «ինչպե՞ս անել» բանաձևի, երևակայության, կարեկցանքի և կամքի մասին: Համալսարանները բոլոր չորս դեպքում էլ թույլ են, մասնավորապես՝ վերջին երկուսում:

Ի վերջո, ոչինչ չի կարող փոխարինել ուսումնաարտադրական վերապատրաստմանն ու փորձին հասարակական (ուղիղ, կառուցվածքային ու մշակութային) իրականության մեջ: Առաջինը կարող է իրականացվել ուսումնառության երկրորդ տարում, իսկ փորձի առկայությունը կարող է հանդիսանալ ուսումնական հաստատություն (դասընթացներ) ընդունվելու նախապայման: Սակայն իրականությունը կարող է լսարան բերվել նաև *ականատեսների* կամ *տեսողական-լսողական* սարքավորումների օգնությամբ, այն կարող է ներկայացվել *թղթի վրա պատկերելով*՝ նկարագրելով խնդրահարույց որոշումները, լուծում պահանջող իրավիճակները, դրանք ուղեկցելով գործողությունների ուղենիշներով ու պատճառահետևանքային վերլուծություններով: Նույնը կարելի է ասել նաև *իրավիճակային խաղերի* մասին՝ համակարգիչ-համակարգիչ, մարդ-համակարգիչ և մարդ-մարդ տարբերակումներով *(դերակատարումներով):*

Ի հավելումն (ոչ թե փոխարեն) վերոհիշյալի, պետք է օգտագործվեն *բեմադրությունները,* որոնք շատ ավելի հոլիստական են, քան դերակատարումները, և պիեսները թե՛ գրող, թե՛ բեմադրող մասնակիցներով կարող են հանդիսանալ իրական կամ մտացածին կյանքի հայելային արտապատկերումներ: Լսարանը բաժանելով միևնույն խնդրի շուրջ աշխատող մի քանի փոքր խմբերի կամ ինչպես Պիրանդելլոն[i] էր ասում «վեց գործող անձիք հեղինակ որոնելիս»՝ դասընթացը լավ հիմք կստեղծի համեմատությունների ու հետագա զարգացման համար: Խումբը, որը քննարկում է, թե ինչպես պետք է որևէ հակամարտության մասին գրել, որոշակի առումով հենց ինքն է կոնֆլիկտի մեջ, ինչն ինքնին ավելացնում է փորձը: Կատարյալ պայմաններում բեմադրությունը պետք է ներառի առնչվող իրողությունների ամբողջական ցիկլը և, իհարկե, այնուհետև դառնա բուռն քննարկումների առարկա:

Եվ այսպես, որտե՞ղ կարող են S և W տիրույթներում նմանօրինակ վերապատրաստում անցած մարդիկ գործել հօգուտ դրական և բացասական խաղաղության:

Պատասխանը տեղաշարժվում է S-ի և W-ի մեկ այլ ենթատիրույթից դեպի *պետություն* (կառավարություն-չինովնիկություն), *կապիտալ* (կորպորացիաներ) և *քաղաքացիական հասարակություն* ու մարդկանց ամենատարբեր ֆորմալ ու ոչ ֆորմալ կազմակերպություններ. վերջիններս W-ում հայտնի են որպես ոչ կառավարական կազմակերպություններ: Հիշյալ երեքից առաջինը՝ պետությունը, բռնության մենաշնորհ ունի և «անհրաժեշտության դեպքում» հեշտությամբ կարող է հակվել դեպի բռնության կիրառում («մուրճով զինված մարդուն աշխարհը մեխ է թվում»): Գրեթե նույնկերպ անդրազգային կորպորացիաները կօգտագործեն կապիտալը, հասարակական կազմակերպությունները՝ մարդկային բարոյականությունն ու ոչ բռնի ուժը՝ ներառյալ քաղաքացիական անհնազանդությունը:

Խաղաղարարները կարող են գործել բոլոր վեց ասպարեզներում.

- կառավարություններում և միջկառավարական կազմակերպություններում՝ նաև ՄԱԿ-ում, ներառյալ մունիցիպալ մակարդակը, որը խաղաղարար մեծ ներուժ ունի,
- ազգային և անդրազգային կորպորացիաներում,
- ազգային ու միջազգային հասարակական կազմակերպություններում:

Պետական համակարգում՝ ներառյալ ՄԱԿ-ի համակարգը, հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել այլընտրանքների մատնանշման ճանապարհով բռնության կանխարգելմանը, այլ համակարգերում՝ այդ այլընտրանքների կիրարկմանը:

Ապագա խաղաղարարները կարող են աշխատանք գտնել.

- տեղական իշխանություններում՝ լոկալ հակամարտությունների համար,
- պաշտպանության և արտաքին գործերի նախարարություններում՝ առավել ստեղծագործական համաշխարհային ու արտաքին քաղաքականության համար,

[i] Լուիջի Պիրանդելլո- իտալացի դրամատուրգ, Նոբելյան մրցանակի դափնեկիր /թարգ./

- ՄԱԿ-ում և այլ միջկառավարական կազմակերպություններում, որոնք նրանց համար իդեալական աշխատավայր են,
- ազգային ու անդրազգային կորպորացիաներում՝ տնտեսությունն առավել համագործակցային դարձնելու և մարդկային հիմնարար կարիքների բավարարմանը նպատակաուղղելու համար,
- ազգային ու միջազգային հասարակական կազմակերպություններում, ինչպես, օրինակ, եկեղեցում կամ արհմիություններում,
- դպրոցներում, համալսարաններում ու լրատվամիջոցներում:

2.5 Խաղաղության ուսումնասիրությունների երկրորդ պարադիգմը. մարմին-ոգի-կառուցվածք-մշակույթ

Համակարգման և I պարադիգմի հիմնահարցերից մեկը, ինչպես նշվեց 2.3 բաժնում, դրանց կոմպլեքսայնությունն է: Դատողությունները բազմաբովանդակ են, ինչպես երևում է 2.3 աղյուսակից.

Աղյուսակ 2.3. Պարադիգմ I-ի ամփոփումը. 12-գործոնային դատողությունները

Հարթություն	Ներ- (ներքին դիալեկտիկա)	Միջ- (արտաքին հարաբերություններ)
Բնության	Ներ-տիպային Էվոլյուցիա	Միջ-տիպային Անտիբիոզ, սիմբիոզ
Անհատի	Ներքին հակամարտություն Ներքին խաղաղություն	Միջ-անհատական, օրինակ՝ Ամուսնական հարաբերություններ
Հասարակական/ Սոցիալական	Ներ-հասարակական դիալեկտիկա Սոցիալական բաժանարարներ	Միջազգային հարաբերություններ Հակամարտություն և համագործակցություն
Համաշխարհային	Ներ-համաշխարհային դիալեկտիկա Համաշխարհային բաժանարարներ	Միջ-մոլորակային հարաբերություններ (փորձնականորեն դատարկ)
Մշակութային	Ներ-մշակութային դիալեկտիկա Ծնունդ-հասունացում-մահ	Միջմշակութային երկխոսություն Հակաթեզ, սինթեզ
Ժամանակային	*Կայրոս.* կենսաբանական ժամանակ, սուբյեկտիվ ժամանակ	*Քրոնոս.* ֆիզիկական ժամանակ, միջ-սուբյեկտիվ ժամանակ

Ներ-միջ- տարբերակումը հիմնարար է և բացահայտում է երկու տարբեր, բայց ոչ իրարամերժ վերլուծական ուղղություններ՝ դիալեկտիկա, ներքին լարվածություն, *ին/յան,* և առանձին միավորների միջև հարաբերությունների համակարգ: Սոցիալական ու համաշխարհային հարթություններում կոնֆլիկտները վերլուծելիս բաժանարարները հիմնարար դերակատարում ունեն:

Բռնության և խաղաղության վերաբերյալ վարկածների երեք հայեցակարգերը.

1. *Պատճառականությունը.* բռնությունը/խաղաղությունը սկզբնավորվում է միևնույն տեղում, օրինակ, ներանհատական (ֆրոյդյան), ներհասարա-

կական, դասակարգային (մարքսիստական) կամ ներհասարակական, «ժողովուրդ» (հիտլերյան) հարթություններում և տարածում է գտնում:

2. *Իզոմորֆիզմ.* ցանկացած հարթություն մյուսի համար կարող է որպես փոխաբերություն ծառայել, քանզի վարկածներ ձևավորելու համար կառուցվածքային տեսանկյունից դրանք բավականաչափ նման են:
3. *Պատճառական իզոմորֆիզմ.* վարքագծերը հարթությունների միջև կարող են տեղաշարժվել անհատական կամ կոլեկտիվ, գիտակցական կամ ենթագիտակցական ուսումնառության ճանապարհով:

Անդրադառնալով 2.3 աղյուսակին՝ պետք է նշենք, որ պատճառական վարկածը սովորաբար կիրառվում է հորիզոնական տողերով՝ նախ կուտակելով, ապա "դրսևորվելով" սթրեսները նույն հարթության մեջ. օրինակ՝ ներքին կոնֆլիկտներն արտահայտվում են ամուսնական հարաբերություններում, դասակարգային ու ազգային կոնֆլիկտները՝ միջազգային ասպարեզում, ծայր աստիճան հակասական մեր աշխարհը, հավանաբար, միավորվում է ընդդեմ այլ մոլորակների, ոչ-ստեղծագործական մշակույթները տարածվում են այլ մշակույթների վրա, որևէ *կայրոս* (ինչպես, ասենք, անհատական կամ մշակութային վնասվածքները/զեղումները) *քրոնոսի* միջով դառնում է կայուն դիրքորոշում:

Իզոմորֆիզմի վարկածը սովորաբար կիրառվում է ուղղաձիգ՝ միջ- կամ ներ- այուներում: Եթե ընդունենք սոցիալական հարթությունում մարդ-էակների տասը բաժանարարները (տիպ/բնույթ, սեռ, սերունդ, ռասա, դասակարգ, ազգություն, տարածք, ինչպես նաև պետություն-քաղաքացիական հասարակություն-կապիտալ եռանկյան երեք գագաթները) և երկրների համաշխարհային հարթությունում ինը բաժանարարները (տիպ/բնույթ, տարիք, ռասա, դասակարգ, քաղաքակրթություն, տարածաշրջան, ինչպես նաև միջպետական կազմակերպություններ-միջազգային ոչ-պետական կազմակերպություններ-անդրազգային կորպորացիաներ եռանկյան երեք գագաթները)՝ միայն ինը, քանզի մարդ էակների անհատական հարթության մեջ առկա սեռը սոցիալական հարթությունում իր հստակ համարժեքը չունի, ապա կարող ենք բազմաթիվ զուգահեռներ անցկացնել՝ աննշմարելի և էական: Եթե, ի հավելումն այս ամենի, անհատին դիտարկենք մարմնական տեսանկյունից՝ իբրև վիթխարի աշխարհի մի բջիջ, նույնիսկ այլ բջիջների հաշվին զարգացող բջիջների հետ (օրինակ՝ քաղցկեղը, որը S-ում և W-ում հայտնի է որպես շահագործում), այդ դեպքում մենք շատ բան կարող ենք սովորել: Ռգու ֆրոյդյան կառուցվածքի՝ ինքնության, ես-ի ու գերես-ի, համար ևս կարելի է զուգահեռներ անցկացնել S-ում և W-ում:

Ամենահետաքրքիրը, թերևս, սովորելու միջոցով իզոմորֆիզմի պատճառական կիրառումն է: Այստեղ օրինակ կարող է ծառայել «սոցիալդարվինիզմի» վարկածը բնության հարթությունից, որն այլ հարթություններում արտացոլվելով որպես խորը մշակույթի (տիեզերաբանության) նորմ՝ ինքնին դառնում է պատճառ: I պարադիգմը հիմնարար է խաղաղության ուսումնասիրությունների համար: Բայց եկեք պարզեցնենք մեր դատողություններն ու մոտեցնենք դրանք մեր՝ ուղղակի-կառուցվածքային-մշակութային բռնություն/խաղաղություն և ռազմական-տնտեսական-քաղաքական-մշակութային իշխանություն մոտեցումներին: Այս երկու մոտեցումները չափազանց նման են, քանզի (ուղղաձիգ) կառուցվածքային բռնությամբ բաժանվում են երկու մասի՝ տնտեսական (շահագործում) և քաղաքական (ճնշում): Բռնության և

խաղաղության խնդիրներն արծարծելու համար I պարադիգմից բխող դատողություններն առնվազն պետք է ներառեն մարդկային էությունը (N) և մշակույթը (C): Իսկ P, S և W, այսինքն՝ անհատի, սոցիալական և աշխարհի հարթություններ՞ը: Անշուշտ, մենք կարիք ունենք P հարթության մեջ այլ անհատների հետ առնչվող ներքին անհատի: Սակայն, մենք կարող ենք S-ն ու W-ն միավորել ավելի ընդարձակ կառուցվածքում: Ժամանակը՝ T-ն է ավելանում անխուսափելի DTP եռանկյան միջոցով, որտեղ բուժումն ախտորոշման վրա հիմնված ջանք է, որ նպատակ ունի կանխատեսումները խաղաղության փոխակերպելու:

Վերոնշյալ չորս՝ *մարմին, ոգի, կառուցվածք, մշակույթ* գործոններով մենք իրականում չենք հրաժարվում I պարադիգմից՝ ընդամենը պարզեցնում ենք այն: Ավելին, դիտարկումն այժմ այն աստիճան է պարզեցված, որ որևէ գործոնի կամ, նույնիսկ, գործոնների որևէ ախտանշանի անտեսումը չափազանց վտանգավոր է դառնում: Անհրաժեշտ է խուսափել (մարդկային) կենսաբանության («բիոլոգիզմ»), մարդկային հոգեբանության («փսիխոլոգիզմ»), կառուցվածքի («ստրուկտուրալիզմ») կամ մշակույթի («կուլտուրալիզմ») վրա միակողմանի կենտրոնացումից: Հարկ է կենտրոնանալ այս գործոնների և բռնության/խաղաղության փոխազդեցությունների վրա:

Վերջին երկու գործոնների հետ կապը չի կարող ավելի պարզունակ լինել. կառուցվածքային և մշակութային բռնություն/խաղաղություն արդեն իսկ ունենք, մինչդեռ մարմին/ոգի կապն ուղիղ գծով տանում է դեպի ուղղակի բռնություն/խաղաղություն: Բռնության դրսևորումը ներհատուկ է թե՛ մարմնին (ագրեսիա), թե՛ ոգուն (ագրեսիվություն), խաղաղարար դրսևորումը նույնպես ներհատուկ է թե՛ մարմնին (սեր), թե՛ ոգուն (կարեկցանք):

Այժմ փորձենք մասնավորեցնել, ինչպես ցույց է տրված 2.4 աղյուսակում, ուր բռնության և խաղաղության մասին այս ընդհանուր վարկածը կարելի է կարդալ ուղղաձիգ սյուներով: Խնդիրն այն է, որ (հետ)արդի աշխարհը չի կարող ձևավորվել բացառապես II սյունակի տարրերով:

Աղյուսակ 2.4. Պարադիգմ II. քառագործոն դիտարկում (վարկածներով)

		Արդյունավետ բռնություն	Արդյունավետ խաղաղություն
N	Մարմին	Արական	Իգական
P	Ոգի	Չհուզակցող	Հուզակցող
S,W	Կառուցվածք	Ուղղաձիգ (ալֆա)	Հորիզոնական (բետա)
C	Մշակույթ	Կենտրոնախույս	Կենտրոնաձիգ

Կան նաև այլ երկվություններ (կամ փոփոխականներ), որոնք կարող են օգտագործվել չորս ախտանշանները փորձարկելու նպատակով, բայց խնդրո առարկա նպատակադրումից ելնելով, թույլ տվեք դիտարկումներն ուղղորդել նշված կոնկրետ ուղղություններով:

Առաջին զույգը գտնվում է անհատական, իսկ երկրորդը՝ կոլեկտիվ մակարդակում, մարմինն ու կառուցվածքը ֆիզիկական/նյութական են (կառուցվածքը սխեմատիկ փոխատեղումների հանրագումարն է), իսկ ոգին ու մշակույթը հոգևոր/ոչ-նյութական են: Մշակույթի առաջնայնության վարկածը վեր է հանում հոգեկանը ձևավորող մշակույթը («սոցիալականացում») և կառուցվածքը, փոխգործակցության հիմնօրինակը («կառուցվածքայնացում»): Մար-

մինը հրահանգներ է ստանում մասամբ ոգուց, մասամբ՝ սոցիալական համատեքստից՝ կառուցվածքից:

Սակայն առարկությունն այստեղ ակնհայտ է. ոգին կարող է ներազդել անհատի ներքին և նրա շուրջը ձևավորված միկրո-մշակույթի վրա (առանձին դեպքերում՝ նաև մակրո-մշակույթի վրա), մշակույթը կարող է արտացոլել այն, ինչն արդեն իսկ առկա է կառուցվածքում (օրինակ՝ նվաճման արդյունքում): Մինչդեռ քաջ հայտնի է, որ մարմինը կարող է հակադրվել ոգու ու կառուցվածքի հրահանգներին՝ գիտակցված և ինսիտուցիոնալացված նորմերին: Այսպիսով, բոլոր տասներկու ուղղություններով առկա են պատճառական վեկտորներ, որոնք այստեղ չեն քննարկվի:

Հաջորդ գլխում (*խաղաղության* վերաբերյալ ընթացիկ՝ I Մասի), որ նվիրված է սեռային տարբերություններին (N), որպես հիմնական գործոն կքննարկվի *մարմինը*, իսկ հաջորդ երկու գլուխներում, որոնք նվիրված են ժողովրդավարության (S) և պետական համակարգին (W), կքննարկվի *քաղաքական կառուցվածքը:* II Մասում, որը նվիրված է *հակամարտություններին,* կուսումնասիրվեն *ոգին* ու հուզակցությունը, զարգացմանը նվիրված III Մասում կքննարկվի *տնտեսական կառուցվածքը, քաղաքակրթությանը* նվիրված IV Մասում քննության կառնվեն *խորը մշակույթի* (տիեզերաբանության) դրսևորումները խաղաղության համատեքստում:

Ծանոթագրություններ

[1] Այս մակրո-մշակութային կատեգորիաները կնկարագրվեն IV Մասում, գլուխ 2:

[2] Ապակառուցվածքայնացումը ոչնչացումն է առանց նոր կառուցվածքի տարրեր սերմանելու. որևէ կառուցվածք չկա, կան միայն մեկուսացված անհատներ:

[3] Ապամշակութայնացումը ոչնչացումն է առանց նոր մշակույթի տարրեր սերմանելու. մշակույթն իսպառ բացակայում է, կան միայն եսակենտրոն հաշվարկներ:

[4] Մասնավորապես, Սառը պատերազմը կարելի է ներկայացնել իբրև կոնֆլիկտ, որն ուներ երկու կողմ և մեկ հիմնախնդիր: Վերջինս մի կողմի համար միջուկային սպառազինություններն էին, մյուսի կողմի համար՝ մարդու իրավունքները: Զգալի փորձ կուտակվեց, որն օգտագործվեց Պարսից Ծոցի և նախկին Հարավսլավիայի պատերազմներում՝ որպես երկու կողմ և միայն մեկ՝ ռազմական հիմնահարց ունեցող (տե՛ս՝ Մաս II, գլուխ 1.4):

3
Կին : Տղամարդ = Խաղաղություն : Բռնություն՞

3.1 Հայրիշխանությունը որպես ուղղակի, կառուցվածքային և մշակութային բռնություն

Այս գլխում մենք կուսումնասիրենք սեռի և ուղղակի բռնության ու հատկապես տղամարդու սեռականության և տղամարդու ագրեսիվության միջև եղած կապը: Մենք կփաստարկենք մասամբ կենսաբանական հարթությունում, բայց ոչ՝ կենսաբանորեն, քանի որ այդ դեպքում կստացվեր գիտության ընդամենը մեկ ճյուղից, տվյալ դեպքում՝ կենսաբանությունից, վերցրած անկախ փոփոխական մեծություններով քննարկում: Խաղաղությունը և բռնությունը որպես անկախ փոփոխական մեծություններ բացատրելու համար մենք կդիմենք չորս գործոններին առնչվող դիտարկմանը, որի հիմքում ընկած են *մարմինն* ու *ոգին*, *կառուցվածքն* ու *մշակույթը*: Այստեղ «մարմինը» կդիտարկվի իր արականության կամ իգականության տեսանկյունից, «ոգին»՝ իբրև առավել կամ պակաս հուզակցող, «կառուցվածքը»՝ որպես հորիզոնական կամ ուղղահայաց («աստճանակարգային») և մշակույթը՝ որպես կենտրոնաձիգ կամ կենտրոնախույս («զավթողական»): Հիմնական վարկածն այն է, որ իգականությունը, առավել հուզակցությունը, հորիզոնականությունը և կենտրոնաձգությունը խաղաղ վարքագծերին հանգեցնող հատկանիշներ են, մինչդեռ արականությունը, պակաս հուզակցությունը, ուղղահայացությունը և կենտրոնախուսությունն ավելի շատ հանգեցնում են բռնության:

Ինքնին հասկանալի է, որ ասվածը շատ պարզեցված է, իսկ բռնության և խաղաղության վերաբերյալ ուսումնասիրությունները զգալիորեն ավելի բարդ են: Բայց նման քննարկումը բավարար է մեր այս պահի մտադրությունների համար: Ինչ վերաբերում է նշված քննարկմանը՝ որպես բռնության մասին բանավեճի, ապա մենք կկիրառենք *ուղղակի*, *կառուցվածքային* և *մշակութային* բռնության միջև տարբերակումը, որտեղ *ուղղակի* բռնության նպատակն այլոց (ներառյալ՝ բնության) հիմնական պահանջները ոտնահարելն է, *կառուցվածքային* բռնությունը նման ոտնահարումներ իր հետ է բերում հասարակական և համաշխարհային կառույցներում ներառված շահագործման և ճնշումների ձևով, իսկ *մշակութային* բռնությունը մշակույթի տարրերի միջոցով (ինչպիսիք են կրոնը և լեզուն) լեգիտիմացնում է ուղղակի և կառուցվածքային բռնությունը: Այդ դեպքում բացասական խաղաղությունը կլինի այդ ամենի ժխտումը:

Սեռի, կառուցվածքի, մշակույթի և խաղաղության/բռնության քառակողմ կապը մեզ ուղիղ ճանապարհով տանում է դեպի հայրիշխանություն՝ որպես սոցիալական ֆորմացիա: Մարդկային հասարակության մեջ հայրիշխանության իրականությունը նկատելու անկարողությունը, թերևս, կարելի է լավագույնս բացատրել նրանով, որ այս դեպքում գործում է մշակութային բռնությունը: Ֆեմինիստական տեսությունը կարևոր ներդրում է ունեցել խաղաղու-

թյան տեսության մեջ՝ մատնացույց անելով այդ հանգամանքը:[1] Քանի որ ամեն մի հասկացություն առավելագույնս ըմբռնելի է իր առանձնահատուկ ժխտման միջոցով, ապա միանգամից մատնանշենք, որ հայրիշխանության խաղաղ ժխտումը ոչ թե մայրիշխանությունն է, այլ սեռերի իրավահավասարությունը կամ հավասարությունը՝ հորիզոնական կառույցներ, որոնք սեռերի միջև համագործակցային կապեր են ստեղծում:[2]

Այս դեպքում կարելի է տեսնել հայրիշխանության՝ ուղղահայաց կառույցներում տղամարդու գերակշռության ինստիտուցիոնալացված լինելը, ընդ որում, սոցիալական դիրքի և սեռի միջև կան բարձր համահարաբերակցություններ, որոնք լեգիտիմացվում են մշակույթի (օրինակ՝ կրոնի և լեզվի) կողմից և հաճախ ներկայանում են որպես ուղղակի բռնություն, որտեղ տղամարդիկ սուբյեկտներն են, իսկ կանայք՝ օբյեկտները: Հայրիշխանությունը, ինչպես և յուրաքանչյուր այլ՝ խորապես բռնի սոցիալական կառուցվածք (ինչպես, օրինակ, քրեական ենթամշակույթները կամ ռազմական կառույցները), համակցում է ուղղակի, կառուցվածքային և մշակութային բռնությունը արատավոր մի եռանկյան մեջ: Բռնության երեք ձևերը միմյանց սաստկացնում են պարբերաշրջաններով, որոնք կարող են սկսվել ամեն առանձին անկյունում: Ուղղակի բռնությունը, օրինակ՝ բռնաբարությունը, ահաբեկում է և ճնշում. կառուցվածքային բռնությունն ինստիտուցիոնալացնում է այդ հարաբերությունը, իսկ մշակութային բռնությունը հանգեցնում է այդ հարաբերության յուրացմանը, հատկապես զոհերի՝ կանանց մոտ, և այդ կերպ ամրացնում կառույցը:[3]

Նման ճնշման համար կան անհամար հնարավորություններ, որոնցից շատերը հետազոտվել են ֆեմինիստական ուսումնասիրություններում և հիմնականում՝ կանանց կողմից:[4] Հարկ է, որ տղամարդիկ այստեղ ավելի մեծ մասնակցություն ունենան և ուսումնասիրեն հավասարեցման առաջին հերթին տղամարդկային կողմը:[5]

3.2 Ուղղակի բռնություն. էությամբ տղամարդկային երևույթ

Թերևս թերագնահատած լինենք, եթե պնդենք, որ ամբողջ ուղղակի բռնության 95 տոկոսն իրականացվում է տղամարդկանց կողմից: Դա չի նշանակում, որ կանայք ևս քրեորեն պատժելի արարքներ չեն գործում, անգամ բռնարարքներ, հանդես չեն գալիս պատերազմի օգտին և այլն: Դա պարզապես նշանակում է, որ իսկապես բռնի արարքներ կատարվում են տղամարդկանց կողմից:

Սեռի և բռնության համահավասարությունը ոչ միայն շատ բարձր է, այլև, կարծես, անփոփոխ է ժամանակի ու տարածության հանդեպ: Ոչ մի ապացույց չի գտնվել այն բանի օգտին, որ «ամազոնուհիներ»[6]՝ վայրենի, մարտաշունչ կանայք, գոյություն ունեցել են: Դա, հավանաբար, տղամարդկային առասպել է, ինչպիսին «կանայք ուզում են բռնաբարվել»-ն է, ինչը բռնության տեսանկյունից կանանց հետ հավասարահաշիվ լինելու ձև է: Բայց նման համահարաբերակցությունները չափազանց ուժեղ են տեսանելի լինելու համար: Հասարակագետները սովորաբար «համեստ տոկոսային տարբերություններով» են աշխատում միայն: Բացահայտն, իրականում, չափազանց երկար ժամանակ դուրս է մնացել ուշադրությունից:

Հասարակության բոլոր մակարդակներում տղամարդկանց կողմից զանգվածային ուղղակի բռնություն է կիրառվում՝ քրեական բռնության ձևով՝ ընտանիքում և հասարակության մեջ, քաղաքական բռնության ձևով՝ հասարակությունների ներսում և միջև: Շվեդիայում վերջին տարիների վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ տարեկան գրանցվում են 1400 բռնաբարության և 14000 ընտանիքներում բռնության դեպքեր՝ մոտավորապես 8 միլիոն ընդհանուր բնակչության դեպքում: Ընդ որում, փաստացի ցուցանիշներն, իհարկե, շատ ավելի բարձր են:[7] Բռնությամբ ուղեկցվող հանցագործությունների դեպքում քրեագիտության մեջ սովորական արժեք է 25 տղամարդ : 1 կին հարաբերակցությունը: Իսկ սեռական ոտնձգությունների դեպքում, ներառյալ բռնաբարությունը, վիճակն է՛լ ավելի ցայտուն է: Վերևից եկող քաղաքական բռնությունը, քաղաքացիների նկատմամբ պետական ահաբեկչությունը տղամարդկանց մենաշնորհն է, անկախ այն բանից, թե այդ բռնությունը կիրառվում է դատավորների և դահիճների կողմից՝ 15-րդ դարավերջի իսպանական ինկվիզիցիայի ժամանակ[8] (նվազող վայրագությամբ), թե՞ այսօր՝ ոստիկանական բռնության և կտտանքի տեսքով (60 երկրներում՝ կանոնավոր կերպով, իսկ 30 այլ երկրներում՝ դեպքից դեպք):

Ներքևից եկող քաղաքական բռնություններում ավելի շատ թվով կանայք են մասնակից, այդ թվում նաև սիրահար զույգեր, որ ահաբեկչությամբ են զբաղվում:[9] Իսկ մարտական գործողությունները՝ զինվորների միջոցով սպանելը, դեռ շարունակում են մնալ տղամարդկանց արտոնությունը՝ թե՛ հրամանների արձակման, թե՛ դրանց կատարման տեսանկյունից: Նույնքան ակնհայտ է նաև, որ այդ բոլոր բռնությունների նկատմամբ կանանց մոտ բացասական՝ զրո տոկոսին միտվող հակվածություն կա, ինչպես և տղամարդիկ ունեն դրական հակվածություն դեպի բռնությունը:[10] Բայց ինչու՞:

Տղամարդիկ ակներևաբար շահագրգռված են հետազոտությունների ժամանակ այդ հարցը շրջանցելու: Հետազոտության արդյունքները մարդուն մռայլ գույներով կներկայացնեն իբրև «տղամարդ», և ոչ թե իբրև «տեսակ»: Ավելի ձեռնտու է թվում ուսումնասիրել «մարդկային ագրեսիվությունը» և կոծկել սեռին հատուկը, ընդսմին տղամարդուն տարրալուծելով մարդու մեջ:[11]

Բայց նաև կանայք կարող են ունենալ այդ թեմայից խորշելու իրենց պատճառները: Ընդ որում, նրանց խնդիրը ոչ թե փաստերը ժխտելն է, այլ ընդունելի բացատրություններ գտնելու դժվարությունը: Վերոնշյալ չորս գործոնները ներգրավելով՝ կարելի է գտնել մի քանի բացատրություն. մշակույթների վերաբերյալ, երբ տղամարդկային մշակույթը հարուստ է ագրեսիվությամբ և հավակնություններով, իսկ կանացի մշակույթը՝ կարեկցանքով և խոնարհությամբ. կառուցվածքների վերաբերյալ, երբ տղամարդկանց համար բռնության գործադրման ավելի շատ խթան և առիթ է ներկայանում. և ոգու առումով, երբ տղամարդիկ նվազ հուզակցող են, որովհետև նրանք չեն մեծացնում զավակներին և դրան նախապես չեն էլ պատրաստվում: Այստեղ մենք գործ ունենք սոցիալիզացիայի[12] տարբերվող ձևերի հետ, որոնք խորապես արմատացած են, բայց նաև՝ ձևափոխելի: Երբ կենսաբանությունն է խաղի մեջ ներքաշվում, բռնությունն այլևս անձնափոխելի է թվում: Բիոլոգիզմն օգտագործվում է որպես մշակութային բռնություն կանանց դեմ. տղամարդկանց գերակշռությունն արդարացվում է մկանների ուժով և թվացյալ կանացի անկայունությամբ ու նահանջով դաշտանային և ծննդաբերության պարբերաշրջանների ժամանակ: Տղամարդկանց դեմ բիոլոգիզմը կիրառելիս հեշտու-

թյամբ կարող ենք բումերանգի էֆեկտ ստանալ: Իսկ ի՞նչ կարող ես անել, երբ *բոլոր* տղամարդկանց վրա ներազդելու դեմ (հասկանալի) տաբուներ կան:

Այսպիսով, այստեղ մենք կարծես գործ ունենք համամարդկային մի մոտեցման հետ, երբ որևէ խնդիր ընդունում ենք որպես այդպիսին միայն այն պահին, երբ լուծում է նշմարվում՝ եթե ոչ գործնականում, ապա գոնե թղթի վրա: Լուծում չունեցող ծանրակշիռ խնդիրն անտանելի է դառնում, ուրեմն, այն պետք է միայն կոծկել, մոռանալ: Հավանաբար հենց սա է այն մեխանիզմը, որն ընկած է այդ ճնշող համահարաբերակցությունը լուրջ ընդունելու անկարողության հիմքում, և հենց դա նկատի ունենք, երբ ասում ենք, որ համահարաբերակցությունը պարզապես «չափազանց ուժեղ» է: Այդ մեխանիզմը գործում է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, և թե՛ հետազոտող-հետազոտողուհիների դեպքում, բայց՝ տարբեր ձևով: Տղամարդիկ համամիտ են բիոլոգիզմի հետ, որովհետև ոչինչ չեն ուզում փոխել, կանայք այն չեն ընդունում, որովհետև փոփոխություն են ուզում, օրինակ՝ իշխանության հարաբերություններում:

3.3 Տղամարդկային բռնություն. սեռականություն - բռնություն հատույթը

Այստեղ քննարկվող հիմնական դրույթն այն է, որ բռնության տեսանկյունից տղամարդկային գերակայության բացատրությունը մասամբ ընկած է տղամարդկային սեռականության և ագրեսիվության հատման տիրույթում: Այս հանգամանքն, անշուշտ, հայտնի է ռազմական պլանավորողներին: Հազիվ թե կարելի է պատահականություն համարել, որ Ծոցի պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի ռմբակոծիչների օդաչուները (տղամարդ) *«Քենեդի»* ավիակրի վրա պոռնոգրաֆիկ տեսաֆիլմեր էին դիտում իրենց մարտական թռիչքներից առաջ, որոնց ժամանակ նրանք ռմբակոծում էին ռազմական և քաղաքացիական նպատակակետերը, ոչնչացնում զինվորների և քաղաքացիականների (հաղորդագրությունը եղել է «Ասոշիեյթեդ պրես» գործակալության կողմից, սակայն գրախոսներն այն ջնջել էին որպես «չափազանց անհաճո»):[13] Թշնամական կողմի կանանց բռնաբարելը պատերազմում հաղթանակ տոնելու (նվաճելու) մաս է կազմում: Ինչու՞ սեռականության և բռնության միջև այդպիսի կապ գոյություն ունի:

Տեսություններից մեկը, թերևս, սեքսը որպես ռիսկի և մարտական պատրաստվածության փոխհատուցում դիտարկելն է: Այստեղ, անշուշտ, որոշակի ճշմարտություն կա: Բայց եկեք կենտրոնանանք սեռականության և զինվորի մասնագիտության (սպանել և ավերել, և ոչ թե՝ սպանվել և ավերվել) միջև առկա հատույթներին:

Այսպիսով, հաջորդիվ տանք վեց վարկած:

1. *Տղամարդու օրգազմի և տղամարդու բռնության միջև ֆիզիոլոգիապես շատ ընդհանուր բան կա*: Պատկերացնենք, թե տղամարդու մարմնի ֆիզիոլոգիական վիճակը չափման է ենթարկվում ինչ-որ ժամանակահատվածի ընթացքում: Կհայտնաբերվի ադրենալինի բարձր պարունակություն, արագ զարկերակ, քրտնում, հևոց, չվերահսկվող ձայնարկումներ և արյան բարձր ճնշում, որը հանգեցնում է տեսողության և լսողության վատացմանը: Մի քանի օրվա, շաբաթվա կամ գոնե ամսվա ընթացքում արական սեռի տիպիկ հասուն ներկայացուցիչը կունենա մի քանի օրգազմ և կատաղության մի քանի պահեր:

Այդ դեպքում նրա ֆիզիոլոգիական կորերը կընթանան զուգահեռ, քանի որ դրանք չափազանց շատ ֆիզիոլոգիական ընդհանրություններ են պարունակում. հեշտասեր՝ մի դեպքում, սարսափազդու՝ մյուս[14]: Հետևաբար դրանցից բխող առանձին հոգեվիճակները, հավանաբար, նույնպես շատ չեն տարբերվի:

2. *Քանի որ դրանք նյարդաբանական առումով հարևաններ են, ապա մեկի հարուցումը կարող է հանգեցնել մյուսի հարուցմանը*: Օրգազմի և զայրույթի ֆիզիոլոգիական կերպերն ազդակների միջոցով հաղորդվում են կարեկցական նյարդային համակարգի նույն կենտրոններից. դա պահանջում է մի մոդել, որի ժամանակ «էներգիան» (*élan vital?*)[i] մեկից մյուսն է հոսում այն ժամանակ, երբ որևէ մեկի արգելաշեմն իջնում է: Որպես օրինակ կարող է ծառայել կտտանքը: Կտտանք իրագործողները տղամարդիկ են, նրանց զոհերը՝ հաճախ կանայք, իսկ կանանց կտտանքը հաճախ ուղղված է սեռական օրգանների և կրծքավանդակի հատվածներին:[15] Մեկ այլ օրինակ է բռնաբարությունը, անկախ այն բանից, արդյոք այն դիտվում է որպես սեռական բավարարություն ստանալու բռնի հնարավորություն, թե որպես բռնություն գործելու սեռական հնարավորություն:[16] Փոխարկումը, այն էլ՝ երկու ուղղությամբ, դյուրին է դառնում, երբ արգելաշեմը նախապես ցածրանում է: Պոռնոգրաֆիկ ֆիլմերի արտադրողները դա գիտեն և նյարդաբանական հարևաններին ներկայացնում են որպես տեսողական հարևաններ: Սեքսի և բռնության կապի օգնությամբ կարելի է մեծ փողեր աշխատել, կապ, որը հանրության մեջ տաբու է դարձվում սոցիալ-մշակութային պատճառներով: Այդ դեպքում նման ֆիլմերը դիտում են տղամարդիկ՝ մասնավոր տեսաէկրաններին, ընդ որում, ոգելից խմիչքներն իրենց հերթին նպաստում են արգելաշեմի իջեցմանը: Բայց սեքսի և սիրո կապի շնորհիվ մեծ փողեր կարելի է աշխատել նաև հասարակայնորեն ընդունելի ֆիլմերով, որոնց առավելապես նախապատվություն են տալիս կանայք:[17]

Սակայն սա ամենևին էլ սեքսի և բռնության միջև միակ կապը չէ: Սեքսը և բռնությունը համակցելու մեկ այլ հնարավորություն է սադոմազոխիզմը՝[18] օրգազմից առաջ, դրա ընթացքում և/կամ դրանից հետո ցավի պատճառում և կրում: Իբրև այլասերում սա մերժելը չի բացառում սեքսի հետ փաստացի նյարդաբանական կապերը: Առավել կարևոր է, թերևս, կտտանքի և սեքսի միջև եղած կապը: Թե՛ տանջողը, թե՛ նրա զոհը կարող են որոշակի սեռական գրգիռ զգալ, անգամ եթե կտտանքի ժամանակ չկան բացորոշ սեքսուալ տարրեր: Պատանիներն ու տղամարդիկ կտտանքների մասին կարդալիս հաճախ էրեկցիա կամ առնվազն զգացմունքներ են ունենում, որոնք ոչ թե բացասական են, այլ ավելի շուտ հաճելի: Կան հաղորդագրություններ այն մասին, որ մարտական իրավիճակներում զինվորներն էրեկցիա են ունենում, ինչպես և դահիճներն ու իրենց «հաճախորդները»: Դրանք առաջին հերթին տղամարդկայի՛ն դերեր են:

3. *Քանի որ դրանք նյարդաբանական հարևաններ են, ապա մեկը ճնշելով հնարավոր է հարուցել մյուսը*: Իրենց ընդհանուր նյարդաբանական հիմքի

---

[i] élan vital (ֆր.)- կենսական մղում/էներգիա: Փիլիսոփայական հասկացություն, որ առաջ է քաշվել ֆրանսիացի ինտուիտիվիստ Հանրի Բերգսոնի կողմից /թարգ./:

պատճառով կարելի է սեռականությունը (Ս) և բռնությունը (Բ), թերևս, պատկերացնել իբրև մի տեսակ հաղորդակից անոթներ. Ս + Բ = Հ (հաստատուն)՝ որպես հակադրություն նախորդ դրույթի, ըստ որի Ս-ն հարուցում է Բ, Բ-ն հարուցում է Ս՝ դեպի վեր գալարվող պարույրով:

Վիլհելմ Ռայխը[19] ուսումնասիրել է սեռականության ճնշումը նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայում և տղամարդկանց ներգրավումը ծայրահեղ բռնությամբ ուղեկցվող գործողությունների ժամանակ, Էսէս-ում, որպես համակենտրոնացման ճամբարների ժամապահներ և այլն: Դա չի հակասում հարուցման տեսությանը նույնքան, որքան «Քանի որ ամբողջ օրը ոչինչ չեմ կերել, ուստի քաղցած եմ» արտահայտությունը չի հակասում «Ինչքան ավելի շատ էի ուտում, այնքան ավելի էի սովածանում» արտահայտությանը, քանի որ այստեղ հարուցման մեխանիզմը գործում է առավել բարձր հարթությունում:

Զիգմունդ Ֆրոյդը[20] հասարակայնորեն չընդունվող սեռականությունն ու բռնությունը կապում էր ստեղծագործականության (Ստ) հետ՝ Ս + Ստ = Հ բանաձևով, որտեղ սուբլիմացիոն գործընթացների միջոցով ճնշված էներգիան հանդես է գալիս որպես ստեղծագործականություն: Ռայխի տեսակետը հակասության մեջ չի մտնում Ֆրոյդի տեսակետի հետ, եթե նկատի առնենք, որ նրանք Ս + Բ + Ստ = Հ բանաձևի առնչությամբ հետազոտել են հասարակության տարբեր շերտեր, և Ստ-ն հասու չէր ստորին, իսկ Բ-ն՝ վերին շերտերին:

4. *Տղամարդկանց մոտ տեստոստերոնի*[i] *կորը համընկնում է զինվորական տարիքի հետ*: Եթե պատկերացնենք նախաարբունքային շրջանից բարձրանալ սկսող և միջին տարիքում դարձյալ ընկնող մի կորագիծ, ապա կստանանք միջակայք՝ մոտավորապես 12-ից մինչև 65 տարեկանը, որը համապատասխանում է այն տարիքային խմբին, որ Երկրորդ աշխարհամարտի ավարտին զորակոչում էր նացիստական Գերմանիան: Դրան կարելի է, թերևս, նշանակություն չտալ, քանի որ պետք է հաշվի առնել մի երրորդ գործոն՝ մկանային ուժը: Բայց ոչ բոլոր ռազմական խնդիրներում կա այդ ուժի անհրաժեշտությունը: Հավանաբար, ավելի շուտ դա գալիս է նրանից, որ հասարակայնորեն ընդունված է, թե իսկական *տղամարդը* նա է, ով ընդունակ է էրեկցիա-սերմնաժայթքում ընթացքին, մի բան, որ չի վերաբերում մանկահասակ և շատ ծեր տղամարդկանց: Բռնարարքների համար լավագույնս հարմար տղամարդը սեռապես հասուն տղամարդն է, որի սեռական ուժի բարձրակետը մոտավորապես 18-20 տարեկան հասակում է, ինչը զինվորական ծառայության համար հիմնական տարիքն է:[21]

5. *Կանանց մոտ էստրոգենի*[ii] *կորագիծը պարբերաշրջանային ընթացք և առավել բարդ բնույթ ունի*: Կանայք նախադաշտանային փուլում մինչև ձվաբջջի անջատումը, կարծես թե, առավել ագրեսիվ են այն առումով, որ բաց, շփվող են, սրամիտ, պայծառ, հասարակակայնորեն ակտիվ և ստեղծագործական, ինչը սոցիալ-կենսաբանական առումով, հավանաբար, բեղմնավորման նպատակով տղամարդ որսալու ռազմավարություն է: Մինչդեռ, դաշտանի սկսելը կնշանակի, որ այդ ռազմավարությունը (այս ամիս) ձախողվել է,

---

[i] տեստոստերոն- արական սեռական հորմոն /թարգ./
[ii] էստրոգետ- իգական սեռական հորմոն /թարգ./

ինչը հանգեցնում է ինքնամփոփ հուլության. այնուհետև այն նորից կշարունակվի հաջորդ պարբերաշրջանում:

Հետևաբար, բարձր բռնականության ռազմական նպատակներով կանանց ընդգրկումը պետք է համապատասխանեցվի դաշտանային պարբերաշրջանի հետ՝ օգտագործելու համար կանացի նախաօվուլյատիվ ագրեսիվությունը: Բայց ամսական պարբերաշրջանում սովորական միջին կնոջ ագրեսիվ բռնականության գագաթնակետը շատ ավելի ցածր է միջին տղամարդու կենսացիկլում համապատասխան գագաթնակետից: Պետք է նաև հաշվի առնել, որ ծերացման սկզբով զգալիորեն նվազում է բռնության նկատմամբ տղամարդու նախահակվածությունը, ինչի շնորհիվ տղամարդն «ավելի մարդկային» է դառնում, ասենք՝ տղամարդ երեխա կամ գոնե տղամարդ անչափահաս: Ստերոիդների օգտագործումը սպորտում հիմնվում է հենց այս առնչակցությունների վրա, սակայն այն օգնում է միայն առավել երիտասարդներին:[22]

6. *Մոնոամինա-օքսիդազի (մաօ) պարունակությունը երկու սեռերի մոտ տարբեր է*: Այդ ֆերմենտների ցածր պարունակությունն ագրեսիվության է նախատրամադրում: Դրա պարունակությունը տղամարդկանց 90 տոկոսի մոտ ցածր է, բայց տարիքի հետ բարձրանում է: Այն ցածր է կանանց 10 տոկոսի մոտ: Մաօ-ները հոգ են տանում ամինների, հատկապես բիոգեն ամինների մետաբոլիկ քայքայման համար, որոնք համարվում են որոշ հոգեկան հիվանդությունների առաջացման վճռորոշ բաղադրիչ:[23] Մաօ-ի ցածր պարունակությունը նշանակում է բիոգեն ամինների կիսման նվազ ունակություն, որից բխում է առավել մեծ հակվածություն դեպի հոգեկան հիվանդությունները: Բռնացողականությունը կարելի է դիտել որպես նախափսիխոտիկ կամ փսիխոտիկ երևույթ՝ հիմքում ունենալով որևէ լուրջ խանգարում:

3.4 Մշակութային և կառուցվածքային գործոններ

Մենք այստեղ ելնում ենք այն բանից, որ այս բնագավառում կենսաբանությունն ընդամենը կարող է տոն տալ. այն, թերևս, կարող է բացատրել իրողությունների 10-20 տոկոսը միայն: Սակայն պարտադիր չէ, որ մյուս գործոնները հակազդեն բռնության նկատմամբ տղամարդու նախահակվածությանը: Դրանք կարող են նույն ուղղությամբ գնալ, բայց կարող են և չգնալ:

Սկսելով *մշակույթից*, մասնավորապես՝ *լեզվից*՝ կարող ենք փաստել, որ անգլերենում առավել հաճախ գործածվող արտահայտություններից մեկը, որ առավելապես օգտագործվում է տղամարդկանց կողմից, քան կանանց, “fuck”-ն է: Որոշ ամերիկացի տղամարդկանց շրջապատում կարող է թվալ, թե լեզուն պարզեցվել-հասցվել է մի բառի, որը գործածում են որպես բայ, գոյական, մակբայ, ածական և այլն: Պարզ է, որ այդ բառը կարելի է օգտագործել սեռական ակտիվության ձևերի նկարագրության համար: Բայց “My car got fucked up yesterday” (Երեկ ավտոյիս մերը շինվեց) նախադասությունը ևս ճիշտ անգլերեն է, անգամ եթե այն չի պարունակում սեռական գործողության նկարագրություն: Նույնքան քիչ սեռական գործողության նկարագրություն է պարունակում երևակայությամբ է՛լ ավելի հարուստ “I had my car defucked” (Ավտոյիս մերը հետշինեցի) նախադասությունը, որը, հավանաբար, ավտոտեխսպասարկման արհեստանոց հաջող այցի արտահայտություն է: Թե ինչ

եմ ուզում ասել, պարզ է՝ նյարդաբանական հարևաններն արտահայտվում են նույն հասկացությամբ, որն, այսպիսով, պատասխանատու է թե՛ սեռական, թե՛ ավերիչ գործողությունների համար: Այստեղ քողարկված է նաև սեքսի ամբիվալենտականությունը[i], քանի որ եռանդուն կերպով հետամուտ լինելն ու եռանդուն մերժումը հոգեբանական մակարդակում հարևաններ են:

Հաճախ[ii] է մեկնաբանվել հրթիռների և ռումբերի առնանդամային ձևը: Իսկ ինչպիսի՞ն են նոր՝ «խելացի» ռումբերը: Ծոցի պատերազմի ժամանակ դրանց հիմնական գործառույթներից մեկը խիստ ամրացված նպատակակետեր որևէ բացվածքով (օրինակ՝ օդափոխման հոր կամ դուռ), հաճախ գիշերը, ներթափանցելն ու պայթելն էր. հաճախ նույնիսկ երկու ռումբ էր անցնում նույն անցքով: Այլ բառերով ասած՝ խմբակային բռնաբարություն: Ինչ վերաբերում է օդաչուներին, ապա կարելի է գրազ գալ, որ նրանք ասում էին. “We sure fucked them, didn’t we?” (Դրանց հաստատ շինեցինք, չէ՞):

Հիմա, եթե անցնենք լեզվից *կրոնին* մշակութային բռնության համախտանիշի այդ հաջորդ ծանր քաշային, ապա կարող ենք հարց տալ, թե քրիստոնեական ո՞ր դավանանքն ամենամեծ հակվածությունն ունի դեպի բռնությունը՝ ուղղափառ, կաթոլիկ, թե՞ բողոքական: Կարելի է ենթադրել՝ բողոքականությունը, որպես *քրիստոնեություն առանց Մարիամի*, մի երրորդությամբ, որը բաղկացած է երկու տղամարդուց՝ հորից և որդուց, և կասկածելի, ավելին՝ երկակի սեռի մի երրորդ էակից. Մարիամը հանդես է գալիս լոկ իբրև մայր: Սա ապաֆեմինիզացված քրիստոնեություն է, ինչը գալիս է քրիստոնեության մերձավորարևելյան ակունքներից[24], այնուհետև զարգանում և համընկնում է վիուկների որսի դարաշրջանի հետ:[25] Եթե նաև ավելացնենք սեռականության հետ քրիստոնեության ունեցած մշտական խնդիրները, ապա առավել ակնառու կդառնան սեռականության և ագրեսիվության միջև կապերը, որոնք տրված են ոչ թե ի ծնե, այլ արմատավորված են մշակույթում. կանանց՝ մարդկանց շարքից դուրս դնելը (dehumanization) շատ ավելի դյուրին է դարձել այն պատճառով, որ բողոքական պանթեոնում կանայք ներկայացված չեն:

Դառնանք *կառուցվածքին*՝ շարունակելով չհեռանալ կրոնից. հարց է ծագում՝ մարդ էակները ինչպես են կարողանում կրոնից անդին գլուխ հանել ավարտվող կյանքի հիմնախնդրից: Իրենց զավակների, ժառանգների շնորհիվ կանայք հավերժ կյանք ունեն, հատկապես մայրական գիծը կարևորող հասարակություններում: Տղամարդկանց համար խնդրի լուծումն ավելի բարդ է: Հայրական գիծը, հայրական օջախը կարևորող (patrilokal), անգամ հայրիշխանական հասարակություններն ընդամենը մասնակի լուծումներ են, որոնք բոլորն էլ սկսվում են երեխաներին (ենթադրյալ) հոր ազգանունը տալով: Լուծումների շարքում է նաև մրցակցությունը կոռոզիայի չենթարկվող փառքով հավերժանալու համար՝ ձեռք բերված արվեստի կամ գիտության, սպորտի կամ զվարճությունների, գործարարության կամ քաղաքականության բնագավառներում, կամ էլ ռազմական ճարտարության միջոցով: Վերջինն առավելություն ունի. տևական աշխարհաքաղաքական փոփոխությունները հաճախ, առնվազն ժամանակավորապես, կրում են ճակատամարտերի կամ գեներալ-

---

[i] ամբիվալենտականություն (լատ. ambo- երկուսն էլ, valentis- ուժ ունեցող)- երկդիմի համալիր, երբ միաժամանակ առկա է և՛ մերժելին, և՛ ընդունելին: Օրինակ՝ խանդի մեջ միաժամանակ միավորվում են սիրո և ատելության զգացմունքները /թարգ/:

[ii] Հեղինակն օգտագործում է *‘ad nauseam’* լատիներեն արտահայտությունը, որը կարելի է թարգմանել իբրև «սրտխառնոց առաջացնելու աստիճան» /թարգ./:

ների անունները: Ամբողջ աշխարհի ամենատեսանելի հուշարձանները, կարծես, նվիրված են բռնական տղամարդուն՝ հեծյալին: Այսպիսով, մրցակցությունային կառուցվածքներով հասանելի փառքը ևս բռնության պատճառ է:[26] Իսկ աշխարհի յուրաքանչյուր մեծ քաղաք, առնվազն Արևմուտքում, կարծես ունի առնանդամային տեսք ունեցող որևէ հուշարձան (Նելսոնի սյունը, Կոնկորդի հրապարակը կամ Էյֆելյան աշտարակը, Վաշինգթոնի հուշահամալիրը և այլն):

Այնուհետև, կա նաև չորրորդ անկախ գործոնը՝ *ոգին*: Եթե նախադրենք, որ մարդկային հուզակցման առաջացման և տարածման ժամանակ խնամքը և երեխաների մեծացումն իրենց դերն ունեն, ապա կանայք ֆիզիոլոգիական որոշ հիմնարար հատկանիշների առումով գրեթե մենաշնորհային դիրք ունեն: Այդուհանդերձ, տղամարդիկ ևս մանուկ հասակում օգտվում են մայրական գորովանքից, ջերմությունից, ապահովությունից և հոգատարությունից, գերագույն առաջնահերթությունից: Սակայն, արդեն իսկ վաղ շրջանում սկսվում է միանգամայն տարբեր դաստիարակություն: Պատանիներին ավելի խիստ են վերաբերվում, քան աղջնակներին, որովհետև ելնում են այն բանից, որ տղաներն արդեն դիմացկուն են, կամ տղաների նկատմամբ ավելի մեծ հոգատարություն է ցուցաբերվում, որովհետև ավելի են գնահատվում:

Մոր և իգական կամ արական ժառանգների միջև մարմնական կամ զգայական հեռավորություն պահելու ընդհանուր գործընթացն սկսվում է ծննդյան պահից և ավարտվում կենսաբանական մահով: Սակայն կարող ենք, անշուշտ, առաջ քաշել այն վարկածը, որ արական սեռի ժառանգներից ավելի շատ հեռավորություն է պահվում, թեկուզ միայն այն պատճառով, որ տղամարդը երբեք լիարժեքորեն չի կարողանա ստանձնել մոր դեր: Ընդհակառակը, աղջկա կյանքը մշտապես՝ մանուկ հասակից մինչև մայր, տատ, կարող է պարուրվել հուզակցության ղեկավար սկզբունքի շուրջը: Տղաների մոտ հուզակցության առավել ցածր մակարդակ կանխադրելու համար հարկ չկա նախադրելու, որ նրանք դաստիարակվում են առավել ռիսկի գնալու, պակաս ակնածություն դրսևորելու կամ նույնիսկ բռնության ոգով: Բավական է այն ենթադրությունը, որ նրանք ավելի քիչ են ուսուցանվել իրենց մոր պես պահելու համար: Բոլոր նորածինները մայրական մարմնի նույն ներքին ջերմությունից անցնում են դեպի արտաքին ջերմություն: Սակայն, աղջկան առաջարկվում է մնալ, իսկ տղան պիտի հեռանա. սա հանգեցնում է ծանր հետևանքների:[27] Աղջիկն ստանում է դեպի ջերմություն կրկնամուտքի տոմս. սոցիալ-մշակութային առումով նրան թույլատրված է լաց լինել, փաղաքշանք և մխիթարանք ստանալ: Տղային հազվադեպ է բաժին ընկնում նման մուտքի տոմս, և նա, հավանաբար, ավելի քիչ ժամանակ կանցկացնի իր մոր հետ անմիջական շփման մեջ՝ ավելի երկար թրև գալով:[28]

Մաշկ-մաշկ շփումը փսիխոսոմատիկ առումով, հավանաբար, հիմնարար է: Սեռականությունը սեռական անդամների և մաշկային շփման համակցում է, ընդ որում, վերջինիս նշանակությունը կնոջ համար նվազում է հետևից տրվելու ժամանակ: Եթե առաջ քաշենք այն վարկածը, որ տղամարդկանց համար ավելի կարևոր է սեռանդամային շփումը, իսկ աղջիկների համար՝ մաշկային շփումը, ապա ավելի լավ կհասկանանք այն հիասթափությունը, որ կանայք զգում են, երբ սեռական ակտից առաջ և հետո նվազ քնքշություն են ստանում, և տղամարդկանց հիասթափությունը, երբ կանանց հիմնականում մաշկային շփումն է հետաքրքրում: Առավել հասկանալի է դառնում նաև

երեխային կրծքով կերակրման գրեթե սեքսուալ բնույթը, եթե այն ըմբռնենք որպես մաշկային շփման ինտենսիվ ձև: Վերցնենք ասացվածք դարձած շաբաթօրյա առավոտը. շատ ընտանիքներում այն անցկացվում է երեխաների հետ մոր մաշկ-մաշկի շփմամբ և մեքենայի հետ հոր՝ մաշկ-մետաղ շփմամբ: Սա ցույց է տալիս, թե տղամարդն ինչպիսի հարուստ փորձից է զրկված, ինչը նույնպես գալիս է հորմոնների բարդ փոխգործակցությունից:[29]

Եթե երիտասարդ տղամարդն ունենում է մերժված լինելու, զոհողություն արած լինելու զգացում կամ նախանձ, ապա նա կարող է այդ զգացմունքները փոխհատուցել գերազանցություն ունենալու պատկերացումներով. այն պատկերացմամբ, որ պատկանում է մի սեռի, որը կոչված է արտադրելու, և ոչ թե՝ «ընդամենը» վերարտադրելու: Հավանաբար, գոյություն ունի արգանդային նախանձ, որը շատ ավելի խորն արմատներ ունի, քան ցանկացած առնանդամային նախանձ:[30] Իսկ միգուցե բռնաբարողները, կտտանքների ենթարկողներն ու զինվորներն ուզում են պատժե՞լ կանանց: Միգուցե նրանց արածը արտահայտությունն է ոչ թե Հիսուսի բացականչության. «Հա՛յր իմ, հա՛յր իմ, ինչու՞ ինձ լքեցիր» (Մաթ. 27, 46), այլ բողոքի. «Մա՛յր իմ, մա՛յր իմ, ինչու՞ ինձ լքեցիր»: Խորը նստած հոգեբանական և կենսաբանական մեխանիզմները կարող են փոխադարձաբար զորացնել միմյանց: Եվ հենց դա էլ պիտի լինի այս ամբողջ հետազոտության ընդհանուր պատգամը՝ բոլոր չորս գործոնները/համախտանիշները գործում են փոխգործակցելու սկզբունքով, բացասական դեպքում՝ հօգուտ բռնության, դրական դեպքում, հուսա՛նք՝ հօգուտ խաղաղության:

3.5 Ամփոփում. Ի՞նչ կարող ենք անել

Այս հարցը լիովին արդարացի է և դիպչում է խաղաղության ուսումնասիրությունների կորիզին. դրա պատասխանը չպետք է հետաձգել («Մենք նախ պետք է մի լավ հետազոտենք…»): Այդպես մենք երբեք ձեռք չենք բերի վերջնական իմացություն, առավել ևս նման բարդ մի բնագավառում: Միևնույն է, թե ինչ ենք անում, վերջիվերջո, մենք ընդամենը վարկածներ քննելու համար ենք, որպեսզի կարողանանք նորերն առաջ քաշել:

Բայց վարկածները հասկացությունների նման կարող են ըմբռնվել միայն այն դեպքում, եթե դրանք ներկայացվում են լիարժեքորեն՝ իրենց ժխտմամբ: Միայն երբ ավելի լավ գիտենք այն պայմանները, որոնց դեպքում վարկածը սխալ է, մենք կունենանք վարկածի ճիշտ լինելը երաշխավորող պայմանները: Եվ քանի որ մենք հիմնվել ենք չորս գործոնների վրա, ապա սկզբունքորեն մեր տրամադրության տակ պետք է որ մի շարք մոտեցումներ լինեն:

Առաջին, կա տղամարդկանց դեղամիջոցային բուժման հնարավորությունը, օրինակ՝ հակատեստոստերոնային որևէ պատրաստուկ: Այստեղ մի խնդիր կառաջանա: Եթե սեքսը (Ս) և բռնությունը (Բ) իրական հարևաններ են, ապա մեկի ճնշումը կարող է նշանակել մյուսի ճնշում, և քիչ թվով տղամարդիկ կհամաձայնեն նվազեցնել տալ իրենց բռնական ներուժը սեռական ներուժի հաշվին: Նման պատրաստուկից տղամարդիկ կպահանջեն հատուկ հակաբռնական ազդեցություն: Տղամարդիկ ավելի քան պատրաստ են եղել մարդկության կանացի կեսին դեղամիջոցներ հրամցնել կենսաքիմիական հիմքի վրա պատրաստված հակաբեղմնավորիչ միջոցների տեսքով՝ հօգուտ

հենց իրենց, սակայն այնքան էլ հակված չեն եղել մշակել համապատասխան հակաբեղմնավորիչ տղամարդկանց համար: Գուցե ժամանակը հասունացել է, որ կանայք հավասարվե՞ն տղամարդկանց: Շվեդիայում խորհրդարանականների 38 տոկոսը կանայք են. դրանով ուժերի հարաբերակցությունը մոտենում է հավասարակշռության: 83 տոկոսի դեպքում այդ հարաբերակցությունը կհամապատասխաներ ավելի շուտ այն իրավիճակին, ինչին տղամարդիկ սովոր էին: Բայց շվեդական ձեռնարկությունների նախագահությունների անդամների միայն 2 տոկոսն են կանայք, իսկ Շվեդիայի պաշտպանության, ինչպես և արտաքին գործերի նախարարությունները առաջվա պես զուտ տղամարդկանց ակումբներ են:[31]

Երկրորդ, կանանց սոցիալիզացման հիմնօրինակից օգտվելով տղամարդկանց հուզակցության մակարդակը բարձրացնելու հնարավորություն կա: Բռնությունը նվազեցնելու համար տեղին չէ փորձել հասնել սեռերի հավասարության՝ աղջիկներին տղաների նման կամ երկուսին էլ ինչ-որ միջին դիրքի դաստիարակելու ճանապարհով: Դրա փոխարեն այդ բացառիկ կարևորություն ունեցող հոգեբանա-ֆիզիոլոգիական մակարդակում տղաներին պետք է դաստիարակել աղջիկների նման և հայրերին հավասարեցնել մայրերին: Այդ կերպ կարելի կլիներ բռնությունն զգալիորեն նվազեցնել, ընդ որում, հարկ է հաշվի առնել, որ ֆիզիոլոգիական ոլորտի տեղաբանությունը կշարունակի համեմատաբար նման մնալ և կբարձրացվի, թերևս, միայն արգելաշեմը: Ասվածից որոշ բաներ պետք է վերաբերեն նաև կանանց. կանանց օրգազմն ու կատաղությունը ևս իրարից շատ չեն տարբերվում, անգամ եթե նվազ բռնական են և ավելի քիչ են բարձրակետվում:[32]

Երրորդ՝ կա նաև մայր-որդի կապը ժամանակային առումով երկարաձգելու հնարավորությունը, եթե կանայք մեկը-մեկի, շատերը-մեկի, մեկը-շատերի կամ շատերը-շատերի հիմքի վրա ստանձնեն տղամարդկանց հումանիզացման խնդիրը: Բազմակնությունը՝ որպես այլընտրանք, տղամարդկանց կողմից, հավանաբար, ոգևորությամբ կընդունվի: Չէ՞ որ իսլամում այն ինստիտուցիոնալացված է, գուցե նաև վերևում նշված պատճառով, ընդ որում, դասական մաքսիմում է համարվում չորս կին ունենալը:[33] Նման բանը կարող է հանգեցնել տղամարդ-կին հարաբերության նոր հիմնօրինակների, գուցե մասամբ նման նրանց, որոնք իշխում են կանանց մեջ: Դրա շնորհիվ կարելի կլինի փշրել այն հիմնօրինակը, համաձայն որի կանայք ավելի սերտ են ընկերություն անում այլ կանանց հետ, քան տղամարդիկ՝ այլ տղամարդկանց հետ: Չէ՞ որ տղամարդկանց ամենամտերիմ անձը մեծամասամբ կին է լինում, բայց ավելի հաճախ սիրուհին, քան օրինական կինը:[34] Բացասական կողմը՝ ողջ բեռն ընկնում է կանանց ուսերին:

Չորրորդ, մնացած երկու գործոններն առանձին-առանձին արծարծելու փոխարեն, ավելի լավ կլիներ դիտարկել ընդհանուր ուրվագիծը՝ անցնելով բազմագործոնային քննարկման: Պատկերացնենք խիստ ուղղաձիգ կառուցվածքով ծայրահեղ զավթողական, սեռ-դասակարգ-ազգ հարաբերակցության առումով իրեն «ընտրյալ» զգող մի երկիր, և այդ երկրի ղեկավար նշանակենք քիչ հուզակցում ունեցող, պոռնոգրաֆիային, գուցե նաև ոգելից խմիչքին կամ թմրադեղերին, սուրճին ու քաղցրավենիքին (ամեն տեղ հանդիպող դանիական թխվածքաբլիթին) հակված տղամարդու:[35] Կստանանք բռնության մեծ ներուժ, ընդ որում, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ պոռնոգրա-

ֆիան, թմրադեղերն ու ոգելից խմիչքը կարող են լինել առավելապես ստորին շերտերի համար, իսկ սուրճ ու թխվածքը՝ վերին:

Այնուհետև, եթե այդ կառուցվածքի ղեկավար նշանակենք հասարակության մյուս շերտերի և այլ էթնիկ խմբերի համար նվազ հուզակցում ունեցող մի կնոջ, որը յուրացրել է նույն մշակույթը, ապա կստանանք Մարգարեթ Թեթչերի, Գոլդա Մեերի կամ Ինդիրա Գանդիի պես մեկին: Այսպիսով, սեռային պատկանելության գործոնը բավարար չէ, եթե այն մեկուսացված է:

Ուրեմն, եկեք փոխենք հավասարումը: Կառուցվածքը դարձնենք հորիզոնական արդեն վաղ մանկությունից՝ որպես մասնակցության, համերաշխության, համագործակցության ժամանակահատված: Մշակույթը դարձնենք նվազ բացառող՝ առանց «Ես» - «Ուրիշ» կտրուկ աստիճանականության, առավել ներառող՝ «Ես»-ն «Այլոց» մեջ և «Այլոց» «Ես»-ի մեջ տեսնելու ունակությամբ: Դնենք կնոջը նման պայմաններում, և նա, հավանաբար, իրեն կզգա, պատկերավոր ասած, ինչպես իր տանը: Դնենք տղամարդուն նույն պայմաններում, ապա և նա, մարդկային տեսանկյունից, հետզհետե կհավանի դրանք: Նրա ֆիզիոլոգիան գրեթե փոփոխություն չի կրի: Սակայն դրանով շեշտակի փոփոխություններ կկրեն արգելաշեմերը, շահադրդումը, ընդունակություններն ու հնարավորությունները: Մենք դա գոնե կարող ենք ենթադրել: Արդյունքն ուղղակի բռնության նվազումն է, ինչը կլինի հօգուտ բոլորի, ընդ որում, կառուցվածքային և մշակութային բռնության նվազեցումը կնպաստի դրան հասնելուն:[36] Եվ տղամարդիկ այլևս չեն գայթակղվի՝ վկայակոչելու իրենց ֆիզիոլոգիան իբրև արդարացում:

Եվ դրանով գալիս ենք իմացաբանական համապատասխանությանն առնչվող եզրահանգման. ֆեմինիստական ուսումնասիրություններն ու խաղաղության ուսումնասիրությունները միշտ պետք է իրականացվեն բազմագործոն քննարկումների ճանապարհով: Անդրադառնալով լոկ մեկ գործոնի՝ քննարկումն ու տեսությունը ոչ միայն կտուժեն, այլև գործնականում հակադրդյունավետ կարող են դառնալ: Սա մեզ բերում է դեպի նոր միջգիտական հասարակական գիտություններ, օրինակ՝ կանանց ուսումնասիրություններ և խաղաղության ուսումնասիրություններ: Հնագու՛յն գիտություններ, հաշվի առեք՝ աղքատիկ, գիտության մեկ ճյուղի շրջանակներից դուրս չեկող (monodisciplinary) քննարկումներից զատ դուք կորցնելու բան չունեք:

Ծանոթագրություն

---

[1] Տե՛ս, օրինակ, Betty A. Reardon: *Sexism and War System,* New York 1985; Birgit Broch-Utne: *Educating for Peace. A Feminist Perspective,* Oxford 1985.

[2] Տե՛ս՝ Riane Eisler: *The Chalice and the Blade: Our History, Our Future,* Սան Ֆրանցիսկո 1987թ.: Գոյություն ունի «գենդերային հավասարության» թույլ (բաշխման հետ կապված) մեկնաբանություն՝ որպես ցածր կամ զրոյական համահարաբերակցություն սեռի և հասարակության ցանկացած փոփոխական մեծության միջև, և ուժեղ (հարաբերակցական) սահմանում՝ որպես սեռերի միջև հավասարակշռված փոխհարաբերություններ տանը, աշխատավայրում և ամբողջ հասարակության մեջ: Իրավահավասարությունը վերաբերում է ուժեղ մեկնաբանությանը՝ անցնելով 50 տոկոսի հավասար հնարավորությունների սահմանը:

[3] Անմիջական բռնության ամրապես ինստիտուցիոնալացված օրինակը, ինչպիսիք են վենդետան, հանցախմբերի միջև պատերազմը կամ աղջիկ երեխաների նկատմամբ

մանկասպանությունը, կարելի է անվանել «ծիսականացված» կամ «ինստիտուցիոնալացված» բռնություն: Բռնության այս ձևը մեծամասամբ հասարակայնորեն ընդունված է, քանի որ այն դիտվում է որպես «մարդկային բնության» կամ հասարակական իրողության մաս: Այս կատեգորիայից բռնաբարության հանումը պահանջում է գիտակցության ձևավորում, ուժերի համադրում և առճակատում այն ձևով, որ արվում է հատկապես ԱՄՆ-ի կին ֆեմինիստների կողմից՝ պայքար յուրացման և ինստիտուցիոնալացման դեմ՝ բռնաբարությունը որպես ուղղակի բռնություն, անգամ որպես սեռերի միջև պատերազմ դիմակազերծելու համար: Kate Milletts: *Sexual Politics,* Նյու Յորք 1969թ.: Այս աշխատությանը պատշաճ է տեղ հատկացնել Կարլ Մարքսի «Կապիտալի» կողքին:

[4] Ինձ համար հատկապես օգտակար էր Մերիլին Ֆրենչի ուսումնասիրությունը՝ Marylin French: *Beyond Power: On Women, Men and Morals,* Լոնդոն 1985թ.:

[5] Նորվեգիայում խոստումնալից է Օյստեյն Գուլլվագ Հոլթերի աշխատանքը, որը հիմնվում է սեռերի դերերի մասին Հերիքթ Հոլթերսի ուսումնասիրության վրա:

[6] Encyclopaedia Britannica, Micropaedia-ի առաջին հատորը տեղանշում է ամազոնուհիներին հունական դիցաբանության մեջ, հավելելով, որ «ամազոնուհիներին վերագրվող հայրենիքն անհրաժեշտաբար հեռանում էր հույների աշխարհագրական գիտելիքների աճին զուգընթաց»: Այս առասպելն ակնհայտորեն մեծ ազդեցություն է ունեցել 16-րդ դարի իսպանական քարտեզագրության վրա, այն բանից հետո, երբ Ֆրանչիսկո դե Օրելլանան «պնդել էր, թե կռվի է բռնվել ռազմատենչ կանանց հետ»:

[7] Շվեդիայում տիրող իրավիճակի մասին թվերը վերցված են «Mannsmässa»-ում Շվեդիայի կանանց հարցերով նախկին նախարար Մարգոթ Վալլստրյոմի ելույթից, Գյոթեբորգ, 21 մայիսի 1991թ.:

[8] Ինկվիզիցիայի մասին տե՛ս՝ Cecil Roth: *The Spanish Inquisition,* New York/London (Barcelona) 1989 և Robert Held: *Inquisition – Inquisicion: a Bilingual Guide to the exhibition of torture instruments from the Middle Ages to the industrial Era presented in various European cities in 1983* – 92, Florenz o. J. Բոլոր տեքստերում և նկարներում տղամարդիկ ներկայացված են բռնացողի դերում, իսկ զոհերի թվում հաճախ կանայք են:

[9] Տե՛ս՝ Francesco Alberoni: *Innamoramento e amore,* Գարզանտի 1979թ. (ամերիկյան հրատարակությունը՝ *Falling in Love*, Նյու Յորք 1983թ.): Իրենց սիրատածուների նկատմամբ բռնարարքներ կատարող սիրահարված կանանց օրինակներ բացահայտվել են գերմանական RAF-ում, իտալական Brigate Rosse (կարմիր բրիգադ) և ճապոնական *sekigun*-ում: Այս նույն սինդրոմի վերաբերյալ կարդա՛ նաև՝ Robin Morgan: *The Demon Lover: On the Sexuality of Terrorism,* Նյու Յորք 1989թ.:

[10] Բայց պետք է նշել նաև կանանց, որպես հանցակցուհիների, անուղղակի նպաստումը դրան: Տե՛ս, օրինակ, Tordis Batscheider, Susanne Lang, Ilse Petry: *"Kriegerische Männer –Friedliche Frauen?"*, in: *Friedensforschung Aktuell,* Winter 1990, Nr. 24: 17-րդ դարի ֆլորենտինացի նկարչուհի Արտեմիսիա Գենտիլեշիի հանրահայտ կտավները շշմեցնում են հատկապես այն պատճառով, որ հեղինակը պատկերում է այն բռնությունները, որոնց ժամանակ կանայք դաժանաբար և սառնասրտորեն սպանում են տղամարդկանց:

[11] Կոնրադ Լորենցն ըստ իր նախկին օգնականներից մեկի՝ Նորբերթ Բիշոֆի (*Gescheiter als alle die Laffen,* Համբուրգ 1990թ.) նկարագրության, ակներևաբար եղել է պահպանողական ծայրահեղական: Լորենցը միշտ խոսել է «մարդու» մասին, երբ ավելի տեղին կլիներ խոսել «տղամարդու» մասին: Միգուցե, երկուսն էլ նրա համար նու՞յնն են եղել:

[12] Ինչպես հետագա տեքստում կներկայացվի, սեռերի կարծրատիպային դերերին երեխաների տարակերպ վարժմունքին մաշկային հպման ձևով ավելանում է մայրական սիրո փորձառությունը: Եթե պատանիները քիչ բան են ստանում այդպիսի սիրուց, քան աղջնակները, ապա որպես հայր նրանք, թերևս, իրենց զավակներին նման սեր տալու ավելի քիչ ի վիճակի կլինեն, ինչի շնորհիվ նրանք այդ նմուշը վերարտադրում են դիաքրոնիկ ձևով:

[13] Հմմ.՝ 1991թ. մարտի 26-ի Village Voice-ը:

[14] Այս փաստն ինձ մասնավոր զրույցի ժամանակ հայտնել է պրոֆեսոր Հերման Թեննեսենը:

[15] Այս հանգամանքն ակնհայտորեն երևում է կտտանքի գործիքների վերլուծությունից: Տե՛ս՝ Robert Held: *Inquisition*, նույն տեղում, մաս 5. *"On Woman and Torture"*.

[16] Կամ երկուսն էլ, մեկի մասին բանավեճը չի բացառում մյուսը:

[17] Բայց այդ տարբերությունները որպես «մանուկ» և «չափահաս» հասարակական դերերի արդյունք դիտարկելու փոխարեն, այստեղ առավել հեռանկարային է դառնում դրանք որպես մայր-հայր-դուստր-ուստր քառանկյան մեջ կուտակված փորձից բխող դիտարկելը, պայմանով, որ կանայք սովորեն սեքսը (մաշկային շփումը) միավորել սիրո (մարմնական, զգայական, հոգևոր մտերմիկության) հետ, իսկ տղամարդիկ՝ զուգակցել սեքսը (սեռանդամային շփումը) ուսումնասիրության, ներազդման, միգուցե նաև՝ բռնության հետ:

[18] Մարկիզ դը Սադը («սադիզմ») վատ համբավ ուներ ոչ միայն երիտասարդ պոռնիկ Ռոզ Կելլերի նկակմամբ խայտառակ և դաժան վերաբերմունքի, այլ նաև իր «Les crimes de l'amour» վերնագիրը կրող գրվածքներում սեքս-բռնություն կապի արդարացման պատճառով: Այս հասկացության երկրորդ բաղադրիչի («մազոխիզմ») ակունքներում ևս տղամարդ է կանգնած՝ ավստրիացի վիպասան Լեոպոլդ ֆոն Զախեր-Մազոխը:

[19] Ռայխն ավելի շատ դասակարգային գիտակցություն ուներ, քան Ֆրոյդը, որի մոտ բացակայում է այդ կարևոր տիրույթը. ստացվում է այնպես, ասես հասարակությունը հորիզոնական բնույթ ունի: Հմմ. Reich: *Massenpsychologie des Faschismus* (Քյոլն 1971թ.): Առաջնորդների նպատակները կապված են զանգվածների չգիտակցված ցանկությունների հետ:

[20] Սուբլիմացիայի տեսությունը կարելի է դիտարկել որպես բնազդային էներգիան ոչ-բնազդային գործունեության ոլորտներ մղելու տեսություն, որով փորձ է արվում բացատրել ավելի ցածրերից դեպի «ավելի բարձր գործառույթներ» էվոլյուցիան: Հմմ.՝ *Penguin Critical Dictionary of Psychoanalysis,* սուբլիմացիային վերաբերող հոդվածը:

[21] Ինչպես նաև առնչվող մի երևույթի՝ մարտական մարզաձևերի, հիմնական տարիքն է:

[22] Մարզուհիները երբեմն փորձում են հղիանալ կարևոր մրցումներից առաջ՝ օգտագործելու հղիության սկզբնական շրջանում հորմոնային ազդեցությունները, իսկ հետո արհեստական ընդհատում են հղիությունը. կան հաղորդագրություններ այն մասին, որ դա ժամանակ առ ժամանակ կիրառվել է ԳԴՀ-ում, որտեղ հղիության արհեստական ընդհատումը հեշտ էր:

[23] Տե՛ս՝ *Penguin Medical Dictionary,* մոնոամինաօքսիդազի վերաբերյալ հոդվածը:

[24] Մերձավոր և Միջին Արևելքում աստվածուհիների առաջնակարգ դիրքի վերլուծությունը տե՛ս՝ Toni Liversage: *Den Store Gudinde,* Կոպենհագեն, 1990թ., այս թեմայի դասական համարվող աշխատությունն է՝ Robert Graves: *The White Goddess,* Նյու Յորք 1948թ.:

[25] Տե՛ս՝ Gunnar Heinsohn und Otto Steiger: *Die Vernichtung der weisen Frauen,* Հեմսբախ 1985թ., որտեղ տրվում է բնակչության աճի և «վհուկների որսի» կապը (վհուկներին հաճախ մեղադրում էին ծնունդների վերահսկում իրականացնելու մեջ):

[26] Արհեստավարժ զինվորական ծառայությունը՝ որպես կարիերայի հնարավորություն, ունի յուրահատուկ մի կողմ: Եթե մյուս մասնագիտությունները գրեթե մշտապես ինքնահաստատման առիթ ստեղծում են, ապա արհեստավարժ զինվորականը հաճախ երկար տարիներ ստիպված է սպասել հանկարծակի ներկայացող առիթին՝ պատերազմին: Վերջինս, իհարկե, ոգևորությամբ է ընդունվում՝ որպես սեփական հմտությունները դրսևորելու շանս: Դա մոտավորապես նմանվում է այն բանին, ասես եթե կյանքում գրողի ձեռքը մեկ կամ երկու անգամ թուղթ ընկնի: 1991թ. մարտի 26-ին Village Voice-ը հաղորդել է հատուկ պատրաստվածության զինվորների ոգևորության մասին (Desert-Shield military), երբ հայտարարվեց «Փոթորիկ անապատում» (“Desert Storm”) օպերացիայի սկիզբը:

[27] Իր *“In a Different Voice: Psychological Theory and Women’s Development”* Քեմբրիջ 1982թ., հայտնի աշխատության մեջ Քերոլ Ջիլիգենը ցույց է տալիս, թե ինչպես են կանայք հակված բարոյականության խնդիրներին մոտենալ հոգատարության հասկացություններով՝ հաշվի առնելով խնդրո առարկա անձանց համար անմիջական հետևանքները, մինչդեռ տղամարդիկ նման խնդիրները փորձում են լուծել վերացական սկզբունքների միջոցով: Կարելի է նաև այլ ձևակերպում տալ: Կանայք որպես ուղղակի բռնության այլընտրանք տեսնում են անմիջական հոգատարությունն ու սերը: Տղամարդիկ վախ ունեն իրենց իսկ (նաև ուրիշ տղամարդկանց) բռնական հակումներից և փորձում են գործել խստապես վերահսկվող հասարակական աստճանակարգերում՝ վերևում նստած տղամարդկանց թողնելով (հրաման տալու) բռնության մենաշնորհը. և/կամ գործում են աստվածաբանության և իրավունքի կողմից ամրագրված կանոնների, հրամանների և ընդհանուր նորմերի խոսքային (վերբալ) աստիճանակարգերում: Այսինքն՝ նրանք փորձում են ինքնուրույն ներդասվել կառուցվածքային և մշակութային բռնության հարաբերությունների մեջ՝ խուսանավելու համար ուղղակի բռնությունից և դրա այլընտրանքից՝ ուղղակի հոգատարությունից:

[28] Հետևաբար, աղջիկը հասուն տարիքում սեքսն ավելի շատ սիրո հետ կկապի, իսկ տղան՝ ուսումնասիրելու, նվաճելու կամ նույնիսկ բռնության: Տե՛ս՝ Nancy Chorodow: The Reproduction of Mothering: Psychoanalysis and the Sociology of Gender, Բերքլի 1978թ.:

[29] Տե՛ս՝ Anthony Walsh: *“The Biological Relationship Between Sex and Love”*, in: *Free Inquiry,* 1991թ. ամառ, էջ 20-24, որտեղ խոսվում է նաև սեռանդամային և մաշկային շփումների առնչությամբ էնդորֆինների ունեցած դերի մասին:

[30] Առնանդամային նախանձի առնչությամբ Ֆրոյդի հասցեին քննադատությունն արդեն տնական ավանդույթ է դարձել: Ուզում եմ մատնանշել այն հանգամանքը, որ այստեղ բանը ոչ միայն «արգանդային նախանձն է», այլ նաև արգանդ/մայր-կարոտը և կանանց երկակի առավելությունը՝ մոր մերձավորությունն ավելի երկար վայելելը և այդ մերձավորությունն օգտագործելով իբրև մայր կայանալը:

[31] Նախարարությունների մեծ մասում կանանց ընդգրկման և արտաքին գործերի ու պաշտպանության նախարարություններից նրանց հեռացման մասին տե՛ս՝ Կարին Լինդգրեն: *Participation of Women in Decision-Making for Peace,* Նյու Յորք/Վիեննա 1989թ.:

[32] Այս հանգամանքը, ինչպես նաև մաշկային շփման և էնդորֆինների մասին ասվածը, կանանց սեռականությունը, ի տարբերություն տղամարդկանց (սեռանդամային շփման) սեռականության, ասես ինքնին դարձնում է հոլիստական: Հարկ է մատնանշել այն հանգամանքը, որ վերջին ավանդույթը ևս արևմտյան ծագում ունի: Տղամարդ-

կանց համար չինական այլընտրանքի մանրամասն նկարագրությունը տե՛ս՝ Jolan Chang: *The Tao of Love and Sex,* Նյու Յորք 1977թ.:

[33] Բայց պայմանով, որ բոլոր չորսին էլ ամուսինը հավասարաչափ սիրի՝ պայման, որը, գուցե, այնքան էլ դյուրին չէ իրականացնել:

[34] Երբ տղամարդիկ խճճվում են այնպիսի ամուսնական հուզական խնդիրների մեջ, որոնք իրենք չեն կարող լուծել, բայց և ուրիշ տղամարդկանց հետ մտերմիկության ավանդույթ չունեն, ապա միակ այլընտրանքը ընկերուհիների հետ կիսվելն է:

[35] Սուրճի և շաքարի համատեղ ներգործության վերաբերյալ տե՛ս՝ A. B. Titkin, R. M. Warshawsky և J. C. Engle: *It All Adds Up,* Էնգելվուդ Քլիֆֆս 1983թ., գլուխ 9:

[36] Եթե բռնության այդ երեք տիպերը արատավոր օղակում փոխադարձաբար զորեղացնում են միմյանց, ապա «առաքինության օղակում» դրանք փոխադարձաբար կտրոհեն միմյանց:

4
Ժողովրդավարություն : բռնատիրություն = խաղաղություն : պատերա՞զմ

4.1 Ժողովրդավարությունները պատերազմո՞ղ են, թե՞ խաղաղ

Ստորև կփորձենք բացահայտել ներքին և արտաքին քաղաքականությունների միջև հնարավոր կապի որոշ կողմեր՝ վճռորոշ մի կետի վերաբերյալ, այն է՝ ժողովրդավարություն երկրի ներսում, պատերազմողություն՝ դրսում:[1] Ըստ այն պատկերի, որով նրանք ներկայանում են, ժողովրդավարությունները պատերազմող չեն՝ չեն զբաղվում պատերազմներով, ոչ էլ պատերազմական են՝ հակված դիմելու պատերազմի: Նրանք սիրում են խաղաղությունը և ուզում են միայն խաղաղ մեթոդներով հասնել իրենց նպատակներին, նաև խաղաղությանը: Միայն մեծ դժկամությամբ և ոչ-կամավոր կերպով են նրանք երբեմն զենք օգտագործում արտերկրում: Այդուհանդերձ, ԱՄՆ-ն, օրինակ,[2] արտասահմանում ավելի քան 200 անգամ դիմել է զենքի օգնությանը (միջինը՝ մոտավորապես տարին մեկ անգամ) և ամեն անգամ՝ իբր թե ուժեղ իզոլյացիոնիստի դեմ՝ խաղաղական նկրտումներով: Միթե՞ հավատալի է:

Պատերազմական գործողություններին հաճախ այլ անվանումներ են տվել, օրինակ՝ «պատժիչ արշավանքներ» (ավելի քան 200-ամյա բրիտանական ավանդույթ, որում Ծոցի պատերազմին մասնակցությունն իրադարձությունների երկար շղթայի ընդամենը մի օղակն էր). կամ «միջոցառումներ, որոնք կոչված են պաշտպանել մեր քաղաքացիներին և մեր շահերն արտերկրում» (ամերիկյան ավանդույթ): Բայց ինչու՞ այդպիսի պատերազմողությամբ: Միթե՞ դրա հետևում քողարկված չէ պատերազմելու հակումը: Գուցե արտերկրում քաղաքացիների և ներդրումների բաշխման հետ ինչ-որ բան այն չէ՞, եթե այդպես անմերժելի է ռազմական միջոցներով նրանց «պաշտպանությունը»: Եվ ընդհանրապես, խաղաղ միջոցներով այդ բանն անելու փորձ երբևէ իրապես եղե՞լ է:

Ժողովրդավարության կողմից պատերազմ վարելու արդարացման համար երրորդ փաստարկը կարող ենք արագ բացառել: Այդ փաստարկը վերաբերում է ընտրություններին, որպեսզի Ռեյգանի և Թեթչերի, Բուշի կամ Մեյջրի պես մեկը վերընտրվի: Դա միայն ցույց է տալիս, որ ժողովրդավարություններն անխոցելի չեն այնպիսի ռազմավարությունների նկատմամբ, որ նաև բռնապետերն են վարում, և որոնց կանդրադառնանք ավելի ուշ: Իսկ հաջող ընտրությունները ոչ մի դեպքում չեն արդարացնում պատերազմելը:

Մեր ուսումնասիրությունը հանգեցնում է հյուսիսամերիկյան և արևմտաեվրոպական ժողովրդավարությունների (Ավստրալիան և Նոր Զելանդիան այստեղ չենք ընդգրկում) հաջողությունների հաշվեկշռում բավականին անհանգստացնող մի հանգամանքի: Բանն այն է, որ, եթե հաշվի չառնենք շատ քիչ բացառությունները, նրանք ամբողջ աշխարհում հարյուրամյակներ շարունակ բռնություն են կիրառել ստրկատիրության և գաղութատիրության տեսքով. վերջինը դեռևս ավարտված գլուխ չէ: Եվ այդօրինակ երևույթներ ար-

ձանագրվում էին նույնիսկ այն բանից հետո, երբ արդեն հետևում էին մնացել ժողովրդավարության տանող ճանապարհի այնպիսի շրջադարձային կետեր, ինչպիսիք 1688, 1776 և 1789 թվականներն էին: Այդ երկրներում ժողովրդավարական իրավունքներից օգտվող քաղաքացիները քաջատեղյակ էին, թե ինչ է կատարվում: Ճիշտ է, Իսպանիան և Պորտուգալիան դեռևս ժողովրդավարություններ չէին, երբ սկսեցին նմանօրինակ մեթոդների կիրառումը: Համեմատաբար կայուն ժողովրդավարություններ նրանք դարձան միայն 1970-ական թվականներին: Բայց դա փաստերում ոչինչ չի փոխում: Այն, ինչ ժողովրդավարություններն (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Բելգիա, Նիդեռլանդներ) են արել, շատ նման են, գրեթե նույնական, սոսկ աննշան տարբերություններ կային:

Կարելի է առարկել, որ թե՛ ստրկատիրությունը, և թե՛ գաղութատիրությունը բռնի էին, բայց ոչ պատերազմող: Պատերազմները կառավարությունների գործողություններ են: Հակառակ կողմում կառավարություն չկար, երբեմն կառավարություն չկար նաև ժողովրդավարական կողմում: Գոնե սկզբում ստրկատիրությունն ու գաղութատիրությունը հիմնվում էին ձեռներեց անհատների և առևտրային ընկերությունների վրա: Կառավարությունները մասնակցեցին շատ ավելի ուշ և հաճախ ավելի մեղմացուցիչ ազդեցություն էին ունենում: Միայն թե՝ ո՞վ է տվել պատերազմի նման սահմանում: Եվ միթե՞ դրանով կշտկվի ցեղասպանության մեթոդներով բնաջնջված բնիկ ժողովուրդների հարցը: Բացի այդ, քշված կամ հպատակեցված, ճնշված և շահագործված բնիկ ժողովուրդներն ապրում էին կենտրոնացված իշխանության որոշակի ձև ունեցող քաղաքական հանրույթներով, անգամ եթե ոչ արևմտյան ձևվածքի պետություններով: Իսկ ժողովրդական ճանապարհով ընտրված կառավարություններն ինչու՞ էին միայն մեղմացնում նման մեթոդները և ոչ թե վերացնում: Ինչու՞ ստրկացվածներն ու շահագործվածներն իրենք պետք է ոտքի ելնեին և բռնի կամ առանց բռնության պայքարեին այդ միանգամայն ժողովրդավարական պատերազմողականության դեմ: Ինչու՞ նրանք այդքան քիչ օժանդակություն ստացան իրենց քաղաքական կամքի համար:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից ի վեր ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Իսրայելը ամենաշատ պատերազմներն են վարել. նրանք բոլորն էլ ժողովրդավարություններ են:[3] Ծոցի պատերազմում Իրաքի դեմ «ԱՄՆ-ի ղեկավարած կոալիցիայի» երկրների մեծ մասը ժողովրդավարություններ էին:[4] Բայց վերջիններս անուշադրության մատնեցին բանակցելու՝ 1990թ. օգոստոսի հնարավորությունը, չընդունեցին պակաս պատերազմողական մոտեցումները, ինչպիսին Ֆրանսիայի՝ պատժամիջոցներ մտցնելուն ուղղված ջանքերն էին, ինչպես նաև Խորհրդային Միության ջանքերը՝ խնայելու նահանջող իրաքյան զինվորներին: Այսպիսով, ժողովրդավարությունը համատեղելի է մեծ չափերի բռնության հետ, այսինքն՝ այն ոչ միայն (երբեմն) պատերազմներ է մղում, այլ պատերազմողական բնույթ ունի:

4.2 Տեսություն, որ հարաբերում է ժողովրդավարությունն ու պատերազմողությունը

Ստորև *ժողովրդավարություն* ասելով մենք հասկանում ենք մի հանրություն, որտեղ կառավարողները պետք է հաշվետվություն տան կառավարվողներին

հակադարձ կապի գործընթացի միջոցով՝ «մեկ մարդ՝ մեկ ձայն» հիմքով: Կառավարողները մնում են իշխանությունում, եթե ստանում են դրական գնահատական և պաշտոնանկ են արվում, եթե ստանում են բացասական գնահատական: Այսօր դա տեղի է ունենում գաղտնի ընտրությունների ճանապարհով: Ընտրազանգվածը չափահաս բնակչությունն է, որին ընձեռվում է մտածողության, խոսքի, կազմակերպվելու և հօգուտ իր պահանջների ու սեփական անձի գործելու իրավունք: Այդ ընդհանուր դրույթն իրականացնելու համար կան անմիջական ուղիներ, ինչպես, օրինակ, (քաղաքացիական) նախաձեռնությունները կամ հանրաքվեները, որոնք Շվեյցարիան ավելի «ժողովրդի իշխանություն» *(demos kratos)* են դարձնում:

Պատերազմողություն (belligerence) ասելով հասկանում ենք պատերազմին կամ ռազմական գործողություններին մասնակցությունը, «պատերազմականություն» (bellicism) ասելով՝ դրա նկատմամբ ընդհանուր հակվածությունը, այսինքն՝ «խաղաղականության» (pacifism) հակադրությունը: Պատերազմականության համար չափանիշ կարող է հանդիսանալ այն հանգամանքը, թե որևէ երկիր ինչ չափով և ինչ հաճախականությամբ է ներքաշված լինում պատերազմների մեջ: Ընդ որում, որևէ դեր չի խաղում այն հանգամանքը, արդյոք խոսքը հարձակողակա՞ն, թե՞ պաշտպանական պատերազմի մասին է, այսինքն՝ արդյոք որևէ երկիր ի՞նքն է սկսել պատերազմը՝ առաջին քարը նետելով, թե՞ ընդամենը պատասխանել է նման գործողությանը: Հակամարտությունների և բռնության կենսացիկլերը խիստ բարդ են և կամայական են դարձնում այն ժամանակային շրջադարձների բացահայտումը, թե ով է ագրեսորը և ով՝ զոհը՝ հաշվի չառնելով նրանց միջև եղած նախկին կապը:

Այժմ մեր խնդիրը կլինի Ժ՝ ժողովրդավարություն, և Պ՝ պատերազմողություն փոփոխական մեծությունների միջև եղած կապի հետազոտումը՝ ավելի շուտ տեսական, քան վիճակագրական հարթությունում: Ընդ որում, մենք կկենտրոնանանք այն պատճառների վրա, որոնցով պայմանավորվում են դրական կամ բացասական կապերի ակնկալումը: Դրա համար մեզ անհրաժեշտ է փոփոխականների մի երրորդ խումբ՝ Փ, քանի որ Ժ-ի և Պ-ի համար սահմանումներից ինքնին ավել բան հնարավոր չէ ստանալ: Եթե Ժ-ն պատճառն է, իսկ Պ-ն՝ հետևանքը, ապա Փ-ն կարող է լինել *հիմքում ընկած* գործոն, որը նախորդում է երկուսին, կամ էլ՝ Ժ-ին *հարակից երևույթ*, կամ՝ Ժ-ի և Պ-ի *միջև ընկած* գործոն:

Այսպիսով, որպես ժողովրդավարության և պատերազմողության միջև կապի տեսության կառուցաքարեր՝ կստանանք տեսությունների վեց տիպ:

Դրական ձև.

Որքան ավելի շատ է Փ-ն, այնքան ավելի շատ է Ժ-ն և այնքան ավելի շատ է Պ-ն (Փ-ն ընկած է հիմքում, ընդհանուր է երկուսի համար):

Որքան ավելի շատ է Փ-ն, և որքան ավելի շատ է Ժ-ն, այնքան ավելի շատ է Պ-ն (Փ-ն հարակից գործոն է):

Որքան ավելի շատ է Ժ-ն, այնքան ավելի շատ է Փ-ն, և որքան ավելի շատ է Փ-ն, այնքան ավելի շատ է Պ-ն (Փ-ն ընկած է մեջտեղում):

Բացասական ձև.

Որքան ավելի շատ է Փ-ն, այնքան ավելի շատ է Ժ-ն և այնքան ավելի քիչ է Պ-ն (Փ-ն ընկած է հիմքում, ընդհանուր է):

Որքան ավելի շատ է Փ-ն, և որքան ավելի շատ է Ժ-ն, այնքան ավելի քիչ է Պ-ն (Փ-ն հարակից գործոն է):
Որքան ավելի շատ է Ժ-ն, այնքան ավելի շատ է Փ-ն, և որքան ավելի շատ է Փ-ն, այնքան ավելի քիչ է Պ-ն (Փ-ն ընկած է մեջտեղում):

Այժմ դժվարությունը Փ-ն բազմաթիվ հնարավոր տարբերակների շարքից ընտրելն է: Սկսենք հիմքում ընկած և հարակից երկու փոփոխականներից և փնտրենք այն գործոնները, որոնք արտադրում են ժողովրդավարություն *և* պատերազմողություն, ինչպես նաև այն գործոնները, որոնք ժողովրդավարության հետ միտված են պատերազմողություն արտադրելուն: Ըստ այդմ, մենք կառանձնացնենք հինգ փոփոխականներ, որոնք սերում են ժողովրդավարությունից և իրենց հերթին ծնում են պատերազմողություն: Փոփոխականների առաջին երկու խմբերը որպես այդպիսին դուրս են ժողովրդավարության տեսությունից, նույնիսկ եթե դուրս չեն ժողովրդավարությունների որոշակի պատմականությունից. փոփոխականների երրորդ խումբը ժողովրդավարության տեսության շրջանակներում է:

Տեսություն 1.

Որքան ավելի անհատապաշտական և մրցակցային է մշակույթը, այնքան ավելի հավանական է, որ երկիրը ժողովրդավարական և, հնարավորություն ունենալու դեպքում, պատերազմող կլինի:

Հաջորդելով հունականին ու իսլանդականին՝ արևմտյան ժողովրդավարությունները պատմականորեն առաջացել են երկրագնդի հյուսիս-արևմուտքում, այսինքն՝ Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Այդ գործընթացը չպետք է տարանջատել բողոքականության մշակույթից, որը նորովի սահմանեց Աստծո հետ մարդու կապը, այն անհատականացրեց, ավելի անմիջական դարձրեց և միաժամանակ նաև տղամարդկայնացրեց նրանով, որ Մարիամին՝ քրիստոնեական միակ կին-աստծոն, երկրորդական դեր հատկացրեց. կապ, որը փրկությունը դիտում էր իբրև խիստ հազվագյուտ ապրանք և կապում էր ավելի շատ իսկական հավատի և աստծո ողորմության, քան բարի գործերի և ճիշտ ծեսերի հետ: Իսկ հաջողությունն ու ձախողումը դիտվում էին իբրև հաջողության/ձախողման նախանշան հաջորդ կյանքի համար:

Անհատն ազատ արձակվեց, բայց մնաց ոչ մաքուր խղճով և ինքնահաստատման մշտական պահանջով: Որպես հետևանք առաջացան ստեղծագործական և անհատապաշտական/մրցակցային գործելակերպեր, որոնցով մարդ կամենում էր իր համար անկյուն ապահովել դրախտում: Դա տնտեսական ոլորտում ձեռնարկատիրությունն էր, մշակութային ոլորտում՝ գիտությունը:

Հոգևորականության և ազնվականության քաղաքական իշխանությունը սահմանափակվեց իբրև հետևանք ընտրաքվեների անհատականացված հաշվարկի (վերջինիս արդյունքում ընտրազանգվածն այնքան մեծացավ, որ հնարավոր եղավ ձայներով հաղթել արմատացած վերնախավին) և բոլոր մարդկանց ի ծնե հավասար լինելը հռչակող մարդու իրավունքների: Դրա հետևանքը ռազմական ոլորտում եղավ ազգային զորակոչային բանակների ստեղծումը: Այդ փոփոխությունները դրսևորվեցին *ձեռնարկատիրության ողջ*

մշակույթով, որը, գիտության մեջ և տեխնիկայում համակցվելով ստեղծագործականության հետ, հանգեցրեց տնտեսական աճի, բնակչության ավելի ու ավելի լայն շրջանակների կուտակված էներգիաների *քաղաքական ազատագրումով* և, վերջապես, *ժամանակակից պատերազմավարությամբ*:

Ժողովրդավարությունն ամբողջ այդ ագրեսիվ մրցակցային վարքը կրողներին պաշտպանության տակ առավ հենց իրենցից, իհարկե, միայն երկրի ներսում, բայց ոչ՝ արտերկրում: Այսպիսով, նրանք պատերազմի էին ելնում հանուն քրիստոնեության և քաղաքակրթության՝ որպես խաղաղության բարեկամներ,[5] մինչդեռ արտերկիր էին արշավում, թերևս, ավելի շատ մասնավոր սեփականություն ձեռք բերելու և պաշտպանելու համար: Երբ պետությունն ստանձնեց իշխանությունը, գաղութատիրությունը դարձավ մասնավոր սեփականության հոմոլոգն աշխարհի մասշտաբով և հանգեցրեց երկրների սեփականացմանը և այն ամենին, ինչ դա իր հետ բերեց: Երկուսն էլ ընթանում էին իրար ձեռք-ձեռքի տված:

Տեսություն 2.

> *Որքան հարուստ է երկրի պատմությունն ուրիշներին վնասվածքներ հասցնելու դեպքերով և որքան ավելի ժողովրդավարական է այդ երկիրը, այնքան ավելի պատերազմող է նա:*

Այբբենական ճշմարտությունից էլ վեր է, որ պատերազմ վարող երկիրն այն իր համար սովորույթ կդարձնի: Այստեղ խոսքն այն մասին է, որ վնասվածք պատճառելը հաճախ «Ես»-ի և «Այլոց» միջև որոշակի իրավիճակ է ստեղծում կամ սաստկացնում է մինչ այդ գոյություն ունեցող իրավիճակը, որը մշակութային առումով նշանակում է Ես-ի արժեքի չափազանց բարձրացում և մյուսի նվաստացում՝ ընդհուպ մինչև մարդու տեղ չդնելը: Վերջինը հանգեցնում է այն բանին, որ այդ մյուսը կարող է շահագործվել, ճնշման ենթարկվել կամ նույնիսկ բնաջնջվել: Վնասվածքները շարունակելու են դեգրադացնել զոհին և հաստատել այս տեսության ճշմարտացիությունը:

Բայց նման վնասվածքը/զեղումը վերաբերում է ոչ միայն ուրիշին, այլ նաև «Ես»-ին. *«Նրանք, թերևս, մի օր կգան և մեզ հետ կանեն այն, ինչ մենք ենք արել նրանց»*: Այստեղ, տեսություն 2-ում, խոսքն ուղղակի բռնության մասին է. որքան ավելի վատ են վարվում կամ վարվել մնացյալ աշխարհի հետ, այնքան ավելի շատ հիմքեր կան հատուցումից երկյուղելու: Տեսություն3-ում անդրադարձ կկատարվի համաշխարհային մակարդակով կառուցվածքային բռնությանը, տեսություն4-ում՝ երկրի ներսում կառուցվածքային բռնությանը: Այստեղ դրույթն այն է, որ ուղղակի բռնությունը ծնում է ուղղակի բռնություն, բայց ոչ՝ անհրաժեշտաբար որպես զոհերի վրեժ, այլ նաև որպես վրեժի իրական կամ երևակայական վտանգի կանխման միջոց:[6] 3-րդ և 4-րդտեսությունները նույն բանն են պնդում կառուցվածքային բռնության վերաբերյալ:

Դիտարկենք ԱՄՆ-ի օրինակը: Աշխարհում շատ քիչ թվով երկրներ ունեն ներխուժումից երկյուղելու այդչափ հիմքեր: Այնտեղ հստակ գիտեն, թե դա ինչ կարող է նշանակել՝ ցեղասպանություն, ամբողջ ժողովրդի բնաջնջում: Սակավաթիվ երկրներ ունեն տեղահանումից և ամեն տեսակ ստրկությունից երկյուղելու բավարար հիմքեր. ԱՄՆ-ը հստակ գիտե, թե ինչ է նշանակում ստրկություն: Անվտանգության և ազատության վերաբերյալ ամերիկյան արժեքային պատկերացումները բացասումն են այն ամենի, ինչ իրենք պատ-

ճառել են ուրիշներին: Այդ պատկերացումները գոյութենապաշտական բնույթ ունեն, պատմական են և ոչ թե լոկ տեսական, և կարող են գործադրվել բռնի կերպով՝ սեփական պաշտպանության նպատակներով բնակչության ուժերը մոբիլիզացիա համար: Ամերիկացիները գիտեն իրենց գոյաբանական հոգսերը: Իսկ լավագույն պաշտպանությունը, թերևս, «նրանց» դեմն առնելն է, քանի դեռ «նրանք» չեն էլ սկսել:

Տեսություն 3.

> *Որքան ավելի բարձր դիրք ունի երկիրը երկրների համաշխարհային տնտեսական բուրգում, այնքան ավելի հավանական է, որ այն ժողովրդավարական է և պատերազմող:*

Նրանք ելան պատերազմի, և պատերազմները բարձրացրին նրանց համաշխարհային բուրգի գագաթին: Նրանք դեռ հիմա էլ այնտեղ են: Երբ նրանք հասան աշխարհի գագաթը, երկու հասկանալի խնդիր ծագեց. չգլորվել կրկին ներքև և շատ մարդ չթողնել վեր: Հնարավորինս քչերին վերև թողնելու ցանկությունն ձևավորել է բավականաչափ սրագագաթ մի բուրգ, որի դեպքում սակավաթիվ երկրներ են հայտնվել գագաթին, շատերը, սակայն, մեջտեղում և ներքևում են: Չիջնելու ցանկությունն ստեղծել է մի շարք մեխանիզմներ, որոնց օգնությամբ հնարավոր է դարձել պահպանել գագաթի մշակութային, տնտեսական, քաղաքական և ռազմական վերահսկողությունը: Այսինքն, հիմնականում «աշխատանքի բաժանում» (կրոնական և գիտական) ճշմարտություն հաղորդողների և ստացողների միջև. տնտեսական իմաստով հումի և եփածի միջև՝ մշակված հումքի դիմաց ծառայությունների մատուցում. որոշողների և նրանց միջև, ում այդ որոշումները վերաբերում են. ուժային միջոցներ ունեցողների և նրանց միջև, ում նկատմամբ դրանք կիրառվելու են: Ժողովրդավարությունները միշտ փորձել են քամել լավագույնը՝ հասնել գագաթին: (Նրանք հիմա էլ դա շարունակում են, սակայն, այլևս չեն հիմնվում գաղութատիրության վրա, այլ օգտագործում են միջազգային տնտեսական հարաբերությունները /տե՛ս՝ երրորդ մասում/):

Կարճ ասած, գագաթին հայտվելով՝ այնտեղ մնալու ուժեղ շահադրդում է առաջանում, այն էլ՝ առանց լուրջ մրցակցության: Գագաթին գտնվողների համար աշխարհակարգը, բնականաբար, վատից բացի ամեն ինչ է, և արժե այն պաշտպանել բուրգը տափակացնելով ամեն բան փոխող «արմատականներից», ինչպես նաև առաջխաղացողներից, որոնք կամենում են իրենք իրենց վեր մղել ու մյուսներին ներքև քաշել՝ անկախ այն բանից՝ բացարձակ, թե հարաբերական իմաստով: Բարձունքում բազմած դղյակները բռնություն չեն նախաձեռնում, նրանք ընդամենը արձագանքում են, սակայն՝ կառուցվածքը սառեցնելուց հետո:

Արևմտյան մարդը *(Homo occidentalis)* նախ որպես կաթոլիկ, իսկ այնուհետև որպես բողոքական, շրջեց աշխարհով մեկ. նա հայտնագործություններ էր անում և ուղղակի բռնություն գործադրում՝ կառուցելու համար կառուցվածքային բռնության այդ հսկայական համաշխարհային բուրգը, որի գագաթում դեռևս ժողովրդավարություններն են: Ապա հետևեց մեկ այլ ուղղակի բռնություն ինքնապաշտպանության նպատակով՝ որպես կարգը փոխելու հեղափոխական նախաձեռնություն, ինչպես և իբրև այդ կարգը պահպանելու հակահեղափոխական բռնություն: Չնախաձեռնելը որպես ոչ-պատերազմական դի-

տարկելը ոչ միայն վատ քաղաքականություն է, այլ նաև վատ հասարակական գիտություն, քանզի այդ կերպ անուշադրության են մատնվում երրորդ փոփոխականները: Եթե որևէ մեկը նստած է մեկ ուրիշի ուսերին, ապա հավանական է, որ վերջինս գոնե կշարժվի. իսկ դա «ագրեսիա» կոչելը մի քիչ զոռով ձգած բան է:

Արդյո՞ք ժողովրդավարությունները վախենում են իրար մեջ պատերազմներ վարելուց: Ինչպես կարող է վկայել ժողովրդավարությունների պատմության վրա նետված ամենաթռուցիկ հայացքն իսկ, նրանք ավանդաբար իրար դեմ են ելել, և հատկապես՝ գաղութների համար: Բայց այն ժամանակ (Աֆրիկայի բաժանման շուրջ 1884-85թթ. Բեռլինի կոնֆերանս), ինչպես և հիմա (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն /OECD/, Եռակողմյանը՝ G-7-ով իբրև գործադիր խորհուրդ) նրանք իմացել են/գիտեն, որ բուրգի գագաթին գտնվելու դժվարին դիրքն ավելի լավ կարելի է պահպանել միասին, քան միայնակ: Հնարավոր լուծումներից մեկը համեմատաբար նեղ դաշինք ձևավորելն է: «Իշխանության և արտոնությունների պահպանման դաշինք»-ը լավ չէր հնչում. քրիստոնյա կամ խաղաղասեր, կամ էլ ժողովրդավարական երկրների դաշինքն ավելի լավ է հնչում՝ նախադրելով, որ այդ սահմանումը կներգրավի «աջ» երկրներին և կբացառի փոփոխության ձգտող «ձախ» երկրները: Ինչպես ամբողջական քաղաքներ կամ երկրներ փաստացի կառավարող «Ռոտարի» ակումբի անդամների մոտ է՝ համերաշխությունը հատուցվում է:

Առաջին աշխարհամարտի ժամանակ ժողովրդավարական երկրները ելել էին իրար դեմ. իսկ Երկրորդ աշխարհամարտն ավելի շուտ պատերազմ էր ժողովրդավարությունների վերին խավի և ոչ-ժողովրդավարական երկրների ստորին խավի միջև: Պատերազմի հռետորությունը քողարկել էր տնտեսական-դասակարգային գործոնը, իսկ քաղաքականությունը՝ ոչ: Միջազգային բռնությունը, նաև պատերազմի ձևով, դասակարգային պայքար է: Հասարակությունների համաշխարհային հանրույթի ստորին օղակներում, ինչպես և երկրների ներքին հասարակություններում հազվադեպ է հանդիպում ժողովրդավարական գործընթացների նրբակիրթ վարվելաձև: Քանի որ բուրգը չափազանց սուր է՝ այստեղ միայն քչերն են, որ զգում են ստորին բազմության բռնությունը. չէ՞ որ ուղղակի կամ կառուցվածքային գաղութատիրություն վարող յուրաքանչյուր երկիր հակված է մեկից ավելի գաղութ ունենալու: Հետևաբար, բուրգի գագաթի յուրաքանչյուր երկրին բաժին կընկնի ավելի շատ բռնի ռեակցիա, քան ներքևի յուրաքանչյուր երկրին՝ բռնի հարձակում, ինչը որոշ չափով բացատրում է, թե ինչու են ժողովրդավարությունները գտնվում պատերազմողների ցուցակի ամենավերին հորիզոնականներում: Այդտեղ ոչինչ չեն փոխում նաև մի քանի փոքր սոցիալական ժողովրդավարությունները, որոնք ո՛չ գաղութներ ունեն, ո՛չ էլ նորագաղութներ, որոնք ո՛չ պատերազմներ են սկսում, ո՛չ էլ բռնությամբ են պատասխանում: Նրանք պարզապես ընդամենը ժողովրդավարության ցուցադրական օրինակներ են և հիմնականում փոքր են բռնություն գործադրելու համար:

Տեսություն 4.

Որքան ավելի շատ իզոմորֆիզմ կա երկրի ներքին և համաշխարհային սոցիալական կառուցվածքների միջև, և որքան ավելի ժողովրդավարական է երկիրը, այնքան պատերազմող է այն:

Դիտարկենք համաշխարհային համակարգի կառուցվածքի երեք կողմերը՝ ռասա, ազգ և դասակարգ: Ռասաների բաժանման առումով աշխարհն ունի սպիտակամորթ վերնախավ, դեղնամորթ ու թխամորթ միջնախավեր (ճապոնացիներ, չինացիներ, հնդիկներ), սևամորթ ստորին խավ (Աֆրիկա) և դրանից էլ ներքև կարմրամորթ, գրեթե բնաջնջված շերտ (երկու Ամերիկաները):

Մշակութային առումով աշխարհը բաժանված է քաղաքակրթությունների և ազգերի, ընդ որում, ամենավերևում Արևմուտք I-ն է: Այնուհետև գալիս են ճապոնական, չինական և հնդկական քաղաքակրթությունները, իսկ ամենաներքևում աֆրիկյան, խաղաղօվկիանոսյան և ամերիկյան անդրենածինների քաղաքակրթություններն են:

Տնտեսական տեսանկյունից աշխարհը բաղկացած է փողի մասին առանձնապես հոգ տանելու խնդիր չունեցող մարդկանց փոքրաթիվ բարեկեցիկ դասակարգից, փողի մեծ հոգսերի մեջ մարդկանց մի ստվար միջին դասակարգից և աղքատության ու թշվառության մեջ ապրող մարդկանց համեմատաբար փոքր մի դասակարգից, որոնք ավելի շատ հոգ են տանում իրենց գոյատևման, քան փողի համար, ինչն այսպես, թե այնպես, չունեն:

Այս երեք կողմերը սերտորեն առնչվում են միմյանց, իսկ ամբողջ կառուցվածքն իր պահպանման նպատակով հիմնվում է այն ենթադրության վրա, որ միջնամասում գտնվողներն ավելի շուտ կպահեն գագաթում, քան ստորին մասերում գտնվողների կողմը: Բայց այդ ենթադրությունը համադրելի ներքին կառուցվածք ունեցող ցանկացած երկրի դարձնում է նյարդային երկիր, քանզի այն հարկադրված է վախենալու ոչ միայն ներքին անկայունությունից, այլ նաև այլ երկրներում կամ ամբողջ աշխարհում անկայունության տարածումից:

Երեք վտանգ է նշմարվում այստեղ՝ հեղափոխություն ներսում, համաշխարհային հեղափոխություն և հեղափոխություն աշխարհի որևէ այլ անկյունում: Պարզ է, որ առաջինը մտահոգում է երկրների վերնախավերին: Պարզ է նաև, որ նրանք համաշխարհային հեղափոխությունից էլ ոգևորված չեն, որովհետև այդպիսի հեղափոխությունից կտուժեին նաև հենց իրենք (հմմ. Տեսություն 3): Բայց ինչպիսի՞ն է իրերի վիճակը երրորդ դեպքում, երբ հարկ է դիմադրել երկրի սահմաններից դուրս: Ո՞րն է որևէ օտար երկրում տեղի ունեցող հեղափոխության դեմ ինքնապաշտպանության արդարացումը:

Պատասխանը բավականաչափ հասկանալի է. եթե աշխարհի այլ վայրերում ստորին խավերը հաղթանակ տանեն սպիտակների մենաշնորհային դիրքի, արևմտյան գերազանցության կամ տնտեսական առանձնաշնորհների նկատմամբ, ապա դա կարող է իրավական նախադեպ ստեղծել նորմաստեղծ ատյաններում, ինչպիսին ՄԱԿ-ն է, դա կարող է քաջալերել բնիկ ստորին խավերին գործելու նույն կերպ, և բացի այդ, ինչ-որ մի տեղ հաղթողները, ինչու չէ, կարող են նաև «արտահանել» իրենց հեղափոխությունը:

Սակայն դա նշանակում է, որ ճնշված ռասաների, անպետություն ժողովուրդների և իրական թշվառության վրա իշխող որևէ երկրի վերնախավերն ուրիշների օրինակով կպատկերացնեն իրենց վիճակը և կփորձեն խոչընդոտել

հեղափոխություններն աշխարհի այլ անկյուններում, որպեսզի հենց իրենք դրանից պրծնեն: Հաղթանակ արտերկրում՝ տանն իշխանության մնալու համար… Իսկ արդյո՞ք ժողովրդավարությունները պատկանում են աշխարհի վիճակը ռասայական, մշակութային և տնտեսական տեսանկյունից արտացոլող երկրների այդ կատեգորիային: Ո՛չ, բայց մեր դրությունն էլ այդպիսին չէր, քանզի մեզ հետաքրքրում են նպաստող և ոչ թե միջամտող կամ հիմքում ընկած գործոնները: Սակայն որոշ ժողովրդավարություններ միանշանակորեն պատկանում են այս կատեգորիային, ունեն նման կառուցվածք, օրինակ՝ ԱՄՆ-ը և Իսրայելը. նրանք երկուսն էլ ակտիվություն են հանդես բերում համայն աշխարհն ընդգրկող հակահեղափոխական դաշինքներում և նյարդայնանում են Հարավային Աֆրիկայի, որպես համաշխարհային միկրոտիեզերքի, պատճառով:

Բացի այդ, մյուս ժողովրդավարություններում (Մեծ Բրիտանիա. Գերմանիա, Ֆրանսիա, Իսպանիա և Իտալիա. Բելգիա և Նիդեռլանդներ) սևամորթ և թխամորթ, ոչ-արևմտյան և/կամ ծայրահեղ աղքատ խմբերի ներգաղթի շնորհիվ ձևավորվում է այդպիսի սոցիալական կառուցվածք: Ինչպես և ընդունված է, այստեղ ևս հիմք են ընդունումայն , որ միջազգային խաղաղության համար սպառնալիք են ներկայացնում մյուս, և ոչ թե բուն այս երկրները: Իսկ Հարավսլավիայի, Խորհրդային Միության կամ Չեխոսլովակիայի պես բազմամշակույթ երկրների փլուզումը ժողովրդավարացմանը զուգորդող երևույթ էր, այն առումով, որ առավել հստակ էին երևան գալիս լարվածությունները: Նաև ներքին պատճառներով է դժվար միաժամանակ ժողովրդավարական և իսկապես բազմամշակութային (ոչ թե՝ ձուլման համար հալելու ման) լինելը: Բայց անգամ եթե ժողովրդավարություններին հաջողվի հսկողության տակ պահել լարվածությունները, միևնույն է, կմնա այն սպառնալիքը, որ այլ երկրներում կամ ամբողջ աշխարհում անկայունությունը կարող է ոգևորել բնիկ խմբերին: Բայց եթե ժողովրդավարությանը հաջողվի իր կողմը գրավել անհաջողակներին, ապա նրանց կարելի է հրահրել այլ երկրներում իրենց նմանների դեմ պայքարելու:

Վերցնենք նորից ԱՄՆ-ը որպես օրինակ. հասարակություն, որն արտացոլում է աշխարհն իր երեք չափերով՝ ռասա, ազգ և դասակարգ: Սակայն համամասնությունները չեն համապատասխանում սահմանմանը. եթե դրանք նույնը լինեին, ինչպես աշխարհի մակարդակում են, ապա այդ երկիրը կարող էր «ժողովրդավարություն» ունենալ միայն հին հարավաֆրիկյան իմաստով՝ *սպիտակների* համար: Իսրայելում հրեաները շարունակում են մեծամասնություն կազմել, այնպես որ ընտրությունները կարելի է անցկացնել «մեկ մարդ՝ մեկ ձայն» հիմքի վրա: Դեղնամորթ և թխամորթ երկրները հանդուրժվում են, եթե միատարր են և հակասպիտակ չեն. կարելի է հանդուրժել նույնիսկ սևամորթ երկրների, եթե նրանց կարելի է պահել հսկողության տակ (եթե նրանք փորձեն ըմբոստանալ, ապա կսպառնա ներխուժման վտանգը): Պետականություն չունեցող ժողովուրդները նույնիսկ որոշ հանգամանքներում կարող են իրենց պետությունն ունենալ, եթե հետևեն այդ նույն սկզբունքներին:

Խնդրահարույց են բազմառասա երկրները և պետականություն չունեցող ազգերով երկրները, ճիշտ այնպես, ինչպես պետականություն չունեցող ազգերով ժողովրդավարությունները: Առաջինի համար իբրև օրինակ նշեցինք Հարավային Աֆրիկան. քրդերին և պաղեստինցիներին կարող ենք վերցնել իբրև վերջինի օրինակ: Քրդական պետականությունը, հավանաբար, կքաջալերեր

պաղեստինցիներին, իսկ պաղեստինյան պետականությունը կխրախուսեր ամերիկյան բնիկներին. այստեղ անդրենածին հավայացիները, թերևս, հատուկ դեպք են: Հետևաբար, ԱՄՆ-ը և Իսրայելը մեծապես դեմ կլինեն նման պետականությանը:

Նույնը կարող է վերաբերել նաև դասակարգային հարաբերություններին: Այլ երկրներում վերաբաշխման և սոցիալական պետության մեթոդներին մեծ դիմադրություն ցույց կտրվի, որպեսզի դրանք չհանգեցնեն նույն պահանջներին, ասենք, օրինակ, ԱՄՆ-ում: Այս տեսանկյունից հարմար օրինակ էր, թերևս, Իրաքը: Այստեղ պարծենում էին Բաաս կուսակցության «սոցիալիզմի» ներքո բնակչության ստորին 20 տոկոսի տանելի նյութական կենսապայմաններով: Բայց նույնը վերաբերում է նաև նախկին սոցիալիստական երկրներին և նույնիսկ Հյուսիսարևմտյան Եվրոպայի և Կանադայի սոցիալ-ժողովրդավարություններին: Այսպիսով, այստեղ գործ ունենք «մասնավորեցման» ագրեսիվ արտահանման հետ:

Արդեն արծարծված երեք շարժառիթներին ավելանում է ևս մեկը. եթե մենք՝ ժողովրդավարություններս, առաջինն ենք, ապա ոչ մի Ուրիշ չի կարող գերազանցել մեզ: Դա հնարավոր է ապահովել տարբեր եղանակներով՝ մերժելով գոյություն ունեցող աստիճանակարգությունը, կա՛մ բարելավելով սեփական ժողովրդավարությունը, կա՛մ ավերելով մյուսների ոչ-ժողովրդավարությունը՝ մեկուսացնելով համաշխարհային առևտրից, անախորժություններ պատճառելով և այլն: Իսկ ծայրահեղ դեպքը ռազմական միջամտությունն է:

Տեսություն 5.

Որքան ավելի ժողովրդավարական է երկիրը, այնքան ավելի շատ մարդիկ են մասնակցում որոշումների կայացման գործընթացին. որքան ավելի շատ մարդ է մասնակցում որոշումների կայացման գործընթացին, այնքան պակաս պատերազմող է երկիրը:

Սա այն տարածված դրույթի ամենահայտնի արդարացումն է, ըստ որի ժողովրդավարությունները պակաս պատերազմող են: Խնդիրը լոկ այն է, որ վերոնշյալ պնդումներից ոչ մեկն էլ կայուն չէ (ինչը չի նշանակում, որ հակառակն է ճիշտ): Գաղտնիության կամ անվտանգության դրդապատճառներով՝ նախապատերազմական իրավիճակներում ցանկացած քաղաքական համակարգում որոշումները կայացվում են ներքին նեղ շրջանակի կողմից: Ավելի խնդրահարույց է երկրորդ պնդումը, ըստ որի այն երկրներն են սակավ պատերազմող, որտեղ որոշումների կայացումը բաշխվում է որոշում կայացնողների տարբեր տիպերի և հարթությունների միջև, ներառյալ հանրաքվեի հնարավորությունն այն հարցի շուրջ, արդյոք պե՞տք է պատերազմել, թե՞՝ ոչ: Դրա հետևում թաքնված է այն պատկերացումը, թե սովորական մարդիկ բնականից պակաս պատերազմող են, քան իրենց առաջնորդները:

Քանի որ որոշում կայացնողների շրջանակը մեկ մարդուց ընդլայնվելով տարածվում է ողջ բնակչության վրա, որոշում կայացնելու գործընթացը գնալով ավելի է կախվածության մեջ ընկնում երևույթներից, որոնք ընդհանուր են բոլորի՝ ասել է, թե գերակշիռ մեծամասնության համար, քանզի հարցի գինը շատ բարձր է: Այսօրինակ երևույթները չեն կարող, ասենք, դասակարգային շահերի պես կառուցվածքային բնույթ ունենալ, քանի որ, իրենց իսկ սահմանումից ելնելով, բաշխման ենթակա չեն: Դրանք կարող են նույնիսկ հակա-

սական լինել, ինչպես այն դեպքերում, երբ աշխատավոր դասակարգի երիտասարդներն իրենց կյանքն են զոհաբերում, իսկ զենք արտադրողներն ու վաճառողները հսկայական շահույթներ ստանում:

Ազգային մշակույթը հարմար թեկնածու է: Աշխարհի առավել պատերազմական մշակույթները, թվում է, հրեական-քրիստոնեական-իսլամական ոգով ներշնչված մշակույթներն են՝ իրենց ընտրյալության հավատքով, իրենց եզակիականությամբ (միակ ճշմարտության հավակնություն) և իրենց համընդհանրայնությամբ (աշխարհում համարում ունենալու հավակնություն, ընդ որում, այստեղ հուդայականությունը բացառություն է): Սակայն, ինչպես արդեն նշել ենք վերևում, հրեա-քրիստոնեականը հաստատվում է մի մշակույթով, որը մրցակցային անհատապաշտության միջոցով թև է տալիս ժողովրդավարություններին: Այսպիսով, հասանք ընդհանուր մշակութային մի գործոնի, որը ժողովրդավարությունը կապում է պատերազմականության, և ոչ թե բուդդիստական քաղաքակրթության խաղաղականության հետ, որը սակավ անհատապաշտական է և այդ պատճառով էլ, արևմտյան ընկալմամբ, ներկայանում է որպես պակաս ժողովրդավարացնող:

Տեսություն 6.

> *Որքան ավելի ժողովրդավարական է երկիրը, այնքան ավելի շատ մարդու իրավունքներ են իրացված, իսկ որքան ավելի շատ մարդու իրավունքներ են իրացված, այնքան ավելի մարդկային պարտավորություններ կարելի է բխեցնել դրանից:*

Միջազգային պատերազմներ վարել կարողանալու համար, կառավարությունը, որ հիմնականում կազմված է տարեց և համեմատաբար փորձված տղամարդկանցից, պետք է երիտասարդներին մարտնչելու դրդի, իսկ առանձին դեպքերում նաև՝ մեռնելու: Դրան հասնելու երեք ճանապարհ կա. *նորմատիվային*, երբ նրանց դրդում են կռվելու՝ ներքին համոզմունքից ելնելով, *պայմանագրային կարգով*, երբ նրանց վճարում կամ այլ կերպ են հատուցում դրա դիմաց, և *հարկադրանքի ուժով*, երբ նրանց ստիպում են կռվել, և նույնիսկ պատրաստ են գնդակահարել, եթե չկռվեն:

Պատրաստակամություն ստանալու նշված երեք ճանապարհներն իրար չեն բացառում: Ակնհայտ է, որ լավագույն տարբերակն այն է, երբ գործադրվում են բոլոր երեքն էլ: Այսինքն, զինվորին տրվում է կռվելու հիմք (ինքնասիրություն և/կամ ուրիշների նկատմամբ ատելություն՝ ազգայնամոլության կամ արմատականության այլ տեսակների ձևով, սեփական բանակի նկատմամբ հպարտություն և սեր, հակառակ կողմի նկատմամբ արհամարհանք և ատելություն), վարձկաններին՝ բարձր վարձատրություն, հատկապես, երբ նրանք հաղթանակ են տանում, իսկ դասալիքներին՝ ծանր պատիժներ: Քաղաքական համակարգերը հակված են օգտվել բոլոր երեքից էլ:

Քանի որ ժողովրդավարություններն իրենց սահմանման համաձայն շարունակաբար ավելի ու ավելի շատ են մարդու իրավունքներ իրացնում, ապա նրանք ավելի շատ բան */quid/* ունեն, ինչը կարող է վերածվել մարդկային պարտավորությունների */quo/*: Ըստ պետության վերոնշյալ տրամաբանության, կա երեք պարտավորություն. պետք է ընդհանուր առմամբ դրականորեն հակված լինել դեպի նախախնամությամբ տրված վիճակը */l'état providence/*, և հատկապես դեպի ժողովրդավարական պետությունը՝ իբրև «Ես»-ի ընդլայ-

նում. պետք է հարկ վճարել. և պետք է պատրաստ լինել կյանքը զոհաբերել, եթե նման կոչ արվում է: Այսպիսով՝ պատերազմ: Փոխհատուցման */quid-pro-quo/* տրամաբանությունը պահանջում է. «ոչ միայն թե երկիրն ինչ կարող է անել ինձ համար, այլ՝ թե ես ինչ կարող եմ անել երկրի համար»: Ոչ-ժողովրդավարական երկրները նույնպես կարող են երախտագիտություն պահանջել բարեկեցիկ պետության հմտությունների համար (Բիսմարկ և Հիտլեր): Բայց տարբերությունն այն է, որ ժողովրդավարություններում այդ մեխանիզմներն ինստիտուցիոնալացված են և ոչ թե՝ գործում են ըստ առաջնորդների տրամադրության: Առաջինը, հավանաբար, շատ ավելի մեծ հաջողություն խոստացող դեղատոմս է:

Տեսություն 7.

> *Որքան ավելի ժողովրդավարական է երկիրը, այնքան ավելի մեծ ներքին մրցակցություն կա իշխանության համար, և որքան ավելի մեծ է իշխանության համար ներքին մրցակցությունը, այնքան ավելի մեծ է արտաքին ագրեսիայի միջոցով օժանդակություն ստանալու գայթակղությունը:*

Սա «դեպի դուրս ուղղված ագրեսիա՝ ներքին միաբանությունն ապահովելու համար» հանրահայտ դրույթի ձևակերպումներից է, որը, եթե մակերեսորեն դիտարկենք, կարծես, հակասության մեջ է նախորդ տեսության հետ: Ավելի խորը քննենք այն:

Անկասկած, միշտ էլ եղել են ինքնակալ կառավարիչներ, ովքեր օգտվել են այդ մեխանիզմից: Սակայն, ինչպես հաջորդ տեսությունն է փաստարկում, նրանք դրանով մեծ ռիսկի են դիմում, որովհետև իրենց տրամադրության տակ չունեն բավարար չափով խաղաղության ավելցուկ: Բռնապետություններում և ժողովրդավարություններում իրականացվող ճնշման միջև մի տարբերություն կա. եթե պարզ ասենք՝ բռնապետությունները ճնշում են բարձր դիրքերում գտնվող մարդկանց, իսկ ժողովրդավարությունները՝ ցածր դիրքերում գտնվողներին: Բռնապետությունում գոյություն ունեն իրար հետ մրցակցող վերնախավեր, որոնք հաճախ արտաքսվում են իշխանության եկած համապատասխան խմբի կողմից. ժողովրդավարությունում այդ խմբերն իրար մեջ համաձայնության են եկել «կարգավորված», հաջորդական փոփոխության շուրջ, օրինակ՝ բազմակուսակցական համակարգի և ընտրությունների միջոցով: Ինչպես վերը նշվեց, դրա տակ կարող է քողարկված լինել ահռելի ռասայական, ազգային և դասակարգային ճնշում և շահագործում: Բայց ժողովրդավարությունները երկու-երրորդային հասարակություններ են, մինչդեռ բռնատիրությունները մեկ-երրորդային հասարակություններ են՝ 50 տոկոսի շուրջ տատանումներով: Բռնատիրությունները պատերազմ են սկսում ժողովրդական կամ պոպուլիստական քաղաքականության միջոցով բնակչության ավելի քան 50 տոկոսի օժանդակությունն ստանալու նպատակով:

Այս տեսության դեպքում խոսքն այն մասին է, որ ժողովրդավարությունները կարող են գործել ճիշտ այնպես, ինչպես ընդունված է ասել «ներքին քաղաքական պատճառներով»՝ այդ կերպ բարդ խնդիրներից խուսանավելու նպատակով, մշտապես աչքի տակ ունենալով հաջորդ ընտրությունները: Որքան ավելի օրգանական և կենսունակ է ժողովրդավարությունը, այնքան ավելի շատ մրցակցություն կլինի իշխանության համար: Ժողովրդավարությունները հիմնվում են միասնության բացակայության վրա: Եթե իշխանու-

թյան համար մրցակցությունը փոքր է կամ բոլորովին չկա (իսկ ընտրություններին ցածր մասնակցությունը կարող է դրա նշանը լինել), ապա կարելի է ենթադրել, որ ինչ-որ բան կարգին չէ: Ընտրությունները նրա համար են, որ կռիվ տաս և հաղթես: Պատերազմները հաղթանակ են բերում ընտրություններում: Ուստի և՝ պատերազմի կռիվ է գնում:

Տեսություն 8.

Որքան ավելի ժողովրդավարական է երկիրը, այնքան մեծ է ներքին խաղաղության ավելցուկը, որը կարող է օգտագործվել արտերկրում պատերազմական կամ այլ բնույթի գործողություններ իրականացնելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, հիմնական ենթադրությունն այն է, որ ժողովրդավարությունների քաղաքացիներն առավել գոհ են, քան ոչ-ժողովրդավարական երկրների քաղաքացիները: Չէ՞ որ ակնկալվում է, որ նրանք, կամ առնվազն նրանց մեծամասնությունը, ժողովրդավարական գործընթացների շնորհիվ ստանում են իրենց ուզածը՝ համապատասխան հարմարեցումներով, եթե ցանկությունները փոխվում են: Քանի որ ժողովրդավարություններում հրապարակային քննարկումներ ավելի շատ են թույլատրված, քան ոչ-ժողովրդավարություններում, ապա դիտորդն առաջին հայացքից կարող է եզրակացնել, թե առաջիններում տիրում է համատարած դժգոհություն, իսկ վերջիններում՝ գոհունակություն: Մինչդեռ ժողովրդավարություններում բնակչությունն ունի բողոքելու հնարավորություն: Այս պատճառով պետք է ակնկալել, որ մարդիկ ժողովրդավարություններում հիմնականում ավելի պահպանողական են, քան ոչ-ժողովրդավարական երկրներում, և որ նրանց մոտ քաղաքական օրակարգում ավելի քիչ հիմնարար սոցիալական փոփոխություններ են դրված: Բռնության ներուժը ժողովրդավարություններում թեև զրոյի հավասար չէ, բայց, այնուամենայնիվ, փոքր է: Բռնապետություններում այն մեծ է, քանի որ ավելի շատ հարկադրանք պետք է գործադրել ինքնիշխան ճնշումներ իրականացնելու համար՝ նաև ընդվզումների դեմ:

Ու՞մ օգտին է այդ ներքին խաղաղության ավելցուկը, և ինչպե՞ս է այն օգտագործվում: 8-րդ տեսությունը չի պնդում, թե այդ ավելցուկն արտերկրում գործադրվում է պատերազմական նպատակներով, այլ ընդամենն ասում է, որ այն գոյություն ունի: Ընդհակառակը, ոչ-ժողովրդավարական երկրներն ունեն խաղաղության պակասորդ և հարկադրանքի իրենց էներգիան ստիպված գործադրում են երկրի ներսում: Եթե կանխադրենք բոլոր «ժամանակակից» պետություններում նման հարկադրանքի էներգիայի որոշակի քանակի գոյությունը, ապա կարող ենք եզրակացնել, որ ժողովրդավարությունների ներքին խաղաղության ավելցուկով պայմանավորված էներգիայի ավելցուկը կարող է գործադրվել արտաքին նպատակների համար, մինչդեռ բռնապետություններն ավելի շատ ներուղղվածություն պետք է ունենան՝ ջանալով ճնշել ներքին ընդվզումները: Ժողովրդավարությունները կարող են պատերազմական նպատակներով բանակներ ուղարկել արտերկիր և պետք է հոգ տանեն այն բանի համար, թե այդ ընթացքում ինչ կկատարվի տանը: Բռնապետություններն այդկերպ վարվելու ավելի նվազ հնարավորություններ ունեն. առկա ուժերը նրանց անհրաժեշտ են տանը: Մինչդեռ աշխատատեղի ապահովման

նպատակով ժողովրդավարական զինվորականությունը երբեմն նույնիսկ ինչ-որ բան պետք է ձեռնարկի, եթե տանը քիչ գործ է լինում:

Տեսություն 9.

> *Որքան ավելի ժողովրդավարական է երկիրը, այնքան ավելի ինքնավստահ[i] են նրա առաջնորդները/ժողովուրդը, իսկ որքան ավելի ինքնավստահ են առաջնորդները/ժողովուրդը, այնքան ավելի պատերազմող է երկիրը:*

Այս ենթադրությունը տարբերվում է այն մեկից, ըստ որի տրանսցենդենտ աստվածությունների կողմից իրենց ընտրյալ համարող ինքնավստահ ժողովուրդները սովորաբար ապրում են ժողովրդավարություններում: Այստեղ խոսքն այն մասին է, որ ժողովրդավարությունում ապրող մարդիկ ինքնավստահ են հենց այն պատճառով, որ ապրում են ժողովրդավարություններում: Եթե հիմք ընդունենք այն հանգամանքը, որ առաջատար քաղաքական համակարգը առաջատար երկրների համակարգն է, ապա ժողովրդավարությունում ապրելը պատվաբեր է: Ոչ-ժողովրդավարական երկրում ապրելը խարան է, մի բան, ինչի համար ստիպված ես ամաչել: Դա նշանակում է պատկանել միջազգային ոչ-արտոնյալ կաստային և պատրաստ լինել մարգինալացման՝ քաղաքական և տնտեսական բոյկոտի միջոցով, կամ նույնիսկ պատժամիջոցների: Հետևանքն այն է, որ մարդիկ փորձում են փախչել դրանից՝ ժողովրդավարությունների ենթադրյալ անվտանգության և հեղինակության մեջ իրենց մասն ունենալու ակնկալիքով:

Ժողովրդավարական կողմում միշտ էլ մեծ է պատրաստակամությունը հետևելու կոչին և փորձելու քաղաքական ու տնտեսական պատժամիջոցների օգնությամբ, անհրաժեշտության դեպքում նաև ռազմական միջոցներով, ճիշտ ճանապարհի բերել բռնապետություններին: Նման պատերազմն ավելի շատ պարտավորություն է դիտվում, քան իրավունք. չէ՞ որ պատերազմում ես ոչ թե եսասիրական նկրտումներով, այլ մյուս երկրները վտանգավոր, նվաճողական ինքնակալներից փրկելու համար: Մեկ այլ պատճառ է նման բռնատիրությունների պայմաններում տառապող մարդկանց օգնելու ցանկությունը: Իսկ այդ տառապյալներին աշխարհում ավելի շատ ականջալուր կլինեն այն դեպքում, եթե նրանք պատկանում են վերին շերտերին, ինչպես, օրինակ, սոցիալիստական ոչ-ժողովրդավարությունների զոհերին: Վերևում գտնվողներին ճնշելը կամ նույնիսկ սպանելը հանգեցնում է միջազգային համերաշխության. ստորին մակարդակում գտնվողներին ճնշելն ու սպանելն աննկատ են մնում: Այսպիսով, ժողովրդավարությունները պատերազմում են չարորակ բռնատիրությունների դեմ և դրանց վրա են արտապատկերում իրենց սեփական ճնշողականությունն ու նվաճողականությունը, ինչպես և միշտ արել են իրական ինքնավստահները:

---

[i] Հեղինակն այստեղ օգտագործում է *self-righteousness* տերմինը: *Self-righteousness*-ինքդ քեզ արդարացի համարելը, անկախ այն բանից՝ ուրիշներն ինչ են ասում կամ մտածում քո/քո արարքների մասին /թարգ./:

4.3 Ամփոփում. Ի՞նչ կարող ենք անել

Նախ տեսնենք, թե ինչ ունենք: Իբրև ժողովրդավարության (որպես ներքաղաքական գործելակերպի ձևի) և պատերազմողության (որպես արտաքին քաղաքական գործելակերպի ձևի) միջև հնարավոր կապող օղակներ՝ մենք քննարկեցինք 9 գործոն.

1. *անհատապաշտական, մրցակցային, ագրեսիվ մշակույթ,*
2. *այլոց հասցված վնասվածքներով հարուստ պատմություն,*
3. *համաշխարհային բուրգում բարձր դիրք,*
4. *իզոմորֆիզմ ներքին կառուցվածքի և աշխարհի կառուցվածքի միջև,*
5. *որոշումներ կայացման մասնակցային գործընթաց,*
6. *մարդու իրավունքների իրացում,*
7. *իշխանության համար ներքին պայքար,*
8. *ներքին խաղաղության ավելցուկ,*
9. *ինքնավստահություն՝ հանդիսանալով ժողովրդավարություն:*

Այս գործոնները հեշտությամբ փոփոխելի չեն:

Առաջին գործոնը վերաբերում է ներկայում ժողովրդավարություն կոչվող երկրների մեծամասնության ընդհանուր մշակութային հիմքերին: (Ճապոնիան տարբերվում է նրանով, որ կոլեկտիվիստական է, մրցակցային և ագրեսիվ:) Այդ մշակույթը հեռու է հանդուրժողականության մշակույթ լինելուց, բացառությամբ նույն մշակույթին պատկանող մյուսների, այսինքն, առաջին հերթին իրենց իսկ նկատմամբ: Խոսքը անհանդուրժողականության մասին է, որը հանգեցնում է Ես-ի և Այլոց միջև մեծ տարբերության, ինչը կարող է բռնության խողովակ դառնալ:

Երկրորդ գործոնը վերաբերում է այս աշխարհի այդքան շատ ժողովրդավարությունների համար հիմնարար ու ցավոտ երկընտրանքին. քանի որ նրանք առաջացել են խիստ ոչ ժողովրդավարական, բռնի ճանապարհներով, նրանք հիմա պետք է երկյուղեն, որ իրենց անցյալը մի օր իրենց կհասնի, որ «մյուսներն օրերից մի օր մեզ կպատճառեն այն, ինչ մենք ենք ժամանակին նրանց պատճառել»:

Հաջորդ երկու գործոններն արտացոլում են ներքին և աշխարհի հասարակությունում իշխանության և առանձնաշնորհների ներկա բաշխվածությունը: Թեև այդ բաշխումը երբեմն դառնում է քննադատական անդրադարձի առարկա, այդուհանդերձ, նորագույն պատմությունը ցույց է տվել, որ այն փոխելը հեշտ չէ: Այն հեշտությամբ բռնություն է մոբիլիզացնում՝ կանխարգելիչ, հեղափոխական կամ հակահեղափոխական բռնություն:

Հաջորդ չորս գործոնները՝ որոշումների կայացման մասնակցային գործընթացը, մարդու իրավունքների իրացումը, իշխանության համար ներքին պայքարն ու ներքին խաղաղության ավելցուկը, առնչվում են ժողովրդավարության սուբստանցին, ինչով նրանք ամենաշատն են հպարտանում: Ոչ ոք չի ուզենա այդտեղ ինչ-որ բան փոխել, չնայած այն փաստին, որ բոլոր չորսն էլ կարող են վերածվել պատերազմական վարքի մեխանիզմների: Մյուս կողմից

ժողովրդավարության այս սուբստանցից բխում է նաև ժողովրդավարությունների ինքնավստահությունը, «ժողովրդավարությունների դաշնությանը պատկանելու» զգացումը՝ պատերազմելու իրավունքով, նաև պարտականությամբ:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ թվարկված բոլոր ինը գործոնները ներքին պատմական/տրամաբանական կապակցվածություն ունեն: (1)-ից հետևում է (2)-ը, իսկ (2)-ից հետևում են (3)-ն ու (4)-ը: Սա մեզ տալիս է ժողովրդավարական աշխարհաքաղաքականությունը հասկանալու հիմքը, որոշակի պատմամշակութային ենթատեքստը և, ի հեճուկս ամենայն հռետորականության, ելակետը:

Հաջորդ չորս գործոններն իրար հետ մեկ այլ պատճառական կապակցության մեջ են, որն սկսվում է որոշումների կայացման մասնակցային գործընթացներով ու մարդու իրավունքների իրացմամբ, այնուհետև շարունակվում է իշխանության համար պայքարի և դրա ինստիտուցիոնալացման ընդունումով, որից, ի վերջո, ստացվում է խաղաղության ավելցուկ: Ժողովրդավարությունները հիմքեր ունեն հպարտ, բայց ոչ ինքնավստահ (9) լինելու, քանզի ինքնավստահությամբ ուժեղանում է (1) գործոնը: Այս կերպ կստանանք դրական մի հետադարձ կապ, որը հատկապես վտանգավոր է, քանի որ ամբողջ նշվածը կարող է փոխակերպվել պատերազմողության, մանավանդ ներկա աշխարհում ռասայական, ազգային և դասակարգային մարտահրավերների պատմականորեն որոշակի քննադատական հոլովույթում:

Եզրակացություն. ավելի շատ ժողովրդավարություններ՝ ավելի շատ պատերազմողություն. առնվազն, եթե վերջում նշված հինգ գործոնները առկա են: Եվ ներքին (OECD) և ներքնագույն (G-7) շրջանակը, եթե պակաս զորեղ և/կամ առավել երիտասարդ ժողովրդավարություններն սպառնան նրանց սեփական իշխանությանն ու սեփական առանձնաշնորհներին, հավանաբար, կխախտեն այն կանոնը, համաձայն որի ժողովրդավարություններն իրար վրա չեն հարձակվում: Մի բան, ինչը միանգամայն հնարավոր էր, ասենք, երբ Չիլին ընտրեց կոմունիստական (1973թ.)[7], կամ Ալժիրը՝ իսլամական (1992թ.)[8] ճանապարհը:

Ծանոթագրություններ

[1] Այս գլխի հիմնական թերահավատ միտումը ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվի իբրև առարկություն ընդդեմ ժողովրդավարության: «Ժողովրդավարությունները ոչ անհրաժեշտաբար են խաղաղասեր» դրույթից չի հետևում, որ «ոչ-ժողովրդավարություններն անհրաժեշտաբար խաղաղասեր են»: Եզրահանգումը կարող է լինել այն, որ խաղաղականությունն ու պատերազմողությունը կախված են այլ փոփոխականներից, ինչպես, օրինակ, խորքային մշակույթի (էքսպանսիոնիզմ, մանիքեականություն, եզակիականություն/համընդհանրայնություն), որոնք խոտորնակի են ժողովրդավարություն - ոչ-ժողովրդավարություն տարբերակմանը: Իսկ ժողովրդավարական իշխանությունն, անկասկած, մարդկության մեծագույն նորարարություններից մեկն է:

Հարցը շատ ավելի քիչ սկեպտիկ դիտակետից գերազանց ներկայացված է Բրյուս Ռասսեթի «Grasping the Democratic Peace» (Պրինսթոն 1993թ.) գրքում: Ռասսեթը հիմնվում է «Ժողովրդավարությունները միմյանց դեմ գրեթե երբեք չեն պատերազմում» ժողովրդավարական խաղաղության դրույթի թույլ մեկնաբանության վրա: Ես անգամ այդ տարբերակին չեմ հավատում: Ես երկյուղ ունեմ, որ եթե նրանք իրար դեմ չեն պատերազմում, ապա այն պատճառով, որ շատ ավելի կշահեն, եթե միասին լինեն՝

համաշխարհային համակարգում իրենց արտոնությունները պաշտպանելու նպատակով, քան եթե իրար դեմ պայքար մղեն: Բացի այդ, նրանց կարող են սպառնալ ներքևից (Երկրորդ աշխարհամարտ, ապագաղութացման պատերազմներ, Սառը պատերազմը), դա նպաստում է միասին լինելուն: (Մեթոդաբանորեն Ռասսեթը հակված է կենտրոնանալու երկրների զույգերի վրա՝ ընդսմին անտեսելով համատեքստը:)

Բացի այդ, ես չեմ կարող համաձայնվել այն տեսակետի հետ, թե Առաջին աշխարհամարտի սկզբին նախորդող տարիներին, մի կողմից, Գերմանիայի և, մյուս կողմից, Անգլիայի ու Ֆրանսիայի միջև մեծ տարբերություն է եղել: Ինչևէ, եթե դրույթը պիտի լինի այն, թե բնակչությունը զսպիչ ազդեցություն կարող է ունենալ տաքարյուն առաջնորդների վրա, ապա վճռորոշ կետն այն է, թե արդյո՞ք ժողովրդավարություն կլինի արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման մեջ: Մինչդեռ ճգնաժամերի ժամանակ, երբ ժողովրդավարության կարիքն ամենաշատը կա, հենց այս ոլորտն է, կարծես, միշտ խորհրդավոր կերպով քողարկված լինում:

Ռասսեթը լրջորեն չի զբաղվում գլոբալ ժողովրդավարությամբ, որն ինձ համար շատ ավելի խոստումնալից է: Ամեն դեպքում, դա ենթադրում է ինստիտուտներ, որոնք ներկայում տակավին գոյություն չունեն, օրինակ, Միացյալ Ազգերի ժողովուրդների՝ ուղղակի ընտրված վեհաժողով, որի առջև մի օր պատասխանատու լիներ Միացյալ Ազգերի Գլխավոր ասամբլեան, և այլն: Այս միտքը ես առավել զարգացրել եմ Գլոբալ կառավարման հանձնաժողովի համար պատրաստված մի նյութում, որը հանձնաժողովը նաև հրատարակել է:

Մի կետում ես համաձայն եմ Ռասսեթի հետ. ժողովրդավարությունները ավելի շատ են զբաղվում հասարակական կարծիքով: Բայց եթե ժողովրդավարություններն այլ ինչ-ինչ պատճառներով պատերազմողական տրամադրություններ ունենան, ապա նրանք, հավանաբար, հետ չեն կանգնի ռազմական գործողություններ սկսելուց, սակայն այս առնչությամբ կընտրեն «նվազ ուժգնության տարբերակները, որոնք ավելի քիչ տեսանելի են հանրության և զանգվածային լրատվամիջոցների անփորձ աչքերի համար: Փաստորեն, շատ ավելի ճշմարտանման վարկած է թերևս այն, որ ժողովրդավորությունը՝ հանրության քննադատությունից պրծնելու համար, փոխում է պատերազմի բնույթը, պատերազմներն ավելի լավ է քողարկում:

[2] Ամերիկայի Միացյալ Նահանգներն, անշուշտ, ընդհանուր առմամբ ժողովրդավարության հաջող օրինակ չէ: Նրա դեպքում խոսքն ավելի շատ պլուտոկրատիայի և մեդիակրատիայի (բայց նաև մեդիոկրատիայի) մասին է: Ընտրությունների համար թեկնածուներն առաջադրվում են հարուստների և/կամ հզորների կողմից (եթե իրենք անձամբ չեն), և հաղթողին հիմնականում որոշում է փողը, որ մեծամասամբ ծախսվում է հեռուստատեսային ապուշացնող գովազդաֆիլմերի վրա: Բայց և այնպես, ուժեղ, ժողովրդականություն վայելող ընդդիմության պատճառով Ռեյգանը չկարողացավ զորք մտցնել Նիկարագուա: ԱՄՆ-ը նախաձեռնեց և օժանդակեց Ալյենդեի՝ ժողովրդավարական ճանապարհով ընտրված կառավարության բռնի տապալմանը, բայց դա արեց ոչ թե բացահայտ կերպով, այլ ավելի շատ ԿՀՎ-ի՝ տրամագծորեն ժողովրդավարության հակադրության, քողարկված օպերացիայի միջոցով: Ժողովրդավարությունը բաց է՝ նշանակում է հրապարակային քննարկումներ, նշանակում է ոչինչ չթաքցնել, մինչդեռ ԿՀՎ-ն գործում է ծածուկ, ընդսմին անտեղյակ պահելով կամ միտումնավոր ապատեղեկացնելով հանրությանը: Բացի այդ, նախագահական ընտրություններում մոտ 50 տոկոս (միջանկյալ /mid-term/ ընտրություններում այդ ցուցանիշն ավելի ցածր է) մասնակցության փաստը լրջորեն առաջ է քաշում ղեկավարության ժողովրդավարական օրինականության հարցը: Իր առաջին պաշտոնավարության ժամանակ Ռեյգանին պաշտպանել էր ընտրազանգվածի 27 տոկոսը, երկրորդ պաշտոնավարության ժամանակ ստացել էր 31 տոկոս ձայներ: Եվ այդ տարբերությունն անվանեցին վճռակա՛ն փոփոխություն:

[3] Տեղական պատերազմների վերաբերյալ Իշտվան Քենդեի ուսումնասիրությունները դա են ասում: Տե՛ս՝ Istvan Kende: *"Twenty-five Years of Local Wars"*, in: *Journal of Peace Research,* 8/1971թ., էջ 5-22, և. *"Wars of Ten Years (1967-1976)"*, in: Journal of Peace Research, 15/1978թ., էջ 227-241:

[4] Կարևորագույն անդամներն էին ԱՄՆ-ը, Կանադան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Թուրքիան, Եգիպտոսը, դրան ավելացրած՝ Սիրիան, Սաուդյան Արաբիան և Պարսից ծոցի պետությունները, բացառությամբ՝ Եմենի: Կոալիցիայի զինված ուժերում անմիջապես մասնակցել է ընդհանուր առմամբ 38 պետություն, չորս պետություն օժանդակել է (Խորհրդային Միություն, Գերմանիա, Իսրայել, Ճապոնիա), երկուսը չեզոք էին (Իրան, Լիբանան): Ագրեսորին (Իրաք) օժանդակում էր յոթ պետություն՝ Ալժիր, Հորդանան, Լիբիա, Մավրիտանիա, Սուդան, Թունիս, Յեմեն: Ինչպես էլ որ ժողովրդավարությունը սահմանենք, այդուհանդերձ, գոյություն ունի մի հստակ փոխհարաբերակցություն կոալիցիայի օժանդակության և ժողովրդավարական սահմանադրության միջև: Արդյունքը ազատագրված Քուվեյթն է և 310 հազար սպանված իրաքցիները (ըստ IPPNW-ի տվյալների):

Սրանից որոշ մարդիկ կամենում են եզրակացնել, թե ժողովրդավարությունները խաղաղասեր են և հանուն խաղաղության պահպանման կամ վերահաստատման պատրաստ են զոհողությունների: Բայց այստեղ առաջարկվող եզրահանգումն ավելի շատ կկենտրոնանա պատերազմի հնարավորությունը «խաղաղ միջոցներով խաղաղության» հնարավորությունից գերադասելու, ավելի շուտ եղած վիճակը, քան խաղաղությունը պահպանելու պատրաստակամության վրա: Ամեն դեպքում, երկու մեկնաբանությունների համար էլ տեղ կա: Այստեղ ընտրվածից տարբերվող մեկ այլ հեռանկարի համար հմմ՝ Jeffrey Ian Ross: *"Research Note: Hypotheses About Political Terrorism During the Gulf Conflict, 1990-1991"*, in: *Terrorism and Political Violence*, 6/1994թ., էջ 224-234:

[5] Այդ երեք փուլերը հիանալի բացահայտված են Բերթ Ռոլինգի կողմից, հմմ.՝ B.V.A. Röling, Antonio Cassese: *The Tokyo Trial and Beyond,* Օքսֆորդ 1993թ., գլուխ 4. *'A "Miserable International Law"?'*, էջ 133 և հետո:

[6] Ասվածի համար օրինակ կարող է ծառայել 1994թ. Ռուանդայում թուցիներին կոտորելու՝ հուտուների արած կոչի ձևը ռադիոյով, նախագուշակելով, որ թուցիները վրեժ կլուծեն, եթե բոլորը չկոտորվեն:

[7] Սրան է վերաբերում Հենրի Քիսինջերի՝ ժամանակին մի ժողովրդավարության՝ ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարի, հայտնի մեջբերումը. «Ես չեմ հասկանում, թե մենք ինչու պետք է ձեռքներս ծալած նստենք և նայենք, թե ինչպես է ինչ-որ երկիր անցնում կոմունիզմի՝ սոսկ իր սեփական ժողովրդի անպատասխանատվության պատճառով»: The Nation-ի 1994թ. մարտի 28-ի համարը (ԿՀՎ-ի վերաբերյալ մի հոդվածում): Այս նախադասության հռչակին նպաստեց նաև այն, որ ԿՀՎ-ի կողմից գրաքննության էր ենթարկվել Վիկտոր Մարչետտիի և Ջոն Դ. Մարկսի *"The CIA and the Cult of Intelligence"* գրքի (Նյու Յորք 1974թ.) առաջին հրատարակության մեջ:

[8] 1991թ. դեկտեմբերի 26-ին կայացած առաջին խորհրդարանական ընտրություններում Իսլամական փրկության ճակատը (FIS) ստացավ 188, իսկ Ազգային ազատագրության ճակատը (FNL)՝ ընդամենը 15 տեղ՝ 30 տարի իշխելուց հետո: Երկրորդ փուլը նշանակվել էր 1992թ. հունվարի 16-ին, բայց չկայացավ, և աշխարհի առաջատար ժողովրդավարությունների կողմից առանձնապես մեծ բողոքներ չհնչեցին:

5
Պետական համակարգը՝ դիսոցիացված, ասոցիացված, համադաշնային, դաշնային, ունիտար, թե՞ անհույս բան է

5.1 Մարդկային պայմանի (conditio humana) տաս բաժանարարները

Մենք՝ մարդ էակներս, բնության՝ «հողագնդի» մասն ենք, որից սերում ենք և որին՝ կրկին վերադառնում: Ինչպե՞ս կարող է այդ մարդ-բնություն ամբողջությունը (*holon*) գտնվել ներդաշնակության մեջ՝ զերծ ուղղակի և կառուցվածքային բռնությունից. գուցե միայն որպես մարդկային կոլեկցիոներների փոքրիկ խմբե՞ր (ոչ որպես որսորդներ, քանզի նրանք ուղղակի բռնություն են կիրառում իրենց մերձավոր էակների նկատմամբ)՝ բավարար չափով առատաձեռն բնության հոլովույթում:[1] Մեր ներկա իրականությունը դրանից շատ ու շատ հեռու է: Վերլուծական մոտեցում ցուցաբերելիս հարկադրված ենք նույնիսկ նկատի ունենալ, որ այդ մարդ-բնություն ամբողջության միջով անցնում են առնվազն տասը բաժանարարներ՝

մարդիկ - ոչ-մարդիկ, սեռ (տղամարդ - կին), սերունդ (երիտասարդ - ծեր), ռասա (սպիտակամորթ - գունամորթ), դասակարգ (վերին - ստորին), ազգ (բարձրակարգ - ցածրակարգ), երկրներ (կենտրոն – ծայրամաս), այնուհետև՝ պետություն-քաղաքացիական հասարակություն-կապիտալ եռանկյունու երեք անկյունները՝ թե՛ հասարակական, թե՛ համաշխարհային մակարդակում:

Տեսակապաշտություն, սեռախտրություն (հայրիշխանություն), տարիքախտրություն (կամ գերոնտոկրատիա), ռասիզմ, դասակարգախտրություն, ազգայնականություն, տարածքականություն, պետությունապաշտություն, անարխիզմ, կապիտալիզմ և գերպետությունապաշտություն (իմպերիալիզմ) հասկացությունները, որոշ պարզաբանումների հավելումով,[2] հստակորեն պարունակում են ինչպես ուղղակի և կառուցվածքային, այնպես էլ մշակութային բռնության զուգանշանակություններ: Հաջորդականությունն արտացոլում է մարդկային պայմանի էվոլյուցիան. նախ ոչ-մարդկայինը (աբիոտներ և բիոտներ, որոնք բաժանվում են միկրոօրգանիզմների, բույսերի և կենդանիների), այնուհետև՝ երկու սեռերի մարդիկ, որոնք բազմանում են սերնդե-սերունդ և որոնք, ըստ ամենայնի, հայտնվում են տարբեր վայրերում որպես տարբեր ռասաներ. ապա հետևում են դասակարգային տարբերությունները, դառնում են քոչվոր՝ նախ ոչ-նստակյաց, այնուհետև՝ նստակյաց հովիվ ներսահմաններ ունեցող տարածքներում. ապա գալիս է պետությունը որպես տարածքային իշխանություն, որը նախ իշխում է որոշակի մի տարածքում ոչ-պետության վրա և, այնուհետև, որպես գերպետություն՝ այլ պետությունների վրա:

Ներկայիս տարածքային համակարգը բաղկացած է պետություն ունեցող երկրներից, որտեղ ապրում են նույն ազգության մարդիկ, ազգ-պետությունն-

ներ՝ կամ առնվազն իշխանության վերին օղակներում: Ամենուրեք բաժանարարներ, հակասություններ, *ին/յան*: Վերլուծության ժամանակ գերապատվությունը տարածքայնությանը տալը՝ մնացած ինը հասկացությունների հաշվին, ոչ միայն կհանգեցնի անակնկալների, եթե հնարավոր չլինի այլևս անտեսել ուրիշ բաժանարարների սոցիալական շինարարությունը,[3] այլ նաև մտավոր տեսանկյունից պարզապես խիստ պարզունակ կլինի: Հնարավոր չէ աշխարհը պատկերացնել պարզապես որպես երկրների հանրագումար: Բայց եթե մեր հայացքն, այնուամենայնիվ, նախ կենտրոնացնում ենք տարածքականության և խաղաղության վրա, ապա դա առաջին հերթին ունի մանկավարժական պատճառներ. խաղաղության և պատերազմի բառապաշարը զգուշությամբ պետք է դուրս հանել տարածքային քննարկումներից:

Խաղաղության հետազոտության հիմքում ընկած դասոսիստական իմացաբանությունը մեզ շարժման, դինամիկայի զգացում է հաղորդում: Կայունություն, որի դեպքում *ինն* ու *յանը* միատեղվում են ներդաշնակության մեջ, հնարավոր է. այդ դեպքում դինամիկայի կրողներ են հանդիսանում այլ հակասություններ: Ներդաշնակություն ստեղծելու փորձի ձախողումը երևան է գալիս մի կողմի աճով և մյուսի նվազումով, մինչև բանը հասնի բեկման՝ շրջադարձի, որի դեպքում դասավորությունը շրջվում է, և ներդաշնակության հասնելու մի նոր ձգտում է սկսում: Որոշակի ձևով այդ բեկումը կարող է նշանակել պատերազմ, հեղափոխություն, պետական հեղաշրջում (coup d'etat), իսկ ներդաշնակությունը՝ նոր հանրային պայմանագիր:

Եթե ներդաշնակությունը սահմանենք որպես ուղղակի և կառուցվածքային բռնության բացակայություն, ապա այդ դեպքում ինչպե՞ս կարող է պետությունների ներկայիս համակարգը՝ ժամանակակից տարածքային համակարգը, վերածվել խաղաղության, կամ գոնե պակաս բռնական համակարգի: Որոշ պատասխաններ (թերևս ավելի շուտ անհրաժեշտ, քան բավարար պայմաններ) այս գլխում կտրվեն ավելի ուշ. պատասխաններ, որոնք տարածքականության վերլուծական սահմանափակումների հաղթահարման նպատակով կներմուծեն նոր հակասություններ և ներդաշնակություններ:

5.2 Խաղաղության դիսոցիացված և ասոցիացված համակարգեր

Գոյություն ունեն երկու ավանդական պատասխաններ. երկրները տարածապես իրարից առանձնացնել հեռավորության (ծովեր, անապատներ), խոչընդոտների (գետեր, լեռներ) կամ սպառնալիքների (պաշտպանվելով կամ հարձակվելով վախեցնել) միջոցով, կամ մերձեցնել իրար՝ տարածական առումով հաղթահարելով հեռավորություններն ու խոչընդոտները փոխադրումների և հաղորդակցության, իսկ սոցիալական առումով՝ համագործակցության միջոցով: «Իրարից» և «իրար հետ» ասելով, նկատի ունենք *դիսոցիացիոն* և *ասոցիացիոն* մոտեցումները: Սառը պատերազմի տարիներին դրանք քաջ հայտնի էին որպես բազեական և աղավնիական մոտեցում Արևելք-Արևմուտք հարաբերություններում:

Առաջին խորհրդածությունը, թերևս, այն է, որ դիսոցիացված մոտեցումները գնալով ավելի անէական են դառնում, քանզի փոխադրումների և հաղորդակցության շնորհիվ հեռավորություններն ու խոչընդոտները հետզհետե վերանում են: Բայց որպես փոխհատուցում կարող են օգտագործվել սպառնա-

լիքները՝ դառնալով սպառազինման պարույրի ծավալման պատճառ: Ընդսմին սոցիալական դիսոցիացիան վերաբերմունքի տեսանկյունից ներկայանում է նախապաշարմունքների, իսկ վարքի տեսանկյունից՝ խտրականության միջոցով՝ իբրև մի լուրջ դասակարգի ձևավորում, որ նպատակ ունի բազմազգ պետություններում և կայսրություններում «վտանգավոր ներքնախավերին» ահի մեջ պահելու: Տարածական դիսոցիացիան հորիզոնական է և համերաշխ է համաժամանակյա էվոլյուցիայի հետ: Սոցիալական դիսոցիացիան ուղղաձիգ է և դասակարգային կամ կաստայական ուղղորդվածություն ունի, ուղղաձիգ կառուցվածքային բռնություն է, ասենք՝ իր բնակչությանը ճնշող պետություն, կամ այլ պետությունների ճնշող գերպետություն, կամ թե՛ մեկը, թե՛ մյուսը:

Տարածական դիսոցիացիայի դեպքում ուղղակի բռնության կիրառման որոշ հավանականություն կա, եթե դուրս մնան կամ չգործեն հեռավորությունը, խոչընդոտները կամ սպառնալիքները: Հասարակական դիսոցիացիան հիմնվում է կառուցվածքային բռնության վրա, որը կարող է ծնել առաջնահերթ իրավունքի, հեղափոխական կամ հակահեղափոխական բռնություն: Սրանք բավարար հիմքեր են պետությունների համակարգում ներդաշնակության և խաղաղության որոնման ժամանակ դիսոցիացիան անբավարար դիտարկելու համար:

Բայց մենք կարող ենք դիսոցիացիան պատկերացնել որպես չեղած տեղը *(in vacuo)* լուծում: Եթե չգիտենք, թե ինչպիսին կարող է լինել հիմնականում դրական փոխանակումների մեջ գտնվող պետությունների միջև ներդաշնակ հարաբերությունը, իսկ մենք չենք ուզում բացասական փոխանակում, այսինքն՝ աններդաշնակություն և բռնություն, ապա առնվազն կարող ենք գոհանալ հարաբերության բացակայությամբ: Ներդաշնակության կամ դրական հավասարակշռության հասնելու անկարող զույգը, խորհելով, թե գործնականում որքան բարդ ու բազմաշերտ է մարդու ձգտումը մարմնի, մտքի և հոգու ներդաշնակության, թերևս, ավելի հեշտ համակերպվի կապի բացակայությանը (բաժանում, ամուսնալուծություն), քան հոգևոր բռնությանը (օրինակ՝ զայրույթով լեցուն ներքին երկխոսություններ), խոսքային բռնությանը և անգամ հայրիշխանական հասարակության սովորական կառուցվածքային և մշակութային բռնությանն ավելացող հոգեկան բռնությամբ լեցուն բացասական կապին:

Սակայն դիսոցիացված խաղաղությունը լավագույն դեպքում ինչ-որ պատասխան է բացասական խաղաղության (բռնությունից զերծ համակարգի) հիմնախնդրին: Դրական խաղաղություն ասելով հասկանում ենք «պասիվ խաղաղ համագոյակցությունից» անդին համագործակցության համակարգ, խաղաղություն, որ բերում է ներդաշնակության դրական փոխլրացնող պտուղներ: Պետությունների որոշ խմբի համար դա կհանգեցնի շարունակականության՝ ամբողջական բաժանումից՝ դիսոցիացիայից, ընդհուպ մինչև ասոցիացիա: Մարդկային զույգի համար լիակատար միությունը (մարմնի, մտքի և հոգու) երջանկության բարձրագույն պահերում է, որ կապվում է սեռական միավորման հետ՝ մասնակի իրականացման բոլոր միջանկյալ վիճակներով հանդերձ: Հարկ չկա հատուկ հիշատակելու, որ ասոցիացիացվածի-ներդաշնակի-սիմբիոտիկի մեջ նաև կարող են պարունակվել բացասականի՝ դիսոցիացվածի-աններդաշնակի-հակաբիոտիկի տարրեր: Մենք խոսում ենք հավասարակշռության մասին: Իսկ լիակատար միությունը, թերևս, հնարավոր չէ պահպանել, քանի որ այն չափազանց ինտենսիվ ու չափազանց նեղ է՝ ան-

ցողիկ բարձրագույն պահերից ավելին լինելու համար: Ինչպես հետագայում կտեսնենք, սա, հավանաբար, վերաբերում է նաև պետությունների համակարգին:[4]

5.3 Ասոցիացիայի հինգ մոդել. զրույից դեպի միություն

Ստորև կհետազոտենք շարունակական ասոցիացիայի հինգ աստիճանները՝ պետությունների *դիսոցիացված, ասոցիացված, համադաշնային, դաշնային և ունիտար* համակարգերը, ընդ որում, վերջին երեքը ներկայացնում են ասոցիացիայի առաջընթաց ձևերը:

Պետությունների դիսոցիացված համակարգ՝ անարխիա/ստորակարգություն (հիերարխիա): Յուրաքանչյուր երկիր հոգում է իր սեփական խնդիրները՝ առանց ներհատուկ ասոցիատիվ կապերի: *Դա չի նշանակում հոբսյան պատերազմ բոլորը բոլորի դեմ*, եթե, անշուշտ, դրա համար առանձնահատուկ հասարակական և մշակութային նախադրյալներ չկան: Փոխադարձ մեկուսացում, ընդհուպ մինչև հարաբերությունների բացակայություն, ոչ միայն հնարավոր է, այլ էմպիրիկ առումով դա է հիմնականում գերիշխել մարդկության պատմության ընթացքում: Բայց ներկայում մենք այնքան շատ ենք, այնքան խիտ ենք ապրում իրար հետ կողք-կողքի և ստեղծել ենք երթևեկության ու հաղորդակցության այնպիսի խիտ ցանցեր, որ հնարավոր չէ հոգ տանել սեփական խնդիրների մասին՝ առանց մտնելու ուրիշների բոստանը: Բայց չի կարելի սկզբից նեթ հիմք ընդունել, որ դրանից անհրաժեշտաբար պատերազմ պիտի հետևի, ինչպես հաճախ կարելի է հանդիպել «Միջազգային հարաբերություններ» առարկայում: Բայց քանի որ գոյություն ունի իշխանության ռեսուրսների ասիմետրիկություն, ապա *անարխիան* կարող է իր հետ բերել *ստորակարգության* տարրեր, այն է՝ կառուցվածքային բռնություն (ինչը չի նշանակում այն, թե ինչ են մտածում Հոբսը և ժամանակակից հոբսականները)՝ ուրիշներին շահագործելու, ճնշման ենթարկելու և վերահսկելու ձևով:

Պետությունների ասոցիացված համակարգեր՝ պայմանագրեր, կոնվենցիաներ, ռեժիմներ/կարգեր, կազմակերպություններ: Պետությունների համակարգը հասարակական համակարգ է, որտեղ դերակատարները փոխհարաբերվող պետություններն են: Որպեսզի դա համակարգ դառնա, պետք է ներդրվի որոշակի կայունություն: Պայմանագրերն ու կոնվենցիաները կոչված են օժտելու այդ համակարգը մի շարք փոխպարտավորեցնող նորմատիվային ակնկալիքներով: Ամեն մի հասարակական համակարգ նման ակնկալիքների կարիք ունի, դրանք ծառայում են աշխարհը կանխատեսելի դարձնելուն, «այդպես է արվում», «մենք միշտ այդպես ենք արել», «հիմա մենք այլ կերպ կանենք»:

Աշխարհն սկզբունքորեն ավելի կայուն է դառնում, երբ Ես-ն ու Ուրիշը՝ Էգո-ն ու Այլը, կապվում են նորմատիվային համակարգով (բայց ոչ անպայմանորեն սակավ բռնական, *վենդետտան* նույնպես նորմատիվային համակարգ է): Սակայն նորմերի միջոցով որոշակի գործելակերպ ոչ միայն սահմանելու, այլ նաև կանխատեսելու հնարավորություն ունենալու համար դրանք պետք է յուրացված լինեն մշակութային համակարգի ներսում («ես ղեկա-

վարվում եմ նորմով, որովհետև դա ճիշտ է») և/կամ (գերադասելի է *և*-ը) ինստիտուցիոնալացված լինեն սոցիալական կառուցվածքում («ես ղեկավարվում եմ կարգով, քանի որ հույս ունեմ, որ դրա համար վարձ կստանամ կամ որովհետև վախենում եմ պատժվելուց, եթե չղեկավարվեմ դրանով»): Պայմանագրերն ու կոնվենցիաները նորմատիվային, խրախուսական կամ պատժիչ իշխանությամբ (հարկադրանքով) ներդաշնակություն հաստատելու երկկողմ և բազմակողմ ջանքեր են: Համընդհանրական կոնվենցիաներում ընդգրկված են (գրեթե) բոլոր պետությունները. սրան մեծապես նման է Միացյալ Ազգերի համակարգն ընդհանրապես, նրա խարտիան և Մարդու իրավունքների ընդհանուր հռչակագիրը՝ մասնավորապես:

Ի՞նչ պայմաններում պայմանագրերն ու կոնվենցիաները կարող են նպաստել խաղաղության հաստատմանը: Քննարկումներում հաճախ առաջին նախադրյալ է համարվում «ընդհանուր օգուտը». դրա բացասումը կնշանակի «անհավասար պայմանագրեր»՝ ստորակարգության հարաբերությունների սառեցման հնարավորություն՝ պատերազմում հաղթողների և պարտվողների միջև ստորակարգությամբ հանդերձ՝ իբրև հատուկ դեպք: Վերսալի պայմանագրի նման պայմանագիրն, այնուհետև, սխալաբար կանվանեն «հաշտության պայմանագիր», թեև ավելի հարմար կգային «զինադադար», «պատերազմի ավարտ» կամ «կառուցվածքային բռնություն» անվանումները:

Մենք *սիմբիոզ* հասկացությունն այստեղ կգործածենք մոտավորապես իբրև «ընդհանուր օգուտ», այն է՝ բոլոր մասնակիցներն ինչ-որ բան շահում են դրանից, ինչը կարող է հիմք հանդիսանալ, որ մտնեն պայմանագրի կամ կոնվենցիայի մեջ՝ ոչ միայն բանակցելով, այլ նաև վավերացնելով՝ օգտագործելով ներսում իրենց տրամադրության տակ եղած գործընթացները:

Բայց մենք կավելացնենք մի երկրորդ նախադրյալ ևս՝ *արդարությունը, արդարացիությունը*: Ներդաշնակություն հաստատելու համար բավական չէ, որ երկու կողմերն էլ «մի բան» շահեն, այսինքն, որ երկուսից ոչ մեկն ավելի վատ վիճակում չհայտնվի, քան մինչ այդ: Համաձայնությունը պետք է արդար լինի, ոչ-շահագործողական, այնպես որ երկուսն էլ դրանից մոտավորապես նույնը շահեն: Միայն այս դեպքում կարող ենք ենթադրել խաղաղարար ազդեցություն, այն էլ՝ միայն իբրև վարկած:

Պայմանագրային կամ կոնվենցիոնալ աշխարհը կարող է լինել համընդհանուր կամ մասնակի, վերաբերել ամբողջ աշխարհին կամ աշխարհի առանձին հատվածներին, որևէ տարածաշրջանի, ընդ որում, երկկողմ համաձայնության ձգտող զույգը նվազագույն միավորն է: Բայց վերջինս պահպանում է պայմանագրի կամ կոնվենցիայի՝ փոխադարձ ակնկալիքները սահմանող համապատասխան «որոշակիությունը»: Եթե վերադառնանք մարդկային զույգերի հետ համեմատությանը, ապա մենք հիմա գտնվում ենք գործընկերների կամ հարևանների՝ բավականին յուրօրինակ հարթության վրա:

Հիմնվելով ասվածին՝ այժմ կարող ենք շարունակել երկու ուղղությամբ՝ հարաբերություններն ավելի ամուր և/կամ ավելի ցրված տեսանկյուններով ավելի հարուստ հիմքերի վրա դնելով: Որևէ *ռեժիմի* կողմից պայմանագրերի կամ կոնվենցիաների համակարգը ինստիտուցիոնալացվում է նրանով, որ խրախուսանք և պատիժներ են ներառվում: Իսկ *կազմակերպությունը* թեմաների և խնդիրների մի լայն դաշտ է կարգավորում: *ՄԱԿ-ի համակարգի* միջոցով փորձ է արվում անդամ-պետությունների առավելագույնով հասնել համընդհանրության. շատ ցրված ձևով, որովհետև կառուցված և միաժամանակ ամուր ինստիտուցիոնալացված է թեմաների կամ խնդիրների մի մեծ քա-

նակության շուրջ: Բնականաբար, հարցականի տակ է ոչ միայն այդ համակցության իրագործելիությունը (այդ երեք ասպեկտների միավորելիությունը), այլ նաև դրա ցանկալիությունը: Բան է, եթե հարկադրանքը՝ ուղղակի բռնության կիրառումը, դառնա կանոնների պահպանման համար հիմնական խթանիչ ուժը, ապա մենք, անշուշտ, խաղաղություն հաստատելու ուղու վրա չենք:[5] Սակայն, խաղաղության ուսումնասիրությունների խնդրո առարկան, ինչը նաև մեր ելակետն էր, *խաղաղ*, ոչ թե բռնի *միջոցներով խաղաղություն հաստատելն* է:

Ի՞նչ պայմաններում են կազմակերպությունները կամ ռեժիմները խաղաղաշեն դառնում: Ի՞նչ կարող ենք ավելացնել սիմբիոզին և արդարությանը:

Երրորդ. կուսակցությունների *բազմազանություն*: Եթե ցանկանում են ցրված հարաբերություն, այսինքն, եթե համագործակցությունը պետք է ներառի չափերի, թեմաների և հարցադրումների բազմազանություն, ապա մասնակիցները պետք է ներդնեն զանազան ակտիվներ ու ռեսուրսներ, այլապես փոխադարձ օգուտը սահմանափակ կլինի: Բնության մեջ բազմազանությունը սիմբիոզի նախադրյալ է, իսկ երկուսը միասին հանգեցնում են էկոլոգիական ճկունության:

Չորրորդ պայմանը *հոմոլոգիան* է: Նրանք պետք է գտնեն իրար, այսպես ասած, ներխուժեն իրար մեջ: Զույգերի մեր փոխաբերության առումով մենք դրանով գործընկերների և հարևանների միջև հարաբերություններից միանշանակորեն անցում ենք կատարում ընկերների միջև հարաբերություններին, և այդտեղ պետք է լինեն համատեղ շահեր և միաժամանակ՝ տարբերություն: Պետությունների միջև համագործակցություն ձևավորվելու համար A պետության ամեն մի բնագավառ պետք է իր նմանակը գտնի B պետության մեջ: Ուստի և, դա խնդիր չէ, քանի որ պետություններն այսօր նույն հիմնամոդելով են կառուցված (իշխանության եռաբաժանում, ընդ որում, գործադիրը մոտավորապես նույն եղանակով է բաժանված նախարարությունների, և այլն):

Հինգերորդ՝ *հակամարտության ստեղծագործական լուծում*: Հակամարտությունները նախապես ծրագրավորված են, այն էլ՝ ոչ միայն կողմերի (քննարկումներ), այլ նաև նրանց նպատակադրումների և թեմաների (երկընտրանքներ) միջև, ընդհանրապես չխոսելով երկուսի համակցման մասին: Իրական հակամարտությունների ժամանակ բանը երբեք երկու կողմերի միջև խնդիրը չէ. այն շատ ավելի բարդ է: Բայց դրա շնորհիվ, մյուս կողմից, ներկայանում են հակամարտության ստեղծագործական կարգավորման ավելի շատ առիթներ, որովհետև կան երկու, երեք կամ շատ ավելի վիճելի կետերի վերաբերյալ երկկողմ, եռակողմ, քառակողմ և այլն փոխանակային գործարքների հնարավորություններ: Այսպիսով, կունենանք երկու ենթապայման.

- *ոլորտը*՝մասնակիցների թիվը (m), պետք է երկուսից բարձր լինի,
- *ծավալը*՝վիճելի հարցերի թիվը (n), պետք է մեկից բարձր լինի:

Վեցերորդ, *դրական համաձայնության մեխանիզմներ*, այսինքն, պատիժների, հարկադրանքի ոչ մի կամ նվազագույն կիրառում: Կանոնները հիմնականում պետք է պահպանել, հակառակ դեպքում ասոցիացիան չի աշխատի: Լավագույն տարբերակը ներքին համոզմունքից եկող համաձայնությունն է, այլ կերպ ասած՝ համակվածությունը: Անձնական մակարդակում դա նշանակում է ունենալ մաքուր կամ անմաքուր խիղճ: Մինչդեռ երկրները, այսինքն,

պետություն ունեցող և մենազգ կամ բազմազգ բնակչությամբ տարածքները չափից ավելի ինքնավստահ են կոլեկտիվ անմաքուր խիղճ երևան հանելու համար, բացառությամբ, միգուցե, ինչ-ինչ ծայրահեղ հանգամանքների (Գերմանիան՝ Երկրորդ աշխարհամարտից հետո՞): Նրանք, մյուս կողմից, կարող են, և ինչը հաճախ այդպես է, կոլեկտիվ կերպով խիստ համոզված լինել իրենց վրա, ցավոք, հաճախ այնպիսի պատճառներով, որոնք մյուսներին հասկանալի չեն: Այնուհետև, կա խրախուսման հնարավորությունը (դրականորեն ինստիտուցիոնալացված փոխհամաձայնություն), այսինքն, համաձայնություն չտալու համար պատժի վրա կենտրոնանալու փոխարեն, խրախուսվում է համագործակցությունը: Այլ բառերով ասած, դրական սանկցիաներ, եթե փոխանակումն, օրինակ, իսկապես ծառայում է երկուսի օգտին էլ:

Յոթերորդ՝ *վերիմացություն (տրանսցենդենցիա)*: Պետք է կոնկրետացվի այն պատկերացումը, որ ասոցիացիան ավելին է, քան իր անդամ-պետությունների գումարը (ավելի ճիշտ՝ քանակը): Դա կարող է տեղի ունենալ այդ նպատակով պարբերաբար կազմակերպվող համաժողովների տեսքով կամ ինստուտուցիոնալացված քարտուղարության միջոցով, որտեղ աշխատակիցների շտաբը կպաշտպանի ասոցիացիայի շահերը: Նման համաժողովի կամ քարտուղարության խնդիրը սահմանված է նախորդ վեց կետերով:

Այսպիսով, այդ նույն վեց կետերը հատկանշում են հասուն ասոցիացված համակարգ, որը հիմնվում է սիմբիոզի և բազմազանության վրա: Դրանով մենք ակնհայտորեն ներկայացնում ենք հնարավորությունների մի ամբողջ շրջանակ, որը տարածվում է սահմանային գետում ձկնորսության մասին պայմանագրերից մինչև ՄԱԿ-ի ողջ համակարգը, իսկ ենթատիպաբանություններ մենք արդեն ակնարկել ենք: Այս հարացույցի ներսում կարելի է ստեղծել շատ ներդաշնակություն և խաղաղություն:

Պետությունների համադաշնային համակարգ: Ո՞ր կետին ենք մենք հիմա հասել: Ինչպե՞ս տարբերել համադաշնային համակարգը՝ համադաշնությունը, պետությունների կազմակերպությունից, որի պարագայում հաջողությամբ իրականացվել են վերոնշյալ յոթ հիմնական սկզբունքները: Սա վճռորոշ հարց է և այն հիմնական պատճառներից մեկը, թե ինչու է այս քայլն ավելի կարևոր, քան պայմանագրի և կոնվենցիայի, ինչպես նաև կազմակերպության միջև տարբերությունը, ինչպես քիչ առաջ քննարկեցինք: Ուստի, այս հարցին մոտենանք վերստին դիմելով զույգի փոխաբերությանը:

Մենք հետամուտ եղանք, թե զույգն ինչպես էր շարժվում հարաբերության բացակայության վիճակից (դիսոցիացիա) գործընկերներ/հարևաններ հարաբերության վրայով դեպի ընկերություն (ասոցիացիա), ընդ որում՝ կապի նկատմամբ պարտավորվածության զգացումը շարունակ աճել է: Բայց համադաշնային փուլում նրանք այլևս «միայն ընկերներ» չեն: Նրանք դիտվում են որպես զույգ: Սա մշտականության առավել բարձր մակարդակ է, չնայած նրանք միշտ էլ դեռ կարող են բաժանման վճիռ կայացնել: Իրենց հարաբերությունը նրանք դիտում են ավելի շուտ որպես ինքնին ամուր, քան որպես պետությունների ամբողջ համակարգում ինստիտուցիոնալացված: Զույգի մակարդակում համապատասխան մոդելն այսօր կլիներ «կենակցումը», «մենք ենք որոշում, ոչ թե՝ հասարակությունը»:

Նման վճռի հետևում ավելի խոր հարաբերություններ են կանգնած, քան համատեղելի շահերի վրա հիմնվող գործընկերներ/հարևաններ ռացիոնալությունը: Անվանենք դա սեր: Իսկ հարաբերությունը նաև շատ բազմաշերտ է,

ընդգրկում է բազմաթիվ ոլորտներ, և, ինչը շատ կարևոր է, ասպարեզն անսահմանափակ է, *համագործակցության համար սահմաններ չկան*: Գոյություն չունի կողիֆիկացում, որ կսահմաներ փոխադարձ համագործակցության ոլորտները և դրանով անէական և նորմատիվային տեսանկյունից նշանակություն չունեցող հայտարարեր մյուս բոլոր բնագավառները: Համադաշնության մեջ ամեն բան կարող է լինել համագործակցության առարկա: Բացի այդ, *յուրաքանչյուր մասնակից ակնկալում է, որ համապատասխան մյուսն իրեն կվերաբերվի որպես համագործակցության համար գերադասելի գործընկերոջ*:

Որպեսզի սա աշխատի, մասնակիցներն ինչ-որ ձևով պետք է սերտաճեն, կապը պետք է ներքին դարձնեն: Զույգի դեպքում երկուսն էլ պետք է տոգորված լինեն մեկը մյուսի պահանջներով, այնպես, ասես դրանք իրենց սեփականն են: Կապող բանն անցնում է հաշվարկող, օգտակարությանն ուղղորդված (եսակենտրոն) ռացիոնալության ոլորտն ու մտնում խոր զգացմունքների տիրույթը՝ հասնելով *հոգեկանի*, ոգու, հոգու առավել խորին շերտերը:

Որպեսզի նման մի բան կատարվի պետությունների համակարգի շրջանակներում, բավական չէ, որ կառավարությունների ներկայացուցիչներն իրենց խորապես կապված զգան իրենց կողմից ստեղծված միջպետական կազմակերպությանը: Դրա համար ավելին է պետք: Եվ այստեղ, ահա, էկրանին է հայտնվում ոչ-պետական համակարգը՝ խնդրո առարկա բոլոր երկրների քաղաքացիներն ու նրանց ասոցիացիաները, ազգային և միջազգային *քաղաքացիական հասարակությունը*: Ըստ այդմ, դրական կապեր պետք է գոյություն ունենան ոչ միայն կառավարությունների, այլ նաև ոչ-կառավարությունների՝ ոչ-կառավարական կազմակերպությունների միջև, որոնք ամբողջ համակարգը կսնուցեն հիմնականում դրական փոխգործակցության բոլոր տեսակներով, ինչի շնորհիվ համակարգը կհագեցվի, կկենսականանա և ցանցի պես կտարածվի սահմաններից անդին: Սա կարելի է ձևակերպել որպես պայման, ինչպես հաջորդիվ արվել է:

Այսպիսով, ութերորդ՝ *էնտրոպիա*, այսինքն, փոխգործակցության ողջ զանգվածի բաշխում բոլոր հարաբերությունների վրա, և ոչ թե միայն երկրների ներսում պետության և ոչ-պետության կամ դրսում՝ կառավարությունների միջև հարաբերությունների: Ինչպես զույգերի դեպքում է, որ կապված են ոչ միայն խորը համակրանքով, որը կա նաև ընկերների միջև, այլ նաև մարմնական միավորմամբ և հոգեկան ընդհանրություններով: Այսօր որպես համադաշնության օրինակներ կարող են ծառայել Եվրոպական համակեցությունը (մինչև Մասաթրիխթի պայմանագիրը կնքելը), Սկանդինավյան համակեցությունը (մինչև նրա անդամներից երեքի անդամակցությունը Եվրամիությանը) և Հարավ-արևելյան Ասիայի ազգերի միավորումը (ԱՍԵԱՆ): «Մեր» և «մյուսների» շուրջ արձակ շրջան է քաշվում, ընդ որում, ոմանք գալիս են, իսկ ուրիշները՝ գնում: Այնքանով, որքանով դա տեղի է ունենում, ծնվում է նոր դերակատար՝ գերդերակատար:

Պետությունների դաշնային համակարգ: Դաշնության մեջ այդպիսի գերդերակատարը կոչված է հավերժ գոյատևելու, ինչպես զույգը, որը պետք է ամուսնացած մնա, «մինչև մահը բաժանի»: Հարաբերությունը ընդհանուր համակարգի ներսում ինստիտուցիոնալացվում և յուրացվում է ոչ միայն մասնակիցների կողմից: Եթե համադաշնությունները կարելի է համեմատել

երկձու երկվորյակների հետ, ապա դաշնային համակարգերը ոչ միայն միաձու, այլև հիրավի սիամյան երկվորյակներ են, որոնց կյանքի համար կարևոր օրգաններն իրար մեջ բաժանում են այնպես, որ նրանց այլևս հնարավոր չէ անջատել իրարից: Եթե նրանց, այնուամենայնիվ, բաժանեն, ապա նրանցից մեկին կհասցվի անվերականգնելի վնաս: Ընդհանուր կանոն է, որ պետություններն այնտեղ են սերտաճում միմյանց հետ, որտեղ անհրաժեշտ է ընդհանուր համակարգով դառնալ գերդերակատար.

քաղաքականապես՝	համատեղ արտաքին քաղաքականությամբ (որոշումների կայացում),
տնտեսապես՝	համատեղ ֆինանսական քաղաքականությամբ (արժույթ, կենտրոնական բանկ),
ռազմականորեն՝	համատեղ անվտանգության համակարգով (բանակ),
մշակութապես՝	բաշխված մշակութային ինքնություններով (արժեքներ, համոզմունքներ):

Այս կերպ դաշնության ներսում կենտրոն է ձևավորվում սերտաճման, համատեղ արտաքին քաղաքական որոշումների, համատեղ արժույթի (և կենտրոնական բանկի), համատեղ բանակի, ինչպես նաև համատեղ մշակույթի շեշտման («ամերիկացի»՝ ԱՄՆ-ի, «խորհրդային մարդ»՝ Խորհրդային Միության, «եվրոպացի»՝ Եվրամիության, «հարավսլավացի»՝ Հարավսլավիայի համար) ճանապարհին գերազգ կառուցելու շնորհիվ: Համատեղ կենտրոնում մասն ունենալու համար լրացուցիչ ենթադրվում է լայն համագործակցություն ծայրամասերի միջև:

Դաշնությունն ինտենսիվ հարաբերություն է: Բաժանումն այժմ խարանվում է որպես «հեղաշրջում», և փորձ է արվում այն կանխել նորմերով, որոնց իմաստն այն է, որ դաշնությունը «հավերժական» է: Ինչպես և զույգի դեպքում, դա կարող է գործել, բայց կարող և չգործել՝ կախված այն բանից, թե արդյո՞ք դաշնությունը կառուցվել է ներդաշնակության՝ աննկատելի կամ առնվազն չնկատված այնպիսի կետեր ունեցող բաժանարարների վրա, որոնք, եթե հայտնաբերվեն, կարող են կանխել քաղաքական երկրաշարժերը:

Ունիտար համակարգեր: Այստեղ պետությունները, կամավոր թե՝ ոչ, սերտաճում են մեկ պետության, և դա կատարվում է ոչ միայն կենտրոնում, այլ նաև ծայրամասում՝ միասնականացված տնտեսական համակարգեր, դաստիարակության համակարգեր և այլն: Ծայրամասերում կարևոր որոշումներ չեն կայացվում, այնտեղ որոշում է կայացվում միայն այն մասին, թե ինչպես պետք է իրականացնել կենտրոնում որոշվածը: Սա խիստ նմանվում է այն զույգերի վիճակին, որոնք ապրում են կատարյալ ներդաշնակության մեջ, նույնիսկ սկսում են տեսքով իրար նմանվել: Եթե մեծությունը բավարարում է, ապա կարող ենք ասել, որ ձևավորվել է գերպետություն: Ներկայում գոյություն ունեցող պետություններից շատերը նախկինում եղել են գերպետություններ, սակայն ժամանակի ընթացքում մասշտաբը փոխվում է:

Այսպիսով, մենք ունենք պետությունների բռնի համակարգերի հիմնականում հինգ այլընտրանք՝ դիսոցիացված, տարրականորեն ասոցիացված (չորս

ենթատիպերով) և առաջանցիկ ասոցիացված, համադաշնային, դաշնային և ունիտար: Այժմ հարցն այն է, թե դրանք որքանով են խաղաղության համակարգեր: Ակնհայտ է, որ հարցն ունի ներքին և արտաքին կողմեր: Արդյո՞ք համակարգն ի զորու է ներսում ճնշելու բռնությունը և փոխակերպելու հակամարտությունները, և ի՞նչ հարաբերության մեջ է այդ համակարգը պետությունների մնացած համակարգի հետ: Այսօրվա պետություններից շատերը նախկինում պետությունների համակարգեր են եղել (Գերմանիա), և նրանք կարող են վերադառնալ այդ վիճակին (Խորհրդային Միություն, Հարավսլավիա). այսօրվա պետություններից շատերը վաղը կարող են դառնալ գերպետությունների բաղադրիչներ (իր մեջ համադաշնային, դաշնային և ունիտար կողմեր միավորող Եվրամիության տասնհինգ անդամները):

Ոչ մի հիմք չկա կարծելու, թե գերպետություններն ավելի խաղաղասեր են, քան պետությունները: Քանի դեռ գերպետության շրջակա աշխարհը չի փոխվել, գերպետությունների ձևավորումը հանգեցնում է ընդամենը բռնության խնդրի կամ նույնիսկ պատերազմի փոխակերպման՝ համամասնորեն առավել բարձր հարթության վրա, եթե խոսքը կապող ուժ ունեցող մեկ դերակատարի, այսինքն՝ դաշնային կամ ունիտար համակարգի մասին է: Այլ հավասար պայմաններում (ceteris paribus)՝ որքան ավելի է ասոցիացիան մոտենում միասնականությանը (ունիտար ձևին), այնքան ավելի է մեծանում սպառնալիքը նրանց համար, ովքեր դրսում են:

Մենք կարող ենք ի մի բերել առանցքային վարկածները հետևյալ տեսքով.

Պետությունների համակարգ	*Խաղաղություն սերմանող կարողություն՝ ներսում*	*Խաղաղությանն սպառնող կարողություն՝ դրսում*
1. դիսոցիացված	չնչին	չնչին
2. ասոցիացված	չնչինից մինչև միջին	չնչինից մինչև միջին
3. համադաշնային	միջին	միջին
4. դաշնային	մեծ	մեծ
5. ունիտար	շատ մեծ	շատ մեծ

Երկընտրանքը հստակ է. ներսում խաղաղություն հաստատելու առավելապես ունակ տարածքային համակարգի կառուցվածքը կարող է միաժամանակ հանդես գալ որպես դրսում խաղաղությանն առավելագույնս սպառնացող կառուցվածք: Գերմանիան կարողացավ գերմանական տարածքային միավորներում պահպանել խաղաղությունը,[6] բայց Եվրոպայի համար ի՞նչ գնով: Նույնը՝ ԱՄՆ-ը,[7] որը դաշնային միասնությունը ամրապնդեց քաղաքացիական պատերազմով, կամ նաև Խորհրդային Միությունը՝ 1918-1922թթ. քաղաքացիական պատերազմից հետո:

Տրամաբանությունը պարզ է: Գերհամակարգի (այսինքն՝ դաշնության կամ ունիտար պետության մակարդակում, քանզի մյուս աստիճաններում պետությունը որպես միասնական կազմակերպաձև գոյություն ունի սոսկ սաղմնային ձևով) կենտրոնում ամուր պետությունով կազմակերպաձևի ստեղծումը կարգավորում է բաղադրիչների միջև հարաբերությունները, և հաճախ հենց հակամարտությունները ստեղծագործաբար կարգավորելով կամ դրական համաձայնություն տալու մեխանիզմների օգնությամբ: Բայց հենց այդ պետական կազմակերպվածքը նոր համակարգն օժտում է դեպի դուրս կապով: Առաջանում է խաղաղության պոտենցիալ սպառնալիք, քանի որ որոշ պետու-

թյուններ ներգրավվում, իսկ ուրիշները բացառվում են: Մ մակարդակում խաղաղություն սերմանող նույն մեխանիզմները Մ+1 մակարդակում կարող են դառնալ հակաարդյունավետ: Հույժ խնդրահարույց եզրահանգումը հետևյալն է. ոչ մեկի մի՛ բացառիր, դարձրու ամբողջ աշխարհը դաշնային կամ ունիտար: Իրագործելի՞ է, ցանկալի՞:

5.4 Խաղաղության տարածքային համակարգեր և ռասա, դասակարգ, ազգ

Համաշխարհային կառավարության (դաշնային, թե ունիտար) հետ կապված դժվարություններն ակնհայտ են դառնում այն պահին, երբ բարդացնում ենք վերոնշյալ վերլուծությունը և ներգրավում այլ բաժանարարներ: Եթե որևէ տարածք օթևան է տալիս որևէ հասարակության, ապա պետք է առկա լինեն բնություն՝ արտադրության համար, երկու սեռեր՝ վերարտադրության համար և բազմաթիվ սերունդներ: Այստեղ ընտրություն չկա: Հասարակություններն այս երեք բաժանարարների հետ փոքրիշատե համակերպվում են: Բայց հաջորդ երեքի պարագայում՝ ռասա, դասակարգ և ազգ, ընտրության հնարավորություններ կան: Լինում են մենառասա կամ բազմառասա, մենադասակարգ կամ բազմադասակարգ և մենազգ կամ բազմազգ հասարակություններ:[8]

Ստանում ենք համակցման ութ հնարավորություն, որոնք բոլորն էլ կարևոր են.

	ռասա	*դասակարգ*	*ազգ*	*մեկնաբանություն*
1.	մենա.	մենա.	մենա.	Սեռերի/սերունդների հակադրությո՞ն
2.	մենա.	մենա.	բազմա.	Ազգային տարածքային անջատվածությո՞ն
3.	մենա.	բազմա.	մենա.	Մեծ շարժունություն ունեցող հասարակություն
4.	մենա.	բազմա.	բազմա.	Ազգերը հակվում են խավերի ձևավորմանը
5.	բազմա.	մենա.	մենա.	Ռասայական տարածքային անջատվածությո՞ն
6.	բազմա.	մենա.	բազմա.	Խաղաղության ուտոպիա
7.	բազմա.	բազմա.	մենա.	Ռասաները հակվում են խավերի ձևավորմանը
8.	բազմա	բազմա.	բազմա.	Ռասաները և ազգերը ձևավորում են խավեր

Մեկնաբանությունները հիմնվում են այն ընդհանուր ենթադրության վրա, որ մեծապես տարբերվող այլոց հետ մերձագույն հարևանությամբ ապրելու մարդկային ընդունակությունը սահմանափակ է: Ենթադրություն, որն ինքն է ենթարկված սահմանափակումների:[9] Բայց ընդունենք, թե այդ ենթադրությունը համարում ունի: Այս դեպքում տեղի կունենան դիսոցիացիաներ, հասարակական մակարդակում՝ խավերի ձևավորման տեսքով (վերևում՝ 4, 7 և 8), իսկ տարածական մակարդակում՝ բաժանումների տեսքով (2 և 5): Բազմադասակարգ համակարգերը սնուցիչ միջավայր են ծառայում շերտերի ձևա-

վորման համար: Աշխարհագրական քարտեզների վրա քաշված սահմանները ծառայում են երկրների առաջացմանը:

Մենադասակարգ հասարակության (այսինքն՝ կյանքի որակով և քանակով շատ քիչ տարբերություն դրսևորող հասարակության) մեջ նախապատվությունը կտրվի տարածքային լուծմանը, բազմադասակարգ հասարակությունում (ցայտուն արտահայտված տարբերություններով)՝ շերտավորմանը: Նախկին Հարավաֆրիկյան Հանրապետությունում այդ երկու հնարավորությունները հանդիպում էին *ապարտեիդի* մեջ, մեկ երկրի մեջ կար շերտավորում և տարածքային բաժանում: Հիմա դառնանք համակցման հետևյալ հնարավորություններին.

1. *Մենա. – մենա. – մենա.* Բնակիչները կա՛մ մի ռասա և մի ազգ են, կա՛մ ընկալում են իրենց որպես այդպիսին և սկզբունքորեն ապրում մենադասակարգ հասարակությունում: Սկզբունքորեն սա նշանակում է, որ բաժանարարներից երեքը վերացված են (գերմանացիներն ունեն մի գեղեցիկ արտահայտություն՝ «վերառված են»): Բայց դասսիստական դրույթը, ձևակերպենք այն որպես «հակասություն կամ մահ»,[10] մեզ կդրդի առաջ քաշելու այն վարկածը, թե հասարակության դինամիկայի կրողները բաժանարարների ցուցակից առաջին երեքն են կամ պետություն/ոչ-պետություն բաժանարարը:

3. *Մենա. - բազմա. – մենա.* Սա կլիներ միատարր հասարակություն՝ սահուն դասակարգային սահմաններով. սահուն, որովհետև ռասան դրանք չի դարձնում տեսանելի, իսկ ազգությունը՝ լսելի (եթե հիմք ընդունենք, որ լեզվական տարբերություններն ու մշակութային ծեսերը լսելի են): Շարժունությունն սկզբունքորեն պիտի որ ավելի հեշտ լինի, քան այն հասարակություններում, որտեղ դասակարգերն ունեն ռասայական և/կամ ազգային հիմք, ինչը դասակարգը դարձնում է կաստայատիպ: Սա է արևմտյան նախատիպը՝ ազգային պետական դասակարգային հասարակությունը:

6. *Բազմա. – մենա. - բազմա.* Սա գովաբանված բազմառասա և բազմաէթնիկ, բայց միաժամանակ մենադասակարգ հասարակությունն է: Այն տարբերվում է (1)-ից նրանով, որ ռասան և ազգը սուբյեկտիվորեն և օբյեկտիվորեն առկա են, բայց մարդիկ կարողանում են մեկ երկրի և մեկ դասակարգի մեջ համատեղ ապրել: Պետք է լուրջ վերաբերվել այն փաստին, որ սրա համար աշխարհում էմպիրիկ օրինակներ չկան, բայց դա չպետք է հանգեցնի եռակի ներդաշնակության փնտրտուքը դադարեցնելուն:[11]

Եթե եզրակացնենք, որ բազմառասա կամ բազմազգ հասարակություններն իրարից մեծամասամբ ուղղաձգորեն մեկուսացված և/կամ հորիզոնականորեն տարանջատված են, ապա հաջորդ հարցը կլինի, *որքա՞ն շատ*: Վարկածներից մեկը կլիներ այն, որ բազմառասա կամ բազմազգ հասարակություններում դասակարգային տարբերությունն առանձնապես շեշտակի է: Մյուսը՝ այն, որ հորիզոնականորեն տարանջատված դաշնությունները, որոնց դեպքում մասերն իրար կապվում են ուժեղ կենտրոնի մեջ, անբավարար են:

Այլ բառերով ասած, *բազմազգ* (և բազմառասա) *դաշնությունները* (որտեղ ազգերն ու ռասաները բաժանվում են պետությունների կամ հանրապետությունների, ինչպես էլ որ կոչվեն) *կենսունակ չեն.* նրանք չափից ավելի անշարժ են: Եվրոպան երկու տարվա մեջ՝ 1991-1993թթ., տեսավ այդպիսի երեքի փլուզումը (Խորհրդային Միություն, Հարավսլավիա, Չեխոսլովակիա):[12] Բայց դրա փոխարեն դրանց ունիտար դառնալը լուծում չէր լինի: Այդ դեպքում դասակարգն ու ազգն ավելի ուժեղ փոխադարձ կապի մեջ կլինեին: Նշված պետությունները հնարավոր էր պահպանել որպես դաշնություն միայն շատ մեծ

հարկադրանքի միջոցով, և է՛լ ավելի շատ հարկադրանքի անհրաժեշտություն կլիներ ունիտար (չլուծվող) լուծումն իրականացնելու համար:

Եվ դրանով միաժամանակ պատասխանվում է համաշխարհային դաշնության կամ համաշխարհային միասնապետության ղեկավարությունում համաշխարհային կառավարության կենսունակության հարցին: Այդ դեպքում ռասային, դասակարգին և ազգին առնչվող բոլոր բաժանարարները կընթանային ներսում: Նրանք այսօր արդեն միմյանց հետ փոխհարաբերության մեջ են և նման համակարգում ավելի սերտորեն կհամահարաբերակցվեն: Նմանատիպ համակարգում իշխանության իրականացումը հիմնականում ուղղված կլիներ ներքև, իսկ արդյունքը կլինեին այն անհամար դեպքերը, երբ կենտրոնը կներխուժեր ծայրամասեր՝ ռասա - դասակարգ - ազգ համակցությունը հսկողության տակ պահելու համար:[13] Ուղղակի բռնությունը կհաջորդի կառուցվածքային բռնությանը՝ վերևից, այսինքն, կենտրոնից, բայց նաև ներքևից՝ ծայրամասից: Վերջին հաշվով դա խաղաղության հետ այնքան էլ շատ կապ չի ունենա:

Բայց նույնն է բանը նաև հակառակ սցենարի՝ ամբողջական բաժանման, դիսոցիացված մոդելի համար: Այս դեպքում իր գործն է անում *հորիզոնական կառուցվածքային բռնությունը*, տարածքային կառուցվածք, որն իրարից առանձնացնում է մարդկանց: Սահմաններից,[14] սահմանային ստուգումներից, մուտքի արտոնագրերից, անձնագրերից, կնիքներից և այլ անախորժություններից կազմված 20-րդ դարի այդ ամբողջ մեխանիզմը մարմնավորում է կառուցվածքային բռնություն, որը խոչընդոտում է մեկի անսահմանափակ շփումը մյուսի, ներառյալ բոլորովին ուրիշի, հետ: Սակայն խնդիրն այն է, որ ոմանց համար նաև ուրիշի հետ սերտ մոտիկությունն է բռնություն նշանակում, և նման մարդկանց այդ պատճառով անպայման չէ, որ պետք է պիտակել իբրև ռասիստներ, սուտ բարեպաշտներ, հակասեմիթներ և այլն: Ավելի շատ օգուտ կբերեր իր և ուրիշների միջև տարբերություն դնող մարդկանց կողմնորոշվելու սահմանափակ ունակությունը գիտակցելը և, այնուհետև, նոր մոտեցումներ փնտրելը:

Այսպիսով, բռնություն, երբ մարդկանց իրարից առանձնացնում են, և բռնություն, երբ նրանց միացնու՞մ են: Ճիշտ այդպես: Այստեղ տրամաբանական հակասություն չկա, մասամբ այն պատճառով, որ սոցիալական ամեն բան է լեցուն հակասություններով, և մասամբ, որ մենք, միգուցե, խոսում ենք տարբեր մարդկանց դեմ բռնության մասին: Մեր տրամադրության տակ այսօր եղած լավագույն ընդհանուր լուծումը, հավանաբար, համադաշնային մոդելն է: Բազմազգ համադաշնությունները ոչ ոքի չեն ստիպում մերձենալու, բայց, սահմանները թափանցիկ դարձնելով, այսինքն, ոչ միայն մուտքի արտոնագրերի, այլ նաև անձնագրերի հարկադրանքը վերացնելով, հեշտացնում են միասնականացումը նրանց համար, ովքեր այդ բանն ուզում են: Բացի այդ, ինչպես վերևում արդեն ակնարկվել է, կարելի է հեշտությամբ բանակցել նոր համադաշնություն ձևավորելու վերաբերյալ, և սկզբունքորեն հնարավոր է այն լքել. այն ո՛չ չափից ավելի ազատ է, ո՛չ էլ չափից ավելի նեղ. այսպես ասած՝ մեջտեղում է:

Այդ դեպքում համադաշնության ի՞նչն է վատ: Դժվարությունն այն կայուն պահելն է, դաշնության Սցիլլայից և տարրական ասոցիացիայի Քարիբդիսից պաշտպանելը: Համադաշնությունը շատ կայուն չէ, և հարկ է դեռ մշակել մեխանիզմներ, որոնք նրան կայուն հավասարակշռություն կշնորհեն:

Այսպիսով, ես տարածքային համակարգի հիմնախնդիրների մեծ մասի լուծման համար կառաջարկեի համադաշնային լուծումներ, որովհետև համադաշնությունը ներառում է բոլորի հավասարությունը և միաժամանակ բացակայում է ուժեղ կենտրոնը, որը պատժեր ընդվզողներին և ծագեցներ արտաքին դերակատարների հետ հակամարտություններ: Հետևաբար, շատ բան խոսում է հետևյալի օգտին.

- Բոսնիա-Հերցեգովինան որպես եռահամադաշնություն,
- Հարավսլավիա III-ը որպես համադաշնություն՝ Հարավսլավիա I միասնապետությունից (1918-41թթ.) և դաշնային Հարավսլավիա II-ից (1945-91թթ.) հետո,
- Հարավարևելյան Եվրոպան (Բալկաններ) որպես համադաշնություն,
- Եվրամիությունը որպես համադաշնություն, որը չի իրականացնում դաշնային գծերը,[15]
- Պանեվրոպական համադաշնություն՝ Ատլանտյանից մինչև Խաղաղ օվկիանոս, հիմնվելով ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ՄԱԿ-ի Եվրոպայի գծով տնտեսական հանձնաժողովի (Economic Commission for Europe) վրա,
- աշխարհը որպես համադաշնություն՝ ՄԱԿ-ում հորիզոնական կապերի ուժեղացմամբ և թույլ գերկառուցվածքի պահպանմամբ, համաշխարհային կառավարումը (Global Governance)՝ ավելի շուտ որպես համաշխարհային կառավարություն:

Երեկվա աշխարհում, որպես բազմազգ համադաշնություններ և խաղաղության համակարգեր, կարելի էր առանձնացնել երեք տարածաշրջաններ՝ Սկանդինավյան երկրները, Եվրոպական համակեցությունը և Հարավարևելյան Ասիայի ազգերի միավորումը (ԱՍԵԱՆ). այսինքն 5+12+6=23 երկիր ՄԱԿ-ի անդամ շուրջ 190 պետություններից, որոնք իրենց անդամ-պետությունների միջև պատերազմը դարձրել էին թեև ոչ «անհնար», բայց խիստ անհավանական: Վերը հիշատակված բոլոր ինը չափանիշներն այստեղ փոքրիշատե բավարար չափով իրագործված էին: Այս նվաճման կարևորությունը չպետք է նվազեցնել: Չպետք է թերագնահատել նաև ոչ-պետական լուրջ ենթակառույցը՝ ժողովրդական կազմակերպությունները, որոնք անդամ-պետությունները ներքևից կապող օղակ են, քանի որ հակազդում են ութերորդ բաժանարարին, ինչու չէ, գուցե նաև միջազգային մակարդակում (Եվրամիության և նույնիսկ ՄԱԿ-ի, որպես գերպետությունների, դեպքում):

5.5 Ամփոփում. Ի՞նչ կարող ենք անել

Վերևում մենք շոշափեցինք խաղաղություն հաստատող և խաղաղությանը սպառնացող տիրույթներից մի քանիսը: Ահավասիկ, ևս մեկը՝ մշակույթների ձևաբանական հակումները: Ունիտար և դաշնային լուծումները ակնհայտորեն միակենտրոն են, համադաշնայինը՝ բազմակենտրոն, ասոցիացիոն լուծումը կարիք ունի մի տեսակ համընդհանուր հասարակական կապամիջոցի՝ մասերը միասնական պահելու համար, իսկ դիսոցիացիոն լուծումը

ոչինչ չի միավորում: Եթե անվանենք այն, ինչը պետությունների համակարգում միասին է պահում երկրները, աստված, ապա այստեղ գործ ունենք մոնոթեիստական, պոլիթեիստական, պանթեիստական և աթեիստական կառուցվածքների հետ: Իսկ համընդհանուր պնդումը ակներևաբար կլինի հետևյալը. «Ասա, թե որ կրոնին ես պատկանում, և ես քեզ կասեմ, թե խաղաղության որ կարգին ես հավատում»: Մոնոթեիստները, որպես կանոն, կլինեն համաշխարհային կառավարության օգտին (ունիտար, թե դաշնային կարգի), պոլիթեիստները կնախընտրեն բազմակենտրոն համադաշնությունները, պանթեիստները Գանդիի նման կփնտրեն ամեն ինչ միասնական պահող «օվկիանոսյան շրջաններ», իսկ աթեիստները կլինեն անհավատներ՝ «ռեալիստներ», և պետությունները՝ մասերն, իրարից կառանձնացնեն:

Անհատական մակարդակում կանխագուշակել, անշուշտ, այնքան էլ դյուրին գործ չէ: Դա, կարծես, ավելի հեշտ է համաշխարհային մշակույթների մակարդակում: Եվ այսպես, մենք կակնկալենք հակում դեպի համաշխարհային կառավարություն, ինչպես և դեպի դիսոցիացիա մոնոթեիստական, նաև աշխարհիկ Արևմուտքում և հակում դեպի համեմատաբար ազատ ասոցիացիա պոլիթեիստական, պանթեիստական և էկլեկտիկ Արևելքում: Այսպիսով, վեճն անպայման չէ, որ ընթանա խաղաղության ռացիոնալ հարթության վրա՝ կանտյան կամ վեբերյան փաստարկումների շուրջ: Այն ավելի շուտ քաղաքակրթությունների արդեն գրված դիրքերի արտահայտությունն է. այդուհանդերձ՝ դժվար է սրան ինչ-որ բանով նպաստելը: Այսպիսով, եզրափակենք *մշակույթի առաջնայնության* մասին դրույթով:

Ծանոթագրություններ

---

[1] Պատերազմավարության բնույթի առումով «պրիմիտիվության» նշանակության ուսումնասիրության վերաբերյալ տե՛ս՝ Tom Broch և Johan Galtung: *"Belligerence Among the Primitives"*, վերջինիս *«Peace, War and Defense, Essays in Peace Research»* գրքի երկրորդ հատորը, Կոպենհագեն 1976թ., էջ 25-37:

[2] Կարելի է, օրինակ, պատկերացնել, որ, ասենք, սեռախտրությունը կարող է վերաբերել ավելի քան երկու սեռերին, ինչը կնշեին համասեռամոլներն ու լեսբուհիները, կա նաև մայրիշխանության հավանականությունը (ոչ միայն մայրական գծի և/կամ մայրական վայրի ձևերը): Այսօր միջին տարիքի մարդիկ խտրականության են ենթարկում երիտասարդներին և ծերերին (լիովին երիտասարդ մարդկանց սպանում են աբորտով կամ մանկասպանությամբ, իսկ լիովին ծերերին՝ էվտանազիայի միջոցով): Ռասաները սահմանվում են միայն պիգմենտների և ֆիզիոնոմիայի միջոցով, բայց ռասա հասկացությունն օբյեկտիվորեն դիտարկելիս նույնքան նշանակություն չունի, որչափ սուբյեկտիվորեն նշանակություն ունի տեսանելիության բարձր աստիճանի պատճառով: Ազգային խմբավորումները սահմանվում են մշակութային հատկանիշներով, հատկապես կրոնով, լեզվով և առասպելների ընդհանրությամբ: Դասակարգ հասկացության սահմանումը խիստ տատանվում է ըստ տարածության և ժամանակի: Նույնն է բանը նաև տարածքային բաժանումների (սահմանների) նշանակության դեպքում: Պետությունը մի կազմակերպություն է, որն իր տարածքի սահմաններում ունի ուժի մենաշնորհ, իսկ գերպետությունը մի կազմակերպություն է, որն ունի ուժի մենաշնորհ պետությունների որևէ համակարգի շրջանակներում:

[3] Սառը պատերազմի՝ գերպետականապաշտության այդ քառասնամյա վարժության ավարտից հետո, ազգայնականության դերն արդեն այսօր (1996թ.) կարելի է բնորոշել որպես դասական:

[4] Նույնը վերաբերում է պետությունների միջև փոխանակման հարաբերությունների բացասական ծայրահեղությանը: Բացասական ակտերի լիարժեք փոխանակումը պետությունների համակարգի բոլոր անդամների միջև բոլոր ուղղություններով՝ լիակատար բացասական բարձրագույն պահերը, նույնպես կարճ կտևեն, և, ըստ էության, ոչ միայն դրա հետ կապված քայքայման, այլ նաև դրա համար անհրաժեշտ էներգիայի ծախսման պատճառով:

[5] Հետևաբար, հարկադրանքի դեպքում պետք է հրաժարվել «խաղաղություն սերմանող» եզրի գործածությունից: Հարկադրանքը մնում է հարկադրանք և միտում ունի ծնելու հակահարկադրանք: Սոմալին կարող է լինել առաջին օրինակը, երբ ժողովուրդը հակահարկադրանք է կիրառում «խաղաղության հաստատմանը» դիմակայելու նպատակով:

[6] Գերմանական համադաշնությունը՝ *Գերմանական դաշինքը*, որպես ժառանգորդ ուներ երկու միասնապետություններ՝ *Երկրորդ ռայխը* (*Բիսմարկ,* 1871-1918թթ.) և *Երրորդ ռայխը* (*Հիտլեր*, 1933-1945թթ.), իսկ դրանից հետո դաշնություն՝ *Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը,* սկսած 1949թ.: Հիմքեր ունեցող ենթադրություն՝ հաջորդ անգամ Գերմանիան նորից կդառնա համադաշնություն:

[7] Սկզբնապես *Համադաշնության մասին հոդվածների* հիման վրա, 1971-89թթ., որպես նախապատրաստություն առավել դաշնային սահմանադրության: Շվեյցարիան նույնպես սկսեց որպես կանտոնների համադաշնություն, բայց սկսած 1874թ., այստեղ գործածված չափանիշերին համապատասխան, դարձավ դաշնություն (CH-ով, *Confederatio Helvetica,* նշվող ավտոմեքենաների ազգային համանիշերը ճիշտ չեն, դրանք պետք է լինեին FH): Շվեյցարիայի կառուցվածքի գերազանց վերլուծության վերաբերյալ, կառուցվածք, որը շատ տեսանկյուններից աշխարհի մոդել կարող է հանդիսանալ, տե՛ս՝ Wolf Linder: *Swiss Democracy: Possible Solutions to Conflict in Multicultural Societies,* Նյու Յորք 1994թ.:

[8] «Բազմազգ»-ի փոխարեն հաճախ գործածվում է «բազմաէթնիկ» հասկացությունը, ընդ որում, խնդիրն այն է, որ «էթնիկ»-ը մեծամասամբ կիրառվում է մյուսների համար, և ոչ թե սեփական ինքնության, ինչպես, օրինակ, «*Let's go out and taste some ethnic cooking tonight*": Այդպես է վարվում նաև նորաձևությունը, երբեմն-երբեմն ծանուցելով հագուստի «էթնիկ» ոճերի մասին ("*the ethnic look*"):

[9] Սահմանափակումներից մեկը, թերևս, այն է, որ ասվածը հատկապես վերաբերում է մանիքեական հարացույց ունեցող *արևմտյան մարդուն (homo occidentalis)*, որին խիստ ներհատուկ է սև ու սպիտակի, լավ ու վատի տարբերության երկվությունը: Այս կերտվածքի կոնկրետ մեկնաբանություններից մեկը, թերևս, կլիներ՝ «այլ» հավասար է «վատի»:

[10] Միանգամայն տարբերվում է արևմտյան հայրենիք կամ մահ, *patria o muerte,* տարբերակից՝ Կաստրոյին հռչակ բերած նախընտրական այդ լոզունգից: Patria-ն ավելի զերծ է հակասականությունից. այդ պատճառով արդեն մա՞h:

[11] Ասենք մի ակնհայտ բան. ԱՄՆ-ը սրա համար օրինակ չի հանդիսանում՝ այն փաստի պատճառով, որ բնիկ ամերիկացիները բնաջնջվել են, ինչպես նաև այն ձևի պատճառով, որով ներգաղթող ռասաներն ու ազգերը լուրջ դասակարգային համակարգի ներսում շերտադասվում են կաստայական ասպեկտներով և ապա «ամերիկանիզացվում»: Բոսնիա-Հերցեգովինան բազմազգ էր, բայց այդ կառուցվածքը, կարծես թե, Տիտոյի դիկտատուրայի (կամ օսմանների, Հաբսբուրգների կողմից օկուպացիայի և անեքսիայի, կամ Պավելիչի օրոք խորվաթական բռնապետության) կարիքն էր զգում՝ որպես կանգուն մնալու պայման:

[12] Իսկ բրիտանական կայսրության և ֆրանսիական գաղութատիրական համակարգի՝ մինչ այդ տեղի ունեցած (գրեթե լիակատար) փլուզումը/վերակազմավորումը ավելի

շուտ համադաշնային տիպի համակարգերի, *Commonwealth of Nations և Communauté Française,* կարելի է դիտարկել նաև իբրև հակազդեցություն դաշնություններին հատուկ ուժեղ ուղղաձիգ կառուցվածքային բռնության հանդեպ:

[13] Այստեղ որպես օրինակ կարող է ծառայել ՄԱԿ-ի ակցիան Սոմալիում, որը 1992թ. վերջին սկսվեց որպես մարդասիրական գործողություն և հետզհետե վերաճեց այն հարցին, թե, վերջիվերջո, ում ձեռքին է իշխանությունը: Պատմությունը տեղի ունեցածը, հավանաբար, կորակի ոչ այնքան մարդասիրական ակցիա, որքան որևէ ժողովրդի առաջին անկախության պատերազմ այն բանի դեմ, ինչն աշխարհում ամենաշատն է նմանվում համաշխարհային կառավարությանը՝ հետսառըպատերազմյան ՄԱԿ-ը:

[14] Միջնադարյան համակարգերը մարդկանց սահմանային երթևեկի վերահսկման ավելի քիչ անհրաժեշտություն ունեին: Միասնականությունը հնարավոր էր ապահովել այլ միջոցներով՝ օրինակ, թագավորական ընտանիքների միջև ամուսնություններով և անդրսահմանային ոչ-տարածքային մի հաստատության՝ Կաթոլիկ եկեղեցու հզոր ազդեցության միջոցով (*pax ecclesiae – եկեղեցական խաղաղություն*):

[15] Մասաթրիխթի պայմանագիր, մաս V, հոդված J, հատկապես 1,4 և 4,1 կետերը: Այս պայմանագրի II մասի 3-րդ հոդվածը սահմանում է Եվրամիության 20 միջոցառումներ, որոնք պարզորոշ են դարձնում նրա ունիտար կողմերը: Հիմնավորված ենթադրություն՝ այս բազմազգ դաշնության կյանքը շատ սահմանափակ տևողություն կունենա:

ՄԱՍ II

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1
Հակամարտության ձևավորումը

1.1 Հակամարտությունը որպես արարիչ և հակամարտությունը որպես ավերիչ

Հակամարտության տեսությունը հավասարապես անհրաժեշտ է թե՛ զարգացման, և թե՛ խաղաղության տեսությունների համար: Նույն պնդումը ճիշտ է նաև խաղաղության համար՝ մի տարբերությամբ, որ խաղաղությունն ունի բռնությունների նվազեցման ու հակամարտությունների ոչ բռնի փոխակերպման ընդգծված շեշտադրում: Յուրաքանչյուր հակամարտության հիմքում հակասությունն է՝ ինչ-որ բանը մեկ այլ բանի ճանապարհին: Այլ խոսքով՝ հիմնահարցը: Դերակատարների (անհատների կամ կոլեկտիվների) համար ի՞նչը կարող է լավագույն *force motrice*[i] ծառայել. իհա՛րկե լուծում պահանջող հիմնահարցը:

Բայց ինչ-որ տեղ դարանակալած վտանգ կա, մասնավորապես, երբ հիմնահարցն ինքն է դիմակայում լուծումներին: «Ինչ-որ բան կանգնած է մեկ այլ բանի ճանապարհին»: Ինչ-որ բան խիստ ցանկալի է ինձ համար, բայց այն նույնքան ցանկալի է նաև մեկ ուրիշի համար: Դասական այս իրավիճակը կարելի է կոչել *տարրական կոնֆլիկտի ձևավորում* կամ *կոնֆլիկտի միջուկ.*

Վեճ.	*երկու անհատ կամ համակարգ, որ ձգտում են միևնույն կոնկրետ նպատակին,*
Երկընտրանք.	*մեկ անհատ կամ համակարգ, որ ձգտում է երկու անհամատեղելի նպատակների:*

Վեճը հեշտությամբ վերածվում է արգելակող դերակատարին վնասելու կամ վիրավորելու, այլ խոսքով՝ մեկ ուրիշին կործանելու քայլերի: Երկընտրանքը հեշտությամբ վերածվում է սեփական ձգտումների մերժման, այլ խոսքով՝ ինքնակործանման քայլերի: Ինքնակործանում կարող է ի հայտ գալ նաև վեճի (հրաժարվելով հետամուտ լինել դժվարամատչելի նպատակին, օրինակ՝ խումբն առաջնորդելուն), և ուրիշի կործանում (ընտրությունը վերապահելով ուրիշին)՝ երկընտրանքի դեպքում: Գրեթե յուրաքանչյուրս ամեն օր ճաշակում ենք թե՛ մեկը, թե՛ մյուսը: Բախումն էներգիա է ծնում: Խնդիրն այն է, թե ինչպե՞ս այդ էներգիան առավել կառուցողական հուն ուղղորդել:

---

[i] force motrice (ֆր.)- շարժիչ ուժ /թարգ./

Սա հիշեցնում է «ճգնաժամի» դասական չինական երկակի բնորոշումը, ըստ որի դա «հակամարտությանը» շատ մոտ հասկացություն է և հանդես է գալիս որպես «վտանգ» + «հնարավորություն»: «Վտանգը» մոտ է բռնությանը, իսկ «հնարավորությունը», որպես արարման սկզբնաղբյուր, որոշակի իմաստով մոտ է «մարտահրավերին»: Այստեղ մենք գործ ունենք չինական հնագույն իմաստության հետ. այն էապես տարբերվում է կոնֆլիկտների հանդեպ տածած միակողմանի վախից, ինչը լուծումների/վճիռների/կազմալուծումների ճանապարհով փորձում է վանել դրանք, նույնիսկ կոծկել (գորգի տակ թաքցնել), իմա՝ հեռու պահել անհատական ու հասարակական իրազեկությունից կամ գիտակցությունից:

Հակամարտությունների կարգավորման՝ այստեղ կիրառվող հիմնարար մոտեցումը կլինի հետևյալը. *«Հակամարտությունների ստեղծագործական փոխակերպումը որևէ կենսունակ այլընտրանք չունի»*: Այդ դեպքում հարց է առաջանում՝ ինչպե՞ս դա անել:

1.2 Ակնհայտի ու քողարկվածի դիալեկտիկան և հակամարտության եռանկյունին

«Սա հակամարտություն է» արտահայտությունը հարկ է միշտ դիտարկել ոչ թե որպես ակնհայտ կամ, առավել ևս, սովորական մի բան, այլ որպես վարկած, ինչի շուրջ ավելի հեշտ է համաձայնության հասնել: Ճիշտ է, երբ դիտարկվում են ապակառուցողական վարքագծի (B) առանձին ձևերի բացահայտ դրսևորումներ, ընդ որում՝ որպես ֆիզիկական կամ բարոյական բռնարարքներ կամ որպես թշնամական ժեստերի լեզու, ապա եզրակացությունը հաճախ հետևյալն է՝ կոնֆլիկտն այստեղ ակնհայտ է:

Սակայն մենք պարզեցինք, որ հակամարտությունը, լինելով խնդրահարույց, միաժամանակ կարող է հանգեցնել կառուցողական վարքագծի, ինչպես, ասենք, խորը մտազբաղ կեցվածքի, որը հայտնի է նաև որպես խնդրի շուրջ «ներքին երկխոսություն», կամ այլոց հետ «արտաքին երկխոսության»: Ապակառուցողական վարքագիծը կործանում է, այն հարվածում ու վնասում է, իսկ կառուցողական վարքագիծը կառուցում է. դրանք անհամատեղելի չեն:

Այսպիսով, հաշվի առնելով հակամարտության երկակի էությունը, կարելի է պնդել, որ հակամարտության և կոնֆլիկտային վարքագծի միջև պարզ հարաբերակցություն գոյություն չունի: Որպես օրինակ դիտարկենք երկու նախ–կին ախոյաններին, որոնք միասին և/կամ միջնորդի աջակցությամբ սկսում են շարժվել պարզ հակամարտության փոխակերպման ուղղությամբ՝ տենդագին ուրախություն, ակնհայտ հուզմունք, խորունկ երջանկություն, անգամ՝ սեր: Ընդ որում՝ կոնֆլիկտը դեռևս առկա է: Անկասկած, շատերն իրենց աստեղային ժամն են համարում կոնֆլիկտը հարթելու պահը: Սակայն, երբ լարվածությունը դառնում է նրանց երջանկության համար անհրաժեշտ և ոչ բավարար պայման, հնարավոր է, որ գործ ունենք նյարդային անհատի հետ: Իսկ եթե մարդը կոնֆլիկտ է հրահրում՝ դրանից երջանկություն քաղելու նպատակով, ապա կարելի է խոսել հոգեկան խանգարումների մասին: Ավելին, եթե մարդն օգտագործում է կոնֆլիկտներն իր որոշումները պարտադրելու նպատակով, ապա «հոգեկան հիվանդ» տերմինը դառնում է միանգամայն տեղին:

Բոլոր այս դեպքերի հետևում ակնհայտորեն թաքնված ինչ-որ բան կա: Եվ ոչ միայն այս, այլ նաև այն դեպքերի, երբ կոնֆլիկտային վարքագիծը բացահայտ է: Եկեք անդրադառնանք այն գաղտնի հանգամանքին, որ հայտնի է որպես ենթադրություն (իմացություններ) կամ վերաբերմունք (հույզեր): Այս երկուսը միասին նշանակենք A տառով: Ապա ի հայտ է գալիս կոնֆլիկտի բովանդակությունը, ինչպես Գյոթեն էր ասում *des Pudels Kern*[i], որը մենք համարում ենք հակասություն՝ C: Հակասությունը պետք է ներառի ինչ-որ ցանկալի բան: Եկեք այն անվանենք նպատակ, իսկ դրա ձգտումը՝ նպատակադրում: Մենք կստանանք.

Հակասություն.	*անհամատեղելի նպատակադրում նպատակամետ համակարգում,*
Հակամարտություն.	*վերաբերմունք/ենթադրություններ + վարքագիծ + հակասություն/բովանդակություն:*

Այլ խոսքով՝ *հակամարտությունը = A+B+C:* Հակամարտությունը եռակողմ կառուցվածք է: Բավական է կենտրոնանալ սրանցից առանձին որևէ մեկի վրա, և այն կկորցնի իր նշանակությունը:

Գոյություն ունեցող համակարգերից նպատակամետ կարելի է համարել միայն կենսահամակարգերը, որոնք ունակ են վերապրել նպատակի կենսագործումը որպես երջանկություն *(sukha)* և զրկանքները՝ որպես տառապանք *(dukkha)*: Այլ խոսքով՝ մենք երբեք չենք կարող ընդունել, որ սեռը, սերունդը, ռասսան, դասակարգը, ազգը, տարածքային առանձին միավորումը (համայնք, շրջան, երկիր, տարածաշրջան կամ ողջ աշխարհը), պետությունը կամ գերտերությունը կարող է նպատակ ունենալ: Դրանք բոլորն էլ վերացական են: Նպատակի իրականացումից բխող երջանկությունն ու խորտակված անուրջներից սկիզբ առնող տառապանքը ենթադրում են սուբյեկտ, որքան էլ այն պարզունակ լինի, որն ի վիճակի է ճաշակել *sukha-dukkha* աստիճանականությունը: Սոմալին նպատակներ չունի, նույնը և Միացյալ Նահանգները, բայց դրանցից յուրաքանչյուրի որոշակի վերնախավեր (և ոչ միայն նրանք) կարող են նպատակներ ունենալ՝ անգամ հստակ սահմանված: Ճիշտ նույն կերպ՝ հանածոները, ջուրը, օդը վերացարկումներ չեն, բայց մենք սովորաբար չենք ենթադրում, որ դրանք կրում են վերոհիշյալ աստիճանականությունը: *Կոնֆլիկտի* մեջ մենք ներառում ենք կյանքի բոլոր ձևերը, սակայն բացառում ենք ամեն անկենդանի մասնակցությունը:

Այսպիսով, կոնֆլիկտը վերաբերում է կյանքին՝ հստակորեն մատնանշելով հակասությունները՝ որպես կյանքի արարիչ և որպես կյանքի խաթարիչ: Երևութաբանական տեսանկյունից հակամարտության տեսությունը պետք է կենտրոնանա հենց այս հարթության վրա: Որքան խորն էլ կարողանանք քննարկել կյանքի էությունը, այնուամենայնիվ, այս մոտեցումը միշտ պետք է առկա լինի հակամարտությանը վերաբերող դատողություններում: Հակամարտությունը չի կարող ճաշակել երջանկություն կամ տառապանք, բայց այն կարող է ունենալ կյանքին բնորոշ հատկություններ, օրինակ՝ կենսացիկլեր,

[i] des Pudels Kern (գերմ.)- խսկց. հարցի էությունը: Դարձվածքը սկիզբ է առնում «Ֆաուստից» /թարգ./:

որոնց կանդրադառնանք երկրորդ գլխում: Գոյություն ունեն նաև հակամարտության ակնհայտ ու քողարկված (լատենտային) կողմերը. ակնհայտ կողմը բացահայտվում է վարքագծի միջոցով, իսկ քողարկվածը՝ վերաբերմունքի ու հակասության միջոցով:

Ակնհայտ, էմպիրիկ, տեսանելի հարթության մեջ կոնֆլիկտի մասնակիցները դրսևորում են որոշակի վարքագիծ, որը մենք կնշենք B տառով: A-ն և C-ն գտնվում են քողարկված, տեսական, ենթադրյալ հարթության մեջ: Երեքը միասին ձևավորում են հակամարտության եռանկյունին (Գծապատկեր 2.1):

Գծապատկեր 2.1. Հակամարտության եռանկյունին

Ակնհայտ հարթություն.
էմպիրիկ, դիտարկված, գիտակցված

Քողարկված հարթություն.
տեսական, ենթադրյալ, ենթագիտակցական



Սկսելով ցանկացած գագաթից՝ այս եռանկյունու օգնությամբ կարելի է հայտնաբերել և ճանաչել բոլոր վեց ուղղություններում առկա հոսքերը: Այսպիսով, համաձայն հանրահայտ ու արդյունավետ վարկածի[1]՝ հակասությունը կարելի է դիտարկել, օրինակ, որպես *հիասթափություն*, որում նպատակն արգելափակված է ինչ-որ բանով և որը հանգեցնում է ագրեսիվ վերաբերմունքի ու ագրեսիվ վարքագծի[2], ինչն էլ գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի դիտարկվում որպես «երկաթյա բանաձև»: Ագրեսիվ վարքագիծը կարող է անհամատեղելի լինել երջանկության մասին մյուս կողմի պատկերացումների հետ (եթե, իհարկե, մենք չենք խոսում «սադո-մազոխիստ» համակցության մասին), որը նախկին հակասության վրա ավելացնում է նորը՝ շահագրգիռ բոլոր կողմերի մոտ առաջ բերելով առավել ագրեսիվ վերաբերմունք ու վարքագիծ:

Բռնությունը բռնություն է ծնում. եռանկյունին վերարտադրվում է որպես պարույր, զարգանալով ճիշտ այնպես, ինչպես վեր է խոյանում կրակը, որը կանգ է առնում միայն այնժամ, երբ տունն ամբողջովին հրդեհված է: Կողմերը կարող են բռնկվել A գագաթում՝ հուզական ուժասպառման և B գագաթում՝ ֆիզիկական անկարողության հետևանքով: Այդուհանդերձ, A-ն և B-ն կարող են նաև սանձվել, իսկ/և հակասությունը՝ C-ն, կարող է սղվել: Անվերջ էսկալացիան դեպի տանջալից ավարտ՝ բացարձակ օրենք չէ: Հակամարտություններով լի մեր աշխարհում դեռևս գոյություն ունեն մարդ էակներ:

Հիմնական բարդությունն այն է, որ հիշյալ գործընթացները կարող են սկիզբ առնել նաև A կամ B գագաթներում: Կողմերից մեկը կարող է կուտակած լինել բացասական վերաբերմունք (ագրեսիվություն) կամ բացասական վարքագծային հակումներ (ագրեսիայի նախատրամադրվածություն, ունակություն) և երբ զուգահեռաբար ինչ-որ նոր բան է ի հայտ գալիս, որը ենթադրաբար կարող է խնդիր հարուցել, A-ն կամ B-ն, կամ երկուսը միասին, կարող են ակտիվանալ ու հանգեցնել նոր հիմնախնդրի: Երբ A-ն թշնամական հույ-

զերի կամ այլոց բացասաբար ընկալելու *(‘Feindbild’)*[i] ձևով դառնում է ագրեսիվ, ապա կարող ենք խոսել կոնֆլիկտի բացասական էներգիայի մասին, որ հանգում է հակասության՝ իբրև անցյալում կուտակված փորձի (օրինակ՝ հակամարտություններին չափազանց բացասական վերաբերմունք ցուցաբերելու) հետևանք: Սակայն, նույն տրամաբանությամբ, հակամարտության էներգիան կարող է լինել նաև դրական՝ համընդհանուր սիրալիր, կարեկցող, այլոց արժեքորող վերաբերմունք և սեփական «ես»-ի ու այլոց դրական ընկալումներ *(‘Freundbilder’)*[ii]: Հակամարտությունների վերաբերյալ կուտակված փորձը կարող է հանգեցնել անհատականության դրական փոխակերպումների: Բայց դրանք կարող են հանգեցնել նաև միանգամայն բացասական փոխակերպումների՝ ձևավորելով *վրդովմունքով* լեցուն դառնացած անհատականություններ:

Մենք ենթադրում ենք, որ այս ամենի մեծ մասը ենթագիտակցական է՝ քողարկված անհատների կամ դերակատարների մեջ: Բանավեճի ընթացքում երկու դերակատարներ կարող են հետևել միմյանց, գուցե նաև սեփական վարքագծին: Ներքին երկխոսությունների միջոցով նրանք կարող են ամրապնդել իրենց վստահությունը A-ի և C-ի նկատմամբ, իսկ միմյանց միջև արտաքին երկխոսությունների միջոցով կարող են ստուգել իրենց հետևությունները՝ միմյանց համար ծառայելով որպես ուղեցույց սեփական «ես»-ի ճանաչման ճանապարհին: Երկընտրանքի պարագայում անհատը/դերակատարն առավել միայնակ է: Ներքին ու արտաքին երկխոսությունները համատեղվում են, որ շատ նման է միայնակ շախմատ խաղալուն: Մարզումներն օգնում են, սակայն ներքին երկխոսության այդօրինակ վարժությունը միտված է ոչ թե պառակտված, այլ հավասարակշռված անհատականությանը:

Այժմ կարող ենք խոսել հակամարտության A-ին, B-ին և C-ին միտված մոտեցումների, ինչպես նաև A-ի, B-ի և C-ի փոխառնչությունների մասին: Առկա է ընդամենն ութ հնարավոր տարբերակ.

A=0, B=0, C=0	*հակամարտության իսպառ բացակայություն, մեռյալ վիճակ,*
A, B=0, C=0	*վերաբերմունքները/ենթադրությունները նախապատրաստված են,*
A=0, B, C=0	*վարքագծի կանոնները նախապատրաստված են,*
A, B, C=0	*վերաբերմունքը/ենթադրությունները/վարքագիծը նախապատրաստված են,*
A=0, B=0, C	*առկա է միայն հակասություն և ուրիշ ոչինչ,*
A, B=0, C	*ենթագիտակցական մակարդակն ամբողջությամբ նախապատրաստված է,*
A=0, B, C	*ծիսական կոնֆլիկտային վարքագիծ,*
A, B, C	*լիովին համակցված հակամարտություն:*

[i] Feindbild (գերմ.)- թշնամու կերպար /թարգ./
[ii] Freundbilder (գերմ.)- բարեկամի կերպարներ /թարգ./

Յուրաքանչյուր դեպքն իր պատմությունն ունի. բերված կարճ բնորոշումները ևս դա են վկայում: Վերևից ներքև կարդալով կարող ենք դատողություններ անել հակամարտությունների վերաբերյալ, փնտրել կոնֆլիկտների *անդամակցումներ* կամ ամբողջականացնել դրանք՝ սկսելով ցանկացած գագաթից ու հավելելով մյուսները: Սա ակնհայտորեն կարելի է անել վեց հնարավոր եղանակներով: Սակայն կարող ենք կարդալ նաև ներքևից վերև և դատողություններ անել կոնֆլիկների *անդամատումների* վերաբերյալ, երբ վերաբերմունքները մարում են, վարքագծի դրսևորումներն անցնում են մոռացության գիրկը, իսկ հակասությունները՝ տարալուծվում: Ես(եր)-ի կամ Այլ(ոց) երբեմն ինքնաբուխ, բայց, առավել հաճախ, գիտակցված միջամտություն է հարկավոր:

(Լիակատար) հակամարտությունը սինդրոմ է՝ եռամիասնական հայեցակարգ: Հարկ է մեծագույն նրբանկատություն հանդես բերել. «սա հակամարտություն է» պնդումը կարող է դառնալ ինքնադրսևորվող, ինքնաբացասող մարգարեություն: Երբ մարդկանց ասում ես, որ նրանք հակամարտում են, նրանք միանգամից սկսում են դրսևորել համապատասխան վարքագիծ, զգացմունքներ ու իրականացնել համապատասխան գործողություններ՝ հակասություններ տեսնելով այնտեղ, ուր դրանք իրականում չկան: Կամ, հնարավոր է, նրանք հետ են կանգնում հակամարտության անդամակցումներից՝ օրինակ, վախենալով այն ամենից, ինչը կհետևի կոնֆլիկտի ախտորոշմանը: Արդյունքում, հնարավոր է, նրանք երբեք չհանդգնեն դիմակայել իրենց սեփական հակամարտություններին:

1.3 Դերակատարների կոնֆլիկտներ և կառուցվածքային կոնֆլիկտներ

Գիտակցության/ենթագիտակցության դիալեկտիկայի մաս հանդիսացող ակնհայտի/քողարկվածի դիալեկտիկան ավելի լավ հասկանալու համար դիտարկենք հետևյալ հարցը. «Արդյո՞ք կարող ենք կոնֆլիկտ ունենալ միայն ակնհայտի հարթությունում: Կամ միայն քողարկվածի հարթությունում»: Առաջին հարցին մենք պատասխանում ենք՝ *ոչ*, երկրորդին՝ *այո*: Պատճառը՝ հաջորդիվ:

Անշուշտ, կարող ենք դիտարկել մեկ կամ երկու մարդու/դերակատարների, ով/ովքեր B հարթությունում դրսևորում է/են համերաշխություն կամ անհամերաշխություն՝ կամ երկուսն էլ: Երբ անհամերաշխությունը հասնում է առավելագույնի, կարող ենք խոսել «լարվածության», հակառակ դեպքում՝ «ոչ լարվածության» և ոչինչի մասին, երբ դրանք չեն բացառում/հավասարակշռում միմյանց: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ «լարվածությունը» կամ «ոչ լարվածությունը» (կամ դրանց դրական կողմերը, ձգողականությունը) հակամարտություն են ենթադրում: Մարդիկ, կախված իրենց անհատականություններից, որ, հնարավոր է, ձևավորվել են նախկին կոնֆլիկտների ազդեցության ներքո, հակված են վարվել այն կերպ, ինչ կերպ վարվում են՝ օրինակ, ցուցաբերել սատանաներին կամ հրեշտակներին ներհատուկ վարքագիծ, երկուսն էլ միասին կամ ոչ մեկը: Նստեցրեք *վրդովմունքով* լի երկու անձ իրար կողքի, և անմիջապես ի հայտ կգա թշնամանք, որը կդրսևորվի խոսքի կամ ֆիզիկական գործողությունների ձևով: Բայց «կոնֆլիկտ» ախտորոշումն արդարացնելու համար այդ երկուսի միջև անհրաժեշտ է ակնհայտ հակասու-

թյուն, ինչը որոշակի պայմաններում հնարավոր կլինի օգտագործել (կոնֆլիկտի) ընդհանրական ձևակերպման, դրա դինամիկայի ու փոխակերպման վերաբերյալ խելամիտ վարկածներ առաջ քաշելու նպատակով:

Այժմ պատկերացրեք, թե մենք բացահայտել ենք բովանդակությունը/հակասությունը, գուցե նաև ենթադրությունը/վերաբերմունքը, իսկ կողմը կամ կողմերը չի/չեն գիտակցում, թե ինչ է տեղի ունենում իր ներսում/իրենց միջև: Ի՞նչ կանխատեսումներ կարող են հետևել այսօրինակ ախտորոշմանը: Այն, որ ակնհայտի հարթությունում վաղ թե ուշ կդրսևորվի համապատասխան վարքագիծ:

Այժմ կարելի է պարզորոշ տարանջատել ուղղակի և անուղղակի հակամարտությունները, այն է՝ դերակատարների կոնֆլիկտներն ու կառուցվածքային կոնֆլիկտները՝ կախված այն բանից, թե որքանով է կոնֆլիկտն անդամակցված և ակնհայտ՝ ասել է թե ակներև, հստակ, տեսանելի, *զգացական*: Եկեք սկսենք երկընտրանքից (մի կողմ, երկու նպատակ), ապա դառնանք վիճաբանությանը (երկու կողմ, մեկ նպատակ, “bone of contention”[i], *կռվախնձոր*).

Դերակատարների կոնֆլիկտ. A-ն և C-ն գիտակցված են,
Կառուցվածքային կոնֆլիկտ. A-ն և C-ն ենթագիտակցության մեջ են:

Իհարկե, վարքագիծը՝ B-ն, ոչ թե լոկ ակնարկող, այլ միշտ ակնհայտ և դիտարկված է. այլապես դա վարքագիծ չէ: Ինչպես նշեցինք, այն կարող է ամբողջապես լինել աուտիստական՝[ii] համարժեքորեն կառուցված՝ որևէ A, B, C եռանկյունու հետ չառնչվող: Կողմը պարզապես վարքագիծ է դրսևորում. ինչ-որ բան շարժման մեջ է՝ նույնիսկ անշարժության մասնավոր դեպքում: Շահի կիզակենտրոնում A-ն է և C-ն. մենք սկսում ենք A-ից՝ անհատի «ներքինից», նրա վերաբերմունքներից ու ենթադրություններից: Նրա անհատականությունից:

Այստեղ հարկ է անհատականությունը ստորաբաժանել իմացության, կամեցողության ու հույզերի: Անշուշտ, մտավոր ունակությունները, ցանկությունները, մղումները, ինչպես նաև զգացմունքները խորապես առնչվում են միմյանց: Դերակատարների հակամարտության ժամանակ սուբյեկտը դերակատարն է, որը գիտակցում է ինչ *կա* (իմացություն), ինչ է ինքը *ցանկանում* (կամեցողություն), ուստի՝ ինչ *պիտի լինի* և ինչ է նա զգում (հույզ), այսինքն՝ «*կա*»-ի և «*պիտի*»-ի հարաբերակցությունը: Եթե *«պետք է լինի»*-ն միաժամանակ *«կա»*, ապա անհատը կարող է ասել. «Շնորհակալություն, ամեն ինչ կարգին է», եթե ոչ, ապա ներքին անախորժ վիճակի համարժեք բանավոր ձևակերպումը կլինի. «Ես ինձ սարսափելի վատ եմ զգում»: Ընդհանրապես, մենք պետք է ընդունենք, որ հույզերն իրական նպատակների ավելի լավ ուղեցույց են, քան իմացությունները:

Այնուհանդերձ, A-ի մեջ մենք նաև ներառել ենք «ենթադրությունները», որոնք այժմ կարող ենք մեկնաբանել որպես անհատականության առավել խորը մակարդակներում՝ գիտակցվածի ու չգիտակցվածի միջև զետեղված

---

[i] bone of contention- տարաձայնության առարկան /թարգ./

[ii] աուտիզմ- այլոց հետ հաղորդակցվելու կամ հարաբերություններ հաստատելու անհատի մտավոր անկարողությունը /թարգ./

նախահիմացություններ, նախակամեցողություններ ու նախահույզեր, որոնք հեշտ չեն վեր հանվում: Կարող է արհեստավարժ օգնության կարիք առաջանալ: Ըստ Ֆրոյդի, այս առավել խորը շերտերի կազմակերպվածությունը հասկանալու համար կարելի է դիմել երազներին, նախահիմացություններ/նախակամեցողություններ/նախահույզեր մակարդակում ձևավորվող անհատականության ներքին՝ «իմացություններ/կամեցողություններ/հույզեր» զգացական գործընթացի բեկորներին:

Այնուհետև գալիս է C գագաթը՝ հակասություններ նպատակադրումների միջև: Հրապարակել C-ն, կամ այն ակնհայտ դարձնել, նշանակում է գիտակցել, թե որտեղ է անհամատեղելիությունը, որոնք են այն նպատակադրումները, որ կանգնած են միմյանց ճանապարհին: Ապա դերակատարը ստանում է հակասությունների քարտեզը՝ ներառյալ իր սեփական իմացությունները: Այժմ արդեն գործ ունենք գիտակից անհատի հետ, որը վստահ է ոչ միայն սեփական պատկերացումների, կարիքների ու զգացմունքների վրա, այլ նաև քաջատեղյակ է խոչընդոտներին: Այլ խոսքով՝ *ենթական* պատրաստ է «ղեկավարել» ստորոգյալ ու լրացում պարունակող նախադասությունը, ուղղակի վարքագիծ դրսևորելու փոխարեն պատրաստ է նպատակաուղղված գործել:

Ինչպե՞ս կոչենք A-ն և C-ն ենթագիտակցականից, նույնիսկ անգիտակցականից վեր հանելու գործընթացը: Հետևելով Պաուլո Ֆրեյրիին[3], մենք այն դիտարկում ենք որպես *գիտակցականացում*, իսկ դրա հակառակ գործընթացը՝ որպես *անգիտակցականացում:* Սա հիմնարար գործընթաց է. այլապես մի՞թե հակամարտությունը կարող է գիտակցաբար փոխակերպվել, եթե հակամարտող կողմերը գիտակից սուբյեկտներ, իրական դերակատարներ չեն: Հակառակ դեպքում, հակամարտությունը դերակատարներին կփոխակերպի ոչ այլ կերպ, քան որպես օբյեկտներ, որպես հակամարտության կողմեր: Հակամարտող կողմն ընդամենը ճանապարհ ելած ուղևոր է և ոչ թե գործընթացը կառավարող վարորդ:

Եվ այնուամենայնիվ, ինչպես ցույց կտրվի երրորդ գլխում, գիտակցականացումը հակամարտության փոխակերպման միայն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է: Ավելին, դերակատարն այսպես թե այնպես պետք է փոխակերպվի, սակայն այս դեպքում այդ փոխակերպմանը մասնակից է դառնում նաև գիտակցությունը՝ դրանով իսկ մեծացնելով այդ փոխակերպումն ուղղորդելու հնարավորությունը՝ ներառելով սեփական «ես»-ը: Այստեղ մենք կարող ենք մի շատ պարզ պատճառ նշել, թե ինչու գիտակցականացումը լոկ անհրաժեշտ պայման է. հակամարտության էությունը պարզապես կարող է սխալ կամ ոչ համարժեք ընկալված լինել: Մարքսն անդրադառնում էր կեղծ գիտակցման գոյությանը: Հանդիսանալով կամ չհանդիսանալով հակամարտող կողմ՝ մենք, միևնույն է, ձևավորում ենք հակամարտության մեր պատկերը՝ մեր և մյուս կողմի համար ձևակերպված A, B, C գագաթներով: Անկախ այն բանից՝ սա արվում է մասնակցի կողմից, թե դիտորդի, միևնույն է, այդ պատկերը մշտապես գոյություն է ունենալու լոկ որպես վարկած, որը կրկին ու կրկին պետք է ստուգվի ու վերանայվի: Կեղծ գիտակցումը չհաստատված վարկած է, անիրական պատկեր, որը կարող է դրսևորվել և երբևէ կդրսևորվի յուրաքանչյուրիս մոտ:

Եթե գիտակցականացումն այդչափ էական է, ապա ինչո՞ւ ենք մենք մտոմի պատրաստ դրա բացասմանը՝ անգիտակցականացմանը: Նախ, որովհետև այսպես թե այնպես դա տեղի է ունենում (հակամարտությունները մոռացվում, անգամ դուրս են մղվում գիտակցությունից), իսկ երբեմն դա ուղղակի

անհրաժեշտ է, անգամ՝ ցանկալի: Մենք չենք կարող անընդհատ գիտակցել բոլոր այն կոնֆլիկտները, որոնցում մենք այս կամ այն կերպ հանդես ենք գալիս որպես հակամարտող կողմ: Մենք պետք է պատրաստակամ և ունակ լինենք «վերականգնելու» դրանք հիշողության մեջ գրանցելուց հետո (եթե կիրառելու լինենք համարժեք փոխաբերություններ այսօր արդեն համաշխարհային մշակույթի մաս կազմող համակարգչային տերմինաբանությունից): Դրանք չեն կարող առկա լինել մշտապես և անընդհատ: Որոշակի տեսակավորումը մարդկային ու սոցիալական գոյատևման հիմնական պայմանն է: Բայց պահեստավորե՛ք դրանք, «գրանցե՛ք», մի՛ «ջնջեք»:

Հաջորդ էական հարցը, որը շատ հեռու է վերացականի (մետաֆիզիկականի) տիրույթից՝ ո՞վ է իրականացնում այս ամենը, ո՞վ է հանդիսանում գիտակցականացման գործընթացի սուբյեկտը: Ո՞վ է իմացությունները/կամեցողությունները/հույզերը վեր հանում դեպի գիտակցություն: Դա չի կարող լինել ենթագիտակցությունը/անգիտակցությունը, եթե մենք ընդունում ենք, որ միտքը չի կարող միաժամանակ հանդես գալ որպես այս գործընթացի և՛ օբյեկտ, և՛ սուբյեկտ: Կամ գո՞ւցե սա ավելի շուտ վերացական/լեզվաբանական խնդիր է, քան հոգեբանական: Տողերիս հեղինակը նախընտրում է մի երրորդ կատեգորիա ներմուծել, որն ի հավելումն մարմնի ու մտքի (անհատականությունը՝ որպես նախահիմացությունների, նախակամեցողությունների ու նախահույզերի գտնվելու վայր) նույնպես հանդիսանում է մարդու՝ որպես բանական էակի *(homo sapiens)* բաղկացուցիչ: Խոսքը *ոգու* մասին է: Ոգին կարող ենք պատկերացնել որպես մարմնի *(soma)* ու մտքի *(psyche)* դրսևորումների արտացոլման տեղ[4]: Արտացոլման այդ կարողությունն սկսում է գործել A, B և C գագաթներում. արդյունքում կայանում է հակամարտության՝ լիովին անդամակցված, դերակատարների գիտակցության մեջ ամրագրված պատկերը:

Կփոխվի՞ արդյոք այս գործընթացը կախված այն բանից՝ մենք գործ ունենք վեճի՞, թե՞ երկընտրանքի հետ: Ոչ այնքան: Կողմերի մոտ երկընտրանքը գիտակցված է դառնում ներքին երկխոսության միջոցով: Վեճի դեպքում գործ ունենք մեկից ավելի կողմերի հետ, որոնց մոտ գիտակցականացում է տեղի ունենում: Դրանք ձևավորում են հակամարտությունների (որոնց համար իրենք հակամարտող կողմ են հանդիսանում) քիչ թե շատ իրատեսական պատկերներ: Արդյո՞ք պետք է պահանջենք, որ այդ պատկերները համընկնեն: Ոչ, սակայն ակնհայտ է, որ արտաքին երկխոսության միջոցով այդ պատկերները համադրելը հակամարտությունների փոխակերպման գործընթացի կարևոր բաղկացուցիչներից է. համատեղելի ոչինչ չհայտնաբերելն ինքնին դեռ չի նշանակում, թե համատեղ դիտարկված պատկերն անիրական է: Նմանապես համատեղ դիտարկված պատկերը կարող է անիրական լինել նախահիմացությունների հետևանքով[5]: Ասվածն ստուգվում է հաջորդող զարգացումներով:

Այժմ անդրադառնանք կառուցվածքային կամ անուղղակի հակամարտություններին, երբ A-ն և C-ն գիտակցականի հարթության մեջ չեն, այլ ներառված են ենթագիտակցականի տիրույթ: Դրանց դուրսմղումը ենթագիտակցականի տիրույթից ցավագին, անգամ անհնար գործընթաց է: Հակասությունն առկա է, սակայն բացակայում է դրա գիտակցումը: Բացակայում է անգամ նպատակի գիտակցումը, այլ խոսքով՝ բացակայում են ցանկությունները, հետևաբար նաև ակնհայտ զգացմունքները, որովհետև բացակայում է որևէ կա/պետք է լինի համատեղման (կամ դրա բացակայության) գիտակցումը:

Չկա անգամ կեղծ գիտակցում, քանզի գիտակցումն իսպառ բացակայում է: Ի՞նչ ունենք արդյունքում. միայն հարցադրումը, թե ի՞նչ իրավունքով ենք ընդհանրապես խոսում հակամարտության մասին:

Անհատի ներքին երկընտրանքի դեպքում պատասխանն ակնհայտ է. հոգեվերլուծությունն ամբողջությամբ հենց դրան է նվիրված: Հակասությունը, օրինակ՝ ինքնության և գեր-Եսի միջև, ընկած է անհատականության խորին խորքում կամ *անհատի (ներքին) համակարգի կառուցվածքում*. դա և իր հոմոլոգը կսահմանվեն հաջորդ պարբերության մեջ: Սակայն այս նախացանկությունների միջև առկա հակասությունը մատչելի չէ հակասությունը կրողի ոգուն: Դա չի նշանակում, որ նա չի կարող «սաստիկ վատ» զգալ և տարօրինակ վարքագիծ դրսևորել, սակայն նա չի գիտակցում հակամարտության եռանկյունին, կամ թե անգամ ինչ-որ չափով գիտակցում է, միևնույն է, դա նրա համար հեռու է իրատեսական լինելուց: Արտաքին, երբեմն առավելապես Այլոց, քան սեփական Ես-ի համար տեսանելի վարքագիծն ընդունված է դասակարգել իբրև «ախտանշաններ», որոնք էապես բնորոշ են A-ին և C-ին: Բայց գիտակցելը, կարծես, վեր է նրա հնարավորություններից: Կարող է մասնագիտական օգնության տեսքով միջամտություն պահանջվել. բոլորովին այլ խնդիր է, թե որքանո՞վ արհեստավարժ է այդ օգնությունը: Այս մասին կխոսենք նաև չորրորդ գլխում:

Այժմ անդրադառնանք վեճին: Կողմերն ընդհարված են (առկա է հակասություն): Սակայն կողմերը չեն գիտակցում ո՛չ հակասությունը, ո՛չ էլ այն ձևավորող նպատակադրումը: Հույզերը կարող են կապ չունենալ հակասության հետ, որն էլ, հնարավոր է, նույնիսկ չի առնչվում հիմախնդրին: Հակասությունն ընկած է դրանք շաղկապող համակարգում, կամ, եթե կիրառելու լինենք հոմոլոգ սահմանումը՝ *սոցիալական համակարգի կառուցվածքում*: Վերցրեք երկու սեռերը հայրիշխանության պարագայում. ակնհայտ հակամարտություն գոյություն ունի. այն արդեն գոյություն ուներ դեռ այն ժամանակ, երբ Հենրի Իբսենը գրեց իր *"A Doll's House"* գիրքն ու մի հսկա քայլ առաջ մղեց կոլեկտիվ գիտակցումը: Նույնկերպ *համաշխարհային համակարգի կառուցվածքում* ԱՄՆ-ի և Կուբայի միջև հակասությունը չի սկսվել խնդրահարույց Ֆիդել Կաստրոյի հայտնվելով (առավել դեպի B-ն միտված դասը), և ոչ էլ Հյուսիսային Ամերիկայում բնիկների ու անգլոսաքսոնական ցեղերի միջցեղային հակասություններն են սկիզբ առել այսպես կոչված «հնդկացիների հուզումներից»: Դրանք լոկ դրսևորումներ էին:

Սակայն արդյո՞ք այս վերջին օրինակներում մենք գործ չունեինք գիտակցված նպատակների հետ: Որոշակի իմաստով՝ այո, բայց հազիվ թե ամբողջապես գիտակցված էր այն ամենն, ինչը դրված էր խաղասեղանին: Մենք կարիք ունենք ձևակերպելու ենթագիտակցաբար ձևավորված նպատակների հայեցակարգը, այսինքն՝ այն նպատակների, որ օբյեկտիվորեն առկա են, եթե անգամ դրանց կրողը չի գիտակցում դա: Մենք դրանք կանվանենք *շահեր*, իսկ գիտակցված նպատակները՝ *արժեքներ*: Դրանք կարող են լինել նյութական և ոչ նյութական: Մենք չենք ենթադրում, որ այս ենթագիտակցական շահերը նյութական են, իսկ արժեքները՝ գաղափարախոսական, հետևաբար՝ նաև ոչ նյութական: Երկուսն էլ կարող են լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական. միայն գիտակցականացումն է, որ տարբերություն է մտցնում[6]:

Այժմ կարող ենք ասել, որ ներանհատական կոնֆլիկտում անհատն ունի իր թե՛ ինքնությանը, և թե՛ գեր-Եսին արժանին հատուցող շահեր: Գիտակցելու

աստիճանը չափազանց ցածր է, գրեթե զրո: Այնուամենայնիվ, գիտակցականացման միջոցով այդ շահերը կարող են վերածվել արժեքների. անհատը որպես դերակատար և որպես օբյեկտ, կարող է գիտակցաբար արժևորել երկուսն էլ, որոշել, որ տեղի ունի անհամատեղելիություն և ընտրել՝ գերապատվություն տալ մեկի՞ն, թե՞ մյուսին: Ինքնությանը շարունակաբար գերապատվություն տալն անհատին բնորոշում է որպես ծայր աստիճան զգայուն, իսկ գեր-Եսին շարունակաբար գերապատվություն տալը նրան բնութագրում է որպես ծայր աստիճան անկայուն: Կարող են կիրառվել նաև այլ բառազույգեր՝ նյութական/հոգևոր, մատերիալիստական/իդեալիստական, էպիկուրյան/պլատոնական կամ Սորոկինի «հուզական»/«դատողական»: Այնուհետև Սորոկինը շարունակում է սահմանել այդ երկուսի համադրելի միակցությունը՝ կոչելով այն «իդեալիստական», իսկ ոչ-համադրելի միակցությունը՝ որպես էկլեկտիկ/խառնուրդային/հավաքական: Ֆրոյդը համադրելի միակցություններն անվանում էր ուժեղ «ես»-ի դրսևորում, որ ներփակված է անհատականության մեջ իբրև ձևավորված իմացություններ/կամեցողություններ/հույզեր եռյակի հայտանիշ, որը կարող է արտադրել և վերարտադրել խելամիտ հավասարակշռվածությամբ երկուսին էլ արժանին հատուցող վարքագիծ: Այդուհանդերձ, ինքնության ու գեր-Եսի և չափազանց թույլ «ես»-ի չհամակցված խառնուրդը ևս հասկանալի է, բայց այս ամենը վերաբերում է փոխակերպման տեսությանը: Այստեղ մենք ընդամենը փորձարկեցինք հայեցակարգային մեքենան:

Դերակատարների կոնֆլիկտները գիտակցական են, կառուցվածքային հակամարտությունները՝ ոչ. դրանք կարող են հանդես գալ թե՛ որպես վեճ, թե՛ որպես երկընտրանք: Եվ, ինչպես վերը նշվեց, առկա են նաև այլ միջանկյալ ձևեր կամ հատված կոնֆլիկտներ, որոնք գիտակցական մակարդակում ամբողջապես անդամակցված չեն կամ ընդհանրապես անդամակցված չեն: Մեր նպատակների համար, սակայն, այսօրինակ տարանջատումն էլ բավական է:

1.4 Կոմպլեքսայնություն. տարրական և համալիր կոնֆլիկտներ

Այժմ կարող ենք համակարգել վերոհիշյալ դիտարկումները՝ հիմքում ունենալով երկու պարզ փոփոխականներ. *m* – հակամարտության մեջ ներառված դերակատարների թիվը, *n* - դերակատարների ներքին երկընտրանքների ու դերակատարների միջև վեճերի թեմաների կամ, պարզապես, նպատակների քանակը:

Դիտարկենք 2.2 գծանկարը: Այն շատ պարզ է. m դերակատարներով և n նպատակներով հակամարտությունը բացահայտված է *(m, n)* դիրքում: Այն մտավոր հարթության մեջ կարգավորելու համար մենք պետք է մտքում պահենք ամենաքիչը *m* դերակատարներ և *n* նպատակներ, որ նշանակում է ձևավորել m+n միավորներ:

Այժմ կարող ենք ձևակերպել հակամարտության *m+n կոմպլեքսայնությունը՝ c* –ն: Սակայն մեզ համար առավել գերադասելի է c-ի՝ $c = m + n - 2$ (կամ $c = m \times n - 1$) մեծությունը.

c < 0. կառուցվածքային կոնֆլիկտ, բացակայում են դերակատարներն ու նպատակները (0,0),

c = 0. մեկ դերակատար, մեկ չիրականացված նպատակ, հիասթափություն (1,1),

c = 1. տարրական կոնֆլիկտներ. երկընտրանքներ (1,2) կամ վեճեր (2,1),

c > 1. համալիր կոնֆլիկտներ (m, n):

Գծանկար 2.2. Դերակատարների (m) և նպատակների (n) քանակը

n=n	x	(1,n)	(2,n)	(3,n)		(m,n)
n=3	x	(1,3)	(2,3)	(3,3)		(m,3)
n=2	x	(1,2)	(2,2)	(3,2)		(m,2)
n=1	x	(1,1)	(2,1)	(3,1)		(m,1)
n=0	(0,0)	x	x	x		x
	m=0	m=1	m=2	m=3		m=m

X – դատարկ կամ անհետաքրքիր դիտարկված և, հետևաբար, բաց թողնված համակցություններ

Ավելի դյուրին դարձնելու համար քննարկումը, մենք այստեղ կներմուծենք միաչափ մոտեցումը, որտեղ կոմպլեքսայնությունը հենց կոնֆլիկտի հիմնարար չափանիշն է: Այս մոտեցումն առանձնանում է իր ընդգծված բացատրական ու հիմնավորող (պրաքսեոլոգիական) հնարավորություններով: Կառուցվածքային հակամարտությունը, հիասթափությունը, դերակատարների տարրական ու համալիր կոնֆլիկտները, որ ի հայտ են գալիս վեճի, երկընտրանքի կամ այդ երկուսի միատեղման ձևով, իրապես տարբեր երևույթներ են: Սակայն այսպիսի մոտեցումը մեզ հնարավորություն է ընձեռում դրանք դիտարկել համատեղ և հավուր պատշաճի:

Կառուցվածքայինից դերակատարների հակամարտություններին (կամ հակառակը) փոխակերպումը մենք հետազոտեցինք գիտակցականացման/անգիտակցականացման տեսանկյունից: Նորն այստեղ այն գաղափարն է, որ փոխակերպումն իրականացվում է հիասթափության միջոցով, որի դեպքում մեկ դերակատարն ունի մեկ նպատակ, սակայն նպատակն ինքը փակի տակ է: Կա խոչընդոտ: Կա զրոյական կոնֆլիկտ, որը սակայն բավականաչափ նման է իսկականին, հետևաբար, այն պետք է դիտարկել որպես հակամարտությունների ընդհանուր տեսության կարևոր մաս: Ինչո՞ւ: Պատճառները շատ են. դրանց թվում առանձնանում է խորտակում-ագրեսիա (կամ կործանում) վարկածը, ինչպես նաև հավասարապես կարևոր խորտակում-արարում վարկածը:

Որևէ դերակատար, ով չի գիտակցում, թե ինչ է կատարվում իր հետ անձնական, սոցիալական կամ համաշխարհային համակարգերի կառուցվածքում, կարող է հիասթափության ակնթարթներ ապրել՝ որպես նախորդող անցողիկ փուլ մինչ կատարյալ կոնֆլիկտի առաջացման պահը, ինչպես օրինակ, բանվոր դասակարգի հիասթափությունն առ այն, որ երբեք ի վիճակի չի լինում իրագործելու միջին խավի նպատակները, կամ կանաց հիասթափու-

թյունն առ այն, որ ի վիճակի չեն տնօրինելու անձնական կյանքը: Ավելի ուշ դերակատարը կարող է հստակորեն գիտակցել, որ ճանապարհին չափազանց կոնկրետ խոչընդոտ կա (դասակարգային հասարակությունը, հայրիշխանությունը)՝ հակառակ կողմում կանգնած միանգամայն որոշակի դերակատարներով: Հիասթափության փուլն ի հայտ է գալիս ինչպես սառցաշերտը սառնամանիքին, իսկ գիտակցությունը սառցաշերտի տակ գտնվող սառը ջրի նման դուրս է ճգտում, դեպի «մաքուր օդ»:

Ի հայտ գալով՝ գիտակցությունը (իմա՝ մարդկային ոգին) դեմ է առնում ոչ պակաս վճռորոշ հիմնահարցի՝ պարզեցում ի հակադրություն կոմպլեքսայնացման: Ահա հակամարտության երեք վարկածները.

Դրույթ 1. իրական կյանքում հակամարտությունները սովորաբար չափազանց համալիր են. (1,2) կամ (2,1) տիպի տարրական կոնֆլիկտները հանդիպում են միայն դասագրքերում,

Դրույթ 2. որքան ավելի համալիր է կոնֆլիկտը, այնքան ավելի մեծ է դրա ոչ բռնի, ստեղծագործական փոխակերպման հնարավորությունը,

Դրույթ 3. հակամարտության լարվածության տենդում առաջին զոհերից մեկը հենց կոնֆլիկտի կոմպլեքսայնությունն է:

Այնուհետև կոմպլեքսայնությունը նվազում է բևեռայնացման ճանապարհով, ինչը հանգեցնում է տարրական կոնֆլիկտների վերհանմանը՝ սրա և նրա, մեր և նրանց միջև անողոք ընտրությանը: Երկրորդ դրույթն ակնհայտորեն լավ նորություն է, իսկ երրորդ դրույթը՝ վատ: Որքան ավելի համալիր է հակամարտության պատկերը, այնքան մեծ է դրա փոխակերպման հնարավորությունը, ինչի մասին կխոսենք հաջորդիվ: Սա կարելի է բերել իբրև փաստարկ հոգուտ *կոմպլեքսայնացման*, հոգուտ դերակատարներն ու նպատակները ենթահամակարգերի ու ենթանպատակների բաժանման, նոր դերակատարների ու նոր նպատակների ներառման, այստեղ-այնտեղ փոխակերպումներ անելուն՝ հույս ունենալով հասնել որոշակի ընդհանրացումների:

Խնդիրը նրանում է *(the Scylla)*, որ հակամարտությունը կարող է այն աստիճան համալիր լինել, որ մարդկային միտքը չկարողանա մշակել այն: Եթե մենք ղեկավարվենք 7 մոգական թվանշանով՝ որպես տարրերի առավելագույն քանակ, որ մարդ էակը կարող է ստեղծագործաբար մշակել, ապա առավելագույնը կարող ենք դիտարկել 3 կամ 4 դերակատարներ ու 3 կամ 4 նպատակներ, այլ խոսքով՝ $c = 4, 5$ կամ 6: Անշուշտ, կարելի է նաև կիրառել *պարզեցումը*, սակայն այդ դեպքում առաջանում է բևեռայնացման վտանգ *(the Charybdis)*, որը կարող է հանգեցնել տարրական կոնֆլիկտների: Հիմնական խնդիրն այստեղ այն է, թե ինչպես հասնել կոմպլեքսայնացման ու բևեռայնացման օպտիմալ մակարդակի՝ $c = 5$ արժեքի շրջակայքում:

1.5 Տիպաբանություն. հակամարտության հարթությունները

Հակամարտությունը ենթադրում է նպատակամետ համակարգեր, վերջիններս էլ ենթադրում են կյանք. իսկ կյանք կա շատ տեղերում: Այստեղ ուսումնասիրվող տիպաբանությունը հիմնված է այս գրքում նկարագրված վեց՝ բնու-

թյան, անհատի, հասարակության, աշխարհի, մշակույթի ու ժամանակի[7] հարթությունների վրա և համակցված է երկընտրանք-վեճ տարբերակման հետ, որը մենք կներկայացնենք իբրև ներ-/միջ- (ներքին/միջև) տարբերակում: Այդպիսին է 2.3 գծանկարում պատկերված տիպաբանությունը.

Գծանկար 2..3. Հակամարտության հարթությունների տիպաբանությունը

Հարթություն	Ներ-. երկընտրանք	Միջ-. վեճ
Բնություն		
Անհատ		
Հասարակություն		
Աշխարհ		ոչ մի դեպք
Մշակույթ		
Ժամանակ		

Անհատի, հասարակության և աշխարհի համար երկընտրանքներն ու վեճերն արդեն ներկայացված են, միայն ներաշխարհային վեճն է էմպիրիկորեն դատարկ կատեգորիա: Միջհասարակական կատեգորիան, անշուշտ, գործնականում շատ հարուստ է. այս մասնակի համակցությունը կիրառվում է «միջազգային հարաբերություններ» անվան տակ («աշխարհի ուսումնասիրություններ» անվանումն առավել տեղին կլիներ) միջ-երկրային ու միջ-ազգային հարաբերությունների (որպես առանձին դեպք) հետ մեկտեղ:

Բնության, մշակույթի ու ժամանակի առումով ավելին կարելի է ասել: Որպես միջ-բնականի օրինակ կարելի է դիտարկել միջ-տեսակային կոնֆլիկտները, որոնց հատուկ նշանակություն է տվել Դարվինն իր «գոյատևում են ամենահարմարվողները» փոխաբերությամբ, որը հետագայում մեղմվեց Կրոպոտկինի «փոխադարձ օգնության» գաղափարով:

Ներ-տեսակային համակցությունները մեր ուշադրությունը կարող են ուղղել տեսակների գենետիկ կոդերում առկա առավել խորը հակասությունների վրա: Նույնը վերաբերում է նաև ներ-մշակույթին: Այնուհանդերձ, հակամարտության պարադիգմը, անգամ դրա հայեցակարգը կիրառելու նպատակով մենք պետք է ընդունենք, որ մշակութային երկընտրանքի (օրինակ՝ Արևմուտքի քաղաքական մշակույթում ազատությունն ընդդեմ հավասարության) կողմեր հանդիսանում են մարդիկ: Պետք է ենթադրել, որ նույնը ճիշտ է նաև միջ-մշակութային վեճերի համար: Այստեղ ընթերցողը կարող է սեղանի վրա կողք-կողքի դնել Աստվածաշունչն ու Ղուրանը և փորձել դրանց ներսում կամ երկուսի միջև լարվածություն հայտնաբերել: Այժմ նույնը փորձեք կատարել քրիստոնեական և իսլամական աստվածաբանների հետ (իհարկե ոչ սեղանի վրա դնելով նրանց), և արդյունքը զգալիորեն ավելի դինամիկ կլինի: Որպեսզի հակամարտություններն ի հայտ գան, անհրաժեշտ են նպատակների կենդանի կրողներ:

Իսկ ժամանա՞կը: Այն մեկնաբանելու համար խիստ կարևոր է տարանջատել սինքրոն և դիաքրոն, այսինքն՝ ներ- և միջ-սերնդային հակամարտությունները: Վերջիններս առավել իմաստավորվում են բնության աղտոտվածության համատեքստում: Սերունդն ապրում է ոչ միայն բնության, այլ նաև իր ժառանգների (հաջորդ սերնդի) հաշվին. *après nous le déluge*[8].

2.3 աղյուսակը կարող է օգտագործվել հակամարտությունների և դրանց պատկերների ներսում ընթացող բազմաթիվ գործընթացները վեր հանելու նպատակով: Ներանհատական երկընտրանքի վերջնական արդյունքը կարող

է լինել օտարացումը՝ ընդհանրացված իմաստով գուցեև հանգեցնելով անզգայության կամ մտագարության, որն, ի վերջո, ավարտվում է անձնասպանության աստիճանի հասնող ինքնաոչնչացմամբ: Նմանապես միջ-անհատական վեճի վերջնական արդյունքը ևս կարող է լինել օտարացումը կամ մշտական լարվածությունը, որն ավարտվում է մարդասպանության աստիճանի հասնող ուրիշի ոչնչացմամբ: Այս գործընթացներն իրարամերժ չեն, դրանք կարող են զուգահեռ ընթանալ: Այնժամ երկու հակամարտություններն էլ կարող են ծառայեցվել արարման ու կյանքի ամրապնդման նպատակին:

Ներ-հասարակական երկընտրանքն այնժամ դիտարկվում է որպես կոլեկտիվ իրացվող ներ-անհատական երկընտրանք, ինչպես, ասենք, ֆրանսիական բուրժուազիայի ֆրանսիական-սոցիալիստական-հրեական կամ գերմանական-նացիստական-հակա-սեմիտական երկընտրանքը: Հնարավորություններից մեկն անզգայությունն է, որով, օրինակ, 1940թ. մայիսին ֆրանսիացիներն արձագանքեցին գերմանական արշավանքին: Որոշ ժամանակ անց, այնուհանդերձ, ներքին հակասությունը վերաճում է արտաքին հակասության, այստեղ՝ *դիմադրության* և *համագործակցության* միջև:

Եվ, համապատասխանաբար, արդի իրականության մեջ երկրագնդի վրա ամենուրեք դրսևորվող ներ-աշխարհային երկընտրանքները, ինչպես աճն ընդդեմ բաշխման կամ աճն ընդդեմ շրջակա միջավայրի, որ երբեմն հանգեցնում է անզգայության, բայց հիմնականում կոչված է կիսելու բևեռայնացումը, օրինակ, սառը պատերազմի տարիներին աճը մարմնավորող կապիտալիստական բլոկի (հաճախ առանց որևէ բաշխման) և բաշխումը մարմնավորող սոցիալիստական ճամբարի (հաճախ առանց որևէ աճի) միջև: Աճի ճամբարը հաղթեց, թերևս, հաղթանակ արձանագրելով նաև բնապահպանական ճամբարի նկատմամբ՝ չնայած (կամ ի շնորհիվ) «ինքնահարատ զարգացման» տիպի բանավոր փոխզիջումներին:

Բազմաթիվ ջանքեր են ներդրվել 2.3 գծանկարում (կամ նմանօրինակ այլ գծանկարներում) պատկերված *պատճառական գործընթացները* հայտնաբերելու նպատակով, մասնավորապես՝ դրանք ներ-անհատական հակասություններում (ինքնության ու գեր-*Եսի* միջև) արմատավորելու Ֆրոյդի մտածողության տեսանկյունից հերոսական ջանքերը և ներ-սոցիալական հակասություններում (կապիտալի և աշխատուժի կամ, առավել աննկատ, արտադրության միջոցների ու եղանակների միջև) արմատավորելու Մարքսի փորձերը: Չժխտելով պատճառահետևանքային կապերը, այնուամենայնիվ, պետք է նշել, որ դրանք միևնույն տեսակի մեջ արմատավորելու ռեդուկցիոնիստական ջանքերն ի սկզբանե դատապարտված են: Այդուհանդերձ, միակ փաստարկը հակամարտության գործընթացի տարբեր ձևերի իզոմորֆիզմն է: Դրանցից մեկն օգտագործելով որպես նախատիպ՝ մարդ դիտորդը կարող է պատճառական շղթա հայտնաբերել՝ մնացած բոլորի համար ամրագրելով միևնույն (փոխաբերական) գործընթացը:

1.6 Կոնֆլիկտների ձևավորումն ու փոխակերպումը

Վերոշարադրյալ գլուխներում բազմիցս խոսվեց դերակատարների ու նպատակների, դրանց թվաքանակի, ինչպես նաև անհատի, սոցիալական ու աշխարհի համակարգերի (կարող ենք ավելացնել նաև բնության, մշակութային

ու ժամանակային հարթությունները) կառուցվածքներում դրանց միջև առկա առնչությունների մասին: Ժամանակն է ընդգծել, որ նպատակներն, անշուշտ, ամենևին էլ անհամատեղելի չեն, իսկ դերակատարներն ամենևին էլ պարտադիր չէ, որ ընդգրկված լինեն երկընտրանքներում, վեճերում կամ դրանց քիչ թե շատ համալիր համակցություններում:

Եկեք նպատակամետ համակարգերն անվանենք պարզապես *ֆորմացիաներ:* Այն սոսկ նպատակների կամ դերակատարների ցուցակ կամ համակարգ չէ. վերոհիշյալին առնչվող համակարգերում առկա է կառուցվածք (այսինքն՝ փոխազդեցության կառուցվածք): Գոյություն ունի փոխադարձ կախվածություն: Այնժամ ֆորմացիան կարող է լինել *ներդաշնակ կամ համատեղված* (որ նշանակում է համա-կենսա-հաստատ*)* այն աստիճանի, որ մի նպատակադրման ձեռքբերումը փոխադարձաբար առնչվում է մյուսի ձեռքբերմանը: Ներդաշնակ դաշինքին բնորոշ է հետևյալ ձևակերպումը. մեկի *sukha-ն (երանություն)* ընթանում է մյուսի *sukha-ին* համաքայլ: Սակայն եթե մեկի *sukha-ն* ընթանում է մյուսի *dukkha-ին (տառապանք)* համաքայլ, մենք ակնհայտորեն գործ ունենք *աններդաշնակ կամ անբնական* ֆորմացիայի հետ՝ մեկի համար կյանքի ամրապնդում մյուսի կյանքի քայքայման հաշվին: Ֆորմացիան վերածվում է կոնֆլիկտային ֆորմացիայի:

Ակնհայտը պետք է շեշտվի նորից ու նորից՝ իրական-կենսական ցանկացած ֆորմացիային բնորոշ են թե՛ ներդաշնակ, թե՛ աններդաշնակ հայտանիշներ: Կարելի է գտնել թե՛ հակամարտություն, թե՛ համագործակցություն. կողք-կողքի ներկա են և՛ Դարվինը, և՛ Կրոպոտկինը: *Հակամարտության ձևավորման գործընթացում առավել գերիշխող է ֆորմացիայի աններդաշնակ հայտանիշը:* Բայց դա ոչ մի դեպքում չպետք է արգելի տեսնել համագործակցող, ներդաշնակ հայտանիշներ, որոնք կարող են լավագույն հիմք հանդիսանալ հակամարտության փոխակերպման համար:

Ծանոթագրություններ.

---

[1] Դասական տեքստը տե՛ս՝ Dollard, Miller, Doob and Mowrer, *Frustration and Aggression,* London: Kegan Paul, 1944. Aubrey J. Yates, *Frustration and Conflict,* New York: Wiley, 1962.

[2] Տե՛ս՝ Piero Giorgi, *"The Origin of Violence by Cultural Evolution in Humans".*

[3] Մասնավորապես նրա *«Կեղեքվածների մանկավարժություն»* աշխատությանը: Ամենևին չանհանգստանալով, որ դիպուկ տերմինը շրջանառության մեջ է դրել Ֆրեյրին, այստեղ մենք այն օգտագործել ենք ճիշտ նույն իմաստով: Մենք կարող էինք կիրառել նաև «գիտակցություն» հիմքով որևէ տերմին, ասենք՝ «գիտակցության ձևավորում» (գերմաներեն՝ *Bewusstmachung)*: Այս տերմինի ժխտական ձևը, սակայն, անգլերենում դժվար է գտնել (գերմաներենում *Umbewusstachung* բառը հնարավոր է օգտագործել): Այնուամենայնիվ, Ֆրեյրիի կողմից «գիտակցություն» բառի փոխարեն «խիղճ» բառի օգտագործումը ավելի շատ միտված է ցանկություններին ու հույզերին, քան իմացություններին:

[4] Մեզ՝ մարդ-էակներիս համար առավել հարմար ենթադրությունն այն է, որ ոգին ոչ այլ ինչ է, եթե ոչ *differentia specifica* (լատ. տեսակային տարբերություն /թարգ./), որը մեզ տարբերակում է բույսերից ու կենդանիներից: Դուցե: Ինքս երբևէ դելֆին եղած չլինելով՝ գերադասում եմ ագնոստիկ (հուն. ոչ-իմացական, անճանաչելի /թարգ./) տեսակետը:

[5] Տիեզերաբանության ողջ տեսությունը, քաղաքակրթության խորը մշակույթը նախագծված են կոլեկտիվ ենթագիտակցության մեջ բաշխված նախահիմացությունները հաղթահարելու նպատակով (տե՛ս՝ սույն գրքի IV գլուխը):

[6] Այսպիսով, մի բան է այն, ինչ դերակատարները հրամցնում են իբրև իրենց ցանկություններ (սա այն սահմանն է, ուր քաղաքագիտությունը հակված է կանգ առնելու), մի այլ բան է, երբ նրանք հավատում են, որ ցանկանում են (այստեղ կարող են միջամտել պատմաբանները՝ մատնանշելով, որ սա կարող է տարբերվել իրենց ասածներից): Բոլորովին այլ բան է, ինչ նրանք ենթագիտակցաբար ցանկանում են, այսինքն՝ ցանկանում են, բայց իրենք դա չեն գիտակցում (այստեղ միջամտում են հոգեվերլուծաբաններն ու ֆունկցիոնալիստ սոցիոլոգները/ մարդաբանները) կամ հնարավոր է, որ ցանկանում են ի շնորհիվ առավել լայնածավալ տեղեկատվության, ավելի խորը վերլուծությունների, գիտակցության առավել բարձր մակարդակի (այստեղ տեղին կլինի հիշատակել մարքսիզմի ու ռեալիստների խորհուրդները): Իմ դիրքորոշումն է՝ հօգուտ տարբեր աղբյուրներից հավաքված մանրուքների, նշված բոլոր հեռանկարներից պետք է վերլուծաբար և գործնականում ինչ-որ բան քաղել: Խաղաղության ուսումնասիրությունները չեն կարող և իրականում չպետք է ամբողջապես զերծ լինեն վերջին ատյանի բարոյական քարոզներից:

[7] Անհատին երբեմն անվանում ենք «ես», երբեմն՝ մարդ էակ, բայց այստեղ մենք պետք է օգտագործենք «անհատ» տերմինը՝ նկարագրելով առավել տարածված ներ-անհատական հակամարտությունն ընդդեմ միջ-անհատական հակամարտության: Եվ հասարակություն-աշխարհը դառնում է առավել կատարելագործված՝ սկսած միկրո-մեզո-մակրո մակարդակից, որը հատկորոշում է ընտանիք/տնային տնտեսություն-թաղ-շրջան-երկիր-տարածաշրջան-աշխարհ շղթան:

[8] *The Concise Columbia Encyclopedia,* New York, Columbia University Press, 1983, p. 492 հանրագիտարանում այդ խոսքերը սխալմամբ վերագրվում են Լյուդովիկոս XV-ին (թագավորել է 1714-1774թթ.): Ում էլ պատկանելու լինի, *«ինձնից հետո՝ թեկուզ ջրհեղեղ»* արտահայտությունն իր ժամանակի համար չհաջողված կանխագուշակություն չէր: Նրա մահից 15 տարի անց բռնկված Ֆրանսիական հեղափոխությունը, լինելով ներ-ժամանակային *(kairos)* մեծագույն հակասություններից մեկը, ունեցավ ահռելի միջ-ժամանակային *(khronos)* ազդեցություն:

2
Հակամարտության կենսացիկլերը

2.1 Խորը մշակույթը, ժամանակի տիեզերաբանությունն ու հասարակական տիեզերաբանությունը

Մենք արդեն ունենք հակամարտության ձևավորումը, իսկ այժմ մեզ պետք է հակամարտության փոխակերպումը. դրանց միջև է ընկած հակամարտության դինամիկան, ուրեմն՝ կոնֆլիկտի կենսացիկլը: Այս հասկացությունը մեր ուշադրությունն ուղղում է դեպի մտածողական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ծնունդը/ծագումը, հասունացումը/դինամիկան և մահը/քայքայումը: Սակայն, ինչպես ցույց կտրվի ստորև, այս հասկացությունները ևս կարող են ապակողմնորոշիչ կամ, առնվազն, մշակույթով պայմանավորված նախապաշարմունքներով պատված լինել:

Խորը մշակույթը կամ քաղաքակրթության տիեզերաբանությունն[1], ակնհայտորեն, ոչ միայն հակամարտության կենսացիկլի ճանաչման նախապայմաններ են, այլ նաև հակամարտության մեջ ունեն իրական գործելակերպ և մեծ նշանակություն դրա փոխակերպման համար: Մասնակիցների կամ կողմնակի անձանց կողմից այս գործոնի իմացության մակարդակը ևս ազդեցություն կունենա արդյունքի վրա: Ամենևին էլ պարտադիր չէ, որ տվյալ քաղաքակրթությանը պատկանողների իմացության մակարդակն ավելի բարձր լինի կողմնակի անձանց մակարդակից, քանզի, ըստ սահմանման, տիեզերաբանությունն իր արմատներով ձգվում է դեպի կոլեկտիվ ենթագիտակցություն և ոչ թե անհատական գիտակցություն: Այս իմացությունը շատ կարևոր է մարդկային հակամարտության յուրաքանչյուր ուսումնասիրողի համար[2]:

Ստորև ներկայացվող երկու քաղաքակրթությունները, որոնց մենք կկոչենք խիստ արևմտյան և բուդդայական, կհետազոտվեն հակամարտության կենսացիկլերի իրենց պատկերացումներով: Քրիստոնեությունն (իսլամի ու հուդայականության հետ միասին) ու բուդդայականությունն իրականում համապատասխանաբար Արևմուտքն ու Արևելքը բնութագրող գերքաղաքակրթություններ են: Գաղափարները, որոնցով այս կրոնները ընկալում են հակամարտությունը, կարող են օգտակար ուղեցույց հանդիսանալ[3]:

Ժամանակի հայեցակարգայնացումն իբրև ելակետ օգտագործելու դեպքում անմիջապես ի հայտ են գալիս մի շարք մոտեցումներ: Եթե քրիստոնեական ժամանակը սահմանափակված է իբրև սկիզբ՝ *ծնունդով (genesis),* իբրև վերջ՝ *հայտնությամբ (apocalypsis)/մաքրագործմամբ (catharsis)*, ապա պետք է ակնկալել, որ հակամարտության կենսացիկլի հորիզոնը ևս պետք է տեղավորվի ժամանակի որոշակի վերջավոր տիրույթում: Հակամարտությունը դիտարկվում է իր ակնհայտ սկզբով՝ *ծնունդով* և պարզորոշ ավարտով՝ *հայտնությամբ* կամ *մաքրագործմամբ*, որ հետևում է *ճգնաժամին*: Տիեզերաբանությունն ինքն իրեն համապատասխան վարքագիծ ու վերաբերմունք է պարտադրում:

Ի հակադրություն դրա, բուդդայական ժամանակն անվերջ է: Գործնական նպատակների համար գոյություն չունի ոչ սկիզբ, ոչ վերջ, թեև գոյություն ունի *նիրվանա* (բուդդայականության մեջ մարդկային ձգտումների գերագույն նպատակ, բարձրագույն վիճակ) վերիմացական վիճակը, փոխակերպումը գոյության այլ՝ չիմացված ու անիմանալի ձևերի: Հակամարտությունը պետք է դիտարկվի իբրև անվերջ՝ սկիզբ ու ավարտ չունեցող, որ անծայրածիր գետի նման հոսում է անվերջությունից դեպի անվերջություն, հնարավոր է՝ անսահման հեռուներում ինչ-որ տեղ գետաբերան գտնելով, որտեղ գետի կուտակած ամբողջ էներգիան լցվում է օվկիանոսն ու փոխակերպվում այլ ձևերի: Հակամարտությունը փոխակերպվում է գերադասելիորեն ավելի բարձր (այսինքն՝ նվազ բռնի) մակարդակի, բայց չի անհետանում[4]: Ժամանակի տիեզերաբանությունը դարձյալ մղվում է հակամարտության հայեցակարգայնացմանը՝ պահանջելով գործընթացի այդ պատկերը և ակնկալելով, որ դերակատարներն ու մեկնաբանները կդրսևորեն համապատասխան զգացմունքներ ու վարքագիծ, ինչպես նաև կխոսեն ու կգրեն համապատասխանաբար՝ չպարտադրելով ոչ սկիզբ, ոչ վերջ:

Ապա՝ ժամանակի տիեզերաբանությանն ավելացրեք նաև հասարակական տիեզերաբանության տարրը. անհատականն ի հակադրություն կոլեկտիվ/հասարակականի: Օգտագործելով առավել իրական «հանգույց-ցանց» փոխաբերությունը[5]՝ որի՞ն պետք է իրականում առաջնությունը տալ՝ հանգույցի՞ն, թե՞ ցանցին: Լինելով անհատապաշտական՝ քրիստոնեական հոգեբանությունը հասարակական իրականությունը պատկերացնում է իբրև անհատական հանգույցներ և ոչ իբրև սոցիալական ցանցեր: Մահայանա բուդդայականության տեսանկյունից անհատական շաղկապվածությունն իրականություն է՝ բաժանելի ու հարատև, իսկ անհատական էությունը՝ լոկ պատրանք: Ցանցերն իրական են, հանգույցները՝ ոչ:

Եվ դարձյալ, այս ամենն իր ազդեցությունն է թողնում հակամարտության ընկալման վրա: Քրիստոնեությունն անհատականացնում է հակամարտությունը՝ անգամ այն համարելով ձևավորված մեկ անհատի մեջ, որը հակված է հակամարտությունն օգտագործել որպես Այլոց կյանքի վրա ներազդելու միջոց, մինչդեռ բուդդայականությունը հակամարտությունը դիտարկում է իբրև կարևոր նշանակություն ունեցող՝ Այլոց կոլեկտիվի ներսում սկիզբ առնող երևույթ: Նման կոլեկտիվը չպետք է հասկացվի իբրև սինքրոն մի բան: Ոչ թե հանգույցները, այլ հենց ցանցն է էականը, որ տարբեր կողմեր տարածվելով, ինչպես դիաքրոն հետ կամ առաջ, շաղկապում է զգացական կյանքի անցյալը, ներկան ու ապագան: Իրականությունը սահմանափակված չէ հասարակական, ինչպես նաև ժամանակի հարթության մեջ:

Քրիստոնեությունը չի ժխտում անհատական փոխկապվածությունն այն իմաստով, որ մի անհատի գործունեությունն իր ազդեցությունն է ունենում Ուրիշների կյանքի վրա: Սակայն հաշվարկի բարոյական միավորը *կամք* ցուցաբերելու կարողությամբ օժտված անհատն է, այսինքն անհատը, որը ոչ թե պարզապես վարքագիծ է դրսևորում, այլ գործում է: Անհատը դերակատար է: Բուդդայականության տեսանկյունից հաշվարկի բարոյական միավորը կոլեկտիվն է, ինչը չի ժխտում ո՛չ անհատի գոյությունը, ո՛չ էլ *կամք* ցուցաբերելու կարողությունը: Բայց անհատը չի կարող միայնակ կրել պատասխանատվությունը:

Վերադառնանք գետի փոխաբերությանը. բուդդայական հակամարտության գետը հոսում է անվերջությունից անվերջություն, երբեմն արագ, երբեմն

դանդաղ, սեփական հորձանուտում ոլորվող ջրապտույտներով, երբեմն վիթխարի ջրվեժներով, երբեմն լեռն ի վեր մագլցող, երբեմն էլ անդունդը գահավիժող վտակներով ու ճյուղավորված գետաբազուկներով: *Սանսարայի* ծնունդ-վերածնունդ պարբերաշրջանի պես: Ինչպիսի՞ն կլինի համապատասխան քրիստոնեական ջրային փոխաբերությունը: Գուցե ընդերքի խռովված ջրերից ժայթքող գեյզեր, որ ձգտելով իր գագաթնակետին, իրացվում է գոլորշիացման, սպառման, անհետացման ճանապարհով *կամ* տարածվում է, շարժվում՝ այլոց մղելով համաղետների:

«Անհատականացված հակամարտություն վերջավոր ժամանակում»՝ ի հակադրություն «կոլեկտիվ հակամարտության անվերջ ժամանակում». սրանք չափազանց տարբեր ելակետեր են հակամարտության տեսության և պրակտիկայի համար: Առաջին պատկերը իմացաբանորեն պիտանի է Արևմտյան ատոմիզմի, դասակարգման (կոնֆլիկտաբանության տեսակետից) ու, թերևս, դերակատարների տիպաբանության վրա հիմնված արտաքսական տեսության ձևավորման հետ մեկտեղ: Երկրորդ պատկերը պիտանի է արևելյան հոլիստական դիալեկտիկայի տեսակետից գաղափարական կոնֆլիկտաբանությամբ հանդերձ, որի համար վավերականն այն է, որ գոյություն ունի մեն միակ փոխկապակցված մարդկություն կամ կյանքի տեսակ:

2.2 Քրիստոնեական և բուդդայական ժամանակի ու հակամարտության տիեզերաբանությունը

Ընդհանուր պատկերացում ունենալով հայեցակարգայնացման մասին՝ այժմ անցնենք հակամարտության փոխակերպման կոնկրետ պատկերներին: Երկու քաղաքակրթություններն էլ միանգամայն հստակ տեսակետ ունեն աններդաշնակության վերաբերյալ, սահմանելով պատվիրաններ: Երկուսն էլ հավատարիմ են այն մոտեցմանը, որ ներդաշնակությունը բաժին է հասնում այն մարդկանց, որոնք հավատարիմ են վերջիններին՝ հրեա-քրիստոնեության տասը պատվիրաններին ու բուդդայականության «Ազնիվ ութծալ ուղուն»[6]: Կոնֆլիկտներն ու աններդաշնակությունը բաժին են հասնում նրան, ով շեղվում է Օրենքից (քրիստոնեության դեպքում՝ Աստծո օրենքից, բուդդայականության դեպքում՝ *քարմայի* օրենքից): Արարիչն ամենուր է, ամենազոր ու ամենագետ, causa sui և մարդ էակների բարձրագույն դատավոր (մարդիկ հաշվետու են նրան): Ճիշտ նույն կերպ *քարման* մարդկանց ինքնահաշվետու դարձնող բարոյական պատճառապաշտության (քո բոլոր խոսքերն ու արարքները վաղ թե ուշ վերադառնում են քեզ) և անհատական *կամքի* ու կամային գործողությունների դրսևորման միջոցով սեփական *քարմայի* բարելավման հնարավորության միջև ընկած ամենագո դիալեկտիկա է:

Օրենքը մարդուն հասնում է ոչ թե լսելու և հասկացվելու, այլ ընդունման, յուրացման ու համապատասխան պարտավորությունների ստանձնման իմաստով: Այն, ինչ հրեա-քրիստոնեության համար արեցին Մովսեսն ու Հիսուս Քրիստոսը, բուդդայականության համար իրականացրեց Բուդդան: Նրանցից վեր լինելով՝ Օրենքը տարածվում էր նաև նրանց վրա: Նրանք ընդամենը հավատի ու պատվիրանների դրույթներով բացատրեցին Օրենքը (3 և 10 քրիստոնեության (իսլամի դեպքում՝ 5), 4 և 8 բուդդայականության դեպքում): Դրանցով ձևավորվեց բարոյական հենքը կամ ստուգանիշը: Օրինազանցու-

թյունը հանգեցնում է աններդաշնակության: Դրանից էլ առաջանում են կոնֆլիկտներ՝ միգուցե այլոց հետ, բայց հաստատ Օրենքի, հետևաբար՝ նաև սեփական «ես»-ի հետ. քրիստոնեության դեպքում՝ նաև Արարչի հետ, Քրիստոսի հետ, բուդդայականության դեպքում՝ նաև վատ *քարմայի* (թե՛ այլոց հետ ընդհանուր *քարմայի,* թե զուտ *անհատական քարմայի*) ձևավորման իմաստով:

Ցանկացած օրինազանցություն կբացահայտվի: Ցանկացած գործողության բարոյական արժեքը արձանագրվում է ամենագետ Աստծո կողմից, երախտիքը/վնասը՝ ամենագո *քարմայի* «հուշամատյանում»: Աստված վճիռ է կայացնում՝ դատապարտելով կամ թողություն շնորհելով: *Քարման* բարելավվում կամ քայքայվում է: Իսկ հետո՞:

Սրանով ավարտվում են այս երկու ավանդույթների միջև նմանությունները, և հարկ է ձևավորել երկու տարբեր սխեմատիկ պատկերներ, մեկը՝ քրիստոնեական, մյուսը՝ բուդդայական: Կան և՛ նմանություններ, և՛, միաժամանակ, ակնհայտ տարբերություններ: Օրինակ, մեղք գործելուց հետո Աստծո ողորմածությանն արժանանալու ձգտումը քրիստոնեության և պարսավանքի արժանի արարք թույլ տալուց *քարմայի* բարելավման ցանկությունը բուդդայականության դեպքում: Նմանություններից է նաև այն տեսակետը, որն անհատն ինքը անկարող է և կարիք ունի Աստծո (քրիստոնեության մեջ) և այլոց (բուդդայականության մեջ) աջակցության: Սա ինքնին նշանակում է մոտեցումների տարբերություն, որը խորապես առնչվում է հակամարտության կենսացիկլերի հայեցակարգայնացման ձևին:

Քրիստոնեական գործընթացը մեղքերի, Աստծուն հնազանդության, գործած մեղքերի խոստովանության, զղջման, ապաշխարանքի, քավության ու հնարավոր թողության (Աստծո կողմից) մի բարդ շղթա է: Վերջնական վճռի իրավունքը պատկանում է Աստծուն և միայն Նրան. Նրա կամքն օրենք է, բացառապես Նա է որոշում իր ողորմածությամբ՝ նզո՞վք, թե՞ թողություն:

Այս մոտեցման հիմքում ընկած է ամենագո ուղղահայացությունը: Մեղք գործելն Աստծո Օրենքի և Աստծո Որդու դեմ ուղղված գործողություն է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որովհետև իմ այս փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք» (Ավետարան ըստ Մատթէոսի, ԻԵ 40, տե՛ս՝ նաև նույնը՝ ԻԵ 45): Մարդու վերաբերմունքն Աստծո նկատմամբ պետք է վերականգնվի, մինչդեռ զոհը երկրորդական նշանակություն ունի: Գործողության բարոյական համատեքստը պետք է փնտրել Աստծո հանդեպ գործողություն կատարողի վերաբերմունքի մեջ, քանզի Նա է Օրենքը: Աստծո հետ հարաբերությունը վերականգնելու դեպքում մեղքերին թողություն է տրվում, և անհատը նոր կյանք է սկսում: Վերածնվում է:

Քրիստոնեությունը տարբերակում է *մեղքն* ու *մեղսագործին*՝ պախարակելով առաջինն ու իրավիճակից ելք փնտրելու հնարավորություն տրամադրելով երկրորդին: Սա նշանակում է՝ ժամանակի մեջ վերջավոր և տարածության մեջ անհատականացված: Հակամարտության գործընթացն սկսվում է սխալական մահկանացուի մեղսագործությամբ և ավարտվում է անսխալական Աստծո ողորմածության դրսևորմամբ: Ամբողջ ընթացքում կիզակետում օրինազանց մեղսագործն է, մնացյալը՝ համատեքստ է: Թատերաբեմն այնուհետև պատրաստ է հիշյալ հաջորդականության հնարավոր կրկնության համար. կամ այլևս ոչ մի մեղսագործություն, կամ, ընդհակառակը, մահացու մեղք, որը գործելուց հետո այլևս վերադարձ չկա:

Բուդդայական գործընթացը ներկայանում է միանգամայն այլ և տարբերվող հաջորդականությամբ: Երբ չկա Աստված, դրախտ, դժոխք, հավերժական փրկություն կամ հավերժական նզովք, հավերժական և բաժանելի անհատական հոգի, պարսավանքը չի առնչվում ո՛չ Աստծուն, ո՛չ էլ սեփական «ես»-ին, այլ՝ էապես տարբեր Այլոց ցանցին: Ձանցանքը հնարավոր է մարել միայն այդ միաբանությամբ, ասենք, գործողությունների երկխոսությամբ դրա բացահայտման և արժանին մատուցելու ճանապարհով հարաբերությունների վերականգման ուղիով: Մյուս ուղին սկսվում է բանավոր երկխոսությունից, որ կոչված է պարզաբանելու, թե ինչո՞ւ և ինչպե՞ս կարողացավ զարգանալ այդ վատ կոլեկտիվ *քարման*, և ինչպե՞ս կարելի է այն շտկել ու, անընդհատ կատարելագործելով, հասցնել ավելի ու ավելի բարձր մակարդակների:

Այս օրինակի հիմքում ընկած է համատարած հորիզոնականությունը: Գործողության համար նախատեսված պարսավանքը չափվում է զգայական կյանքի մյուս ձևերի վրա այդ գործողության ազդեցությամբ: Գործողությունը հնարավոր չէ վերացնել, բայց վերաբերմունքը կարելի է փոխել: Էական նշանակություն ունեցող Այլոք կարող են այսօր ճանաչելի կենդանի էակներ չլինել. պարսավանքը կարող է առնչվել նաև արդեն մահացած կամ դեռ չ(վերա)ծնված կյանքին: Այլ խոսքով՝ վերաբերմունքը հնարավոր չէ անհատականացնել: Վերաբերմունքը՝ լավ թե վատ, ներփակված է կոլեկտիվում և այնտեղ էլ կմնա հավիտյան:

Ժամանակի անսահման հորիզոնում պատասխանատվությունը երաշխավորված է ոչ միայն անցյալում կատարած, այլ նաև *քարմայի* վրա որևէ ազդեցություն ունեցող, վաստակ ու պարսավանք ենթադրող ցանկացած գործողության համար՝ անկախ իրականացման տեղից ու ժամանակից: Անհատական բաժանման ու հարատևության պատրանքը կարող է ցրվել միայն այն դեպքում, եթե կոլեկտիվն ամբողջական պատասխանատվություն ստանձնի վաստակ ու պարսավանք ենթադրող բոլոր գործողությունների համար:

Քարման ժամանակի ու տարածության մեջ անհատական կյանքի տևողությունը գերազանցող չափազանց հոլիստական հայեցակարգ է: Միաժամանակ, այն հակված է բանավեճի. պարսավանքը ներկայացնում է *քարմայի* ներսում առկա հակամարտությունը, որը պետք է դուրս մղվի բանավոր ու գործնական երկխոսությունների, վաստակ բերող գործողությունների ու սխրանքների միջոցով: Եթե սա է մարդկային վիճակի դիտարկման հիմնական տեսակետը, ապա իմաստ չունի հակամարտություններն իրարից տարանջատել, դրանց անվանական պիտակներ փակցնել ու ժամանակի և տարածության մեջ սահմանազատել: Այս ամբողջի *(holon)* մասը «հանցավոր» պիտակավորելու դեպքում մյուս մասն պիտակավորելն այլևս ընդհանրապես իմաստ չունի (ինչպես, ասենք, անիմաստ է երկու ձեռքով խեղդելու՝ քրեորեն պատժելի գործողության դեպքում աջ ձեռքը պիտակավորել իբրև հանցավոր, իսկ ձախը՝ ոչ): Քանի որ վաստակն ու պարսավանքն ընդհանրական են, դրանց բաշխումն անհատների միջև դառնում է մետաֆիզիկական հիմնահարց: Իմ վաստակը հանդիսացող բոլոր գործողությունները (մասամբ) արդյունք են իմ քույրերի ու եղբայրների (էական նշանակություն ունեցող Այլոց) կողմից ներշնչանքի. նույնը կարող եմ ասել պարսավանքի արժանի գործողություններիս մասին, քանզի նրանք պարտավոր էին կանխել իմ մոլորությունը:

Մետաֆիզիկական չէ, սակայն, այս ուղղությամբ քայլեր ձեռնարկելու կամեցողությունը՝ ամբողջի *(holon)* յուրաքանչյուր մասի օժանդակությամբ

բուդդայական Կենաց Գետի բարդ հոսանքով նավարկելով դեպի կոլեկտիվ «եսը»՝ իր մեռնող ու վերածնվող բաղկացուցիչ մասերով հանդերձ: Քրիստոնեությունը հավերժական կյանք է առաջարկում թողության կամ նզովքի ճանապարհով, բայց գործնականում մտահոգված է սոսկ ծնունդով սկիզբ առնող և մահով ավարտվող միանգամայն վերջավոր կենսաբանական կյանքով: Բուդդայականությունը չի առաջարկում *resurrectio carnis*[7], այս կենսաբանական կյանքը կանգ է առնում, երբ վրա է հասնում ֆիզիկական մահը: Գործնականում, սակայն, կյանքը պատկերվում է որպես էներգիայի անվերջանալի հոսք հավերժությունից հավերժություն, «ես»-ի և Այլոց պակաս տառապանքներով ու առավել երանությամբ, շեղընթաց, հետընթաց ու առաջընթաց հոսքերի առավել արդյունավետ փոխկապակցվածությամբ: Քրիստոնյայի համար ձգտումը բացակայում է, քանզի չկա երկրորդ կյանք. այստեղ՝ երկրի վրա վերջինս սահմանվում է իբրև հավերժություն: Բուդդիստի համար հավերժությունն ինքնին *քարմայի* բարելավման համար նախատեսված ժամանակի հորիզոն է, իսկ կյանքը՝ *քարմայի* բարելավման հնարավորությունների փոխկապակցված շղթա: Վերջավոր ոչինչ գոյություն չունի, մշտապես առկա են *քարմայի* բարելավման հնարավորություններ:

Համեմատելով այստեղ, թերևս, խտացված գույներով ներկայացված երկու տեսակետերը, այնպիսի զգացում է համակում, որ քրիստոնեությունը մեղքը խիստ երկված է դարձնում, իսկ բուդդայականությունը, ընդհակառակը, սահմանագիծ չի դնում՝ գերադասելով վատ *քարմայի* պատճառների համատեղ որոնումը: Քրիստոնեությունը չափազանց անհամաչափ է (ասիմետրիկ), իսկ բուդդայականությունն, ընդհակառակը, չափազանց համաչափ (սիմետրիկ): Ի տարբերություն քրիստոնեության, որ անողորմ համառությամբ պնդում է, թե այս խիստ վերջավոր կյանքն ընդամենը սահմանում է հավերժական հանդերձյալ կյանքը, բուդդայականությունն ավելի մեղմ է վարվում՝ անսահման ժամանակ տրամադրելով մեր *քարման* բարելավելու համար: Անշուշտ, հնարավոր է երկու մոտեցումների միջնադիրքեր առանձնացնել, այդ դեպքում, հավանաբար, հնարավոր կլինի հասնել էկլեկտիկ փոխզիջումների:

Սակայն մենք ազատ չենք կարող ձևավորել մեր քաղաքակրթությունները, դրանք տրված են: Փաստն այն է, որ հակամարտության կենսացիկլերի այս երկու հեռանկարներն էլ առկա են, մեկը՝ իբրև վերջավոր կենսացիկլերի անվերջ քանակություն՝ ծնունդից (սկզբնական մեղքի դրսևորում) մինչև հատուցում (աստվածային ողորմածության միջոցով), և մյուսը՝ իբրև անսահման կենսացիկլերի սահմանափակ քանակություն, որ սկիզբ է առնում այլուր ու ամենուր և, վերելքներով ու վայրեջքներով, ի վերջո ավարտվում է հավերժության հարահոս օվկիանոսում:

2.3 Քրիստոնեական ու բուդդայական հեռանկարների աշխարհիկ տարբերակները

Վիթխարի են քրիստոնեության ու բուդդայականության հեռանկարները. երկուսն էլ կրոնական են այն իմաստով, որ կապի մեջ են *նրա՝ դրսինի* հետ, Աստծո կամ *քարմայի* հետ: Դրանցից մեկը պահանջում է մեզանից ենթարկվել Աստծո կամքին, մյուսը պահանջում է *քարման* ենթարկել մեր իղձերին *(satori)*՝ նիրվանային: Բայց ովքե՞ր ու քանի՞սն են այսօր իրապես հավատում

Աստծո Օրենքին ու *քարմայի* Օրենքին: Քրիստոնեական ու բուդդայական քաղաքակրթություններում աշխարհիկացման գործընթացներ են ընթանում, և այդ գործընթացները ներսից քայքայում են այդ քաղաքակրթությունները: Այնուհանդերձ, տիեզերաբանության ընդհանուր տեսության համաձայն կարելի է ակնկալել, որ այս հեռանկարների ներկա ձևերը (վերջավոր-ատոմիստականն ընդդեմ անվերջ-հոլիստականի) կգոյատևեն որոշակի բովանդակային փոփոխություններով[8]:

Արևմտյան աշխարհիկ հեռանկարը հայտնի է իբրև արևմտյան իրավական ավանդույթ (հռոմեական, գերմանական ու անգլիական իրավական ավանդույթների ընդհանրությամբ): Վերիմացական առնչություններ լինում են, բայց դրանք ծիսակարգային են: Ըստ էության, Օրենքի հիմնական ակունքները պետք է փնտրել Աստծո փոխարինողների մեջ՝ իբրև գլխավոր շարժիչ ուժերի (թագավորի կամ օրենսդիր մարմնի կողմից ընդունվող օրենսդիր իրավական ակտերը, որ նրանց կողմից սահմանվում են որպես տվյալ երկրի օրենսդրության նորմեր (Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունվող ակտերը՝ իբրև միջազգային իրավունքի ակտեր): Ընդունողները Աստծո փոխարինողներն են՝ թագավորները-ասամբլեաները-գլխավոր ասամբլեաները (նվազագույն օրենքներ արտադրողները), որոնք քիչ թե շատ պարզորոշ կերպով նկարագրում են, թե ինչն է օրինական, ինչն է թույլատրված և ինչն է ապօրինի: Գրանցված և բացահայտված ապօրինի իրավական գործողությունն օրենքի խախտում է. օրինազանցը դատվում է օրենքի համաձայն՝ համապատասխան գործընթացով: Վճիռն, ընդսմին, մնում է երկված՝ մեղավոր է կամ մեղավոր չէ: Հետո գալիս է պատիժը դրամական փոխհատուցման կամ ազատազրկման (ժամանակի փոխհատուցում) ձևով, որը կարող է մեղավոր-անմեղ երկվությունը պակաս սուր դարձնել: Ծանրագույն պատիժը կարող է վերացվել ներման ճանապարհով: Այնուհետև, առնվազն որոշակի փորձաշրջանից հետո, նախկին օրինազանցը տեսականորեն ազատ է իր պարտավորություններից:

Այսպիսով, բոլոր հիմնական մասերում կարելի է գտնել նմանություններ: Դեռևս առկա է ուղղահայացությունը: Մեղքը, որն այժմ կոչվում է «քրեական հանցագործություն», դիտարկվում է իբրև թագավորի-պետության-ժողովրդի դեմ (նրանցից վեր) ուղղված գործողություն: Զոհը հետին պլան է մղվում (մոռացվում է): Ապաշխարանքը, որ այժմ կոչվում է «պատիժ», այլևս արտաքին, դրսից ակնկալվող երևույթ է՝ չարագործի մարմնին կամ քսակին հասցված վնաս: Քրիստոնեական վարդապետության կողմից ձևավորված համալիր հոգեբանական գործընթացը ժամանակին իրագործվում էր բանտերում. այսօր գործնականում դա այլևս գոյություն չունի: Վճարիր, ժամանակդ վատնիր և հաշիվներդ կմաքրես: Սակայն վերջերս իրական միտում է նկատվում դեպի այնպիսի դատավճիռների կայացումը, որոնք ստիպում են օրինազանցներին հանրօգուտ աշխատանք կատարել կամ փոխհատուցել զոհին հասցված վնասը:

Նույնը կարելի է ակնկալել նաև բուդդայականության աշխարհիկ տարբերակի դեպքում, ընդ որում՝ ավելի պակաս (քան Արևմուտքում) ուշադրություն հատկացնելով գրված օրենքներին ու մեղավորներին և ավելի շատ կենտրոնանալով հաշտության հնարավորությունների վրա: Եվ, քանի որ պատճառների հետազոտության (կատարված սխալի շուրջ խորհրդածություն, ապա պարտազանցի հետ հնարավորությունների քննարկում) վեկտորն ուղղված է դեպի սեփական «ես»-ը, այս գործընթացը, թերևս, ավելի շատ վե-

ռապահվում է երրորդ ատյանին (Ճապոնիայում, օրինակ, հաճախ հանրահայտ ոստիկանությանը՝ ոստիկանա-փոստարկղում): Հնչեցման խնդիրը, ինչպես նաև ախտորոշման, կանխատեսման ու բուժման մեթոդների որոնումները վերապահված են այլոց, ովքեր հետո դառնում են հակամարտության կարգավորողներ: Լինեն դրանք գործից հեռու մարդիկ, թե մասնագետներ, այնուամենայնիվ, հակամարտող կողմերը հանդես են բերում ավելի քիչ ինքնաապավինում, հետևաբար, նաև ոչ լրիվ հասունություն, *քարմայի* կատարելագործման անհնարինություն՝ փորձելով միայն հարթել իրենց ներքին հարաբերությունները: Նպատակը՝ արտաքին (B), և ոչ թե ներքին (A) փոփոխությունն է: Բուդդայական հակամարտության գործընթացի մետաֆիզիկական՝ հոգևոր հիմնավորումը կաղում է:

Հիմնական հայեցակարգային կառուցվածքը կարելի է փնտրել ավելի խորը շերտերում՝ դիտարկելով հակամարտությունը ոչ միայն իբրև սկզբնավորված որևէ առանձին գործողությամբ և ավարտված մեկ այլ գործողությամբ և փնտրելով հակամարտության արմատները անհատի, այլ ոչ թե հարաբերությունների մեջ: Բայց հակամարտության հայեցակարգայնացումը հետզհետե ուղղահայացություն է դառնում ոչ միայն Ճապոնիայում, որը բազմադարյան ֆեոդալական ավանդույթներ ունի, ինչը հակադրության մեջ է իր «տաճարով և ջրամբարով» դասական բուդդայական ինքնավար գյուղակի հետ: Արդյունքը՝ պետք է ակնկալել, որ աշխարհի բուդդայական մասում ևս հարաճուն տեմպով կբազմանան օրենքները, իրավաբաններն ու դատական վեճերը, քանզի բուդդայական հեռանկարը ևս հետզհետե ստանում է աշխարհիկ ուրվագիծ:

Գոյություն ունի, արդյո՞ք, որևէ միջանկյալ դիրք անցյալի հաճախ խավարամիտ հոգևոր արժեքների ու հակամարտությունների փոխակերպման ժամանակակից գործընթացների միջև, որոնք հաճախ վարվում են ցինիզմով լի օտարների կողմից (վերջիններս խորհրդատվության դիմաց վարձատրությունից բացի ոչինչ չեն պահանջում՝ ոչ ներքին, ոչ էլ անհատական ջանքեր): Արևմուտքում առկա է քրիստոնեության ավելի մեղմ տարբերակը՝ իբրև ավելի մեղմ «Արևմուտք II»[9], Արևելքում առկա է հակամարտության կարգավորման բուդդայական մոդելի վերակենդանացման հնարավորությունը: Արևմուտքի բնակիչների համար, որոնց Աստվածը մահացել է, բուդդայական հոգևոր արժեքները, թերևս, ավելի ընդունելի են, քան իր չափազանց կենդանի Աստվածով քրիստոնեությունը՝ արևելցիների համար:

2.4 Որոշ հետևություններ միջազգային մակարդակում

Միջազգային մակարդակում հակամարտությունների հայեցակարգայնացման առնչություններն ուսումնասիրելու նպատակով համեմատենք Վիետնամի պատերազմը (Հնդկաչինի երկրորդ պատերազմը) Պարսից ծոցի պատերազմի հետ՝ երկու դեպքում էլ Միացյալ Նահանգները դիտարկելով որպես հիմնական կողմ: Այս երկու պատերազմների միջև կար հիմնական մի տարբերություն: Վիետնամի պատերազմում Միացյալ Նահանգներն անընդհատ համոզվում էին, որ Վիետնամը պատժի արժանի որևէ հանցանք չի գործել, և հակված էին կասկածի տակ առնելու սեփական արդարացիությունը. ամենևին էլ ոչ այն պատճառով, որ Միացյալ Նահանգներն, ի վերջո, պարտվեցին

այդ պատերազմում՝ անկախ պատճառներից (վիետնամցիների ռազմական տաղանդն, ի վերջո, ձևավորեց այդ երկրի ռազմական հանճարը, իսկ Միացյալ Նահանգներն օգտագործում էին զինակոչիկներին՝ ներառյալ համալսարանական ուսանողներին, որոնցից շատերը դեմ էին այդ պատերազմին, ավելի՛ն, ամերիկյան մամուլը պատերազմը լուսաբանում էր արդարության, և ոչ թե «հայրենասիրության» տեսակետից): Ի հակադրություն դրա՝ Պարսից ծոցի պատերազմում Միացյալ Նահանգները/Բուշը համոզված էին սեփական ճշմարտացիության և Իրաքի/Սադդամի մեղավորության մեջ: Հանդիսանալով, թերևս, աշխարհի ամենաքրիստոնյա երկիրը, Միացյալ Նահանգները պետք է համոզեին աշխարհին, որ երկու պատերազմներն էլ սկսվել են մյուս կողմի գործած «մեղքի» (հանցանքի)՝ օրինախախտման հետևանքով: Արդյո՞ք ամենաբարձր մակարդակում որոշում կայացնողներն իրապես հավատում էին դրան. էական չէ, որովհետև հակամարտության շուրջ քննարկումներն իրականացվում են հենց այդ տրամաբանության համատեքստում: «Առաջին քարը նետելը» հաճախ դառնում է քրիստոնեական երկրների արարք՝ չնայած անհիմն մեղադրանքներ չառաջադրելու քրիստոնեական պատգամին. դու կարող ես մեղադրել միայն ինքդ քեզ, ինչպես իսկույն կավելացնի բուդդիստը (ինչպես նաև՝ Հիսուսը):

Իբրև համեմատության ենթատեքստ, հակիրճ դիտարկենք ոչ վաղ անցյալի փաստերը, որոնք կոչված են համատեղելու արևմտյան ձեռագրերը՝ ԱՄՆ-Ճապոնիա և ԱՄՆ-Գերմանիա հարաբերությունները Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Առկա էր *սկիզբը* ձևավորող հանցանքը՝ Փիրլ Հարբորը 1941 թվականի դեկտեմբերի 7-ին և Լեհաստանի վրա հարձակումը 1939 թվականի սեպտեմբերի 1-ին: Առկա էին նաև *վերջն* ազդարարող գործողությունները՝ Ռեյմսում ստորագրված կապիտուլյացիան, որն ուժի մեջ մտավ 1945 թվականի մայիսի 8-ին և Տոկիոյի ծովածոցում ստորագրված կապիտուլյացիան 1945 թվականի սեպտեմբերի 2-ին: Չարիքը նկարագրելուց հետո չարագործին հայտնաբերելը բավականին դյուրին խնդիր էր:

Հիշյալ իրավիճակում ուղղահայացությունը պարտադրվեց ոչ միայն կապիտուլյացիայի ու հաղթողի գթասրտությանը պարտված բանակի հանձնվելու (որպես հնազանդության դրսևորում), այլ նաև տրիբունալների միջոցով (առավել հայտնի են Նյուրնբերգի և Հեռավոր Արևելքի տրիբունալները), որոնց գրեթե հաջողվեց խոստովանություն կորզել պարտվողներից՝ դրանով իսկ «ռազմական հանցագործությունների» հայեցակարգի միջոցով անհատականացնելով հակամարտությունը և մատնանշելով «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» իրականացնողներին: Գրավող-գրավյալ կառուցվածքը կոչված էր ինստիտուցիոնալացնելու ուղղահայացությունը: Փոխհատուցումը (պատերազմական տուգանք) ընդամենը պատժաձևերից մեկն էր, մյուսը՝ մեկուսացումն էր՝ զրկելով Միավորված ազգերի կազմակերպության անդամությունից:

Բառերով աննկարագրելի են ուժի առանցքում կատարվող հանցագործությունները, քանզի հիմնական փոփոխությունները հետագա ապացույցներ են պահանջում: Բեռլինի շրջափակման (1948/49) և կորեական պատերազմի (1950/53) ժամանակ հնարավորություն ստեղծվեց, երբ կրքի անհագուրդ մղումով զավթված երկու գրավյալ երկրներն էլ պետք է ապացուցեին, որ իրապես ընդունում են զավթիչների շարժառիթները: Մասնավորապես, ԱՄՆ-ի դեպքում դա դժվար չէր, քանզի վերջինիս հակակոմունիստական մանդատն անբասիր էր: Դաշնակիցները, մասնավորապես, Միացյալ Նահանգները, օգտա-

գործեցին այս հնարավորությունը աստվածային ողորմածության արտոնություն դրսևորելու համար՝ խաղաղություն շնորհելով նրանց (առանց Գերմանիայի հետ պաշտոնապես խաղաղ պայմանագիր կնքելու) և վերադարձնելով նրանց միջազգային բնականոնություն (Ճապոնիան՝ 1951թ., Գերմանիան՝ 1954թ., Ավստրիան՝ 1955թ.)[10]: Գործընթացի համընդհանուր ընդունելությունն, անկասկած, գալիս էր Արևմուտքի ձեռագրից, իսկ ճապոնացիները կարողացան շատ արագ կողմնորոշվել:

Վիետնամի պատերազմը, սակայն, չի կարող իբրև ապացույց ծառայել ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ դեպքում: Միացյալ Նահանգները չհաղթեցին պատերազմում, հետևաբար, արդյունքում վիետնամցիների կողմից իբրև հնազանդության դրսևորում ձեռնարկված որևէ գործողություն չէր կարող լինել: Այնուհանդերձ, վիետնամցիներն էլ չհաղթեցին, հետևաբար, նրանք ևս չէին կարող հնազանդություն կամ նույնիսկ կապիտուլյացիա պահանջել ամերիկացիներից, որին կհաջորդեր Վաշինգտոնի տրիբունալը՝ մարդկության դեմ ուղղված կանխամտածված հանցագործության մեջ մեղադրելով պատերազմը նախաձեռնող ամերիկացի Լինդոն Ջոնսոնին, Ռոբերտ Մակնամարային, Ռիչարդ Նիքսոնին և Հենրի Քիսինջերին:

Հետպատերազմյան իրավիճակի մեկնաբանությունը Վիետնամում այսօր էլ, դեռևս, ընդհանուր առմամբ անորոշ է: Ի՞նչ կարելի է ակնկալել՝ ունենալով Արևելյան Ասիայի *san fa* կոչվող երեք ուսմունքներում (Վիետնամի դեպքում՝ ներառյալ նաև կոնֆուցիականությունն ու ազգայնականությունը) բուդդայականության դերի երկու մեկնաբանությունները:

Կարելի է ակնկալել, որ վիետնամցիները խիստ մտահոգված չեն մեղքի խոստովանության խնդրով, *քանի դեռ հակառակ կողմը չի պնդում իր անմեղությունը* և, հակառակը, հետաքրքրված են անցյալի սխալների քննարկման ու հարաբերությունների կարգավորման հեռանկարի շուրջ երկխոսության ծավալմամբ: Աշխարհիկ իմաստով նման երկխոսություն, անկասկած, կծավալվի ինչպես վիետնամցիների, այնպես էլ մահայանա բուդդայական մյուս երեք երկրների (Չինաստան, Կորեա, Ճապոնիա) կողմից՝ իր ներքին կառուցվածքում (առերևույթ անտեսանելի) ունենալով բուդդայական տեսակետը: Կարող է հիշատակվել անըմբռնելի «արևելյան իմաստությունը» («անըմբռնելի» զուտ նրանց համար, ովքեր փորձում են մանրամասն ուսումնասիրել այն): Այս ամենը կարվի առանց ոխակալության դրսևորման (եթե վերոհիշյալ կանոնն անշեղորեն կիրառվի) և կուղեկցվի ժպիտով (չնայած, չի կարելի մոռանալ, որ արևելցու ժպիտի իմաստաբանությունը, շարահյուսությունն ու պրագմատիզմը հեռու են արևմտյանից): Հիմնական բաղկացուցիչները մնում են անփոփոխ՝ առավել *ներքին երկխոսություն* (հայտնի է նաև իբրև մտորում) սեփական «ես»-ի մեջ և առավել *արտաքին երկխոսություն* այլոց հետ:

Քննարկենք իրավիճակը Միացյալ Նահանգների տեսանկյունից: Նախ, նրանք կարող են պատրվակ գտնել Միացյալ Նահանգների հետ երկխոսություն սկսելու համար՝ իբրև տնտեսական հուսահատության դրսևորում, բայց կհրաժարվեն նման երկխոսություն ծավալելուց՝ հանկարծ ու այն «ծառայեցվի պրոպագանդիստական նպատակների» (խուսափելով կոպիտ բառերից): Ի դեմս Միացյալ Նահանգների մեղավորներ փնտրելու փորձերի բացակայությունը երկված զրոյական գումարի քննարկումներում կնշանակի, որ վիետնամցիներն ամբողջովին փոխել են իրենց տեսակետը և Միացյալ Նահանգներին այլևս մեղավոր ու իրենց անմեղ չեն համարում ստեղծված

իրավիճակում: Հազարավոր փախստականների առկայությունը կդիտարկվի իբրև սոցիալիստական Վիետնամում առկա թերությունների ու բացթողումների վավերացում: Սրանից, իհարկե, չի հետևում, որ Միացյալ Նահանգներն իրավացի էին, բայց նույնը վերաբերում է նաև վիետնամցիներին: Եվ խորաթափանց ժպիտները կդիտարկվեն որպես ամերիկացիների հնարավոր սխալների համար ներողամտության նշան: Կողմերից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում միևնույն երևույթը՝ մշտապես մնալով իրարից վիթխարի հեռավորության վրա:

Պարսից ծոցի պատերազմի դեպքում անորոշությունն այնքան էլ մեծ չէր. գոնե մինչև այսօր այդպես է թվում: Ակնհայտ էր պատերազմի *սկիզբը* բնորոշող գործողությունը՝ Իրաքի կողմից Քուվեյթի զավթումը 1990թ. օգոստոսի 2-ին: *Ավարտը* կարող էր լինել կատարյալ, եթե Քուվեյթից Իրաքի զինված ուժերի հեռացմանն ու կապիտուլյացիային հետևեր Բաաս կուսակցության վարչակարգի կապիտուլյացիան ու Բաղդադի տրիբունալը՝ Սադդամ Հուսեյնի ու նրա համախոհների դեմ «մարդկության դեմ ուղղված» հանցագործություններ իրականացնելու մեղադրանքով, ինչպես դա տեղի ունեցավ Գերմանիայի/Ճապոնիայի դեպքում: Հակամարտության կենսացիկլը պետք է ավարտուն լինի քրիստոնեական կերպով: Գիրքը պետք է փակվի: Գայթակղությունը կարող է անսահման լինել:

Այժմ ներկայացնենք Պարսից ծոցի հակամարտության մեկնաբանությունը բուդդայական տեսակետից: Այս տեսանկյունից ևս առկա են ինչպես 1990թ. օգոստոսի 2-ն ու 1991թ. հունվարի 17-ը, այնպես էլ Անվտանգության խորհրդի տասներկու բանաձևերը՝ ընդհանրապես, և 678-ը («անհրաժեշտ բոլոր միջոցներով»)՝ մասնավորապես: Բայց հակամարտության ձևավորումն այժմ ընդարձակվում է շեղակի, առաջընթաց ու հետընթաց ուղղություններով՝ ներառելով այլ գործող անձանց ու մասնակիցների, առնչվելով անցյալի պատմությանն ու ապագայի հետևանքներին. շատ ավելի համալիր տեսակետ, քան օրինազանց Իրաքի դեմ (ճշմարտացիորեն) կիրառված միջազգային իրավունքի նորմերը: Այդ հետընթաց փաստարկները ժամանակին կիրառվել էին նաև Գերմանիայի (Վերսալը՝ որպես ագրեսիայի գործողություն) ու Ճապոնիայի (Արևմուտքի տնտեսական սանկցիաները՝ որպես ագրեսիայի դրսևորում) կողմից, բայց միայն իբրև արդարացում և ոչ թե հոլիստական նկրտումներից ելնելով՝ հավաքելով այն ամենը, ինչը կարող էր ծառայել իրենց մեղքի արդարացմանը:

Հակամարտության բուդդայական փոխակերպմանը մոտիկ կլիներ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ բազմակողմ համաժողովը, որը համակարգային մոտեցմամբ, հոդված առ հոդված կքննարկեր հակամարտությանն առնչվող բոլոր խնդիրներն ու դիրքորոշումները՝ ծավալելով շահագրգիռ քննարկումներ առանց նախապայմանների: Սա հոլիստական ու դիալեկտիկ, *հասուն* մոտեցում է, սակայն խիստ հազվադեպ կիրառելի հակամարտությունների ժամանակ:

Ծանոթագրություններ.

---

[1] Սա նշանակում է, որ հասարակությունը կիսում է (բացառապես ենթագիտակցության մակարդակում) մշակույթի մեջ արմատացած տեսակետները, մասնավորապես՝ թե ի՞նչն է բնական և նորմալ կամ, պարզապես, ո՞րն է իրերի ճիշտ վիճակը:

[2] Այսպիսով, երբ հակամարտության ուղեծրում ներառված երկու անհատ հանդիպում են բանակցություններ վարելու նպատակով, մենք գործ ունենք (առնվազն) չորս մակարդակների հետ՝ անհատի իսկական դեմքը քողարկող դիմակը, որը ստեղծված է միայն դիմացինի համար, գիտակցվող, բայց ոչ միշտ ցուցադրվող ռազմավարությունը, երկու կողմերի անհատական ենթագիտակցությունը և կոլեկտիվ ենթագիտակցությունը, որը կարող է համընկնել կամ չհամընկնել անհատականի հետ՝ կախված այն բանից, թե արդյո՞ք անհատն ու կոլեկտիվը սերում են միևնույն մշակույթից: Միայն թե 1-ին և 2-րդ մակարդակների վրա հիմնված հակամարտության տեսությունը որոշ չափով պարզունակ է:

[3] Բուդդայականության տեսության ներածությունը տե՛ë՝ Edward Conze, *Buddhist Scriptures,* London: Penguin, 1959. Ընդհանուր ներածությունը տես՝ Johan Galtung: *Buddhism: A Quest for Unity and Peace,* Colombo: Sarvodaya Publishing Services, 1993:

[4] Օրինակ՝ բազմազգ Միացյալ Նահանգներում էթնիկական խմբերի միջև առկա հակամարտությունները չեն վերանում՝ իբրև դաշնության փոխակերպվելու արդյունք: Բայց որոշակի անջատվածությունն ու ինքնավարությունը *կարող են* նպաստել պակաս բռնի մոտեցումների ձևավորմանը՝ կենտրոնում ունենալով դաշնությունը, որին էլ պատկանում է վերջնական որոշման կայացման իրավունքը: Սակայն այդ որոշման կայացումը հաճախ լինելու է ուղղահայաց, այսինքն՝ կարող է ուղեկցվել կառուցվածքային բռնության դրսևորումներով: Հետևաբար, համադաշնությունը, բացառիկ թույլ կենտրոնով, կարող է նպաստել հակամարտության փոխակերպմանն առավել բարձր մակարդակի (խուսափելով կառուցվածքային բռնության դրսևորումներից): Ավելորդ է նշել, որ դա փխրուն հավասարակշռություն է:

[5] Raimundo Panikkar, *"La notion des droits de l'homme, est-elle un concept occidental?",* Diogenes, 120 (1982), էջ 87-115.

[6] Ճիշտ ընկալում, ճիշտ շարժառիթներ, ճիշտ խոսք, ճիշտ վարք, ճիշտ ապրելակերպ, ճիշտ ջանք, ճիշտ մտածողություն, ճիշտ կենտրոնացում: Բուդդայական բարոյականության ու պրակտիկայի հիանալի ուսումնասիրությունը տե՛ս՝ Robert Aitken, *The Practice of Perfection,* New York and San Francisco, Pantheon, 1995, մասնավորապես՝ էջ 28-32: Բուդդայական *pancha shila* և *pancha dhamma* կանոնները շատ նման են հրեա-քրիստոնեա-իսլամական պատվիրաններին, որոնք գողությունը, ամուսնական հավատարմության խախտումը, սուտն ու թմրանյութերի օգտագործումը դիտարկում են որպես բռնության դրսևորում: Այս գրքի հետազոտության տեսակետից ևս դրանք համապատասխանում են բռնության սահմանմանը, քանզի միտված են վնաս և ցավ պատճառելու, մասնավորապես, հիմնարար կարիքների խաթարմանը (թմրանյութերի օգտագործումը վնաս/ցավ է պատճառում «ես»-ին՝ իբրև սկիզբ): Նշված բոլոր դեպքերում մենք խոսում ենք ուղղակի բռնության մասին՝ որպես բաց թողնված հնարավորություն (ճշմարտությունը չասելը) և /կամ µ³ó ãÃáÕÝí³Í ÑÝ³ñ³íáñáõÃÛáõÝ (ստելը):

[7] Հարություն ոչ միայն հոգու, այլ նաև՝ մարմնի (Քրիստոսի գերեզմանը դատարկ էր):

[8] *Plus ça change, plus c'est la même chose* and *the famous philosophy in Giuseppe Tomasi di Lampedusa's Il Gattopardo,* Milano, Feltrinelli Editore՝ մենք փոխում ենք մեզ այնպես, որ մնացած ամեն ինչ մնում է անփոփոխ (*'Perché tutto resti com'è',* p. 29; *una di quelle battaglie combattute affinché tutto rimanga come è,* p. 31): Թերևս պատահական չէ՞, որ երկուսն էլ սերում են Լատինական Ամերիկայից: Իմաստուն է և որոշակիորեն ցինիկ: Կարող է, արդյո՞ք, գերմանացին, ամերիկացին կամ նորվեգացին/շվեդը երբևէ կասկածել, որ ցանկացած փոփոխություն ենթադրում է որոշակի ազդեցություն/հետևանք: Որքան փոխում ենք, այնքան փոփոխվում է: Մենք փոփոխում ենք մի մասը, որպեսզի մնացածը մնա հաստատո՞ւն: Տափակ է հնչում՝ ամենևին ոչ հավակնոտ:

Տիեզերաբանության տեսությունը (Մաս IV) վերաբերում է այն ամենին, ինչ հաստատուն է մնում արտաքին փոփոխությունների դեպքում: Հեղինակիս դիտարկումները

ցույց են տալիս, որ լատինական երկրների ժողովուրդներն անմիջապես ըմբռնում են այս տիեզերաբանության տեսությունը, իսկ գերմանախոս երկրների ժողովուրդներն ավելի շատ հակված են չընկալելու, ընկալելու դեպքում էլ՝ մերժելու այն: Ոմանք հակասություն են տեսնում լատինական այդ խորաթափանցության սկզբնապատճառներում, որը, միաժամանակ, միտված է նաև իրական գործողությունների (իմ կարծիքով, ոչ մի հակասություն էլ չկա, ընդամենը փորձ է արվում իրատես լինել՝ խորունկ արմատներ ունեցող ենթադրություններ ու վարքագիծ ձևավորելիս):

[9] Տե՛ս՝ մաս IV, գլուխ 2.1: Եվրոպայի պատմության միջնադարյան ժամանակաշրջանը կարող է օրինակ հանդիսանալ:

[10] Դեպի բնականոնություն Ավստրիայի վերադարձն ընդունելու Խորհրդային Միության շարժառիթը, թերևս, այն հույսն էր, որ չեզոքության հետ միավորումը Գերմանիայի համար կարող է զարգացման մղել ծառայել: Եթե Արևմտյան Գերմանիան իր տարածքով կազմեր Արևելյան Գերմանիայի տարածքի մեկ երրորդը կամ մեկ չորրորդը, և ոչ թե հակառակը, գուցե նման վարքագիծ դրսևորեին Միացյալ Նահանգները և ոչ թե Խորհրդային Միությունը:

3
Հակամարտության փոխակերպումներ

3.1 Ձևավորում/փոխակերպում/ձևափոխում դիալեկտիկան

Հակամարտության ներսում, ինչ-որ տեղ, հակասություն կա: Հակասության մեջ, ինչ-որ տեղ, հարաշարժություն կա: Ներդաշնակության դիրքի որոնումներում դաոիստական *ին/յան* գաղափարը (մեկն աճում է, մյուսը նվազում է), ինչպես ասված է պատճառականության մասին, ոչ թե օրենք է, այլ օրենքի ձև[1]: Այն, ամենաքիչը, կարող է օգնել դիտարկելու հակամարտությունը՝ իբրև մշտապես փոփոխվող, հարաշարժ էություն: Մեկը կարող է կլանվել ներդաշնակության կողմից, մյուսն, ընդհակառակը, երևան գալ: Մենք կարող ենք խոսել հակամարտության մտավոր կարգավորման մասին, եթե կարողանանք նկարագրել *հակամարտության ձևավորումը*, այսինքն՝ պատասխանել հետևյալ հարցերին. «որո՞նք են հակամարտության կողմերը/մասնակիցները՝ *m,* որո՞նք են նպատակները՝ *n,* որո՞նք են անհամատեղելիություններն ու հակասությունները»: Բայց հակամարտության ձևավորումը հեղհեղուկ է՝ անհաստատ, մինչ մենք այն կնկարագրենք, ինչ-որ տեղ փոխակերպումներ են տեղի ունենում հենց մեր (ներքին կամ արտաքին) աչքի առջև:

Ո՞ր ուղղությամբ: Ինչպես նախորդ գլխում ցույց տրվեց, արևմտյան մտածողությունն ստիպում է մեզ հավատալ այն վերջնական վիճակի գոյությանը, երբ հակամարտությունը կամ լուծվում է, կամ բոլորը հրաժարվում են լուծումներ փնտրելուց՝ համարելով այն անհույս (տևական, անվերջ շարունակվող): *Հակամարտության կարգավորումը* կարելի է սահմանել իբրև նոր ձևավորում, որը. (1) *ընդունելի է բոլոր կողմերի համար,* (2) *կայուն է՝ մասնակիցների կողմից պահպանվող:* Այսպիսով, հնարավոր ամենապարզամիտ տեսակետը հավատն է առ այն, որ, եթե հակամարտող կողմերի վերնախավերն ընդունել են հակամարտության կարգավորման բանաձևը՝ վավերացնելով այն նոր ձևավորումը սահմանող որևէ փաստաթուղթ ստորագրելով, ապա հակամարտությունը կարգավորված է: Ոչ առանց հիմքի կարելի է պնդել, որ «դիվանագիտության» այս արդյունքն այդպես էլ կմնա թղթի վրա: Ինչո՞ւ:

Նախ, ստորագրողները կարող են ազնիվ չլինել: Երկրորդ, եթե անգամ նրանք ազնիվ գտնվեն, ապա ո՞ւր մնաց հակամարտության մյուս, հիմնական մասնակիցը՝ ժողովուրդը: Երրորդ, եթե անգամ ժողովուրդն էլ է ընդունում այդ լուծումը, ապա ո՞ւր են լուծման հարատևությունն ապահովող ուժերը, որ կոչված են ձևավորելու պակաս կոնֆլիկտային իրավիճակ, ոչ թե զուտ վերարտադրելու հինը: Պակաս հակասական ձևավորումը (C), իհարկե, լավ է, բայց այն պետք է հիմնավորվի համապատասխան ենթադրությամբ ու վերաբերմունքով (A), հակառակ դեպքում, ըստ կանխատեսումների, սխալ վարքագիծը (B) կշարունակվի՝ միավորելով հակամարտության շրջապատում առկա մնացորդային ու նոր գոյացած պատճառները (հակասությունները): Անցանկալի վերածնունդ…

Դժբախտաբար, այսօրինակ պարզամտությունն այսօր լայնորեն տարածված է, մասնավորապես, դիվանագետների շրջանում, թերևս, իրենց կազմակերպությունների ֆեոդալական էության և ներպետական համակարգում դրանց կողմից իրականացվող՝ իրենց բոլոր բնութագրիչներով ֆեոդալական գործառույթների հետևանքով: Բայց մանկամտություն է նաև հակառակ պնդումը, թե միայն «ժողովուրդը» կարող է կարգավորել հակամարտությունները՝ հանդես բերելով ըմբռնում և կայունություն: Երկուսը միասին՝ կրկնակի դիվանագիտությունն է (վերնախավերի վարած դիվանագիտությունն ու ժողովրդական դիվանագիտությունը), որ կարող է ձևավորել շատ ավելի արդյունավետ բանաձև:

Վերոհիշյալ սկզբունքներից մեկն էլ այն է, որ կայունությունը պետք է լինի էնդոգեն՝ արմատացած ձևավորման գործընթացում: Երբ արտաքին կողմերը (երբեմն կոչվում են միջնորդներ) «մտրակի ու մեղրաբլիթի» քաղաքականություն են վարում՝ կողմերին վճարելով կարգավորման բանաձևն ընդունելու և նրանց պատժելով այն մերժելու համար, ապա հնարավոր չէ խոսել իրական ընդունելի կամ կայուն/հարատև լինելու մասին այնքան ժամանակ, քանի դեռ միջնորդները չեն դիտարկվել իբրև հակամարտության ձևավորման կողմ, ո՛չ թե արտաքին (վերևում կանգնած), այլ իրական կողմ: Բայց այդ դեպքում նրանց նպատակները պետք է հստակ շարադրվեն ու ավելացվեն հակամարտությանը, որը կարող է հանգեցնել *հակամարտության ձևափոխմանը:*

Հակամարտությունների կենսացիկլերում, անկասկած, կան փուլեր, որոնք կարելի է կոչել «լուծումներ». դրանք հիմնավորապես մոտ են բավարարելու վերոհիշյալ երկու չափանիշներին: *Սակայն, ըստ էության, հակամարտության փոխակերպումն անվերջ գործընթաց է:* Անընդհատ ի հայտ են գալիս հին ու նոր հակասություններ: A և B փոփոխականների բացասական, հուսանք նաև դրական հակամարտության էներգիան շարունակաբար ներարկվում է ձևավորման փուլ: Կայուն լուծումն ու հարատև ձևավորումը, լավագույն դեպքում, կարելի է դիտարկել իբրև միջանկյալ նպատակ: Շատ ավելի կարևոր նպատակ է *փոխակերպման հնարավորությունը*՝ այդ փոխակերպումն ընդունելի ու կայուն ձևով իրականացնելու կարողությունը: Ըստ Գանդիի՝ *իրականացման ձևը ևս նպատակ է:* «Գործընթացը ևս նպատակ է»,- այսպիսին կարող է լինել մեր ձևակերպումը, իսկ պահը, երբ կարող էր թվալ, թե կայուն լուծումը գտնված է, բաց է թողնված: Նրանք, ովքեր կարծում են, որ կարող են լուծել բոլոր հակասությունները՝ սկզբնավորելով հակասություններից ու անակնկալներից զերծ հասարակություն, իրականում մոլորության մեջ են: Ինչպես ավազահատիկներն ասֆալտի շերտի տակ կամ ռադիոակտիվությունը Չեռնոբիլի բետոնի տակ, պարտակված հակասությունները մի օր կսկսեն շիվեր տալ: Դա կլինի այնքան ժամանակ, քանի դեռ ձևավորումը չի մահացել:

Չվախենալով հաճախակի կրկնություններից՝ մեկ անգամ էլ նշենք, որ հակամարտությունները չեն առաջանում կուսածնությամբ, ոչնչից, *ex nihile*, և ոչ էլ ինքնաբերաբար կամ արտաքին միջամտությամբ անհետանում են, նրանք չեն կարող անգամ ոչնչացվել հակամարտության էֆտանազիայի միջոցով: Նույնիսկ եթե երեք առանձին խմբեր Բոսնիայում ու Հերցեգովինայում հաջողեցնում են ոչնչացնել միմյանց, միևնույն է, հակամարտությունը, ինչպես *Հոլոքոստը,* կշարունակի ապրել փոխակերպվող Հարավսլավիայի ու Եվրոպայի, ողջ աշխարհի ծանր հուշերում, ասես *քարմայի* ահասարսուռ քայքայում: Մեր պատասխանատվությունն այժմ և այստեղ գերազանցեց ձևա-

վորման շրջանակները: Մենք բոլորս հակամարտությունների մեջ ենք: Եվ դրանք ապրում են մեր մեջ:

3.2 Հակամարտության փոխակերպումները. առաջին ակնարկ

Փոխակերպումները տեղի են ունենում ժամանակի մեջ, իսկ ժամանակը *քրոնոսն ու կայրոսն* են, ֆիզիկական ժամանակի համընթաց հոսք, որ գալարվելով շրջապտույտներում՝ անընդհատ հոսում է՝ մնալով մշտնջենական *այժմ-ի* սահմաններում, որից էլ թռիչք է կատարում դեպի նոր *կայրոս:*

I գլխում նկարագրվեցին ու սահմանվեցին *կայրոսի* պոտենցիալ բնութագրերով հինգ հիմնական գործընթացներ.

(ապա)անդամակցում. ամբողջականն ընդդեմ հակամարտության հատյալ եռանկյան,

(ան)գիտակցականացում. A-ի և C-ի գիտակցության բարձրացում կամ նվազեցում,

կոմպլեքսայնացում/պարզեցում. ներառելով ավելի շատ/ավելի քիչ մասնակիցներ/նպատակներ,

(ապա)բևեռացում. հակամարտությունները դիտարկելով իբրև տարրական (2,1)/(1,2) կամ ոչ,

(հակա)ծավալում. B մակարդակում բռնության սաստկացում/թուլացում:

Հիշյալ գործընթացների միջև հարաբերությունները համեմատաբար պարզ են. անդամակցումն ու գիտակցականացումը նպաստում են ներդաշնակությանը, նույնը կարելի է ասել բևեռացման ու ծավալման վերաբերյալ, մինչդեռ կոմպլեքսայնացման ու պարզեցման գործընթացները բավական բարդ հարաբերությունների մեջ են նախորդ երկու համակցությունների հետ:

A և C գագաթների գիտակցականացման դեպքում հակամարտության եռանկյունին, ըստ սահմանման, ամբողջական է: Ներքին ու արտաքին հակասությունների և դրանց հանդեպ սեփական վերաբերմունքի գիտակցությունը գրեթե անխուսափելիորեն հանգեցնում է վարքագծային հետևանքների՝ ներառյալ վարքագծի հարկադրյալ բացակայության զրոյական հետևանքը: Հակամարտությունները կարող են լինել ճնշված, ինչպես սոցիալիզմի ժամանակաշրջանում միջէթնիկական բախումներն Արևելյան Եվրոպայում: Առկա էր հակամարտության և սեփական վերաբերմունքի, բայց ոչ վարքագծի դրսևորումների գիտակցությունը: Հակամարտությունն արգելադրված էր (տաբու): Զրոյական վարքագծի մեկ այլ օրինակ է դասակարգային հակամարտության ահեղ լռությունը Միացյալ Նահանգներում:

Բևեռացում նշանակում է հակամարտության ձևավորման պարզեցում՝ հասցնելով պարզագույն մակարդակի՝ բոլոր մասնակիցներին *(m)* տեղադրելով *երկու* ճամբարներից որևէ մեկում և փոխկապակցելով հակամարտությունների բոլոր թեմաները *(n)* մեկ միասնական գերթեմայի մեջ: Բոլոր դրական համագործակցային հարաբերություններն առկա են ճամբարների ներսում, իսկ բացասական հարաբերությունները ձևավորվում են դրանց միջև

(սակայն, չեն բացառվում նաև չեզոք հարաբերություններն ինչպես ճամբարների ներսում, այնպես էլ դրանց միջև, այսինքն՝ ոչինչ բացասական ճամբարների միջև կամ ոչինչ դրական ճամբարի ներսում): Դասական օրինակ է Սառը պատերազմը, երբ ներճամբարային հակամարտությունները թերագնահատված էին, իսկ միջճամբարային հակամարտություններն, ընդհակառակը, գերագնահատված էին, և հակամարտության բովանդակությունը գռեհկացված էր՝ ներկայացվելով իբրև հակաամբողջատիրական՝ Արևմուտքի կողմից, և հակաիմպերիալիստական՝ Արևելքի կողմից: Նման բանաձևերն, անշուշտ, որոշակի ճշմարտություն պարունակում են: Դրանցով, սակայն, հակամարտության ձևավորմանը զսպաշապիկ է հագցվում, ինչը տանում է *հակամարտության ձևափոխման*: Հենց որ հակամարտությունը լուծվում է կամ, ավելի ճիշտ, տարրալուծվում է, այսինքն զսպաշապիկը հանվում է, ի հայտ են գալիս թերագնահատված կամ ճնշված հակասությունները: Սա մեկ անգամ ևս ապացուցում է, որ հակամարտությունները չեն մեռնում, չեն անհետանում հավերժության մեջ ու չեն վերամարմնավորվում, դրանք ընդամենը վերածնվում են (դրական կամ բացասական իմաստով) այստեղ և այլուր:

Արդյո՞ք բևեռացումն անպայմանորեն բերում է ընդլայնման, այսինքն՝ առավել սաստիկ բռնության B մակարդակում: Որպես կանոն՝ այո, բայց ոչ միշտ:

Անհատական մակարդակում բևեռացումը ենթադրում է իմացական պարզեցում՝ արմատախիլ անելով երկիմաստությունը, հստակեցնելով սև-սպիտակ, թշնամի-բարեկամ հասկացությունների իմացաբանական հիմքերը համապատասխան զգացմունքներով ու ցանկություններով՝ կարող լինելով հարվածել Այլոց ու երանություն պարգևել սեփական «Ես»-ին միայն այն պատճառով, որ բևեռացման պայմաններում «Ես»-ը և Այլոք ամուր կապակցված են: Կոլեկտիվի մակարդակում բևեռացումը ենթադրում է կազմակերպչական պարզեցում՝ սահմանելով ճամբարներն ու պատճառները: Այսպիսով, մարդկանց մտքերը նախապատրաստելով իմացական, կամային ու հուզական տեսակետից և նրանց մարմինները կազմակերպելով կոլեկտիվի տեսքով, անշուշտ, կարելի է խոսել համապատասխան գործողության համար հող նախապատրաստած լինելու մասին[2]: Սպառազինությունների մրցավազքի տեսությունը՝ իբրև *ազդեցություն-հակազդեցություն (actio-reactio)* և ոչ իբրև *ինքնաշարժ մի բան (Eigendynamic)*[3], յուրաքանչյուր ճամբարում իր ուրույն էնդոգեն պատճառով սովորաբար դիտարկվում է որպես ելակետ երկբևեռ հակամարտության ձևավորման համար: Եթե երկու կողմերն էլ նույն կերպ են վարվում (այսինքն՝ տեղի է ունենում սպառազինությունների մրցավազք), ապա սկսում է գործել փոխադարձ սադրանքների ու ահաբեկման/զսպման դիալեկտիկան, հավանաբար, *ին/յան* սկզբունքով, և սա, իր հերթին, նշանակում է, որ կլինեն շատ վտանգավոր փուլեր, երբ սադրանքները կհասնեն իրենց հնարավոր առավելագույն սահմանին, ու պակաս վտանգավոր փուլեր, երբ զսպումը կհասնի իր առավելագույն մակարդակին: Ծեծված է թվում, բայց շատերն ասես մոռանում են, որ բռնությունը երաշխավորված է, եթե կողմերից մեկն ավելի շատ սադրանքի է ենթարկվել, քան զսպվել, մինչդեռ «ուժերի հավասարակշռությունն» ունի, ինչպես ասում են, *si vis pacem, para bellum*[i] ազդեցություն.

[i] *si vis pacem, para bellum* (լատ.)- թե խաղաղություն ես ուզում, պատերազմի պատրաստվիր /թարգ./

երկու կողմերն էլ (ոչ թե միայն Մյուսը) պետք է հավասարապես զսպված լինեն:

Կրկին ծեծված կթվա, բայց արժե նորից ընդգծել. խաղաղությունը կարող է շատ ավելին լինել, քան հռչակված նպատակը կամ բռնությունից խուսափելն է: Անշուշտ հնարավոր է, որ Սադդամ Հուսեինն ուզում էր տիրանալ Քուվեյթին, հետո էլ ջրից չոր դուրս գալ: Սակայն իր սեփական տեսանկյունից նա կարող էր նաև հետամուտ լինել պատվի, քաջության ցուցադրման, սեփական արժանապատվության զգացման՝ նույնիսկ Քուվեյթին չտիրանալու և ջրից չոր դուրս չգալու դեպքում: Լուրջ «գաղափարական վերամշակում» պիտի անցած լինել՝ ի վիճակի չլինելու հասկանալ այն մշակույթը, որտեղ վերջին երեքն ակնհայտորեն գերազանցում են առաջին երկուսին, այսինքն՝ նույնիսկ «ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիայի» անհաղթահարելի ուժը բավարար չէր Սադդամին իր մտադրությունից հետ կանգնեցնելու համար:

Այսօրինակ «ծեծվածքներն» ականապատում են ուժի հավասարակշռության գաղափարախոսությունը, մասնավորապես, եթե հաշվի առնենք նաև այնպիսի հավելյալ գործոններ, ինչպիսիք են մազոխիզմն ու սխալ հաշվարկները՝ ինչպես սեփական «Ես»-ի, այնպես էլ Այլոց համար[4]: Սակայն շատ ավելի կարևոր է այն ենթադրությունը, որ բռնությանը (իր «հաղթել», «պարտվել» կամ «ոչ-ոքի ավարտել» երեք հնարավոր արդյունքներով) և ոչ-բռնությանը (որ նշանակում է արդյունավետորեն զսպված լինել) այլընտրանք չկա: Անշուշտ, կա նաև ոչ-բռնության մնացյալ *tertium*[i]-ը, որը մանրամասնորեն կուսումնասիրվի հաջորդիվ (մաս II, գլուխ 5):

Բրիտանացիները կարծում էին, որ ինքնավարության *(swaraj)* հնդկական շարժումն արդյունավետորեն կասեցված է անազատ ժողովուրդների հանդեպ սովորական գաղութային պետական ահաբեկչությամբ. Գանդիի *satyâgraha* ուսմունքն սկզբնավորեց սովորականից տարբերվող գործողությունների (ներառյալ բանավոր գործողությունների) մոտեցումը: Իսրայելական սիոնիզմը նույն տեսակետն ուներ Պաղեստինի ազատագրման շարժման վերաբերյալ և մտովի պատրաստ չէր դիմակայելու *ինթիֆադային*: Երկու դեպքում էլ շեշտը դրվեց «զինված ջլապինդ երիտասարդների» վրա. կանանց (Հնդկաստանի դեպքում), մանուկների (Պաղեստինի դեպքում) և բռնության բացառման (երկու դեպքում էլ) ուժը հաշվի չառնվեց: Միով բանիվ, այն տեսակետը, համաձայն որի գործողությունների ողջ դաշտը սահմանափակվում է բռնի գործողություններով ու ոչ-գործողություններով, պարզապես սխալ է, ինչպես սխալ է ենթադրությունը, թե քաղաքական բռնությունը պետք է ընդունի ժամանակի անընդհատության մեջ գործող, տարածականորեն սահմանակից «ճակատի» (դասական պատերազմ) և ոչ տեղային գործողության՝ այսօր այստեղ, վաղը այնտեղ (ահաբեկչություն), ձևը:

Այնուհանդերձ, բևեռացումը, թերևս, ընդլայնման համար անհրաժեշտ պայման է, եթե ոչ բավարար: Ընդլայնումը, թերևս, բևեռացմա՛ն համար եթե ոչ անհրաժեշտ, ապա բավարար պայման է:

Կոմպլեքսայնացումը/պարզեցումն ակնհայտորեն հակամարտության ընկալման խնդիր է՝ այստեղ քննարկված մասնակիցների *(m)* ու թեմաների *(n)* քանակի և, մասնավորապես, բարդության տեսանկյունից, որն այստեղ սահմանված է $c = m \times n - 1$ բանաձևով, որտեղ $m > 0$ և $n > 0$ մասնակիցների ու

[i] tertium (լատ)- երրորդ /թարգ./

արժեքների համար, $m = 0$՝ երբ միայն մասնակիցներն են ներառված հակամարտության մեջ, և $n = 0$՝ երբ միայն շահերն են բախվում:

Կարող ենք կիրառել նաև $c = m + n$ պարզագույն բանաձևը՝ մտքում պահելով մասնակիցների ու թեմաների քանակը՝ այն նվազագույն տվյալները, որոնցով հնարավոր է մտովի ուրվագծել հակամարտության ձևավորման քարտեզը: Բայց հակամարտությանն (այլ խոսքով՝ առկա հակասություններին) իմաստ հաղորդելու համար մասնակիցները պետք է ինչ-որ կերպ առնչվեն թեմաների հետ, այսինքն՝ իմացական քարտեզն իրենից պետք է ներկայացնի մի *(m,n)* մատրից, *m* x *n* մուտքերով (օրինակ՝ «1», եթե *j* թեմային համապատասխանում է *i* մասնակիցը, «0», եթե այն հաշվի մեջ չէ): Հետևաբար, արտադրյալն անհրաժեշտ մտավոր աշխատանքի առավել ամբողջական մի բնութագրիչ է:

Այնուհետև արտադրյալից պետք է հանել 1, որ կարողանանք տարբերակել համալիր *(c > 1),* տարրական *(c = 1)* հակամարտությունները, հիասթափությունները *(c = 0,* անհիրական հակամարտություն) և կառուցվածքային հակամարտությունները *(c < 0,* կամ մասնակիցներն են բացակայում, կամ արժեքները, կամ էլ երկուսը միասին):

Խնդիրն այժմ կարող է ուսումնասիրվել, ինչպես II մասի 1-ին գլխում. առկա են *Սցիլլան* ու *Քարիբդիսը*, որոնցից անհրաժեշտ է խուսափել:

Սցիլլան չափազանց բարդ կոմպլեքսայնություն ունի: Կարելի է բանավիճել, թե որտեղ է *c*–ի վերին սահմանը, որը մարդկային մտքի կողմից արդյունավետ իմացական մշակման հնարավորություն կտա (օրինակ այն մարդու մտքի կողմից, որը պետք է մեկնաբանի համակարգչի հաղորդագրությունները և հսկողության տակ պահի ծրագիրը): Հոգեբանական տեսությունը հակված է 7-ը համարել վերին սահման. նշանակում է, եթե կիրառելու լինենք գումարային բանաձևը, *m*-ը և *n*-ը պետք է ընդունեն, ասենք, 3 կամ 4 կամ գոնե ոչ շատ ավելի մեծ արժեքներ:

Քարիբդիսը ռեդուկցիոնիզմն է՝ նվազեցում մինչև *c = 1* արժեքը, ինչը չնչին կոմպլեքսայնություն է ենթադրում: Սա բևեռացումն է՝ վերը նշված հարակից վտանգներով հանդերձ: Եթե չափազանց մեծ կոմպլեքսայնությունը մտավոր աշխատանքի տեսակետից չափազանց հոգնեցուցիչ է, ապա կոմպլեքսայնության չափից ավելի ցածր աստիճանը՝ չափազանց ծուլացնող : Այնուհանդերձ, եթե ընդլայնումը բևեռացման համար բավարար պայման է, ապա որքան լարված է հակամարտությունը, այնքան մասնակիցներն ավելի շատ են հակված այն ուղղելու դեպի Քարիբդիս՝ դրանով իսկ մեծացնելով լարվածությունն ու իրենք իրենց զրկելով հակամարտության հաջող փոխակերպման հնարավոր միջոցներից:

Ռեդուկցիոնիզմից խուսափելու միակ հնարավոր ճանապարհը կոմպլեքսայնացումն է, Սցիլլայից (չափից առավել կոմպլեքսայնացումից) խուսափելու միակ հնարավոր ճանապարհը պարզեցումն է: Այլ խոսքով՝ չափազանց բարդը պարզեցրեք, բայց միշտ հիշեք բևեռացման վտանգների մասին: Շրջապատում միշտ կարող են գտնվել հակամարտության «նյութեր»՝ նոր մասնակիցներ, նոր թեմաներ, այնպես որ բարդացումը երբևէ չի կարող իրականացվել արհեստականորեն:

Երկու օրինակ վերջին ժամանակների համաշխարհային քաղաքականությունից:

1974 թվականին Կարակասում տեղի էր ունենում ծովերի օգտագործման օրենսդրությանը նվիրված Միացյալ Ազգերի համաժողով[5]: 150 երկրներից ժամանած շուրջ 5 հազար պատվիրակներ քննարկում էին 150 հարցից բաղկացած օրակարգը: Բնականաբար, ոչ ոք չի կարող հաղթահարել նման ծավալի ճանաչողության բարդություն՝ 300 (կամ 298) ըստ գումարային բանաձևի և 22500 (կամ 22449) ըստ բազմապատկման բանաձևի: Համակարգչի կիրառումը օգուտ չի բերի, ինչ-որ մեկն, այսպես թե այնպես, պետք է վերծաներ տպվածը, ավելին, յուրաքանչյուր դրույթ յուրաքանչյուր առանձին երկրի համար միանգամայն ուրույն կարևորության խնդիր էր:

Անհրաժեշտ էր որոշակի պարզեցում: Ճանաչողական լուծումը խմբավորումն էր՝ ըստ մասնակիցների (երկրների) և ըստ թեմաների (խնդիրների): Ըստ երկրների տարբերակվեցին՝ դեպի ծով ելք չունեցող երկրներ, ափամերձ երկրներ և կղզիներ (ծովափի բացակայություն, մասնակի ծովափ և միայն ծովափ): Քննարկվող հարցերն էլ բաժանվեցին հետևյալ խմբերի. տարածքային իրավունքներ ու սահմանափակումներ, օվկիանոսի հատակն ու ընդերքը, ռազմական խնդիրներ: Միևնույն հետաքրքրություններն ունեցող երեք երկրների ու երեք հանձնաժողովների ձևավորմամբ բարդությունը պարզեցվեց՝ հասցվելով 6(4) արժեքի՝ ըստ գումարային, և 9(8) արժեքի՝ ըստ բազմապատկման բանաձևերի:

Երկրորդ օրինակը ներկայացնում է մի շատ արդյունավետ բարդացում. Եվրոպայում անվտանգության և համագործակցության համաժողովը, Հելսինկի, 1972թ. (նախապատրաստական փուլ) և 1973թ.: Սառը պատերազմը պարզեցված էր ռեդուկցիոնիզմի միջոցով՝ բևեռացման աստիճանի (2,1) բանաձևով. Արևելք (Խորհրդային Միություն/Վարշավայի պայմանագրի երկրներ), Արևմուտք (Միացյալ Նահանգներ/ՆԱՏՕ). ազատություն/ֆաշիզմ, կախված այն բանից, թե ով էր ելույթով հանդես գալիս: Հիմնական խնդիրն էր ունկնդրել այսօրինակ քարոզչական ճառեր, մի բան, որ, հավանաբար, անհնար էր «ամենասառը» տարիներին՝ մինչև Ստալինի մահը, կամ էլ Հունգարիայի ու Չեխոսլովակիայի ներխուժման ժամանակ: Կար երկու մեթոդ:

Առաջինը՝ չեզոք-չմիավորված երկրները ներկայացնել որպես առանձին խմբավորում: Անշուշտ, այդ երկրներն իրարից տարբերվում էին իրենց զարգացման աստիճանով: Ֆինլանդիան պայմանագիր ուներ Խորհրդային Միության հետ՝ ստորագրված դեռևս 1948 թվականին, Հարավսլավիան՝ 1953թ. Բալկանյան համաձայնագրով կապված լինելով Հունաստանի ու Թուրքիայի հետ՝ սերտորեն առնչվում էր Արևմուտքի հետ, որից էլ աջակցություն (նաև՝ ռազմական) էր ստանում[6], Շվեդիան թիկունքի մասով ինտեգրված էր Արևմուտքի հետ, Շվեյցարիան գաղտնի հետևում էր բոլոր նրանց, ում կասկածում էր Արևելքի նկատմամբ տածած թեկուզև չնչին համակրանքի մեջ[7], և այլն: Ճիշտ և ճիշտ, ինչպես քաղաքական կուսակցության դռնփակ ժողով. մասնակիցներն ունեին իրենց ուրույն դիրքորոշումները կամ դիրքորոշումներ ընդհանրապես չունեին. առկա էիր երեք կողմեր:

Երկրորդ՝ քննարկվող հարցերի ահռելի գամման խմբավորվեց երեք «զամբյուղներում»՝ ռազմաքաղաքական հարցեր (ներառյալ՝ սահմանների հիմնահարցը), տնտեսական հարցեր (ներառյալ՝ համատեղ ձեռնարկությունների խնդիրը) և այլ հարցեր (ներառյալ՝ մարդու իրավունքները): Արդյունքում ձեռք բերվեց նույն բարդությունը, ինչը և առաջին օրինակում, միայն այս անգամ այն ձեռք բերվեց կոմպլեքսայնացման ճանապարհով: Եվ արդյունքն, անշուշտ, ջերմացնող (հալեցնող) ազդեցությունն էր սառը պատերազմի վրա՝

սահմանները վերահաստատվեցին, համատեղ ձեռնարկությունները կյանքի իրավունք ստացան, Արևելյան բլոկում թեև դանդաղ, բայց սկիզբ առավ մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը: Հակասությունները կորցրեցին իրենց սրությունը՝ բոլոր A և B կողմերում:

3.3 Հակամարտությունների փոխակերպում կառուցվածքային հակամարտությունների դեպքում՝ c < 0

Կառուցվածքային հակամարտության դեպքում, ըստ սահմանման, առկա է կառուցվածքային բռնություն: Հակամարտության հիմնական հակասությունը/բովանդակությունն ընկած է կառուցվածքի ուղղահայացության մեջ՝ որպես ճնշում (ազատության) քաղաքական հակամարտության դեպքում և որպես շահագործում (բարեկեցության) տնտեսական հակամարտության դեպքում: Բայց այս ճնշողական/շահագործողական կառուցվածքն այնուհետև ամրապնդվում է այլ կառուցվածքային (մտադրություններից անկախ գործող) համաձայնություններով: Առավել կոնկրետ.

գիտակցության ձևավորման, գիտակցականացման կանխում.
ներազդում, մտածողության պայմանականացում վերևից,
սեգմենտացում, ներքևում գտնվողներն իրականության միայն սահմանափակ ընկալում կարող են ունենալ,
ներքևում գտնվողների մոբիլիզացման և կազմակերպման կանխում.
ֆրագմենտացում՝ իրարից բաժանելով ներքևում գտնվողներին,
մարգինալացում՝ ներքևում գտնվողներին հեռացնելով մնացածից:

Գիտակցականացումն ու մոբիլիզացումն այն գործընթացներն են, որոնք անհրաժեշտ են կառուցվածքային հակամարտության մեջ առկա շահերը գիտակված արժեքների և չկազմակերպված, չբյուրեղացած կողմը (կառուցվածքային հակամարտության) դերակատարի (հակամարտության) փոխակերպելու համար: Հետևաբար, բոլոր չորսն էլ հարկ է հաղթահարել, որպեսզի հնարավոր լինի ստեղծագործաբար լուծել ճնշման և շահագործման հիմնահարցերը: Ինչպե՞ս դա անել:

Նախ, իմիջիայլոց, նշենք, որ վերևից եկող ճնշումն ու շահագործումը մեղմող բարյացկամ ձեռնարկն անհրաժեշտ է, սակայն ոչ բավարար: Բոլոր չորս անձեռնմխելի բնութագրիչներով առանձնացող առավել բարյացկամ կառուցվածքը դեռևս բռնի է: Այս չորսը հաստատուն պահելու դեպքում ճնշման ու շահագործման նորանոր ձևեր դեռ կարող են ի հայտ գալ՝ ղեկավարվելով, օրինակ, հսկայական ու բարեկեցիկ պետական բյուրոկրատիայի և ոչ թե ագահ վերնախավի կողմից: Ինչպես քննադատը կասեր՝ լավ է, բայց միևնույն է, չափազանց ուղղահայաց է:

Ահավասիկ կառուցվածքային բռնության հաղթահարման չորս քայլերը:

Առճակատում. ընտրել այն խնդիրը, որը կարող է կաղապարել ընդհանուր հակամարտությունը, ինչպես «մի պտղունց աղը» Գանդիի հանրահայտ հոդվածում (Salt March, to Dandi in Gujarat, 5 April, 1930), որ հստակ ձևակերպում է խնդիրն ու նկարագրում ցանկալի արդյունքը:

Կռիվ՝ ճնշումը և/կամ շահագործումը հաղթահարելու նպատակով: Խնդիրն այստեղ այն է, թե ինչպիսի՞ն պիտի լինի այդ կռիվը: Խաղաղության տեսության պատասխանն ակնհայտ է՝ ոչ բռնի միջոցներով, «խաղաղություն՝ խաղաղ միջոցներով» բանաձևի ներքո: Գանդիի հանճարն այն է, որ նա կարողացավ այլընտրանք առաջարկել այն քարացած տեսակետին, ըստ որի միակ հնարավոր ընտրությունը ընկած է հնազանդության (ճնշումներին ու շահագործմանը) և դրանց հաղթահարմանն ուղղված բռնի կռվի միջև: Նման կռիվը, լավագույն դեպքում, կարող է երկու կողմերին էլ ահռելի կորուստներ հասցնել, վրիժառության պահանջ արթնացնել, հարատև ատելություն սերմանել, բռնության կիրառման հետևանքով ծնելով նոր հակասություններ, իսկ վատագույն դեպքում, ի հավելումն այս ամենի, այն կարող է ավարտվել պարտությամբ: Բրգաձև կառուցվածքի ամենավերին մակարդակում գտնվելու կառուցվածքային ուժին *Herr*[i]*-ն* ավելացնում է պատժի և խրախուսանքի համար նախատեսված մտրակի ու մեղրաբլիթի ուժը:

Ավելին (և սա հիմնարար դրույթ է), իրադրությունը շտկելու տեսանկյունից *Herr* (տեր) և *Knecht* (ծառա) դերերը փոխելը ոչ միայն անհրաժեշտ չէ, այլ նաև ցանկալի չէ: Արդյունքում, պարզապես, բռնության ճնշման տակ առաջացած վնասվածքներին կհաջորդի նոր կառուցվածքային հակամարտություն: Ինչպես Ա. Քամյուն էր ասում, ինքը բռնում է *Knecht* –ի կողմը, քանի դեռ ինքն էլ *Knecht* է, այնուհետև ինքը կբռնի նոր *Knecht* –ի կողմը: Խաղաղության հետազոտողը կարող է նույնն ասել. հակամարտությունը կարող է կարգավորվել միայն այնժամ, երբ բոլոր կողմերը համոզվեն, որ չեն կարող ստիպել մյուս կողմ(եր)ին հնազանդվել: Բռնության բացակայությունը, ինչպես, ասենք, պաղեստինցիների ինթիֆադայի դեպքում, ստիպեց բրիտանացիներին ու իսրայելցիներին ընդունել այս տեսակետը[8]:

Կապերի խզումը ենթադրում է ճնշողի և/կամ շահագործողի հետ կառուցվածքային կապերի խզում: Սա Գանդիի հայտնի չհամագործակցելն է, սակայն պետք է նշել, որ նա մշտապես պնդում էր հակառակ կողմի հետ կապերի պահպանման անհրաժեշտությունը՝ իբրև դիմադրություն կառուցվածքային դիրքի պարտադրանքին (երկխոսություն սկսելու կամ ընթացիկ երկխոսությունը շարունակելու նկատառումով): Նպատակն այնքան էլ *Herr* սկզբունքին հարված հասցնելը կամ այն վնասելը չէ՝ զրկելով նրան (սովորաբար նա տղամարդ է) կառուցվածքային իշխանությունից, հնազանդությունից ու կոնկրետ նյութական բարիքներից, որոնք կառուցվածքի միջով հոսում էին դեպի վեր: Իրականում, հիմնական նպատակը ինքնավարության կերտումն ու ինքնապավինման ունակության ձևավորումն է, ինչպես նաև ստորին շերտերի զարգացման ինքնավարության ապահովումը: Այդպես գործելով, նրանք դառնում են պակաս շահագործելի ու առավել նվազ ճնշումների ենթակա՝ դրանով իսկ առավել ակնառու դարձնելով այն փաստը, որ վերին մակարդակներում գտնվողները չեն կարող գերակշռել. միով բանիվ՝ լիազորությունների ավելացում:

Վերամիակցում: Երկարաժամկետ հեռանկարում կապերի խզումը չի կարող դիտարկվել իբրև նպատակ: Երկարաժամկետ հեռանկարում նպատակը հորիզոնական կառուցվածքն է՝ ներառյալ մարդու իրավունքները (ճնշումների փոխարեն), հավասարությունը (շահագործման փոխարեն), ինքնավարությու-

[i] Բնօրինակում հեղինակն օգտագործում է գերմաներեն *Herr* (տեր) և *Knecht* (ծառա) եզրերը, ինչին մենք հավատարիմ կմնանք հայերեն տարբերակում /թարգ./:

նը (ներազդման փոխարեն), ինտեգրումը (սեգմենտավորման փոխարեն), համերաշխությունը (ֆրագմենտավորման փոխարեն) և մասնակցությունը (մարգինալացման փոխարեն): Բառեր, բառազույգեր… Դրանք կարող են իրականություն դառնալ միայն գործողության մեջ դրվելով: Կապերի խզումը նպաստում է այս դրական կառուցվածքները ներքևից ձևավորելու գործընթացին, իսկ վերամիակցումը՝ նոր, առավել համապարփակ ու պակաս բռնի կառուցվածքների ձևավորմանը:

Սա դեռևս չի իրականացվել նախկին գաղութատիրական իշխանությունների ու նրանց նախկին գաղութների միջև: Իհարկե, ճնշումները նվազել են: Բայց տնտեսական շահագործումը շարունակվում է (Քուամե Նկրամահն այս երևույթն անվանել է նեոգաղութատիրություն): Մնացած չորս բնութագրիչները ևս առկա են: Հիվանդ կառուցվածքների համար նախատեսվածը բուժման երկարաձգված հիմնահարց է, ո՛չ ամենևին մեկանգամյա կրակոց կամ արագ ամրակցում: Եվ կապերի խզումն ընդամենը քայլ է:

Հետաքրքիր է, որ երկրագնդի վրա բնակվող մարդկային էակների մեծամասնությունը գոնե մեկ անգամ անցել է այս գործընթացով և կառուցվածքային հակամարտությունների փոխակերպման փորձագետներ են՝ առանց դրա մասին տեղյակ լինելու, մասնավորապես սեռական հասունացման շրջանում, երբ դա հասարակայնորեն և/կամ կենսաբանորեն կանխորոշվում է: Միշտ չէ, որ ընտանիքը ճնշող է և/կամ շահագործող: Սակայն, անշուշտ, այն պայմանավորում է երեխայի ողջ կյանքը՝ որպես «ուղեղի լվացման» զանգվածային հարձակմամբ ուղեկցվող ահռելի կենսափորձ, որ ձևավորում է ազգային ինքնությունը: Արդյո՞ք շատ են այն ծնողները, որոնք փորձում են իրենց զավակներին այլ լեզուներ (բացի մայրենի լեզվից) սովորեցնել, հաղորդակից դարձնել այլ մշակույթների՝ տալով նրանց առավել լայն իրազեկություն, ներառյալ՝ ընտրության հնարավորությունն ու էկլեկտիկ համակցությունները: Շատ են, արդյո՞ք, այն ծնողները, որոնք փորձում են իրենց զավակներին ներկայացնել ընտանեկան իրավիճակի համալիր ներկապնակը՝ որոշակի ընտրովի, հատվածական, այսպահային պատկերների փոխարեն: Ավելին, զավակներին ծնողների հետ կապող մեխանիզմները հաճախ ժառանգներին իրար դեմ են լարում՝ ծնողական սիրո ու հոգատարության, ինչպես նաև նյութական արժեքների համար մղվող պայքարում: Իսկ ծնողներն իրենց մտորումները հաճախ քննարկում են ծնողական դռնփակ խորհրդակցություններում և ոչ լիագումար նիստերում:

Արբունքի խռովությունը կարող է կրել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ (ինչպես մյուս ժառանգների, այնպես էլ այլ դեռահասների հետ համատեղ) բնույթ: Պատճառների շարքում, թերևս, ամենավերջին տեղում կարելի է նշել տեղեկատվության փոխանակումը: Անհատական գիտակցությունը ձևավորվում է առճակատման ճանապարհով՝ շատ տարածված դեմքի արհամարհական շարժումով՝ իբրև տեսանելի և դուռը շրխկացնելով՝ իբրև լսողական արտահայտություն: Նոր գիտակցությունը հաճախ ծնողական գիտակցության հայելային արտապատկերումն է՝ միաժամանակ հանդիսանալով դրա բացասումը: Հորիզոնական կապերը միևնույն իրավիճակում գտնվող Այլոց հետ են (դեռահասների խմբեր և այլն), ենթամշակույթը սկզբնավորվում է առավել երիտասարդների մուտքով ու առավել տարեցների ելքով: Իրականության առավել ամբողջական պատկերը ձևավորվում և հասարակական ամբիոնը նվաճվում է առանց ծնողների ուղղորդման: Նոր սերունդ է ծնվել:

3.4 Հակամարտության փոխակերպում հիասթափությունների դեպքում՝ c = 0

Ինչպես նշեցինք, հիասթափությունները սկզբունքորեն գտնվում են հակամարտության սայրին: Հիմնական բնութագրիչն այս դեպքում նպատակն է և այն, ինչն արգելափակում է այդ նպատակը, խոչընդոտում է դրա իրականացմանը: Խոսքը, սակայն, չի վերաբերում սեփական «ես»-ի (երկընտրանք) կամ ուրիշների (բանավեճ) կողմից նախանշված այլ նպատակների իրականացմանն ուղղված ջանքերին: Ինչպե՞ս փոխակերպել նման իրավիճակները:

Հարցի պատասխանն, իհարկե, կախված է նպատակից ու դրա արգելապատնեշից: Սակայն գոյություն ունի հակամարտությունների փոխակերպման ընդհանուր տեսությանն առնչվող երեք հիմնական բանաձև:

Վերիմացականացում. արգելքը շրջանցված է, նպատակն՝ իրականացված, թերևս ինչ-որ ձևով նույնիսկ փոխակերպված: Պատճառներից մեկը կարող է լինել այն, որ արգելքն այնքան էլ մեծ չէր, որքան նախապես ենթադրվում էր, մեկ այլ պատճառ կարող է լինել այն, որ փոխակերպում իրականացնող անհատն օժտված էր թաքնված հնարավորություններով, երրորդ պատճառը՝ նպատակը կարող է վերասահմանվել: Ասենք, եթե մարդը գտնվում է հյուսիսային բևեռում և պետք է 20 սմ տեղաշարժվի՝ չտեղափոխվելով դեպի հարավ, հիասթափությունն առկա է այնքան ժամանակ, քանի դեռ չի բացահայտվել թռիչքի հնարավորությունը: Այնուհետև իրականացվում է մարմնի ուղղաձիգ տեղաշարժ, սակայն վճռորոշ տեղաշարժը մտավոր բնույթ ուներ և կոչված էր ընդլայնելու հիասթափությունն ուրվագծող պարադիգմը[9]:

Փոխզիջում. հավակնությունները չափավորված են, նպատակը՝ նվազեցված հասանելիության աստիճանի: Եթե իբրև նպատակ դիտարկվում է բարձրագույնի մեջ բարձրագույն դիրք գրավելը, իշխանությունը, հարստությունն ու համբավը (կամ բոլորը միասին), ապա մարդկանց մեծամասնությունը կյանքի որոշակի փուլում ստիպված է լինում որոշակի փոխզիջման գնալ, ինչպես ասում են՝ «առավել իրատես դառնալ»:

Նահանջ. նպատակը պարզապես մի կողմ է դրված, ասենք, պատճառաբանությամբ, որ այն չարժե վատնվող ուժերին՝ «խաղողը խակ է»: Նպատակը մղվում է գիտակցության առավել խորը, ենթագիտակցական որմնախորշերը (որտեղից այն կարող է երբևէ ամբողջ ուժով դուրս հորդել) կամ հաջողությամբ մոռացվում է (ոչնչացվում է):

Վերոհիշյալ երեք բանաձևերը կարող են ապրելու արվեստի դեղատոմս հանդիսանալ, եթե կիրառվում են համատեղ, և կենսակերպի դեղատոմս, եթե կյանքը կառուցված է դրանցից միայն մեկի շուրջը: Ստեղծագործ անհատը գերադասում է վերիմացությունը, հարմարվողը՝ փոխզիջումը, իսկ կասկածամիտը/վախկոտը/ստորացվածը/ միայնակը՝ նահանջը: Այնուամենայնիվ, մեկ քարտի վրա խաղադրույթ կատարելը կարող է անարդյունավետ լինել:

3.5 Հակամարտությունների փոխակերպում տարրական հակամարտությունների դեպքում՝ c = 1

Ենթադրելով, որ կառուցվածքային հակամարտություններն արդեն փոխակերպված են այնպես, որ շահերն այլևս վերածված են արժեքների, իսկ մաս-

նակիցները՝ դերակատարների, և համարելով, որ դերակատար նախ և առաջ նշանակում է կարծիք (թյուր կամ իրավացի), իսկ դրված նպատակի (արժեք=գիտակցաբար դրված նպատակ) իրականացումն արգելափակված է բացառապես սեփական «ես»-ի կամ այլոց կողմից առաջադրված այլ նպատակով, մենք հայտնվում ենք տարրական հակամարտության գոտում: Ինչպես արդեն նշեցինք, այս տարրական հակամարտություններն ավելի շուտ դասագրքային են (ինչպես այստեղ), քան իրական կյանքում հանդիպող: Իրական հակամարտությունները վիթխարի հակամարտությունների մոլեկուլներ են, որ համատեղում են երկընտրանքներն ու բանավեճերը բարդության՝ երբեմն անհավատալի մակարդակներում: Սակայն, եթե մենք ընդունում ենք, որ դրանց փոխակերպումն իրականացվում է պարզեցման որոշակի գործընթացների միջոցով, ապա տարրական հակամարտությունները մոտավորությունների իմաստով դառնում են շատ ավելի իրատեսական: Եվ բարդ հակամարտության մոլեկուլները, որոշակի իմաստով, կարող են դիտարկվել իբրև տարրական հակամարտությունների ատոմներից բաղկացած, որոնք անհրաժեշտ են դարձնում փոխակերպման ներքին բովանդակության մեջ խորանալը:

3.1 գծանկարում ցույց է տրված տարրական հակամարտությունների գծապատկերը:

Գծանկար 3.1. Տարրական հակամարտության փոխակերպման հիմնական գծապատկերը



Գծանկարում երկու մասնակիցներով (A1, A2) և երկու նպատակներով (G1, G2) հակամարտության (A1, A2, G1, G2) ձևավորումն է: Եթե A1=A2=A, ապա ձևավորումն իրենից ներկայացնում է երկընտրանք (A կետի շուրջ, եթե, ի հավելումն, նաև G1=G2, ապա առկա է հիասթափություն): Եթե ոչ, ապա գործ ունենք բանավեճի հետ, և, եթե, ի լրումն, նաև G1=G2=G, ապա բանավեճն ընթանում է միևնույն մրցակցային նպատակի շուրջ («մի կետի շուրջ ես ու եղբայրս համաձայնվեցինք՝ երկուսս էլ ուզում ենք ուղևորվել Միլան»): Գծապատկերը կարող է օգտագործվել հակամարտության ձևավորման հետագիծը (այսինքն՝ պատմությունը) ուրվագծելու նպատակով: Գլխավոր վար-

կածն այն է, որ նշված հինգ կետերը ժամանակավոր հավասարակշռության միանգամայն հավանական դիրքեր են այն իմաստով, որ կարող են հանգեցնել ընդունելի ու հարատև լուծման՝ նախազգուշացնելով, սակայն, որ կայացված որևէ որոշում հավիտենական չէ, հետևաբար տեղի ունի «փոխակերպում»: Սովորաբար հակամարտության եռանկյունու A, B և C գագաթներում առաջանում է *հակամարտության մնացորդ.* այդ մնացորդը կոչված է հետագայում հակամարտության ձևավորումը շրջապատի հետ կապակցելու՝ ներառյալ ատոմներից բաղկացած մոլեկուլները:

Մեկ այլ նախազգուշացում. հակամարտություններին վերաբերող ամերիկյան տերմինաբանության մեջ (1), (3), (4) և (5) կետերի առնչությամբ հաճախ կարելի է հանդիպել բազմիցս կիրառվող՝ հաղթանակ-հաղթանակ, պարտություն-պարտություն, հաղթանակ-պարտություն կամ պարտություն-հաղթանակ եզրերին: Նախ, այս եզրերը մեխանիստական են և չեն տանում դեպի գործընթացների հիմքերը: Երկրորդ (որ ավելի կարևոր է), դրանք բոլորովին այլ ուղղությամբ են տանում միտքը՝ հակամարտությունը ներկայացնելով իբրև խաղ, ինչպես հակամարտությունների կարգավորման հանրահայտ «խաղի տեսության» մեջ է (վերջինս սկզբունքորեն ձևավորվել է ստորջրյա ճակատամարտերի ռազմական տեսության ու պրակտիկայի հիմքի վրա): Այսօրինակ տերմինաբանությունը շեղում է բուն խնդրից, այն չի ստեղծում կյանքի ու մահվան մտահոգությունների կամ մասնակցության բեռի պատկերներ: Փոխարենը, հասարակական խաղերի հմտությունը բարձրացված է գոյութենապաշտական մտահոգությունների համար նախատեսված փոխաբերության մակարդակի, ինչպես, ասենք, նորությունները զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ փոխակերպվում են զվարճանքի (ընդ որում, բոլորովին էլ ոչ պատահաբար, հենց նույն երկրում)[10]:

1. *Վերիմացականացումը* «հակամարտության ստեղծագործական փոխակերպում» հպարտ անվանումը կրող արդյունքն է: Գործընթացի հետևանքով ձևավորվող ինչ-որ նոր, հազվագյուտ, սովորաբար անսպասելի արդյունք, որ նշանակում է, որ հակամարտության դրական հայտանիշը կիրառություն է գտել, մարտահրավերը անցնում է հիմնական հակասությանը: Նպատակներն իրականացված են, թերևս նաև՝ ինչ-որ կերպ փոխակերպված: Երանությունն առկա է: Հիմնական բառը՝ *ստեղծագործականություն:*
2. *Փոխզիջում* նշանակում է, որ նպատակների մասնակի իրականացումը ևս ընդունելի է երկու նպատակների համար էլ: Հիմնական բառը՝ *չափավորում:*
3. *Նահանջ* նշանակում է նպատակներից ընդմիշտ կամ ժամանակավորապես, ժամանակի առավել լայն հորիզոնում հրաժարվելը: Հիմնական բառերը՝ *անտարբերություն, համբերատարություն:*

Այս երեք արդյունքները համաչափ են և, սովորաբար, նպատակներին ձգտելու գործընթացում համատեղ ուղղորդում են բերում՝ ներքին (երկրընտրանքների դեպքում) և/կամ արտաքին (բանավեճերի դեպքում) երկխոսությունների միջոցով: Գտնվելով հիմնական գծապատկերի գլխավոր անկյունագծի վրա՝ բոլոր երեքն էլ առավել բնորոշ են ներդաշնակությանը, քան աններդաշնակությանը (քանի որ դրանք համաչափ են, էական չէ, թե կոնկրետ որի մասին է խոսքը՝ (4)-ի, թե՞ (5)-ի): Մնացած երկուսն առավել բնորոշ են աններդաշնակությանը՝ երկու մեկնաբանություններով:

Առաջին. սրանք երկու անկյուններ են, որտեղ մեկն իշխում է, մյուսը՝ հպատակվում՝ վերացնելով նպատակի հետագա իրականացմանը հետամուտ լինելու մասնակցի կարողությունը կամ ներքին մղումը: *Կռվել մինչև վերջնական ելքը.* ոմանց հնարավորությունների շտեմարանում հաճախ սա է փոխզիջման միակ այլընտրանքը: Հիմնական բառը՝ *բռնություն* (ոչ խաղաղ):

Երկրորդ. թե՛ ընդունելիությունը, թե՛ հարատևությունն այս անկյուններում հնարավոր են, բայց միայն որոշակի *փոխզիջման* դիմաց: Ոմանց համար անհասկանալիորեն, այլ հակամարտություններ ևս կարող են օգտագործվել՝ *ընդլայնման* ճանապարհով՝ ներառելով նորանոր մասնակիցների, և *խորացման* ճանապարհով՝ ներառելով նորանոր խնդիրներ, կամ երկուսը միասին: Հիմնական բառերը՝ *բարձր կոմպլեքսայնություն:*

Այժմ թույլ տվեք անդրադառնալ վերիմացականացման, փոխզիջման, նահանջի և փոխհատուցման գործնական, կիրառական նշանակությունը լուսաբանող չորս օրինակների՝ երկու բանավեճ և երկու երկընտրանք, երկուսը՝ մանկավարժական, երկուսն՝ իրատեսական:

1. *Առաջին բանավեճային օրինակ՝ երկու երեխա, մեկ նարինջ*[11]*:* Ակնհայտորեն, նրանք կարող են որոշել բացահայտ բռնություն գործադրել, և այս արդյունքը կարող է լինել ընդունելի ու հարատև, եթե տվյալ մշակույթի համար ուժի կիրառումը դիտարկվում է իբրև խնդրի լուծման հնարավոր մեխանիզմ: Սակայն ցանկացած երեխա կարող է հեշտությամբ հանգել փոխզիջումային լուծման՝ պարզապես մաքրելով նարինջն ու այն բաժանելով երկու կեսի, կամ շերտերով կտրելով այն և, ճզմելով, հյութը բաժանելով երկու մասի: Երկու դեպքում էլ նրանք կարող են տնօրինել արդյունքը «դու բաժանիր, ես ընտրեմ» ստանդարտ բանաձևով:

Վերիմացականացումն ավելի պահանջկոտ է՝ նարնջի ծառը տնկելու համար օգտագործելով համապատասխան սերմեր և միասին հավաքելով (ժամանակին) բերքը: Հնարավոր է հացթուխի թիակն օգտագործել միաժամանակ թե՛ սպառման, և թե՛ վաճառքի նպատակով՝ բաժանելով շահույթը:

Հիշյալ բոլոր արդյունքները գործողություն են պահանջում: Նահանջը կարող է նշանակել՝ հանգիստ թողնել նարինջը իբրև *an sich* (ինքնին) և ոչ *für mich* (ինձ համար): Սա համատեղելի է նարնջի սպառման մեկ այլ ճանապարհի հետ՝ բերանի փոխարեն աչքերով՝ վայելելով դրա էսթետիկական որակները միասին կամ զուգահեռաբար (այս արդյունքը շատ ավելի հաճախ մատնանշվում է, երբ վերոհիշյալ օրինակը կիրառվում է Արևելքում):

Ապա տեղի ունի ընդլայնում՝ ներառելով երրորդ երեխային՝ A3, որի հետ առաջին երկուսը կոնֆլիկտ ունեն: A1-ը նարինջը տալիս է A2-ին՝ ենթադրելով, որ A2-ը կզիջի A3-ին, վերջինս էլ A1-ին, և բոլորը, հավանաբար, բավարարված կլինեն: Խորացման գործընթացում A1-ի ու A2-ի միջև ի հայտ է գալիս նոր կռվախնձոր: Նրանցից մեկը տեղի է տալիս մյուսին և ստանում է նարինջն իբրև փոխհատուցում, կամ, հակառակը, նախ ստանում է նարինջը, ապա՝ զիջում:

2. *Երկրորդ բանավեճային օրինակ՝ Իսրայել/Պաղեստին*[12]. A1-ն ու A2-ը ներկայացնում են Իսրայելն ու Պաղեստինը, G-ն՝ Միջերկրական ծովից դեպի արևելք ընկած վիճահարույց տարածքը, որի նկատմամբ իսրայելցիներն օրինական պահանջատիրություն են ներկայացնում Ընտրյալների, Ավետյաց

երկրի աստվածաբանության հիման վրա, իսկ պաղեստինցիները՝ իսրայելցիներից առաջ այդ տարածքում հայտնվելու պատճառաբանությամբ:

Անշուշտ, երկպետության գաղափարը (այսինքն՝ ինչպես Պաղեստինի ազգային խորհուրդն է առաջարկում իր 1988թ. թիվ 15 բանաձևում) փոխզիջում է՝ այն պարզ իրողությամբ, որ փոխզիջումը միայն 50-50 տարբերակը չի, այն կարող է լինել նաև 70-30, 90-10, սակայն երբեք՝ 100-0: Իսկ նահանջը կլինի այն դեպքը, երբ երկու կողմերն էլ, հրաժարվելով իրենց պահանջատիրությունից, զիջեն այդ տարածքը երրորդ կողմերին (որպես պատմական օրինակ կարելի է դիտարկել Հռոմեական կայսրությունը, թուրք-սելջուկներին, Օսմանյան պետությունը, Ազգերի լիգան/բրիտանացիները, Միավորված ազգերի կազմակերպությունը/բրիտանացիները):

Ո՞րն է վերիմացականացումն այս կոնկրետ դեպքում. իհարկե ոչ ինքնավարության երկու օրինակները, այլ «միասնավարությունը»[13]: 3.1 գծանկարում փոխզիջման ու վերիմացականացման դիրքերի միջև առկա են մի շարք հնարավորություններ[14]. եթե փոխզիջումն անջատական, «անարխիկ» համակարգ է, ապա առաջին սկզբնավորումը պետք է լինի Իսրայելի ու Պաղեստինի միջև ձեռք բերված համաձայնությունների շուրջ ձևավորված զուգորդական համագործակցությունը (ենթադրելով Պաղեստինի անկախ պետության գոյությունը, հակառակ դեպքում մենք կհայտնվենք 3.1 գծանկարի սխալ գագաթներում), ապա համադաշնությունը, հետո՝ դաշնությունը և նոր միայն՝ ունիտար պետությունը: Վերջինս վերջնական վերիմացականացման դրսևորում է: Տողերիս հեղինակի տեսանկյունից դա այսօր իրատեսական չէ (այնուամենայնիվ, «երբեք մի՛ ասա՝ երբեք»): Սակայն համադաշնությունը, ուր Իսրայելն ու Պաղեստինը հանդես են գալիս իբրև հավասար գործընկերներ քաղաքական, տնտեսական, ռազմական ու մշակութային համագործակցության բնագավառներում, կարող է դիտվել որպես միանգամայն արժանի նպատակ, որի ուղղությամբ հարկ է ջանքեր գործադրել՝ իբրև երրորդ գործընկեր դիտարկելով (կամ չդիտարկելով) Հորդանանը:

3. *Առաջին երկընտրանքային օրինակ. ամուսնական զույգի արձակուրդի պլանավորումը:* Ամուսնական զույգն ունի չորսշաբաթյա արձակուրդ. ամուսինը գերադասում է հանգիստն անցկացնել լեռներում, կինը՝ ծովափում. նրանք ապրում են Դանիայում կամ Ալպերում: Ակնհայտ են երկու անընդունելի լուծումներ՝ երկուսն էլ շարժվում են մեկի ցանկությամբ, մյուսը համակերպվում է (լռելյայն կամ ոչ): Ինչպե՞ս այս դրույթները վերափոխել լուծումների ընդլայնման («Քո խնդիրն այն է, որ երեխաներն ուզում են իրականացնել արձակուրդի իրենց սեփական պլանները, իմն էլ այն է, որ նրանց արձակուրդը չափազանց թանկ արժի. ես հետևում եմ քեզ, դու թողնում ես նրանց կամքին, նրանք զսպում են իրենց ցանկությունները») և խորացման («Ես համաձայն եմ արձակուրդն անցկացնել այնտեղ, որտեղ ուզում ես, միայն այլևս չխոսես կահույքի մասին») ճանապարհով: Խորացման մեկ այլ մեկնաբանություն՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ (փոխարինաբար) արձակուրդն անցկացնել լեռներում կամ ծովափում (բայց ոչ երկու շաբաթ լեռներում, երկու շաբաթ էլ՝ ծովափին):

Վերիմացականացման օրինակ կարող են ծառայել ծովափնյա լեռները (և՛ լեռներ, և՛ ծովափ), ասենք՝ Թարոմինան կամ Սիցիլիան: Օրինակը ուրույն և փորձի վրա հիմնված գիտելիքի օգտագործման ձևերից մեկն է. այն, ինչ գոյություն ունի, հնարավոր է: Անհատը, որ ջանադիր ընթերցանությունից

և/կամ ճանապարհորդություններից քաղել է հարուստ աշխարհագրական գիտելիքներ, հակամարտության կարգավորման ավելի մեծ ներուժ ունի, քան մյուսները. ընդհանրապես, իրականում հենց սա է կոնֆլիկտաբանի մասնագիտական որակավորման բանալին:

Սակայն վերիմացականացումն ի հայտ կգա նաև երկուսի իրական ցանկություններն ուսումնասիրելու և այն դեպքում, երբ ամուսինն զգում է, որ ինքը լեռները մագլցելու կարիք ունի, իսկ կինը՝ արևառության. ժամանակակից ամառային ճամբարն ու հյուրանոցը կարող են բավարարել թե՛ մեկի, և թե՛ մյուսի կարիքները: Նպատակների վերաձևակերպումը կարող է օգնել:

Նահանջն ակնհայտ է. «Եթե մենք պետք է ամեն տարի այսպես վիճենք, ապա ես ընդհանրապես հրաժարվում եմ արձակուրդից»: Կամ, խուսափելով նախասիրությունների անհամատեղելիության երկընտրանքից, արձակուրդն անցկացնել իրարից առանձին՝ բաժանում-մասնատում[15]. կամ էլ միաձուլում-միավորում՝ անտեսելով անհատական նախասիրությունները[16]:

4. *Երկրորդ բանավեճային օրինակ. ինքնություն- գեր-«ես» պայքարը:* Այս դեպքում G1-ը և G2-ը գտնվում են անհատի համակարգում: *Zwei Seelen wohnen, ach!, in meiner Brust* (Ա՜խ, երկու հոգի են ապրում իմ կրծքում).- ինչպես ասում էր Գյոթեն՝ մեկը մի ուղղությամբ է ձգում, մյուսն՝ այլ, մեկը երկնային է, մյուսը՝ նյութական: Գուցե դրանց թիվը երկուսից ավելի՞ է: Դարձյալ անսալով Սորոկինին, կարելի է պնդել, որ իմացողական մտածողության դեպքում գեր-«ես»-ն ամբողջապես գերիշխում է անհատի ներաշխարհում, հուզական անհատականության դեպքում իշխում է ինքնությունը, այսինքն՝ անհատականությունը ենթարկված է այլ մտածողության: Ֆրոյդի դատողությունների շրջանակում չափազանց դժվար է ընդլայնվել և խորանալ:

Ֆրոյդի լուծումը, հասունության նրա չափանիշը, իհարկե, վերիմացականացումն է, որի միջոցով նա փորձում է բացատրել համադրության (կենսաբանականն ու կրոնականը միևնույն ձևակերպման մեջ՝ գումարած անհատականությունը) ունակ «ես»-ի ի հայտ գալը[17]: Երկուսն էլ հնարավոր են. առավել մեղմ տարբերակում՝ փոխզիջման, իսկ կատարյալ տարբերակում՝ վերիմացականացման ճանապարհով, ինչպես ճապոնական մոդելի սոցիալ-դեմոկրատիայի դեպքում էր, երբ այն ձգտում է շուկայական-պլանային ինտեգրման:

Սակայն հակառակ ուղղությամբ շարժումն էլ հավանական է. և՛ ինքնությունը, և՛ «ես»-ն առաջ են մղվում՝ առանց միմյանց ճանապարհ տալու: Ինքնասպանությո՞ւն: Մա՞հ: Կամ լուրջ հոգեկան խանգարո՞ւմ:

Նախորդ օրինակում նկարագրված ամուսնական զույգի երկընտրանքը մտագարության դրվագներ է հիշեցնում. գործնական բաժանման մոլագար ջանքերը տատանվում են հակամարտության գծապատկերի ոչանկյունագծային անկյուններում՝ չհասնելով ո՛չ ինտեգրման կատարելության, ո՛չ էլ մեռյալ հանդարտության (կամ մենք ենք այդպես ենթադրում)[18]: Գուցե հոգեկան խանգարումները իրականությանն առնչվող երկընտրանքից խուսափելու հուսահատ միջո՞ց են. հավասարակշռություն չգտնելով փոխզիջման ու վերիմացականացման մեջ՝ մարդն այն փնտրում է ծայրահեղություններում. գուցե ծայրահեղ նահա՞նջը դառնա հավասարակշռության վիճակ:

Բերված օրինակներին երկու եզրակացություն է հետևում: Նախ, հակամարտության վերլուծության նշված մոդելը կարող է համապատասխանեցվել

տարաբնույթ դեպքերի՝ սկսած ներանհատականից մինչև հակամարտությունների ձևավորումը ամենատարբեր սոցիալական համակարգերում: Դա ամենևին էլ տարօրինակ չէ: Մենք գործ ունենք նպատակամետ համակարգերի հետ (շահերի կամ արժեքների), և նման «համակարգեր» միշտ կարելի է գտնել այնտեղ, որտեղ կյանք կա, որքան էլ խառը կազմակերպվածք լինի: Ներդաշնակության ու աններդաշնակության հավասարակշռությունը շեղվել է վերջինիս կողմը: Եվ նմանությունները ոչ միայն թելադրված են մոդելով, այլև դրանք գոյություն ունեն «մեզնից անկախ, դրսում»: Գոնե այդպես է թվում:

Երկրորդ, այնուամենայնիվ, վերիմացականացումը, փոխզիջումը, նահանջը, ընդլայնումը, խորացումը, բաժանումն ու միաձուլումն ինքնաբերաբար դեռևս որոշումներ չեն, դրանք զուտ լուծման ձևեր՝ վարկածներ են, իսկ «լուծումները» դեռևս չի կարելի դիտարկել իբրև վերջնական բանաձև կամ վախճան, այլ միայն որպես քիչ թե շատ կայուն հավասարակշռություն հակամարտության կենսացիկլում: Այս փուլերից ցանկացածում կարող են լինել A-ի և B-ի մնացորդներ՝ որոնելով նոր C (հակասություն, թեմա), որ կառչեն դրանից: Կարող են առկա լինել նոր C-ի ձևավորման համար անհրաժեշտ նյութեր՝ համակցելով նախկին հակասությունների ու թեմաների բեկորները (ինչպես նոր սահմանը լուծում է զուտ պատմական խնդիրներ, բայց չի երաշխավորում անվտանգության, հումքի աղբյուրներին ու շուկաներին ազատ մուտք ստանալու, տնտեսական կամ սոցիալական մերձեցման խնդիրների լուծումը):

Այնուամենայնիվ, նշված հինգ կետերը միանգամայն օգտակար են իբրև ուղենիշ՝ հակամարտության գոտում շարժվելու համար (այն, ընդհանրապես, պետք է ունենա *m* մասնակիցներ՝ A_1, A_2, A_3 ….. A_m, և *n* նպատակներ՝ G_1, G_2, G_3, …. G_n, այլ խոսքով՝ $m+n$ չափանիշներ): Դրանք կազմում են հակամարտությունների ձևավորման փոխակերպումները՝ խուսափելով բռնությունից ու ստանձնելով մարտահրավերները: Վերջինիս լավագույն ձևը, սովորաբար, վերիմացականացումն է: Բայց վերիմացականացման ոչ բռնի ճանապարհը հայտնաբերելը դյուրին գործ չէ:

3.6 Հակամարտությունների փոխակերպում համալիր՝ դերակատարների կոնֆլիկտների դեպքում՝ c > 1

Անշուշտ, համալիր՝ դերակատարների կոնֆլիկտների կարգավորման խնդրի ամենահեշտ լուծումը պարզեցումն է, որը, սակայն, առաջ է բերում մեկ այլ հիմնահարց՝ ռեդուկցիոնիզմը (բևեռացման իմաստով), որը «դարան է մտած»՝ պահպանելով ծավալման վտանգավոր ներուժ: Սակայն բևեռացումը չափազանց գայթակղիչ է և ձգտում է երկու մասի բաժանել անհատներին, խմբերը, հասարակությունները, տարածաշրջանները և այլն (դրական ներհամակարգային և բացասական միջհամակարգային կապերով), ինչպես նաև արժեքների, հակումների ու պատկերների ներանհատական համակարգը (դարձյալ դրական ներհամակարգային և բացասական միջհամակարգային կապերով), *ըստ որում ընկերոջ անհատական համակարգի պատկերներով ու շրջապատող սոցիալական միջավայրում թշնամու կերպարի որոնումներով:*

Ինչպես արդեն նշվեց, ռեդուկցիոնիզմը չափազանցված է ներկայացնում միջհամակարգային հակամարտությունները՝ թերագնահատելով, միաժամա-

նակ, ներքին կոնֆլիկտները: Կոնկրետ ենթադրությունը հետևյալն է՝ ձևավորման տվյալ տիպի համար վերիմացականացման, փոխզիջման և այլնի ուղղությամբ ինչպիսի փոխակերպում էլ իրականացվի, միևնույն է, բևեռացված հակամարտության էներգիայի սպառման դեպքում միշտ առկա է թաքնված հակամարտության վերաբռնկման հնարավորությունը: Ազգային հակամարտությունները, և ոչ միայն Արևելյան Եվրոպայում, նոր ուժով ժայթքեցին այնժամ, երբ սառը պատերազմի հակամարտության ձևավորումն անհետացավ, ի թիվս այլոց, նաև այն պատճառով, որ այն միանգամայն անհիմն կերպով չափազանցված էր (օրինակ՝ 1996թ. ապացուցվեց, որ Խորհրդային Միությունը երբեք չէր պլանավորել դավադրաբար հարձակվել Արևմտյան Եվրոպայի վրա): Գոյություն ունի «չինական տուփերի» փաստարկը. եկեք համալիր հակամարտությունները դիտարկենք իբրև տարրական հակամարտություններ, ռեդուկցիոնիզմի միջոցով փոխակերպենք դրանցից մեկը, բացենք «տուփերը» և, ենթադրելով, որ ի հայտ են գալիս երկու նոր հակամարտություններ, կարգավորենք դրանք, ապա անցնենք 2-րդին, և այդպես շարունակ՝ 2^N անգամ, հասնելով N-1 քայլին: Գծային, երկակի դատողության համար սա բնական/բնականոն մոտեցում է:

Այստեղ կիրառված դիրքորոշումը, սակայն, այն է, որ համալիր հակամարտությունների ձևավորումներն իրենց տեսակի մեջ եզակի են և պետք է դիտարկվեն իբրև այդպիսին: Վերոհիշյալ յոթ մոտեցումները հիմնվում են *c = 0* դեպքից բխող երեք հիմնական և *c = 1* դեպքից բխող երկու լրացուցիչ մոտեցումների վրա: Ասենք նաև, որ համալիր հակամարտությունների դեպքում տարրերի բաժանումն ու միաձուլումը հավասարապես իմաստ ունեն, որոնց ախտորոշումը, սակայն, հաճախ շատ ավելի բարդ է (կամ մեզ է այդպես թվում): Բոսնիա-Հերցոգովինան սերբերի, խորվաթների ու սլավոնական մուսուլմանների միջև բաժանելն այնքան բարդ չէր, որքան Կրաինան խորվաթների ու սերբերի կամ Կոսովոն սերբերի ու ալբանացի մուսուլմանների միջև բաժանելը:

Այնուհանդերձ, սրանք պարզեցված փոխակերպումներ են՝ ընդունելիության ու հարատևության ցածր մակարդակներով (վերոհիշյալ պատճառներով): Վերիմացականացումը, համադաշնությունների նոր տիպերի տեսքով, կամ Հարավ-արևելյան Եվրոպայի համադաշնությունը, կարող են ավելի արդյունավետ լինել առավել համալիր մակարդակներում՝ ընդլայնման ու խորացման ավելի մեծ հնարավորություններով: Հիմնական խնդիրը այստեղ երկու-երեք նպատակներ ունեցող երեքից-չորս դերակատարների ուղղությամբ մտածելու հմտությունների ավելացման և, միաժամանակ, ավելի ցածր մակարդակի չիջնելու մեջ է:[19]

Սակայն գոյություն ունեն նաև երկկողմանիությունն ու բազմակողմանիությունը համատեղող մոտեցումներ: Այսպես, օրինակ՝ հակամարտության մոլեկուլը կարող է դիտարկվել իբրև հակամարտության ատոմներից բաղկացած, բայց՝ ոչ թե երկու, այլ բազմաթիվ, ինչպես, ասենք, Իսրայելը, որ արաբական աշխարհի հետ սկզբունքորեն երկկողմանի հակամարտության մեջ է, մասնավորապես, հակամարտում է իր հետ սահմանակից չորս/հինգ պետությունների (և Իրաքի) հետ: Հակամարտության ատոմների այս համակարգը կարող է բաժանվել երկու ենթահամակարգերի՝ հակամարտության կենտրոն (կորիզ) և ծայրամաս (արտաքին մակերևույթ): Այս բաժանումից բխում է երեք մոտեցում.

- դիաքրոն մոտեցում. սկզբնավորում կենտրոնում «հիմնական կապերից»,
- դիաքրոն մոտեցում. սկզբնավորում ծայրամասերում «դյուրին կապերից»,
- սինքրոն մոտեցում. սկզբնավորում բոլոր կապերից միաժամանակ:

Երկու դիաքրոն մոտեցումները առանձնանում են գծայնության թերություններով: Դրանք ընդգծող ենթադրությունները միանման են՝ ոչնչացնել հիմնական հակասությունը (իսկ մնացածը կսկսի լուծվել), կամ օրակարգային խնդիրների իրական վիճակն ընդունել որպես ուղենիշ (մնացյալը կհամապատասխանեցնեն իրենց վարքագիծը, քանի որ «մթնոլորտն» արդեն բարելավված կլինի): Առաջին գաղափարը մարքսիստական տեսության հիշողություններ է արթնացնում՝ հիմնական հակասությունն ընկած է սոցիալական ենթակառուցվածքների հարթության վրա՝ աշխատուժի ու կապիտալի (կամ արտադրության միջոցների ու արտադրական հարաբերությունների) միջև: Երկրորդ գաղափարն ավելի շուտ ազատական մտածողություն է հիշեցնում՝ աշխարհը հակամարտող սրճարան է, դու վերցնում ես քո հակամարտությունները ու միախառնում մյուսներին՝ ձևավորելով օրակարգ, սկսելով նախուտեստներից (նույնիսկ *hors d'oeuvres*) և «մթնոլորտ» ստեղծելով մինչև հիմնական կերակուրը *(oeuvre)*:

Այս վերջին մոտեցումը Իսրայելի դեպքում կիրառվում է «խաղաղություն մաս առ մաս» անվանմամբ, իսկ գործընթացը հայտնի է որպես «խաղաղության գործընթաց»: Այնուհանդերձ, որոշակի տարակուսանք կա, որ Իսրայելի հրեական պետության ստեղծումը հարվածում է այդ տարածքում բնակվող ժողովուրդների, մասնավորապես, պաղեստինցիների շահերին: Այս հակասությունն օրախնդիր դարձնելը կարող է համապատասխանել վերոհիշյալ առաջին մոտեցմանը: Այն, կարծես, ավելի մեծ հավանականությամբ կարող է ընդհուպ մոտեցնել կայուն հավասարակշռության, քան երկրորդ մոտեցումը:

Այստեղ նախապատվությունն առավելապես տրվում է երրորդ՝ միաժամանակյա մոտեցմանը: Բոլոր հակասությունների վերացման ուղղությամբ միաժամանակ գրանցված որոշակի առաջընթացն ավելի գերադասելի է, քան միայն մեկի լուծման ուղղությամբ գործարկված ահռելի ջանքերը, որոնք, ի վերջո, բերում են հիմնական հակամարտության ձևափոխմանը: Գործընթացի պատկերն առավել արևելյան է, առավել բուդդայական, ենթադրելով, որ պարուրաձև, միաժամանակյա հարաբերություններն առավել ճշգրիտ են արտացոլում կյանքի իրականությունը կազմակերպման ցանկացած մակարդակում[20]: Անշուշտ, առկա է նաև կենտրոնի ու ծայրամասերի բաժանումը և որտեղից սկսելու իմացությունը պարուրող անորոշություններից խուսափելու ակնհայտ առավելությունը:

3.7 Հակամարտության փոխակերպումը. երկրորդ ակնարկ

Հակամարտության փոխակերպումը տեղի է ունենում *ժամանակի* մեջ, ֆիզիկական *քրոնոսի* ու կենսական *կայրոսի* տարածքում, քանզի ժամանակը շարունակում է իր համաչափ ընթացքն առանց ալեկոծությունների և այդ ալեկոծությունների միջով: Վերջիններս առավել շինծու են ու հիշեցնում են այն բանակցողներին, որոնք հանդիպման վերջնաժամկետը որոշելու համար ողջ գիշեր աշխատում են ու առավոտյան ներկայանում են ծանրացած կոպերով ու

սեփական անձի գովերգություններով: Բայց նախորդն էլ չի կարելի թերագնահատել, ի թիվս այլոց նաև այն պատճառով, որ բազմաթիվ այլ իրադարձություններ են տեղի ունենում *քրոնոսի* հարատև հոսքում: Իհարկե, յուրաքանչյուր անհատ կարող է մտապահել, մասնակցել, առավել ևս փորձել կարգավորել խիստ սահմանափակ թվով հակամարտություններ:

Հակամարտության փոխակերպման ընդհանուր տեսության երկրորդ առանցքը *կոմպլեքսայնությունն* է՝ միաչափության որոշակի տեսակ, որ հարկադրված է տարաբնույթ, բայց միաժամանակ նման երևույթներին: *Dukkha*-ն փթթում է ամենատարբեր միջավայրերում: Անհրաժեշտ է ժամանակ, երբեմն՝ չափազանց երկար, մինչև *քրոնոսն* ու *կայրոսը* կարողանան ձևավորել ներքին ու արտաքին երկխոսություններ դեպի *sukha* շարժումն իրականացնելու համար:

Փոխակերպումները հենց այնպես տեղի չեն ունենում: Դրանք պետք է պահանջված լինեն և երբ պահանջված են, միայն այդ դեպքում են իրական: Դրանք պետք է սուբյեկտիվորեն խթանվեն, ընդ որում՝ սուբյեկտը շարժիչ ուժն է *(force motrice)*: Սա, իր հերթին, նշանակում է, որ կապակցման ու գիտակցականացման գործընթացները բացառիկ կարևորություն ունեն և նպատակաուղղված են A, B և C գագաթներին՝ ճեղքելով կառուցվածքային հակամարտության խավարը, անհրաժեշտության դեպքում անգամ խորտակելով իրականության պատկերների սառցաշերտը:

Խնդիրն այն է, որ այս պատկերները կարող են կառավարման համար չափազանց բարդ ու համալիր դառնալ: Իսկ հակաթո՞ւյնը: Որպես այդպիսին կարելի է որոշակի պարզեցում կիրառել՝ խուսափելով բևեռացումից, ապա ձևավորումը զգուշաբար ուղղելով դեպի փոխակերպման առավել բարձր մակարդակ (հնարավոր է՝ նույնիսկ միջամտության ճանապարհով):

Ծանոթագրություններ.

---

[1] Հասնելով իր գագաթնակետին, *յան*-ը նահանջում է՝ իր տեղը զիջելով *ին*-ին, իր հերթին, *ին*-ը, հասնելով իր գագաթնակետին, նահանջում է՝ տեղը զիջելով *յան*-ին (Վանգ Չունգ): Սա հայտարարություն է հակասության կողմ(եր)ի վերաբերյալ, ենթադրություն այն մասին, որ նրանք չեն կարողացել որսալ ներդաշնակության (անորսալի) պահը: Պետք է նշել, որ ըստ այս ձևակերպման, դաոիզմը ևս արևմտյան կանխատրամադրվածությամբ հակասությունն իբրև երկու կողմեր ներառող երևույթ դիտարկելու հակում ունի. անշուշտ հնարավոր է պատկերացնել ավելի ընդհանրական բանաձևեր:

[2] Այս դիպուկ տերմինը Ջեյմս Քոլմանինն է:

[3] Այս գերազանց տերմինները խաղաղության տեսության մեջ համապատասխան նկարագրությամբ ներմուծվել են Դիթեր Սենգհասի կողմից:

[4] Բազմաթիվ պայմաններ պետք է բավարարվեն, որպեսզի ուժի հավասարակշռության դոկտրինան որոշակիորեն հավանական դառնա: Դրանցից մի քանիսի բացատրությունը տե՛ս՝ Johan Galtung, *"Balance of Power and the Problem of Perception", Essays in Peace Research,* Vol. II, Copenhagen, Ejlers, 1976, pp. 38-53.

[5] Որպես նորվեգական պատվիրակության դիտորդ՝ տողերիս հեղինակի վերլուծությունը տե՛ս՝ *"Human Needs, National Interest and World Politics",* ch. 13 in *Peace Problems: Some Case Studies, Essays in Peace Research,* Vol. V, Copenhagen: Ejlers, 1980, pp. 361-380.

[6] Տե՛ս, օրինակ՝ Michael W. Weithmann, *"Zwischen Orient und Okzident: Die Geschichte der Konfliktregion Jugoslawien",* in Rudolf H. Dittel, ed., *Ex-Jugoslawien: Versuch einer Bestandsaufnahme,* Königsbrunn, Mundi Reales, 1993, p.56.

[7] Օրինակ՝ տողերիս հեղինակի համար, այդ երկրում *los fichocrates*-ի ևս մեկ զոհ:

[8] Արևմուտքում *ինթիֆադան* («թոթափում») հիմնականում նույնացվում է քարեր շպրտելու հետ, ինչը, նույնիսկ եթե քարերը չեն հասնում նպատակակետին, միևնույն է, բռնության ակնհայտ դրսևորում է: Նույնը վերաբերում է «շպրտելու» հարակից բառերին: Բայց *ինթիֆադան* շատ ավելին է՝ ընդհանուր գործադուլ, փակ խանութներ, պաղեստինյան ժողովրդի կողմից լավագույնս դրսևորվող ընդհանուր վերաբերմունք-վարքագծային համախտանիշ (volonte generale): Տե՛ս՝ Johan Galtung, *Nonviolence and Israel/Palestine,* Honolulu: University of Hawai'i Press, 1989, վերջին գլուխ, *"Intifadah: The Palestinian Struggle for Liberation"*, pp. 61-72.

[9] Հայտնի է իբրև գեր-շաբլոնային մտածողություն կամ «կողմնակի մտածողություն». տե՛ս՝ Edward De Bono, as "lateral thinking", in his book *Lateral Thinking*, London, Ward Lock Educational, 1970 and New York, Harper & Row, 1970.

[10] Մյուս կողմից, եթե վերանանք տերմինաբանությունից կամ ներկայացնենք այլ դատողություններ (ինչպես այստեղ արվեց), խաղի տեսությունը ևս հակամարտության գործընթացի մասին կարծիք ձևավորելու հարմար տարբերակ է: Դատողությունները ևս կարող են չարաշահվել: Համագործակցության խնդիրների նկատմամբ խաղի տեսությունը ևս կարող է կրառվել, ինչպես դա արվում է դատապարտյալների երկընտրանքի վերաբերյալ հսկայածավալ գրականության մեջ: Սակայն, որպես հակամարտությունների կարգավորման միջոց, այն կարող է չափից առավել գովազդվել: Տե'ս՝ See Anatol Rapoport, Kenneth Boulding, Braithwaite: *Theory of Games as a Tool for the Moral Philosopher:*

[11] Այս օրինակի հանդեպ իմ հետաքրքրությունն առաջացավ իբրև հրավիրված պրոֆեսոր Հավանայում (Կուբա) գտնվելուս ժամանակ, 1972թ.: Գիտափորձերն իրականացնում էին՝ քննության առնելով այն վարկածը, ըստ որի մասնավոր ընտանիքում մեծացած երեխաներն առավել ասիմետրիկ վարքագիծ են հանդես բերում, իսկ սոցիալիստական, հանրային մանկապարտեզներում մեծացած երեխաներն առավել հակված են համագործակցության:

[12] Առավել մանրակրկիտ ուսումնասիրությունը կարելի է գտնել այս գրքի առաջին տարբերակում՝ Johan Galtung, *"The Middle East and the Theory of Conflict", Essays in Peace Research,* Vol. V, Copenhagen: Ejlers, 1980, pp. 77-116 (originally published in 197l in the Journal of Peace Research), ինչպես նաև երկրորդ տարբերակում՝ Johan Galtung, *Solving Conflicts,* Honolulu: University of Hawai'i Press, 1989, last chapter, *"The 'Middle East' Conflict"*, pp. 37-57:

[13] Ուշադրություն դարձրեք, թե որքան անբնական է հնչում այս բառը, թեև «ինքնավարություն» բառը, կարծես, վիճահարույց չէ: Ժամանակ է պետք, որպեսզի լեզուն հարմարեցվի խաղաղության ու հակամարտության տեսություններին, ինչպես, ասենք, «խաղաղություններ» հոգնակի տերմինի կիրառման դեպքում (ի թիվս պատերազմների ու հակամարտությունների):

[14] Առավել մանրամասն բացատրությունը տե'ս՝ Մաս I, գլուխ 5:

[15] Անշուշտ, վերածվելով սովորույթի, այն կարող է հանգեցնել ավելի խորունկ իմաստով տարանջատման և բաժանման՝ զույգի վերջնական դեհնտեգրման: Ապա կարող է առաջ գալ հետևյալ ենթադրությունը՝ հետարդիական հասարակության պայմաններում արձակուրդը միասին անցկացնելը փոխարինում է միասին աշխատելուն (ինչպես քոչվորները ֆերմայում)՝ առավել վաղ ֆորմացիաներում:

[16] Եթե անգամ այս երկընտրանքի արտահայտությունը կարող է հնչել որպես բանավեճ, նույնիսկ՝ վեճ, անհրաժեշտ է նշել, որ սա (1,2) և ոչ (2,1) տիպի հակամարտություն է, հակասությունն առկա է որպես մեկ գործող անձ հանդես եկող զույգի ներքին համակարգում: Ակնհայտորեն, եթե զույգի անդամներից մեկի համար արձակուրդի ընտրությունն անկախ է մյուսի ընտրությունից, ապա նմանօրինակ անհամատեղելիությունը վերանում է: Նույնը կարող է տեղի ունենալ, եթե երկուսն էլ հասնեին շահերի ու արժեքների համընդհանուր համահարթեցման, այլ խոսքով՝ ամբողջական տարրալուծման/ինտեգրման:

[17] Sigmund Freud, *The Ego and the Id,* New York, Norton, 1960.

[18] *The Tibetan Book of the Dead* (Boston and London: Shambhala, 1992) գիրքն արտահայտում է տիբեթյան բուդդայականության հիմնարար ենթադրություններից մեկը, որի համաձայն մահանալն ու մահն ընդամենը փուլեր են հավերժի ճամփին:

[19] Այսպիսով, ամբողջ երկու տարվա հակամարտություն (բռնության կիրառմամբ) պահանջվեց, որպեսզի միջազգային հանրությունը վերջապես հասկանա, որ Կրահինայի ու Բոսնիայի սերբերի նպատակները կարող են չհամընկնել Սերբիայի/Բելգրադի նպատակների հետ (թեև դրանք կարող են համատեղելի լինել):

[20] Այս առումով տե՛ս՝ Ira Progoff, *Jung, Synchronicity, and Human Destiny,* New York, Delta, 1973:

4
Հակամարտությունների միջամտություններ

4.1 Հակամարտությունների միջամտությունն իբրև հաղորդակցություն. տասնմեկ մոտեցում

Սկսենք *m* մասնակիցներ ու *n* նպատակներ ընդգրկող հակամարտության (լարվածության բարձր մակարդակ) դիտարկումից: Հակամարտությունը կլանում է իր ուղեծիր նետված նորանոր ռեսուրսներ (որոնք, գուցե, ավելին են, քան հակամարտության նպատակների արժեքը): Հակամարտության ընթացքում հյուծվում են նաև հենց իրենք՝ մասնակիցները: Խնդիրն այժմ ոչ թե այն է, թե «ո՞վ ամենաշատը կշահի», այլ այն, թե «ո՞վ ամենաքիչը կտուժի»: Հակամարտության իրականությունն այլևս հուսադրող չէ, իսկ կանխատեսումներն՝ ավելի պակաս հուսադրող: Դերակատարներն անկարող են կասեցնել հակամարտության ընթացքն ու հետ շրջել այն: Նյութական ու ոչ նյութական տառապանքը, որ դերակատարները պատճառում են իրերին, իրենք իրենց և ուրիշներին, անտանելի է, նաև՝ օտարների համար: Արտաքին միջամտությունը (պահանջված կամ ոչ) խիստ է: Հիշողությանս մեջ արթնանում է Հարավսլավիան 1991-199? թվականներին: «Ինչո՞ւ» հարցի պատասխանն ակնհայտ էր: Բայց կոնկրետ ի՞նչ էր պետք անել: Ո՞վ պետք է աներ: Ինչպե՞ս: Ե՞րբ: Ի շահ ո՞ւմ և ո՞ւմ հաշվին:

Ձևակերպենք հապճեպ, մակերեսային պատասխաններ՝ որպես միջամտության առաջին ուղեցույց.

Ինչո՞ւ: Հետագա տառապանքը, նյութական ու ոչ-նյութական ավերածությունները կասեցնելու հնարավորության առկայության դեպքում որևէ լուծման (հիմնավորապես ընդունելի ու հարատև) հանգելու համար:

Ի՞նչ: Միանգամայն կիրառելի են երեք պատասխաններ.

- *Խաղաղապահություն.* վերահսկել դերակատարներին այնպես, որ նրանք դադարեցնեն ավերածություններ գործելը, միմյանց և ուրիշներին ոչնչացնելը (B կողմնորոշմամբ),
- *Խաղաղարարություն.* դերակատարներին զետեղել նոր ձևավորման մեջ, ավելին, փոխակերպել վերաբերմունքներն ու ենթադրությունները (A կողմնորոշմամբ),
- *Խաղաղաշինություն.* հաղթահարել հակասությունը հակամարտության ձևավորման ամենասկզբում (C կողմնորոշմամբ):

Ո՞վ: Սկզբունքորեն՝ յուրաքանչյուր ոք, ով ներկայացնում է պետությունը ((միջ-)կառավարական), քաղաքացիական հասարակությունը ((միջ-)ոչ-կառավարական), կապիտալը ((անդրազգային) կորպորացիաները), կամ ցանկացած անհատ:

Ինչպե՞ս: Հակամարտության ձևավորման ընթացքում հաղորդակցության մեջ մտնելով դերակատարների հետ՝ *ընդարձակելով և զարգացնելով այդ ձևավորումը:*

Ե՞րբ: Հակամարտության միջամտության դրական և բացասական նպատակները ցանկացած պահի կարող են պիտանի լինել:

Որտե՞ղ: Ցանկացած վայրում, ոչ անպայմանորեն բանակցային սեղանի շուրջ, և ոչ անպայմանորեն բոլորի միաժամանակյա մասնակցությամբ:

Ի շահ ո՞ւմ: Ի շահ հակամարտության ձևավորման և նմանատիպ այլ ձևավորումների բոլոր մասնակիցների:

Ո՞ւմ հաշվին: Նրանց, ովքեր շահում են ավերածությունների հետագա ծավալման արդյունքում:

Հակամարտության միջամտության իմաստն ավելի լավ պատկերացնելու համար մեզ անհրաժեշտ է *fundamentum divisionis*-ից[1] բխող տիպաբանություն, և ոչ թե լոկ մակերեսային երևույթները նկարագրող բառերի (միջնորդություն, արբիտրաժ, հաշտեցում և այլն) ցանկ: Ինչպես միշտ, այս անգամ էլ մենք կներառենք զրոյական դեպքը՝ միջամտության բացակայությունը, որը ևս կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Դրսից մուտք գործող կողմերը՝ հակամարտությանը միջամտողները, *չեն* կոչվելու «երրորդ կողմ». միանգամայն անհաջող տերմինաբանություն, քանզի այն մտովի ձևավորում է միայն երկու կողմերի հակամարտության պատկեր: Շատ ավելի հաջողված կարելի է համարել *«արտաքին կողմեր»* ձևակերպումը, այսինքն՝ կողմեր, որոնք գալիս են դրսից ու միանում են հակամարտությանը:

Առաջին հարցը, որ ծագում է ինքնաբերաբար, այն է, թե ի՞նչ նպատակներ են նրանք հետապնդում: Ստանձնել մարտահրավե՞րը: Փո՞րձ ձեռք բերել: Գուցե Խաղաղության Նոբելյան մրցանակ կամ այլ մրցանակնե՞ր ստանալ: Գուցե նրանք փորձում են ցույց տալ, թե ո՞վ է հակամարտության վերջնական կարգավորողը, կամ հակամարտությունն օգտագործել ի շահ իրենց՝ առուծախի առարկա դարձնելով հակամարտության միջոցները՝ ընդհանուր ահաբեկման «մտրակը» (ռազմական գործիքները) և «մեղրաբլիթը» (մարդասիրական օգնությունն ու տեխնիկական աջակցությունը)՝ առաջարկից մշտապես կախված պահանջարկ ձևավորելու նկատառումներով: Եվ այս ամենը միայն գերիշխանության, գերիշխող դիրքի ու, ընդհանրապես, գերիշխանության համակարգի ամրապնդման նպատակո՞վ, այլ գերիշխողների անունի՞ց: Թե՞ զուտ ծառայելու նկատառումներից դրդված: Ընդամենը կատարող՝ «ոչ տեսել եմ, ոչ լսել»: Ողջամի՞տ՝ ստորև նկարագրված ուղիներով: Շատ կարելի է խոսել այն մասին, թե ի՞նչ անել, որպեսզի արտաքին կողմերի նպատակները չաղավաղեն հակամարտության ձևավորումը՝ հանգեցնելով գործընթացի խաթարման ու հակամարտության ձևափոխման: Որպես օրինակ՝ կարող ենք դիտարկել Միավորված ազգերի կազմակերպության գործողությունները Սոմալիում 1992-199? թվականներին, ուր տարօրինակ գործընթացների արդյունքում հիմնական նպատակ դարձավ ՄԱԿ-ի հեղինակությունը պահպանելը (նույնիսկ ոչ բարելավելը)՝ ՄԱԿ-ի կերպարը հակամարտության գոտում ներառելու միջոցով, չնայած նման ձեռնարկի ողջ անհեթեթությանը:

[1] fundamentum divisionis (լատ.)- բաժանման հիմք, սկզբունք /թարգ./

Բայց «ոչ տեսել եմ, ոչ լսել» սկզբունքը չի գործի, եթե անգամ հիմնական մեթոդը հաղորդակցությունն է: Այդ չափանիշը կարող է կիրառվել միայն հակամարտության միջամտության տիպաբանություն ձևավորելու նպատակով:

Ա. *Արտաքին կողմերի հետ ոչ մի հաղորդակցություն*

Տիպ 0. տարրաբաժանում՝ մասնատում, բաժանում: Հակամարտության կողմերը չեն հաղորդակցվում, բայց տարանջատվում են՝ քայքայելով իրենց ձևավորումը: Հաղորդակցությունը թե՛ հակամարտության մասնակիցների միջև, թե՛ արտաքին կողմերի հետ (թեև վերջիններս կարող են խորհուրդ տալ դրսևորել հենց նման վարքագիծ) բացակայում է: Եթե միջին աստիճանն ուղերձն է, ապա ոչ-միջինը ևս կարող է ուղերձ պարունակել. տվյալ պահի դրությամբ նրանք կարող են պատրաստ չլինել հակամարտության փոխակերպման որևէ այլ գործընթացի, քան ձևավորման կանխումն է:

Տիպ 1. համակցում՝ հաղորդակցություն ձևավորման ներսում: Կողմերը կարող են հաղորդակցվել միմյանց հետ, հաղորդակցությունը պատճառաբանված կերպով համաչափ է, եթե անգամ երկխոսության ձև է ընդունում:

Բ. *Ոչ համաչափ հաղորդակցություն արտաքին կողմերի հետ*

Տիպ 2. հանդիպման վայրը տրամադրում են արտաքին կողմերը: Սա նվազագույն միջամտության դրսևորում է, և այն չի կարելի ծաղրի ենթարկել: Հանդիպման չեզոք գոտին (Ժենը) տրամադրված է իր բոլոր վայելքներով հանդերձ (գուցեև բոլոր ծախսերը հոգալով): Մնացածը սկզբունքորեն վերաբերում է տիպ 1-ին:

Տիպ 3. արտաքին կողմերը հուզակցող ականջ են տրամադրում: Այժմ նրանք ներկա են, բայց նրանց դերակատարումը ձգտում է նվազագույնի: Կողմերն անկարող են պահպանել երկխոսությունը, նույնիսկ անզոր են երես առ երես հայտնվել միևնույն սենյակում առանց ուրիշների ներկայության: Օտարներն ապահովում են հաղորդակցության համար անհրաժեշտ սոցիալական միջավայր: Կողմերը անգամ չեն կարող լքել սենյակը, որովհետև արտաքին կողմերը դեռևս այնտեղ են, և չեն կարող դադարեցնել խոսակցությունը, քանզի իրենց փաստարկների միջև ընկած ժամանակային դատարկությունը լցնում են արտաքին կողմի ներկայացուցիչները, իրենց «հիարկե» և այլ քաջալերիչ բացականչություններով, եթե չասենք «խնդրում եմ մի փոքր մեկնաբանեք այդ կետը» տիպի դասական արտահայտությունների մասին[1]:

Գ. *Համաչափ, երկկողմանի հաղորդակցությունը արտաքին կողմերի հետ*[2]

Տիպ 4. արտաքին կողմերը երկխոսության մեջ են մտնում հակամարտության ախտորոշման խնդիրների շուրջ:

Տիպ 5. նույն տիպ 4-ը՝ ավելացրած հակամարտության կանխատեսումները:

Տիպ 6. նույն տիպ 5-ը՝ ավելացրած հակամարտության «բուժումը»:

Դ. *Անհամաչափ, արտաքին կողմերի կողմից պարտադրված հաղորդակցություն:*

Տիպ 7. միջնորդություն: Այս դեպքում արտաքին կողմերն ունկնդրում են D, P, T բոլոր կողմերի տեսակետներն ու, այնուհետև, քննարկում են այն, ինչն

իրենք համարում են խնդրի լուծում՝ «ընդունեք այն կամ հեռացեք» սկզբունքով[3]:

Տիպ 8. արբիտրաժ: Նույն տիպ 7–ը՝ միայն կողմերի հետ ընդունելու մասին («ընդունեք այն») կայացված նախնական պայմանավորվածությամբ:

Տիպ 9. օրենքի իշխանություն: Նույն տիպ 8-ը՝ միայն կանխատեսելիության (և հաստատակամության) առավել բարձր մակարդակով՝ գրված օրենքների, նախադեպերի և այլի տեսքով:

Տիպ 10. մարդու իշխանություն: Սա հակամարտության բռնապետն է, որը պարտադրում է իր լուծումը՝ ամրապնդելով այն մեղրաբլիթով և/կամ մտրակով.

— հակամարտության «մեղմ» բռնապետ. եթե դու անես այնպես, ինչպես ես եմ ասում, դու կվարձատրվես (փողով, տեխնիկական աջակցությամբ, «առավել բարենպաստ երկիր» կարգավիճակով և այլն),

— հակամարտության «կոշտ» բռնապետ. եթե դու չանես այնպես, ինչպես ես եմ ասում, ապա դու կպատժվես «բոլոր անհրաժեշտ միջոցներով» (ռազմական իմաստով):

Մենք գիտակցաբար կիրառեցինք «տիպ» և ոչ թե «քայլ» տերմինը, քանզի չենք ենթադրել, որ պետք է «առաջընթաց» տեղի ունենա ցածրից դեպի բարձր համարները շարժվելիս կամ ժամանակային իմաստով, որևէ կետից սկսելու ու մյուս կետերն ավելացնելու դեպքում: Գործընթացը կարող է սկիզբ առնել ցանկացած կետից: Ասենք, տիպ 6-ից. դա դեռևս չի կանխորոշում տիպ 5-ի առկայությունը (թեև որոշակի փաստարկներ կարող են հնչել ի պաշտպանություն այդ հաջորդականության): Տարբերությունն այն է, որ տիպ 6-ի օրակարգն ավելի հարուստ է: Որևէ դիրքից սկսելով՝ դուք կարող եք հենց այդ դիրքում էլ կանգ առնել, կարող եք թռիչք կատարել դեպի մյուս դիրքերը, համակցել, սկզբունքորեն ցանկացած դիրքում լքել գործընթացը: Այնուհանդերձ, առանձին տիպերի համար դեմ և կողմ հնչող ծանրակշիռ փաստարկներ կան՝ «կախված հանգամանքներից» վերապահումով:

4.2 Հակամարտությունների միջամտության մոտեցումների չորս հավելումները

Տիպ 0-ից մինչև տիպ 10-ն ընկած ճանապարհն ուղեկցվում է մի շարք կարևոր փոփոխականներով, որոնք բոլորն էլ առնչվում են արդյունքին և այսպես թե այնպես շաղկապված են հաղորդակցման հարաբերություններով:

I. *Արտաքին կողմերի օգնությամբ հակամարտության կարգավորման արդյունքում ձևավորվող մարտահրավերների շարունակական յուրացում:* Ակնհայտորեն, 0-2 տիպերում հակամարտության ներքին կողմերը մենաշնորհ են սահմանում մարտահրավերների վրա, 3-6 տիպերում մարտահրավերները կիսվում են, ընդ որում հարաճուն ակտիվություն հանդես բերող արտաքին կողմերին բաժին է ընկնում ավելի ու ավելի մեծ մասնաբաժին, 7-10 տիպերում մարտահրավերների նկատմամբ մենաշնորհ են սահմանում արտաքին կողմերը:

Դարձյալ՝ եթե հակամարտությունը «դյուրին» է, քանզի հակասությունը անհատի, հասարակության ու աշխարհի համակարգերում ստեղծագործական փոփոխության համար կարող է *force motrice* ծառայել, ապա դրական հայտանիշը հարաճուն կերպով «զողացվում է» 0-ից դեպի 10-ն ընկած ճանապարհին:

0-2 տիպերում կողմերն ունեն *հակամարտության ինքնավարություն*, 3-6 տիպերում արտաքին կողմերը հանդես են գալիս որպես *հակամարտությունը թուլացնողներ,* 7-10-ում՝ որպես *հակամարտության կառավարիչներ* կամ, եթե պարզ լեզվով արտահայտվենք՝ որպես *հակամարտության առևանգողներ:*

Նրանք հակամարտությունն ուղղակի հեռացնում են կողմերից. տիպ 7-ից՝ «դուք հետաքրքիր հակամարտության մեջ եք, թույլ տվեք ես լուծեմ այն», մինչև տիպ 10-ը՝ «ես արդեն հոգնել եմ այս անհեթեթությունից, ես ձեզ կբացատրեմ, թե ինչ պետք է անել»:

II. Հակամարտության փոխակերպման ձևի ուղղահայացության հարաճուն ամրապնդման հետևանքով համակարգի ներսում ուժի կիրառման ոլորտն ընդարձակվում է: 7-10 տիպերում միջնորդը, արբիտրը, դատավորն ու բռնապետը պետք է մշտապես ձգտեն ավելի բարձր գտնվել թե՛ իշխանության, թե՛ իրենց տրամադրության տակ եղած միջոցների առումով, որոնք կարող են օգտագործել արդյունքները համակշռելու նպատակով: 3-6 տիպերում առկա են վերոհիշյալի տարրերը, եթե ենթադրենք, որ արտաքին կողմերն օգտագործում են այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են գիտելիքները, հմտություններն ու փորձը, որոնք հանդես են գալիս որպես.

- իմացական միջոցներ (աշխատանքի յուրացումը՝ նմանատիպ կամ տարաբնույթ հակամարտության ձևավորումը փոխակերպելու երևակայությունը),
- հուզական միջոցներ (հուզակցում, ցավակցում, կարեկցանք),
- կամային միջոցներ (հաստատակամություն, փոխակերպման գործընթացն ուղղորդելու, անգամ վարելու կարողություն):

Այս ամենի գումարը ձևավորում է իշխանությունը: Արտաքին կողմերի մասնակցությունը, թերևս, ավելացնում է միջոցները: Հասարակության ներսում կոնֆլիկտաբանական գիտելիքներով և ունակություններով մարդիկ, իբրև ռեսուրս, միշտ էլ կան, խնդիրը նրանց անհամաչափ բաշխվածությունն է: Չմոռանանք նաև հակամարտության բռնապետի մասին, որը կարող է հարկադրված լինել ավելի շատ ավերիչ (մտրակ) և արարիչ (մեղրաբլիթ) միջոցներ կիրառելուն: Արդյունքում ընդարձակվում է ուժի կիրառման ոլորտը, ընդ որում՝ որքան բարձր է տիպի հերթական համարը, այնքան մեծ է ուժի կիրառման տիրույթը:

III. *Տիպի հերթական համարի աճին զուգընթաց ներքին ընդունելիությունը նվազում է, արտաքին հարատևությունը՝ ամրապնդվում:* Մասնակցության նվազման և վերևից եկող հրահանգների խստացման պայմաններում ներքին ընդունելիությունը նվազում է, անգամ հանգեցնելով վերաբերմունքի կտրուկ փոփոխության: Ներքին գործընթացները՝ ներառյալ դեպի կարգավորում ճանապարհի չարչարանքը, որ քայլ առ քայլ առաջ է տանում՝ հանելով ընդու-

նելի փոխակերպման շղարշը, այլևս տեղ չունեն: Մյուս կողմից, վերջնական կառուցվածքը պահպանելու նպատակով արտաքին կողմերը կարող են տրամադրել արտաքին միջոցներ՝ դրանով իսկ ընդլայնելով իրենց ազդեցությունը, գաղտնի կամ ակնհայտորեն օգտագործելով իրենց բարոյական իշխանությունը մինչև այն պահը, երբ այն կսկսի անբարոյական թվալ՝ չհամապատասխանելով այլևս առաջադրված ծրագրին և/կամ այլևս չենթարկվելով պատժող կամ խրախուսող իշխանությանը:

Սա հանգեցնում է ծայրահեղ վիճակների, որոնք զետեղված են առավել ցածր ու առավել բարձր հերթական համարներ ունեցող տիպերում. ընդունելի լինելու այնքան բարձր փոխակերպում, որ շատ քիչ արտաքին աջակցություն է անհրաժեշտ (կամ ընդհանրապես անհրաժեշտ չէ) այն հարատև դարձնելու համար, և փոխակերպում, որ կողմերը չեն յուրացրել, բայց պահպանվում է դրսից: Պարզ ասած՝ 0-2 տիպերում զիջողության համար կողմերը բարոյապես պարտական են իրենք իրենց, 3-6 տիպերում՝ իրենցից բացի նաև միջնորդներին, իսկ 7-10 տիպերում նրանք բարոյապես պարտական են արտաքին կողմերին, կամ վերջիններս ներկա են պատիժ/խրախուսանք կիրառելու պատրաստակամությամբ հանդերձ:

IV. *Տիպի հերթական համարի աճին զուգընթաց աճում է նաև ճիշտ լինելու նպատակի ձեռքբերման հավանականությունը:* Հայտանիշներից մեկը կողմի ներքին համոզվածությունն է սեփական ճշմարտացիության, ինչպես նաև այս կամ այն հարցում իր բավարար իրավասության մեջ. որպես մեկ այլ հայտանիշ կարող են դիտարկվել այդ հոյակապ բարիքի բաշխման արդարացիության վերաբերյալ հակամարտության ձևավորման կողմերի պատկերացումները: Երրորդ հայտանիշն էլ ճշմարիտ լինելու՝ վերևից շնորհված, նույնիսկ վկայագրերով ամրագրված համոզմունքն է՝ «դուք ճիշտ եք»:

Երբ միջնորդը, արբիտրը, դատավորը կամ բռնապետը հակամարտության ձևավորման ընթացքում հանդես են գալիս կողմերից մեկի պաշտպանությամբ, ապա ճշմարտացի լինելու հիմնանպատակը (տե՛ս, ես ասում էի քեզ) կարող է նսեմացնել անգամ իրական նպատակին հասնելու հաճույքը[4]: Հենց սա է, երևի, այն հիմնական պատճառը, որ դրդում է մարդկանց գործ հարուցել դատարանում՝ ոչ թե իրենց այս կամ այն իրավունքն ուղղակի տնօրինելու համար, այլ նաև իրենց բարոյական իրավացիությունն ապացուցելու նպատակով:

Այսպիսով, ընդհանուր եզրակացությունը հետևյալն է. անհրաժեշտ է աջակցել հերթական ցածր համար ունեցող տիպերին: Մարտահրավերներն այնտեղ են, ուր և պետք է լինեին: Գործընթացները հակամարտությունների կարգավորման իրավասությունը վերագրում են ողջ հասարակությանը, ոչ թե միայն վերնախավերին: Ընդունելիությունը մեծ է, մեծ է նաև ներքին հարատևությունը, իսկ կիզակետում հենց ինքը՝ հակամարտությունն է, ո՛չ թե ինչ-որ վերացական իրավունք, որ բխում է իրավացիությունից: Սակայն կողմերը կարող են դրան պատրաստ չլինել՝ չունենալով ո՛չ ունակություն, ո՛չ ներքին շարժառիթ: Նրանք, ընդհանրապես, կարող են անգամ գերադասել բորբոքել հակամարտությունը և, մասնավորապես, սրել լարվածությունը, չնայած դրանով նրանք կործանում են իրենց և ուրիշներին:

Եվ այսպես, հերթական ցածր համար ունեցող տիպերը գեղեցիկ են, մինչդեռ հերթական բարձր համարներով որոշակի տիպեր կարող են անհրաժեշտ լինել: Կողմերը կարող են անգամ ստիպված լինել ենթարկվելու փոխա-

կերպման, որը շատ նման է կարգավորման: Սակայն, բարձր համարներով տիպերի հանդեպ ունենալով բազմաթիվ հակափաստարկներ, ուղղորդվելով *in medias res*[i] ընդհանուր հակվածությամբ՝ մենք կկենտրոնանանք 3-6 տիպերի վրա: Մինչ այդ անելը, հակամարտության փոխակերպման հիմնարար հայտանիշները բացատրելու համար առավել մանրամասն ուսումնասիրենք 0-2 տիպերը:

4.3 0-2 տիպերը. հակամարտության ինքնաբերական փոխակերպում

Ե՞րբ կողմերը պատրաստ կլինեն հակամարտության ինքնաբերական փոխակերպման: Որո՞նք են դրա նախապայմանները:

Նախ, լինելով խորապես ինքնամփոփ, նրանք կարող են որոշակի կանխատեսումներ ունենալ այն մասին, թե ինչպես է գործընթացը ձգվում դեպի մայրամուտ: Կարող են լինել քիչ թե շատ ակնհայտ տեսակետներ այն մասին, թե ինչպիսին կլինի արդյունքը, որը պարզ չի անգամ իրենց և, հետևաբար, դժվար է այն քննարկել այլ կողմերի հետ՝ չլինի թե այն օգտագործվի առճակատման ընթացքում:

Չափանիշը «հաղթել կամ պարտվելն» է՝ կարճաժամկետ կամ երկարաժամկետ հորիզոնում կախված նրանից, թե ինչպես կկառավարվի B մակարդակը: Ակնհայտորեն, կարճաժամկետ «հաղթանակն» ու երկարաժամկետ «պարտությունը» երկխոսությունը հնարավոր են դարձնում, հակառակ իրադրությունը՝ ոչ:

Բայց կա նաև այլ չափանիշ՝ դերակատարների ու հակամարտության ձևավորման համակարգում կանխատեսումների տարամիտումն ընդդեմ համատեղման: Երկու դերակատարները կարող են չհամաձայնվել՝ միաժամանակ ներքուստ իմանալով, թե ով է հաղթելու: Կամ՝ ով երբեք չի հաղթելու: Ցանկացած դեպքում հիանալի պատճառ կա ամփոփելու հակամարտության գործընթացը և ուղղակի ասելու. «Քանի որ այն այսպես թե այնպես մոտենում է իր վախճանին, եկեք շրջանցենք այն փուլը, որը կկործանի մեզ բոլորիս և ուղղակի անցնենք առավել ստեղծագործ փուլին, որտեղ կարելի կլինի գտնել ավելի ընդունելի ու կայուն արդյունք»: Առավել հասուն մոտեցում, որի դրսևորման հավանականությունն այնքան էլ մեծ չէ, քանզի հաղթողի մասին կողմերի պատկերացումներն իրարից տարբերվում են՝ նրանցից յուրաքանչյուրը մտովի համոզված է իր (թողնենք ամեն ինչ ընթանա իր հունով, ի վերջո մենք ավելի շահավետ գործարք կկնքենք) կամ մյուս կողմ(եր)ի (թողնենք ամեն ինչ ընթանա իր հունով, ի վերջո մենք գոնե մեր դեմքը կպահպանենք) հաղթանակին:

Կանխատեսումների զուգամիտությունն ավելի հեշտությամբ կարող են հայտնաբերվել օտարների կողմից, ապա քննարկվել կողմերի հետ: Սակայն դերակատարները ևս, թեև կռահողաբար, կարող են հայտնաբերել զուգամիտությունը, թերևս այն պատճառով, որ նրանք տառապում են՝ հակամարտությունից ուժասպառ կամ լարվածությունից հյուծված:

Երկրորդ, հիմնական բառը *երկխոսությունն* է[5]: Այդ հարաբերությունը չափազանց հորիզոնական է՝ հաղորդակցությունն առկա է բոլոր մասնակիցնե-

[i] in medias res (լատ.)- դեպքերի ընթացքի մեջ /թարգ./

րի միջև[6]: Հակամարտության կենսացիկլերին նվիրված 2-րդ գլխում փաստարկված ներողության հայցման/ներման օրինակը շատ սահմանափակ կիրառում ունի. այն կարող է լինել միայն բանավոր, առանց սեփական գործողությունների քննադատական վերլուծության (բոլոր կողմերի համար), ինքնակործանարար[7] և, ի վերջո, ներողություն հայցելուց ու հնարավոր արդարացում/ներ ստանալուց հետո կարգավորման հետագա որոնումները դադարեցվում են:

Կրկնակի բուդդայական բանաձևը, կարծես, ավելի գերադասելի է: Նախ, գերադասելի է *ներքին երկխոսությունն* անհատի հարթությունում, որ հայտնի է նաև որպես մտորմունք (կիրառվում է անհատի վերաբերմունքն ու մոտեցումները հստակեցնելու համար), ապա *արտաքին երկխոսությունը* սոցիալական հարթությունում, որ հայտնի է նաև որպես *արտաքին երկխոսություն*: Ասվածը, սակայն, չի բացառում քրիստոնեական մոտեցման որոշակի կիրառելիությունը:

Մտորումները, կարծես, այլևս անխուսափելի անհրաժեշտություն են դառնում: Հարկ է ժամանակ ու տարածություն տրամադրել: Մտորումները ենթադրում են կենտրոնացում, իսկ դա լուրջ բան է: Մարմնի դիրքը, շնչառությունը և այլն, կարող են օգնել, նույնը կարելի է ասել աղոթքի մասին: Էականն այստեղ անհատի ներքին շարժառիթն է ու հակամարտության ընդհանուր փիլիսոփայությունը՝ սովորաբար ցավոտ ինքնավերլուծությունը, որտեղ անհատն ինքն է իր ամենաարդարադատ դատավորը: Հակամարտության երկխոսության մեջ մտնելը, մտքում ունենալով միայն հաղթելու նպատակային ուղղվածությունը, ավելի՛ն, «միայն հաղթանակ» ռազմավարությամբ, հազիվ թե նպաստի լուծումներ գտնելու, առավել ևս՝ հաղթելու գործընթացին:

Արտաքին երկխոսության համար առկա է լավագույն մոդելը՝ սեմինարը: Հարցը ներկայացվում է երկու կամ ավելի անգամ, բայց հիմնական ժամանակը տրամադրվում է քննարկումներին: Առկա է որոնումների պատրաստակամություն: Սենյակ, կլոր սեղանով հանդերձ, բոլոր դերակատարները կլոր սեղանի շուրջ, բոլոր թեմաները/հարցերը/նպատակները սեղանի վրա, գումարած **ԺԱՄԱՆԱԿԸ**՝ ահա սկզբունքորեն այն ամենն, ինչ անհրաժեշտ է: Հիմնական խնդիրը որոնումների ոգին պահպանելն է՝ փորձելով մտքում ունենալ այն համոզմունքը, որ բոլորն ավելի շատ կշահեն, եթե ոչ ոք չփորձի «հաղթել»՝ երկխոսությունը վերածելով բանավեճի ու փորձելով «նեղը գցել» մյուսներին[8]:

Բայց մարդ էակները, բացի լսողականից, ունեն նաև տեսնելու ունակություն: Հետևաբար, գծապատկերներն ավելի լավ կարող են հաղորդել մտքերը, ինչպես, ասենք, բանավոր ներկայացումն ավելի հարմար է հետևողական փաստարկումների համար: Թուղթն ու գրիչը ամենուրեք պետք է հասանելի լինեն: Ընթանում են համատեղ որոնումներ՝ կործանիչ հակամարտությունից ստեղծագործաբար դուրս գալու ելք գտնելու համար:

4.4 3-6 տիպերը. հակամարտությունների փոխակերպումը երկխոսությունների միջոցով

Այժմ անդրադառնանք 3-6 տիպերին: Այստեղ հայտնվում է նաև միջնորդը, որը ենթադրաբար իրազեկ է և տիրապետում է իրավիճակին, ինչպես նաև գե-

ռադասելի է, որ նա փորձված լինի բոլոր՝ անհատի, հասարակության և աշխարհի հարթություններում, ո՛չ թե լոկ դրանցից մեկում: Միջնորդի մասին խոսելիս մենք կին ենք պատկերացնում, թեև դա չի բացառում տղամարդու մասնակցությունը: Սակայն մենք հիմք ունենք ենթադրելու, որ կանայք, լինելով առավել գթասիրտ ու ամբողջապաշտ, պակաս ագրեսիվ իրենց բանավոր խոսքում ու ֆիզիկական գործողություններում, ավելի լավ թեկնածու են այս դերի համար:

Նա կարող է նախնական զրույցներ վարել D, P, T եռանկյունու հիմնական փաստերը հակամարտության կողմերի տեսանկյունից բացատրելու նպատակով, ի թիվս այլ պատճառների՝ նաև իր հնարավորությունները տվյալ որոշակի դեպքում ճշտելու համար: Նա կարող է առանձնակի ուշադրություն դարձնել կանխատեսումների զուգամիտության աստիճանին՝ միանգամից չբացառելով գործընթացին օժանդակելը (facilitation) լոկ հակամարտության ցածր մակարդակի պատճառով:

Այլ խոսքով, նա արդեն ծանոթ է հակամարտության բովանդակությանը: Հակամարտության բովանդակության վերլուծության նպատակով, թերևս, իբրև ուղեցույց նա պետք է օգտագործի կողմերին և ո՛չ թե ընդհանուր կամ նույնիսկ հատուկ գրականություն: Ընթերցանության անհրաժեշտությունն ավելի ուշ կզգացվի: Մտորումների մասին վերոհիշյալ դրույթը հավասարապես առնչվում է ինչպես միջնորդին, այնպես էլ կողմերին՝ միտքը հստակեցնելու, սեփական նախա-իմացական, -հուզական և -կամային ենթադրություններն ըմբռնելու համար, որ կարող են մթագնել տվյալ դեպքի զգայունության արատներն ու արժանիքները: Փոխաբերություն. փայլեցրեք գործիքները բարդ գործողությունից առաջ, ինչպես, ասենք, լավ վիրաբույժը, խոհարարը կամ ցանկացած արհեստավոր կաներ: Չափազանց դժվար է, բայց և հազիվ թե անհնար:

Ընդունելի և կայուն արդյունքի ձևավորման ճանապարհին (չշփոթել հաշտեցման հետ, որ առավել հատուկ է A բևեռին) հիմնական խնդիրն այն է, թե ինչպես օգտագործել երկխոսությունը D, P, T եռանկյունու հստակեցման նպատակով: Սակայն, նախ և առաջ, թույլ տվեք կիրառենք 4.1 աղյուսակում ձևակերպված տիպաբանությունը.

Աղյուսակ 4.1. D, P, T եռանկյունին և ժամանակի չափի միավորը

	Վերլուծություն	Փորձ
Անցյալ	*Ախտորոշում*	Վերապրում՝ համաձայն փաստերի/ առանց դրանք հաշվի առնելու
Ներկա	Նկարագրություն	Հրահանգ
Ապագա	*Կանխատեսում*	*Բուժում*

Հակամարտության մասնակիցներն, ընդհանրապես, կենտրոնացած են անցյալի վրա և հակված վերլուծությունների: Դրա պատճառներն ակնհայտ են: Ծանրության կենտրոնը հակված է թեքվել դեպի B գագաթը՝ «առաջինը նա սկսեց, ես միայն կրկնեցի նրա արարքը». սովորաբար հանդիսանալով մանրամասներով հագեցած, գուցե միակողմանի, սակայն ոչ այդ պատճառով սխալ, թերևս, լոկ ոչ ամբողջական: Արտաքին կողմը լավ պատրաստված է հուզակցաբար ունկնդրելու վերլուծությունները, ապա, համադրելով դրանք, ստանալու իրականությանը շատ մոտ պատկեր՝ թույլատրելով, նույնիսկ ստիպելով պատկերներին լրացնել միմյանց:

Սակայն, չներգրավվենք ժամանակի չափման հասարակական գիտափորձում՝ տվյալներ հավաքելով բանավոր պատմությունից: Փոխակերպումը կենաց և մահու խնդիր է՝ արարման կամ ոչնչացման ծայրահեղություններով: Ամբողջական խումբը, հակամարտության սկզբնական ձևավորումն արտաքին կողմերով, օժանդակողներով հանդերձ, ինչ-որ կերպ պետք է ավարտվի ապագային միտված և գործնական կողմնորոշում ունեցող հակառակ բևեռում՝ բացառելով անցյալի միտումն ու վերլուծական կողմնորոշումը: Սակայն դա չի նշանակում, որ 4.1 աղյուսակում կարելի է գծային կամ կոր հետագիծ անցկացնել վերին ձախ անկյունից դեպի ստորին աջ անկյունը: Դեպի հետ կամ դեպի առաջ թռիչքներ կարող են և պետք է կատարվեն, ինչպես և պետք է իրականացվի միաժամանակյա աշխատանք բոլոր վեց համակցություններով: Բայց պետք է նկարագրվի ընդհանուր հարձակումը, այսինքն՝ պետք է հաղթահարվի երկու դժվարություն՝ չափից ավելի կենտրոնացումն անցյալի ու վերլուծությունների վրա:

Դրանք երկուսն էլ միաժամանակ հաղթահարելու ցանկությունը չափազանց անիրատեսական է, չնայած նման թռիչքները («այսպիսով, ինչպե՞ս կարող ենք խուսափել այս հիմնախնդրից կամ լուծել այն ապագայում»), որոնց հաջորդում են անցյալի վերլուծությունները, կարող են օգտակար լինել: Առավել ապահով մեթոդ է, թերևս, ժամանակի մեջ իրականացված մեկ քայլը՝ անցյալից դեպի ապագա և վերլուծությունից դեպի փորձ:

Տեղափոխություն անցյալից դեպի ապագա: Այս տեղաշարժն անհրաժեշտ է, քանզի անցյալը հիշողություններ է արթնացնում երբեմնի սխալների, տարբեր տիպերի ուղղակի ու կառուցվածքային բռնությունների վերաբերյալ: Դերակատարներն այստեղ պետք է հանդես գան իբրև փորձագետ: Անցյալը դերակատարների միջև և վերևից փոխադարձաբար մեղքի տարաբաշխման փորձնական հենք է տրամադրում, քանզի նրանք կարող են հուսալ, որ օժանդակողներն ի հայտ կբերեն «դուք ճիշտ էիք/եք» վկայագրեր, որ հավաստում են ոչ միայն կողմերից մեկի (մյուսի փոխարեն) ախտորոշման ուսումնասիրությունը, այլ նաև օրինականացնում են անցյալի վարքագիծը՝ հեռացնելով մեղքի բաժինը նրանցից ու վերագրելով այլոց:

Անցյալը կարող է դիտարկվել նաև որպես տվյալների շտեմարան, որոնք իրոք անհրաժեշտ են բարոյական գործընթացների ու իրավական ընթացակարգերի համար: Սակայն դրանք բուժման հանդեպ առանձնահատուկ մոտեցումներ են, որոնք շեղում են մասնակիցների ուշադրությունը հակամարտությունից՝ բևեռելով այն վերին ատյանների (Աստծո կամ, գոնե, եկեղեցականների, Արդարության կամ, գոնե, դատավորի) հետ իրենց (կամ մասնակիցներից մեկի) հարաբերությունների վրա:

Անցյալի ու ապագայի միջև սառցաշերտ կա՝ ներկան, որը ժամանակի նեղլիկ ժապավենով տարանջատում է պատմությունն ու ապագան: Վարքագիծը կարող է դիտարկվել որպես *ներկայապաշտություն*[9], որ խափանում է ախտորոշումները՝ դրանք փոխարինելով ներկայի իրադարձությունների ակնթարթային պատկերների որոշակի (լրագրողական) նկարագրություններով՝ թաքցնելով դրանց հիմքերն անցյալում: Արդյունքում ապագայի դրական ու բացասական կողմնակի դրսևորումների հանդեպ զգայուն բուժման փոխարեն ի հայտ են գալիս հրահանգները: Իսկ ապագան անցյալի նման է. այն շատ երկար տևականություն ունի:

Մյուս կողմից *անցյալապաշտությունն* ու *ապագայապաշտությունը* շատ ավելի լավը չեն: Արմատներն անցյալում որոնելը կարող է հանգեցնել խնդրի առավել հստակ ըմբռնմանը, ինչն անհրաժեշտ է: Բայց, հոգեբանական առումով, դա կարող է հանգեցնել *tout comprendre, c'est tout pardonner*[i] մոլորության՝ ստիպելով լուծումներ որոնել անցյալում կամ արտարկելով անցյալից: Անցյալում ինչ-որ բան ակնհայտորեն սխալ է եղել, և այդ անցյալն այլևս երբեք չի կարող ավելի լավ ապագայի կերտման համար բավարար հիմք ծառայել (եթե այն բավարար լիներ, և քանի որ մենք երկար ժամանակ ապրել ենք այդ անցյալում, մենք արդեն պետք է որ ձևավորած լինեինք այդ ավելի լավ ապագան): Ներկայի վրա միակողմանի կենտրոնացումը տանում է հակառակ մոլորության՝ որևէ ըմբռնումով չմեղմված բարոյական պատժի: Դարձյալ *Սցիլլա և Քարիբդիս:*

Ապագայի վրա միակողմանի կենտրոնացումը, սակայն, հանգեցնում է մի բանի, որ համապատասխան բառի բացակայության պատճառով կարելի է որակել որպես «մոլորության սրճարան», այսինքն՝ ապագան բաց է, մենք ազատ ենք ընտրելու/պատվիրելու ցանկացած լուծում/ուտեստ: Ապագան չի կարող ամբողջապես փակ լինել, պետք է դրական պատուհան լինի անգամ անցյալի բանտարկյալի համար: Սակայն, ցանկացած կենսահամակարգ օժտված է հիշողությամբ, ընդ որում՝ ոչ միայն մարդիկ, այլ նաև հասարակության (ասենք, ձեռակերտ հուշարձանները) և աշխարհի (սահմանները, ազգային տոները) համակարգերը: Անցյալը, մասնավորապես անցյալի փաստերը, մշտապես ուղեկցում են մեզ, դրանք մեր մեջ են, մեր կողքին, ամենուրեք… Ինչպե՞ս հաղթահարել ժամանակի անջրպետը:

Առաջարկը հետևյալն է. կառչելով վերլուծություններից՝ ուղղակի հրավիրել մասնակիցներին կանխատեսումներ անել սեփական ախտորոշումների հիման վրա: Անցյալի տվյալներով և մարտահրավեր նետող՝ անցյալից արտարկումներով ուղղորդվող վերլուծական մտածողությունը կարող է պահպանվել: Խնդիրն *ապագայի երկիր (futurelandia)* միասին ոտք դնելն է: Արդեն լինելով այնտեղ՝ շատ ավելին կարելի է անել. սովորաբար օժանդակողի (facilitator) հետ բաց երկխոսության ճանապարհով, որին նա մասնակցում է մնացածների նման՝ իր գիտելիքներով ու կարծիքներով և ոչ թե խոչընդոտներ հարուցելով: Չափից շատ ախտորոշումներ պետք չեն, դրանց անհրաժեշտությունն ավելի ուշ կզգացվի:

Իհարկե, դիմադրությունն անխուսափելի է: Անցյալն անվտանգ է ոչ միայն այն պատճառով, որ մասնակիցներին թվում է, թե այն գիտեն, այլ նաև այն պատճառով, որ նրանք հենց անցյալի շուրջն են ձևավորել հակամարտության իրենց պատկերացումները: Եվ, այնուամենայնիվ, նրանք ձգտում են փախչել անցյալի բանտից: Ապագայով ապրելու կանխատեսումներով ուղղորդված հրավերը կարող է հարկադրել այդ ցանկությանը նոր թռիչք կատարելու: Եթե բոլոր կողմերը համաձայն են, որ հակամարտությունն ինքնաբերաբար կհարթվի, օժանդակողը կարող է իր գործն այլևս ավարտված համարել: Հակառակ դեպքում ուղղակիորեն հարց է ծագում. «Ինչպե՞ս փոխել իրերի դրությունը՝ ավելի լավ ապագա կերտելու համար»: Ապագային կարող ենք անդրադառնալ 4.1 աղյուսակի միջոցով:

[i] tout comprendre, c'est tout pardonner (ֆր.)- ամենը հասկանալն ամենը ներելն է /թարգ./

Տեղափոխություն վերլուծություններից դեպի փորձ: Սկզբունքորեն սա դյուրին խնդիր է. ամեն ինչից զատ հակամարտության դերակատարները (ոչ միայն մասնակիցները) հիմնականում խաղում են ժամանակի վրա: Բայց ներկան արգելք է հանդիսանում՝ լինելով ալեկոծ հույզերի ականադաշտ, իսկ ապագան սպառնալից է, քանզի արդյունքն այնտեղ է՝ *ապագայի երկրում,* և այն կարող է չարդարացնել բոլոր հույսերը: Այս ամենը մեզ ստիպում է վերհիշել չորրորդ հնարավորությունը, որ ընդգրկված չէ D, P, T եռանկյունում այն տեսքով, ինչպես սովորաբար այն պատկերացնում ենք՝ վերադարձ դեպի անցյալ, սակայն ոչ թե վերլուծելու, այլ վերապրելու իմաստով՝ համակվելով անցյալի փորձով ու հույզերով:

Դա կարելի է անել երկու ձևով՝ փաստացի իրողությունների (փաստերի) հիման վրա կամ առանց դրանք հաշվի առնելու:

Պատկերացրեք սեռական ոտնձգությունների որևէ դեպք կամ ԽՍՀՄ-ԱՄՆ հարաբերություններում Կուբայի ճգնաժամը 1962թ. աշնանը: Դերակատարներին դիտարկենք միասին՝ ոչ միայն վերլուծելով, թե *ինչ է տեղի ունեցել,* այլ նաև ներկայացնելով այն: Սա չի գործի բարձր B մակարդակներում գտնվող հակամարտությունների համար, սակայն այնժամ ամենամեծ բռնություն կիրառող կողմերը պետք է հաշվի չառնվեն կամ միայն մատնանշվեն: Ինչո՞ւ պետք է որևէ մեկը վնաս կրի: Որպեսզի հստակեցվի անցյալը, ցույց տրվի, որ դրանք շարքային, փխրուն և խոցելի մարդ էակներ են իրենց ուժեղ և թույլ կողմերով, և երկնքից ընկած ոչ մի խորհրդավոր բան էլ չկա:

Հիմնական դրույթը վերապրելն է՝ առանց փաստերի վրա ուշադրություն դարձնելու: Շարունակեք խորացնել դրաման, մինչև վրա հասնի ճգնաժամը, ցույց տվեք, թե ինչ է տեղի ունեցել, ապա հարցրեք. *«Ի՞նչ կարող էինք անել»:* Սովորաբար անդառնալիության մի սահման կա, որից անդին դերակատարներից մեկի (կամ մի քանիսի) ընտրության ազատությունը խիստ նվազում է, քանզի համբերությունն այլևս հատում է, նա կորցնում է հետաքրքրությունը, կամ էլ երկուսը միասին[10]: Որքան հեռանում եք ճգնաժամային կետից, այնքան ընտրության կոնի մակերևույթի մակերեսն աճում է: Ճանապարհին ընտրության հնարավորություն հաստատ կա՝ եթե ոչ A և C գագաթներում, ապա առնվազն B գագաթում: Վարքագիծն էլ կարող էր տարբեր լինել:

Ո՞րն է այս օրինակի իմաստը: Ցույց տալ, որ տեղի ունեցածն ամենևին էլ բնության օրենք չէ, իրադարձությունները կարող էին զարգանալ նաև այլ հունով: Նախատեսումը պետք է պայմաններից մեկը հանդիսանա, որ, ավելի վեր գտնվելով տվյալ ձևավորման մեջ գտնվող այլոց հետ հուզակցումից, թերևս նաև ողջ կարեկցանքից, հնարավորություն կընձեռի ավելի լավ գնահատել սեփական գործունեության հետևանքները: Նաև պատասխանատվության զգացում կզարգացնի թե՛ ինքն իր, թե՛ մյուսների հանդեպ: Եթե նման հանդիպումների ընթացքում մասնակիցները պատրաստակամություն են հանդես բերում ընդունելու այլ դերակատարների անցյալի դասերից բխող խորհուրդները, ծանրութեթև անելու թեր և դեմ կողմերը, առանց դժգոհելու, որ իրենք ընտրության հնարավորություն չեն ունեցել, ապա նման հանդիպումներից իրապես կարելի է արդյունք ակնկալել:

Փաստերի վրա հենվելու մոտեցումը պահանջում է անցյալի անսխալ վերարտադրում, փաստերն առհամարհելու մոտեցումը պահանջում է երևակայություն: Առաջինը կարող է մթագնել ավերումներն ու ելուստները, երկրորդը, լինելով հույժ պահանջված, կարող է արձանագրել առաջարկի պակաս: Այսպիսով, օժանդակողի խնդիրն է՝ աջակցել, հանդես գալ որպես ման-

կաբարձ հիշողության ու երևակայության համար, վերջինս ձևակերպելով նաև որպես այլընտրանքային հիշողություն: Նա պետք է հարցնի ու առաջարկի, ապա նորից առաջարկի ու դարձյալ հարցնի: Փաստացի մոտեցման նպատակն է հաղթահարել անցյալը՝ այն վերապրելով, իսկ հակափաստացի մոտեցման նպատակն է ձևավորել ապագան՝ վերափոխելով անցյալի պատմությունը: Երկուսն էլ պահանջված են:

Անցյալի ու ապագայի, ինչպես նաև տեսության ու փորձի (գոնե անցյալի առումով) միջև սահմանները խզող նման վարժությունից հետո այլևս աղյուսակի «բուժում» հատված մուտք գործելը չպետք է սարսափելի թվա: Այդ կետում արդեն երկխոսությունը հանդես է գալիս, թերևս, որպես հնարավոր լավագույն ընդհանուր բանաձև: Իհարկե, օժանդակողները մտքում պետք է ունենան նաև հակամարտությունների փոխակերպման երրորդ գլխում նկարագրված ընդհանուր բանաձևերը կամ նմանօրինակ այլ բանաձևեր, և անհրաժեշտության դեպքում նրանք կարող են առաջարկել դրանցից մեկը[11]:

Բայց լավագույն մոտեցումն, իհարկե, վերիմացականացումն է, փոխզիջման, նահանջի, բաժանման/միաձուլման և այլ տիպերի համատեղմամբ հնարավոր լուծումների հանգելը: Առավել բարդ դեպքերում անհրաժեշտ կլինի որոշակի պարզեցում, առավել պարզ դեպքերում՝ ընդհակառակը, որոշակի կոմպլեքսայնացում, սակայն՝ միշտ որոշակի կոնկրետության պայմաններում:

Ինչպիսի՞ անհատականություն և վարքագիծ պետք է հանդես բերի օժանդակողը: Ընդհանուր առմամբ, բոլորին հայտնի լավագույն մոդելը քահանայի կամ բժշկի վարքագիծն է: Հիմնական խնդիրն այստեղ՝ ընդունել, որ ինչ-որ մեկը դժվար կացության մեջ է և օգնության կարիք ունի: Վատ ընտրության համար հանդիմանությանը հաջորդում է ընդհանուր ըմբռնումն ու կարողությունը: Հակամարտության միջամտության տեսակետից սա ենթադրում է ինչպես հակամարտության ընդհանուր տեսության ու նմանատիպ դեպքերի, այնպես էլ տվյալ կոնկրետ դեպքի առանձնահատկությունների հստակ իմացություն: «Ձեր հակամարտությունն ինձ հիշեցնում է…» մոտեցումը պետք է կիրառել մեծագույն զգուշությամբ, չլինի թե ընդհանուր բանաձևի կիրառման արդյունքում մասնակիցները սեփական ինքնությունը ոտնահարված համարեն: Հակամարտության օժանդակողը պետք է ամրապնդի իրազեկությունը նաև գիտելիքների բացահայտման միջոցով՝ մասնակիցների մեջ սերմանելով 4.1 աղյուսակի խրթին բնույթը հասկանալու համար անհրաժեշտ ուղեցույցի առկայության զգացումը: Այլ խոսքով՝ գիտելիքներ (մասնավորապես, ոչ բռնի եղանակների), երևակայություն (ստեղծագործություն), հուզակցում, հաստատակամություն:

4.5 7-10 տիպերը. հակամարտության պարտադրված փոխակերպում

Խաղի կանոններն այստեղ այլ են: Մասնակիցները ֆաուստյան համաձայնության են գալիս սատանայի հետ՝ հնազանդություն առաջարկելով իրենց կողմից՝ ի պատասխան մյուս կողմի հաշվին լուծում գտնելու խոստման: Անգամ բռնապետի հետ է հնարավոր համաձայնության գալ՝ «համընդհանուր հնազանդություն ամբողջատիրական բռնապետության պայմաններում» բանաձևով: Իհարկե, միշտ պահպանվում է բռնապետի հրահանգները չընդու-

նելու, չլսելու ու չկատարելու հնարավորությունը, անգամ եթե հարկ լինի անասելի թանկ վճարել դրա համար: Հնազանդություն նշանակում է զիջողություն:

Անհատի միջնորդություն-արբիտրաժ-իշխանություն և օրենք-իշխանություն մոդելների վերին չորս դերակատարումները շատ բան ունեն սովորելու 3-6 տիպերից: Միջնորդը դեռևս կարող է հայտնվել իր առաջարկներով՝ ղեկավարվելով «ընդունեք կամ հեռացեք» սկզբունքով: Եթե հակամարտության բոլոր մասնակիցներն ընդգրկված են 4.4 գլխում նկարագրված գործընթացում, ապա մեծ է հավանականությունը, որ այդ առաջարկը կընդունվի և կլինի կայուն: Նույնը վերաբերում է նաև արբիտրին: Մասնակիցները պետք է ընդունեն այն, և ընդունվելու դեպքում արդյունքը կլինի կայուն: Այնուհանդերձ, եթե դերակատարները ներկայացնում են կոլեկտիվ դերակատարների, անգամ այսպես կոչված «առաջնորդների», ապա միակ ձեռքբերումը կարող է լինել «վերևների» կողմից ընդունված լինելը՝ վավերացված մի քանի ստորագրություններով: Գումարեք հազարավոր նստաշրջաններ, կրկնեք գործընթացը տարբեր վայրերում՝ ներգրավելով հնարավոր առավելագույն թվով մասնակիցներ: Մի ներքաշվեք «առաջնորդի պես, ժողովրդի նման» ծուղակի մեջ՝ արդյունքում ունենալով ընդամենը մի թղթի կտոր:

Կարո՞ղ է արդյոք դատավորը երկխոսության մեջ մտնել ամբաստանյալների հետ: Իհա՛րկե կարող է, գոնե կարող է հարցնել, թե ինչպիսի՞ պատիժ (քրեական հանցագործությունների դեպքում) կամ որոշում (քաղաքացիական հայցերի դեպքում) են նրանք ակնկալում: Այդ երկխոսությունն իր մեջ հակամարտության կարգավորման ահռելի ներուժ է պարունակում, և դատավորն, ընդսմին, պահպանում է սեփական հիմնավորված որոշում կայացնելու իրավունքը: Այս ուղղահայաց երկվության երկու կողմերն էլ դասեր քաղելու հնարավորություն ունեն:

Կարող է արդյո՞ք բռնապետը ձեռնպահ մնալ նման խաղերի մեջ ներքաշվելուց: Միայն՝ եթե նրա կամքը դիմադրության հանդիպի, ասենք, ի դեմս չհամագործակցելու կամ հասարակական անհնազանդության մարտավարության: Եթե հակամարտության ամբողջական ձևավորումը հանդիպում է միացյալ դիմադրության, ինչպես սերբերի, խորվաթների, մուսուլմանների դեպքում, որոնք միավորվեցին Անվտանգության խորհրդի բանաձևը պարտադրող ՄԱԿ-ի/ՆԱՏՕ-ի ուժերի դեմ պայքարում, ապա բռնապետը վաղ թե ուշ պետք է դիմի միջնորդության առավել ցածր համարներով տիպերի: Կամ պետք է հրաժարվի:

Բոլոր կողմերի համար հակամարտության կարգավորման նպատակով երկխոսություն սկսելու հիանալի պատճառ կա: Մարտահրավերների առևանգումն այլևս շատ չի անհանգստացնում նրանց, ոչ էլ, բնականաբար, ուժի հեռավորության մեծացումը հակամարտության պարտադրված փոխակերպման միջոցով: Բայց ներքին ընդունելիության ու ներքին հարատևության բացակայությունը կարող է անհանգստացնել նրանց, քանզի այն վատ որակումներ է տալիս նրանց մոտեցումներին. հիմնահակամարտություն՝ հակամարտության միջամտության միջոցով:

Հակամարտության փոխակերպման պարտադրման պայմաններում հիմնական խնդիրը մասնակիցների անկեղծ և կառուցողական վարքագծի փոքր հավանականությունն է: Անհրաժեշտ է ներգործել այն անհատի վրա, որն, իր հերթին, կարող է ազդել կողմերի վրա: Ակնհայտ ռազմավարությունն այստեղ տեղեկատվությունը կոծկելը և վախեցած լինելն է (կառուցողական լինելու փոխարեն), վճիռ ակնկալելը՝ վճռի ձևավորման գործընթացին մասնակից

դառնալու փոխարեն: Թերևս այստեղ մենք գործ ունենք հին սոցիալական կարգի վերապրուկների հետ, ում իմաստությունը տրվում է վերևից կամ որոնք, առնվազն, մանդատ են ստանում առավել բարձր իշխանություններից: Միջնորդը/արբիտրը չի տարբերվում հակամարտության կարգավորման պատահականորեն ընտրված միջոցներից[12], ուստի և վստահությունը թե՛ իմաստության, թե՛ մանդատի նկատմամբ պետք է մեծ լինի: Բայց հակամարտության փոխակերպման ընդհանուր հորիզոնականացումը կարող է դառնալ հիմնական հեղափոխական փոփոխությունը: Իրավաբանները կարող են պահանջված չլինել, սակայն խոռվությունն ընդդեմ դատավորի, ընդսմին, ապագայի խնդիր է:

4.6 Հակամարտության միջամտություններն ու հակամարտության եռանկյունին

Վերադառնանք հակամարտության եռանկյունուն. եթե առկա է հակամարտությանը հաջողությամբ միջամտելու՝ համաչափ հաղորդակցության հարաբերություններով իրականացված գործընթացը մասնակիցների, արտաքին կողմերի կամ երկու կողմից էլ, ապա ի՞նչ է տեղի ունենում եռանկյան գագաթներում:

Նախ, B-ի (կործանարարության մակարդակ) նվազեցման դեպքում առկա է խաղաղապահության հայտանիշը: Սակայն, մինչև երկխոսություն ծավալելը, հրաղադար կամ, գոնե, առաքինի վերաբերմունք պահանջելը նման է ամեն ինչ թարս ու շիտակ անելուն: Հակամարտության կարգավորման համար հաղորդակցության խողովակները հարկ է բաց պահել:

Երկրորդ, A գագաթում առկա է խաղաղության ձևավորման հայտանիշը՝ փոփոխվող ենթադրություններն ու վերաբերմունքը, նաև նոր ձևավորումը կայուն դարձնելու միանգամայն որոշակի չափանիշները: Վերաբերմունքը պետք է դառնա առավել դրական, իսկ ենթադրությունները՝ միտված խաղաղ գոյակցության այդ նոր ձևավորման շրջանակներին: Հուզական արդյունքը, թերևս, հետևյալ նախապայմանն է. ի հայտ է գալիս անցյալը վերապրելու փորձը: Սակայն բոլոր կողմերը պետք է համոզված լինեն, որ ենթադրություններում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, որոնց հետևանքով գրեթե անհավանական է դարձել պատեհ առիթի դեպքում միևնույն հակամարտության վարքագծի վերարտադրությունը: Կատարյալ լուծում կարող է հանդիսանալ փոխադարձաբար ընդունելի վերածրագրավորումը: (Բացատրությունը տե՛ս՝ մաս IV, գլուխ 5):

Երրորդ, C-ի՝ հակասության հաղթահարման փորձ է իրականացնում խաղաղաշինության հայտանիշը: Ընդհանուր բանաձևը տրված է երրորդ գլխում, հակամարտության միջամտությունները դրանք իրականացնելու միտումնավոր փորձեր են: Այդ ջանքերի գիտակցականացման ընթացքում կարող է և պետք է տեղի ունենա գիտակցության ընդհանուր մակարդակի բարձրացում: Նպատակը՝ նոր ձևավորումը, նոր կառուցվածքներն ու նոր ինստիտուտները բնութագրող ընդունելի բանաձևն է:

Սա ամենաբարդ, հետևաբար և անուշադրության մատնված հատվածն է, որտեղ զարգացումները կարող են սխալ ընթացք ստանալ:

Ծանոթագրություններ

[1] Մոդելներից մեկը կարող է լինել, օրինակ, Ռոջերի չուղղորդող մտադրությունը. տե՛ս՝ Snyder, W. U., with the collaboration of Carl R. Rogers (and others), *Case-book of Non-directive Counseling,* Boston, Houghton Mifflin Co., 1947:

[2] 4, 5 և 6 տիպերը չեն մեկնաբանվել: Քանի որ դրանք տիպաբանության հիմքն են կազմում. դրանք առավել մանրամասն կքննարկվեն 4.4 գլխում:

[3] Սա «միջնորդություն» բառի առավել տեխնիկական, բարդ կիրառումն է: Բայց կա նաև դրա առավել դյուրին ու տարածված կիրառությունը, որ բացատրում է արտաքին կողմերի բոլոր մոտեցումները՝ «հակամարտության աշխատող» կամ «օժանդակող» կիրառությունը: Ես գերադասում եմ տեխնիկական կիրառությունը, քանզի այն նկարագրում է անհրաժեշտ գործողությունը: Հ. Վիբերգն օգտագործում է «ցածր բանալի» և «բարձր բանալի» տերմինները՝ հիշյալ տարբերությունն ընդգծելու համար:

[4] Հակամարտության կարգավորման ձևերից մեկը կարող է լինել մեկին՝ հիմնանպատակի (միջանկյալ նպատակ), և մյուսին՝ նպատակի տրամադրումը. «Ա, Դուք սկզբունքորեն ճիշտ եք, բայց ես պետք է մի փոքր հողատարածք տրամադրեմ Բ-ին, քանզի նա դրա կարիքն ունի: Ես համոզված եմ, որ Դուք, գիտակցելով հանդերձ Ձեր ճշմարտացիությունը, կընդունեք այդ որոշումը»:

[5] Երկխոսության նկարագրությունն ու բացատրությունը, ինչպես նաև դրա առնչությունը բանավեճին (ինչպես փոխադարձաբար հարստացնող ուղեղային գրոհը (brainstorming)՝ հաղթելու նպատակ հետապնդող լեզվակռվի փոխարեն), ինչպես նաև բացատրությունը, թե ինչու Սոկրատեսը ներքաշված չի համարվում երկխոսությունների մեջ (արդյունքը նախասահմանված էր) - տե՛ս՝ Johan Galtung, *"Dialogues as Development", Methodology and Development,* Copenhagen: Ejlers, 1988, գլուխ 2, էջ 68-92:

[6] *Dia (երկ)* բառը 2 թվի հետ առնչություն չունի, այն նշանակում է «միջոցով» (կարող է նշանակել նաև «առանձին», «որպես մաս»), այսինքն՝ *logos* բառի միջոցով: Հայեցակարգը բաց է ցանկացած թվով մասնակիցների համար: Որպես մոտեցում այն գործում է հօգուտ նրանց, ում վերաբերում է այդ բառը: Սա էլ հենց պատճառներից մեկն է, թե ինչու պետք է հատուկ ուշադրություն հատկացնել ոչ-բանավոր հաղորդակցությանը՝ ներառյալ ժեստերի լեզուն, ոչ միայն բացասական՝ թշնամանքի դրսևորումներից խուսափելու իմաստով, այլ նաև դրական՝ դրական փոխակերպման մթնոլորտի ձևավորման նկատառումով:

[7] «Ձեր կարծիքով՝ ո՞ւմ ներողամտությունը պետք է հայցեք կատարվածի համար» և, մյուս կողմից, «Ձեր կարծիքով՝ ո՞վ կարող է Ձեզ ներելու լիազորություն տալ»: Այս օրինակը նաև ինչ-որ գեղեցիկ բան է պարունակում՝ ձևավորելով նոր սկիզբ, ծառայեցնելով այդ նոր սկիզբը հետագա առաջընթացի նպատակին:

[8] Բանավեճում հաղթելու ընդհանուր բանաձևը, մասնավորապես՝ Արևմուտքում, հակառակորդ կողմին երկու կամ ավելի վիճակագրական, տեսական կամ արժեքային նախադասությունների միջև հակասության ծուղակը գցելն է: Երկխոսության դեպքում հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է հակասությունը հաղթահարելու նպատակով միմյանց օգնելու կամ, գոնե, հակասությունների արդյունավետ օգտագործման վրա:

[9] Ես պարտական եմ պրոֆեսոր Սվետոզար Ստոյանովիչին՝ նախկին Հարավսլավիայի օրինակում բազմաթիվ արտաքին կողմերի դրսևորած վարքագծի այս դիպուկ ձևակերպման համար, որոնք ամբողջապես արհամարհում էին անցյալի ստվերները, չխոսելով արդեն ապագայի ստվերների մասին:

[10] Բռնաբարության համար դատապարտվածները կամ արբունքից մոլագար տղամարդիկ, ընդհանրապես, կարող են այդպիսի պահանջ ներկայացնել: Արդարացիորեն կամ ոչ, ո՞վ գիտե:

[11] Այս ասպարեզում առկա մեծաքանակ գրականության ցանկում ընթերցողին կարող է օգտակար լինել Roger Fisher and William Ury, *Getting to Yes,* Boston: Houghton, Mifflin, 1982; John W. Burton, *Resolving Deep-Rooted Conflict,* New York: University Press of America, 1987, and E. Victoria Shook, *Ho'oponopono*, Honolulu: University of Hawai'i Press, 1985: Ես լուրջ վերապահումներ ունեմ Ֆիշերի գրքի վերաբերյալ, իսկ մնացյալն անպայմանորեն առնչվում է "Negotiating Agreement Without Giving In" ենթավերնագրին: Անզիջում վարքագիծը չի կարող արդյունավետ հիմք ծառայել: Մյուս կողմից, հիմնական խնդիրն, իհարկե, վերիմացականություն փնտրելն է, քանզի հակամարտության կողմերից ոչ մեկը չի տալու այն: Բրոքոնի գիրքը պարունակում է 56 չափազանց կարևոր կանոններ, մասնավորապես, երրորդ կողմերի՝ հովանավորների, փորձագետների վերաբերյալ: Շուքի գիրքը կարող է ծառայել որպես ներածություն, թե ինչպես է հավայան մշակույթը փորձում կարգավորել հակամարտությունները:

[12] Տե՛ս՝ Johan Galtung, "Institutionalized Conflict Resolution", *Essays in Peace Research,* Vol. III, chapter 14, Copenhagen: Ejlers, 1978.

5
Հակամարտությունների ոչ բռնի փոխակերպում

5.1 Հակամարտության տեսություն, հակամարտության փոխակերպում… և Գանդի[1]

Հակամարտությունների տեսությունը որպես ելակետ կարող է ունենալ, մի կողմից, անհամատեղելիությունը, մյուս կողմից, դերակատարների ու նրանց հակամարտության ձևավորումը: Երբեմն հնարավոր է լուծել անհամատեղելիությունն առանց իրապես դիպչելու դերակատարներին ու նրանց հարաբերություններին, անգամ առանց իրապես շոշափելու հակամարտության ձևավորումը: Հենց դա է փոխզիջումը: Դերակատարները դեռևս առկա են իրենց սկզբունքորեն անձեռնմխելի կառուցվածքով: Բայց հակամարտությունը կարգավորված է, քանզի երկու կողմերն էլ արդեն կարող են վերանայել ընդունելիության սեփական ըմբռնումներն այնպես, որ ձևափոխված (այլևս չափավոր) նպատակները դառնան համատեղելի: Հակառակ մոտեցումը կարելի է դիտարկել ավելի լավ օրինակով. համատեղելիության սահմանագիծը տեղաշարժվում է ավելի ու ավելի վեր, մինչև այն սկսի շոշափել ընդունելիի սահմանը: Անհամատեղելիությունն ինքնին վերիմացական է: Աշխատավարձի շուրջ գործատու-աշխատող դասական բանավեճում առաջին մոտեցումը կարող է նշանակել գոյություն ունեցող բլիթի վերաբաժանման նոր բանաձև, երկրորդ մոտեցումը ենթադրում է բլիթի չափերի մեծացում, թերևս, պահպանելով դրա բաժանման նախկին բանաձևը: Ի հավելումն դրա, գոյություն ունի նաև հրաժարումը, ինչպես նաև մյուս մոտեցումները: Օրինակ, դերակատարներին պահելով անփոփոխ՝ կարելի է արմատապես փոխել հակամարտության ձևավորումը՝ խորացնելով դրանց փոխազդեցության ոլորտն այնպես, որ այն հանգեցնի դրանց միջև ավելի մեծ թվով հակամարտությունների: Մեկ անգամ ևս անդրադառնանք Գանդիի տեսությանը:

Մինչ այժմ դերակատարների համակարգն անձեռնմխելի է եղել: Այն ևս կարող է ընդլայնվել՝ ներառելով ավելի մեծ թվով դերակատարների, բացի նախնական երկուսից, որոնք հաճախ ձևավորում են հակամարտությունը. հնարավորությունները բազմաթիվ են:

Հակամարտության ընդարձակումն այն դուրս է բերում երկկողմանի, նույնիսկ երկբևեռ եզրագծից, ուր հակամարտությունը հաճախ երերում է: Եթե A-ն հակամարտում է B-ի, B-ն հակամարտում է C-ի և C-ն հակամարտում է A-ի հետ, ապա դրանք կարող են մեկտեղել իրենց հակամարտություններն ու որոշել, որ հավասարակշռել են միմյանց:

Դերակատարների համակարգը ևս կարող է փոփոխվել համագործակցության միջոցով (ծավալման փոխարեն): Երկու դերակատարների փոխարեն համագործակցության արդյունքում կձևավորվի մեկը: Սա նույնն է, ինչ տեղի է ունենում միավորման ընթացքում, որ նշանակում է ոչ միայն երկու դե-

րակատարների միաձուլում, այլ նաև դրանց նպատակների՝ շահերի ու արժեքների ներդաշնակեցում:

Գոյություն ունի դերակատարների համակարգի փոփոխման մի այլ կարևոր եղանակ՝ մասնատման, բաժանման և կապերի խզման միջոցով: Սա հնարավոր է միայն այն դեպքում, երբ կողմերն արդեն միակցված են: Զավթչի ու բնակչության միջև հակամարտության դեպքում կապերի խզումը իմաստազրկվում է: Բայց շահագործողի ու շահագործվողի միջև այն բացառիկ իմաստ է ձեռք բերում: Այն իմաստ ունի նաև հորիզոնական հարաբերությունների դեպքում. երկու գործընկերներ կարող են որոշել խզել իրենց հարաբերությունները, ամուսինները կարող են ամուսնալուծվել: Եթե տեղի ունի միաձուլում՝ նպատակների ներդաշնակությամբ, ապա կարող է լինել նաև բաժանում, երբ նպատակներն աներդաշնակ են:

Սա հանգեցնում է հակամարտությունների կարգավորման վեց մոտեցումների՝ անհամատեղելիության կարգավորում (վերիմացականություն), փոխզիջում, խորացում, ընդլայնում, միավորում և մասնատում՝ կապերի խզման եղանակով: Ի հավելումն ասվածի, ի հայտ է գալիս նաև մոտեցումների մի նոր ընտանիք, որը չի ենթադրում անհամատեղելիության կարգավորում, բայց փորձում է սառեցնել հակամարտությունը, բացառել, ձգձգել այն բոլոր հնարավոր միջոցներով՝ ներառյալ կառուցվածքային և ուղղակի բռնությունը:

Այսպիսով, կողմերը կարող են առավելապես դեպի ներս հակվել՝ դրական իմաստով մոտենալով միմյանց, կամ ավելի բացասական ձևով՝ հակամարտությանը թույլ տալով հեռանալ բուն էությունից և հնի վրա ձևավորելով նոր հակամարտություն (եթե ես այսօր այրեմ քո տունը, ապա հավանական է, որ դու կմոռանաս, որ երեկ ես գողացել եմ քո պայուսակը), կամ էլ այն փոխանցելով այլ դերակատարների: Ի վերջո, կառուցվածքային և ուղղակի բռնությունները ևս հակամարտության «կարգավորման» ճանապարհ են այն պարզ պատճառով, որ եթե հակառակորդ կողմը գերիշխում է, նա կարող է անգամ չգիտակցել իր սեփական շահն ու, հետևաբար, չհետապնդել այն: Եվ եթե նա այլևս «անգործունակ» է (սպանված է, մեկուսացված է, արտաքսված է), նա այլևս անկարող է հետապնդել իր նպատակներն ու տեղը զիջում է առաջին դերակատարին:

Այժմ քննարկենք, թե հակամարտությունների փոխակերպման առնչությամբ ինչ էր առաջարկում Գանդին՝ ոչ բռնի մեթոդների տեսաբանն ու գործնական կիրառողը: Նա մերժում էր վերոհիշյալ մոտեցումների մեծ մասը: Հակամարտությունների կարգավորման մոտեցման իր ընտրության առումով Գանդին կարող է պուրիտան համարվել. միանգամայն նույն պատճառներից ելնելով՝ սննդի ընտրության հարցում նա բուսակեր էր:

Այսպիսով, նա ակնհայտորեն կմերժեր վերջին երկու մոտեցումները, որ հիմնված են կառուցվածքային և ուղղակի բռնության կիրառման վրա, քանզի դրանք ի սկզբանե հակասում են ոչ բռնի մեթոդներով հակամարտությունների կարգավորման գաղափարին: Ոչ-բռնությունը բռնության այդ երկու դրսևորումների դեմ պայքարի հորդոր է, և նույնքան խիստ հորդոր է դրանք կռվի ընթացքում չկիրառելը:

Նա դեմ կլիներ նաև նախորդ չորս ձգձգող միջոցներին, քանզի դրանք հակասում են հակամարտությունների կարգավորման իր գաղափարին: Դրանք փախչում են հակամարտությունից՝ անկարող լինելով դեմ-հանդիման դուրս գալ դրա դեմ: Այդ իսկ պատճառով դրանք չեն պատկանում Գանդիի պայքարի *satyâgraha* կոչվող մարտավարությանը: Ոչ մի ճանապարհ չի տա-

նում դեպ խաղաղություն, քանզի խաղաղությունն ինքը ճանապարհ է, որ պետք է ընտրել *անհապաղ:*

Satyâgrahi-ն փորձում է պայքարել անարդարության դեմ, ոչ թե թաքցնել այն գորգի տակ: Սա չի կարելի շփոթել *satyâgraha-ի* ժամանակի տարրի կիրառման հետ: Պայքարը պետք է դուրս մղվի՝ փոփոխությունների համար անհրաժեշտ ժամանակ տրամադրելով կողմերին, բայց չի կարելի թույլ տալ, որ այն մոռացվի, կորցնի իր յուրահատկությունը:

Առաջին վեց մոտեցումներից, որոնք բոլորն էլ այս կամ այն կերպ հակամարտության փոխակերպում են ներառում, Գանդին, անշուշտ, կմերժեր խորացումն ու դրա զուգընկեր հանդիսացող ընդլայնումը: Անհամատեղելիությունները դեռևս առկա են: Նման մոտեցումները սոսկ շուկա են ձևավորում հակասությունների առևտուր իրականացնելու համար: Դա կարող է թույլատրելի լինել միայն նվազ արմատական հակամարտությունների համար: Բայց երբ այն կիրառվում է որպես արմատական անարդարությունը շարունակելու միջոց, երբ շարունակվող շահագործումն ուղեկցվում է երկրորդական հողային բարեփոխումներով, կամ անկախությունն ուղեկցվում է Հնդկաստանը երկու մասի բաժանելով, ապա, կարելի է ասել, որ ոչ մի առաջընթաց էլ չկա: Երկրորդական ուղիների կիրառումը ևս թույլատրելի է, բայց ոչ այն դեպքում, երբ օրախնդիր են հիմնարար արժեքները: Իր գիտակցական կյանքի ընթացքում Գանդին միշտ նախընտրում էր պայքարել հիմնարար հակամարտությունների դեմ:

Դա Գանդիին ստիպում էր ընտրել տասներկու հնարավոր մոտեցումներից միայն չորսը. հնարավորությունների զգալի կրճատում: Բոլոր չորսն էլ հիմնարար են Գանդիի մոտեցման տեսանկյունից և իրենց հետագա զարգացումն են ստացել նրա կողմից:

Սկսենք ցանկի ամենաներքևից՝ *մասնատում,* կապերի խզում, բաժանում: Անհամագործակցության ողջ տեսությունն է այստեղ դրսևորվում: Գանդիի տեսանկյունից սա ավելին է, քան ընդամենը հարաբերությունների խզումը, երբ դադարեցվում են դիվանագիտական ու առևտրային հարաբերությունները, կամ ամուսնական հարաբերությունները բաժանման դեպքում: Գանդիի ուսմունքի տեսանկյունից սա ընդամենը նշանակում է երկուսին կապող կառուցվածքի կապերի խզում (սոցիալական կառուցվածք): Մարդու միասնության առավել խորը կառուցվածքն է այստեղ, և *satyâgrahi-ի* խնդիրն է նպաստել անհատ-անհատ մակարդակում առավել ակտիվ գործակցության ծավալմանը:

Այնուհետև՝ *ինտեգրում* (միաձուլում): Սա նպատակ է, որն ի հայտ է գալիս *Rama Raj*՝ Աստծո թագավորություն, համակցության մեջ: Այս առնչությամբ Գանդին այլ մտածողներից տարբերվում է իր այն համառ պնդմամբ, որ սեռական, տարիքային, ռասայական, դասակարգային ու ազգային տարբերությունները չեն կարող սահմանափակել ինտեգրման գործընթացը: Ինտեգրացումը համապարփակ է՝ վերիմացական բոլորի առնչությամբ: Ինտեգրումը չի ուղղված որևէ մեկի կամ որևէ խմբակցության/համայնքի դեմ՝ ուղղակի բռնության սանձահարման կամ կառուցվածքային բռնության կիրառման նպատակով: Այն մարդկության ինտեգրումն է: Երկրորդ, Գանդին իր եթե ոչ ամբողջական, ապա մոտավոր իրականացումներով լավատես էր այստեղ՝ այս աշխարհում: Մեզանից յուրաքանչյուրը կարող է գտնել իր տեղը համագործակցության օվկիանոսային պարբերաշրջաններում՝ համապատասխան իրավունքներով ու պարտականություններով:

Ապա. *փոխզիջում:* Գանդին հաճախ էր հանդես գալիս հօգուտ փոխզիջման, անգամ եթե ճակատամարտում հաղթանակը թվում է անխուսափելի այն իմաստով, որ վիրավորանքներն այլևս փոխհատուցված են, պահանջները՝ բավարարված: Խնդիրը հաղթելը չէ, այլ ճակատամարտում այնպիսի վարքագիծ դրսևորելը, որն, ի վերջո, կհանգեցնի հետկոնֆլիկտային կյանքի համար լավագույն հնարավոր հիմքերի ձևավորմանը: Փոխզիջման գերապատվությունը, սակայն, չի ենթադրում փոխզիջման պատրաստակամություն արմատականների կողմից:

Եվ վերջապես. անհամատեղելիության լուծում կամ *վերիմացականություն:* Շատ հաճախ սա ընդամենը երևակայության արդյունք է: Սա Գանդիին բնորոշ մոտեցում էր, ոչ միայն այլոց միջև ընթացող ուղղակի բռնության, այլ նաև կառուցվածքային բռնության դեպքում, ուր նա հանդես էր գալիս որպես առաջին կողմ: Հակամարտությունը վերիմացականացված է. այն, ինչ անհամատեղելի էր թվում, այլևս համատեղելի է նոր կառուցվածքում: Կաստաների հորիզոնական համակարգը, խնամակալությունը, անգլիացիների շարունակվող ներկայությունը Հնդկաստանում ոչ որպես գաղութարարներ, այլ որպես (Բրիտանական) Համագործակցության հավասար ու ինքնիշխան անդամներ՝ ահա օրինակները:

Այժմ քննարկենք, թե ինչո՞ւ էր Գանդին նման բարեպաշտ մոտեցում հանդես բերում: Հիմնականում այն պատճառով, որ հակամարտության կարգավորումն ընդամենը հակամարտության ցանկալի ելքի տարրերից մեկն է: Ամենաքիչը, հավասարապես ցանկալի է այն ազդեցությունը, որ հակամարտությունը կարող է ունենալ հակամարտող կողմերից յուրաքանչյուրի վրա: Եթե հակամարտությունը կարգավորված է՝ անփոփոխ թողնելով, անգամ վատթարացնելով կողմերի վիճակը, ապա չի կարելի հաջողություն արձանագրել: Հակամարտության *փոխակերպման* չափանիշը կարելի է ձևակերպել եռամիասնական բովանդակությամբ՝ նոր սոցիալական կառուցվածք, իբրև պայմանական իմաստով հակամարտության կարգավորում, բոլոր դերակատարների ինքնամաքրագործման առավել բարձր մակարդակ՝ թե՛ *satyâgraha* խմբում, և թե՛ գովազդողների շրջանում: Միտված ոչ միայն դեպի C, այլ նաև դեպի A և դեպի B:

Վերջինս, ըստ այստեղ բերված մեկնաբանության, նշանակում է բոլոր կողմերի առավել բարձր ինքնաապավինման մակարդակ, ընդ որում, սա այն դեպքն է, երբ շահագործման կառուցվածքի ոչնչացումն ազատագրում է շահագործողին: Նա կախված էր իր իսկ շահագործողական գործողություններից՝ առճակատման ընթացքում նա ևս կարող է սովորել ապավինել ինքն իրեն: Նույնը վերաբերում է նաև մնացած երկու բաղադրիչներին. առճակատումը խթանում է, որպեսզի երկու կողմերն ավելի համարձակ դառնան, և, ճիշտ ուղղորդելու դեպքում, կարող է ուժեղացնել նրանց կապերը: Եվ միայն հաջողության չափանիշների առավել լայն համակարգի լույսի ներքո կարելի է հավուր պատշաճի ըմբռնել հակամարտության կարգավորման Գանդիի տեսակետը:

Գանդին ոչնչացնում է հակամարտության ստանդարտ մոտեցումների երկու-երրորդը, բայց մնացած չորսի մեջ խորամուխ է լինում ամենայն լրջությամբ: Ժամանակակից ռազմավարական տերմիններով Գանդիին կարելի է համարել դասակարգված ու հետաձգված պատասխանների ուսմունքի հետևորդ: Մյուս կողմին պետք է ժամանակ հատկացնել, որ նա կարողանա արձագանքել և յուրովի գնահատել ստեղծված իրավիճակը, ճիշտ այնպես,

ինչպես սեփական կողմը ժամանակի կարիք ունի, որպեսզի կարողանա օգտագործել սովորելու և վերիմացականացվելու համապատասխան հնարավորությունը, ախոյանի հետ համատեղ կատարելագործելու A-ն և B-ն: Ասվածի ամփոփ նկարագիրը բերված է աղյուսակ 5.1-ում:

Աղյուսակ 5.1. Հակամարտության կարգավորման տասներկու և Գանդիի չորս մոտեցումները

Դերակատարի համակարգ	Հակամարտության համակարգ	Անհամատեղելիությունը վերացված է	Անհամատեղելիությունը պահպանվում է
Պահպանվում է	Պահպանվում է	*1.Վերիմացականացում* *2. Փոխզիջում*	7. Ավելացնել դրական ներ- գործողություն 8. Ավելացնել դրական միջ- գործողություն
Պահպանվում է	Ավելին	3. Խորացում	9. Ավելացնել բացասական միջ- գործողություն
Ավելին	Պահպանվում է	4. Ընդլայնում	10. Այլ դերակատարների միջ- գործողություն
Միայն մեկ		5. *Ինտեգրում* վերամիակցում միաձուլում	11. Գերիշխանություն (կառուցվածքային բռնություն)
Խզված		6. *Մասնատում* կապերի խզում բաժանում	12. Անկարողացում (ուղղակի բռնություն)

Ժամանակ է անհրաժեշտ լուծում գտնելու այն անհամատեղությունների համար, որոնք հաստատ գոյատևում են՝ անկախ համաձայնության հասնելու բոլոր հնարավոր ջանքերից: Գանդիի պատկերացմամբ հակամարտության կարգավորումը հիմնականում տեղի է ունենում ոչ թե տեսակետների համադրման, երկխոսության, բանակցությունների ու փոխզիջման միջոցով, այլ սոցիալական կյանքի նոր ձևերի փորձարկումների միջոցով: Հակամարտության ցածր ռիթմը ընձեռում է դրա հնարավորությունը և կանխում է մարդկային ու հասարակական էներգիայի վատնումն ավերիչ գործողությունների վրա: Ոչ-բռնությունը ժամանակ է պահանջում՝ 2-ից 1:

Այնուհանդերձ, բացառիկ կարևոր տարբերություններ են (այնքան կարևոր, որ կարելի է դրանք ընդհանրացնել ամբողջական համակարգում) ընկած այս մասնավոր խնդրի արդի ռազմավարական հիմնավորումների ու Գանդիի փաստարկների միջև: «Դասակարգված պատասխանը» ենթադրում է ընդլայնում, սպառնալիքը վերաճում է թշնամության: Նախ սկսվում է չափավոր սպառնալիքից, ապա փորձ է արվում ամրապնդել սպառնալիքը, հետո մակարդակը բարձրացվում է այնքան, մինչև «կորուստները դառնում են անընդունելի»: Ախոյանը «մեղմանում» է:

Շրջանցելով այն հարցը, թե ինչո՞ւ այս փորձն այդքան հաճախ չի աշխատում, և հակա-արդյունավետ է թվում, մենք պետք է մատնանշենք, որ Գանդիի գազափարների հետագա ծավալումը կարող է դիտարկվել որպես

ինքնաապավինման և ինքնավարության, բայց ոչ հարված հասցնելու հնարավորության մակարդակի բարձրացման ձևերից մեկը՝ ինչպես սեփական «Ես»-ի, այնպես էլ ախոյանի համար:

Այլ խոսքով, *satyâgraha* խումբն զգում է, որ միությունը չի վերաձևավորվում, այն կարող է միայն կրկին ձևավորվել, այնուհետև գալիս է ինքնավարությունն ամրապնդելու ու կախվածության կապանքները ոչնչացնելու ժամանակը: Ախոյանի համար սա կարող է նմանվել հարաճուն սպառնալիքի: *Satyâgraha* խմբի համար սա ավելին է, քան սոսկ անկախության հռչակագիրը. այն անկախություն է, նաև ախոյանի համար. կապերի խզումից հետո վերամիակցման հրավերն ուժի մեջ է մինչև այն պահը, երբ երկու կողմն էլ պատրաստ կլինեն դրան:

Երկուսն էլ պետք է հետագա զարգացման հնարավորություն ունենան, որոշ ժամանակ, թերևս առանձին-առանձին և ո՛չ միմյանց հետ համագործակցելով: Որոշակի իմաստով սա հակասում է Գանդիի այն գաղափարին, որ հարաբերությունների իսպառ բացակայությունն ավելի վատ է, քան բռնի հարաբերությունները: Այնուհանդերձ, նպատակը դարձյալ միավորվելն է, հնարավոր է, այլ ձևով, հնարավորինս շուտ, ինչպես, ասենք, այն ամուսինների դեպքում, որոնք որոշում են միառժամանակ առանձին ապրել: Կապերի խզումը երբեք չի կարող դիտարկվել որպես վերջնական որոշում: Նպատակը ինտեգրումն է, միությունը, միաձուլումը՝ 6-ից 5:

Ամփոփում. ոչ էականների հարցերի շուրջ փոխզիջումից դեպի էական հարցերի վերիմացականացում և կապերի խզումից դեպի վերամիակցում ու միավորում: Այս ամենի համար ժամանակ է անհրաժեշտ: Սակայն ժամանակի ընթացքում շատ բան է փոխվում: Չափազանց դժվար է հետևողական ու հաստատուն մնալ: Ընդսմին, արդյո՞ք հետևողականությունն այդքան կարևոր է: Գանդին հետևողականորեն պահանջում էր բռնության բացառում ինքն իրենից՝ որպես ուղի, որպես երկարաժամկետ նպատակ: Գանդիի տեսանկյունից՝ բռնության բացակայությունը *(ahimsâ)* = սեր *(satyâ)* = Ճշմարտություն = Աստված: Ուրիշներն էլ կարող են միանալ: Մնացյալը բանակցությունների խնդիր է:

5.2 Բռնության և ոչ-բռնության համեմատությունը

Ինչո՞ւ մենք աշխարհում չենք հանդիպում ավելի ու ավելի շատ ոչ բռնի պայքարի՝ ուղղված ուղղակի բռնության կիրառման դեմ, ինչպես նաև կառուցվածքային բռնության դեմ՝ ճնշումների ու շահագործման ընդունված ձևերով: Պատասխանը, թերևս, չի կարելի փնտրել բացառապես բարոյական արժեքների հարթության վրա. շատ մարդիկ կհամաձայնվեն, որ Գանդին, ուժը հավասարեցնելով այն ամենի հետ, ինչ զենքից անդին է, բարոյապես գերազանցեց Լենինին կամ Մաո Ցզեդունին: Պատասխանն, անշուշտ, պետք է փնտրել նաև ոչ-բռնության պրագմատիզմի մեջ:

«Ոչ-բռնությունը չի գործում» պնդումը անհիրազեկություն է՝ պայմանավորված հարյուրամյակի երկրորդ կեսի ապշեցուցիչ հաջողություններով[2].

1. Գանդիի *swaraj* շարժումը Հնդկաստանի անկախության համար, 1920թ.-ից[3],

2. ձերբակալված հրեաների ազատ արձակումը Բեռլինում, 1943թ.-ին,
3. Մարթին Լյութեր Քինգ կրտսերի շարժումը Միացյալ Նահանգների հարավում, 1956թ.-ից,
4. ընդդեմ Վիետնամի պատերազմի շարժումները Վիետնամում և երկրից դուրս,
5. «Մայրերն ընդդեմ պատերազմի» ելույթները Բուենոս Այրեսի «Պլազա դե Մայո» հրապարակում,
6. «Իշխանությունը ժողովրդին» շարժումը Ֆիլիպիններում, 1986թ,
7. «Մանուկների իշխանություն» շարժումը Հարավային Աֆրիկայում, սկսած 1986թ-ից,
8. *Ինթիֆադայի* շարժումը գրավյալ Պաղեստինում, սկսած 1987թ-ից,
9. ժողովրդավարական շարժումը Պեկինում, գարուն, 1989թ,
10. Համերաշխություն (Սոլիդարնոստ)/ԳԴՀ շարժումները, որոնք վերջ դրեցին Սառը պատերազմին:

Անշուշտ, դեպքերից ոչ մեկն էլ վերջնականապես հստակ չէ: Սակայն, հիշյալ բոլոր դեպքերում հիմնական ուղղակի բռնությունը կասեցված է, իսկ կառուցվածքային բռնությունը հիմնականում կամ կասեցված է, կամ նվազեցված: Այլ գործոններ էլ կան, սակայն եթե ոչ-բռնության կիրառման փոխարեն սպառնալիքի ենթարկվածը, շահագործվողը և/կամ ռեպրեսիայի ենթարկվածն ընդգրկվեին հիմնական բռնության ոլորտում, ապա այդ ազդեցությունն առաջ կբերեր հակազդեցություն, բայց դժնդակ պայմանները, հավանաբար, կմնային անփոփոխ: Մենք չենք կարող պնդել այս վարկածը, քանզի անհնար է պատմության անիվը հետ պտտել: Բայց, ակնհայտորեն, դա ծայր աստիճան ճշմարտանման է թվում[4]:

Գրել մեր բռնությամբ լեցուն հարյուրամյակի պատմությունը, ուսումնասիրել վերջինիս քաղաքականությունը (առանց հետազոտելու ոչ-բռնությունը) նշանակում է ավելի ու ավելի զրպարտել այն: Նման զանցառությունը մերկացնում է մտավոր անիրազեկությունն ու գաղափարախոսական հակումները՝ ստորև քննարկվող պատճառներով:

Ստորև՝ ոչ-բռնության հիմքում ընկած տասը մեխանիզմների ցանկը:

1. Ուղղակի բռնության սպառնալիքը կամ կառուցվածքային բռնության փաստն անհանդուրժելի են երկրի բնակչության հիմնական խմբերի համար:
2. Կառուցողական այլընտրանքը ձևակերպված և քննարկված է Ուրիշի հետ թե՛ բանավոր, թե՛ գրավոր կերպով, ցուցադրաբար, և այլն:
3. Որևէ տիպի բռնության հստակորեն առկա վտանգը կարող է օգտագործվել, եթե գործադրվում է ակտիվ ոչ-բռնություն, այլ խոսքով՝ ներառված է «Ես»-ի իրական վտանգը:
4. Ոչ-բռնության գործադրումը հստակ է[5] ոչ միայն գործողությունների, այլ նաև խոսքի և, հնարավորության դեպքում, մտքի առնչությամբ:

5. Սիրո, ընկերասիրության գործողությունները տեղի են ունենում «ես՝ուրիշին» ուղղությամբ:
6. Ոչ բռնի գործողությունն այնուհետև ծառայում է մյուս կողմի և այլոց հետ հաղորդակցվելուն առ այն, որ «ես»-ի նկատմամբ երբեք ճնշում չի գործադրվի, որ նա պատրաստ կլինի ընդունելու արդյունքները և հաստատելու կառուցողական հարաբերություններ:
7. Տարրաբաժանում (չհամագործակցում և քաղաքացիական անհնազանդություն) Ուրիշից՝ ճնշողից, և միավորում Այլոց հետ. անհատն այնուհետև կարող է փոխել Այլոց ոգին ու, թերևս, նույնիսկ սիրտը:
8. Եթե ճնշողը բռնություն է կիրառում ոչ-բռնությանը հակազդելու համար, ապա, Ուրիշի՝ իր բռնության հետևանքներով պայմանավորված ապաբարոյականացումը կարող է մեծապես ծառայել այն բանին, որ նա իր միտքը փոխի:
9. Եթե Ուրիշը հետևանքներից խուսափելու նպատակով հեռակա բռնություն է կիրառում, ներառյալ տնտեսական բոյկոտը, ապա արտաքին կողմերը պետք է համախմբվեն, որ կարողանան նրան հստակ բացատրել դրա հետևանքները:
10. Եթե Ես-Ուրիշ սոցիալ-հոգեբանական տարածությունը հիմնված է Ուրիշի կողմից «Ես»-ի անմարդկային կերպարանափոխման վրա, ապա ոչ-բռնությունը արտաքին կողմերին պետք է ներառի Ոչ-բռնության մեծ շղթայի մեջ[6]. միջնորդներից ոմանք սոցիալական բնութագրերի զգալի մասը պետք է կիսեն ճնշման ենթարկվողի հետ, մյուսները պետք է ավելի մոտ կանգնեն ճնշում գործադրողին[7]:

Ոչ բռնի գործողության առնչությամբ գլխավոր խնդրո առարկա պետք է լինեն հետևյալ երեք հիմնական մտահոգությունները՝ այն պետք է ուղղվի «Ես»-ի և Ուրիշի միջև անբարյացկամ հարաբերությունների դեմ, և ոչ թե Ուրիշի դեմ՝ որպես այդպիսինի, այն պետք է ատելության փոխարեն սեր ձևավորի և բռնի վարքագծի փոխարեն խաղաղարար վարքագիծ դրսևորի[8], իսկ Ուրիշը միշտ պետք է կարողանա կիսել այդ ինքնազարգացնող փորձը՝ ներառյալ հավաստիացումներն առ այն, որ ապագայի հասարակության մեջ նա իր տեղը կունենա: Խնդիրն այստեղ այնպիսի վարքագիծ դրսևորելն է, որը հնարավորություն կտա հակամարտությանը տեղաշարժվել դեպի վեր: Կողմերը հակամարտությունից պետք է բարձրանան ոչ միայն բարելավված հասարակական հարաբերություններով, այլ նաև որպես առավել կատարյալ անհատականություններ, քան նախկինում էին՝ առավել պատրաստ նոր հակամարտություններին ոչ բռնի եղանակներով դիմակայելու: Այսպիսով, նրանք, ովքեր դեռ երեկ կամ նույնիսկ այսօր հակված էին բռնի մեթոդների կիրառման, վաղը կարող են միջնորդական առաքելություն ստանձնել:

Անշուշտ, սա միշտ չէ, որ գործում է: Եթե «Ես»-ը կարող է վերահսկել առաջին վեց կետերը, ապա Ուրիշը կարող է չարձագանքել մնացած չորս կետերին այնպես, ինչպես ենթադրվում էր: Այդ դեպքում հնարավորություններից մեկը կրկին փորձելն է, մյուսը՝ կապիտուլյացիան, որը երբեք չի կարելի դիտարկել որպես հարատև մի բան: Բռնության՝ իբրև այդպիսինի ընդունումն ինքնին բռնություն է:

Գանդիի հետևորդներն առանձնահատուկ ուշադրություն են հատկացնում «Ես»-ի առավել մաքրագերծմանն ու նախապատրաստմանը հակամարտության փոխակերպման գործընթացին: Այս տեսությունը մի առավելություն ունի. այն ծանրության կենտրոնը տեղափոխում է «Ես»-ի և այն գործողությունների վրա, որ նա կարող է իրականացնել (ասենք, իբրև միջնորդ): Որպես լրացուցիչ առավելություն կարելի է դիտարկել անկեղծությունը: («Մի՞թե Ուրիշի հոգում փոփոխություն չի եղել: Դուք հետագա ինքնամաքրման կարիք ունեք»):

Այս գործոնն, անշուշտ, չի կարելի բացառել, քանզի ակնհայտ է, որ ոչ-բռնությունը հոգեբանորեն աշխատում է այսպես կոչված «հոգեկան շփման» միջոցով: Սակայն դա չի բացառում արտաքին կողմերի հետ քաղաքական շփումների անհրաժեշտությունը: Վերոհիշյալ ցանկի (9) և (10) մեխանիզմների կիրառման դեպքում դրանք վճռական դերակատարում ունեն:

Ցանկացած դեպքում չի կարելի թույլ տալ որևէ մեկին պնդել, որ հակամարտություն գոյություն չունի, անկախ նրանից, թե որքանով է ներփակված ատելությունը, որքանով է ինստիտուցիոնալացված բռնի վարքագիծը և որքան անհողդողդ են հակամարտությունը, անհամատեղելիությունն ու խնդրո առարկան, որ չեն կարող փոխակերպվել ոչ բռնի եղանակներով: Մենք չենք ասում, որ ոչ- բռնությունը միշտ աշխատում է: Վարկածն ինքնանպատակ չէ: Բայց շատ ճնշված խմբեր կարող էին ինքնավարության ավելի բարձր աստիճանի հասնել, եթե նրանք կիրառեին ոչ բռնի մեթոդներ[9]:

Կարելի է փաստարկել այն վարկածը, համաձայն որի բռնությունը երբեք չի կարող արդյունավետ լինել, սակայն.

նախ, բազմաթիվ մարդիկ սպանվել ու որբացել են, շատերը մարմնական, մտավոր ու հոգևոր վնասվածքներ/խեղումներ են ստացել, առկա են բնական միջավայրին ու մարդկային էությանը հասցված վնասներ: Այս վնասներից շատերն անդառնալի են: Եվ այս ամենը լոկ արտաքին դրսևորումներն են, կողմնակի արդյունքները հաշվի չեն առնված, ինչպես տնտեսագետները հաշվի չեն առնում տնտեսական գործունեության արտաքին դրսևորումները: Միայն այս կենսական խնդիրն արհամարհելով՝ բռնության կանխագուշակները կարող են հասնել բռնության կիրառման առնչությամբ դրական եզրակացության,

երկրորդ, եթե բռնությունը հանգեցնում է որոշակի փոփոխությունների Ես-Ուրիշը հարաբերություններում, ապա դրան կարելի է հասնել Ուրիշին շարքից հանելով: Բայց հարկադրված արդյունքը հարատև չէ, քանի որ այն ընդունված չէ, և այն ընդունելի չէ, քանզի պարտված Ուրիշն այլևս Ուրիշ չէ[10],

երրորդ, տեղի չի ունեցել «ես»-ի դրական փոխակերպում, սակայն, նույնիսկ հաղթանակին հետևող բացասական փոխակերպումը կարող է առաջ բերել բռնության հակում, և հաջորդ անգամ կարելի է դրդել առավել խիստ բռնության կիրառման,

չորրորդ, տեղի չի ունեցել Ուրիշի դրական փոխակերպում, թերևս առավել հավանական է բացասական փոխակերպումը, քանզի պարտությունը ևս կարող է ձևավորել բռնության հակում և հանգեցնել վրեժխնդրության. արգելքներից մեկը հաղթահարված է՝ դառնալով բռնության առարկա այնպես, որ բացառված է բարոյական դատարկության գոյությունը:

Վերադառնանք ելակետին: Ունենալով բռնության ու պատերազմի՝ իբրև ինստիտուտների, ժամանակակից տեխնոլոգիաներով պայմանավորված աճող սնանկությունը (դրանք, անշուշտ, չեն ազնվացնում հաղթողին կամ

պարտվողին, այլ, ընդհակառակը, քայքայում են երկուսին էլ), ինչպես նաև ոչ բռնի միջոցների կիրառման զգալի հաջողությունները՝ միանգամայն տեղին հարց է առաջանում՝ ինչո՞ւ մենք ավելի հաճախ չենք հանդիպում նման օրինակների: Պատասխանը, թերևս, հարկ է փնտրել խորը մշակույթում. այնտեղ կարող են թաքնված լինել խոչընդոտներ, որոնց էությունը մենք չենք ըմբռնում ու, հետևաբար, հակադրվում ենք դրանց, անշուշտ, ոչ բռնի եղանակով: Միաժամանակ կարող են լինել նաև գործոններ, որոնք ոչ թե խափանում, այլ խրախուսում են ոչ բռնի գործողությունները: Դրանք ևս պետք է բացահայտվեն և ուսումնասիրվեն, գուցե նաև ամրապնդվեն:

5.3 Ոչ-բռնությունը խափանող կամ խրախուսող՝ խորը մշակույթի գործոնները

Ուսումնասիրենք մարդկային պայմանը ձևավորող յոթ հարթություններում դարանակալած որոշ գործոններ, մասնավորապես, ինչպես մենք ենք պատկերացնում այդ հարթությունները, և ինչպես որ դրանք են իրենց հերթին ձևավորում մեր պայմանը (առավել մանրամասն կօգտագործվի IV մասում):

Բնություն. «բնական» բառն, անշուշտ, առնչվում է բնությանը, եթե այն ընդունում ենք իբրև նորմ: Բայց բնությունը դեռևս բնականի ու բնականոնի ոչերկիմաստ մոդել չէ. առկա են հակամարտություն ու համագործակցություն, անտիբիոզ և սիմբիոզ, Դարվին և Կրոպոտկին: Արևմտյան մշակույթը կարծես թե հիմնվում է այս զույգերի առաջին մասերի վրա՝ վտանգելով կորցնել երկրորդի, ասել է թե՝ նաև իրականության ընկալումը:

Այնուհանդերձ, հիմնական խնդիրն է պարզել, թե որքան ոչ-բռնություն ու որքան հոգածություն կա մարդկային բնության մեջ, այլ ոչ թե ոչ մարդկային էություններում: Բնության կանխակալ մեկնաբանումը բռնության ընկալումը դարձնում է «բնական/բնականոն»: Հակառակ դիրքորոշումը կարելի է գտնել Կրոպոտկինի աշխատանքներում, ինչպես նաև մարդ էակների մեջ՝ դիտարկելով նրանց որպես բանականության կրողներ և ոչ թե զուտ արտաքին կաղապարի տակ ծածկված կենդանի էակներ: Իհարկե, մենք այդ երկուսի հանրագումարն ենք, խնդիրն այն է, թե մենք դրանցից որին ենք գերապատվություն տալիս[11]:

Անհատ. Ֆրոյդի տեսակետից անհատի ներաշխարհը մարտադաշտ է, ուր ինքնության ու գեր-Եսի առճակատման արդյունքում ծնվում է էգոն՝ «ես»-ը: Սա, իհարկե, խոշոր նվաճում էր անհատի ներաշխարհի նախորդ պատկերացումների համեմատությամբ, որոնք անհատին ներկայացնում էին իբրև դոգմաներով դրոշմված *tabula rasa*[i], որում իր բաժինն ուներ նաև եկեղեցին և/կամ կրթությունը: Սակայն Ֆրոյդի պատկերացումներում կան նաև շարժեր: Ենթադրվում է, որ բռնությունը տեղակայված է ինքնության մեջ՝ որպես հարկադրանք, և գեր-Եսից բխող նորմերը խոչնդոտում են բռնության կիրառմանը: Մարդ էակը դիտարկվում է իբրև յուրօրինակ անոթ, ուր եռում են քիչ թե շատ զսպված կրքերը. խնդիրն այն է, թե որքան ամուր է փակված կափարիչը:

[i] Tabula rasa (լատ.)- մաքուր, չգրված տախտակ /թարգ./

Ասվածի համար գոյություն ունի նաև այլընտրանքային և ավելի իրատեսական (ոչ թե «իրատես») ուսումնասիրություն, որ բացատրում է բռնության/ոչ-բռնության ոչ միայն բարոյագիտությունը, այլ նաև պրագմատիզմը: Սա հանգեցնում է այն նույն հայտնագործությանը, որը կատարվել է գերակայող տնտեսագիտության շրջանակներում. բռնության հիմնական բացասական կողմնակի արդյունքները հաշվի չեն առնվում, իսկ ոչ-բռնության հիմնական դրական կողմնակի արդյունքներն անգամ չեն քննարկվում: Սա չպետք է անակնկալ լինի որևէ մեկի համար: Ոչ-բռնությունը դիտարկվում է որպես հոգևոր գեր-Եսի մաս[12], ոչ որպես գործնական քաղաքականության լուրջ հիմնավորում, իսկ «Ես»-ն ավելի շուտ դիտարկվում է իբրև երկու վիթխարի ուժերի միջև առկախ մի բան, քան գիտակից Հոգի, որ կոչված է ուղղորդելու ինքնության ու գեր-Եսի էներգիան առավել ցանկալի ուղղություններով: Բռնության խստության տեսակետից ինքնությունը, թերևս, *զիջում է* գեր-Եսին:

Հասարակություն. արևմտյան հասարակությունը, լինի դա հրեական, քրիստոնեական, թե մուսուլմանական, անհատապաշտական է և ուղղաձիգ, իսկ վերևում կանգնած է ուժեղ տղամարդը: Իրադարձություններն ավելի հեշտությամբ են ուշադրության արժանանում, եթե նախաձեռնվում են ոչ ցածր դասից սերող տղամարդկանց կողմից, այնպիսի առաջնորդների կողմից, ինչպիսիք են Մ.Կ. Գանդին ու Մարթին Լյութեր Քինգ կրտսերը: Սևամորթ, ցածր խավին պատկանող կնոջ (Ռոզա Փարքս) կողմից նախաձեռնված լուրջ իրադարձությունը չէր կարող հեշտությամբ արժանանալ հակառակ դասին ու կառուցվածքին պատկանող անհատների ուշադրությանը: Եվ, քանի որ կանայք աչքի են ընկնում ոչ-բռնությամբ, լոկ այս գործոնը բավարար է՝ բացատրելու այդ անտեսանելիությունը:

Արևմուտքը չափազանց անհատապաշտ է և ուղղաձիգ-գիտակցական: Հիմքում ընկած է հասարակության զգայական ընկալումը, իրենց վերընթաց ուղին պայքարով հարթող անհատների ամբողջության ընկալումը: Բայց հասարակությունը նաև կառուցվածք է, ցանց, որ միավորվում է մարդկանց միլիարդավոր փոխազդեցություններով: Այդ անտեսանելի կառուցվածքում կյանքի հնարավորությունները շատ անհամաչափ են բաշխված: Մարդիկ հակազդում են, և այդ «հակազդեցությունը» կարող է ոչ բռնի ձև ընդունել, ինչպես շարժումների մեր ցանկում: Պայքարն ընթանում է ներքևից վերև, պայքարում են շահագործվողները, բանվոր դասակարգը, ոչ-սպիտակամորթները, կանայք: Պայքարն անտեսանելի է ոչ միայն մասնակիցների ցածր կարգավիճակի ու տեսանելի առաջնորդների բացակայության հետևանքով, այլև այն պարզ պատճառով, որ ճակատամարտը սպառնալից է: Պատերազմը միշտ չէ, որ խաթարում է հասարակական կարգը, այն պարզապես կարող է իշխանության գլուխ բերել մի քանի օտարազգիների՝ իբրև օկուպացիայի բաղկացուցիչ մաս: Հիմնական գործողությունը, ինչպես, ասենք, հասարակության ստորին խավերի բռնի կամ ոչ բռնի մեթոդներով համընդհանուր գործադուլը, բացահայտում է հասարակության ստորին շերտերում առկա անբավարարվածությունը: Արդյո՞ք այն հեղափոխությունն է, որ ծիկրակում է հաջորդ անկյունից:

Ծանրության կենտրոնը կառուցվածքից դերակատարների վրա փոխադրելու դեպքում՝ նման գործողությունները ոչ միայն չեն արձանագրվի որպես քաղաքական, այլև կհռչակվեն, ասենք, իբրև «արմատական»՝ թելադրված ավելի շուտ բարոյական նորմերով, քան քաղաքական գաղափարախոսու-

թյամբ: Արդյունքում մարդիկ կարող են մի օր արթնանալ ու բացահայտել, որ ապրում են բոլորովին այլ հասարակությունում, բռնի կամ ոչ բռնի՝ ձևավորված, ասենք, վերջին ֆեմինիստական հեղափոխության արդյունքում: Այնժամ նրանք կարող են փորձել առանձնացնել առաջնորդին ու հարցեր տալ նրան՝ տեղի ունեցածը հասկանալու համար: Լավ օրինակ է 1989 թվականի Գերմանիայի դեպքերը, որոնք ալեկոծեցին ոչ միայն ԳԴՀ, այլև Արևմտյան Գերմանիայի հասարակությանը, քանզի ոչ բռնի հեղափոխության գաղափարները հավասարապես ընդունելի էին նաև կապիտալիստական հասարակության համար:

Աշխարհ. Ըստ Արևմուտքի և բոլոր նրանց, ովքեր ընդունում/կիսում են Արևմուտքի տեսակետները, աշխարհն ունի կենտրոն, որն Արևմուտքն է, ծայրամասեր, որոնք ընդունում են Արևմուտքին, անգամ հպատակվում են նրան, ինչպես նաև չարիքի գոտիներ, որոնք ո՛չ հնազանդվում, ո՛չ էլ ընդունում են: Այնքանով, որքանով այս կառուցվածքում ոչ-բռնությունն ուղղվում է Կենտրոնի ուղղակի կամ անուղղակի իշխանության դեմ (վերոհիշյալ 1, 3, 4, 5, 6, 7, 8 դեպքերը), ոչ-բռնությունը շատ ավելի գերադասելի է այն իրավիճակներում, որտեղ նույն մարդիկ նույն գործողություններն իրականացնում են բռնության միջոցով, բայց այն, միևնույն է, մնում է կործանարար: Ցանկացած բարոյական, անգամ պրագմատիկ գերակայություն կարող է նվազեցնել բացարձակ անհնազանդությունը, և որքան արդյունավետ է դա գործում, այնքան ավելի վտանգավոր կլինի, երբ այլ խմբեր ևս որոշեն նման գաղափարներ որդեգրել:

(2) դեպքը տարբեր է. նացիզմը թշնամի էր նաև կենտրոնին հենց Կենտրոնում: Բայց Բեռլինի Ռոզենշտրասեում ոչ-բռնության հաջող դրսևորումը որոշակի կասկածի տակ է առնում Կենտրոնի (դաշնակիցների) համակարգված կենտրոնների կողմից կիրառվող ռազմական մոտեցումը, որ կոչված է ճնշելու առանցքները, մասնավորապես, այն մոտեցումը (կամ դրա բացակայությունը), որն ուղղված էր հրեաներին Հոլոքոստից պաշտպանելուն: Արդյո՞ք դա բավարար կլիներ նացիզմի բուն էությունը մերկացնելու և Գերմանիայի ներսում դիմադրության շարժում կազմակերպելու համար, մասնավորապես Գանդիի սկզբունքով, որն արդեն 1930-ական թվականներին քաջ հայտնի էր Արևմուտքում: Թե՞ անհրաժեշտ էր բոլոր տեսանկյուններից խիստ թանկարժեք պատերազմը նացիզմի դեմ, որն արդարացված էր այլընտրանքի բացակայության ենթադրությամբ և կոչված էր հանգստացնելու այն գերմանացիների խիղճը, որոնք չէին կիսում նացիզմի գաղափարները: Արդյո՞ք սա դեռևս իրերի նույն տխուր բարոյական/պրագմատիկ իրավիճակն է: Գո՞ւցե հենց այդ պատճառով էլ այս դեպքն այսքան անհայտ է:

(9) դեպքը ևս տարբեր է. Չինաստանի կոմունիստական կուսակցությունը ևս թշնամի էր կենտրոնին հենց Կենտրոնում: Շարժման մասին զեկուցումները, թեև որոշակիորեն աղավաղված, չէին պարունակում «ոչ-բռնություն» տերմինը[13]:

Տարբեր է նաև (10) դեպքը՝ վերը նշված հանգամանքների բերումով: Եթե հենց սա էր հետստալինյան ամբողջատիրությանը ներսից վերջ տալու միակ ճանապարհը, ապա ի՞նչ առնչություն ուներ Սառը պատերազմի մեխանիզմը դրա դեմ ուղղված դաշինքների, ենթադրյալ սպառնալիքների, միջուկային զսպման և այլնի հետ: Արդյո՞ք դա ավելի արդյունավետ կլիներ ստալինիզմը դատապարտելու, այնուհետև ներքին ոչ-բռնությունը խթանելու համար: Նույն

հարցադրումը կիրառելի է նաև նացիզմի առնչությամբ: Անկասկած, ներքին քայքայման գործոնների միջև որոշակի հարակցություն կա. դրանցից մեկի դեպքում սպառազինությունների մրցավազքն իր կործանարար ազդեցությունը կունենա տնտեսության վրա: Այնուամենայնիվ, հիմնական դերակատարումն ունեցել է զանգվածային միգրացիայի (ոչ առանց Արևմուտքի օժանդակության), համարձակ ցույցերի[14] ու մարդու իրավունքների համընդհանուր քննարկումներում այլընտրանքների ձևակերպման համադրությունը[15]:

Ավելի կարևոր է պարզել, թե ինչ տեղի կունենա, եթե ոչ-բռնությունը (ունենալով ոչ թե փողի, այլ «լոկ» համարձակության, գիտելիքների, կարեկցանքի ու հաստատակամության կարիք) Կենտրոնի թշնամիների դեմ հանդես գալու փոխարեն շրջվի ընդդեմ կենտրոնի հենց Կենտրոնում: Լեհական «Սոլիդարնոստ»-ի («Համերաշխություն») համար այս խնդիրն այնքան էլ էական չէր, քանզի դրանում ընդգրկված մարդկանց էական մասը ընդհանուր հոսանքով գնացող արհմիության անդամներ կամ կաթոլիկ մտավորականներ էին, և նրանց շատ փոքր մասն էին կազմում հակամետ կանաչներն («բնապահպանները») ու ոչ բռնի մեթոդների ջատագովները («խաղաղականները»): Իսկ Գերմանիայո՞ւմ:

Ոչ-բռնությունը շրջապատված է անորոշություններով, որոնք վաղ թե ուշ պետք է հստակեցվեն: Ավելի՛ն, այդ անորոշություններն առկա են հենց շարժման մեջ, ինչպես նաև կարող են ի հայտ գալ իբրև ձեռքբերված հաջողության հետևանք: Համակերպված լինելով փոքրամասնություն լինելու ճակատագրին՝ ոչ ոք ուշադրություն չի դարձրել որոշակի իմաստով մերժումն իբրև սեփական պուրիտանության հաստատում ընդունելու երևույթին, հանկարծակի գիտակցվել է, որ իրենց ձեռքում են պահում իշխանության սանձերը՝ առանց պայքարելու ուղղորդողի դիրքի համար: Գուցե նրանք չէին հավատում իրենց իսկ իշխանությանը: Իսկ գուցե ոչ-բռնությունն առավել արտահայտչակա՞ն է, քան նպաստող[16]:

Ժամանակ. հասարակական տիեզերաբանության մեջ չարի դեմ պայքարը հաճախ կապվում է ոչ միայն հերոսի/առաջնորդի անվան, այլև որոշակի ժամանակային տիեզերաբանության հետ: Դիմադրությունն ավելի ու ավելի է հառնում ընդդեմ կեղեքման խավարի՝ իր գագաթնակետին հասնելով վերջնական առերեսման կամ ճգնաժամի պայմաններում: Առկա է միայն երկու հնարավորություն՝ արարել կամ ավերել, հաղթանակ կամ պարտություն: Վրա է հասնում աշխարհի վերջը՝ ավանդաբար վճռական ճակատամարտով ավարտվող բռնի դիմադրության ասք/դյուցազներգություն և առաջնորդ, որ հառնում է որպես ազգային հերոս (այլընտրանքը՝ պարտված նահատակ)[17], որն ազնվորեն հետևում է այս գծային, արական հիմնապատմությանը: Եվ վերջում կա մեկը, որն ընդունում է պարտությունը, հետևաբար, և ազդարարում է ավարտը[18]:

Փաստարկն այստեղ հետևյալն է՝ արդյունավետ ոչ-բռնությունը հետևում է առավել պարբերաշրջանային, առավել իգական ժամանակային տիեզերաբանությանը: Ընդդեմ կառուցվածքային բռնության պայքարը և ուղղակի բռնության կիրառման մոլուցքը վերջ չունեն, դրանք մեր մարդկային էության բաղկացուցիչներն են: Կառուցվածքային բռնությունը հեշտությամբ վերարտադրվում է սոցիալական համակարգում՝ իր հերթին ծնելով ուղղակի բռնություն՝ դիմակայելով դրան կամ պաշտպանելով այն. այդ բռնությունը նույնքան հեշտությամբ ծնվում է սոցիալական համակարգի անդամների անհա-

տական համակարգերում: Ինչպես և սերը, ոչ-բռնությունը կարիք ունի մշտական նորացման, թարմացման[19], «հաղթանակը» չպետք է դիտարկել որպես պարգև, այն մեկանգամյա դիպված չէ: Վերջնական հաղթանակ կամ վերջնական պարտություն գոյություն չունեն, ասել է թե՝ վերջ, իբրև այդպիսին, ևս գոյություն չունի: *La lotta continua*, պայքարը (ոչ-բռնությունը) շարունակվում է:

Այս ամենը գրեթե անհնար է դարձնում ոչ-բռնության քարոզումը զանգվածային լրատվամիջոցներով: Ամենևին էլ պարտադիր չէ, որ որևէ առաջնորդ կամ նպատակ ավելի շուտ կառուցվածքային փոփոխություն իրականացնեն, քան պարտության մատնեն որևէ անհատի: Ոչ սկիզբ կա, ոչ էլ, ակնհայտորեն, վերջ: Քարոզչությունը պետք է կենտրոնանա միջանկյալ դրամայի վրա:

Վերանհատ. բռնությունը հիմնականում գործադրվում է մարմնի կողմից՝ որպես ֆիզիկական բռնություն, չնայած, պայքարելու կամքը՝ «ոգին», մեծ նշանակություն ունի: Ոչ-բռնությունը հիմնականում գործադրվում է հոգու կողմից, չնայած, ֆիզիկական տոկունությունը և կոնկրետ ֆիզիկական գործողությունները ևս զգալի դերակատարում ունեն: Բռնությունը հիմնվում է այն ենթադրության վրա, որ այն, ինչ վնաս է պատճառում ինձ, կվնասի նաև քեզ, և ես պատրաստվում եմ օգտագործել այն: Ոչ-բռնության մեջ ևս կարելի է գտնել նույն ենթադրությունը, միայն այն տարբերությամբ, որ վնասը (ինչպես, ասենք, ապրանքների ու ծառայությունների բոյկոտը կամ միգրացիայի միջոցով խաղի կանոնների շրջանցումը) պակաս անդառնալի է:

Ոչ-բռնության դեպքում տեղի ունի նաև այն ենթադրությունը, որ այն, ինչ ուժ է տալիս ինձ, հզորացնում է նաև քեզ: Ոչ-բռնությունը մեղմ ուժի դրսևորում է, այն հաղորդակցության ձև է ուղարկողի և ստացողի միջև: Գործնականում հաղորդակցությունը կարիք ունի անցնելու ոչ-բռնության շղթայի միջով: Հաղորդակցությունը հիմնված է մարդ-էակների շրջանում առկա պարզ գործոնների համեմատական դիսպերսիայի վրա՝ Ուրիշն ազդվում է «Ես»-ի տառապանքներով և ուզում է հեռանալ՝ ոչնչացնելով, օրինակ, այդ տառապանքի պատճառը: Ոչ-բռնությունը դիտարկվում է սոսկ որպես խարդավանքների ամբողջություն, որ կոչված է տհաճություն սերմանելու կեղեքիչների կյանքում. սա իրականում բավական մակերեսային դրսևորում է[20]:

Մենք կարող ենք ընդունել մարդկային պարզագույն գործոնների համեմատական դիսպերսիայի ընդհանրականությունը, ապա միևնույն մշակութային ոճաբանության մեջ դիտարկել առավել մասնավոր օրինակներ: Ասվածը հստակորեն առնչվում է Եվրոպային. բողոքական ոչ-բռնությունը շատ ավելի լուրջ է, ավելի խոսուն ու անհատական, ինչպես Լյութերի «*hier steh' ich, ich kann nicht anders*»-ը (ես կանգնած եմ այստեղ, ես այլ կերպ չեմ կարող): Կաթոլիկ ոչ-բռնությունն ավելի զգացմունքային է, առավել արտահայտիչ և կոլեկտիվ, ինչպես, ասենք, կաթոլիկների երթերը քաղաքներով ու գյուղերով: Վերադառնալով ոճաբանությանը՝ նշենք, որ մյուս եղանակը միանգամայն անարդյունավետ է: Վերանհատական միջինն այլ է՝ այն, ինչն ազդեցիկ է մեկի համար, մյուսի վրա կարող է ընդհանրապես ոչ մի ազդեցություն չգործել:

Վերանհատականը (երբեմն մենք այն Աստված ենք անվանում) մեզ հետ խոսում է տարբեր ձևերով: Էականն այն է, թե արդյո՞ք ոչ-բռնությունն այդ ոճաբանության մաս է կազմում: Հարավասիական բուդդայականության ու

ջայնիզմի դեպքում ոչ-բռնությունը պարտադիր է և ուղղակի դրսևորում ունի: Գրեթե նույնը կարելի է ասել նաև հինդուիզմի մասին, բայց կաստաների *varna* համակարգը կառուցվածքային բռնության դրսևորում է, որն անխուսափելիորեն կասկածի տակ է առնում *ahimsa* ուղերձի անկեղծությունը:

Արևմուտքի աբրահամական երեք կրոններում մենք տեսնում ենք Աստծո սահմռկեցուցիչ երկվությունը. Աստծո, որ անսահման սիրում է ողջ մարդկությանը, բայց խանդով է վերաբերվում այլ աստվածություններին և պատժում է Իրեն չփառաբանողներին: Հիսուս Քրիստոսը նույն հակումներն ուներ: Բռնության արևմտյան հարուստ ավանդույթները կբարձրացնեն բացառիկ, պատժող Աստծուն, ոչ-բռնության շիթերը (ներառյալ այլոց շրջանում քվակերիզմն ու բահա'ի-ն) կձևավորեն ներառող, սիրող Աստծո ավանդույթ՝ ներառելով Տիրոջ տառապանքների նկարագրության մեջ Քրիստոսի վրա գործադրված բռնությունը: Երկվության խնդիրը չի լուծվում անգամ *die zwei Regimenten* եղանակով՝ բռնություն այստեղ՝ երկրի վրա և ոչ-բռնություն՝ այնուհետև: Այստեղ՝ երկրի վրա, մենք պետք է գտնենք հակամարտությունների ոչ բռնի փոխակերպման ուղիներ:

Հեռավոր Արևելքի էկլեկտիկ կրոնական համակարգերը միասնականություն ձևավորելու նպատակով բուդդայականության հետ մեկտեղ կիրառում են դաոիզմը, կոնֆուցիականությունն ու սինտոիզմը: Քանի որ հարավասիական կրոնները ուսումնասիրության կենտրոնում են պահում *ahimsa*-ն, իսկ արևմտյան կրոնները հետևում են երկվության սկզբունքին, բռնություն/ոչ-բռնություն խնդիրը պակաս հստակ է ներկայացված Հեռավոր Արևելքում, բացառությամբ բուդդայական տարրի: Եվ, այնուամենայնիվ, Սան Ցուն տարբերվում է Քլաուսվիտցից, ինչպես դաոիզմն է տարբերվում Արևմուտքում ձևավորված աշխարհապարփակ գեր-կառուցվածքներից: Մյուս կողմից, բանվորների ոչ բռնի գործադուլները ևս գալիս են Արևմուտքից:

Գիտական միտք. մշակույթի առանձնակի բնութագիր է իմացաբանությունը. ինչի՞ց է կազմված գործածական գիտելիքը: Սրանով են իրարից տարբերվում քաղաքակրթությունները: Պատկերացրեք, օրինակ, «օրենքի» գաղափարը թե՛ նկարագրական կարգավորիչ տեսանկյունից, թե՛ որպես նորմատիվ բնույթի հրահանգավորում: Առաջինի նկատմամբ Արևմուտքի մոտեցումը ձևավորվում է բնական գիտությունների ու լաբորատոր գիտափորձերի ազդեցությամբ, երբ կարգավորիչներն ստեղծվում են բացարձակ, անգամ արհեստական պայմանների համար: Խնդրին առնչվող բոլոր պայմանները վերահսկելով՝ X-ի և Y-ի միջև հաստատվում են երկչափ հարաբերություններ՝ օրենքի նախատիպը, ուր X-ը հանդես է գալիս որպես պատճառ/պայման, Y-ը՝ որպես արդյունք/հետևանք:

Հասարակությունն, ընդհանրապես, և ոչ-բռնության բարդությունը, մասնավորապես, ինքնաբերաբար չեն ենթարկվում նման պարզ իմացության: Այստեղ, ինչպես նաև սկզբում նշված բոլոր դեպքերում, մենք գործ ունենք X և Y միանգամայն համալիր ախտանիշների հետ. ի հավելումն դրա, X-ը և Y-ը միաժամանակ միմյանց մաս են կազմում: Իմացաբանական տեսանկյունից *ին/յան* պարբերահաջորդությունը, թերևս, գիտական մտքի ավելի ցայտուն դրսևորում է, քան քարտեզյան գծայնությունը, բայց քանի որ նման ըմբռնումն Արևմուտքում թերզարգացած է, համալիր էությունը թվում է անհամապարփակ, և ոչ-բռնության ու կեղեքման և/կամ շահագործման արհամարհման ավարտի միջև հստակ հարաբերությունը դառնում է անըմբռնելի: Առկա է բա-

վարարվածություն լոկ այն պատճառով, որ ոչ-բռնությունը որոշակի դեր ունեցավ, եթե ոչ բավարար, ապա գոնե անհրաժեշտ. (X,Y)-ը լաբորատոր գիտափորձով ապացուցվելու կարիք չունի:

Ոչ-բռնության դիտարկումը որպես ուժ՝ փոխաբերական իմաստով, այնքան էլ դիպուկ չէ, քանզի այն հիշեցնում է նյուտոնյան (X,Y) տիպի ֆիզիկան: Ուժի ազդեցությամբ մարմինները ձեռք են բերում արագացում, որն ուղիղ համեմատական է այդ ուժին և հակադարձ համեմատական մարմնի զանգվածին՝ իներցիա (բավական հաջող տերմին է ճնշումը բնութագրելու համար), որ բախվում է այլ մարմինների ու իր ուժի մի մասը փոխանցում է նրանց: Բայց ոչ-բռնությունն ավելի հոլիստական է, առավել դիալեկտիկական ու պարբերահաջորդական:

Մշակույթին հատուկ է մտավոր ոճը. ճիշտ այդպես այն առանձնանում է նաև իրավական ոճով[21]: Ոչ-բռնության տեսանկյունից առավել խոստումնալից կարող են թվալ անգլո-սաքսոնյան, ԱՄՆ-Մեծ Բրիտանիա, համընդհանուր օրենքի ավանդույթները, որոնք օրենքը, ի մասնավորի իրավական ձևակերպումները, դիտարկում են ոչ թե որպես անձեռնմխելի, անբեկանելի ճշմարտություն, այլ որպես վարկած, որ ենթակա է փորձնական հաստատման: Եթե չափազանց շատ մարդիկ են խախտում օրենքը, չի կարելի ինքնաբերաբար եզրահանգում անել այն մասին, որ նրանք բարոյապես սխալ են: Հնարավոր է, որ օրենքն է սխալ, անհամարժեք, ժամկետանց և վերանայման կարիք ունի:

Սա ոչ-բռնության կիրառման թաքնված հրավեր է՝ արտահայտված հասարակական անհնազանդության ձևով: Անշուշտ, ոչ-բռնությունն առկա է զանգվածային չմիավորման, ինչպես նաև կառավարվողի համաձայնության հետկանչման եղանակով, որը կառավարչի համար դիտարկվում էր որպես երկարաժամկետ կառավարման նախապայման: Բայց սա ցույց է տալիս առանձին օրենսդրական ու նորմատիվ ակտերի դեմ ուղղված հասարակական անհնազանդություն, որը դրսևորվում է երկու, բացառապես տարբեր ձևերով՝ կամ որպես զանգվածային, կոլեկտիվ *satyâgraha*, կամ իբրև անհատական *satyâgrahi*՝ մարդկանց կողմից կոլեկտիվ հույզերը սեփական ներաշխարհում տարադարձելով:

Երկու դեպքում էլ առկա է թաքնված նախապայմանը՝ ոչ-բռնությունը օրենքին ենթակայեցման տեսանկյունից ընդհանուր խափանման արտահայտություն չէ: Ավելին, պետք է առկա լինի հետևանքները (պատիժը) կրելու պատրաստակամությունը՝ ցույց տալու համար, որ այս ամենն ավելի քան լուրջ է, ինչպես նաև սկզբնավորելու համար օրենսդիրների մտադրությունների փոփոխման հեռահար նպատակին ծառայող շարժման գործընթացները:

Օրենսդրական այլ ավանդույթների դեպքում (հռոմեական, գերմանական, ճապոնական) օրենքները կամ իրավաբանական ձևակերպումները կարող են հարատևել անվերջ, բայց դրանք կարող են մեկնաբանվել, կարող են լինել նաև իրավաբանական պրակտիկայի ներքին միտումներ, որոնք միանգամայն տարբերվում են իրավաբանության տեսությունից: Համընդհանուր օրենքի ավանդույթի առավելությունն այն է, որ առկա դժգոհությունները կարող են բավարարվել իրավական ձևակերպումների փոփոխման ճանապարհով: Սա նշանակում է հաղթանակ, արշավի ավարտի ազդանշան, գուցե նաև այլ անցում այլ խնդիրների:

5.4 Ամփոփում. Ի՞նչ կարող ենք անել

Վերոհիշյալ տեսությունը կանխատեսում է Գանդիի գաղափարների հաղթանակը. բարձր կարգավիճակ՝ քարիզմատիկ առաջնորդ մի մշակույթում, որի տարրերից մեկը *ahimsa*-ն է՝ ձևավորված ընդհանրական օրենքի ավանդույթներով: Գանդիի դեմ հանդես էր գալիս հենց իր՝ Արևմուտքի համար այնքան հարազատ Գանդիի պայքարի առարկան՝ բրիտանական իմպերիալիզմը: Նա պետք է վճարեր դրա համար. նա վճարեց Խաղաղության Նոբելյան մրցանակով[22]: Այդ տեսությունը կանխատեսում էր նաև Մարթին Լյութեր Քինգ կրտսերի հաջողությունը նույն պատճառով. սակայն այս դեպքում Նոբելյան կոմիտեն իր «բարձրության» վրա գտնվեց:

Այս օրինակից բխում է երկու հիմնական հետևություն: Նախ՝ մենք պետք է ձևավորենք ընդհանրապես բռնության և, մասնավորապես, պատերազմի հետևանքների այնպիսի տեսություն, որը շատ ավելի համապարփակ է, քան հաղթանակ/պարտություն երկընտրանքը, զոհերի, վիրավորների ու անհայտ կորածների վիճակագրությունն ու հասցված նյութական վնասների հաշվարկը: Ընթացիկ իրավիճակի, պատերազմից ծվատված հասարակության պատկերները կդառնան առավել խորն ու ամբողջական, եթե մենք ավելացնենք նաև պատերազմի հետևանքով խեղված մարդկային ճակատագրերն ու աշխարհները: Մարդկային ջանքերի շնորհիվ կարող են կատարելագործվել թե՛ տեսությունը, թե՛ փորձառությունը: Ոչ-բռնության առավել գիտափորձնական ուսումնասիրություններն ավելի կարևոր են՝ վերջիններիս թույլ տեղերն ու անճշտությունները բացահայտելու տեսանկյունից, իսկ առավել կառուցողական հետազոտություններն անհրաժեշտ են անցյալում և հնարավոր ապագայում ոչ-բռնության արդյունավետության գնահատման իմաստով: Նմանօրինակ հետազոտություններում խորը մշակույթի բոլոր գործոնները կարող են ուղղվել դրական ուղղությամբ՝ դրանք հրապարակային դարձնելով և մարդկանց ընդհանրապես (մասնավորապես, լրագրողներին) ստիպելով ըմբռնել իրենց կարևորությունը մեր տանջահար դարում ոչ-բռնության արմատավորման գործում:

Ծանոթագրություններ

---

[1] Այս մասի հիմքում ընկած է իմ *The Way is the Goal: Gandhi Today,* Ahmedabad, Gujarat Vidyapith, 1992 *The Way is the Goal: Gandhi Today,* Ahmedabad, Gujarat Vidyapith, 1992 աշխատությունը: Խնդրի մանրամասներն ընթերցողը կարող է գտնել այդ գրքում, մասնավորապես Chapter 3.4, *"How nonviolence works: some hypotheses"*, pp. 130-135:

[2] Տե՛ս, օրինակ, իմ *Nonviolence and Israel/Palestine,* Honolulu, University of Hawai'i Institute for Peace, 1989 աշխատությունը, մասնավորապես, Chapter 2, *"Principles of nonviolent action: The Great Chain of Nonviolence Hypothesis",* pp. 13-34, ինչպես նաև *"Eastern Europe Fall 1989-What Happened, And Why? A Theory sketch",* in *Research in Social Movements, Conflicts and Change,* Greenwich, CT, JAI Press, 1992, pp. 75-97:

[3] Սա ներառում է նաև Պակիստանի անկախությունը, թեև մասնատումը բացարձակապես չէր համապատասխանում Գանդիի ցանկություններին:

[4] Ահավասիկ, տասը դեպքերի բարդությունների հպանցիկ մեկնաբանությունները.

1. Բրիտանիան արդեն թուլացել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ու դեռևս գաղութատիրությունից կառչած մաքառող ինքնակալության ներքին հակասությունների հետևանքով: Գանդիի գործողություններն ավելի սրեցին այդ հակասությունները:
2. Ազատ արձակվելով՝ շատ հրեաներ աշխատանքի վերադարձան և կրկնակի ձերբակալվեցին, այնպես որ ոչ բռնի գործողությունները շատ ավելի ծանր ու սպանիչ էին թվում: Ոմանք կարողացան ծպտվել: Ոչ-բռնությունը միանգամյա գործողություն չէ:
3. ԱՄՆ-ում պաշտոնական խտրականությանը վերջ տրվեց, թեև ոչ պաշտոնական խտրականությունը շարունակվում էր. սա դարձյալ վկայում է այն մասին, որ ոչ-բռնությունը գործընթաց է և ոչ գործողություն:
4. Թեև վիետնամցիները ընդհանուր առմամբ հաղթեցին բռնի պատերազմում, այնուամենայնիվ, ոչ-բռնությունը, հնարավոր է, թուլացրեց Միացյալ Նահանգների վճռականությունը:
5. Ըստ էության առաջնորդի բացակայության պայմաններում խաղաղության մրցանակը հանձնվեց առաջնորդին փոխարինող ակնառու տղամարդուն (Ալֆոնսո դը Էսքուվել):
6. Ֆիլիպիններում, հավանաբար, իրապես ավելի շատ միջին խավը ճնշվեց և ոչ թե ինքը՝ շարժումը, ուստի այն պետք է շարունակվեր:
7. Այս հարավ-աֆրիկյան դեպքին կարելի է հավելել տնտեսական սահմանափակումների ազդեցությունը, զրկանքներն ու Զիմբաբվեի դրական փորձը:
8. Ինթիֆադայի շարժման «զորանոցը» ներառում է նաև քարեր նետելը. այստեղ կարող է գործել այն փաստարկը, որ տարածաշրջանում ընդունված չափորոշիչների տեսակետից սա ոչ-բռնության դրսևորում է:
9. Հիմնական բռնությունը կիրառվեց չինական կառավարության զինված ուժերի կողմից, բայց, հավանաբար, ավելի շատ բանվորական արհմիությունների, քան ուսանողների ժողովրդավարական շարժման դեմ:
10. Այն փաստը, որ Ռումինիայում բռնություն էր կիրառվել, դեռ չի նշանակում, որ Լեհաստանում ու ԳԴՀ-ում իրականացված գործողությունները պակաս ոչ բռնի էին: Հունգարիայում փոխակերպումը պայմանական, դանդաղ քաղաքական փոփոխություն էր: Փոխակերպումը Չեխոսլովակիայում ու Բուլղարիայում (չխոսենք Խորհրդային Միության մասին) կարելի է դիտարկել որպես ԳԴՀ-ի ու Լեհաստանի դեպքերի «դոմինոյի էֆեկտ»: ԳԴՀ-ում զանգվածային միգրացիան դիտարկվում էր որպես հիմնական ոչ բռնի մարտավարություն: Այս շարքում կարելի է նշել նաև Մոսկվայում 1991 թվականի օգոստոսին ձեռնարկված հակաքայլը, սակայն որոշակի վերապահումներով. ոչ այն պատճառով, որ Ելցինի ձեռնարկած հակաքայլը ոչ բռնի չէր, այլ այն պատճառով, որ քայլն ինքնին, հավանաբար, չէր էլ կարող բռնի լինել, ամեն ինչ ձևական էր (այսինքն՝ այն Գորբաչովից ազատվելու տարբերակ էր, որն այդ պահին արդեն քանդել էր Խորհրդային կայսրությունը, բայց անձնատուր չէր եղել արևմտյան չափանիշներին): Քայլը դիլետանտական էր ու անվստահ:

[5] Որքան ավելի խորն են նվիրվածության արմատները հիմնական արժեքներում (աշխարհիկ, թե կրոնական), այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ ոչ բռնի գործողությունները կդրդեն բռնության կիրառման, կամ կփոխվեն բռնի գործողությունների լոկ այն պատճառով, որ «ոչ-բռնությունը չի աշխատում»՝ դիտարկելով ոչ-բռնությունը որպես հնարավոր բազմաթիվ մարտավարություններից մեկը: Ավելի հավանական է (և սա շատ ավելի կարևոր է), որ Ուրիշը կմտածի, թե մարտավարության հիմքում ընկած է նվիրվածությունը, այլ խոսքով՝ թե խումբը երբեք չի հանձնվի:

[6] Galtung, *Nonviolence and Israel-Palestine,* Ch. 2, "The Great Chain of Nonviolence Hypothesis", pp. 13-34.

[7] Պատկերացրեք եռաչափ հասարակություն (օրինակ՝ սեռը, ռասան, խավը)՝ հստակ սահմանված ենթականերով (U) ու իշխողներով (T): Կեղեքիչներն ունեն հստակ ուրվագիծ՝ TTT, իսկ ճնշվածները՝ UUU: Այնուհետև պատկերացրեք, որ երեք բաղկացուցիչների միջև հաղորդակցություն հաստատելն անհնար է, երկուսի միջև՝ շատ թույլ է, բայց բավականին արդյունավետ է այն դեպքում, երբ կողմերն իրարից տարբերվում են միայն մեկ սոցիալական բնութագրիչով: Ունենալով այդ վարկածը, կարելի է հեշտությամբ ուրվագծել հիշյալ սոցիալական խմբերի միջև առկա վեց շղթաները.



Գործնականում կարող են հաշվի առնվել հավելյալ գործոնների բոլոր հնարավոր տարբերակները, ինչպես, ասենք, նյութական կախվածությունը (ինչպես միջնորդները Բեռլինի դեպքում, երբ գերմանացի կանայք ամուսնանում էին գերմանաբնակ հրեաների հետ) կամ գաղափարախոսությունը (ինչպես Հնդկաստանի դեպքում, երբ Գանդիի մոտիկ ընկերները Մեծ Բրիտանիայում սպիտակամորթ էին և պատկանում էին միջին ու բարձր խավերին):

[8] Դասական օրինակը (խորհրդանշական պատկերումն անգամ բավական է, որ լրատվամիջոցները որսան այն) ոստիկանների/զինվորների հրազենի փողաբերանին ծաղիկներ «տնկելն» է (և ոչ թե, ասենք, ֆրանսիական ուսանողների ելույթները 1968թ. մայիսին, երբ նրանք քարեր էին նետում՝ գոռում-գոչյուններով արտահայտելով իրենց ատելությունը):

[9] Որպես օրինակ կարելի է դիտարկել քրդերին: Նրանց նպատակներն օրինական են՝ առկա է հարգանքը ոչ միայն նրանց՝ մարդու իրավունքների և ինքնավարության իրավունքի հանդեպ, այն երկրներում, որտեղ նրանք հայտնվել են առավել հզոր ուժերի (ինչպես, ասենք, պարսկական կամ Օսմանյան կայսրությունները) կողմից սահմանազատման հետևանքով, այլ նաև *Քուրդիստանի* հանդեպ: Բայց նրանց (մասնավորապես, Թուրքիայի քրդերի) կողմից բռնության կիրառումը հնարավորություն է տալիս իրենց կեղեքիչներին մարդկանց հեշտությամբ համախմբել նրանց դեմ, և ներքևից դեպի վեր խաղաղ Քուրդիստանի կառուցման փոխարեն նրանց ներքաշում է վրիժառության արատավոր պարբերաշրջանների մեջ:

[10] Այսպիսով, «անվերապահ կապիտուլյացիան» կարող է հանգեցնել ընդունելի արդյունքի, եթե պարտվող կողմն իր պարտությունը մեկնաբանի ոչ միայն որպես հակառակորդի ռազմական գերակշռության արդյունք, այլ նաև որպես բարոյական ստորակարգության նշան, իբրև, օրինակ, Աստծո նախախնամություն: Աշխարհիկ դարաշրջաններում/քաղաքակրթություններում դա այնքան էլ հավանական չէ:

[11] Մարդկային էության դրական մեկնաբանության լավ օրինակ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ֆինանսավորվող հասարակական ու բնական գիտություններով զբաղվող մի շարք գիտնականների հայտարարությունն այն մասին, որ բռնությունը մարդկային էության բնածին բաղկացուցիչ մասը չէ: Անշուշտ, ռազմական վերլուծաբանները հակված են բացասական մեկնաբանություններ տալու:

[12] Երևույթը լավագույնս է բացատրում քաղաքական կամ կրոնական շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկարագրող շվեդական արտա-

հայտությունը. *samvetsomma* կոչում են, մասնավորապես, նրանցից առավել նրբանկատներին:

[13] Հասկանալու համար, թե ինչու է այս հեղինակը հավակնում առավել կոնկրետ տարբերակի ընտրության, որը հիմնված է Պեկինում ուսումնառության վրա, տե՛ս՝ *"What Happened in Beijing on June 3-4, 1989: What Happens Now?"*, in Galtung, J. and Vincent, R., *Global Glasnost'*, Cresskill, NJ, Hampton Press, 1992, էջ 240-44.

[14] Հիմնական միջոցառումը Լայպցիգի Նիկոլայի տաճարում 1989թ. հոկտեմբերի 9-ին, երկուշաբթյա ժամերգությունից հետո սկիզբ առած ցույցն էր մոմեր բռնած կանանց լայնորեն ձգվող շարասյուներով: «Օրվա ամենամեծ ցույցը տեղի ունեցավ Լայպցիգում, որին մասնակցեց 75,000 մարդ՝ չնայած «անհրաժեշտության դեպքում բոլոր հնարավոր միջոցներով բոլոր ելույթները ճնշելու» կուսակցության սպառնալիքներին: Ոստիկանությունը կրակ բացելու հրաման էր ստացել: Ամեն ինչ խաղաղ անցավ այն երկուշաբթի երեկոյան» (տե՛ս՝ Dirk Philipsen, *We Were the People, Voices From East Germany's Revolutionary Autumn of 1989,* Durham, NC, Duke University Press, 1993, pp. 394-395): Այս ոչ բռնի ցույցերին մասնակցեցին. հոկտեմբերի 2-ին՝ 20,000 մարդ, հոկտեմբերի 9-ին՝ 75,000 մարդ, հոկտեմբերի 16-ին՝ 150,000 և հոկտեմբերի 23-ին՝ 300,000 մարդ: Անշուշտ, Արևմուտքում տեղի են ունեցել ավելի բազմամարդ ցույցեր, բայց խնդիրն այս դեպքում ցույցի բազմամարդության, ցուցարարների աչքի ընկնող դիրքի ու ռիսկի գործոնի համադրությունն է:

[14] «Շպիգել» ամսագրում (# 49/1994, էջ 69-73) հրապարակված պատմաբան Վալտեր Շյուսի ուսումնասիրության համաձայն, ոչ-բռնությունն աշխատում է հենց այնպես, ինչպես և պետք էր ենթադրել, այսինքն՝ բարոյալքելով կեղեքիչներին ու շարքային ճգնաժամերի միջոցով նրանց լարելով իրենց իսկ վերադասների դեմ: Նման մի բան արդեն գրանցվել է ԳԴՀ-ի հետ Մոսկվայի հարաբերություններում նոյեմբերի 7-8-ին, մինչև Պատի քանդելը. տե՛ս՝ *Der Spiegel* no. 44/1994, pp. 43-46.

[15] Գործիքային մեթոդը ոչ-բռնությունը դիտարկում է որպես վերոհիշյալ երեք նպատակներին հասնելու ճանապարհ՝ սեփական «ես»-ի և Ուրիշի, ինչպես նաև այդ երկուսի միջև հարաբերությունների կատարելագործում: Արտահայտչական մեթոդը պետք է կենտրոնանա ունայնության ու կործանումի արտահայտման, գուցե նաև «ես»-ի կատարելագործման, բայց ավելի քիչ՝ մնացած երկուսի վրա:

[16] Սերբերի թագավոր Միլոշը, 1389թ. հունիսի 28-ին տեղի ունեցած Կոսովոյի ճակատամարտից հետո, լավագույն օրինակն է, որ ուղղակիորեն կապված է Հարավսլավիայի ընթացիկ իրավիճակի հետ:

[17] Միևնույն հիմնական ոճի այլ օրինակներ են ընտրություններն ու սպորտային մրցումները. երկու դեպքում էլ մրցումների թվաբանությունն ընդունվում է որպես վճռորոշ: Բնակչությանը մեկ անգամ ահաբեկելը դեռևս բավարար չէ նրան հնազանդ պահելու համար:

[18] Ճնշող վարչակարգերն իրականում նույնը կասեին՝ բնակչությանը մեկ անգամ ահաբեկելը դեռևս բավարար չէ նրան հնազանդ պահելու համար, մարդիկ կարող են շարունակել գաղափարներ հղանալ: Ահաբեկչությունը պետք է համալրվի, անոթը պետք է ծակ լինի. ինչպես սերը, ամուսնությունն ու ոչ-բռնությունը:

[19] Սա ոչ բռնի հանրության, ոչ-բռնության կիրառական (տե՛ս՝ Gene Sharp, *The Politics of Nonviolence,* Boston, Porter & Sargent, 1973) և բարոյահոգեբանական (ներկայացված ոչ միայն մտքերով, այլ նաև սրտերով հանդիպելու, «պարապ հոգիները բորբոքելու» գանդիական ավանդույթներով) հայտանիշների միջև առկա հիմնական հակասությունն է: Իմ անձնական տեսակետը, ինչպես միշտ, էկլեկտիկ է, երկուսն էլ /և՛, և՛ մոտեցումն է:

[20] Բացատրությունը տե՛ս՝ Johan Galtung, *Human Rights in Another Key,* Cambridge, Polity Press, 1994, Chapter 2.2, "Is the legal tradition culture-blind?", էջ 40-49:

[21] 1954թ. ես հարցազրույց եմ վարել պրոֆեսոր Յակոբ Վորմ-Մյուլլերի հետ, որը Նոբելյան կոմիտեի խորհրդականն էր: Բացի թերահավատ լինելուց բոլոր նրանց նկատմամբ, ովքեր, իրենց հերթին, թերահավատ էին Բրիտանական կայսրության առնչությամբ, նա նաև մեղադրում էր Գանդիին բռնությունը երկչոտությունից գերադասելու և զինվորներին իրենց գործով զբաղվելու (բայց առավել գերադասելիորեն՝ կամավոր զինվորական ծառայության չանցնելու) հորդորներում հետևողական չլինելու մեջ:

[22] Ոչ-բռնության քաղաքագիտության պաշտպանությունը տե՛ս՝ Glenn D. Paige, *To Nonviolent Political Science, From Seasons of Violence,* Honolulu, University of Hawai'i, Matsunaga Institute for Peace, 1993.

ՄԱՍ III

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1
Զարգացման տեսության և պրակտիկայի տասնհինգ դրույթները

Հանդիսանալով թեժ բանավեճերի առարկա՝ գիտության այս զուտ տեսական ուղղությունն անվանվել է «զարգացման ուսումնասիրություններ», իսկ դրա գործնական կիրառման ոլորտը՝ «զարգացման պրակտիկա»[1]: Տեսական ոլորտն ականապատված է ինտելեկտուալ ռումբերով, իսկ կիրառական դաշտում առկա են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հակապետական ահաբեկչությունն ու պատժամիջոցների կիրառման պետական համակարգը: Ինչու՞, որովհետև մենք նախ և առաջ մտահոգված ենք ուժեղ և հարուստ պետությունների կառուցման, ուժեղ ու հարուստ վերնախավերի ձևավորման, ինչպես նաև ուժեղ մարդկանց (եթե ոչ հարուստ, ապա գոնե իր հիմնարար կարիքները բավարարող) հասարակության կերտման խնդիրներով:

Որքան ավելի պարզ կլիներ ամեն ինչ, եթե այս երեք նպատակները լինեին ոչ միայն համատեղելի, այլ նաև իրականացվեին քաղաքականության միևնույն միջոցառումներով. եթե ժամանակակից օդանավակայանի կառուցումը, վերնախավի համար հարկերի էական նվազեցումներն ու, ասենք, հասարակության լայն խավերի համար անվճար բուժօգնության ու կրթության կազմակերպումն ուղղված լինեին միևնույն նպատակին: Իրականում վերնախավը՝ ներառյալ միջին խավը[2], կարող է հետամուտ լինել բացառապես սեփական հարստացմանը, ժողովուրդը կարող է համարել, որ վերնախավը խոչընդոտում է սեփական կեցության բարելավմանն ուղղված իր քայլերին, իսկ օդանավակայանը կարող է օգտագործվել նրանցից յուրաքանչյուրի կողմից մյուսին ռմբահարելու նպատակով[3]:

Սրանք արդի աշխարհի համար միանգամայն իրական հիմնահարցեր են: Սակայն, զարգացման և խաղաղության ուսումնասիրությունների մասնակի համընկնումը շատ ավելի խորն է, քան ցույց է տալիս վերոհիշյալ օրինակը: Առավել նեղ սահմանմամբ խաղաղության ուսումնասիրություններն ունեն բացասական սևեռվածություն. ուղղակի բռնության թուլացում=տառապանքների նվազեցում, հիմնական կարիքներն այստեղ հաշվի չեն առնվում: Զարգացման ուսումնասիրություններն ավելի առաջ են անցնում՝ դիտարկելով ոչ միայն առկա կարիքների բավարարման, այլ նաև այդ կարիքների հետագա զարգացման հիմնահարցերը: Այստեղ կրկին միջամտում են խաղաղության ուսումնասիրությունները՝ կենտրոնանալով կառուցվածքային ու մշակութային բռնությունների թուլացման խնդիրների շուրջ[4]: Զարգացման ուսումնասիրությունների համար համահունչ է հաջորդիվ ներկայացվող տասնհինգ դրույթների հիմնական էությունը, որն ավելի հանգամանալից քննարկված է երկրորդ ու երրորդ գլուխներում և առավել կառուցողական կերպով՝ չորրորդ

ու հինգերորդ գլուխներում: Ինչպես կփորձենք ներկայացնել, *գոյություն ունեն այլընտրանքներ*:

Դրույթ 1. Զարգացման առաջին սահմանումը

Զարգացումը մշակույթի ձերբազատումն է, մշակութային կոդի կամ տիեզերաբանության իրացումը:

Աշխարհում կան բազմաթիվ մշակույթներ, անգամ՝ քաղաքակրթություններ կամ մակրոմշակույթներ, որոնք ընդգրկում են ժամանակի ու տարածության լայնարձակ հորիզոններ: Հետևաբար, որպես այսօրինակ սահմանման հետևանք, ճիշտ է այն եզրահանգումը, որ կան նաև բազմաթիվ զարգացումներ: Իր հերթին, ճիշտ է նաև այն պնդումը, որ եթե մի քաղաքակրթությունը մյուսին պարտադրում է զարգացման իր սահմանումը, ապա մենք ուղղակիորեն գործ ունենք մշակութային բռնության դրսևորման հետ, երբ օտար մշակութային կոդը պատվաստվում է մեկ այլ ժողովրդի մշակույթին՝ ընդսմին լեգիտիմացնելով հնարավոր ոչ լեգիտիմը, և ընդհակառակը: Լավագույն դեպքում ասվածը մարդկանց շրջանում կարող է շփոթ առաջացնել, վատագույն դեպքում՝ հանգեցնել մշակութային եղեռնի՝ սեփական մշակույթի բնաջնջման, այսինքն՝ համընդհանուր խելացնորության, հավանական է նաև անհատական կամ կոլեկտիվ ինքնասպանության[5]: Պատճառներից մեկն այն համոզմունքն է, որ տնտեսագիտությունը մշակութազերծ[6] է, ուստի և չեզոք:

«Ձերբազատում» բառը պարզորոշ արտացոլվում է գերմաներեն *Entwicklung* (զարգացում) (կամ նորվեգերեն *utvikling)* և անգլերեն *develop* բառերում, եթե վերջիններս մեկնաբանվում են որպես *envelop* (փաթաթել, պատել) բառի հականիշ: Թե որ դեպքերում է ասվածը ճշմարիտ, կարող ենք պարզել «ծաղիկ» փոխաբերության դիտարկման միջոցով: Ձերբազատումը նախածրագրված է ծաղկի սերմերում, ինչպես գենետիկ կոդը՝ ծաղկի, և մշակութային կոդը կամ տիեզերաբանությունը՝ քաղաքակրթության մեջ[7]: Կա ծրագիր, որը պետք է իրականացվի. ոչ ծաղիկը և ոչ էլ քաղաքակրթությունը չունեն ընտրության իրական ազատություն: Բավական է ծրագիրն իրականացվի, և ծաղիկը փթթում է, հետո սկսում է թառամել և, ի վերջո, մահանալով կվերանա, եթե սերմերը նորից չցանվեն: Նույնը ճշմարիտ կլինի քաղաքակրթությունների համար, եթե վերջիններս չսովորեն ցանել սեփական սերմերը, ամրապնդել սեփական կոդը կամ ընդունել բաց կոդ: Թե ինչպե՞ս դա անել, կքննարկենք հաջորդ դրույթներում:

Դրույթ 2. Զարգացման երկրորդ սահմանումը

Զարգացումը մարդու և անմարդ բնության կարիքների առաջանցիկ բավարարումն է՝ սկսած ամենակարիքավորներից:

Մարդ էակը կարիքներ ունի: Եթե դրանք չեն բավարարվում կամ անտեսվում են, նա դադարում է մարդ էակ լինելուց. նյութական/մարմնական կարիքները չբավարարելու դեպքում դադարում է էակ (կյանքի կրող) լինելուց, իսկ ոչ նյութական/հոգևոր կարիքների դեպքում՝ մարդ լինելուց: Մարմնական կարիքները կարող ենք նույնացնել մարդու մարմնի ֆիզիոլոգիական գործառույթ-

ների հետ՝ ներառյալ մարդու մաշկը[8]: Ասվածն արտացոլված է աղյուսակ 1.1.-ում:

Աղյուսակ 1.1. Մարդկային կարիքներն ու դրանք բավարարող գործոնները

Մարդկային հիմնական կարիքները	Բավարարող պայմանները
Մարդկային մարմնի ամբողջականություն	Հակավնասվածքային պաշտպանություն
(Մաքուր) օդի, ջրի և սննդի ապահովում	Մաքուր օդ, ջուր և կերակուր
(Դուրեկան) տեսողական, լսողական ու հոտառական ազդակների ստացում	Դուրեկան միջավայր
Օրգանիզմի գործունեության արդյունքների արտանետում, արտաթորում	Արտաքնոց և այլն
Ջերմաստիճանի, խոնավության, քամու վերահսկում	Հագուստ, ծածկ
Քուն և հանգիստ	Անդորր
Շարժում	Տարածություն
Սեքս	Ինտիմ կյանք, առանձնություն
Վերարտադրություն	Վերը նշված բոլոր կետերը

Կարիքների բավարարման հնարավորությունների կորուստը (զրկանքը) հենց տառապանքն է. ընդ որում այն կարող է լինել ավելի ինտենսիվ (երբ մարդն ամբողջովին զրկված է մեկ կարիք բավարարելու հնարավորությունից) և էքստենսիվ (մի քանի կարիքի դեպքում): Այս ամենին քաջածանոթ են մարդ էակների նկատմամբ պատիժ իրականացնողները: Բանտը զրկում է մարդուն վերջին երեք կարիքների բավարարման հնարավորությունից: Համակենտրոնացման ճամբարը կամ խստացված ռեժիմի բանտախուցը զրկում է մարդուն նաև առաջին հինգ կարիքների բավարարման հնարավորությունից, իսկ կտտանքները մարդուն առավելագույն, հաճախ ոչ մահացու, վնասվածքներ են հասցնում (հիմնականում՝ առանց ֆիզիկական հետքեր թողնելու): Մարդկային չքավորությունը պարունակում է բոլոր երեքը (բանտ, համակենտրոնացման ճամբար, կտտանքներ) բնորոշող տարրեր: Դա նշանակում է, որ զարգացում ապահովելու համար առնվազն հարկավոր է վերացնել չքավորությունը, ինչպես խաղաղության հասնելու համար հարկ է նախ պատերազմին վերջ տալ[9]:

Ամբողջ բնությունը կարիքներ ունի: Բույսերին բնորոշ են վերոնշյալ ցանկի առաջին հինգ կարիքները, իսկ կենդանիներին՝ նաև հաջորդ չորսը: Վերարտադրության պահանջը օնտոգենետիկ[i] (անհատական) է, ի տարբերություն տեսակների սերունդ ունենալու պահանջի, որը ֆիլոգենետիկ[ii] է: Հանդիսանալով արտարկում՝ տեսակներն իրականում անկարող են կարիքների անբավարարվածություն զգալ: Այսպիսով, կարիքների հայեցակարգը ներառում է *զգացական կյանքի* բոլոր հնարավոր ոլորտները. բուդդայական սահմանման համաձայն՝ բոլոր այն էակներին, ովքեր ի վիճակի են կրել տառապանք՝ *dukkha,* կամ կյանքի բարելավում՝ *sukha*[10]:

---

[i] օնտոգենեզ - անհատի, առանձին օրգանիզմի զարգացումը /թարգ./

[ii] ֆիլոգենեզ - տվյալ տեսակի զարգացումը էվոլյուցիայի ընթացքում /թարգ./

Այժմ կարող ենք սահմանել զրկանքների հայեցակարգի առանցքային դրույթներից մեկը: Ինչպես արդեն նշեցինք, զրկանքների բոլոր մակարդակներում առկա է *տառապանքի* տարրը: Տառապանքի ծայրահեղ դրսևորումը մահն է, անհատի «կյանքի *մարումը»/վախճանը*, մարմնական վնասվածքների (ուղղակի բռնություն) կամ կարիքները բավարարող պայմանների բացակայության (կառուցվածքային բռնություն) հետևանքով: Բայց մինչ անհատի «կյանքի մարմանը»/*վախճանին* անդրադառնալը, զարգացման տեսության մեջ ու պրակտիկայում հանդես է գալիս մեկ այլ առանցքային հասկացություն՝ *շահագործումը*: Վերջինս այստեղ սահմանվում է իբրև կյանքի օգտագործում՝ վերարտադրության հնարավորություններից ավելին: Թե ի՞նչ է սա նշանակում մարդ էակի համար՝ քիչ թե շատ պարզ է: Վերարտադրությունն ամեն առավոտ, քնից արթնանալուց, արտաթորումից ու նախաճաշից հետո նորից ծնվելն է՝ թարմ ու կայտառ, նոր օր սկսելու պատրաստակամությամբ: Վերարտադրված չլինել նշանակում է ամեն առավոտ նոր օր սկսելու համար ավելի պակաս պատրաստակամ լինել, քան նախորդ առավոտյան՝ վարընթաց շարունակականություն, որ վաղ թե ուշ կավարտվի մահով: Եթե այն տեղի է ունենում բոլոր անհատների համար, նշանակում է տեսակը վտանգված է, և առկա է ոչնչացման սպառնալիքը: «Վերարտադրելիությունը» բնորոշող մեկ այլ տերմին է «նեցուկ լինելը», սակայն այն պակաս խթանիչ իմաստ ունի, քանզի քողարկում է սեփական ուժերով վերարտադրության մեխանիզմը՝ առավելապես ենթադրելով ապավինում արտաքին աջակցությանը: Որպես տերմին «վերականգնելիությունն» ավելի ընդունելի է, բայց այն հիմնականում կիրառելի է անշունչ առարկաների նկատմամբ[11]:

Եթե զարգացումը մարդու և անմարդ բնության կարիքների առաջանցիկ բավարարումն է, ապա շրջակա միջավայրի քայքայման հիմնահարցը դառնում է օրախնդիր: Այս առումով հստակ են դառնում երեք հիմնական դիրքորոշումներ՝ *մարդակենտրոն* զարգացում (երբ մարդու կարիքներին տրվում է գերակայություն անմարդ բնության կարիքների նկատմամբ), *բնակենտրոն* զարգացում (որի պարագայում բնության կարիքների բավարարմանը տրվում է գերակայություն մարդու կարիքների նկատմամբ) և *մարդ-բնություն հավասարակշռված* զարգացում (երբ այդ երկուսի կարիքների բավարարման որոշակի փոխզիջումային տարբերակ է ընտրվում): Բավականաչափ հայտնի այս բանավեճին հեշտ է հարևանցիորեն մոտենալ, թեև այն իրավամբ խորհելու տեղիք է տալիս: Առանց օդի մարդը կարող է գոյատևել մեկ-երկու րոպե, առանց ջրի՝ մոտ մեկ շաբաթ, իսկ առանց սննդի՝ առավելագույնը մեկ ամիս, մինչդեռ բնությունն առանց մարդու կարող է անվերջ գոյատևել: Գիտակցելով այս պարզ ճշմարտությունը՝ մարդակենտրոն զարգացման տեսության կողմնակիցներն այսօր շատ ավելի հաճախ են ընդունում շրջակա միջավայրի պաշտպանության «լուսավոր» դիրքորոշումը: Նրանք միաժամանակ գանգատվում են, որ բնությունը «զարգացման սահմանափակումներ» է դնում, սակայն նաև ակտիվորեն քննարկում են, թե ինչպես կարելի է ապահովել վերջինիս «հարատևումը»: Բնությունն այնժամ ընկալվում է որպես *für mich*, և ոչ թե *an sich*: Նման շեշտադրումը կրկին վկայում է բնության նկատմամբ առկա այն վերաբերմունքը, որ շատ նման է ժողովրդի հանդեպ առանձին վերնախավերի վերաբերմունքին. «նրանք գոյություն ունեն հանուն մեզ, հետևաբար՝ մեր վերարտադրության համար»[12]:

Ֆիզիկական կարիքները բաժանվում են երկու խմբի՝ գոյատևման կարիքներ և նվազագույն բարեկեցության կարիքներ: Դրա հետ մեկտեղ մարդն

ունի նաև հոգևոր կարիքներ, որոնք նույնպես կարող են բաժանվել երկու խմբի. *ինքնության* (այն, ինչ առանձնացնում է մարդուն բնության, անձնական, սոցիալական, համաշխարհային և մշակութային հարթություններում՝ իմաստ հաղորդելով կյանքին) և *ազատության* (մասամբ կարելի է սահմանել որպես համաշխարհային և սոցիալական հարթություններում, ինչպես նաև սեփական «Ես»-ի հարթությունում շարժվելու կարողություն՝ ընտրության հնարավորությամբ): Արդյո՞ք այս կարիքները բնորոշ են նաև կենդանիներին ու բույսերին: Ո՞վ գիտե…

Դրույթ 3. Զարգացման երրորդ սահմանումը

Զարգացումը տնտեսական աճն է, բայց ոչ ինչ-որ մեկի հաշվին:

Այս սահմանումը մեզ ընդհուպ մոտեցնում է զարգացման՝ գոյություն ունեցող ամենատարածված ընկալմանը, սակայն մի կարևոր ու խնդրահարույց վերապահումով, որն առաջադրում է «բայց» շաղկապը: Ծախքերը քաջ հայտնի են: Դրանք ի հայտ են գալիս բնության հարթությունում՝ ասենք, բնական պաշարների սպառման (կենդանի ու անկենդան բնության ոչնչացման) կամ շրջակա միջավայրի աղտոտման տեսքով, մարդկային հարթությունում՝ մարդկային կարիքների (վերարտադրությանը սպառնացող աստիճանի հասնող) չբավարարման տեսքով, սոցիալական հարթությունում (մարդկային փոխհարաբերությունների դաշտում)՝ բազմազանության և համակցության բացակայության տեսքով, համաշխարհային հարթությունում (հասարակությունների գործակցության համակարգում)՝ դարձյալ բազմազանության և համակցության պակասի տեսքով, ժամանակային (ապագայի) հարթությունում՝ վերարտադրելիության պակասի տեսքով, և, վերջապես, մշակութային հարթությունում՝ օրինակ, ինտելեկտուալ *անհամապատասխանության*[13] տեսքով: Խնդիրն այստեղ տնտեսական աճի ապահովման հնարավորությունն է առանց վերոհիշյալ ծախքերի, կամ նույնիսկ այդպիսի հնարավորության ընկալելի լինելն է: Եթե տնտեսական աճը սահմանվում է որպես մեկ շնչին ընկնող համախառն ազգային արդյունքի ավելացում, որտեղ համախառն ազգային արդյունքը նախ և առաջ արտացոլում է «արդյունաբերություն» և «առևտուր» տնտեսական գործունեությունները (ընդ որում՝ «արդյունաբերությունը» ձգտում է կենսաբանական քայքայման չենթարկվող անօրգանական և/կամ սինթետիկ օրգանական թափոնների արտադրությանը, իսկ առևտուրը ձգտում է միմյանցից հեռացնելու պատճառն ու հետևանքը, աշխարհամասերն ու տասնամյակները), ապա գոյություն ունի որոշակի անհամատեղելիություն: Մինչ այժմ մենք դիտարկում էինք միայն բնությունը: Բայց, եթե փորձենք «տնտեսական աճը» քննարկել «տնտեսական գործունեության» տեսանկյունից, հաշվի առնելով *բնությունն* (նյութական և էներգետիկ պաշարներ, արտադրական թափոններ) - *արտադրությունն* (բնական պաշարների և սննդի վերամշակում) – *սպառումն* (ապրանքների օգտագործում, որն, ի վերջո, հանգեցնում է բնությանը վերադարձող թափոնների ձևավորմանը և, դրանով իսկ, փակում է շղթան) պարբերաշրջանը, ապա տնտեսական գործունեությունն ամենևին էլ չենք համարի ապարդյուն ծախս: Պարզել, թե ինչպե՞ս դա անել՝ սա է խնդիրը:

Ակնհայտ է, որ զարգացման վերոհիշյալ երեք սահմանումները, որոնց հիմքում, համապատասխանաբար, ընկած են *մշակույթը, մարդկային կարիք-*

ներն ու *աճը*, անհամատեղելի են: Այն, ինչը կարող է զարգացում համարվել մեկի դեպքում, այդպիսին կարող է չլինել մյուսի (մյուսների) տեսանկյունից: Մշակույթն իր հիմքում կարող է ո՛չ կարիքներ պարունակել, ո՛չ աճ, կամ ունենալ մեկը և չունենալ մյուսը: Հարցն այստեղ հետևյալն է՝ ո՞ր մշակույթները/քաղաքակրթությունները կարելի է զարգացման մշակույթներ համարել (եթե այդպիսիք ընդհանրապես գոյություն ունեն):

Դրույթ 4. Առաջին քերականական դրույթը

«Զարգացում» գոյականը հարկ է հասկանալ ոչ թե եզակի, այլ միայն հոգնակի՝ «զարգացումներ» իմաստով:

Այս հիմնարար դրույթը բխում է առաջին (բազմաթիվ մշակույթներ, բազմաթիվ զարգացումներ) սահմանումից և բացատրում է աշխարհի մի շարք բացասական երևույթների նախադրյալներն ու դրդապատճառները: Եթե մի մշակույթի զարգացումը պարտադրվում է մեկ այլ մշակույթի, ապա այն վաղ թե ուշ անպայմանորեն զսպաշապիկ է դառնում վերջինիս համար, անգամ եթե ազատականացնում է տվյալ մշակույթը՝ առանձին ուղղություններով ազատության որոշակի աստիճան տրամադրելով: Օտար, երբեմն նաև խորթ՝ այդ նոր մշակույթին արդեն համակերպված վերնախավերի համար խնդիրներ չեն առաջանում, բացառությամբ, թերևս, նրանց «ոչ առաջադեմ հատվածի»: Սակայն ժողովուրդն անպայմանորեն դիմակայելու է. մասամբ պասիվ, ենթագիտակցական սաբոտաժով կամ թեկուզ անարդյունավետությամբ, երբ ստիպված լինի աշխատել նոր՝ իր համար անսովոր սոցիալ-մշակութային համակարգում, մասամբ էլ ակտիվ դիմադրությամբ (ներառյալ բռնությունը)՝ ցուցաբերելով գերիշխող մշակույթ կամ որ նույնն է՝ «ահաբեկչություն»: Այսօր գործածվում է նաև գերիշխող մշակույթի մեկ այլ բնորոշում՝ «արմատականություն» և կիրառվում է այն մարդկանց հանդեպ, ովքեր, բավականաչափ հավատալով սեփական մշակույթին, պատրաստ են պայքարել և դիմակայել օտարին ու գերիշխողին: Նման հավատը նույնպես դրդում է ակտիվ և պասիվ դիմադրության[14]:

Դրույթ 5. Երկրորդ քերականական դրույթը

«Զարգանալ» բայը կարող է լինել անանցողական, անդրադարձ կամ փոխադարձ բայ, բայց ոչ անցողական:

Զարգացումն իրականում ինքնազարգացումն է: «Ուրիշը» չի կարող դառնալ «Ես»-ի զարգացման իրական շարժառիթ, առանց վնասելու «Ես»-ի ինքնավարությանը: Գոյություն ունեցող բոլոր սահմանումների համաձայն ինքնավարությունը զարգացման նպատակ է: Ես զարգանում եմ, ես զարգացնում եմ ինքս ինձ, մենք զարգացնում ենք իրար:

Փորձեք մեծացնել ձեր զավակներին՝ նրանց չտրամադրելով սեփական ինքնասկզբնավորման որևէ բացատրություն: Առաջին տասը տարիներին գուցե դա ձեզ հաջողվի: Այնուհետև, սակայն, լիարժեք հատուցումն անխուսափելի է դառնում ծնողների համար: Ի՞նչ է իրականում տեղի ունենում: Դա կարելի ձևակերպել նաև քերականորեն. սեփական «Ես»-ի ձևավորման ճանապարհին անհատն անխուսափելիորեն ձգտում է հնդեվրոպական լեզուներ-

րին բնորոշ ստանդարտ նախադասության ԵՍԼ (ենթակա-ստորոգյալ-լրացում) համակցության Ե-ին՝ չցանկանալով մնալ Լ-ի մշտական կախյալ կարգավիճակում:

Փորձեք զավակ մեծացնել առանց մարտահրավերների: Այդ դեպքում երեխան ինքը ոչինչ անել չէր կարողանա: Նա միայն կիրականացներ ընտանեկան առօրյա գործողությունները՝ աղբ թափել, անկողին հավաքել, մաքրել: Այսպես վարվելով 70 տարի և մի փոքր էլ գումար կուտակելով «գրպանի ծախսերի» համար՝ նախկին երեխան կանցներ իր ողջ կյանքի ցիկլը: Արդյունքն, իհարկե, ողբերգական կլիներ: Նույն կերպ վարվեք պետությունների հետ և արդյունքում դուք կստանաք այն, ինչն այսօր հորջորջվում է «զարգացման օժանդակություն»՝ այլոց զարգացմանն ուղղված ջանքեր:

Զարգացման օժանդակությունը համաձայնություն է, որի միջոցով օժանդակություն ստացողը որպես «գրպանի ծախս» որոշակի գումար է ստանում իր սկզբնական կարիքները հոգալու նպատակով, իսկ աջակցություն տրամադրողը ներքին զարգացման խթան է ձեռք բերում, որ բխում է առկա բոլոր մարտահրավերներից: Բայց զարգանալ նշանակում է ստանձնել մարտահրավերները: Դու՝ ինքդ, պետք է ստանձնես առկա մարտահրավերները և ոչ թե վանես դրանք կամ թույլ տաս, որ ուրիշն այն ստանձնի: «Զարգացման օժանդակությունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ *contradictio in adjecto*[i].

Դրույթ 6.

Արևմտյան քաղաքակրթությունն իրեն ընկալում է որպես համընդհանուր (ունիվերսալ) և համընդհանրացնում է (ունիվերսալացնում է) իր պատմությունը՝ որպես զարգացման պատմություն բոլորի համար: Դա նշանակում է.

ա. Զարգացում = Արևմտյան զարգացում = Արդիականացում,

բ. Զարգացում = Աճ = Տնտեսական աճ = Համախառն ազգային արդյունքի աճ:

Այս երկու պնդումները վեր են հանում առաջընթացի կամ համընդհանուր բարեկեցության՝ արևմտյան տեսություններում առկա երկու հիմնական տեսակետները, որ պարունակվում են «զարգացում» բառի մեջ՝ *«տարբերակում»* և *«աճ»*: Առաջինի համաձայն, զարգացումը նախ և առաջ ենթադրում է աշխատանքի շարունակական բաժանում, այսինքն՝ մասնագիտացում: Երկրորդի համաձայն՝ զարգացումը ենթադրում է ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման աճ: Շատերի կողմից առաջինն ընկալվում է որպես երկրորդի անհրաժեշտ և բավարար պայման[15]:

Սակայն արևմտյան մտածողությունը, ուր հանգրվանում են աշխարհի երկու համընդհանրացնող և, հետևաբար, քարոզչական կրոնները (քրիստոնեությունն ու իսլամը), որոնք նաև մենաշնորհային (եզակի ճշմարտություն ամրագրող) և միամարգարեական են (Քրիստոս ու Մուհամեդ)[16], չի բովանդակում այնպիսի բանաձևեր, որ կարող են (կամ չեն կարող) կիրառվել բոլորի նկատմամբ: Ցանկացած բանաձև համընդհանուր է, եթե հանգեցնում է վերո-

[i] contradictio in adjecto (լատ.)- տրամաբանական անհամապատասխանություն գոյականի և այն բնորոշող ածականի միջև /թարգ./

հիշյալ գլխավոր դրույթին: Այսինքն՝ արդիականացման բանաձևն, ի վերջո, հանգեցնում է նույն արևմտյան, արիստոտելյան-քարտեզյան տրամաբանությանը, ասել է թե՝ պետության տրամաբանությանը իր կառավարությամբ, նախարարներով ու կենտրոնացված կառավարմամբ, և կապիտալի տրամաբանությանը՝ տնտեսական աճով որպես հետևանք:

Այս տեսանկյունից «զարգացման» ներուժի չարչրկելը հանգեցնում է միանգամայն գործնական *reductio ad absurdum*[i] վիճակի, երբ «զարգացում» անվան տակ կարող են անհամար ծրագրեր նախաձեռնվել[17]: Այնժամ բոլոր երեք սահմանումները, ինչպես նաև մեր իմաստաբանական մեկնաբանությունը, միանգամայն ավելորդ են:

Դրույթ 7.

Տնտեսական աճի հիմնական պայմաններն են քրտնաջան աշխատանքը, խնայողությունները/ներդրումները, ագահությունն ու անսրտացավությունը:

Դեպի տնտեսական աճ տանող ճանապարհն անցնում է արտադրության (արդյունաբերության) և շուկայավարության (արտաքին ու ներքին առևտուր) միջով: Հաջողության բանաձևը կախված է երեք հիմնական փոփոխականներից՝ Ո/Գ (հնարավոր բարձրագույն որակ առավելագույն ցածր գնով), Մ/Հ (մշակույթի առավելագույն ներդրում նվազագույն «հում-բնության» մեջ, այլ խոսքով՝ վերամշակման հնարավոր առավելագույն մակարդակ) և Ֆ/Ի (տնտեսության ֆինանսական և իրական հատվածների կայուն հավասարակշռվածություն):

Երեքն էլ ենթադրում են քրտնաջան աշխատանք, հատկապես, մրցակցային տնտեսություններում: Սակայն խնայողությունները/ներդրումները (ստացված ողջ եկամուտը միայն նյութական և ոչ նյութական սպառմանը չուղղելը) ևս անհրաժեշտ են, հակառակ դեպքում ձեռք բերված որևէ մրցակցային առավելություն չի կարող պահպանվել: Բնության (վերարտադրության պակասության իմաստով), ներքին պրոլետարիատի (սոցիալական հարթության մեջ), արտաքին պրոլետարիատի (համաշխարհային հարթության մեջ) և նույնիսկ սեփական «Ես»-ի[18] շահագործման տեսանկյունից հարկ չկա չափազանց մեծ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե ինչ գնով է ձեռք բերվում տնտեսական աճը: Դա նախ և առաջ *նրանց* խնդիրն է: Գործողությունների հիմնական շարժառիթն այստեղ ակնհայտ է՝ *ագահությունը*:

Մշակույթը պետք է թելադրի «հատուցման (վարձատրության իմաստով) հետաձգման» հնարավորություն՝ «աշխատիր առանց քեզ խնայելու, հետո կվայելես»: Դրանից բխում է մարդու վերաբերմունքն արձակուրդի ու վաստակած հանգստի նկատմամբ՝ «քրտնաջան աշխատանք/ոչ մի խրախճանք» տարվա/կյանքի մի մասի ընթացքում կամ «ոչ մի աշխատանք/միայն խրախճանք» տարվա/կյանքի մյուս մասի ընթացքում: Բայց ցանկացած հաճույք ակնհայտորեն որոշակի ժամանակ է խլում քրտնաջան աշխատանքից և որոշակի բաժին՝ խնայողություններին/ներդրումներին ուղղվող միջոցներից: Հաճույքին տրամադրվող ժամանակը դառնում է «տեմպի թուլացման» նա-

[i] reductio ad absurdum (լատ.)- հերքում ենթադրության հետևանքների անհեթեթությունը ցույց տալու ճանապարհով /թարգ./

խանշան և, որպես հետևանք, անկման սկիզբ, ինչը տեղի ունեցավ Հռոմեական կայսրության հետ 2000 տարի առաջ կամ տեղի է ունենում Ճապոնիայի հետ այսօր:

Դրույթ 8.

> *Անսրտացավության հիմնական մարմնավորողներն են տղամարդիկ, բողոքականներն ու տնտեսագետները, մասնավորապես, երբ միավորված են մեկ անձի մեջ:*

Ասվածի համապարփակ ուսումնասիրության համար մենք պետք է ներթափանցենք աստվածաբանության, կենսաբանության/մշակույթի և գերակայող տնտեսագիտության իմացաբանական արմատները: Ուստի բավարարվենք մի քանի առանձին դրույթների դիտարկմամբ:

Նախ՝ *տղամարդիկ*: Միայն այն փաստը, որ աշխարհում իրականացվող ուղղակի բռնության 95-98 տոկոսը կատարում են տղամարդիկ, արդեն իսկ նրանց անսրտացավության ու «կոպտության» ցայտուն վկայությունն է: Տղամարդիկ փորձում են վերահսկել սեփական բռնությունը՝ ուղղակի բռնությամբ փոխարինելով կառուցվածքային ու մշակութային բռնությունները: Նրանք իրենց համար աստիճանակարգ են սահմանում, որ կարողանան վերահսկել ուղղակի բռնության իրականացումը՝ սահմանափակելով այն մինչև «վերինն ընդդեմ ստորինի» և «ներքին խմբավորումն ընդդեմ արտաքինի» կարգաճներ ու պաշտպանելով ներքին վերընթացը: Դրա նախատիպը բանակն է՝ ներքին ու արտաքին պրոլետարիատի շահագործումը՝ որպես պատերազմի շարունակություն այլ միջոցներով: Մարդկային կարեկցանքի տարերային դրսևորումների փոխարեն գերադասելի են դեդուկտիվ համակարգերը, ինչպես, օրինակ, արդար պատերազմի քրիստոնեական և իսլամական ուսմունքներն ու միջազգային իրավունքի նորմերը[19]:

Երկրորդ՝ *բողոքականները*: Վեբերյան (Մաքս Վեբերն ինքը բողոքական էր) տեսության մեջ շատ է խոսվում բողոքականների աշխատասիրության, տնտեսելու և, ընդհանրապես, հատուցման հետաձգման կարողության մասին[20]: Ինչու՞ պիտի նրանք ավելի պակաս նրբազգաց լինեին: Այստեղ պետք է առանձնացնենք հատկապես կարևոր երկու գործոն:

Լյութերական տեսության հիմնարար բնորոշիչներից մեկը Դրախտի՝ որպես հազվագյուտ բարիքի կերտումն է: Սակայն, մուտքն այնտեղ չի կարող երաշխավորվել մարդկանց կողմից վերահսկելի որևէ մեխանիզմի միջոցով: Ի տարբերություն Աստծո՝ իրենց իսկ Արարչի, մարդկային էակները չեն տիրապետում (կամ գրեթե չեն տիրապետում) համապատասխան լծակների: Սա նշանակում է անորոշություն, սակայն նաև մարդկային հերթ Մարգարտապատ այդ դռների առջև: Բողոքական ոգու գերանհատականացվածության տեսակետից հերթում կանգնած լինելը կարող է նշանակել մրցակցություն՝ դրախտ մուտք գործելու հնարավորության համար:

Մյուս բնորոշիչը. բողոքականությունը որպես «ապա-Մարիամ-ականացված» քրիստոնեություն, որ, Մարիամի կերպարը դուրս թողնելով, հատում է քրիստոնեական քառագագաթը՝ Աստված (հայր), Մարիամ (մայր), Սուրբ Հոգի և Քրիստոս (որդի): Մարիամի հետ անհետանում են կարեկցանքն ու գթասրտությունը՝ առաքինություններ, որոնք առավել բնորոշ են կանանց, և որ ավելի խորախորունկ են, քան Աստծո կողմից մարդկանց շնորհված

ողորմածությունը: Ի՞նչ է մնում: Երկու տղամարդուց ու մեկ անորոշ սեռից կազմված երրորդություն՝ առանց Սուրբ Մոր, որը իմաստ կհաղորդեր «կարեկցանքին»:

Արդյունքը. մշտական տառապանք, որ ուղեկցվում է հույսով, թե հաջողությունն այս կյանքում կարող է հաջողության նախանշան լինել հաջորդ կյանքի համար:

Երրորդ՝ *տնտեսագետները*: Գերակայող տնտեսագիտությունը, ինչպես ցանկացած այլ գիտություն, իրականության առանձին ասպեկտները թափանցիկ ու մարդկային մտքի կողմից մշակման ենթակա դարձնելու ջանք է կամ վերացարկման ու ընդհանրացման ձիրք, բայց, որպես կանոն, իրականության մյուս ասպեկտներն առավել անթափանց ու մշուշոտ դարձնելու գնով: Տնտեսագիտության առանձնահատկությունն այն է, որ այն շղարշում է հենց այն ասպեկտները, որոնք ընկած են իր իսկ ուսումնասիրության դաշտում, սակայն հաշվի չեն առնվում տնտեսական գործունեության տեսանկյունից: Այդպիսիք են, օրինակ, «կողմնակի դրսևորումները», դրական և բացասական հետևանքները, այլ խոսքով՝ «արտաքին դրսևորումները», որ այդպես են կոչվել լոկ այն պատճառով, որ չեն գտնվել ուսումնասիրությունների կիզակետում, բայց ենթագիտակցաբար կամ անգիտակցաբար պահպանվել են վերջիններիս համատեքստում:

Դրանք տնտեսագիտական մտքի եզրագծում հայտնված բաց կամ հետագա զարգացման կարիք ունեցող ոլորտներն են: Դրանցից վեցը կարող ենք ձևակերպել՝ կիրառելով դրույթ 3-ում նշված հարթությունների տերմինաբանությունը.

- *բնության հարթություն* - դիտարկվում է ոչ թե նրա կայունության տեսանկյունից, այլ ընդամենը որպես ռեսուրս և արտանետումների համար հնարավոր աղբանոց,
- *մարդկային հարթություն* - հիմնականում դիտարկվում է որպես արտադրության միջոց տարբեր մակարդակներում, ինչպես նաև՝ որպես սպառման ներուժ,
- *սոցիալական հարթություն* - հիմնականում դիտարկվում է որպես արտադրություն-բաշխում-սպառում շրջապտույտի իրականացման վայր և որպես շուկա,
- *համաշխարհային հարթություն* - գլխավորապես դիտարկվում է որպես միջազգային սոցիալական տարածք,
- *ժամանակ* - բացառապես կարճաժամկետ ժամանակային հորիզոններ դեպի առաջ և հետ,
- *մշակույթ* - ստեղծված է ծառայելու տնտեսագիտությանն ըստ տնտեսագետների և ոչ թե հակառակը: Այսինքն՝ հարաբերականացնելով բոլոր արժեքները և մոնետիզացման միջոցով դրանք բաղդատելի դարձնելով, այն հնարավոր է դարձնում միջանձնային ու միջարժեքային ծախսերարդյունքներ վերլուծությունը:

Այնուհետև, ի հավելումն այս ամենի, ի հայտ է գալիս *յոթերորդ բացը*.

- *իմացություն*[i] - գոյություն ունեցող բացերը գիտակցելու՝ մարդկանց մտածողության մեջ բացակայող կարողությունը, ինչը հնարավորություն կընձեռեր տեսնել նաև վերոհիշյալ վեց բացերը:

Այժմ պատկերացնենք աշխարհը հայրիշխանության վառ դրսևորման ժամանակահատվածում և Եվրոպայի այն մասում, ուր գերիշխում է բողոքականությունը, կյանքի կոչենք տնտեսական աճն իր արդի էությամբ (կիրառված մեկ շնչին ընկնող ՀԱԱ տեսքով): Բռնության սահմռկեցուցիչ ծավալներն ուղեկցվում են այնպիսի երևույթներով, ինչպիսիք են ստրկատիրությունն ու եռակողմ առևտուրը, գաղութատիրությունն ու իմպերիալիզմը (արտաքին պրոլետարիատի համար), ինչպես նաև բանվոր դասակարգի (ներքին պրոլետարիատի) նկատմաբ կիրառվող պատժամիջոցներով, երբ վերջինս փորձում է բարելավել իր կենսապայմանները:

Բացակայում է միայն մաքուր խիղճը, որը գալիս է իրավացի լինելու ու ճիշտ ուղու վրա գտնվելու ամուր համոզվածությունից, անգամ եթե այդ ուղին տատասկոտ է (հղի է խոշտանգումներով): Գերակայող տնտեսագիտությունը ծնում և վերարտադրում է արդարացումը՝ որպես մշակութային բռնության հետևողական ու վառ դրսևորում:

Դրույթ 9.

Աշխարհում կա տնտեսական աճի երկու խոշոր տարածաշրջան՝ հրեա-քրիստոնեական (ՀՔ) Հյուսիս-Արևմուտքը և բուդդայա-կոնֆուցիական (ԲԿ) Հարավ-Արևելքը:

Եթե հիմնական պայմաններն են քրտնաջան աշխատանքը, խնայողությունները/ներդրումները, ագահությունն ու անսրտացավությունը, ապա հազիվ թե Հյուսիս-Արևմուտքը, կենտրոնում ունենալով բողոքականությունը, բավարարի այդ պայմաններին: Խնդիրն առավել դյուրին է հրեական ու մուսուլմանական մասերում, քանզի այդ գաղափարախոսությունները հիմնականում միտված են սոցիալական արդարությանը, ինչպես նաև քրիստոնեության կաթոլիկ ու ուղղափառ ճյուղերում, ուր դեռևս առկա է կանացի աստվածությունը:

Բայց Հարավ-Արևելքը՝ Ճապոնիա-Չինաստան-Կորեա-Վիետնամ, ևս բավարարում է այս պայմաններին: Աշխատասիրությունն ու տնտեսողությունը խորապես արմատացած են կոնֆուցիական փիլիսոփայության մեջ, և ընչաքաղցությունն ու համախմբվածությունը՝ բուդդայական (մասնավորապես, մահայանա բուդդայական) բարոյականության մեջ՝ առավել լայն, վառ ընդգծված վերանձնական համատեքստով: Սակայն այդ առավել լայն համատեքստն անգամ անկարող է ընդգրկել ողջ աշխարհը: Եվ միայն արևմտյան ծրագրերն են, մասնավորապես՝ քրիստոնեությունն ու իսլամը, որ կարող են համընդհանուր լինելու հայտ ներկայացնել: Հարավ-Արևելքը կարող էր վանել շահագործումը դեպի մնացած (իր տարածքից դուրս գտնվող) աշխարհ՝ բարելավելով սեփական աշխարհատարածքը: Զուտ արդյունքը կլիներ նույնը՝ տնտեսական աճ և ոչ թե զարգացում դրույթ 3-ում սահմանված իմաստով, այսինքն՝ ոչ ինչ-որ մեկի հաշվին: Սակայն մահայանա-բուդդայա-

[i] հուն. Episteme /թարգ./

կանության ու կոնֆուցիականության համատեղումն օժտված է ամենաքիչը ԲԿ տարածաշրջանում հավասարակշռություն ապահովելու ներուժով:

ՀՔ տարածաշրջանի *թիկունքի երկիրը* Եվրամիության ու Արևելյան Եվրոպայի խորքում գտնվող Գերմանիան է, իսկ ԲԿ տարածաշրջանում՝ Արևելյան/Հարավ-Արևելյան Ասիայի սահմանային գոտում ընկած Ճապոնիան: Հարց. Գերմանիա-Ճապոնիա առանցքը պատերազմի՞, թե՞ խաղաղության առանցք է: Եվ ի՞նչ վարքագիծ կդրսևորի Միացյալ Նահանգների նկատմամբ այս երկյակը:

Դրույթ 10.

Տնտեսական աճի համաշխարհային համակարգում «մնացյալ աշխարհն» առայժմ դատապարտված է «ծայրամասային» կարգավիճակի:

Խուսափել այս ոչ այնքան հաճելի իրավիճակից հնարավոր չէ: Բայց, այդուհանդերձ, «մնացյալ աշխարհը» որոշակիորեն իրականացնում է քրտնաջան աշխատանք, բավականաչափ խնայողություններ/ներդրումներ, ագահություն և, հնարավոր է նաև, որոշակի անսրտացավություն, նույնիսկ եթե դա արվում է բացառապես առանց բռնության: Գանդին բոյկոտեց բրիտանական ապրանքները, մասնավորապես, տեքստիլ արդյունաբերության արտադրանքը, որպեսզի ճամփա հարթի ինքնանեցուկ տնտեսության համար և նույնիսկ կարողացավ գումարներ հայթայթել՝ փորձելով չվնասել բրիտանացի առևտրականներին: Այնուամենայնիվ, իրականությունից խուսափելու ճանապարհ չկար, և նրանց էքսպանսիայի կասեցմամբ վերջիններս վնասներ կրեցին:

Արդի աշխարհում երկու սառըպատերազմյան տերությունները նկատելիորեն նման են միմյանց: Ագահությունն ու անսրտացավությունը խնդիր չեն. երկուսն էլ անվիճելի հաղթաթուղթ ունեն այդ ոլորտներում: Բայց քրտնաջան աշխատանքն ու տնտեսող լինելը երկու դեպքում էլ վիճահարույց են: Այդուհանդերձ, դժվար է խոսել ապագայի մասին. թե՛ ամերիկացիները, թե՛ ռուսները թաքնված ուժեղ կողմեր ունեն, որոնք, սակայն, երևան կգան իրական փորձությունների պայմաններում միայն:

Թեև ասվածը վերաբերում է նաև աշխարհի «ծայրամասերին», այնուամենայնիվ, կան տարածաշրջաններ, որոնց վերաբերյալ կարելի է պնդել ճիշտ հակառակը՝ քրտնաջան աշխատանք, տնտեսողություն՝ փորձության պահին հնարավոր կորուստները կանխելու նպատակով, չնչին ագահություն և նաև անսրտացավ վերաբերմունք բնության, սեփական «Ես»-ի և այլոց հանդեպ: Ընիկ ժողովուրդների մեծամասնությունն այդպիսին է: Հենց դրանով է բացատրվում նրանց երկարատև գոյատևման գաղտնիքը: Դա նաև նրանց դանդաղ բնաջնջման պատճառն է:

Իրավիճակը սրում է աշխարհի վերնախավերի համախմբումը տնտեսական աճի թեմայի շուրջը, ինչը նրանց քիչ թե շատ հաջողության հասնելու հնարավորություն է տալիս: Եթե «ծայրամասերի» վերնախավերը չեն բավարարում բոլոր չորս պայմաններին, ապա պետք է ձգտեն դառնալ Կենտրոնի աջակիցները՝ մատակարարելով նրան բնական հումք, էժան աշխատուժ և թերհագեցած շուկա:

Դրույթ 11.

Զարգացման օժանդակությունն արևմտյան իմպերիալիստ-հոր և քրիստոնյա քարոզիչ-մոր լեգիտիմացված ժառանգն է, որը կրում է այդ երկուսի գենետիկ կոդը:

Զարգացման օժանդակությունն, ըստ էության, Արևմտյան մշակույթի համաշխարհային վերարտադրությունը, նույնիսկ գոյատևումն ապահովելու միջոց է ամենուր այդ յուրահատուկ կոդը կրող սոցիալ-մշակութային սերմերի տարածման ճանապարհով՝ դրա լեգիտիմացման համար օգտագործելով տեղերում գոյություն ունեցող աղքատությունն ու չքավորությունը: Երբ զարգացման օժանդակությունը չի բերում աղքատության կրճատում, ավելին, հանգեցնում է դրա վերարտադրությանը, ապա դա դիտարկվում է որպես պատճառ զարգացման օժանդակության հետագա ընդլայնման համար: «Հայրն» օգտվում է առիթից իր հետագա ծավալման համար (այս անգամ արդեն տնտեսական և մշակութային առումով և ոչ թե՝ քաղաքական ու ռազմական), իսկ «մայրը» գոհանում է նրանով, որ կարողանում է այդչափ բարեգործություն իրականացնել բոլոր ուղղություններով:

Երբ բարելավման նշաններ, այնուամենայնիվ, ի հայտ չեն գալիս, իսկ իրավիճակը շարունակում է վատթար մնալ, օգնություն ստացողներն սկսում են մեղադրվել չգոհացնող արդյունքների համար: Նրանք պարզապես չափից դուրս «ավանդապաշտ» են, նրանց մշակույթը ճիշտ չէ և, ի լրումն այս ամենի, նրանք նաև ծույլ ու կոռումպացված են: Այս ամենը գուցեև ճիշտ դիտարկումներ են, եթե ընդունենք, որ կարելի է մի մշակույթի կրողը հանդիսացող ժողովրդին, զարգացման իր նպատակներով հանդերձ, գնահատել մեկ այլ մշակույթի չափանիշներով: Արևմտյան գործիչներն այստեղ խնդիր չեն տեսնում՝ կազմելով բազմաթիվ «գիտական» զեկույցներ աշխարհի ոչ արևմտյան մասի զարգացման իրավիճակի վերաբերյալ և չընմբռնելով, որ արևմտյան գիտությունը՝ իր էությամբ լինելով ատոմիստական ու դեդուկտիվ, նաև էթնոգիտություն է: Բայց զարգացման օժանդակությունը ռեսուրսներ է տրամադրում ստացողներին՝ հրահրելով մրցակցություն բլիթի սեփական բաժնին տիրանալու համար, երբեմն հանգեցնելով հակամարտության՝ հաղթողին դարձնելով կոռումպացված, իսկ պարտվողին՝ սեփական մշակույթի այլասերման զոհ:

Դրույթ 12.

Զարգացման օժանդակությունը ձևավորում է միջազգային բարձր մրցակցային շուկա, ուր նվիրատու և օժանդակություն ստացող երկրները սակարկում են, ներկայացնում և ընդունում են ծրագրեր տարբեր կարգախոսներով (նախաձեռնողությունային, համայնքների ու ենթակառուցվածքների զարգացման, մասնակցության, անցումային շրջանի ծախքերի կրճատման, ներմուծման փոխարինման, արտահանման փոխարինման, հիմնարար կարիքների, ամենաաղքատ երկրների, ամենաաղքատ ժողովուրդների, ամենաաղքատ երկրների ամենաաղքատ խավերի, կանանց, երկրի հեռավոր ծայրերում բնակվող աղքատ կանանց, շրջակա միջավայրի պաշտպանության, ինքնահարատ զարգացման և այլն)՝ ձգտելով

ընդլայնել իրենց բաժնեմասը ներկայացված և ընդունված ծրագրային փաթեթներում:

Մասնակցությունն այստեղ կարող է շատ ավելի կարևոր լինել, քան կարգախոսներով հռչակված նպատակներին հասնելը: Ֆինանսավորման հետևանքով ծրագրերի արդյունավետությունը գնահատվում է ոչ թե վերջնական արդյունքի որակով, այլ իրականացման միջոցների քանակով: Սա հանգեցնում է նվիրատու և օժանդակություն ստացող երկրների բանակցող վերնախավերի սերտ համագործակցությանը. նվիրատուն կարող է ավելացնել նրա բաժնեմասը, եթե օգնություն ստացողն ընդունում է և հակառակը:

Այդպիսով ի հայտ են գալիս բազմաքանակ զարգացման գործակալությունները, «ամեն սարի համար մեկը, ամեն դաշտի համար մեկը»: Երբեմն համագործակցելով ու «կոորդինացնելով», երբեմն մրցակցելով ու սակարկելով՝ նրանք տեղական վերնախավերի հետ գործարքների մեջ են մտնում՝ նպատակ ունենալով ապահովել սեփական ծրագրերի հաջողությունը: Այս առումով տեղական վերնախավերն ավելի քան համոզված են ոչ միայն սեփական իշխանության, այլև գործակալությունների աշխատանքի կարևորության մեջ: Հանկարծակի դրանցից մեկը (հաճախ ՄԱԿ-ի համապատասխան կառույցների միջոցով) մի նոր կարգախոս կառաջադրի, որը ճանապարհ կբացի նոր ծրագրերի ու նոր գումարների համար: Այնժամ մրցակից գործակալությունները կկանխազգան մոտալուտ վտանգն ու անհապաղ կարձագանքեն՝ ընդունելով այդ կարգախոսը, նույնիսկ հռչակելով նույնանուն "տասնամյակը», որ հետագայում պետք է իրականացվի այն նույն մարդկանց կողմից, որոնք ընդամենը մեկ տարի առաջ ճիշտ հակառակ կարգախոսի ջատագովն էին: Այսօրինակ վարժությունը հիմնվում է կարգախոսների անփոփոխության սկզբունքի վրա:

Դրույթ 13.

Զարգացման օժանդակությունը կարող է տեղաշարժել հիմնական կառուցվածքային արգելքները, Կենտրոն-ծայրամասեր կառուցվածքային կապերն ու ի հայտ բերել «ծայրամասերի» հավակնությունները:

Տասնամյակներ շարունակ իրականացվող զարգացման օժանդակության ոչ գոհացուցիչ արդյունքները կարող են պատճառ դառնալ վերը հիշատակված երկրորդ քերականական դրույթի (Դրույթ 5) թյուրըմբռնմանը: Զարգացման օժանդակությունն ուրիշին զարգացնելու ջանք է, թեև զարգացումն ակնհայտորեն ենթադրում է ներքին ջանքերի գործադրում: Վերոհիշյալի հիմքում ընկած մեխանիզմն «արտաքին դրսևորումների» տեսության մաս է կազմում. ո՞վ է ստանձնում զարգացման ծրագրերից բխող մարտահրավերները: Ակնհայտորեն նրանք, ովքեր իրավասություն ունեն խնդիրներ դնելու և ուղղորդելու, որ դրանք մշակվեն ու վերափոխվեն լուծումների: Ըստ այն տրամաբանության, որ դրված է տեխնիկական աջակցության հիմքում, դրանք օտարերկրյա փորձագետներն են և ոչ թե տեղացի մասնագետները, որոնց փորձառությունը չի կարող դիմակայել տեխնիկական աջակցության ընդհանուր հայեցակարգի կողմից առաջադրվող մարտահրավերներին:

Նույնիսկ եթե «զարգանալ» բայն օգտագործված չէ անցողական իմաստով, այն կարող է հանդես գալ որպես անդրադարձ բայ: Հիմնականում հա-

մաշխարհային տնտեսական համակարգում կենտրոնական տեղ զբաղեցնող նվիրատու պետություններն են, որ նվազ ծախսերով աճի ապահովման ճանապարհով ի զորու են իրենք իրենց զարգացնելու՝ ընդամին նպաստելով ուրիշների զարգացմանը: Եթե նյութական բարեկեցության հասնելու ուղիներից մեկն անցնում է Մ/Հ բարձր հարաբերակցության միջով, ապա թույլ զարգացած երկրներն անհրաժեշտաբար պետք է ընդգրկված լինեն արտադրության գործընթացում և ոչ թե մնան հումք կամ կիսաֆաբրիկատներ արտահանողների ցանկում, ի տարբերություն Ո/Գ հարաբերակցության բարձր մակարդակների, ուր գործում են «համեմատական առավելությունների» տեսության ավերիչ դրույթները: Իսկ եթե առավել զարգացած երկրները քայլեր չձեռնարկեն այդ արգելքների նվազեցման ուղղությամբ, ապա ըստ *Հարավային հանձնախմբի* (նախագահ՝ Հուլիոս Նիերերե)՝ թույլ զարգացած երկրները Հարավ-Հարավ համագործակցության միջոցով իրենք կանեն դա: Այդ դեպքում զարգացած երկրները կշարունակեն նոր մարտահրավերներ առաջադրել թույլ զարգացած երկրներին:

Դրույթ 14.

> *Զարգացման օժանդակության համար անհրաժեշտ պայման է փոխադարձ փոխանակությունը «ես քեզ, դու ինձ» սկզբունքով: Օրինակ, որպեսզի առաջարկեք թույլ զարգացած երկրներին դառնալ նվիրատու, նախ դիմեք առավել զարգացած երկրներին:*

Բացի անդրադարձից, անցողական բայի մյուս այլընտրանքը փոխադարձ բայն է: Այս առնչությամբ միանգամայն տեղին հարց է ծագում՝ ինչպես կարող են թույլ զարգացած երկրներն օգտակար լինել, եթե դրանք, համաձայն տրված որակման, աղքատ են: Պատասխանը, որ մեծ դժվարությամբ է ընկալվում առավել զարգացած երկրների կողմից, ոչ նյութական օգնությանն է առնչվում: Այն, ինչ զարգացած երկրներն այնքան հոժարակամությամբ աջ ու ձախ շռայլում են, հարկի ու անհարկի փորձագիտական խորհրդատվությունն է: Երկար տարիներ թույլ զարգացած երկրները զանազան ուսումնասիրությունների ու գնահատումների առարկա էին: Եթե սա նաև իրականացվի հակառակ ուղղությամբ, տրամաբանորեն կարող են ի հայտ գալ երկխոսության նոր բանաձևեր՝ երկխոսություն հավասարների միջև ընդհանուր հիմնահարցերի շուրջ. օրինակ՝ երեխաների միջև, տարեցների միջև, նիհարների միջև:

Արդյո՞ք առավել զարգացած երկրները պատրաստ են դրան: Պատկերացրեք գործնականում դա ինչ կնշանակի: Օրինակ, հնդկական մի հանձնախումբ ժամանում է Մանհեթըն՝ ուսումնասիրելու ծնելիության և ընտանիքի պլանավորման ասպարեզում Միացյալ Նահանգների փորձը՝ միաժամանակ համոզված լինելով, որ եթե աշխարհի բնակչության 5 տոկոսն սպառում է համաշխարհային էներգետիկ պաշարների անհամամասնական քանակներ ու արտանետում է շրջակա միջավայրն աղտոտող թափոնների նույնքան անհամամասնական ծավալներ, ապա անհրաժեշտ է բնակչության թվի կտրուկ նվազեցում: Համապատասխան զեկույցներ առավել զարգացած երկրների կողմից բազմիցս պատրաստվել են թույլ զարգացած երկրների համար: Ի՞նչ տեղի կունենա, եթե թույլ զարգացած երկրները նույնը պահանջեն առավել զարգացած երկրներից, այդ թվում՝ Վաշինգթոնից:

Մեկ այլ օրինակ. Նորվեգիան իրեն դիտարկում է որպես բարձր զարգացած երկիր և հպարտանում է իսկապես բարեկեցիկ պետություն ունենալու փաստով: Սակայն բարեկեցիկ պետության բնորոշիչներից է տարեց քաղաքացիների, այդ թվում՝ տարեց ընտանիքների բարեկեցությունը: Այլ մշակույթների տեսանկյունից տարեցներին իրենց զավակներից բաժանելը զարհուրելի երևույթ է: Ենթադրենք, թույլ զարգացած երկրների պատվիրակները ժամանում են Նորվեգիա՝ առաջարկելով զանազան այլընտրանքային տարբերակներ: Արդյո՞ք նորվեգացիներն ի վիճակի են ընդունելու այդ տարբերակները: Կամ, ասենք՝ ամերիկացիները:

Դրույթ 15.

Զարգացման օժանդակության լավագույն կազմակերպիչները, թերևս, կամավորների միություններն են, որ ընդգրկված են ժողովուրդ-ժողովուրդ և ոչ թե փորձագետ-փորձագետ երկխոսություններում, տրամադրում են մարդկանց հիմնարար կարիքների բավարարմանն ուղղված օժանդակություն և պատրաստ են ընդունելու փոխադարձության հնարավորությունը: Այս առումով հատկապես արդյունավետ են կանանց կազմակերպությունները:

Պատճառներից մեկը միանգամայն ակնհայտ է՝ հասարակական կազմակերպությունները (կառավարություններն այս սահմանմանն ավելացնում են նաև «ոչ կառավարական» ածականը, կարծես հասարակությունը գոյություն ունի ի հակադրություն կառավարությունների. նույնն է, թե կառավարություններն անվանեինք «ոչ ժողովրդական») զարգացման օժանդակության շրջանակներում կարող են պաշտպանել սեփական շահերը: Բայց այդ շահերը կարող են միանգամայն անվնաս և, այս իմաստով, «դրական» լինել ստացողի համար: Երբ կառավարություններն օգնություն են «տրամադրում», իրենց տեսանկյունից նրանք ղեկավարվում են ազգային շահերի պաշտպանությամբ, իսկ դրանք հեռու են «անվնաս» լինելուց. ինչպես, օրինակ՝ ազգային արտադրանքի և առևտրի խթանումը, աջակցության տեսքով ներկայացվող քաղաքական փոխադարձությունը, նույնիսկ քվեարկությունները միջկառավարական ատյաններում, ռազմական բազաների տեղաբաշխման իրավունքը, ռազմական բնույթի համաձայնագրերը և այլն: Այս ամենը միանգամայն այլ երանգ է հաղորդում զարգացման օժանդակությանը՝ անգամ փոխակերպելով վերջինիս հիմնական իմաստը, այն է՝ բավարարել մարդկանց բնական կարիքները, նույնիսկ տնտեսական աճի տեսակետից:

Կուտակած փորձի տեսանկյունից հենց սրանով է հիմնականում պայմանավորված կառավարական փորձագետների ու կամավորական կազմակերպությունների տարբերությունը: Առաջիններն իրենց երկրներում ինչ-որ «բարձր մակարդակի» գործիչներ են, հետևաբար, միշտ պիտի ձգտեն արտահանել իրենց, այսպես կոչված, «բարձր մակարդակը» թույլ զարգացած երկրներ: *Փորձագետներից մինչև արտահանում ընկած ճանապարհը չափազանց կարճ է:* Ի հակադրություն դրա, կամավորական կազմակերպություններն առավել զարգացած երկրների առաջավոր փորձը կարող են փոխանցել թույլ զարգացած երկրներին և հակառակը՝ անգամ թույլ զարգացած երկրների նույնատիպ կամավորական կազմակերպությունների հետ ուղիղ համագործակցության ճանապարհով: Նրանք շատ ավելի հետամուտ են մարդու

հիմնարար կարիքների բավարարման առաջնայնության, մարդու և բնության համերաշխության գաղափարներին:

Ծանոթագրություններ

[1] Հիշյալ դրույթների գերակշիռ մասի բացատրությունն ու ենթատեքստը տե՛ս՝ Wolfgang Sachs, ed., *The Development Dictionary: A Guide to Knowledge as Power,* Atlantic Highlands, NJ, ZED Books, 1992

[2] Նկատի ենք ունեցել ոչ ֆիզիկական աշխատանք կատարող սպիտակամորթ բանվորներին և մի քանի վարձու աշխատողներ ունեցող անհատ ձեռներեցներին: Նրանք կարող են սերել ոչ ֆիզիկական աշխատանքով զբաղվող աշխատավոր խավերի հիմնական, երկրորդային կամ երրորդային հատվածներից, բայց ձգտում են առավել բարձր դասակարգերի, առավել հարուստ կեցության, երբ մարդիկ առավել ապահովված են, առօրյա աշխատանքով ապրուստի միջոցներ հայթայթելու խնդիր չունեն և իրենց դասակարգային սոցիալական արժեքներն ընդունում են ավելի շատ որպես ձգտում, քան որպես դասակարգային էություն: Լատինական Ամերիկայի օրինակը ցույց է տալիս, որ երբ բանվոր դասակարգը ձգտում է բարելավել իր կենսապայմանները, ապա միջին խավերն անցնում են առավել բարձր խավերի և վերնախավերի (քաղաքական, տնտեսական, մշակութային) կողմը (ներառյալ օտարերկրյա աջակցությունից օգտվելու հնարավորությունը): Այս բանաձևը կարծես կիրառելի է նաև միջին դասի երկրների նկատմամբ՝ ոչ ԵԱՀԿ անդամ/ոչ Երրորդ աշխարհի, ինչպիսիք միջազգային մակարդակում հետսոցիալիստական երկրներն են:

[3] Բոլոր երեք չափորոշիչներն էլ ծառայում են որպես հասարակության կողմից ձևավորված ավելցուկի կառավարման միջոց: Ավելցուկ ձևավորվում է ամենուր ժողովրդի ու վերնախավերի կողմից, ինչպես նաև ներհոսում է դրսից (արտահոսում է դուրս): Խնդիրն այն է, թե ով է որոշում դրա բաշխման սկզբունքները: Երբ բանվորներին ամբողջ օրվա աշխատանքի դիմաց կոպեկներ են վճարում, ավելցուկը ձևավորվում է վերևում և անհասանելի է ներքևների համար: Երբ վերնախավերն ստանում են զանգվածային հարկային արտոնություններ, նրանք իրենք են որոշում ինչպես ծախսել ստացված ավելցուկը (որպես կանոն, այն չի ուղղվում առողջապահության կամ կրթության կարիքների բավարարմանը, բացառությամբ՝ բարեգործական նպատակներով ծախսվող միջոցների): Եթե փողը ծախսվում է օդանավակայանի և ոչ թե միջազգային արագընթաց ավտոմայրուղու շինարարության նպատակով (օրինակ, Աֆրիկայում), ապա արդյունքներից օգտվում են միայն վերնախավերը:

[4] Այս հայեցակարգի մեկնաբանությունը տե՛ս՝ մաս IV, գլուխ 1:

[5] Համաշխարհային պատմության խոշորագույն ցեղասպանության՝ Արևմտյան կիսագնդի նվաճման պատմությունը չի կարող լիարժեք համարվել առանց այս լրացուցիչ գործոնի նկարագրության: Տե՛ս՝ David Stannard, *American Holocaust,* New York, Oxford University Press, 1992.

[6] Ուսումնասիրությունը տե՛ս՝ Galtung, J., KՊufer, K., and Scharmer, C.O., *Economics in a New Key,* forthcoming, Chapter 2.6, "Culture: Mainstream Economics and Occidental Cosmology".

[7] Այս հայեցակարգի առավել վաղ նկարագրությունը տե՛ս՝ Galtung, J., Heiestad, T., and Rudeng, E., "On the Last 2,500 Years in Western History: And Some Remarks on the Coming 500", in Peter Burke, ed., *New Cambridge Modern History, Companion Volume,* Vol. 13, Cambridge: Cambridge University Press, 1979, pp. 318-361.

[8] Առավել մանրակրկիտ ուսումնասիրությունը տես՝ Johan Galtung, *"The Basic Needs Approach"*, in Lederer. K., e al., eds., *Human Needs: A Contribution to the Current Debate,* KΦnigstein: Oelgeschlager, Gunn & Hain, 1980.

[9] Չի կարելի շփոթել աղքատության հետ: Չքավորությունն ավելին է, քան աղքատությունը, այն տառապանք է բերում:

[10] Բուդդիզմի ուսումնասիրություններից մեկը տե՛ս՝ Johan Galtung, *Buddhism: A Quest for Unity and Peace,* Colombo: Sarvodaya Vishva Lekha, 1993

[11] Կամ այն, ինչը մենք անվանում ենք անկենդան: Մայր Գայայի վարկածը փոխում է այս տեսակետը՝ դիտարկելով ողջ մոլորակը աստվածաբանական տեսանկյունից, վերածնունդը համարելով հավասարակշռության պահպանման միջոց:

[12] Սա շրջադարձելը, առնվազն նմանօրինակ հարցադրումներ առաջ քաշելով, խորացված բնապահպանության ուսումնասիրությունների ուղղություններից մեկն է, որը որպես մոտեցում և շարժում հիմնադրվել է նորվեգացի փիլիսոփա Առնե Նաեսի կողմից: Բնակենտրոն զարգացումը որպես մեկնակետ կարող է դիտարկել մարդ էակներին, նրանց այսօրվա վարքագիծը, այն, որ մարդիկ իրենց գործունեությամբ շատ ավելի մեծ վնասներ են գործում, քան բարիք են արարում, որ գերակայությունը պետք է տալ բնությանը և ոչ թե մարդկանց՝ կտրուկ կրճատելով վերջիններիս թվաքանակը: Երրորդ մոտեցումը կարող է հանգեցնել դժվար լուծումների, որոնց պարագայում մարդ և ոչ մարդ էակները մրցակցում են: Խորացված բնապահպանության առավել մանրակրկիտ քննարկումները տե՛ս՝ George Sessions, ed., *Deep Ecology for 21st Century* (Boston, MA: Shambhala, 1995).

[13] Այսպիսով, «զարգացման» ներկա հետազոտությունների հիմնական դրույթն այն է, որ բազային տնտեսագիտության տեսության միջոցով անհնար է բացատրել զարգացման տեսությունն ու պրակտիկան:

[14] Նրանք, ովքեր այլոց անվանում են իսկական հավատացյալներ, արմատականներ և այլն, պետք է նախ և առաջ մտորեն արդի աշխարհի հիմնական աշխարհիկ կրոնից իրենց սեփական կախվածության մասին, որը կարելի է կոչել տարբեր անուններով՝ մատերիալիստական անհատապաշտություն, անհատական նյութապաշտություն, կոնսյումերիզմ կամ ուղղակի բուրժուական կենսակերպ: Եթե արմատականությանմի չափանիշներից մեկը սպանելու կարողությունն է, ապա ինչպե՞ս որակել Պարսից Ծոցի պատերազմը, եթե ընդունում ենք, որ դրա հիմնական դրդապատճառը Միջին Արևելքի նավթային պաշարների նկատմամբ վերահսկողությունը կորցնելու վախն էր, հանքերակը (Ջորջ Բուշ):

[15] Սա այնպիսի ազդեցիկ արևմտյան մակրոպատմաբանների հիմնական դիրքորոշումն է, ինչպիսիք են Ադամ Սմիթը, Հերբերթ Սպենսերն ու Մաքս Վեբերը: Տես՝ Johan Galtung and Sohail Inayatullah, *Macro-history and Macro-historians,* forthcoming.

[16] Հուդայականությունը, որպես մյուս երկուսի սկզբնաղբյուր, միաստվածային է և ոչ համընդհանրացնող կամ միամարգարեական:

[17] Նկատառումը հետևյալն է՝ տնտեսական աճ ապահովելն, իհարկե, դյուրին խնդիր չէ, բայց «ոչ որևէ մեկի հաշվին» տնտեսական աճ ապահովելն անհամեմատ ավելի մեծ դժվարությունների հետ է կապված: Հակառակ դեպքում անհրաժեշտ է ընտրել «նվազագույն դիմադրության» ճանապարհը:

[18] «Ներքին պրոլետարիատ» (ներքին բանվոր դասակարգի վերաբերյալ) և «արտաքին պրոլետարիատ» (արտաքին աշխարհի առնչությամբ, որպես բարբարոսներ, այսօր կիրառվում է Երրորդ աշխարհի իմաստով) տերմինները

վերցված են Թոյնբիից: Շահագործումն այստեղ բացատրված է որպես կյանքի գերօգտագործում, և «կյանք» հասկացությունն այս իմաստով բաժանված է չորս մասի՝ ինքնաշահագործում, ներքին բանվոր դասակարգ, արտաքին կամ Երրորդ աշխարհ և բնություն:

[19] Տե՛ս՝ Carol Gilligan *"In a Different Voice"*. Բայց թույլ տվեք մի օրինակ բերել իմ անձնական կյանքից: 1974թ. ես հանդես էի գալիս որպես Նորվեգիայի պատվիրակության դիտորդ Միավորված ազգերի կազմակերպության «Օրենքը ջրային տարածքում» համաժողովում, որը տեղի էր ունենում Կարակասում (Վենեսուելա): Ներկա էին պատվիրակներ 150 երկրներից, քննարկման էր ներկայացված 150 հարց: Այսինքն՝ ընդհանուր օրակարգը գերծանրաբեռնված էր ու խճճված: Բոլոր հարցերի էությունն ըմբռնելու կարողությունը վեր էր մասնակիցների, նույնիսկ պատվիրակների մեծ մասի մտավոր ունակությունների սահմանից: Ուստի և այս խճճվածությունը պարզեցնելու նպատակով անցկացվում էին բազմաթիվ տարբեր նիստեր: Մի անգամ ինձ հրավիրեցին մասնակցելու քարտուղարների նիստին: Նիստի ընթացքում փաստաթղթերը մեքենագրվում էին, ընդ որում՝ դրանք կազմում էին տղամարդիկ, իսկ մեքենագրում էին կանայք: Քննարկվում էր օվկիանոսի հատակի և ընդերքի հանածոների հիմնահարցը: Տղամարդիկ քննարկում էին՝ ինչպես շահագործել դրանք, իսկ քարտուղարները՝ թե ով է օգտվելու դրանցից: Վերջիններիս պատասխաններն ուղղված էին Երրորդ աշխարհում՝ Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի ու Հարավային Ասիայի երկրներում տառապող կանանց ու երեխաներին: Կարեկցանք: Բայց տղամարդիկ, այսինքն՝ գրեթե բոլոր պատվիրակները, լիովին այլ մոտեցում էին հանդես բերում: Նրանց նախ և առաջ հետաքրքրում էր այն հարցը, թե ինչպես օվկիանոսի հատակի հնարավոր պաշարների, մասնավորապես՝ հայտնի ելունդների շահագործումը համապատասխանեցնել միջազգային իրավունքի նորմերին: Խնդիրն ուսումնասիրելու համար անհրաժեշտ էին նոր հետազոտություններ, նոր ինստիտուտներ, հնարավոր է՝ նոր դոկտորական կոչումներ, համապատասխան ինտելեկտուալ կառուցվածքներում վերապատրաստված նոր մարդիկ: Ի հավելումն այս ամենի, ծառացավ ամենամեծ հիմնահարցը. ինչպե՞ս պահպանել ազգային շահերը, այսինքն՝ սեփական երկրի, և ոչ թե այլոց, կամ ընդհանրապես մարդ էակների շահերը: Այլ խոսքով՝ սոցիալական շահերի և օրենքների նույն ստորակարգությունը: Ոչ մի կարեկցանք կարիքավորի հանդեպ:

[20] Տե՛ս՝ Մաքս Վեբերի *"The Protestant Ethic and the Spirit of Capitalism"* աշխատությունը: Այս գիրքը, ինչպես և Կարլ Մարքսի «Կապիտալը», հիմա էլ արժե կարդալ հանուն դրանց հեղինակների փայլուն ու միանգամայն այժմեական մտքերի, քանզի աշխարհն այն ժամանակից ի վեր շատ չի փոխվել:

2
Վեց տնտեսագիտական դպրոցներ

2.1 Դպրոցների սահմանումը

Չնայած թերահավատությանը, որով այնքան մտահոգված է տնտեսագիտությունը, ոչ ոք էլ չի հերքում փաստը, որ *տնտեսությունը՝* բնություն-արտադրություն-սպառում ոլորապտույտը, վճռորոշ դերակատարում ունի ցանկացած հասարակությունում: Մյուս կողմից, նույնը կարելի է պնդել նաև *պետության՝* որպես իշխանության կառույցի մասին, *մշակույթի* մասին, քանզի խոշոր հաշվով հենց մշակույթն է ձևավորում առաջարկն ու պահանջարկը, ինչպես նաև *զինվորականության՝* որպես հարկադիր իշխանություն իրականացնողների մասին:

Այս գլխի հիմնական թեզը հետևյալն է՝ աշխարհի տնտեսությունները կազմակերպված են որոշակի տրամաբանությամբ՝ համաձայն տնտեսագիտական դպրոցների: Այդ դպրոցների էությունը պարզաբանելու համար անհրաժեշտ են դատողություններ, տեսակետներ, որոնց լույսի ներքո կքննարկվեն դրանք ու կմեկնաբանվեն դրանց հիմնական բնորոշիչները: Այստեղ հարկ է քննարկել նաև տնտեսական պարբերաշրջանի գաղափարն ու համապատասխան մշակույթը:

Տնտեսական պարբերաշրջանը կդիտարկվի որպես ներդրումներ-արտադրողականություն-արտադրանք-բաշխում շրջապտույտ: Մենք դիտարկելու ենք ապրանքների ու ծառայությունների (հակաապրանքների և հակածառայությունների) արտադրությունը: Արտադրության համար անհրաժեշտ են ներդրումներ՝ *արտադրության գործոններ:* Կուսումնասիրենք հինգ հիմնական ներդրումների (բնություն, աշխատուժ, կապիտալ, տեխնոլոգիա, կառավարում) ելակետային շարքը: Արտադրական ֆունկցիան կլինի հետևյալը. Ա = Ա (Բ, Աշխ., Կ, Տ, Կառ.): Գալով ապրանքներին, հարկ է նշել, որ դրանց արտադրության համար անհրաժեշտ են որոշակի *արտադրահարաբերություններ* կամ կազմակերպում: *«Միջոցներ»* բառն այս դեպքում, թերևս, այնքան էլ կիրառելի չէ, բայց ցույց է տալիս ներդրում-արտադրանք հարաբերության ուղղությունը: Ապա ապրանքները *բաշխվում* են: Դրանք կարող են ներդրվել նոր արտադրության մեջ, կարող են պահեստավորվել կամ օգտագործվել վերջնական սպառման նպատակով, որի արդյունքն էլ թափոնների տեսքով նորից վերադարձվում է բնությանը: Տնտեսական պարբերաշրջանի մեկնակետն ու վերջնակետը՝ այսպես կոչված «ալֆան ու օմեգան», կամ վերարտադրության գործընթացում անընդհատ համալրվող հիմնական նյութը, երբեք չի սպառվում:

Մշակույթը նման է հողին, որը սնուցում է որոշակի տնտեսական բույսեր/մոլախոտեր առավել, քան մյուսները: Քննարկենք մի շարք մասնավոր երկընտրանքներ, որ առկա են մշակույթում և/կամ առաջարկվում են դրա կողմից[1].

անհատապաշտություն	*ի հակադրություն*	*կոլեկտիվիզմի,*
ուղղահայացություն	*ի հակադրություն*	*հորիզոնականության,*
մոնետիզացում	*ի հակադրություն*	*ինքնաճնության,*
մշակում	*ի հակադրություն*	*«բնականության»,*
ընդլայնում	*ի հակադրություն*	*կայունության:*

«Անհատապաշտությունն» առավել մեծ ուշադրություն է դարձնում և արտոնություն է տալիս անհատին, «կոլեկտիվիզմ»[2] հասկացությունը, ընդհակառակը, արտոնում է խմբերին, կլաններին, ցեղերին, ազգերին և այլն՝ հետին պլան մղելով անհատին: «Ուղղահայացությունը» ստորակարգության նախահակվածությունն է, վերինի և ստորինի հստակ տարանջատումը, իսկ «հորիզոնականությունը»՝ ամեն ինչ (բոլոր տիպերը) միևնույն հարթության մեջ դիտարկելը:

«Մոնետիզացումը» դրամական արժեք է վերագրում ամեն ինչի՝ դրանով իսկ ամեն ինչ ընդհանրացնելով ու բաղդատելով: Ի հակադրություն դրա, «ինքնաճնությունը» եզակի ու որոշակի բնորոշում է տալիս ցանկացած առարկայի ու երևույթի:

«Մշակումը» «բնականն» ինչ-որ գործընթացի ենթարկելն է, դրան ձև կամ մշակույթ դրոշմելը: Ի թիվս այլոց, այս հայեցակարգը ներառում է նաև մանկավարժությունը և կրթությունն ընդհանրապես, նաև՝ մարդկային ուղեղի դրոշմաձևումը տեղեկատվությամբ: Հակառակը կլինի բնական վիճակը՝ «բնականությունը»: Ֆրանսերեն *le cru* և *le cuit* արտահայտություններն արտացոլում են երևույթների տարբերակման որոշ չափանիշներ՝ զուտ բնականից մինչև զուտ մշակութայինը:

«Ընդլայնումը» (էքսպանսիա) ամեն ինչի աճն է ու ավելացումը: Հակառակը կլինի «կայունությունը», քանզի կրճատումը կամ կծկումը տվյալ համատեքստում անիմաստ է հնչում:

Ի վերջո, մենք պետք է ավելացնենք *բնությունը*: Դրա բացասումը ոչինչն է:

Այժմ վերոհիշյալը դիտարկելու համար օգտագործենք մի տնտեսական համակարգ, որ հետագայում վկայակոչելու ենք դրանք բոլորը քննարկելիս՝ սմիթյան տնտեսագիտությունը, որ այդպես է կոչվել Ադամ Սմիթի անունով: Ինչպես տնտեսագիտական ցանկացած այլ տեսության մեջ, այստեղ ևս հիմնական խնդրո առարկան այն է, թե ինչպես ելակետային ներդրումը վերածել արտադրանքի և ապա՝ այն բաշխել: Հիմնական վարկածը հետևյալն է՝ սմիթյան տնտեսագիտության մշակութային հենքը *անհատապաշտություն - ուղղահայացություն - մոնետիզացում - մշակում - ընդլայնում* առանցքն է: «Կապիտալիզմ» տերմինը բացատրում է միայն մոնետիզացման գործոնը, այդ իսկ պատճառով սմիթականությունն այդքան գերադասելի է[3]: Սմիթի մտքի ուղղվածությունը թելադրված է պոզիտիվ/գիտական լինելու ջանքերով՝ Գալիլեյի ու Նյուտոնի, Մաքիավելլու, Վիկոյի, Հոբսի ավանդույթներով, միաժամանակ շերտ-շերտ առանձնացնելով ու մաքրելով գերզգայունության ու բարոյախոսության շերտերը և ձերբազատելով զուտ բնականը[4].

Մարդկային *բնության* հետազոտություն, ինչը նա դիտարկում է որպես հիմնականում սեփական շահերով ուղղորդվող, որը, սակայն, չափավորվում է *բարոյական զգացականությամբ*[5]:

Բնական տնտեսական համակարգի հետազոտություն, ուր յուրաքանչյուր ոք առաջնորդվում է բացարձակապես սեփական շահերով:

Ազգերի հարստության պատճառների ու բնույթի հետազոտություն[6], որ հիմնվում է տնտեսական համակարգի գործնական կիրառման վրա:

Անտեսանելի ձեռք. «հետապնդելով իր սեփական շահերը՝ նա (մարդը) հաճախ խթանում է հասարակության շահերն ավելի մեծ արդյունավետությամբ, քան եթե իսկապես ձգտեր խթանել դրանք» (այս պնդումը բխում է առաջին երեքից):

Ասվածից հետևում է Սմիթի մտքի կառուցվածքը, այն է՝

A1. ԱՆՀԱՏԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ. միայն անհատները կարող են հետամուտ լինել իրենց սեփական շահերին: Կազմակերպությունն ու պետությունը դիտարկվում են որպես մակրոանհատներ, որոնց կառուցվածքային բուրգի գագաթին կանգնած է մեկ անձնավորություն: Երկիրն անհատների համակարգ է, իսկ աշխարհը՝ երկրների համակարգ: Ապագան միտված է դեպի անհատը և ոչ թե դեպի համակարգը[7]:

A2. ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ նախադրում է աշխարհի բաժանվածություն երկու համակարգերի՝ ազատ դերակատարների ու մասնավոր սեփականության՝ դրանց միջև «մեկին՝ մեկ» սեփականատիրական հարաբերություններով:

A3. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ. սահմանափակ տնտեսագիտական իմաստով նշանակում է անձնական սեփականություն ունենալու և ավելին կուտակելու նպատակով այն օգտագործելու իրավունք: Այստեղից հետևում է պետության հիմնական դերը. ոստիկանություն՝ անհատների և կազմակերպությունների սեփականությունը պաշտպանելու համար, զինվորականություն՝ հասարակությունների սեփականությունը պաշտպանելու (ընդլայնելու) համար, դատական համակարգ՝ գործող անձանց միջև ծագող վեճերի քննարկման համար:

A4. ՇՈՒԿԱ, որպեսզի ազատ դերակատարները կարողանան համադրել գնորդների պահանջարկն ու վաճառողների առաջարկը, գնողներին ու վաճառողներին, ներառյալ՝ արտադրողներին ու սպառողներին, հանդիպելու և գործարքներ կնքելու հնարավորություն տալու համար:

B1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ անհատական և հասարակական մակարդակներում՝ տարբեր անհատների ու հասարակությունների համար առկա տարբեր խնդիրներով:

B2. ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ մասնագիտական ունակություններն ու ռիսկերը վարձատրելու համար:

B3. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ գնորդների և վաճառողների (լինեն դրանք անհատներ, տնտեսություններ, ձեռնարկություններ, թե երկրներ) միջև առավել արդյունավետ շուկայական գործարքներ իրականացնելու համար:

C. ՄՈՆԵՏԻԶԱՑԻԱ. արտադրության գործառույթում ամեն ինչի (ինչպես արտադրության գործոնների, այնպես էլ ապրանքների) արժեքային արտահայտություն. ապրանքների գներ, հողի ռենտա, աշխատավարձ, իրացվելի կապիտալի տոկոսադրույքներ, հաստատագրված կապիտալի դիվիդենտներ, արտոնագրերի և ընդհանուր սեփականության արժեք:

D. ՄՇԱԿՈՒՄ (արտադրություն). բնական հումքի և մարդկային «հումքի» մշակութային ու տեղեկատվական դրոշմաձևում:

E. ԸՆԴԼԱՅՆՈՒՄ (աճ). այն բաժանվում է հետևյալ խմբերի (ձևերի).

- ըստ որակի՝ ապրանքների բազմազանության ու ընտրության հնարավորության ավելացում,
- ըստ քանակի՝ ապրանքների ծավալների ավելացում,
- ըստ բնագավառի՝ բնագավառի տնտեսական պարբերաշրջանն ընդգրկում է առավել լայն տարածքներ,
- ըստ գործունեության շրջանակի՝ ներդրումների ու արտադրանքի ծավալների ավելացում:

Բաղկացուցիչները խմբավորված են որպես համախտանիշներ՝ A, B, C, D, E:

Անհատապաշտության A հայտանիշն անհատին դիտարկում է որպես հիմնական դերակատար, որ առաջնորդվում է ոչ միայն սեփական շահով, այլև ընդունակ է գործելու իրավիճակին համապատասխան: Մյուս երկու դերակատարները՝ ձեռնարկությունն ու երկիրը (հասարակությունը, պետությունը), դիտարկվում են անտրոպոմոֆիկ հեռանկարում: Կառուցվածքային հարաբերությունները թույլ են, բացառությամբ գնորդների ու վաճառողների միջև շուկայական (գործարքների) հարաբերություններից: Շուկայական վարքագծի պայմանը սեփականությունն է. ըստ այդ հայեցակարգի՝ կատարյալ աշխարհում բոլոր անհատներն ունեն սեփականություն, և ամեն ինչ տեր ունի: Կոլեկտիվ սեփականություն գոյություն չունի, *res communis = resnullius* (ինչ պատկանում է բոլորին, չի պատկանում ոչ մեկին. այդպես հռոմեական օրենքն է ասում): Սեփականություն ունենալու և այն բազմապատկելու իրավունքը հիմնարար է և այստեղ դիտարկվում է որպես ազատություն:

Ուղղահայացության B հայտանիշի դեպքում մեկնակետն աշխատանքի բաժանումն է, որը դասակարգում է «աշխատանք» հասկացությունը՝ որպես «ծնունդով» տրված կարգավիճակին հաջորդող սուբստանց: Տարբերակված վարձատրությունը ուղղահայաց դասակարգման հիմնական մեխանիզմներից է, որը պայմանավորված է ռիսկի դիմելու տարբեր աստիճաններով: Այսինքն՝ մրցակցային շուկայական վարքագիծը հնարավորություն է ընձեռում շարժվելու ինչպես դեպի վեր, այնպես էլ դեպի վար:

C, D, E համախտանիշերում ի հայտ են գալիս փողը, մշակումը և ընդլայնումը, որոնք իրար հետ խիստ շաղկապված են: Արդյունքում՝ մոնետիզացված տնտեսական պարբերաշրջանները ներդրումների մշակման բարձր մակարդակով (չիփսերի արտադրություն, համալսարան) անընդհատ կրկնվում են և ընդլայնվում: Կատարյալ պայմաններում առաջարկը համապատասխանում է պահանջարկին, իսկ գները համապատասխանում են վճարվող աշխատավարձերին: Խնդիրն այստեղ պարբերաշրջանն առնվազն կայուն դարձնելն է:

Գծապատկեր 2.1. Մոնետիզացված տնտեսական պարբերաշրջանները



2.2 Երկնագույն դպրոցը. շուկա և կապիտալ

Սմիթականությունը բոլոր դպրոցների մայր դպրոցի՝ Երկնագույն դպրոցի[8] հիմքն է: Դրան նախորդել են մերկանտիլիստները, ֆիզիոկրատները, միջնադարյան տնտեսագետները, Հռոմեական կայսրությունը, նախապատմական և ոչ Արևմտյան գործիչները:

Բայց վերջին 200 տարիների ընթացքում այս դպրոցը, լինելով գերիշխող, խարիսխ է ծառայել տեսության և պրակտիկայի համար (տե՛ս՝ աղյուսակ 2.1):

Աղյուսակ 2.1. Երկնագույն դպրոց. շուկա և կապիտալ

	Արտադրության գործոններ	Արտադրահարաբերություններ	Ապրանքներ	Բաշխում
Անհատապաշտություն	Հումքի, Աշխատուժի, Կապիտալի, Տեխնոլոգիայի, Կառավարման մասնավոր սեփականություն	Մասնավոր սեփականություն կամ վերահսկողություն	Անհատական կամ ընտանեկան սպառման ապրանքներ	Շուկայական մեխանիզմներ Առաջարկ պահանջարկի դիմաց Վաճառողը հանդիպում է գնորդին. գործարք
Ուղղահայացություն	Սեփականատերն է որոշում գործոնների և ավելցուկի օգտագործման կարգը Գործոնների շարժունություն Կենտրոն/ ծայրամասեր շահագործում	Սեփականատերն է որոշում աշխատուժի ու աշխատանքի պայմանների օգտագործման կարգը Մարտահրավեր - մենաշնորհ Շահագործման փոխանակ-	Սեփականատերն է որոշում որ և որքան ապրանքներ Ապրանքների շերտադասումը ըստ գնի և որակի *Որակ/գին* առավելագույն հարաբերակցու-	Մեքենայություններ սպառողի նախասիրությունների հետ շուկայավարության միջոցով Միակողմ երկխոսություն Մարտահրավեր - մենաշնորհ

	Ապագա սերունդների շահագործում	ման պայմաններ Մրցակցություն Աշխատանքի բաժանում	թյուն (Ո/Գ)	Առևտրի շահագործման պայմաններ Մրցակցություն
Մոնետիզացում	Բոլոր գործոնները մոնետիզացված են	Արտադրողականություն. ներդրումներ - արտադրանք	Բոլոր ապրանքները մոնետիզացված են	Ռացիոնալ որոշումներ
Մշակում	Առավելագույն Մ/Հ հարաբերակցության	Խնդրի՝ կատարելագործում տանող մշակում	Որպես կանոն առավել բարդ արտադրանք	Որպես կանոն առավել զարգացած շուկա
Ընդլայնում	Գործոնների կատարելագործում Գործոնների հավասարեցում	Կազմակերպությունների ընդարձակում Աճող բազմազանություն	Աճող ծավալներ Աճող տարբերակում	Ապրանքների և գործոնների համաշխարհային շուկա Շուկայի բաժնեմաս
	Անվերջ ընթացք	*Անվերջ ընթացք*	*Անվերջ ընթացք*	*Անվերջ ընթացք*
Բնություն	Ընդհանուր սպառվածություն	Մարդկային սպառում, աղտոտում	Արդյունաբերական աղտոտում	Տնտեսությունների աղտոտում

Այս սխեմայում երկնագույն (սմիթյան, կապիտալիստական) համակարգի տրամաբանությունը խարսխված է 24 քայլի վրա: Հորիզոնական ընթերցումը գերադասելի է համակարգն ընդհանուր առմամբ ավելի լավ ըմբռնելու տեսանկյունից, իսկ ուղղահայաց ընթերցումը գերադասելի է առավել սահմանափակ տնտեսական իմաստը հասկանալու առումով: Հռոմեական օրենքից վերցված *«դոմինոյի»* ենթադրության հետևանքով «անհատապաշտությունը» ինքնադրսևորվում է սեփականության ձևով: Թե՛ արտադրության գործոնները, թե՛ արտադրահարաբերությունները կարող են համարվել սեփականության առարկա և վերահսկվել[9]: Սեփականությունը վերաբերում է բոլոր գործոններին: Ստրկատիրությունը՝ ստրուկների մարդկային աշխատուժի և շուկայի (շուկայական գործոնների) սեփականությունը, ամբողջությամբ տեղավորվում է երկնագույն դպրոցի տրամաբանության մեջ: Օտարումը նշանակում է անկանոնություն և, հետևաբար, խստագույն դիմադրության է հանդիպում: Եթե ուշադիր ուսումնասիրենք մեկ այլ էական փոփոխականի՝ գործոնների (ներառյալ աշխատուժը) շարժերը, ապա կտեսնենք, որ հակաստրկատիրական շարժումները ևս բացատրվում են երկնագույն տրամաբանության շրջանակներում: Աշխատուժի շուկայում, ի տարբերություն ստրուկների շուկայի, առկա է այն առավելությունը, որ բանվորը հաճախ ինքն է վճարում արտադրության մի բևեռից մյուսը տեղաշարժվելու ծախսերը: Եվ աֆրիկյան աշխատուժը ևս կարող է օգտագործվել *in situ*, օրինակ, աֆրիկյան պլանտացիաներում գործոնների շուկայի շարժունակության շատ ավելի ցածր մակարդակով:

«Անհատապաշտությունն» ի հայտ է գալիս նաև անհատական սպառման ապրանքների արտադրության բնագավառում: Ասվածի վառ օրինակն է ար-

տաղրվող ավտոմեքենաների ու ավտոբուսների քանակական հարաբերակցությունը: Այնժամ ի հայտ է գալիս նաև ծայրահեղ մրցակցային շուկան՝ որպես տնտեսական ճակատամարտերի իրականացման վայր, ուր անհատներն ու մակրոանհատները (ձեռնարկություններ, երկրներ) կարող են դրսևորել իրենց ողջ եռանդն ու արիությունը: Վաճառողները պայքարում են լավագույն վաճառքի[i], իսկ գնորդները՝ արդյունավետ գնումների համար՝ մրցակցային հարաբերություններով: Վաճառողները հանդիպում են գնորդներին, բանակցում են, և, երբ նրանք արդեն դառնում են «գործարքի պատրաստ», վաճառողներն ու «գործարքի պատրաստ» գնորդները գործարք են կնքում, որն այս տրամաբանությամբ շատ նման է սիրո գործողության՝ գեղեցիկի ցոլքերը լուսավորում են տիեզերքը:

«Ուղղաձիգությունը», ամեն ինչից զատ, անձնական սեփականության նկատմամբ սեփականատիրոջ բացառիկ իրավունքի վավերացումն է: Սեփականատերը կարող է վերահսկել գործոնները (ներառյալ դրանց արտադրած կապիտալը՝ ավելցուկը), աշխատանքային պայմանները ձեռնարկության ներսում, արտադրանքի քանակն ու որակը, ներառյալ՝ դրանց շերտադասումն ըստ հասարակության շերտերի, ինչպես նաև շուկայավարությունը՝ ձևավորելով հասարակության ճաշակները կամ գոնե ներազդելով դրանց ձևավորման վրա երկնագույն դպրոցի մի շատ հետաքրքիր առանձնահատկության՝ զանգվածային լրատվամիջոցներում միակողմանի գովազդի (ներառյալ պիտակներն ու վահանակները) միջոցով՝ գրեթե հնարավորություն չտալով վիճարկել վերջինիս բովանդակությունը[10]:

Ասվածի հետևանքն այն է, որ սեփականատերերը (լայն իմաստով) և, մասնավորապես, առաջին կամ վաղ սերնդի սեփականատերերը՝ *ձեռնարկատերերը*, այն աստիճան են մտնում որոշում կայացնողի դերի մեջ, որ *«դե ֆակտո»* մենաշնորհի դիրք են ստանձնում: Համակարգում ի հայտ են գալիս խնդիրներ, լուծումները պատվում են անորոշությամբ: Որոշումը ցրում է անորոշությունը՝ նվազեցնելով էնտրոպիան, բայց այդ գործողությունը (որոշման կայացումը /թարգ./) որոշում կայացնողից որոշակի ջանքեր է պահանջում: Որոշում կայացնողն, իր հերթին, որոշման կայացման փորձ ձեռք բերելով՝ ներքին փորձառություն է կուտակում:

Ուղղահայացության մեկ այլ համախտանիշ է անհավասարությունը կամ շահագործումը: Քննարկենք վերջինիս չորս տիպերը. անհավասար փոխանակությունը կենտրոնի (որտեղ գործոնները ենթարկվում են մշակման) և ծայրամասերի (որտեղ ապրանքները սպառվում են) միջև, անհավասար փոխանակությունը մարտահրավերները ձևավորողների և նրանց միջև, ովքեր աշխատում են ՍԳԸ («ստանդարտ գործառնական ընթացակարգերի») համապատասխան[11], առևտրի անհավասար փոխանակությունը, որ կարող է համընկնել առաջին տիպի հետ և սերունդների միջև անհավասար փոխանակություն, որ կարող է զրկել վերջիններիս գործոններից: Կենտրոնն ու ծայրամասերը հանդես են գալիս որպես երկնագույն համակարգի երկու համախտանիշներ[12]:

«Մոնետիզացումն» ավելին է, քան ընդամենը գործոնների ու ապրանքների գնագոյացումը: Ենթադրությունը, որ ամեն ինչ գին ունի, և այն, ինչը գին ունի, կարող է վաճառվել շուկայում[13], ամեն ինչ դարձնում է բաղդատելի, ա-

[i] բարձր գին, մեծ ծավալներ /թարգ./

մեն ինչ կարող է վաճառվել՝ փոխանակվել ամեն ինչի հետ: Եթե ռացիոնալությունը սահմանենք որպես սեփական շահերով թելադրված գործողություն՝ շուկայական գործառնությունների համակարգում ժամանակի ընթացքում առավելագույն շահի ստացման նպատակով, ապա մոնետիզացումն այն հնարավոր է դարձնում: Միաժամանակ գինը քանակական փոփոխական է, որ առավել դյուրին է դարձնում դպրոցի տրամաբանությունն արտացոլող մաթեմատիկական մոդելի կառուցումը[14]:

«Մշակումը», որ բնության (Բ) վրա մշակույթի (Մ) դրոշմաձևումն է, ինչպես նաև Մ/Բ աճող հարաբերակցությունը, առնչվում է ամեն ինչին: Կազմակերպությունը, ձեռնարկությունը պետք է իրականացնի առավել մեծ ծավալի մշակում՝ ներսում ունենալով շարունակաբար մշակվող աշխատուժի հարաճուն քանակներ՝ Հ և Զ (հետազոտություն և զարգացում /թարգ./) մասնագետներ: Ապրանքներն անընդհատ պետք է կատարելագործվեն: Ավելին, շուկաները պետք է արձագանքեն ավելի կատարյալ ապրանքների համար կնքվող առավել բարդ ու համապարփակ գործարքներին, այսինքն՝ հարաճուն գործառնական ծախսերին[15], որ ինքնաբերաբար կնշանակի շուկայի առավել թույլ ու գավառային մասնակիցների (անհատներ, կազմակերպություններ, երկրներ) ճնշում[16]:

«Ընդլայնումը» հանդես է գալիս բոլոր չորս ոլորտներում՝ ապրանքների ու գործարքների, ծավալների ու բազմազանության մեծացում, տնտեսական պարբերաշրջաններ, ուր ընդգրկվում են նորանոր տարածքներ (որ շուտով կարող է դառնալ արտացամաքային), և անընդհատ ընդլայնվող հարաճուն բազմազանության տնտեսական կազմակերպություններ: Մեխանիզմներից մեկը գործոնների շարժունակությունն է, և գործոնների հավասարակշռվածությունը ձգտում է ներդրումների հավասարակշռված համակցության՝ առանց ավելցուկների ու պակասորդների[17]: Ընդլայնում՝ առանց նախանշված վերջնակետի:

Ի վերջո, գալիս է «բնությունը»՝ ներառյալ տաղտկալի, քայքայիչ կեղտոտ ու վտանգավոր աշխատանք կատարող մարդկային էակները: Սա գլխավոր կորցնողն է, որ աղտոտվում ու սպառվում է տնտեսական գործընթացում, ինչն էլ ինքնին դառնում է նպատակ:

Երկնագույն դպրոցի և համակարգի մասին գրադարաններ են գրված: Ապրանքների անհավանական ծավալների ու նույնքան անհավանական բազմազանության շուկայավարությունը, ընդհանուր առմամբ, պարզ է և դիտարկվում է իբրև ձեռքբերում: Բայց առկա են նաև բոլորիս քաջ հայտնի հիմնախնդիրներ, ինչպես ցույց է տրված 2.1 աղյուսակում:

Համակարգն աշխատում է այնքան, որքան աշխատում է՝ շուկայում ապրանքների առաջարկը ծնում է այնքան պահանջարկ, որ բավարար է գործոններին վճարելու համար. հետևաբար, պարբերաշրջանը զարգանում է կամ, առնվազն, գոյատևում է: Կամ գործոններին վճարվող գներն են չափազանց բարձր, կամ ապրանքների գներն են չափազանց ցածր. բայց կա անհատների (ձեռնարկությունների, երկրների) կողմից պակասորդի կուտակման սահման, եթե նրանք չկարողանան արտաքին աշխարհից բավարար միջոցներ (սուբվենցիաներ) ներգրավել ճգնաժամերին դիմակայելու համար: Երկնագույն համակարգում օժանդակության այդ ձևը հիմնված է ֆինանսական տնտեսության մեջ «վարկունակության» վրա: Կարմիր համակարգում իրական տնտեսությունն իր հետևում կանգնած պետություն ունի, որի օգնությանն էլ կարող է դիմել ցանկացած պահի: Դեղին համակարգում՝ Ճապոնիայում,

անհատներն ու ձեռնարկությունները կարող են անհրաժեշտ միջոցներ ձեռք բերել պետության և կապիտալի փոխկապակցված հարաբերությունից: Աշխարհում կան կյանքը երկարաձգող նմանօրինակ կառույցներ նաև պակասորդ կուտակած երկրների համար:

Գերարտադրությունը հատուկ դեպք է, որ իր ազդեցությունն է թողնում տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում գործող ձեռնարկությունների կամ, ավելի որոշակի, տվյալ երկրի գրեթե բոլոր ձեռնարկությունների վրա, անկախ դրանց գործունեության ոլորտից: Առկա է արտադրության ծավալների ավելցուկ կամ ոչ լրիվ սպառում, որ նշանակում է արդյունավետ պահանջարկ (ներառյալ պահեստավորումը): Ավելցուկային ապրանքներն այս դեպքում ուղղակի վերադառնում են բնությանը՝ ոչնչացման ճանապարհով, սպառողին վերադառնալու փոխարեն: Արտադրության ավելցուկային միջոցները պետք է վերացվեն, հակառակ դեպքում՝ ոչ միայն ձեռնարկությունները, այլև ամբողջ ոլորտը և ոչ միայն ոլորտը, այլև ամբողջ երկիրն է դառնում անմրցունակ: Հետևանքը կարող է լինել տնտեսական համակարգի ծավալների զանգվածային կրճատումը, անգամ դրա փլուզումը:

2.3 Կարմիր դպրոցը. պետություն և իշխանություն

Երկնագույն դպրոցի ճգնաժամը Կարմիր դպրոցի սկզբնավորման մեկնակետն է[18]: Մինչդեռ երկնագույն դպրոցի հիմքում ընկած է սմիթականությունը, կարմիր դպրոցը չի հիմնվում մարքսիզմի վրա, որն իրականում երկնագույն դպրոցի փայլուն վերլուծությունն է ու քննադատությունը: Սմիթականության գրավչությունը դրա կառուցվածքային հանճարեղությունն է, որը բացակայում է մարքսիզմում: Կարմիր՝ սոցիալական դպրոցը զարգացել է հանկարծաստեղծման ճանապարհով՝ մերկացնելով ու անողոք քննադատության ենթարկելով երկնագույն ուսմունքի ենթադրությունների ու եզրահանգումների թույլ կողմերը (տես՝ Աղյուսակ 2.2):

Աղյուսակ 2.2. Կարմիր դպրոցը. պետություն և իշխանություն

	Արտադրության գործոններ	Արտադրահարաբերություններ	Ապրանքներ	Բաշխում
Անհատապաշտություն	Գործոնների պետական/հասարակական սեփականություն	Պետական/հասարակական սեփականություն Լրիվ զբաղվածություն	Կոլեկտիվ սպառման ապրանքներ	Պլանային տնտեսություն Առաջարկ, հետո միայն պահանջարկ
Ուղղահայացություն	Պետությունն է որոշում գործոնների և ավելցուկի օգտագործման կարգը Գործոնների շարժունու-	Պետությունն է որոշում աշխատուժի ու աշխատանքի պայմանների օգտագործման կարգը Մարտահրա-	Պետությունն է որոշում որ և որքան ապրանքներ Ապրանքների միակերպում ըստ գնի և որակի	Պլանավորված ապրանքներ կանխատեսված պահանջարկի դիմաց Միակողմ երկխոսություն

	թյուն Կենտրոն/ ծայրամասեր շահագործում Ապագա սերունդների շահագործում	վեր - մենաշնորհ Շահագործման փոխանակման պայմաններ Իշխանության պայքար Աշխատանքի բաժանում	Պլանի կատարում Որակ / գին (Ո/Գ) աճի միտում	Շուկայավարության բացակայություն Մրցակցության բացակայություն Հաստատագրված աշխատավարձեր
Մոնետիզացում	Գործոնները մոնետիզացված չեն	Աշխատանքի արտադրողականությունն էական չէ	Ապրանքների գնագոյացում ըստ կարիքների	Պլանային ռացիոնալություն
Մշակում	Մ/Հ հարաբերակցության աճի միտում	Առավել բարդ խնդրի քննարկում	Առավել բարդ արտադրանքի թողարկման փորձ	Առավել պատ - վախնդիր պլանների կազմում
Ընդլայնում	Շարունակական արտադրություն	Կազմակերպությունների ընդարձակում	Աճող ծավալներ	Կենտրոնացում ազգային շուկայի վրա
	Անվերջ ընթացք	*Անվերջ ընթացք*	*Անվերջ ընթացք*	*Անվերջ ընթացք*
Բնություն	Ընդհանուր սպառվածություն	Մարդկային սպառում, աղտոտում	Արդյունաբերական աղտոտում	Տնտեսությունների աղտոտում

Կարմիր համակարգը կարելի է դիտարկել որպես երկնագույնի *թույլ բացատում*: Երկուսն էլ հիմնված են *ալֆա*-կառուցվածքի[19] վրա. երկնագույնի դեպքում դրանք հսկայածավալ, բայց հյուծված ստորակարգություններն են, որ կառավարվում են խոշոր, շատերը՝ միջազգային կորպորացիաների կողմից, կարմիրի դեպքում՝ լայնածավալ բյուրոկրատիաների (երբեմն՝ միջազգային): Բայց երկնագույնի դեպքում հետադարձ կապ կա՝ շուկայում մարդիկ ընտրության հնարավորություն ունեն, իսկ ընտրությունը բացահայտում է նախասիրությունները: Երկնագույնի դեպքում գոյատևելու համար ժողովրդայնություն վայելող նախապատվությունները կա՛մ պետք է շարունակվեն, կա՛մ բազմապատկվեն: Երկու դեպքում էլ դրանք պետք է հաշվի առնվեն: Քաջ հայտնի կարմիր համակարգում՝ նախկին Խորհրդային Միության ու Արևելյան Եվրոպայի ճախողված սոցիալիստական համակարգերում, պետական իշխանությունն այն աստիճան բացարձակ էր, որ ղեկավարներն անգամ չէին փորձում հաշվի առնել այդ ժողովրդի նախասիրությունները: Նրանք կարող են տրամադրել առաջարկ՝ «ուզում ես վերցրու, չես ուզում՝ հեռացիր» սկզբունքով: Սակայն կարմիր համակարգի մեր վերլուծությունը չի կարող կապվել Ռուսաստանի/Խորհրդային Միության և Արևելյան Եվրոպայի պատմության հետ՝ 1917/1922/1945-48 թվականներից մինչև 1989 թվականի վերջը: Խնդրո առարկան շատ ավելի լայն է[20]:

Քանի որ երկնագույն և կարմիր համակարգերի միջև նմանությունները բազմաթիվ են, կանգ առնենք միայն հակասությունների վրա.

1. *Պետական սեփականություն*, առնվազն ամբողջական պարբերաշրջանի վերահսկողության իմաստով, որ բաղկացած է հետևյալ փուլերից. բնություն (բնական պաշարներ), աշխատուժ (վերահսկվում է զբաղվածության ու բնակության վայրի թույլտվության միջոցով), կապիտալ (բացառությամբ տնտեսությունների սպառմանն ուղղվող կապիտալի), տեխնոլոգիա և կառավարում: Եվ ի լրումն այս ամենի, հարկ է ավելացնել արտադրության որոշակի միջոցներն ու արտադրական տարածքները (բացառությամբ կոլեկտիվ սեփականություն հանդիսացողների, որոնք, սակայն, ևս վերահսկվում են պետության կողմից) և բաշխման մեխանիզմները (տրանսպորտի և հաղորդակցության միջոցներ): Այս զանգվածային սեփականությունը չի պատկանում մեկ առանձին գործակալության. խորհրդային սոցիալիստական համակարգում նախարարությունները լոկ կրկնում էին երկնագույն համակարգում տնտեսության ճյուղերի գործառույթները:

2. *Պլանային տնտեսություն.* պլանավորված արտադրություն, բաշխում և սպառում՝ սպառողն այլընտրանք չուներ, ինչպես Բարձրյալը կրոնական ուսմունքներում: Այս երկրային աստվածությունը ամենագո էր (կուսակցությունը), ամենագետ («գիտական սոցիալիզմ»), ամենազոր (պետական իշխանության բաղկացուցիչները՝ ՊԱԿ-ը և բանակը) և բարեգութ: Անշուշտ նաև միակողմանի հաղորդակցությունը՝ քարոզչությունը (պրոպագանդան):

3. *Առաջին առաջնահերթություն. հիմնական կարիքների բավարարմանն ուղղված արտադրություն.* անհրաժեշտ է որոշակիորեն բավարարել բնակչության կենսական կարիքները (ստորին և վերին մակարդակներում): Կարմիր արտադրական համակարգը պետք է կարողանա հոգալ սննդի, հագուստի և բնակարանային, ինչպես նաև կրթության և առողջապահության կարիքները, տրամադրի կոլեկտիվ սպառման ապրանքներ (դարձյալ ավտոմեքենա/ավտոբուս հարաբերակցությունը, կամ անհատական տուն/բնակարանային համալիր հարաբերակցությունը): Ինչպես շահույթը երկնագույն համակարգում, այնպես էլ *պլանի կատարումը* կարմիր համակարգում տրամաբանական նպատակակետ է:

4. *Լրիվ զբաղվածություն,* որը կարմիր տնտեսության դեպքում ինքնին նպատակակետ է[21]: Չնայած աշխատանքի բարձր արտադրողականությունը ցանկալի նպատակ է, բայց դա դեռ հիմք չէ բանվորին աշխատանքից ազատելու համար, քանզի գերնպատակը լրիվ զբաղվածությունն է (երբ յուրաքանչյուր ոք ապահովված է աշխատանքով) անգամ ցածր արտադրողականության պայմաններում[22]: Շատ բանվորներ կարմիր համակարգը բնութագրում են իբրև բանվորի նկատմամբ սիրալիր վերաբերմունք ցուցաբերող, բանվորից ավելի քիչ ջանք պահանջող:

5. *Սահմանափակ մոնետիզացում.* կարմիր համակարգում պետությունը վերահսկում է արտադրությունը: Գործոնները վաճառքի չեն հանվում: Բանվորը չի կարող վաճառել իր աշխատուժն ում ցանկանա, հողը ևս առուծախի առարկա չէ: Արտադրության ղեկավարը հաստատագրված աշխատավարձ է ստանում: Հիմնարար կարիքների բավարարմանն ուղղված ապրանքները թանկ չեն, բայց դրանց սակավությունը կարող է երկար հերթեր գոյացնել: Մոնետիզացման ցածր մակարդակը սահմանափակում է տնտեսության ֆինանսական հատվածը, որն էլ իր բացասական ազդեցությունն է թողնում տնտեսության իրական հատվածի վրա[23]:

Վերը նշված հինգ պնդումներն էլ երկնագույն համակարգի բացասմանն ուղղված ջանքեր են: Բայց աշխատանքի հստակ բաժանումն իշխողների ու

հպատակների միջև առավել քան ակնառու է և դրդում է իշխանության համար պայքարի: Երկնագույն համակարգը կարող է ապակենտրոնացնել ձեռներեցությունն ու վերահսկողությունը: Գործարարությունը կարող է զարգանալ տարբեր մասերում (տեղերում), այն կարող է կրճատվել, մնալ փոքր, բայց, այնուամենայնիվ, շարունակել լինել եկամտաբեր: Ավելին՝ մինչև որոշակի աստիճանի ինքնուրույնությունն ու նորարարությունը խրախուսվում են: Կարմիր համակարգում երկրի ողջ տնտեսությունը մեկ միասնական ձեռնարկություն է՝ ամբողջական տեղեկատվության համար չափազանց մեծ: Ավելին՝ ստորակարգության վերին աստիճաններում կանգնած ղեկավարները երբեք էլ չեն ձգտում ռիսկ ստանձնելու[24]:

Կարմիր ղեկավարներն օժտված են ավելի լայն իրավասություններով, քան երկնագույն համակարգի կառավարող այրերը: Եվ աշխատավորներն իրենց փոխանակման պայմանների (աշխատանքի ու աշխատանքային պայմանների, ներառյալ աշխատավարձը) բարելավման նպատակով զրկված են արհմիություններն օգտագործելու հնարավորությունից, քանզի արհմիությունները իրենք կառավարվում են պետության կողմից և թելադրում են աշխատանքի պայմանները: Համակարգի ցանկացած հատվածում սկզբնավորվող ցանկացած նոր տնտեսական գործունեություն անկարող է դառնալ կենտրոն. այն ամենաշատը կարող է լինել ենթակենտրոն ու ղեկավարվել վերևից ստացվող հրահանգներով:

Առանց մրցակցության չափազանց դժվար է ակտիվացնել Ո/Գ կամ Մ/Հ հարաբերակցությունների աճն ապահովող բավարար դրդապատճառներ: Ո/Գ հարաբերակցությունը կարող է չափազանց բարձր լինել. սուբսիդավորված գների հետևանքով սպառողների ընտրության և արտադրողների միջև մրցակցության գրեթե կամ իսպառ բացակայության պայմաններում նոր գաղափարներ ձևավորելու լավագույն ճանապարհը մնում է դրանք այլ տնտեսություններից գողանալը: Փաստորեն ընդունեցինք, որ համակարգն ինքն իրենով անկարող է ապահովել կայուն դինամիկ զարգացում: Կարմիր համակարգի համար «կաշխատի այնքան, որքան կաշխատի» սկզբունքը կիրառելի չէ: Այդ համակարգը դատապարտված է ի սկզբանե: Պատճառները կպարզաբանվեն հաջորդ գլխում: Ինչպես նշված է Աղյուսակ 2.2-ի ստորին տողերում, համակարգն ինքնաքայքայվում է՝ ընդլայնվելով միայն սպառողների կարիքների բավարարման ցածր մակարդակներում, անդադրում գործելով, սպառելով ու աղտոտելով հնարավոր ամեն ինչ[25]:

2.4 Կանաչ դպրոցը. քաղաքացիական հասարակություն և երկխոսություն

Եթե կարմիր դպրոցը երկնագույնի թույլ բացասումն է, ապա կանաչ դպրոցը դրա հստակ ու հիմնավոր բացասումն է: Հիմնվելով տեղական տնտեսական պարբերաշրջանների ու քաղաքացիական հասարակության[26] վրա, այս համակարգը չունի ո՛չ ազգային շուկա, ո՛չ ազգային ծրագրեր և ո՛չ էլ՝ համաշխարհային ու միջազգային: Հիմնական գաղափարը տեղական ինքնակախվածությունն է, նույնիսկ ինքնաբավությունը, որ ենթադրում է տեղական արտադրանքի սպառում տեղում և տեղական սպառման բավարարում տեղական արտադրության հաշվին: Ասվածի տրամաբանությունը ներկայացված է Աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 2.3. Կանաչ դպրոցը. քաղաքացիական հասարակություն և երկխոսություն

	Արտադրության գործոններ	Արտադրահարաբերություններ	Ապրանքներ	Բաշխում
Կոլեկտիվիզմ	Գործոնների կոլեկտիվ սեփականություն	Մասնավոր/ կոլեկտիվ սեփականություն	Անհատական/ կոլեկտիվ սպառման ապրանքներ	Տեղական պլան, Տեղական շուկա, Փոխանակություն
Հորիզոնականություն	Կոլեկտիվն է որոշում գործոնների և ավելցուկի օգտագործման կարգը Գործոնների սահմանափակ շարժունություն Կենտրոնն ամենուր է Միաժամանակյա դիաքրոնիկ համերաշխություն	Կոլեկտիվն է որոշում աշխատուժի ու աշխատանքի պայմանների օգտագործման կարգը Մարտահրավերների բաշխում Հավասարությունը հիմնական պայման Աշխատանքի հերթագայում Աշխատանքի վարակառուցում	Կոլեկտիվն է որոշում ինչ և ինչքան ապրանքներ Ապրանքների տարբերակում ըստ գնի և որակի Որակ/գին (Ո/Գ) առավելագույն հարաբերակցություն	Առաջին գերակայություն՝ կարիքներ Երկրորդ գերակայություն՝ պահանջարկ Երրորդ գերակայություն՝ փոխանակում Երկխոսություն բոլոր գործոնների շուրջ Ինքնապավինում
Ինքնաձևություն	Գործոնները մոնետիզացված չեն, վաճառքի համար չեն	Աշխատանքի արտադրողականությունն էական չէ	Հիմնարար կարիքների բավարարումը երաշխավորված է, մնացածը վաճառքի համար է	Մարդկային և բնական կարիքների ռացիոնալություն
Մշակում	Մ/Հ հարաբերակցության աճի միտում	Համապատասխան տեխնոլոգիա	Հոգևոր զարգացում	Հոգևոր զարգացում
Կայունություն	Արտադրություն կարիքների համար, ոչ ընչաքաղցության	Մարդկային ունակությունների կազմակերպում	Արտադրություն փոխարինման նպատակով	Կենտրոնացում տեղական պլանի և շուկայի վրա
	Վերջավոր ընթացք	*Վերջավոր ընթացք*	*Վերջավոր ընթացք*	*Վերջավոր ընթացք*
Բնություն	Հիմնականում վերականգնվող գործոններ	Մարդկային զարգացում	Միայն վերամշակվող թափոններ	—

Կանաչ համակարգը որոշակիորեն հիմնված է *բեռա* կառուցվածքի վրա՝ փոքր, առավել հորիզոնական, մարդկանց պահելով միասին, ո՛չ բաժանված ըստ աննշան խնդիրների, ո՛չ էլ տարանջատված տարբեր դերաբաշխումներով: Դրա փոխարեն առկա են աշխատանքի ինտեգրումը, աշխատանքի հերթագայությունը և աշխատանքի վերակազմակերպումը[27]: Առավել կոնկրետ,

սա նշանակում է փոքր տնտեսական կազմակերպություններ, ասենք, 30 հոգուց բաղկացած, ուր բոլորն իրար հետ առնչվում են հորիզոնական հարաբերություններով, և ստորակարգություն գոյություն չունի: Սա ճանապարհ է հարթում տնտեսությունների ընդլայնման համար՝ այսօրվա չորս հոգանոց «միջուկային» ընտանիքից վերածվելով առավել ընդլայնված ընտանիքի կամ «համայնքի», որի ձևավորման ընթացիկ փորձն առկա է Արևմուտքում: Վերջինիս դեպքում միա-, հետերո-, հոմո-, և բի-սեքսուալ հարաբերությունները կարող են խաղաղ գոյակցել:

Համայնքապաշտությունը (commune-ism) չի կարելի շփոթել կոմունիզմի (communism) հետ: Կանաչ տնտեսության հիմնական նպատակը ոչ թե նյութական տնտեսական աճն է, որին ձգտում են երկնագույն և կարմիր ուսմունքները, այլ *բնության զարգացումը* (բնության կատարելագործումը, ոչ թե դրա սոսկ կայունության պահպանումը), *մարդու զարգացումը* (ոչ միայն ֆիզիկական առողջության, այլ նաև հոգևոր ու մտավոր զարգացման իմաստով), *սոցիալական զարգացումը*, որ հասարակությունը կդարձնի մրցունակ բնության և մարդու զարգացման համատեքստում, և *աշխարհի զարգացումը*, որ նշանակում է աշխարհի այնպիսի համակարգի ձևավորում, ուր տարբեր հասարակություններ կփոխհամագործակցեն՝ ձգտելով համակցության, և կկատարելագործեն միմյանց[28]: Սա երկարաժամկետ ծրագիր է, բայց կանաչ ուսմունքին չափազանց բնորոշ և Գանդիի *սարվոդայա* գյուղակների ու «օվկիանոսային պարբերաշրջանների» մոդելներով[29]:

Շահույթ հետապնդող արտադրությունն ու պլանի կատարումն ինքնին դեռ նպատակ չեն: Որպես բնորոշ արտադրական միավոր հանդես է գալիս ինքնակառավարվող կոոպերատիվը, ուր առկա է երկխոսությունը, և որոշումներն ընդունվում են բոլորի և յուրաքանչյուրի կողմից համատեղ՝ ներառյալ սպառողներին: Չնայած արտադրությունը հիմնականում միտված է սպառման և ոչ թե փոխանակման նպատակին, այնուամենայնիվ, հարաբերություններն առևտրային գործընկերների հետ կառուցվում են փոխհամագործակցության սկզբունքով: Իսկ բնության հետ ներդաշնակ հարաբերությունները գերխնդիր են:

Այսպիսով՝ կարող ենք այժմ ցույց տալ ու պարզաբանել կանաչ դպրոցի հիմանարար համախտանիշը՝ գոյություն ունեն հինգ *կայանակետեր*, որ հաշվի չեն առնվում երկնագույն և կարմիր դպրոցներում[30] և, միաժամանակ, կանաչ դպրոցում հանդես են գալիս որպես հեռանկարներ, սահմանափակումներ կամ գոնե խնդիրներ:

1. *Արտադրություն՝ կարիքների բավարարման համար և ոչ թե ընչաքաղցությունից դրդված:* Իհարկե, հիմնական կարիքների բավարարման և ընչաքաղցության միջև առկա է որոշակի բաժանարար գիծ: Հարցն այն է, թե որտեղ է սկսվում ընչաքաղցությունը: Վերջին քսան տարիներն այդպես էլ չկարողացան պարզաբանել խնդիրը՝ բավարարվելով լոկ ապարդյուն հորդորելով հարուստներին ու գերհարուստներին փոխել իրենց կենսակերպը:

2. *Մարդկային «տրամաչափի» կազմակերպություններ:* Հիմնական գաղափարը՝ փոխել բոլոր կազմակերպությունները (ոչ միայն տնտեսական) այնպես, որ մարդիկ դրանցում իրենց զգան ինչպես տանը: Ասվածը վերաբերում է ինչպես առավելագույն, այնպես էլ, հավանաբար, նվազագույն տրամաչափերին, քանզի մարդիկ աշխատանքի գնալով, ի թիվս այլոց, նաև ձգտում են հանդիպել այլ մարդկանց, դուրս գալ ընտանեկան, գյուղական անձկությունից: Սա չի նշանակում արտադրության ծավալների կրճատում,

քանզի առավել փոքր կազմակերպությունները կարող են շատ ավելի արդյունավետ լինել:

3. *Արտադրություն՝ փոխանակման նպատակով:* Այս պնդումն անմիջականորեն ուղղված է արտադրության ծավալների շարունակվող անհիմն ընդլայնման դեմ: Ի՞նչ է տեղի ունենում, երբ փոխանակումն արդեն չափից առավել է, ինչպես, օրինակ, մարդկային բնակչության փոխանակումը: Այլ խոսքով, պետք է հասկանալ, թե հատկապես ինչ ծավալներ են ենթակա փոխանակման:

4. *Տեղական շուկան՝ իբրև հիմնական նպատակ:* Ցանկացած տեղական շուկա ինքնին սահմանափակ է: Եթե հիմնական գերակայությունը տեղական պահանջարկի բավարարումն է՝ առանց ազգային ու միջազգային շուկաների, բայց, միաժամանակ, ձգտելով շրջել ուղղությունը տեղականից դեպի համաշխարհային տնտեսություններ, ապա արտադրությունը սահմանափակ կլինի:

5. *Երկրագնդի տարողունակություն*: Հարցը, որպես այդպիսին, առաջինը բարձրացրեց կանաչ դպրոցը: Երկնագույն ու վարդագույն դպրոցներն այսօր կրկնում են այն: Արդյունքում՝ այսօր սկիզբ է առել հարցի համաշխարհային քննարկում:

2.5 Վարդագույն դպրոցը. երկնագույնը, կարմիրը և կանաչը

Ընթերցողին այժմ հրավիրում ենք տեղադրել 2.1.-2.3. աղյուսակների բոլոր երեք գծապատկերները միմյանց գլխավերևում՝ փորձելով դուրս բերել տնտեսական տեսություն և տնտեսական պրակտիկա: Մենք չենք կատարի այդ վարժությունն այստեղ: Ակնհայտ է, որ խոսքն Ամերիկայի և Եվրոպայի ծայրագույն հյուսիսի երկրների՝ Կանադայի ու Սկանդինավյան պետությունների սոցիալ-դեմոկրատական տնտեսությունների մասին է[31]: Անշուշտ, տնտեսական պրակտիկան կարելի է բնութագրել (ինչպես այն հաճախ ներկայանում է) որպես խառը կամ բանակցային տնտեսություն. առաջին տերմինը ցույց է տալիս դրա էկլեկտիկ[i] էությունը, երկրորդն առանձնացնում է դրա հիմնական մեխանիզմը՝ առանձնահատուկ երկխոսություն մասնավոր (շուկա) և հասարակական (պետություն) հատվածների միջև:

Սակայն այդ կարճ բանաձևում բացակայում է փոքր տրամաչափի կանաչ տարրը՝ կոոպերատիվները, մարդկանց իրավահավասարությունը, պատասխանատվությունը բնության հանդեպ և որոշակի (առանց հատուկ սահմանման) հոգևոր զարգացումը: Կանաչ տարրն այստեղ, հավանաբար, պահպանվել է մասամբ այն պատճառով, որ այս երկրները տարածքային առումով հեռու են տնտեսական, քաղաքական, ռազմական ու մշակութային իրադարձությունների հիմնական թատերաբեմերից, մասամբ էլ, թերևս, այն պատճառով, որ երկնագույն/կարմիր հսկաների՝ ԱՄՆ-ի ու նախկին ԽՍՀՄ-ի համեմատությամբ դրանք փոքր հասարակություններ են: Վարդագույն տնտեսությունը դիտարկվում է իբրև բոլոր այդ երեքի հատման կետում գտնվող: Այն խառը տնտեսություն է, բայց արդյո՞ք նաև՝ խառնաշփոթ և չափազանց հա-

[i] էկլեկտիկ- տարբեր տեսությունների, դոկտրինաների, մեթոդների լավագույն դրույթներն առանձնացող ու համակցող /թարգ./

կասական: Մյուս կողմից, այն, ինչ տեսականորեն անընդունելի է, գործնականում կարող է կիրառական լինել:

Բաց երկնագույն + բաց կարմիր + բաց կանաչ = վարդագույն բանաձևը կարող է ավելի օգտակար լինել[32]: Գլխավորը՝ ծայրահեղություններից (կապիտալի տենդով համակված գործիչներից, բռնատիրական պետություններից, մեկուսացված ու անփոփոխ համայնքներից) խուսափելն է: Երեք դպրոցները կարող են օգտագործվել վարդագույնի կողմից միմյանց ձևափոխելու համար՝ ներառելով բազմազանությունը և ձգտելով համակցության:

2.6 Դեղին դպրոցը. երկնագույնը և կարմիրը

Այստեղ էլ նկատի ունենք այն տնտեսական համակարգը, որն այսօր իր վրա է կենտրոնացրել աշխարհի հիմնական ուշադրությունը՝ Ճապոնիայի և Արևելյան Ասիայի այլ երկրների՝ Չինաստանի ու մինի-Ճապոնիա/Չինաստանների (Հարավային Կորեա, Թայվան, Հոնգ-Կոնգ և Սինգապուր)[33] տնտեսական փորձառությունը[34]: Ընթերցողին այժմ առաջարկում ենք պարզագույն վարժություն. 2.1. և 2.2. աղյուսակների գլխամասերում փոխատեղել երկնագույնն ու կարմիրը:

Դեղին դպրոցը վարդագույնից տարբերվում է այն բանով, որ չի պարունակում զուտ տեղային և փոքր տրամաչափի տարրեր, որոնք հատուկ են կանաչ դպրոցին: Երկու ալֆա-կառուցվածքները՝ շուկա և պետություն, կապիտալ և իշխանություն, համակցված են[35]: Այդ երկուսի հանրագումարը չափազանց ուժեղ է և գործում է ներդաշնակորեն՝ չխոչընդոտվելով ո՛չ կանաչ դպրոցի և ո՛չ էլ միմյանց կողմից: Այս պարզագույն բանաձևում է թաքնված Ճապոնիայի երեկվա, Չինաստանի այսօրվա և վաղվա, իսկ մյուսների՝ քիչ թե շատ բոլոր ժամանակների անհավատալի աճի գաղտնիքը[36]:

Ինչպե՞ս կարող են երկնագույնն ու կարմիրը համատեղ կիրառվել, եթե դրանք բացասում են միմյանց: Միայն այն դեպքում, երբ մշակույթը թույլատրում է հակասություններ[37] ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում, ինչպես նաև պահանջվում է քրտնաջան աշխատանք[38] և անձնվիրություն[39], իսկ կառուցվածքը ծնում է համագործակցության ընդունակ վերնախավեր[40]: Պետությունն այնժամ շուկայի գործունեության համար կարող է պլանավորել լավագույն (օպտիմալ) պայմաններ՝ տեղ-տեղ կիրառելով զանազան խթանիչներ ու խոչընդոտներ և օգտագործելով կապիտալի ուժը և ոչ թե կիրառելով անողոք բռնություն, ինչը տեղի է ունենում դեղինի չինական տարբերակում: Կարիքների և շուկայի պլանավորում՝ ընչաքաղցության բավարարման համար. այս երկուսը չեն բացառում միմյանց:

Բայց չեն բացառվում նաև «ուղղահայացության», «ընդլայնման» և «բնության» խմբերում ընդգրկված գործոնները: Առաջ է գալիս մի տեսություն, որի համաձայն, եթե դրական գործոնների ազդեցությունը հանրագումարվում է, ապա նույնը ճիշտ է նաև բացասական գործոնների վերաբերյալ: Այս տեսությունը, սակայն, իր հետագա զարգացումը կստանա հաջորդ գլխում:

2.7 Էկլեկտիկ դպրոցը. կանաչը, վարդագույնը և դեղինը

Այս գլխի մտավոր ուղղվածությունը պարզ է՝ երկնագույնը, կարմիրը և կանաչը նման են շինարարական աղյուսների: Երեքն էլ օժտված են որոշակի մաքրությամբ և ունեն տնտեսական հարակցություն, որը դրանք դարձնում է վիճահարույց: Դրանք խոցելի են: Միջազգային շուկան կործանվում է, և արտահանման-ներմուծման վրա հիմնված երկնագույն տնտեսությունը՝ չունենալով հզոր պետական կամ հուսալի տեղական հենարան, իբրև վերականգնման մեկնակետ անզոր է: Նույն պետությունը կարմիր համակարգում (ժողովրդական աջակցություն, կարգուկանոն) քայքայվում է, և չկա կայացած, լիարժեք գործող շուկա, որ վերականգնի տնտեսությունը: Վարդագույն դպրոցը հետևում է այս ամենին և դուրս է բերում այդ երեքի համակցության ուժեղ կողմը՝ եթե մեկը կործանվում է, մյուս երկուսը միշտ կան: Դեղին դպրոցը ևս չինական ձևակերպմամբ կանգնած է երկու ոտքի վրա: Երկուսն էլ խոցելի են, բայց երկուսի կործանման հավանականությունը շատ փոքր է:

Էկլեկտիկ կամ «ծիածանային» դպրոցը, որի գաղափարն այստեղ սահմանվեց և իր հետագա զարգացումը կստանա 4-րդ գլխում, մի քայլ առաջ է շարժվում՝ համակցելով մոխրագույն, վարդագույն և դեղին դպրոցները: Իր բազմաթիվ, ծայրաստիճան բազմազան ու համակցային փոխկապակցված բաղադրիչներով հանդերձ, տնտեսությունը պետք է ճկուն լինի: Եթե ամենախոցելի համակարգերը երկնագույնն ու կարմիրն են, ապա դրանք չպետք է կիրառվեն ուղղակիորեն, այլ միայն անուղղակիորեն, այլ համակցությունների միջոցով, ինչպես շինարարական աղյուսներ: Շուկան, պետությունը, տեղայինը չեն կարող հանդես գալ առանձին-առանձին. դրանք պետք է համակցվեն ճկունության ու փոխատեղման նպատակով: Սա «ավելին է, քան մասերի պարզ թվաբանական գումարը» հայտնի բանաձևի կիրառումն է:

Հավելված. Վեց դպրոցները. գծապատկեր



Երկնագույնը ներկայացված է Միացյալ Նահանգներով, կարմիրը՝ նախկին Խորհրդային Միությունով, կանաչը՝ երրորդ աշխարհի երկրներով (մարդկության պատմության մեջ ու այս հարյուրամյակում գաղափարախոսություն-

ները/գիտափորձերը աստիճանաբար ձև են ստանում), վարդագույնը՝ Սկանդինավյան ու Եվրամիության (բացառությամբ Մեծ Բրիտանիայի) և դեղինը՝ Արևելյան Ասիայի երկրներով: Իսկ էկլեկտիկը չունի պարզորոշ ներկայացուցչություն: Դա իսկապես մարտահրավեր է:

Էկլեկտիկ դպրոցն ընդգրկում է գծապատկերի հիմնական անկյունագիծը՝ կանաչը, վարդագույնը և դեղինը: Երկնագույնն ու կարմիրը, որ հավատում են լոկ մեկ Աստծո (շուկա կամ պլան), առանձին-առանձին չափազանց խոցելի են: Նույնը վերաբերում է նաև կանաչին: Կոնկրետ աշխարհագրական ծանոթագրությունները (վկայակոչումները) զուտ ճանաչողական բնույթ ունեն և չեն կարող բառացի հասկացվել: Ցանկացած որոշակի տնտեսություն կարող է ցանկացած այլ՝ ոչ գերիշխող գույնի տարր պարունակել, ինչպես, օրինակ, կարմիրը՝ ԽՍՀՄ ռազմական հատվածում և երկնագույնը, կարմիրը կամ վարդագույնը՝ Երրորդ աշխարհի երկրների (Զարգացող երկրների) տնտեսություններում:

Այսպիսով.

	Երկնագույն	*Կարմիր*	*Կանաչ*	*Վարդագույն*	*Դեղին*	*Էկլեկտիկ*
Անհատապաշտություն/ կոլեկտիվիզմ	Անհատապաշտություն	Անհատապաշտություն	Կոլեկտիվիզմ	Երկուսն էլ	Կոլեկտիվիզմ	Երկուսն էլ
Ուղղաձիգություն/ հորիզոնականություն	Ուղղաձիգություն	Ուղղաձիգություն	Հորիզոնականություն	Երկուսն էլ	Ուղղաձիգություն	Երկուսն էլ
Մոնետիզացում/ ինքնաձևություն	Մոնետիզացում	Մոնետիզացում	Ինքնաձևություն	Մոնետիզացում	Մոնետիզացում	Երկուսն էլ
Մշակում/ բնականություն	Մշակում	Մշակում	Ավելի քիչ	Մշակում	Մշակում	Քիչ
Ընդլայնում/ կայունություն	Ընդլայնում Անվերջ ընթացք	Ընդլայնում Անվերջ ընթացք	Վերջավոր ընթացք	Ընդլայնում Անվերջ ընթացք	Ընդլայնում Անվերջ ընթացք	Որոշակիորեն վերջավոր
Բնություն	Տնօրինում	Տնօրինում	Համագործակցություն	Երկուսն էլ	Տնօրինում	Երկուսն էլ

Ծանոթագրություններ

[1] Բազմաթիվ այլ փոփոխականներ կարող են կիրառվել: Բայց դրանք կարող են օգտագործվել տնտեսական համակարգերի հիմնական մոդելները նկարագրելու նպատակով: Դրանք կարող են կարդացվել վերից վար՝ որպես «արդիական» (ընդհանուր իմաստով՝ «արևմտյան») կազմավորումների նկարագրություն, ի հակադրություն ոչ այնքան «ավանդական», որքան «պրիմիտիվ» կազմավորումների, ինչպիսիք են, օրինակ, քոչվոր ցեղերը: Որոշ ընդհանրություններ կան Թալկոտ Փերսոնի մոդելային փոփոխականների հետ (տե՛ս՝ *The Social System,* Glencoe, Ill. The Free Press, 1951), որոնք նույնպես հինգն են, սակայն չեն արծարծում հորիզոնականության/ուղղահայացության կամ ընդլայնման/կայունության խնդիրները:

[2] Չի կարելի շփոթել «ազգայնացման» կամ «արտադրության միջոցների կոլեկտիվացման» հետ՝ իբրև տնտեսության կամ դրա ճյուղերի կազմակերպման միջոց: Կոլեկտիվիզմը, ինչպես այստեղ ձևակերպված է, շատ ավելի խորը բնութագիր է, որ զետեղված է հենց մշակույթի մեջ: Նախկին խորհրդային երկրների հիմնական խնդիրն այն է, որ նրանք տնտեսության ճյուղերը կոլեկտիվացման ենթարկեցին անհատապաշտ մշակույթի պայմաններում (Ռուսաստանում այսօր էլ կարելի է գտնել Կարամազով եղբայրներ, որոնք, սակայն, դժվար թե իդեալական համարվեն պետական ձեռնարկատիրության կամ կոլեկտիվ տնտեսությունների համար): Բազմաթիվ բնիկ ժողովուրդների խնդիրը ճիշտ հակառակն է՝ տնտեսության ճյուղերի մասնավորեցումը կոլեկտիվիզմի խորը ավանդույթներ ունեցող մշակույթի պայմաններում:

[3] Մարքսիզմի համանմանությամբ, ի պատիվ հեղինակի, չկապելով այն միայն գիտակցության՝ իբրև հարուստ մարմնի մի բնութագրի հետ:

[4] Տե՛ս՝ Albert O. Hirschman, *The Passions and the Interests,* Princeton, NJ: Princeton University Press, 1977, մասնավորապես, մաս I.

[5] Տե՛ս՝ Adam Smith, *The Theory of Moral Sentiments,* first edition, London 1759.

[6] Ադամ Սմիթի հանրահայտ գրքի անվանումը, առաջին հրատարակություն, Լոնդոն 1776:

[7] Տե՛ս՝ Johan Galtung, *"Two Perspectives on Society",* Chapter 2.1-3 in *The True Worlds,* New York: The Free Press, 1980, pp. 41-61.

[8] Տնտեսական դպրոցները նկարագրող գույներն ընտրված են Եվրոպական քաղաքականությունից՝ «երկնագույնը»՝ պահպանողական, «կարմիրը»՝ կոմունիստական, «կանաչը»՝ կանաչ և «վարդագույնը»՝ սոցիալ-դեմոկրատների կողմից հաճախ կիրառվող իմաստով, որպես արյան ու հեղափոխությունների հետ քիչ առնչվող: Ճապոնական համակարգը բնութագրող «դեղինն» ընտրված է ոչ թե ռասայական խտրականության իմաստով, այլ, թերևս, իբրև «դեղին վտանգին» («դեղին մարտահրավեր» իմաստով) դիմակայելու պատրաստ լինելու կոչ: «Ոսկեգույնը» կարող էր իրականության պատկերման առումով ավելի համապատասխան լինել, բայց այն կքանդեր գույների համակարգը: Քանի որ դեղին դպրոցի բաղկացուցիչները երկնագույնն ու կարմիրն են, կարելի է օգտագործել նաև «ծիրանագույնը», որն ավելի մուգ է, քան վարդագույնը:

[9] Այս տերմինն իր բովանդակությամբ շատ մոտ է մարքսիստական «արտադրության միջոցներ» ու «արտադրահարաբերություններ» տերմիններին: Արտադրության միջոցների զարգացման և առավել կարծր արտադրահարաբերությունների հնարավոր հակասության հիմնարար մարքսիստական դրույթն արտացոլված է Աղյուսակ 2.1-ի առաջին երկու սյունակներում, բայց այստեղ մենք չենք կենտրոնանա դրա վրա: Ավելին, մարքսիստական տեսությունը հակված է արտադրության միջոցները դիտարկելու որպես անկախ, իսկ արտադրահարաբերությունները՝ որպես կախյալ փոփոխականներ, ինչը զգալիորեն սահմանափակում է *բեկման* այդ ձևի (երբ մի փոփոխականը կայուն է, մյուսը՝ դինամիկ) արդյունավետությունը: Ըստ մարքսիստական տրամաբանության, տեխնոլոգիան սոցիալական կազմակերպվածքի քարշիչ ուժն է: Այդ դեպքում ի՞նչ կարելի է ասել նոր սոցիալական կազմակերպվածքի ներսում ձևավորվող հզոր սոցիալական ուժերի մասին, որ իրենք են ձևավորում նոր տեխնոլոգիաներ, որոնք, իրենց հերթին, մրցունակ են դարձնում տվյալ սոցիալական կազմակերպվածքը:

[10] Պատմականորեն այս մոդելն ունի իր նախատիպը: Եթե շուկան հանդիսանում է Աստծո աշխարհիկ փոխարինողներից մեկը (մյուսը կարող է լինել պետությունը իր թագավորով/կայսրով՝ մեջտեղում ունենալով *rex gratia dei*), ապա կարելի է ենթադրել, որ նորաթուխ «վանականները»՝ ձեռնարկատերերը, պետք է գործեն նախկին մենաստաններում ընդունված կանոնակարգերին ու սովորույթներին նմանվող կանո-

նակարգերով ու սովորույթներով: Եկեղեցում, օրինակ, միակողմանի հաղորդակցությունը դեռևս պահպանվում է որպես կարգ, նույնիսկ դեմոկրատական երկրներում, որտեղ երկխոսությունը սկզբունքորեն կիրառվում է իբրև հաղորդակցության հիմնական բանաձև:

[11] Կազմակերպության (հիմնականում ֆիրմաների՝ խանութներն ու ֆերմաները դիտարկելով որպես մասնավոր դեպք) ներսում աշխատանքի վարձատրության տարբերակված համակարգերի առկայությունը, ռիսկայնության տարբեր մակարդակներին համապատասխան, անհեթեթություն է: Ո՞վ է այսօր ավելի մեծ ռիսկ ստանձնում՝ բանվորը, որն ուղղակի կարող է կորցնել աշխատանքը հաստիքների կրճատման հետևանքով, թե՞ ձեռնարկատերը, որը կարող է սնանկանալ, բայց, միաժամանակ, պաշտպանված լինել իր պարտատերերից «սահմանափակ պարտավորությունների» օրենքով: Այստեղ դրույթը հետևյալն է. տարբերակված վարձատրությունն ավելի շատ կապվում է որոշում կայացնելու պատասխանատվության հետ. վերին օղակները ոչ միայն օգտվում են որոշում կայացնելու իրավունքից, այլև առավել բարձր են վարձատրվում:

[12] Կարելի է բերել հետևյալ փաստարկը. դրանք այնքան տարբեր են, որ մենք իրականում գործ ունենք երկու տարբեր երկնագույն համակարգերի հետ: Այնուհանդերձ, դրույթը հետևյալն է. երկնագույն համակարգը մշտապես ձևավորում է կենտրոն և ծայրամասեր: Ինչպես մետաղադրամի երկու երեսները դեռևս տարբեր մետաղադրամներ չեն, այնպես էլ երկնագույն համակարգի երկու հայտանիշները դեռևս երկու տարբեր համակարգեր չեն: Հետսոցիալիստական և Երրորդ աշխարհի երկրներում «ազատ շուկայական համակարգի» ներդրման մասին խոսակցությունները, երբ իրականում ներկայացված են միայն երկնագույն համակարգի ծայրամասերը, սկզբունքորեն ոչ այլ ինչ են, եթե ոչ քարոզչություն:

[13] Աշխատուժն ունի իր գինը՝ իբրև ստրուկ աշխատուժ, ճորտ աշխատուժ կամ իբրև վարձու աշխատուժ: Կապիտալը ևս ունի գին, երբ շարժվում է ժամանակի (տոկոսավճար) կամ տարածության (կոմիսիոն վճար, մասնավորապես արժութային փոխարժեքների) մեջ:

[14] Որը չի կարելի շփոթել անդրադարձվող տնտեսական իրականության հետ: Եթե մենք ընդունում ենք, որ իրականությունը լի է հակասություններով, ապա հարց է առաջանում. արդյո՞ք հակասական իրականությունը (տնտեսությունը) կարող է համարժեքորեն արտահայտվել այնպիսի ոչ հակասական լեզվով, ինչպիսին, ասենք, մաթեմատիկան է: Տե՛ս՝ Johan Galtung, *"Contradictory reality and mathematics: A contradiction",* chapter 4.4 in *Methodology and Development,* Copenhagen: Ejlers, 1988, էջ 162-175. Ի՞նչ է տեղի ունենում ոչ փիլիսոփայական մակարդակում. տնտեսագետները փոփոխականները սահմանում և հարցերը ձևակերպում են այնպես, որ դրանց նկատմամբ ուղղակիորեն կիրառելի լինեն թվաբանության ու գծային հանրահաշվի կանոնները: Վեց-յոթ այսպիսի էջը չի բավարարի անհրաժեշտ մաթեմատիկական հաշվարկներն անելու համար:

[15] Տե՛ս՝ R. H. Coase, *"The Problem of Social Cost", Journal of Law and Economics,* No. 3, 1960, էջ 1-44.

[16] Այստեղ առկա է չորս փոփոխականներով (գործոններ, կազմակերպություններ, ապրանքներ և շուկաներ) հավասարման առաջին հայացքից ոչ ակնհայտ մոդելը: Ենթադրենք, որ նշված փոփոխականներից ոչ մեկն անկախ չէ: Այսպիսով, առավել բանիմաց ճարտարագետները իրավունք են ստանում հետազոտելու, ստեղծելու և զարգացնելու նոր՝ ավելի կատարյալ ապրանքներ, շուկան հնարավոր է դարձնում շուկայավարության ավելի կատարյալ մեխանիզմների կիրառումը՝ պահանջելով առավել բանիմաց շուկայագետներ և այլն: Եվ մենք ստանում ենք պատճառահետևանքային «սլաքները» բոլոր վեց հնարավոր ուղղություններով՝ փոփոխականների ոստայն, որ

պարուրաձև բարձրանում է վեր՝ դեպի կատարելություն, կամ իջնում է ցած՝ դեպի պարզեցում: Օրինակ՝ ինչո՞ւ Volkswagen Beetle մակնիշի ավտոմեքենան հանկարծ հանվեց արտադրությունից: Որովհետև նախագծողներն առաջադրեցին նոր, մարտահրավեր նետող խնդիրներ (նրանցից մեկի հետ իմ առանձնազրույցից):

[17] Արտադրության հավասարակշռությունը պահպանելու համար որևէ գործոնի (գործոնների) տրված քանակը պետք է համապատասխանի այլ գործոնների որոշակի քանակներին: Տեսականորեն հավասարակշռությունը կարող է ուղղված լինել դեպի ցած՝ ձերբազատվելով ավելցուկային գործոններից: Երբ խոսքը վերաբերում է իբրև գործոն աշխատուժին, ապա «ավելցուկային» բառը ենթադրում է հաստիքների կրճատում, որի արդյունքը գործազրկությունն է: Բնությունը, կապիտալը, տեխնոլոգիաներն ու կառավարիչները չեն տուժում: Հետաքրքիր է, բայց դեպի ցած հավասարակշռության խախտման դեպքում հազիվ թե պատահաբար, բայց, որպես կանոն, հենց աշխատուժն է կիրառվում իբրև հավասարակշռության վերականգնման միջոց: Բայց դեպի վեր հավասարակշռության խախտման պարագայում դրա վերականգնման միանգամայն հաջողակ միջոց է դառնում ընդլայնումը:

[18] Բոլորովին վերջերս ակնհայտ դարձավ կարմիր դպրոցի ճգնաժամը և շրջադարձ կատարվեց դեպի երկնագույն դպրոց: Բայց երկնագույն դպրոցը հատուկ այդ նպատակով չէր զարգացել, այն արդեն գոյություն ուներ: «Թերզարգացած կապիտալիզմից դեպի թերզարգացած սոցիալիզմ և հակառակը»,- ինչպես նշում է ռումինացի քաղաքագետ Սիլվիու Բրյուքանն իր *The Wasted Generation: Memoirs of the Romanian Journey from Capitalizm to Socialism and Back* (Boulder, CO: Westview Press, 1993) գրքում: «Սոցիալիզմ» տերմինը շատ վատ է բնութագրում այս դպրոցի էությունը, ինչպես «կապիտալիզմ» տերմինն է մասամբ բնութագրում երկնագույն դպրոցը: Տերմինն ընդամենը ցույց է տալիս անհատապաշտության (որպես էգո) փոխակերպումը կոլեկտիվիզմին: Բայց այս դպրոցները շատ ավելի կոմպլեքսային են ու հարակցված, ուստի գույների (քաղաքական) իմաստով եկեք կիրառենք ավելի պարզ պիտակներ:

[19] Տե՛ս՝ Johan Galtung, *"Sobre alfa y beta y sus muchas combinaciones"* in Masini, Eleonora and Galtung, Johan eds., *Visiones de sociedades deseables*, Mexico: CESTEEM, 1979, էջ 19-95. Երկուսն էլ փոխհամագործակցող կառուցվածքներ են: Ալֆան բրգաձև կառուցվածք է, առավել ուղղաձիգ, հաճախ՝ չափազանց լայն, իսկ Բետան շրջանաձև կառուցվածք է, առավել հորիզոնական, փոքր ու խիտ, որտեղ բոլորն ու յուրաքանչյուրը համագործակցում են միմյանց հետ, հաճախ՝ տարբեր ուղղություններով: Կարմիրի դեպքում բոլոր ստորակարգությունները՝ նախարարությունները (գերալֆա համակարգի մասերը), պետպլանը (պետական պլանավորող գործակալությունը) և, ի վերջո, կուսակցությունը ալֆա-կառուցվածքներ են: Կապիտալիստական աշխարհում պաշտոնական մակարդակում սրան համապատասխան ոչինչ գտնել հնարավոր չէ. կապիտալիզմը կազմակերպված է առավելապես բողոքականության սկզբունքով (ինչպես կարելի է ենթադրել՝ հետևելով Վեբերի տրամաբանությանը), իսկ սոցիալիզմը, կարմիր դպրոցի իմաստով, կազմակերպված է առավելապես ուղղափառ եկեղեցու սկզբունքով. այն միագագաթ է (ինչպես և կարելի էր ենթադրել):

[20] Երկուսն էլ՝ և՛ դասական Եգիպտոսը, և՛ Չինաստանն ունեն պետական տնտեսություններ, որոնց հինքում ընկած են զանգվածային հասարակական աշխատանքները: Ավելին, վարդագույն սոցիալ-դեմոկրատական դպրոցում առկա է կարմիր բաղադրիչը: Եթե հաշվի առնենք նաև երկնագույն դպրոցի կողմից նախկին սոցիալիստական երկրների կարմիր տնտեսությունների ստանձնումից հետո առկա միտումները, կարող է ի հայտ գալ բացասական ռեակցիա, հնարավոր է պետական տնտեսության նոր ձև, այս անգամ արդեն՝ ֆաշիստական երանգներով:

[21] Բայց նման մոտեցում ակնկալվում է ոչ բոլորից: Սոցիալիզմի պայմաններում նս ձևավորվեցին աշխատավորական արիստոկրատիան, գերբանվորների *Ստախանովյան* շարժումը (ճիշտ, թե հորինված), որը հիմնվում էր գերծանրաբեռնված աշխատան-

քի, և ոչ թե նորագույն տեխնոլոգիաների կիրառման վրա, ինչպես Լենինն էր նկարագրում բարձր վարձատրվող աշխատավորական արիստոկրատիան կապիտալիզմի պայմաններում:

[22] Շատ օգտակար է ցանկացած գույնի տնտեսության կառավարիչներին ուղղել հետևյալ հարցը. «Ինչպիսին էր անցած տարին». նախ՝ տեղեկատվական իմաստով, ապա նրանց չափորոշիչների մեկնաբանման առումով: Բնորոշ և հաճախակի կրկնվող կարմիր պատասխանը. «Անցած տարին հաջող էր. մենք կարողացանք կրկնապատկել աշխատողների քանակը»: Երկնագույն կառավարիչները մշտապես կմատնանշեն աշխատավարձի չափը, տարեկան շրջանառությունը, հաշվեկշիռը, շուկայի մասնաբաժինը: Եթե նրանք հիշատակեն բանվորներին, ապա՝ միայն աշխատուժի արտադրողականության իմաստով: Նրանք կհպարտանան, եթե իրենց հաջողվել է կրճատել աշխատողների քանակը. «Մեզ հաջողվեց կիսով չափ կրճատել աշխատողների թիվը»:

[23] Մենք չենք ենթադրում, որ զերզարգացած կամ գերընդարձակ ֆինանսական տնտեսությունն ավելի լավն է, քան իրական տնտեսությունը: Այդ երկուսը պետք է կատարելապես ներգործեն միմյանց վրա, համագործակցեն ու ընդլայնվեն միմյանց համաքայլ:

[24] Մի ղեկավարը երևի թե կարող է գործել միայնակ՝ հաշվետու չլինելով ոչ մեկին, թերևս՝ միայն իր Աստծուն (ենթադրելով, որ Աստված իր կողմից է): Կոլեկտիվ ղեկավարման պարագայում (լայնորեն կիրառվում է կարմիր տնտեսություններում) նրանք կարող են հաշվետու լինել միմյանց, բայց դա նշանակում է, որ նրանք ռիսկ են ստանձնում: Մի սխալ քայլ, և դու դուրս կմղվես, բացառապես այն պատճառով, որ ղեկավարումն իրականացվում է կոլեկտիվ սկզբունքով. ձերբազատվեք նրանից, քանի դեռ կասկածի տակ չի առնված ողջ կոլեկտիվի կամ համակարգի պիտանիությունը (ինչն էլ, ի վերջո, տեղի է ունենում): Երկնագույն համակարգում, առավել անհատականացված ու ապակենտրոնացված կառավարման պայմաններում սխալ քայլը, իհարկե, որոշակի արդարացմամբ, կարող է վերագրվել վատ տնօրենին կամ դիտարկվել որպես անհաջողություն:

[25] Այդ ժամանակ, Մոսկվայում հնչող մի շարք կանխատեսումների համաձայն, կյանքի տևողությունը Մոսկվայի տարածքում միայն 1970-ական և 1980-ական թվականներին բնապահպանական քայքայման հետևանքով նվազել է տասը տարով:

[26] Ժամանակակից հասարակությունը դիտարկվում է իր երեք բաղկացուցիչ մասերով՝ կապիտալ, պետություն և ժողովուրդ, որն իր բոլոր միավորումներով ու կազմակերպություններով կազմում է քաղաքացիական հասարակությունը: Հասարակական գիտություններում դրանք ուսումնասիրվում են հատված առ հատված՝ համապատասխանաբար տնտեսագիտության, քաղաքագիտության և սոցիոլոգիայի/մարդաբանության հետազոտություններում՝ այս բաժանումով խաթարելով հասարակության կռապաշտական տեսակետը:

[27] Մարդը կարող է միաժամանակ մի քանի աշխատանք կատարել՝ քիչ թե շատ հաջողությամբ համատեղելով, անգամ միաձուլելով դրանք իր սեփական անհատականության հետ: Հնարավոր է նաև հերթագայել տարբեր աշխատանքները՝ ժամանակի ընթացքում ձերբազատվելով մարտահրավերների ու ձանձրալի առօրեականության, բարձր ու ցածր կարգավիճակի, բարձր ու ցածր վարձատրության և այլ տարբերություններից: Աշխատանքն ինքը կարող է վերափոխվել, օրինակ, համատեղելով վաճառքի ու հաշվառման, կամ (որ քաջ հայտնի է համալսարանական պրոֆեսորներին) մանկավարժական, հետազոտական ու ադմինիստրատիվ գործառույթները (առողջապահության կամ ճարտարագիտության պրոֆեսորն այս ցանկին կավելացներ նաև պրակտիկան):

[28] Այս բազմակի մոտեցումն արտացոլված է կանաչների տարբեր կուսակցությունների կարգախոսներում՝ բնապահպանական հավասարակշռություն, մարդու իրավունքներ, ազատագրում և մասնակցություն, խաղաղություն և բռնության բացառում:

[29] Տես՝ Romesh Diwan & Mark Lutz, eds., *Essays in Gandhian Economics,* New Delhi: Gandhi Peace Foundation, 1985; and Amritananda Das, *Foundations of Gandhian Economics,* Bombay: Allied Publishers, 1979.

[30] Ավելի կոնկրետ, երկնագույն համակարգը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ պարբերաշրջաններն ինքնավերարտադրվող են, կայուն: Երբ դրանք դադարում են այդպիսին լինելուց, վրա է հասնում ճգնաժամը, և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դրանք արդեն նոր՝ առավել բարձր մակարդակում ինքնավերարտադրվող դարձնելու համար (օրինակ, գործոնները հավասարակշռելով դեպի վեր): Սա անվերջ գործընթաց է: Նույնիսկ ընկերությունների ու երկրների սնանկացումը չի կարող վերջակետ դնել այս գործընթացում, փոխարենը այն երկարաձգում է դրանց տնտեսական կյանքը, նույնիսկ արհեստականորեն: Կարմիր համակարգի «հասնել և անցնել» գաղափարը ձևավորում է երկնագույնի անվերջ փոխակերպում կարմիրի: Այլ մեխանիզմ է վարկերի մատչելիությունը միևնույն գործատիրոջից կամ պետությունից:

[31] Իրականում այս դասին է պատկանում Եվրամիության անդամ տասնհինգ պետությունների (1995թ. հունվարի 1-ի դրությամբ) մեծ մասը կամ, ավելի ճիշտ, ողջ Եվրոպական տնտեսական գոտին, բացառությամբ (հետ-) թեթչերյան Մեծ Բրիտանիայի, Հյուսիսային հրվանդանից մինչև Ջիբրալթար: Բայց Սկանդինավյան երկրները բավարարում են մի շարք այլ պայմանների, որոնք անկասկած վերաբերվում են վերոհիշյալ դրույթին՝ դրանք փոքր են, ազգային և ռասայական տեսակետից միատարր և համեմատաբար իրավահավասար (մասամբ որպես բարեկեցիկ պետության հետևանք, մասամբ որպես պատճառ): Համերաշխությունը դեռ չի քայքայվել հասարակության ներսում առկա չափազանց «զառիթափ թեքության հոսանքներով», ինչպես Միացյալ Նահանգներում:

[32] Բացառությամբ իրական գույների. այն ի հայտ է գալիս որպես մթագնած շագանակագույն: Փոխաբերությունը մասնատվում է: Մյուս կողմից, շատ քիչ համակարգեր կարող են այնքան ամուր դիմակայել ֆաշիզմին, որքան սոցիալ- դեմոկրատիան:

[33] Ճապոնացիներն առավել հաջողակ են պրակտիկ գործունեության ասպարեզում, քան իբրև տեսաբաններ: Տնտեսագիտության ասպարեզում երկու հիմնական գործիչներն են Կանամե Ակամացուն և Սաբուրո Օկիտան: Տե՛ս՝ Saburo Okita, *"Japan, China and the United States: Economic Relations and Prospects", Foreign Affairs,* Summer 1979, 1090-1110, with reference to Akamatsu (p.1102).

[34] Անշուշտ, Սինգապուրն Արևելյան Ասիայում չէ, բայց այնտեղ է չին մեծամասնությունը: Կարելի է նշել նաև Հյուսիսային Կորեան ու Վիետնամը: Այս չորսը միասին՝ միավորված Ճապոնիան (Հյուսիս-Կուրիլյան կղզիների հետ մեկտեղ), միավորված Կորեան, միացյալ Չինաստանը (Հոնգ Կոնգի ու Թայվանի հետ մեկտեղ) և արդեն միավորված Վիետնամը, բոլոր այս բուդդիստական ու կոնֆուցիական երկրները օրերից մի օր կդառնան աշխարհի գլխավոր համայնական շուկան:

[35] Պետպլանի (նախկին Խորհրդային Միության պլանավորող գործակալությունը) մի պաշտոնյա, 1968թ. մեկնաբանելով Ճապոնիայի տնտեսության իր իսկ հետազոտությունը, նշել է. «Und diese verdammten japanischen Kapitalisten machen den Sozialismus besser als bei uns!» (Իսկ այս անիծյալ ճապոնացի կապիտալիստները սոցիալիզմն ավելի լավ են կառուցում, քան մենք): Ամերիկյան տնտեսագետը կարող է պատասխանել. «Այս անիծյալ ճապոնական սոցիալիստներն ավելի հաջողակ են կապիտալիզմի զարգացման ասպարեզում, քան մենք»:

[36] Ճապոնական մոտեցման վերլուծության փորձերից մեկը տե՛ս՝ Johan Galtung, *"Japanese Industrialization Model"*, in Sung-Jo Park, ed., *The 21st Century - The Asian Century?,* Berlin: Express Edition, 1985, pp. 25-41.

[37] Այն ի հայտ է գալիս մշակույթների դաոիստական ու բուդդիստական տարրերում և զգալիորեն տարբերվում է արիստոտելյան/քարտեզյան տրամաբանությունից:

[38] Ընդգրկված է Արևելա-ասիական մշակույթի կոնֆուցիական հայտանիշներում՝ հիմքում ունենալով երկու Կորեաները՝ որպես բոլորի մեջ ամենակոնֆուցիականները: Հարավային Կորեան, թերևս, աշխարհի միակ վայրն է, ուր ճապոնացիներին անվանում են ծույլ, բայց խոստումնալից, եթե նրանք իսկապես սկսում են աշխատել:

[39] Բոլոր չորսն էլ կարելի է անվանել կոնֆուցիական + մահայանա բուդդիստական + մեկ լրացուցիչ «ընծայական տարր»՝ սինթոիզմը Ճապոնիայում, քրիստոնեությունն ու մարքսիզմը երկու Կորեաներում, չինական ընդհանուր գաղափարը (կենտրոնում ընտրված թագավորության) Չինաստանում և բուռն ազգայնականությունը Վիետնամում:

[40] Ճապոնիայում ու Հարավային Կորեայում՝ մի քանի առաջնակարգ համալսարանների շրջանավարտները, Չինաստանում ու Հյուսիսային Կորեայում՝ կուսակցական կադրերը, Վիետնամում՝ առաջին երկուսի որոշակի խառնուրդը:

3
Արտաքին դրսևորումները

3.1 Արտաքին դրսևորումների սահմանումը

Այս գլխում քննարկվելու են արտաքին դրսևորումները՝ տնտեսական գործունեության[1] կողմնակի արդյունքներն[2] ու երկրորդային շարժառիթները: Մեր նպատակը արտաքին դրսևորումների[3] ցանկի դուրսբերումն է: Արտաքին դրսևորումներն ի՞նչ աստիճանի ազդեցություն ունեն տվյալ որոշակի դեպքի համար: Հարցին կարելի է պատասխանել միայն փորձնական եղանակով: Այդ դեպքում արտաքին դրսևորումների վերոհիշյալ ցանկը կարող է ծառայել որպես վարկածների ստուգողական հարցաթերթիկ. հիմնական վարկածը չի կարող լինել այն, որը կիրառելի է բոլոր դեպքերի համար: Ավելին՝ «տնտեսական գործունեություն» ընդհանուր ձևակերպման և առավել նեղ իմաստով «տնտեսական պարբերաշրջանի» միջև գոյություն ունի ևս մի շերտ՝ «տնտեսական դպրոցները» կամ «տնտեսական համակարգերը», որոնք ձևակերպեցինք նախորդ գլխում: Դրանցից յուրաքանչյուրից բխում է տնտեսական գործունեության տվյալ որոշակի տեսակը, որը չի կարող հանդես գալ մնացածների արդյունքում: Նշանակում է՝ տարբեր համակարգերի արտաքին դրսևորումները տարբեր են, իհարկե՝ որոշակի ընդհանրություններով: Հենց դրանք էլ այս գլխում քննարկման առարկա կդառնան:

Արտաքին դրսևորումներին այսչափ ուշադրություն հատկացնելու հիմնական պատճառը առկա պնդումների վերահաստատումն է: Տնտեսագետների դատողությունները[4] մինչև վերջ չեն պարզաբանում տնտեսական գործունեության շուրջն ընթացող երևույթները, քանզի դրանք լրջորեն հաշվի չեն առնում մի շարք չափորոշիչներ: Քննության առնելով արտաքին դրսևորումները՝ մենք փորձում ենք հիշյալ հայտանիշները դարձնել նույնքան թափանցիկ, որքան տնտեսագիտության հիմնական դատողություններում առաջ քաշված թեզերը:

Սա, ամբողջ տնտեսական գործունեության առումով, մասնավորապես «զարգացման համատեքստում», կարևոր է հետևյալ պարզ պատճառով: Վերջին տասնամյակների ընթացքում ձևավորված զարգացման բազմաթիվ տեսություններ ու փորձառությունները հիմնված են եղել մի պարզ ենթադրության վրա՝ շահութաբեր ներդրումները հանգեցնում են տնտեսական աճի, տնտեսական աճն, իր հերթին, տանում է նրան, որ հասարակությունները դառնան «արդիական», «Արևմտյան»: Իրականում միշտ չէ, որ այս պնդումը ճիշտ է: Զարգացման ուղին բռնած հասարակությունը կարող է վերածվել անտակ դույլի, ուր բոլոր ներդրումները պարզապես անհետանում են՝ չհանգեցնելով որևէ շոշափելի տնտեսական աճի[5]: Անգամ որոշակի տնտեսական աճի արձանագրման դեպքում, միևնույն է, արդյունքում ձևավորվում է միանգամայն աղճատված հասարակություն. այն արդեն դադարել է ավանդական լինելուց, ինչպիսին մինչ այդ էր, բայց նաև չի դարձել «արդիական» կամ «Արևմտյան»[6]:

Իրավիճակն ամենևին էլ ներդրումների անբավարար մակարդակի կամ տնտեսագիտության ռազմավարության մեջ ժամանակին չարված որոշակի ճշտումների հետևանք չէ: Ոչ էլ առավել շատ ժամանակ էր անհրաժեշտ տեսանելի դրական արդյունքներ ակնկալելու համար: Սա նաև հիմնական մարքսիստական վերլուծություններում սահմանված դասական իրավիճակ է. հեղափոխական ելակետային գործոնները համապատասխան չէին և ճիշտ ժամանակին չէին հայտնվել, բացի այդ, բավարար ժամանակ էր անհրաժեշտ սոցիալիզմի ինքնադրսևորման համար[7]:

Իրականությունն այն է, որ այդ դրական արդյունքները երբեք ի հայտ չեն գա ոչ երկնագույն, ոչ էլ կարմիր համակարգերում մի պարզ պատճառով. ուսմունքն է սխալ: Ուսմունքը սխալ է իր չափից ավելի պարզեցվածությամբ՝ չափազանց նեղ դատողությունների վրա հիմնվածությամբ: Սա ամենևին էլ չի նշանակում, որ այս երկու տնտեսագիտական դատողություններում ընդունված փոփոխությունները անհամապատասխան են կամ ոչ տեղին ընտրված: Դրանք անհրաժեշտ են, բայց ոչ բավարար, իսկ արտաքին դրսևորումների ընդլայնման նպատակն այստեղ առավել լայն, առավել ճշգրիտ դատողությունների ծավալմանը նպաստելն է[8]:

Առաջին խնդիրն ակնհայտորեն «արտաքին դրսևորումների» և, այստեղ օգտագործվող իմաստով, դրանց երկվորյակը հանդիսացող «ներքին դրսևորումների» սահմանումն է: Որպես մեկնակետ դիտարկենք հետևյալ սահմանումը[9].

Արտաքին դրսևորումները տնտեսական պարբերաշրջանի փուլերի դրական ու բացասական ելակետային գործոններն ու արդյունքներն արտացոլող երկբևեռ փոփոխականներ են, որոնք.

- *դիտարկված չեն տնտեսագիտության տեսության մեջ և/կամ*
- *հաշվի չեն առնված առօրյա տնտեսական պրակտիկայում և/ կամ*
- *մոնետիզացված չեն, կամ դրանց մոնետիզացումն օրինական չէ:*

Երեք կետերն էլ կարելի է դիտարկել որպես այլընտրանքային և փոխլրացնող՝ նույնացնելով միևնույն փոփոխականների հետ: Այդժամ ելակետային գործոնները տնտեսագիտական տեսության մեջ հստակորեն դիտարկված և պրակտիկայում հաշվի առնված փոփոխականներն են. օրինակ, արտադրության գործոնների ու արտադրանքի գների ու քանակի սահմանումը. գործոնների ու ապրանքների շուկայում տիրող իրավիճակն էլ ձևավորում է նշված փոփոխականների հիմքը:

Իհարկե, այս ձևակերպումը ոչ մի կերպ չի կարելի անվիճարկելի համարել: Ո՞վ կարող է միանշանակորեն սահմանել, թե ինչ է տնտեսագիտությունը: Տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիրնե՞րը: Ստանդարտ դասագրքե՞րը[10]: Տնտեսագիտության առաջավոր ամբիոնների կողմից դասավանդվող տնտեսագիտության դասընթացնե՞րը: Ավելին, նույնիսկ ինչ-որ կերպ սահմանված՝ տնտեսագիտությունը միշտ կմնա անընդհատ փոփոխվող անվերջ դիալեկտիկայի հակառողությունը: Նույնը վերաբերում է տնտեսական պրակտիկային: Արդյո՞ք մենք նկատի ունենք շուկայի խոշոր

մասնակիցների գործունեությունը, որ սովորաբար որոշակիորեն տարբերվում է ընտանեկան *(Mom-and-pop)* հիմնարար սկզբունքից:

Մոնետիզացումը կարող է պակաս վիճահարույց թվալ: Բայց արտաքին դրսևորումների և դրանց յուրացման, այսինքն՝ թե՛ տեսության մեջ, և թե՛ գործնականում դրանք կիրառելի դարձնելու հիմնական տնտեսագիտական ուղին անցնում է մոնետիզացմանճանապարհով: Այստեղ կարելի է արատավոր շրջանի մեջ հայտնվել: Եթե չափանիշը մոնետիզացումն է, ապա արտաքին դրսևորումների ցանցն ընկրկում է, քանզի տնտեսագետները մոնետիզացնում են «ծախքերն ու օգուտներն առանց պատճառաբանության», իսկ գործնական կիրառողները՝ պետական կամ մասնավոր, ներառում են դրանք իրենց հաշվարկներում:

Վերջին ատյանն այստեղ վերոնշյալ վերջնական դրույթն է՝ «անօրինական մոնետիզացումը»: Բայց ո՞վ է որոշում, թե ինչն է օրինական, ինչը՝ ոչ: Հոսանքի հետ շարժվող, թե «տարակարծիք» տնտեսագետնե՞րը: Երկուսը միասի՞ն, թե՞ դրանցից ոչ մեկը: Եթե սպառման մոնետիզացումն անօրինական է, ապա նույն տրամաբանությամբ գուցե անօրինական է նաև հողի ու աշխատուժի՞ մոնետիզացումը[11]: Եթե բոլոր երեքն էլ օրինական են, գուցե օրինական կլինի նաև «մարդկային կյանքի՞» մոնետիզացումը[12]: Այս ամենն, իհարկե, վիճահարույց է, բայց, այնուհանդերձ, սահմանումը կարող է ծառայել իբրև սկզբնական ուղեցույց:

3.2 Արտաքին դրսևորումների գծապատկերները վեց հարթություններում

Սկսենք արտաքին դրսևորումների ցանցի վերաբերյալ մեր իսկ ցանկությունների շարադրումից: Ի՞նչ ենք ուզում դրանցից և ինչի՞ կարիք ունենք:

1. *Բոլոր վեց հարթություններն էլ (բնության, մարդկային, սոցիալական, աշխարհի, ժամանակի, մշակութային) պետք է անխտիր ներկայացված լինեն:* Բացառություն լինել չի կարող: Ասվածի կարևորությունը պարզորոշ արտահայտվում է տնտեսական հարցերի ընթացիկ քննարկումներում: Առավել վճռորոշ քննարկումներն անընդհատ ցատկում են մի հարթությունից մյուսը՝ շրջակա միջավայրի պաշտպանության մտահոգությունից (բնության հարթություն) մինչև մարդու զարգացումը (մարդկային հարթություն), սոցիալական արդարության, իրավահավասարության խնդիրները (սոցիալական հարթություն), Երրորդ Աշխարհի (զարգացող երկրների) դժվարին կացությունը (աշխարհի հարթություն), հարատևությունը (ժամանակի հարթություն), Ճապոնիայի տնտեսական թռիչքի հանգամանքները (մշակութային, գուցե նաև կառուցվածքային, այսինքն՝ սոցիալական հարթություններ): Բոլորն էլ կարևոր են. դրանցից յուրաքանչյուրի առանձին քննարկումն արդեն իսկ նվաճում է նեղ տնտեսագիտական դատողությունների համեմատությամբ: Սակայն այդպես վարվելու դեպքում մեծ է նաև ծուղակն ընկնելու հավանականությունը՝ վտանգավոր միագործոնային տեսականացման իմաստով: Հետաքրքիր է, որ մինչև վերջերս իրենց մարքսիզմի հետևորդ համարող գործիչներից շատերն այսօր միակողմանի բնապահպանական ուղղություն են որդեգրել՝ հարմարվողական փոխակերպում, որ կոչվում է քաղաքական օգտապաշտություն[13]: Այսօրինակ դիրքը հոլիստական է:

2. *Սահմանափակ թվով արտաքին դրսևորումներ պետք է բացահայտվեն՝ յուրաքանչյուր հարթությունում, թերևս, երկուսից-հինգը:* Յուրաքանչյուր հարթություն մտքում արթնացնում է մեկ կամ ավելի առարկաներ, որոնցից յուրաքանչյուրն, իր հերթին, ընդունակ է տեղից շարժելու ցանկացած ծավալներ: Խնդիրն այստեղ համապարփակ ցուցակագրումը չէ, այլ, թերևս, հիմնական տնտեսագիտական դատողությունների շրջանակից դուրս մնացած կարևորագույն փոփոխականների բացահայտումը[14]: Նմանօրինակ ցանկացած ցուցակ հետագայում ակնհայտորեն ենթակա է սրբագրման, ընդ որում, համընդհանուր համաձայնությունն այս դեպքում անհնար է և ոչ այնքան ցանկալի: Խնդիրն այստեղ որոշակիությունն է: Այստեղ կան փոփոխականներ, որոնք մենք համարում ենք կարևոր այնքան ժամանակ, քանի դեռ դրանք պարունակում են ընթացիկ իրավիճակի բացատրությունը:

3. *Արտաքին դրսևորումները պետք է դիտարկվեն որպես տվյալ հարթության արժեքային չափանիշներ:* Սահմանումներում մենք օգտագործեցինք այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «դրական/բացասական»-ը, «ելակետային գործոններ/արդյունքներ»-ը, «հաշվի չառնված/հաշվառված»-ը: Այլ խոսքով՝ արտաքին դրսևորումները չեզոք չեն, դրանք սոսկ գիտության որևէ ճյուղի քննարկումներում ներառված առանձին փոփոխականներ չեն: Ավելին, դրանք պետք է հանդես գան որպես հիմնական արժեքային չափանիշներ, բայց ոչ անպայմանորեն ձևակերպված հիմնական քաղաքական դատողությունների ոճով[15]:

4. *Արտաքին դրսևորումները պետք է ունենան դրական/բացասական գոտիներ:* Արժեքային չափանիշները պետք է ցույց տան, թե ինչն է լավ (ինչ նպատակ հետապնդել) և ինչը՝ վատ (ինչը մերժել)՝ թերևս դրանց միջև առկա որոշակի սահմանային գոտիով: Նույնը պետք է անի արտաքին դրսևորումը:

5. *Հարկ է տարբերակել մակերեսային, հիմնական արժեքների ակնհայտ, արդեն ուսումնասիրված հայտանիշներն արտացոլող արտաքին դրսևորումները հիմնական արժեքների աննկատ, թաքնված հայտանիշներն արտացոլող արտաքին դրսևորումներից:* Մակերեսային արտաքին դրսևորումները կարող են օգտագործվել տվյալների հավաքագրման և, հնարավոր է նաև, ցուցիչների ձևավորման, իսկ առավել հիմնավոր արտաքին դրսևորումները՝ տեսության կերտման նպատակով: Լավ օրինակ է բնության հարթությունը, որտեղ ընթացիկ քննարկումները հիմնականում տարվում են բնական պաշարների հնարավոր սպառման և շրջակա միջավայրի աղտոտման հարցերի շուրջ՝ երկուսն էլ հարմար և չափելի ցուցիչների ձևավորման համար: Բայց բազմազանությունը (կենդանի և անկենդան աշխարհի ցանցերում) և համակցությունները (կենդանի և անկենդան աշխարհների մեջ) տեսության կառուցման խնդրում կարող են շատ ավելի օգտակար լինել:

6. *Հիմնավոր արտաքին դրսևորումները պետք է նպաստեն միջհարթությունային տեսությունների կերտմանը:* Սա, իհարկե, մտավորականի երազանքն է՝ բացահայտել փոփոխականներ, որ կարող են կիրառվել միջառարկայական համակարգերում՝ ընդսմին, չչարչրկված խնդիրներ բարձրացնելով բոլոր հարթությունների համար:

7. *Արտաքին դրսևորումները կոչված են լրացնելու վճռորոշ կառուցվածքային բացերը՝* դրանով իսկ կիրառելի լինելով ոչ միայն քննադատության, այլև այլընտրանքների համար:

Այժմ փորձարկենք արտաքին դրսևորումների ցանցը վերոհիշյալ ցանկությունների համատեքստում: (Աղյուսակ 3.1):

Աղյուսակ 3.1. Արտաքին դրսևորումներ I. Մակերեսային և խորը դրսևորումները

Հարթությունը	Արժեքային չափորոշիչները	Մակերեսային	Խորը
Բնության	*Բնապահպանական հավասարակշռություն*	Սպառում Աղտոտում	Բազմազանություն Համակցություն
Անհատի	Հիմնարար մարդկային կարիքներ	Ֆիզիկական կարիքներ Հոգևոր կարիքներ	Բազմազանություն Համակցություն
Սոցիալական/ Հասարակական	*Զարգացում.* աղքատության վերացում, հիմնարար կարիքների բավարարում	Ուղղակի բռնության և կառուցվածքային բռնության զսպում և նվազեցում	Բազմազանություն Համակցություն
Աշխարհի	*Խաղաղություն* Ներդաշնակ համերաշխություն	Ուղղակի բռնության և կառուցվածքային բռնության զսպում և նվազեցում	Բազմազանություն Համակցություն
Ժամանակի (Պատմություն/ ապագա)	Կայունություն Դիաքրոնիկ համերաշխություն	Ուղղակի բռնության և կառուցվածքային բռնության զսպում և նվազեցում	Բազմազանություն Համակցություն
Մշակութային	Համարժեքություն	Մշակութային բռնության զսպում և նվազեցում	Բազմազանություն Համակցություն

Վերոշարադրյալի փիլիսոփայությունը հետևյալն է. բնապահպանական հավասարակշռությունն ու մարդկային կարիքները ինքնանպատակ արժեքներ են՝ վերջնական արդյունք: Ի հակադրություն դրա՝ զարգացումը/ խաղաղությունը/կայունությունը/համարժեքությունը այլանպատակ են, դրանք սոսկ մարդկային և ոչ մարդկային էակների սպասարկմանն ուղղված միջոցներ են: Ասվածի տրամաբանությունն ակնհայտ է՝ մարդկային գործունեության (ներառյալ տնտեսական գործունեությունը) նպատակը կյանքի բարելավումն է, բուդդայական տերմինաբանությամբ՝ *dukkha*-ի նվազեցումն ու *sukha*-ի աճը[16]: Տնտեսագիտական մեկնությամբ տառապանքը/հաճույքը թերի են իրականացնում այդ գործառույթը:[17]

Նշված հարթություններում արտաքին դրսևորումների մակերեսային սահմանումներն արժեքների ընդհանուր չափանիշերը բացատրում են այս բացարձակ արժեքներին շատ մոտ տեսանկյունից: «Զարգացմանը» հատուկ է ինչպես բացասական հայտանիշը՝ աղքատության վերացումը, այնպես էլ դրականը՝ հիմնարար կարիքների բավարարումն ու կատարելագործումը: «Խաղաղությունն» ու «կայունությունն» ընդլայնում են այս մոտեցումը տարածության ու ժամանակի մեջ՝ որպես կարիքների բացակայության հետևանքով տառապող մարդկային և ոչ մարդկային էակների միաժամանակյա և դիաքրոնիկ համերաշխություն: Ասվածի առնչությամբ, անշուշտ, առկա է բռնությունների մի ամբողջ տերմինաբանություն, որտեղ զարգացումն ընդհանրապես ընկալվում է իբրև կառուցվածքային բռնության թուլացում (որպես հիմնական դրսևորում դիտարկելով շահագործումն ու բռնարարքները), իսկ խա-

ղաղությունը՝ իբրև ուղղակի բռնության թուլացում: Աղյուսակ 3.1-ում արտաքին դրսևորումները բացատրված են բացասական միտվածությամբ՝ որպես բռնության երեք ձևեր, որ պիտի *թուլացվեն ու զսպվեն,* և դրական միտվածությամբ՝ որպես տարրակարգություն և (անաչառ) համակցություն, որ պիտի *ավելացվի ու պահպանվի*: Միայն այս պայմաններում կարող է վերարտադրվել հարթությունների միջև փոխհամագործակցությունը: Հարթությունները դառնում են կայուն, ուստի դրանցում ընդհանուր արժեքները կարող են համատեղ կիրառվել:

Անդրադառնալով վերոհիշյալ բացին՝ պիտի նշենք, որ բոլոր հարթություններն էլ ներկայացված են, յուրաքանչյուր հարթությանը բաժին է հասնում երկու արտաքին դրսևորում (թեև դրանք թույլ են, առավել հայտանիշային կամ հիմնաարտաքին դրսևորումներ են). դրանք որոշակի արժեքային չափորոշիչներ են, որ հաճախ հանդիպում են ընդհանուր դատողություններում (բացառությամբ «համարժեքության», որ, թերևս, դրանցից ամենահիմնականն է, գուցեև առավել մտավոր միտում պարունակողը): Առկա են նաև հիշյալ չափորոշիչների դրական և բացասական գոտիները, ինչպես նաև դրանց երկու ամբողջություն՝ մակերեսային ու խորը:

Իսկ ի՞նչ կարելի է ասել միջտիրույթային տեսության ձևավորման վերաբերյալ: Փաստարկը հետևյալն է. եթե կարողանանք ստեղծել նման տեսություն, ապա բազմազանության ու համակցության երկակի հայեցակարգը կարելի կլինի կիրառել բոլոր հարթությունների համար ո՛չ միայն առօրեական ուսմունքների զարգացման նպատակով: Հիմնական ենթադրությունն այն է, որ երկակի հայեցակարգը խորապես առնչվում է բոլոր վեց հարթությունների իրականությանը: Մյուս կողմից՝ այդ հայեցակարգը վճռորոշ է նաև համակարգային տեսության տեսանկյունից: Նմանօրինակ պնդման տրամաբանական լինելը, սակայն, հաստատման կարիք ունի[18]: Քանզի զարգացման հայեցակարգը ծածկում է բոլոր վեց հարթությունները, այդպիսին պիտի լինի նաև տեսությունը:

Իսկ քննադատական/կառուցողական հայտանի՞շը: Երբ տնտեսական պարբերաշրջանը թևակոխում է ցուցիչի բացասական գոտի, քննադատության համար պարարտ հող է ձևավորվում, ընդ որում՝ բավական խիստ քննադատության, եթե, ընդսմին, հիմնարար կարիքներն էլ խաթարված են: Կառուցողական հայտանիշն այս դեպքում ոչ թե միայն դրական գոտու տեղը մատնանշելն է, այլ նաև դրան հասնելու եղանակների պարզաբանումն ու ռազմավարության (լինի քաղաքական, տնտեսական, թե սոցիալական) ձևակերպումը: Որպես արտաքին դրսևորման բացահայտման չափանիշ՝ կարող է հանդես գալ տեսությունը, հնարավորության դեպքում՝ նաև ապացուցված պրակտիկան: Այստեղ է, որ տնտեսագիտական դպրոցները դառնում են ամբողջապես մեկնաբանության ենթակա. այն, ինչը չի տեղավորվում մի տեսության տրամաբանության մեջ, կարող է հանգիստ բացատրվել մյուսի տրամաբանությամբ: Դրանով իսկ էկլեկտիկ հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող են համադրվել այդ դպրոցները[19]:

Մինչ այժմ մեր ուշադրության կենտրոնում արտաքին դրսևորումների տիրույթներն էին, իսկ աղյուսակ 3.1-ում նկարագրված են առկա հնարավորությունները: Բայց վերոհիշյալ սահմանումը արտաքին դրսևորումները ձևակերպում է ոչ միայն իբրև դրական ու բացասական, այլ նաև սահմանում է դրանք տնտեսական պարբերաշրջանի փուլերին համապատասխան, ի նկատի ունենալով, որ դրանք գտնվում են հենց այդ փուլերում, իբրև դերակա-

տարներ՝ իրենց նպատակներով ու ռազմավարությամբ, կամ ընդամենը որպես գոտի, որով անցնում է տնտեսական պարբերաշրջանը: «Փուլեր» բառն այս դեպքում կոչված է ծածկելու բոլոր հնարավոր դեպքերը: Անհրաժեշտ է բացահայտել տնտեսական համակարգերի տարբեր հայտանիշների ու արտաքին դրսևորումների չափորոշիչների միջև առկա կապերն ու դրանք փորձարկել գոնե որպես վարկածներ:

Արտաքին դրսևորումներն այժմ կդասակարգվեն ըստ այն նույն խմբերի, որոնցում խմբավորված են դպրոցները՝ անհատապաշտություն ի հակադրություն կոլեկտիվիզմի, ուղղահայացություն ի հակադրություն հորիզոնականության, մոնետիզացում, մշակում և ընդլայնում: Մենք կսկսենք հետազոտությունը երկնագույն դպրոցի արտաքին դրսևորումներից այն նույն պատճառով, որով ժամանակին դպրոցների ուսումնասիրությունն սկսեցինք երկնագույն դպրոցից՝ որպես ժամանակակից տնտեսագիտական դպրոցների մայր դպրոցի:

Աղյուսակ 3.2. Արտաքին դրսևորումներ II. Երկնագույն տնտեսության արտաքին դրսևորումները

Հարթությունը	Անհատապաշտություն	Ուղղահայացություն	Մոնետիզացում	Մշակում	Ընդլայնում
Բնության				Սպառում Աղտոտում	Սպառում Աղտոտում
Անհատի	Միայնակություն Հարբեցողություն Արմատների կորուստ Ամուսնալուծված ընտանիքներ	Օտարացում Թմրամոլություն Տաղտուկ Չքավորություն Մահ	Նյութապաշտություն Գերսպառում Կոռուպցիա Պոռնկություն Հանցավորություն	Մարտահրավեր Անորոշություն Ստեղծագործություն Վթարներ Հիվանդություններ	Մարտահրավեր Ռիսկերի ստանձնում Հուզումներ Առևտրի պատերազմներ Մահ
Սոցիալական/ Հասարակական	Ֆրագմենտավորում Մարգինալացում	Սեգմենտավորում Ներազդում Շահագործում Ճնշում Անհավասարություն Ներքին պարտք Բռնություն Քաղաքացիական պատերազմ ուղղաձիգություն (տարիքային, սեռական, ռասայական, մշակութային)	Ապրանքային մշակույթ Ներքին սպառազինությունների մրցավազք	Մարտահրավեր Դինամիզմ Հետազոտություն Կրթություն Ընդհանուր իրազեկություն	Մարտահրավեր Դինամիզմ Ռազմական իշխանություն Գիտելիքներ Ընդհանուր իշխանություն

Աշխարհի	Ֆրագմենտավորում Մարգինալացում	Սեգմենտավորում Ներազդում Շահագործում Ճնշում Անհավասարություն Արտաքին պարտք Բռնություն Արտաքին պատերազմ Ուղղաձիգություն (տարիքային, սեռական, ռասայական, մշակութային)	Ապրանքային մշակույթ Արտաքին սպառազինությունների մրցավազք	Մարտահրավեր Դինամիզմ Հետազոտություն Կրթություն Ընդհանուր իրազեկություն	Մարտահրավեր Դինամիզմ Ռազմական իշխանություն Գիտելիքներ Ընդհանուր իշխանություն
Ժամանակի (Պատմություն)	Ֆրագմենտավորում Մարգինալացում	Ապագայում գաղութատիրություն	Ապրանքային մշակույթ	Համընդհանուր դեգրադացիա	Համընդհանուր ապստամբություն
Մշակութային	Իմացաբանական ատոմիզմ	Իմացաբանական արտածում	Ծախքեր/օգուտներ վերլուծություն	Միջոցներ/վերջնարդյունք հակվածություն	Համաշխարհային մոնոմշակույթ

Աղյուսակ 3.2-ում ներկայացվածը կարելի է կարդալ հորիզոնական ուղղությամբ՝ ամփոփելով բոլոր վեց դպրոցներին հասցված վնասը, և ուղղահայաց ուղղությամբ՝ ամփոփելով երկնագույն տնտեսության տվյալ հայտանիշը պարզաբանող արտաքին դրսևորումները: Այս ամբողջական համակարգը երկնագույն տնտեսությունը բաժանում է հինգ բաղադրիչների՝ ամփոփելով դրանց ազդեցությունը բոլոր վեց հարթությունների վրա: Կապիտալիզմի հիմնական «բացերը» ներկայացված են աղյուսակում՝ փորձելով ուսումնասիրել դեպի բաղադրիչները («ախտանիշները») դրանց վերադարձի հետագիծը: Սակայն «կապիտալիզմ» բառն ամբողջությամբ չի արտացոլում երկնագույն տնտեսության ողջ էությունը: Թերևս, առավել կիրառելի է սմիթականությունը:

Արդյո՞ք նշված համակարգը չափազանց բացասական չէ: Նախ, հարկ է նշել, որ հաշվի չեն առնված ներքին դրսևորումները: Չի բացառվում, որ երկնագույն տնտեսությունն արտադրում է ապրանքների ու ծառայությունների չափազանց մեծ քանակներ (նույնքան բազմազան ու բարձրորակ)՝ դրանով իսկ ապահովելով կյանքի աներևակայելի բարձր մակարդակ նույնիսկ վաղ հասակում: Ավելին, աղյուսակում անհատի, սոցիալական ու աշխարհի հարթություններում մշակման և ընդլայնման ազդեցությունների մասում նշված են երկնագույն տնտեսության մի շարք հիմնական հրապույրներ (ի հավելումն առերևույթ առավելությունների, ինչպիսին, ասենք, շահույթն է, բայց վերջինս ներքին դրսևորման օրինակ է)՝ մարտահրավերները, անորոշությունը, ստեղծագործումը, ռիսկ ստանձնելու հնարավորությունը, հուզմունքը: Այս առումով *կապիտալիզմը հրճվանք է:* Իհարկե, այն շատ ավելի պակաս հրճվանք է

արտադրական վթարների հետևանքով զոհված բանվորների համար: Սա ևս պետք է նշել: Նաև պետք է նշել, որ հետազոտությունը, կրթությունը, գիտելիքները, ռազմական իշխանությունը, ընդհանուր իշխանությունն ու իրազեկությունը, որպես կանոն, վերնախավերի համար են:

Բայց, եթե անգամ երկնագույն դպրոցում առկա է բնություն (մշակում) – համաշխարհային էքսպանսիա (ընդլայնում) սկզբունքի նկատմամբ անհատապաշտություն-ուղղահայացություն-գիտականություն (չափանիշներ) գերիշխանությունը, միևնույն է, երկնագույն դպրոցը շարունակում է մնալ մեղադրյալի կարգավիճակում: Ի՞նչ այլընտրանքներ կարող են լինել:

Աղյուսակ 3.3. Արտաքին դրսևորումներ III. Դրական և բացասական արտաքին դրսևորումներ

Հարթությունը	Դրական	Բացասական
Բնության	Բազմազանություն	Սպառում
	Համակցություն	Աղտոտում
Անհատի	Գոյատևում	Մահ, վթարներ
	Առողջություն	Հիվանդություններ
	Բարեկեցություն, ապրուստ	Աղքատություն, զրկանքներ
	Մարտահրավեր, ուրախություն	Միապաղաղություն, ձանձրույթ
	Ինքնություն, ինքնախթանում	Օտարացում, ինքնամփոփվածություն
	Ազատություն	Բռնարարքներ
Սոցիալական	Հորիզոնականություն, անաչառություն	Ուղղահայացություն, շահագործում
	Ինքնավարություն	Ներազդում, պայմանականություն
	Ինտեգրում	Սեգմենտավորում
	Համերաշխություն	Ֆրագմենտավորում
	Մասնակցություն	Մարգինալացում
	Շարժունակություն, դինամիզմ	Ստատիկություն
	Սոցիալական արդարություն	Սոցիալական անարդարություն
Աշխարհի	Հորիզոնականություն, անաչառություն	Ուղղահայացություն, շահագործում
	Ինքնավարություն	Ներազդում, պայմանականություն
	Ամբողջականացում	Սեգմենտավորում
	Համերաշխություն	Ֆրագմենտավորում
	Մասնակցություն	Մարգինալացում
	Շարժունակություն, դինամիզմ	Ստատիկություն
	Սոցիալական արդարություն	Սոցիալական անարդարություն
Ժամանակի	Կայունություն	Դեգրադացիա
Մշակութային	Բազմակարծություն	Միակարծություն

Աղյուսակ 3.3-ի «դրական» սյունակում զետեղված է պատասխաններից մեկը: Նշված սյունակի տրամաբանությունն ակնհայտ է: Բնության հարթությունում բնապահպանական ճկունության նպատակով կիրառվել են երկու պայմաններ, անհատի հարթությունում՝ կարիքների չորս կատեգորիա (ակնհայտորեն առողջությանն ավելացնելով բարեկեցությունը և ինքնությանն ավելացնելով մարտահրավերը): Սոցիալական հարթությունում կիրառվել են կառուցվածքային խաղաղությունը/զարգացումը բնութագրող հինգ գործոն-

ները՝ միաժամանակ ավելացնելով սոցիալական արդարությունն ու դինամիզմը: Նույնը կիրառվել է նաև աշխարհի հարթությունում, քանզի այն ևս, մեծ հաշվով, սոցիալական հարթություն է, թեև բարդության առավել բարձր մակարդակով: Ժամանակի/պատմության հարթությունում կիրառվել են կայունությունն ու վերարտադրելիությունը, մշակույթի հարթությունում կիրառվել է նաև բազմակարծությունը՝ ի հակադրություն համաշխարհային մոնոմշակույթի, որը երկնագույն համակարգի պատճառն ու հետևանքն է[20]:

Նշված ցանկն, իհարկե, չափազանց բարդ է: Աղյուսակ 3.4-ն ավելի պարզ է: Բոլոր արտաքին դրսևորումներն արդեն ցույց են տրված 3.2 և 3.3 աղյուսակներում, բայց այս պարզեցված տարբերակը կարող է ծառայել նաև մեկ այլ նպատակի՝ հետևելու, թե տնտեսական հոսքերն ինչպես են քայքայում պաշարները[21]:

Աղյուսակ 3.4. Արտաքին դրսևորումներ IV. Դրական և բացասական արտաքին դրսևորումներ

Բնության	Մարդկային	Սոցիալական	Աշխարհի	Ժամանակի	Մշակութային
Բազմազանություն Համակցություն	Բարեկեցություն Մարտահրավեր Ինքնություն	Հորիզոնականություն Համերաշխություն	Հորիզոնականություն Համերաշխություն	Վերարտադրողականություն	Աստվածապաշտություն Իդեալիզմ
Սպառում Աղտոտում	Աղքատություն Միապաղաղություն Օտարացում	Ուղղաձիգություն Անհատապաշտություն	Ուղղաձիգություն Ազգայնամոլություն	Դեգրադացիա	Ատոմիզմ Մատերիալիզմ

3.1 – 3.4 աղյուսակները կոչված են համոզելու նրանց, ովքեր տնտեսագիտությունը հակված են դիտարկելու սոսկ որպես առարկա, այն պարզ պատճառով, որ դրանք փոփոխականներ չեն, ինչպես սովորաբար դիտարկվում են տնտեսագիտության հիմնական ճյուղերի դատողություններում: Միաժամանակ, դրանք առերևույթ հաշվի չեն առված հիմնական տնտեսվարող համակարգերի (ինչպես, օրինակ, ԱԱԿ-ներն են) կողմից. նաև մոնետիզացված չեն: Բացառություն են բնության հարթության արտաքին դրսևորումները. դրանք ներփակված են համակարգում՝ սպառվածության ու աղտոտվածության տեսքով, ընդ որում՝ թե՛ տեսականորեն, և թե՛ գործնականում: Վերջիններս մոնետիզացված են արդեն սպառված (հետևաբար՝ անդառնալիորեն կորսված) պաշարների արժեքի կամ աղտոտվածությունը մաքրելու համար անհրաժեշտ ծախսերի չափով: Թե ինչո՞ւ բոլոր արտաքին դրսևորումները պետք է յուրացվեն, կբացատրվի ստորև:

Տնտեսական համակարգերի և վերոհիշյալ կամ այլ արտաքին դրսևորումների փոխադարձ կապերի մասին այսօր բազմաթիվ հետազոտություններ կան գրված: Վարկածների մեծ մասը բխում է դպրոցների սահմանումից. դա ամենևին էլ չի նշանակում, որ դրանք չպետք է փորձարկվեն: Բայց նման փորձարկումների իրականացումը գործնականում դյուրին խնդիր չէ, եթե հաշվի առնենք յուրաքանչյուր որոշակի օրինակի բարդությունը: Հիմնական մեր մտահոգությունն այստեղ կարևորագույն այս փոփոխականները տնտե-

սագիտական տեսության համակարգից դուրս պահելու պատճառներն ու հետևանքներն են. հենց դա էլ կլինի հաջորդ գլխի քննարկման թեման:

3.3 Արտաքին դրսևորումների քսան դրույթները

Դրույթ 1.

Արտաքին դրսևորումների քսան դրույթները փոփոխական են ոչ այն պատճառով, որ դրանք էական չեն, այլ որովհետև դրանց հաշվի առնելը զգալի ազդեցություն կունենա տնտեսագիտական տեսության ու պրակտիկայի վրա:

Դրանք հաշվի առնելու ծախսերը նույնպես զգալի կլինեին. այսպես կոչված հիմնաարտաքին դրսևորումները: Արտաքին դրսևորումները նման են սառցաբեկորի անտեսանելի մասին. թեև աներևույթ, այնուամենայնիվ, այն միշտ առկա է: Եթե տնտեսագիտության տեսությունն ստիպված լիներ հստակորեն հաշվի առնել աղյուսակներ 3.1-3.4-ում նշված վարկածներից որևէ մեկը (ասենք, մարդկային և ոչ մարդկային էակների հիմնարար կարիքները)՝ այն դնելով տնտեսագիտական ուսմունքի հիմքում, ապա հարկ կլիներ տվյալ ուսմունքն ամբողջապես վերակառուցել, քանզի այն այլևս չէր դիտվի որպես տնտեսագիտական ուսմունք բառի նեղ մասնագիտական իմաստով: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև բոլոր դերակատարների տնտեսական փոխգործակցությանը: Սակայն շուկայի ավելի փոքր մասնակիցները, նաև քաղաքական գործիչները, թերևս, շատ ավելի լավ են գիտակցում արտաքին դրսևորումների դերը, քանզի բացասական արտաքին դրսևորումները կարող են նաև հակառակ ազդեցություն ունենալ, արտահայտվելով, ասենք, վրեժխնդրության ձևով: Այսինքն, չի կարելի հուսալ, որ տնտեսագետներն ի վիճակի կլինեն իրենք հոգալու հիշյալ հիմնաարտաքին դրսևորումների ծախսերը: Փոխարենը նրանք առավել հակված կլինեն հետաձգելու խնդրի լուծումը՝ ապավինելով, թերևս, բախտի քմահաճույքին, կամ կտեղափոխեն արտաքին դրսևորումների կիզակետը՝ համապատասխանեցնելով այն տեսության դրույթներին, և ոչ թե հակառակը: Վերակառուցումն, ամենայն հավանականությամբ, կպարտադրվի դրսից առավել լայն դատողությունների կամ ավելի բարդ ուսմունքի տեսքով:

Դրույթ 2.

Արտաքին դրսևորումները կարող են լինել ոչ միայն բացասական, այլ նաև դրական, ճիշտ այնպես, ինչպես ներքին դրսևորումները կարող են լինել ոչ միայն դրական, այլև բացասական:

Արտաքին դրսևորումների մասով այս պնդումը մասնակիորեն արտացոլված է դրանց սահմանման մեջ. կրկնելն այստեղ իմաստ ունի, հաշվի առնելով այն ընթացիկ միտումները, որոնք հակված են կապիտալիզմը ներկայացնելու իբրև անպայմանորեն շահույթի հանգեցնող մի բան (ձախակողմյան քննադատություն), իսկ կողմնակի արդյունքները՝ բացառապես բացասական տեսանկյունից: Այնինչ երկուսն էլ առավել հավասարակշռված մոտեցում են

պահանջում: Բոլոր տնտեսությունների պատմություններն էլ գրված են ոչ միայն սև, այլ նաև կարմիր թանաքով. դրանցում միշտ էլ առկա են ոչ միայն առատ դրամապանակներ ու հարուստ բանկային հաշիվներ, այլև սնանկացումներ ու ողբերգություններ: Տնտեսական իրականության այս ոչ ցանկալի հայտանիշները, որ արձանագրվում են նաև տնտեսագիտության մեջ՝ իբրև գիտություն, պետք է առավել դրական հայտանիշների հետ համատեղ քննարկվեն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին դրսևորումների իմաստով: Տնտեսական գործունեության արդյունք կարող են լինել և՛ ապրանքները (goods), և՛ հակաապրանքները (bads), և՛ ծառայությունները և՛ հակածառայությունները: Բացառապես միայն «ապրանքների ու ծառայությունների» վրա կենտրոնանալը կոչվում է քարոզչություն, բայց նույնն է նաև հակառակ մոտեցումը:

Դրույթ 3.

Արտաքին դրսևորումները միայն հետևանքները, արդյունքներն ու արտադրանքները չեն, այլ նաև պատճառները, պայմաններն ու ներդրումները:

Ավելի որոշակի՝ գոյություն ունեն մշակութային դասակարգումներ (մասամբ ողջունելի, մասամբ ոչ), որոնք մանրակրկիտ քննարկման կարիք ունեն: Ասվածը կարելի է տեսնել աղյուսակ 3.5-ում:

Աղյուսակ 3.5. Արտաքին դրսևորումներ V. Դրական/բացասական, ներդրումներ/արդյունք

	Դրական		Բացասական	
Ներդրումներ	Քրտնաջան աշխատանք	Խնայողություններ	Ագահություն	Անխտրականություն
Արդյունքներ	Մարտահրավեր	Դինամիզմ	Սպառում	Աղտոտում

Աղյուսակը պարզագույն գործառույթ է իրականացնում. այն ցույց է տալիս միայն մեկ առանձին տողի կամ սյունակի վրա կենտրոնանալու (աղյուսակի առանձին տարրերը քննարկելու փոխարեն) վտանգավորությունը: Նշված բոլոր գործոնները փոխհամագործակցում են՝ ապահովելով տնտեսական պարբերաշրջանի ամբողջականությունը («կուտակային ու պտուտական պատճառականության» Միրդալի հայտնի թեզը):

Դրույթ 4.

Որքան ավելի քիչ է ներքին դրսևորումների քանակը, այնքան մեծ է տնտեսական դերակատարի ազատության աստիճանը, քանզի այդքան ավելի սակավաթիվ են այն փոփոխականները, որոնք պետք է հաշվի առնվեն: Համապատասխանաբար, որքան քիչ է ներքին դրսևորումների քանակը, այնքան ավելի դյուրին է հակասություններից զերծ, անգամ մաթեմատիկականացված տնտեսական ուսմունքի կերտումը, որ հիմնված կլինի ավելի քիչ թվով փոփոխականների ու ավելի քիչ թվով աքսիոմների վրա և, հնարավոր է, ավելի մեծ բացատրական ուժ կպարունակի[22]*:*

Երկու դեպքում էլ փոփոխականի դիտարկումը որպես արտաքին դրսևորում՝ պատասխանատվությունից ազատում է տնտեսագիտության թե՛ տեսաբանին, և թե՛ գործնական կիրառողին՝ հնարավորություն տալով նրանց հաշվի չառնել այն: Ակնհայտորեն երկուսն էլ շահագրգռված են ներքին դրսևորումների ցանկը (արտաքին դրսևորումների ցանկի համեմատությամբ) հնարավորին սահմանափակելու մեջ, քանզի դրանք կարող են համոզել հասարակության մնացած հատվածին, որ ներքին դրսևորումների կեղծ իրականության մեջ ձեռնարկված գործողությունը կարող է իմաստ ունենալ և շահավետ լինել հասարակության մնացած հատվածի (կամ գոնե վերնախավի) համար:

Որպես ասվածի հիմավորում՝ ի հայտ է գալիս մի՝ թերևս ավելի կարևոր դրույթ. փոքրաթիվ ներքին դրսևորումների վրա հիմնված տնտեսագիտական տեսության որոշակի կանխատեսումային բովանդակությունը դեռևս չի ապացուցում արտաքին դրսևորումների անպատեհ լինելը, քանզի դեռևս կարող են իրականանալ ինքնադրսևորվող մարգարեություններ: Բացառապես ներքին դրսևորումները հաշվի առնելու սովոր մարդիկ կգործեն ըստ այդմ և կարձանագրեն հետևանքներ, որոնք բացառապես ներքին դրսևորումների տեսանկյունից են: Երբ մարդիկ բավարարվում են հաճախ կրկնելով. «մենք խաղի մեջ ենք՝ շահույթ ստանալու նպատակով», նրանք կսկսեն հավատալ, որ նրբազգացությունը (այստեղ դիտարկվում է որպես զգայունություն բացասական արտաքին դրսևորումների նկատմամբ) կարող է ընկալվել իբրև թուլակամություն և անհամարժեքություն աշխատանքում: Արտաքին դրսևորումները հաշվի չառնող տնտեսագիտական ուսմունքն, իհարկե, կտրված է մեր համալիր իրականությունից, բայց այս կեղծ իրականությունն էլ, որի մեջ գործում է *Homo oeconomicus*-ը, կարող է իրականություն դառնալ իր հետևանքներով[23]:

Դրույթ 5.

> *Ներքին/արտաքին դրսևորումների բաժանումն արտացոլում է տնտեսագետ տեսաբանների ու կիրառական տնտեսագետների ենթագիտակցության մեջ արմատացած իմացական գծապատկերներն ու պարունակվում է դրանցում՝ թերագնահատելով բնության, անհատի, սոցիալական, աշխարհի, ժամանակի ու մշակույթի հարթությունների որոշ հատվածներ և գերագնահատելով ներքին դրսևորումներով սահմանված տնտեսական հատվածները:*

Հիշյալ իմացաբանական գծապատկերներից շատերը բխում են Արևմտյան տիեզերաբանությունից՝ բնության, հոգու և մարմնի տարանջատման (թույլատրելով առևտրականներին/տնտեսագետներին ծառայել մարմնին, իսկ հոգևորականներին/արվեստագետներին սպասարկել հոգին), ինչպես նաև սոցիալական ու աշխարհի, անհատապաշտության/ուղղահայացության, ժամանակի առաջընթացի գաղափարի ու միակ (միշտ և ամենուր) ճշմարտության մշակույթի հայեցակարգերի թերագնահատմամբ, ինչը մնացյալ բոլոր համակարգերը դարձնում է անընդունելի:

Որոշ հատվածների թերագնահատումը կարող է արտահայտվել վեց հարթությունների ներքին (հիմնական) ու արտաքին հատվածների դասակարգմամբ, ինչպես ցույց է տրված աղյուսակ 3.6-ում: Ձախակողմյան սյունակն արտացոլում է համընդհանուր իրականությունն իր այս կառուցվածքով, աջակողմյան սյունակում ներկայացված են ծայրամասերը, իսկ ընդունված

տնտեսագիտությունը ձևավորվել է *կենդանում, կենտրոնի կողմից և կենտրոնի համար:*

Աղյուսակ 3.6. Հարթությունների բաժանումը ներքին ու արտաքին հատվածների

	Ներքին հատված	Արտաքին հատված
Բնության	Մարդոլորտ (հոմոսֆերա) (*մենք*)	Մնացած բոլոր ոլորտները (*այն*)
Անհատի	Մարմին/նյութ (*նյութ*)	Հոգևոր/ոչ նյութական
Սոցիալական	Վերին/միջին խավերը	Բանվոր դասակարգը/ ցածր խավերը
	Ստորադաս/ երկրորդա-կան հատվածները	Գլխավոր հատվածը
	Տղամարդկանց, չափա-հասների տնտեսություն	Կանանց, մանուկների տնտեսություն
	Խմբի անդամ (*մենք*)	Խմբից դուրս (*նրանք*)
Աշխարհի	Առաջին / Չորրորդ աշ-խարհները. *այստեղ, առավել զարգացած երկրները*	Երկրորդ / Երրորդ աշ-խարհները. *Այնտեղ, թույլ զարգացած երկրները*
Ժամանակի	Ներկա *այժմ, հաշվառելի*	Ապագա *այնժամ, անհաշվառելի*
Մշակութային	Ընդունված, *մեր*	Հոսանքին հակառակ, *նրանց*

Դրույթ 6.

Արտաքին դրսևորումները հատվածային գիտակցվածություն ունեն՝ մի քողարկված ընկալմամբ, թե բացասական արժեքները կարող են խաթարել արտաքին հատվածները, իսկ դրական արժեքները՝ կուտակվել ներքին հատվածներում:

Այս ներքին, ներխմբակային հատվածն առկա է այնտեղ, որտեղ արտաքին դրսևորումները՝ ծպտյալ կամ նույնիսկ ակնառու, հաշվի են առնված: «Միայն ներքին դրսևորումներ» մոտեցումը միտված է արտաքին հատվածի հետ գործարքներին. ինչպես, ասենք, սոցիոլոգիայում հարցաթերթիկները ներքին օգտագործման համար չեն: Ամուսնուն հարց ուղղելով՝ «ինչպե՞ս եք քնել երեկ գիշեր» «շատ լավ, լավ, ոչինչ, վատ, շատ վատ, չգիտեմ» պատասխաններն առաջարկելը կարող է հակընդդեմ ազդեցություն ունենալ:

Դրույթ 7.

Հարթությունների դասակարգումն ըստ հատվածների տնտեսական համակարգի հնարավոր սխալ գործունեության երկու ձև է առաջարկում ներքին հատվածին.

սխալ 1. երբ բացասական արտաքին դրսևորումները հարվածում են ներքին հատվածին,

սխալ 2. երբ դրական արտաքին դրսևորումները դուրս են հորդում դեպի արտաքին հատված:

Առաջին սխալը կարող է հանգեցնել արտաքին դրսևորումների «ներքինացման» և/կամ քաղաքական գործողությունների: Ցայտուն օրինակներ են 70-ական թվականների Առաջին աշխարհի բարձր/միջին խավերն ու *էկոճգնաժամերը*, որ ուղեկցվում էին նոր գործնական բանաձևերի խիստ պահանջարկով մինչև այն մակարդակը, երբ տնտեսագետ տեսաբանները տեսականորեն սկսեցին ընդունել սպառման ու աղտոտման հիմնահարցերը: Բնապահպանական ճգնաժամերն ու համաղետներն, անշուշտ, անդրադառնում են ցածր խավերի, Երկրորդ և Երրորդ աշխարհների բնակիչների կենսապայմանների վրա, բայց անկարող են որևէ ազդեցություն ունենալ տնտեսագիտության տեսության ու պրակտիկայի վրա:

Վաղ 90-ականներին Առաջին աշխարհի *տնտեսական* ճգնաժամերն իրենց սնանկացումներով, ստվերային գործունեության ակտիվացմամբ, սոցիալական ապահովության ու կենսաթոշակային հիմնադրամների խաթարմամբ հարվածեցին նաև բարձր/միջին խավերին: Տնտեսական անապահովությունը նոր երևույթ չէ. բայց սկիզբ առած քննարկումներն ու դատողությունները դարձան առավել լայն ու անհիշատակելի (արտաքին դրսևորումների մի մասն էր միայն հիշատակված): Երևակայական իրականության պատրանքը, թե տնտեսությունը լոկ տնտեսագիտություն է, ժամանակավորապես մերժվեց:

Երկրորդ սխալը կարող է տանել վերակառուցված փորձառության, ինչպիսին էին, օրինակ, սոցիալիստական և այլ ինքնաապավեն տնտեսությունների կործանմանն ուղղված ջանքերը, որոնք Միացյալ Նահանգները փորձառում էր ամերիկյան մայրցամաքում: Վարկածներից մեկն էլ կարող է լինել այն, որ դա արվում է ոչ միայն այդ տնտեսություններն իբրև Առաջին/Չորրորդ աշխարհների ապրանքներից կախված շուկա վերաբացելու նպատակով: Դա նաև արվում էր/է համոզվելու համար, որ այդ տնտեսությունները չեն կարող օգուտ քաղել հիմնական արտաքին դրսևորումներից՝ մշակման բարդագույն խնդիրը սեփական ուժերով լուծելու մարտահրավերից, հետևաբար, մշտական կատարելագործման ճանապարհով ինքնազարգացումից:

Դրույթ 8.

Արտաքին դրսևորումները վերլուծությունների ոլորտից դուրս մղելով (միևնույն ժամանակ, երբ դրանք խորապես ու բազմակողմանիորեն ազդում են ներքին ու արտաքին հատվածների վրա)՝ տնտեսագիտության հիմնական ուղղությունները և տնտեսությունը պաշտպանված են, քանզի քննադատությունը չի կարող ձևակերպվել գերիշխող, հետևաբար նաև լեգիտիմ դատողությունների շրջանակներում:

Խաբեությունը հետևյալում է. ձևացնել, թե տնտեսական գործարքները լոկ այն են, ինչ կատարվում է «սեղանի վրա» (սառցաբեկորի տեսանելի մասը) և ոչ այն, ինչ տեղի է ունենում «սեղանի տակ» (սառցաբեկորի անտեսանելի մասը): Որպես ներքին դրսևորման օրինակ, մենք կարող ենք դիտարկել առևտրի պայմանները, գործարքում ներառված ապրանքների քանակների հարաբերակցությունը[24]: Որպես դրական արտաքին դրսևորման օրինակ կա-

ղող ենք դիտարկել մարտահրավերը, որպես բացասական արտաքին դրսևորման օրինակ՝ սպառումն ու աղտոտումը: Եթե կնքված գործարքի համաձայն հումքն արտահանվում է թույլ զարգացած երկրներից առավել զարգացած երկրներ, կարող են ի հայտ գալ հետևյալ երեք երևույթները. թույլ զարգացած երկրների համար առևտրի պայմանները կարող են ոչ շահավետ, անգամ կործանարար լինել, դյուրին հումքի ձեռքբերման ճարպկության մարտահրավերը կարող է տեղափոխվել դեպի առավել զարգացած երկրներ, և, ի հավելումն այս ամենի, արդյունքը կարող է լինել բնության սպառումը: Քանի որ տնտեսագիտության տեսության համար միայն ներքին դրսևորումներն են դիտարկելի (և այս տեսությունը, Լատինական Ամերիկայի գծով Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական հանձնախմբի և Ռաուլ Փրեբիշի անվան հետ էր կապված, ընդունված լինելու մեծ խնդիրներ ուներ), ապա տարբերակման մարտահրավերը և սպառվածության հիմնահարցը կարող են մոռացվել, և ողջ ուշադրությունը կկենտրոնացվի բացառապես առևտրի պայմանների վրա:

Իրավիճակը հազիվ թե ավելի դյուրին լինի առավել զարգացած երկրների տեսանկյունից: Առևտրի պայմանները (բացառությամբ ածխաջրածինների (նավթ և այլն)), հօգուտ նրանց են զարգանում. և ի հավելումն նպաստավոր առևտրի պայմանների, նրանք ստանձնում են նաև դրական արտաքին դրսևորումների մարտահրավերը, երբ սպառվածության բացասական արտաքին դրսևորումները բաժին են հասնում թույլ զարգացած երկրներին: Լավագույնը. հանդիսանալով արտաքին դրսևորումներ՝ սրանց գերակշիռ մասն անտեսանելի է մնում:

Դրույթ 9.

Բացասական արտաքին դրսևորումները կարող են ի չիք դարձնել դրական ներքին դրսևորումների բոլոր օգուտները:

Համաշխարհային տնտեսությունն այսօր երկնագույն է կարմիրի, կանաչի ու վարդագույնի որոշակի տարրերով, և դեղինն այսօր երկնագույնի հիմնական մարտահրավերն է: Դրանք բոլորն էլ որոշակի խնդիրներ են լուծում և նոր խնդիրներ են առաջադրում: Ամենուր առկա են բացասական արտաքին դրսևորումներ: Ինչպե՞ս են դրանք կառավարվում.

- *Առաջին աշխարհում* պետական կառույցների միջոցով կարգի բերելով կապիտալի ստեղծած խառնաշփոթությունը, ինչպես որ հիվանդանոցներն ու բանտերը «մաքրազերծում են» հասարակությունը հիվանդների ու քրեական հանցագործների «ավելցուկներից» շրջակա միջավայրի աղտոտման, սոցիալական ապահովության, զբաղվածության, պատերազմի և այլ նախարարությունների միջոցով և Երրորդ աշխարհի երկրներ արտահանելով արտաքին դրսևորումները (այսինքն՝ թափոնները):
- *Երկրորդ աշխարհում* (նախկին սոցիալիստական երկրներում) ժողովրդավարության բացակայությունը հնարավորություն էր տալիս ղեկավարությանը արհամարհել արտաքին դրսևորումները՝ պահելով դրանք ոչ դիտարկելի. արդյունքում նրանք լուրջ ուշադրություն չէին դարձնում դրանց: Առկա էր նաև այն գաղափարախոսական պնդումը, որ սոցիալիստական տնտեսությունը չի կարող ունենալ բացասական արտաքին

դրսևորումներ:

- *Երրորդ աշխարհում* բացասական արտաքին դրսևորումները որոշակիորեն գիտակցված են, բայց չկան բավարար ֆինանսական միջոցներ դրանց կառավարման նպատակով համապատասխան կառույցներ ձևավորելու համար: Արդյունքն իրավիճակի ընդհանուր վատթարացումն է՝ ներքին դրսևորումների կողմից ձևավորված չնչին շահույթ, արտաքին դրսևորումների հետևանքով առաջացած վիթխարի ծախսեր, ուստի և թերզարգացածության վերարտադրում, նաև՝ մշակված, վերջնական ապրանքների արտահանման հնարավորությունների բացակայություն:
- *Չորրորդ աշխարհում* իրավիճակը համեմատաբար նման է Առաջին աշխարհին այն հիմնական տարբերությամբ, որ պետությունը շատ ավելի մեծ ազդեցություն ունի կորպորացիաների վրա, կարող է համակարգել հարաբերությունները և կանոնակարգել բացասական արտաքին դրսևորումները համարժեք տնտեսական խթանիչներով, երբ առկա է բավարար քաղաքական ճնշում կարմիր, վարդագույն և կանաչ տնտեսությունների կողմից:

Համընդհանուր պատկերը. վերարտադրված ու ամրապնդված անհավասարություն, որ համեմատաբար անփոփոխ հիմքով շարունակվում է արդեն շուրջ 200 տարի՝ Սմիթ-Ռիկարդոյի ժամանակներից ի վեր:

Դրույթ 10.

Դրական արտաքին դրսևորումներն ավելի քան կարող են փոխհատուցել բացասական արտաքին դրսևորումների հետևանքով առաջացած կորուստները:

Մրցակցային պատվերները կատարելու միտումով ձևավորված կարողությունները կարող են օգտագործվել նոր պատվերներ ստանալու և ոչ թե ապրանքների համար վճարելու նպատակով: Խնդիրն այն է, թե ինչպես են մշակվում մարտահրավերները.

- *Առաջին աշխարհում* մարտահրավեր է նետվում անհատին, որ կառավարում է կապիտալը (ֆինանսական փորձագետները, սեփականատերերը), տեխնոլոգիաները (տեխնիկական կառավարիչները), կամ արտադրության ղեկավար է (գլխավոր գործադիր տնօրեն): Անհատը կարող է կիսել մարտահրավերը նույն մակարդակի վրա գտնվող այլ անհատների հետ: Հիմնական արդյունքը մնում է այն անհատի ներսում, ում մարտահրավեր էր նետված, ով ի զորու է ձևափոխելու աշխատանքը կամ տնօրինելու այդ արդյունքն իբրև մասնավոր սեփականություն:
- *Երկրորդ (նախկին սոցիալիստական) աշխարհում* մարտահրավերն ուղղված է պլանավորողների մի փոքր խմբի, որն, ի տարբերություն մնացյալ հասարակության, որ հեռու է մարտահրավերներից, չափազանց մեծ մարտահրավերներ է ստանձնում: Արդյունքները բաժին են հասնում պետական պլանավորող գործակալություններին, սակայն չափազանց մեծ մարտահրավերների հետևանքով արդյունքներն այնքան էլ դրական չեն:
- *Երրորդ աշխարհում* մարտահրավերը շատ հաճախ ուղղված է արտաքին

գործակալներին, զարգացման օժանդակության փորձագետներին, որոնք խնդիրը համարում են խթանիչ, մասնավորապես, եթե նրանք ավելի մեծ իշխանություն ունեն, քան իրենց երկրում, հետևաբար, կարող են կիրառել իրենց երկրում չթույլատրված մեթոդներ: Հեռանալով տվյալ երկրից՝ նրանք իրենց հետ տանում են կողմնակի արդյունքները, որոնցից կարող է օգտվել առավել զարգացած երկիրը[25]:

- *Չորրորդ աշխարհում* մարտահրավերը, թերևս, ուղղված է այն նույն մարդկանց, ովքեր ստանձնում են դրանք Առաջին աշխարհում, բայց այս վերջիններն իրենց ուղղված մարտահրավերները կիսում են խմբակային երկխոսություններով, որոնցում կարող են ընդգրկված լինել նաև բանվորները[26], բոլոր նրանք, ովքեր աշխատում են տվյալ ընկերությունում կամ նախարարությունում: Արդյունքում ստացվում է, որ մարտահրավերի համատեղ մշակման հետևանքով ընկերությունը շահում է, այսինքն՝ նվազում է անորոշությունը, մինչև գտնվում է խնդրի լուծումը կամ հարցի պատասխանը: Դրական արդյունքները մնում են:

Մարտահրավերների կառավարման անհատական մոտեցումն Առաջին աշխարհում և առավել կոլեկտիվ մոտեցումը Չորրորդ աշխարհում կարծես ավելի գերադասելի են, քան մարտահրավերների ստանձնումը մի խումբ մարդկանց քմահաճույքին թողնելու կամ արտաքին գործակալներին հանձնարարելու՝ համապատասխանաբար նախկին Երկրորդ և Երրորդ աշխարհների մոտեցումները[27]:

Ամփոփելով 8-րդ, 9-րդ և 10-րդ դրույթներում շարադրվածը, կարելի է նկատել, որ ամենևին էլ զարմանալի չէ առավել զարգացած և թույլ զարգացած երկրների միջև առկա ճեղքվածքի անընդհատ մեծացումը: Խոսքը թույլ զարգացած երկրների նկատմամբ զգայական դավադրության մասին չէ, այլ ընդամենը *տնտեսագիտության տեսության մշակութային բռնության և տնտեսագիտական պրակտիկայի կառուցվածքային բռնության շաղկապվածության մասին:*

Չորրորդ աշխարհի երկրներում արդեն գիտակցում են այս փաստը: Բավականաչափ երկար ժամանակահատվածի ընթացքում նրանք ունեին Կենտրոնական և Հարավային Ամերիկայի, Կարիբյան ավազանի, Աֆրիկայի, Արաբական աշխարհի, Արևմտյան ու Հարավային Ասիայի թույլ զարգացած երկրներից խիստ տարբերվող ուրվագիծ[28]: Եթե նրանք կարողացել են հաղթահարել այն, ինչու՞ մյուսները չեն կարող, չնայած մենք չենք ենթադրում, որ թերզարգացածության հիմքում ընկած են միայն տնտեսավարման հարաբերությունները: Այստեղ շատ մեծ դերակատարում ունի մշակույթը[29]:

Այժմ ժամանակն է ձևակերպելու ցանկացած տնտեսության (երկնագույն, կարմիր, կանաչ, և այլն), թերևս, հիմնարար հասկացությունը, ինչը նույնքան կարևոր է, որքան աճի սահմանումը գերակայող տնտեսագիտության մեջ՝ *շահագործումը* (իրականում «թույլ» շահագործումը), որ հայտնի է նաև իբրև *անհավասարություն* (հակառակը կլինի *հավասարությունը*).

Եթե արտաքին և ներքին դրսևորումների դրական և բացասական արդյունքների տնտեսական գործունեության հետևանք հանդիսացող ամբողջությունը բաշխված է անհավասարաչափ, ապա տնտեսական պարբերաշրջանում տեղի ունի շահագործում կամ անհավասարություն:

Սահմանումը միտված է երևույթը բացատրելու տնտեսական պարբերաշրջաններով, ընդ որում ոչ միայն «Ա-ն շահագործում է Բ-ին»[30] տիպի պնդումներով, այլ նաև բացահայտելով շահագործման էությունը: *Շահագործմամբ պետք է ինչ-որ մեկի գլխին քո խաղը խաղաս*: Այդժամ ի հայտ կգա ուժեղ շահագործումը. *ի հավելումն թույլի, ուժեղ շահագործումը ոչնչացնում է վերարտադրության հնարավորությունը:*

Դրույթ 11.

> *Արտաքին դրսևորումների վերլուծությունը պետք է հոլիստական լինի՝ խուսափելով մեկ առանձին վերցրած հարթության (կամ հարթության վրա մեկ առանձին հատվածի) միակողմանի շեշտադրումից, ներդնելով նոր ավանդույթներ, ինչպես, օրինակ՝ բնապահպանության (բնության համար), մարդու կատարելագործման դպրոցի (անհատի հարթությունում), սոցիալիզմի (սոցիալական հարթությունում), Երրորդ աշխարհի գաղափարախոսության (աշխարհի հարթությունում), կայունության (ժամանակի հարթությունում), հակամշակույթի (մշակույթի հարթությունում). սրանցից յուրաքանչյուրը համակցված է, ոչ միակողմանի:*

Տնտեսագիտության առավել ճշմարտացի տեսությունը, ի հավելումն տնտեսագիտական ավանդական հայեցակարգերի, պետք է որ ներառեր գիտելիքներ բոլոր վեց հարթությունների վերաբերյալ: Քանի որ դրանք համակցում են բնապահպանությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, հնագիտությունը, քաղաքագիտությունը, միջազգային հարաբերությունները, պատմությունը/ապագայի ուսումնասիրությունները, ինչպես նաև մշակութաբանության դեռևս բացակայող գիտությունը (այսօր տարաբաժանված է աստվածաբանության, փիլիսոփայության, մտքի պատմության, մշակութային հնագիտության, ազգագրության ու հոգեբանության միջև), ապա սա կարող է թվալ միանգամայն անհավանական հաջորդականություն: Բայց եթե տնտեսագետները, չլինելով պրոֆեսիոնալ մաթեմատիկոսներ, սովոր լինեին մաթեմատիկական մոդելներ կիրառել, այնժամ նրանք կկարողանային կառավարել նաև այլ անհավանական հաջորդականություններ:

Դրույթ 12.

> *Արտաքին դրսևորումների վերլուծությունները պետք է իրականացվեն համադրման հիման վրա՝ առանձնակի ուշադրություն հատկացնելով երկու և ավելի արտաքին դրսևորումների միակցություններին, երկու և ավելի հարթությունների միջև փոխհամագործակցությանը, ինչպես նաև հարթության վրա կամ դրանից դուրս գտնվող շղթաներին ու պարբերաշրջաններին:*

Արտաքին դրսևորումների չափազանց սակավաթիվ կամ չափազանց կանխակալ օրինակներ դիտարկելու դեպքում արդյունքը կլինի նույքան անարդյունավետ, որքան ներքին դրսևորումների միակողմանի քննարկման դեպքում: Ավելին, տնտեսական գործունեության վրա մշտապես նոր լույս «սփռելու» նպատակով արտաքին դրսևորումների ցանկը պետք է միշտ բաց լինի և եր-

բեք «վերջնական»: Ցանկերը, սակայն, գալիս ու գնում են, իսկ հիմնախնդիրները մնում են:

Դրույթ 13.

Արտաքին դրսևորումները չեն կարող և չպետք է մոնետիզացվեն, նախ՝ որովհետև դա անհնար/անիմաստ է, երկրորդ՝ արտաքին դրսևորումների միջև ծախքեր/օգուտներ վերլուծությունն արգելելու, դրանց առևտուրը կանխելու փորձերը ոչ այլ ինչ են, եթե ոչ sui generis, և երրորդ՝ չի կարելի թուլացնել իրական լուծումներ փնտրելու խթանները:

Ավելի որոշակի, արտաքին դրսևորումների միջև համեմատականության վրա հիմնված ծախքեր/օգուտներ վերլուծություններն արհամարհում են բացարձակ դրական կամ բացասական արժեքները, այլ խոսքով այնպիսի բարոյական բացարձակություններ, ինչպիսիք են բնական բազմազանության պահպանումը կամ աղքատության վերացումը: Սրանք չեն կարող առուծախի կամ դրամական փոխհատուցման առարկա հանդիսանալ:

Վերը նշված դատողություններում կենսական կարիքները դիտարկվում են որպես դրական բացարձակ մեծություններ, իսկ բռնության կարիքները՝ որպես բացասական: Մնացածը՝ հաջորդիվ:

Դրույթ 14.

Առուծախի նպատակով մոնետիզացման պրագմատիկ գործառույթը չի կարող ծառայել սեփական վավերականությունն ապացուցելու նպատակին, սակայն կարող է կիրառվել հաստատելու համար այն լիազորությունը, որի շնորհիվ տնտեսականությունը դեռևս ձևավորում է գրավիչ օրակարգեր ու գերիշխող դատողություններ:

Այսօր տնտեսության բոլոր մասնակիցները՝ ապահովագրական ընկերությունները, որոշում կայացնողները, ձգտում են ամեն գնով ճշտել գինը կամ մոնետիզացված ընդունելի արժեքը: Այսօրինակ մոտեցումը կործանարար է: Յուրաքանչյուր արտաքին դրսևորում պարփակում է իր սեփական բարոյական տիեզերքը և պետք է ուսումնասիրվի առանձին և ամենայն լրջությամբ, ոչ թե մոնետիզացնելով ու չեղյալ համարելով մնացածը[31]:

Դրույթ 15.

Միևնույն արտաքին դրսևորումները կարող են և պետք է համեմատվեն ըստ տնտեսվարող համակարգերի և ըստ ժամանակի: Համեմատելիությունն ըստ տնտեսվարող համակարգերի և ըստ ժամանակի չպետք է ընդունվի ապրիորի, այլ պետք է դիտարկվի որպես վարկած, որ ենթակա է փորձարկման պրակտիկայով ու երկխոսություններով:

Մենք պետք է իմանանք, թե ինչպես են արտաքին դրսևորումները ժամանակի ընթացքում զարգանում տնտեսվարող միևնույն համակարգի համար, և պետք է կարողանանք համեմատել դրանք ըստ տնտեսվարող համակարգերի: Բայց արտաքին դրսևորումների գործառնականացումը պետք է իրականացվի

տվյալ արտաքին դրսևորմանը համապատասխան միավորներով, այսինքն՝ դրանք չեն կարող համեմատելի լինել տարբեր արտաքին դրսևորումների միջև:

Դրույթ 16.

Արտաքին դրսևորումների բացառումը տեսության մեջ նշանակում է տնտեսագիտության վերադարձ դեպի հասարակական գիտություններ՝ ընդսմին կիսելով այդ գիտությունների հակասություններն ու երկընտրանքները, որոնք տնտեսագիտությունը փորձում էր շրջանցել՝ համապատասխան փոփոխականները դասակարգելով արտաքին և ներքին դրսևորումների:

Սա հենց այն է, ինչ իրենից ներկայացնում է տնտեսագիտությունը՝ առանց հավակնելու բնական գիտության կոչման, իբրև մեխանիկայի որոշակի տեսակ, մասնավորապես այսօր, երբ նույնիսկ ֆիզիկան չի հավակնում ֆիզիկա կոչվելու՝ բառի դասական իմաստով: Ինչպես 11-րդ դրույթն է վկայում, սա հենց հիմնական մարտահրավերն է, որը հեշտ չէ ներքուստ ստանձնել: Բայց լավ տեսությունից առավել գործնական ոչինչ գոյություն չունի, իսկ տնտեսագիտությունն այնքան լավը չէ, որ կարողանա լավ պրակտիկա խթանել:

Անհրաժեշտ է խուսափել ներքին դրսևորումների միակողմանի դիտասևեռումից և ուսումնասիրությունների առանցքը դեպի արտաքին դրսևորումներ տեղափոխելու փորձերից: Խնդրո առարկա պետք է հանդիսանան հավասարապես թե՛ մեկը և թե՛ մյուսը՝ ինտեգրված ուսումնասիրությունների առավել լայն շրջանակում: Ի՞նչ են իրենցից ներկայացնում այս փոփոխականները. սա պետք է մշտական քննարկումների առարկա լինի[32]:

Դրույթ 17.

Արտաքին դրսևորումների յուրացումը գործնականում նշանակում է հետևյալը. եթե նպատակը տնտեսական պարբերաշրջաններում հավասարությունն է, ապա.

- *արտաքին դրսևորումները դարձնել ակնհայտ՝ իրենց առանձնահատկություններին համապատասխան,*
- *միևնույն տիպի տնտեսական պարբերաշրջանների միջև կայուն երկխոսություն հաստատել,*
- *միասին աշխատել բացասական արտաքին դրսևորումները նվազեցնելու համար,*
- *միասին աշխատել՝ հավասար կիսելով դրական արտաքին դրսևորումները:*

Մենք փորձել ենք ասվածն ակներև դարձնել գերիշխող երկնագույն համակարգի համար (Արտաքին դրսևորումներ I-IV, Աղյուսակներ 3.1-3.4): Ստորև շարադրվող գլուխներում (3.4-3.7) մենք կկենտրոնանանք այլ տնտեսական համակարգերի արտաքին դրսևորումների վրա: Ստորև բերվող ցանկը տնտե-

սական դաշտի մասնակիցների համար լավագույն տնտեսական համակարգի որոնումներում կարող է ծառայել որպես երկխոսության օրակարգ:

Տնտեսական նպատակներ ու ռազմավարություններ ձևավորելու և հետապնդելու ընդունակ տնտեսվարող համակարգերը կարող են խմբավորվել տարածքային և ոչ տարածքային խմբերում, ինչպես նաև դասակարգվել միկրո-, մեզո- և մակրոմակարդակներում տնտեսվարող համակարգերի: Աղյուսակ 3.7-ում ցույց է տրված հիշյալ տիպաբանությունը.

Աղյուսակ 3.7. Տնտեսական բնագավառի դերակատարների դասաբանությունը

	Տարածքային գործիչները	Ոչ տարածքային գործիչները
Միկրո մակարդակում	Տնտեսությունները, ագարակները	Ցեղերը, որսորդ-միությունները
Մեզո մակարդակում	Համայնքները	Ֆիրմաները, ընկերությունները
Մակրո մակարդակում	Պետությունները	Կորպորացիաները
	Գերտերությունները	Անդրազգային կորպորացիաները
	Համընդհանուր կառավարումը	Անդրազգային կորպորացիաների ասոցիացիաները

Հիմնական տնտեսվարող համակարգն անհատն է, ընդ որում՝ նրա դերն առավել կարևորվում է անհատապաշտ և ուղղահայաց մշակույթի դեպքում: Կոլեկտիվ տնտեսվարող համակարգերն անհատականացված են, դրանցում ողջ իշխանությունը կենտրոնացված է մեկ անհատի (ղեկավարի, գլխավորի, նախագահի, սեփականատիրոջ, գլխավոր գործադիր տնօրենի) *pater familias* (ընտանիքի հոր) ձեռքում: Հաշվի առնելով, որ դրանց ճնշող մեծամասնությունը տղամարդիկ են, ապա կարելի է խոսել հայրիշխանության ամենահզոր մեխանիզմներից մեկի մասին, որ կիրառվում է տնտեսական համակարգի միջոցով: Տնտեսությունը կառավարվում է տղամարդկանց կողմից և տղամարդկանց համար, կանայք մղված են դեպի բանվոր դասակարգ՝ սկսած տնային տնտեսություններից:

Չնայած բոլոր տիպի երկխոսություններն էլ օգտակար են մասնակցային սոցիալական համակարգերում (ինչպես, օրինակ, ժողովրդավարությունները), *տնտեսական պարբերաշրջանների փուլերի միջև երկխոսություններն անհրաժեշտ են արտաքին դրսևորումների յուրացման և կողմերին գործընկերների վերածելու առումով:* Մի պահ պատկերացնենք տնտեսական պարբերաշրջանը՝ որպես փոխգործակցության համակարգ, որ միավորում է բնությունը, արտադրողներին, բաշխողներին և սպառողներին: Սկզբունքորեն աղյուսակ 3.7-ում նշված տնտեսվարող համակարգերի բոլոր տիպերն ի հայտ են գալիս տնտեսական պարբերաշրջանի վերջին երեք հանգույցներում, այն դեպքում, երբ բնությունը մնում է *sui generis*: Հիմնական գերխնդիրը. ինչպե՞ս բնությունը ներքաշել երկխոսության մեջ: Մասամբ, թերևս, ներփակելով բնության մարդկային կարիքները. հնարավոր է նաև՝ մարդկային էակներին որպես բնության բաղկացուցիչ մաս դիտարկելով[33]: Անկախ պատասխանից՝ բնությունը պետք է ներկայացված լինի հիշյալ երկխոսություններում (Աղյուսակ 3.8):

Աղյուսակ 3.8. Տնտեսագիտական երկխոսությունների ձևաբանությունը

	Բնություն	Արտադրողներ	Բաշխողներ	Սպառողներ
Բնություն	Միասնական բնություն			
Արտադրողներ	Արդյունաբերական աղտոտում Սպառվածություն	Արտադրողների ու բանվորների միություններ		
Բաշխողներ	Շուկայական աղտոտում	Ազդելու հայտարարություն	Մատակարարների միություններ	
Սպառողներ	Տնտեսությունների աղտոտում	Ազդելու հայտարարություն	Ազդելու հայտարարություն	Սպառողների միություններ

Սինենույն տիպի տնտեսվարող համակարգերը միմյանց հանդիպում են հիմնական անկյունագծով. օրինակ, առևտրա-արդյունաբերական պալատները, որտեղ մեկտեղվում են արտադրողներն ու իրացնողները (բաշխողները): Բնությունը մշտնջենական երկխոսության մեջ է ինքն իր հետ համակցային, հակակցային ու միակցային կապերով, գուցե կգա օրը, երբ մենք ավելի լավ կհասկանանք այդ երկխոսությունը: Համեմատաբար նոր երևույթ են սպառողների միությունները, այսօր՝ ամենամեծ միջազգային կազմակերպություններն աշխարհում, ինչպես, օրինակ՝ Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի ընկերությունները[34]:

Երկխոսությունների բովանդակությունը մեկնաբանվում է 17-րդ դրույթի երրորդ և չորրորդ մասերում՝ նվազեցնելով բացասական և կիսելով դրական արտաքին դրսևորումները: Իհարկե, նրանք, որոնք ենթարկվում են բացասական արտաքին դրսևորումների ազդեցությանը (հիմնականում բնությունը, սպառողներն ու բանվորները), առավել հակված են փոխելու պահավիճակը (ստատուս-քվոն), ի տարբերություն նրանց, որոնք օգտվում են իրավիճակից. արտադրողներն ու իրացնողները. վերջիններս, ընդհակառակը, հակված են պահպանելու, նույնիսկ ամրապնդելու այն: Ըստ դերակատարների՝ շարքն առավել բյուրեղանում է արդի իրականության պայմաններում. արտադրողներն ու իրացնողները, մի կողմից, ընդդեմ բնության և սպառողների (նախկին դաշինքն առավել կազմակերպված)՝ մյուս կողմից: Պետության (գերտերության) տեղը այդ երկուսի միջև կամ դրանցից մեկի կողքին, իհարկե, կարևոր է, բայց ոչ վճռական[35]:

Առավել ինքնատիպ մոտեցում է դրական արտաքին դրսևորումները կիսելը: Լեգոյի գյուտը Դանիայում, ԻԿԵԱ շվեդական կորպորացիան (ցանկացած ընկերություն, որ գործում է «հավաքիր ինքդ» նշանաբանով) կարող են ցույց տալ, թե արտադրողներն ու սպառողներն ինչպես կարող են կիսել մարտահրավերների արտաքին դրսևորումները. ապրանքները վերջնական չեն: Այդ տեսանկյունից լավագույն ապրանքներն անավարտ ապրանքներն են, արտադրության՝ քերականական իմաստով՝ անկատար ապրանքները, որ դեռևս կարիք ունեն հետագա մշակման՝ սպառողին հասնելուց հետո: Ասվածը չի կարելի շփոթել ցածրորակության հետ, թեև դա ևս մարտահրավեր է[36]:

Շատ լավ օրինակ կարող են լինել միմյանց հետ բանակցող երկու տարածաշրջանային տնտեսվարող համակարգերը: Սովորաբար համագործակ-

ցությունն ուղղված է բացասական արտաքին դրսևորումների (սպառվածությունն ու աղտոտումը) նվազեցմանն ու դրական արտաքին դրսևորումները (օրինակ, մարտահրավերները) կիսելուն: Աղյուսակ 3.8-ում կարևորագույնը «ազդելու հայտարարություն» արտահայտությունն է. բոլոր մասնակիցները հայտարարում են, թե իրենց իսկ կարծիքով իրենց գործողություններն ինչ ազդեցություն կունենան, կամ, դարձյալ իրենց կարծիքով, ինչ ազդեցություն կունենան այլոց գործողությունները, ինչից ելնելով էլ փորձում են փոխհամաձայնեցված հավաստիացումներ անել:

Անկասկած, խնդիրն ավելի դյուրին կլիներ, եթե մենք կարողանայինք համեմատել արտաքին դրսևորումները՝ դրանք մոնետիզացնելով: Այդ դեպքում մենք ուղղակիորեն կհաշվարկեինք զուտ արտաքին դրսևորումը՝ հավասարապես բաշխելով այն մասնակիցների միջև և, հնարավորության դեպքում, երկուսի բաժինն էլ մեծացնելով: Որպես օրինակ կարող ենք դիտարկել կենսաբազմազանության նվազեցման փոխհատուցումը որոշակի մարտահրավերներով կամ, ասենք, աղտոտման փոխհատուցումը և մարտահրավերների բացառումը բարձր գներով, քանի որ հիմնական կանոնը արտաքին և ներքին դրսևորումների զուտ գումարային արժեքի մեծացումն է ու դրանց հավասարաչափ բաշխումը: Խնդիրը բավականին դյուրին է իրականացման տեսակետից, սակայն դրա հետևանքները կարող են կործանարար լինել: Կենսաբազմազանությունը նվազում է, մարտահրավերը մնում է ցածր, կապիտալիզացման նպատակով որոշակի գումարներ են կուտակվում: Արդյունքը պահավիճակն է (ստատուս-քվոն):

Մոնետիզացման բացառման երեք հիմնական պատճառներն են.

Հակամոնետիզացում I. բացառել համեմատությունը՝ պահպանելով արժեքների հարաբերականությունը, ընդգծելով, որ արտաքին դրսևորումները պարփակող արժեքները բացարձակ են,

Հակամոնետիզացում II. բացառել փոխհատուցումը՝ փոխանակելով մեկը մյուսով կամ հավասար բաշխելով տնտեսական գործառնությունների դրական և բացասական արդյունքերի ամբողջական փաթեթը,

Հակամոնետիզացում III. խթանել նորարարությունը, փնտրել բացասական արտաքին դրսևորումների հիմնախնդրի իրական լուծումներ:

Համեմատել, ապա փոխհատուցել. սա ամենակարճ ճանապարհն է, որ ստիպում է ունևորներին վճարել իրենց իսկ ստեղծած հիմախնդիրների համար կամ վերահասցեագրել դրանք մի արտաքին դրսևորումից մյուսին: Մարտահրավերն այստեղ՝ կարողանալ յուրաքանչյուր արտաքին դրսևորում դիտարկել իբրև ամբողջական տիեզերք իր ներքին օրենքներով, որ պահանջում է խնդիրների լուծումներ իր իսկ թելադրած պայմաններով: Լուծումներն, իհարկե, հեշտությամբ չեն գտնվի, բայց երբ գտնվեն, դրանք կլինեն առավել խորը և ավելի տևական:

Երկխոսությունները կոչված են խթանելու քաղաքացիական հասարակության վարքագիծը՝ իրականացնելով նույն գործառույթը, ինչ քլիրինգային կենտրոնը տնտեսական գործառնությունների համար՝ որպես այլընտրանք բոլոր հիմնահարցերը փողով լուծելու շուկայական և բոլոր հիմնահարցերը իշ-

խանության լծակներով (անհրաժեշտության դեպքում ուժային մեթոդներով) լուծելու պետական մոտեցումներին:

Դրույթ 18.

Արտաքին դրսևորումները հաշվի առնելն ամենևին էլ անբարոյական բան չէ շուկայի կամ մրցակցության նկատմամբ. այն ընդամենն ընդլայնում է նկատառումների շրջանակը, որոնցով ղեկավարվում են գնորդն ու վաճառողը նախքան գործարք կատարելու որոշում կայացնելը: Նպատակը բարոյապես գիտակցված շուկայական վարքագիծն է:

Շուկան դառնում է քանակի, որակի ու գնի խնդիրներից շատ ավելի հեռուն գնացող երկխոսությունների համաժողով: Սա ամենևին էլ նորություն չէ: Մարդիկ միշտ էլ առաջնորդվել են առավել լայն նկատառումներով, մասնավորապես՝ ներքին հատվածում գործարքներ իրականացնելու դեպքում (Դրույթ 5), ասենք՝ գնումներ կատարելով այն ընտանիքներից, որոնց ուզում են աջակցել, կամ կասեցնելով ստրուկների առևտուրը՝ դրանով իսկ զոհաբերելով տնտեսական առավելությունները:

Իհարկե, յուրաքանչյուր գործարք կնքելիս ամենևին էլ հարկ չկա կրկնել երկխոսությունները: Լավ երկխոսությունները հանգեցնում են լավ գործարքների, որոնք կարող են հարատևել «միևնույն տիպի տնտեսական պարբերաշրջաններում»: Ավելին, երկխոսությունները նոր կանոններ են թելադրում: Մարդիկ գործում են այդ կանոններին համապատասխան. հարկ չկա անընդհատ բարոյապես գիտակցված լինել, եթե գործողությունն իրապես արդարացված է: Որոշում ընդունելու և այն կենսագործելու առումով անհրաժեշտ է որոշակի պարզեցում, որ կապահովի նորից ու նորից փոփոխելու կարողությունը:

Դրույթ 19.

Պարտադիր չէ, որ արտաքին դրսևորումները հաշվի առնելը հանգեցնի գործողությունների ազատության սահմանափակմանը, այն, ընդհակառակը, կարող է մեծացնել այդ ազատությունը՝ տրամադրելով նոր գաղափարներ, հարաբերությունները դարձնելով առավել համագործակցային և պակաս մրցակցային:

Դիտարկենք մեկ օրինակ. A կամ C երկրներից խնձոր է ներմուծվում J երկիր: A-ն աճեցնում է էկոլոգիապես մաքուր խնձորներ: Դա նշանակում է, որ խնձորների աճեցման գործընթացն առավել աշխատատար է, ասել է թե՝ խնձորներն ավելի թանկ են, բայց թունաքիմիկատներից զերծ. ի հավելումն այս ամենի, հողը, որի վրա աճում են խնձորի ծառերը, այդ ընթացքում կարող է հարստացվել: C երկիրն խնձորներն ավանդական եղանակով է աճեցնում, արհեստական պարարտանյութերի ու պեստիցիդների կիրառմամբ, որոնք թունավորում են խնձորներն ու քայքայում հողը: Գնելով A երկրից, J երկիրն օգնում է վերջինիս զարգանալ, ներմուծելով C երկրից, J-ը նպաստում է վերջինիս տնտեսական աճին՝ միաժամանակ օգնելով նրան զարգանալ: Բարոյապես գիտակցված որոշումն այստեղ ակնհայտ է. A-ին մի փոքր ավել վճարելով՝ J-ն ու A-ն փոխադարձաբար վերածվում են միմյանց ներքին հատված-

ների՝ ոչ նյութական համատեղ ջանքերով ձևավորելով դրական արտաքին դրսևորումներ: *Հիմնական խնդիրն այստեղ հետևյալն է. ինչպե՞ս կարող են արտաքին դրսևորումներն սկզբնավորել արտադրություն-բաշխում-սպառում նոր պարբերաշրջաններ և ոչ թե բավարարվել լոկ հները քայքայելով:*

Կատարյալ պայմաններում երեքն էլ բնության նկատմամբ զգայուն պիտի լինեն, հիմնական երկխոսությունը պետք է կայանա արտադրողների ու սպառողների, կամ էլ գնորդների ու վաճառողների միջև՝ կարգավորելով առաջարկն ու պահանջարկը: Ինչպես արդեն նշել ենք՝ «դոլարով քվեարկելը» (գնել կամ չգնել) բավարար չէ. միայն երկխոսությունները կարող են ծնել նոր գաղափարներ[37]: Ավելացրեք այս ամենին սպառողների երկխոսությունները հենց իրենց՝ սպառողների միությունների շրջանակներում, արտադրողներինը՝ արտադրողների, և երեք երկխոսություններն էլ կարող են միմյանց հետ զուգակցվել՝ բարելավելով ընդհանուր համակարգը:

Իրացնողները գտնվում են բավական հետաքրքիր միջանցիկ վիճակում. նրանք երկուսի հետ էլ մոտ են: Նրանք արտադրողներից շատ ավելի լավ գիտեն սպառողների ցանկությունները և սպառողներից շատ ավելի լավատեղյակ են արտադրողների հնարավորություններից: Ակնհայտորեն նրանց շահերից է բխում, որ արտադրողների հնարավորություններն ու սպառողների ցանկությունները հարմարեցվեն միմյանց:

Շատ հետաքրքիր է *«գնումներ Ամենի լավ աշխարհի համար»* մոտեցումը[38], որ հավասարապես կիրառելի է ինչպես հարուստ, այնպես էլ աղքատ երկրների համար: Ապրանքներն ու արտադրողները գնահատվում են՝ ելնելով այն հանգամանքից, թե նրանք որքանով են ներգրավված բարեգործական գործունեության ոլորտներում (կանանց ու փոքրամասնությունների զարգացում, կենդանիների պաշտպանություն, տեղեկատվության հասանելիություն, համայնքների զարգացում, բնապահպանություն, ընտանիքի ամրապնդում, աշխատատեղերի ստեղծում): Վերոհիշյալ ցանկը միայն մասամբ է համընկնում մեր կողմից դիտարկված արտաքին դրսևորումների ցանկի հետ և շատ ավելի որոշակի բնույթ ունի: Բայց հիմնական գաղափարը նույնն է՝ նկատառումների առավել լայն շրջանակ: Բավական է, որ սպառողը հաղորդակցվի իրացնողի հետ՝ այս ցանկը ձեռքին մտնելով խանութ և երկխոսություն ծավալելով վաճառքի պատասխանատուների հետ ու փորձելով հենց այդ տեսանկյունից գնահատել ապրանքները, և ազդանշանն անմիջապես կհասնի արտադրողին: Այսինքն, ձևավորվում է հակադարձ կապի կիրառական մի համակարգ: Այդուհանդերձ, գերադասելի է ուղիղ երկխոսությունը սպառողների ու արտադրողների միջև՝ այսպես կոչված «գնումներ հենց արտադրամասում» սկզբունքով:

Դրույթ 20.

> *Զարգացումը կարելի է դիտարկել որպես բարոյապես գիտակցված տնտեսական գործառույթներից առաջացած դրական արտաքին դրսևորումների հարաճուն կուտակում:*

Նույն տրամաբանությամբ թերզարգացումը բացասական արտաքին դրսևորումների կուտակումն է: Երկնագույն տնտեսության ուշագրավ հայտանիշներից մեկը բացասական արտաքին դրսևորումներն արտահանելու, իսկ դրական արտաքին դրսևորումները՝ պահպանելու, անգամ ներմուծելու ունա-

կությունն է: Այստեղից եզրակացություն. երկնագույն կամ «ազատ շուկայական» (առավել ազատ կենտրոնում, քան ծայրագավառներում) համակարգը երբեք չի կարող միայնակ կրել զարգացման տնտեսական հայտանիշը[39]:

Այս դրույթի հետևանքներն ի հայտ են գալիս «լավ նորություն» և «վատ նորություն» բանաձևով: Լավ նորություն. *զարգացման սահմանափակումների բացակայություն*, բայց, միաժամանակ, աճի որոշակի սահմանափակումներ: Իհարկե, առկա են որոշակի սահմանափակումներ, ասենք, արդարության տեսանկյունից, բայց բացարձակապես ոչ մի սահմանափակում մշակութային կամ հոգևոր զարգացման ասպարեզում: Դեպի ոչ նյութական գործունեություն առկա տեղաշարժը կարող է մարդկային պայմանները բարելավել:

Վատ նորությունը ևս ակնհայտ է. *«չարամիտ զարգացման» սահմանափակումների իսպառ բացակայություն:* Բայց, թերևս մի սահմանափակում, այնուամենայնիվ, կա. երկրագնդի վրա կյանքի ոչնչացումը կամ ապոկալիպսիսը՝ բնության զանգվածային ոչնչացման, զանգվածային սովահարության, բնակչության զանգվածային միգրացիայի ու զանգվածային սպանությունների հետևանքով: Դժբախտաբար, «առաջինը կհանգեցնի երկրորդին, երկրորդը կհանգեցնի երրորդին». հնարավորությունն այսօր ամենևին էլ զրոյական չէ:

3.4 Կարմիր տնտեսագիտության արտաքին դրսևորումները

Արտաքին դրսևորումները նախածրագրավորված են մարքսիզմի մեջ ճիշտ այնպես, ինչպես երկնագույն տնտեսագիտության արտաքին դրսևորումները՝ սմիթականության մեջ, ներառյալ «եսապաշտությունների հանրագումարը ալտրուիզմն է» վերջերս ի հայտ եկած գաղափարը: Սա, մասնավորապես, պարզ դարձավ 1970-ական թվականներին, երբ մարքսիզմն Արևմուտքում կորցրեց իր գրավչությունը:

Հինգ խոշոր բացթողումներ. *բնապահպանական հավասարակշռությունը (բնության հարթություն), հոգևոր զարգացումը (մարդկային հարթություն), նոր դասակարգերի ձևավորումն ու շահագործման նոր ձևերը, ի հավելումն հների հայրիշխանության* (սոցիալական հարթությունում), *խաղաղության* նոր բանաձևերի, ներառյալ սոցիալիստական երկրների միջև (աշխարհի հարթություն): Սրանք 1970-80-ականների հիմնական գերխնդիրներն էին, որոնք այդպես էլ չփոխհատուցվեցին, ինչպես չփոխհատուցվեցին հակաօտարացումն ու աշխատանքի միջոցով կատարելագործման ձգտելու մասին դատողությունները 1930-40-ականներին և հակաշահագործման (սոցիալական ու աշխարհի հարթություններում) վերաբերյալ դատողությունները 1950-60-ական թվականներին: Երկնագույն հիմնահարցերի պատասխանները չէին կարող և չգտնվեցին կարմիր դատողություններում: Խորհրդային Միությունում ու Արևելյան Եվրոպայի երկրներում արտաքին դրսևորումները ներսից քայքայում էին համակարգը: Ազգային տնտեսական գործունեության վրա հիմնական ուժերի կենտրոնացման և առևտրի սահմանափակ ծավալների հետևանքով բացասական արտաքին դրսևորումների արտահանման հնարավորություններն անբավարար էին շրջակա միջավայրն աղտոտող արտադրություններն արտասահմանում կազմակերպելու կամ օտարերկրյա էժան աշխատուժն օգտագործելու տեսանկյունից[40]: Անկախ այն հանգամանքից՝

այս մոտեցումն ավելի ազնիվ էր, թե ավելի անմիտ (կամ էլ երկուսը միասին), արտաքին դրսևորումներն ի հայտ էին գալիս ինքնաբերաբար: Դրանք անընդհատ կուտակվում էին, և համակարգն անզոր էր դառնում դրանք կառավարելու: Վերջիններիս ծանրության տակ էլ համակարգը փլուզվեց:

Ավելին, ինչպես երկնագույն համակարգն է կքում գերսպառման հետևանքով, այնպես էլ կարմիր համակարգն էր տուժում գերարտադրությունից. հավասարապես նյութապաշտական տարվածություն նյութական արտադրությամբ: Մշակութային մատերիալիզմի տեսանկյունից արդյունքը երկու դեպքում էլ նույնն էր[41]:

3.5 Կանաչ տնտեսագիտության արտաքին դրսևորումները

2.4 գլխում կանաչ տնտեսագիտությունը նկարագրված է որպես երկնագույնի ուղղակի բացասում, հետևաբար, այն պետք է ի հայտ բերի երկնագույն դպրոցի բացասական արտաքին դրսևորումներից մի քանիսը միայն: Կանաչը թեթևակիորեն կտարբերվի բնության, ինչպես նաև Թոյնբիի ներքին ու արտաքին պրոլետարիատների շահագործման տեսանկյունից: Ավելին, հիմնականում լինելով տեղային և չընդլայնվող, այն պետք է բավական անկատար թվա նաև ապագա սերունդների տեսակետից: Լինելով շատ քիչ մոնետիզացված, կարևորելով բացառապես փոխանակման և ուղղակի սպառման կարիքներին ուղղված արտադրությունը՝ համեմատության և փոխհատուցման արտաքին դրսևորումները հետին պլան են մղված: Ի՞նչն է սխալ: Իրականում, իբրև կանաչ տնտեսագիտության քննադատություն ակնհայտորեն առանձնանում են չորս արտաքին դրսևորումներ, որոնք պետք է լրջորեն քննարկվեն:

Նախ, *ինքնաշահագործումը*: Ճնշում է գործադրվում թե՛ անհատի, և թե՛ անհատների խմբի վրա (ես և մենք) ներքին կառավարման շրջանակներում (եթե ենթադրենք, որ խոսքը վերաբերվում է մուգ կանաչին):

Երկրորդ, *շահագործման բացակայություն, բայց անհավասարություն:* Փոխանցման մեխանիզմների բացակայության պայմաններում գործոնների բաշխման անհամաչափությունների հետևանքով համայնքների մի մասը բարգավաճում է, մյուսը, ընդհակառակը՝ քայքայվում: Ազգային մակարդակում առավել ինտեգրված տնտեսությունները հիշեցնում են հաղորդակցվող անոթներ:

Երրորդ, *դեպի ներս միտվածությունը:* Հիմնականում «ես»-ին ու «մենք»-ին ապավինումը կարող է մրցակցության մեջ մտնել մնացած աշխարհի (անգամ հարևան համայնքների) հանդեպ համերաշխության հետ: Գործունեության առանցքը չափազանց կենտրոնաձիգ է:

Չորրորդ, *դինամիզմի բացակայությունը*: Տեղական տնտեսություններն իրարից կարող են խստորեն տարբերվել, բայց դրանցից յուրաքանչյուրը կարող է լինել միաքրոմատիկ, ինչպես մենաստանը: Նրանց միջև առկա է բազմազանություն, բայց չնչին համակցություն, իսկ համայնքների միջև՝ ճիշտ հակառակը: Փոփոխությունների հիմնական ազդակները գալիս են դրսից, բայց այդ աղբյուրի շիթը չափազանց բարակ է: Բազմակարծության գրեթե բացակայության պայմաններում և նախորդ երեք արտաքին դրսևորումների առկայությամբ ցանկացած փոփոխություն նման է կործանարար հրաբուխի ժայթքման:

Վերջին ժամանակներում աշխարհի առավել ընչազուրկ տարածաշրջաններում կանաչ տնտեսությունը ենթարկվել է երեք հիմնական գիտափորձի. Գանդիի *սարվոդայա* գյուղակները, Մաո Ցզեդունի *ժողովրդական կոմունաները* և Նիերերեի *ուջամաա* գյուղակները: Ինչո՞ւ նրանք չկարողացան երկար գոյատևել: Թերևս այն պատճառով, որ նրանք ստիպված էին հակագործակցել իրենց շրջապատող տնտեսական միջավայրի հետ, այսինքն՝ գերիշխող երկնագույն և կարմիր/դեղին (Չինաստանի դեպքում) դպրոցների հետ: Թեև առկա էին նաև կանաչ տնտեսության հետ սերտաճած էնդոգեն պատճառներ:

Այսպիսով, ենթադրություններից մեկը կարող է լինել տեղական միավորների կողմից չափից առավել ազատականության պահանջը: Հաղորդակցության/ տրանսպորտի միջոցների և տեղական սոցիալական կենսակերպի միջև առկա հակասությունները չափազանց սրվում են և կարող են լուծվել բացառապես նվիրատվության մակարդակում, որը սովորաբար դրսևորվում է միայն կամավորների կողմից: Բայց դա նշանակում է, որ կանաչ տնտեսագիտությունը գոյություն ունի միայն նրանց համար, ովքեր հավատում են դրա գոյությանը և ոչ թե ամբողջ հասարակության համար: Այստեղ մենք դարձյալ փոխաբերական իմաստով վերադառնում ենք մենաստանի գաղափարին: Նմանապես, գերարտադրությունը կարող է համաձայնեցվել սպառման ցածր մակարդակի հետ, եթե աննկուն հավատը հանդուրժելի դարձնի ինքնաշահագործումը:

Սրան ավելացնենք նաև տեղական համայնքների միջև առկա անհավասարության հիմնահարցը. մարդկության պատմությանը վաղուց հայտնի երևույթը, որ ակնհայտ է հնդկական գյուղակներում ու չինական կոմունաներում: Տանզանիայի *ուջամաա* գյուղակների դեպքն ուրիշ է. եթե ճիշտ է, որ պլանները պետք է հաստատվեն կենտրոնացված կարգով, ապա գյուղակից մինչև կենտրոն և հակառակը ճանապարհը կարող է տևել երկու (Դար էս Սալամ) տարի: Ոչ մի թռիչք:

Եզրակացությունը նույնն է, ինչ երկնագույնի դեպքում. կանաչը չի կարող միայնակ կրել մարդկային զարգացմանը նպատակաուղղված որևէ ծրագիր: Անհրաժեշտ են փոխանցման մեխանիզմներ, ինչպես նաև, ի հավելումն տեղական տնտեսությունների, ներազգային ու միջազգային փոխգործակցություն:

3.6 Վարդագույն տնտեսագիտության արտաքին դրսևորումները

Վարդագույն դպրոցում ինչ-որ բան լիարժեք չէ. այն, ընդհանրապես, դժվար է դպրոց անվանել, քանզի դրան կապված ընդամենը մի քանի փիլիսոփա /տնտեսագետ կարելի է գտնել: Սոցիալիստական վերաբաշխման սկզբունքով արդիականացված կապիտալիզմի քաղաքականության միջոցով աղքատության վերացման համար երախտապարտ ժողովուրդը համապատասխան քաղաքական կուսակցություններին նորից ու նորից կվերադարձնի իշխանության: Ինչո՞ւ դա չի կարող անվերջ շարունակվել:

Պատճառն, իհարկե, դարձյալ բացասական արտաքին դրսևորումներն են: Ստորև քննարկվում են չորս հնարավոր վարկածներ:

Նախ, *մեղմությունը:* Մարդկանց ոգեշնչելու համար քաղաքականությունը պետք է որոշակի սուր անկյուններ ունենա, գոնե միակրոնային մշակույթում:

Իհարկե, երկնագույնը կարող է մեղադրել վարդագույնին կարմիր լինելու մեջ, իսկ կարմիրը կարող է մեղադրել վարդագույնին երկնագույն լինելու համար, երկուսն էլ վարդագույնին մղելով հակադիր բևեռներ և դրանով իսկ բացահայտելով իրենց սեփական կանխակալությունն ու մեղմության բացակայությունը: Բայց դրանք երկուսն էլ խորապես համոզված են իրենց ճշմարտացիությանը և նույնը պահանջում են ուրիշներից: Կանաչը բոլոր միջոցներով փորձում է վարդագույնին մղել դեպի դեղինը՝ այն ներկայացնելով իբրև գաղտնի համաձայնություն մեծ կարմիրի ու մեծ երկնագույնի միջև: Դեղինն էլ, թերևս, վարդագույնի մեջ տեսնում է իր փոքր եղբորը: Այսպիսով, վարդագույնն ամենևին էլ չի ընկալվում որպես այդպիսին, և դա նյութական ապրուստի տնտեսագիտության վատթարագույն մոտեցումը չէ:

Երկրորդ, *մնացած չորսի բացասական արտաքին դրսևորումների հանրագումարը*՝ անգամ ամենահամեստ տարբերակով: Այստեղ էկլեկտիկության համախոհները սովորելու շատ բան ունեն, որպեսզի պատրաստ լինեն բոլոր կողմերից հնչող հնարավոր հակափաստարկներին:

Երրորդ, *վարդագույնը աղքատության վերացման բնագավառում իր իսկ նվաճած հաջողության զոհն է:* Դա պետական վերահսկողության թուլացման և շուկայում կապիտալի կուտակման հնարավորությունների մեծացման ավելի անհագ ծարավ է առաջացնում մարդկանց մոտ:

Եվ չորրորդ, *վարդագույնը գործնականում, եթե ոչ տեսականորեն, առավել ավարտուն որոշում է հիշեցնում.* իսկ դինամիզմի բացակայությունը ձանձրացնում է մարդկանց:

3.7 Դեղին տնտեսագիտության արտաքին դրսևորումները

Դեղին տնտեսագիտությունը հեռու է մեղմ լինելուց. այստեղ առկա են բոլոր այն բացասական արտաքին դրսևորումները, որոնց համար մեղադրվում են երկնագույն, կարմիր ու կանաչ տնտեսությունները: Բայց դեղինն այնքան հաջողակ է ներքին դրսևորումների ու դրական արտաքին դրսևորումների մասով, որ բոլոր տեսակի քննադատությունները հնչում են որպես զրպարտանք: Կա՞ն արդյոք այլ փաստարկներ:

Նախ, *պետական-գործարար վերնախավերի համագործակցությունը մեծապես ճնշում է քաղաքացիական հասարակությունը:* Ժամանակակից հասարակության այս երկու պատվարների միջև հակասությունների բացակայության պայմաններում մասնակցությունը որոշում կայացնելու գործընթացին դառնում է գրեթե անհնար: Ճապոնացիներն առաջ են ընթանում՝ գլանելով բարձրաստիճան բյուրոկրատների ու մենեջերների մեծաքանակ խմբեր: Մարդիկ, միաժամանակ, անընդհատ զգում են քրտնաջան աշխատանքի ճնշումը, չնայած գերսպառումը զգալիորեն քաղցրացնում է գերարտադրության դառնությունը:

Երկրորդ, *խոշոր ընկերություններում կապիտալի ու աշխատուժի համագործակցությունը դուրս է մղում առավել փոքր ընկերություններին ու ոչ ցմահ աշխատակիցներին:* Շահագործումը դեղին տնտեսություններում ավելի քիչ է արտահայտված «կապիտալը շահագործում է աշխատուժը» բանաձևով. այն առավել արտահայտված է «կապիտալն ու աշխատուժը միասին շահագործում են փոքրերին» բանաձևով:

Երրորդ, *ձևավորելով չափից շատ ծայրագավառներ ու ձեռք բերելով չափից շատ թշնամիներ, դեղին տնտեսությունը տնտեսապես դառնում է սեփական հաջողության զոհը:* Եթե երբևէ հանկարծ ձևավորվեր «Ճապոնիայից տուժած երկրների միություն», դեղինը կարող էր այնպիսի դասեր քաղել, որպիսիք երկնագույնը, թվում է, երբևէ չի էլ երազել. այլոց շահագործման դիմաց պետք է վճարել:

Այս ամենին պետք է հավելել նաև հայրիշխանության ծայրահեղ դրսևորումը, քանզի կապիտալը, աշխատուժն ու պետությունը կառավարում են տղամարդիկ: Բայց սա արդեն ավելի ճապոնաբանության ուսումնասիրության առարկա է, քան դեղին տնտեսագիտության:

Եզրակացություն. ունենալով չափազանց շատ բացասական արտաքին դրսևորումներ՝ դեղինը ևս միայնակ չի կարող կրել զարգացման բեռը: Դա չի կարող անել մեր «գույներից» և ոչ մեկը: Հաջորդ գլխում մենք կփորձենք որոնել որոշ դեղամիջոցներ:

Ծանոթագրություններ

---

[1] Հայեցակարգը քաջ հայտնի է բժշկագիտության մեջ «կողմնակի ազդեցություն» անվանմամբ (գերմաներեն՝ *Nebenwirkung*): Այսօր դժվար է գտնել դեղամիջոց (գոնե Առաջին աշխարհում վաճառվող)՝ առանց դրա կողմնակի ազդեցության մանրամասն նկարագրության: Նման զգայունության պատճառը կարելի է, թերևս, գտնել 7-րդ դրույթում: Երբ արտաքին դրսևորումները հարվածում են ներքին հատվածին (Առաջին աշխարհին), դրանց սկսում են շատ լուրջ ուշադրություն հատկացնել:

[2] Ես երախտապարտ եմ Քեննեթ Բոուլդինգին՝ իմպերիալիզմին նվիրված քննարկման ժամանակ արված իր մի կողմնակի դիտողության համար (1971թ. սեպտեմբերին Վիեննայի Խաղաղության միջազգային ակադեմիայում). «Մենք պետք է սովորենք առավել լուրջ ուշադրություն հատկացնել արտաքին դրսևորումներին»: Այս միտքը գրի է առնված այդ մեծ մարդու հուղարկավորության օրը՝ 1993թ. մարտի 28-ին: Որքանո՞վ նա հավանություն կտար կատարված աշխատանքին, դա այլ խնդիր է: Քեննեթը երբեք հիացած չի եղել շահագործման հայեցակարգով, որն ընկած է արտաքին դրսևորումների ներկա կառուցվածքի հիմքում: Տե՛ս՝ Johan Galtung, *"Only One Quarrel with Kenneth Boulding",* Review Essay, *Journal of Peace Research,* vol. 24, no. 2, 1987, pp. 199-203.

[3] Երբեմն օգտագործվում է *spinoffs* (ինչ-որ բանից սկիզբ առնել) տերմինը, որը, սակայն, բավարար չափով չի արտահայտում այն անփույթ վերաբերմունքը, որ հանդես է բերվում տնտեսական գործունեության այս հայտանիշների նկատմամբ: Այդ տերմինի վաղ վերլուծությունը տե՛ս՝ Johan Galtung, *"A Structural Theory of Imperialism", Essays in Peace Research,* Vol. IV, էջ 437-481, particularly էջ 447 ff. Այդ հոդվածում օգտագործվում է մեկ այլ տերմին՝ «տեղաշարժ» մի կողմնակի ազդեցությունից դեպի մյուսը, որոշակի իմաստով՝ երկրորդ կարգի արտաքին դրսևորման մի տարատեսակ (էջ 462ff.):

[4] «Դատողությունների» հայեցակարգի, մասնավորապես, նեղ/լայն, խորը/մակերեսային հասկացությունների ուսումնասիրությունը տե՛ս՝ Johan Vincent Galtung and Richard C.Vincent, *USA Glasnost',* Cresskill, N.J: Hampton Press,1996,ch.4

[5] Մեկ այլ հետաքրքիր փոխաբերություն, որ ներդրումների առնչությամբ հաճախ էր հանդիպում կոմունիստական Արևելյան Եվրոպայում. «Ասֆալտի վրա ավազ լցնել»: Այսպիսով, սպառազինությունների մրցավազքը, որի մեջ Խորհրդային Միությունն ստիպված էր ներքաշվել Միացյալ Նահանգների հարկադրանքով, խոչընդոտում էր առավել կատարյալ ու մեծաքանակ սպառողական ապրանքների արտադրության

բնագավառում ներդրումների իրականացմանը (զենքն ընդդեմ լավագույն փաստարկների): Սրանից հետևում էր այն ենթադրությունը, որ կապիտալն անձուկ գործոն է:

[6] Այս սաստիկ չարչրկված տերմինների կիրառումը դեռևս չի նշանակում, որ «արդիականն» ավելի լավն է, քան «ավանդականը», կամ հակառակը:

[7] «Ժամը չի հասել» հանրահայտ սկզբունքը կիրառելով, կարելի է բացատրել և ներել ցանկացած բան և ամեն ինչ, ասել է թե՝ ոչինչ: Բայց սրանում երբեմն ինչ-որ բան կարող է լինել: Ի վերջո, մարդկային հասարակությունը չի գործում այն մեխանիզմի նման, որի հատակը բավական է սեղմել, և անհապաղ արդյունքն անխուսափելի է: Հասարակությունն առավել նման է օրգանիզմի: Առկա են որոշակի ներդրումներ (մտքի գործոններ), որոնք կլանվում են, մշակվում ու վերամշակվում: Ապա ի հայտ է գալիս որոշակի արդյունք՝ հաճախ նախատեսվածից խիստ տարբեր: Հեգելն այս գործընթացն անվանում էր քանակի փոխակերպում որակի. այստեղ այն մեկնաբանվում է որպես ներդրումների աճող քանակություն, ապա՝ որակական թռիչք, ու նման է հանրահայտ «գլխապտույտ թռիչքին»:

[8] Սկզբունքորեն դատողությունները կարելի է համարժեք համարել, եթե այն ամենը, ինչ ուզում ենք հաղորդել առարկայի վերաբերյալ, կարող է ճշմարտացիորեն ձևակերպվել այդ դատողությունների շրջանակում, և ոչինչ չի ստորակարգվում, ճնշվում կամ ուղղակի բաց թողնվում (օրինակ՝ արտաքին դրսևորումները): Տե՛ս՝ Galtung & Vincent, *USA Glasnost',* chapter 4.

[9] Ահա գրականությունից վերցված սահմանումների երկու օրինակ.

«Տնտեսագետներն արտաքին դրսևորումը սահմանում են որպես արժեք կամ նկատառում, որ ներառված չէ ծախսեր/եկամուտներ հաշվարկում» (Denis Goulet, *"Biological Diversity and Ethical Development", ICIS FORUM* 22:1, January 1992, p. 29), և «Աղտոտման հիմնահարցի էությունն այն է, ինչը տնտեսագետն անվանում է *արտաքին դրսևորումներ:* Սրանք *ավելցուկային ծախսերն ու եկամուտներն են*՝ գործողության հետևանքներ, որոնք հաշվի չեն առնվել տնտեսվարողի կողմից և, հետևաբար, չէին կարող ազդել նրա կողմից ընդունված որոշումների վրա (Paul Heyne, *The Economic Way of Thinking,* Chicago: Science Research Associates, 1992, p. 253):

Մեր սահմանումը մոտ է երկուսին էլ, բացի այդ, դրանք օգտագործում են «ծախսեր» ու «եկամուտներ» տերմինները մոնետիզացում բառի լրացուցիչ իմաստով՝ ցանկանալով խուսափել առավել լայն իմաստ ունեցող «բացասական արժեք» ու «դրական արժեք» արտահայտություններից: Գուլեթի սևեռումը «հաշվարկների» վրա նախասահմանում է արժեքների բաղդատելիությունը, և մոնետիզացումը տրամադրում է մի պատասխան, որ հանդիպում է ամենուրեք: Հեյնեի «տեղաշարժը» մեր «կողմնակի արդյունքն» է: Այնուամենայնիվ, երկու հեղինակներին էլ չի հաջողվել բացատրել հիմնահարցի ինքնալրացնող էությունը. տնտեսագետները հաշվի չեն առնում արտաքին ազդակները, նրանք սկզբնավորում են տնտեսական գործունեությունը՝ միաժամանակ ձևավորելով դատողությունները. իհարկե, ուրիշներին թույլ չի տրվում «ներառվել հաշվարկներում» կամ «ներազդել որոշումների վրա»: Նրանք նաև անդրադառնում են հետևանքներին (արդյունքներին) և ոչ թե պատճառներին (մտքի գործոններին): Արտաքին դրսևորումը կարող է հանդես գալ թե՛ որպես պատճառ, և թե՛ որպես հետևանք:

[10] Այդ դեպքում համաձանությունը, թերևս, կարելի է փնտրել Սամուելսոնի «ամենագո» գրքում (տե՛ս՝ Paul Samuelson; *Economics* (New York, McGraw-Hill, 13th edition, 1989; with W. D. Nordhaus): Գրքի վերջում զետեղված է օգտակար տերմինաբանական բառարան: «Շահագործում» տերմինը ոչ մի բացատրություն չունի: *Equity (արդարություն)* բառը բացատրվում է զուտ *equity capital* (բաժնեմասային կապիտալ) իմաստով: «Արտաքին ազդակների» բացատրությունը սահմանափակվում է ծախսերի ու չստացված եկամուտների սահմանմամբ (ակնարկելով մոնետիզացումը), ինչպես նաև այն պնդումով, որ «մասնավոր ծախսերն ու եկամուտները հավասար չեն սոցիալական ծախսերին ու եկա-

մուտներին» (ակնարկելով համեմատության քանակականացումը, նշելով վեց հարթություններից միայն երկուսը):

[11] Ինչպես նշված է նախորդ գլխում, այս դիրքորոշումը կարող է ընդունված լինել կարմիր և կանաչ դպրոցների կողմից:

[12] Այսպիսով, ապահովագրական ընկերությունները «շահույթ ստանալու մնացյալ հնարավորությունն» օգտագործում են որպես մարդկային կյանքի արժեք, այլ խոսքով՝ խիստ կախվածության մեջ դնելով տարիքից, սեռից, ռասայից ու խավից: Հիմնական խնդիրն այն է, թե արդյո՞ք սա առնչություն ունի տարբեր հնության օդանավերը տարբեր երթուղիներում տեղադրելու հետ. առավելապես երիտասարդ, տղամարդ, սպիտակամորթ գործարարներ տեղափոխողները՝ ընդդեմ տարիքով, կին և ոչ սպիտակամորթ բանվորներ տեղափոխողների:

[13] Մյուս կողմից, Die Grunen-ը Գերմանիայում, օրինակ, հակված են առանձնակի նշանակություն տալ այնպիսի արժեքների համակարգին, ինչպիսիք են, ասենք, բնապահպանական հավասարակշռությունը, կանանց ազատությունը, ընդհանուր մասնակցությունը, մարդու իրավունքները, բռնության բացառումը, համերաշխությունը Երրորդ աշխարհի հետ՝ ընդգրկելով, առնվազն, բնության, սոցիալական, աշխարհի և ժամանակի հարթությունները:

[14] Այլ խոսքով, Օքհամի «ածելին» ենթադրում է՝ այնքան հայեցակարգեր, որքան անհրաժեշտ է, և ոչ ավելին *(entia non sunt multiplicanda praeter necessitatem).*

[15] Այս դրույթը վիճահարույց է: Արտաքին ազդակների վերլուծության գործառույթներից մեկը տնտեսական պրակտիկայի վերափոխումն է. այդ նպատակով ձևակերպումները մոտեցված կամ անգամ նույնացված են, սովորական քաղաքական դատողություններն ավելի գերադասելի են: Մյուս գործառույթն էլ տնտեսագիտական տեսության վերափոխումն է. այդ նպատակով ավելի վերացական փոփոխականներն առավել կիրառական են: Այստեղ դիտարկվող մոտեցումը երկու փոփոխականներն էլ ընդգրկում է:

[16] Սա կարող է օգտագործվել պրոգրեսիվ և ռեգրեսիվ քաղաքականության ու քաղաքական (կամ այս իմաստով՝ աջ և ձախ) գաղափարախոսության ձևակերպման նպատակով. պրոգրեսիվ կոչվում է այն քաղաքականությունը, որը ծառայում է մարդկային ու ոչ մարդկային բնությանը, ռեգրեսիվ՝ որը դրան չի ծառայում: Իրական կյանքում, իհարկե, ցանկացած գործունեության հետևանքները սովորաբար հակասական են: Այս մոտեցումը իբրև խարիսխ է ծառայում քաղաքականության և ֆունդամենտալիզմի միջև: Փոստային գրասենյակները պետք է ազգայնացվե՞ն, թե՞ ապապետականացվեն. այս հարցն այլևս դոգմա չէ, այլ առավել քննարկման առարկա՝ ելնելով նրանից, թե որքանով դրանք կծառայեն համապատասխան կարիքների բավարարմանը. սա, կարծես, առավել փորձնական հարց է, որ ենթադրում է տարբեր պատասխաններ՝ ժամանակի ու տարածության տարբեր զուգահեռներում: Այս հիմքի վրա կարելի է բարձրացնել նաև համամարդկային գաղափարախոսությունը:

[17] Ցավն ու հաճույքը երկուսն էլ առնչվում են մարմնին և համարժեքորեն արտացոլում են տնտեսագիտական տեսության ու պրակտիկայի նեղ ուղղվածությունը: Բայց այդ ֆիզիկական/մատերիալիստական ուղղվածությունն ինքը տնտեսագիտության ամենահակասական դրույթներից մեկն է, և դրանց՝ մարմնական կարիքների բավարարմանն ուղղված ապրանքների ու ծառայությունների համար նախատեսված գործիքների կիրառումը մարդու հոգևոր աշխարհում՝ մշակութային հարթության հիմնական բացասական արտաքին դրսևորումներից մեկը: Ըստ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հարի Բեքքերի, սահմանափակումներ գոյություն չունեն. «Ռացիոնալ կերպով ընտրված մոդելը տրամադրում է ամենախոստումնալից հենքը, որ ներկայում մատչելի է սոցիալական գիտությունների հետազոտողների կողմից սոցիալական աշխարհի վերլու-

ծությունների միասնական մոտեցման համար» (տե՛ս՝ Gary Becker, *"The Economic way of Looking at Life", Nobel Lecture,* Stockholm, Nobel Foundation, 1992, էջ 27):

[18] Ակնհայտ է, որ բազմազանությունը/համակցությունը բնական հարթության դիմադրողականության՝ բնապահպանական տեսության հիմք հանդիսացող հիմնահարցի վերլուծության առիթ է տալիս: Նույնը վերաբերվում է նաև բազմաթիվ հակումներով ներքին անհատներին: Հակումներ, որոնք հասուն մարդու մոտ պետք է տարանջատված (ոչ չափից դուրս զսպված կամ վերահսկվող) լինեն և փոխադարձաբար համատեղված (ոչ թե մասերի բաժանված, որպես պառակտված անհատականություններ): Սոցիալական հարթությունը կարող է նաև շատ ավելի դիմադրողական լինել՝ պարունակելով սոցիալական կյանքի կազմակերպման տարբեր ուղիներ: Այդպիսին կարող է լինել նաև աշխարհի հարթությունը: Այլ խոսքով՝ հայեցակարգերը միանգամայն համապատասխանում են միջտարածքային տեսություններին:

[19] Խնդիրը էկլեկտիկության բուն գաղափարն է, որ նշանակում է ծառայել մեկից ավելի աստվածների: Մի բան, որ դյուրին չէ Արևմուտքի միաստվածային քաղաքակրթություններում: Բացառություն կարող է կազմել վարդագույն դպրոցը, որտեղ էկլեկտիկությունն ի սկզբանե ներառված է դպրոցի կառուցվածքում՝ շուկայական կամ պլանային միջոցները կախվածության մեջ դնելով հանգամանքներից: Էկլեկտիկության ընդհանուր ավանդույթներ ունեցող Արևելքը, սոցիալ-դեմոկրատիայի նման, հանդես է բերում բազմաստվածային շեղումներ մոնոթեիզմից:

[20] Երկնագույն համակարգը ժամանակի, տարածության ու սոցիալական հարթության մեջ սահմաններ չի ճանաչում՝ միաժամանակ հանդիսանալով ընդարձակվող Արևմուտքի մշակութային կողի հզոր փոխակրիչ: Համակարգը տարածության և ժամանակի մեջ իրեն համարում է համընդհանուր և հանգամանքներից անկախ: Իհարկե, այն ավելի խորն արմատներ է ձգում, եթե մշակութային հիմքն արդեն մրցակցային է կամ դարձել է այդպիսին, օրինակ, գաղութատիրացման ճանապարհով:

[21] Պաշարներ/հոսքեր դատողությունները հանգեցնում են արտաքին ազդակների այլ ակնկալիքների՝ հոսքերը սպառո՞ւմ, թե՞ համալրում են պաշարները/կապիտալը: Աղյուսակ 3.4-ում բացասական արտաքին ազդակների ներքևի տողը հարցեր է առաջադրում բնական, մարդկային, սոցիալական, աշխարհի, ժամանակի ու մշակութային կապիտալի առնչությամբ: Ավելի որոշակի, երբ սպառումը/աղտոտումը հատում է բնական թույլատրելի սահմանը, ապա կապիտալը սպառվում է: Եթե աղքատությունը, միապաղաղությունն ու օտարացումը՝ ներառյալ միայնակության պարզ դեպքը, հատում են տանելիության սահմանը, ապա անհատի կեսուևակության, սիրո և ստեղծագործության կապիտալը սպառվում է: Չափազանց ուղղահայացության և անհատական շարժունության, միմյանց տեսադաշտից անընդհատ դուրս մղվող մարդկանց՝ մեքենաներով փոխարինելու դեպքում հասարակության կառուցվածքային կապիտալը քայքայվում է: Անհաջող, հիմնականում անարխիկ/ֆեոդալական կառուցվածք ունեցող աշխարհը կապիտալի առումով շատ բան չունի կորցնելու, բայց ազգայնամոլությունն, անկասկած, քայքայում է անգամ եղած կապիտալի համեստ պաշարները: Համատեղ արդյունքը կլինի քայքայումը ժամանակի ընթացքում՝ համատեղված, օրինակ, ուղղակի ու կառուցվածքային բռնության հետ: Միայն ատոմիզմը՝ (նյութի կազմության ատոմիստական տեսություն) և մատերիալիզմը (նյութապաշտություն) չեն կարող բավարար մշակույթ տրամադրել՝ այս հիմնահարցերից ելք գտնելու համար. դրանք պետք է համադրվեն ամբողջականության փիլիսոփայության և հոգևորի հետ (կազմելով գաղափարապաշտություն): Այլ խոսքով՝ մշակութային կապիտալը ևս քայքայվում է, մասնավորապես, տնտեսագիտության կողմից: Կառուցվածքային քայքայումն ուղեկցվում է մշակութային քայքայմամբ:

[22] Եթե աքսիոմների քանակը նշանակենք *n,* իսկ արտածված թեորեմների քանակը՝ *N,* ապա բացատրության կարողության չափորոշիչներից մեկը հավասար կլինի (1-*n/N*)-ի. այն հակադարձ համեմատական է *n*-ին և ուղիղ համեմատական է *N*-ին: Սա շատ

կարևոր է նաև իբրև հիշատեխնիկական մեխանիզմ՝ զարգացված, ապա կիրառված: Այն ամենը, ինչ մարդիկ պետք է մտապահեն, ընդամենը մի բուռ աքսիոմներ ու արտածական կանոններ են, որոնցից կարելի է գիտելիքների վիթխարի պաշարներ վերարտադրել: Ապացույց չպահանջող՝ աքսիոմատիկ համակարգի ուժը, այնուամենայնիվ, առավելապես նոր գիտելիքներ արտադրելն է՝ արտածելով նոր, զարմանալի ըմբռնումներ և ստուգելով դրանք իրականության մեջ: Այս ինտելեկտուալ ոճը բրգաձև կազմվածք է՝ առավել կամ պակաս ընդգծված (կախված աքսիոմների քանակից) գագաթով. զույգերով, եռյակներով և այլն կապակցված թեորեմների դեպքում այն կարող է հակադրվել անիվին ու քննարկվել նոր՝ սիներգետիկ ըմբռնումների տեսանկյունից: Տե՛ս՝ Johan Galtung, *"Back to the úrigins: on Christian and Buddhist Epistemology", Methodology and Development,* Copenhagen: Ejlers, 1988, էջ 15-27.

[23] Սա ինքնահամալրվող մարգարեությունների մասին սոցիոլոգներ Թոմասի և Զնանիեցկու հանրահայտ թեորեմն է: Վիրտուալ իրականությունը, որին այն առնչվում է, որոշակի նմանություն ունի բնական գիտությունների լաբորատորիայի հետ: Տարբերությունն այն է, որ լաբորատորիայում վիրտուալ իրականությունը, X-ի և Y-ի միջև հարաբերությունների համար համապատասխան պայմանները, անկախ և կախյալ փոփոխականները (դրանց շարքը) կամ կայուն պահպանվում են (ճնշումը, ջերմաստիճանը), կամ դարձվում անտեղի (աղմուկը, քամին). տնտեսագիտության մեջ երևակայական իրականությանն առնչվող պայմանները կորցնում են այդ առնչությունը՝ հեռացվելով իբրև արտաքին ազդակներ:

[24] Ինչպես մեկ բարել նավթի համար անհրաժեշտ բանանների քանակը, մեկ տրակտորի համար անհրաժեշտ նավթի քանակությունը, կամ մեկ ռմբարկուի/հրթիռային հածանավի/միջուկային ռումբի համար անհրաժեշտ տրակտորների քանակը:

[25] Իհարկե, իր փորձն ու գիտելիքները նա կարող է կիսել տեղացու՝ իր «գործընկերոջ» հետ: Սակայն տեղացին, փորձելով փոխարկել այդ գիտելիքները կարգավիճակի ու իշխանության, հեշտությամբ տրվում է միայնակության և, ի վերջո, կարող է հետևել իր «բարերարին» դեպի առավել զարգացած երկրներ:

[26] Դրանք հայտնի «որակական պարբերաշրջաններն» են: Տե՛ս՝ W. E. Deming, *Out of the Crisis,* Cambridge, Mass.: MIT, 1991.

[27] Նախկին սոցիալիստական երկրների ողբերգությունը մի կառուցվածքային այլաձևությունից մյուսին փոխակերպումն է: Պետպլանի պաշտոնյաների փոխարեն այժմ մարտահրավերների մենաշնորհը պատկանում է օտարերկրյա փորձագետներին:

[28] Այսպիսով, 1992թ. Եվրամիությանը բաժին էր ընկնում համաշխարհային առևտրի 19.9, իսկ Միացյալ Նահանգներին՝ 16.6 տոկոսը՝ դարձյալ որպես առաջին՝ հրեա-քրիստոնեական աճի բևեռում գրանցված բուռն տնտեսական աճի հետևանք: Ապա գալիս են. Ճապոնիան՝ 12.1%, Կանադան՝ 4.8%, Հոնգ Կոնգը՝ 4.2%, Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը՝ 3.0%, Հարավային Կորեան՝ 2.7%, Շվեյցարիան՝ 2.3% և Սինգապուրը՝ 2.3%: Արևելյան Ասիայի երկրներն ավելացնում են մինչև 24.9% (Սինգապուրի հետ մեկտեղ Հարավ-արևելյան Ասիային բաժին է ընկնում համաշխարհային առևտրի ավելի քան քառորդ մասը՝ 27.2%): Բուդդայական-կոնֆուցիական Հարավային Ասիայի երկրների (Ճապոնիա, Չինաստան (Հոնգ Կոնգի ու Թայվանի հետ մեկտեղ), միավորված Կորեա ու Վիետնամ) ընդհանուր շուկան արդեն այսօր կարող է համարվել աշխարհի խոշորագույն առևտրային գործընկերը, երկրորդ հորիզոնականը զբաղեցնում են Միացյալ Նահանգներն ու Կանադան (Մեքսիկայի հետ մեկտեղ): Նույնիսկ Եվրամիությունը, իր մեջ ներգրավելով նոր անդամ երկրները, կհայտնվի երրորդ տեղում՝ որպես համաշխարհային դինամիզմի դրսևորում (GATT Secretariat, in *Neue Zürcher Zeitung,* 29 March 1993):

[29] Տե՛ս՝ աղյուսակ 3.5: Միայն եզակի մշակույթներ են միավորում բոլոր չորս տարրերը՝ քրտնաջան աշխատանքը, խնայողությունները, ագահությունն ու անխտրականությունը՝որպես տնտեսական աճի անհրաժեշտ պայմաններ:

[30] «Իմպերիալիզմի կառուցվածքային տեսությունը» (1971) գրքում զետեղված նախնական տարբերակում ներքին ազդակների շարքին են դասվում արտափոխանակման մոդելում կատարվող իրադարձությունները, իսկ արտաքին ազդակներին՝ այն, ինչ տեղի է ունենում ներփոխանակման ընթացքում՝ որպես արտափոխանակման պատճառ կամ հետևանք: Այս տեսակետը չափազանց սահմանափակ է. առկա են և արտաքին, և ներքին ազդակները ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ:

[31] Որպես օրինակ դիտարկենք 8-րդ դրույթում նկարագրված գործարքը: Թույլ զարգացած երկրները դատապարտված են երեք ուղղություններով: Այնուհանդերձ, առավել զարգացած երկրները կարող են ասել. «Լավ, մենք ավելի բարձր կվճարենք ձեզ ապրանքների դիմաց և, ի հավելումն դրա, կկայունացնենք գները՝ մնացյալը թողնելով անփոփոխ»: Սա կարելի է մեկնաբանել որպես կենսաբազմազանության քայքայման ու չիրացված մարտահրավերների հիմնահարցը փողով քողարկելու ջանք. իրական քայլեր հնարավոր չեն:

[32] Այս տեքստն անդրադառնում է Ո/Գ, Մ/Հ և Ֆ/Ի հարաբերակցությունների լայնա ծավալ կիրառմանը. Ո/Գ-ն, քանզի այն ճշգրիտ արտացոլում է այն, ինչ գնորդները փնտրում են, իսկ վաճառողները փորձում են համոզել նրանց գնելու այն, ինչ իրենք առաջարկում են, Մ/Հ-ն, որովհետև այն առնչվում է հիմնական արտաքին ազդակների մեծ մասին, և Ֆ/Ի-ն՝ որպես ընդհանուր տնտեսական համակարգի հայեցակարգային կառավարման բանաձև: Բոլոր երեքի կիրառումն էլ հնարավոր է, բայց դուրս է այս գրքի ուսումնասիրությունների շրջանակից: Մյուսները մուտք կգործեն տնտեսական գործունեության վիթխարի ասպարեզ՝ այլ հիմնական փոփոխականների հետ մեկտեղ:

[33] Այլ խոսքով, *օմբուդսմենի (մարդու իրավունքների պաշտպանի)* համակարգի դրսևորումներից մեկը՝ կենդանի ու անկենդան բնության ընտրանու համար (դրանք այնքան բազմաքանակ են, որ որևէ տրված վայրում չեն գտնվի բավարար քանակով մարդ էակներ, որ ներկայացնեն բոլորն անխտիր):

[34] Չորս խոշորագույն միջազգային հասարակական կազմակերպություններն են՝ Միջազգային կոոպերատիվ ալյանսը (663 մլն. անդամներ 86 երկրներում), Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային դաշնությունը (250 մլն. 117 երկրներում), Առևտրական միությունների համաշխարհային դաշնությունը (175 մլն. 85 երկրներում), Ազատ առևտրական միությունների միջազգային դաշնությունը (113 մլն. անդամներ 117 երկրներում): Տվյալները վերցված են Բրյուսելի Միջազգային ասոցիացիաների միությունից:

[35] Խելամիտ չափերի ազատ հասարակությունում տնտեսվարողները կարող են ուղղակիորեն հանդիպել՝ ղեկավարվելով իրենց սեփական ըմբռնումներով, մասնավորապես, երբ պետության հիմնական մտահոգությունը ոչ թե երկխոսության խթանումն է, այլ ուժի տեղաբաշխման ցուցադրումը:

[36] Բերենք օրինակ Չինաստանի մշակութային հեղափոխության ժամանակներից. հիմնական գաղափարը բանվորների կողմից ավելի մեծ մարտահրավերների ստանձնումն էր՝ միաժամանակ մարտահրավեր նետելով արտադրության միջոցների նկատմամբ ճարտարագետների մենաշնորհին: Չինաստանի առանձնահատուկ դեպքում դա կատարվեց՝ բանվորներին ստիպելով նորոգել շատ հաճախ կոտրվող մեքենաները: Հաշվի առնելով այդ մեքենաների տարիքը՝ մարտահրավերներն ավելի քան բավարար էին ստանձնելու համար, բայց ոչ ամենևին մեքենաների պարկը զարգացնելու համար: Արդյունքը եղավ լճացումը:

[37] Քվեաթերթիկներով քվեարկությունը ևս բավականաչափ արդար չէ. շատ կարևոր է քաղաքացիների երկխոսությունը քաղաքական գործիչների հետ, սպառողներինը՝ արտադրողների հետ ու, որ առավել գերադասելի է, բոլոր երեքինը միասին:

[38] *"A Quick and Easy Guide to Socially Responsible Supermarket Shopping",* published annually by Council on Economic Priorities, Inc., 30 Irving Place, New York, NY 10003.

[39] Ընթացիկ (1990-ականների կեսերի) ժամանակահատվածում, երբ կարմիր համակարգը ջախջախված է, կանաչը՝ թաքնված, վարդագույնը՝ խառնիփնթոր վիճակում, իսկ դեղինը գրեթե նույնացվում է երկնագույնի հետ՝ դիտարկվելով իբրև վերջինիս տարաշխարհիկ դրսևորում, արևելյան առանձնահատկությունները ձևավորում են հիմնականում երկնագույն համակարգով բնակեցված դժգույն տնտեսական լանդշաֆտ, որի կենտրոնն ու ծայրամասերն իրարից տարբերվում են: Դժվար թե սա երկար շարունակվի: Հիմնահարցերի բարդությունը համալիր լուծումներ է պահանջում:

[40] «Էժան աշխատուժը» վերաբերում է ոչ միայն ցածր աշխատավարձերին, այլ նաև, որ առավել կարևոր է, բացասական արտաքին ազդակների արտահանմանը՝ այն ձանձրալի, վտանգավոր, մարտահրավերներ չպարունակող աշխատանքի, որը հաշվի չի առնվում և չի փոխհատուցվում:

[41] Այս իմաստով կոմունիզմի 70 տարիները նրանց նախապատրաստում էին կապիտալիզմի: Ի՞նչ են նրանք այսօր ճաշակում. երկնագույն արտաքին ազդակներ՝ նախկին կարմիրների փոխարեն:

4
Էկլեկտիկ զարգացման տեսության տասը դրույթները

Այժմ մենք պետք է փորձենք համատեղել նախորդ գլուխներում քննարկված դրույթները: Առաջին գլուխը բացեց տեսության ու պրակտիկայի ընթացիկ զարգացման քննադատությունը, մենք որոշակի պարտավորություն ենք ստանձնել շարունակել այն առավել կառուցողական դիրքերից[1]: Երկրորդ գլխում ներկայացվեցին երկնագույն, կարմիր և կանաչ տնտեսական համակարգերի, ինչպես նաև առավել հասուն համակարգերի (վարդագույնի, դեղինի և էկլեկտիկի) հիմնադրույթները: Հիմնական գաղափարն այն էր, որ վերջինը խոստումնալից է: Երրորդ գլխում մենք դիտարկեցինք տնտեսական համակարգերի անտեսանելի հայտանիշների արտաքին դրսևորումները՝ հուսալով դրանով իսկ առավել խորությամբ ըմբռնել այդ համակարգերի իրականությունը զարգացման հեռանկարի տեսանկյունից, ինչպես նշված է առաջին գլխում:

Փորձենք տասը դրույթներում ուրվագծել այն փորձառությունը, որ լավագույնս կհամապատասխանի այդ համակարգերին՝ չխորանալով բացասական արտաքին դրսևորումների մեջ (թեև դրանք բազմաթիվ են, ինչպես տեսանք երկրորդ գլխում): Սկսենք երկրորդ գլխի հիմնական դրույթից:

Դրույթ 1.

> *Շուկան (կապիտալը) և պետությունը (իշխանությունը) դիտարկելով որպես հիմնական չափորոշիչներ՝ մենք կարող ենք սահմանել ոչ թե երկու, այլ հինգ տնտեսական համակարգեր.* շուկայական, ոչ պլանային *(երկնագույն, կապիտալիստական),* պլանային, ոչ կապիտալիստական *(կարմիր, սոցիալիստական),* կես-կես *(վարդագույն, սոցիալ-ժողովրդավարական),* և-և կամ երկուսը միասին *(դեղին, ճապոնական) և* ոչ-ոչ կամ ոչ մեկը, ոչ մյուսը *(կանաչ, ավանդական, տեղային):*

Միայն երբ բացառապես զուտ շուկան և զուտ պլանն են դիտարկվում որպես միաչափ շարքի երկու հակադիր բևեռներ, սոսկ այդ դեպքում իմաստ ունի խոսել երկու համակարգերի մասին (կամ երեք, եթե վարդագույն սոցիալ-ժողովրդավարական համակարգը կարելի է ընդունել իբրև առաջին երկուսի փոխզիջումային տարբերակ ու տեղավորել դրանց մեջտեղում): Եթե երկուսից մեկը փորձնական եղանակով խաթարվի կամ գաղափարախոսական առումով դուրս մղվի, ապա շատ քիչ բան կմնա. այնժամ շատերը կսկսեն հավատալ, որ գոյատևած համակարգը (այսօր դա երկնագույնն է) «բնական» համակարգ է: Բայց նման եզրակացության հանգելու միակ նախապայմանը միաչափ մտածողությունն է՝ իմացաբանական մանկամտության դրսևորումներից մեկը:

Երևակայության առջև կարող է հառնել շատ ավելի բարդ ձևաբանություն, քան դրույթ 1-ում է քննարկված: Բայց ներկա ձևաբանությունն ունի մի շատ կարևոր առավելություն. այն համեմատաբար ավելի լավ է հարմարեցված արդի աշխարհում գոյություն ունեցող համակարգերին ու դպրոցներին: Երկնագույն կամ շուկայական համակարգն ի հայտ է գալիս երկու տարբերակներով. կենտրոն՝ հումքի մշակման ու հաղորդակցության-տրանսպորտի կենտրոնացվածության բարձր մակարդակով, որ առատորեն օգտվում է դրական արտաքին դրսևորումների գումարային արդյունքներից, և ծայրամասեր՝ հումքի մշակման ու հաղորդակցության-տրանսպորտի կենտրոնացվածության ցածր մակարդակով, որ կքում են բացասական արտաքին դրսևորումների բեռի տակ: Բայց, ինչպես դարձյալ ցույց ենք տվել, երկնագույնի (կամ այս դեպքում կարմիրի ու դեղինի (դրանք բոլորն էլ կենտրոնացված են) կենտրոնն ու ծայրամասերը միևնույն համակարգի երկու բևեռներն են:

Այսպիսով, բազմաչափ դատողությունների դեպքում միշտ էլ առկա է շատ ավելի առատ բազմաձևություն, քան կարելի է պատկերացնել: Խնդիրն այն է, թե ինչպե՞ս վերաբերվել այդ «հնարավորության պատուհանին»:

Դրույթ 2.

Միայն մեկ համակարգին գաղափարախոսական նվիրվածության փոխարեն բոլոր հինգ համակարգերի էկլեկտիկ կիրառումը ժամանակի, տարածության և ֆունկցիոնալ հարթություններում կարող է իրականություն դարձնել զարգացման դրական համադրությունը:

Այս փաստարկն ակնհայտորեն հնչում է ի պաշտպանություն էկլեկտիկ դպրոցի: Վերը նշված դատողություններում էկլեկտիկ դպրոցը դիտարկվում է որպես մյուս երեք դպրոցների խառնուրդ (ամալգամացիա), որոնցից երկուսը հենց իրենք են հանդիսանում այլ բաղադրիչների էկլեկտիկ խառնուրդ: Թե ինչ է սա նշանակում, առավել մանրակրկիտ կքննարկվի հաջորդիվ:

Էկլեկտիկության հիմնական պայմանն ընկած է ոչ թե տնտեսական իրականության մեջ, այլ մեր ուղեղներում. այն աշխարհիկ, տնտեսական աստծո (լինի դա շուկա, թե պլան) հանդեպ մոնոթեիստական հավատքից անցում է բազմաստվածային հավատքի: Եվ, ինչպես ընդունված է բազմաստվածային կրոններում, գոյություն ունի այս աստծո կամ այն աստծո ժամանակ, տվյալ դեպքում՝ Ստեղծողի, Պահպանողի, Ոչնչացնողի[2]:

Էկլեկտիկ դպրոցի բաղադրիչ համակարգերը կարող են ակտիվացվել հաջորդաբար կամ զուգահեռաբար, կամ միաժամանակ և՛ հաջորդաբար, և՛ զուգահեռաբար, համատեղ կամ տարբեր տեղերում, միևնույն կամ տարբեր գործառույթների իրականացման նպատակով: Այս դպրոցը բացառում է այն ենթադրության հնարավորությունը, թե հիմնական դպրոցներից (երկնագույն, կարմիր, կանաչ) որևէ մեկը իբրև տնտեսական զարգացման վերջնական փուլ կենսագործվելու համար կարող է մյուսներից ավելի պիտանի լինել, կամ որ մյուսների խնդիրը միայն այն է, որ օգնեն այդ փուլին իրականություն դառնալու՝ վերջնականապես հրաժարվելով հիմնաքար լինելու գաղափարից: Խառնուրդ-դպրոցներից ամենաբարդն ու համալիրն էկլեկտիկն է: Տնտեսական ռազմավարությունները գործում են դպրոցի ներսում, բայց դրանք պատահականորեն չեն ընտրվում: Դրանք ակտիվացնում են հիմնական համակարգերի կառուցվածքն ու համապատասխան հիմնական դպրոցների մտա-

ծողությունը՝ բայց առանց դրանցից որևէ մեկը տեղավորելու «վարորդի աթոռին»: Վարորդի աթոռին բազմում է էկլեկտիկը:

Ինչո՞ւ են արդի աշխարհի հիմնական տնտեսական նախաձեռնությունները սկիզբ առնում դաոիստական-կոնֆուցիական-բուդդիստական Արևելյան Ասիայում. այս հարցի պատասխանը, ըստ նմանօրինակ մտածողության, հետևյալն է. պատճառը էկլեկտիկ մտածողության և գործելակերպի շատ ավելի մեծ ունակությունն է, որ կիրառում է ավելի շուտ *երկուսը համատեղ,* քան *կամ-կամ* սկզբունքը: Բայց եթե Արևմուտքը կարողացել է համատեղել, ասենք, հուդայականությունը, քրիստոնեությունն ու իսլամը, այս երեքն էլ կարող են շատ նման լինել՝ էկլեկտիկության իրական տնտեսական (այս առումով նաև սոցիալական, մշակութային ու քաղաքական) հետևորդներ ստեղծելու համար:

Դրույթ 3.

Ցանկացած տիպի զարգացման անհրաժեշտ պայմանը արտադրության գործոնների ապակենտրոնացված բաշխումն է բացառապես բոլորին՝ յուրաքանչյուրին դարձնելով ոչ միայն սպառման, այլ նաև արտադրության մասնակից:

Հիմնական դրույթն այստեղ ապակենտրոնացումն է, որ իմաստ ունի բոլոր համակարգերում, այդ թվում՝ նաև կարմիր: Չկա որևէ հիմնարար անհաղթահարելի պատճառ, որով Խորհրդային Միությունում կիրառվող կարմիր դպրոցը չէր կարող ունենալ համայնքային, և ոչ թե պետական (ծայրահեղ դեպքում՝ հանրապետական) գոյաձև (բոլորովին այլ հարց է, թե որքանով այն արդյունավետ կլիներ): Հիմնական պատճառը, թերևս, չկշռադատված սիլոգիզմն էր, որ իրականացվում էր այսպես.

Նախադրյալ 1.	Հիմնական վերափոխումը ենթադրում է կենտրոնացված իշխանություն պետական մակարդակում:
Նախադրյալ 2.	Հանրային սեփականությունը հիմնական վերափոխումն է:
Եզրակացություն.	Հանրային սեփականությունը ենթադրում է կենտրոնացված իշխանություն պետական մակարդակում:

Առաջին նախադրյալը, թե բացարձակ տարածքային վերահսկողություն է անհրաժեշտ, կարող է ընդունելի լինել, ինչպես և երկրորդ նախադրյալը: Եզրակացությունն ուղղակիորեն չի բխում ասվածից և իր հետևանքների տեսանկյունից աղետաբեր է թվում զուտ այն պատճառով, որ «հիմնական անցում» հասկացությունը երկու նախադրյալներում հանդես է գալիս տարբեր իմաստներով: Համայնքային մակարդակում պլանավորման վրա հիմնված համակարգը, ինչպես նաև վերևից եկող նախաձեռնությունները, հականախաձեռնություններն ու շատ թույլ համակարգումը ամենևին էլ աներևակայելի չեն[3]:

Ավելի մեծ ուշադրության են արժանի ապակենտրոնացումն ու հարակից երևույթները, ասենք, առավել փոքր տնտեսվարող համակարգերը, որոնք համեմատելի են, բայց չեն կարող նույնացվել արտոնյալ տեղական տնտեսական պարբերաշրջանների հետ:

Նախ. *արտադրության գործոնների մոբիլիզացումը:* Մարդկային տաղանդներ կան ամենուր: Կենտրոնացված համակարգն անպայմանորեն օգտագործում է նախ կենտրոնում առկա տաղանդը, ապա տաղանդները հավաքագրում է ծայրամասերից ու բերում կենտրոն՝ դրանով իսկ գերհագեցնելով կենտրոնն ու թերհագեցնելով ծայրամասերը: Ամենուր կան բնական հումք, որոշակի կապիտալ, որոշակի տեխնոլոգիաներ (ավանդական, գերարդիական, այլընտրանքային, տեղային) և կառավարման համակարգեր: Այս գործոնները շատ ավելի արդյունավետ կօգտագործվեն, եթե արտադրությունն ավելի բազմակողմանիորեն կազմակերպվի՝ ներգրավելով բոլորին ու յուրաքանչյուրին (յուրաքանչյուր ոք արտադրում է ինչ-որ բան):

Ասվածը ենթադրում է հողի ու ջրի, հանրային անտառների ու լճերի, ծովերի ու օվկիանոսների ազատ օգտագործման իրավունք: Այսօր հավասար կամ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել կրթության ու առողջապահության միջոցով աշխատուժի որակի բարելավման խնդիրներին՝ հնարավորություն տալով մարդկանց ազատորեն օգտվելու կրթական ու առողջապահական համակարգերի ծառայություններից (ամենուր տեղաբաշխելով դպրոցներ ու պոլիկլինիկաներ), վարկային միջոցներից՝ ստեղծելով օգտվելու տեսանկյունից դյուրին և սպառողների համար հասկանալի տեխնոլոգիաներ ու ձևավորելով տեղական մշակույթի և սոցիալական կառուցվածքի հետ համատեղելի կառավարման համակարգեր: Հին և անկասկած կարևոր *հողային բարեփոխումներ. հողը գյուղացուն* փաստարկն այսօր դարձել է *գործոնային վերափոխումների* համընդհանուր կարգախոս:

Երկրորդ. ապակենտրոնացումից սկզբունքորեն բխում է *առավել բազմազանությունը,* երբ ամենատարբեր միջոցներն ու ապրանքները տեղաշարժվում են տարբեր տնտեսական պարբերաշրջաններում: Չնայած համաշխարհային տնտեսության երկնագույն տրամաբանության կողմից արտոնված շարունակական աճին՝ ազգային մակարդակում բազմազանությունը չի անհետանում. առկա են նաև գենդերային, սերունդների ու դասակարգերի տնտեսական բազմազանություններ: Սակայն տեղական բազմազանությունն անհետացման միտում ունի՝ տարալուծվելով ազգային տնտեսություններում և դրանով իսկ թուլացնելով ընդհանուր համակարգը (տե՛ս՝ գլուխ 5):

Երրորդ. ապակենտրոնացումը *դրական արտաքին դրսևորումները տեղափոխում է տեղական մակարդակ՝* կրկնօրինակելով կենտրոն-ծայրամասեր կառուցվածքը, որը կարևոր է, մասնավորապես այնպիսի էական արտաքին դրսևորման համար, ինչպիսին մարտահրավերն է:

Չորրորդ. ապակենտրոնացմանը զուգընթաց *բացասական արտաքին դրսևորումները հարվածում են առավել փոքր միավորներին՝* մոբիլիզացնելով ավելի շատ ջանքեր դրանք կրկնօրինակելու համար, քանզի պատճառն ու հետևանքը շատ ավելի մոտ են իրար և պարզ արտահայտված:

Դրույթ 4.

Առաջին արտադրական գերակայությունը տրվում է առավել կարիքավորների հիմնարար կարիքներին, ինչը տեղական մակարդակում լավագույնս իրականացնում է կանաչ տնտեսությունը:

Ո՞րն է առաջին գլխում նկարագրված տնտեսական գիտափորձի նպատակը, եթե ոչ գոյատևման հիմնարար կարիքների բավարարումը: Այստեղ կարևոր է լոկալ արտադրության խնդիրը: Եթե անգամ կենտրոնացված արտադրությունը կարողանա թողարկել ապրանքների շատ ավելի մեծ քանակներ՝ առավել ցածր գներով (բարձր որակ ապահովելը շատ ավելի բարդ խնդիր է), միևնույն է, տեղական արտադրությունը միշտ ավելի քիչ խոցելի է իրացման ու առաջարկի տեսանկյունից և ավելի զգայուն տեղական կարիքների ու ներուժի նկատմամբ: Որքան ավելի հիմնարար են կարիքները, այնքան ավելի կարևորվում են այս արտաքին դրսևորումները. ոչ հիմնարար կարիքների համար ռիսկերն ավելի քիչ են (հնարավոր հետևանքներն ավելի մեղմ պատիժ են ենթադրում):

Գործնականում սա նշանակում է տեղական սպառման նպատակով սննդի, հագուստի ու բնակարանաշինական արտադրության ապակենտրոնացում: Ասվածին կարելի է ավելացնել նաև առողջության պահպանման ապրանքները (առողջարար սնունդ, մաքուր օդ և ջուր, հիմնական հիվանդությունների դեմ ընդհանուր դեղամիջոցներ, պոլիկլինիկաներ ու տարրական առողջապահական հիմնարկներ) և հիմնարար կրթական հնարավորությունները (դպրոցական շենքեր, աշխատանքի և ուսման համատեղման հնարավորություն, պարզագույն ուսումնական միջոցների արտադրություն, ուսուցիչներ): Էներգիայի փոխակերպման առումով տեղական ինքնաբավությունը ևս կարելի է բերել որպես փաստարկ. ի վերջո, բիոգանգվածը, արևի լույսը, մակընթացության ժամանակ բարձրացող ջուրը, ծովի ալիքները, ջրվեժները, և այլն այս կամ այն կերպ մատչելի են ամենուրեք:

Տեղական մակարդակում ահռելի ներուժ է առկա : Ավելին, ամենուրեք խթանելով տեղական արտադրությունը՝ մասնավորապես հիմնական կարիքների բավարարմանն ուղղված, իրենց գոյատևման գործընթացում այն մարդկանց դարձնում է ավելի անկախ իրենց վերահսկողությունից դուրս գտնվող գործոններից[4]: Բացի այդ, հայտնի ճշմարտություն է. քիչ ճամփորդող ապրանքը քիչ է աղտոտում շրջակա միջավայրը:

Դրույթ 5.

Երկրորդ արտադրական գերակայությունը *հիմնարար կարիքների հետ առնչվող գործիքների պարզագույն արտադրությունն ու սպառումն է, ինչը ազգային մակարդակում լավագույնս իրականացվում է վարդագույն տնտեսության պայմաններում:*

Օրինակ, սննդի սպառման համար նախատեսված պնակներ ու գավաթներ, սննդաարդյունաբերության հիմնական պարագաներ (ատամնափորիչներ, շերեփներ, ձեռքի կուլտիվատորներ, սալօջախներ), հագուստի արտադրության համար մանող և հյուսող սարքեր, բնակարանաշինության նպատակով աղ-

յուսի և այլ շինարարական նյութերի արտադրություն և այլն: Ասվածին կարելի է հավելել նաև հիմնական դեղամիջոցների ու դպրոցական իրերի արտադրությունը, սակայն, նորից ընդգծենք, չի կարելի հրաժարվել այն տեղական արտադրություններից, որոնք կոչված են ապահովելու ծայրամասերի անխոցելիությունը կենտրոնի ինքնակամ, հաճախ ուղղակիորեն սխալ որոշումներից[5]:

Էներգիայի փոխակերպման սարքավորումների, ինչպես, օրինակ, արեգակնային էներգիայի կամ առավել համալիր բիոզանգվածների փոխակերպիչների արտադրությունը պետք է կազմակերպվի նաև ազգային մակարդակով: Այստեղ մենք բավականաչափ հեռացանք հիմնարար կարիքներից: Սակայն ճիշտ այնպես, ինչպես մարդկային էակներն են դառնում խոցելի, եթե նրանց հիմնարար կարիքները բավարարված չեն տեղական մակարդակում, այդպես էլ տեղական մակարդակն է դառնում խոցելի, եթե հիմնարար կարիքների բավարարմանն ուղղված արտադրության գործիքները մատչելի չեն տեղական մակարդակում: Ասվածը չի բացառում ազգային էներգետիկ բաշխիչ ցանցերի գոյությունն այնքանով, որքանով դրանք հիմնված չեն բնապահպանական տեսակետից անապահով ու վտանգավոր, մասամբ իռացիոնալ, հնաոճ մեթոդների վրա, ինչպես, ասենք, ջերմային կամ ատոմային էներգետիկան:

Նույնը կիրառական է նաև շարժունակության կարիքների համար. խորհրդանշական, որ իրականացվում է խոսքային (բանավոր կամ գրավոր, հեռախոսով, հեռաֆաքսով) հաղորդակցության, և ֆիզիկական՝ տրանսպորտի միջոցով՝ տեղաշարժելով մարդկանց ու ապրանքները: Դրույթ 4-ում կանաչ տնտեսության վրա կենտրոնացումն ամենևին էլ չի նշանակում մարդկանց դատապարտել իրենց ամբողջ կյանքը տեղական համայնքում ապրելու: Սակայն որոշ սարքավորումներ կարող են դուրս մնալ ազգային մակարդակում կազմակերպվող արտադրության շրջանակից: Քանի որ շարժունակության վերոհիշյալ կարիքներն, ըստ էության, շատ մոտ են հիմնարար կարիքներին, ապա համաշխարհային տնտեսության ճգնաժամը հակաարդյունավետ կլինի: Որպես լավագույն փոխզիջում կարող է հանդես գալ արտադրությունը տարածաշրջանային մակարդակում[6]:

Դրույթ 6.

Երրորդ արտադրական գերակայությունն *առնչվում է արտահանմանը. դեպի առավել բարձր C/N (մշակում) մակարդակներ, ինչը ազգային, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում լավագույնս դրսևորվում է դեղին տնտեսության կողմից:*

Հիմնական կանոնն այստեղ. երբեք չարտահանել հումք, անմշակ աշխատուժ, փոխարենը հնարավորինս արդյունավետորեն մշակել բնական հումքը (N), այլ խոսքով՝ օգտագործել մշակվածքը (C)՝ մշտապես ձգտելով C/N հարաբերակցության առավել բարձր մակարդակի: Արտահանմանը միտված պարբերաշրջաններն ու միկրոսխեմաները, բացառությամբ համակարգիչների և այլնի, չպետք է պարունակեն չմշակված մետաղներ[7]: Բայց դա հնարավոր է միայն հետազոտողների, տեխնիկների (բարձր C/N հարաբերակցություն ապա-

հովելու իմաստով) ու բանվորների համագործակցության միջոցով ընդունելի գներով ապրանքների հնարավոր բարձր որակ (բարձր Q/P հարաբերակցություն) ապահովելու նպատակով: Ընկերության ներսում պետք է լինեն պատշաճ «ղեկավար-բանվոր» հարաբերություններ, և պետություն-կապիտալ համագործակցությունը պետք է հասարակության բոլոր ռեսուրսները նպատակաուղղի արտահանմանը՝ ոչ թե համատարած բոլոր հնարավոր ապրանքների, այլ ուշադրության արժանի ու բարձրորակ ապրանքների համար: Սրանք բոլորն էլ դեղին տնտեսության հայտանիշներ են:

Որոշակի միջազգային համագործակցությունը պարտադիր է: Հիմնական փաստարկն այստեղ հետևյալն է. բնականին մոտ և հիմնարար կարիքների բավարարմանն ուղղված ապրանքների արտադրությունը պետք է կազմակերպվի տեղերում, իսկ հաջորդ մակարդակի ապրանքների արտադրությունը՝ ազգային մակարդակում: Ազգային մակարդակում հիմնական վտանգն այն է, որ մեկ կամ մի քանի համայնքներ կարող են գերակա դիրք գրավել ազգային շուկայում: Ազգային զարգացման ճիշտ պլանավորումը պետք է սահմանի կատարյալ պայմաններում երկրի բոլոր մասերի՝ յուրաքանչյուր առանձին համայնքի առանձնակի դերը երկրի զարգացման գործընթացում[8]: Նույն տրամաբանությամբ աշխարհի յուրաքանչյուր երկիր համաշխարհային առևտրի համակարգում պետք է ունենա իր ուրույն դերակատարումը և ոչ թե գործի «համեմատական առավելություն» հորջորջվող՝ աշխատանքի վաղուց հնացած՝ ուղղահայաց, անարդար բաժանման սկզբունքով[9]: Սակայն պետք է փաստել, որ առևտրի համաշխարհային համակարգում առայժմ բացակայում են տնտեսական դերերի արդարացի բաշխման կառույցները, որոշակի իմաստով դրանք առկա են սոսկ տարածաշրջանային մակարդակում:

Ասվածից դարձյալ հառնում է հին հիմնահարցը. «ի՞նչ է զարգացումը»: Այստեղ նշված դիրքորոշումը հետևյալն էր. հիմնարար կարիքների բավարարմանն ուղղված արտադրության կազմակերպում՝ դրանց սպառման շուկաներին հնարավորինս մոտ, այսինքն՝ տեղական մակարդակում[10] (պարզապես մարդկանց և բնության գոյատևման նպատակով): Այս դիրքորոշումն ամենևին էլ ուղղված չէ համաշխարհային առևտրի դեմ, այլ ընդամենը ընդհանուր առևտրի ծավալներում վերջինիս չափաբաժնի նվազեցմանը՝ որոշակի դերակատարում վերապահելով աշխարհի յուրաքանչյուր երկրի՝ աշխատանքի հորիզոնական, արդարացի բաժանման պայմաններում:

Այս տեսանկյունից արդի աշխարհի զարգացումը ճիշտ չէ: Երրորդ աշխարհի երկրներում ազգային արտադրական հնարավորությունները (դեռև՞ս) զարգացած չեն: Ազգային մակարդակում պետություն և շուկա կոչվող կառույցների ձևավորման համար ժամանակ է անհրաժեշտ: Ավելին, տեղական մակարդակն աստիճանաբար քայքայվում է, անգամ ոչնչացվում: Էժանագին ու չնչին արտաքին դրսևորումներ ունեցող ապրանքների համար համաշխարհային տնտեսական պարբերաշրջանների մատչելիությունը խիստ սահմանափակ է. ամայացման դեղատոմս:

Բայց Առաջին աշխարհն էլ ճիշտ չի զարգացել: Ակտիվ մասնակցությունը համաշխարհային առևտրին որոշակի խոցելիության և համաշխարհային իրավիճակից կախվածության սկիզբ է դնում: Ազգային արտադրության ուրվագիծը շարունակաբար դառնում է միակողմանի՝ եթե ոչ գյուղատնտեսական մեկ կուլտուրա կամ մեկ ապրանք թողարկող: Տեղական սպառման ապրանքների տեղական արտադրությունը ծայր աստիճան սահմանափակվում է մրցակցության ընթացքում:

Հետևանքներն ակնհայտ են: Հիմնարար կարիքների պակասը արտացոլվում է հիմնարար շահերի վրա՝ արդեն ազգային մակարդակում և կարող է հանգեցնել ռազմական գործողությունների[11]: Այլ երկրներում հիմնարար կարիքների պակասն այլ հետևանքներ է ունենում. զանգվածային սովահարություն, մասնավորապես բնակչության առավել խոցելի՝ ծերերի ու մանուկների խմբերում: Երկու տիպի հիմնահարցերն իրար չեն բացառում:

Այս պատճառաբանությունը ճիշտ է նաև ոչ նյութական արտադրության համար: Վերջնական արդյունքն այս դեպքում բարձրորակ մասնագետներն են (ուղեղների մշակում) և բարձրարժեք ու հարուստ մշակույթը (գիտություն, գրականություն, արվեստ և այլն): Թե՛ նյութական, և թե՛ ոչ նյութական արտահանումը տեղի ունի հիմնականում C-ում, ավելի քիչ՝ N-ում: C-ի առևտուրը մշակութային փոխանակությունն է. C-ն կամ ամփոփված է համակցված պարբերաշրջաններում ու ականավոր մասնագետների ուղեղներում[12], կամ այն սավառնում է օդում, ինչպես երգը: Եթե N-ի առևտուրն անհրաժեշտ է, ապա այն պետք է կազմակերպվի N-ի դիմաց N սկզբունքով՝ պահպանելով արտաքին դրսևորումների հավասարակշռությունը: Առևտրի կազմակերպման ամենավատ մոդելը N-ի դիմաց C գաղութատիրական սկզբունքն է. մարդկային պատմության ավելի քան 500 տարվա կոլոմբոսյան ժամանակշրջանի հիմնական հայտանիշը: Իսկ եթե հետևենք շվեյցարացիների օրինակին՝ 500 տարին բավական է[13]:

Առևտուրը հաղորդակցություն է, իսկ մշակույթների հաղորդակցությունը տեղի է ունենում շատ ավելի բարձր մակարդակում, քան բնության հաղորդակցությունը: Սրան ավելանում է նաև բնապահպանական փաստարկը. տնտեսական գործունեությունը սկզբունքորեն որքան ավելի մշակութատար է, այնքան ավելի քիչ վտանգ է պարունակում շրջակա միջավայրի համար: Առավել հումքատար գործունեությունը սպառում ու աղտոտում է շրջակա միջավայրը: Մտավորականները կարող են ոչնչացնել անտառն իրենց գրքերը տպագրելու համար, բայց դա ցույց է տալիս, թե մենք դեռևս որքան ամուր ենք կապված հաղորդակցության հումքատար ձևերի հետ: Էլեկտրոնային հաղորդակցությունը մի քայլ առաջ է: Սա ևս մեկ փաստարկ է հօգուտ իրական հատվածի նկատմամբ տնտեսության ֆինանսական հատվածի առավելության: Այն շատ ավելի պակաս թղթատար է և կիրառում է բազմակի օգտագործման պլաստիկ քարտեր՝ էլեկտրոնային հաշվառման եղանակով: Սակայն այդ դեպքում *բոլոր* երկրները պետք է առավել հավասար հիմունքներով ներկայացված լինեն համաշխարհային տնտեսության ֆինանսական հատվածում՝ բացառելով «աշխարհի ֆինանսական մայրաքաղաքների» հայեցակարգի կիրառումը:

Ի վերջո, բնական պաշարները սահմանափակ են մեր ոչ անվերջ աշխարհում, իսկ մշակույթը՝ ոչ: Մշակույթի ու մշակութային փոխանակության համար սահմանափակումներ չկան: Միջին տարիքում մարդն ըմբռնում է այս ճշմարտությունը:

Դրույթ 7.

Հարուստ լինելու համար *անհրաժեշտ է բարձրացնել Q/P (որակ/գին) հարաբերակցությունը, պահպանել կամ բարձրացնել C/N հարաբերակ-*

ցությունը և հետևել տնտեսության ֆինանսական և իրական հատվածների հավասարակշռությանը (Ֆ/Ի): Սա հավասարապես վերաբերում է բոլոր դպրոցներին ու համակարգերին:

Սա անվերջ ջանք է: Հետ ընկնելով Q/P հարաբերակցության աճի տեմպերով՝ մրցակիցն արդեն ծայրահեղ վիճակում է: Հետ ես մնում C/N հարաբերակցության աճի տեմպերով, և հիմնական դրական արտաքին դրսևորումները (նաև որոշ բացասական արտաքին դրսևորումներ) բաժին են հասնում ուրիշներին: Ֆ-ի ու Ի-ի ցանկացած անհամաչափություն հանգեցնում է գերշիկացած կամ թերսառեցված տնտեսության. ընդ որում Ֆ-ն ոչ սպասարկում է Ի-ին, ոչ էլ արտացոլում է այն: Ըստ էության, Q/P հիմնահարցն առնչվում է բանվորների մասնագիտական հմտությունների խնդրին, քանզի նրանք են ամենամոտը կանգնած վերջնական ապրանքներին: Վարժեցրեք բանվորներին փնթի գործ անելուն և նրանք այդպես էլ կվարվեն՝ տալով ոչ պիտանի արտադրանք: Պատիժը չի հապաղի, ինչպես դա այսօր տեղի է ունենում Միացյալ Նահանգներում (չնայած սա այդ մասնավոր տնտեսական համակարգի գրեթե ճգնաժամային վիճակում հայտնվելու բազմաթիվ պատճառներից միայն մեկն է):

Ըստ էության, C/N հարաբերակցության խնդիրը հանգում է գիտնականների ու բարձրորակ տեխնոլոգների օգտագործման արդյունավետությանը. եթե նրանք ընդգրկված են ռազմական ծրագրերում, ուրեմն նրանց նորարարությունները շատ սահմանափակ կիրառություն ունեն քաղաքացիական արտադրության մեջ: Ի վերջո, նրանք կարող են լինել գաղտնի տեղեկատվության կրողներ, և նրանց կարգելվի աշխատել քաղաքացիական արտադրության մեջ: Մեկ այլ հիմնահարց է ԱՄՆ-ի տնտեսությունը:

Ֆ/Ի հարաբերակցության առնչությամբ. ըստ էության, խնդիրն ավելի բարդ աշխատանքի ցանկությունն է՝ համախմբելով արտադրության բոլոր հինգ գործոններն արտադրությանը զարկ տալու նպատակի շուրջ՝ փոխանակ տնտեսության ֆինանսական հատվածում սպեկուլյացիաների միջոցով արագ շահույթի ձգտելու: Դարձյալ Միացյալ Նահանգների անախորժ կացությունը:

Ունեցեք բանվորներից, գիտությունից ու տեխնոլոգիաներից կտրված, բայց կապիտալին ու ղեկավարությանը մոտ կանգնած գերծանրաբեռնված գործադիր տնօրեններ, և վերոհիշյալ երեք հիմնախնդիրներն ավելի կխորացնեն միմյանց:

Դրույթ 8.

Հարուստ մնալու համար *անհրաժեշտ է կատարելագործել արտադրության գործոնների (բնություն, աշխատուժ, կապիտալ, տեխնոլոգիաներ, կառավարում) որակը:*

Օգնեք բնությանը պահպանելու իր բնապահպանական հավասարակշռությունը, կատարելագործեք առողջապահության ու կրթության մակարդակները՝ ձգտելով ավելի բարձր Q/P և C/N հարաբերակցությունների՝ երբեք չմոռանալով, որ ներքևում կրթության ու առողջապահության 50% մակարդակը

նույնքան կարևոր է, որքան դրանց 5% մակարդակը վերևում, հետևեք տնտեսության ֆինանսական ու իրական հատվածների զարգացման համաչափությանը, ներդրումներ կատարեք մարդկային ներուժի ու տեխնիկական ստեղծագործության ոլորտում և ձգտեք կառավարման այնպիսի համակարգի, որի պայմաններում բոլորն ու յուրաքանչյուրն իրենց զգում են ինչպես տանը. գուցե մարդկանց խմբավորելով առավել փոքր խմբերում, առավել լայն ստորակարգության ալֆա կառուցվածքների շրջանակներում գործող հորիզոնական բետա կառուցվածքներում: Իրականում այս բոլորը դեղին՝ ճապոնական տնտեսագիտության հայտանիշներն են: Դրանց մի մասը մատնանշել է Կաման Ակամացուն՝ դարի, թերևս, լավագույն զարգացման տնտեսագետը, ով այնքան էլ հայտնի չէ Արևմուտքում: Ինչո՞ւ չսովորել Ճապոնիայից: Ինչո՞ւ ուրիշներն էլ չեն կարող անել այն (գոնե մասամբ), ինչ արեցին ճապոնացիները՝ իրենց փոքրիկ երկրով իրական մարտահրավեր նետելով համաշխարհային տնտեսությանը:

Այս պնդումն ակնառու տարր է պարունակում: Պարբերաշրջանի մի ծայրում գործոններն են, մյուսում՝ ապրանքները: Դրանք կարող են լինել տարբեր որակի ու մակարդակի: Գործոնների ու ապրանքների որակի միջև առկա է դրական հարաբերակցություն: Ընդունե՛ք ցածր մակարդակի գործոնները նույնքան ցածր մակարդակի ապրանքների հետ համապատասխանեցնելու «հարաբերական առավելությունների» հրավերը՝ պահելով երկուսն էլ ցածր մակարդակի վրա, և դուք կմնաք ցածր մակարդակի վրա՝ միմյանց զորացնող գործոններով ու ապրանքներով: Կայուն պահպանե՛ք գործոնների որակը կամ իջեցրե՛ք այն, և շատ շուտով ձեր ապրանքներն իրենց որակով հետ կընկնեն: Արտադրելով ձեր ներուժից քիչ՝ դուք երբեք չեք ստանա բարձր որակի դրական հակադարձ արդյունք: Կատարելագործելով երկուսն էլ՝ առավել որակական, քան քանակական աճը, դուք կհամոզվեք, որ գործընթացը կայուն է դառնում:

Դրույթ 9.

> Զարգացած մնալու համար *անհրաժեշտ է ներփակել արտաքին դրսևորումները բնության, անհատի, սոցիալական, աշխարհի և մշակույթի հարթություններում այնպես, որ բոլոր հարթություններն էլ ժամանակի մեջ վերարտադրվող (հաստատուն) դառնան:*

Մենք վերադառնում ենք այս գլխի դատողությունների հիմնական գաղափարին. ոչ թե սոսկ աճ, այլ՝ զարգացում: Եթե զարգացումն առանց վնասներ հասցնելու աճն է, ապա պետք է շրջվել բացասական արդյունքներից և բոլոր հինգ տարածքներում հենց ամենասկզբից կառուցել դրական արդյունքներ: Առավել որոշակի՝ սա նշանակում է պահպանել և ձևավորել որքան հնարավոր է շատ ներքին պարբերաշրջաններ, այնպես, որ տնտեսական պատճառի ու բնապահպանական հետևանքի կապն ինքնաբերաբար սկսի գործել, երբ ինչ-որ բան այնպես չէ (օրինակ, թողնել ծխելը): Եվ օգնեք բնությանը կատարելագործվել:

Մարդկային հարթությունում սա ավելին է, քան կրթության ու առողջապահության մակարդակները բարձրացնելը: Յուրաքանչյուրին մարտահրա-

վեր ստանձնելու հնարավորություն ընձեռելն արևմտյան ձեռնարկատիրության ուժեղ կողմերից է այնքան ժամանակ, քանի դեռ այն բավարար չափով ապակենտրոնացված է: Բայց երկնագույնը ձգտում է կենտրոնացման, այնքան, որքան կարմիրը, իսկ դեղինը համակցում է գործընթացները: Հետևաբար, բնության և մարդկային հարթություններում զարգացում ապահովելու համար կանաչ ու վարդագույն տարրերը պարտադիր են: Անհրաժեշտ է նաև շահույթ հետապնդող աշխատանքը տարանջատել ինքնադրսևորման նպատակով կատարվող աշխատանքից: Աշխատանքին ներհատուկ է ստեղծագործությունը: Երբ աշխատանքը դառնում է ծանր, կեղտոտ, ձանձրալի, վտանգավոր կամ քայքայիչ, ապա դա ինչ-որ տեղ դավաճանություն է:

Շարունակենք. փոխանակման հորիզոնական հարաբերություններ ձևավորեք ազգային տնտեսության մեջ՝ տեղական համայնքների միջև ու համաշխարհային մակարդակով և ազգային տնտեսությունների միջև՝ բազմազան, բայց համակցված: Մենք դեռևս շատ հեռու ենք դրանից: 3.2 աղյուսակում նշված ցանկն ակնարկում է երկնագույն տնտեսության վտանգների հետ կապված օրակարգերը: Նույնանման ցանկեր կան կազմված կարմիր և դեղին տնտեսությունների համար, սակայն կանաչն ու վարդագույնը պակաս վտանգավոր են:

Դառնանք մշակույթի հարթությանը: Առաջին գլխում բավական հանգամանալից խոսվեց ագահության ու անխտրականության՝ իբրև տնտեսական աճի գլխավոր նախապայմանների մասին: Երկրորդ գլխում հիմնականում անդրադարձանք (չափազանց) անհատապաշտության, ուղղահայացության, մոնետիզացման, մշակման ու ընդլայնման և այնպիսի հետևանքների (թեման իր զարգացումն ստացավ երրորդ գլխում), ինչպիսիք են գերսպառումը, գերարտադրությունը և դեպի ներս հակվածությունը: Երրորդ գլխում քննարկեցինք իմացաբանական ատոմիզմը (ատոմիստական տեսություն) և արտածականությունը, ծախքեր/օգուտներ վերլուծությունն իբրև մտածելակերպ, միջոցներ-արդյունքներ հակվածությունն ու համաշխարհային մոնոմշակույթը: Եվ այս գլխում (սկսելով երրորդ գլխից) մենք քննարկում ենք մոնոթեիզմը՝ տնտեսության էկլեկտիկ մոտեցման տեսակետից այն հակաբարոյական դիտարկելով:

Բազմաթիվ մշակութային թեմաներ կան, որոնք պետք է զգայուն դարձնել, որպեսզի զարգացումն իրականություն դառնա: Մշակույթն համակցային այն միջավայրն է, մտածողական այն ցանցը, որի մեջ ձևավորվում են մեր միտքը, խոսքն ու գործողությունները: Այսպիսով, համապատասխանությունը *(adequatio)*՝ մշակույթի համապատասխանությունը զարգացմանը, անվերջ բանավեճերի առարկա է: Հենց որ այդպիսի մշակույթը բացահայտվի, տեղի կունենա զարգացում թիվ 1 սահմանման (գլուխ 1) համաձայն, որպես այդ մշակույթի վավերացում, այլ խոսքով՝ որպես մոնոմշակույթ կամ հակազարգացում: Իրական զարգացման համար անհրաժեշտ է նաև անկատարության տարրի առկայությունը:

Մեր ընդհանուր եզրակացությունը զարգացման տեսանկյունից արևմտյանի համեմատ նախապատվությունը տալիս է արևելյան մշակույթին: Այս եզրակացության նախընթացնողական պաշտպանությունը կարելի է փնտրել երկրների համեմատական տարիքում. Արևելյան Ասիայի երկրները երկուերեք անգամ ավելի հին են, քան Արևմտյան Եվրոպայի երկրները: Այլ խոսքով՝ վերարտադրողականության առավել բարձր մակարդակ:

Դա կարո՞ղ է, արդյոք, թերարժեորել արևմտյան դինամիզմը: Գուցե մշակութային համարժեքությունն ունի նույն բանաձև՞ը, ինչ զարգացումը՝ օգտագործելով այդ բոլորը, համակցելով երկնագույնի ու կարմիրի, վարդագույնի ու դեղինի, գուցե նաև կանաչի արժեքները: Գուցե: Գուցե և ոչ: Ուսումնասիրությունները շարունակվում են:

Դրույթ 10.

Եվ երբ/եթե գործընթացը ձախողվում է, երբեք մի հրաժարվեք դրանից, այլ սկսեք նորից, անգամ ամենասկզբից: Եթե այն հաջող ընթացք ունի, դարձյալ սկսեք նորից, այս անգամ արդեն ոչ նյութական ապրանքներից:

Պարզ ասած՝ սա հենց այն է, ինչ ուզում էիք, վայելեք այն՝ մշտապես հսկելով, որ տնտեսությունը չայլասերվի, այլ մնա դինամիկ ու վերարտադրողական: Փոխատեղումը ևս զարգացման բանաձև է: Մի շատ ուսանելի առակ կա օտարերկրյա փորձագետի ու բնիկ տեղացու մասին: Բնիկը սիրում է նստել ծառի հովին ու վայելել բնական մրգեր: Փորձագետն անդադար հորդորում է նրան դրա փոխարեն աշխատել: Բնիկի անընդհատ հնչող «ինչո՞ւ» հարցին փորձագետը պատասխանում է. «Որպեսզի այնքան փող ունենաս, որ ծերության հասնելուց հետո էլ կարողանաս նստել ծառի հովին ու վայելել կյանքը»: Փոխատեղման էթիկան, դինամիզմի էթիկայի նման, չի կարող ընդհանրացվել իբրև համընդհանուր նորմ՝ առանց գաղութացնելու մարդկության կեսը:

Ի հայտ է գալիս մի ընդհանուր բանաձև. *էկլեկտիկությունը:* Եթե մարդկային էակներն իրենց կենսացիկլում բազմազանության վերջավոր ներուժ ունեն ոչ միայն այլոց, այլև իրենք իրենց համեմատությամբ, ապա մենք դատապարտված ենք ձախողման, մինչև հասարակությունը կկարողանա գոնե մասամբ անդրադարձնել այդ բազմաձևությունը[14]: Եթե կոշիկը սեղմում է, ապա այլ չափի կոշիկները պետք է ազատորեն մատչելի լինեն: Այստեղից հետևություն. դպրոցների ստեղծագործական համակցումն ավելի խիստ է, քան դրանց գումարը:

Կանաչը պարտադիր է հիմնարար կարիքների համար, և մենք տարեցտարի դա ավելի ու ավելի լավ ենք ըմբռնում: Երկնագույնն ու կարմիրը չափազանց միակողմանի են ու միաստվածային: Վարդագույնն ու դեղինն ավելի լավն են: Բայց ավելի լավ կլինի մեր հայացքը տարածենք բոլորի վրա, ինչպես դրանք ի հայտ են գալիս հիմնական անկյունագծով (գլուխ 2, հավելված)՝ կանաչը, վարդագույնն ու դեղինը: Թույլ տանք մեկն ու մեկին գտնել իր տեղը ցանկացած պահի՝ հյուսելով իր կյանքի հետագիծը համակարգից դուրս ու ներս և փորձելով անընդհատ գործել բոլոր հինգ հարթությունների տրամաբանությամբ:

Ծանոթագրություններ.

---

[1] Գիտությունը որպես էմպիրիզմի, քննադատականության և կառուցողականության սիներգետիկ համակցություն դիտարկելու գաղափարը տե՛ս՝ Johan Galtung, *Methodology and Ideology,* Copenhagen: Ejlers, 1977, էջ 41-71:

[2] Հնդկական հիմնական աստվածությունները կարող են դիտարկվել հենց այս հեռանկարի տեսանկյունից:

[3] Դեղինի առնչությամբ կարող են լինել և՛ նմանություններ, և՛ տարբերություններ: Դեղինի պարագայում (կենտրոնական) պետությունն ու (կենտրոնական) շուկան շարժվում են համաքայլ՝ համակարգելով ավելի ցածր մակարդակների երկրային ու կորպորատիվ միավորները: Ձևափոխված կարմիրի պարագայում կարող են դեռևս լինել թույլ պետության կողմից համակարգվող բազմաթիվ երկրային միավորներ, բայց կորպորատիվ միավորները կարող են բացակայել: Ռուսաստանի կոնկրետ դեպքում այդ համակարգը կարող էր կիրառվել ռուսական գյուղում՝ ավանդական գյուղական համայնքները ոչնչացնելու, արհեստական համայնքներ ձևավորելու ու դրանք ամենազոր պետության կամքին ենթարկելու փոխարեն հնարավորություն տալով ագարակատերերին գտնել կոլեկտիվ սեփականության ձևավորման իրենց ուրույն եղանակը: Ուժեղ և թույլ սոցիալիզմի այսօրինակ տարբերակումը տե՛ս՝ Johan Galtung, *"Socialism is Dead; Long Live Socialism",* in George Matthew, ed., *Dignity for All, Essays in Socialism and Democracy, Delhi:* Ajanta Books, 1991, pp. 9-15: Այնուհանդերձ, թյուրըմբռնումներից խուսափելու նպատակով, թույլ տվեք ընդգծել՝ համակարգը, որին ես հակված եմ առավելագույնս հավատալու, այս գլխում նկարագրված էկլեկտիկ համակարգն է:

[4] Տեղական կամ ազգային ինքնաապավինման մանրամասները տե՛ս՝ Johan Galtung, *"Self-reliance",* chapter 9.2 in *The True Worlds,* New York, The Free Press, 1980, էջ 398-413; *"Self-Reliance: Concepts, practice and rationale"* in Galtung, O'Brien, Preiswerk, *Self-reliance: A strategy for development,* London: Bogle L'Ouverture, 1980 and *Self-reliance, Beiträge zu einer Entwicklungsstrategie* (Mir. A. Ferdowsi, editor), München: Minerva, 1983:

[5] Ծայրահեղ, բայց աշխարհում միանգամայն իրական դեպքը օտարերկրյա օկուպացիոն ուժերի կողմից ձևավորվող կենտրոնական իշխանությունն է: Որքան կենտրոնացված է համակարգը, այնքան ավելի դյուրին է վերահսկել ողջ երկիրը: Տե՛ս՝ Johan Galtung, *There Are alternatives!,* Nottingham: Spokesman, 1984, chapter 5.4, *"Inner strength: Towards less vulnerable societies"*, էջ 192-198:

[6] Ազատ առևտրի այս գոտիներից, ընդհանուր շուկաներից և այլն, շատերն առկա են արդի աշխարհում միմյանց հետ ազգակցական և/կամ բարիդրացիական հարաբերություններով ենթադրաբար դրականորեն հարաբերվող երկրներում: Սակայն, տնտեսագիտական միտքը միախառնում է տնտեսական գործունեության բոլոր ուղղությունները՝ ձևավորելով աճի միասնական չափանիշ (համախառն ներքին կամ ազգային արդյունք), զարգացման ոչ բավարար տարբերություններ դնելով գոյատևման հիմնարար կարիքների բավարարմանն ուղղված առարկաների և այլ ապրանքների արտադրության միջև. գերակայությունները կարող են սխալ լինել: Կատարյալ պայմաններում տեղական մակարդակը պետք է ապահովի հիմնարար կարիքների բավարարմանն ուղղված ապրանքների արտադրությունը՝ ներառյալ այդ ապրանքների արտադրության միջոցները: Վերջիններս կարող են արտադրվել նաև ազգային մակարդակում: Եթե դա հնարավոր չէ՝ ապա գոնե տարածաշրջանային մակարդակում, բարենպաստ միջավայրում, սահմանների միջով ապրանքների ու գործոնների ազատ հոսքերի պայմաններում:

[7] Բուշի վարչակազմը պնդում է, որ դրամական արժեքի տեսանկյունից, ասենք, միկրոսխեմաների և կարտոֆիլային չիպսերի միջև տարբերություն չկա: Մանկավարժորեն, քննարկումների համար լավագույն մեկնակետ կարող են հանդիսանալ դրական արտաքին ազդակները:

[8] Լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Քվիրոգայի եպիսկոպոսը հետքոնքուիստական Մեքսիկայում, որն իր շրջանի գյուղերի համար սահմանել էր տարբեր գործառույթներ՝ խեցեգործություն, պղնձագործություն և այլն: Զբոսաշրջության համար

արտոնյալ այդ գյուղերում «զարգացման» հաստ շերտի տակ այսօր էլ կարելի է հանդիպել նշված մոդելի մնացորդներին:

[9] Գործնականում սա նշանակում է, որ մի շարք երկրներում կիրառվում են արտադրության խիստ հումքատար և աշխատատար մոդելներ, այլ երկրներում, ընդհակառակը՝ ծախսատար, բարձր տեխնոլոգիաների ու հմուտ կառավարման վրա հիմնված մոդելներ:

[10] Սա ի հայտ է բերում քաղաքներում սննդի արտադրության հետաքրքիր հիմնահարցը, որն ակնհայտորեն պետք է իրականացվի եռաչափ գյուղատնտեսության՝ հիդրոպոնիկայի (բույսերի աճեցումը ջրում կամ ավազի մեջ և ոչ թե հողում) միջոցով՝ հաշվի առնելով սահմանափակ տարածքը: Դեռ երկար ժամանակ կպահանջվի հաղթահարելու համար այն բարդույթը, ըստ որի քաղաքները սպառում են սննդի ապրանքներ, իսկ գյուղը կոչված է այն արտադրելու:

[11] Նավթի՝ «Արևմուտքի հանքերակի» համար մղվող պատերազմները կարող են դիտարկվել որպես ակներև օրինակ: «Յոթ սարի հետևում» չեն նաև ջրի, ինչպես և դեռևս չաղտոտված հողի համար մղվող պատերազմները:

[12] Երկրներից մեկը, որի տնտեսությունը լայնորեն հիմնվում է դրա վրա, Հորդանանն է: Իր աղքատիկ բնական պաշարներով, ավելի քան համեստ արդյունաբերական կարողություններով, բայց հարուստ մարդկային ներուժով (փախստականները), Հորդանանը լուծումը գտավ համալսարանների հիմնադրման, մասնագետների պատրաստման և համապատասխան վճարով հայրենի երկրներ արտահանման մեջ: Ակնհայտ է, որ բժշկագիտության դոկտորն ավելի մեծ եկամուտ կբերի, քան սնագործ բանվորը:

[13] Շվեյցարիայի Հանրապետության 700-ամյա հոբելյանի կապակցությամբ, 1991թվականին, բավական հաճախ լսելի էր *sieben Hundert Jahre sind genug* կարգախոսը, անգամ, եթե դրա իրականացման հեռանկարը միանգամայն մշուշոտ էր: Արդյո՞ք դա ենթադրում էր անդր- և գերազգային կորպորացիաներում ավելի մեծ մասնակցություն: Գուցե Շվեյցարիայի տարրալուծումը տարածքների՞ ու կանտոնների՞:

[14] Վկայակոչված է Սորոկինի հայտնի «սահմանափակումների սկզբունքը» (հասարակության սահմանափակումները անհատական բազմազանության համեմատությամբ). հիմնական դրույթի քննարկումը տե՛ս նրա՝ *Social and Cultural Dynamics,* Boston: Porter and Sargent, 1957 գրքում:

5
Զարգացման տեսություն. հարթություններից անդին մոտեցում

5.1 Զարգացման տեսության ճգնաժամը

Զարգացման տեսությունն, ըստ էության, մարդկության վիճակի մեկնաբանության առավել *հոլիստական* մոտեցում է, հետևաբար և, համաձայն սահմանման, *դինամիկ*: Զարգացման տեսությունը հոլիստականությունը կիսում է խաղաղության, շրջակա միջավայրի պաշտպանության, ապագայի, կանանց խնդիրների ուսումնասիրությունների հետ, որոնք բոլորն էլ համեմատաբար նոր են և բոլորն էլ ի հայտ են եկել իբրև փոխազդեցություն ընդդեմ մարդկային պայմանի ուսումնասիրությունների հատվածականացման՝ ըստ մասնագիտությունների ու գիտության ճյուղերի (միաժամանակ տարակարգելով դրանց հետևորդներին):

Սակայն պրակտիկան ցավալիորեն տարբեր է: Հոլիստականության փոխարեն այն կենտրոնանում է մարդկային գոյության զուտ *սոցիալական* (էնդոգեն իմաստով) հարթության բացառապես *տնտեսական* խնդիրների վրա, իսկ դինամիզմի փոխարեն այն կենտրոնանում է որոշակի հասարակությունների մրցակցային ունակությունների վրա՝ պահելով դրանք «զարգացած»: Այս զարմանալիորեն համառ մոտեցումն անտեսում է *բնության* հարթությունը, իր իսկ՝ բնության զարգացման համակարգը կամ գոնե այն հավասարակշռությունը, որտեղ մարդկային պայմանը բացարձակորեն նախասահմանված է. այն անտեսում է (ներքին) *մարդկային* հարթությունը մտավոր/հոգևոր զարգացման համար, ինչպես նաև սոցիալական հարթության այլ ասպեկտները, այդ թվում՝ հակամարտող ու համագործակցող տարածաշրջանների ու երկրների, կորպորացիաների, կազմակերպությունների ու ասոցիացիաների *աշխարհի* ողջ հարթությունը:

Աշխարհի հարթության անտեսումը հանգեցրել է տեսության անհեթեթությունների. եթե բոլոր երկրներն ունեն առևտրի համընդհանուր ավելցուկ և, ընդհանուր առմամբ, դրական հավասարակշռվածություն, ապա հիմնահարցեր, ակնհայտորեն, կան ամենուրեք: Ընդհանրապես, կարծես ոչ ոք հոգ չի տանում այն մասին, թե արդյո՞ք «զարգացած» հասարակություններն համաշխարհային հարթության վրա իրար հետ մրցակցող են, թե՞ ոչ:

Եվ միայն վերջերս ժամը հասավ՝ կայունության զգեստ հագած: Ինչ վերաբերում է մշակույթին, ապա տնտեսական աճի առումով «լավ» մշակույթներն ինքնըստինքյան «լավն» են նաև զարգացման տեսանկյունից:

Մեզ մնաց զարգացման «տեսությունը», որն անկարող է բնապահպանական անհավասարակշռությունները կանխատեսել, անկարող է հաշվի առնել արդիականացման ախտերը, որ կարող են վնասել մարդու *մարմինը* (սրտանոթային հիվանդություններն ու չարորակ ուռուցքները), *միտքը* (ուղեղի խանգարումներ) և *հոգին* (ունայնության ընդհանուր զգացողությունը), անկարող է լուծել համաշխարհային ու սոցիալական սխալ զարգացումների հիմնահարցը

(հայրիշխանություն, բյուրոկրատացում, ռազմականացում և «բարձրագույն ճնշման» այլ դրսևորումներ, ընդհանուր, աղաղակող անհավասարությունների մասնակցության սահմանափակումներ): Խնդիրն այստեղ այն չէ, որ պրակտիկան ի զորու չէր լուծելու այս հիմնահարցերը, ավելի շուտ հիմնահարցերը չեն կարողացել հարմարեցվել տեսության՝ ճգնաժամով համակված բնույթի հետ:

Սրանից, բնականաբար, հետևում են այլընտրանքային տեսության կամ տեսությունների մասին մտորումները: Այն պիտի պարունակի նախկինից բացառապես տարբեր մոտեցումներ, որտեղ, օրինակ, Հնդկաստանը հանկարծ առանձնանում է՝ իբրև հիմնական խնդիրներում շատ ավելի բարձր զարգացած, քան, ասենք, Նորվեգիան, չնայած վերջինս շատ ավելի հարուստ է մեկ շնչին ընկնող պայմանական (բոլորի կողմից ընդունված) տնտեսական ցուցանիշների առումով (բայց ոչ հարստության այն հայեցակարգի տեսանկյունից, որ կքննարկվի ստորև):

5.2 Փոխազդեցության չորս հարթությունները և միաձևության ենթադրությունը

Ըստ մեր կողմից առաջ քաշված ենթադրության՝ զարգացման տեսությունը հոլիստական է և ձևակերպված է այնպես, որ ծածկի փոխազդեցության չորս հարթությունները՝ *բնության, մարդու, սոցիալական և աշխարհի* (*ժամանակի ու մշակույթի* հարթություններին կանդրադառնանք հաջորդիվ): Մենք նաև ենթադրեցինք, որ զարգացման տեսությունը դինամիկ է՝ այն մեկնաբանելով իբրև մարդկային և այլ կենսապայմանների բարելավմանն ուղղված փոփոխություններ, բայց, որպես այդպիսին, մենք չսահմանեցինք, ի՞նչ է «լավը» և ի՞նչ է «վատը», բացառությամբ, թերևս, վերացարկման և ընդհանրացման շատ բարձր մակարդակում արվածի: Այլ խոսքով, հոլիզմը, դինամիզմն ու բարելավումը մենք դիտարկեցինք իբրև զարգացման տեսության ուղենիշ:

Դիտարկելով փոխազդեցության չորս հարթությունները՝ մենք տեսնում ենք, որ մոտեցումների պակասություն չկա: *Բնության* հարթության համար առկա է բնապահպանական հավասարակշռության մի ամբողջ դպրոց: *Մարդու* մարմնի համար գոյություն ունեն ֆիզիկական ու մտավոր առողջության պահպանմանն ուղղված բժշկական, ինչպես նաև հոգևոր առողջությանն ու հոգու փրկությանն ուղղված կրոնական ավանդույթներ: *Սոցիալական* հարթության մեջ առկա են սոցիալական կառուցվածքի, մշակույթի ու գաղափարախոսության մեջ ներփակված սոցիալական բարելավման ծրագրեր: Ի վերջո, *աշխարհի* հարթությունում առկա են մարդկային էության և քաղաքակրթությունների սոցիալական տիեզերաբանության մեջ ներփակված ծրագրեր: Բայց համաշխարհային հասարակության համար, որպես այդպիսին, ծրագիր գոյություն չունի: *Աշխարհի հարթությունը* կամ խաղաղության հաստատման հիմնական ասպարեզը դեռ պետք է ծածկվի իր էությամբ աշխարհի հարթության մակարդակում *sui generis* հանդիսացող տեսության ցանցով, որը նաև չպետք է կրճատողականության դրսևորում դառնա սոցիալական, մարդու և/կամ բնության հարթությունների համար: Այս ամենն, իհարկե, պետք է ներառվի զարգացման տեսություններում, միայն թե աշխարհի մակարդակը պետք է ունենա վճռական դերակատարում:

Պատկերացրեք, որ մենք, որպես մեկնակետ, ենթադրում ենք, որ չորս հարթությունների հավասարակշռության տրամաբանության մեջ առկա են որոշակի նմանություններ, և որ հավասարակշռությունը զարգացման հայեցակարգի առնվազն հիմնական բաղադրիչն է: Հավասարակշռությունն առնչվում է *ինքնագոյացող վերարտադրությանը*, այլ խոսքով՝ մի գործընթաց է, որ անընդհատ շարունակվում է սեփական ներքին շարժիչների հաշվին: Այդժամ մենք ունենք երկու հնարավորություն՝ օգտագործել միայն *մեկ* հարթության վրա հիմնված հավասարակշռության տեսությունը կամ զարգացնել բոլորովին նոր ընդհանրական համակարգային տեսություն, որը ծածկում է *բոլոր* հարթությունները որպես «համակարգեր»: Երկու մոտեցումներն էլ իմաստ ունեն, բայց այստեղ ես կօգտագործեմ առաջինը՝ փորձելով հարստացնել այն վերջինից բխող մի շարք հայեցակարգերով: Այստեղից երկրորդ հիմնական հարցն է ծագում՝ ո՞ր հարթությունից մենք պետք է սովորենք:

Բնության հարթությունից սովորելու երեք հստակ պատճառները.

1. *Բնությունը գոյություն ունի շատ ավելի վաղուց, քան մարդկությունը:* Ընդհանուր առմամբ, բնությունն, իհարկե, ենթարկվել է փոփոխությունների ու բազմազանության՝ էվոլյուցիայի ընթացքում ձգտելով առավել բարձր ձևերի. մենք՝ մարդ էակներս, ինքներս մեզ շնորհել ենք «բարձրագույն» տիտղոսը: Հետևաբար, պետք է առկա լինի որոշակի անկապտելի «բնական իմաստություն», որպես հոլիզմի, դինամիզմի ու կայունության ուսումնասիրության աղբյուր:
2. *Բնության հարթությունը հիմնական է, բոլոր մնացած հարթությունները կախված են դրանից:* Ի հակադրություն դրա, բնությունը կարող է գոյատևել առանց մարդկային էակների՝ ներառյալ նրանց սոցիալական ու աշխարհի հարթությունները: Մենք կախված ենք բնությունից, բայց բնությունը մեզնից կախված չէ: Մենք անգամ ոչնչացնում ենք բնությունը, ինչպես վկայում են ներկա բնապահպանական ճգնաժամերը, բայց առավել ուժգնությամբ, քան բնությունն է ոչնչացնում մեզ (տարբեր բնական աղետների հետևանքով): Տիեզերական ողջ բնապահպանական պարբերաշրջանը որպես հիմք ներառում է կոսմո-, ատմո-, հիդրո-, լիթո- և բիոսֆերաները, ինչպես նաև հոմոսֆերան՝ որպես բարձր ծախսատար, և կոսմոսֆերան՝ որպես համաձայնեցնող էություն:
3. *Թերևս բնության մեր ներըմբռնումն ավելի խորն է, քան մեր սեփական «ես»-ի:* Մեր և բնության մնացյալ մասի միջև գոյություն ունի տարածություն, որը հեշտացնում է վերացարկումն ու ընդհանրացնում է մտավորը: Ապրիորի մենք կարող ենք ենթադրել մնացած երեք տարածքների նույնիսկ ավելի խորը ներըմբռնում, քանզի մենք դրանց մեջ ենք, դրանցն ենք ու դրանցով ենք: Բայց հենց այդ պատճառով էլ շատ ավելի դժվար կլինի հատելով անցնել այդ տարածությունը՝ հասնելու համար որոշակի շահավետ համընդհանուր հայեցակարգայնացման: Մենք չափազանց մոտ ենք, որ կարողանանք տեսնել ինքներս մեզ, չափազանց շատ ենթակայական արժեքներով ու շահերով ենք ցանկապատել ինքներս մեզ: Ավելին, գուցե բնական գիտություններով զբաղվող այրերն ավելի լա՞վ են խաղում գիտություն կոչվող այդ խաղը, քան հումանիտար ու հասարակական գիտություններով զբաղվողները:

Այդուհանդերձ, երբ բնության հարթությունն այս համատեքստում նշված երեք պատճառներով մնացած հարթությունների զարգացման համար օգտագործվում է իբրև մոդել, դա միայն *մեկ* հնարավոր մոտեցում է, ինչ-որ բան դեռ պետք է փորձարկվի՝ էվրիստական մեթոդով գալով վերարտադրողականության-կայունության պայմանների ըմբռնմանը:

5.3 Հարթություններ և ենթահարթություններ

Մեկնակետը բնապահպանական հավասարակշռության ընդհանուր տեսությունն է՝ *բնության հարթությունում* ներառելով ոչ միայն կենսոլորտը (ատմո-, հիդրո- և լիթոսֆերաները), այլև ֆլորան ու ֆաունան (միկրոօրգանիզմները, բույսերն ու կենսոլորտի կենդանիները): Բնապահպանական հավասարակշռությունը կարելի է դիտարկել որպես *բազմազանության* ու *սիմբիոզի* վրա հիմնված և շատ ավելի ամուր, քան կենսաքայքայիչ *անտիբիոզն* է: Սրանում որոշակի հավանականություն կա: Եթե բնության հարթության բաղադրիչ մասը բավարար բազմազանություն է հանդես բերում կենդանի և անկենդան բնության մեջ (ներառյալ տիեզերական, մասնավորապես, արևային էներգիայի մատչելիությունը), և եթե այս բազմազանությունն իրացված է համակցության ճանապարհով, իրար հետ առնչվող և փոխհամագործակցող մասերով՝ փոխանակման պարբերաշրջաններում ձևավորելով նոր ֆլորա և ֆաունա, ապա արդյունքում որոշակի ժամանակ անց պետք է արձանագրվի որոշակիորեն կայուն հավասարակշռություն:

Սա հավանական է նաև այն պատճառով, որ հստակորեն ցույց է տալիս, թե ինչպես կարող է համակարգը փլուզվել բնության հարթությունում բազմազանության պակասության (կենդանի և անկենդան բնության կարիքներն այլևս հասանելի չեն) կամ համակցային մեխանիզմների սխալ գործունեության հետևանքով: Առաջինը տեսանելի է բազմակուլտուրային գյուղատնտեսության մեջ, որի գոյությունը պետք է պահպանվի արհեստականորեն՝ բազմազանության (հավասարակշռության նպատակով) ներարկման ճանապարհով, (արհեստակա՞ն) պարարտանյութերով ու (թունավոր) պեստիցիդներով: Երկրորդը նկատելի է «միջուկային ձմեռվա» դեպքում, որի հիմնական ենթադրությունը հետևյալն է՝ մթնոլորտը պատվում է ամպերով, ինչի հետևանքով կոսմոսֆերայի հետ փոխազդեցությունը նվազում է այն աստիճանի, որ բնության հարթությունում սիմբիոզը՝ *ֆոտոսինթեզը,* այլևս չի գործում: Նույն արդյունքին է հանգեցվում օզոնային շերտի բարակելը միայն հակառակ մեխանիզմով՝ տիեզերական էներգիայի չախազանց մեծ ծավալներով:

Մենք պետք է դիտարկենք բազմազանության ու համակցության համատեղ գործառույթը՝ իբրև *համակարգի կատարելություն:* Բոլոր չորս հարթությունների հիմնական գիծը պատկերված է աղյուսակ 5.1-ում:

Բոլոր չորս հարթությունների գլխավերևում ընթերցողը կարող է տեսնել ինը գլխագիր, որոնցից առաջին երկուսն արտացոլում են չորս հարթություններն ու ենթահարթությունները: Բնության հարթության առկա ենթաբաժանումն ակնհայտ է: Հետո գալիս է *մարդու հարթությունը*՝ բաժանված երեք մասի. միտք, մարմին և հոգի: *Միտքը* դիտարկված է որպես սեփական «ես»-ի և այլոց հույզերի, ցանկությունների ու իմացության, այլ խոսքով՝ ինքնաար-

տահայտման կենտրոն: Սկզբունքորեն, այն պետք է նաև ներառի արտացոլման՝ սեփական կարողության արտացոլումը, այսինքն՝ ինքնարտացոլումը, ինչպես նաև ինքնարտացոլման արտացոլումը, այսինքն՝ փիլիսոփայությունը:

Աղյուսակ 5.1. Զարգացման նպատակներն ու գործընթացները. համակարգային մոտեցում

Հարթությունը	Բնության	Մարդկային	Սոցիալական	Աշխարհի
Ենթահարթություն	Կոսմոսֆերա Աթմո-, հիդրո-, լիթոսֆերա Բիոսֆերա	Մարմին-սոմա Միտք-հոգեվիճակ Ոգի-հոգի	Միկրո-հիմնական Մեզո-երկրորդական, տեղական Մակրո-երկրորդական, ազգային	Տարածաշրջանային Աշխարհի
Կոդ	Գենետիկ կոդ	Գենետիկ կոդ Անհատականություն	Կառուցվածք Մշակույթ	Տիեզերաբանություն Աշխարհի/մարդկային տիեզերաբանություն
Համակարգի սպասարկում (ըստ սահմանման)	Կենսա-կարիքներ	Ֆիզիկական *կարիքներ* Հոգևոր *կարիքներ*	Սոցիալական *շահեր*	Տարածաշրջանային *շահեր* Աշխարհի *շահեր*
Համակարգի կատարելություն (բազմազանություն համակցության հետ)	Մի քանի *բիոտոպներ* և փոխանակման պարբերաշրջաններ	Մի քանի *հոմոտոպներ* և փոխանակման պարբերաշրջաններ	Մի քանի *սոցիոտոպներ* և փոխանակման պարբերաշրջաններ	Տարբեր համակարգերի ակտիվ, խաղաղ համատեղ գոյություն
Վերարտադրություն (ամբողջականության վրա հիմնված)	Վերականգնվող վերարտադրություն	Վերարտադրություն	Վերակառուցում	Վերակառուցում
Առաձգականություն				
բռնության նկատմամբ	Հարված կարիքներին	Հարված կարիքներին	Հարված շահերին	Հարված շահերին
շահագործման նկատմամբ	Հարված վերարտադրության ունակությանը	Հարված վերարտադրության ունակությանը	Հարված վերակառուցման ունակությանը	Հարված վերակառուցման ունակությանը
Սպասարկման նպատակ	Բնապահպանական հավասարակշռություն	Ինքնադրսևորում	Զարգացում	Խաղաղություն

Կոմպլեքսայնությունն է կազմավորում *անհատականությունը*: Այստեղ ամենևին էլ պարտադիր չէ պարզ պատկերացում ունենալ այն մասին, թե որոշակիորեն որտեղո՞վ է անցնում հոգու և ոգու բաժանարար գիծը, կամ արդյո՞ք, զուտ ֆիզիկական իմաստով, անհատականությունը ներառում է նաև մարմնի հայտանիշը: Միակ փաստարկն այն է, որ վերջինս բնության հարթության բաղկացուցիչն է:

Սոցիալական հարթությունում անհրաժեշտ է տարանջատել միկրո, մեզո և մակրո մակարդակները: Միկրոն անհատին շրջապատող փոքր խումբն է՝ սովորաբար հիմնված ազգակցության ու ընկերության վրա, այլ խոսքով՝ հիմնական հարաբերությունները: Որպես մեզո կարող են հանդես գալ տեղական մակարդակով սոցիալական միավորումները, որ սովորաբար խարսխված են սոցիալական բնույթի արժեքներով և/կամ շահերով: Մակրոն ի հայտ է գալիս ազգային մակարդակում՝ երկրորդային հարաբերությունները, մարդկանց դասակարգումն ըստ սեռի ու սերնդի, ռասաների ու խավերի, ազգության ու բնակության վայրի:

Ի վերջո, *աշխարհի հարթությունը*՝ որպես բոլոր տիպի սոցիալական հարթությունների փոխազդեցություն: Ազգ-պետություն իմաստով հիմնական ուշադրությունը պետք է դարձնել մակրոսոցիալական հարթություններին: Սա անժխտելիորեն կարևոր է, բայց բաց է թողնվում բոլոր միջազգային, ազգամիջյան ու ենթազգային տնտեսվարող համակարգերի կողմից, որոնք միաժամանակ գործում են նաև աշխարհի հարթության մեջ: Հայեցակարգը պետք է բաց պահել: Այդուհանդերձ, անկախ տնտեսվարման համակարգի ձևից, իմաստ ունի տարբերակել բոլոր տիպի տնտեսվարող համակարգերը պարփակող համաշխարհային համակարգը՝ ենթահամակարգերից բաղկացած տարածաշրջանային համակարգից, որովհետև կոդը կամ թաքնված օրակարգը կարող է շատ ավելի հոմոգեն (միատարր) լինել տարածաշրջանային մակարդակում: Իրականում, մշակութային առումով, տարածաշրջաններն այսօր բյուրեղանում են:

5.4 Զարգացման նպատակներն ու գործընթացները. համակարգային մոտեցում

Կոդերը: Երկրորդ տողում մարդկային էության բարդության խիստ պայմանական ստորակարգությունն է, սկսած տիեզերքից՝ առանց մարդկային էակների, տիեզերական էներգիայից ու արևային անձրևներից ու վերջացրած չափազանց բարդ աշխարհի համակարգերով: Դա նույն չինական արկղերի ստորակարգությունն է. բավական է մեկը բացեք, և դրա ներսում դուք կգտնեք հաջորդ մակարդակին հասնելու ճանապարհը, և այդպես շարունակ: Բայց յուրաքանչյուր հարթություն նավարկում է իր ուրույն տրամաբանությամբ, յուրաքանչյուր հարթություն ունի երրորդ տողում նշված իր *կոդը* կամ *ծրագիրը:* Ծրագրերը փոխակերպումների կանոններն են, որ տվյալ հարթության գործընթացները սահմանում են իբրև նպատակամետ էություններ՝ միանգամայն բարդ հակադարձ հարաբերություններով:

Այսպիսով, կենսոլորտի ցանկացած օրգանիզմ *բնության* հարթությունում գենետիկ կոդի կրող է, որը կարող է փոխանցվել վերարտադրության գործընթացում: Գենետիկ կոդը սահմանում է տիպերի վերին և ստորին սահման-

ները բազմազանության, կոմպլեքսայնության և այլ առումներով: Սա վերաբերում է նաև մարդկային էակների ֆիզիկական հնարավորություններին: Ի հավելումն դրա, մարդկային էակներն ունեն նաև անհատականություն, որը կարող ենք ձևակերպել որպես ոչ ֆիզիկական հայտանիշի կոդ՝ ամփոփելով այն «անհատականություն» բառի մեջ: Սա հենց այն է, ինչը հնարավորություն է տալիս մեզ տարբերակել մի անհատին մյուսից, քանզի անհատականությունը մնում է քիչ թե շատ հաստատուն, եթե անգամ մարդու վարքագիծը, նույնիսկ արտաքինը փոփոխվում է՝ կախված, ասենք, եղանակից, առավոտյան տեղի ունեցած իրադարձություններից, գիշերվա կերակուրներից, ինչից ասես: Մարդ անհատի հոգևոր կարողությունների դրամատիկ հայտանիշը սեփական անհատականության վրա ներգործելու, անգամ հոգևոր ձևափոխության միջոցով այն փոփոխելու կարողությունն է:

Ապա գալիս է *սոցիալական հարթությունը:* Կոդն այստեղ, թվում է, ներառված է կառուցվածքի ու մշակույթի մեջ ծպտյալ կերպով, որպես ծրագիր, ինչպես նաև գաղափարախոսության մեջ՝ ակնհայտ կերպով («ակնհայտ» այստեղ նշանակում է «վանկարկված»):

Աշխարհի հարթությունում այս ամենն ավելի բարդ է ու խճճված, քանզի մենք գործ ունենք շատ ավելի մեծ համակարգերի՝ սոցիալական հարթությունից բերված և իրար հետ համատեղված բազմաթիվ երևույթների հետ: Այս մակարդակում իմաստ ունի խոսել խորը կառուցվածքի ու խորը մշակույթի մասին՝ ընդգծելով, որ կառուցվածքային ու մշակութային տարրերն ընդհանրության մեջ են և կիսվում են տարածաշրջանի տարբեր հասարակությունների ու համակարգերի կողմից: Դրանք կարող են դիտարկվել որպես «խորը գաղափարախոսության» արտահայտություն, որ կոչվում է *տիեզերաբանություն,* այլ կերպ՝ «քաղաքակրթության անհատականություն»: Այստեղից հարց է առաջանում. կիրառելի՞ է արդյոք կոդ կոչված հասկացությունը ամբողջ *աշխարհի* հարթության համար, որ պարփակում է ամեն ինչ. բոլոր մարդ էակների համար ընդհանուր գենետիկ կոդի մարդկային խորագույն գաղափարախոսություն:

Սպասարկումը: «Համակարգի սպասարկումը» սյունակի երկու հիմնական հայեցակարգերն են՝ «կարիքները»՝ *բնության* և *անհատի* հարթությունների համար, և «շահերը»՝ *սոցիալական* և *աշխարհի* հարթությունների համար: Համակարգի սպասարկման տեսանկյունից մենք կսահմանենք դրանք իբրև *conditio sine qua non*[i]*:* Եթե օրգանիզմի կարիքները չեն բավարարվում, ապա օրգանիզմը կազմալուծվում է. սա հավասարապես վերաբերում է նաև մարդ էակներին: Մեր կարիքները, թերևս, լավագույնս կընկալվեն մարդ էակի՝ իբրև կենսաբանական օրգանիզմի, կառուցվածքն ու գործառույթն ուսումնասիրելու դեպքում (անատոմիա, ֆիզիոլոգիա)՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարմնի կարիքներին, ներառյալ մաշկը (անհրաժեշտ է օդի, ջրի ու սննդի ներարկում, արտաթորում, զգացական տպավորությունները պետք է մուտք գործեն, իսկ մտավոր արձագանքներն ազատորեն դուրս հորդեն, պետք է տեղի ունենան սեռական հարաբերություններ և ապահովվի ծնելիությունը, եթե ոչ այլ, ապա գոնե միայն այն պատճառով, որ դրանք մարդկային մարմնի գործառույթներ են) և այլն: Առկա են քնի ու հանգստի, նաև՝ աշխա-

[i] conditio sine qua non (լատ.)- անհրաժեշտ պայման, առանց որի հնարավոր չէ երևույթը /թարգ./

տանքի կարիքները: Այս ցանկը կարելի է երկար շարունակել: Նայեք այդ ցանկին և մինուսներ դրեք ցանկի մեկ կամ մի քանի դրույթների առջև և կստանաք ցավ պատճառող միջոցները, որ միանգամայն հայտնի են սոցիալական բոլոր ենթահարթություններում կտտանքներ ու պատժամիջոցներ կիրառողներին ու անհիշելի ժամանակներից ներառում են այն, ինչ ծնողներն են իրականացրել իրենց զավակների և տղամարդիկ՝ կանանց հանդեպ:

Մարդ էակների այս կենսաբանական կարիքները կարելի է դասակարգել երկու խմբի: Առաջին՝ *գոյատևման* կարիքներ: Անհատական մակարդակում սա նշանակում է տեղի չտալ բռնությանը (ուղղակի կամ կառուցվածքային), կոլեկտիվ մակարդակում նշանակում է, որ մարդկային ցեղը պետք է շարունակվի: Առկա են նաև գոյատևման կարիքներից առավել բարձր կարիքներ, անվանենք դրանք մարդկային *բարեկեցություն,* ինչն, ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանման, առողջության հիմնական բաղկացուցիչ մասն է:

Այսպիսով, ակնհայտ է, թե ինչպես են այս բոլորը կախված բնությունից: Բնությունն այն հարթությունն է, որտեղ մենք հանգստանում ու գործում ենք: Բնությունը մեզ տրամադրում է անհրաժեշտ բոլոր նյութերն ու ստանում է (փոխակերպում է) մեր գործունեության արդյունքի մի մասը: Մարդ էակներին իբրև տանտեր հյուրընկալելու համար բնությունը պետք է խիստ լինի, մասնավորապես, երբ մարդիկ իրենց դրսևորում են որպես ձրիակերներ: Եվ քանի որ մարդիկ անհատականությամբ օժտված կենսաբանական օրգանիզմներ են, բացի կենսաբանական կարիքներից նրանք ունեն նաև այլ կարիքներ, որոնք անհամատեղելի են բնության հարթության (որտեղ նրանք զետեղված են) կայունության հետ, ինչն էլ հանգեցնում է բնության շահագործմանն ու նվաճողականությանը:

Գալով մարդու հոգևոր կարիքներին՝ կարելի է կիրառել հնարավոր դասակարգումներից հետևյալը՝ ըստ *ինքնության* կարիքներ և ըստ *ազատության* կարիքներ: Դիալեկտիկական առումով դրանք առնչվում են իրար: Ինքնության կարիքները պահանջում են որոշակի հաստատագրված մեկնակետ, կորիզ, որի շուրջն անհատը կարող է կառուցել և ընդլայնել միասնություններ իր սեփական «ես»-ի (զուտ կենսաբանական օրգանիզմից դուրս) շրջապատում: Ազատության կարիքները պահանջում են տարածություն, ֆիզիկական, հոգեբանական ու հոգևոր շարժունակություն, միասնությունների ընտրություն: Գուցե ազատության կարիքներն ընդգրկում են նաև *սեփական «ես»-ից փախչելու,* այսինքն՝ սեփական անհատականության մեջ զետեղված կոդերն ու ծրագրերը ժամանակ առ ժամանակ փոփոխելու՞ կարիքները:

Քննարկման հաջորդ բարդ խնդիրը *շահերն* են *սոցիալական* և *աշխարհի* հարթություններում: Ինչո՞վ կարող են արտահայտվել սոցիալական համակարգի կամ սոցիալական համակարգերի համակարգի շահերը, անկախ այն բանից՝ վերջինս հանդես է գալիս տարածաշրջանայի՞ն, թե՞ միջազգային մակարդակով: Ո՞վ կարող է այսօր ձևակերպել, օրինակ, «ազգային շահերը»: Չանսալով ծավալված երկար բանավեճին՝ դիրքորոշումն այստեղ հետևյալն է. *սոցիալական համակարգն ունի մեկ օրինական շահ՝ բավարարել իր անդամների հիմնարար՝ կենսաբանական ու ոչ կենսաբանական կարիքները:* Եվ ովքե՞ր են այդ անդամները. միայն մարդ էակնե՞ր, թե՞ նաև այլ կենսաբանական օրգանիզմներ: Բոլո՞ր կենդանիները, թե՞ դրանց մի մասը միայն: Այս հարցերին ես պատասխան չեմ ակնկալում, բայց զգում եմ, որ դրանք երբեք

դուրս չեն գա ցանկացած խաղաղ ու զարգացած հասարակության օրակարգից:

Շահերի վերածումը կարիքների խորթ չէ նաև առավել համալիր հարթություններին և, ընդհանրապես, աշխարհի հարթությանը: Գլոբալ շահը *իր* անդամների կարիքների բավարարումն է, իսկ այդ անդամների շահն *իրենց* անդամների կարիքների բավարարումն է: Բայց քանի որ այս վերջինն ակնհայտորեն կախված է բնության հարթությունից, որն անվերջ չէ, ապա առկա են բոլոր օրգանիզմների կենսաբանական կարիքների որոշակի սահմանափակումներ: Եվ քանի որ օրգանիզմների կարիքներն էլ կախված են անկենդան բնությունից, գոյություն ունի դրանց ոչնչացման աստիճանի սահմանափակում: Ի վերջո, մենք ամենքս կախում ունենք բոլոր չորս հարթություններից բաղկացած գերհարթության բնապահպանական հավասարակշռությունից: Այլ խոսքով՝ բնության գերակայությունից:

Կատարելությունը: Հինգերորդ՝ «համակարգի կատարելությունը» տողում տեղի ունի հետևյալ կարևոր ենթադրությունը. համակարգի կատարելությունը կախված է բազմազանության մակարդակից, ինչպես նաև այդ բազմազանությունը կազմող բաղկացուցիչների միջև առկա համակցության աստիճանից: Որքան բարձր է համակարգի կատարելության մակարդակը, այնքան ավելի առաձգական է համակարգը, այնքան այն ավելի ունակ է վերարտադրության թե՛ ինքն իրեն սպասարկելու և թե՛ նոր սերունդներ ձևավորելու կամ զանազան վնասվածքներին դիմակայելու, անգամ համակարգի կատարելության պայմանների շրջանակում սեփական նպատակների սահմանման առումով:

Բոլոր հարթություններում սա կոչվում է տիպերի բազմազանություն և համակցություն: Եկեք այս տիպերն անվանենք *բիոտոպ* բնության հարթությունում, *հոմոտոպ*՝ անհատի և *սոցիոտոպ*՝ սոցիալական ու աշխարհի հարթություններում: Հետևենք չինական արկղերի տրամաբանությանը. աշխարհի հարթությունը չափազանց հարուստ սոցիոտոպ է, բայց որևէ այլ աշխարհի հետ չի գտնվում փոխազդեցության մեջ (այլապես հարկ կլիներ խոսել *մունդոտոպների* մասին): Սոցիոտոպի ներսում կան սոցիալական համակարգեր, որոնք կարող են լինել միևնույն կամ տարբեր սոցիոտոպների օրինակներ, ինչպես նաև միևույն կամ տարբեր տիպի, բայց կոմպլեքսայնության ավելի ու ավելի ցածր մակարդակների սոցիոտոպներ, այնքան, մինչև մենք իջնելով կհասնենք հոմոտոպին՝ մարդ էակներին, որոնք կարող են լինել կամ չլինել միևնույն կամ տարբեր տիպերի, ինչպես նաև իրենց ներսում կարող են պարունակել կամ չպարունակել միևնույն կամ տարբեր տիպերի հոմոտոպներ կամ հակումներ՝ քիչ թե շատ զարգացած հակամետություններ:

Այսպես, մի կողմից մենք կարող ենք պատկերացնել բացառապես միևնույն տիպի, միևնույն քանակի (կամ ավելի պակաս) բաղկացուցիչների վրա հիմնված, բացառապես միակերպ, իրենց ներսում ճիշտ նույն հակումները զարգացնող մարդ էակներով բնակեցված մի շարք հասարակություններից կազմված աշխարհի հարթություն: Մյուս կողմից, մենք կարող ենք պատկերացնել իրենց ներսում խիստ բազմազան և միմյանց հետ փոխազդեցության առավելագույն բարդ պարբերաշրջաններում գտնվող բաղկացուցիչներ պարունակող, իրենց ներսում բազմաբնույթ հակումներ զարգացնելու ունակ, իրար համակցող ու կերակրող տարաբնույթ մարդկանցով բնակեցված չափազանց տարբեր հասարակություններից բաղկացած աշխարհ: *Համապատաս-*

խանաբար չափազանց ցածր և չափազանց բարձր էնտրոպիայի աշխարհ. առաջին պատկերն արտացոլում է առավելապես թերզարգացած, երկրորդը՝ բավականաչափ զարգացած համակարգ: Ակնհայտորեն, «զարգացում» նշանակում է ոչ թե միակողմանի ուղղվածություն և աճ, այլ համակարգվածություն և վերարտադրողականություն:

Բնության հարթությունում սրանք բնապահպանական կայունության ընդհանուր պայմաններն են: *Բայց բնությունը վայրագ միջավայր է:* Իհարկե գոյություն ունեն փոխանակման պարբերաշրջաններ, բնապահպանական պարբերաշրջաններ, որ սկսվում են ջրից, ածխածնի երկօքսիդից ու արևային էներգիայից և ավարտվում են ջրով ու ածխածնի երկօքսիդով (արևային էներգիան լիառատ բաշխվում է ու թվում է անվերջ): Սակայն, այս պարբերաշրջանների մի մասը (եթե անհատի, սոցիալական ու աշխարհի հարթություններում դրանք վերածենք վարքագծի կանոնների) բոլորովին էլ այն չեն, ինչ մենք փնտրում ենք: «Ցածր» մակարդակի սննդի շղթան սպառվում է «բարձրի» կողմից՝ միկրոօրգանիզմներ, որ սնվում են անկենդան բնությունից, բույսեր, որ սնվում են միկրոօրգանիզմներով, կենդանիներ, որ ոչ միայն խոտակեր են, այլև մսակեր, մենք՝ մարդ էակներս, որ որպես կերակուր օգտագործում ենք ամեն ինչ, բայց չենք ուզում, որ ինչ-որ մեկը, այդ թվում՝ մարդիկ, մեզ որպես կերակուր օգտագործեն՝ դա անվանելով մարդակերություն: Ակնհայտորեն, մենք պետք է ուղղակիորեն սահմանենք համակցությունները որպես փոխադարձ և ոչ չափազանց միակողմանի օգուտ: Փոխանակման պարբերաշրջանները՝ այո, բայց *հավասարության* որոշակի հիմքով: Կրոնական մի շարք համակարգերում հանդուրժողականության այս նորմը ձևակերպված է որպես *ahimsâ* ՝բռնության բացառում, ուղղված ոչ միայն մարդկային էակներին, այլև կենդանիներին (օրինակ, բուսակերությունը հինդուիզմի ու բուդդիզմի դեպքում), որոշ դեպքերում՝ նաև բույսերին և, անգամ, միկրոօրգանիզմներին (ջայնիզմ): *Ahimsâ-ն* Գանդիի մոտեցումն էր:

Մարդկային հարթության մակարդակում բազմազանությունը ենթադրում է այլ անհատականությունների հանդեպ հարգանք և հանդուրժողականություն, իսկ հասարակական հարթության մակարդակում՝ այլ հասարակական կազմակերպվածքների հանդեպ: Բայց դա դեռ բավարար չէ: Անհրաժեշտ է նաև համակցություն՝ փոխադարձ ուսուցում, փոխանակում, փոխադարձ շահ: Ահա որտեղ ենք մենք՝ փիլիսոփայական անապատի կենտրոնում. բնության իմաստությունը վերածվում է բարոյական վնասների, նորմերի, սակայն այդ նորմերն ամենևին էլ սոցիալական արդարության ու հավասարության նորմեր չեն: Ավելին, հայեցակարգը բաշխողական չէ մշտական եկամուտով քիչ թե շատ ապահովված միավորների միջև. սոցիալական արդարությունն ու հավասարությունն այդպիսի հայեցակարգեր են: Անաչառ համակցությունն առավել հարաբերական հայեցակարգ է, որ առնչվում է անհատների փոխազդեցությանը. «անաչառ» բառը նշանակում է, որ բոլոր կողմերը հավասարապես պետք է շահեն այդ փոխազդեցությունից: Անաչառությունը պետք է բխի սեփական «ես»-ի հետ փոխազդեցությունից՝ որպես կառուցվածք ձևավորող, և ոչ թե բաշխում սահմանող հավասարություն:

Այստեղ առկա է շրջանաձև պատճառաբանության տարրը: Մի կողմից, մենք շահագրգռված ենք զարգացած և խաղաղ համակարգերի գոյությամբ, մյուս կողմից, համակարգի զարգացած լինելու պայմանը անաչառ հարաբերություններ ձևավորելու վերջինիս կարողությունն է: Սա այնքան էլ խնդրահարույց չէ: Վարկածը հետևյալն է՝ եթե համակարգն արդեն հասել է բազմա-

զանության որոշակի մակարդակի, ապա այդ բազմազանությունը համակցության ճանապարհով կձևավորի առավել լայն բազմազանություն: Այլ խոսքով՝ բազմազանությունը սնվում է ինքն իրենից: Արդյունքում կստանանք արտաքին ու ներքին հարվածներին դիմակայելու ընդունակ աճող առաձգականության համակարգ: Խաղաղության և զարգացման միջև գոյություն ունի դրական դիալեկտիկա՝ համալիր հասկացություններին վերապահվող իմաստով:

Եզրակացություններից մեկը *մարդկային հարթությունում* ուժեղ անհատի կերպարն է, որը կարողանում է խթանել իր ներքին ուժերի համախմբումը՝ նպատակաուղղելով այն համագործակցության, զարգացման ու կատարելության: *Անհատի ներքին երկխոսությունը նույնքան կարևոր է, որքան երկխոսությունն անհատների միջև:* Դիտարկենք Գանդիի օրինակը. սրբագործված ու քաղաքական գործիչը համատեղված են միևնույն անհատի մեջ, առավելագույն համակցության միջոցով երկուսն էլ միմյանց հետ փոխազդեցության մեջ են. ընդ որում ոչ սուրբն է փորձում դուրս մղել քաղաքական գործչին, ոչ էլ քաղաքական գործիչն է ձգտում ոչնչացնել սրբին: Ճիշտ հակառակ իրավիճակին ենք ականատես լինում բազմաթիվ հասարակություններում, մասնավորապես, ժամանակակից արևմտյան հասարակություններում, որտեղ անհատները «զտվում են» մասնակի խողովակներով, որոնցում առկա է հասարակության համար օգտակար հակամետությունների սահմանափակ համակարգ՝ որպես մասնագիտական առաջխաղացում, և որտեղ ուսուցանում են մարդկանց սովորեցնել զսպել իրենց այլևայլ հակումները: Ոգի/մարմին խիստ տարանջատումը թելադրում է՝ կա՛մ սուրբ, կա՛մ քաղաքական գործիչ, վանական կամ առևտրական, տաճար կամ բորսա, երկուսը միասին՝ երբեք:

Դեպի դուրս ճանապարհն ընդգրկում է հակումների սեգմենտավորում. մարդը խիստ տարբեր ձևերով է դրսևորում իրեն տանը և աշխատավայրում, և բոլորովին այլ մարդ է ժամանցի պահերին: Այս բանաձևում շիզոֆրենիայի որոշակի տարրեր կան՝ փոխանակման պարբերաշրջանների, ինչպես նաև անհատի ներսում հոմոտոպների փոխազդեցության բացակայություն: Անհատը կարող է թանկ վճարել. սեփական «ես»-ի ներսում դրսևորվել և զարգանալ ջանացող կարևոր հակումների ճնշումը կարող է ֆիզիոլոգիական առումով չարորակ ուռուցք առաջացնել, իսկ հոգեբանական առումով՝ հանգեցնել շիզոֆրենիայի կամ մտավոր այլ խանգարումների:

Այստեղից մինչև *սոցիալական հարթություն* մի քայլ է. այս տրամաբանության համաձայն՝ ուժեղ հասարակությունը պետք է հավաքագրի սոցիալական բևեռներն ու դրանք ստեղծագործաբար համատեղի փոխանակման պարբերաշրջաններում: Դա չի կարող հենվել բացառապես շուկայական մեխանիզմների կամ բացառապես պլանային տնտեսության վրա, այլ միայն երկուսի վրա միաժամանակ՝ դրսևորվելով տարբեր մակարդակներով ու տարբեր համակցություններով: Այն չի կարող լինել բացառապես կենտրոնացված կամ բացառապես ապակենտրոնացված, այլ պետք է հիմնվի դրանց համակցության վրա: Արդյունքը կարող է լինել շատ ավելի բարդ ու համակարգված տնտեսական/քաղաքական գործունեություն ծավալող հասարակությունը, քան մենք այսօր տեսնում ենք «զարգացած» երկրների մեծ մասում, ասենք, համատեղելով առավել կապիտալիստական և առավել սոցիալիստական հատվածները սոցիալական կազմակերպվածքի միաժամանակ թե՛ տեղական, և թե՛ մակրո մակարդակներում: Կանաչը, վարդագույնն ու դեղինը միասին, բայց լոկ այնքան ժամանակ, քանի դեռ դրանք հանդուրժում են միմյանց: Մուգ երկնագույնի ու մուգ կարմիրի ամբողջատիրական մղումները պետք է ի

սկզբանե բացառվեն՝ որպես «բնության իմաստությանը» հակասող, հօգուտ միաժամանակ տեղական ու ազգային մակարդակներում տնտեսական հողաբաշխման, դարձյալ միաժամանակ և՛ որպես պլան, և՛ որպես շուկա: Եվ հօգուտ քաղաքական հողաբաշխման՝ միաժամանակ որպես տեղական ու ազգային ժողովրդավարություն, որպես ուղղակի և անուղղակի ժողովրդավարություն, միաժամանակ որպես թե՛ ներկայացուցիչների/պատգամավորների ընտրովիության մեխանիզմ, թե՛ որպես բոլորի ու յուրաքանչյուրի մասնակցության առհավատչյա: Մասնակցությունը հնարավոր ներդրումներից մեկն է, որի արդյունքը ոչ միայն հասարակական, այլ նաև մարդկային զարգացումն է:

Իսկ *աշխարհի՞ հարթությունը:* Որտե՞ղ գտնել նման տեսություն աշխարհի մակարդակով: Որքան էլ տարօրինակ թվա, ամենամոտ գտնվող տեսությունը, թերևս, 1930-ական թվականների «երկու համակարգերի խաղաղ գոյակցության ու համագործակցության» խորհրդային տեսությունն է: Գաղափարն աշխարհի մակարդակում սոցիալիստական և կապիտալիստական համակարգերի «գոյակցությունն» է, այլ խոսքով՝ աշխարհը կարող է ունենալ մեկից ավելի սոցիոտոպ, որոնց գոյակցությունը կարող է լինել «համագործակցային», այսինքն՝ համակցված, և «խաղաղ», այսինքն՝ հանդուրժողական նմանօրինակ բազմազանության նկատմամբ: Բնապահպանական մտածողության տեսանկյունից երկու բաղադրիչներն էլ կարելի է գտնել խորհրդային բանաձևում:

Սակայն, դրա հետ մեկտեղ, երեք քննադատական դիտողություն.

1. Եթե այս տեսությունն այդքան լավն է աշխարհի համար, ապա ինչո՞ւ այն կիրառելի չէ նաև հասարակության ներսում: Ինչո՞ւ նախկին Խորհրդային Միությունը չուներ և՛ կապիտալիստական, և՛ սոցիալիստական հանրապետություններ, անգամ եթե հարկ լիներ փոխել երկրի անունը:
2. Ինչո՞ւ պետք է գոյակցեն միայն *երկու* համակարգերը: Ինչո՞ւ չենք դիտարկում տարբեր համակարգերի գոյակցության հնարավորությունը, այլ փոխարենը ենթադրում ենք, որ միայն կապիտալիզմ/սոցիալիզմով սպառվում է մարդկային երևակայության հորիզոնը, ինչն ակնհայտորեն այդպես չէ: Արդյո՞ք սա 2 թվի վրա տիպիկ արևմտյան սևեռվելը չէ՝ որպես երկվությունների հանդեպ մանիքեյական թովչանքի բաղկացուցիչ մաս (մասնավորապես, Ռուսաստանում քաջ հայտնի է որպես բոգոմոլիզմ):
3. Ավելին, արդյոք այս տեսությունը նպատակամիտված էր համաշխարհային պետությա՞նը, թե՞ սոսկ մեկ սոցիոտոպ ունեցող աշխարհին, որի դերում հանդես էին գալիս սոցիալիստական պետությունները: Գուցե դա պարզապես հարմարվողականությա՞ն բանաձև էր, քանզի կապիտալիզմը դեռևս չափազանց ուժեղ էր և դեռևս ոչ բավարար չափով ճգնաժամային իրավիճակում, որպեսզի հանդես գար որպես իր իսկ գերեզմանափորը:

Չնայած այս երեք հակափաստարկների հիմնավորվածությանը՝ բանաձևը բացահայտում է շատ կարևոր հանգամանքներ: Ավելին, բանաձևը բացահայտում է ոչ միայն այստեղ քննարկված չորս հարթությունների, այլև երեկվա աշխարհի գաղափարախոսական ճամբարների մտադրությունների զուգամիտությունների հիմքը՝ միավորելով կապիտալիստական/ազատական հասարակությունների կողմից ճանաչված հանդուրժողականությունը/բազմակարծությունը սոցիալիստական ճամբարի որոշ պատկերացումների հետ: Եթե Խորհրդային Միությունը իր երկրում կիրառեր իր իսկ տեսությունը, ապա

այն շատ ավելի առաջ անցած կլիներ 1990-ական թվականների առաջադիմական շարժումներից: Այսօր նույնը կարելի է ասել Միացյալ Նահանգների մասին:

Վերարտադրություն: Դառնանք աղյուսակի 6-րդ տողին. «վերարտադրություն՝ օգտագործելով համակարգի ամբողջականությունը»: Եթե *բնության հարթությունում* երկու պայման բավարարված են, ապա առկա է բնական վերածննդի կարողություն, որին վտանգ է սպառնում միայն այն դեպքում, երբ բազմազանության/համակցության կարողությունները պակասում են: Նույնը տեղի ունի նաև *մարդկային հարթությունում:* Խոսքն ակնհայտորեն վերաբերում է երկու հոմոտոպների՝ տղամարդու և կնոջ, ինչպես նաև նրանց համակցային փոխազդեցության՝ սիրո, ամուսնության, հարաբերությունների, երեխայի համատեղ դաստիարակության վրա հիմնված վերարտադրության խնդիրներին: Եվ քանի որ այս ամենը չափազանց առօրեական է, դա որոշակիորեն հիմնավորում է աղյուսակը: Կենսաբանական տեսանկյունից մարդկային հարթության վերարտադրության հիմնական պայմանն արդեն իսկ պարունակվում է բանաձևում: Շատ հիմնավոր կերպով տեսությունն առարկայանում է:

Ասվածը վերաբերում է նաև հիվանդ վիճակից վերականգնվելուն: Անհատը, որը մեծացել է բազմազանության պայմաններում՝ իր մեջ մեկտեղելով տարբեր հոմոտոպներ, օժտված է հիվանդություններին դիմակայելու շատ ավելի մեծ հնարավորություններով և արյան սպիտակ գնդիկներին վերագրվող կարողություններից շատ ավելի հզոր իմունային համակարգով: Միակողմանի զարգացած բարձրակարգ սպորտսմենը միջին տարիքում մահանում է սրտի գերլարումից, մտավոր աշխատանքով զբաղվող անհատը, որ երբեք հոգ չի տանում իր մարմնի մասին, նույնպես: Հավասարակշռությունն այստեղ վճռորոշ է առողջության համար: Հենց հավասարակշռությունն է, որ թույլ է տալիս շատ ծաղիկներ աճեն, այդ թվում՝ ներքուստ:

Նույն տրամաբանությունը գործում է նաև *սոցիալական հարթությունում:* Միաժամանակ և՛ շուկայական, և՛ պլանային մեխանիզմներով զարգացող հասարակությունն ավելի ուժեղ կլինի, եթե կարողանա ձեռք բերել ոչ միայն բազմազանություն քանակական իմաստով, այլ նաև համակցություն՝ այդ երկուսի փոխազդեցության իմաստով: Այն ուժեղ կլինի նախ՝ այդ երկուսի համագործակցությունից գոյացող համակցության հետևանքով (պլանավորումը կհամակարգի շուկան՝ կիրառելով շուկայի որոշակի պլանավորում և վերացնելով սոցիալական դարվինիզմի կործանարար հետևանքները, միաժամանակ շուկան կխթանի պլանավորման գործընթացները): Երկրորդ՝ եթե այդ երկուսից մեկը ձախողվի, ասենք, միջազգային շուկայի փլուզման կամ պլանավորումը չափազանց կարծր իրականացնելու հետևանքով, ապա մյուսը միշտ կա: Դարձյալ, երկու ոտքի վրա կանգնելը միշտ ավելի գերադասելի է, քան մեկ ոտքի վրա կանգնելը, երեք (չորս, հինգ) ոտքի վրա կանգնելը շատ ավելի գերադասելի է, եթե խոսքը տնտեսության տեղական հենքի մասին է:

Իսկ պետական կառուցվա՞ծքը: Այս ամբողջ մոտեցումն իրականում հանգեցնում է ժողովրդավարության տեսական հիմքին. ի՞նչ է ժողովրդավարությունը, եթե ոչ բազմազան խմբերի համակցված փոխազդեցություն: Հարկ է նշել, որ երկու պայմաններն էլ պատկանում են այն սյուների թվին, որոնց վրա հենվում է ժողովրդավարությունը: Եթե չկա բազմազանություն, այլ առկա է միայն միօրինակություն, միատարրություն ոչ միայն մտածելակերպի/համոզ-

մունքների, այլև հասարակության սահմաններում գործողությունների/կառուցվածքի առումով, ապա ի՞նչ փոխազդեցության մասին կարող ենք խոսել: Եվ եթե սոցիոտոպներում առկա է բազմակարծությունը, բայց դրանց միջև բացակայում է փոխազդեցությունը, ապա ժողովրդավարությունը կարելի է դիտարկել որպես սոսկ տնտեսվարող համակարգերի՝ կոլեկտիվ և անհատական մեծամասնության կարծիքին անսալը և ոչ թե «տուր և վերցրու, սովորիր և սովորեցրու, քննարկիր դիրքորոշումները, գործողություններն ու կառուցվածքները՝ հակադրելով դրանք միմյանց, հարգանք զարգացրու միմյանց հետ դիալեկտիկապես շաղկապված, բայց միմյանցից տարբեր դիրքորոշումների ու համակարգերի հանդեպ, անգամ ըմբոշխնիր այդ բազմազանությունը» սկզբունքների վրա հիմնված համակարգի ողջ դաշտը: Սիով բանիվ, ոչ միայն սիրո ու սեռական վերարտադրության, այլ նաև ժողովրդավարական մտածելակերպի ամբողջական հիմքը պետք է արդեն զետեղվի այս դատողություններում: Դարձյալ այն դիտարկված է իբրև սեփական հիմնավորվածության հաստատում:

Տալով հասարակության այս բնորոշումները՝ վերակառուցումը սկզբունքորեն պետք է որ դյուրին ընկալում ունենա: Ամբողջական համակարգը առաձգական է և օրգանական: Հարվածեք որևէ կետի. այն կվնասվի, բայց ամբողջական համակարգում առատ նյութ կգտնվի այն վերականգնելու համար: Սկզբունքորեն նույն իրավիճակն է նաև *աշխարհի հարթություններում.* որքան ավելի միատարր ու փոխազդեցությունից զուրկ՝ աշխարհն այնքան ավելի խոցելի է, որքան ավելի բազմազան ու համակցված՝ այնքան ավելի կարող ինքնավերականգնման: Երբևէ չընկրկող աշխարհում սա միանգամայն տեղին ու հարաճուն *problématique* է:

Առաձգականություն: Այստեղ պատկերը լրացնում են 7-րդ և 8-րդ տողերը: Դրանց ընդհանուր վերնագիրն է «Առաձգականություն» ուղղակի և կառուցվածքային բռնության նկատմամբ, որ զետեղված են «Բռնություն» և «Շահագործում» սյունակներում: *Ուղղակի բռնությունը* հարվածում է կարիքներին, իսկ սոցիալական ու աշխարհի հարթությունների առավել համալիր համակարգերում՝ նաև շահերին, այսինքն իրենց անդամների կարիքները բավարարելու դրանց կարողություններին: Կարիքները մենք սահմանեցինք չափազանց լայն իմաստով՝ ներառելով ֆիզիկական ու հոգևոր կարիքները: Հետևաբար, դրանք երկուսն էլ վնասվում են ուղղակի բռնության գործադրմամբ, երկուսին էլ շոշափում են կառուցվածքների դանդաղ, հաճախ տարերային գործողությունները: Առավել հիմնարար մակարդակում սա մեզ տալիս է արդի աշխարհի չորս հիմնական տիպի վնասները՝ գոյատևման կարիքների բացառումը, որ հայտնի է որպես «հոլոքոստ», բարեկեցության կարիքների բացասումը՝ «մեղմ հոլոքոստ» (կարելի է կոչել նաև կառուցվածքային հոլոքոստ), որ մահվան է դատապարտում մարդկանց, անխնա ոչնչացնում նորածիններին, մանուկներին ու կյանքի ծաղկուն հասակում գտնվող երիտասարդներին Երրորդ աշխարհում, ազատության կարիքների բացասումը, որ հայտնի է որպես Գուլագ, ինչպես նաև ինքնության կարիքների այն աստիճան բացասումը, որ անհատի ինքնության միակ նպատակը դառնում է նեղ անձնական կարիքների բավարարումը, այլ խոսքով՝ «հոգևոր մահ» նյութապաշտության հետևանքով: Կատարելության առավել բարձր մակարդակի հասած համակարգերը պետք է այնքան առաձգականություն ունենան, որ կարողանան դիմակայել այս հարվածներին ու անխափան զարգանալ:

Շահագործումը շոշափում է նույն թեմաները, միայն առավել հիմնավոր կերպով: Այն ավելի խորն է քննարկում խնդիրը: Այստեղ այլևս քննարկվում է ոչ թե առանձին կարիքների (կամ առավել համալիր համակարգերում՝ առանձին շահերի) վնասումը, այլ վերարտադրության կարողությունն ընդհանրապես: «Շահագործումը» կարելի է սահմանել որպես բնության, անհատի, սոցիալական և աշխարհի հարթություններում առկա տիպերի այն աստիճան շահագործում, որ վերջիններս կորցնում են իրենց վերարտադրության կարողությունը: *Բնության* հարթությունում ասվածի բացատրությունը քաջ հայտնի է. բնական պաշարների օգտագործումն այնպիսի ինտենսիվությամբ, որ դրանք կորցնում են վերականգնվելու հատկությունը. արդյունքը լինում է սպառվածությունը: *Մարդկային հարթությունում* սա ևս հայտնի երևույթ է. անհատի կարողությունների օգտագործումը այնպիսի ինտենսիվությամբ, որ վերջինս կորցնում է վերարտադրության ունակությունը, և անհատն ուղղակիորեն «ուժասպառ» է լինում: Բավարար սնունդ և առողջ քուն. ահա ցանկացած լարվածությունից ու հարվածներից վերականգնվելու բանաձը: Որպես չափանիշ կարելի է դիտարկել մարդկային մարմնի, ուղեղի և հոգու վիճակն ամեն առավոտ, որոշակի ժամանակահատվածում, մինչև ակնհայտ կդառնա, որ վերականգնում այլևս տեղի չի ունենում: Այդուհանդերձ, սերնդեսերունդ փոխանցվող վերարտադրության մարդկային կարողությունը ծայրահեղ առաձգական է, ասել է թե՝ մարդկային հարթությունում շահագործումն առավել օնտոգենետիկ է, քան ֆիլոգենետիկ: Բիոգենետիկ փոխակերպումը դիմացավ անգամ Ճապոնիայի երկու քաղաքներում իրականացված միջուկային ցեղասպանությունից հետո:

Եթե հասարակությունն անկարող է այլևս վերականգնվել, ապա այն սպառել է ինքնավերարտադրության իր կարողությունը: Ոչ միայն շահերն են վնասված, այլև այդ վնասները փոխհատուցելու կարողությունն այլևս բավարար չէ: Սա տեղի է ունենում նաև *աշխարհի հարթությունում:* Քաղաքակրթություններն ի հայտ են գալիս, զարգանում են, ընդարձակվում, ապա ծերանում են ու մահանում: Ամենատեղին փոխաբերությունն այստեղ Հնդկաստանի մասին Նայփոլի «խոցված քաղաքակրթություն» տերմինն է: Մյուս կողմից, դժվար է այն վերագրել Հնդկաստանին, եթե հաշվի առնենք հնդկական քաղաքակրթության ծայրահեղ առաձգականությունը, որի շնորհիվ այն գոյատևում է արդեն 3500 տարի, ավելի՛, քան հիմնական քաղաքակրթությունների մեծամասնությունը:

Վերարտադրության կարողության վնասված լինելը ինքնաբերաբար չի նշանակում մահ: Վերարտադրությունն ինքը վերարտադրվող, ինքնաբերական գործընթաց է, բայց ելակետային ներդրումները կարող են վերցվել արտաքին միջավայրից, եթե համակարգը փակ չէ: *Բնության հարթությունը* կարող է արհեստականորեն պահպանվել կենսունակ պարարտանյութերի ու պեստիցիդների միջոցով, *մարդկային հարթությունը*՝ բիոքիմիական ինժեներիայի և այլ միջոցներով, *սոցիալական հարթությունը*՝ զարգացման աջակցության ծրագրերի ու վարկավորման եղանակով (ինչն այսօր կիրառվում է Երրորդ աշխարհի երկրներում):

Անհրաժեշտ պայմանն այստեղ չորս հարթություններում նման աջակցություն ցուցաբերելու ընդունակ էությունների առկայությունն է: Արդյունքում «խոցված համակարգը» կվերանա իբրև հաստատուն համակարգ՝ միավորվելով այլ համակարգի հետ, յուրացնելով վերջինիս հայտանիշների մի մասն ու կազմելով միասնական գերհամակարգ: Որպես ինքնուրույն համակարգ՝ այն

կդադարի գոյություն ունենալուց: Արդի տերմինաբանությամբ սա նշանակում է ինքնահարատություն, բայց ոչ վերարտադրողականություն:

Սպասարկումը որպես նպատակ: Վերջին տողում պարզաբանվում է սպասարկման համակարգի կիրառական իմաստը: Նպատակն այլևս համակարգի կատարելությունը չէ, այլ կատարելության հասնելու պայմանների ապահովումը: *Բնության հարթությունում* նպատակը բնապահպանական կայունությունն է, այսինքն՝ այնպիսի համակարգի ձևավորումը, որտեղ մարդ էակները հանդես են գալիս իբրև ռեսուրս, միաժամանակ առանց վնասելու վերարտադրության կարողությունը: Ամբողջականությունը նման կայունության անհրաժեշտ պայմանն է: Բայց կայունությունը, անընդհատ աճելով ու զարգանալով, ի վերջո դուրս է գալիս այդ սահմաններից:

Բնության հարթությունում մենք կարող ենք ինքներս նման նպատակներ առաջադրել. առողջություն՝ բառի ամենալայն իմաստով, որպես ֆիզիկական, մտավոր ու սոցիալական բարեկեցություն, ինչպես սահմանված է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից: Այս դեպքում ևս համակարգի կատարելությունը կարելի է սահմանել որպես ֆիզիկական, մտավոր ու սոցիալական առողջության հաստատման պայման, որ հայտնի է որպես «մարդկային զարգացում»:

Նույնը վերաբերում է նաև *սոցիալական,* ինչպես նաև *աշխարհի հարթություններին:* Համակարգի ամբողջականությունը զարգացման նախապայմանն է: Այն նման է ամուր հիմքի, հիմնաժայռի, որի վրա կառուցվում են բազմահարկ կառույցները: Միաժամանակ, այն մեզ հուշում է, թե ինչպես ձևավորել այդ կառույցները բազմակարծության ոգով: Եթե շատ գաղափարներ կան, ինչո՞ւ չփորձել դրանցից մի քանիսը՝ միայն մեկի վրա կենտրոնանալու փոխարեն: Քաղաքակրթությունների պատմությունը հուշում է. այն պահին, երբ քաղաքականություն ձևավորողները հայտնաբերում էին *միակ* ճշմարիտ գաղափարն ու սկսում էին այն կիրառել, նույն պահին նրանք կործանման էին դատապարտում այդ քաղաքակրթությունը: Վերջնական լուծումը պատմության ավարտն է:

5.5 Զարգացում. բոլոր երկրները, բոլոր հարթությունները

Եզրակացությունը հստակ է՝ զարգացումը որպես ծրագիր, որպես տեսություն և փորձառություն վերաբերում է աշխարհի բոլոր երկրներին: Առավել զարգացած/թույլ զարգացած (կամ զարգացած/զարգացող) երկրներ գաղութատիրական երկբևեռ բանաձևի փոխարեն ավելի ճիշտ կլինի օգտագործել հետևյալ բանաձևը. բոլոր երկրներն էլ սխալ են զարգացած, բայց ամեն մեկը՝ յուրովի, և այդ զարգացման սխալները տեսանելի են տարբեր հարթություններում: Բնության հարթության առնչությամբ հզոր առաջադիմական քայլ արվեց 1972թ. Սթոքհոլմի համաժողովից հետո և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի մարդկային զարգացման հաշվետվություններում: «Կայունության» հայեցակարգը օրակարգ մտցրեց վերարտադրողականության խնդիրները, թեև վերջիններս դեռ շատ հեռու են կատարյալ լինելուց: Դեռևս սաղմնային վիճակում է համաշխարհային զարգացման հա-

յեցակարգը: Եվ տնտեսագիտական մշակույթի բացասական ազդեցությունն առայժմ հաջողությամբ դիմակայում է հնարավոր բոլոր հարվածներին:

Միով բանիվ, դեռ շատ աշխատանք պետք է կատարել հայեցակարգերի մշակման, գիտության ու փորձառության բնագավառներում: Ամենևին էլ հարկ չկա սարսափել հոլիստական մոտեցումներից: Դրանք ամբողջական են, բայց կարիք չունեն ամբողջատիրական լինելու: Բոլոր հարթություններում զարգացման ուղղությամբ իրականացվող փոքր քայլերն ավելի գերադասելի են, քան միայն մեկ հարթությունում իրականացված մեծ ցատկը:

ՄԱՍ IV

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1
Մշակութային բռնություն

1.1 Սահմանումը

«Մշակութային բռնություն» ասելով նկատի ունենք մշակույթի՝ մեր գոյության՝ կրոնով ու գաղափարախոսությամբ, լեզվով ու արվեստով, էմպիրիկ և ձևական (տրամաբանություն, մաթեմատիկա) գիտություններով ներկայացող խորհրդանշական ոլորտի այն ասպեկտները, որոնք կարող են օգտագործվել ուղղակի կամ կառուցվածքային բռնությունն արդարացնելու կամ լեգիտիմացնելու համար[1]: Ակամա հիշում ես աստղերը, խաչերն ու մահիկները, դրոշները, օրհներգերն ու զինվորական շքերթները, ամեն քայլափոխի հանդիպող Առաջնորդի դիմանկարները, բոցավառ ճառերն ու ցուցապաստառները: Ինչևէ, եկեք օրինակներին անդրադառնանք 4-րդ բաժնում, իսկ սկսենք վերլուծությունից: Վերոնշյալ հատկանիշները «մշակույթի ասպեկտներ են», ոչ թե ամբողջական մշակույթներ: Պոտենցիալ մարդասպանին խրախուսողը, ով անգլերեն գոչում է. «Սպանելն ինքնադրսևորում է», կարող է ապացուցել, որ անգլերեն լեզուն կարող է արտահայտել նման մտքեր, այլ ոչ թե՝ անգլերեն լեզուն այդ աստիճան հակված է բռնության: Ամբողջական մշակույթները հազիվ թե կարելի է դասակարգել որպես բռնության հակված. ահա թե ինչու «C մշակույթի A ասպեկտը մշակութային բռնության օրինակ է» արտահայտությունը գերադասելի է, քան «C մշակույթը հակված է բռնության» կարգի մշակութային կարծրատիպերը:

Մյուս կողմից, մշակույթները կարող են պատկերացվել և անգամ իրականում բախվել ոչ միայն մեկ, այլև բռնության հակված, էքստենսիվ ու բազմազան, մշակութային բոլոր ասպարեզներն ընդգրկող մի ամբողջ շարք ասպեկտների՝ այն աստիճան, որ մշակութային բռնության դեպքերի մասին խոսելուց դեպի բռնության հակված մշակույթ այդ վերջին քայլը կարող է երաշխավորված լինել: Ուստի անհրաժեշտ է համակարգված ուսումնասիրությունների գործընթաց: Այս գլուխը այդ գործընթացի մի մասն է:

Կարելի է սկսել «մշակութային բռնություն» հասկացությունը հստակեցնելուց՝ դրա ժխտման որոնումների միջոցով: Եթե բռնության հակոտնյան խաղաղությունն է՝ խաղաղության հետազոտությունների/խաղաղության ուսումնասիրությունների խնդրո առարկան, ապա մշակութային բռնության հակոտնյան «մշակութային խաղաղությունն» է, այսինքն՝ մշակույթի այն կողմերը, որոնք ծառայում են ուղղակի կամ կառուցվածքային բռնությունն արդարացնելուն կամ լեգիտիմացնելուն: Եթե որևէ մշակույթում գտնում ենք բազմաթիվ և բազմապիսի նման ասպեկտներ, կարող ենք այն անվանել «խաղաղության մշակույթ»: Խաղաղության հետազոտությունների և առհասարակ

խաղաղության շարժման հիմնական ուղղությունը խաղաղության մշակույթի անվերջ որոնումն է, ինչը խնդրահարույց է՝ պայմանավորված այդ մշակույթը ինստիտուցիոնալացնելու, այն պարտադիր դարձնելու գայթակղությամբ՝ այն ամենուր ընդունելի դարձնելու մի ծածուկ հույսով: Իսկ դա ինքնին արդեն մշակույթ պարտադրելու ուղղակի բռնություն[2] կլինի:

Մշակութային բռնությունն ուղղակի և կառուցվածքային բռնությանը տալիս է ճիշտ կամ առնվազն ոչ սխալ լինելու տեսք և անգամ զգացողություն: Ճիշտ այնպես, ինչպես քաղաքագիտությունն է նվիրված երկու հիմնախնդիրների՝ իշխանության օգտագործում և իշխանության օգտագործման լեգիտիմացում, բռնության ուսումնասիրությունները նույնպես երկու հիմնախնդրի են նվիրված՝ բռնության օգտագործում և այդ օգտագործման լեգիտիմացում: Որպես հոգեբանական մեխանիզմ այստեղ հանդես է գալիս յուրացումը:[3] Մշակութային բռնության ուսումնասիրությունն առաջին պլան է մղում այն, թե ինչպես են լեգիտիմացվում և դրանով իսկ հասարակության մեջ ընդունելի համարվում ուղղակի բռնության գործողությունը և կառուցվածքային բռնության փաստը: Մշակութային բռնության իրականացման ուղիներից մեկը դրա բարոյական գունավորումը «կարմիր/սխալ»-ից «կանաչ/ճիշտ»-ի կամ առնվազն «դեղին/ընդունելի»-ի փոխելն է. այստեղ օրինակ կարող է ծառայել հետևյալը՝ «երկրի անունից կատարված սպանությունը ճիշտ է, իսկ անհատի անունից կատարվածը՝ սխալ»: Մի այլ ուղի է իրականությունն անթափանց դարձնելը, որպեսզի մենք չկարողանանք տեսնել բռնության գործողությունը կամ փաստը, կամ առնվազն տեսնենք դրանք ոչ լրիվ ծավալով: Ակնհայտ է, որ բռնության որոշ տեսակների դեպքում սա ավելի դյուրին է արվում, քան մյուսների դեպքում, օրինակ, *abortus provocatus*-ի[i] դեպքում: Այսպիսով, խաղաղության ուսումնասիրությունների համար բռնության տիպաբանությունն անհրաժեշտություն է, ինչպես պաթոլոգիան է անհրաժեշտություն առողջապահական ուսումնասիրությունների համար:

1.2 Ուղղակի և կառուցվածքային բռնության տիպաբանությունը

Ըստ իս, բռնությունը խուսափելի վիրավորանք է՝ հասցված մարդու հիմնական պահանջմունքներին, ավելի լայն առումով՝ մարդու *կյանքին,* ինչը մարդու պահանջմունքների բավարարման իրական մակարդակն իջեցնում է պոտենցիալ հնարավորից ցածր մակարդակի: Բռնության սպառնալիքները նույնպես բռնություն են: Համադրելով ուղղակի և կառուցվածքային բռնության տարբերակումը մարդու հիմնական պահանջմունքների չորս կարգերի հետ՝ ստանում ենք աղյուսակ 1.1-ում բերված տիպաբանությունը: Հիմնական պահանջմունքների չորս կարգերը, որ արդյունք են աշխարհի տարբեր մասերում վարված երկխոսությունների, հետևյալն են. *գոյատևման պահանջմունքներ* (ժխտումը՝ մահ, մահացություն), *բարեկեցության պահանջմունքներ* (ժխտումը՝ աղքատություն, վատառողջություն, հոգեկան ճնշվածություն), *ինքնության պահանջմունքներ* (ժխտումը՝ օտարում) և *ազատության պահանջմունքներ* (ժխտումը՝ ճնշում):[4]

---

[i] abortus provocatus (լատ.)- հղիության արհեստական ընդհատում /թարգ./

Աղյուսակ 1.1. Բռնության տիպաբանություն

	Գոյատևման պահանջմունք-ներ	Բարեկեցության պահանջմունք-ներ	Ինքնության պահանջմունք-ներ	Ազատության պահանջմունք-ներ
Ուղղակի բռնություն	Սպանելը	Խեղելը Պաշարել, պատժամիջոց-ներ կիրառել Չքավորություն	Ապասոցիալա-կանացում Վերասոցիա-լականացում Երկրորդական քաղաքացի	Ճնշում Կալանում Արտաքսում
Կառուցված-քային բռնու-թյուն	Շահագործում A (խիստ)	Շահագործում B (թույլ)	Ներազդում Սեգմենտա-վորում	Մարգինալա-ցում Ֆրագմենտա-վորում

Արդյունքում ստանում ենք բռնության 8 տեսակ՝ ենթատեսակներով, որ ավելի դյուրին են տարորոշվում ուղղակի, քան կառուցվածքային բռնության պարագայում (տե՛ս աղյուսակ 1.1): Առաջին մեկնաբանությունը կարող է լինել այն, որ այս աղյուսակը մարդակենտրոն է: Սկզբում կարելի էր ավելացնել հինգերորդ սյունակը, որ կընդգրկեր մնացյալ Բնությունը՝ մարդկային գոյության *sine qua non*-ը: Շրջակա միջավայրի համակարգի պահպանման համար գործածվող տերմիններից ամենահաճախ հանդիպողը թերևս «էկոլոգիական հավասարակշռությունն է»: Եթե այն չի պահպանվում, ապա արդյունքը էկոլոգիական դեգրադացիան է, անկումը, անհավասարակշռությունը: Էկոլոգիական հավասարակշռությունը համապատասխանում է հետևյալին՝ գոյատևում + բարեկեցություն + ազատություն + ինքնություն: Եթե սա չի բավարարվում, արդյունքը մարդկային դեգրադացիան է: Բոլոր հինգ սյունակների հանրագումարը, ընդհանուր առմամբ, կլինի «խաղաղության» սահմանումը:

«Էկոլոգիական հավասարակշռությունը», սակայն, շատ լայն կատեգորիա է, որ ընդգրկում է նաև աբիոտան (ոչ կյանք) և բիոտան (կյանք): Որպես կյանքին հասցված վիրավորանք բնորոշված բռնությունը կենտրոնանում է բիոտայի վրա, իսկ աբիոտայի վրա՝ միայն անուղղակիորեն: Ավելին՝ կան դժվար ու կարևոր հարցեր, ինչպես ասենք՝ «հավասարակշռություն ո՞ւմ համար»: Մարդ արարածների՞ համար, որպեսզի վերարտադրե՞ն իրենց: Տնտեսական գործունեություն ո՞ր մակարդակում և ի՞նչ քանակներով: Թե՞ «շրջակա միջավայրի» համար (որ մարդակենտրոն տերմին է), որպեսզի այն վերարտադրի ինքն իրեն: Հավասարապես բոլո՞ր հատվածները, ո՞ր մակարդակում, ի՞նչ քանակներով: Թե՞ և՛ առաջինի, և՛ երկրորդի համար:

Երկրորդ, կարելի է կրկնել բռնությունը բնորոշելու համար վերը օգտագործված՝ համեմատաբար թույլ բառերի մեգատարբերակները: Օրինակ, «սպանության» փոխարեն՝ *բնաջնջում, հոլոքոսք, ցեղասպանություն:* «Տանջանքի», «թշվառության» փոխարեն՝ *լուռ հոլոքոսք:* «Օտարացման» փոխարեն՝ *հոգեկան մահ:* «Ճնշման» փոխարեն՝ ԳՈՒԼԱԳ: «Էկոլոգիական դեգրադացիայի» փոխարեն՝ *էկոցիդ, էկոսպանություն:* Այս ամենի փոխարեն՝ *«օմնիցիդ»:* Այս բառերը կարող էին հնչել իբրև ամեն բան չափազանց մռայլ, ապոկալիպտիկականորեն ներկայացնելու ջանք, եթե աշխարհում դրանք տեղ գտած չլինեին միայն վերջին 50 տարիների ընթացքում՝ սերտորեն կապված Հիտլերի, Ստալինի, Ռեյգանի[5] անունների, ճապոնական միլիտարիզմի[6]

հետ: Կարճ ասած՝ խաղաղության ուսումնասիրությունների անբաժանելի մաս հանդիսացող բռնության ուսումնասիրությունները կարող են սոսկանքի սենյակի տպավորություն թողնել, սակայն պաթոլոգիայի նման դրանք արտացոլում են իրականությունը, որը պետք է ճանաչել և հասկանալ:

Անցնենք աղյուսակ 1.1-ի մեկնաբանությանը: Բռնության առաջին կատեգորիան՝ սպանությունը, բավական հստակ է, ինչպես հստակ է նաև խեղելը: Դրանք միասին կազմում են «կորուստները». սա գործածվում է պատերազմի ուժգնությունը գնահատելիս: Պատերազմը, սակայն, կազմակեպված բռնության մեկ մասնավոր ձև է՝ սովորաբար առնվազն մեկ կատարողով, որպիսին հանդես է գալիս որևէ երկրի կառավարությունը: Չափազանց նեղ մոտեցում կլինի դիտարկել խաղաղությունը որպես պատերազմի հակոտնյա և խաղաղության ուսումնասիրությունները սահմանափակել պատերազմից խուսափելու ուսումնասիրություններով՝ հանգեցնելով մասնավորապես մեծ պատերազմներից կամ գերպատերազմներից (պատերազմ մեծ պետությունների կամ գերտերությունների միջև) խուսափելուն կամ, էլ ավելի մասնավորեցնելով, գերզինատեսակների (զանգվածային ոչնչացման զենքի) սահմանափակմանը, արգելմանը կամ վերահսկողությանը: Նման դեպքում դուրս են թողնվում կարևոր փոխադարձ կապերը բռնության տարբեր տեսակների միջև, մասնավորապես՝ երբ բռնության որևէ տեսակ նվազեցվում կամ վերահսկվում է բռնության մեկ այլ տեսակի ավելացման կամ պահպանման հաշվին: Ինչպես և «կողմնակի արդյունքն» առողջապահական ուսումնասիրություններում՝ դրանք շատ կարևոր են և հաճախ անտեսվում են: Խաղաղության ուսումնասիրությունները պետք է խուսափեն այդ սխալից[7]:

Խեղելու մեջ է մտնում նաև մարդու պահանջմունքներին հասցված վնասը պաշարման/շրջափակման (դասական տերմինը) և պատժամիջոցների (ժամանակակից տերմինը) հետևանքով: Որոշ մարդկանց կարծիքով դա «ոչ-բռնություն է», քանի որ չկա ուղղակի և անմիջական սպանություն: Մինչդեռ զոհերի համար դա կարող է նշանակել դանդաղ, բայց միտումնավոր սպանություն թերսնման ու անբավարար բժշկական օգնության միջոցով, ինչն առաջին հերթին հարվածում է ամենաանպաշտպաններին՝ երեխաներին, ծերերին, աղքատների, կանանց: Երկարեցնելով պատճառական շղթան՝ կատարողը խուսափում է բնությունը ուղղակիորեն տեսնելուց: Նա անգամ «հնարավորություն է ընձեռում զոհերին»՝ առաջարկելով կյանքը կորցնելու փոխարեն կորցնել ազատությունն ու ինքնությունը՝ վաճառելով ուղղակի բռնության վերջին տեսակն առաջին երկուսի գնով: Մինչդեռ, մեխանիզմն ապրուստի միջոցներից զրկելու սպառնալիքն է՝ պաշարման/բոյկոտի/պատժամիջոցների օգնությամբ: Տնտեսական բոյկոտի՝ Գանդիի կիրառած տեսակը՝ բրիտանական գործվածքեղենը գնելուց հրաժարվելը, համադրվում էր առևտրականների համար դրամական միջոցների հայթայթումով՝ հարցը վերջիններիս գոյության միջոցների սպառնալիքից զերծ պահելու նպատակով:

«Օտարացման» կատեգորիան կարող է բնորոշվել սոցիալականացում տերմինով՝ ենթադրելով մշակույթի յուրացում: Այստեղ երկու կողմ կա՝ ապասոցիալականացվել սեփական մշակույթից և վերասոցիալականացվել այլ մշակույթի մեջ, ինչպես լեզուների արգելումն ու պարտադրումը: Առաջինը չի ենթադրում երկրորդը: Սակայն դրանք հաճախ միասին են հանդես գալիս երկրորդ կարգի քաղաքացիության կատեգորիայում, որտեղ ազդեցության ենթակա խմբին (ոչ միշտ «փոքրամասնություն» ներկայացնող) ստիպում են կրել գերակայող և ոչ թե սեփական մշակույթը՝ առնվազն հրապարակավ:

Խնդիրն այստեղ, անշուշտ, այն է, որ երեխայի ցանկացած սոցիալականացում՝ դպրոցում, ընտանիքում, ընդհանուր առմամբ հասարակության մեջ, նույնպես պարտադրված է, մի տեսակ ուղեղի լվացում է, որը երեխային ընտրության հնարավորություն չի տալիս: Հետևաբար, կարող ենք հանգել եզրակացության, թե բռնությունից զերծ սոցիալականացումն այն է, երբ երեխային տրվում է ընտրության հնարավորություն՝ առաջարկելով, օրինակ, մեկից ավելի մշակութային լեզուներ:

«Ճնշում» կատեգորիան նույնպես ունի նման երկակի բնորոշում՝ Մարդու իրավունքների միջազգային օրինագծին[8] միանալու կամ չմիանալու ազատությունը՝ պատմական և մշակութային սահմանափակումներով[9]: Այստեղ հստակորեն ավելացվել են երկու կատեգորիաներ՝ հաշվի առնելով դրանց նշանակությունը իբրև բռնության այլ տեսակների հարուցիչներ՝ կալանումը, որ նշանակում է արգելել մարդկանց դուրս գալ (կալանավայրեր, համակենտրոնացման ճամբարներ) և վտարումը, որ նշանակում է արգելել մարդկանց ներս գալ (արտաքսելով նրանց արտասահման կամ երկրի հեռավոր շրջանները):

Կառուցվածքային բռնությունը քննարկելու համար մեզ հարկավոր է ունենալ դրա պատկերը և համապատասխան բառապաշար, քննարկում՝ տարորոշելու համար ասպեկտները և դիտարկելու, թե դրանք ինչպես են հարաբերվում կատեգորիաների պահանջմունքներին: Նախատիպային բռնական կառուցվածքում, ըստ իս, կենտրոնական տեղ ունի շահագործումը: Սա պարզապես նշանակում է, որ ոմանք՝ ընտրյալները (topdogs), կառուցվածքի ներգործակցությունից ստանում են շատ ավելին (այստեղ հաշվարկը պահանջմունքների միավորով է), քան մյուսները (underdogs)[10]: Այստեղ առկա է «անհավասար փոխանակում», մեղմասություն (էվֆեմիզմ): Երկրորդները (underdogs) կարող են իրականում այնքան տուժել, որ մահանան (սովամահ լինեն, մահանան հիվանդություններից). սա A շահագործումն է: Կամ նրանք կարող են թողնվել մշտական թշվառության վիճակում, որը սովորաբար ենթադրում է թերսնում և հիվանդություններ՝ B շահագործում: Մարդիկ տարբեր կերպ են մահանում. Երրորդ աշխարհում՝ աղիքային հիվանդություններից և իմունային անբավարարությունից, «զարգացած» երկրներում՝ վաղաժամ սիրտանոթային հիվանդություններից և չարորակ ուռուցքներից: Այս ամենը տեղի է ունենում խրթին կառուցվածքների և խիստ ճյուղավորված պատճառային շղթաների ու շրջանների ներսում:

Բռնության միտված կառուցվածքը հետքեր է թողնում ոչ միայն մարդու մարմնի, այլև նրա մտքի ու հոգու վրա: Հաջորդ չորս տերմինները կարելի է դիտարկել որպես շահագործման բաղկացուցիչներ կամ կառուցվածքի ուժեղացման գործոններ: Դրանք գործում են՝ խոչընդոտելով գիտակցականության ձևավորումը և մոբիլիզացումը, որոնք երկուսն էլ շահագործման դեմ արդյունավետ պայքարի պայմաններ են: Նախ ընտրյալների (topdogs) *ներազդում* մյուսներին (underdogs), ինչն ուղեկցվում է *սեգմենտավորմամբ* և ինչի արդյունքում վերջիններս խիստ մասնակիորեն են պատկերացնում, թե իրականում ինչ է տեղի ունենում: Ապա՝ *մարգինալացում,* այն է՝ այդ մեծամասնությանը (underdogs) անտեղյակ պահելը, ինչն ուղեկցվում է *ֆրագմենտավորմամբ,* երբ սահմանափակվում են նաև շփումները այդ մեծամասնության ներսում: Համենայն դեպս, այս չորս երևույթները նույնպես հարկ է դիտարկել որպես կառուցվածքային բռնություն, մասնավորապես՝ իբրև համակարգում ներկառուցված ճնշումների տարբերակներ: Դրանք բոլորը գոր-

ծում են գենդերային համատեքստում. անգամ եթե կանանց շրջանում մահացության և հիվանդությունների մակարդակը ոչ միշտ է ավելի բարձր, իրականում նրանք կյանքից ավելի մեծ սպասելիքներ կարող են ունենալ, քան տղամարդիկ, եթե ենթադրենք, որ վերապրել են հղիության արհեստական ընդհատման, մանկասպանության փորձ: Կարճ ասած, շահագործումը և ճնշումը, որպես բռնություն, հանդես են գալիս միասին, բայց դրանք նույնական չեն:

Իսկ ի՞նչ կասեք բնության նկատմամբ բռնության մասին: Տեղի է ունենում ուղղակի բռնություն հատելու, այրելու ճանապարհով, ինչպես պատերազմում: Այսպիսի բռնության կառուցվածքային ձևը կարող է ավելի նենգ լինել. բնությունը ոչնչացնելու միտում չունենալ և, այնուամենայնիվ, ոչնչացնել այն՝ ժամանակակից արդյունաբերության հետ կապված աղտոտումը և բնության պաշարների վատնումը, որ տանում են դեպի անտառների ոչնչացում, օզոնային անցքեր, համաշխարհային տաքացում և այլն: Տեղի է ունենում բնության կերպափոխում *արդյունաբերական գործունեության միջոցով,* ինչը թողնում է վնասակար մնացորդներ ու սպառում է չվերականգնվող պաշարները և ուղեկցվում է *աշխարհընդգրկուն առևտրայնացմամբ:* Եվ այդ ամենի հետևանքներն անտեսանելի են մնում իրականացնողների համար:[11] Իրոք, գործում են երկու հզոր կառույցներ, որոնք լեգիտիմացված են տնտեսական աճով: «Կայուն տնտեսական աճ» բարձրագոչ արտահայտությունը կարող է վերածվել մշակութային բռնության ևս մեկ ձևի:

1.3 Բռնության երեք տեսակների մասին

Սույն մեկնաբանությունների շրջանակում «բռնությունը» սահմանվում է աղյուսակ 1.1-ում ներկայացված մանրամասնված տեսակներով՝ իբրև հիմնական կատեգորիաներ կամ «գերտեսակներ»՝ դիտարկելով ուղղակի և կառուցվածքային բռնությունները: «Մշակութային բռնությունն» այժմ կարելի է ավելացնել որպես երրորդ գերտեսակ և դնել *բռնության* (արատավոր) *եռանկյան* երրորդ անկյունում: Երբ այդ եռանկյունը կանգնեցվում է իր «ուղղակի» և «կառուցվածքային» բռնությունների կողմով, ստացված պատկերում մշակութային բռնությունը հանդես է գալիս որպես առաջին երկուսը լեգիտիմացնող: Կանգնեցնելով եռանկյունը «ուղղակի բռնության» անկյամբ՝ ստանում ենք ուղղակի բռնության կառուցվածքային և մշակութային աղբյուրների պատկերը: Եռանկյունն, անշուշտ, միշտ եռանկյուն է մնում, բայց ստացվող պատկերը տարբեր է, և հնարավոր վեց դիրքերից (երեք վերհայաց և երեք վարհայաց) յուրաքանչյուրն իր պատմությունն ունի, որ արժե պատմել:

Չնայած սիմետրիային, ժամանակային առումով հիմնավոր տարբերություն կա բռնության երեք պատկերացումների միջև: Ուղղակի բռնությունը *իրադարձություն է*, կառուցվածքային բռնությունը *գործընթաց է*՝ իր վերելքներով ու վայրէջքներով, մշակութային բռնությունն *ինվարիանտ է՝ «հարատև»*[12], որ, ըստ էության, անփոփոխ է մնում երկար ժամանակահատվածների ընթացքում՝ հաշվի առնելով բուն մշակույթի դանդաղ փոխակերպումները: Տեղին է հիշել պատմության վերաբերյալ ֆրանսիական *Annales* դպրոցի այս առումով օգտակար տերմինները. *événemantielle, conjoncturelle, la longue durée:* Բռնության երեք ձևերը ժամանակի մեջ են մտնում տարբեր կերպ. դա

փոքր-ինչ նման է տարբերությանը երկրաշարժերի մասին տեսության մեջ, երբ երկրաշարժը դիտարկվում է որպես իրադարձություն, որպես տեկտոնիկ շերտերի շարժման գործընթաց և որպես մնայուն վիճակ՝ այդ շերտերի բաժանարար գծերի տեսքով:

Սա տանում է դեպի բռնության երևութաբանության՝ *բռնության շերտերի* պատկերը (որը լրացնում է եռանկյան պատկերը), որն օգտակար է իբրև բազմազան վարկածներ ծնող պարադիգմ: Ամենաստորին մասում մշակութային բռնության անընդհատ հոսքն է ժամանակի մեջ՝ այն ենթաշերտը, որից կարող են սնվել մյուս երկուսը: Հաջորդ շերտում տեղակայված են կառուցվածքային բռնության ռիթմերը: Կառուցվում, մաշվում կամ քանդվում են շահագործման նմուշներ, ինչը ուղեկցվում և պաշտպանվում է գիտակցության ձևավորումը կանխող ներթափանցում-սեգմենտավորումով և շահագործման ու ճնշումների դեմ կազմակերպվածությունը կանխող ֆրագմենտավորում-մարգինալացումով: Իսկ ամենավերևում, անզեն աչքին ու բոկոտն էմպիրիզմին տեսանելի, ուղղակի բռնության շերտն է՝ ողջ ուղղակի բռնությամբ հանդերձ, որ մարդ արարածներն իրականացրել են միմյանց հանդեպ, կյանքի այլ ձևերի և առհասարակ բնության հանդեպ:

Ընդհանուր առմամբ, կարելի է սահմանել մշակութային բռնության ամենօրյա հոսք՝ կառուցվածքայինի միջոցով դեպի ուղղակի բռնություն: Մշակույթը քարոզում, սովորեցնում, հորդորում, դրդում ու բթացնում է մեզ, որպեսզի մենք շահագործումը և/կամ ճնշումը որպես բնականոն ու բնական ընկալենք, կամ առհասարակ չտեսնենք դրանք: Դրան հետևում են պոռթկումները, ջանքերը՝ ուղղակի բռնության միջոցով դուրս պրծնել կառուցվածքային երկաթյա վանդակից[13] և հակաբռնությունը՝ անձեռնմխելի պահել այդ վանդակը: Քրեական գործունեությունը, սովորաբար, ոչ ընտրյալների մասնակիորեն «դուրս պրծնելու» ջանքեր են՝ վերաբաշխելու հարստությունը, հավասարվելու, վրեժ լուծելու («կապույտ օձիքների հանցագործություն»), կամ ընտրյալ դառնալ և այդպիսին մնալ ցանկացողի կողմից՝ կառուցվածքից առավելագույնը քամելու ճանապարհով («սպիտակ օձիքների հանցագործություն»): Ինչպես ուղղակի, այնպես էլ կառուցվածքային բռնությունը առաջացնում են պահանջարկի պակասորդ: Երբ դա հանկարծակի է տեղի ունենում, կարող ենք խոսել վնասվածքի մասին: Երբ դա տեղի է ունենում խմբի հետ, հավաքականորեն, ունենում ենք հավաքական տրավմա, որը կարող է նստվածք տալ հավաքական ենթագիտակցության մեջ և հումք դառնալ խոշոր պատմական գործընթացների ու իրադարձությունների համար: Հիմքում ընկած եզրակացությունը պարզ է. «Բռնությունը բռնություն է ծնում»: Բռնությունը պահանջարկային զրկանք է, իսկ պահանջարկային զրկանքը *լուրջ է*. արձագանքներից մեկն ուղղակի բռնությունն է: Բայց դա միակ արձագանքը չէ: Կարող է ի հայտ գալ նաև անհույս լինելու զգացում, զրկանքի/տապալման ախտանիշ, որը դեպի ներս դրսևորվում է ինքնագրեսիայով, իսկ դեպի դուրս՝ ապատիայով ու ինքնամեկուսացմամբ: Որպես զանգվածային պահանջարկային զրկանքի արձագանք՝ ընտրություն կատարելով եռուն, բռնության պատրաստ և սառած, ապատիայով համակված հասարակությունների միջև, ընտրյալները միտված են գերադասելու վերջինը: Նրանք «կառավարելիությունը» գերադասում են «բարդություններից, անարխիայից»: Նրանք «կայունություն» են սիրում: Իսկապես, կառավարող վերնախավերի կողմից հաճույքով կիրառվող մշակութային բռնության տարածված ձևերից է կառուցվածքային բռնության այն զոհերին պախարակելը, ովքեր առաջինն են քար նետում ոչ թե ապակյա

տնակի ուղղությամբ, այլ՝ երկաթյա վանդակից դուրս գալու նպատակով՝ նրանց տալով «զավթիչ» որակումը: Կառուցվածքային բռնության կատեգորիան պետք է թափանցիկ դարձնի նման մշակութային բռնությունը: Այդուհանդերձ, բռնության շերտի նկարագիրը միակ պատճառական շղթան չէ բռնության եռանկյունում: Կապեր ու պատճառական հոսքեր են առկա բոլոր վեց ուղղություններով, և այդ երեքին միացնող շրջանները կարող են սկիզբ առնել ցանկացած կետից: Սա լավագույն պատճառներից մեկն է, որ ցույց է տալիս, թե ինչու եռանկյունը հաճախ ավելի լավ պատկեր է, քան եռաշարք շերտային մոդելը: Աֆրիկացիները գերվում, բռնությամբ տարվում են Ատլանտյան օվկիանոսի մյուս ափը՝ որպես ստրուկներ աշխատեցվելու համար. այդ ընթացքում միլիոնավոր աֆրիկացիներ սպանվում են Աֆրիկայում, երկու Ամերիկաներում: Դարերով շարունակված զանգվածային ուղղակի բռնությունը ծորացել ու նստվածք է տվել որպես զանգվածային կառուցվածքային բռնություն, որտեղ սպիտակամորթները ընտրյալ տերերն են, իսկ սևամորթները հաղթված ստրուկները՝ արտադրելով ու վերարտադրելով զանգվածային մշակութային բռնություն՝ համատարած ռասիստական գաղափարներով: Որոշ ժամանակ անց ուղղակի բռնությունը մոռացվում է, ստրկությունը մոռացվում է, և միայն երկու դժգույն պիտակներ են մնում քոլեջների դասագրքերում. «խտրականություն»՝ զանգվածային կառուցվածքային բռնության փոխարեն և «նախապաշարմունք»՝ զանգվածային մշակութային բռնության փոխարեն: Լեզվի առողջացում, ինչն ինքնին մշակութային բռնություն է:

Բռնության արատավոր շրջանը կարող է սկիզբ առնել նաև կառուցվածքային բռնության անկյունից: Սոցիալական տարբերակումը դանդաղորեն ձեռք է բերում ուղղահայաց բնութագրեր՝ աճող անհավասար փոխանակմամբ, և սոցիալական փաստերն այդ դեպքում կպահանջեն իրենց հարատևումն ապահովող հասարակական գործողություններ, իսկ մշակութային բռնությունը դրանք արդարացնելու համար պիտի ստեղծի «մատերիալիստական» (որ նշանակում է՝ կառուցվածքային)՝ մարքսիստական տեսությունը: Կամ արատավոր շրջանը կարող է սկսվել համակցված ուղղակի և կառուցվածքային բռնությունից, երբ մի խումբը մյուսի նկատմամբ այնքան վատ վերաբերմունք է դրսևորում, որ զգում է արդարացման պահանջ և պատրաստակամությամբ ընդունում է ցանկացած քիչ թե շատ տրամաբանական բացատրություն: Ավելի քան հազար տարի առաջ վիկինգները հարձակվել էին ռուսների վրա, սպանել նրանց: Կարո՞ղ է արդյոք սա բավարար պատճառ ծառայել մի գաղափար ձևակերպելու համար, թե ռուսները վտանգավոր են, վայրենի, պրիմիտիվ, այն է՝ նրանք կարող են մի օր գալ և նույն կերպ վարվել մեզ հետ[14]: Եվ նույնիսկ, երբ Գերմանիան 1940 թվականի ապրիլին հարձակվեց Նորվեգիայի վրա, պաշտոնական եզրահանգումն այն էր, որ ռուսները վտանգավոր են, որովհետև կարող են մի օր նույնը անել: Այստեղ գործ ունենք անակնկալ հարձակման վնասվածքի հետ: Կարո՞ղ է, արդյոք, լինել է՛լ ավելի խորքային շերտ՝ մարդկային բնույթը՝ գենետիկորեն փոխանցվող հակվածությունը կամ առնվազն նախահակվածությունը առ ագրեսիա (ուղղակի բռնություն) և գերիշխումը (կառուցվածքային բռնություն): Անշուշտ, հենց այստեղ է ուղղակի ու կառուցվածքային բռնության, ինչպես նաև ուղղակի ու կառուցվածքային խաղաղության մարդկային ներուժը: Իմ կարծիքով, այդուհանդերձ, ամենակարևոր փաստարկն ընդդեմ կենսաբանական պատճառապաշտության, որը մարդկային բնույթում ագրեսիայի և գերիշխման մղումը համեմատելի է դիտում սննդի և սեռական հարաբերությունների մղման հետ, ագրե-

սիվության և գերիշխելու *տարակերպության* բարձր մակարդակն է: Մարդիկ սնունդ և սեռական հարաբերություններ են որոնում (գրեթե) ցանկացած (արտաքին) դեպքում: Բայց ագրեսիան և գերիշխելը ցուցաբերում են վիթխարի բազմազանություն՝ պայմանավորված բովանդակությամբ՝ ներառյալ կառուցվածքային և մշակութային պայմանները: Մղումն, իհարկե, կարող է առկա լինել, սակայն ոչ այնքան զորեղ, որպեսզի իր մասին հայտարարի ցանկացած դեպքում: Նման դեպքերում խաղաղության հետազոտողի խնդիրը պետք է լինի ճանաչել այդ կողմերը և վերհանել դրանք վերացնելու կամ փոփոխելու ուղիները: Այստեղ իմ վարկածը հետևյալն է. «կառուցվածք» և «մշակույթ» տերմինները շատ հարմար են նման հետազոտության համար:

Այժմ եկեք քաղենք այս վարժության ամենակարևոր պտուղը. մենք կարող ենք այն օգտագործել՝ հստակեցնելու *միլիտարիզացում* հասկացությունը՝ որպես գործընթաց, և *միլիտարիզմը*՝ որպես այդ գործընթացն ուղեկցող գաղափարախոսություն: Ասպեկտներից մեկը, ակնհայտորեն, դեպի ուղղակի բռնություն ընդհանուր հակվածությունն է՝ իրական ռազմական գործողության կամ դրա սպառնալիքի ձևով: Այդ հակվածության հետքերով գալիս են համապատասխան ռազմական միջոցների և դրանց կիրառման տեխնոլոգիաների արտադրությունն ու տեղակայումը: Խիստ մակերեսային կլինի, սակայն, միլիտարիզացման ուսումնասիրությունը հիմնվում է սոսկ անցած ռազմական գործողությունների, ներկա արտադրության և տեղակայման մոդելների վրա[15], և դա կհանգեցնի մակերեսային ու թեթև եզրակացությունների՝ սոսկ անձնակազմի, բյուջեի և սպառազինությունների վերահսկման վերաբերյալ: Լավ քաղհանը պետք է հասնի մինչև արմատները, տվյալ դեպքում՝ մինչև կառուցվածքային ու մշակութային արմատները, ինչպես ենթադրում է եռաշերտ պարադիգմը: Ավելի որոշակի, սա նշանակում է՝ տարբերակել այն կառուցվածքային ու մշակութային ասպեկտները, որոնք միտված են ռազմական գործողությունների, ռազմական արտադրության և ռազմական տեղակայման պատրաստակամությունը վերարտադրելուն: Իսկ սա իր հերթին ներառում է տղաներին դպրոցներում խմբելը, անդրանիկության իրավունքը[16], գործազրկությունը և շահագործումն առհասարակ: Ավելին, ռազմական արտադրության և տեղակայման օգտագործումը՝ տնտեսական աճը և տնտեսական բաշխումը խթանելու նպատակով, անհաշտ ազգայնական, ռասիստական, սեռային գաղափարախոսություններ[17] և այլն: Մասնավոր ուշադրության են արժանի ռազմական ուսուցման և վարժանքի բաղկացուցիչների ընդգրկումը բարձրագույն դպրոցների և համալսարանների ուսումնական ծրագրերում ու կառույցներում,[18] ինչպես նաև միլիտարիզմի՝ որպես մշակույթի տարածումը: Կառուցվածքն ու մշակույթը, այդուհանդերձ, սովորաբար ընդգրկված չեն լինում «սպառազինությունների վերահսկողության» ուսումնասիրություններում, քանզի երկուսն էլ խիստ զգայուն ոլորտներ են: Այս տաբու-արգելքները պետք է վերացվեն:

1.4 Մշակութային բռնության օրինակներ

Այժմ անդրադառնանք մշակութային վեց բնագավառներին, որոնք հիշատակել ենք ներածության մեջ՝ կրոն և գաղափարախոսություն, լեզու և արվեստ, էմպիրիկ ու ձևական գիտություններ, և բերենք յուրաքանչյուր բնագավառում

մշակութային բռնության մեկ կամ երկու օրինակ: Սխեմայի տրամաբանությունը պարզ է. սահմանել մշակութային տարրը և ցույց տալ, թե ինչպես կարող է վերջինս էմպիրիկորեն կամ պոտենցիալ կերպով օգտագործվել ուղղակի կամ կառուցվածքային բռնությունը լեգիտիմացնելու համար:

1. *Կրոն*

Բոլոր կրոններում առկա է սրբագործվածը՝ *das Heilige*, դա անվանենք «աստված»: Հիմնական տարբերությունը կարելի է դնել տրանսցենդենտալ Աստծո, որ մեզանից դուրս է, և ներիմացական (իմանենտ) Աստծո, որ մեր ներսում է, թերևս անգամ՝ ամբողջական կյանքի մեջ, նրա ներսում:[19] Տորայի հուդայականությունը, որ հիմնադրվել է գրեթե 4 հազար տարի առաջ, Աստծուն դիտարկում է որպես Երկիր մոլորակից դուրս գտնվող արական աստվածություն: Աղետալի մի գաղափար. վերիմացականացման՝ իբրև փոխաբերություն ընկալման հստակ դեպք, որ հանգեցնում է բազմաթիվ հետևանքների, և որը վերցրել են սեմիտական կամ արևմտյան այլ կրոններ, քրիստոնեությունը և իսլամը: Երբ Աստված (որպես Աստված) մեզանից դուրս է և անգամ՝ «բարձր» («Հայր մեր, որ երկնքում ես»), անխուսափելիորեն խիստ հավանական է, որ որոշ մարդիկ ավելի մոտ դիտվեն այդ Աստծուն, քան մյուսները, անգամ՝ ավելի «բարձր»: Ավելին՝ ընդհանուր արևմտյան ավանդույթում՝ ոչ միայն երկակիության, այլև մանիքեականության մեջ, որտեղ հստակ բաժանում կա (երկվություն) բարու և չարի միջև, պետք է լինի նաև չար Սատանայի պես մի բան, որ համապատասխանի բարի Աստծուն՝ սիմետրիայի առումով: Եվ դարձյալ՝ հնարավոր են ինչպես վերիմացական, այդպես էլ ներիմացական պատկերացումներ, երբ Աստված և սատանան տիրում են կամ առնվազն ընտրում են իրենցը, կամ երբ Աստված կամ սատանան, եթե չասենք Աստված *և* սատանան, մեր ներսում են: Արևմտյան կրոններում առկա են բոլոր համադրումները: Բայց կենտրոնականն այստեղ կոշտ տարբերակն է՝ հավատը վերիմացական Աստծո և վերիմացական սատանայի հանդեպ:

Ո՞ւմ է ընտրում Աստված: Արդարացի կլինի՞ արդյոք հավատալ, որ նա ընտրում է առավելապես «իր կերպարով ու նմանությամբ»՝ մնացածներին թողնելով սատանային, ինչպես նշված է աղյուսակ 1.2-ում: Սա մեզ կհանգեցնի կրկնակի բաժանման (երկվության)՝ Աստված, Ընտրյալներ (Աստծո կողմից), Ոչ ընտրյալներ (Աստծո կողմից, սակայն ընտրված սատանայի կողմից) և սատանա, որտեղ ընտրյալները գնում են դեպի փրկություն և Դրախտում Աստծո կողքին լինելը, իսկ ոչ ընտրյալները՝ դեպի անեծք ու Դժոխքում Սատանայի կողքին լինելը: Ինչևէ, Դրախտն ու Դժոխքը կարող են վերարտադրվել երկրի վրա՝ որպես նմուշ կամ «կյանքից հետո»-ի հավաստում: Թշվառություն/Ճոխությունը կարող են դիտվել որպես Դժոխք/ Դրախտի նախապատրաստություններ, իսկ սոցիալական խավերը՝ Աստծո մատ:

Աստծո ներիմացական (իմանենտ) ընկալումը, թե Աստված մեր ներսում է, նման երվությունը դարձնում է Աստծո դեմ ուղղված գործողություն: Վերիմացական Աստծո դեպքում, այնուամենայնիվ, այս ամենն իմաստ ունի: Աղյուսակ 1.2-ում բերված առաջին երեք ընտրություններին հանդիպում ենք դեռևս Ծննդոց Գրքում: Վերջին ընտրությունը բնորոշ է Նոր Կտակարանին, որը կենտրոնանում է ոչ միայն սոսկ ճիշտ արարքների, այլ ճշմարիտ հավատքի վրա: Մյուս երկուսը կարելի է գտնել որպես իրարից բավական հեռու գտվող հղումներ, մի կողմից՝ ստրուկներին, իսկ մյուս կողմից՝ և՛ Աստծոն, և՛ Կեսա-

րին (Աստծունն՝ Աստծուն, Կեսարինը՝ Կեսարին): Ենթադրվում է, որ վերին դասակարգերն ավելի մոտ են Աստծուն և միշտ էլ ավելի մոտ են եղել. կղերականությունը՝ այն ակնհայտ պատճառով, որ հատուկ պատկերացումներ ունի, թե ինչպես է հարկավոր շփվել Աստծո հետ, ազնվականությունը՝ մասնավորապես *rex gratia dei*-ով պայմանավորված և կապիտալիստները, եթե հաջողակ են: Ընտրյալներ են նաև ցածր դասակարգերը՝ որպես Դրախտ առաջինը մտնողներ, բայց՝ մյուս կյանքում: Այդ վեցը միասին կազմում են կոշտ հուդայականություն – քրիստոնեություն – իսլամ, որը կարող է մեղմացվել՝ զիջելով որոշ դիրքեր և վերածվել մեղմ իսլամի, մեղմ քրիստոնեության և մեղմ հուդայականության՝որդեգրելով աստծո ավելի ներիմացական (իմանենտ) ընկալում (սուֆիզմ, Ֆրանսիսկ Ասսիզեցի, Սպինոզա): Աղյուսակ 1.2-ի աջ սյունակում բերված հետևանքները նույնպես կարող են բխել ընտրյալների աստվածաբանությունից տարբերվող նախադրյալներից. աղյուսակում բերված են միայն նպաստող, ինքնաբավ պատճառները:

Աղյուսակ 1.2. Ընտրյալները և Ոչ ընտրյալները

Աստված ընտրում է	Թողնում է Սատանային	Հետևանքները
Մարդ արարածների	Կենդանիներին, բույսերը, բնությունը	Տեսակապաշտություն, էկոսպանություն
Տղամարդկանց	Կանանց	Սեռախտրություն, վիուկներին խարույկ բարձրացնելը
Իր ժողովրդին	Մյուսներին	Ազգայնականություն, իմպերիալիզմ
Սպիտակամորթներին	Գունավոր մաշկ ունեցողներին	Ռասիզմ, գաղութատիրություն
Վերին դասակարգերին	Ստորին դասակարգերին	Դասակարգախտրություն, շահագործում
Ճշմարիտ հավատացյալներին	Հերետիկոսներին, կռապաշտներին	«Մերիտիզմ», ինկվիզիցիա

Որպես ժամանակակից օրինակ՝ դիտարկենք Իսրայելի քաղաքականությունը պաղեստինցիների նկատմամբ: Ընտրյալ ժողովուրդն ունի անգամ Ավետյաց երկիր՝ *Eretz Yisrael.* Նրանք դրսևորում են միանգամայն կանխատեսելի վարքագիծ, որ գալիս է ընտրյալ լինելուց, ինչը մշակութային բռնության արատավոր տեսակ է և հանդես է գալիս աղյուսակ 1.1-ում բերված ուղղակի և մշակութային բռնության բոլոր 8 ձևերով: Առկա է սպանելը, խեղելը, Արևմտյան ափի բնակիչներին նյութական արժեքներից զրկելը՝ թողնելով առանց գոյության միջոցներից: Իսրայել թեոկրատիկ պետության ներսում տեղ է գտել ապասոցիալականացումը, երբ առկա է ոչ հրեաների երկրորդ կարգի քաղաքացիություն: Տեղ են գտնում կալանումներ, առանձին մարդկանց արտաքսում և զանգվածային արտաքսման երկարամյա քաղաքականություն: Առկա է շահագործում, առնվազն՝ շահագործում B:

Լավ զարգացած են շահագործման չորս ուղեկցող հանգամանքները. այն բանին ուղղված ջանքերը, որ պաղեստինցիներն «ընտելանան» իրենց տեսնել որպես underdogs, ովքեր լավագույն դեպքում կարող են ստանալ երկրորդ

կարգի քաղաքացիություն, պաղեստինցիներին տնտեսական գործունեության սահմանափակ հնարավորություններ տալը, նրանց հրեական հասարակությունից դուրս պահելն ինչպես Կանաչ գծի ներսում, այնպես էլ դրսում և պաղեստինցիներին *divide et impera* («Բաժանիր, որ տիրես») սկզբունքով (ինչպես Քեմփ Դևիդի գործընթացում) և ոչ որպես մեկ ժողովրդի վերաբերվելը: Չկա ո՛չ զանգվածային ոչնչացում և ո՛չ էլ զանգվածային շահագործում A, ինչպիսին առկա է արտաքին պարտքի ծանր բեռը կրող Երրորդ աշխարհի բազմաթիվ երկրներում և ինչը հարվածում է առաջին հերթին երեխաներին: Շահագործումը ավելի հավասարապես է բաշխված բոլոր ութ տեսակների միջև: Ոմանց համար, ովքեր սա դիտարկում են՝ ելնելով հիտլերիզմի և ստալինիզմի բնաջնջումներից և ռեյգանիզմի շահագործում A-ից, այս ամենը նշանակում է, որ զանգվածային բռնություն տեղի չի ունենում՝ դրանով իսկ հաստատելով, թե որքան մարդասեր են իսրայելցիները: Նման նպատակները նույնպես մշակութային բռնության օրինակներ են, որ ցույց են տալիս, թե ներկա դարում որքանով են բարոյական դարձել չափանիշները:[20]

2. *Գաղափարախոսություն*

Սեկուլարիզացման ճանապարհով Աստծո (ոչ միայն վերիմացական, այլև ներիմացական) անկման, թերևս նույնիսկ մահվան հետևանքով կարող ենք ակնկալել կրոնի հետևորդներ ի դեմս քաղաքական գաղափարախոսությունների և Աստծո հետևորդներ՝ ի դեմս ժամանակակից պետության: Կրոնն ու Աստված կարող են մեռնել, բայց չի կարող մեռնել հստակ և իմաստավորված երկվությունների շատ ավելի հիմնավոր գաղափարը: Կարելի է այլևս բաժանարար գծեր չտանել Աստծո, Ընտրյալների, Ոչ ընտրյալների և սատանայի միջև: Արդի իրողությունը կարող է ժխտել Աստծուն և սատանային, բայց պահանջել Ընտրյալների և Ոչ ընտրյալների տարբերակում. նրանց անվանենք Մենք և Նրանք: Նախատիպը՝ ազգայնականություն, որտեղ Պետությունը Աստծո ժառանգորդն է:

Կառուցվող աստիճանականությունը մեծ թեքություն է ունենում՝ ուռճացնելով, անգամ մեծարելով «Մենք»-ի արժեքը և փոքրացնելով, անգամ ստորացնելով «Նրանք»-ինը: Այդ կետում կառուցվածքային բռնությունը կարող է սկսել գործել: Այն միտված կլինի վերածվելու ինքնիրականացող գուշակության. մարդիկ ստորացված են դառնում շահագործման հետևանքով և շահագործվում են, որովհետև դիտվում են ստորացված, ապամարդկայնացված: Երբ «Նրանք» ոչ միայն ապամարդկայնացված են, այլև հաջողությամբ վերածված են «դրանց», զրկված են մարդկայնությունից, ամեն բան պատրաստ է ուղղակի բռնության ցանկացած տեսակի համար, և այդ բռնության մեղքը հետագայում դրվում է հենց զոհի վրա: Իսկ ավելի ուշ դա ամրապնդվում է «վտանգավոր դրանք» կատեգորիայով. «մակաբույծ» կամ «բակտերիա» (ինչպես Հիտլերն էր բնորոշում հրեաներին), «դասակարգային թշնամի» (ինչպես Ստալինն էր բնորոշում կուլակներին), «կատաղած շուն» (ինչպես Ռեյգանն էր բնորոշում Կադաֆիին), «ստոր հանցագործներ» (ինչպես Վաշինգտոնի փորձագետներն են բնորոշում «ահաբեկիչներին»): Ոչնչացումը դառնում է հոգեբանորեն հնարավոր պարտականություն: Հիտլերյան «Էս-Էս» զորախմբերը վերածվում են հերոսների, որոնց մեծարում են իրենց պարտականությունը նվիրվածությամբ կատարելու համար:

Կիրառելով աղյուսակ 1.2-ի վեց բաժանումները՝ կարելի է հեշտությամբ տեսնել, թե ինչպես կարող են ընտրյալները ընտրյալ մնալ՝ առանց վերիմացական Աստծո: Այսպիսով, միայն մարդ արարածներն են ունակ ինքնառեֆլեքսիայի. տղամարդիկ ավելի ուժեղ/տրամաբանված են, քան կանայք, որոշակի ազգեր ավելի ժամանակակից են/քաղաքակրթության և պատմական գործընթացի ավելի ընդգծված կրողներն են, սպիտակամորթներն ավելի խելացի/տրամաբանված են, քան ոչ սպիտակամորթները, արդի «հավասար հնարավորությունների» հասարակության մեջ լավագույնները վերնախավում են, ուստի նրանցն են իշխանությունն ու արտոնությունները: Արդիականացման, զարգացման, առաջընթացի նկատմամբ հավատի որոշակի սկզբունքներն անհերքելի են դիտվում. դրանց չհավատալը վատ է անդրադառնում ոչ թե հավատի, այլ բուն չհավատացողի վրա:

Այս բոլոր գաղափարներն արևմտյան մշակույթում եղել և մնում են բավական ուժեղ, թեև հավատն էապես խթանել է տղամարդկանց, արևմտյանի և սպիտակամորթների բնածին գերազանցության հանդեպ կանանց, ոչ արևմտյան ժողովուրդների (ինչպես ճապոնական տնտեսական հաջողությունը Արևմուտքի նկատմամբ), արևմտյան հասարակությունների ներսում ոչ սպիտակամորթների ազատագրական պայքարը: Միացյալ Նահանգները, որ աշխարհի ամենաքրիստոնեական երկիրն է, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին խոշոր թատերաբեմ է եղել այդ պայքարների համար: Մշակութային բռնության նվազեցումը ԱՄՆ-ում հատկապես կարևոր է, քանի որ այդ երկիրը մյուսների համար օրինակ է ծառայում:

Այս երեք հանձնառությունները, որ հիմնված են ի ծնե տրված հատկանիշների վրա՝ սեռ, ռասա և ազգություն, դժվար է պահպանել հաջողություններին միտված հասարակության մեջ: Բայց եթե ժամանակակից հասարակությունը մերիտոկրատական է (արժանիքների վրա հիմնված հասարակություն), ապա վերևում գտնվողների իշխանությունն ու արտոնությունները հերքելը կնշանակի հերքել հենց արժանիքը: «Ժամանակակից կողմնորոշման» գոնե նվազագույնի մերժումը՝ ներառյալ արժանավորների իշխանության և արտոնությունների, ինչպես նաև մարդկային կյանքը կյանքի այլ ձևերից հստակ սահմանազատելու մերժումը, ուղի է հարթում ցանկացած հավատի համար: Կարճ ասած՝ ընտրյալությունը որոշ ժամանակ կմնա որպես տեսակապաշտություն, դասակարգախտրություն և մերիտիզմ՝ անկախ Աստծո և սատանայի կարգավիճակից:

Ազգայնականության գաղափարախոսությունը, որ արմատավորված է Ընտրյալ ժողովրդի կերպարում և արդարացվում է կրոնի ու գաղափարախոսության միջոցով, պետք է դիտարկել պետության գաղափարախոսության՝ պետությունապաշտության հետ կապով: Հետպատերազմյան Ճապոնիայի Խաղաղության սահմանադրության (որը մշակութային խաղաղություն հաստատելու կարճատև ջանք էր) 9-րդ հոդվածը վերապահում է, թե «Չի ճանաչվում պետության (Ճապոնիայի) պատերազմողության իրավունքը»: Ակնհայտորեն Ճապոնիան զրկվել է այդ իրավունքից, մինչդեռ մյուսները՝ ենթադրաբար հաղթողները, պատերազմից դուրս են եկել՝ պահպանելով, անգամ ամրապնդելով այդ իրավունքը:

Որտեղի՞ց է եկել պատերազմողության այդ իրավունքը: Ակունքները ավատատիրական են, ուղղակիորեն փոխառված *rex gratia dei*-ների *ultima*

ratio regis[i] ունենալու բացառիկ իրավունքից: Ուստի պետությունը կարելի է դիտարկել իբրև Իշխանին անհրաժեշտ կազմակերպություն, որը բռնագանձում է բավարար հարկեր (իսկ 1793-ից հետո՝ զորակոչիկներ)՝ ավելի ու ավելի մեծ ծախսեր պահանջող բանակների ու նավատորմերի համար: Թերևս, ինչպես նկատել է Կրիպենդորֆը՝ պետությունն է ստեղծվել զինվորականությունը պահպանելու համար, և ոչ թե հակառակը[21]: Բայց պետությունը կարելի է դիտարկել նաև որպես Աստծո ժառանգորդներից մեկը, որը ժառանգել է կյանքը ոչնչացնելու իրավունքը (մահապատիժ), եթե ոչ այն ստեղծելու իրավունքը: Շատերը պետությանը վերագրում են նաև կյանքի ստեղծումը վերահսկելու իրավունք՝ գերագույն իշխանություն գործադրելով հղի կանանց վրա:[22]

Համադրեք ազգայնականությունը Մենք-Նրանք աստիճանականությունների հետ և պետությունապաշտությունը՝ գերագույն իշխանություն գործադրելու իր իրավունքով և անգամ պարտականությամբ, ու կստանաք ազգ - պետություն (nation-state) տգեղ գաղափարախոսությունը, որը ևս մեկ աղետաբեր գաղափար է: Ժամանակակից պատերազմներում սպանությունները կատարվում են հանուն «ազգի», որը բոլոր քաղաքացիների էթնիկական միասնությունն է: Ժողովրդավարության նոր գաղափարը կարող է հարմարեցվել անցումային այնպիսի բանաձևերի, ինչպիսին է *vox populi, vos dei*[ii]: Մահապատիժը նույնպես իրականացվում է «X պետության ժողովրդի անունից», սակայն, ինչպես և պատերազմը, պետք է պատվիրված լինի Պետության կողմից: Հղիության արհեստական ընդհատման դեմ պայքարողների զգազմունքներից շատերը հիմնված են այն զգացողության վրա, թե մոր կողմից հղիությունը ընդհատելու մասին որոշումն ընդունելը խարխլում է պետության մենաշնորհը կյանքի նկատմամբ: Եթե հղիության արհեստական ընդհատման դեմ զգացմունքը իրոք հիմնված լիներ պտղի՝ սուրբ լինելու զգացմունքի վրա (*homo res sacra hominibus*), ապա այդ մարդիկ կհավասարվեին խաղաղականներին. նրանք հանդես կգային ընդդեմ մահապատժի, վրդովմունքով կխոսեին սևամորթների բարձր մահացության մակարդակի մասին ԱՄՆ-ում և այլուր: Ընտրության գերակայությունը հղիության արհեստական դադարեցումն արգելելու նկատմամբ, անշուշտ, մշակութային բռնության տեսակ է, որ հիմնված է այն համոզմունքի վրա, թե պտղի կյանքը մարդկային չէ, թե պտուղն անշուշ իր է:[23]

Համադրեք ազգ-պետության գաղափարախոսությունը աստվածաբանորեն հիմնավորված Ընտրյալ ժողովրդի բարդույթի հետ, և աղետի թատերաբեմը պատրաստ կլինի. Իսրայելը (Եհովա), Իրանը (Ալլահ), Ճապոնիան (Ամաթերասու-Օմիկամի), Հարավային Աֆրիկան (հոլանդական «բարեփոխված» Աստված), Միացյալ Նահանգները (հրեա-քրիստոնեական Եհովա-Աստված) ճգնաժամային իրավիճակներում ամեն ինչի ընդունակ, համեմատաբար հստակ օրինակներ են: Նացիստական Գերմանիան (նացիստական Օդին/Վոթան-Աստված) նույն կարգին էր պատկանում: Հետգորբաչովյան Ռուսաստանը (Գորբաչովն իրեն համարում էր Լենինի ժառանգորդը 61-ամյա լճացումից (ստագնացիայից) հետո) հավանաբար դեռևս շարունակում է աշխատել Պատմության կողմից առանձնահատուկ առաքելության համար ընտրված Ընտրյալ ժողովուրդ կոչվելու ուղղությամբ: Գերակայության նույն

[i] ultima ratio regis (լատ.)- արքայի (համոզիչ) վերջին փաստարկ /թարգ./
[ii] vox populi, vos dei (լատ.)- ձայն բազմաց, ձայն Աստծո /թարգ./

բարդույթն ունի նաև Ֆրանսիան. այն գաղափարը, թե Ֆրանսիան կարող է ընտրվել որևէ մեկի կողմից, կնշանակի, որ կան Ֆրանսիայից վեր գտնվողներ, ինչն անընդունելի գաղափար է: Ֆրանսիան ինքն է ընտրում իրեն (*un peuple élu, mais par lui-même*[i]), ինչի օրինակը կարող է հանդիսանալ հետևյալ նախատիպային գործողությունը. երբ 1804 թվականին Հռոմի պապը թագադրում էր Նապոլեոնին, վերջինս Պապի ձեռքից վերցրեց գահը և ինքը դրեց իր գլխին:

3. *Լեզու*

Որոշ լեզուներ, որոնք լատինական բառապաշար ունեն, օրինակ, իտալերենը, իսպաներենը, ֆրանսերենը (և ժամանակակից անգլերենը), բայց ոչ գերմանական բառապաշարի հիմքով լեզուները, ինչպես գերմաներենն ու սկանդինավյան լեզուները, անտեսանելի են դարձնում կանանց, քանի որ բոլոր մարդ արարածների մասին խոսելիս օգտագործում են արական սեռը ներկայացնող բառ: Կշռադատված մշակութային փոխակերպման ակնառու օրինակ է մշակութային բռնությունից դուրս ծավալվող շարժումն հանուն ոչ սեռախտրական գրելաձևի:[24] Այս աշխատանքը անհնարին էր թվում, երբ մի քանի խիզախ կանայք ձեռնարկեցին այն, այդուհանդերձ, արդյունքներն արդեն տեսանելի են: Բացի այդ, գոյություն ունեն լեզվի ավելի նուրբ, ավելի ներակա կողմեր, որտեղ բռնությունը պակաս հստակ է: Հնդեվրոպական լեզուների և չինարենի ու ճապոներենի հիմնական հատկանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ հնդեվրոպական լեզուներում տարածական ու ժամանակային պարտադրանքն ավելի կոշտ է:[25] Այդ համեմատությունը վերհանում է նաև համապատասխան կոշտությունը տրամաբանական կառուցվածքում՝ հիմնավորված եզրակացությունների հանգելու հնարավորության շեշտադրությամբ (այստեղից է գալիս «տրամաբանական» լինելու արևմտյան հպարտությունը), գոյն ու տեսլականը լեզվաբանորեն տարբերակելու միտումը՝ տեղ թողնելով գոյի անմահության համար և ներակայորեն համաձայնելով, թե օրինաչափ կլինի ոչնչացնել այն, ինչ միայն տեսլական է: Ամեն դեպքում, սա խորը մշակույթ է, բռնության եռանկյան ստորին շերտի ամենախորը նստվածքը: Ուղղակի և կառուցվածքային բռնության հետ կապն այստեղ անհնարին է:

4. *Արվեստ*

Թույլ տվեք խոսել մի հարցի շուրջ, որը կարևոր է Եվրամիության՝ որպես 1967 թվականի Եվրոպական Համայնքի ժառանգորդ ներկայանալու առումով:[26] Ինչպե՞ս է Եվրոպան ընկալում ինքն իրեն: Հունական դիցաբանության մեջ «Եվրոպային» առնչվող պատմությունը շատ բանով չի օգնում: Եվրոպայի ընկալումը իբրև ոչ-եվրոպական շրջապատի բացասում, մեզ շատ ավելի հեռուն է տանում: Իսկ այդ շրջապատը Միջնադարից Արդի ժամանակաշրջանին անցման ժամանակ հսկայական Օսմանյան կայսրությունն էր, որ ձգվում էր դեպի արևելք և հարավ՝ հասնելով Վիեննայի պարիսպներին (1683), նվաճելով Սիրիան և Եգիպտոսը (1517), վասսալացնելով հետագայում Տրիպոլիտանիան, Թունիսը և Ալժիրը ու թողնելով միայն Ֆեզի սուլթանու-

[i] un peuple élu, mais par lui-même (ֆր.)- ընտրյալ ազգ, բայց իր իսկ կողմից /թարգ./

թյունը և Մարոկկոն՝ փոքր իսպանական Հաբսբուրգ անկլավով: Միակ ոչ-արևելյան (ոչ արաբական, ոչ մահմեդական նշանակությամբ) շրջապատը Ռուսաստանն էր՝ աղքատ, հսկայածավալ ժամանակի ու տարածության մեջ: Քնած, բայց հսկա:[27]

Եվրոպան, հետևաբար, պետք է ինքն իրեն ընկալի որպես հարավի և հարավ-արևելքի թշնամու բացասում: Այստեղից էլ զարգացավ «արևելյան բռնակալություն» փոխաբերությունը, որ դեռևս կայուն տեղ ունի եվրոպացիների մտածողության մեջ՝ պայքարի մեջ մտնելով «շրջապատի» հետ: «Արևելյան բռնակալին» բնորոշում է կոպտությունն ու քմահաճությունը: Այսպես, նա սպանեց Եվրոպական իշխանին՝ դատելով սեփական քմահաճույքով, ոչ թե օրենքով: Սեռական առումով նա վայելում էր մատչելիություն (ինչի հնարավորությունը տալիս էր հարեմը), որին իր եվրոպական գործընկերները կարող էին սոսկ մոտենալ՝ գիշերները ծածուկ բռնաբարելով գեղջկուհիների: Այսպես էին վարվում քրիստոնեական մոնոգամիայով չսահմանափակված մահմեդականները: Ֆրանսիայում 19-րդ դարում առաջացավ գեղանկարչական դպրոց, որն արևելյան բռնակալությունը ներկայացնում էր սեքսով ու բռնությամբ շրջապատված: Դրա ակնհայտ օրինակներից են Անրի Ռենոյի «Մահապատիժ առանց դատավարության» և Էժեն Դելակրուայի «Սարդանապալի մահը» կտավները: Հեգելը, որին հետևեց նաև Մարքսը, նույնպես արևելյան բռնակալությունը և արևելյան (կամ ասիական) արտադրակերպը համարում էր բացասական, միատարր, լճացած:

Այս բարդույթի հետևանքով է, որ Եվրոպան շրջապատող կիսաշրջանի ոչ արաբական մասը՝ Ռուսաստանը, նույնպես պետք է դիտվեր արևելյան բռնակալության տեսանկյունից: «Բռնակալությունը» գուցե առանց մեծ առարկությունների հարմար էր գալիս ցարերին, բայց արևելյա՞ն: Այդ կերպարը, հավանաբար, դարեր շարունակ ազդել է Ռուսաստանի և Խորհրդային Միության մասին եվրոպական պատկերացումների վրա և ազդում է թերևս մինչև հիմա՝ երկու դեպքում էլ որպես միտումնավոր արհամարհանք:

5. *Էմպիրիկ գիտություն*

Մշակութային բռնության օրինակներից է նեոդասական տնտեսագիտական հայեցակարգը, որը ներկայացնում է իրեն որպես տնտեսական գործունեության գիտություն: Գտնվելով Ադամ Սմիթի ավանդույթների ուժեղ ազդեցության տակ, նեոդասական տնտեսագիտությունն այժմ էմպիրիկ կերպով ուսումնասիրում է սեփական հայեցակարգերով նախանշված համակարգը և հաճախ էմպիրիկ իրականության մեջ գտնում է սեփական ինքնիրագործվող կանխատեսումների հաստատումը: Նեոդասական դոգմայի կամ «կոնվենցիոնալ իմաստության» բաղկացուցիչներից է «համեմատական առավելությունների» վրա հիմնված առևտրի տեսությունը, որն առաջինը հիմնավորել է Դեյվիդ Ռիկարդոն, իսկ հետագայում զարգացվել է Հեխշերի ու Օհլինի և Յան Թինբերգենի կողմից: Այս հայեցակարգը ենթադրում է, որ ամեն մի երկիր համաշխարհային շուկա պետք է մտնի այն ապրանքով, որի արտադրության գործոնների առումով տվյալ երկիրը համեմատական առավելություններ ունի:

Գործնականում դա նշանակում է, որ երկրները, որոնք հարուստ են հումքով, բայց չունեն որակյալ աշխատուժ, պետք է արտահանեն հումք, իսկ կապիտալով և տեխնոլոգիաներով, որակյալ աշխատուժով և գիտնականներով հարուստ երկրներն էլ պետք է արտահանեն հենց դրանք: Այդպես էլ Պորտու-

գալիան հրաժարվեց իր թեթև արդյունաբերությունից և վերածվեց միջակ գինի արտադրողի, մինչդեռ Անգլիան օգտագործեց այդ խթանը որպես անհրաժեշտ մարտահրավեր՝ էլ ավելի զարգացնելու իր արդյունաբերական հզորությունները: Այս հայեցակարգի հետևանքներն աշխարհում աշխատանքի ուղղահայաց բաժանման տեսքով ներկայում տեսանելի են բոլորի համար: Կառուցվածքային բռնությունն ամենուր է՝ երկրների միջև և երկրների ներսում:[28]

Այսպիսով, համեմատական առավելությունների հայեցակարգը ծառայում է աշխարհի կոպիտ բաժանմանը՝ ելնելով այն չափանիշից, թե մինչև ինչ աստիճան են երկրները մշակում իրենց կողմից արտահանվող ապրանքները: Քանի որ դա կոպիտ հաշվարկով համամասնական է այն մարտահրավերներին, որ նրանք ստանում են արտադրության գործընթացում, համեմատական առավելությունների սկզբունքը երկրներին դատապարտում է մնալու այն տեղում, ուր նրանց դրել է արտադրության գործոնների մասնագիտացումը՝ աշխարհագրական և պատմական պատճառներով: Անշուշտ, չկա իրավական կամ էմպիրիկ որևէ օրենք, որն արգելում է երկրներին միջոցներ ձեռնարկելու իրենց արտադրության մասնագիտացումը փոխելու ուղղությամբ. այս հիմնարար դրույթը պատկանում է ճապոնացի տնտեսագետ Քանամե Աքամացուին:[29] Բայց դա անելն այնքան էլ դյուրին չէ, երբ պահավիճակի պահպանումն անմիջական շահեր է ապահովում նրանց համար, ում սեփականությունն է հումք/ապրանքը: Այսպիսով, հենց համեմատական առավելությունների «օրենքն» է օրինականացնում կառուցվածքային առումով անընդունելի պահավիճակը: Կարճ ասած՝ այս «օրենքը» մշակութային բռնության մի հատված է, որ թաղված է տնտեսության առանցքային խորքերում:

6. *Ձևական գիտություն*

Նույնն, անշուշտ, չի կարելի ասել մաթեմատիկայի մասին, այդպես չէ՞: Դա այնքան էլ ակնհայտ չէ: Եթե մաթեմատիկան դիտարկենք որպես ձևական խաղ (մեկ հիմնական կանոնով, ըստ որի չեն կարող միաժամանակ ճիշտ լինել թեորեմն ու այն ժխտող թեորեմը), ապա կարող են արձանագրվել բռնությանը միտված հետևանքներ: Անգամ երբ մաթեմատիկական տրամաբանությունը հետազոտում է բազմավալենտ տրամաբանությունը, կիրառվող գործիքը երկվալենտ տրամաբանությունն է՝ «ճիշտ»-ի և «ոչ ճիշտ»-ի հստակ սահմանազատմամբ. *tertium non datur*: Հեշտությամբ կարելի է տեսնել, որ այդպես էլ պետք է լիներ, քանի որ եզրակացությունը մաթեմատիկական կառույցի շաղախն է, իսկ *modus ponens*-ը և *modus tollens*-ը՝ առանցքային գործողությունները: Չի կարելի եզրակացության հանգել, երբ ճշմարիտ լինելու առումով երկիմաստ են հարաբերության նախորդ անդամը կամ բուն եզրահանգումը:[30]

Սա նշանակում է, որ մաթեմատիկան մեզ մղում է կարգապահական մի մտածելակերպի, որը խիստ մրցունակ է սև/սպիտակ մտածողության և անձնական, սոցիալական և համաշխարհային առումներով բևեռացման հետ: Մաթեմատիկական մտածողության կամ/կամ բնույթը դա վերածում է ոգևորող խաղի, սակայն որպես մարդկային, սոցիալական և համաշխարհային իրականության հստակ դիալեկտիկական մոդել՝ այն հեռու է համարժեք լինելուց: Մինչդեռ *adequatio*-ն հիմնարար պահանջ է մշակույթի համար, խորհրդանշական մի տարածք, որը մեզ պետք է առաջնորդի բռնությանը պակաս հակված պոտենցիալ իրականությունը պատկերացնելու ճանապարհին:

7. *Տիեզերաբանություն*

Մենք վերադառնում ենք մշակութային բռնությունից բռնության հակված մշակույթին անցման խնդրին: Ինչպես նշվել է 1.1 բաժնում, նման գլոբալ դատողությունների կարելի է հասնել՝ տարորոշելով էքստենսիվ ու բազմազան մշակութային ասպեկտները կրոնական և գաղափարական մտածողության մեջ, լեզվում և արվեստում, էմպիրիկ և ձևական գիտություններում, որոնք բոլորը ծառայում են բռնությունն արդարացնելուն: Այնուամենայնիվ, կա նաև այլ մոտեցում. հետազոտել մշակույթի ենթաշերտը վերհանելու համար «խորը մշակույթները», որոնք կարող են մի քանիսը լինել:[31] Մենք կդիտարկենք այսպես ասած արմատների արմատը՝ մշակութային գենետիկական կոդը, որը ծնում է մշակութային տարրեր և դրանց միջոցով վերարտադրում ինքն իրեն: Այն, որ դա չափազանց հայեցողական է դառնում, խնդրահարույց չէ: Գիտության բնույթն է այդպիսին. հիմնավորել խորքային նստվածքները՝ վերլուծելով ներակայությունները, ստուգել անհարթ եզրերով շրջապատված տեսության կոշտ էությունը:

Տիեզերաբանության հայեցակարգը կոչված է ապաստան տալու իրականության մասին ավելի խորքային ենթադրությունների ենթաշերտին՝[32] տարորոշելով բնականոն ու բնականը: Խորքային այս մակարդակի ենթադրությունները հեշտությամբ չեն հող գտնում, եթե չասենք արմատավորվում կոլեկտիվ ենթագիտակցության մեջ: Այդուհանդերձ, հենց այս մակարդակում է, որ արևմտյան մշակույթը ցույց է տալիս այնքան շատ բռնության հակված հատկանիշներ, որ սկսում է այդպիսին դիտվել ամբողջ մշակույթը: Առկա է ընտրականություն, առկա են կենտրոն – ծայրամասեր ընդգծված տարբերակումներ: Առկա է անհետաձգելիության՝ *աշխարհի վերջը եկել է* բարդույթ, որը խոչընդոտում է կառուցվածքային և ուղղակի խաղաղության դանդաղ, համբերատար կառուցմանն ու հաստատմանը: Առկա է ատոմիստական, դիխոտոմիկ մտածողություն՝ դեղուկտիվ շղթաներով, որոնք հակազդում են միջոցների և նպատակների միասնությանը: Առկա է մեծամտություն դեպի բնությունը, ինչը հակազդում է կյանքի միասնությանը: Առկա է մարդ արարածներին անհատականացնելու և դասակարգելու ուժեղ միտում, ինչը քայքայում է մարդու միասնությունը: Եվ առկա է տրանսցենդենտալ, բացարձակ Աստված՝ պատկառազդու ժառանգորդներով: Ողջ մշակույթը կրում է բռնության հսկայական ներուժ, որը կարող է դրսևորվել առավել երևացող մշակութային մակարդակում և հետագայում օգտագործվել չարդարացվելիքը արդարացնելու նպատակով: Առկա է նաև խաղաղությունը Արևմուտքում, որը երբեմն անգամ արտահոսում է Արևմուտքից, ինչը հրաշքի պես մի բան է՝ հավանաբար ավելի մեղմ դիրքորոշումների շնորհիվ:

Խնդիրն այն է, որ նման տիպի մտածողությունը տանում է դեպի անհուսության զգացում: Մշակութային գենետիկ կոդի փոփոխությունը առնվազն նույնքան դժվար է թվում, որքան կենսաբանական գենետիկ կոդի փոփոխությունը: Ավելին՝ եթե անգամ դա հնարավոր լիներ, «մշակութային ինժեներիան» կարող էր դառնալ բռնության մի ձև՝ նույնքան վիճահարույց, որքան «գենետիկ ինժեներիան»: Պե՞տք է, արդյոք, դա թողնել «պատահականությանը», ինչը նույնն է, թե՝ իշխանություն և արտոնություններ ունեցողներին:[33] Սա շատ բարդ և կարևոր ոլորտ է խաղաղության հետագա հետազոտությունների համար, ինչին կանդրադառնանք 5-րդ գլխում:

1.5 Գանդին և մշակութային բռնությունը

Ի՞նչ կասեր Գանդին այս խրթին հիմնահարցերի մասին, հաշվի առնելով, որ նա միշտ պատրաստ էր հետազոտելու ինչպես ուղղակի, այնպես էլ կառուցվածքային բռնության այլընտրանքները: Նրա պատասխանը պիտի վերարտադրեր իր էկումենիզմից բխող երկու աքսիոմներ, որոնք, ինչ-որ իմաստով ամփոփում են գանդիականությունը՝ *կյանքի միասնություն* և *միջոցների ու նպատակների միասնություն:* Առաջինը հետևում է երկրորդից, եթե ենթադրենք, որ ոչ մի կյանք և, մասնավորապես, ոչ մի մարդկային կյանք չի կարող օգտագործվել որպես նպատակի հասնելու միջոց: Եթե նպատակը գոյատևելն է, ապա միջոցը պետք է լինի այնպիսին, որը կամրապնդի կյանքը: Իսկ ինչպե՞ս ենք մենք հասկանում «միասնությունը»: Եթե օգտագործելու լինենք նախորդ բաժիններում զարգացված գաղափարները, ապա ավելի խելամիտ մեկնաբանության հիմքում, թերևս, պետք է լինի մենությունը, ոչ թե բաժանումը: Մեր մտավոր տիեզերքում կյանքի, մասնավորապես մարդկային կյանքի բոլոր ձևերը պետք է մենություն վայելեն, այլ ոչ թե միմյանցից հեռու պահվեն Մենք-Նրանք կտրուկ աստիճանականություններով, որոնք սեպեր են խրում *սոցիալական տարածքում:* Ցանկացած արդարացում, որ ածանցվում է մշակույթի կոշտ էությունից, օրինակ, Ընտրյալ ժողովուրդ կոչվելը, կմերժվի, եթե հակասության մեջ մտնի այս է՛լ ավելի բարձր, է՛լ ավելի «կոշտ» աքսիոմի հետ:

Որպես միջոցների ու նպատակների միասնություն կարելի է հասկանալ մտավոր այլ տարրերը՝ գործողությունները և գործողությունների արդյունքում տեղ գտած փաստերը, միացնելը: Դրանք չպետք է իրարից բաժանված պահվեն երկար պատճառական շղթաների միջոցով, որոնք սեպ են խրում *հասարակական ժամանակի* մեջ: Վերելքների կամ հեղափոխությունների, արդյունաբերության մեջ կամ արդյունաբերական պրոլետարիատում ներդրումների հանգեցնող երկարատև սոցիալական համաձայնություններ նախաձեռնելը այնքան էլ լավ լուծում չէ: Միջոցներն ինքնին պետք է լավը լինեն, այլ ոչ թե երկարաժամկետ նպատակների տեսանկյունից՝ ճանապարհի վերջում. այդ են վկայում հանուն «աճի/կապիտալիզմի» և «հեղափոխության/սոցիալիզմի» արդյունաբերականացման (ինդուստրիալիզմի) զոհասեղանին բերված միլիոնավոր զոհերը: «Դա արդյունք է տալիս» Էմպիրիկ պնդումից ածանցված արդարացումը մերժվում է, երբ հակասության մեջ է մտնում այս է՛լ ավելի բարձր, է՛լ ավելի «կոշտ» աքսիոմի հետ:

Կարող է օգտագործվել ցանկացած Մենք-Նրանք կտրուկ աստիճանականություն՝ արդարացնելու բռնությունն արժեքավորության ցանկում ավելի ցածր տեղ զբաղեցնողների նկատմամբ. ցանկացած պատճառական շղթա կարող է օգտագործվել՝ արդարացնելու բռնի միջոցները ոչ բռնի նպատակների հասնելու համար: Գանդին թերահավատությամբ պետք է վերաբերվեր հեղափոխության և ծանր աշխատանքի՝ հանուն վաղվա ենթադրյալ երանության մեկ կամ երկու սերունդ զոհաբերելու մարքսիստական գաղափարին: Նույն վերաբերմունքը նա պետք է ունենար ծանր աշխատանքի և ձեռնարկատիրության՝ հանուն վերնախավի այսօրվա երանության մեկ կամ երկու սոցիալական խավ զոհաբերելու գաղափարին:

Այս երկու աքսիոմներից Գանդիի եզրահանգումները հետևյալն են. հարգանք կյանքի սրբության հանդեպ (այստեղից էլ բուսակերությունը) և «հոգա՛

միջոցների մասին, իսկ նպատակներն իրենք իրենց մասին կհոգան» պատվիրանի ընդունում: Հետևաբար, կյանքի միասնության հայեցակարգը խիստ տարբերվում է «էկոլոգիական հավասարակշռության» հայեցակարգից, քանի որ առաջինը ենթադրում է *ողջ* կյանքի, ո՛չ միայն մարդկային կյանքի, և բոլոր մարդկանց, ո՛չ միայն որոշ կրոններով կամ գաղափարախոսություններով ընտրվածների (ըստ Գանդիի՝ աղավաղված կամ չհասկացված) կյանքի բարձրացում: Իսկ միջոցների և նպատակների միասնությունը կտանի դեպի համաժամանակայնության (սինխրոնիայի) հայեցակարգը, որը կոչ է անում միաժամանակ աշխատել բոլոր հարցերի ուղղությամբ[34], և ոչ թե դեպի տարաժամանակայնության (դիախրոնիայի), երբ ակնկալվում է, որ մեկ մեծ քայլը պետք է խթանի *force motrice-ը:* Արքետիպը՝ բուդդիստական անիվը, որտեղ մտածողության, խոսքի և գործողությունների տարրերը ձգտում են լինել առաջնայնության նույն մակարդակի վրա, և ո՛չ քրիստոնեական բուրգը, որտեղ դրանցից մի քանիսի վրա կենտրոնացումն ավելի է, քան մյուսների (օրինակ՝ հավատն ընդդեմ արարքների)[35]:

1.6 Ամփոփում

Բռնությունը կարող է սկիզբ առնել ուղղակի-կառուցվածքային-մշակութային բռնության եռանկյան ցանկացած անկյունում և հեշտությամբ փոխանցվել մյուս անկյուններին: Երբ բռնության հակված կառուցվածքը ինստիտուցիոնալացված է ու բռնության հակված մշակույթը՝ յուրացված, ուղղակի բռնությունը նույնպես ինստիտուցիոնալացման, կրկնականության, արարողականության միտում է ցուցաբերում՝ նմանվելով վենդետայի: Ուստի, բռնության այս եռանկյուն բարդույթին մտքում պետք է հակադրել խաղաղության եռանկյուն բարդույթը, որտեղ մշակութային խաղաղությունը ծնում է կառուցվածքային խաղաղություն՝ տարբեր գործընկերների միջև սիմբիոտիկ, հավասար հարաբերություններով, և ուղղակի խաղաղություն՝ համագործակցության գործողություններով, բարեկամական հարաբերություններով ու սիրով: Այն կարող է լինել ավելի առաքինի, քան արատավոր եռանկյունը, նաև՝ ինքնամրապնդող: Այս առաքինի եռանկյանը կարելի է հասնել՝ աշխատելով միաժամանակ դրա բոլոր անկյունների վրա և չակնկալելով, որ դրանցից մեկում կատարված հիմնավոր փոփոխությունը մեխանիկորեն փոխանցվելու է մյուս երկուսին:

Սակայն արդյո՞ք մշակույթի ներառումը շոշափելիորեն չի ընդլայնի խաղաղության ուսումնասիրությունների օրակարգը: Անշուշտ կընդլայնի: Ինչո՞ւ պետք է խաղաղության ուսումնասիրությունները ավելի նեղ լինեն, քան, ասենք, առողջության ուսումնասիրությունները: Մի՞թե խաղաղությունն ավելի դյուրին, ավելի պարզ է, քան առողջությունը: Այդ դեպքում ի՞նչ ասել կենսաբանության մասին, որ ուսումնասիրում է կյանքը, ֆիզիկայի մասին, որ ուսումնասիրում է նյութը, քիմիայի մասին, որ ուսումնասիրում է նյութի բաղադրությունը, մաթեմատիկայի մասին, որ ուսումնասիրում է վերացարկված ձևը. այս բոլոր գիտությունները բավականին լայն են: Ինչո՞ւ պետք է խաղաղության ուսումնասիրությունները ավելի համեստ լինեն: Ի՞նչ կարիք կա սահմաններ անցկացնելու մի բնագավառում, որը հույժ կարևոր է, նաև հրապուրիչ քննախույզ մտքի համար: Եթե մշակույթն առնչվում է բռնությանն ու խաղա-

ղությանը (իսկ այն անկասկած առնչվում է), ապա միայն քարացած միտքը կարող է դա հանել խորաթափանց ու հետևողական այն հետազոտությունից, որ կատարում են ուղղակի և կառուցվածքային բռնության բազմաթիվ կողմերին նվիրված անհամար ուսումնասիրությունները: Միակ նորությունն այստեղ այն է, որ այդ դեպքում տեղ է բացվում իմացության նոր ոլորտների՝ հումանիտար գիտությունների, գաղափարների պատմության, փիլիսոփայության, տեխնոլոգիաների համար: Այլ կերպ ասած՝ այլ գիտությունները հրավիրվում են միանալու խաղաղության հետազոտություններին, և փոքր-ինչ վերազինվում են ոլորտի հետազոտողները: Եթե դա իրականացվի, գուցե խաղաղության ուսումնասիրություններն իրենց նպաստը բերեն նոր գիտական ուղղության հիմնադրմանը, որն անկիայտորեն բացակա է ակադեմիական հետաքրքրությունների պանթեոնից՝ *գիտություն մարդկային մշակույթի մասին, «մշակութաբանություն»:* Այսօր այդ ոլորտը բաժանված է հումանիտար գիտությունների («բարձր» քաղաքակրթությունների համար) և մշակութային մարդաբանության («ցածր» քաղաքակրթությունների համար) միջև, որտեղ որոշ բացեր լրացնում են փիլիսոփայությունը, գաղափարների պատմությունը և աստվածաբանությունը: Սրանց իրար են կապում «մշակութային բռնություն» կարգի հասկացությունները, ճիշտ այնպես, ինչպես «կառուցվածքային բռնությունը» իրար է կապում սոցիալական գիտությունների ողջ բույլը: Խաղաղության հետազոտությունները սովորելու, փոխառելու, ստանալու շատ բան ունեն: Հավանաբար, կգա ժամանակը, երբ մենք էլ ներդրումներ կանենք՝ բազմազանության, սիմբիոզի և անաչառության ոգով:

Ծանոթագրություններ

[1] «Մշակութային բռնությունն» անփոփոխ հետևում է «կառուցվածքային բռնության» հայեցակարգին. տե՛ս իմ «Բռնություն, խաղաղություն և խաղաղության հետազոտություն «*Խաղաղության հետազոտությունների հանդես*, հատոր 6, թիվ 3, 1969, էջ 167-191: Ավելի թարմ և շատ ավելի կառուցողական քննադատության ու գաղափարի հետագա զարգացման ջանքերի վերաբերյալ տե՛ս՝ Micheal Roth, *'Structurelle und personale Gewalt: Probleme der Operationalisierung des Gewaltbegriffs von Johan Galtung'*, *HSFK Forschungsbericht,* no. 1, April, 1988. Նման հայեցակարգ է ներկայացված հետևյալ աշխատությունում. Hans Saner, *'Personale, structurelle und symbolische Gewalt'*, էջ 73-95 in *Hoffnung und Gewalt. Zur Ferne des Friedens* (Basel: Lenos & Z. Verlag, 1982).

[2] «Նոր մարդ» ստեղծելու ուղղությամբ բազմաթիվ ջանքեր են գործադրվել: Արևմուտքում նման ջանք է քրիստոնեության ամեն մի նոր ճյուղի ստեղծումը, նույնպիսի ջանքեր են հումանիզմը, սոցիալիզմը: Բայց մեկ մշակույթի ցանկացած արմատավորում ուրիշների շրջանում ինքնին ուղղակի բռնության գործողություն է (դա է ենթադրում նախաձեռնությունն իրականացնողը), որը սովորաբար նշանակում է ապասոցիալականացում եղած մշակույթից և վերասոցիալականացում մեկ այլ մշակույթի մեջ՝ ներառյալ մատաղ (անպաշտպան) սերնդի առաջին սոցիալականացումը: Ինչևէ, եթե մշակույթը մարդ արարածի համար *conditio sine qua non* է, և մենք ծնվել ենք առանց այդպիսինի (սոսկ նախատրամադրվածությամբ), և արմատավորումը բռնության գործողություն է, ապա մեր առջև հառնում է կրթության հիմնական խնդիրը. «կրթել» բայը անցողակա՞ն, թե՞ ոչ անցողական է: Անշուշտ, և՛ մեկը, և՛ մյուսը, որոնք միմյանց հարաբերվում են հերմենևտիկորեն: Խաղաղարար կրթությունը՝ ներառյալ սոցիալականացումը, հավանաբար կենթադրի բազմաթիվ մշակույթների ազդեցություն և ապա՝ երկխոսություն, ինչպես պնդվում է ստորև: Այս առումով հաջողության չեն հասել ո՛չ

քրիստոնեությունը, ո՛չ հումանիզմը. իրականում մենք ցայսօր չգիտենք, թե *ինչպես* անել դա: Հարկ է նշել, որ որևէ մեկին որևէ մշակույթի ազդեցությանը ենթարկելը՝ ուղղակի կամ կառուցվածքային ճանապարհով, նույնը չէ, ինչ մշակութային բռնությունը՝ այստեղ կիրառվող իմաստով: Այդուհանդերձ, նման ներգործությունը օրինականացնող մշակութային ասպեկտները, օրինակ՝ որովհետև դա ավելի «բարձր» մշակույթ է (մոնոթեիստական, արդիական, գիտական և այլն), կդառնան այդ մշակույթում ներկառուցված բռնություն, այլ կերպ ասած՝ «մշակութային բռնություն»: «Բռնության էմպիրիկ կամ պոտենցիալ լեգիտիմացումն» այն բանալին է, որը տանում է դեպի մշակութային բռնություն:

[3] Այդ դեպքում մենք վերահսկողության մեխանիզմները սխեմատիկորեն բաժանում ենք ներքին և արտաքին, դրական և բացասական մեխանիզմների՝ տարորոշելով «ներքինները՝ դրականներն ու բացասականները» որպես համապատասխանաբար մաքուր ու անմաքուր խղճի զգացումներ, «արտաքին դրականը»՝ որպես պարգև, իսկ «արտաքին բացասականը»՝ որպես պատիժ: «Յուրացումը» անհատի համակարգում խորապես արմատավորված խղճի զգացում է, «ինստիտուցիոնալացումը» սոցիալական համակարգում խորապես արմատավորված պարգև/պատիժ է: Երկուսն էլ ծառայում են այն բանին, որպեսզի գործողությունը ներկայանա որպես «բնական, բնականոն, կամավոր»: Տարրական հասարակագիտության այս հատվածը կարող է օգնել, որպեսզի մշակութային և կառուցվածքային բռնությանը կենտրոնական տեղ տրվի ընդհանուր հասարակագիտության տեսության կառուցվածքում:

[4] Այս մասին տե՛ս նաև Johan Galtung, *'The Basic Needs Approach',* pp. 55-125 in Katrin Lederer. David Antal & Johan Galtung, eds, *Human Needs: a Contribution to the Current Debate* (Cambridge, MA: Oelgaschläger, Gunn & Hain; Königstein: Anton Hain, 1980).

[5] Երեք համակարգերը (ոչ միայն ստալինիզմը և հիտլերիզմը, ինչը բավական սովորական է դարձել բացախոսության ռևիզիոնիզմի լույսի ներքո) համեմատելու փորձի համար տե՛ս իմ *Hitlerism, Stalinism, Reaganism. Three Variations on a Theme by Orwell* (նորվեգերեն հրատարակությունը Oslo: Gyldental, 1984: Անգլերեն հրատարակությունը պատրաստվում է տպագրության):

[6] Տե՛ս՝ Saburo Ienaga, *The Pacific War: 1931-1945* (New York: Random House, 1978), մասնավորապես էջ 154, որտեղ խոսվում է *hakko ichiu*-ի (մեկ տանիքի տակ գտնվող աշխարհի ութ անկյունների) մասին:

[7] Ամենադուրին մոտեցումը բոլոր «կողմնակի արդյունքները» կույտով այլ գիտությունների շեմին թողնելն է՝ պահանջելով, որ վերջիններս դրանք հստակեցնեն հայեցակարգային առումով: Սա տեսականորեն, իսկ գործնականում՝ հենց այդպես են սովոր գործել տնտեսագետները:

[8] Այս փաստաթուղթը բաղկացած է 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, 1966 թվականի երկու Համաձայնագրերից և Կամավոր (Ընտրական) արձանագրությունից: Օրինագիծը միչև այժմ արժանի տեղ չի զբաղեցրել, ի թիվս այլ պատճառների, նաև որովհետև Միացյալ Նահանգները ձախողել է Համաձայնագրերից մեկի վավերացումը:

[9] Տե՛ս իմ *Human Rights in Another Key* (Cambridge: Polity Press, 1994), ch.2

[10] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս իմ *Peace and Social Structure. Essays in Peace Research,* vol. III, especiallu parts I-III (Copenhagen: Ejlers,1978)

[11] Ուստի հենց այս մակարդակում է, որ հարկավոր է հակազդել շրջակա միջավայրի դեգրադացիային՝ ապաարդյունաբերացման և ապաառնտրայնացման գործընթացների միջոցով և ոչ թե աղտոտման կամ սպառման մեկ տեսակը մեկ ուրիշ տեսակով փոխարինելով, ինչը սոսկ կարկատանային մոտեցում կլինի այդ գլոբալ հիմնախնդրին:

[12] Տե՛ս՝ Johan Galtung, *Methodology and Ideology. Essays in Methodology,* vol.I (Copenhagen: Ejlers, 1977), ch. 9:

[13] Այս մասին տե՛ս՝ Hans Ruedi Weber, *'The Promise of the Land, Biblical Interlretations and the Present Situation in the Middle East', StudyEncounter,* vol. 7, no. 4, pp. 1-16:

[14] Թերևս աներևակայելի է, որ հեռավոր հյուսիսային այդ սահմանը փոքր ու մեծ երկրների միջև այդքան խաղաղ է մնացել:

[15] Սա այն հիմնական մոտեցումն է, որ որդեգրել է Խաղաղության հետազոտությունների Ստոկհոլմի միջազգային ինստիտուտը (Stockholm International Peace Research Institute – SIPRI) իր *SIPRi Yearbook* և այլ հրատարակություններում: Այն խիստ օգտակար է որպես մակերեսային արձանագրում-վավերացում, բայց ամենևին չի խորացնում պատկերացումները իրական հակամիջոցների մշակման ու դրանց կիրառման մասին:

[16] Այս գործոնները հաճախ օգտագործվում են ճապոնական ագրեսիվությունը բացատրելու համար, ինչպես անում է, օրինակ, Ռութ Բենեդիկտը իր *Chrysanthemum and tne Sword* (London: Routledge; originnaly published in 1946). Այդ գործոնները մեջբերում է նաև Սաբուրո Իենագան իր աշխատությունում՝ *The Pacific War: 1931-1945:*

[17] Երբ տրամվայն անցնում էր Տոկիոյի կայսերական պալատի մոտով, ուղևորները ոտքի էին ելնում ու խոնարհվում: Եվ Շինթո Յասուկունի տաճարը շարունակում է մնալ Ճապոնիայում ազգային և ազգայնական կառույցների խոշոր կենտրոն: Իր կուսակցության պարտությունից հետո 1989 թվականի հուլիսի 23-ի ընտրություններում նոր վարչապետը (Լիբերալ դեմակրատական կուսակցությունից)՝ Կաուֆին, 1945 թվականի օգոստոսի 15-ի կապիտուլյացիայի տարեդարձին չայցելեց տաճար՝ լավ իմանալով, որ հովերն այլևս ավելի ձախից են փչում:

[18] Ես որևէ տեղ չեմ տեսել ռազմական բաղկացուցչի խորը ինտեգրման ավելի հստակ օրինակ, քան ԱՄՆ-ում՝ Պահեստի սպաների ուսուցման զորախմբում (Reserve Officers Training Corps - ROTC), որտեղ նույնիսկ թույլատրվում է, որ զինվորականները կրթաթոշակներ նշանակեն ուսանողների համար՝ հետագայում ծառայության պայմանով, և դասավանդեն ռազմական քարոզչությամբ հագեցած առարկաներ:

[19] Հավասար կարևորության աստվածաբանական տարբերակումներից է նաև հետևյալը. արդյո՞ք մենք ծնվում ենք նախագո մեղքով (ինչպես պնդում են որոշ քրիստոնյաներ), նախագո օրհնանքով (ինչպես պնդում են մնացած քրիստոնյաները), երկուսով էլ (հինդու-բուդդայական քարմահիստական դիրքորոշում), թե՞ առանց որևէ մեկի (աթեիստական դիրքորոշում): Վերիմացական Աստված/նախագո մեղք համադրումը հսկայական մասնակցություն ունի մարդկանց վերահսկելու առումով, ինչը գերազանց հասկացել էր Լյութերը:

[20] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Johan Galtung: *"The "Middle East" Conflict"*, ch. 3, էջ 37-57 in Johan Galting *Solving Conflicts: a Peace Research Perspective* (Honolulu, HI: University of Hawai'I Press, 1989); տես նաև իմ *Nonviolence and Israel/Palestine* (Honolulu, HI: University of Hawai'I Press, 1989): Ընտրյալության թեմայի գերազանց ուսումնասիրության համար տե՛ս՝ Weber, *"The Problem of the Land".*

[21] Տե՛ս՝ Ekkehart Krippendorff, *Staat und Krieg. Das historische Logik Unvernunft* (Farnkfurt a.M.: Suhrkamp, 1985).

[22] Այս թեմային է նվիրված հրաշալի ու սոսկալի հակաուտոպիական մի վեպ (այժմ նաև կինոնկար)՝ Margaret Atwood, *The Handmaid's Tale* (New York: Ballantine, 1987): Այս հղման համար պարտական եմ Քերոլին Դի Պալմային:

[23] Իմ անձնական դիրքորոշումը, որն աչքի չի ընկնում իր յուրօրինակությամբ, հետևյալն է. պտուղը կյանք է, ուստի նաև սրբություն է: Հարկավոր է ամեն բան անել՝ խուսափելու իրավիճակներից, երբ ոչնչացվում է կյանքը՝ կամա թե ակամա: Երբ այլընտրանք այլևս չի մնում, որոշումը պետք է ընդունեն նրանք, ովքեր ստեղծել են այդ կյանքը՝ տղամարդը և կինը, որտեղ կինը պետք է ունենա վետոյի իրավունք, իսկ տղամարդը՝ խորհրդակցելու:

[24] Այս դրույթի մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Casey Miller & Kate Smith, *The Handbook of Nonsexist Writing* (New York: Harper & Row, 2nd edn.1988):

[25] Տե՛ս՝ Johan Galtung & Fumiko Nishimura, *'Structure, Culture and Languages: an Essay Compating the Indo-European, Chinese and Japanese Languages', Social Science Information,* vol.22, December 1983, pp. 895-925:

[26] Հարցին ամբողջությամբ անդրադարձել եմ իմ *Europe in the Making* (New York & London: Taylor & Francis, 1988) գրքում:

[27] Morgens Trolle Larsen, *'Europas Lys'* («Եվրոպայի լույսը»), pp. 9-37 in Hans Boll-Johansen & Michael Harbsmeier, eds, *Europas Opdagelse* (Copenhagen: Ejlers, 1988), esp. pp. 21,23.

[28] Տե՛ս նաև իմ *'A Structural Theory of Imperialism', Journal of Peace Research,* vol.8, no.2, 1971, pp. 81-117; also in *Peace and World Structure. Essays in Peace Research.* Vol. IV (Copenhagen: Ejlers, 1980); and "*A Structural Theory of Imperialism" Ten Years Later',* pp. 298-310 in *Transarmament and the Cold War: Peace Research and the Peace Movement. Essays in Peace Research,* vol. VI (Copenhagen: Ejlers, 1988):

[29] Նրա հիմնարար դրույթը, պարզ ասած, հետևյալն է. բոլոր կուտակված ավելցուկ արժեքներն օգտագործել արտադրության գործոնները բարելավելու, և ոչ թե արտադրության գործոնների սեփականատերերի շքեղ սպառման համար՝ այդ ծուղակից դուրս գալու նպատակով: Պարզ է և իմաստուն. դա այն է, ինչ արեց Ճապոնիան, բայց նույն Ճապոնիան հազիվ թե այսօր ցանկանա, որ շատ այլ երկրներ էլ նույնը անեն:

[30] Տե՛ս՝ Johan Galtung, *Methodology and Development. Essays in Methodology,* vol. III (Copenhagen: Ejlers, 1988), ch. 4, especially section 4.4.:

[31] Մի կարևոր հետկառուցվածքապաշտական դիրքորոշում. խորը, մակերեսից ցածր փորելը անցում չէ բարդությունից պարզությանը: «Խորը արևելյան մշակույթը», օրինակ, միանշանակ չէ: Ես ինքս, օրինակ, պնդում եմ, որ քրիստոնեությունը կարելի է հասկանալ միայն երկու կարգի ընթերցման դեպքում. կոշտ ընթերցում (ավելի կողմնորոշված դեպի վերիմացական նախագո մեղը) և մեղմ ընթերցում (ներհակ, առավել կողմնորոշված դեպի նախագո օրհնանքը): Ուրիշները խորը մշակույթների ավելի բարդ բազմազանություն են տեսնում: Մեկից երկուսին անցնելը անհրաժեշտ պայման է:

[32] Այդ դեպքում տիեզերաբանությունը, կոպիտ ասած, սահմանվում է իբրև «որևէ քաղաքակրթության խորքային մշակութային ենթադրությունները՝ ներառյալ խորքային կառուցվածքի հիմքում ընկած ընդհանուր ենթադրությունները՝ սահմանելով բնականոնը և բնականը:

[33] Ե՞րբ է մշակույթը, մասնավորապես խորքային մշակույթը, բավարար ճկունություն (Scholem) ունենում վերաձևավորվելու համար: Ճգնաժամային իրավիճակներո՞ւմ: Երբ խորը վե՞րք է հասցվել, ներառյալ վերքը, երբ խորը վերք է հասցվում մյուսներին: Այստեղ մեր իմացածը շատ քիչ է, բացի նրանից, որ գիտենք, որ այս հարցերը վճռորոշ են:

[34] Հիշենք Գանդիի կյանքը. նրա ստանձնած քաղաքական օրակարգը ապշեցուցիչ էր՝ *swaraj; satyâgraha-ի և sarvodaya-ի* հետազոտում, Հարավային Ամերիկայում հնդկա-

ցիների, Հնդկաստանում *harijan-ների,* կանանց պաշտպանության խնդիրներ, համայնքային պայքար հինդուների և մահմեդականների միջև: Եվ երբեք Գանդին չասաց. ես կենտրոնանում եմ այս հարցերից մեկի վրա, իսկ դրանից հետո կզբաղվեմ մյուսներով:

[35] Տե՛ս՝ Johan Haltung, *Methodology and Development. Essays in Methodology,* vol. III (Copenhagen: Ejlers, 1988), sh. 1.1, especially p. 25 ff:

2
Վեց տիեզերաբանություններ. իմպրեսիոնիստական ներկայացում

2.1 Տիեզերաբանական մոտեցում քաղաքակրթության տեսության հանդեպ

Այս բաժնում ընթերցողին քննական ճանապարհորդության եմ հրավիրում դեպի մարդկային *հավաքական ենթագիտակցություն*: Հավակնո՞տ է: Անկասկած, բայց նաև միանգամայն անհրաժեշտ է մարդկային հավաքական վարքը հասկանալու համար (ինչպես նաև՝ անհատական վարքը, սակայն այս դեպքում հարկ է հաշվի առնել բազմաթիվ անհատական գործոններ): Խաղաղությունն ու պատերազմը, հակամարտությունն ու զարգացումը կախված են այն բանից, թե ինչպես են վարվում կամ գործում, այսպես ասած, հավաքականությունները: Բայց ո՞ր հավաքականությունները: Այստեղ որդեգրված մոտեցումը հետևյալն է. «ընդհանուր քաղաքակրթություն հատկանիշով սահմանված հավաքականություն», իսկ քաղաքակրթությունը պատկերացվում է որպես տարածության և ժամանակի մեջ տարածված մակրոմշակույթ:[1] Մշակույթը պատկերացվում է որպես մարդկային վիճակի խորհրդանշական կողմ, որը, որոշ առանցքային չափանիշներ սահմանելու համար, ասում է մեզ, թե ինչ է նշանակում ճշմարիտ և կեղծ, ճիշտ և սխալ, գեղեցիկ և տգեղ, սուրբ և պիղծ: Ավելի խորքային մակարդակում մշակույթը մեզ ոչ միայն սահմանում է, թե ինչ է նշանակում ճշմարիտ և այլն, այլն՝ *ինչու:*

Ասվածը հստակեցնում է, թե ի՞նչ նկատի ունենք «հավաքական», ինչպես նաև՝ «ենթագիտակցություն» ասելով: Այս եզրը վերաբերում է իրականության մասին այն պատկերացումներին, որոնք հնարավոր է վերականգնել-վերհիշել: Ուստի հավաքական ենթագիտակցություն ասվածը տվյալ քաղաքակրթության մեջ առկա ընդհանուր պատկերացումներն են իրականության մասին: Դրանք առկա են յուրաքանչյուրի մեջ և ընդհանուր են այն առումով, որ ամեն ոք ենթադրում է, թե մյուսները հանգել են նույն պատկերացման (և շատ վատ կզգան, եթե պարզվի, որ դա այնպես չէ):

Տիեզերաբանություն (որևէ քաղաքակրթության) ասելով՝ նկատի ունենք *հավաքական ենթագիտակցության գաղափարներն առ այն, թե ինչ է իրենից ներկայացնում բնականն ու բնական կյանքը:* Լինելով ընդհանուր և ակնհայտ՝ պարտադիր չէ, որ դրանք գիտակցված լինեն: Որպես եզր կարող են օգտագործվել նաև «խորը գաղափարախոսությունը», «խորը մշակույթը», աշխարհայացքը, *տիեզերաբանական հայացքը* և դրանց համարժեքներն այլ լեզուներում:

Հարցին ավելի որոշակի անդրադառնալու փորձից առաջ հարկավոր է հաշվի առնել որոշ դիտարկումներ, քանի որ նման վարժանքի հիմքում ընկած վիճահարույց պատկերացումները բազմաթիվ են:[2]

Առաջին. ո՞ր քաղաքակրթությունները պետք է ընտրենք, եթե ուզում ենք խորքային կերպով հասկանալ մարդու վիճակը տարածության մեջ և ժամանակի ընթացքում՝ պահպանելով մակրոհեռանկարը: Ընտրությունն այստեղ

կանգ է առնում երկու արևմտյան, մեկ հնդկական և երեք արևելյան քաղաքակրթությունների վրա.

Արևմուտք I, կենտրոնախույս, տարածված (հունահռոմեական, արդի),
Արևմուտք II, կենտրոնաձիգ, սեղմված (միջնադարյան),
Հինդիկ[3] (հնդկական),
Բուդդիկ (բուդդիստական),
Սինիկ (չինական),
Նիպպոնիկ (ճապոնական):

«Արևմուտք» ասելով հարկ է հասկանալ այն տարածաշրջանը, որը բնութագրվում է սեմիտական-աբրահամական կրոններով (հուդայականություն, քրիստոնեություն, իսլամ), «Արևելք» ասելով՝ այն տարածաշրջանը, որտեղ տարածված է բուդդայականությունը՝[4] մաքուր (բուդդիկ) կամ զուգակցված այլ պատկերացումներով (սինիկ կամ նիպպոնիկ[5]), իսկ «հինդիկ»-ն այդ երկուսի միջև ընկած հսկայական տարածքն է՝ որպես այդ երկուսի խաչմերուկ կամ օրրան:

Գոյություն ունեն Արևմտյան երկու քաղաքակրթություններ՝ բաժանված ժամանակի, բայց ոչ տարածության առումով, քանզի մակրոհեռանկարում տարբերություններն այդ երեք կրոնների միջև աննշան են: Արևմուտք II-ը մասնակիորեն դիտարկվում է որպես «Արևելյան գրպան» Արևմուտքի պատմության մեջ:[6] Այս անհամաչափությունն իր պատճառներն ունի, որոնք տեսանելի կդառնան, երբ անդրադառնանք քաղաքակրթությունների ժամանակային հեռանկարներին:

Մեր ուշադրության կենտրոնում գտնվող վեց քաղաքակրթություններից դուրս են մնացել աֆրիկյան, ամերիկյան-հնդկացիական և ասիական-խաղաղօվկիանոսյան բնիկների մշակույթները և, օրինակ, վիետնամական ու կորեական մշակույթներն Արևելյան Ասիայում: Սա բացթողում է, ուստի մենք որոշ չափով կանդրադառնանք «բնիկների», ինչպես նաև վիետնամական/կորեական մշակույթներին: Այդուհանդերձ, շատ ասելիք կմնա:[7]

Իսկ մենք ինքնե՞րս: Իրականության բնականոն ու բնական կողմերի ընդհանուր ենթադրություններն այն մասին, թե ինչ է *առկա՝ ճշմարիտ* կամ հարցի էությունը լինելու առումով, մի կողմ է թողնում ենթադրությունները լավի ու ճշմարիտի, գեղեցիկի ու սրբության մասին: Այդ նպատակով իրականությունը պետք է ենթաբաժանվի, և այդ ենթաբաժանումը պետք է լինի վեց «հարթությունների» հիման վրա. Բնություն, Անհատ, Հասարակություն, Աշխարհ, Ժամանակ, Մշակույթ:[8] «Մշակույթը» ենթաբաժանվում է վերանձնային մշակույթի (Transpersonal Culture) և իմացաբանական մշակույթի (Epistemological Culture). առաջինը վերաբերում է վերանձնային, կրոնական իրականության բնույթին, երկրորդը՝ թե ինչպես կարող ենք, նկարագրելով ու հասկանալով հանդերձ, պայքարի մեջ մտնել իրականության հետ (կարճ ձևակերպելու համար կոչել ենք Իմացություն):

Սա մեզ տալիս է ընդհանուր առմամբ 7 չափում,[9] որոնք կօգտագործենք վեց քաղաքակրթությունները բնորոշելու համար: 42-ը միասին պատկերված են 2.1 աղյուսակում (6 X 7 մատրից): Միավորների (քաղաքակրթությունների) և փոփոխականների (տարածությունների) ընտրությունից հետո գլխավոր

հիմնախնդիրներից է դառնում այդ փոփոխականների արժեքները, (C) քաղաքակրթությունը (S) հարթության վրա գրված դիրքի առումով բնութագրելու կոնկրետ ուղիները որոշելը:[10] Աղյուսակ 2.1-ի բովանդակությունն էական տեղապտույտի և սխալի արդյունք է:[11] Երբեմն աղյուսակներն ավելի արտահայտիչ են, քան խոսքերը (եթե անգամ բարձրաձայնվում են):

Այս աղյուսակը կարելի է կարդալ ուղղահայաց՝ ջանալով ըմբռնել տիեզերաբանության, վեց քաղաքակրթություններից յուրաքանչյուրի էությունը, իմաստը կամ հորիզոնական՝ համեմատելու նույն հարթության քաղաքակրթությունները: Երկու սյունակների համեմատությունը թույլ կտա ներթափանցել երկու քաղաքակրթությունների նմանությունների ու տարբերությունների դաշտ: Իսկ երկու շարքերի համեմատությունը թույլ կտա հասկանալ նմանություններն ու տարբերություններն այն բանի, թե ինչպես են քաղաքակրթությունները տեսնում այդ հարթությունները:

Լավագույնը, այդուհանդերձ, աղյուսակը որպես *ամբողջություն* (*holon)* դիտարկելն է: Հաջողություն եմ մաղթում:

2.2 Վեց տիեզերաբանություններ. իմպրեսիոնիստական ներկայացում

Քաղաքակրթության տիեզերաբանությունը նաև դրա սոցիո-մշակութային *կոդն է*, որ կրում է այն հիմնական տեղեկատվությունը, թե ինչպես է կառուցվում իրականությունը: Գենետիկ կոդի բիոգենետիկ զուգահեռն ակնհայտ է և միտումնավոր: Կազմակերպվածքի կոմպլեքսայնության և մակարդակի տեսանկյունից մեջտեղում անհատի սոցիո-անհատական կոդն է՝ տվյալ անձի վարքագծի հիմնական հատկանիշները: Տիեզերաբանությունը քաղաքակրթության համար նույնն է, ինչ անհատականությունն անձի համար՝ այն հիմնական հատկանիշները, որոնք անհատականության արմատավորումից հետո անփոփոխ են մնում ամենօրյա, ամենամսյա, ամենամյա կենսական ռիթմերի տատանումների պայմաններում: Այստեղ չի ենթադրվում, թե անհատականությունը կամ տիեզերաբանությունն անփոփոխելի են. սոսկ ենթադրվում է, որ դա հազվադեպ է պատահում և, որպես կամավոր գործողություն, հեշտությամբ չի իրականանում: (Տե՛ս ստորև՝ գլուխ 5):

Նախ հարկ է ավելի մոտիկից ծանոթանալ այդ հատկանիշներին: 2.1 աղյուսակի սյունակները դրանց կոդավորման վարկածներ են: Այդ կոդերը պետք է այնպես բացվեն, որ քաղաքակրթությունը կյանք ստանա:

Մեկ նախազգուշացում՝ մակրոմշակույթները խորը մակարդակում բնութագրելիս մենք գործածում ենք չափազանց խոշոր վրձնահարվածներ: Բայց կա նաև մակերեսային մշակույթի մակարդակ, և մշակութային բռնություն կա նաև այդ մակարդակում (տե՛ս գլուխ 1): Երկուսը միասին մեզ համար կարող են դառնալ այն հիմքը, որի վրա հենվելով պիտի փորձենք հասկանալ ու մանրամասնել մեզ հետաքրքրող ներակայությունները խաղաղության և պատերազմի, հակամարտության և զարգացման տեսանկյունից (գլուխ 3): Ավելին, ցանկացած մակրոմշակույթի ներսում մասնավորեցումները հնարավոր են, իմաստալից և անգամ անհրաժեշտ (գլուխ 4): Եվ, վերջապես, մենք հարցնում ենք՝ ինչպե՞ս վարվել, կա՞ արդյոք որևէ բուժման եղանակ պաթոլոգիական տիեզերաբանությունների համար (գլուխ 5):

Աղյուսակ 2.1. Վեց տիեզերաբանությունների դրսևորումները յոթ հարթություններում

Արևմուտք I	Արևմուտք II	Հինդիկ	Բուդդիկ	Սինիկ	Նիպպոնիկ
ԲՆՈՒԹՅՈՒՆ					
Մարդիկ բնությունից վեր *Տիրապետություն*	Մարդիկ բնությունից վեր *Տիրապետություն*	Մարդիկ և զգայուն կյանքը ոչ կյանքից վեր	Զգայուն կյանքը ոչ կյանքից վեր *Գործընկերություն*	Մարդիկ բնությունից վեր Խառը	Մարդիկ բնությունից վեր Խառը
Մսապաշտություն	Մսապաշտություն	Բուսապաշտություն	Բուսապաշտություն	Խառը	Խառը
ԱՆՀԱՏ					
Թույլ գեր-Ես Ուժեղ «Ես» Ուժեղ ինքնություն	Ուժեղ գեր-Ես Թույլ «Ես» Խառն ինքնություն	Խառը գեր-Ես Խառը «Ես» Խառն ինքնություն	Ուժեղ գեր-Ես Թույլ «Ես» Թույլ ինքնություն	Խառը գեր-Ես Խառը «Ես» Խառն ինքնություն	Ուժեղ գեր-Ես Թույլ «Ես» Խառն ինքնություն
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ					
Ուղղահայաց դասակարգային և անհատական սեռային	Ուղղահայաց կաստայական և կոլեկտիվ սեռային	Ուղղահայաց կաստայական և խառը սեռային	Հորիզոնական *sangha*, բայց կոլեկտիվ սեռային	Ուղղահայաց խառը, բայց խառը սեռային	Ուղղահայաց խառը, բայց կոլեկտիվ սեռային
Հանգույցներ	Հանգույցների խմբեր	Հանգույց + ցանց	Ցանցեր	Հանգույց + ցանց	Ցանցեր + խմբեր
ԱՇԽԱՐՀ					
Երեք մաս՝ *Կենտրոն, Ծայրամաս, Չարիք*	Բազմաթիվ մասեր, *որոնցից յուրաքանչյուրը Կենտրոն է*	Մեկ մաս՝ *մարդկանց միասնություն*	Բազմաթիվ մասեր, *որոնցից յուրաքանչյուրը Կենտրոն է*	Հինգ մաս *Zhong guo N,S,E,W Barbaria*	Երեք մաս *Nippon daitõ-ã Resourcia*
Չսահմանափակված	Սահմանափակված	Սահմանափակված	Սահմանափակված	Չսահմանափակված	Չսահմանափակված
ԺԱՄԱՆԱԿ					
Անհատ					
Սահմանափակված	Սահմանափակված	Չսահմանափակված	Չսահմանափակված	Չսահմանափակված	Չսահմանափակված
Հասարակություն					
Սահմանափակված	Սահմանափակված	Սահմանափակված	Չսահմանափակված	Չսահմանափակված	Չսահմանափակված
ՎԵՐԱՆՀԱՏ					

Վերիմացական	Վերիմացական և ներիմացական	Վերիմացական և ներիմացական	Ներիմացական	Վերիմացական և ներիմացական	Վերիմացական և ներիմացական
Մեկ Աստված	Մեկ Աստված	Ավելի աստվածներ	Չկա Աստված	Չկա Աստված	Մեկ Աստված/ Չկա Աստված
Ընտրյալ ժողովուրդ (ներ)	Ընտրյալ ժողովուրդ (ներ)				Ընտրյալ ժողովուրդ
Մեկ Սատանա	Մեկ Սատանա	Չկա Սատանա	Չկա Սատանա	Չկա Սատանա	Չկա Սատանա
Մեկ հոգի	Մեկ հոգի	Մեկ հոգի	Չկա հոգի	Չկա հոգի (°)	Չկա հոգի (°)
Հավերժական դրախտ կամ դժոխք	Հավերժական դրախտ կամ դժոխք	*Մոկշա* Վերամարմնավորում	*Մոկշա* Վերածնունդ	Հանգստություն Խառը	Հանգստություն Խառը
Եզակիություն/համընդհանրություն	Եզակիություն/համընդհանրություն	Հոգնակիություն/ համընդհանրություն	Հոգնակիություն/ համընդհանրություն	Հոգնակիություն/ մասնակի	Հոգնակիություն/ մասնակի
ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ					
Ատոմիստական	Հոլիստական	Էկլեկտիկ	Հոլիստական	Էկլեկտիկ	Էկլեկտիկ
Դեդուկտիվ	Դեդուկտիվ	Էկլեկտիկ	Դիալեկտիկ	Էկլեկտիկ	Էկլեկտիկ
Չկա հակասություն	Չկա հակասություն	Էկլեկտիկ	Հակասություն	Հակասություն	Հակասություն

Արևմուտք I-ի տիեզերաբանությունը. Սկսենք առաջին սյունակից: Ինչպիսի՞ «անձի» հետ գործ ունենք՝ «Արևմուտք I» ասելով:

Բնության առումով մենք ակնհայտորեն գործ ունենք մեկի հետ, ով ինքն իրեն ընկալում է իբրև բնության կառավարիչ՝ ընդհուպ մինչև ամենակեր, այդ թվում մսակեր լինելը՝ որպես սնունդ օգտագործելով այլ շնչավոր էակներին կամ առնվազն դրանցից մի քանիսին: «Մսակերություն» եզրը ներմուծվել է իբրև զուգահեռ այն մարդկանց, ովքեր իրենց սահմանափակում են բուսակերությամբ: Սա կարող է բացառել կենդանական պրոտեինն իբրև սնունդ օգտագործելը, ինչպես նաև այն ամենը, որ բնությունը ազատորեն չի առաջարկում, ասենք՝ մրգերի, ընդավորների բազմազանությունը, բայց ոչ այն կենդանի բույսերը, որոնք կարելի է դիտել որպես կյանքի դրսևորում:

«Անհատ» հարթությունը մարդկային ներաշխարհի՝ Ֆրոյդի եռամաս ճարտարապետության պարզունակ կիրառմամբ Արևմուտք I-ը ներկայացնում է շատ ուժեղ «Ես»-ով և ուժեղ ինքնությամբ, բայց՝ թույլ գեր-Եսով՝ խուսափելով առաջինի ագահությունից և երկրորդի պահանջմունքներից: Այստեղ Անհատը ոչ թե փոխաբերություն է, այլ Ինքնություն՝ վարկած արևմտյան անհատի կողավորված և ծրագրավորված կերպի վերաբերյալ, որ, անշուշտ, կապված է մյուս հինգի հետ և մեծաքանակ տարբերակներ ունի:

Հասարակության կառուցվածքը տեղ է թողնում նման մարդկանց համար՝ թույլ տալով, որ անհատները դրսևորեն իրենց ագահությունն ու պահանջները: Հանգույցի փոխաբերությունը, որ վերցված է Պանիկարից,[12] նկատի ունի (ձկնորսական) ցանցը՝ միայն տեսանելի հանգույցներով. ուժեղ անհատներ,

ո՛չ թե ցանց, ահա այն սոցիալական սոսինձը, որ միասին է պահում նրանց: Նույնի մեկ այլ դրսևորումը կարող է օգտագործել այնպիսի եզրեր, ինչպես, օրինակ, հասարակության «դերակատարամետ» հեռանկարն ընդդեմ «կառուցվածքամետի»[13], որտեղ առաջինի իրագործողն Արևմուտք I-ն է (իսկ երկրորդինը՝ բուդդայական տիեզերաբանությունը):

Երբ ուժեղ, սահմանափակումներից համեմատաբար զերծ անհատները բախվում են, ստորակարգությունների ի հայտ գալու համար պայմաններ են առաջանում: Արևմուտք I-ը դրա հնարավորությունը տալիս է դասակարգային հասարակության ուղղահայաց կառուցվածքով, ինչը նշանակում է, որ շարժման հնարավորություն կա, որը կարգավորում է «Ես»-երի ուժը: Արդյունքում կառաջանան *վերնախավեր* (վերին դասակարգերը), *ժողովուրդ* (միջին և ստորին դասակարգերը), որը վեր բարձրանալու հույս ունի, և *վտարանդիներ*, որոնց համակարգը մարգինալացրել է: Մարգինալացված էին նաև կանայք, սակայն ներկայում ավելի ու ավելի մեծ չափով են դասակարգային համակարգ մտնում:

«Աշխարհ» հարթության կառուցվածքը կարելի է այսպես ներկայացնել. աշխարհի հարթությունը (ոչ թե տիեզերքը, այլ «աշխարհի համակարգը») ունի *Կենտրոն,* ունի նաև *Ծայրամասեր,* որոնք հույս են տածում ընդունելի լինել Կենտրոնի համար և նմանվել վերջինիս, ինչպես նաև սահմանագիծ, որտեղ *Չարիքն է:* Չարիքի ուժերը չեն ընդունում Կենտրոնը և մերժում են դրա գաղափարները՝ իրենք իրենց համար լինելով Կենտրոն: Քանի որ Չարիքը սահմաններ չունի՝ աշխարհն անսահման է, և ո՛չ միայն աշխարհագրական տեսանկյունից:

Ժամանակն Արևմտյան տիեզերաբանությունում գերդրամատիկ է: Գոյություն ունի *քրոնոս*՝ ֆիզիկական (օբյեկտիվ) ժամանակի ընթացքը՝ ամենասկզբից (Ծննդից) մինչև վերջը (Հայտնություն), ինչը նշանակում է, որ ժամանակը Արևմուտք I-ում սահմանափակ է:[14] Բայց ժամանակի պարկուճներ կան նաև *կայրոսում*՝ օրգանական (սուբյեկտիվ) ժամանակի մեջ. *Անկումը*՝ Դրախտի ժամանակն անցնելուց հետո, *Լույսը*՝ Մթության ժամանակն անցնելուց հետո, *Ճգնաժամը*՝ Առաջընթացի ժամանակն անցնելուց հետո: Այս ամենը՝ դժոխք կամ դրախտ, փրկություն կամ անեծք («արարիր կամ ոչնչացրու») ուժեղ երկվություններով, լայնորեն բաց է: Դրանից հետո արդեն մշտական հոսքն է՝ հավիտենական երանություն կամ հավիտենական տառապանք: Եվ այդ ամենը սոսկ կարճատև պահ է մարդու կենսագրության (միկրոպատմության), հասարակության պատմության, քաղաքակրթության մակրոպատմության կամ ողջ աշխարհի պատմության մեջ՝ Ծննդից մինչև Հայտնություն: Ի՞նչը կարող է ավելի դրամատիկ լինել, հատկապես՝ երբ պարտադրվում է ողջ աշխարհին:

Վերանձնայինը հստակորեն երկված բնույթ ունի, երբ մարդկանցից յուրաքանչյուրն ունի մշտական և անմահ հոգի մեկ Աստծո և մեկ սատանայի միջև՝ երկուսն էլ վերիմացական, որ ապրում են վերում և վարում (վերջինս մի այլ կրոնում կարող է լինել Մայր Երկիրը) և կռվում են այդ հոգուն հավետ տիրանալու համար՝ հավիտենականության մի մասնիկի՝ մարդկային կյանքպահի ընթացքում: Կոնկրետ հավատքը կամ կրոնը միակ Ճշմարտությունն է (եզակիություն), որը գործում է ամբողջ տարածության և ժամանակի մեջ (համընդհանրություն)[15]՝ ինչպես դա արտահայտված է «Տիեզերական առաքելությունում»:[16] Ի՞նչը կարող է ավելի ուժեղ լինել:

Իմացությունը հիմնված է ատոմիզմի և դեդուկտիվիզմի վրա՝ «բաժանելով դրանցից յուրաքանչյուրի բարդություններն այնքան առանձին մասերի, որքան հնարավոր է և որքան անհրաժեշտ է այն լուծելու համար՝ սկսելով ամենապարզ և ճանաչելի օբյեկտներից»:[17] Այս ճանապարհով ի հայտ կգա հսկայածավալ հանգամանալից գիտելիք մասերի՝ ատոմների մասին (որոնք ենթադրաբար անտեսանելի են, ուստի կարող են օգտագործվել որպես իրականության մասին գիտելիքի շինարարական աղյուսներ): Այդ գիտելիքը, որ ենթադրությունների տեսք ունի, այնուհետև ավելի կամ պակաս դեդուկտիվ եղանակով միահյուսվում է տեսություններում՝ հետևությունների «եթե P, ապա Q» բանաձևը գործածող խոսքային կառույցներում: Բայց որպեսզի այս բանաձևը գործի, P-ն պետք է ճիշտ կամ սխալ լինի, և Q-ն պետք է ճիշտ կամ սխալ լինի (թեև, եթե եզրակացությունը ճիշտ է, չի կարող P-ն ճիշտ լինել, իսկ Q-ն՝ սխալ): Այլ կերպ ասած՝ երկիմաստություններն ու հակասականությունները անընդունելի են. դրանք առաջանում են սխալների հետևանքով: Հակասականությունը հավասար է սխալի նաև այն իմաստով, որ անհնարին է դարձնում դեդուկտիվ մտածողությունը: Ենթաբաժանվում է իրականությունը, ապա ենթադրություններ են արվում առանձին մասերի վերաբերյալ, այնուհետև այդ գիտելիքները միահյուսվում են տեսությունների մեջ. և այս ամենը՝ խիստ օրենքների շրջանակներում, եթե նպատակը գործուն, «գիտական» գիտելիք ձեռքբերելն է:

Մենք հասկանում ենք, որ 7 հարթությունների միջև ներքին կապվածություն կա՝ կենտրոնամետություն: Մարդը (ոչ թե մարդկությունը) Կյանքի բուրգի գագաթին է, «Ես»-ը՝ Ինքնության ճարտարապետության բուրգի գագաթին, Վերնախավերը հասարակության գագաթին են, Արևմուտքն Աշխարհի գագաթին է, Ճգնաժամը Ժամանակի գագաթին է, Աստված Վերանհատի գագաթին է, իսկ Իմացության գագաթին մեզնից խուսափող այն վերջնական Աքսիոմն է, որից կարող են արտածվել մյուսները: Բոլոր 7 հարթությունների համար համարժեք երկրաչափական տեսքը բուրգն է:[18]

Արևմուտք II-ի տիեզերաբանությունը. Սրան ժամանակակից Արևմուտքում վերաբերում են իբրև թաքնված և նահանջող Արևմուտքի և իբրև բացահայտ ու գերիշխող Արևմուտքի՝ միջնադարում, երբ արևմտյան Հռոմեական կայսրությունն սկսեց իր անկումը և հասավ մինչև մանորիալ/ֆեոդալական համակարգ՝ ծնելով քաղաք-պետություններ, որոնք հետագայում վերածվեցին ազգ-պետությունների և համաշխարհային պետությունների, կայսրությունների:[19] Սակայն այն դեռևս ներկա է Արևմուտքի խորքային խորշերում, և դրա կրողն ավելի շատ բնությունն է, քան մարդիկ, ավելի շատ կանայք, քան տղամարդիկ, ավելի շատ երիտասարդներն ու տարեցները, քան միջին տարիքի մարդիկ:[20]

Քանի որ սա հեռացում է Արևմուտք I-ից, ինչն իր հերթին նշանակում է հեռացում Արևմուտք II-ից (համաձայն Արևմտյան մակրոպատմության այս տեսակետի[21]), որպես Արևմուտք I-ի մեջ առկա այլընտրանքային տիեզերաբանություն, այստեղ պետք է լինեն ոչ միայն տարբերություններ, այլև նմանություններ: Արևմուտքի պատմության մեջ շարունակականության երկու ամենախոշոր խզումներում անգամ (Հռոմեական կայսրության անկում և Միջնադար) էական շարունակականություն կար: Բայց երկու դեպքում էլ գերակայող տիեզերաբանությունն անկարող գտնվեց լուծելու ներքին հսկայածա-

վալ հիմնախնդիրները: Արևմուտքի ուժը պահուստային տիեզերաբանության մեջ է, որին հարկ է դիմել, երբ առաջինը ձախողվում է:

Այսպիսով, աղյուսակ 2.1-ում Բնության կառուցվածքը, ինչպես անձնական (Անհատի) Ժամանակի դեպքում է, դիտվում է իբրև ընդհանրապես արևմտյան: Վերանհատն առանձնանում է այնքանով, որքանով քրիստոնեությունը նույնպես ներիմացական (իմանենտ) Աստծո գաղափարն է հաղորդում, օրինակ՝ ինչպես սբ. Ֆրանսիսկ Ասսիզեցու ավանդույթում է:[22] Սա նշանակում է, որ Աստծուն և Բնությանը մոտ կյանքն այնքան էլ տարբեր չէ՝ հաշվի առնելով, որ ճգնաժամի հոգեվարքում *կայրոսը* մեծապես կազմակերպում է անհատական կյանքը: Այժմ անդրադառնանք Արևմուտք I-ի և Արևմուտք II-ի տարբերություններին:

Հասարակության հանգուցային մոդելը մեծապես արդիականացված է: Անհատական հոգու տեսանկյունից, անշուշտ, մտահոգության կա, բայց շատ ավելի մեծ է սոցիալական կազմակերպվածքի կոլեկտիվ կողմին հատկացվող ուշադրությունը՝ միաբանություն, վանական համալիր, գյուղ, ընդհանուր առմամբ տեղական համայնք: Այլ խոսքերով՝ հանգույցների խմբեր: Համայնքը դառնում է Աստծո և Ճգնաժամի հավելմամբ, կայունությամբ աչքի ընկնող Կենտրոն, ինչպես արտահայտված է Սոցիալական ժամանակի հորիզոնական կառուցվածքում: Իրականում համայնքը վերածվում է սահմանագծված աշխարհի, և ներակայորեն առկա է այն ենթադրությունը, որ ուրիշներն էլ ունեն իրենց Կենտրոնները, անձնական դրամայի խաղարկման իրենց բեմերը, և որ սոցիալական մեծ փոփոխությունները ոչ թե կնպաստեն, այլ կխոչընդոտեն փրկությանը: Սա վերաբերում է նաև ուղղահայաց չափմանը: Կաստայական համակարգում սոցիալական դիրքերը սառեցվում են՝ կազմավորելով կղերականություն, ազնվականություն, բյուրգերներ և աշխատող/ծառայողներ՝ շարունակվելով մինչև թշվառները ու վտարյալները (հրեաներ, խաբշիկներ, գնչուներ և այլն) և ավելի ստորև՝ դեպի կենդանիները, բույսերը, հանքանյութերը, ջուրը, օդը և տարածությունը:

Այս ամենը միանգամայն համատեղելի է Ինքնության մեջ ներկառուցված գեր-Եսի հետ՝ ճնշում գործադրելով «Ես»-ի վրա (հասարակագետն այստեղ կխոսեր տեղական համայնքներում ուժեղ սոցիալական վերահսկողության մասին, մասնավորապես՝ Աստծո ներկայացուցիչ եկեղեցականի կողմից): Բայց ինքնությունն ամենևին էլ լուռ չի մնում: Գուցե սա մոլի մսակերությա՞ն հետևանք է:

Բացի անհատական ժամանակի դրամա լինելուց՝ Արևմուտք II-ը կայունության սոցիալական կառույց է, իսկ Իմացությունը նպաստում է այս իրողության ամրապնդմանը: Դեկարտի ատոմները մասնատում են իրականությունը ճիշտ այնպես, ինչպես անհատապաշտությունը մասնատում է հասարակությունը: Բայց, դրանով հանդերձ, նրանք նաև բացվում են դինամիզմի համար[23]՝ կապված չլինելով միմյանց *ամբողջի (holon)* նեղ ու կոշտ բաճկոնով, որը ձևավորվում է հոլիստականության նկատմամբ սխոլաստիկ հակվածությամբ: Հոլիստականությունը կարող է ավելի դինամիկ դառնալ, եթե յուրացնի ներսում գործող հակասությունները, ինչպես բուդդայականությունն է անում, և ինչպես այն զարգացվել է մասնավորապես դաոիզմի մեջ: Արևմուտք II-ի իմացաբանության հոլիստականությունը խիստ դեդուկտիվ է, տաքսոնոմիկ և սիլլոգիստական, նաև՝ ստատիկ: Հիմնական նպատակը մեկ ընդհանուր դասակարգման սխեմայի ներսում եղածը որսալն է: Սա կայունության տիեզե-

ռաբանությունն է, որի համար օրինակ կարող է ծառայել Հռոմեական իրավունքի մշակումը:

Հինդիկ տիեզերաբանություն. Երկու Արևմուտքներից, որոնք դրսևորված են երեք աբրահամական կրոններով, դեպի արևելք շարժվելով՝ մտնում ենք Հինդիկ տարածք: Եվ կրկին, քանի որ կան շարունակականություններ ժամանակի մեջ (արևմտյան մակրոպատմություն), կան նաև շարունակականություններ տարածության մեջ (աշխարհի մակրոաշխարհագրություն): Ուստի, այստեղ հաճախ հանդիպում ենք նույն հասարակական կառույցներին՝ անգամ մարդկանց նույն կաստաներով և նույն աստիճանակարգով. *Brahmin, Kshatriya, Vaishya, Shudra,* որոնց հետևում են թշվառները ու վտարյալները՝ *Pariah:* Ինքնության կառուցվածքը նույնպես նման է, բայց ավելի ճկուն, ինչպես բնութագրված է աղյուսակ 2.1-ում: Ուժեղն ու թույլը կողք-կողքի են, այլ կերպ ասած՝ ավելի էկլեկտիկ. այս թեման ավելի ու ավելի է մեծանում դեպի Արևելք շարժմանը համընթաց: Դա դրսևորվում է, մասնավորապես, Իմացությունում, որը համակցում է ատոմիստականն ու հոլիստականը, դեդուկտիվն ու դիալեկտիկականը:

Իսկ այժմ տարբերությունների մասին: Հիմնականը, թերևս, վերանիատի կառուցվածքի մեջ է, մասնավորապես՝ Սատանայի (արևմտյան միասատանայականության առումով) անհայտանալու մեջ, երբ շարժվում ենք աշխարհի իսլամական հարթություններից դեպի հինդկական հարթությունները: Առարկությունը կարող է լինել այն, որ հինդուիզմը Սատանայի կարիք չունի, քանի որ երկրի վրա կառուցել է դժոխք՝ թշվառների ու վտարյալների (*pariah*-ների) համար: Արևմտյան դժոխքը, սակայն, հավերժ է, իսկ *pariah*-ի կյանքը՝ ընդամենը մեկ կյանքի տևողություն ունի: Մահվանից հետո վերամարմնավորումը հինդուիզմի ավելի մեծահոգի տեսակներում կյանքի բոլոր կերպերի համար առաջարկում է երկրորդ, երրորդ և այլն փոփոխությունը: Սա նաև նշանակում է կյանքի բոլոր կերպերի վերամարմնավորում՝ ինչպես վեր, այնպես էլ վար՝ մոտավորապես նույն աստիճանակարգով, ինչ Արևմուտք II-ում:

Այստեղ արդեն առաջ է գալիս կախվածությունը քարմայից՝ արժանիքների և թերությունների ամբողջությունից:[24] Քարման ոչ թե ճակատագիր է, այլ դպրոցական ուսման պես կարող է ջանքերի գնով առաջ շարժվել, մնալ նույն մակարդակում կամ մերժման դեպքում՝ վատանալ: Արդյունքում Սոցիալական ժամանակը շարժվում է անդրմիգրացիայի (samsara) պարբերաշրջաններով, սակայն ընդհանուր առմամբ վերընթաց կորով՝ որպես *մոկշա,* ազատագրման կամ փրկության հասնում են անհատական հոգու (atman) եզակիության և բացարձակ հոգու (*Brahman*)[25] միավորումն իրագործելու ուղիով:

Բնության հարթությունը պետք է այլ կերպ կառուցվի, որպեսզի հնարավոր դարձնի հոգիների այս անդրմիգրացիան կամ *metensomatosis*-ը (մարմիններ փոխելը): Կենդանիների ու բույսերի տեսանկյունից պետք է ավելի շատ շարունակականություն լինի: Այդուհանդերձ, գերակայող հայեցակարգը մարդկանց միասնությունն է, ո՛չ թե կյանքի միասնությունը: Բուսակերությունը սկիզբ է առնում հինդկական քաղաքակրթությունից, թեև այնքան բացարձակ չէ, որքան բուդդայական տարածքում: Կովը, որ (հիմնականում և մեծապես) բռնությունից հեռու կենդանի է, ընտրվել է որպես կյանքի միասնության խորհրդանիշ:

Հասարակությունը կառուցված է իբրև հանգույցների խառնուրդ՝ ուժեղ անհատականություններով և ցանցերով, որ ավելի պարզ կարելի է բնու-

թագրել որպես աշխատող կապեր՝ անտեսանելի անհատների միջև: Այստեղ իրենց լավ են զգում ինչպես ցանցային այդ կապերը շեշտող Արևմուտք I-ի անհատապաշտությունը, այնպես էլ բուդդայականության կառուցվածքապաշտությունը, ինչով արտահայտվում է վերջինիս՝ բազմաթիվ տիեզերաբանությունների համար հանգրվան ծառայելու ունակությունը: Աշխարհի եզակիությունն առանցքային է ընդհանուր կառույցի համար: Սանսկրիտի ասացվածքը՝ *vasudaiva kuttumbakam* (աշխարհն իմ ընտանիքն է), ներառում է սա: Այդուհանդերձ, այդ միասնությունը, թերևս, չի ներկայանում իբրև լոկ սոցիալական գործակցության վրա հիմնված՝ մեզ բոլորիս ավելի ու ավելի կախված դարձնելով Մյուսներից՝ ներառյալ անցյալի և ապագայի Մյուսները: Հիմքը հավանաբար նաև վերագրվող նմանությունն է: Ուրեմն իսկապե՞ս՝ «Քերեք ցանկացած մարդու և կգտնեք հինդուի»:

Եթե այդպես է, ուրեմն հիմնավոր պատճառներ կան: Հնդուիզմը, որպես կրոնական հավատքների ամբողջություն, նախատիպերի ու փոխաբերությունների թերևս ամենահարուստ պահեստարանն է մյուս կրոնների համեմատությամբ, քանի որ այնպիսի երկընտրանքները, ինչպիսիք են, ասենք, մոնոթեիզմ, պոլիթեիզմ, պանթեիզմ *կամ* աթեիզմը, փոխակերպում է *և*-ի՝ հյուրընկալելով բոլոր նման գաղափարները՝ ներառյալ ագնոստիցիզմի տարրը: Լինելով խաչմերուկների օրրան՝ հնդուիզմն ընդգրկում է այդ բոլորը: Այդ տեսանկյունից աշխարհն, իրոք, մեկն է, և դրա կենտրոնն ավելի շուտ Հնդկաստանում է, քան այլուր: Հինդիկ տիեզերաբանությունը գործում է աշխարհի հարթության հանդեպ բավականաչափ սահմանափակ տեսակետից՝ ինչ-որ իմաստով ուղղակիորեն հակադրվելով Արևմուտք I-ի կառուցվածքին և պնդելով, թե ազգ-պետությունն է իրենց տունը, այդուհանդերձ, ջանալով լցնել ողջ տիեզերքը: Ըստ հինդիկ կառուցվածքի, տիեզերքը կարող է լինել իրենց տունը, նաև՝ բոլորի տունը, և սակայն, ընդհանուր առմամբ, նրանք կառչած են սեփական, հաճախ շատ փոքր բնակավայրին: Հնդիկներ կան աշխարհի բոլոր երկրներում, սակայն նրանք չեն ներկայացնում Հնդկաստանը:

Սա կարող է հիմնավոր պատճառներ ունենալ. Սոցիալական ժամանակը նույնպես սահմանափակ է: Մեկ *kalpa* շրջանից հետո (2000 մեծ դարաշրջաններ՝ *mahayuga*, որոնցից յուրաքանչյուրը տևում է 2160 տարի, ընդամենը՝ 4320000 մարդկային տարի, որ հավասար է «Բրահմայի կյանքի մեկ օրվան») տիեզերքը, աստվածները և Բրահման, բոլորը ոչնչանում են՝ ավելի կարճ շրջանների ավարտին հետևող փոքր ավերումների հետևանքով: Տեղի է ունենում նորմալ վարընթաց, ապա՝ հայտնություն (apocalypsis), որին հետևում է դադար, և ամեն բան նորից է սկսվում վերընթաց ցատկով՝ *Avatars*:

Բուդդիկ տիեզերաբանություն. Մենք արդեն անցել ենք շուրջերկրյա ճանապարհի գրեթե կեսը՝ Արևմուտք I-ից մինչև հարավային, հյուսիսային և արևելյան բուդդայականություն, Շրի Լանկայից մինչև Մոնղոլիա և Ճապոնիա: Բուդդայականությունը մաքուր, անխառն ձևեր է ստանում հինայանա բուդդայականության երկրներում՝ Շրի Լանկա, Բիրմա, Թաիլանդ, Կամբոջա ու Լաոս, և լամաիստական երկրներում՝ Տիբեթում և Մոնղոլիայում:[26] Բայց մահայանա բուդդայականության չորս երկրներում՝ Վիետնամ, Չինաստան, Կորեա և Ճապոնիա, բուդդայականությունը ներկայանում է *san fa*-ի (երեք ուսուցումների) միախառնված ձևով՝ կոնֆուցիականության հետ միասին, ապա նաև՝ հետևյալ յուրահատկություններով. ազգայնականություն (Վիետնամ), դաոիզմ, քրիստոնեություն (Հարավային Կորեա), ջուջե (Հյուսիսային Կորեա) և սինտուիզմ (Ճապոնիա):

Ինչպես հետազոտել է ժամանակակից դասական Հաջիմե Նակամուրան (Hajime Nakamura, *Ways of Thinking of Eastenr People*), Բուդդիկ տիեզերաբանությանը կարելի հանդիպել ամենուր:[27] Ներկա ուսումնասիրությունը ենթադրում է, որ բուդդիկ տիեզերաբանությունը կարելի է բնորոշել, բայց ոչ պարտադրաբար մշակութային համատեքստում: Այդ «մաքուր» բուդդայական տիեզերաբանությունը, այդուհանդերձ, աներկբայորեն ներկայացնում է Արևմուտք I-ի տիեզերաբանական հակոտնյան: Ավելի Արևելքում տարբերությունները Արևմուտք I-ից պակաս ցայտուն են. սա ևս մեկ պատճառ է, որ այդքան շատ տարածք է թողնվել Քրիստոսին և Բուդդային:

Բնության կառուցվածքն իսկ արդեն արմատապես տարբերվում է: Եթե Արևմուտքը մարդակենտրոն է, ապա Բուդդիկ տիեզերաբանությունը կենսակենտրոն է (bio-centric): Զգացական կյանքը, այն ամենն, ինչ ունակ է փորձառելու տառապանքից (*dukkha*) դեպի երանություն (*sukha*) աստիճանականությունը, ըստ էության սրբագործված է: Բնության (կյանքի) հետ գործընկերությունը նախորոշված եզրակացություն է: Այդպիսին է բուսակերությունը:

Անհատի կառուցվածքը նույնպես Արևմուտք I-ի նեգատիվ պատճենին է նման՝ ուժեղ այնտեղ, որտեղ վերջինս թույլ է, և հակառակը: Սա ուղղակիորեն վերաբերում է նաև Հասարակության և Վերանհատի կառուցվածքին: Վեց տիեզերաբանություններից Բուդդիկը միակն է, որ կարող է պնդել, թե տուրք է տալիս հորիզոնական հասարակական կառուցվածքին: Հիմնական սոցիալական բաղադրիչը *sangha*-ն է՝ բաղկացած հավասարապես ու միատեսակ մտածող հավատացյալներից, որ կենտրոնացած են Տաճարի և Տանկի[i] (լավի, բարու) վրա՝ բավարարող բոլորի պահանջներին, բայց ոչ որևէ մեկի ագահությանը: Եթե կա սոցիալական շերտավորում, ապա դա բուդդայականությունից չի գալիս, այլ մեկ կամ ավելի տիեզերաբանություններից, որոնց հետ բուդդայականությունը համագոյակցում է: Գալով սեռերին՝ Բուդդիկ տիեզերաբանությունը նույնպես հակված է մարգինալացնելու կանանց: Այս հարցում թերանում են բոլոր վեց տիեզերաբանությունները, սակայն բուդդայականությունը, թերևս, ամենափոքր չափով:[28]

Բայց հասարակության կառուցվածքի հիմնական դրույթը ցանցային կառույցն է, որի միջոցով անհատը, որպես անփոփոխ ու կայուն ինքնության կրող, դառնում է (գրեթե) անտեսանելի: Անհատը հենց իր վերաբերմունքն է դեպի Մյուսները՝ ներառյալ մահացած ու դեռ չծնված մարդիկ, ոչ մարդիկ: «*Ցանցն ամեն ինչ է, հանգույցը՝ ոչինչ*» ձևակերպումը ծայրահեղական է, բայց հատկանշական: Այդ դեպքում, սակայն, ցանցը՝ որպես խտացման կետ ունենալով *sangha*-ն, վերածվում է ուժեղ գեր-Եսի, «Ես»-ն ըստ սահմանման թուլանում է, իսկ ինքնությունը՝ դառնում հնազանդ:

Կյանքի միասնության բացահայտ ուղեկիցն է ոչ-բռնությունը՝ *ahimsa*-ն, որը ներառում է ոչ-բռնությունն ինչպես Ինքնության, այնպես էլ Մյուսների՝ ընտանիքի անդամների, հարևանների, գործընկերների նկատմամբ: Քանի որ տգիտությունը, հարկադրանքը և ագահությունը դիտվում են իբրև *dukkha*-ի աղբյուրներ, դեպի *մոկշա* տանող ուղին անցնում է դրանց, ինչպես նաև անփոփոխ ու կայուն ինքնության դեմ պայքարով: Այդուհանդերձ, սա նույնը չի, ինչ ազատագրումը հուդդայականության մեջ, որտեղ անհատական հոգին կլանվում է բացարձակ հոգու կողմից. նույնը վերաբերում է նաև արևմտյան

[i] Տանկ ասելով հեղինակն այստեղ նկատի ունի տաճարի (սուրբ) ավազանը:

անհատի միասնությանը երկնքում գտնվող Հոր հետ: Բուդդայական միասնությունը, որպես գերագույն իրողություն, իրականանում է հանգույցի և ոչ թե ցանցի հետ:

Բուդդիկ տիեզերաբանությունն Արևմուտք II-ի հետ կիսում է Աշխարհի հարթության ընկալումը, ըստ որի վերջինս բաղկացած է բազմաթիվ կենտրոններից: Սոցիալական ժամանակի ընկալումը հորիզոնական է, իրադարձություններից զերծ, իբրև միկրոդրամային հետևաբեմ՝ բուդդայականության դեպքում ո՛չ միայն անհատի ներսում, այլև ցանցում, ինչպիսին *sangha*-ն է: Այսպիսով, բուդդայականության (մասնավորապես մահայանա բուդդայականության) համար *քարման* դառնում է ավելի հավաքական՝ մեր *քարման*:

Կարելի է գտնել այս ամենի՝ դեպի բուդդայական Վերանհատը և Իմացությունը տանող հետքերը: Գոյություն չունեցող Աստվածը ներիմացական է, և գոյություն չունեցող հոգին վերածնված է. երկուսն էլ լավ են գործում հակասությունների դեպքում կամ *koan*-ների՝ առեղծվածների դեպքում: Այսպիսով, Աստված մահանում է սատանայի թաղման վայրից մեկ տիեզերաբանություն դեպի Արևելք: Սատանայի հետ մեռնում է թշնամի կերպարների հում նյութը. թշնամիները սատանայի ընտրած գործիքներն են: Աստծո հետ մեռնում է է՛լ ավելի կարևոր բարեկամների կերպարների հում նյութը. բարեկամներին ընտրում է Աստված: Երբ բավական հստակ տարորոշված են թշնամիներն ու բարեկամները, երևան է գալիս *բարեկամ-թշնամի աստիճանականությունը,* որի երկայնքով կարող է տեղ գտնել ցանկացած ծավալի ուղղակի և կառուցվածքային բռնության հոսք՝ մշակութային առումով այդ աստիճանականության կողմից լեգիտիմացված:

Բուդդիկ Իմացությունը նույնպես Արևմուտք I-ի նեգատիվ պատճենն է՝ հոլիստիկական, դիալեկտիկական և հակասություններով լի: Այստեղ առկա է իրականության միություն, ամեն բանի *ամբողջություն*, թեև աշխարհայացքը կենսակենտրոն է: Այն առկա է նաև դինամիզմի հակասությունների առումով, օրինակ, *sukha*-ին մարդկային ձգտման և դեպի *dukkha*-ն տանող մարդկային տգիտության ու հարկադրանքի միջև: Այս հակասությունն առկա է ամեն մարդու մեջ՝ չվերիմացականացված՝ իբրև Աստծո և սատանայի միջև պայքարի արտացոլում:

Սինիկ տիեզերաբանություն. Ավելի Արևելքում մենք մտնում ենք *san fa*-ի սոփեստաբանության մեջ՝ դաոիզմ-կոնֆուցիականություն-բուդդայականություն համադրության չինական տարբերակով: Դրանցից յուրաքանչյուրն իր կնիքն է թողել սինիկ տիեզերաբանության վրա՝ հանգեցնելով շատ բարդ աշխարհայացքի, ինչն էլ, թերևս, հիմնական պատճառն է, որ Չինաստանն այդքան երկարատև գոյություն ունի, և նույնիսկ ավելի երկար, քան հաճախ ներխուժումների ենթարկված Հնդկաստանը: Դաոիզմը բուդդայական կենտրոնացվածությունը հոլիստիկական-դիալեկտիկական-հակասական Իմացության վրա ավելի է խորացնում՝ հին *ին/յանի* վրա կառուցելով իրականության հեռանկարը: *Ամբողջության* վրա կենտրոնացվածությունը պահպանվում է, բայց դաոիզմի ներքո ավելի դինամիկ է դառնում: Ուստի Մաո Ցզե-Դունի անվան տակ հրապարակված խոշոր հետազոտությունը վերնագրված է «*Հակասականության մասին*»՝ հիմքում ունենալով չինական ավանդույթը, թեև դա հատուկ չի նշված և ոչ թե այն պատճառով, որ այն անտեսված է, այլ ավելի շուտ՝ որովհետև այն ընդունվում է անվերապահորեն, «բնականոն է և բնական»:

Դաոիզմը կրել է կոնֆուցիականության պրագմատիկ էմպիրիցիզմի ազդեցությունը՝ նույնպես շեշտադրելով ծայրահեղություններից խուսափելը, մեջտեղում մնալը,[29] ինչով էլ պայմանավորված է սինիկ տիեզերաբանության նկարագրության ժամանակ «խառը» և «էկլեկտիկ» բառերի հաճախակի գործածումը: Չինացիները կգերադասեին ավելի խորիմաստ «հավասարակշռված» տերմինը, որից ես խուսափել եմ:

Սա երևան է գալիս Բնության կառուցվածքում. մարդիկ են գլխավորը, բայց ոչ *այնքան*: Չինական նկարչության մեջ բնությունը պատկերված է վիթխարի, անգամ գերակշռող շատ փոքր մարդկային մարմինների կողքին: Նույնն էլ մսակերության/բուսակերության առումով. ինչո՞ւ ո՛չ երկուսն էլ: Միսը որպես համեմունք, ուրեմն՝ շատ բրինձ, բանջարեղեն, ապուրներ:

Կոնֆուցիականությունն իր հիմնական դրոշմն է թողել Հասարակության և Աշխարհի կառուցվածքների վրա: Հասարակությունը կառուցված է չինական դե ֆակտո ֆեոդալական համակարգի ոգով, որն ունի չորս կաստա՝ համապատասխան իրավունքներով ու պարտականություններով. *shi'h* (մտավորականություն/բյուրոկրատիա), *nung* (ագարակատերեր), *kung* (արհեստավորներ) և *shang* (առևտրականներ): Այսօրինակ կառուցվածքը դուրս է մղում օտարներին, *բարբարոսներին*, որոնք նույնպես չորս խմբի են բաժանվում. հյուսիսային, արևելյան, հարավային և արևմտյան բարբարոսներ, որոնցից յուրաքանչյուրին տրված է գովասանքից շատ հեռու բնութագիր, մասնավորապես հյուսիսային բարբարոսներին (ներկայում՝ ռուսները), որոնք Մեծ պատից այն կողմ են:

Բարբարոսներն անհետացան աշխարհագրության մշուշում. աշխարհն անսահման է: Կարևորն այն է, որ չինացիները գիտեն, թե որտեղ են նրանք և կարող են հեռավորության վրա պահել: Այս ամբողջ կառույցի գլխին բարձրաստիճան *shi'h*-երն են, որ կառավարում են Միջին Թագավորությունում՝ *zhong guo*-ն, այլ կերպ ասած՝ որևէ դինաստիայի մանդարինները՝ ներառյալ Կոմունիզմ կոչվող ներկայիս դինաստիան: Բավականաչափ կենտրոնական դիրք՝ աշխարհում տեղը պահպանելու համար:

Վերանիատի կառուցվածքը գալիս է երեք ուսմունքներից՝ համադրելով և մերժելով այս հարուս բազմակարծությունը, ծնունդ տալով բազմաթիվ խիստ մասնավորեցված հավատամքային համակարգերի: Բայց գերակայող հավատքի համակարգը բուն էկլեկտիզմն է: Թե որքան արմատական է սա՝ լավագույնս կարելի է հասկանալ, եթե փորձենք պատկերացնել, որ հուդայականության, քրիստոնեության և իսլամի վրա հիմնված Արևմուտքը հրավիրում է ցանկացած անհատի կամ խմբի կառուցել սեփական համադրությունը: Հավանաբար, սա է Արևմուտքի և Արևելքի տարբերությունների բանալին. Արևմուտքը *Կամ/կամի երկիրն* է, Արևելքը՝ *Եվ/և-ի երկիրը*:

Պատճառը պարզ է. հետազոտված երեք արևելյան տիեզերաբանություններում մարդիկ պատասխանատու չեն անհատական Աստծո առաջ, որն Արևմուտք I-ի դեպքում շատ խանդոտ է, պահանջում է անվերապահ նվիրում Իրեն և միայն Իրեն: Չկա սատանայի սպառնալիք, որը հավերժ տանջում է ճիշտ ուղուց շեղվածների հոգիները: Բուդդիկ տարբերակում անգամ հոգի չկա: Այն, ինչ վերածնվում է, փոխաբերաբար կարող է ընկալվել իբրև կենսական էներգիա, քվանտ, որը կարող է մահվանից հետո ստանալ կյանքի ոչ միայն մեկ, այլ մի քանի ձևեր: Սինիկ, ինչպես նաև նիպպոնիկ տարբերակներում կարող են լինել մահվանից հետո խաղաղություն որոնող հոգիներ,

առնվազն՝ փոխաբերաբար: Բայց մահվանից հետո կյանքին չի շնորհվում երկնային երանության կամ դժոխային տանջանքի բացարձակ իրողություն:

Սինիկ Ինքնությունն այնքան շեշտված չէ, որքան արևմտյան հանգույցներում, ո՛չ էլ ճնշված, ինչպես բուդդայական ցանցում. դա մի տեսակ էկլեկտիկ համադրում է: Որտեղ Արևմուտքը գործածում է առաջին դեմքի եզակին (ասենք՝ անգլոամերիկացիներն անգամ մեծատառով են գրում «ես»-ը (I) և՝ շատ հաճախ), չինարենում ավելի հաճախ կարող է լինել առաջին դեմքի հոգնակիի գործածումը: Կան կոլեկտիվ տարրեր, որոնք, սակայն, հազիվ թե այնքան ուժեղ են, որքան նիպպոնիկ տիեզերաբանությունում: Գեր-Եսը, «Ես»-ն ու ինքնությունը ներկայանում են որպես «խառը»՝ խուսափելով, ի դեպ, Արևմուտք I-ի ծայրահեղություններից:

Հիպոթեզային է մի մեղմ լավատեսություն. վերելքներ և անկումներ՝ երկուսն էլ ընդհանուր առաջընթացի մեջ, երկուսն էլ Անհատական Ժամանակի և Սոցիալական ժամանակի համար: Չկա ո՛չ դրամատիկ արևմտյան ժամանակը, ո՛չ Արևմուտք I-ի կամ բուդդիկ տիեզերաբանությունների հորիզոնական (պարզ) սոցիալական ժամանակը: Ժամանակն անսահման է: Միջին Թագավորությունը գտնվում է կենտրոնում, և մեծ ջանքեր չեն պահանջվում այդտեղ ընկնելու համար:

Նիպպոնիկ տիեզերաբանություն. Մեկ այլ տիեզերաբանության օգնությամբ էլ ավելի Արևելք շարժվելով՝ տեսնում ենք, որ հիմնական տարբերությունը միաստվածության մի ձևի վերահայտնվելն է Վերանհատում՝ վերիմացական Աստծով, Արևի աստվածուհով՝ *Amaterasu O-Mikami*, ում համար ճապոնացիները (կամ, ավելի շուտ, կայսրը՝ *tenno*-ն) Ընտրյալ ժողովուրդ են: Սինտուիզմը նույնպես խիստ տեղային է՝ անհամար գյուղական *kami* աստվածներով, և նմանություններ ունի կոնֆուցիականության և բուդդայականության հետ:

Մեիջի հեղափոխությունից (կամ Վերականգնումից, ինչպես այն շարունակականության տպավորություն ստեղծելու համար հաճախ անվանում են) հետո կառուցված պետական սինտուիզմում Աշխարհի կենտրոնում Ճապոնիան է: Ճապոնիան շրջապատում են ճապոնիայի նման երկրներ. նկատի են առնվում մահայանա բուդդայական/կոնֆուցիական երկրները՝ Վիետնամ, Չինաստան և Կորեա, *dai-tō-ā* կառույցում առանցքային երկրները, Մեծ Արևելյան Ասիայի Համաբարեկեցության ոլորտը, 1931-1945 թվականների խաղաղօվկիանոսյան պատերազմի տարածքը:[30] Իսկ դրանից դուրս գտնվում է մի բան, որ շատ նման է սինիկ տիեզերաբանության Բարբարիային (բարբարոսների երկիրը), Ռեսուրսաստանը (Resourcia): Եթե չինացիները կարող են մեծ ուշադրություն չդարձնել Բարբարիային, բացի որպես պոտենցիալ սպառնալիք դիտարկելուց, ապա իրականության այս երրոդ մասը, որ նույնպես անսահման է, Ճապոնացիների համար ընդարձակ Ռեսուրս է՝ վայր, որտեղ կարելի է որոնել գիտելիքներ և հումք, որտեղ կարելի է վաճառել ապրանքը. *Gaikoku*՝ դրսի աշխարհ:

Հասարակության կառուցվածքը նիպպոնիկ տիեզերաբանությունում սինիկ տիեզերաբանության հետ կիսում է ֆեոդալական չորս կաստաների համակարգը: Վերջիններս ճապոներենում կոչվում է *shi-no-ko-sho,* այն կարևոր տարբերությամբ, որ *shi*-ն, հակադրվելով չինական *shi'h*-ին, ներառում է նաև *samurai*-ների[31] ռազմական կողմը՝ նրանց *bushdo* ոգով:[32] Այսպիսով, նիպպոնիկ տիեզերաբանությունում զինվորականությունը կանգնած է հասարակու-

թյան վերևում, մինչդեռ սինինիկ տիեզերաբանությունում այն ավելի մարգինալ է:[33]

Նիպպոնիկի սոցիալական կառուցվածքում ամենակարևոր կողմն այն է, որ այն համադրում է բուդդիկ տիեզերաբանության *ցանցի* կառուցվածքայնությունը և *խմբի* կոլեկտիվիզմը, որին ծանոթ ենք նաև Արևմուտք I-ից: Դա վերաբերում է Ինքնության կառուցվածքին՝ ուժեղ գեր-Եսով և թույլ «Ես»-ով (բուդդիկ տիեզերաբանության կառուցվածքի նման), սակայն ավելի բռնկուն ինքնությամբ, որը բուդդայականության մեջ ենթակա է կարգապահության: Բնության կառուցվածքը, ինչևէ, ավելի նման է սինիկի կառուցվածքին՝ թերևս բնության ավելի պակաս գերակայությամբ:

Ինչպես և սինիկ տիեզերաբանությունում՝ Ժամանակի մեջ կան վերընթացներ ու վարընթացներ. վերջիններս նույնքան բնականոն են ընկալվում, որքան վերընթացները, ուստի անհանգստանալու կարիք չկա: Բայց կա նաև համընդհանուր լավատեսություն, «առաջընթացի գաղափարի» մի տարբերակ՝ ինչպես Անհատական, այնպես էլ Սոցիալական Ժամանակի համար:

2.3 Հայացք վերևից

Եթե վեց քաղաքակրթությունները տիեզերաբանությունների հատկանիշներով մարդիկ լինեին, ինչպե՞ս կվերաբերվեինք նրանց այս ծանոթությունից հետո: Քանի որ մեր սեփական հատկանիշները ձևավորվել են մեր քաղաքակրթությունների տիեզերաբանությունների ներքո, ուստի դա կախված է նրանից, թե ով է ներգրավված: Հետևաբար, թույլ տվեք շարադրել կանխակալ իմ կարծիքը:

Առաջինը, ես հիմնավորապես տպավորված եմ նրանց միջև եղած տարբերություններով. նույն *Homo sapiens*-ն է, բայց հսկայական ընդգրկում կա այն իրականության կառուցվածքում, որում նրանք ապրում են:

Երկրորդը, ես հակված եմ Արևմուտք I-ն ընկալել իբրև էներգիայով լեցուն և նորարարական, բայց հիմնականում՝ պարծենկոտ: Արևմուտք II-ը չափազանց դուրս է մղված աշխարհից, հինդիկը չափազանց ինքնահաճո է՝ հաշվի առնելով հարստությունը, բուդդիկը բավական հաճելի է, բայց սա էլ դուրս մղված է, սինիկը գրեթե նույնքան մեծամիտ է, որքան Արևմուտք I-ը, բայց պակաս պարծենկոտ է, իսկ նիպպոնիկը ծայրաստիճան զգայուն է, բայց նույնպես մեծամիտ ու դուրս մղված: Նրանց մեջ լավ աշխարհի քաղաքացիներ չկան: Բայց սա է այն աշխարհը, որում ապրում ենք:

Ծանոթագրություններ

[1] Ցանկացած անհատ (Ա) ցանկացած իրավիճակում (Ի) կրում է որոշակի մշակույթ, բայց դա, ըստ այս սահմանման, չի վերաբերում քաղաքակրթությանը: Քաղաքակրթությունն ընդհանուր է՝ սինքրոն և դիաքրոն կերպով, և շեշտն այստեղ տարածության ու ժամանակի միջև դրա տարածման լայն ոլորտների վրա է, և ոչ թե սոսկ Ա-ի և Ի-ի: «Քաղաքակրթություն» եզրը որևէ բանի համեմատ բարձր կամ ցածր, լավ կամ վատ լինելու լրացուցիչ իմաստ չի կրում:

[2] Սրանց մասին համեմատաբար ավելի մանրամասն կխոսենք ավելի ուշ՝ *Քաղաքակրթությունների տեսություն* բաժնում:

[3] Հինդիկը, բուդդիկը, սինիկը և նիպպոնիկը Թոյնբիի տերմինաբանությունը նմանակող եզրեր են, որոնք տվյալ դեպքում օգտակար են, քանի որ բոլորն էլ, ըստ Վեբերի, իդեալական տեսակներ են: Ըստ այդմ՝ Ճապոնիայում գերիշխում է նիպպոնիկ տիեզերաբանության, բայց կա նաև՝ ասենք, Արևմտյան 1-ի վերնաշերտ: Ուստի հետազոտվելիք վեց տիեզերաբանությունները որոշակի տարածական-ժամանակային շրջաններին վերաբերող, բայց վերջիններիս ոչ նույնական տեսական կառույցներ են:

[4] Արևմուտք/Արևելք բաժանման նկատմամբ նման մոտեցում ունի Ալիս Ա. Բեյլին իր *The Reappearance of Christ* (London: Lucis Press, 1948) գրքում. «Ավատարները (Avatar, բնորոշված են որպես «երկնային սուրհանդակներ», էջ 7) հայտնի և ընդունված են իբրև Բուդդա՝ Արևելքում, և Քրիստոս՝ Արևմուտքում: Նրանց ասելիքը հայտնի է բոլորին, և նրանց կյանքի ու խոսքի արգասիքը պայմանավորել են մտածողությունն ու քաղաքակրթությունները՝ զույգ կիսագնդերում (էջ 10: Այս հրաշալի հեղինակի աշխատությանը ծանոթանալուս համար պարտական եմ Քլիֆ Գոլսթոունին): Իսլամի համար, անշուշտ, Ավատարը Մուհամեդն է, իսկ հուդայակության մեջ դրանք բազմաթիվ են, քանզի վերջինս, ի տարբերություն միամարգարե քրիստոնեության (ուղղափառ, կաթոլիկ կամ բողոքական) և իսլամի (սունի կամ շիա), բազմամարգարեական է: Այստեղ նշանակություն ունի նաև՝ արդյոք միայնակ, թե այլ աշխարհընկալումների հետ միախառնված է հանդես գալիս բուդդայականությունը՝ հարավային (հինայանա, թերավադա), արևելյան (մահայանա) կամ հյուսիսային (լամաիստական):

[5] Ֆիլիպինները (կաթոլիկ/մահմեդական) և Ինդոնեզիան (մահմեդական) այս սահմանման համաձայն պատկանում են Արևմուտքին ավելի շուտ մշակութային, քան աշխարհագրական տեսանկյունից:

[6] Ուստի Արևմուտքը ներկա է Արևելքում (ինչպես ֆիլիպինները, Ինդոնեզիան և Արևմուտք 1-ի վերնաշերտը) և Արևելքը՝ Արևմուտքում (ինչպես միջնադարում, ասենք Արևմտյան Եվրոպայում +250 - +1250: Այլ կերպ ասած՝ այս ամբողջ վարժանքի ելակետը Արևմուտք/Արևելք աշխարհագրական պարզունակ բաժանումը չէ):

[7] Դրանց դուրս մնալու պարզ պատճառներից մեկը կապված է հեղինակի՝ հետազոտության համար ընտրված վեց քաղաքակրթությունները ճանաչելու առումով սահմանափակումների, ինչպես նաև դրանց բացակայության հետ՝ տեղացիների մշակույթների դեպքում: Իմ ուզածը ուղղակի կապն է և ոչ թե մարդաբանների միջոցով սոցիալական տարածքում միջնորդավորվածը: Սրան կարելի է առարկել, թե որոշակի վստահություն կա պատմաբանների նկատմամբ՝ որպես սոցիալական ժամանակի մեջ հաղորդակցություն իրականացնողների: Բայց կյանքը Արևմուտքում երևակում է մեր մտքում նստվածքի ձևով արտահայտվող անցյալի ուղիների պատմական գիտակցությունը, որը նաև արտացոլվում է մեր շրջապատում՝ առնվազն պատմությամբ հարուստ շրջաններում:

[8] Ընթերցողին այս տարածքները ծանոթ են Մաս 2-ից՝ Զարգացման տեսությունից: Տարբերությունն այն է, որ «Մենք» տերմինը գերադասելի է համարվել «Մարդկային» կամ «Անհատ» տերմինից՝ ընդգծելու համար ուշադրությունը անհատի ներքնաշխարհի հանդեպ: Վերլուծաբաններից ոմանք օգտագործում են այս կատեգորիաներից մի քանիսը, իրենք են հավելում որոշ կատեգորիաներ. օրինակ՝ Florence R. Kluckhohn & Fred L. Strodtbeck, *Variations in Value Orientations* (Evanston, IL; Row Peterson, 1961): Ներկա սխեմայի տրամաբանությունը ներշնչվել է Կանտի կողմից (տարածություն, ժամանակ և գիտելիք. տարածությունն այստեղ անվանվել է Աշխարհ, իսկ գիտելիքը՝ Episteme), ինչպես նաև՝ ցանկացած մարդ արարածի ակնհայտ համատեքստով. Բնություն, այլ մարդիկ (այստեղ անվանվում են Հասարակություն) և Աստված (այստեղ կոչվում է Վերանձնական, որպեսզի չկապվի վերանձնականի թեիստական, առավել

ևս՝ մոնոթեիստական մեկնաբանությունների հետ): Այստեղ հարկ է ավելացնել «Մենք»-ը՝ որպես մի բան, որին պատկանում են բոլորը՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար: Որևէ սխեմա, որ կարող է օգտագործվել ինչպես խաղաղության, այնպես էլ հակամարտության համար, զարգացման և քաղաքակրթության նկատմամբ բազմաթիվ այլ կնիքներ է կրում և սխալներ է պարունակում:

[9] Քաղաքակրթությունների հիմքում ընկած ենթադրությունների ավելի վաղ հետազոտություններում սկսել եմ հինգից (Տարածություն, Ժամանակ, Գիտելիք, Անհատ-Բնություն, Անհատ-Անհատ), հետագայում ավելացրել եմ թիվ 6-ը (Անհատ-Վերիմացական) և, վերջապես, թիվ 7-ը (Մենք): Կարելի էր բազմաթիվ այլ չափումներ էլ ավելացնել՝ նկարագրության և տեսությունաստեղծ ցանցն ավելի հարստացնելու նպատակով, սակայն այդ դեպքում հիմնական նպատակը պետք է ավելի հեռուն գնար:

[10] Մյուսները դա այլ կերպ կանեին, բայց ես օգտակար եմ գտել հետևյալ դիտարկումները.

Բնություն. ինչպես են մարդիկ վերաբերվում այլ կյանքերին՝ ներառյալ սնվելու սովորությունները,

Մենք. Ֆրոյդի՝ գեր-ես-«Ես»-ինքնություն եռյակը,

Հասարակություն. ուղղահայաց/հորիզոնական և անհատական/հավաքական (կոլեկտիվ),

Աշխարհ. ինչպես են քաղաքակրթությունները երկրաքաղաքական առումով բաժանում աշխարհը,

Ժամանակ. ինչպես են վերելքներն ու անկումները բաշխվում ժամանակի մեջ,

Անդրանձ. ներիմացականն ընդդեմ վերիմացականի և վերիմացական կառուցվածքի,

Իմացություն. ատոմիստական/կրոնական և դեդուկտիվ/դիալեկտիկական:

[11] Սա ասելով՝ ենթադրվում է, որ եթե քաղաքակրթությունների և տարածությունների ցուցակները փակ են, ապա արժեքային դիտարկումը բաց է: *Lavori in corso* - Աշխատանքն սկսված է:

[12] Տե՛ս Riamundo Panikkar, *'La notiondes droits de l'homme, est-elle un concept occidental?'*, Diogenes, no.120, 1982, էջ 87-115:

[13] Տե՛ս Johan Galtubg, *'Two perspectives on society',* ch. 2.1, էջ 41-44 in *The Worlds* (New York: The Free Press, 1980):

[14] Արևմուտքի հիմնական տեքստը (Գիրքը, արաբերեն՝ *kitab*)՝ Աստվածաշունչը, մասնավորապես Հին Կտակարանը, կառուցված է այս բանաձևին համապատասխան:

[15] Հուդայականությունն այստեղ բացառություն է, քանի որ համընդհանրական չէ: Այն առանձնապես հարկադրյալ է միայն հրեաների համար: Հավատի առանցքում ունենալով Ընտրյալ ժողովուրդը՝ հրեաներին և Միջերկրական ծովի արևելյան մասում Ավետյաց երկիրը՝ իբրև միակ հավատք (singularism) հնարավոր է լոկ հուդայականությունը, բայց ոչ բոլորի համար (universalism): Հին Կտակարանում (Գիրք Ծննդոց 15.18, Գիրք Ծննդոց 17.5-14, Թվեր 34.1-12) աշխարհագրական բարձր ճշգրտությամբ նկարագրված Ավետյաց երկիրը պարզապես չի կարող տեղավորել բոլորին:

[16] Մատթեոս 28. 19-20. «Գնացե՛ք, ուրեմն, աշակերտ դարձրեք *բոլոր* ազգերին... Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ *բոլոր* օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (շեղատառերը իմն են՝ Յ. Գ.):

[17] Դեկարտից, *Discource on Method and the Meditation,* translated by F.E.Sutcliffe (London; Penguin, 1968), էջ 41; originally from 1637.

[18] Մեկ մեկնաբանություն. բուրգը չափազանց շարունակական է: Չարիքը, լինի Բնության, Ինքնության, Հասարակության թե Աշխարհի մեջ, մյուսների հետ հավասար շարունակականության մեջ չի դիտվում, բայց ունի սեփական գոյությունն ու տրամաբանությունը:

[19] Եվրոպական Միությունը, 70 ACP (աֆրո-կարիբյան-խաղաղօվկիանոսյան) պետություններին հետ միասին, ինչպես սահմանված է Մաստրիխտի Պայմանագրում, աշխարհ-պետություն ստեղծելու փորձ է, որը չի ընդգրկում ամբողջ աշխարհը, բայց գոտևորում է այն: Արդյո՞ք սա Արևմուտք 1-ի վերջին ջանքը չէ:

[20] Ներկայում տիեզերաբանությունն ամբողջ սոցիալական ֆորմացիան դիտում է որպես *Քաղաքակրթությունների տեսության* շրջանակներում հետազոտելիք խոշոր հիմնախնդիր, սակայն այստեղ դրան չենք անդրադառնում՝ ծավալի փոքրության պատճառով: Մասնավորապես հետևյալ թեզը՝ *Տղամարդ : Կին = Արևմուտք : Արևելք,* մեծապես կենսական է համարվում հետևյալ ներակայություններով. ամենուր կանայք դաշնակցում են Արևելքի հետ՝ ընդդեմ աշխարհում ներկայում գերակայող Արևմուտք 1-ի տիեզերաբանությունը կրող Արևմուտք 1-ի տղամարդկանց:

[21] Տե՛ս Johan Galtung, Erik Rudeng & Tore Heiestad, *'On the Last 2,500 Years in Wester History. And Some Remarks on the Coming 500'*, էջ 318-361 in Peter Burke, ed., *New Cambridge Modern History, Companion Volume,* vol. XIII, (Cambridge: Cambridge University Press, 1979).

[22] Տե՛ս հետևյալ հոյակապ գիրքը. Leonardo Boff, *Saint Francis: a Model for Human Liberation* (New York, Crossroad, 1984).

[23] Կասիրերի ֆունկցիայի գաղափարն այստեղ աստիճանաբար փոխարինում է արիստոտելյան սուբստանցի գաղափարին: Տե՛ս Ernst Kassirer, *Substance and function* (New York: Dover, 1953) (բնագիրը՝ գերմաներեն, 1910 թ.):

[24] 1980-ին Բեռլինի պատի բազմաթիվ գրություններում կար նաև այսպիսին.

Քարմա. «Ինչ էլ որ ասես, ինչ էլ որ անես,

Վաղ թե ուշ հառնելու են քո դեմ»:

[25] Սիխիզմը (Sikhism), որը, եթե կարելի է այսպես ձևակերպել, շատ հետաքրքիր փոխզիջում է իսլամի և հինդուիզմի միջև, ընդունում է վերամարմնավորումը՝ բայց միայն որոշ սերունդների համար, մինչդեռ հոգուն թույլատրվում է մտնել Դրախտ:

[26] Կարելի է փաստարկել, որ լամաիզմը, որը հիմնված է կենդանի Աստծո՝ Դալայ Լամայի, ինչպես նաև տոհմածառի վերամարմնավորման, քան թե վերածննդի հետ կապելու սկզբունքների վրա, բուդդայականություն չէ:

[27] Honolulu: University of Hawai'i Press, 1964. Նակամուրան համեմատում է Հնդկաստանի, Չինաստանի, Տիբեթի և Ճապոնիայի բուդդայականությունները՝ նրանց հավատքային համակարգերի ոչ-բուդդայական կողմերը ավելի լավ հասկանալու նպատակով:

[28] Քննադատական և իրազեկ տեսակետի համար տե՛ս Diana Y. Paul, *Woman in Buddhism: Images of the Feminine inthe Mahayana Tradition* (Berkeley, CA: University of California Press, 1988):

[29] Zhong dao, *The Middle Way.*

[30] Այս կառուցվածը կարճ ժամանակով որոշ անկում ապրեց 1945 թվականին Ճապոնիայի կապիտուլյացիայից հետո: Այլ երկրներ նույնպես ընդգրկված էին, բայց դրանք մեծ նշանակություն չունեին:

[31] Իրականում *shi-ի* ճապոնական ընթերցումը: Չինական տառերը հաճախ երկու ընթերցում ունեն չինարենի համար և միայն մեկ ընթերցում՝ ճապոներենի համար:

[32] *Bushido*-ն մարտիկի, կամ ավելի լայն՝ *samurai* կաստայի կամ դասակարգի կանոնագիրքն է, որը շեշտադրում է խիզախությունը, հնազանդությունը իշխանությանը, բարությունը և էթիկական առաքինությունը ավելի ստորին դասակարգերի նկատմամբ:

[33] Մյուս կողմից, *shi'h*-ի թարգմանության մեջ կա նաև «ասպետի» տարր:

3
Հետևություններ՝ խաղաղություն, պատերազմ, հակամարտություն, զարգացում

3.1 Տիեզերաբանությունը և զարգացման ու խաղաղության գաղափարները

Այս գլխի ուսումնասիրության առարկան հետևյալն է՝ նկատի առնելով նախորդ գլխի 2.1 աղյուսակում վեց՝ Արևմուտք I, Արևմուտք II, Հինդիկ, Բուդդիկ, Սինիկ, Նիպպոնիկ քաղաքակրթությունների խորքային մշակույթի, կամ *տիեզերաբանության* վերաբերյալ դրույթները և մասնավորապես այն, թե ինչպես են նրանք կառուցում Բնությունը, Անհատը, Հասարակությունը, Աշխարհը, Ժամանակը, Վերանհատը, Իմացությունը, ի՞նչ կարելի է ակնկալել *խաղաղության* և *զարգացման* գաղափարների, տեսությունների և կիրառության առումով: Եվ սա չպետք է դիտել որպես կանխորոշված պատասխանով դեդուկտիվ վարժություն՝ իմանալով, օրինակ, Արևմուտք I-ի տեսությունը և կիրառումը երկու ոլորտներում էլ: Սա ավելի շատ դրույթների ձևակերպման խնդիր է մեր մտահոգությունների ուղղությամբ, չնայած որոշ դեպքերում դրա մեծ մասը մոտ է դեդուկցիային:

Խաղաղության ուսումնասիրությունների տեսանկյունից «խաղաղություն» նշանակում է «ուղղակի, կառուցվածքային և մշակութային բռնության նվազեցում»: Կարելի է նաև օգտագործել «բացասական խաղաղության» ավելի նեղ սահմանումը՝ որպես «ուղղակի բռնության նվազեցում», և հետո նույնացնել «կառուցվածքային բռնության նվազեցումը» «զարգացման» հետ: Սակայն այս սահմանումները իրատեսական չեն և հեռու են խորքային մշակույթի իրողություններից:

Ավելի իրատեսական են հետևյալ սահմանումները.

Զարգացումը տիեզերաբանության բացումն է ժամանակի ընթացքում[1]*:*
Խաղաղությունը տարածության մեջ առանց բռնության զարգացման պայմանն է[2]*:*

«Իրատեսական» (չշփոթել ուժի գործադրման տեսության և կիրառման համատեքստում «իրատեսության» հետ) նշանակում է «մշակույթի առաջնայնության թեզին համապատասխան», ինչն էլ իր հերթին նշանակում է կանոնին համապատասխան: Եվ սա զարգացումը վեր է ածում ավելի հիմնարար հայեցակարգի, քան խաղաղությունն է: Խաղաղության գործառույթն այստեղ այդ ճանապարհի հնարավոր արգելքները հարթելն է:

Հիմք ընդունելով 2.1 աղյուսակը, ինչպիսի՞ (բազմաթիվ) զարգացումներ են հնարավոր:

Արևմուտք I

Ժամանակի կառուցվածքում ինչպես անհատի, այնպես էլ հասարակական մակարդակներում առկա է Առաջընթացի գաղափար, որը «հասիր կամ մեռիր» ընտրությամբ Արևմուտք I-ի առճակատման վերահաս Ճգնաժամի ներքո ձևավորում է ուժեղ անձինք և ուժեղ հասարակություններ: Այն հզոր անձինք, ովքեր կարողանում են ապրել ըստ այդ կարգախոսի, դառնում են սոցիալական վերնախավեր, և այն հզոր հասարակությունները, որոնք հաջողությամբ հետևում են այդ կարգախոսին, նվաճել են աշխարհի Կենտրոնը: Այս գործընթացում Բնությունը հպատակեցվել է, նաև՝ բնության, անհատի, սոցիալական և համաշխարհային ինժեներության զարգացմանը ծառայող հակահոլիստիկական և հակադիալեկտիկական Իմացության կողմից: Զարգացումն ուղղորդելը մեկ, միակ, համապարփակորեն ճշմարիտ սկզբունք է՝ Աստծո օրենքն անհատապես և հասարակայնորեն հասկանալն իբրև կրոնական (եկեղեցականները վերևում) և Աճի օրենքն անհատապես և հասարակայնորեն հասկանալն իբրև (փողը վերևում) աշխարհիկ տարբերակ ունենալով: Հասարակական և համաշխարհային Ծայրամասը կազմված է այն մարդկանցից և հասարակությունից, որոնք ընդունում են ուղղորդող սկզբունքը, մնացածները, որոնք չեն ընդունում սկզբունքը, Չարերն են: Խաղաղությունը նկատի է առնում նրանց ոչնչացումը (ունակություններից զրկումը), մարգինալացումն այնպես, որ զարգացումը շարունակվի՝ առանց չար ուժերի կողմից խանգարվելու: Եվ սա կարող է աղետալի հետևանքներ ունենալ Մյուսների համար:

Արևմուտք II

Առկա են Առաջընթացն ու Ճգնաժամը, որոնք, սակայն, ծառայում են Աստծո Օրենքին, անձի հոգևոր զարգացմանը և եկեղեցականներին ու որոշ սրբերին՝ իբրև դեպի վերնախավ մուտքի արտոնագիր: Անձի բացումը/զարգացումը տեղային բնույթ ունի և հասարակական փոփոխություններ չի ենթադրում: Կենտրոնը սահմանող տարածքը կապակցված է սահմանափակված տեղական մակարդակով: Իմացությունը, որը հիմնականում աստվածաբանական բնույթ ունի, ծառայում է այս զարգացմանը՝ անտեսելով Բնությունը, և հնարավոր է, որ վերջինիս, ինչպես նաև հասարակության և, միանշանակորեն, անհատի համար աղետալի հետևանքներ է ունենում:

Հինդիկ

Զարգացման կենտրոնը պետք է որ լինի անձնական մակարդակում՝ ելնելով աշխարհի և հասարակության պարբերաշրջանային *(կալպա)* տեսություններից անբաժան և, ամենայն հավանականությամբ, անխուսափելի Հետընթացի գաղափարից: Այստեղ Հնդուիզմի չորս հիմնական ուղղորդող սկզբունքները՝ *դհարման* (բարոյական պարտքը), *արթան* (հարստություն, գոյության միջոցներ), *կաման (*հաճույք) և *մոկշան (*ազատականացում) դառնում են զարգացման ուղենիշներ: Կյանքը չորս փուլի է բաժանվում: Երբ կյանքը մտնում է *մոկշա*՝ ազատականացման փուլ, ապա այն ինքնընտրության ազատականացվում է: Առաջին փուլում կենտրոնը միայն *դհարման* է, երկրորդում անհատը ամբողջապես ընկղմվում է աշխարհի մեջ, երրորդում կենտրոնը ծառայությունն է, ինչպես այս աշխարհում, այնպես էլ ինքնաարտահայտման վերջին փուլում: *Մոկշան* ամբողջ ընթացքում քողարկված է և առավելագույնի

է հասնում միայն վերջին փուլում: Սոցիալական կյանքը պետք է համապատասխանության բերվի սրան, միգուցե վերջին փուլում գտնվողների կողմից իրենց իմաստությունն առաջին փուլում գտնվողներին փոխանցելով, և այնպես, որ *արթիա/կաման* չկանգնի *դհարմա/մոկշայի* ճանապարհին: Այստեղ երկու իմացություններ են գործում՝ մեկը ծառայում է *արթիա/կամային*, ավելի մոտ արևմտյան գիտությանը, իսկ մյուսը ծառայում է *դհարմա/մոկշային*: *Մոկշայի* ճանապարհին կանգնողը (և ավելի լավ վերամարմնավորումը) միայն անհատն է, և ոչ ինչ-որ չար Ուրիշը. խաղաղությունը հիմնականում անձի մեջ է:

Բուդդիկ

Զարգացումը ծառայելու է անձնական վերելքին՝ *մոկշայի* իմաստով: Քանի որ սա տեղի է ունենում տեղային մակարդակով, միայնակ կամ այլոց հետ համատեղ *սանգայում*, տիեզերաբանության բացումը/զարգացումը չի նշանակում հասարակական կամ աշխարհի փոփոխություն. այն ավելի քան պետք է տեղական մակարդակով լինի, որպեսզի ամեն մեկի կարիքների համար ապահովվի ո՛չ չափից ավելի, ո՛չ էլ չափից պակաս: Իմացությունը ծառայում է այս գործառույթին, ներառելով բնության հանդեպ այնպիսի վերաբերմունք, ըստ որի տեղական մակարդակով հնարավոր է դառնում մարդկանց և կյանքի այլ ձևերի կարիքների բավարարում: Խաղաղությու՛ն՝ ինչպես անձնական մակարդակում, այնպես էլ այլ էակների հետ:

Սինիկ

Զարգացումն անձնական է և հասարակական, և երկուսն էլ իրենց վայրիվերումներն ունեն: Առկա է մեկ գերակայող մտահոգություն՝ կոնտրոնի Թագավորության պահպանում և հզորացում: Զարգացումն առաջին հերթին Չինաստանի զարգացումն է: Եթե այս նպատակի համար պահանջվում է ներքին հասարակական փոխակերպում, ապա թող այդպես էլ լինի: Եթե Չինաստանին լրջորեն անհանգստացնում են ցանկացած կարգի բարբարոսները, պաշտպանության համապարփակ միջոցը պետք է հանդիսանա սոցիալական կառույցի մի մասը: Անդրանհատի այսպիսի թույլ արտահայտության դեպքում անձնական զարգացման նպատակը չի կարող լինել անհատական փրկությունը, վերամարմնավորումը կամ վերածնունդը: Ժամանակի միջով շարունակականությունը կլանի, տեղական համայնքի և Չինաստանի գոյատևման մեջ է: Իմացությունը պետք է ծառայի այս նպատակին՝ կենտրոնացված լինելով Չինաստանի վրա:

Նիպպոնիկ

Տիեզերաբանությունը կիսում է վերիմացական ընտրյալությունն Արևմուտքի (I և II), իսկ դրական, պաշտպանական ընտրյալությունը՝ Չինաստանի հետ (Չինաստանը Ֆրանսիայի պես է, *un peuple élu, mais par lui-même*) ընդդեմ ներազդման, սակայն առանց նույնացնելու Չարերին, ինչպես, օրինակ, մահմեդականներին, հեթանոսներին, կոմունիստներին, որոնք խաղաղության անունից ամբողջ աշխարհում պետք է ոչնչացվեն (Արևմուտք I-ն իրեն տեսնում է որպես քրիստոնեական, քաղաքակիրթ, ժողովրդավարական): Կենտրոնա-

կանն այստեղ Ճապոնիայի զարգացումն է, սակայն պակաս ինքնակենտրոնացված, ինչպես Չինաստանինն է, նաև հիմնված Ռեսուրսիայի հետ փոխանակումների վրա, ինչպես նաև *dai-tō-ā* պետությունների որոշակի ճապոնացվածության վրա: Զարգացումն անձնական և հասարակական է՝ իր վայրիվերումներով: Կրկին, քանի որ փրկությունը, վերամարմնավորումը և/կամ վերածնունդը թույլ են արտահայտված, շարունակականության բեռն ընկած է ընտանիքի և հասարակության վրա: Սա իրականացնելու համար հարստության անձնական և հասարակական կուտակման կարիք կա, որ պետք է զարգացման հայեցակարգի մի մասը լինի: Իմացությունը պետք է սրան ծառայի՝ հիմնականում լինելով Ճապոնիայի վրա կենտրոնացված:

Այժմ եկեք մեր ուշադրությունը սևեռենք բնության՝ «շրջակա միջավայրի» վրա: Անկախ տիեզերաբանությունից, բնությունն այն միջավայրն է, որտեղ տեղի է ունենում զարգացման՝ որպես կանոնի, բացահայտումը: 2.1 աղյուսակի առաջին տողում բնության կառուցվածքը վեց տիեզերաբանությունները բաժանում է երեք խմբի: Ինչևէ, բնությանը հարաբերված լինելը նաև ժամանակի և (աշխարհի) տարածության կառուցման հետևանքն է, և մասնավորապես այն բանի, թե արդյոք ժամանակն ու տարածությունն ընկալվում են որպես կապակցված, թե՞ ոչ[3]:

Ինչպես ցույց է տրված 3.1 աղյուսակում, սա չորս տարբերակ է ստեղծում: Ինչպես միշտ, Արևմուտք I-ը և Բուդդիկը ծայրահեղ կետերն են: Արևմտյան տիեզերաբանություններն աշխարհիկ ժամանակը կառուցում են որպես վերջավոր, սկիզբ և վերջ ունեցող, և այստեղից էլ դրաման, ժամանակի բացումն ու ճգնաժամերը: Հետևանքն այն է, որ «մենք ամեն դեպքում մշտապես այստեղ չենք», *après nous le déluge,* և, այսպիսով, խնդիրները լուծելու համար տեղի կունենա կա՛մ Գալուստ (Մեսսիայի Առաջին կամ Երկրորդ Գալուստը), կա՛մ էլ Հայտնություն (Ապոկալիպսիս), որը նույնպես ամեն ինչ «կլուծի»:

Աղյուսակ 3.1. Տիեզերաբանությունները ժամանակի և տարածության կապվածության տեսանկյունից

	Տարածությունը կապակցված չէ	Տարածությունը կապակցված է
Ժամանակը կապակցված է	Արևմուտք I	Արևմուտք II
Ժամանակը կապակցված չէ	Սինիկ, Նիպպոնիկ	Հինդիկ Բուդդիկ

Իր տրամադրության տակ միայն կապակցված տարածություն ունենալով՝ Արևմուտք II-ը ոչնչացնում է ինքն իրեն: Արևմուտք I-ն, այնուամենայնիվ, տարածությունը կառուցում է որպես չկապակցված և ամենուրեք ոչնչացնում է Այլոց՝ փորձելով էկոլոգիապես փրկել ինքն իրեն: Ի տարբերություն Բուդդիկի (որոշ չափով նաև Հինդիկի), լավ տուն պահելը տեղայնորեն դիտարկվում է որպես «մենք մշտապես կլինենք այստեղ»: Սինիկը և Նիպպոնիկը գտնվում են մեջտեղում և կարող են շարժվել ինչպես Արևմուտք I-ի, այնպես էլ Բուդդիկի ուղղությամբ:

Այժմ եկեք անդրադառնանք *խաղաղությանն* այնպես, ինչպես այն արտացոլվում է տիեզերաբանություններում՝ ուսումնասիրելով ամբողջ աշխարհում առկա խաղաղության հայեցակարգերը և փորձարկելով զարգացման ու խաղաղության միջև ներքին տիեզերաբանական կապերի վերաբերյալ հիպոթեզները[4]: Մենք սկսում ենք Արևմուտք I-ից՝ Հռոմեական կայսրության *pax*[i] հասկացությունից: Այս *pax*-ը խաղաղությանը տալիս է նեղ սահմանում՝ որպես *absentia belli*[ii], կամ պատերազմական գործողությունների՝ դասակարգերի, ռասաների, մշակույթների (ազգ, ներառյալ լեզու, կրոն, գաղափարախոսություն), ինչպես նաև տարածքայնության հիման վրա կազմակերպված խմբերի միջև բռնության բացակայություն: Միջազգային կամ արտաքին խաղաղությունը արտաքին պատերազմների բացակայությունն է, միջպետական, միջերկրային կամ միջազգային (միջմշակութային): Սոցիալական կամ ներքին խաղաղությունը ներքին պատերազմների բացակայությունն է, երբ դասակարգային, ռասայական, ազգային կամ տարածքային խմբերը պայքարում են կենտրոնական իշխանության հասնելու համար, կամ միմյանց հետ: Քանի որ կենտրոնական իշխանությունը համեմատաբար ուշ է մտել մարդկային պատմություն, ուշ են սկսվել նաև կառավարությունների միջև պատերազմները: Այսպիսով, պատերազմներից իրականում հնարավոր է խուսափել, և խաղաղությունն սկզբունքայնորեն հասանելի է:

Հռոմեական (լատիներեն) *pax*-ը կապված է պակտի հետ, ինչպես *pacta sunt servanda,* «համաձայնագրերը պետք է պատշաճ կատարվեն»: Քողարկված տեսություն, որը պնդում է, որ խաղաղությունը պայմանավորվածությունների արդյունք է, գիտակցական է և իրենից ներկայացնում է փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություն, և արևմտյան միջազգային իրավունքի ավանդույթի աղբյուրն է հանդիսանում: Սակայն Հռոմեական ժառանգությունն արտացոլված է նաև *si vis pacem, para bellum*՝ «խաղաղությո՞ն ես ուզում, պատրաստ եղիր պատերազմի» ասույթում, որն արևմտյան ռազմական ավանդույթի աղբյուրն է, և արևմտյան խաղաղության հիմնարար տեսության ևս մեկ հենասյուն՝ խաղաղությունը հասանելի է ցանկացած հնարավոր զավթիչի վախեցնելու միջոցով: Ներսում զավթիչը կկասեցվի պաշտպանողական պաշտպանության, իսկ/կամ արտերկրում՝ հարձակողական պաշտպանության միջոցով կամ ուղիղ բռնազավթումով: Խաղաղության մասին հիմնական արևմտյան տեսությունները վերջին երկու հազար տարում քիչ են փոփոխվել, բացի որոշ արևելյան բաղադրիչներից, որոնք առկա են եղել միջնադարում, Արևմուտք II-ի ժամանակահատվածում:

Խաղաղության ավելի լայն սահմանումները սովորաբար ներառում են *pax*-ի հայեցակարգը, սակայն դրան հավելվում են հետևյալ երեք հարցադրումները. «ի՞նչ տիպի բռնություն», «ո՞ւմ կողմից իրագործվող բռնություն» և «ո՞ւմ հետ խաղաղություն»:

Առաջին հարցն առաջնորդում է դեպի մարմնի հանդեպ բռնության և մտքի ու հոգու հանդեպ բռնության տարանջատում: Վերջինիս օրինակ կարող է ծառայել կյանքը զանգվածային ոչնչացման զենքերի (օրինակ, միջուկային զենքի) կիրառմամբ պատերազմում ոչնչանալու սպառնալիքի ներքո, որը թույլ է տալիս խաղաղությունն իբրև պատերազմի բացակայություն սահմանումն

[i] pax (լատ.)- խաղաղություն /թարգ./
[ii] absentia belli (լատ.)- պատերազմի բացակայություն /թարգ./

ընդլայնել՝ ներառելով պատերազմի վտանգը: Հետևությունը խաղաղությունն է խաղաղ միջոցներով:

Երկրորդ հարցը փորձում է բացահայտել վնաս հասցնելու ունակ և դրա ցանկությունն ունեցող դերակատարներին: Այն առաջնորդում է դեպի ուղղակի և կառուցվածքային բռնությունների տարանջատում:

Երրորդ հարցն ընդարձակում է ողջ հեռանկարը՝ առաջադրելով խաղաղություն Այլոց և ոչ-մարդ Այլոց հետ:

Հռոմեական *pax*-ից շարժվելով դեպի Արևելք՝ մենք հանդիպում ենք հունական *eirene*-ին, եբրայական *shalom*-ին և արաբական *sala'am*-ին: Բոլոր երեքը երկրորդ հարցն են առաջ քաշում. խաղաղությունը դառնում է «խաղաղություն և արդարություն» և միավորում է ուղղակի և կառուցվածքային բռնության բացակայությունը: Հարցն այն է, թե որ մասն է առավելություն ստանում:

Երրորդ հարցը՝ «Ո՞ւմ հետ խաղաղություն», գնում է էլ ավելի հեռու՝ դեպի Արևելք, Արևմուտքից դուրս, հնդկա/բուդդայական *shanti*-ի և *ahimsâ*-ի ուղղությամբ, որոնք նույնպես սովորաբար թարգմանվում են որպես «խաղաղություն»:

Shanti նշանակում է «*ներքին խաղաղություն*», *Ինքն իր հետ խաղաղություն*, երբ մարմնի-հոգու-մտքի և ոչ մի մաս բռնություն չի իրականացնում այլ մասերի հանդեպ: *Shanti*-ն կարելի է ընկալել որպես «արտաքին խաղաղության» վրա արևմտյան կենտրոնացումը համալրող, ինչպես նաև «արտաքին խաղաղության» անհրաժեշտ մի մաս, քանի որ միայն ներքին խաղաղությամբ օժտված անձինք են ունակ արտաքին խաղաղություն բերելու[5]:

Ahimsâ նշանակում է «ոչ մի վնաս», ներառյալ Ինքն իրեն և Բնությանը՝ ներմուծելով բնապահպանական չափումը, որը հիմնականում բացակայում է Արևմուտքում (բացառությամբ սբ. Ֆրանսիսկ Ասսիզեցու ուսմունքից): *Ahimsâ*-ն մեր ժամանակների առաջատար խաղաղության ջատագով Մ. Կ. Գանդիի խաղաղության հայեցակարգն էր, որը նա օգտագործում էր որպես իր ոչ բռնի պայքարի՝ սատյագրահայի *(satyâgraha)* հիմք այնպիսի կառուցվածքային բռնությունների դեմ, ինչպիսիք են սեռախտրությունը, կաստայականությունը, ռասիզմը, արդյունաբերականությունն ու գաղութատիրությունը, և որպես այլընտրանք՝ համայնական, սոցիալական և միջազգային ուղղակի բռնության: Գանդին նաև ցանկանում էր էկումենիկ խաղաղության մշակույթ կառուցել, որպեսզի դիմակայեր մշակութային բռնությանը, որն արտահայտվում է շատ կրոնների մեջ/կողմից:

Շարժվենք ավելի արևելք, որտեղ չինական *ho p'ing/p'ing ho*-ն կամ ճապոնական *heiwa/wahei*-ն ուղղորդում են դեպի ներքին, սոցիալական և համաշխարհային ներդաշնակություն, որը համալրում է արտաքին և ներքին խաղաղության հայեցակարգերը՝ դիտարկելով ներդաշնակությունը միջազգային, սոցիալական և անձնական ոլորտների *միջև*, որպես նրանց բոլորի իրականացման պայման: Այստեղ մենք ունենք չափազանց հոլիստական հիմնահայեցակարգ, որը տարածվում է անձնական և սոցիալական կազմակերպվածքների վրա:

Ամբողջական շրջանակն ամփոփելով՝ մենք վերադառնում ենք նեղ սահմանված *pax*-ին, որը լավ ինստիտուցիոնալացված ու յուրացված է Արևմուտքում: Այս հայեցակարգի մեջ բացակայում է կառուցվածքային բռնության հանդեպ ուշադրությունը, ներքին խաղաղությունը, ոչ-բռնությունը և մարդկային պայմանի ոլորտների միջև ներդաշնակությունը: Սակայն խաղա-

ղության հայեցակարգը, ինչպես ազատության և արդարության հայեցակարգերը, բաց է, և ոչ մի մշակույթ մենաշնորհ չունի իր կողմից առաջ քաշված սահմանման նկատմամբ: Դրանք բոլորը խաղաղության դեռևս չսահմանված հայեցակարգի տարբեր կողմերն են: Ասես ժամանակ է եղել, երբ համապարփակ խաղաղության հայեցակարգ է գոյություն ունեցել, և մարդկությունը միասնական է եղել, իսկ հետո բոլոր սահմանագծերի՝ մասնավորապես մշակույթի (ազգ, քաղաքակրթություն), երկայնքով բաժանում է տեղի ունեցել, և դրանցից ամեն մեկը խաղաղության սահմանման մի առանձին կողմ է պաշտպանել: Խաղաղության ուսումնասիրությունների խնդիրներից մեկն էլ, ակնհայտորեն, դրանք միավորելն է:

3.2 Խաղաղության և զարգացման Արևմուտք I-ի ընկալումը

Այսօր գրեթե ամենուրեք գոյություն ունի Արևմուտք I-ի վերին մի շերտ, որպես մի շղարշ՝ *maya*: Մյուս հայեցակարգերը ենթակա են դրան, ստորակարգված և պայքարում են ինչպես ասֆալտի տակ ծլած սերմը:

Վերևում Արևմուտք I-ի խաղաղության և անվտանգության տեսությունն ու փորձն է. աշխարհն իր արևմտյան կենտրոնով և ընդարձակ ոչ-Արևմտյան ծայրամասը, որն սպասում է, որ ներգործեն իր վրա, կրոնափոխեն և քաղաքակրթեն:[6]

Այս տեսանկյունից ի հայտ են գալիս երկու հնարավորություններ՝ պայմանավորված նրանով, թե մեկը բաժանում է *տարածությունը* երկու մասի՝ Կենտրոնի և Ծայրամասի, թե երեք մասի՝ Կենտրոնի, Ծայրամասի և Չարի: Տարածության առաջին հայեցակարգայնացումը համեմատական է այնպիսի կազմակերպությունների հանընդհանրացմանը, ինչպիսիք են Ազգերի Լիգան և Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, որոնք կառուցված են Արևմտյան երկրներին համակրող գործադիր իշխանության, Արևմտյան տեսության և փորձի շուրջ, օրինակ՝ միջազգային իրավունքին համապատասխան (Հաագայի համակարգ)[7]: Եվ երկրորդ հայեցակարգը, համապատասխանաբար, սկիզբ է դնում Չարի դեմ համաձայնագրերի և դաշինքների համակարգին, որի կենտրոնում հիմնական Արևմտյան պետություններն են, ինչպես ներկայում Միացյալ Նահանգները (իր ՆԱՏՕ-ով և այլ կազմակերպություններով): Դրանք բոլորը, դաշինքներ կազմելով, ծայրամասերը կապում են Կենտրոնի հետ այնպիսի Չարի դեմ, ինչպիսիք են «միջազգային կոմունիզմը», «ահաբեկչությունը» կամ «իսլամական մոլեռանդները»: Սրա արտահայտչաձևերից մեկը գտնվում էր այն համակարգում, որը կառուցված էր Արևմուտքի արևելյան մասի երբեմնի մեծագույն ուժի շուրջ՝ Խորհրդային Միությունը և Վարշավյան համաձայնագրի կազմակերպությունն ընդդեմ «ֆաշիզմի» և «իմպերիալիզմի», Չարի՝ իրենց աշխարհի կառուցվածքում:

Արևմտյան տեսանկյունից՝ պատմության մեջ Չարի սկզբունքը կառուցվել է երկու առանցքների շուրջ՝ ազգային և գաղափարախոսական: Այն ազգերը, որոնք Արևմտյան կառուցվածքում առանձնացվել են որպես աշխարհում այդ կարևոր դերի թեկնածուներ, ավելի բարձր են կանգնած բոլոր «բարբարոսներից ու վայրենիներից»՝ հրեաներ, արաբներ, թուրքեր, ռուսներ, և դրանց համապատասխան գաղափարախոսություններից՝ հեթանոսություն, հուդայականություն, իսլամ (արաբների և թուրքերի դեպքում), ուղղափառ քրիստո-

նեություն և կոմունիզմ (նույնիսկ աթեիստական կոմունիզմը): Արևելքի տարբերակը կլիներ «Արևմտյան իմպերիալիզմը»: Երկուսն էլ իրենց ցանկին կարող են ավելացնել «դեղին վտանգը»: Այսպիսով, Չարը մի կողմից տեղ է գտել ոչ-Արևմուտքում, իսկ մյուս կողմից՝ արևմտյան մրցակցող կրոններում և գաղափարախոսություններում: «Չար ուժերի» հանդեպ պատմության ընթացքում խաղաղության և անվտանգության անունից ահռելի մասշտաբների բռնություն է իրագործվել. հրեաները սպանել են Քրիստոսին, հրեաները սպանել են մահմեդականներին, մահմեդականները սպանել են հրեաներին, մահմեդականները սպանել են քրիստոնյաներին, քրիստոնյաները սպանել են մահմեդականներին, քրիստոնյաները սպանել են հրեաներին՝ «պոգրոմների» և Հոլոքոստի ընթացքում[8]: Դրվել էր աշխարհիկ շարունակականության հիմքը՝ ազատականությունը-կապիտալիզմն ընդդեմ մարքսիզմի-սոցիալիզմի՝ երկուսն էլ մեկը մյուսին սպանելու համար[9]: Ավելի ուշ, հաշտվելով, նրանք երկուսն էլ հնարավոր է որոշեն դառնալ ընդդեմ իսլամի (կամ գուցե Դեղին վտանգի)՝ որպես ընդհանուր Չարիքի:

Ինչ վերաբերում է *ժամանակին*, ապա կարելի է ակնկալել, որ Արևմտյան խաղաղությունն ու անվտանգության կարգը համատեղելի կլինեն Առաջընթացի գաղափարի հետ, ինչպես նաև Ճգնաժամի գաղափարը կարող է կա՛մ ուղղորդել դեպի *der ewige Frieden*՝ հավերժական խաղաղություն, կա՛մ դեպի համատարած աղետ, այլ կերպ ասած՝ ապոկալիպտիկական տեսլական: Երկու գաղափարների հետ էլ համատեղելի է ընդհանուր ռազմական միջոցների և մասնավորապես *հարձակողական* ռազմական միջոցների վրա հենվելը՝ վախի ներքո պահելու, կամ պարզապես ագրեսիվ հարձակումների դիմելու ճանապարհով չարը խափանելու նպատակով:

Մի կողմից առկա է դաշինքներ կառուցելու և ուժի կատարյալ հավասարակշռություն հաստատելու ուղղությամբ ջանադիր աշխատանք, մյուս կողմից՝ խաղ կրակի հետ: Այստեղ որպես *Homo Occidentalis* ներկայացված էակների մեծամասնության համար դարերի ընթացքում բոլոր կարգի խաղաղ շարժումների կողմից առաջ քաշված զգուշացումը՝ թե սպառազինման քաղաքականությունները վտանգավոր են և ոչ միայն քայքայիչ, այլև ինքնաքայքայիչ, նորություն չեն: Ընդհակառակը, այսպիսի քաղաքականությունները կարող են ընդունվել հենց այն պատճառով, որ դրանք վտանգավոր են, իսկ վտանգն ընկալվում է որպես *բնականոն և բնական* համադրելի ճգնաժամի միջոցով առաջընթացի գաղափարին, նույնիսկ՝ Հայտնությանը: Ապառազմականացումը, եթե դա երբևէ տեղի ունենա (խոսքը *ապառազմականացման մրցավազքի* մասին չէ), դեմ է լինելու գործերի բնականոն ընթացքին, և ամենայն հավանականությամբ հակահարձակումների է ենթարկվելու: Խաղաղությունը պետք է հաստատվի կրոնափոխության նման՝ որպես հանկարծակի փոխակերպում, որն իրագործվում է ճգնաժամի պատճառով, գուցե և ճակատագրի բարեհաճության շնորհիվ՝ գերբնական էության հայտնություն: Իսկ ո՞վ կարիք ունի կրոնափոխ լինելու: Իհարկե, Չա՛րը, ոչ թե Արևմտյան Կենտրոնը: Ուրեմն՝ եղեք ուժեղ և զգոն:

Այստեղ մուտք է գործում Արևմտյան Իմացությունը՝ գաղափարական համակարգի վերին շերտում մի քանի պարզ մտքերով և վերին աստիճանի որոշակի ու շատ թե քիչ տրամաբանական արբանյակներով: Այնպիսի գաղափարներն, ինչպիսիք են՝ «եթե խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի» և «հարձակումը լավագույն պաշտպանությունն է», ձեռք են բերում աքսիոմատիկ բնույթ, որ երբեք չեն կեղծվելու, և նույնիսկ կեղծվելու ենթակա

էլ չեն: Եթե, ի հեճուկս Չարը զսպելուն ուղղված բոլոր ջանքերի, պատերազմն, այնուամենայնիվ, սկսվում է, ապա սա ընկալվում է որպես ևս մեկ ապացույց այն բանի, որ մեր աշխարհը լի է վտանգներով, և ոչ թե՝ որ Չարն է դրդվել: Եվ այդ աշխարհում հավասարակշռությունը նոր իմաստ է ձեռք բերում՝ «գերակայություն», և երբ երկու կողմերն էլ նպատակադրվում են դրան, ապա այն փակում է հակամարտության և սպառազինությունների մրցավազքի շրջանակը: Հակաճառելով և պնդելով, թե «ուժով հաստատված խաղաղությունը» պարզունակ տեսություն է՝ անտեսվում է կարևոր հանգամանքը. այն պետք է լինի պարզունակ: Պատերազմելն, ակնհայտորեն, համատեղելի է չորս դասակարգից բաղկացած բիբլիական հասարակության հետ. Աստված՝ վերևում, մարդկային հասարակությունը՝ բաժանված երկու մասի՝ տղամարդկանց և կանանց, և բնությունը՝ ներքևում: Գերակայող ուժի և մտավոր կարողությունների տիրապետելն *ամենագո*, *ամենակարող* և *ամենագետ լինելու* նշան է՝ Աստվածային բնութագրեր ոչ միայն արևմտյան աստվածների համար: Սակայն ինչպե՞ս կարող է պատերազմելը համատեղվել *բարյացակամության* կամ բարու՝ *Աստծո* չորրորդ հիմնական բնութագրի հետ: Պատերազմն իր էությամբ *տղամարդկային է*, սակայն դրա հետևանքները բոլորին են վերաբերում: Պատերազմում կարող է բարյացակամություն արտահայտվել միայն այն նախադրյալի դեպքում, երբ այդ պատերազմն ինչ-որ բարձրագույն սկզբունքի համար է մղվում, որը մարտի դաշտում չասված տառապանքից, ինչպես նաև պատերազմի հետևանքներից շատ ավելի բարձր է: Նմանօրինակ սկզբունքներ ակնհայտորեն գոյություն ունեն՝ *Աստծո հաղթանակն* այդ տիպի սկզբունքի կրոնական տարբերակն է լինելու, *Ազգի* կամ *դասակարգի փառքի*, *Ազատության համար պայքարը* հանդիսանալու են գաղափարախոսական տարբերակները: Նման սկզբունքներից է, որ արևմտյան կրոնի կամ գաղափարախոսության համար հեշտությամբ առաջանում են արդար պատերազմի՝ *iustum bellum*-ի տեսություններ, լինի դա հուդայականությունը/քրիստոնեությունը/իսլամը, թե ազատականությունը/մարքսիզմը:

Միևնույն ժամանակ, ռազմական կազմակերպվածքը վերին աստիճանի ուղղահայաց բնույթ ունի, բացառությամբ պարտիզանական անցումային, ոչ-ստորակարգային տիպերի, որոնք սովորաբար օգտագործումից հետո ցրվում են: Այն անհատապաշտական է այն առումով, որ այս ստորակարգություններում վերև բարձրանալու, ռիսկի գնալու միջոցով մեծ հնարավորություններ են բացվում, և անգամ հավերժ կյանքի արժանանալու հնարավորություններ՝ քրիստոնեական Արևմուտքում կամ իսլամական (շիա) Արևմուտքի Դրախտում: Պատերազմը խարխլում է կոշտ դասակարգային կառույցների հիմքերը, խաղաղության ժամանակ հնազանդության, իսկ պատերազմի ժամանակ՝ հերոսական զոհողությունների համար պարգևների նոր հնարավորություններ է ստեղծում, որոշ դեպքերում՝ հետմահու:

Կանանց համար այս հնարավորությունը մերժված է: Նրանք գտնվում են համակարգի սահմանային մասում, ծառայելով իբրև զոհեր, մասնավորապես նաև որպես հակականացի բռնության՝ բռնաբարությունների զոհեր և լինելով փոքրիկ օգնականներ, որոնք ներգրավված են ոչ միայն էակների վերարտադրության գործի մեջ (ներառյալ բուժքույրերը, որոնք տղամարդկանց վերականգնում են պատերազմից հետո), այլ նաև իրենց վրա են վերցնում այն արտադրական գործառույթները, որոնք չեն կատարվում պատերազմ մեկնած տղամարդկանց կողմից: Իսկ վերջիններս ոչ միայն արհեստավարժ ռազմական կաստային պատկանող տղամարդիկ են, այլև սկզբունքորեն ամբողջ

տղամարդկային բնակչությունը, բացի որոշ անհատ հրաժարյալներից: Փաստորեն, ինչքանով ավելի համընդհանուր է զինվորական ծառայությունը, այնքանով, որպես շահադրդիչ գործոն, ավելի շատ դեր պետք է ունենա գաղափարախոսությունը[10]: Քանի որ ազգ-պետություններն են նախաձեռնում զորահավաքը, ազգայնամոլությունը դառնում է շահադրդիչ գաղափարախոսություն, ինչը պետության կողմից օգտագործվում է պատերազմներում, որոնք տարվում են մի միջպետական կառույցի կերպ ունեցող աշխարհում: Տարօրինակ է, սակայն որքան ավելի շատ է ազգ-պետությունը մարդկանց իրավունքներ շնորհում, այնքան ավելի շատ մարդկային ծառայություններ է հնարավոր վերցնել բնակչությունից, ինչպես, օրինակ, հարկերը և զինվորական ծառայությունը[11]:

Այս պատկերին կարիք կա ավելացնելու միայն պատերազմի պատկերը՝ որպես բնության ոչնչացում և նրա հանդեպ բռնություն: Առաջացող պատկերում առկա է փոխհատուցման լիակատար բացակայություն, որը ցույց է տալիս մարդկային տեսակի՝ կենդանական աշխարհի և ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի հանդեպ գերակայությունը: Այժմ տիեզերաբանությունը լիովին անդամակցված է[12]:

Եզրակացություն. Ցանկացած ոք, ով այս կամ այն կերպ հակադրվում է պատերազմի արևմտյան կազմակերպվածքին և խաղաղության ու անվտանգության հարցերի հանդեպ ռազմական մոտեցմանը, պետք է հասկանա, որ սա խորքային գաղափարախոսության և խորքային մշակույթի՝ տիեզերաբանության մակարդակներով ընթացող պայքար է: Սա պարզապես գաղափարախոսական բանավեճի կամ պայքարի հարց չէ, ինչպիսին, օրինակ, աջերի և ձախերի միջև գաղափարախոսական պայքարն է ներքին արևմտյան քաղաքական կյանքում, կամ ազատականության և մարքսիզմի միջև պայքարը:

Անհամեմատ շատ բան է դրված խաղասեղանին՝ ամբողջապես ռազմականացված մոտեցումը տիեզերաբանական դրույթների համարյա կատարյալ արտահայտումն է, և այս պատճառով նրանք արմատավորված են հենց արևմտականության հիմքերում: Պատերազմի պատրաստությունը և պատերազմն ինքը չափազանց լավ են տեղավորվում հիմնական կանոնի մեջ: Մոտեցումների փոփոխությունը հավանական չէ այնքան ժամանակ, քանի դեռ տիեզերաբանությունն ինքը ոչ միայն հարցականի տակ չի դրվել, այլև ինչ-որ չափով չի փոփոխվել: Արևմտյան պատմության վերջին 2500 տարիների ընթացքում սա ամենայն հավանականությամբ պատահել է միայն երկու անգամ՝ (Արևմուտքում) Հռոմեական կայսրությունից դեպի Միջնադար անցման և միջնադարից նոր ժամանակներ անցման ընթացքում[13]:

Դժբախտաբար, նույնը վերաբերում է *զարգացման* արևտյան տեսությանն ու փորձառությանը: «*Զարգացումը տնտեսական աճն է*» դրույթն *արևմտյան մարդու* կողմից բազում զարգացման հայեցակարգերից մեկի պատահական ընտրությունը չէ: Սա *իրականությունն է,* այն իմաստով, որ սա *բնականոն և բնական է,* համատեղելի արևմտյան տիեզերաբանության հետ և այս պատճառով լուրջ բանավեճի առարկա չի կարող հանդիսանալ: Զարգացման քննարկումը նախասահմանված է տիեզերաբանության կողմից՝ հիմնականում տնտեսական աճի մոտեցման համատեքստում, ինչպես նաև՝ ուժերի հավասարակշռության միջոցով խաղաղության համատեքստում:

Եկեք այժմ կենտրոնանանք *ժամանակի* և *տարածության* վրա: «Զարգացումն» ավելի ընդհանրական *առաջընթացի գաղափարի* մասնավոր

դեպքն է, որին տրված սահմանման համաձայն Արևմուտքը ներկայանում է առավել զարգացած երկրների, իսկ ոչ-Արևմուտքը՝ թույլ զարգացած երկրների, նույնիսկ՝ վատ զարգացած/ընդհանրապես չզարգացած երկրների տեսքով: Պետք է լինեն Կենտրոն և Ծայրամաս, երկուսն էլ «զարգացող», քանի որ այս հարցերում համընդհանուր դինամիզմ կա: Բոլոր նրանց համար, ովքեր ընդունում են Արևմտյան կանոնների հիմնական սկզբունքները, առկա է նաև առաջընթացի խոստում[14]: Այստեղ նույնպես հակադրություն կա. ոչ-Արևմուտքը կարող է հասնել Արևմուտքին, թույլ զարգացած երկրները կարող են հասնել առավել զարգացած երկրներին, առավել զարգացած երկրները կարող են հասնել Վաշինգտոնին՝ ամենազարգացածին: Հիրավի, սպառնալից է:

Սա հենց այն կետն է, որտեղ առաջ է գալիս արևմտյան ժամանակի տիեզերաբանության մեկ այլ կողմ՝ *«Ճգնաժամի գաղափարը»*: Այո, ճգնաժամը հնարավոր է. թույլ զարգացած երկրները կարող են հասնել զարգացածներին (ինչպես, օրինակ, Չինաստանը): Այստեղ երկու հնարավորություն է առաջանում. կա՛մ զարգացած երկրները ստիպված կլինեն նույն կերպ շարունակել, ինչպես մինչ այդ պահը, կա՛մ որևէ նոր ռազմավարություն որդեգրել, կա՛մ էլ ոչ-Արևմուտքը գերակայության կհասնի և Արևմուտքին դուրս կմղի իր կենտրոնական դիրքերից: Հենց այս վախեցնող հնարավորությունը, որը որոշ առումով արդեն իսկ գիտակցվել է Ճապոնիայի և իր հարևան պետությունների զարգացման օրինակով, հաստատում է արևմտյան զարգացման տեսությունն իբրև բնականոն և բնական, Արևմուտքի՝ Ճգնաժամի հետ հստակ նույնականացման միջոցով: Ոչ-արևմտյան կենտրոնը, որը սահմանվում է զարգացման միջոցով, հակատիեզերաբանական է՝ բնության հանդեպ հանցանք: Արևմո՛ւտքը պետք է լինի մոդելը և ոչ թե ոչ-Արևմուտքը:

Իմացաբանական առումով մենք այնպիսի իրավիճակում ենք, որը նման է խաղաղության և անվտանգության իրավիճակին: Հասասարակ գաղափարները, ինչպիսիք են «տնտեսական աճը» և «աշխատանքի արդյունավետությունը», գտնվում են մտավոր կառույցի ամենավերևում, ինչը երաշխավորում է բոլորի համար զարգացում՝ տնտեսության մաթեմատիկացված տեսության սահմաններում: Արդյունքը հեռանկարային է՝ առաջընթացի ապահովում: Կան այս թեմայի տարբերակներ, տարբեր տեսական դպրոցներ տարբեր նախադրյալներով, սակայն հիմնական դրույթը նույնն է: Այս գործընթացն ավերիչ է բնության համար, սակայն շրջակա միջավայրի դեգրադացիան արդեն դարձել է արդիականության ծանոթ մի տարր: Այն համեմատելի է ուղղահայացության և անհատապաշտության հետ, երբ կանանց տրված են ենթակա դիրքեր (վերարտադրություն, ոչ թե արտադրություն) և ռիսկի գնալով կամ զոհողությամբ՝ մեծ հնարավորություններ, ինչպես, օրինակ, ռազմական ոլորտում: Զարգացման այս տիպի համար էական են գործարարները և «շուկայի» այլ դերակատարները, որոնք սովորաբար արական սեռին են պատկանում:

Գոյություն ունի նաև աստվածանման սկզբունք. ի փառս Աստծո՝ մարդու ամենօրյա աշխատանքում թափված ջանքերի աշխարհիկ արդյունքը՝ անհատական բարեկեցությունը՝ անհատի նյութական կյանքի, հարմարավետության, բարձր չափանիշների առումով. և եթե ոչ մշտական կյանք, ապա գոնե երկարակեցություն և քաջառողջություն: Բարեկեցության նյութական չափանիշները հաճախ կատարում են գրեթե նույն դերը, ինչ-որ ազատությունը խաղաղության ձգտման մեջ՝ հիմնարար նպատակ, ինչն արդարացնում է բացասական կողմնակի արդյունքները, ինչպիսիք են շրջակա միջավայրի աղ-

տոտվածության ճգնաժամը, աղքատությունը, ճնշումներն ու պատերազմները:

Կարելի է փաստել, որ ազատությունն[15] ու հարմարավետությունը/առողջությունը կոնկրետ բաներ են, որոնց մարդիկ ձգտում են, և ոչ ինչ-որ վերացական հասկացություններ, ինչպիսիք խաղաղությունն ու զարգացումն են: Սակայն դա՝ անհատական մակարդակում: Ազգային մակարդակում անվտանգությունն ու աճը դառնում են ինքնուրույն նպատակներ, որպես հավաքական պայմաններ, որոնք ուղղված են ազատության և բարեկեցության արևտյան ընկալումների անհատական պայմանների բավարարմանը[16]: Խաղաղությունն ու առաջընթացը համակարգային բնութագրիչներ են, որոնք կախված չեն միայն անհատներից կամ ազգերից: Սակայն Արևմուտքի համար իմացական ատոմիզմը կենտրոնական է, և կենտրոնանում է անհատների, ո՛չ թե համակարգերի վրա:

Հաջողության դեպքեր կան: Ռազմական գերակայությունը կառուցել է մի տարածություն, որի կենտրոնում խաղաղության և ազատության որոշակի տիպեր կարող են լինել, ճիշտ է, ծայրամասի հաշվին՝ նույնիսկ չհիշատակելով Չարի ուժերը: Նույնը վերաբերում է կյանքի նյութական չափանիշներին: Արդի աշխարհի կենտրոնում մեծաքանակ բարեկեցություն կա: Ավելի քիչ բարեկեցություն կա ծայրամասերում, քանի որ այս ամենը կապված է գաղութատիրության և շահագործման մոդելների, մասնավորապես կենտրոնի ու ծայրամասի միջև փոխանակումների անհավասար հարաբերությունների հետ, քանզի դրանք կառուցված են այնպես, որ զարգացման համար գործիքների դեր են խաղում:

Խաղաղությունն ու զարգացումը հասկանալու համար գործնականում մենք հանգում ենք ողջ աշխարհը այնքան կարևոր չորս աշխարհների[17] բաժանելու հրամայականին: Առաջին Աշխարհը՝ Կենտրոնը, Հյուսիս-Արևմուտքը, սահմանում է զարգացումը և ինքն իրեն տեսնում իբրև մոդել. Երկրորդ Աշխարհը՝ նախկին սոցիալիստական պետությունները, Հյուսիս-Արևելքը, նախկինում հանդիսանում էր Չարը, քանի որ այն հավակնում էր այլընտրանքային մոտեցում ներկայացնելու, իսկ հիմա դարձել է նոր Ծայրամաս: Երրորդ Աշխարհը՝ Հարավ-Արևմուտքը՝ հին ծայրամասը, և այն երկրները, որոնք մնում են ծայրամաս. և Չորրորդ Աշխարհը՝ Հարավ-Արևելքն Արևելքում և Հարավ-Արևելյան Ասիան, ժամանակին Երրորդ աշխարհի նման էին, սակայն այժմ սպառնում են գերակայել անգամ Առաջին աշխարհի հետ համեմատության մեջ: Այսպիսով, կան խնդիրներ, ինչպես խնդիրներ կան խաղաղության հասնելու առումով: Այս բոլոր խնդիրներն արևմտյան տիեզերաբանության մեջ արդեն իսկ բացահայտ են, և ստիպված ես ընդառաջ գնալ դրանց, քանի որ նրանք ճգնաժամ են առաջ բերում:

Եզրահանգում. Մենք ունենք հենց այն խաղաղության և առաջընթացի տեսություններն ու փորձառությունը, որոնց մենք արժանի ենք: Ցանկացած ոք, ով համաձայն չէ, պետք է հասկանա, որ «այլ խաղաղության» կամ «այլ զարգացման» համար պայքարը պայքար է ո՛չ միայն այլ գաղափարախոսության համար կամ Աջի ու Ձախի միջև: Երբ Ձախից այլ տիպի խաղաղություն կամ զարգացում է առաջարկվում, օրինակ, մարքսիստական տեսանկյուններից, ապա սովորաբար դա հանգում է այն արդյունքին, որի մասին խոսվեց վերևում[18]: Ինչո՞ւ: Քանի որ գոյություն չի ունեցել խնդրի տիեզերաբանական կողմերի անհրաժեշտ գիտակցություն: Այլ զարգացման համար պայքարը, ինչպես այլ խաղաղության համար պայքարը պետք է տարվի նաև

որպես արևտյան տիեզերաբանությանը նետված մարտահրավեր, նույնիսկ որպես դրա փոխակերպում, որպես այն բոլոր խորքային սկզբունքների փոխակերպում, որոնք ծառայում են խաղաղությունը ռազմական հասկացությունների միջոցով սահմանելուն, իսկ զարգացումը՝ փողի միջոցով[19]:

3.3 Խաղաղությունն ու աշխարհը՝ իբրև փոխազդեցություններ քաղաքակրթությունների միջև

Մինչ այժմ մենք գործնականում ուսումնասիրել ենք պատերազմի և խաղաղության, հակամարտության և զարգացման համար քաղաքակրթությունների տիեզերաբանությունների կամ կանոնների հետևանքները: Սակայն դրանք մենք ուսումնասիրել ենք առանձին-առանձին, առանց իրենց փոխազդեցությունների վրա կենտրոնանալու: Իսկ խաղաղությունը, պատերազմը և հակամարտությունն ակնհայտորեն ներառում են փոխազդեցություն՝ ի մի բերելով կանոնների յոթ կողմերը՝ բնությունը, անհատը և այլն: Ինչևէ, սա, ինչքան էլ կարևոր լինի, դուրս է մնում այս բաժնի ուսումնասիրության շրջանակներից. դրան մենք կանդրադառնանք այլ բաժիններում:

Դրա փոխարեն մենք այստեղ ավելի նեղ վարժություն կկատարենք, ուսումնասիրելով քաղաքակրթությունների կանոնների լոկ մեկ կողմը՝ *աշխարհի հարթության* կառուցումը: Վերջ ի վերջո, աշխարհի հարթությունում է, որ խաղաղությունն ու պատերազմը տեղի են ունենում, և աշխարհի հարթության կառուցումը պետք է հիմնարար կողմ լինի՝ չնայած մնացած վեց հարթությունները նույնպես կարևոր են և այս կամ այն չափով անպայման կհիշատակվեն:

Կդիտարկվեն մեզ համար արդեն սովորական դարձած քաղաքակրթությունները՝ ընդլայնման ձևով արևմտյան՝ Արևմուտք I-ը, կրճատման ձևով արևտյան՝ Արևմուտք II-ը, Հինդիկ քաղաքակրթությունը, Բուդդիկ քաղաքակրթությունը, Սինիկ քաղաքակրթությունը և Նիպպոնիկ քաղաքակրթությունը: Այս վեցից բացի մենք կավելացնենք «բնիկների քաղաքակրթությունները»: Անշուշտ, վերջինի հետ մշակութային միասնություն չկա, եթե չհաշվենք այն ծայրահեղ դեպքը, որն այստեղ կդիտարկվի. այն համեմատաբար փոքրամասշտաբ է և բազմակենտրոն ցանցի մի մասն է հանդիսանում:

Հեշտ հիշելու համար եկեք կրկնենք հարթության կառուցման ձևերն ըստ վեց տիեզերաբանությունների՝ վերջում ավելացնելով «բնիկներինը», և փորձենք հասկանալ, թե այս տիեզերաբանությունների *աշխարհի հարթության* ասպեկտների վավերացման տակ որքան խաղաղություն ու պատերազմ կա:

Արևմուտք I. Աշխարհը բաժանված է երեք մասի՝ Արևտյան կենտրոն, Ծայրամաս, որը սպասում է արևմտացման, և անհնազանդ, սահմանային, Չարի արտաքին ծայրամաս:

Արևմուտք II. Աշխարհը բաժանված է շատ մասերի, յուրաքանչյուրն ունի իր կենտրոնը՝ բազմակենտրոն աշխարհ:

Հնդկական քաղաքակրթություն. Աշխարհն ընկալվում է իբրև մեկ մեծ միավոր՝ բոլոր մարդկանց միասնության հիմնարար ուսմունքով. չնայած այս ուսմունքն ավելի լավ ընկալվել է Հնդկաստանում, քան որևէ այլ տեղ:

Բուդդայական քաղաքակրթություն. Առկա է մարդկանց միասնության հիմնարար դրույթը, սակայն հարթությունը բազմակենտրոն կառուցվածք ունի, ընդ որում՝ կենտրոններից յուրաքանչյուրն ավելի շատ կենտրոնում է իր հոգսերի, քան թե այլոց վերահսկելու կամ այլոց կողմից վերահսկվելու վրա:

Չինական քաղաքակրթություն. Աշխարհն ի սկզբանե կիսված է երկու մասի՝ Չինաստան կենտրոնով և ոչ-Չինաստանով՝ Բարբարիայով, որն իր հերթին կիսվել է չորս մասի՝ Հյուսիսային բարբարոսներ (ամենավատերը), Արևելյան բարբարոսներ, Հարավային բարբարոսներ (ամենայն հավանականությամբ՝ ամենալավերը) և Արևմտյան բարբարոսներ:

Ճապոնական քաղաքակրթություն. Աշխարհը կիսվում է երեք մասի՝ Կենտրոնի, որը Ճապոնիան է, ներքին ծայրամասի, որն աշխարհի հարավ-արևելքի որոշ երկրներ են, կոպիտ ասած՝ Մեծ արևելասիական համաբարեկեցության ոլորտը (*dai-tō-ā kyoeiken*), և արտաքին ծայրամասի, որը մնացյալ աշխարհն է, որ ընկալվում է որպես մի մեծ *Ռեսուրսատան*՝ հումքի և այլ արտադրական գործոնների տեսանկյունից, ինչպես նաև իբրև մի մեծ շուկա:

Բնիկների քաղաքակրթություն. Աշխարհը կրկին ընկալվում է որպես բազմակենտրոն՝ այլ կենտրոնների վերաբերյալ քիչ թե շատ հստակ գիտելիքներով: Այս բազմակենտրոն կառույցում նույնպես հնարավոր է նշված այլ տիեզերաբանությունների տարրերի առկայությունը:

Այժմ եկեք պարզեցնենք պատկերը՝ դարձնելով այն հինգ քաղաքակրթությունների վրա կառուցված, իրար միացնելով Արևմուտք II-ը, բուդդայական և բնիկների քաղաքակրթությունները, քանի որ նրանք բոլորը գործում են նույն՝ փոքր հասարակություններից կազմված բազմակենտրոն տարածքում: Համեմատած այլ քաղաքակրթությունների հետ, որտեղ աշխարհին որպես ամբողջություն վերագրվում է որոշակի կառուցվածք, նրանք ակնհայտորեն աշխարհը ներառող չեն: Ավելի շուտ, նրանք աշխարհն ընկալում են իբրև իրենց իսկ հանդեպ շատ մասերի բաժանված մի բան, առանց մտածելու, որ այլոք ինչ-որ մեկի ծայրամասն են կազմում կամ անհրաժեշտաբար թշնամական են ինչ-որ մեկի հանդեպ, կամ ենթակա են ինչ-որ մեկի կողմից օգտագործվելու: Հնարավոր է, որ այսպիսի գաղափարների տարրեր առկա լինեն, սակայն ոչ որպես հիմնարար կամ երկարաժամկետ հայեցակարգումներ: Այսպիսով, մենք կհամադրենք այս երեքը՝ որպես քաղաքակրթություններ, որոնք աշխարհի հարթությունը դիտարկում են իբրև բազմակենտրոն կազմակերպվածք[20]:

Հետազոտության առարկա մատրիցը կարելի է գտնել աղյուսակ 3.2-ում (!-նշանները վտանգ են ազդարարում):

Այս աղյուսակում հստակորեն երևում է հիմնական անկյունագիծը՝ ներքաղաքակրթային հարաբերակցությունները: Բոլոր համադրությունները համարակալված են այն հերթականությամբ, որով մենք դրանք ուսումնասիրելու ենք՝ կազմելով ընդհանուր առմամբ տասնհինգ երկկողմ հարաբերակցություն: Կարելի է հակաճառել, որ մատրիցը սիմետրիկ չէ, և որ երկկողմ հարաբերակցությունը միշտ կարող է տեսանելի լինել երկու կողմերից էլ, և սա, իհարկե, ճշմարիտ է: Սակայն սրանից ծագող նրբություններն աննշան կարևորություն ունեն տվյալ համատեքստում: Միով բանիվ՝ առկա է կատարման

ենթակա տասնհինգ հանձնարարություն, տասնհինգ հարաբերակցություն, որոնք պետք է ուսումնասիրվեն:

Աղյուսակ 3.2. Աշխարհն իբրև միջքաղաքակրթական փոխազդեցություն

	Արևմուտք I	Բազմա-կենտրոն	Հինդիկ	Սինիկ	Նիպպոնիկ
Արևմուտք I	(1)! Պատերազմ	(6)! Կլանում, Ոչնչացում	(7)! Ներազդում	(8)! Ներազդում, պատերազմ, պաշտպանություն	(9)! Պատերազմ
Բազմա-կենտրոն		(2) Ապրիր և թող ապրեն	(10) Հանդուրժողականություն, վտարում	(11) Հանդուրժողականություն, վտարում	(12)! Կլանում
Հինդիկ			(3) Հորիզոնական հանդուրժողականություն, ուղղահայաց բռնություն	(13) Դատարկություն	(14)! Հեռավորություն, սակայն պատերազմ
Սինիկ				(4) Միայն մեկը	(15)! Պատերազմ, պաշտպանություն
Նիպպոնիկ					(5)! Միայն մեկը

(1) *Արևմուտք* I – *Արևմուտք* II.

Սա այն է, ինչ Արևմուտքում ընկալվում է որպես բնականոն միջազգային հարաբերություն, մասնավորապես՝ «միջազգային հարաբերությունների» տեսության համար հիմնարար հիմք[21]: Դիտարկենք արևմտյան «հնգանկյունը»՝ ԱՄՆ - Միացյալ Թագավորություն - Գերմանիա - Ֆրանսիա - Ռուսաստան, և այստեղ առկա է *bellum omnium contra omnes (բոլորի պատերազմն ընդդեմ բոլորի)* սկզբունքը: Արևմուտք I-ի տրամաբանությունը կենտրոնացվել է մնացյալի վրա, և նվաճողականությունն ընդունվել է իբրև ի սկզբանե տրված և բնական ու բնականոն մի բան բոլոր պետությունների համար: Դատարկությունը լցվում է, իսկ ոչ-դատարկ տարածությունը՝ գրավվում, մինչ այն պահը, երբ ծախսերը գերազանցում են օգուտները: Այստեղ քիչ թե շատ կայուն սահման է գծվում, եթե այն կարող է համարժեք կերպով պաշտպանվել ուժի հավասարակշռության մեխանիզմների կողմից: Այս համակարգը, իհարկե, կայուն լինելու հակում չի ունենա. պահպանման համար օգտագործվող հարձակողական զինանոցը վրեժի վտանգի միջոցով հարուցում է սպառազինությունների մրցավազք, իսկ սպառազինությունների մրցավազքերը վաղ թե ուշ ավարտվում են պատերազմներով[22]: Ինչևէ, քանի որ ճգնաժամերը նույնպես ներառված են տիեզերաբանության մեջ, պատերազմները նույնպես դիտարկվում են բնականոն և բնական, որպես մի բան, որն արմատավորված է «մարդ-

կային բնության» մեջ: Այսպիսով, տիեզերաբանությունը դառնում է ինքնաբավ մարգարեություն՝ հանգեցնելով տիեզերաբանությամբ կանխատեսված հետևանքները (օրինակ՝ աշխարհը վտանգավոր տեղ է):

Դժվար է հաշվարկել, թե այս առաջին Արևմուտք I – Արևմուտք II համակցությունը մարդկանց պատերազմողականության որ տոկոսի համար է պատասխանատու, սակայն դա պետք է որ էական մեծություն լինի: Այլընտրանքն ակնհայտ է՝ Արևմուտք I-ի մեջ համակցված խաղաղ քաղաքականությունը, որի օրինակ կարող է ծառայել Եվրամիությունը՝ դաշնությունների և ունիտար պետությունների մակարդակով, ինչը խնդիր կառաջացնի, թե ինչպե՞ս է Արևմուտք I-ը հարաբերվում մնացած աշխարհի հետ (թիվ (6), (7), (8) և (9) 3.2 աղյուսակում): Արդյո՞ք Արևմուտք I-ն ընդհանրապես ունակ է պատկերացնելու այլոց հետ հավասարության սկզբունքի վրա խարսխված հարաբերություններ:

(2) *Բազմակենտրոն-բազմակենտրոն.*

Այստեղ մենք գործ ունենք ամբողջապես այլ աշխարհաքաղաքական տրամաբանության հետ: Իդեալականորեն կենտրոններից յուրաքանչյուրը կարող է բոլոր մնացածներին ընկալել որպես բազմակենտրոն աշխարհի մի մաս և այդպես էլ շարունակել՝ ոգեշնչված «ապրիր և թող ապրեն» սկզբունքով: Իրականում, սակայն, ունեցել ենք միջնադարյան պատերազմներ, որոնց մեծ մասն, այնուամենայնիվ, ծիսական բնույթ է կրել: Այս ժամանակաշրջանի վերջերին առաջ եկավ նվաճողականությունը, սակայն, կարելի է փաստել, որ հենց այդ ժամանակ այդ երկրներն արդեն մտնում էին Արևմուտք I քաղաքակրթություն: Նմանապես, եղել են բուդդիստական թագավորություններ՝ էական պատերազմողական ակտիվությամբ /Բիրմա, Թաիլանդ/:[23] Սակայն կարելի է փաստել, որ սրանք շեղումներ էին, որոնք ամեն դեպքում աննշան էին Արևմուտք I – Արևմուտք II համադրության համեմատությամբ: Ամենայն հավանականությամբ, խաղաղ աշխարհի մասին անհամեմատ ավելի շատ բան կարելի է սովորել (2)-ի խոստումից, քան թե բավականին խորն ապացուցված (1)-ի ձախողումներից, որոնք քսաներորդ դարում երկու համաշխարհային պատերազմների են հանգեցրել: Միևնույն ժամանակ, նվաճողականության ընթացքում պատերազմներով լի սեփական պատմությամբ չմտահոգվելը արևմտյան քաղաքակրթության արտոնություններից է՝ հավատալով, որ կհանդիսանա աշխարհին հասանելի ցանկացած խաղաղ կառույցի կենտրոնը: Տրամաբանությունը պարզ է՝ միայն լավը (Արևմուտք I) կարող է լավ հետևանքի (խաղաղության) պատճառը հանդիսանալ:

(3) *Հինդիկ-Հինդիկ.*

Տարբերակում պետք է դրվի, թե ինչպես է այստեղ «Հինդիկ» բառն օգտագործվում ներկա Հնդկաստանի և Բրիտանական կայսրության *raj* սահմաններում գտնվող հնդկական քաղաքակրթությունը մատնանշելու համար: Այդ սահմաններում վայրագ միջէթնիկական պատերազմներ և դրանց վտանգներ են առկա եղել և առկա են: Սակայն այստեղ մենք կենտրոնանում ենք «Հինդու» հասկացության վրա: Գոյություն ունի միայն մեկ համեմատաբար կուռ հնկական երկիր՝ Հնդկաստանը, և գոյություն ունի միայն մեկ աշխարհ: Ներկայում չի կարելի ասել, թե Հինդու աշխարհի մասերը, լինեն Հնդկաստանի

ներսում, թե դրսում, ներգրավված են իրար դեմ որևէ շարունակական պատերազմի մեջ: Չկա ոչ մի բան, որը կհիշեցներ Առաջին կամ Երկրորդ համաշխարհային պատերազմներն Արևմուտքում և ոչ մի բան, որը կհիշեցներ 1948-1989թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության, ինչպես նաև նրանց դաշնակիցների միջև հավանական միջուկային պատերազմի պատրաստությունը: Կարելի է հակաճառել, որ սրա պատճառն այն է, որ Հինդու տարածքների մեծամասնությունը մինչև վերջերս օտար լծի տակ է գտնվել (բրիտանական, մինչ այդ՝ մոնղոլական), և որ սա խաղաղարար ազդեցություն է ունեցել: Սակայն նմանօրինակ փաստարկները լիովին համոզիչ չեն: Ավելի շուտ տպավորություն է ստեղծվում, որ հինդուների Հնդկաստանը, որպես միջպետական համակարգ, ի մի է բերում մի շարք հինդու ազգերի, որոնք այնքան տարբեր լեզուներով են խոսում, որքան տարբեր են եվրոպական լեզուները, և մոտավորապես նույն քանակի և շատ ավելի մեծ հաջողություններ են արձանագրել խաղաղության հասնելու գործում, քան քրիստոնեական Եվրոպան: Իհարկե, այնտեղ կան հակամարտություններ, սակայն չկա ոչինչ, ինչը նման կլիներ Հնդկական միությունը երկու դաշինքի բաժանելուն՝ մեջտեղում մի շարք չեզոք, չմիավորված պետություններով: Դա չի նշանակում, որ Հնդկաստանում չկա բռնություն, սակայն սա նշանակում է, որ այն հազվադեպ է ուղղակի բռնության ձևով արտահայտվում, որը միջհամայնքային բնույթի է և կաստայական համակարգին հատուկ ինստիտուցիոնալացված կառուցվածային բռնություն է[24]: Էականն այստեղ ընդհանուր համակարգի կայունությունն է:

(4) *Սինիկ-Սինիկ.*

Փաստորեն, գոյություն ունի միայն մի Չինաստան, սակայն այն ունի տեղական պատերազմների, ներքին բաժանումների և դաշտային հրամանատարների երկար պատմություն[25]: Ազգայնականների և մաոիստների միջև քաղաքացիական պատերազմի դաժանության մասին բոլորը գիտեն, և նույնը վերաբերում է Մշակութային հեղափոխությանը և Տյանանմեն հրապարակում 1989-ի հունիսի 3-4-ն ուսանողական հանրահավաքները ճնշելու դաժանություններին: Ուժ գործադրելու պատրաստակամությունը կասկած չի հարուցում, սակայն այն անհամեմատ ավելի շատ օգտագործվում է հենց իրենց դեմ, ինչպես նաև իրենց մոտիկ հարևանների (Տիբեթ, Վիետնամ, Կորեա), քան այլոց: Արդյո՞ք սա հան-չինացիներ/բարբարոսներ տարբերության հետևանք է, որտեղ բարբարոսները նույնիսկ բռնության արժանի չէին համարվում:

(5) *Նիպպոնիկ-Նիպպոնիկ.*

Գոյություն ունի միայն մեկ Ճապոնիա, և այն նկատելիորեն կուռ է այսօր, չնայած այդ կուռ լինելը միայն մեկ դարից քիչ ավելի պատմություն ունի: Մինչ այդ ժամանակի հարաբերությունների առանձին կողմերը կարող են չափորոշիչային հանդիսանալ, թե ի՞նչ կարող էր պատահել, եթե համաշխարհային համակարգում մեկից ավելի Ճապոնիա լիներ: Երկու Ճապոնիաները, տնտեսապես և, հավանական է, ռազմական ու քաղաքական առումներով նվաճողական լինելով՝ կփորձեին մեկը մյուսին գրավել իբրև ռեսուրս, ինչ-որ չափով նմանվելով արևմտյան, նվաճողական երկրների (1) համադրությանը, որոնք

փորձում են վտարել ծայրամասերը մրցակցող կենտրոններից և որոնց նրանք որոշել են ընկալել իբրև Չարիք: Սակայն բոլոր մինչ-Մեյձի ճապոնական *հան*-երը (կլանները) ներառված են արդի Ճապոնիայի բարձրագույն ստորակարգություններում՝ իբրև ունիտար պետության: Մնացյալն այն հարցն է, թե ինչպես է Նիպպոնիկը վերաբերում մնացյալ աշխարհին ((9), (12), (14) և (15)): Եվ սրանով մենք ավարտում ենք մեր ներքաղաքակրթային համադրությունների վարժությունը:

Եզրակացություն. Վտանգի հիմնական գոտին արևտյան քաղաքակրթությունն է՝ իր նվաճողական կերպով: Սրա մասնավոր պատճառներից մեկն այն է, որ ազգ-պետությունը, որպես կառույց ծագելով այդ քաղաքակրթությունից, այդ քաղաքակրթական կանոնների մեջ արդեն իսկ առկա հարաբերությունների իրականացման բավական համարժեք գործիք է: Ազգային պետությունը ծնունդ է տալիս Արևմուտք I համաշխարհային դերակատարներին՝ մաքուր վիճակում: Այն նվաճողական հակում ունի. նվաճողականությունը նույնականացվում է առաջընթացի հետ, որն առաջացնում է իր սեփական կառուցվածքի ճգնաժամերը, որոնք բնականոն են ընկալվում՝ ոգեշնչվելով ընդլայնման վերաբերյալ պարզունակ տեսություններով. բնության հանդեպ անտարբեր և իր Ծայրամասը լայնացնելու ձգտմամբ այն քաղաքականության, ռազմական, տնտեսական և/կամ մշակույթի միջոցներով նվաճում է այլ ազգեր՝ առաջնորդվելով կա՛մ արևմտյան աստվածներով (Յեհովա, Հայր Աստված, Ալլահ), որոնց կողմից ընտրյալ ազգ է (հրեաները, գերմանացիները, անգլիացիները, ամերիկացիները, սովետները, մահմեդականները) ինքը հանդիսանում, կա՛մ դրդված այնպիսի աշխարհիկ տարբերակներով, ինչպիսին ազգայնամոլությունն է: Իբրև արևմտյան տիեզերաբանության իրականացում՝ սա այսօր տեղին է եռաբաժան Եվրոպայի համար. (կաթոլիկ-բողոքական) Եվրամիությունը (ԵՄ) (սլավոնական-ուղղափառ) Ռուսական միության դեմ է, որոնք երկուսն էլ դեմ են (մահմեդական) Թուրքական միությանը:

Քանի որ գաղութականացման և խորքային նեոգաղութականացման միջոցով այս կառույցը Ծայրամաս հասցնելու գործում Արևմուտք I-ը համեմատաբար հաջողակ է գտնվել, կասկածից վեր է, որ վերոնշյալի զգալի մասը բնութագրում է աշխարհն ընդհանրապես: Արևմուտքն արտահանում էր ինքնաոչնչացնող իր հակումը:

Հակառակ կողմում մենք նկատում ենք մեկ այլ վտանգի գոտի՝ Ճապոնիան: Վտանգն առաջանում է նույն հիմնական քաղաքակրթական բնութագրիչներից: Ճապոնացիները նույնպես իրենք իրենց ընկալում են որպես Ընտրյալ ազգ: Ավելին, նրանք հակված են աշխարհի այլ մասերն ընկալելու որպես Ծայրամաս կամ Ռեսուրս:

Զարմանալի չէ, որ այս դարի մի խոշոր պատերազմ՝ խաղաղօվկիանոսյան պատերազմը, պետք է տեղի ունենար Ճապոնիայի և Միացյալ Նահանգների միջև: Սա պատերազմ էր հանուն Աստծո և Արևի Աստվածուհու՝ Ամատերասու Օ-Միկամի՝ Ծայրամասի հանդեպ վերահսկողության համար և ամեն կողմը մյուսին ներկայացնելով իբրև Չարք: Այդ պատերազմում հաղթեց Աստված:

Մեջտեղում երեք այլ տիեզերաբանություններ են, որոնք զգալիորեն պակաս վտանգավոր են բոլորի հանդեպ, բացի իրենք իրենցից: Սակայն նրանք պակաս վտանգավոր են իրարից շատ տարբեր երեք պատճառներով: Սինիկ և Հինդիկ դեպքերում դրանցից միայն մեկը կա՝ նրանք արդեն իսկ

հասել են վերպետական կարգավիճակի: Սակայն այս դեպքում ավելին է առկա. Սինիկի դեպքում հնարավոր է, որ բարբարոսները նույնիսկ արժանի չլինեն, որպեսզի իրենց հետ պատերազմեն՝ լինելով չափից ավելի ցածր: Պահանջվում է միայն պահպանել գործուն զսպողական համակարգը՝ հիմնականում պաշտպանողական պաշտպանության միջոցներով: Հինդիկի դեպքում մեծ պատերազմը կարող է չարժենալ անհրաժեշտ ջանքերին, քանի որ հնդուիզմը, մարդկային պատմության մեջ ամենահարուստ կրոնը լինելով, արդեն իսկ հանդիսանում է կրոնական տիեզերքի կենտրոնը: Ինչ վերաբերում է մնացածին, ապա, ինչպես նշվել է, նրանց միջև, բոլոր տարբերություններով հանդերձ, «ապրիր և թող ապրեն» ուսմունքը հիմնարար բնույթ ունի:

Եկեք այժմ ավելի խորը հետևենք այս գաղափարների զարգացմանը՝ ուսումնասիրելով միջքաղաքակրթային հարաբերությունները:

(6) *Արևմուտք I - Բազմակենտրոն.*

Սա, իհարկե, Արևմուտք I-ի՝ իր ընկալմամբ իրավամբ իր ծայրամասը հանդիսացողների վրա ներազդելու երկար պատմության մասն է, ինչպես հունահռոմեական, այնպես էլ արևմտյան իմպերիալիզմի ներկա ժամանակաշրջանում: Այս գործունեության որոշակի մասը կարող է որպես վկայություն բերվել այն բանի, որ ուժի հավասարակշռության տեսությունը չի կարող լիովին սխալ լինել. բնիկների մեծ մասը չափից ավելի թույլ էր անցյալում և թույլ է ներկայում՝ Արևմուտք I-ի հսկայածավալ հարձակմանը դիմակայելու համար. հետևաբար, նրանք ծայրամասացվել են և/կամ վերացվել, ինչպես դա տեղի է ունեցել Ամերիկյան մայրցամաքի հսկայական տարածքներում: Ինչևէ, հասարակ տրամաբանությունն ասում է, որ ելնելով «ուժի հավասարակշռության բացակայությունն ուղղակիորեն տանում է դեպի ոչ-խաղաղություն» (այդ բառի ցանկացած մեկնաբանության համար) պնդման հավանական իրավացիությունից՝ դեռևս չի կարելի պնդել, թե «ուժի հավասարակշռությունը հանգեցնում է խաղաղության»:

Մյուս երկու կատեգորիաները՝ Արևմուտք II-ը և բուդդիկ քաղաքակրթությունները, այլընտրանքային տարբերակներ են առաջ քաշում: Միջնադարի համար ներհատուկ ավատական և ավատատիրական կառույցները ազգային պետության «արդի ժամանակաշրջանի» նվաճողական մեթոդով կլանվեցին Արևմուտք I-ի հավասարապես ներհատուկ կառույցի մեջ: Այս գործընթացի համար մեղմասություն է «ազգի կառուցումը»: Այն բավականաչափ երկար ժամանակ է պահանջել, և իր ավարտին դեռևս ակնհայտորեն չի հասել: Միգուցե ռազմական դիմակայություն շատ չի եղել, սակայն միանշանակ եղել են զգալի մշակութային, տնտեսական և քաղաքական դիմակայություններ[26]: Նույնը վերաբերում է Բուդդիկ քաղաքակրթությանը. միգուցե հենց իր ոչ բռնի բնույթի պատճառով այն չի ջախջախվել, իր *սանգայից* դուրս գալու ունակության շնորհիվ բուդդայականությունը ցույց է տվել մշակութային, տնտեսական և քաղաքական կլանման դեմ տպավորիչ ճկունություն: Այստեղ մենք գործ ունենք ավելի նուրբ միջքաղաքակրթային հարաբերությունների հետ: Միևնույն ժամանակ, սա նույնպես բերեց այն բանին, որ Արևմուտք I-ը չընկալեց ո՛չ Արևմուտք II-ը, ո՛չ էլ բուդդայականությունն իբրև չար «վայրենիներ»: Հակառակ սրա՝ տեղացիներն ընկալվում էին որպես չար, կամ գոնե՝ Չարին մոտիկ «պարզունակ» դասակարգին պատկանողներ:

(7) *Արևմուտք I - Հինդիկ.*

Արևմուտքի «ընտրյալ ազգերից» մեկը՝ բրիտանացիները, գրավել են Հնդկաստանը. նրանք թողել են անջնջելի հետքեր և հետագայում ստիպված էին, հիմնականում Գանդիի ոչ բռնի հակազդեցության պատճառով, լքել Հնդկաստանը 1947-ին: Հնդկաստանն, այնուամենայնիվ, նույնպես յուրացրեց իրեն գրավողներից այն ամենն, ինչ կարելի էր օգտագործել՝ ձուլելով Արևմուտք I-ի տարրերն աներևակայելիորեն հարուստ հնդկական մշակույթի մեջ: Եվ այժմ բրիտանացիները դարձել են գրեթե նույնքան Հնդկաստանով *դրոշմված,* որքան հնդիկներն են *դրոշմված* Բրիտանիայով: Բրիտանիան գրավեց Հնդկաստանը. Հնդկաստանն էլ իր հերթին միգրացիայի միջոցով ինչ-որ մեծ չափով գրավեց Բրիտանիան և բրիտանացիներին, ինչն ակներև է Ալբիոն այցելող յուրաքանչյուրի համար: Հնդկաստանը նույնիսկ կարող է դա անել ևս մեկ անգամ՝ այդպիսով ծառայելով գրավող քաղաքակրթությունների մշակույթների պահոց և դառնալով մշակույթով ավելի հարուստ, քան երբևէ: Ո՞վ է ավելի ուժեղ՝ նա՞, ով գտնվում է դրսում՝ այլոց Ծայրամասը կառուցելու համար, թե՞ նա, ով արդեն տեսնում է ուրիշներին իբրև իր սեփական տիեզերքով կլանված, պարունակված: Գոյություն ունի իրար հետ հարաբերվելու երկու ուղի. ռազմական նվաճումը, տնտեսական ներազդումը, մշակութային դրոշմումը, քաղաքական ինստիտուտները՝ մի կողմից և կլանումը, «ինչ կարելի է օգտագործել» ընտրությունը, զավթիչին վռնդելը, մեկ այլ զավթիչին սպասելը՝ մյուս կողմից:

(8) *Արևմուտք I - Սինիկ.*

Այս դեպքը տարբեր է: Երբ Արևմուտք I-ն իր արևմտյան (քրիստոնեական) արտահայտությամբ եկավ Չինաստան (ԱՄՆ-ն այս տեսանկյունից ակնհայտորեն պատկանում է Արևմուտքին)՝ նրա ներկայացուցիչները գրավեցին Արևմտյան բարբարոսների համար նախատեսված վայրը: Նրանց վարքագիծը դրան համապատասխանում էր, և նրանք ընկալվում էին համապատասխան կերպով: Սա ոչ մի դեպքում չի նշանակում, թե չինացիները չեն կարող բարբարոսներից սովորել այն, ինչ նրանք ցանկանում են սովորել, ինչպես նրանք միանշանակ արել են Հյուսիսային բարբարոսների՝ ռուսների դեպքում, կոմունիստական հարստության առաջին տարիներին: Սակայն եթե հնդկական քաղաքակրթությունը կարողացել է յուրացնել և ներառել գրեթե անհավանական տոկունությամբ, ապա չինական քաղաքակրթությունը մեծապես վնասված էր հարձակմամբ: Այն խմբավորվեց և նույնիսկ վռնդեց օտարերկրյա սատանաներին:

Այստեղ մենք գործ ունենք ասիմետրիկ հարաբերության հետ: Արևմուտք I-ը ցանկանում է ներազդել և ընդլայնվել. և այն ամենն, ինչ չինացիները (և վիետնամացիներն) արեցին՝ հին ֆրանսիական ասույթին համապատասխան գործելն էր.

Cet animal est très méchant;
quand on l'attaque, il se défend.[i]

[i] Cet animal est très méchant; quand on l'attaque, il se défend (ֆր.)- այս կենդանին շատ կատաղի է. հենց հարձակվում ես՝ պաշտպանվում է /թարգ./

Չինացիներն իրենց ավանդական սահմաններից ավելի չեն ընդլայնվել, այդ սահմանները, ցավոք, կարծես պարունակում են և Տիբեթը: Սա տարբեր է Արևմուտք I-ից, որն ամբողջ աշխարհն ընկալում է որպես իր տիրույթը:

(9) *Արևմուտք I - Նիպպոնիկ.*

Հարաբերությունն զգալիորեն ավելի սիմետրիկ է: Չինաստանը աշխարհի այլ մասերը ծայրամասեցնելու նպատակով դուրս չի գնում, ինչպես դա անում է Ճապոնիան, չնայած կարելի է փաստել, որ նրանք այդ անում են իրենց արտաքին ծայրամասի՝ Ռեսուրսաստանի նկատմամբ, նույնիսկ եթե «լոկ» տնտեսական իմաստով: Սակայն ներքին ծայրամասն ընկալվում է մոտավորապես այն կերպ, որով արևտյան իմպերիալիզմը փորձում էր վերաբերվել գրեթե ամբողջ աշխարհին:

Ընդհարման հավանականություններն այստեղ ակնհայտ են: Դրանք ակնհայտորեն չեն վերացվել՝ Ճապոնիան ոչ միայն Արևմուտքի, այլև արևմտյան Արևմուտքի մաս հայտարարելով, քանի որ սա միայն դատարկ հայտարարություն է՝ աննշան փաստացի հիմքով, և անգամ եթե այն ճշմարիտ լիներ, ապա, միևնույն է, ներ-Արևմուտք I-ական հարաբերությունները պատմականորեն խաղաղ չեն եղել: Մի կողմից մենք ունենք Արևմուտքի հզորությունը՝ նվաճողական մեթոդով հանդերձ ներմուծված մեծ պետության սահմանման մեջ, մյուս կողմից ունենք Ճապոնիան, որը նույն տիպին է պատկանում: Խաղաղօվկիանոսյան պատերազմի ԱՄՆ-Ճապոնիա գլուխը նախածրագրված էր, ինչպես նախածրագրված էր Ճապոնական պատերազմն արևմտյան գաղութականացման դեմ, որը տարվում էր, դժբախտաբար, իր սեփական գաղութատիրությունը հիմնելու նպատակով: Սա ամենավտանգավոր համակցություններից մեկն է, քանի որ Արևմուտքում Արևմուտք I-ը ժամանակի ընթացքում դառնում է համակցված (Արևմուտք I-ում մեկ այլ վտանգի գոտի է եռաբաժան Եվրոպան):

(10) *Բազմակենտրոն-Հինդիկ.*

Այստեղ հնդկական քաղաքակրթության մեկ այլ կողմ է հստակորեն առանձնանում: Այս քաղաքակրթությունը երկար ժամանակաշրջանների ընթացքում գրեթե անհավանական հանդուրժողականություն է ցուցաբերել փոքր արևտյան խմբերի՝ հրեաների, քրիստոնյաների և պարսիկների[27] և անգամ մեծ արևտյան խմբերի՝ մահմեդականների հանդեպ, այն պայմանով, որ այս «համայնքներն» իրար վրա չեն հարձակվի և, մասնավորապես, չեն հարձակվի հյուրընկալող պետության կրոնի վրա: Կարևոր միջանկյալ կրոնական փոքրամասնության՝ Սիկխերի հետ հարաբերությունները նույնպես մինչև վերջերս մեծամասամբ ընթանում էին հանդուրժողականության այդ հունով[28]: Ինչնէ, նույնը չի կարելի ասել տեղաբնակ ժողովուրդների՝ «ցեղերի» դեպքում: Նագալանդը կարևոր օրինակ է: Սա կնշանակի, որ Հինդիկ քաղաքակրթությունում նույնպես «բարձր» և «ցածր» մշակույթների միջև տարբերակում գոյություն ունի, որը նման է բարձր, ցածր կաստաների և կաստայից զրկվածների տարբերակմանը: Ինչ վերաբերում է վերջինիս՝ այստեղ է, որ Հինդիկ բռնությունն իր վատագույն արտահայտությունն է գտնում՝ առավելապես ուղղված լինելով ներքև, քան թե դուրս, և ավելի շատ լինելով կառուցվածքային, քան ուղղակի:

Բուդդայականությունը, գանդիականության պես, մարտահրավեր է նետել հնդկական քաղաքակրթության այս կողմին, և պետք է (գանդիականության պես) դուրս մղվեր: Հնդկական քաղաքակրթությունը հանդուրժողական է այնքան ժամանակ, քանի դեռ կաստայական համակարգին կա՛մ ձեռք չի տրվել, կա՛մ էլ այն կարող է սոցիալական վերափոխումների արդյունքում վերարտադրվել (նույնիսկ եթե սոցիալական փոփոխությունը դրսից է արվում): Բրահմինը բրահմին կմնա՝ անգամ եթե իր աստվածը *Ռամ-ից («Աստված»)* փոխվի ՌԱՄ-ի («Արագ մատչելի հիշողություն» - Random Access Memory), իսկ ինքը քրմից փոխակերպվի համակարգչային մասնագետի:

(11) *Բազմակենտրոն - Սինիկ.*

Չինական քաղաքակրթությունը հիմնականում հանդուրժողական է ոչ-հան ժողովուրդների փոքր կղզյակների հանդեպ, որոնք իր համար էական վտանգ չեն ներկայացրել: Արևմուտք I-ը ցանկանում է ծայրամասեցնել, յուրացնել, փոփոխել և «զարգացնել» նրանց: Ավելի հավանական է, որ Սինիկ քաղաքակրթությունը ընկալի դրանց որպես բարբարոսների և նրանց թողնի իրենց հարաբերական խաղաղության մեջ, ինչպես, օրինակ, դա արվեց Արևմտյան Չինաստանի ոչ-հան ժողովուրդների ճնշող մեծամասնության հետ: Մշակութային հեղափոխությունն ակնհայտորեն բացառություն էր, քանի որ այն հարձակվեց արևմտականության, բուդդայականության և նրանց տաճարների մնացորդների, ինչպես նաև բնիկ ցեղերի վրա, սակայն, որքանով կարելի է դատել, դա արվում էր առանց ոչնչացնելու նպատակի, նույնիսկ եթե հարձակումները դաժան էին: Չինաստանում ակնհայտորեն առկա են խորը հակամարտություններ, որոնք գալիս են արևմտյան գերիշխանության երկար տարիներից և օպիումային պատերազմներից կամ արդյունք են *shi'h*-ի 2.500 տարվա գերակայության:

(12) *Բազմակենտրոն – Նիպպոնիկ.*

Այս հանդուրժողականությունը դժվար է գտնել Ճապոնիայում, ինչն ավելի նման է Արևմուտք I-ին: Իհարկե, Ճապոնիա կարելի է այցելել: Սակայն Ճապոնիայում ապրելու համար այնտեղ բնակվելու, ճապոնացի դառնալու ցանկությունը նախադրյալ է, գոնե այնպիսի արտաքին արտահայտություններով, ինչպիսին են ճապոնական անունն իբրև պաշտոնական անուն ընդունելը, սեղանի ստորին մասում նստելը (ի տարբերություն սեղանի գլխի, ուր այցելուն է նստում, ինչը մեկնաբանվում է իբրև հարգանքի նշան): Եվ այսպիսով, բուդդայականությունը «ճապոնականացվեց» և, մասնավորապես ձեն-բուդդայականության տեսքով, դարձավ Նիպպոնիկ տիեզերաբանության նվաճողական բնույթի մի տարրը: Բնիկ ցեղերը՝ այնուները, ձուլվեցին կամ ճապոնականացվեցին, մինչև փաստացի անհետացման պահը:

(13) *Հինդիկ - Սինիկ.*

Երկու մեծ քաղաքակրթություններ, մարդկության մեծ խմբեր, փաստորեն երկու ամենամեծ խմբերը, որոնք նաև հարևաններ են՝ և, միևնույն ժամանակ, այդքան քիչ հարաբերություններ: Չինացիները հնդիկներին ընկալում են որպես Հարավային բարբարոսների բաղկացուցիչ մաս, ոչ վտանգավոր, բացա-

ռությամբ 1962-ի աշնան դեպքերը Լադկայում[29]: Հնդիկների համար չինացիները «այնտեղ վերևում են», սակայն քանի որ նրանք երբեք չեն գրավել Հնդկաստանը՝ առկա չէ շփման համար ավանդական Հինդու հիմքը: Բարեբախտաբար, այս մեծ ազգերից և ոչ մեկն իրապես նվաճողական չէ, քանի որ եթե Հնդկաստանն արևմտյան իմաստով նվաճողական լիներ, իսկ Չինաստանն ունենար Նիպպոնիկ տիեզերաբանությունը, ապա Հիմալայներում խոշոր պատերազմներ կարձանագրվեին: Հետաքրքիր է նաև նկատել, որ գոնե մինչև հիմա նման բաներ չեն եղել նույնիսկ հակառակ այն բանի, որ երկու պետություններն էլ ունեն արևտյան նվաճողականության զույգ գործիքները՝ ազգային պետություն՝ իր բազում բնութագրիչ մասերով, և միջուկային զենքով զինված հզոր բանակներ: Ոչ-պատերազմական իրավիճակն ակնառու է և պատիվ է բերում նրանց: Սակայն սա ավելի շուտ բացասական, քան թե դրական խաղաղություն է, քանզի այն հիմնականում դատարկությունից է բաղկացած:

(14) *Հինդիկ - Նիպպոնիկ.*

Այս հարաբերությունը խաղաղ է պահպանվել հավանաբար պարզ աշխարհագրական հանգամանքի պատճառով՝ *dai-tō-ā*-ի մեջ լրջորեն ներգրավված լինելու համար Հնդկաստանը Ճապոնիայից գոնե մինչ օրս չափազանց հեռու է գտնվել: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ճապոնիան ագրեսիայի փորձ կատարել է, սակայն պատերազմն իր համար անհաջող ելք ունեցավ: Եթե Ճապոնիան սահմանային պետություն լիներ՝ նյութա-տրանսպորտային բարդություններն ամենայն հավանականությամբ հաղթահարված կլինեին: Բարձր կաստային պատկանող բազմաթիվ հնդիկներ այժմ ճապոնական արգասաբերության վարքագծեր փոխառած կլինեին, և բազում ճապոնացիներ կլանված, նույնիսկ փոխակերպված կլինեին հնդկական *խորհրդապաշտության (mystique)* մեջ: Այս առումով Հնդկաստանը երջանիկ է՝ Ասիայում առկա են երկու այլ մեծ պետություններ, որոնցից մեկը շատ մոտ է գտնվում և ագրեսիվ չէ, իսկ մյուսը բավական ագրեսիվ է, սակայն ոչ այնքան մոտ:

(15) *Սինիկ - Նիպպոնիկ.*

Չինաստանի բախտն այնքան էլ չի բերել: Չինացիների համար ճապոնացիներն Արևելյան բարբարոսներ են, և նրանք համապատասխանաբար էլ գործել են 1931-ից և հատկապես 1937-ից սկսած: Չինաստանի վրա Ճապոնիայի հարձակումը զուտ բռնազավթման օրինակ է, առանց պաշտպանական որևէ ակնարկի, բավական նման նացիստական Գերմանիայի հարձակմանը Խորհրդային Միության վրա, սակայն ավելի փոքր մասշտաբներով: Մյուս կողմից, սոցիալիստական-կոմունիստական ուղղությամբ սոցիալական փոխակերպումների, նույնիսկ հեղափոխությունների ծրագրերը Մոսկվայում էին մշակվում, ինչը միանշանակ կարող էր ազդել Գերմանիայի վրա: Ճապոնիան չուներ նույնիսկ այս համատեքստը: Չափազանց վաղ է դատողություն անել, թե արդյոք այս ագրեսիվությունը Չինաստանի հանդեպ դեռևս առկա է Ճապոնիայում, գոնե քողարկված տեսքով: Վերջիվերջո, Ճապոնիան մեկ անգամ արդեն ջախջախվել է, և դա շատ վաղուց չի եղել[30]: Նոր Չին-Ճապոնական պատերազմի փոխարեն շատ ավելի հավանական է Արևելյան Ասիայում հա-

մակցված քաղաքականությունը, որն ուղղված կլինի Արևմտյան Եվրոպայի ինտեգրացիոն ջանքերի արդյունքը ձեռք բերելուն՝ Մոննե-Շումանի ծրագրից Հռոմի պայմանագրով դեպի Մաաստրիխտի պայմանագիր (և այս ուղղությամբ):

Սրանով մենք ավարտում ենք միջքաղաքակրթային հարաբերությունների հետազոտությունը:

Եկեք ևս մեկ անգամ հայացք նետենք 3.2 աղյուսակի վրա՝ ամփոփելով այն ամենն, ինչ ասվել է: «!» նշաններ էին դրվել այնտեղ, որտեղ վտանգ էր սպասվում, մասամբ՝ քանի որ այդ վտանգն առկա է եղել անցյալում, և մասամբ՝ քանի որ դա հետևում է տիեզերաբանության վերլուծությունից: Բոլոր այդ նշանները վերաբերում են հինգ տիեզերաբանություններից երկուսին՝ Արևմուտք I-ին և Նիպպոնիկ քաղաքակրթությանը՝ Ընտրյալ ազգերի մեծ և փոքր ընտանիքներին: Այստեղ կա միայն մեկ բացառություն՝ Ճապոնիան ինքն իր հանդեպ վտանգավոր չի դիտարկվում և, փաստորեն, հինգ քաղաքակրթությունների շարքում ինտեգրման ամենաբարձր աստիճանն ունի: Այստեղ կրկին պատճառը, ինչպես Չինաստանի դեպքում, բացասական է՝ այսօր գոյություն ունի միայն մեկ Ճապոնիա:

3.1 աղյուսակի վտանգի գոտիները երկու տարբեր տեսակի են՝ ուժեղ-ուժեղ և ուժեղ-թույլ, «թույլը» նշանակում է բազմակենտրոն:

Ռազմական առումով ուժեղ և նվաճողական քաղաքակրթությունները իրենց ուժերն են չափում պատերազմում՝ իրար ծայրամասեցնելու, իրար որպես ռեսուրս օգտագործելու, իրար որպես կենտրոնի այլ տերությունների համար անմատչելի ծայրամաս դարձնելու նպատակով:

Սակայն այստեղ առկա է վտանգի կենտրոններից երկրորդ ճառագայթումը՝ ներազդումը, որը ժամանակ առ ժամանակ կլանման և ոչնչացման ճանապարհով իրականանում է ռազմականորեն ավելի թույլ քաղաքակրթությունների հանդեպ: Վերջիններս կարող են երկու պաշտպանական ռազմավարություն ունենալ՝ լիովին պաշտպանողական պաշտպանության համակարգի միջոցով պատասխան հարված հասցնել և/կամ նահանջել, հրաժարվել կլանվելուց և փորձել վերապրել զավթումը: Անկախ այն բանից՝ կհաջողվի սա, թե ոչ, այս ռազմավարությունը ենթադրում է երկար ժամանակահատվածի հեռանկար, տոկունունություն և միգուցե նաև ոչ-բռնության գիտակցված քաղաքականություն՝ այն երեք բնութագրիչները, որոնք բացակայում են Արևմուտք I-ում և պակաս չափով նաև Նիպպոնիկ նվաճողական քաղաքակրթություններում[31]:

Եվ այսպիսով, աղյուսակի կենտրոնում՝ տասնհինգ բաժիններից վեցում մենք տեսնում ենք համեմատաբար դրական կամ գոնե ոչ-բացասական հարաբերությունների զգալի քանակ: Ավելի մանրակրկիտ հետազոտությունը կարող է բացահայտել ավելի շատ, սակայն ոչ լայնածավալ բռնություն, որը կարելի է տեսնել աղյուսակի սահմանների ինը բաժիններում (իսկ «նիպպոնիկ-նիպպոնիկում» քողարկված տեսքով, այստեղից էլ՝ !-նշանը՝ փակագծերում):

Ընդհանուր առմամբ 3.2 աղյուսակը, որը հիմնված է քաղաքակրթությունների տիեզերաբանությունների վերաբերյալ պարզ դրույթների վրա, համեմատաբար լավ է վերարտադրում պատերազմի և խաղաղության աշխարհաքաղաքականությունը: Սա էլ ավելի հստակ է դառնում, երբ ներմուծվում է տիեզերաբանական չափումը (տե՛ս գլուխ 5):

3.4 Ամփոփում. Ի՞նչ կարող ենք անել

Ենթադրելով, որ խաղաղության (ինչպես նաև զարգացման, չնայած դա ակնառու կերպով արտահայտվել է միայն առաջին գլխում) այսօրինակ վերլուծությունը բավականաչափով տեղին է, անշուշտ հարց է ծագում՝ ի՞նչ կարելի է անել այս առումով: Հնարավո՞ր է, արդյոք, տեղահանել վնասակար քաղաքակրթությունները: Հնարավո՞ր է, արդյոք, փոփոխել «հիվանդ» քաղաքակրթությունները: Այս հարցերը լիովին տեղին են և որոշիչ՝ խաղաղության ուսումնասիրությունների համար:

Տեղահանման թեկնածուները ակնհայտորեն Արևմուտք I-ը և Նիպպոնիկը կլինեն: Սակայն, բարոյական և գործնական նկատառումները մի կողմ դրած, գոյություն ունի մի մեծ խնդիր: Տեղահանման հետևանքը կարող է լինել այն, որ մնացյալ երեք քաղաքակրթությունները (փաստորեն՝ հինգը, քանի որ երեքը խմբավորված են մեկ միավորի մեջ) կարող են տեղահանված նվաճողականների որոշ հատկություններ ձեռք բերել: Հինդիկը կարող է դառնալ Արևմուտք I-ի նման, իսկ Սինիկը կարող է Նիպպոնիկին նմանվել: Այստեղ կարող է գործել խմբային դինամիկան, երբ քաղաքակրթություններն իրար համեմատ են դերեր խաղում, մինչև այն պահը, երբ կլցվեն դատարկ դերային ճեղքերը: Աշխարհն իրենից փոխհարաբերությունների մեջ գտնվող քաղաքակրթությունների *համակարգ* է ներկայացնում (ոչ թե լոկ բազմություն), որտեղ մեկ բաղադրիչի մոտեցումները կամ վարքագիծը պատճառականացվում է ոչ միայն իր կանոնով, այլև այլ բաղադրիչների վարքագծով:

Հենց այս հատկությունների պատճառով է, որ նրանք, իրենց ճանապարհին պակաս նվաճողական քաղաքակրթությունները ոչնչացնելով, հայտնվել են քաղաքակրթությունների համաշխարհային հանրույթի ամենավերևում և ոչ ստորոտում: Եթե նրանք ստորոտում գտնվեին և լինեին համեմատաբար փոքրաքանակ, ապա հավանական է, որ նրանց հետ նույն կերպ վարվեին, ինչպես վարվում են ամբաստանյալների հետ. կկանգնեցնեին դատարանի առջև և կդատապարտեին, և դատավճիռը կընդունվեր ու դրան կհետևեր համապատասխան ինստիտուցիոնալացումը: Գործընթացն ավելի լավ կաշխատեր առանձին վերցրած, քան ընդհանուր կանխարգելման համար, ինչպես հենց ընդհանուր առմամբ պատժի տեսության մեջ:

Սակայն մենք այլ իրավիճակում ենք գտնվում: Աշխարհի գրեթե ողջ միջուկային զինանոցը կենտրոնացած է Արևմուտք I-ում (ԱՄՆ, Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Ռուսաստան, Բելառուս, Ուկրաինա, Ղազախստան, Իսրայել, Հարավային Աֆրիկա, Պակիստան): Հնդկաստանը և Չինաստանը Արևմուտք I չեն, սակայն նրանք, համաձայն վերոնշյալ վերլուծության, պակաս վտանգավոր չեն: Սառը պատերազմի գերտերություններն այստեղ են, այստեղ են նաև «մեծ տերությունները»: Ամենակարևոր պետությունների թվից արդյունաբերական պետությունները՝ G7-ը, բոլորը Արևմուտք I-ից են, կամ՝ Նիպոնիկ: Նրանց տեղահանելը հեշտ չէ: Այստեղից երկրորդ հարցը՝ կարո՞ղ են, արդյոք, քաղաքակրթությունները փոխվել. ոչ թե ինչ-որ համաձայնագրեր/կոնվենցիաներ ստորագրելու արհեստական իմասով կամ վարչակարգերի ու կազմակերպությունների մեջ մտնելու տեսանկյունից, այլ իրենց կանոնների և տիեզերաբանությունների փոփոխման տեսանկյունից:

Պատասխանը բացարձակապես պարզ չէ: Սակայն այս հարցը, ամենայն հավանականությամբ, խաղաղության ուսումնասիրություններում հնարավոր

ամենակարևոր հարցերից է: Մենք գիտենք, որ քաղաքակրթությունները փոխվում են այն իմաստով, որ խորքային կողմերը, տիեզերաբանությունները հնարավոր է փոփոխել: Սակայն այսպիսի փոփոխությունները հնարավոր են եղել մի շարք պատմական պայմանների ազդեցությամբ և ոչ թե կամավոր ծրագրի համաձայն: Այսօր մենք չափազանց պատերազմական քաղաքակրթությունների բուժման միայն մշուշոտ սկիզբն ունենք, ինչպես դա ցույց կտրվի 5-րդ գլխում: Ինչևէ, սկզբից մենք 4-րդ գլխում Արևմուտք I-ից կդիտարկենք երեք լուրջ հատուկ դեպքեր՝ հիտլերիզմը, ստալինիզմը և ռեյգանիզմը (Ամերիկյան ծայրահեղականությունը):

Նշելը, որ պատերազմողության պատճառները մեծապես, եթե ոչ հիմնականում, արմատավորված են հենց քաղաքակրթություններում, արդեն իսկ սկիզբ է: Փոփոխություն կարող է արձանագրվել, սակայն հավանաբար դեպի հիմնախնդրի արմատները գնալով: Այն դրույթի արհեստականությունը, թե մասնավորից դեպի հանրային արտադրության միջոցների սեփականության պարզ փոխանցումը մարդկությանը կազատի պատերազմի աղետից, պնդման արհեստականությունն այսօրինակ դիտարկման համատեքստում ակնհայտ է դառնում. թե՛ հանրային և թե՛ մասնավոր ձեռքերում գտնվող արտադրության միջոցները կրկին կարող են նվաճողական նպատակների ծառայել՝ ոչնչացման միջոցներ արտադրելով, եթե դա առկա է նրանց տիեզերաբանություններում: Նույնը վերաբերում է նաև այն պնդման արհեստականությանը, թե ազգ-պետությունների ժողովրդավարացումը խաղաղության կհանգեցնի: Ճիշտ հակառակը՝ այն կարող է ավելի լավ ծառայել քաղաքակրթության տիեզերաբանության արտահայտմանը, հավաքական ենթագիտակցությանը:

Հետևաբար, մենք կարիք ունենք այնպիսի վերլուծությունների, որոնք, որպես միավորներ, գործ ունեն քաղաքակրթությունների և ոչ թե պետությունների, տնտեսական համակարգերի կամ քաղաքական համակարգերի հետ. մենք դրանց կարիքն ունենք լուծումներ գտնելու և ոչ թե մեղադրանքներ ներկայացնելու համար: Այս կենսական հարցում ակնհայտորեն երբեք չի լինի վերջին խոսք: Այստեղ տեղին է հիշել, որ հետազոտություն նշանակում է վերա-քննություն /research means re-search/: Նույնիսկ եթե բռնության և պատերազմների խորքային արմատները տիեզերաբանության մեջ են, որն իր հերթին հավաքական է և ենթագիտակցական, հնարավոր է, որ գոյություն ունեն այդ հավաքական կաղապարը ենթախմբերի և անհատների բաղդատելու ձևեր և ենթագիտակցականը գիտակցական դարձնելու ուղիներ:

Ծանոթագրություններ

[1] Սա 1.1 գլխի III ենթագլխի թեզ 1-ից վերցված սահմանում է:

[2] Սա շատ մոտ է I-ին մասի 1.1 գլխի խաղաղության ավելի դինամիկ սահմանմանը, միայն տվյալ դեպքում շեշտը դրվում է հակամարտության վրա:

[3] Այս հարցը ավելի մանրակրկիտ է ուսումնասիրված հետևյալ գրքում. Johan Galtung, *Buddhism: a Quest for Unity and Peace* (Colombo: Sarvodaya International, 1003), գլուխ 4, բնության մասին:

[4] Այս հարցն ավելի մանրակրկիտ է ուսումնասիրված հետևյալ աղբյուրներում. A. C. Bouquet & K. S. Murty, *Studies in the Problems of Peace* (Bombay: Asia Publishing House, 1960), Takeshi Ishida, *'Beyond Traditional Concepts of Peace in Different Cultures', Journal of Peace Research,* vol. 6, no. 2, 1969, էջ133-145:

[5] Իրականում սա շատ հետաքրքիր վարկած է, որը կարելի է էմպիրիկ ստուգման ենթարկել: Այլ հարց է, թե արդյո՞ք նրանք, ովքեր առաջ են քաշում նման վարկածներ, հետաքրքրված են դրանց ստուգմամբ: Վարկածի օգտին կվկայեր այն հանգամանքը, որ ներքին խաղաղությամբ օժտված անձն ունի պակաս չմշակված հակամարտային նյութ, որը կարող է ուղղորդվել հակամարտության ձևավորման վրա և հանգեցնել հակամարտության ապաձևավորման: Վարկածին դեմ կխոսեր այն հանգամանքը, որ ներքին չլուծված հակամարտությամբ անձնավորությունը կարող է ավելի խորը հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում հակամարտությունը և ավելի շատ փորձ ունենալ, թե ինչպես հակամարտությունները վերափոխել առանց բռնության: Այստեղ կարելի է հիվանդության հետ զուգահեռ անցկացնել՝ հիվանդության քիչ փորձ ունեցող կամ ընդհանրապես անփորձ մարդը կարող է ժամանակին չհասկանալ ավելի լուրջ հիվանդության վաղ զգուշացումներն ու ախտանշանները:

[6] Այս գաղափարներն ավելի են զարգացվում հետևյալ գործում՝ Johan Galtung, *"Social Cosmology and the Concept of Peace"*, 15-րդ գլխի երկրորդ մասում, 415-436 էջեր, *Essays in Peace Research,* vol. V (Copenhagen: Ejlers, 1980).

[7] Տե՛ս՝ Chad Alger, *"The United Nations in a Historical Perspective: What we have Learned about Peace Building"*, (Tokya: UNU, 1985).

[8] Աբրահամական կրոններում խաղաղության սպառնալիքի խնդիրը, հավանաբար, ոչ թե մոնոթեիզմն է, այլ ողջ տիեզերքի համար միասնական և ընդունելի կրոնին պատկանելու գաղափարը կամ, այլ խոսքերով, եզակիությունն ու համընդհանրությունը՝ քրիստոնեության ու իսլամի համար և եզակիությունն ու բազմակիությունը, կոնկրետ Ավետյաց Երկիրը՝ հուդայականության համար:

[9] Ավելի մանրամասն, թե ինչպես է այս թեման օգտագործվում հակամարտությունը պահպանելու համար, տե՛ս՝ Johan Galtung, *There Are Alternatives!* (Nottingham: Spokesman, 1984), գլուխ 2.1.

[10] Այս թեմայի նուրբ հետազոտության համար տե՛ս՝ J. E. C. Fuller, *'The Rebirth of Unlimited War'*, գլուխ II, հետևյալ գրքում՝ *The Conduct of War 1789-1961* (London: Eyre Methuen, 1972).

[11] Այլ կերպ ասած՝ մարդու իրավունքների ցանկացած հռչակագրի մանր տառատեսակով գրվածքը, մարդու պարտականությունները նրանց հանդեպ, ովքեր ենթադրվում են, որ հանդիսանում են իրավունքների պաշտպաններ՝ պետություններ (նկատի են առնվում կառավարությունները): Այս թեման զարգացված է իմ *Human Rights in Another Key* (Cambridge, Polity Press, 1994), գլուխ 1.

[12] Տե՛ս՝ A. H. Wesling, *Warfare in a Gragile World* (London: Taylor & Francis, 1980). և Johan Galtung, *Environment, Development and Military Activity* (Oslo: Universitetsforlaget, 1982).

[13] Սա Johan Galtung, Erik Rudeng & Tore Heiestad, *'On the Last 2.500 Years in Western History, And Some Remarks on the Coming 500'*, էջ 318-361, Peter Burke, ed., *New Cambridge Modern History, Companion Volume,* vol XII (Cambridge, Cambridge University Press, 1979) հոդվածում ուսումնասիրված հիմնական թեմաներից մեկն է:

[14] Իհարկե, գոյություն ունեն մեկից ավելի Արևմտյան կանոններ, և այստեղ ասվածը հավասարապես ճշմարիտ է ինչպես մարքսիզմ-սոցիալիզմի, այնպես էլ ազատականության/պահպանողականության/կապիտալիզմի համար:

[15] Իհարկե, «ազատություն» հասկացությունը կարող է հանդիսանալ շատ վերացարկված փիլիսոփայական վերլուծության առարկա: Սակայն առկա է նաև շատ կոնկրետ մեկնաբանություն, մասնավորապես կարևոր՝ Միացյալ Նահանգներում. ազատու-

թյունն իբրև սեփականություն և այդ սեփականությունն իբրև ավելի մեծ սեփականություն ստանալու նպատակով օգտագործելու ազատություն:

[16] Տե՛ս՝ Johan Galtung, *'The Basic Needs Approach',* էջ 55-125, K. Lederer (խմբագիր) *Human Needs* (Konigstein: Anton Hain, 1980).

[17] Դրանք են՝ Հյուսիս-Արևմուտք աշխարհ (կապիտալիստ), Հյուսիս-Արևելք աշխարհ (նախկին սոցիալիստական պետություններ), Հարավ-Արևմուտք աշխարհ (Երրորդ Աշխարհ) և Հարավ-Արևելք աշխարհ (Ճապոնիա, Չինաստան և Արևելյան ու Արևելյան Ասիայի այլ պետություններ): Ես նաև օգտակար եմ համարում նրանց անվանել համապատասխանաբար Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ աշխարհներ:

[18] Իբրև այս թեմայի շուրջ հետաքրքիր հետազոտություն, տե՛ս՝ R. N. Batra, *The Downfall of Capitalism and Communism* (London: Macmillan, 1972), հատկապես 8 և 9 գլուխները:

[19] Փաստորեն, սա տիպային օրինակ է, թե ինչպես է տնտեսականությունը փորձում տարակարգել այնպիսի խոշոր, բարդ արտաքին դրսևորումները, ինչպիսիք են խաղաղությունը և զարգացումը՝ դրանք ներկայացնելով ռազմական բյուջեների նվազեցման և տեխնիկական օժանդակության բյուջեները ավելացման տերմիններով: Ընդհանուր առմամբ արտաքին դրսևորումների վերաբերյալ տե՛ս մաս III, գլուխ 3:

[20] Սա, անկասկած, բռնություն է՝ չափազանց հարուստ բազմազանությամբ, որպեսզի այն ներգրավվի ներկա սխեմայում:

[21] Հետևաբար, այդ բոլոր երկրները իբրև կանոն շեղումներ են Միացյալ Նահանգներից: Այս թեմայի որոշ նախնական հետազոտությունը տե՛ս՝ Johan Galtung, *'The United States in Indo-China: the Paradigm for a Generation'*, գլուխ 8, էջեր 219-228, *Essays in Peace Research,* Vol. V (Copenhagen: Ejlers, 1980), իսկ ԱՄՆ-ի վրա տիեզերաբանության ազդեցության վերաբերյալ տե՛ս՝ *The United States Foreign Policy as Manifest Theology* (San Diego, CA: University of California, IDCC, 1987).

[22] Սա Johan Galtung. *There Are Alternatives!* Nottingham: Spokesman, 1984, գլուխ 2.2-ի հիմնական թեման է:

[23] Օրինակ, ինկերի կամ ացտեկների կայսրությունների իմպերիալիզմը Հարավային Ամերիկայում, կամ զուլուսների կայսրությունն Աֆրիկայում այստեղ նշված չեն: Նրանք «բնիկ» չէին հանդիսանում որևէ առումով, բացի Արևմուտքից դուրս գտնվելուց, և հավանաբար կիսում էին Արևմուտք I-ի տիեզերաբանության կողմերի մեծամասնությունը:

[24] Սա անավարտ մի հետազոտության թեմա է, որը որևէ մեկը պետք է իր վրա վերցնի՝ *Հնդկաստանը որպես միջազգային համակարգ,* Եվրոպայի հետ համակարգված համեմատությամբ: Հնդկաստանը բնակչության և տարածքի մոտավորապես նույն չափերով (կամ ոչ այնքան տարբեր) և, միևնույն ժամանակ, ազգությունների նույն քանակությամբ շատ ավելի լավ է գործում *միջ*-ազգային մակարդակով և շատ ավելի վատ *ներ*-ազգայինով: Ե՛վ Հնդկաստանը, և՛ Եվրոպան համապարփակ կրոններ ունեն, և ուրեմն շատ գրավիչ է այդ տարբերություններից մի քանիսը վերագրել հնդուիզմի հանդուրժողականությանը, ի հակադրություն քրիստոնեությանը, որտեղ այլ ուսմունքների վերաբերյալ թեև գոյություն ունի վերաբերմունք, սակայն համակարգի ներսում առկա նաև լայնամասշտաբ կառուցվածքային բռնության հասնող անհանդուրժողականություն: Ես պարտական եմ Կ. Ժ. Միսրային՝ 1971-ին Ջավահարլար Ներուի համալսարանում իբրև հյուրընկալվող պրոֆեսոր մնալուս ընթացքում ինձ՝ այս թեմայով որոշ նախնական աշխատանք կատարելու նպատակով լայն հնարավորություններ ընձեռելու համար:

[25] Նաև այս տեսանկյունից Չինաստանի պատմության գերազանց ներածությունը տե՛ս՝ A Cotterell & D. Morgan, *China, An Integrated Study* (London: Harrap,1975):

[26] Քչերն են այս թեման մշակել այնքան լավ, որքան հանգուցյալ Stein Rokkan, e. g. *'Dimensions of State Formation in Nation-Building: a Possible Paradigm for Research on Variations Within Europe',* Charles Tilly, ed. *The Formation of National States in Europe* (Princeton, NJ: Princeton University Press, 1976) ժողովածուների հավաքածուում, ինչպես նաև իր *'Territories, Centers, and Peripheries: Toward a Geoethnic-Geoeconomic, Geopolitical Model of Differentiation within Western Europe'* in Jean Gotmand ed., *Centre and Peripher, Spatial Variations in Politics* (London: Sage, 1980) գրքում: Ես շատ օգտակար եմ համարում նաև Ճառլ Տիլլիի *'Stein Rokkan's Conceptual Map of Europe'* (Ann Arbor, MI: University of Michigan, 1981) աշխատությունը:

[27] Տե՛ս հնդուիզմի վերաբերյալ գլուխը Huston Smith, *The Religions of Man* (New York: Harper & Row, 1958) աշխատությունում:

[28] Սրբապիղծ գործողությամբ այս կրոնական համայնքին հասցրած վիրավորանքով. երբ հակաահաբեկչական գործողության շրջանակներում Ամրիստրարում 1984-ին գրավվեց Ոսկյա Տաճարը, իրավիճակը միանշանակորեն փոփոխվեց և՝ ամենայն հավանականությամբ սերունդների, եթե ոչ դարերի կտրվածքով: Պատկերացրեք մահմեդականների կողմից ենգադուլ գործողություն Հռոմում, Սուրբ Պետրոսի տաճարում:

[29] Ըստ չինացիների, հնդիկները խախտել էին Մակ Մահոնի վիճելի սահմանագիծը, որը Բրիտանական իմպերիալիզմի հետևանքներից էր, և հին քարտեզագրական գործիքներ էին տեղադրել Հիմալայների դժվար հասանելի մի հատվածում: Երկու կողմերը կատարվածի վերաբերյալ տարբեր տեսակետեր ունեին, և հակա-կոմունիստական Արևմուտքն ամենայն հավանականությամբ ավելի հավատացած էր հնդկական կողմի մեկնաբանություններին, որ չինացիներն անսպասելիորեն գրավել են հնդկական հողերի մի մեծ հատված հյուսիսում և հյուսիս-արևելքում: Պատերազմն ավարտվեց համարյա հենց սկսվելուց հետո: Դրանից ավելի քան 30 տարի հետո երկու կողմերը նստեցին բանակցային սեղանի շուրջ՝ փաստացի վերահսկողության գիծը (LAC) որոշակիացնելու նպատակով և զորքերի տեղակայման հարցերը հստակեցնելու համար և, իբրև առաջին քայլ, համաձայնության եկան սահմանի մասով (*Global Times,* 30 հուլիսի, 1994).

[30] Սա ճշգրիտ այս գաղափարը չէ, սակայն ճապոնացի պատմաբան Սաբիրո Իենագայի ոգեշնչման աղբյուրը պիտի որ վերսկսված բռնության ներուժը լինի՝ իր *The Pacific War 1931-1945* (New York: Random House, 1978) գիրքը գրելու համար, որը շատ օգտակար է այս համատեքստում (մասնավորապես տե՛ս 135-139, 154-155, 188-189 և 200-201 էջերը):

[31] Եվ, այնուամենայնիվ, բոլոր բացահայտ և ոչ բացահայտ բացթողումներով հանդերձ, առկա է արևմտյան քաղաքակրթությունների մեղմ տոնը, որն ակնառու էր, օրինակ, Ֆիլիպինների ոչ-բռնության ակտերում 1986-ին, Միացյալ Նահանգների քաղաքացիական պայքարում և այլն:

4
Հատկորոշումներ՝ հիտլերիզմ, ստալինիզմ, ռեյգանիզմ[1]

4.1 Տևտոնյան մարդ (homo teutonikus) = ծայրահեղ արևմտյան մարդ (homo occidentalis in extremis)

30 հունվարի 1993 թվական, իշխանության զավթում, դարչնագույն ամբողջատիրություն: Խնդիրն այն արմատների նկարագրությունն է, որոնք հասցրեցին այդ օրվան և որոնք գոյություն ունեին 1945 թվականի մայիսի 7-8-ի կապիտուլյացիայից հետո դեռ երկար ժամանակ: Ընդհանուր դրույթը հետևյալն է. գոյություն ունի գերմանական խորքային մի մշակույթ՝ որպես ընդհանուր արևմտյան քաղաքակրթության մաս, բայց որպես դրա ծայրահեղ տարբերակ՝ որպես ծայրահեղ Արևմուտք (*Occident in extremis*): Ընդհանուր առմամբ այն տարբերվում է արևմտյան քաղաքակրթությունից, բայց զգալի չափով նաև դրա շարունակությունն է հանդիսանում. տևտոնյան մարդ = ծայրահեղ արևմտյան մարդ (homo teutonicus = homo occidentalis in extremis): Այնուհետև, կա նաև նացիստական խորքային մշակույթ, որը գերմանական մշակույթի ծայրահեղ տարբերակն է. հիտլերյան մարդ = ծայրահեղ տևտոնյան մարդ (homo hitlerensis = homo teutonicus in extremis): Այսպիսով, նացիզմը դիտվում է իբրև ճյուղի ճյուղ, ամբողջովին դրսում, բայց շարունակում է պատկանել արևմտյան նվաճողական ծառին:

Սա ճշգրտորեն ներկայացնելու համար եկեք տիրույթները դիտարկենք հերթականությամբ և այդ նպատակով սկսենք տարածության (աշխարհի) և ժամանակի վճռորոշ կատեգորիաներով:

Աշխարհ: Գաղութատիրությունը տարածության ընդհանուր արևմտյան հեռանկարի արտահայտությունն է, իսկ գերմանացիներն ուզում էին բաժին ունենալ գաղութատիրության մեջ, սակայն «օվկիանոսից անդին» հաջողություն չունեցան: Գերմանական *մղումը դեպի արևելք (Drang nach Osten)* այդ կերպ դարձավ ընդհանուր առմամբ արևմտյան գաղութատիրության կողմ: Բայց կան երկու գործոններ, որոնք առանձնապես հատկանշում են նացիզմը. *այն ուղղված էր* արևմտյան ցեղախմբի մաս կազմող *սպիտակ մարդկանց դեմ. այն պատմական վերջնեկ էր*, ամենավերջին նախորդներից հետ էր ընկել հիսունից հարյուր, իսկ ամենաառաջին նախորդներից՝ իսպանացիներից ու պորտուգալացիներից, նույնիսկ 400 տարով: Նման պայմաններում հնարավոր չէր նացիզմն արդարացնել նույն կերպ, ինչպես արևմտյան գաղութատիրությունն ընդհանրապես: Անհրաժեշտ էր հորինել նոր արդարացում:

Ռասիզմն ու հեթանոսությունը բավարար հիմք չէին ենթարկեցման ենթակա Ուրիշի կառուցարկման համար: *Շտապ* պետք էր ծնել և կոլեկտիվ ենթագիտակցության մեջ արմատավորել մի նոր՝ հնի վրա հիմնվող գաղափարախոսություն: Նացիզմը փնտրվող պատասխանն էր: Ոգեկոչվեց տեր-ժողովրդի (Herrenvolk) մի տեսություն, որը դիտում էր մյուսներին, նաև սպիտակ Արևմուտքի մարդկանց, իբրև ի ծնե անճարներ, *հպատակներ*, անգամ նույ-

նիսկ որպես վնասատու միջատներ, այնպես որ նրանց կարելի էր զրկել պետական պաշտոններ զբաղեցնելու, հանրային տարածքից օգտվելու, այնուհետև՝ քաղաքացիության, վերջապես իրենց հոգու իրավունքից: Այս ամենը հեշտացնում էր ջնջել-հանգցնելու գործը: Տրամաբանական հետևանքները՝ Վանզեե, Օսվենցիմ:

Ժամանակ. արտասովոր դրամատիզմով լեցուն: Կա գերմանների անցյալի տեսիլքը՝ պտտվելով նորդական դիցաբանության շուրջ, համեմված միջնադարյան գծերով, գերմանների առասպելներով, Վալհալայով, վագներյան միստիկայով: Կան մեղսագործությունն ու Մթին շրջանը, որ առաջացել էր արյան խառնման հետևանքով՝ ռասայական անմաքրությամբ: Կա Փրկիչը, Նա, Որ Տեսնում է՝ Ադոլֆ Հիտլերը, և Սուրբ Գիրքը՝ «*Իմ պայքարը*» *(Mein Kampf)*: Կա ընդլայնողականություն, ինչպես ռասայապես մաքրվելու, այնպես էլ տարածքային իմաստով, որը, վստահաբար, ճգնաժամի է տանում: *Արյուն և հող (Blut und Boden)*, երկուսը միասին՝ որպես Գերմանիայի պատմության հիմնաթեմաներ: Եվ կա խիստ երկփեղկված գալիքի տեսիլք, հար և նման Աստվածաշնչում՝ Հին և Նոր կտակարաններում աչքի տակ առնվածին. կա՛մ լիակատար *մաքրագործություն* կատարյալ, հակասություններից զերծ գոյություն (դրախտ), *կա՛մ* կատարյալ նզովք, ապոկալիպս, ամեն ինչի և ոքի կործանում (դժոխք): Այդպես նացիզմը հատկանշվում է որպես ժամանակի ընդհանուր արևմտյան տիեզերաբանության (ներառյալ դրա վախճանաբանական կողմերը) ուշացած մարմնակերպություն: Այն ծնունդն էր մի պարարտ հողի, որ պատրաստել էին լութերական վախճանաբանությունը և գերմանյան-հայրենաբաղձական հավակնությունները:

Իմացություն: Արևմտյան մտածողության տևտոնական տիպում տեսությունների բուրգերն այնպիսի կարևորություն են ստանում, որ մեծապես վերանում են էմպիրիկ իրականությունից: Մտավորականների կարևորագույն խնդիրը դառնում է շատ փոքրաթիվ աքսիոմներից՝ իդեալական տարբերակում միայն մեկից, դեդուկտիվ դատողություններ անելը: Էութենականությունն (Essentialismus) անխոնջ տիրում է մտավոր (ինտելեկտուալ) ոճին, օրինակների կամ ընդհանրապես էմպիրիկ վերլուծությանը դիմելու անհրաժեշտությունը չտեսնելով:

Այստեղ դարձյալ դժվար չէ տեսնել հիտլերիզմը: Կա ղեկավար սկզբունք՝ մաքուրի և անմաքուրի միջև, մի կողմից արիացիների և մյուս կողմից նախ հրեաների (և *հրեականացման*), այնուհետև «բոլշևիկների», հետո քսակիշխանների՝ պլուտոկրատների միջև հակասությունը: Գերմանացիների ապականվելը գալիս է ոչ միայն հրեաներից, այլ նաև բոլշևիկների ազդեցությունից՝ նախ կոմունիստների, հետո նաև սոցիալ-դեմոկրատների վրա: Հակասությունը, մառիստական հասկացությամբ ասած, «անտագոնիստական» է, այն կարող է միայն բռնությամբ վերացվել:

Այդ ընթացքում այն ծառայում է իմացաբանորեն կարևոր մտավոր գործառույթներին. *այն բացատրում է ամեն ինչ*: Նացիստական տեսությունն այն բանի բացատրությունն է, թե ինչպես ամենայն չարիք սերում է ոչ-արիացիներից և ոչ-արիական տարրերից: Ճիշտ է, բոլոր բոլշևիկներն ու քսակիշխանները (պլուտոկրատները) հրեաներ չէին, բայց նրանց մտածողությունն արիական չէր: Ուրիշը թշնամի է: Այդ թշնամու կերպարը (*das Feindbild*) ոչ միայն հասարակական երկվություն է՝ ճակատագրական հետևանքներով, այլ նաև բարձրագույն հոգևոր սկզբունք, աքսիոմ, որից բխում է ամենայն իմացությունը: *Հիտլերը դառնում է տևտոնյան մտավորական*, մտքերի բուր-

գում վայրիվերման՝ իր էությանը հատուկ ձևով լեզուն հմտորեն գործադրելու ընդունակություն ունեցող մարդ, մտքերի բուրգ, որի գագաթին այն վճռորոշ հակասությունն է, որ բացատրում և լուսաբանում է ինչպես ժամանակակից գերմանական հասարակության չարիքները, այնպես էլ գալիքի խոստումները:

Բնություն: Ընդհանուր արևմտյան տիեզերաբանությունը մարդ էակներին՝ անձանց, հաստատորեն տեղադրում է բնության գլխին: Խորապես մարդակենտրոն ձեռնարկի համար բնությունը գործիք է ծառայում: Բայց այս նմուշում կա մեկ այլ թել ևս՝ գեղեցիկ բնությունը, բնությունը որպես ապաստան, ոչ միայն որպես ռեսուրս: Նացիզմը դիմում էր երկուսին էլ. արդյունաբերականության և ռազմականության (զորավարժություն և պատերազմավարություն) միջոցով բնության լիակատար ավերմանը և բնության պաշտամունքին, *չվող թռչունների* ռոմանտիզմին, լեռների և անտառների՝ բավարական բնախորհրդապաշտության. սա պրուսական պետությունապաշտության հետ այնքան միախառնվեց ամալգամի, որը հետո դարձավ նացիզմ: Եվ սեռականության հմուտ կառավարումը ճամբարներում՝ կանանց որպես բնության բաղկացուցիչների՝ անարատ, անբիծ, արիական ռասայի վերարտադրության սրբագործված ակտում սերմն ընդունող:

Անհատ: Շատ ուժեղ մի գեր-Ես, որը մասամբ (գուցե հիմնականու՞մ) բառացիորեն վերցվել է քրիստոնեությունից, «Ես»-ը դարձնում է բարոյական հեղինակության և ինքնության միջև թույլ մի մարտադաշտ: Գերմանացիները հեշտությամբ են շարժման մեջ դրվում նրանց կողմից, ովքեր հավակնում են բարոյական հեղինակության և օգտագործում են անորոշի մեծ ուժերը:

Հասարակություն: Արևմուտք I-ի ժամանակակից ընդհանուր տիեզերաբանությունն ուղղաձիգ է և անհատապաշտական՝ բոլորի կռիվը բոլորի դեմ՝ հանուն ուղղաձիգ մի ստորակարգությունում սեփական դիրքի ամրապնդման, որը բաղկացած է բազում տարբեր շերտերից, ունի փոքրիշատե բրգաձև դասավորություն՝ քիչ թե շատ լայն և քիչ թե շատ թափանցիկ հիմքով:

4.2 Հիտլերյան մարդ (homo hitlerensis) = ծայրահեղ տևտոնյան մարդ (homo teutonikus in extremis

Նացիզմն էական մի քայլ առաջ է տանում սա: «Ուղղաձիգության» սկզբունքն անհատների հետ շփման մեջ արտահայտվում է որպես սոցիալական դարվինիզմ, որպես ամենահարմարվողների գոյատևում մի ջունգլիում, որը գնալով ավելի ու ավելի քիչ է հիշեցնում մարդկային քաղաքակրթություն և, ի վերջո, դառնում զուտ *ահաբեկչական*: Այս սկզբունքը թույլերի վրա կարգում է ուժեղների, հրեաների վրա՝ արիացիների, կանանց վրա՝ տղամարդկանց, երիտասարդների և ծերերի վրա՝ միջին տարիքի մարդկանց, «ոչ-նորմալների» վրա՝ «նորմալների» տիրապետության իրավունքը, ավելին, պարտավորությունը: Ազգերի միջև դա ստանում է *տիրող ժողովրդի* (Herrenvolk)՝ մնացած բոլորի հանդեպ ռասայական գերազանցության ձև, որը բովանդակում է *տիրող ժողովրդի* ոչ միայն իրավունքը, այլ նաև պարտավորությունը՝ լիարժեքորեն գործադրելու իր գերազանցությունը, ընդհուպ մինչև ամենաներքևում գտնվողների բնաջնջումը, այնպես, ինչպես վնասատու միջատների հետ են վարվում: Պետությունների միջև այն *կենտրոնի և ծայրամասի ծայրահեղ կա-*

պի ձև է ստանում *գերմանական պետությունը դարձնելով տիրող պետություն*: Իսկ պետությունների ներսում այն դրսևորվում է որպես կուսակցական բռնատիրություն:

Վերանիատ: Նացիզմը, որպես առ աստված կապի ծայրահեղ տարբերակ, ուղի է հարթում ընդհանուր գերմանական, ինչպես և տևտոնական մտածողության հասկացման համար: Այն կամրջում է սրբության և աշխարհիկի միջև եղած վիհը: Այն սուրբ է առասպելական և խորհրդապաշտական անցյալի և ապագայի իր կապով և *ֆյուրերին* ու *ֆյուրերյան սկզբունքը* որպես բոլոր սովորական մարդկանցից գերազանց հռչակելով: Ֆյուրերը մոտ է նախախնամությանը. որպես ընդհանրացված կրոնականության արտահայտություն, որպես կամուրջներ գցող մտավոր կերպար, նա քրիստոնյաների համար դյուրին է դարձնում հիմնականում ոչ-քրիստոնյա, ավելին, նույնիսկ հակաքրիստոնյա, նորդական-հեթանոսական նացիզմի ընդունումը:

Բայց սա նշանակում է, որ ֆյուրերն իր ձեռքում ունի մի բան, ինչը տրված չէ և ոչ մի մահկանացուի՝ *կյանքի և մահվան վրա աստվածային վերահսկողությունը*, և դա կիրառելի է ոչ միայն անհատ մարդ էակների, այլ նաև ամբողջական խմբերի, ռասաների, ազգերի, ժողովուրդների վրա: Եվ ոչ միայն դա: Նա ուներ անգամ ոչնչացման *իշխանությունը.* չէ՞ որ նա համայն արարվածի վերջնական ավերողն էր:

Նացիզմի դարաշրջանում դա վերաբերում էր միայն մարդոլորտին (homosphere)՝ մարդկային արարածներին և բնակատեղիներին, մարդկային հասարակություններին: Ֆյուրերը ոչ միայն աստվածա*նման էր*, այլ իսկական աստված էր, որ իրեն աստվածային ուժ էր վերապահում: Ատոմային ռումբի տեխնոլոգիայով նա կկարողանար մեկ քայլ առաջ գնալ՝ մարդկանց ու մարդկանց ստեղծածը կործանելուց անցնելով բնության, կենսոլորտի, քարոլորտի, ջրոլորտի և մթնոլորտի կործանման՝ աստվածաշնչյան *ամայացման* (Verwüstung) ողջ շարանի իրագործման: Եթե նա ատոմային զենք ունենար, ապա, անտարակույս, դա ևս կմտներ ֆյուրերի իրավասությունների շրջանակի մեջ, ֆյուրերի՝ որպես աստծո և հակաաստծո մարմնացման, արարչի գործը չեղյալ անելու լիազորությամբ:

Ոչնչացումն (Vernichtung) ու *ամայացումը (Verwüstung)* կարող են ամփոփվել «*էքստերմինիզմ» (Externimismus)* խորագրի ներքո, որն արտահայտում է մի կողմից վերանձնային ֆյուրերի և մյուս կողմից սովորական մարդ էակի միջև կապը: *Ֆյուրերն* արարչի հետնորդն է, ինքը՝ արարիչ և ավերիչ: Նա լցնում է մահկանացու քրիստոնեական աստծո բացած ճեղքը: Որպեսզի դա սկսի գործել, անհրաժեշտ է առեղծվածային բոլորք՝ մի կողմից *ֆյուրերի* և այլ բարձրավետ ուժերի միջև նույնությանը սահմանակցող կապ, մյուս կողմից, սովորական մարդկանց և *ֆյուրերի* միջև կապ, որը ծայրահեղ նվիրումի ձև է ստանում:

Մենք այստեղ նույնիսկ պատմական հերթագայություն կարող ենք նշմարել. սկսելով հրեականությունից՝ Եհովայի՝ Աստվածային իշխանի գլխավորությամբ, ապա Իսրայելից՝ որպես Ընտրյալ ժողովուրդ, որին ծառայելու են կոչված մյուս ժողովուրդները, քրիստոնեությամբ՝ Հիսուս Քրիստոսով, որ փշրում է Իսրայելի կարգավիճակը որպես Ընտրյալ ժողովրդի, իրեն իսկ հռչակելով Աստվածային իշխան և դեպի Աստված՝ Հայրը տանող միակ ճանապարհ, և գալով իսլամին՝ Մուհամեդով հանդերձ, որ փշրեց Քրիստոսի կարգավիճակը որպես միջնորդի՝ սահմանելով անմիջական կապ Ալլահի և հավատացյալ մուսուլմանի միջև, Մուհամեդն էլ՝ որպես առաջնորդ: Սրան

խիստ սազական է հիտլերիզմը: Կա մենաստվածություն՝ հենց *ֆյուրերի* գլխավորությամբ: Կա ընտրյալ ժողովուրդ՝ վերածնված որպես «*Գերմանիա՝ ամեն ինչից վեր*» (Deutschland über alles), երկրագնդի նվաստ ժողովուրդների կողքին, որ կոչված են ծառայելու Գերմանիային, բացառությամբ նրանց, ովքեր ոչնչանալու կուրս են բռնել: Նացիզմն այս իմաստով պարզապես կրոնական մտածողության արևմտյան ընտանիքի անդամ է՝ ծայրահեղ, բայց այդ ընտանիքի համար ոչ խորթ: Կա Ընտրյալ ժողովուրդ, որը փորձում է կործանել Այլը՝ խաչակրաց արշավանքներով և ներխուժումներով, ինկվիզիցիայով և վհուկների որսով, ջարդերով: Տրամաբանական հետևանքը՝ Վանզեե, Օսվենցիմ:

Երբ նացիզմի այդ բոլոր յոթ կողմերը մի խրձի մեջ են միավորվում, առանձնապես վայրագ մի խառնուրդ է առաջանում: Աշխարհի հարթության կազմակերպվածքի մեջ ներկառուցված նվաճողականությունն արդարացվում է *թշնամու կերպարով*, որը բացատրում է աշխարհի հիմնախնդիրներն ընդհանրապես, իսկ Գերմանիայինը՝ մասնավորապես: Այնուհետև ունենք հեշտությամբ մոբիլիզացվող, հասարակական հարաբերությունների խիստ ուղղաձիգ պատկերով օժտված մի ժողովուրդ, որը կարող է լեգիտիմացնել նույնիսկ էքստերմինիզմը, և մաքրագործման ու աշխարհավերջի վախճանաբանական համոզմունքներով:

Արդյունքը. աստվածների մթնշաղ, երկինք կամ դժոխք, Հազարամյա կայսրություն կամ ոչնչացում, ներառյալ սեփական Ես-ի ոչնչացում: Այս վերջին կետը, որպես նացիզմի առանցքային կողմ, անհնար է բավարար չափով շեշտել: Կա ուրիշը՝ վնասատու միջատներին բնաջնջելու ոչ միայն իրավունք, այլ նաև *պարտավորություն*: Բայց անգամ այդպես հաղթանակը ապահովված չէ: Ուստի և, գոյություն ունի սեփական անձը կամ ավելի շուտ մեր անձերը (հոգնակի, ոչ թե եզակի) զոհաբերելու պարտավորությունը: Եթե հաղթանակը թշնամուն է տրվում, ապա աշխարհն արժան չէ մեր ներկայությանը: Գերմանացիներն իրենց պարտավորությունը չկատարեցին, հետևաբար նրանց կյանքերն արժան չեն ապրելու: *Ժողովուրդը ֆյուրերին* լքեց:

Ինքնազոհողությունը, *զոհողության պատրաստ լինելը* դառնում է ողջ գաղափարախոսության էական կողմերից մեկը: Եթե մեր նպատակներին չհասնենք, թշնամուն բնաջինջ չանենք, նվաճողականությունն իրականություն չդարձնենք, այդ դեպքում կհետևի մեր ինքնազոհումը, և դա՝ ոչ միայն որպես պատերազմավարության տրամաբանության արդյունք: Զոհաբերվեցին ուրիշներ: Բոլոր նրանց, ովքեր նվիրաբերվեցին կործանմանը կամ առնվազն ենթարկեցմանը՝ իբրև *հպատակներ* բոլոր ժամանակների համար, ուսուցանում էին, թե դա պարզապես համապատասխանում է իրենց դժբախտ ճակատագրին: «Խնդիրը բնության օրենքն իրականացնելն է. այդտեղ անձնական ոչինչ չկա», ինչպես էսէսականը կասեր: Բնաջնջումն աստվածահարիր ակտ էր, տիեզերքը կարգի բերելու հարց՝ էսէսական ջոկատներով՝ որպես Նոր կարգի գործիք. աշխարհավերջի իրագործում:

4.3 Մարդ ռուսական/խորհրդային (homo russicus/sovieticus) = ծայրահեղ արևմտյան մարդ (homo occidentalis in extremis)

«Ստալինիզմը» կամ աջ նացիոնալ-բոլշևիզմը, որպես սոցիալական երևույթ, պատմականորեն չի սահմանափակվում այն դարաշրջանով, երբ Ստալինը Խորհրդային Միության անհերքելի առաջնորդն էր, 1925/29-1953թթ.: Սկզբի մասին կարելի է վիճել: Բայց ստալինիզմը չվերջացավ ո՛չ 1953թ. մարտին Ստալինի մահով, ո՛չ էլ 1956թ. փետրվարին Մոսկվայում կուսակցության 20-րդ համագումարում Խրուշչովի հայտնի ճառով՝ Ստալինի մերկացմամբ և այն բանի հաստատմամբ, որ ստալինիզմը խլել է Խորհրդային Միության միլիոնավոր մարդկանց կյանքը: Ստալինի մահից քառասուն տարի անց, թերևս, ինչ-որ տեղ ինչ-որ չափով դեռևս ստալինիզմ կա:

Որո՞նք են ստալինիզմի արմատները: Այս հարցը սահմանումների անհրաժեշտություն ունի և ջանքեր է պահանջում անդրադառնալու ստալինիզմին պատմականորեն, կառուցվածքայնորեն և մշակութապես, որ այն ավելի հասկանալի լինի, նաև այն առումով, թե ինչպես կարելի է այն հսկողության տակ վերցնել, գուցե նաև, վերջը դնել:

Որո՞նք են Խորհրդային Միությունը հասկանալու համար անհրաժեշտ համապատասխան մտավոր միջոցները: Ո՞ր անհրաժեշտ և բավարար գործոնները պետք է նկատի առնենք, եթե կամենում ենք նկարագրել իբրև «մակրոմշակույթ»: Ակներևաբար կան առնվազն երեք գործոններ, որոնք պատկանում են անհրաժեշտ և բավարար պայմանների միջուկին. *ռուսական* տարրը՝ ռուսական պատմության և հասարակական կառուցվածքի որոշ հիմնարար կողմեր ներգրավելու փորձը. *ուղղափառ* տարրը՝ քրիստոնեական աստվածաբանության ճյուղերից մեկի բնութագրման փորձը. և մարքսիզմը՝ այդ առանձնահատուկ գաղափարախոսության որոշ հիմնարար տարրերն ընդհանուր մտածողության մեջ ներառելու փորձը: Ինչպես արդեն Գերմանիայի դեպքում արվեց, մենք կառանձնացնենք այդ արմատների մեջ եղած ընդհանուրները՝ առավել պակաս անցողիկ տարրերը:

Եթե մարքսիզմը որպես առավել անցողիկ տարր դուրս թողնենք, ապա կարող ենք ստանալ ռուսական մարդու (homo russicus) նկարագրությունը. եթե ներառենք մարքսիզմը, ապա կստանանք, նույնպես անցողիկ, խորհրդային մարդու (homo sovieticus) նկարագրությունը: Խորհրդային մարդու հիմքերն առավել համակարգված ձևով լուսաբանելու համար մենք կհամակցենք առաջին երկու հեռանկարները՝ տիեզերաբանության վերլուծության յոթնածալ սխեման այժմ արդեն գործադրելով ռուսական մարդու համար:

Աշխարհ: Ռուսաստանը՝ որպես աշխարհի Արևմտյան կենտրոնի *իրական* միջնակետ, այն վայրը, որտեղ գոյատևել է ճշմարիտ հավատքը՝ հավատարիմ մնալով իր արմատներին, Երրորդ Հռոմի հայրենիքը՝ այն բանից հետո, երբ կործանվեցին Հռոմեական կայսրության նախ առաջին, այնուհետև մյուս մասը: Խոցելի՝ որովհետև հեթանոսներն ու հերետիկոսները և մյուս թշնամիները նրա թուլության փուլերը համարում են հարատև պայման: Նրանք հարձակվում են՝ ընդսմին թերագնահատելով այդ ընդարձակ տարածքների մարդկանց հզոր դիմադրողականությունը: Նրանք շփոթում են աշխարհի իրական կենտրոնն աշխարհի ծայրամասի հետ: Նրանք չեն հասկանում, որ Ռուսաստանը՝ քնած հսկան, իր ժամին է սպասում:

Ժամանակ: Ռուսաստանն սպասում է՝ անհավատալի համբերությամբ և ժամանակային հեռանկարներով, որոնք այնքան մեծածավալ են, որքան նրա աշխարհագրական տարածքը՝ օժանդակություն ստանալով մաքրագործությունից և աշխարհավերջից կազմված զույգից, որ խոստացվել է ուղղափառ քրիստոնեության, ինչպես և ուղղափառ մարքսիզմի կողմից: *Հեղափոխությունը* վերջինների համար առիթ է դառնում՝ կրկին առաջինները դառնալու, ծայրամասի համար՝ նորից դրվելու որպես կենտրոն, նոր դարաշրջանի համար *(novaya vremja)*՝ որ մարդկանց պիտի ուղեկցի այդ տառապյալ, բայց նաև այդքան բերրի ռուսական հողի վրա, որն արժանի է պատմության կողմից ավելի լավ վերաբերմունքի:

Իմացություն: Բայց դա կարող է տեղի ունենալ միայն անցյալից արմատապես խզմամբ՝ այնպես, որ «հեղափոխությունից առաջ/հեղափոխությունից հետո», «կոմունիզմի ժամանակ/կոմունիզմից հետո» արտահայտությունները դառնան դժոխք/դրախտ երկվության ժամանակակից տարբերակներ: Մտածողության առանձնակի երկփեղկված՝ նույնիսկ մանիքեական կառուցվածք կամ, եթե վկայակոչենք սև-սպիտակ/բարի-չար մտածողության այդ տիպի սլավոնական տարբերակը, *բոգոմիլ*: Մարքս/հեգելյան մտածողության թույլ դիալեկտիկական հակվածության ազդեցության ներքո դիալեկտիկան հարմարեցվում էր հասարակական պատմությանը: Բայց այդ միտումը, գիտատեխնիկական հեղափոխությամբ ոգեշնչված, շատ շուտով վերացավ հօգուտ մի տեսակերպի, որի համար խորհրդային հասարակությունն իր բոլոր էական գծերով համարվում էր *վերջնական վիճակ (Endzustand)*՝ առանց ինքնավար ներքին դիալեկտիկայի, որտեղ մնում էր անել ընդամենը չնչին նշանակության ևս մի քանի վիրահատություն՝ արհեստավարական (տեխնոկրատական) ձևով, վերևից ներքև: Դիալեկտիկական մատերիալիզմը դարձավ ոչ-դիալեկտիկական, իսկ «մատերիալիստական» կողմը՝ մի քաղաքակրթության պիտակ, որն անընդհատ ճնշել է մշակութային, այսինքն, իդեալիստական արմատների մասին հիշողությունը: Այդպես ճնշված գիտելիքն ամորձատվել է, դարձել նոր՝ արգասավոր մտքեր ծնելու անկարող: Իսկ խորհրդային հասարակությունը նույնքան կայուն և անփոփոխ դարձավ, որքան ցարական Ռուսաստանը, համենայն դեպս՝ որոշ ժամանակով: Բայց մարքսիստական տեսանկյունն անցողիկ էր, հետևաբար դառնանք *ռուսական մարդուն*:

Բնություն: Այստեղ չկա յուրահատուկ մի բան, ինչն ընդհանրապես բացակայում է արևմտյան մարդու դեպքում: Մարդն ունի իրավունք, իսկ սոցիալիզմի օրոք նաև պարտավորություն՝ օգտագործելու և նույնիսկ ծայրահեղության աստիճանի շահագործելու բնությունը: Ինչպես տևտոնական մտածողության մեջ, այստեղ ևս դա միանում է բնության՝ ռոմանտիկորեն պայծառ պատկերի հետ. ռուսական փարթամ ամառը, կեչիները, փոքրիկ լճակը, ջրի մեջ արտացոլվող ուղղափառ եկեղեցին, սպիտակ, սուրացող ամպերով պատված երկինքը, *ամառանոցները (dacha)*: Հաճելի, կարելի է ասել նույնիսկ կախյալ դարձնող բնություն: Բայց որևէ սիրած առարկա ավերելն ու պղծելն Արևմուտքում նորություն չէ: Խորհրդային մարդիկ այստեղ իրենց լուման ունեն, ինչպես բոլոր արևմուտքցիները (որոշ ուրիշներ նույնպես):

Անհատ: Թույլ գեր-Ես՝ միավորված ուժեղ Ես-ի և ուժեղ ինքնության հետ: Ծնում է անհատապաշտական և զգացմունքային մարդիկ: Խորհրդային կոլեկտիվիզմը ինստիտուցիոնալ էր, չէր հիմնվում ինչ-որ կոլեկտիվ Ես-ի վրա: Կարամազով եղբայրներին ինչ-որ *կոլխոզում* ընդգրկելը երբեք էլ իմաստ չի ունեցել և, անշուշտ, դյուրին չէր: Բայց նրանք գոյատևել են, *կոլխոզները*՝ ոչ:

Հասարակություն: Հիմնական կառուցվածքը նույնն էր, ինչ նախկին ռուսական ֆեոդալիզմի կառուցվածքն իր աղճատված ձևով, վերնաշենքում՝ իրավունքներով, բազիսում՝ պարտավորություններով, այն աստիճանի, որ բազիսում եղած անհատները ունեցվածքի մաս էին, ինչպես անասունները, և վերնների սեփականությունն էին հանդիսանում: Վերջիններս կարող էին առաջիններին կորցնել, անհետ կամ՝ ոչ: Դա վերականգնվում էր խորհրդային հասարակությանը յուրահատուկ քառադասակարգ կառուցվածքում: Բազիսում *գյուղացի/հողագործներն* էին, որոնք սննդամթերքը թեև արտադրում էին բոլորի ապրուստի համար, բայց այնպիսի վատ վերաբերմունքի էին արժանանում, որ, չնայած այն ընդարձակ հողերին, նրանք ի վիճակի չէին կերակրելու բնակչությանը: Նրանց խնդիրը պետության համար այնպիսի չնչին գներով արտադրելն էր, որ բարձրությամբ հաջորդ դասակարգը՝ *բանվորները*, իրենց էժան սննդի հիման վրա վարձատրվեին պետության կողմից դարձյալ նվազագույն ծախսերով:

Այս երկու դասակարգերը միասին կազմում էին բնակչության մեծամասնությունը: Այնուհետև, վերևում գալիս էին ձեռքի աշխատանք չկատարող երկու իրար միախառնված խմբավորումները՝ կուսակցություն-զինվորականություն-ոստիկանություն (ԿԶՈ) համալիրը և բյուրոկրատիա-պետական մարմիններ-մտավորականություն համալիրը (ԲՊՄ): Առաջինները գաղափարախոսություն և հսկողություն, խրախուսում և պատիժ, հատկապես պատիժ արտադրողներն էին: Վերջիններն արտադրում էին պլանավորում, բարիքներ և ծառայություններ: Բայց գլխավերևում կուսակցություն-զինվորականություն-ոստիկանություն համալիրն էր, *տրոյկան*, որը ղեկավարում էր ողջ խորհրդային հասարակությունը:

Վերանիատ: Ուղղափառ Աստվածը դառնում է ուղղափառ պատմություն՝ Մարքսի մեկնաբանությամբ. Աստվածաշունչ դառնում է «Կապիտալը». Հիսուս Քրիստոսը՝ լուսավորիչն ու փրկիչը, կիսվում է «լուսավորիչ» Մարքսի և «փրկիչ» Լենինի միջև, իսկ վերջինս Կարմիր հրապարակի դամբարանում «հարություն առածի» պես պառկած է Սուրբ դագաղում՝ խորհրդանշելով Մոսկվան որպես Ընտրյալ ժողովրդի մայրաքաղաք:

Եկեղեցական պատկանելությունը դառնում է կուսակցական պատկանելություն. դավանափոխությունը մնում է դավանափոխություն. փրկությունը դառնում է հեղափոխություն՝ երկուսն էլ հասկացվելով որպես ենթադրաբար անշրջելի: Մարդկությանը Հավերժական կյանքի հնարավորություն, վերջնագրային շնորհ տալու աստծո մտադրությունը դառնում է պատմության մտադրություն՝ հասարակության վերջնական կամ հավերժական ձևի խոստում: Եկեղեցին կամ քահանաները մեկնում են աստծուն, իսկ կուսակցությունը կամ պաշտոնյաները մեկնում են պատմությունը և բոլորի առջևից ընկած սլանում են ժամանակի միջով այդ հսկայական ալիքի վրա՝ իբրև խոստացված ապագայի խորհրդանիշ: Ինչպես բարձրագույն հոգևորականներն են ներկայացնում *դրախտի* ճոխությունը, այնպես էլ կուսակցական ղեկավարությունն է ներկայացնում կյանքի ճոխությունը դրա աշխարհիկ նմանակում՝ *կոմունիզմում*: Եվ ինչպես ճշմարիտ քրիստոնյաներն են ընտրվում դրախտի համար, այդպես Խորհրդային Միությունն է ընտրվում որպես առաջին պետություն, որ պետք է թևակոխի սոցիալիզմ:

Այսքանը *ռուսական մարդու* և նրա դրացու՝ *խորհրդային մարդու* վերաբերյալ: Իսկ, դրանից զատ, ի՞նչ կարելի է ասել *ստալինյան մարդու* մասին:

4.4 Ստալինյան մարդ (homo stalinensis) = ծայրահեղ ռուսական/խորհրդային մարդ, (homo russicus/soveticus in extremis)

Ստալինիզմն այն բանի ծայրահեղ տարբերակն է, ինչ ներկայացվեց նախորդ մասում: Ստալինի մասին, թերևս, կարելի է ասել, որ նա մի քայլ առաջ տարավ Ռուսաստանի՝ որպես ընտրյալ ժողովրդի, և ռուսական ստեղծագործություն հանդիսացող Խորհրդային Միության՝ որպես ընտրյալ երկրի, գաղափարը: Ընտրյալ, իհարկե, ոչ աստծո կողմից, այլ պատմության՝ որպես սոցիալիզմի հարթություն մտնող առաջին երկիր: «*Սոցիալիզմը մեկ երկրում*»-ը դարձավ նրա մեծ լոզունգը, որը նա հակադրում էր Տրոցկու՝ համաշխարհային սոցիալիստական հեղափոխության կոչին: Ինչպե՞ս կարող էր պատմության ավանգարդ Ռուսաստանը/Խորհրդային Միությունը մնալ ընտրյալ ժողովուրդ/երկիր, եթե մնացած բոլորը նույն ճամփան բռնեին հիմա, հենց այս պահին: Ստալինն ուզում էր, որ առաջին սոցիալիստական երկրի կարգավիճակը մնար ռուսական և խորհրդային մենաշնորհ: Նա ուզում էր համախմբել այդ դիրքը, այնպես, որ նրանք, ովքեր հետո էին գալու (իսկ նա չէր կասկածում, որ շատերն են լինելու), Խորհրդային Միությունը դիտեին որպես սոցիալիզմի հայրենիք՝ Մայր Ռուսիո մեջ արմատներ գցած, և նրան պատշաճ տուրք տային:

Ստալինը մարմնավորեց «ծայրամասը կենտրոն կդառնա» դրույթը: Նա ծագումով Վրաստանից էր, լույս աշխարհ էր եկել աննշան Գորիում, Թբիլիսիից ոչ հեռու, նախկին ճորտ գյուղացու ընտանիքում, բայց Կրեմլում ինքը դարձավ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հայրը: Վերջինը դարձավ առաջինը՝ մանրակերտն այն լայնարձակ երկրազանգվածի, որը նույնպես, վերջինը լինելով, պիտի առաջինը դառնար:

Լենինի ստվերում Ստալինին հարկավոր էր իր սեփական հարությունը (ապոկալիպսը), իր սեփական վերածնունդը: Այդ ամենը նա ստացավ 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում: Թո՛ղ որ վիճելի է այն հարցը, արդյո՞ք Հիտլերը կհարձակվեր, թե ոչ: Կարևոր կետն այն է, թե ինչպես նա օգտվեց իրավիճակից թռիչքով հայտնվելով փրկիչ-հետնորդի դիրքում, ինչպե՞ս նա դարձավ այն անձը, որը պիտի կարողանար ամրացնել այն գործը, որ սկսել էր մեծ փրկիչ Լենինը, ինչպես Պողոսն այդ արեց Հիսուս Քրիստոսի համար:

Նաև Ստալինն էր ջանում խտացնել հեղափոխական գործընթացը սարսափելի անհամբերության պոռթկումով, ոչ միայն փորձելով գործերը որքան հնարավոր է արագ իրենց ավարտին հասցնել, այլ նաև ավելի արագ, քան հնարավոր էր, այնպես, որ ավարտը դարձավ անհնար, և նա ստեղծեց իր սեփական՝ դադար չունեցող ճգնաժամերը: Նա պիտի որ լցված լիներ հսկայական հավատով, թե արշալույսը գալիս է: Անհրաժեշտ էր միայն թողնել, որ մեխանիզմն աշխատի, ազատվի կապանքներից և բացականչող մի ժողովուրդ գլորի, հրի սոցիալիզմի «դրախտը», միևնույն է, արժանի են, թե ոչ, այն բանի գործարկմամբ, ինչը նա ճիշտ մեխանիզմ էր համարում:

Նույնիսկ բնությունն էր ենթարկվում իր հնարավորություններից առավել հարկադրանքի: Գենետիկայից՝ որպես գիտություն, շատ օգուտ չեղավ, և այն ստիպված վերածվեց լիսենկոյան գենետիկայի, որ խոստանում էր, թե ձեռք բերված հատկությունները կարող են ժառանգվել. գոյություն չունեցող բնության ոգեկոչում: Նույնը կատարվում էր հասարակության հետ: Ամենուրեք

արդյունաբերացում: Հանուն հիշատակված նպատակների ոչինչ չպետք է խանգարեր հողագործների/գյուղացիների կանոնակարգմանն ու կազմակերպմանը. ոչ մի անկախ գյուղացիություն, ոչ մի բան, ինչը թեկուզ հեռվից կհիշեցներ կալվածատիրոջ տեսակը: Բոլոր դիմադրություններն ու խոչընդոտներն ամփոփվեցին *կուլակներ* հասկացության տակ՝ բնաջինջ արվելու համար: Նաև ԿՁՈ և ԲՊՄ համակարգերին ոչինչ չպետք է խանգարեր. 1927 թվականի 15-րդ համագումարում ընտրված՝ կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների երկու երրորդը մինչև 1939 թվականը կոտորվեց: Նույնը վերաբերում էր մտավորականությանը. ուղղափառ/հավատարիմ վարք չդրսևորող յուրաքանչյուր ոք պետք է անհետանար, սոցիալական առումով՝ ԳՈՒԼԱԳ-ում և/կամ կենսաբանական առումով՝ սպանությամբ: Ամեն մի դիմադրություն դիմադրություն էր պատմության դեմ որպես այդպիսին. ով մշտապես դիմադրում էր պատմությանը, նա գործում էր ոչ միայն հակապատմականորեն, այլ ապա-պատմականորեն, ապամարդկայնորեն:

Ուրիշ ի՞նչ կերպ: Այդ ինչպե՞ս կարող է նորմալ, առողջ մարդ էակը հակադրվել նոր դարաշրջանին՝ երկրային դրախտին: Ինպե՞ս կարող է նման բան անել որևէ էակ, եթե խոսքը վնասատու միջատի մասին չէ: Մի՞թե այդ դիմադրությունն ինքը նշան չէր, համարյա երաշխիք այն բանի, որ խոսքն այստեղ վնասատու միջատների մասին է, որոնք արժանի են բնաջնջման: Փրկության վերջնական ապահովումը դիմադրության դեմ պայքարի հարց չէր, քո՝ մեր/իմ տեսակետին հակադրվող տեսակետի հարց չէր, այլ ճիշտ տեսակետի՝ ի հակադրություն խելացնորության, հարց: Խելացնորությունը վերջին հաշվով պետք է վերացվի, ինչպես ընդհանրապես ազատվում են կեղտից՝ ոչնչացմամբ, ԳՈՒԼԱԳ-ով կամ քաղաքական հոգեբուժարանով: Բուժումը տևում է այնքան ժամանակ, մինչև ճիշտ կարծիքը յուրացվի:

Այլ մարդկային էակների նկատմամբ այդ ֆաշիստական վերաբերմունքի վերջին քայլը (իսկական ֆաշիզմ՝ ոչ միայն իր զանգվածային բռնությամբ, այլ նաև արդարացված մի տեսակ վերիմացական գաղափարախոսությամբ) փոքր էր՝ *Ստալինը որպես աստված*՝ «անձի պաշտամունքը»: Ստալինը հաստատ իրեն *ամենակարող* էր դարձրել ուրիշների վրա այն սարսափազդու իշխանության շնորհիվ, որ նա ուներ, իսկ մեծ չափով *ամենագետ*՝ մատնիչների իր համակարգի և այն ձևի շնորհիվ, որով ոստիկանությունը հարցաքննում էր սեփական բնակչությանը: Որպես գրեթե ամեն պատի վրա հանդիպող լուսանկար՝ նա *ամենագո* էր: Բայց նա, իհարկե, ձախողվեց մի շատ կարևոր առումով: Աստված գոնե մասամբ ներկայացվում է որպես բարեհաճ, ոչ թե միշտ չարակամ: Նա ներկայացվում է որպես լավը, ոչ միայն վատը բաժանող. նա օգնում է, և ոչ միայն լքում: Պիտի լինեն ազնվամտություն և ողորմություն: Ստալինիզմի դարաշրջանի համար կշեռքի նժարն իջավ չափազանց ներքև բացասական կողմում: Այդ պատճառով էլ նա վերջում մնաց որպես Լենինին մեկնաբանող, որպես աստվածաբան և բյուրոկրատ: Միայն որպես Պողոս, ո՛չ որպես աստված, որպես հետևորդ, ո՛չ որպես գերազանցող: Մինչև ամբողջ խորհրդային համակարգի փլուզմամբ իր աշխարհավերջը գտավ:

4.5 Ամերիկյան մարդ (homo americanus) = ծայրահեղ արևմտյան մարդ (homo occidentalis in extremis)

Ռեյգանիզմի, ինչպես և ամերիկյան արմատականության առավել ընդգրկուն կատեգորիայի ցանկացած վերլուծության համար մեզ անհրաժեշտ է ընդհանրապես ամերիկյան հավատի տիեզերաբանության գործվածքը՝ ամերիկյան մարդու, որ դիտվում է որպես ծայրահեղ արևմտյան մարդ, ապարատը:

Աշխարհի կենտրոնը միանշանակորեն Արևմուտքում է և, հատկապես, Միացյալ Նահանգներում, ինչպես դա, ի բավականություն ամերիկացիների, ապացուցվում է *նոր սկիզբ, նոր ծնունդ* որոնող միլիոնավոր ու միլիոնավոր ներգաղթողների հանգամանքով և ապա հաստատվում նրանով, որ այն, ինչ ամերիկական է, հակված է տարածվելու ամբողջ աշխարհի վրա:

Ժամանակն այստեղ ունի դեպի վեր ուղղված սլաք. առանձնակի կարևորություն չունեցող, հեռու ընկած ինչ-որ գաղութ դառնում է աշխարհի ուժեղագույն տերությունը, թեև այս հաստատումն, անշուշտ, պետք է ձևափոխել այնպիսի փորձառություններից հետո, ինչպես 1950-53թթ. պատային իրավիճակը Կորեայում, 1961-1975թթ. պարտությունը Հնդկաչինում կամ պատանդների հետ կապված իրանյան ճգնաժամը:

Իսկ ինչ վերաբերում է *իմացությանը*, ապա Արևմուտքի միայն շատ սակավաթիվ վայրերում է, թերևս, բացառությամբ նախկին Խորհրդային Միության, գիտությունն ու տեխնիկան և գիտա-տեխնիկական հեղափոխությունն այդպես ամուր արմատացած որպես առաջընթացի՝ միայն մի բուռ մարդկանց կողմից կասկածի տակ առնված հիմք, ինչը ամերիկյան մարդուն այն պատկերացումն է ներշնչում, թե յուրաքանչյուր հիմնախնդրի համար ինչ-որ տեղ որևէ գիտական/տեխնիկական լուծում կա:

Եվ Աստված վեր է մարդկանցից, տղամարդը՝ կնոջից, որոշ տղամարդիկ՝ ուրիշ տղամարդկանցից, որոշ կանայք՝ ուրիշ կանանցից. նրանք բոլորը *բնությունից* վեր են: Հանգամանքների այս դասավորության դեպքում *հասարակությունը* սեռի և դասակարգի, ռասայի և ազգի համակցություն է, որը պատրաստ է պահում որևէ նվաճում և որևէ մրցույթ՝ *ինքնականը* (խառը գեր-Ես, ուժեղ Ես և ուժեղ ինքնություն) տեղադրելու այնտեղ, որտեղ հարկն է: Ամեն ինչ՝ ի պատիվ վերին Աստծո և նրա հետևորդների՝ *պետության*, *շուկայի*, *գիտության* և *ազգի*:

Կարճ ասած, ամերիկյան մարդու դեպքում խոսքը բավականին հաջողակ արևմտյան մարդու մասին է եղել և է՝ ոչ միայն սեփական, այլ նաև ուրիշի աչքերում: Միացյալ Նահանգներ. սկիզբը՝ զրոյից, առաջին ժամանակակից ազգը՝ բաղկացած պլեբեյներից, որ ցեղասպանության միջոցով գրեթե բնաջնջում են Ամերիկայի տեղացի բնակչությունը, ներմուծում մի նոր, սև ներքնախավ՝ որպես ստրուկներ, և կառուցում ստրկատիրական հասարակարգի ու ֆեոդալիզմի մի խառնուրդ՝ գետնի տակից բուսնած նորելուկ ազնվականությունն էլ՝ ղեկավար: Այնուհետև, ցատք դեպի կապիտալիզմ՝ նոր ներգաղթողների երրորդ ներքնաշերտի ամենամյա ներկրմամբ… *Իսկ հետո՞ ինչ*:

Դե՛, աշխարհը փոխվում է: Մենք գործ ունենք երկու կարևոր աշխարհաքաղաքական փաստերի հետ. Միացյալ Նահանգների ներսում ծանրության կենտրոնի տեղափախություն յանկիական հյուսիս-արևմուտքից խառը հարավ-արևմուտք (Տեխասից սկսած՝ դեպի արևմուտք) և միաժամանակ համաշխարհային տնտեսության ծանրության կենտրոնի տեղափոխություն աշխար-

հի հրեական-քրիստոնեական հյուսիս-արևմուտքից բուդդիստական-կոնֆուցիական հարավ-արևելք: Այլ խոսքով, ատլանտյան կիսագնդից դեպի խաղաղօվկիանոսյան կիսագունդ, Միացյալ Նահանգներ-Եվրոպա սպիտակ-սպիտակ հարաբերությունից՝ նշանակալից մշակութային վիհի վրայով դեպի սպիտակ-գունավոր հարաբերություն:

Ռեյգանիզմը միաժամանակ ներկայացնում էր համակարգի այդ փոփոխությունների և այդ երկու փոփոխությունների հանդեպ հակազդեցության արտահայտությունը: Ծանրության կենտրոնների երկու տեղափոխությունները միանգամայն սերտ կապի մեջ են իրար հետ: Հարավ-արևմուտքը, թերևս, հարավն ամբողջությամբ, Միացյալ Նահանգների այն մասն է, որը ներկայացնում է ժամանակակից արդյունաբերությունը և նոր նախաձեռնությունները և որը, հավանաբար, ավելի շատ է ընդունակ մրցակցելու աշխարհի հարավ-արևելքի հետ: Քենեդին, հյուսիս-արևելքի մարմնավորումը, սպանվեց հարավում՝ իրենից հետո ընտրված բոլոր նախագահների՝ Ջոնսոնի, Նիքսոնի, Քարտերի, Ռեյգանի, Բուշի և Քլինթոնի (և Նյութ Ջինգրիչի) հայրենիքում: Բայց Միացյալ Նահանգների հարավ(-արևմուտք)ը միևնույն ժամանակ հակազդող, ինքնահաճ, շարունակ ու շարունակ խաչակրաց արշավանքների ելնող գաղափարախոսությունների և շարժումների օրրանն է: Այժմ դառնանք դրան:

4.6 Ռեյգանյան մարդ (homo reaganensis) = ծայրահեղ ամերիկյան մարդ (homo americanus in extremis)

Ռեյգանիզմի վերլուծության համար կօգտվենք այն նույն վերլուծական շրջանակից, որը վերևում գործածվեց հիտլերիզմի և ստալինիզմի վերլուծության ժամանակ որպես մակրոմշակույթներ: Ռեյգանը դիտվում է ոչ թե իբրև «ռեալիստ», որն ընդամենը կամենում էր «հավատարժան» և «վճռական» երևալ, այլ Միացյալ Նահանգների ուժեղ՝ արմատական, քրիստոնեական կողմի պատճառով, որպես առավել մեծ նշանակության գաղափարախոս: Այդ պատճառով մենք տիեզերաբանությունը կարծարծենք հետադարձ ուղղությամբ և կսկսենք *վերանձնայինով*, ընդամին մեզ հարց տալով, թե ո՞րն է Ռեյգանի կապն աստծո՝ ուղեցույցի, հետ և թե ի՞նչ է նշանակում Ռեյգանը՝ որպես Մեծ հաղորդակցող:

Աստծո ռեյգանյան հասկացությունը կարելի է հասկանալ որպես երրորդություն՝ շուկա, աստված և ժողովրդավարություն, և ճիշտ այս նույն հերթականությամբ: Ավելի ճշգրիտ ասած, դասական իմաստով շուկայական հրապարակի մոգականության նկատմամբ հավատ՝ շուկայական ուժերով, որոնք կարող են «ազատորեն» ծավալվել, այսինքն, այնպես, որ ուժեղը կարողանա տիրել թույլին: Անշուշտ, ազատ առևտրի ուսմունքն առանց սահմանափակման չի կարող երկար գործել: Եթե Ճապոնիայի պես երկիրն ավելի ճարպիկ է, քան Միացյալ Նահանգները, ապա պետք է կատարի «կամավոր ինքնասահմանափակում»: Ազատ առևտուրը պետք է «կառավարվի»: Եթե զարգացող երկրները կարողանում են ավելի էժան արտադրել, որովհետև աշխատուժն էժան է և հումք ճարելը հեշտ, ապա կլինեն ներկրման սակագնային և ոչ-սակագնային սահմանափակումներ: Բացի այդ, շուկայի ուժերը պետք է երկկողմանի գործեն՝ Միացյալ Նահանգների (կորպորացիաների) և ամեն

առանձին երկրի միջև, և հանգեցնեն երկկողմ առևտրային ավելցուկի (կամ գոնե չհանգեցնեն ճեղքվածքի): Եվ նրանք պիտի մասնավոր լինեն, ոչ թե հանրային:

Ռեյգանի աստվածը շատ արմատական աստված է՝ ոչ այնքան հեռու հրեական Եհովայից: Վրեժի և պատժի աստված, որը հայտնվում է համաշխարհային բեմում, ընդսմին որպես գործիք օգտագործելով ամերիկյան զինվորականությունը, և որն ազգային շրջանակներում նկատելի է դառնում մահվան դատավճռում և «Աստված օրհնի քեզ, Ամերիկա»-ում՝ նախագահի ամեն ելույթի վերջում: Հին «հրեա-քրիստոնեական» արտահայտությունը հաճախ է գործածվում: Այն ընդգծում է հրեաների ինտեգրումն ամերիկյան հասարակությունում և երկու հանրույթների միջև կապը, ինչը պատմականորեն, անշուշտ, ճիշտ է: Դրան հակառակ, երբեք չի լսվում «քրիստոնեական-իսլամական»-ից որևէ բան, թեև սա պատմականորեն կարող է առավել կարևոր լինել, որովհետև այդ երկու տարածաշրջաններն իրար շատ ավելի նման են:

Հրեաները և Իսրայել պետությունը կանգնած են ամերիկյան այդ արմատական աստծո կողմում. նույնը չենք կարող պնդել մուսուլմանների, որոնք սովորաբար անվանվում են «մահմեդական մոլեռանդներ», «արմատականներ» կամ «ահաբեկիչներ», ընդհանրապես իսլամի երկրների, և մասնավորապես Իրաքի և Իրանի վերաբերյալ (նույնիսկ այն դեպքում, եթե խոսքն այնտեղ՝ ընդամենը մի քանի մղոն հեռու Աֆղանստանում գտնվող «հերոսական ազատամարտիկների» մասին է): Կարճ ասած, ամբողջ հայեցակարգն ուժեղացնում է արևմտյան ճակատն ընդդեմ իսլամի:

Ռեյգանի աստվածը Հոմեյնիի ալլահին նմանվում է նրանով, որ խիստ նեղ սահմաններ է դնում սեռականությանը: Չնայած քաղաքական տարբերություններին՝ այն տպավորությունն է ստեղծվում, ասես *Ռեյգանն Արևմուտքի պատասխանն է Հոմեյնիին*՝ վրեժին, պատժին, ինչպես նաև սեռականության և հասարակության մեջ կնոջ դիրքի վերաբերյալ խիստ կանոնների ցանկությանը միանգամայն հակված լինելու նմանությամբ:

Ռեյգանիզմում կա նաև առավել մեղմ մի տարր՝ ժողովրդավարության նկատմամբ հավատ, ավելի ճիշտ՝ ընտրությունների և որոշ ժողովրդավարական ծեսերի նկատմամբ հավատ: Ընտրությունները խնդիր չեն: Եթե իսկապես ազատ ընտրություններ են, ապա մարդիկ իրենց ազատ կամքով նախապատվությունը կտան մի հասարակության, որտեղ շուկայի ուժերը հասարակության կարևորագույն ուժերն են: Այլ բառերով ասած՝ տնտեսական ազատությունը հիմնարար ազատությունն է: Եթե այդ մարդիկ այլ վճիռ կայացնեն, ապա նրանք պետք է ենթարկվեն ուղեղի լվացման, «գաղափարախոսների» կողմից «քաղաքականացման», և հարկ կլինի նրանց վերադարձնել ճշմարիտ եկեղեցու գիրկը:

Ահա, կարևորվում են այս գաղափարախոսական-աստվածաբանական նմուշի հետևանքները: Այն աշխարհ հարթության որոշակի ընկալման համար ակնհայտորեն ծանրակշիռ ներառումներ է կատարում ռեյգանիզմում: Ամենակարևոր տարրն, իհարկե, այն է, որ Միացյալ Նահանգներն աստծուն մյուս բոլոր երկրներից ամենամոտն է կանգնած: Այս պատճառով Միացյալ Նահանգները ոչ միայն *իրավունք ունի* գլխավոր դեր խաղալու, այլ *պարտավոր* է դա անելու: Աշխարհի ասպարեզներում Միացյալ Նահանգները հայտնվում է որպես *աստծո սեփական երկիր*: Մետաղադրամներին և թղթադրամներին հստակ դրոշմված է «*Աստված մեր ապավենն է*», ինչի շնորհիվ ստեղծվում է փոխադարձ հարաբերություն:

Դա նշանակում է, որ Միացյալ Նահանգները և իր նախագահը՝ որպես աստծո գործիք, ունեն աստվածանման գծեր ստանալու պարտավորություն: Այդ գծերի մեջ է մտնում ոչ միայն ամենակարող, այլ ամենագո և ամենագետ լինելու պարտականությունը: Ամենագետ լինելու համար երկիրն *ստիպված* է տիեզերքում լրտես-արբանյակներ և ամբողջ աշխարհում լրտեսական կազմակերպություններ պահել, ինչպիսիք են ՀՖԲ-ն (FBI), ԿՀՎ-ն (CIA), ԱԱՎ-ն (NSA) և Հետախուզության ազգային ծառայությունը (National Reconnaissance Office): Ամենակարող լինելու համար երկիրը պարզապես *ստիպված է* գերազանցություն ունենալ բոլոր հնարավոր պատերազմական թատերաբեմերում և բոլոր հնարավոր զինատեսակներում: Ռեյգանի դարաշրջանում այդ ամենի մեջ մի բաց կար՝ միջին հեռահարության ցամաքային հրթիռները Եվրոպայում, 1979-1983թթ. թեման, մինչև աստծո կամքը կատարվեց: Խորհրդային «մենաշնորհը» (գնահատական, որն անուշադրության էր մատնում սեփական, ինչպես նաև Ֆրանսիայի և Միացյալ Թագավորության ծովային և օդային համակարգերը) վերացվեց զրո-զրո լուծմամբ, որպես ընդունելի միակ այլընտրանք, ինչը վերջում այդպես էլ դուրս եկավ:

Այս ամենը կապվում է այն հանգամանքի հետ, որ աստծո միաձույլ ընկալումն իր մեջ ներառում է սատանայի՝ նմանապես միաձույլ հայեցակարգայնացում: Սատանան է, որ մերժում է ռեյգանյան երրորդության բոլոր երեք տարրերը: Խորհրդային Միությունը շուկայի փոխարեն պլանավորում ունեցող երկիր էր, պաշտոնապես աթեիստական և ընդհանուր ընտրություններում ընտրության ազատություն չունեցող բռնապետություն: Դա նշանակում է, որ աշխարհում երկու ծայրահեղ երկիր կար. Խորհրդային Միություն՝ միայն սև և վատ (իր հայտնի ճառերից մեկում Ռեյգանն այն ուղղակի սահմանել է որպես չարի կենտրոն), և Միացյալ Նահանգները, միայն սպիտակ և լավ, ուստի և՝ ընտրված աշխարհի պատմության մեջ հույժ կարևոր, առաջատար դեր խաղալու համար: Բայց դա չէր նշանակում, որ ԱՄՆ-ում նաև չարի տարրեր՝ մարդիկ, որ հավատում էին «մեծ շարժումներին», իսկ աստծուն՝ ոչ, ինչպես նաև ամբողջատիրական, հակաժողովրդական ուժեր չէին կարող լինել: Լայն իմաստով *կոմունիստներն* ամենագո են, ինչպես սատանան:

Թվում է, թե Ռեյգանն ինքը կյանքում երկու կարևոր վնասվածք է ստացել. «կոմունիստներից»՝ դերասանների արհեստակցական միությունում իշխանության ձգտելիս, և, ավելի հաջողակ դառնալուց հետո մեծ կառավարությունից (Big Government), որը, հարկերի ձևով, ուզում էր նրանից խլել փողը: Հավանաբար, Ռեյգանն իրեն և իր կյանքը համարում էր չարի փորձի մարմնացում, փորձ, որն անհրաժեշտ և բավարար էր սատանայի գործերը հասկանալու համար:

Խորհրդային Միությունը որպես «նույնարժեք», որպես «երկու գերտերություններից» մեկը դիտելը կլիներ աստվածանարգություն: Ինչպե՞ս կարող էր չարը հավասարեցվել բարուն: Ավելին, սատանան խաղ է խաղում՝ *դոմինո*: Աշխարհի բոլոր մասերում նա փորձում է տիրանալ երկրների, գործարկել շղթայական ռեակցիաներ, որոնք կարող են հասնել ԱՄՆ, անգամ ավարտվել Վաշինգտոնում, եթե ԱՄՆ-ը բավարար չափով ամենաիմացություն և ամենազորություն չդրսևորի:

Այս չափազանց հստակ հայեցակարգայնացումից բխում է նույնքան հստակ քաղաքականություն: Աշխարհում կա ընդամենը մեկ իրական թշնամի: Ճիշտ նույն կերպ, ինչպես Հիտլերը, Ռեյգանը ևս կարծում էր, որ պետք չէ թշնամու բարդ պատկերով շփոթության մեջ գցել բնակչությանը: «Դա նույն

թշնամին է, որի դեմ-հանդիման կանգնած ենք Գրենադայում և Լիբանանում»,- ասում էր նա, և ոչ թե, ասենք, 1 միլիարդ մահմեդականների և 2 միլիարդ աղքատների կամ 300 միլիոն հարավամերիկացիների դեմ-հանդիման: Ոչ, խոսքը Խորհրդային Միության մասին էր կամ ավելի ստույգ՝ Մոսկվայի, կամ, է՛լ ավելի ստույգ՝ Կրեմլի:

Միացյալ Նահանգների աստվածատուր դերն ամեն ինչ իմանալն է և սատանայի գործերից մարդկանց պաշտպանելու համար պատիժներ նշանակելը՝ այնտեղ, որտեղ դա արդարացված է: Այս դիրքորոշումը նմանվում է այն դիրքորոշմանը, որը կարելի էր հանդիպել խաչակրաց արշավանքների ժամանակ՝ 1095-1291թթ.: Եղել է առնվազն ութ այդպիսի արշավանք, մասամբ հենց աշխարհի այն մասում, որտեղ ակտիվություն էր հանդես բերել նաև Ռեյգանը, իսկ հետո՝ Բուշը. Արևմտյան Ասիայում (Սիրիա, Լիբանան, Պաղեստին, Իրաք): Նաև այն ժամանակ մահմեդականները սատանան էին: Անշուշտ, այս ընթացքում սատանան իր գործունեության տիրույթներն ընդարձակել է, այնպես որ ԱՄՆ-ն ստիպված էր գործել Կարիբյան ծովում (Գրենադա, Կուբա, Պանամա), Կենտրոնական Ամերիկայում (Գվատեմալա, Էլ Սալվադոր, Նիկարագուա), Հյուսիսային Աֆրիկայում (Լիբիա, Չադ) և Պարսից ծոցի տարածաշրջանում (նավթի համար, ու նաև Իրանի և Իրաքի դեմ): Իսկ վա՞ղը:

Սատանան ակտիվ է: Դյուրին չէ աստծո գործիքը լինելը: Շատ փող է պետք, անգամ եթե դրա հետևանքով բյուջեի ճեղքվածք և/կամ մեծ տոկոսներ կամ նույնիսկ տնտեսական ճգնաժամ առաջանան: Այդ տնտեսական փորձանքները ևս սատանայի գործն են, նույնիսկ եթե միջնորդավորված ձևով, ստիպելով բարու ուժերին հարկ եղածից շատ լարվելու:

Այս ամենը շոշափում է ժամանակի հայեցակարգայնացման հարցը: Ռեյգանը երբեք անվերապահ լավատես չի եղել: Որպես աշխարհավերջն ընդունող, նա հավատում էր Արմագեդոնի հնարավորությանը, ի տարբերություն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Միացյալ Նահանգների մյուս նախագահների: Նրանք բոլորը կոմունիզմը չար էին համարում, սակայն, մեկ այլ աղետ՝ է՛լ ավելի վատ, այն է՝ համաշխարհային ատոմային ողջակիզումը:

Ռեյգանիզմի իմացաբանությունը հնարավոր է հասկանալ միայն երրորդության ընկալման լույսի ներքո: Սատանայի դեմ պայքարում զինվորականությանն, անշուշտ, հատկացվում է առաջին և ամենակարևոր դերը՝ աստվածահավասար ուժի կիրառումն ընդհուպ մինչև *ամայացման* (լութերյան Աստվածաշնչի իմաստով) հնարավորությունը՝ բնաջնջում ատոմային զենքով, եթե դրա անհրաժեշտությունն առաջանա:

Աշխարհի այս արմատական ընդհանուր պատկերը՝ աստծով, մարդկանցով և բնությամբ հասկանալու համար, մենք, ըստ էության, պետք է ուսումնասիրենք քրիստոնեական Աստվածաշնչի իմաստով արարումը՝ Ծննդոց գիրքը: Այն միանշանակորեն մատնանշում է քառադասակարգ հասարակություն: Վերևում աստվածն է՝ ամենագետ, ամենագո և ամենակարող: Նա ամեն ինչ հասկացել է և ամեն ինչ արարել: Ներքևում բնությունն է, իսկ մեջտեղում մարդիկ են՝ բաժանված երկու մասի՝ տղամարդիկ և կանայք՝ նրանց տակ: Իսկ ո՞ր տեղում է Ռեյգանն ինքը: Շատ բարձր, վերևում, տղամարդկանց մեջ, որպես առաջինը՝ աշխարհի առաջին ազգի մեջ, այսինքն, շատ մոտ հենց աստծուն: Նա կարծում էր նաև, որ կանայք ավելի շատ բնության մաս են, իսկ տղամարդիկ՝ ավելի աստվածային:

Ինչպես աստված կարող է բնության հետ ըստ ցանկության վարվել, այդ կերպ էլ վարվում էր ռեյգանիզմը, որն իր էությամբ հակաէկոլոգիական էր և դեմ բնապահպաններին: Հասարակությունը կառուցված էր դարվինիզմին համապատասխան, թույլ սոցիալական ցանցում մրցակցություն էր առաջարկում ուժեղ Ես-երի համար: Եթե դա հանգեցներ թշվառության, ապա քրիստոնեական գթությունը պետք է լիներ բուժամիջոցը: Արդյոք այդ համակարգը կգործի, թե ոչ, դա էմպիրիկ հիմնախնդիր չէ: Այդ համակարգը պարզապես ճիշտն է, և դրա արդյունքում ստացվածը նույնպես ճիշտ է, անգամ եթե շատ մարդկանց համար այն անհաճո լինի: Դա նրա՛նց սխալն է, ոչ թե համակարգի: Շա՛տ աշխատիր, և վե՛րջ: Չաշխատես, հիվանդանաս կամ անօթևան մնաս, արժանի ես հետևանքներից բխող տառապանքին:

Այս ամենում որոշակի մի հետևողականություն կա: Ռեյգանիզմը ամերիկյան հիմնարար դոգմաների մշակումն է: Ռեյգանիզմն այդ դոգմաները հարմարեցնում է Միացյալ Նահանգների միջուկայնությանը և տնտեսական խորտակմանը: Ամենակարևորը տնտեսական, հասարակական, քաղաքական և ռազմական գործունեության համար չափորոշիչներն են, և այն բանի ցուցումները, թե աշխարհի հարթությունն ինչպես է կազմակերպված բարու և չարի հասկացություններից, և որ հոլոքոսթի գաղափարը, թերևս, հնարավոր չի լինի շրջանցել և այն ոչ անպայմանորեն է չարյաց վատագույնը: Ամենավերևում «շուկայի մոգականությունը», աստծո ծայրահեղական հայեցակարգայնացումը և ժողովրդավարությունն են:

Ռեյգանն իր նախագահության ժամանակ Միացյալ Նահանգներին փաթաթեց լիակատար ամերիկյան-արմատական մի գաղափարախոսություն: Նա, իհարկե, երբեք չի եղել գաղափարախոս այն իմաստով, որ մտավորական էր, բայց նա գաղափարախոս էր ամերիկյան ժողովրդի համար ճիշտ փոխաբերությունները գործածելու առավել կարևոր իմաստով: Շատ հակամտավորական երկրի ղեկավար գաղափարախոսությունն ինքը պետք է հակամտավորական լինի: Միացյալ Նահանգները մի երկիր է, որտեղ մտավորականները, որոնց մեծ մասը հյուսիսում է ապրում, հասարակական պահեստայինների նստարանին են՝ համալսարանական թաղամաս (Campus) հորջորջվող գետտոյում, և տեղի ունեցածին նայում են երկյուղածությամբ, շփոթահար և որոշ չափով նաև ակնածանքով:

Միացյալ Նահանգները շատ «դեպի դուրս շուռ տված» երկիր է, որտեղ անհատը մեծ ակնածանք ունի մեծամասնության նկատմամբ, գեր-Ես՝ շատերի համար: Բողոքները կարող են ուղղված լինել ոչ թե մեծամասնության, այլ որոշակի մարդկանց կամ անանուն հասարակական ուժերի և կառույցների դեմ, որպեսզի այնուհետև մեծամասնությունը հրավիրվի մասնակցելու պայքարին: Առանձին թեմաներին վերաբերող կարճատև շարժումներին, թերևս, շատ մարդ է մասնակցում, բայց ոչ այնպիսի շարժումներին, որոնք մարտահրավեր են նետում մեծամասնության համոզմունքներին:

Ռեյգանիզմն այդ կառուցվածքի հետ ակնհայտորեն համադրելի է. այն միանշանակ ԱՄՆ-ի կառուցվածքում և մշակույթում արդեն ներկառուցված ուժերի անդամակցումն է հանդիսանում: Ուստի և մոլորություն էր այն ենթադրությունը, թե ռեյգանիզմը կանհետանար այն պահին, երբ Ռեյգանն ինքն անհետանար քաղաքական թատերաբեմից: Ռեյգանիզմը երկու միտումների արմատական արտահայտությունն էր՝ թե՛ խորտակվող կայսրության, թե՛ նոր վերելքի, որն ուրվագծվում էր երկրում տնտեսական և ժողովրդագրական ծանրության կենտրոնի տեղափոխությամբ, որպեսզի այդ խորտակման դեմն

առներ: Այն, ինչ տեղի է ունենում Ամերիկայի հարավ-արևմուտքում, նույնքան նոր է, որքան՝ հում: Դա երկրի ծայրամասի խռովությունն է ընդդեմ վերևում՝ հյուսիս-արևմուտքում գտնվող հին կենտրոնի:

Որպես ծայրամաս՝ ռեյգանիզմի նշանի ներքո մարդիկ մշակեցին արմատական ծայրամասի գաղափարախոսություն՝ բարու և չարի, սպիտակի և սևի շատ չափազանցեցված բացարձակապաշտական կատեգորիաներով և, որպես ղեկավար սկզբունք, առ գերազանցության իշխանության կամքով, ինչի պատճառով մյուս կողմը դիտում են որպես չար, իսկ իրենց՝ որպես կատարյալ կամ, համենայն դեպս, կատարելությանը շատ մոտ: Ռազմական, կորպորատիվ կապիտալիզմի կառուցվածքին՝ (ռազմավարական) հումքի, շուկաների և շահույթի իր ընչաքաղցությամբ, այստեղ հավելվեց գաղափարախոսություն, անգամ աստվածաբանություն տարրը, որն անհաշտ է չարի դեմ իր պայքարում: Եվ Բուշն ու Ջինգրիչը գնացին այդ հետքերով:

Նույնիսկ ամերիկյան հարավ-արևմուտքն ինքը ժամանակի հետ կիրաժարվի այդ տեսակ բացարձակապաշտությունից և կմշակի գաղափարախոսություններ, որոնք առավել հատկանշական են կենտրոնին, ավելի զուսպ, ավելի աստիճանակարգված, ավելի մեղմ ու պակաս ինքնական, բայց անպայմանորեն ջանալով պահպանել պահավիճակը (ստատուս-քվոն): Մինչդեռ ռեյգանիզմը պահավիճակով չի բավարարվում: Ո՛չ թե Միացյալ Նահանգները, այլ աշխարհն, ընդհանրապես, և Միացյալ Նահագները, մասնավորապես, պետք է դառնան իր երրորդության նյութականացումը, կառավարվելով շուկայի ուժերի կողմից, ներշնչվելով հրեական-քրիստոնեական աստծով՝ ժողովրդի կողմից ազատ ընտրություններում հաստատված լեգիտիմացման քողի տակ:

Համեմատեք սա այն բոլոր մյուս քաղաքական չափումների հետ, որ նախորդիվ հիշատակվեցին, շատ մարդկանց զբաղեցնող այնպիսի կատեգորիաների հետ, ինչպիսիք են հակաիմպերիալիզմը, հականեոկապիտալիզմը, սովից և թշվառությունից ազատվելը, սեփական տանը տեր լինելու, ինքնապավեն դառնալու ջանքը, իրավահավասար հասարակություն ստեղծելու փորձը՝ հասարակություն, որտեղ հիմնարար պահանջմունքները, ինքնավարությունը և հավասարությունը նույն դերն են խաղում, ինչպես Ռեյգանի երրորդությունը: Ռեյգանիզմի մեջ դույզն-ինչ բան չկա այդ ամենից: Ընդհակառակը, այդ ամենից սատանայի գործերի հոտ է գալիս, քանզի սատանան էլ է խոսում նման բաներից: Դրա լույսի ներքո ռեյգանիզմը ներկայանում է ոչ միայն որպես անմարդկային, այլ նաև մտավոր տեսանկյունից ավելի շուտ ծիծաղելի, և հենց այդ պատճառով աներևակայելի էր, որ տևական ժամանակ մնալու է տիրապետող գաղափարախոսություն:

Սակայն «ամերիկյան արմատականությունը *(homo americanus fundamentalis = homo americanus in extremis)* ավելի ընդգրկուն կատեգորիա է, քան ռեյգանիզմը և մեծ չափով ներկայացված էր նաև Ռեյգանի հետնորդների կողմից: Այն կմնա որպես քողարկված տիեզերաբանություն և, հավանաբար, վերստին իրեն ցույց կտա ճգնաժամերի ժամանակահատվածներում:

4.7 Ամփոփում. Ի՞նչ կարող ենք անել

Մենք այստեղ զբաղվում ենք խորքային մշակույթով, և ես այն դիտում եմ որպես խաղաղության հետազոտությանը հարակից կարևորագույն բնագավառ:

Ի տարբերություն քաղաքական, ռազմական և տնտեսական իշխանության հիմնախնդիրների, որոնք, գոնե ինչ-որ չափով և թղթի վրա,[2] գործածելի են ներկայանում, խորքային մշակույթի իշխանության հիմնախնդիրներն այդ տեսակին չեն պատկանում: 5-րդ գլուխը կոչված է հետազոտելու այդ հանգամանքը՝ չհավակնելով միանգամից ընդգրկել հիմնախնդրի ողջ ծավալը: [3]

Բայց շատ բան է կախված նրանից, թե ինչ կերպ ենք մոտենում հիմնախնդիրներին: Այդտեղ նախ պետք է ուշադիր լինել, որ խոսքը երեք առանձին տղամարդկանց մասին չէ. սրանք ընդամենը մեկ քողարկված երևույթի մարմնացումներն են: Այստեղ ներկայացված ձևով, օրինակ, ստալինյան մարդը բնորոշում է ոչ թե Ստալինի անձն ու ստալինիզմը որպես որոշակի գաղափարախոսություն, այլ անձի տիպը, որի խորքային մշակույթը երևութացնում է Ստալինին, ինչպես և ստալինիզմը որպես բնական և բնականոն՝ դրանով էլ ակտիվորեն օգնության արժանի:

Երկրորդիվ. խոսքն այն մասին չէ, որ նշված երեքը շարունակ աստված են խաղացել, ծայրահեղ մանիքեական աշխարհիմբռնման կողմնակից էին և սպառնում էին ցեղասպանությամբ կամ իրականացնում այն: Վճռորոշն այն է, որ բոլոր երեքը կարողացել են գործել մշակութային մի միջավայրում, որտեղ նրանց պատկերացումները ոչ միայն ներելի էին համարվում, այլ դիտվում էին քաղաքականապես ճիշտ և ընդունվում էնտուզիազմով:

Բայց երրորդիվ. մենք պետք է բացատրենք «in extremis» բառի նշանակությունը: Անշուշտ, այս գլխում խոսքը Արևմուտք I-ի խորքային մշակույթի ծայրահեղ տարատեսակների արմատական տարբերակների մասին էր: Սակայն, միևնույն ժամանակ, դրանք իրարից այնքան շատ չեն տարբերվում: Արևմուտք I-ի և այստեղ ուսումնասիրված «առավել ծայրահեղ» և «խիստ ծայրահեղ» խորքային վեց մշակույթների հիմնարար տրամաբանությունը նույնական է: Եթե Արևմուտք I-ը բավականին խորն է յուրացված, ապա առավել արմատական ուղղությամբ քայլը նույնիսկ չի էլ նկատվի. այդ քայլը յուրացնելուց հետո, հաջորդը գրեթե աչքի չի ընկնի: Սխալ է պատմության մեջ ծայրահեղականությունը շարունակաբար միայն վատ ժամանակների և չար մարդկանց հետ համընկեցնելը: Իրականում նույն հողը դարձյալ նույն պտուղն է տալու, և դա՝ նորից ու նորից:

Ծանոթագրություններ

[1] Այս գլուխը հիմնվում է իմ «*Hitlerism, Stalinism, Reaganism: Three Variations on a Theme by Orwell*» գրքի վրա (նորվեգերեն հրատարակությունը՝ Օսլո 1984թ., իսպաներեն հրատարակությունը՝ Ալիկանտե 1985թ., գերմաներեն հրատարակությունը՝ Բադեն-Բադեն 1987թ., շուտով լույս կտեսնի անգլերեն վերանայված հրատարակությունը՝ հետևյալ վերնագրով. «*Hitlerism, Stalinism and American Fundamentalism: Dark Variations of Western Civilization*»): Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս այդ գիրքը:

[2] Որպես օրինակ տե՛ս ներածության 1 աղյուսակը: Ի դեպ, չպետք է թերագնահատել թղթի վրա լուծում գտնելու փաստը. սովորաբար ամեն ինչ դրանից է սկսվում:

[3] Ավելի շատ բան կպարունակի իմ *“A Theory of Civilization”* գիրքը, որը շուտով լույս կտեսնի:

5
Հետազննություններ. Կա՞ն, արդյոք, բուժումներ պաթոլոգիական տիեզերաբանությունների համար

5.1 Ներածություն. աշխարհաքաղաքական շրջանակը

Ընթերցողի ուշադրությունն ուզում ենք հրավիրել 5.1 աղյուսակի վրա, որտեղ մեր աշխարհը ներկայացված է յոթ ոլորտների կամ տարածաշրջանների բաժանված տեսքով, որոնցից վեցը ղեկավարվում են քաջ հայտնի հեգեմոնների կողմից: Մեկ այլ կապակցությամբ[1] ես հիմնավորել եմ, թե աշխարհի այդ պատկերը, որպես միջազգային ֆեոդալական համակարգի պատկեր, որքանով է լավ ներածություն հանդիսանում հետսառըպատերազմյան համակարգի՝ *նոր աշխարհակարգի*, համար: Արևմուտք-Արևելք համակարգը երկկողմ էր. մինչդեռ սա բաղկացած է վեց կամ յոթ միմյանց զուգահեռ միաբևեռ համակարգերից՝ իրենց բազմաբևեռ ընդգրկվածությամբ: Հեգեմոնն, անշուշտ, *առաջինն է հավասարների մեջ (primus inter pares)*, հեգեմոնների հեգեմոնն Ամերիկայի Միացյալ Նահանգներն է: Իսկ թիվ 7 տարածաշրջանը՝ արաբա-իսլամական աշխարհը, հեգեմոն չունի: Մի՞թե Իրաքը կամ Սադամ Հուսեյնը փորձում է դառնալ այդպիսին:[2]

Աղյուսակ 5.1. Աշխարհաքաղաքականություն. մշակութային գործոնները յոթաբևեռ աշխարհում

Բևեռները		Ընտրյալությունը	Առասպելները	Վնասվածքները
I.	ԱՄՆ-ի բևեռ	Աստծո կողմից՝ որպես նոր Քանա'ան	Միաբևեռությունը 2-րդ աշխարհամարտից հետո	Վիետնամի համախտանիշ Թեհրանի պատանդները
II.	Եվրամիության բևեռ	Քաղաքակրթության օրրան	Եվրոպան որպես աշխարհի կենտրոն	II աշխարհամարտ Նացիզմ Ֆաշիզմ, կոմունիզմ Կայսրությունների փլուզում ԱՄՆ-ի կրտսեր գործընկեր
III.	Ճապոնիայի բևեռ	*Ամատերասու- Օմիկամիի* կողմից	*դայ-տո-ա*	Խաղաղ օվկիանոսում տանուլ տված պատերազմ Միջուկային հոլոքոսթ
IV.	Մոսկվայի բևեռ	Պատմության կողմից (խաբված)	Երկբևեռություն Ռուսաստան	Երկրորդ աշխարհամարտ Ստալինիզմ Խորհրդային Միության փլուզում

V.	Պեկինի բևեռ	Պարզապես *ընտրյալ է*	Լիակատար ինքնավարություն	Նվաստացում 19-րդ դարի 40-ական թթ. մինչև 20-րդ դարի 40-ական թթ.
VI.	Հնդկաստանի բևեռ	Քաղաքակրթության օրրան	Հինդու *ռաջ* Բրիտանական *ռաջ*	Գաղութատիրություն թերզարգացածություն
VII.	Իսլամի բևեռ	Ալլահի կողմից	Իսլամական անցյալը Արաբական ազգը Օսմանյան կայսրություն	Խաչակրաց արշավանքներ, սիոնիզմ Կոմունիզմ, սպառողականություն, *divide et impera*[i] Ներքին պառակտում

5.1 աղյուսակով կփորձեմ նկարագրել այդ գերտերությունների *շարժառիթները*: Այդ գերտերություններից երեքն ունեն համաշխարհային ընդգրկում (ԱՄՆ, Եվրահամայնք/Եվրամիություն և Ճապոնիա), հաջորդ երեքը՝ ընդամենը տարածաշրջանային (Մոսկվա, Պեկին, Հնդկաստան). նրանցից երեքը քրիստոնեական են, մեկը՝ սինտուիստական, մեկը՝ կոնֆուցիական, մեկը՝ հինդուիստական և մեկը՝ մուսուլմանական: Ընդհանուր առմամբ, առանձին մոտիվացիոն համախտանիշներ, որոնք ներամփոփված են կոլեկտիվ ենթագիտակցության մեջ և այստեղ անվանվում են *տիեզերաբանություն* (ի հակադրություն գիտակցական ժամանակակից գաղափարախոսությունների), իրենց հետևից են տանում մնացած տնտեսական և ռազմական ներուժերը:[3] Այլ բառերով ասած, այստեղ պաշտպանվում է *մշակույթի առաջնայնության* ընդհանուր դրույթը, և ոչ թե տնտեսության առաջնայնության վերաբերյալ մարքսիստական դրույթը, ռազմական առաջնայնության «իրատեսական» դրույթը կամ քաղաքական հաստատությունների վերաբերյալ ազատական դրույթը (ինչպես հայեցակարգայնացված է, օրինակ, ժողովրդավարության և բռնատիրության երկվության մեջ)[4]: Այնուհետև, այս գլխում քաղաքակրթությունները կբնութագրվեն իրենց ընտրյալության, առասպելների և վնասվածքների առումով:[5]

Կրկնենք. տիեզերաբանությունը քաղաքակրթության կողն է, ծրագիրը: Սովորաբար, այն ավելի լավ է ընկալվում դրսից նայողների, քան ներսիների կողմից, որոնց համար տիեզերաբանությանը վերաբերող ամեն ինչ իրենց շրջապատող օդի պես չափից ավելի բնական է և բնականոն՝ բառերով հատուկ արտահայտվելու համար: Քաղաքակրթությունը մակրոմշակույթ է, որ տարածության և ժամանակի մեջ իրար է կամրջում բարձր ոլորտներ, ինչպիսիք արևմտյան քաղաքակրթություններն են՝ իրենց ընդհանուր՝ ատվածաշնչյան *(kitab*[ii]*)* արմատներ ունեցող կրոններով՝ հուդայականություն, քրիստոնեություն, իսլամ: Բայց առավել հետաքրքիր է թվում ընդլայնվող արևմտյան քաղաքակրթության կամ Արևմուտք I-ի (հունա-հռոմեական և արդի շրջան) և կծկվող արևմտյան քաղաքակրթության կամ Արևմուտք II-ի միջև տարբերակումներ անելը, քանի որ այդ տարբերությունն իմաստ ունի բոլոր երեք աբրահամական կրոնների համար՝ իրենց համապատասխան խիստ և մեղմ կողմերի պատճառով: Այնուհետև, մենք առանձնացրել ենք Հինդիկ (հնդկական),

[i] divide et impera (լատ.)- բաժանիր և տիրիր /թարգ./
[ii] kitab (արաբ.)- Գիրք: Օգտագործվում է նաև Աստվածաշնչի համար /թարգ./:

Բուդդիկ (բուդդայական), Սինիկ (չինական) և Նիպպոնիկ (ճապոնական) քաղաքակրթությունները:

Խնդիրն այն է, թե քաղաքակրթությունները միջազգային վարվելակերպի տեսանկյունից ինչպես են ծրագրավորում ազգերին ընդհանուր առմամբ և ազգային առաջնորդներին՝ մասնավորապես: Սա չի նշանակում , թե մյուս կողմերն էական չեն, այլ ընդամենը, որ այս գլխի ծանրության կենտրոնը մշակույթն է: Այս նպատակով ես ընտրել եմ մշակույթի երեք չափում.

- *ընտրյալություն*՝ մի ժողովուրդ լինելու պատկերացումը, որը վերիմացական ուժերի կողմից բոլոր մյուսներից առաջինն է ընտրվել՝ մյուսներին լույս բերելու, դրա համար օժտվել, ավելին, օծվել՝ ստանալով նաև նրանց վրա իշխելու իրավունք *և պարտավորություն*,
- *վնասվածքներ*, հանդիսանալով մի ժողովուրդ, որին մյուսները, գուցե նախանձից, խփել և վիրավորել են, այդ թշնամիները, որ ամենուրեք դարանակալել են և սպասում են նորից հարվածելու առիթին,
- *անցյալ և ապագա փառքի առասպելներ,* մոտիկ և հեռու, համենայնդեպս՝ իրական:

Այլ հետազոտողներ կընդգծեն այլ գործոններ: Բայց կրոնի և որոշակի պատմության մեջ իրենց արմատներն ունեցող այդ երեքը պետք է որ վճռորոշ լինեն՝ որպես յոթ հիմնարար տիեզերաբանական տիրույթների կոնկրետ արտահայտություն:[6] Նրանք միասին կազմում են մի համախտանիշ, որն այստեղ պարզապես անվանվում է «ընտրյալություն-առասպել-վնասվածք» բարդույթ (կրճատ՝ ԸԱՎ) կամ, որ ավելի հիշելի է, *մեծամոլության համախտանիշ (Megalo-Paranoia-Syndrom)*: Ընտրյալ լինելը բոլոր մյուսներից մեծ լինելու կոլեկտիվ զգացումներ է առաջացնում: Այնուհետև, դա ներկառուցվում է փառապանծ, կրկին արարելիք մի անցյալի մեջ, մինչդեռ ներկան շեմին ընկած է մնում փառապանծ անցյալի և փառահեղ ապագայի միջև: Առասպելն ընտրյալության[7] վերիմացական պահի, այն ակնթարթի, երբ աստվածությունն արտաբերեց «*Դու ես իմը*», և երկրիս վրա կոնկրետ ուտոպիայի միջև կամուրջն է: Պատմությունը կարելի է օգտագործել իրեն իսկ վավերական դարձնելու նպատակով. «Քանի որ մենք այս անցյալն ենք ունեցել, մենք պետք է որ ընտրյալ լինենք». ի լրումն այս համոզման՝ «Մենք այս անցյալն ունենք, քանի որ մենք ենք ընտրվել»: Բայց նաև վնասվածքները կարող են օգտագործվել ընտրյալ լինելու պատկերացումը վավերական դարձնելու համար. «Մենք այնքան ենք տառապել, որ այդ տառապանքն առավել խոր նշանակություն պիտի ունենա, որը կբացահայտվի դրական, ավելին՝ փառապանծ ապագայում: Այնուհետև, ապագայի համար սպասվում են նոր վնասվածքներ՝ վախից և ինքնահիրականացող, այդ կերպ իրենց ճշմարտությունն ապացուցող մարգարեացումների բերկրալի կանխարկումներից բաղկացած մի խառնուրդով:[8]

Համախտանիշի երեք անդամները սոցիալական մակարդակում փոխադարձաբար ուժեղացնում են միմյանց և ոչ միայն որպես գաղափարներ: Ուրիշների համար լույս լինելու և նրանց վրա նույնիսկ իշխելու համար ընտրված ժողովուրդները[9] ունենալու են վնասվածքային ապրումների անվերջ մի շարան: Առասպելների համար հումքանյութ մատակարարող սկզբնական հաջող փուլից հետո կսկսվի դիմադրություն և կհանգեցնի վնասվածքների:

Մյուս ժողովուրդները, միգուցե, այդ լույսով և ուրիշների կողմից որակի տեխնիկական ստուգման ենթարկվելով հետաքրքրված չեն և նախընտրում են լինել իրենց սեփական լույսը և իրենց սեփական պատճառը: Նրանք հենց այնպես չեն ընդունի, որ վերիմացական ուժերը պետք է իշխեն ինչ-որ այլ ընտրյալ ժողովուրդների միջոցով, քանի որ իրենք այդ դաշինքի մաս չեն, կամ որովհետև իրենք են ընտրյալ, կամ որովհետև ընտրյալության գաղափարն իրենք լավագույն դեպքում որպես հիվանդություն, վատթարագույն դեպքում որպես իշխանության ռազմավարություն են դիտում:[10]

Ընտրյալ ժողովուրդը կխոռվի. «Աստված իմ, ինչու՞ ինձ լքեցիր», և վնասվածքային ապրումների համար պատճառներ կգտնի ամենուրեք, բացի ընտրյալ լինելու սեփական պատկերացման մեջ: Որ դա՛ կարող է պատճառը լինել, այդ հանգամանքը մի կողմ է դրվում, որովհետև նշանակում է «Մեղքը գցել զոհի վրա»[11]: Հակառակ դեպքում, առանց այդ մխիթարանքի ինչպե՞ս դիմանալ վնասվածքներին: Վերիմացական հեղինակի հետ դրամայում *ոչ-ընտրյալ, նույնիսկ մերժված ժողովուրդ* լինելը մանիքեական տիրույթում նշանակում է ընտրյալության ժխտում: Նման ժողովուրդը երկար չի գոյատևի, որովհետև վնասվածքների համար ունի նախապես պատրաստված բացատրություններ և կանխորոշված կործանման ու անկման ինքնաիրականացող առասպելներ:[12]

ԸԱՎ բարդույթով տառապող ժողովուրդը սովորաբար ունի երկու իրար չհակասող ստանդարտ բացատրություն այն բանի համար, թե ինչու վերիմացական կամքը դեռ չի իրականացել և փառքի ժամը դեռ չի հասել. «Այդտեղ իրենց գործն են անում ուժով հավասար, բայց իրար հակադիր զորությունները»[13], և «Ընտրյալ ժողովուրդը շեղվել է վերիմացական կամքից» և շուտով այդ նեցուկը չի ունենա:[14] Եթե վերիմացական կամքը ուրիշների վրա իշխելն է, ապա դեպի իրավացիություն տանող ճանապարհ վերադառնալը կհանգեցնի առավել մեծ վնասվածքայնության. սա այն արատավոր շրջանն է, որ իրենց համար ստեղծել են հեգեմոնները (և Իսրայելը):[15]

Այստեղ շեշտը դրվում է դրական առասպելներով ու բացասական վնասվածքներով առանձնացող ընտրյալ մարդկանց վրա՝ տալով նրանց իրավունքների և պարտականությունների զգացում: Կոլեկտիվ մեծամոլության ախտորոշումը հիմնվում է ընտրյալության թեորեմի, մեծամոլությանը սնունդ տվող առասպելների և նույն մետաղադրամի «մոլություն» կողմին սնունդ տվող վնասվածքների վրա. այս փոխաբերությունը մատնանշում է երկու կողմերի անբաժանելիությունը: Մեծամոլը միշտ զգույշ է անհարգալիր վերաբերմունքի նշաններից և խուսափում է այն իրավիճակներից, որոնք կարող են ենթգափոխել սեփական մեծության պատրանքները:[16] Մեծամոլը պետք է արդարացում գտնի, թե ինչու է ինքն այդպես հաճախ թշնամանքի առարկա դառնում և թե ինչու իր բացառիկ տաղանդն այդքան քիչ է գնահատվում: Մարդիկ կամ ժողովուրդները, որոնք իրենց տաղանդը գնահատված տեսնելու պահանջ են ներկայացնում, կարող են շատ վտանգավոր լինել:[17]

5.2 Անհատակենտրոն բուժում

Հասարակության կողմից «հոգեկան հիվանդությամբ տառապող» ճանաչված անհատները մեկ ընդհանուր բան ունեն՝ *սոցիալական անիրավունակություն*,

ինչպես դա սահմանվում է այդ հասարակության տիրապետող մշակույթի կողմից: Անիրավունակությունը շեղվածության հասարակայնորեն անընդունելի ձև է, որը դիտվում է որպես ակամա այն իմաստով, որ անհատը կամայական որևէ ակտի միջոցով չի կարող իրավունակ դառնալ: Եթե անիրավունակությունը կամովին է, ապա անհատը դիտվում է իբրև չար, քրեական, որ պետք է պատժվի: Եթե անիրավունակությունը դիտվում է որպես ակամա, ապա անհատը բուժման կարիք ունեցող հիվանդ է:[18] Բայց «կամա-ակամա»-ն գնահատման հարց է, մեր օրերում՝ երբեմն որևէ ժյուրիի վճռի հարց: Հստակ տարբերություն չկա, և երկու հակազդեցություններն իրարից շատ էլ չեն տարբերվում:

Հակազդեցությունների ստանդարտ պահեստարանը մենք ուզում ենք բաժանել *սոցիալական բուժման* (շեղված մարդու սոցիալական կարգավիճակի փոփոխություն), *մարմնական* (*սոմատիկ) բուժման* (շեղված մարդու մարմնի փոփոխություն) և *հոգեբուժման* (շեղված մարդու հոգեկանի փոփոխություն): Ակնհայտ է, որ երեք կատեգորիաներն իրար չեն բացառում. նրանցից յուրաքանչյուրում հակազդեցությունը հետևանքներ է ունենում մյուս երկուսի ասպարեզներում:

Տիպային *սոցիալական բուժումը* կարող է ընդգրկել նաև սպանելը, արտաքսելն ու ինստիտուցիոնալացնելը, այլ կերպ ասած՝ մեկ ֆիզիկական և երկու հասարակական առանձնացում:[19] Բայց, այնուհետև, կա նաև սոցիալական հարաբերության առավել նրբին և մեր պահանջների համար առավել կարևոր վերակազմակերպումը: Մոտեցումներից մեկը շեղվածին այլ շեղվածների հետ սոցիալ-թերապևտիկ մեկ հանրություն խցկելն է, ասենք որևէ վերականգնողական կենտրոնում: Սկզբնական, ինչպես նաև ավանդական հասարակություններից շատերն իրենք են այդ հանդուրժողական բուժիչ հանրությունները: Է՛լ ավելի կարևոր է շեղվածին «աստիճաններով վեր բարձրացնելու» վարվելակերպը, որոշելով, որ նրա շեղվածությունն իրենից ներկայացնում է իրավունակություն առավել բարձր մակարդակում, ինչպես, օրինակ, նրան շամանի հետ նույնացնելը:[20] Ստորակարգությունների գագաթին այլևս մարդկանց հանդիպելու անհրաժեշտություն չկա, այնտեղ միայն խոսքեր են:[21]

Պատկերացնենք մեծամոլ մի անձի՝ մեծամոլ ինչ-որ մշակույթում: Անձը տառապում է մեծամոլությամբ և հետապնդվելու մտագարությամբ. մշակույթի վիճակն էլ նույնը կլինի: Սա բարձր դիրքերի համար բավարար որակավորում չէ, կան որոշ լրացուցիչ պայմաններ: Անձը պետք է խոսի տիեզերաբանության բարբառով, նա իր ձայնը պետք է տա հասարակության ինչպես ընտրյալությանը, այնպես էլ առասպելներին և վնասվածքներին, այն էլ՝ ժողովրդի համար հասկանալի, ընտրյալների համար ընդունելի հասկացություններով, *և իրավունք չունի դույզն իսկ կասկած արտահայտելու այդ համոզմունքների վերաբերյալ*:[22] Նաև եսակենտրոն ձևով սեփական ընտրյալությունից խոսելը դեռ բավական չէ: Անհատական և կոլեկտիվ մեծամոլությունների միջև որևէ ընդունելի կապ պետք է լինի: Անհատը պետք է դիտվի իբրև ընտրյալ ներկայացուցիչ, որի անձնական առասպելներն ու վնասվածքները առաջացել են հանուն հասարակության, որպես համատեղ ճակատագրի անհատական դրսևորումներ կամ արտապատկերումներ: Իդեալական դեպքում անհատը պետք է լինի կոլեկտիվի միկրո-ներկայացուցչություն մակրո-մակարդակում՝ ընդգրկելով անցյալը, ներկան և ապագան:[23] Օնտոգենեզի մեջ պետք է արտացոլվի ֆիլոգենեզը: Սրա համար օրինակ է Հիսուս Քրիստոսը,

նաև Մուհամեդը, բայց և Ադոլֆ Հիտլերը, Իոսիֆ Ստալինը և Ռոնալդ Ռեյգանը:[24]

Մեծամոլության ախտանշաններ ունեցող որևէ հոգեկան հիվանդ կարող է այդ ինքնաներկայացմամբ դիտվել իբրև ուժեղ առաջնորդ, որը նույն աստիճանի վրա կանգնած մարդկանց հետ առօրյա շփման համար թեև պիտանի չէ, բայց իդեալական է նախարարությունների, կորպորացիաների և զինվորականության տեսակի անանձնական, թղթային ուղղորդվածություն ունեցող բյուրոկրատիայի առավել բարձր մակարդակների համար: Այլոց հուզակցելու կարողությունը խիստ ցածր կլինի, և սա դարձյալ հանգում է «սոցիալական անիրավունակության» վերաբերյալ վճռին: Ընդհակառակը, ուղղաձիգ կազմակերպվածքների համար պիտանիությունը կարող է բարձր լինել, մյուսների նկատմամբ (ավելի շուտ տղամարդկանց, քան կանանց հատուկ) աննրբազգացության պատճառով:[25] Որքան ավելի զառիվեր են բյուրոկրատիաները և որքան ավելի խորացած է հոգեկան հիվանդությունը, այնքան ավելի վատթար է իրավիճակը:[26]

Վերոնշյալը կօգնի նացիստական Գերմանիան ավելի լավ հասկանալու համար: Միայն Հիտլերն ու նրա հնարավոր «խելացնորությունը» չեն բացատրում, թե ինչու նա այդքան կողմնակիցներ գտավ: Միայն գերմանական ժողովրդին առնչվող բացատրություններն անտեսում են իրավունակ գործադիրի անհրաժեշտությունը, քանի որ ժողովուրդն ընդունակ չէ տեսականորեն ինքնուրույն կառավարել մեծամոլությունը: Հիստերիկ ամբոխի կամ խաժամուժի պես զանգվածային երևույթները կարճատև դրսևորումներ են:[27] Սոցիալապես անիրավունակ լինելուց շատ հեռու Հիտլերը, ի հեճուկս քաղաքական աննրբանկատության, մասնավոր շրջանակներում չափազանց նրբանկատ էր: Նրա բնավորության հիմնական գծերի էությունն այն էր, որ նա իսկապես հավատում էր իր ասածին և անսպառ էներգիայով էր իրականացնում հիվանդացնող գաղափարախոսությունը:[28] Այն, ինչ նա վերջում էր անում, փսիխոսոմատիկ ախտանիշներ էին, ինչպես յուրաքանչյուրը կաներ նման սթրեսի պայմաններում: Բայց նա, անկասկած, իրեն դիտում էր որպես ընտրյալ, չէ՞ որ նրա անցյալն առլեցուն էր վնասվածքներով և փառքի առասպելներով: Այլ բառերով ասած՝ նրա հոգու պատկերը, մինչ ի նույնականություն, նման էր գերմանական ժողովրդի սոցիալական բնույթին: Այս կետը հաշվի չեն առնում, երբ ասում են, թե Գերմանիայի հեղինակավորները փնտրում էին առաջնորդ, իսկ նա իշխվելիք ժողովուրդ փնտրող հեղինակություն էր: Ավելի շուտ *մեկը մյուսի մեջ տեսավ իրեն.* «Դու և ես նույն տեսակի ենք», նույն *ցեղատեսակի անհատներ*: Գերազանց համապատասխանություն էր:

Գերմանական *Նոր կարգի* այդ համակարգի ծայրամասում ուրվագծեր էր ստանում մի մինի-Հիտլեր՝ նորվեգացի Վիդկուն Քիսլինգը: Նա ուներ իր սեփական լավ զարգացած ԸԱՎ բարդույթը և հավակնում էր *för*er-ի (*ֆյուրեր* նորվեգերեն) կարգավիճակի: Ի տարբերություն Հիտլերի, նա ազատ ընտրություններում երբեք չէր հաղթի, որովհետև նրա ԸԱՎ բարդույթը չէր արտացոլվում նորվեգական տիեզերաբանության մեջ:[29] Եթե Նորվեգիան այլ չափեր ունենար, եթե տասը կամ հարյուր անգամ ավելի մեծ լիներ, ապա, թերևս, նաև երևան հաներ այդ տիեզերաբանությունը և հավանություն տար: Անկախ այն բանից, թե հանգամանքներն ինչ դասավորություն ունեցան, Քիսլինգը բռնապետ էր սխալ սցենարով:

Այժմ եթե անցնենք *մարմնային բուժումներին*, ապա պետք է հիշատակենք դարձելիության՝ այստեղ ներառած գաղափարը: Թերապիայի հնարավորության տեսակետը հակադրվում է ոչ թե շեղվածի, այլ հասարակության բուժման սոցիալ-թերապևտիկ պատկերացմանը, երբ հասարակությունը կա՛մ վանում է շեղվածին, կա՛մ օգտագործում նրա բացառիկ տաղանդները: Իսկ երկրորդ տեսակետը հանգում է կույր անհատապաշտությանը. համատեքստը չի փոփոխվում, այլ՝ լոկ անհատի մարմինը: Սկզբունքորեն հնարավոր է ցանկացած միջամտություն՝ ֆիզիկա-մեխանիկական (լոբոտոմիա), ֆիզիկա-էլեկտրական (էլեկտրահարում), կենսաքիմիական (հանդարտեցում) և այլն և այլն: Որոշակի մի տեսանկյունից այդ միջամտությունները կարելի է բաժանել երկու տեսակների՝ այնպիսիների, որոնք բացահայտ ցավոտ են և այդ պատճառով էլ պատժի տարրեր ունեն, և մյուսների: Եթե թերապևտները սոցիալական կարգին ծառայող հասարակական հսկողության գործիքներ են, ապա մյուս հեղինակությունների նման հակված կլինեն գերադասելու անտարբերությունն ընդվզումից և համապատասխանորեն կազմակերպելու իրենց «բուժումները»: Հուսահատ հիվանդը չլացող նորածնի պես «լավն» է: Լոբոտոմիան ու հանդարտեցումը հանգեցնում են այդ վիճակին. ինչպես և սպանելու, աքսորելու և ազատազրկելու դեպքում է, հիվանդներն ուժասպառ ու պատժված են դառնում: Սակայն հուսահատության դրդող մոտեցումները համարվում են ավելի մարդկային:[30]

Այնուհետև, այս ամենը պետք է համեմատվի *հոգեբուժման* մոտեցումների հետ: Ի տարբերություն մյուս երկուսի, այստեղ մենք դեռ նոր-նոր ենք սկսում, թեև արդեն մեկ հարյուրամյակ է անցել, ինչ Ֆրոյդը բացահայտել է անհատական ենթագիտակցականը: Դպրոցները բազմանում են՝ բազմակարծության լավ նշան է: Նրանք հոգեկան խանգարումները դիտում են որպես քիչ թե շատ հակադարձելի: Որոշ մոտեցումներ անհատակենտրոն են, մյուսներն ունեն ավելի շատ սոցիալ-թերապևտիկ կողմնորոշում՝ ընդհուպ մինչև թերապևտիկ հանրությունները, որ վերևում նշեցի: Մարմնային բուժումը պետք է անհատական լինի, քանի որ մարմինների միջև կապեր չկան. հոգեբուժությունն ազատ է այդ ենթադրությամբ պարտադրվելուց:[31]

Այստեղ շեշտը դրվում է անհատակենտրոն հոգեբուժության վրա: Գոյություն ունի ընդհանուր *պարադիգմ I*, որը մտնում է այս մոտեցման մեջ և խիստ կարևորվում է այն խնդրի համար, որ ձևակերպված է այս գլխի վերնագրում՝ փոխադարձաբար իրար շերտածածկող, բայց ցայտուն արտահայտված անհրաժեշտ փուլերով մի գործընթաց:[32]

Փուլ 1.	Անհատը գիտակցում և ընդունում է, որ ինքը *ճգնաժամի* մեջ է:
Փուլ 2.	Անհատն ընդունում է, որ ճգնաժամը նախածրագրավորված է իր մեջ:
Փուլ 3.	Անհատն ընդունում է, որ իրավասու ուրիշների կարիքն ունի:
Փուլ 4.	Անհատը համաձայն է մտնել հիվանդ-բուժող հարաբերության մեջ:
Փուլ 5.	Հիվանդի և բուժողի համագործակցություն՝ թաքնված ծրագիրը բացահայտելիս:

Փուլ 6. Հիվանդի և բուժողի համագործակցություն՝ ինքնության ծրագիրը փոխելիս:

Փուլ 7. Հիվանդը *Նորից Ծնվում* է՝ նոր ինքնությամբ *(մաքրագործում)*:

Այս պարադիգմի և հուդայա-քրիստոնեական հոգեկան կերտվածքի միջև ակնհայտ միաձևություն կա: Ճգնաժամը մեղքն է: Նախաձրագրավորումը նշանակում է աստծո ուրացում ժամանակի որոշակի մի պահի, կամ նույնիսկ սեփական անձի հանձնում սատանային, կամ, ավելի հիմնային՝ *մեղսագործություն*: Իրավունակ ուրիշը Հիսուս Քրիստոսն է, իսկ նրա հետ կապի մեջ մտնելու համաձայնությունը՝ Աստծո հետ միավորվելու, այսինքն, փրկության/մաքրման անհրաժեշտ պայմանը:[33] Կաթոլիկ քրիստոնեությունը կավելացներ եկեղեցին որպես Գերագույն Փրկչի հետ կապ ստեղծելու անհրաժեշտ պայման. *եկեղեցուց դուրս փրկություն չկա (extra ecclesiam nulla salus)*: Գործված մեղքի հետևում առկա ուժերը պետք է բացահայտվեն, խոստովանվեն և զղջման, ապաշխարանքի և ենթարկման միջոցով քշվեն: Պետք է թողություն խնդրել և ընդունել նոր առաջնորդություն, ինչը նշանակում է վերածնունդ Քրիստոսի *մեջ՝ կատարսիս*: Եթե դա տեղի չունենա, ապա կհետևի հավերժական նզովքի *ապոկալիպսը*:

Զարմանալի չէ, որ հոգեվերլուծությունը դիմադրությունների հանդիպեց: Քրիստոնեական պարադիգմն աշխարհիկացվել է՝ անհատական հոգեվերլուծողը հանդես է գալիս քահանայի դերում, իսկ Ֆրոյդը՝ Քրիստոսի՝ օժտված աստվածանման գծերով: Եվ երկրի վրա վերածնման խոստում:

Հուդայա-քրիստոնեականությամբ ներշնչված *պարադիգմ* I-ի հետ համեմատվում է ավելի շուտ բուդդայական կողմնորոշվածություն ունեցող *պարադիգմ* II-ը:

Առաջին, այստեղ կա *գիտակցության ձևավորման* կամ, եթե ասենք մի հասկացությամբ, որ Պաուլո Ֆրեյրին տարածեց[34], *գիտակցականացման* մի տարր: Ենթագիտակցության մեջ իմացվածը, որը գիտակցության մեջ չիմացված է, գիտակցության մեջ դառնում է իմացված, առկա և բաց, այնպես, որ այն կարելի է ընդունել կամ պայքարել դրա դեմ: Ընդհանուր բանաձևը կլիներ հետևյալը. ինքնաճանաչում՝ *մեդիտացիայի* միջոցով:

Երկրորդ, կա մոբիլիզացման տարր, երբ գնալով անհատական Ես-ն ավելի է գիտակցվում: Հավատ կա, որ Ես-ն ընդունակ է *ներքին երկխոսության* նպատակով ստեղծել իր սեփական Ուրիշները, ընդ որում, այդ ներքին ուրիշը կարող է լինել, օրինակ, գեր-Ես-ը կամ ինքնությունը: Սա դիտարկման մի ձև է, որը կհամակերպվեր միջնադարյան կամ բողոքական ինչ-որ քրիստոնեության հետ: Արտաքին ուրիշի դեպքում պետք է տարբերություն լինի առավել բարձր Ուրիշի և նույն մակարդակում գտնվող Ուրիշի միջև: Արևմուտք I-ի քրիստոնեությունը աստծուն ընկալում է ավելի շուտ որպես վերիմացական և վերևում գտնվող, քան ներիմացական և ներքուստ գործող: Մարդկային էակներին վերևից առաջնորդելու պահանջմունքը դասական հոգեվերլուծության մեջ արտացոլվում է նրանով, որ պնդում է այդ ուրիշին ուղղություններ տվող հոգեվերլուծողի անհրաժեշտությունը, ի տարբերություն հիվանդակենտրոն, ինքնաուղղորդիչ բուժման և հումանիստ հոգեբանության:[35] Պարադիգմ II-ը չի պահանջում ոչ առաջինը, ոչ մյուսը, բայց ողջունում է *նույն վիճակում գտնվող ուրիշների հետ երկխոսությունը*:

Երրորդ, գոյություն ունի *առճակատման* տարր՝ այն չգիտակցված ուժերին մարտահրավեր նետելը, որոնք խթանել են Ես-ը: Դրա համար որպես օրինակ է բերվում որոշակի ճգնաժամը: Չորրորդ, գոյություն ունի *պայքարը՝* նախկին Ես-ից ազատվելու և նոր Ես-ի միաժամանակյա ստեղծման դիալեկտիկան: Եվ դա, հինգերորդ, ավարտվում է մոկշայով, satori-ով, ինքնապավինմամբ, կրկին ծնվելով, նոր սկիզբով, որ, քողարկված կոդերի կողմից ուղղորդվելու փոխարեն, գիտակցված ինքնապատճառականացման ընդունակ է դարձնում:

Պարադիգմ II-ը մեծ նմանություն է հանդես բերում հեղափոխական պայքարի պարադիգմի հետ՝ նույնպես ներքևից, ուղղված կառուցվածքային բռնության հաղթահարմանը:[36] Այս դեպքում գիտակցականացումը վերաբերում է ոչ թե *անձի* խորին շերտերում թաքնված ներքին ուժերի, այլ *հասարակության* խորին շերտերում թաքնված ուժերի հասկացմանը: Երկու դեպքում էլ *կառուցվածք* բառն օգտակար է. անձն ունի կառուցվածք, նույնը՝ նաև հասարակությունը: Կառուցվածքը կարող է բռնություն պատճառել մարդ էակներին (մարմնին, հոգուն, ոգուն) ոչ միայն հասարակության *մեջ*, այլ նաև անձի *մեջ*: Եվ այստեղ, այնուհետև, հաջորդում է այն հարցը, թե, գուցե, կառուցվածքային բռնություն կա յուրաքանչյուր անձի մեջ միայն այն պատճառով, որ խոսքն անձի մասին է, և յուրաքանչյուր հասարակության մեջ՝ միայն այն պատճառով, որ խոսքը հասարակության մասին է: Պատասխանը կարող է ի հայտ բերել թե՛ ներքին, թե՛ արտաքին խաղաղության սահմանները:[37]

Այժմ կարելի է կառուցել պաթոլոգիական տիեզերաբանության հիմնախնդրի հետ կապը: Այս դեպքում պաթոլոգիայի արմատները ո՛չ անձի կառուցվածքում են, ո՛չ էլ հասարակության կառուցվածքում, այլ՝ այդ երկուսում: Նման տարրեր կան թե՛ վերնախավերի անդամների (եթե Մարքսին վերաձևակերպենք, ապա՝ «իշխող տիեզերաբանությունն իշխող դասակարգի տիեզերաբանությունն է»), թե՛ հասարակության այլ անդամների ենթագիտակցության մեջ *և* այդ հասարակության խորքային կառուցվածքում. հիշենք ԸԱՎ համախտանիշը: Տիեզերաբանության հասկացությունն այդ մշակույթի կառուցվածքը կապում է անձերի կառուցվածքի հետ նրանով, որ մշակույթի՝ որպես տիեզերաբանության կրողի, առավել խորքային կողմերն ինստիտուցիոնալացվում են[38] հասարակությունում և անհատների կողմից յուրացվում որպես այն բանի ենթադրություններ, թե ինչն է բնականոն ու բնական: Այլ բառերով ասած՝ *համատեղ կոլեկտիվ ենթագիտակցությունը*: Կոլեկտիվ մեծամոլության՝ ինչպես հասարակությունում, այնպես էլ անձանց մեջ բույն դնելու երկշերտ էությունը խիստ դժվարացնում է թերապիան՝ բուժումը:

5.3 Արդյո՞ք անհատական մակարդակից սերող պարադիգմները կիրառելի են կոլեկտիվների համար

Հենց ամենասկզբից կարող ենք մերժել երկու մոտեցում՝ ավտոմատ կիրառումն և ավտոմատ չկիրառումը: Եկեք քայլ առ քայլ առաջ շարժվենք և վերևում ներկայացված բուժման մոտեցումների տիպաբանությունը կիրառենք կոլեկտիվների, հատկապես ազգերի և նրանց հարաբերությունների, այլ կերպ ասած՝ միջազգային հարաբերությունների վրա:

Սոցիոթերապիաներ. Այստեղ դժվարություն չկա սկզբունքների փոխադրության ժամանակ, և նրա բռնադատ էությունը նույնիսկ ավելի պարզորոշ է դառնում, երբ դրանք մեկնաբանվում են որպես միջազգային հարաբերություններ: Ի՞նչն էր նացիզմի կողմից եվրոպական հրեաների բնաջնջման պատճառը: Ոչ թե հրեաների և մյուս գերմանացիների միջև ինչ-որ տնտեսական կամ մշակութային բախման մանրուքը, այլ այն պատկերացումը, որ գերմանական հողում տարածք կա միայն մեկ ընտրյալ ժողովրդի՝ արիացիների համար: Հիտլերը հրեաներին համեմատում էր միկրոօրգանիզմների հետ[39] և կիրառում «փնտրիր և ոչնչացրու» ռազմավարությունը, որը հայտնի է ոչ միայն վարակիչ հիվանդությունների «արմատախիլ անելու» գործողությունից, այլ նաև Հնդկաչինում «կոմունիզմի» հետ ԱՄՆ-ի վարվելակերպից: Յուրաքանչյուր առանձին հրեա դիտվում էր որպես ոչ-արիական ընտրյալության հիվանդության տարածիչ և այդ պատճառով պետք է վերացվեր: Այդ գործընթացը նմանվում է (իսպանական) ինկվիզիցիայի փորձին՝[40] վերացնել հերետիկոսությունը՝ բնաջնջելով հերետիկոսներին, անգամ այն դեպքում, եթե նրանք երդմամբ հրաժարվում էին իրենց հավատից:[41]

Սակայն Հիտլերը, ինկվիզիցիայի պես, օգտվում էր նաև աքսորումից և ազատազրկումից: Բնաջնջումը Գերմանիան և օկուպացված Եվրոպան *հրեաներից մաքրելու* նպատակին հասնելու միջոց էր. աշխարհը հետաքրքրում էր միայն երկրորդ հերթին: Աքսորը հնարավոր այլընտրանք էր, որով նացիստները փող էին վաստակում,[42] լուծում, որն ակնհայտ ձեռնտու էր պոտենցիալ զոհերին, եթե դրա հնարավորությունն ունեին (այստեղ, սովորականի պես, դեր է խաղում դասակարգային պատկանելիությունը): Եվ բանտն օգտագործվում էր (ոչ անպայման պատժից առաջ) ինչպես մի ընտրյալ անձի կողմից՝ մեկ ուրիշին, այնպես էլ ընտրյալ ժողովրդի կողմից այլ ժողովրդի վերացնելու միջոց:

Հիտլերը չէր ընդունում մարգինալիզացված հանրությունները, որտեղ հավաքված էին հրեաները և իրենց սահմանազատումը բնականոն էին համարում, այլ կերպ ասած՝ *գետտոների* համակարգը, որ գործածվում էր 16-րդ դարի սկզբներից. նա չէր ընդունում նաև հասարակություններում հրեաների ձուլման հանդուրժողականությունը, 19-րդ դարից եկող ազատական մոտեցումը և, անշուշտ, չէր ընդունում նրանց ղեկավար դիրքերի թույլատրելու պատրաստակամությունը: Հետագայում դա պիտի դառնար ԱՄՆ-ի մոտեցումը, որի մեկնությունը հնչում էր այսպես. վաղ շրջանի Միացյալ Նահանգները հրեաների ընտրյալությունը դիտում էր որպես իր սեփական հասարակության կառուցվածքի նախատիպ, որպես *raison d'être*[i]:[43] Ժխտողականության և հակասեմիտիզմի նախնական փուլից հետո, հրեաներն այժմ մեծապես կիրառվում են իբրև այդ նախատիպի առաջատար ներկայացուցիչներ:[44] Բայց այստեղ կա որոշ երկփեղկվածություն, և հենց՝ հրեաների մտավոր փայլունության և ամերիկյան հակաինտելեկտուալիզմի բարձր մակարդակի առումով, հակաինտելեկտուալիզմ, որը մտավորականներին դիտում է որպես մարդիկ, որ իրենք են իրենց ընտրյալ համարում, ընդ որում, նրանց շեղումը ոգեղեն է («ցնդածներ»), իսկ գետտոն՝ համալսարանական թաղամասը:[45]

[i] raison d'être (ֆր.)- գոյության հիմք /թարգ./

Եթե մի կողմ թողնենք Հոլոքոսթի օրինակը, ապա մարգինալացված ազգերը որպես *ցածրագույն կաստաներ* սահմանելու և դիվանագիտական ու տնտեսական պատժամիջոցներով (սոցիալիստական երկրների, Հարավային Աֆրիկայի, Նիկարագուայի, Կուբայի, Իրան-Լիբիա-Սիրիա եռանկյան, Իրաքի, Իսրայելի, Սերբիայի նկատմամբ. երկրներ՝ բոլորը ծաղկած ԸԱՎ բարդույթներով) մեկուսացնելու համար գործածվում է աքսորը, անգամ՝ ազատազրկումը: Նրանք պետք է խորհեն իրենց վերադարձի թույլտվության պայմանների շուրջ: Իսկապես, նրանցից հինգի մոտ շրջադարձ կատարվեց:[46]

Իսկ ինչպիսի՞ն է բանը «աստիճաններով վեր հանել»-ու դեպքում: Արևմտյան երկրները հենց դա են անում ԱՄՆ-ի հետ (*Դու մեր առաջնորդն ես*), ի դեմս ԱՄՆ-ի տեսնելով իրենց ծայրահեղացված տարբերակը (*in extremis*), իրենց սեփական ներքին տենչանքների առավել զորեղ արտահայտությունը:[47] Արդյո՞ք նացիստական Գերմանիան նույն հավանությանը կարժանանար, եթե իր բռնությունը կիրառեր (Արևմտյան) Եվրոպայի սահմաններից դուրս և պահեր պառլամենտարիզմը:[48]

Մարմնային բուժում: ԱՄՆ-ի ղեկավարած հակահիրաքյան կոալիցիան իրենից ներկայացնում էր լոբոտոմիայի և էլեկտրահարման մի համադրություն, մի կողմից իրաքյան հասարակության C[3]I ֆունկցիաները՝ ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական, անջատելու, մյուս կողմից չարը քշելու, իրաքցիներին զսպելու, անհատական և ընդհանուր կանխարգելման նպատակներով՝ իբրև նրանց պատժելու և Քուվեյթից դուրս վռնդելու փորձ: Երկար ցուցակ,[49] որ պահանջում էր մոտեցումների հարուստ սպեկտր: Զսպման մոտեցումը կհամապատասխաներ հեռուստատեսություն և սպառողական հասարակություն ներմուծելուն՝ մարդկանց պասիվ կամ նույնիսկ հուսահատ դարձնելու համար՝ շրջված դեպի ներս, զբաղված սեփական նյութական բարեկեցությամբ, և ոչ թե սեփական պատկերացումներով առաջացրած հասարակական շրջադարձով: Պետք է սպասել, որ լոբոտոմիային կամ էլեկտրահարմանը կհետևի զսպումը, ինչպես Գրենադայում և Պանամայում:[50]

Հոգեբուժություններ: Այստեղ կիրառելիությունն սկսում է չգործել: Որովհետև ԸԱՎ-ով ծանր հիվանդ ազգերի վրա I և II պարադիգմերը կարող են կիրառվել միայն այն դեպքում, եթե նրանք պատրաստ են *ենթարկվելու* օտարի կողմից որոշարկված բուժման (I) կամ *ձեռնարկելու* սեփական որոշարկմամբ բուժում (II): Ցցուն տարբերությունն ակնհայտ է՝ իշխանության հարաբերությունը: Հասարակությունը, որպես ամբողջություն, կարող է, պատկերավոր ասած, գործ ունենալ մեծամոլների մի փոքրամասնության հետ, մինչդեռ միջազգային հանրությանը դա կարող է հաջողվել միայն այն դեպքում, քանի դեռ շեղված ազգը փոքր է և համեմատաբար մեկուսացած, բայց ոչ՝ եթե այդ շեղվածին մեծ տարածաշրջանային կամ համաշխարհային տերության կարգավիճակ է տվել՝ այնպես, որ նա մյուսների նկատմամբ ուժային գերիշխանություն ունի: Այդ պահին առավել հավանական է, որ նա կընտրվի առաջնորդ, որի ընտրյալ ուժերը հաջողությամբ կճնշեն յուրաքանչյուր փոփոխություն:

Սա չի նշանակում, որ այստեղ մենք իրավունք ունենք «իրատեսական» թյուր եզրահանգման հիման վրա որդեգրել միայն հարկադրանք կիրառող բուժումներ: Խնդիրն այն է, որ Ընտրյալ ժողովուրդը միայն Ամենակարողին է ընդունում որպես հեղինակություն: Միայն նրա հրամանը կարող է առաջ

բերել բուժման ենթարկվելու պատրաստակամություն: Բայց հանուն համատեղ արժեքների հաջողության դեպքում խրախուսում խոստացող բուժման հնարավորությունը, հավանաբար, մնում է:[51]

Այդուհանդերձ, պատկերացնենք պարադիգմ I-ին համապատասխան բուժման ենթարկվելու պատրաստ մի ազգ: Առաջին պայմանը կլիներ, որ մարդիկ համատեղ ընկալեին մասամբ սեփական ձեռքերով սարքած «խնդիրների մեջ խճճվելու», նույնիսկ՝ ճգնաժամերի միտումը: Հարցն այն է, թե ի՞նչ ձևով դա կարող է հնարավոր լինել: Հավանաբար, անհատներից շատերի ենթագիտակցության մեջ համեմատելի մի ոխակալություն կա, այնպես որ մերժվեն ոչ միայն տարածված և արտահայտված գաղափարախոսությունները, այլ նաև քողարկված տիեզերաբանական ենթադրությունները: Դժկամության զուգահեռ դրսևորումները կարող են նույնիսկ գիտակցաբար բաժանվել: Բայց դա, ամենաշատը, հասարակությունում կհանգեցներ քայքայիչ, հակադիր տիեզերաբանությամբ ենթամշակույթների ձևավորմանը, որ հետզհետե կստանար փոխակերպիչ ներուժ ունեցող գաղափարախոսության կերպարանք, ինչպես, ասենք, բանվոր դասակարգի սոցիալիզմը կամ իգական սեռի ֆեմինիզմը կամ հանուն խաղաղության շարժումը: Բայց այստեղ մենք ուզում ենք զբաղվել ոչ թե այլ իշխանական խմբերով, այլընտրանքային գաղափարախոսությամբ կամ տիեզերաբանությամբ, այլ տիրապետող տիեզերաբանության փոխակերպմամբ:

Դա անելու տեսական բանալին պարզ է այնքան, որքան բարդ է այն գործնականում իրագործելը: Եթե առաջնորդող գաղափարախոսությունը առաջնորդող դասակարգի տիեզերաբանությունն է, ապա առաջնորդող փոխակերպումը պետք է գա առաջնորդող դասակարգից, մասնավորապես, Առաջնորդ*ից*՝ նախ և առաջ դառնալով *առաջնորդի փոխակերպում*: Վերնախավերի սովորական շրջանառությունը բավարար չէ. դա արտաքին, ոչ թե ներքին փոփոխություն է: Առաջնորդ դառնալու համար պարտադիր չէ, որ առաջնորդն ամեն անգամ հաստատի տիեզերաբանությունը, նա պարզապես իրավունք չունի այն մերժել. այժմ նա բացահայտորեն պետք է մերժի այն և երբեք իրավունք չունի քողարկված ձևով այն հաստատելու: Որպեսզի ազդանշանները հասնեն ամենացածր ներքևները, նրանք պետք է գան վերին բարձրությունից: Բայց նրանք ազդեցություն կունենան միայն այն դեպքում, եթե ամենացածր ներքևներում կոլեկտիվ ենթագիտակցականում բավարար արձագանք գտնեն: Հաջող բուժման բանաձևը նույնն է, ինչ հիվանդության նվազման բանաձևը. Առաջնորդ(ներ)ի փոխակերպում, ինչպես և կողմնակիցների փոխակերպումը, առանձին-առանձին լոկ անհրաժեշտ պայմաններ են և բավարար են դառնում միայն միասին:

Այսպիսով, հարկ է որ առաջնորդը գիտակցի և ընդունի, որ խրված են (անհատական, ինչպես և կոլեկտիվ) ինքնականից եկող ճգնաժամի մեջ: Սա նույն բանը չէ, ինչ պարտության (օրինակ՝ ընտրություններում) ընդունումը: Քանզի այս դեպքում ո՛չ տիեզերաբանությունն էր սխալ, ո՛չ գաղափարախոսությունը. պարզապես մի բան այն չէ՝ մարդիկ չեն կարողանում կողմնակից դառնալ: Չպետք է շփոթել նաև այն դեպքի հետ, երբ նոր-նոր դարձի եկածն ընդունում է նոր գաղափարախոսություն, ինչպես, ասենք, փախստականն է խորհրդարանի մի թևից անցնում մյուսը: Մենք խոսում ենք ինչ-որ բան արմատապես սխալ լինելու փաստի ընդունման մասին:

Նորագույն ժամանակների լավագույն օրինակը, հավանաբար, այն իմաստափոխությունն է, որ 1956 թվականի փետրվարին կայացած ՍՍԿ(բ)Կ

XX համագումարի ժամանակ Խրուշչովը շարժման մեջ դրեց և որին հետագայում միացավ Գորբաչովը՝ գործընթաց, որ քառասուն տարի անց դեռ չի դադարել: Պետք է ենթադրել, որ դա փուլերով արվող խոստովանություն է: Խրուշչովը հիմնականում դատապարտեց ստալինիզմը՝ ներառյալ այն, ինչ կարելի է կոչել ստալինիզմի խորքային կառուցվածք. Գորբաչովը լրացուցիչ մերժեց լենինիզմի խորքային կառուցվածքը: Նախ՝ գաղափարախոսությունները, չէ՞ որ երկուսն էլ որպես տիեզերաբանություններ ամուր նստած էին շատերի, գուցե մեծամասնության, խորհրդային կոլեկտիվ ենթագիտակցականում և միախառնվում էին ցարական ֆորմացիաների տիեզերաբանական մնացորդների հետ, որոնք ամուր տեղ են գրավել նաև այլախոհներից շատերի մոտ:[52]

Ինչու՞ նրանք դա արեցին: Ակներևաբար, որովհետև ամբողջ համակարգը ճգնաժամի մեջ էր. նույնքան ակներև է, որ այդտեղ խոսքը սեփական ծրագրի, սեփական տիեզերաբանության մասին էր: Փորձի՛ր մեղքը ուրիշների վրա շուռ տալ, ինչպես, օրինակ, Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ ինտերվենցիոնիստական պատերազմների, հակահեղափոխության, սովի և թշվառության վրա, Երկրորդ աշխարհամարտում (Հայրենական Մեծ պատերազմում)՝ նենգաղուլության, նացիստների հարձակման սարսափների վրա, վատ բերքի … այս ամենն ուներ բացատրական որոշակի ուժ: Բայց մնացած բոլոր բացատրությունները և բուժամիջոցները փորձելուց հետո մնացել էր չբացատրված մի մնացորդ:[53]

Սոցիալիստական ֆորմացիաները ճգնաժամ են ստեղծում հենց իրենց համար. կապիտալիզմն ավելի ուժեղ է ուրիշներին ճգնաժամի մեջ գցելու հարցում (մի բան, ինչի դեմ չպետք է փաստարկել ռուսական կամ խորհրդային իմպերիալիզմով, որն ավելի շուտ միապետական էր, քան սոցիալիստական): Սոցիալիզմն սպանում է դեպի վեր ուղղվածությամբ, երբ փորձ է արվում վերահսկելու միջին ու վերին շերտերին, ներառյալ իր իսկ կողմից ստեղծվածները. կապիտալիզմը սպանում է դեպի ներքև ուղղվածությամբ՝ անհանգիստ բանվորների վերահսկման փորձի դեպքում, անգամ եթե նրանք իր սեփական դինամիկայի արդյունքն են: Կապիտալիզմն իր ճգնաժամը տեղափոխում է ներքև՝ շահագործելով բանվոր դասակարգի ներքին պրոլետարիատին, մարգինալ երկրների արտաքին պրոլետարիատին և բնությունը. սոցիալիզմը շահագործում է բոլոր երեքին, ի լրումն՝ հենց իրեն: Ի վերջո, Խրուշչովը հիմնականում խոսում էր Կոմունիստական կուսակցությունում ստալինյան զոհերի մասին՝ ընդսմին դրա տակ հասկանալով իր տեսակի մարդկանց:

Այսպիսով, «հստակ և հրատապ» ճգնաժամը մի՛ նախապայման է. երկրորդը՝ իրազեկ, ազնիվ, համարձակ ղեկավարությունն է, որն իր վրա կվերցնի հիմնովին ձախողումն ընդունելու և խոստովանելու բարոյական ռիսկերը: Այնուհետև, ներկայանում է բուժման պրոբլեմը, դրան ընդունակ լինելու և այն հանգամանքն ընդունելու պրոբլեմը, որ այդ բուժման համար, թերևս, ուրիշի կարիքը կա, գուցե, նույնիսկ այն հիմնովին ուրիշի: Միացյալ Նահանգները Երկրորդ աշխարհամարտից հետո փորձում էր այդ ուրիշը լինել պարտված Գերմանիայի և Ճապոնիայի համար, այսօր նա ավելի քան կամենում է խաղալ այդ դերը Խորհրդային Ռուսաստանի համար և բազմակարծության վրա հիմնված ժողովրդավարության, ազատ շուկայական տնտեսության և քրիստոնեության եռաբուժումը տալ միջկառավարական բանակցությունների, ձեռնարկությունների ներդրումների և ԱՄՆ-միսիոներների

միջոցով: Բայց գերմանացիներին պակասում էր ներքին պատրաստակամությունը, որն առաջացավ միայն մի սերունդ հետո՝ երիտասարդության ընդվզման շնորհիվ: Ճապոնական վերնախավերը, հավանաբար, երբեք ներքին հիմնարար շրջադարձ չեն ունեցել: Իսկ ԱՄՆ-ի կողմից առաջ բերած շրջադարձը Խորհրդային Միությունում կանխադրում է հնազանդություն Միացյալ Նահանգներին, պայման, որ մյուս դեպքերում իրականացվել է: Այդտեղից էլ փորձերի մասնակի ձախողումը. բայց խորհրդային ինքնաբուժումը շարունակվում է:[54]

Այսպիսով, մենք ուզում ենք իրական քաղաքականությանն ավելի մոտ կանգնած պարադիգմ II-ով փորձ անել և ընդունել, որ գիտակցավորման պրոբլեմը լուծվել է վերևում նշված եղանակով: Էական նշանակություն ունի «մոբիլիզացման» կերպարը, քանի որ ունի կոնկրետ կոլեկտիվ մեկնություն՝ փոխակերպված մարդկանց կազմակերպելը՝ մնացորդը մշակելու նպատակով: Սա բոլոր կրոններից և գաղափարախոսություններից քաջ հայտնի կերպար է, որը, սակայն, այնքան հեշտ չէ կիրառել անհատական մակարդակում, բացի այն դեպքերից, երբ կարող ենք կանխադրել գիտակցաբար տարվող ներքին երկխոսություններ, մի բան, ինչ մարդիկ ինքնաբուժման նպատակով անում են, նույնիսկ երբ ընդամենը օրագիր են գրում: Բայց այս գործընթացից փոքր-ինչ շիզոֆրենիայի հոտ է գալիս: Բնավորության պաթոլոգիական գծեր դրսևորած ազգի դեպքում մենք խոսում ենք միանգամայն կոնկրետ մի բանի մասին՝ նոր սերնդի, ռասայի, դասակարգի, կամ ազգի, կամ մեկ այլ խմբի՝ որպես *մի նոր պատգամի* կրողի:

Հիմա դառնանք «առճակատման» բանաձևին: Վճռորոշ նշանակություն ունի թեսթավորման ենթակա դեպքի՝ օրինակի ընտրությունը, որը պետք է ընտրվի իր մանկավարժական արժեքի պատճառով, ընդսմին հանդիպադրելով նախկինում եղած ձևը նոր պատգամի հիման վրա դառնալիք ձևին: Երկուսն էլ՝ հինը և նորը, պետք է ստուգվեն: Այսպիսով, Խորհրդային Միության համար թեսթավորման դեպքը կա, եղել է և կմնա ինչպես շրջադարձի, այնպես էլ դիմադրության պատճառ հանդիսացող հանրապետությունների և հանրապետություններում ներառված ազգությունների անկախությունը: Մեկ այլ թեսթային դեպք է գաղտնի ընտրությունների միջոցով խաղաղ ճանապարհով իշխանության փոխանցումը, երրորդ դեպք է մասնավորեցումը: Բոլոր երեքը ներկայացնում են արևմտյան գաղափարախոսությունը խորհրդային տիեզերաբանության մեջ արմատավորելու և այդ կերպ տիեզերաբանությունը փոխելու թե՛ ներքին, թե՛ արտաքին փորձ: Խորհրդային առաջնորդների վրա ճնշումներ էին գործադրվում թե՛ վերևից, թե՛ ներքևից: Դրանք ձախողվեցին. նորից իշխանության գալու նրանց փորձը (հավանաբար, ավելի շատ *ձևականորեն՝* 1991թ. օգոստոսի 19-ին) նույնպես չհաջողվեց: Վերջում տապալվեց նաև նա, ով այդ ամբողջ գործընթացը շարժման մեջ էր դրել՝ Գորբաչովը:

Հիմնարար հարց է, թե արդյո՞ք այդ ամենը լիակատար բավարար է: Չէ՞ որ այդ դեպքում ներկա փաստարկումից բխող հարցը կլիներ, թե արդյո՞ք նախկին խորհրդային ժողովուրդներն ընդհանուր առմամբ, իսկ ռուսները՝ մասնավորապես, իրենց շարունակում են դիտարկել որպես ընտրյալ ժողովուրդ՝ սրանից բխող բոլոր իրավունքներով և պարտականություններով հանդերձ: Եթե այդպես է, ապա հաստատապես կգտնվի մի նոր խնդիր, որը նույն առաքելական եռանդով կքարոզվի և առասպելների ու վնասվածքների (ներառյալ ամենավերջինների) հիշատակմամբ կլեգիտիմացվի:

Հիմա, «պայքար» գլխաբառը. պայքար հանուն այն բանից ազատագրման, ինչ մինչ այդ էր՝ արագ, թե դանդաղ, բռնի, թե առանց բռնության, ընդ որում, դանդաղն ու առանց բռնությանը խաղաղության հետազոտողի գերադասություններն են խաղաղ միջոցներով խաղաղության համար պայմաններ փնտրելիս:[55] Բոլոր նրանց, ովքեր ենթագիտակցականի խորքերում հնարավոր է կրեն հին կարգի սերմերը՝ ոչնչացնելը, արտաքսելը, բանտարկելը կամ մեկ այլ ձևով մարգինալացնելը, ինչպես դա նացիստական Գերմանիան էր անում (և անհամեմատելի պակաս չափով, բայց նույն կառուցվածքով՝ սիոնիստական Իսրայելը), նշանակում է ասպարեզ հանել մեծամտությունը, բայց ոչ՝ լծվել փոխակերպումների գործին: Միայն խորը փոխակերպմամբ է հնարավոր հասնել նոր տիեզերաբանության ներքին շաղկապվածության, ինչը կհանգեցնի ինքնավստահության և ինքնավարության և դրանով՝ ամեն տեսակ արտաքին բուժակներից անկախության, եթե միայն տրամադրության տակ կան բավարար չափով ինքնաբուժման ուժեր, ինչպես, ասենք, խորը արմատներ գցած ժողովրդավարության դեպքում է:

Սրա համար օրինակ կարող է լինել Գերմանիան, որտեղ ժողովրդավարությունը նացիոնալ-սոցիալիզմից մոտավորապես 50 տարի հետո, կարծես թե, ամուր հաստատվել է, եթե, իհարկե, քաղաքական մեծ մասնակցությունը և ավելի քան երկու այլընտրանքների միջև ընտրություն կատարելու հնարավորություն ընձեռող բազմակուսակցականությունը համոզիչ չափանիշներ են: Բայց թեսթը վեր կհանի նաև այն հարցը, թե արդյո՞ք գերմանական ազգի մեջ դեռևս կան նվաճողական և իշխելու միտումներ և այն ձևը, ինչպես արևմտագերմանացիները վարվում էին նախկին ԳԴՀ-ի իրենց ազգակիցների հետ. տնտեսության, մշակույթի և քաղաքականության ամբողջ ընդգրկույթում եղած ներազդումը որոշակի կասկածի տեղիք է տալիս:

5.4 Ամփոփում. Ի՞նչ կարող ենք անել

Ակնհայտորեն հաջողություններ կան, քանի որ ԸԱՎ բարդույթով շարժվող կայսրություններից շատերն այլևս չկան մեզանում: Հավանաբար, նրանք ուժազրվել են, դարձել իրենց սեփական հաջողության զոհը կամ պարզապես ջարդվել: Թե վերջում քննարկված մոտեցումն արդյո՞ք կհանգեցնի այն աստիճան խորն ինքնաարտացոլման, որ պահանջում էին այն երկու պարադիգմերը, ուրիշ հարց է: Գերմանիայի դեպքում արդյունքը, ինչպես վերևում ակնարկվեց, պարզ լինելուց բացի մնացած ամեն ինչ է. նույնը վերաբերում է Ճապոնիային: Իսկ Միացյալ Նահանգները, Վիետնամի պատերազմում ջարդվելուց հետո, «այդ համախտանիշը հաղթահարելու» համար օգտագործում էր Ծոցի պատերազմը. դա նշանակում է բռնական միջազգային հարաբերություններին մասնակցելու (եթե դա նրա առաջնորդներն անհրաժեշտ համարեն) համապատասխան իրավունքի *և պարտավորության* վերաբերյալ բոլոր կասկածներից ինքնամաքրում:

Սակայն ազգը կարող է նաև իրեն որպես բնականոն ըմբռնելուն հասնել սոցիո/մարմնային բուժման դաժան կամ հոգեբուժության՝ ավելի մեղմ ճանապարհով: Այսօրվա Իսպանիան, օրինակ, միանգամայն տարբերվում է

España, una, grande, libre[i], ինչպես Ֆրանկոյի ռեժիմն էր քարոզում, իսկ *decadencia-ից (անկում)* հետո Իսպանիան միանգամայն տարբերվում է դրանից առաջ եղած Իսպանիայից:[56]

Ինչ-որ բան հաստատ հնարավոր է անել, այլապես պատմական այդքան շատ փոփոխություններ չէին լինի: Մարդկության առաջընթացի համար հավանաբար շատ ավելի օգտակար կլիներ, եթե գործի դրվեին առավելապես մեղմ, քան դաժան բուժումները: Բայց նաև այս դեպքում գերմանական, ճապոնական և խորհրդային օրինակները, ինչպես և ԱՄՆ-ի ոչ-օրինակը մատնանշում են այն հանգամանքը, թե որքան ցավոտ է խնդրո առարկա գործընթացը:[57] Եվ որքա՜ն դժվար է անսալ սեփական անձը ճանաչելու հին հորդորին՝ gnothi seauton[ii].

Այդ պատճառով էլ ցանկացած բուժման՝ ինչպես դեպի Ուրիշը կողմնորոշված պարադիգմ I-ի (իր ավտորիտար և ավելի երկխոսական փոփոխականներով), այնպես էլ դեպի Ես-ը կողմնորոշված պարադիգմ II-ի տարբերակների, կամ էլ այդ երկուսի ինչ-որ հաջորդական կամ զուգահեռ համակցության պայման կա: Համենայնդեպս, մենք սովորելու շատ բան ունենք:

Ծանոթագրություններ

---

[1] *"The Emerging Conflict Formations"* in Majid Tehranian & Katharine Tehranian: *Restructuring for World Peace,* Cresskill, NJ 1992.

[2] Ինչպես և մյուս մարդկանց մեծամասնությունը (ինչպես իբն-Սինան է նկատել), Սադամը, հավանաբար, փորձել է հասնել ավելի քան մեկ նպատակի՝ միաժամանակ: Բայց արաբա-իսլամական աշխարհում առանձնակի նշանակություն ուներ մրցակցությունը հին հարուստների միջև, որոնց արմատները Դամասկոսում, Բաղդադում, Կահիրեում, Թեհրանում, Ստամբուլում և, առավել նվազ չափով, Սաուդյան Արաբիայում են: Իրաքը սահմանակից է նրանցից չորսին, բայց ավելի կենտրոնական դիրք ունի, քան իսլամական որևէ այլ երկիր:

[3] Սա հիմնարար թեմաներից մեկն է իմ՝ *World Politics of Peace and War* գրքի, որը շուտով լույս կտեսնի և որն արծարծում է իշխանության հավասարակշռությունները, իշխանության ուրվագծերը և այդ երկուսի միջև կապը:

[4] Բայց պետությունները հակված են մոտավորապես նույնանման վարք դրսևորելու, եթե միջազգային համակարգում նույն կարգավիճակն ունեն՝ անկախ իրենց ներքին քաղաքական կառուցվածքից: Հավանաբար, ժողովրդավարական վերնախավերը հարկադրված են ավելի շատ երևակայություն հանդես բերելու, եթե լեգիտիմացնում են ռազմատենչ մտադրությունները:

[5] Ներկայիս աշխարհաքաղաքականությանն առավել մոտ լինելու համար:

[6] Բնությունը, անհատը, հասարակությունը, աշխարհը (տարածությունը), ժամանակը, վերանձնայինն ու իմացականն ավելի շատ «փիլիսոփայական» կատեգորիաներ են (դրանցից երեքը գալիս են Կանտից), մինչդեռ ընտրյալությունը, վնասվածքները և առասպելներն ավելի շուտ պետք է հասկանալ հոգե-սոցիալական առումով: Ակնհայտ է, որ ընտրյալությունը վերաբերում է վերանձնայինին այն իմաստով, որ այստեղ ուղղակի կապ է ստեղծվում ընտրյալ անձանց և հասարակությունների և վերանձնայինի միջև, մինչդեռ վնասվածքներն ու առասպելները մեր մշակույթը և այն կրողներին՝ ազ-

---

[i] España, una, grande, libre (իսպ.) -միացյալ, մեծ, ազատ Իսպանիա /թարգ./

[ii] gnothi seauton (հուն.)- ճանաչիր ինքդ քեզ /թարգ./

գերին, տեղավորում են կոնկրետ տարածա-ժամանակային անցուդարձի մեջ, յուրաքանչյուր ազգի որտեղ-երբի մեջ:

[7] Արևմտյան նախատիպը հրեական ընտրյալությունն է, արևելյան նախատիպը՝ ճապոնականը:

[8] Գերմանիայի հայտնի ռաբբին Լեո Բեքն իր՝ *The Essence oj Judaism*, Նյու Յորք, 1961թ., գրքում հրեական առանձնահատկությունը սահմանել է հասկացություններում, որոնք գրեթե նշանակում են «Ընտրված լինել տառապելու համար»: Իսկ դա ի՞նչ կարող էր նշանակել էսէսականների կողմից տարված որևէ գերմանահրեայի համար: Տառապանքի ժամը եկե՞լ է:

[9] Ինչպես Իսրայելը (հմմ. Leo Baeck /1961թ., էջ 67/: *"All Israel is the messenger of the Lord, the 'servant of God', who is to guard religion for all lands and from whom the light shall radiate to all nations"*, կամ պարզապես Աստվածաշնչում Թվոց 23,9 կամ Ելից 34,24), ԱՄՆ-ը (John Winthrop's & Ronald Reagan's *"City Upon a Hill"*), նացիստական Գերմանիան:

[10] Սրանք են, ըստ իմ ունեցած փորձի, Մերձավոր Արևելքում պաղեստինցիների երեք գլխավոր մեկնաբանությունները: Բացի այդ, պաղեստինցիները նախընտրում են իրենց սեփական լույսը լինել:

[11] Հաճախակի բերվող փաստարկ ամերիկա-հրեական քաղաքական քննարկումներում:

[12] Թվում է, թե շումերները պատկանում էին այս կատեգորիային՝ գերազանցության, բայց նաև վերահաս կործանման իրենց համոզմունքով:

[13] Ըստ այդմ, սատանան պիտի որ ուժեղ լինի, գուցե, աստծո պես ներկա բազմաթիվ երևույթներում, բայց որպես միասնություն: Մենաստվածության դեմ միակ արդյունավետ հակակշիռը հանդիսացող հակաուժը մենասատանայականությունն է (Monosatanismus):

[14] Վիետնամում տանուլ տված պատերազմն այդօրինակ մտածելակերպի հանգեցրեց արմատական ամերիկացիներին, մինչդեռ Ծոցի պատերազմն այն բանի հաստատումն էր, որ աստված իրենց նկատմամբ բարեհաճ է մնացել:

[15] Վեց հեգեմոններից երեքը համաշխարհային են (ԱՄՆ, Եվրամիություն, Ճապոնիա) և երեքը տարածաշրջանային (Մոսկվա, Պեկին և Հնդկաստան): Իսրայելը դրսևորում է սոսկ ենթատարածաշրջանային հեգեմոնի որոշ ռազմական բնութագրիչներ:

[16] Սա դանթցիգյան հոգեբուժության կարևոր կետերից մեկն է, ըստ որի, շատ հիվանդներ (1) ունեն մյուսներին ինչ-որ ձևով գերազանցելու պատկերացումը, (2) մեծապես տառապում են այն բանից, եթե ինչ-որ բան հակառակն է մատնանշում, և (3) անում են իրենցից կախված ամեն բան՝ խուսափելու այնպիսի իրավիճակներից, որոնք դժվարացնում են հասարակական կյանքը: Հմմ. S. և R. Dantziger: *You Are Your OWN Best Counselor,* Հոնոլուլու 1989թ.

[17] Այս տեսանկյունից Ծոցի պատերազմը լավ պատերազմ էր, որովհետև լայն հնարավորություններ էր ընձեռել թե՛ Սադդամ Հուսեյնին, թե՛ Ջորջ Բուշին, Իրաքին և Միացյալ Նահանգներին:

[18] Սա քրեականների և հիվանդների միջև նմանությունների և տարբերությունների վերաբերյալ նորվեգացի հանգուցյալ սոցիոլոգ Վիլհելմ Աուբերթի ձեռնարկած ուսումնասիրության կարևորագույն կետերից մեկն էր:

[19] Բայց շեղվածի հասարակական սահմանումը վճռորոշ նշանակություն ունի այն բանի համար, որ դա տեղի ունենա, ինչպես վարպետորեն ցույց է տվել Միշել Ֆուկոն

իր բազմաթիվ գրքերում, օրինակ, *"Archeology of Knowledge, Birth of the Clinic, Discipline and Punishment: the Birth of the Prison"*

[20] Այս թեմայի ուսումնասիրությանն է նվիրված Լյուիս Յաբլոնսկու *"Robopats"* աշխատությունը, Ինդիանապոլիս 1972թ.:

[21] Ինչպես Վեբերն է հաճախ ընդգծել, բյուրոկրատիան ընդհանրականացնող և ոչ թե անհատականացնող բնույթի գործելակերպ ունի: Անձը միշտ եզակի թվով է:

[22] Ուրեմն, գուցե բացասական վստահության անհրաժեշտություն կա: Ամերիկայում նախագահության թեկնածուն պարտավոր չէ ամեն օր ասել, թե ԱՄՆ-ը ընտրյալ երկիրն է. բայց եթե ասի. «ԱՄՆ-ը սովորական երկիր է, ինչպես և բոլոր մյուսները», կամ նույնիսկ. «Ամերիկան հիվանդ հասարակություն է», այդ դեպքում դուրս կմնա խաղից (Քարտե՞րը):

[23] Այսպիսով, եթե երկիրն աղքատ և կրթյալ է, ապա (ապագա) առաջնորդը պետք է ունենա նույն կերպը: Այս կարևոր դիտարկման համար երախտապարտ եմ շվեյցարացի հանգուցյալ սոցիոլոգ Պետեր Հայնթցին:

[24] Տե՛ս իմ արդեն հիշատակված գիրքը. *Hitlerism, Stalinism, Reaganism: Three Variations on a Theme by Orwell,* ինչպես նաև նախորդ գլուխը:

[25] Սա հիմնական թեմաներից մեկն է Քերոլ Ջիլլիգենսի *"In a Different Voice: Psychological Theory and Women's Development"* (Քեմբրիջ 1982թ.) գրքում:

[26] Այս թեման է ուսումնասիրում իմ *"Health and Development"* գիրքը: Պատրաստվում է հրատարակության:

[27] Ընդ որում, խոսքը վարքի՝ վերին աստիճանի թեժացած ձևերի մասին է, որոնք չեն կարող պահպանվել առավել երկար ժամանակ:

[28] Այս հանգամանքը հատկապես շեշտել է ամերիկացի ռազմական սոցիոլոգ դր. Քելլին, երբ հետազոտում էր Նյուրնբերգյան դատավարության պատերազմի հանցագործներին: S. Douglas, M. Kelley: *22 Cells in Nuremberg,* Նյու Յորք 1961թ.

[29] Նորվեգական տիեզերաբանությունը ևս փառապանծ առասպելների տարրեր ունի՝ վիկինգների Ոսկեդարը, և վնասվածքներ՝ Սև մահը, դանիական և շվեդական տիրապետության շրջանը: Բայց նորվեգացիների մեծամասնությունը երկուսն էլ չափից ավելի լուրջ չի ընդունի՝ անկախ գիտակցության մակարդակից:

[30] Եթե ընտրությունը ցմահ բանտարկության կամ աքսորի միջև է, ապա, գուցե, ինչ-որ բան խոսում է դրա օգտին. բայց ինչու՞ հիմնախնդիրն այսպես սահմանել:

[31] Անշուշտ, կան ներանձնային կապեր ինչպես հոգու, այնպես էլ ոգու մակարդակում. ուրիշ հարց է, թե այդ կապերն ինչպես են գործում, և թե դրանք ինչքանով նշանակություն ունեն հոգեբուժության համար: Արևմտյան տիեզերաբանության մեջ անհատապաշտությունը հիմնական ենթադրություններից է, և այդ պատճառով ներանձնայինը մեծամասամբ կառուցարկվում է կարևորություն ունեցող մարդկանց, ինչպես, օրինակ, ծնողների կողմից հոգում թողած հետքերի տեսքով: Ճապոնական տիեզերաբանության մեջ կոլեկտիվիզմից հետևում է, որ ներանձնայինն ավելի շատ տրվում է սինքրոն, քան դիաքրոն մեկնության: Արևմտյան հոգեբուժությունն իրեն հատուկ ձևով փորձում է բացահայտել անցյալի հետքերը, ճապոնական հոգեբուժությունը կարող էր, իրեն հատուկ ձևով, փորձել խմբային բուժում անել:

[32] Ստորև շարադրվածը մասամբ ներշնչված է բժշկական սոցիոլոգիայի վերաբերյալ Թալկոթ Փերսընսի աշխատանքից:

[33] «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով» (Հովհ. 14: 6), - շատ ուժեղ խոսքեր են:

[34] Նրա հայտնի «Ճնշվածների մանկավարժություն» գրքում, Նյու Յորք 1981թ.

[35] Կապված Կարլ Ռոջերի և Աբրահամ Մասլոուի անունների հետ:

[36] Որպես այս հանգամանքի ուսումնասիրության օրինակ տե՛ս՝ Johan Galtung: *"From Violent to Nonviolent Revolution",* in: Johan Galtung: *The True Worlds,* Նյու Յորք 1980թ., գլուխ 4.2, էջ 139-149:

[37] Խնդիրն ուղղաձիգ կառուցվածքային բռնության «չափից ավելի շատ»-ի և «չափից ավելի քիչ»-ի և հորիզոնական կառուցվածքային բռնության «չափից ավելի նեղ»-ի և «չափից ավելի ընդարձակի» միջև ճանապարհ գտնելն է: Անհատի, ինչպես և սոցիալական ու աշխարհի հարթության մեջ սա նշանակում է հավասարակշռության ակտ, որի դեպքում բոլոր անկյուններում ու վերջավորություններում դժվարություններ են դարանակալում:

[38] Օրինակ՝ լեզվի և կրոնի, սննդի և սեքսի, գիտության և տեխնիկայի միջոցով:

[39] Հասարակական օրգանիզմի մեջ հրեաների դերի «բացահայտումը» նա իսկապես համեմատում էր տուբերկուլյոզի համար տուբերկուլյոզի բակտերիաների ունեցած դերի հայտնագործման հետ, որ արել էր Ռոբերթ Քոխը:

[40] Քրեագիտության մեջ դա հայտնի է որպես պատժում անհատական կանխարգելման նպատակով:

[41] Այստեղ, անշուշտ, կար նաև պատժելն իբրև ընդհանուր կանխարգելման, մյուսներին վախեցնելու նպատակով օգտագործելու տարր:

[42] Այս գործարքում կա նաև «արտերկրի» բուն էության վերաբերյալ քողարկված ակնարկ. ամեն դեպքում՝ անմաքուր, իսկ այդ դեպքում անմաքուրն անմաքուրի հետ մի զույգ է կազմում:

[43] Այս հանգամանքը որոշ չափով արծարծվում է իմ՝ "*United States Foreign Policy as Manifest Theology"* գրքում, Սան Դիեգո (Կալիֆորնիայի համալսարան, IGCC) 1987թ.

[44] Սրա համար նախատիպային օրինակն, իհարկե, Հենրի Քիսինջերն է:

[45] Տե՛ս՝ Russel Jacoby: *The Last Intellectuals: American Culture in the Age of Academe,* Նյու Յորք 1987թ.

[46] Բայց այնքան էլ դյուրին չէ որոշել, թե ինչ ճտությամբ է դա գործում: 1989թ. Եվրոպայում տեղի ունեցածը հիմնականում կատարվեց բուն երկրների ներսում՝ իշխողների և իշխվածների միջև հարաբերության մեջ: Բայց մարգինալացման արդյունքում իշխողների դիրքերը թուլացվել էին, իսկ իշխվածներն՝ ուժեղացել արտասահմանյան գործող անձանց հետ կապերի շնորհիվ: Տնտեսական պատժամիջոցները, թերևս, քիչ կարևորություն են ունեցել:

[47] Իսկ այդ տենչանքում կան ֆաշիստական տարրեր՝ բավականություն այն բանից, որ ԱՄՆ-ը Իրաքի պես երկրի հետ վարվում է այնպես, ինչպես իրենք սիրով կվարվեին, բայց երբեք չեն հանդգնել անելու: Հիմքում ընկած կառուցվածքների վերլուծության համար հմմ. Johan Galtung: *"The Cold War as Autism",* Essays in Peace Research, հտ. VI, Կոպենհագեն 1988թ., էջ 81-106

[48] Հաստատ: Հավանաբար, նա կշարունակեր դիտվել որպես բնականոն ժողովրդավարություն, որ զոհաբերում է իրեն իրավունք և կարգ պահպանելու համար:

[49] «Արյուն բաց թողնել» և «վիրահատական միջամտություն» արտահայտությունները միավորում են երկու ասպարեզները՝ ընդսմին մեկը մյուսի համար փոխաբերություն դարձնելով:

[50] Խնդիրն, իհարկե, այն է, որ սպառողական հասարակության բարերարությունները մեծամասամբ հարուստների տրամադրության տակ են. իսկ սրանք իրավունքի և կարգի կողմնորոշված թերապևտների համար հիմնախնդրի ակունքը չեն:

[51] Այս մոտեցմանը Յոթնյակի խումբն ակնհայտորեն հետևել է Խորհրդային Միության առնչությամբ. նախ (կոմունիզմի) էքզորցիզմ, հետո՝ օգնություն:

[52] Եվ հիմնարար հարցը հիմա այն է, թե, կոմունիզմը քշելուց հետո, դա ինչ կերպ կարտահայտվի. արդյո՞ք կա ռուսական ընտրյալության Նոր դարաշրջան, որը նորովի արարի мир-ի առասպելները, ինչպես Սոլժենիցինի մոտ:

[53] Սա մակրոպատմական հիմնափոխակերպումների համար հիմնարար բանաձև է հետևյալ հեղինակներ մոտ. Johan Galtung, Erik Rugendm Tore Heiestad: *"On the Last 2.500 Years in Western History. And Same Remarks on the Coming 500",* in: Peter Burke (հրատ.): *New Cambridge Modern History,* Companion Volume, հտ. XIII, Քեմբրիջ 1979թ., գլուխ 12, էջ 318-361:

[54] Մյուս կողմից, որոշակի դեր կարող է խաղացած լինել *"German Youth Administration"*-ի քիչ հայտնի աշխատանքը, որը քառասունական թվականների վերջին գերմանացիներին ժողովրդավարություն էր սովորեցնում: 1949թ. հունիսին ուսանող ժամանակ մեքենաներ կանգնեցնելով ճանապարհորդելիս, այն ժամանակվա Ամերիկյան գոտում առիթ եմ ունեցել ճամփա գնալու ժողովրդավարության այդ ուսուցիչներից մեկի հետ, մեծ էնտուզիազմ և նվիրում ունեցող երիտասարդ ամերիկացի էր:

[55] Բայց 1989 թվականի Եվրոպան ցույց է տալիս, որ նաև անբռնադատությունը կարող է շատ արագ ազդեցություն ունենալ, առնվազն վերջին փուլում: Բայց ընդհանուր առմամբ, թերևս, ուժի մեջ է մնում հակաբիոտիկների և ավանդական դեղաբույսերի միջև համեմատությունը. առաջիններն ավելի արագ են ներգործում, բայց կարող են քայքայել նաև ավելի շատ բան:

[56] Հարցն, իհարկե, այն է, թե արդյո՞ք Իսպանիան այսօր իր սխալը չի կրկնի, չափից ավելի ապավինելով զբոսաշրջային քարտեզին՝ վերամշակման և արդյունաբերականացման դժվարին գործին լծվելու փոխարեն:

[57] Օրինակ, ե՞րբ կլսենք որևէ ճառ Վաշինգտոնից, որտեղ ներողություն կհայցվի համայն աշխարհում ավելի քան 200 ռազմական ներխուժումների հետևում առկա պատերազմողության համար:

ԱՄՓՈՓՈՒՄ.

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մենք չենք կարող բավարարվել ավելի քչով, քան այս գրքի բոլոր չորս գլուխներն են. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն: Եթե դինամիկ խաղաղությունը, որպես գործընթաց, այն է, ինչ մենք ունենք, երբ որևէ հակամարտություն (Ավերողն ու Արարողը) կարող է փոխակերպվել առանց բռնության և ստեղծագործաբար, ապա այդտեղ դեր ունեն նաև կառուցվածքն ու մշակույթը: Խիստ կարևոր են խորքային կառուցվածքներն ու խորքային մշակույթները, քանզի դրանք մնում են չարտացոլված, նույնիսկ՝ անհայտ: Լինելով մարդկային կոլեկտիվ ենթագիտակցության մեջ՝ դրանք ամենափոքր ընդհանուր բաժանարարն են՝ մի բան, որ միավորում է բոլորին:

«Զարգացում» և «քաղաքակրթություն» դրական եզրերն այստեղ ես օգտագործեցի կառուցվածքի և մշակույթի վերաբերյալ որոշակի դիտարկումներ ներկայացնելու համար: Զարգացում հասկացությունը պարունակում է ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական և ինստիտուցիոնալ գործոնները: Իսկ ընթեցողն այս գրքում անընդմեջ կհանդիպի չորս հարթությունների՝ բնություն, անհատ, հասարակություն և աշխարհ, այնուհետև կավելանան ժամանակն ու մշակույթը: Բռնությունն ու խաղաղությունը բոլոր վեցի համար էլ հիմնարար մտահոգություններ են, որովհետև դրանցում կյանքը կարող է և՛ տառապանք կրել, և՛ միաժամանակ բարելավվել: Ցավը շրջանցելու, պանէթիկայի և մարդու վիճակի բարելավման հիմնախնդիրներն այստեղ ամենագո են: Պատճառական պարբերաշրջաններն իրենց ճամփան են հարթում բոլոր հարթություններում՝ որպես հետք թողնելով բռնություն կամ խաղաղություն:

Խաղաղության հետազոտությունը ներկայում ընդլայնվում է, ընդգրկում բոլոր նշված հարթությունները և ներառում ներանձնային ու միջանձնային խաղաղությունը. այն, միաժամանակ, նոր խորություն է ստանում՝ հասնելով անհատական և կոլեկտիվ ենթագիտակցության մակարդակ: Այստեղ գտնում ենք Ֆրոյդին ու Յունգին. տնտեսական և քաղաքական զարգացման հարցերում գտնում ենք Սմիթին ու Մարքսին, Լոքին ու Միլին, իսկ քաղաքակրթության հարցերում՝ Վեբերին և Նակամուրային, Թոյնբիին և Սորոկինին: Եվ, այդուհանդերձ, նպատակը տեսություններ ձևավորելը չէ. նպատակը գործելն է՝ բռնությունը նվազեցնելու և խաղաղությունն ամրապնդելու համար: Միևնույն ժամանակ. ճշգրիտ ախտորոշման ու կանխատեսման և համարժեք բուժման համար երկուսն էլ անհրաժեշտ են՝ տեսության թե՛ ընդգրկուն, թե՛ խորը բնույթը:

1. Սահմանելով խաղաղությունը. անվերջ գործընթաց

Ես շատ երկար փաստարկեցի խաղաղության ընդլայնված հայեցակարգը՝ այն կառուցելով բռնության հայեցակարգի վրա, որը պարունակում է ոչ միայն ուղղակի, այլ նաև կառուցվածքային (անուղղակի) և մշակութային (լեգիտիմացնող) բռնություն: *Խաղաղությունը = ուղղակի խաղաղություն + կառուցվածքային խաղաղություն + մշակութային խաղաղություն*: Բայց այս սահմանումը հենքային թերություն ունի. այն չափազանց ստատիկ է: Այդ պատճառով ներմուծվեց խաղաղության դինամիկ սկզբունքը. *խաղաղություն ունենք միայն այն ժամանակ, երբ առանց բռնության կիրառման տեղի է ունենում հակամարտության ստեղծագործական փոխակերպում*: Այժմ այստեղ «խաղաղությունը» դիտվում է որպես համակարգային հատկություն, որպես համատեքստ, որի ներսում ինչ-ինչ բաներ կարող են տեղի ունենալ միանգամայն առանձնահատուկ եղանակով: Պուդինգի ստուգումն ուտելն է. ամուսնությունն ստուգվում է անհարթությունները հաղթահարելիս. խաղաղության ստուգարքը հակամարտություններից գլուխ հանելն է: Վերոնշյալ սահմանումը երեք դրույթ է ամրագրում. հակամարտությունները կարող են փոխակերպվել (այսինքն դրանք չեն «լուծվում»), և հենց մարդկանց կողմից, ովքեր ստեղծագործական մոտեցում են ցուցաբերում դրանց նկատմամբ՝ վերիմացականացնելով անհամատեղելիությունները, և հակամարտության մեջ գործում են առանց բռնության ռեսուրսի:

Դա որոշ պահանջներ է ներկայացնում կոնֆլիկտի համակարգին և դրանում խճճված դերակատարներին: Վերջիններս պետք է դրսևորեն ոչ բռնի և ստեղծագործ վարք: Իսկ փոխակերպումը (կողմերից ներս և դուրս, երկխոսությունների, գիտաժողովների շրջանակներում կամ դրանցից դուրս և այլն) պետք է խաղաղ լինի, և դա նշանակում է՝ հնարավորին չափ չուղեկցվի կառուցվածքային ու մշակութային բռնությամբ: Եթե փոխակերպման գործընթաց է տեղի ունենում, ապա պետք է խուսափել ուղղաձիգ, վերնախավային կառուցվածքներից (կամ առնվազն չպետք է զորացնել դրանք): Գործընթացը պետք է տեղի ունենա խաղաղության մշակույթի շրջանակներում, ինչը լեգիտիմացնում է հակամարտության հանդեպ ստեղծագործ, ոչ բռնի մոտեցումը՝ ընդսմին բացառելով ֆիզիկական և խոսքային բռնությունը:

Խաղաղությունը *հեղափոխական* առաջարկություն է: Անհրաժեշտ է ոչ միայն խաղաղության մշակույթ, այլ նաև խաղաղության կառուցվածք. խաղաղության համակարգի երկու հատկանիշներ, որոնք դերակատարներին ոչ բռնի և ստեղծագործ ձև են տալիս, և հակառակը:

2. Անվան մեջ է պատգամը

Խաղաղության հետազոտողներն այսօր առաջ են գնում. զուտ համալսարանական գործունեությունից՝ խաղաղության հետազոտությունից (ուսումնասիրվող երևույթներից բավականաչափ հեռացվածությամբ) և խաղաղության ուսուցանումից (որ հոգ է տանում խաղաղության հետազոտության արդյունքների փոխանցման մասին) նրանք անցնում են խաղաղության գործողությունների՝ խաղաղության հետազոտության բացահայտումների կենսագործման

(արդի հակամարտությունների կողմերից առնվազն մեկի հետ անմիջական կապով): Ինչպե՞ս անվանենք նման մարդկանց:

Հետազոտությամբ զբաղվողներն ակներևաբար հետազոտողներ են. առավել համեստ «խաղաղության ուսումնասիրություններով» հավանաբար ուսանողներն են զբաղվում (սակայն պրոֆեսորներն էլ, անշուշտ, չեն դադարում սովորել…): Կրթությամբ զբաղվողները կրթողներն են՝ ուսուցիչներ կամ պրոֆեսորներ: Բայց ինչպե՞ս կոչել այն մարդկանց, ովքեր խաղաղության գործողություններն են կարևորում, նրա՞նք ով են:

«Դերակատար» բառից թատրոնի կամ սոցիոլոգիայի հոտ է գալիս: «Խաղաղապահ, խաղաղարար, խաղաղաշինարար, խաղաղապահական»՝ սրանք գործունեության որոշակի ձևեր նկարագրելու համար օգտակար հասկացություններ են, բայց եթե դրանք ընկալվեն որպես պայմանագիր հանրության հետ, ապա պրակտիկներն այստեղ ավելի շատ բան կխոստանան, քան կարող են անել: Օրինակ, արդի Հարավսլավիայում նույնիսկ համեստ «խաղաղապահ» անվանումը հնչում է լավագույն դեպքում որպես կատակ, վատագույն դեպքում՝ որպես խաբեություն: «Խաղաղության ակտիվիստ»-ը ծածկում է ասվածի ողջ տիրույթը, սակայն միամտության և ոչ-պրոֆեսիոնալիզմի երանգ ունի: Կառուցվածքային բռնությունն իբրև ոչ-խաղաղություն դիտարկելով՝ յուրաքանչյուր ոք կբացառի նաև «հակամարտության կառավարիչ» տարբերակը: «Հակամարտություններում օգնող» կամ «հակամարտությունների հարցերով օգնական» անվանումներից կեղծ համեստության հոտ է փչում: «Հակամարտության օժանդակող»-ը կարող է մեկնաբանվել որպես «հակամարտություն խրախուսող»՝ իբրև մեկը, որ ինքն է բռնության իսկական գործարկողը: Իսկ «հակամարտության փոխակերպող» (transformer) տարբերակը շատ «էլեկտրական» է:

Այս ամենը հաշվի առնելով՝ ես կառաջարկեի *«խաղաղության աշխատող»* կամ *«հակամարտության աշխատող»* տարբերակները: Այս անվանումները համեստ են՝ առանց ներկառուցված խոստումների, որ այնուհետև կարող են իրականում ստացված արդյունքին չհամապատասխանել: Այդ աշխատողները պետք է պատրաստված լինեն, բայց չեն բացառվում նաև համապատասխան պատրաստվածություն չունեցողները: Կարևորը աշխատանքը պատշաճ կատարելն է և ոչ թե հռչակ ձեռք բերելու հավակնություններ ունենալը կամ մամուլի ասուլիսներ հրավիրելը. թերևս, կաթոլիկ միանձնուհու օրինակով, որը գործում է, բայց ոչ ոք նրան ո՛չ լսում, ո՛չ տեսնում է:

Սոցիալական աշխատողները, կարծես, իրենց հենց այդպիսին են ընկալում. նմանապես և առողջապահության բնագավառի՝ առնվազն ցածր էշելոնի աշխատողները: Կա նաև հարցի քանակական կողմը. նրանք կարող են շատ, նույնիսկ շա՜տ-շա՜տ լինել (պատկերացնենք հակամարտության և խաղաղության աշխատողների մի բանակ, որն այնքան է վրա տալիս, մինչև բռնության հակում ունեցող կողմերը չզիջեն, նույնիսկ եթե ոչ այլ, ապա գոնե այդ բանակից ազատվելու նպատակով): Սա կարող է փոքր-ինչ բռնի հնչել, բայց շատ ավելի լավ է, քան միամիտ այլընտրանքը՝ ինչ-որ ոչինչ չասող համաձայնագիրը, որը թեև ստորագրվում է ամենաբարձր մակարդակում, բայց սովորաբար պարտավորեցնում է ընդամենը մի քանի մեծապես մոռացության արժանի՝ ուղղակի բռնությունը կառուցվածքայինով փոխարինել ջանացող «պետական այրերի»:

3. Ուղեղի ռեալիզմ, սրտի իդեալիզմ

Շատ բան է անհրաժեշտ, եթե խաղաղության աշխատանքի խնդիրը տառապանքը նվազեցնելն է (*Dukkha*) և կյանքը բարելավելը (*Sukha*), այն էլ՝ ամբողջ կյանքը… այսինքն՝ նաև բնության հետ խաղաղությամբ: Ուղեղները հարկադրված կլինեն ընկալել, արտադրել ու պահեստավորել *գիտելիքը*՝ հոլիստական, ոչ միայն գիտության առանձին ճյուղից վեր ու համընդհանուր, այլև վերազգային գիտելիքը, որը համարժեք լինելու համար պետք է իրատեսական լինի: Իրականությունը չարդարացված լավատեսական կամ հոռետեսական արտապատկերումներով պատելով՝ որևէ մեկին շնորհ չես անում:

Այստեղ կա անառարկելի «գիտելիքի»՝ սինթետիկ «ապրիորիի» վտանգը, որ հրամանի համաձայն է ճշմարիտ և էմպիրիկ իրականությամբ ստուգվելու կարիքը չունի: Արևմուտքում այդպիսի «անառարկելիության» բողբոջներն ի հայտ են գալիս աստվածաբանության հետնորդ գիտակարգերում, որոնք անբեկանելի գիտելիքի կրողներ են այն պահից ի վեր, երբ Լուսավորչության դարաշրջանում Աստված սկսեց մեռնել՝ թողնելով պետություն՝ ի դեմս իրավագիտության (ընդհանուր առմամբ) ու դիվանագիտության (մասնավորապես), և կապիտալ՝ ի դեմս տնտեսագիտության:

Այդօրինակ գիտելիքը կարող է պահպանվել երևակայական իրականության մեջ, որտեղ առկա են ինչպես կատարյալ անհատական «բանականություն» ու հնարավոր գործողությունների հետևանքների գիտակցում, այնպես էլ հավանականությունների ու օգտակարությունների արտադրաբանակների առավելագույնացում այնպես, որ մարդ կարողանա ձեռնպահ մնալ ամեն հանցավորից՝ միաժամանակ դրսևորելով օպտիմալ շուկայական վարքագիծ: Եթե մարդիկ տեսությանը համապատասխան չեն գործում, ապա, որպես կանոն, հենց նրանք են կշտամբանքի առարկա դառնում և ոչ թե տեսությունը: Լինելով հրահանգվածի ու կանխադրվածի հետ անքակտելի կապի մեջ՝ կատարյալ անհատները կատարելապես են համապատասխանում կանխադրումներին: Այսօրինակ թերի գիտության (այնքան հիմնական մեր քաղաքակրթության համար) կարելի է հանդիպել նաև Գանդիի կամ խաղաղության որևէ աշխատողի մոտ, ում «գիտելիքը» կարելի է ամփոփել «կատարյալ ոչ բռնությունը կատարյալ է աշխատում» բանաձևում: Եվ այն, իրոք, աշխատում է… երևակայական իրականության մեջ:

Եվ իսկապես, էմպիրիկ հիմք ունեցող գիտելիքն ամեն ինչ է, բացի բավարար լինելուց: Հանուն խաղաղության պայքարը սովորաբար պայքար է էմպիրիկ իրականությունը հենց այն պատճառով վերիմացականացնել կարողանալու համար, որ այդ իրականությունը որպես այդպիսին թույլ չի տալիս հակամարտության ոչ բռնի, խաղաղ փոխակերպում: Դա նշանակում է, որ նոր իրականությունները պետք է ուրվագծվեն մարդկանց ուղեղներում՝ որպես պոտենցիալ, նույնիսկ կատարյալ իրականություններ: Համեստ ուտոպիաներին նվիրվելու և հետևելու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, բայց բնավ նույնական չէ բոլոր մարդկանց հարաբերություններն ընդգրկող ամբողջատիրական ուտոպիաներին տրվելու իրավունքի հետ, եթե, իհարկե, ոչ երևակայության մեջ: Նույնպես և մենք իրավունք չունենք ենթադրելու, որ արդեն ապրում ենք մասնակի կամ ամբողջական ուտոպիաներում և, որպես ոչ էական, կարող ենք դեն նետել հակառակի ամեն էմպիրիկ ապացույց:

Էմպիրիկ իրականությունից անդին անցնելու համար անհրաժեշտ ունակությունն այլ կերպ կոչվում է *երևակայություն.* այն մոտ է գիտությանը, սա-

կայն չի նույնանում նրա հետ: Միայն թե՝ որքան էլ երևակայությամբ հարուստ լինեն մեր վարկածներն այն մասին, թե պոտենցիալ իրականությունն ինչ տեսք պիտի ունենա և ինչպես պետք է այն ստեղծել, ոչ մի դեպքում մենք ծուղակը չպետք է ընկնենք և պետք է մեր վարկածները կեղծումից պաշտպանենք այնպես, ինչպես դա արել են անառարկելի գիտելիքի վերոնշյալ երեք ձևերը: Ցանկացած առումով կեղծելիությունը կարևոր առաջնորդող է մնում (իսկ այդ առաջնորդողն ինքը կեղծելի՞ է):

Այնուհետև, կուզենայինք, որ մեր սրտերը *կարեկցանքով* լցվեին, ճառագեին և պահպանեին այն՝ կարեկցանք մեր մերձավորների ինչպես տառապանքի, այնպես էլ ուրախությունների և կյանքում հաջողությունների հանդեպ: Ինչպես բացասական խաղաղության դեպքում է, տառապանքը կիսելը ևս լոկ պատմության կեսն է. նույնքան կարևոր է նաև ուրախությունը կիսելը՝ համատեղ երջանկության զգացումը:

Բայցևայնպես, դա էլ դեռևս բավարար չէ: Մինչ այժմ ասված ամեն բան պետք է այնքան խորն արմատավորվի խաղաղության աշխատողների մոտ, որ կարողանա դիմանալ հակահարվածներին ու բորբոքված արձագանքներին: Միով բանիվ՝ անհրաժեշտ է *համառություն*, առաջ գնալու ունակություն, նույնիսկ այն դեպքում, երբ դրական արձագանք կամ ընդհանրապես որևէ արձագանք չկա: Այս հանգամանքն, անշուշտ, վերստին բարձրացնում է անառարկելիության հիմնախնդիրը: Իսկ ինչպե՞ս իմանամ՝ արդյո՞ք ճիշտ ճանապարհին եմ այն դեպքում, երբ ընդհանրապես ոչ մի կամ ընդամենը բացասական արձագանք կա: Թերևս հնարավոր չէ իմանալ: Մնում են միայն ինտուիցիան և այլոց կողմից ուղղորդվելը:

Գիտելիք, երևակայություն, կարեկցանք, համառություն… Փաստարկը, թե դրանք գումարվում-դառնում են ունակություններ՝ փոխադարձաբար իրար զորացնող կարողությունների հայտանիշ, կարելի է հակադրել այն փաստարկին, թե «դա չափից դուրս շատ բան պահանջել է նշանակում»: Դերատիպարներ կա՛ն: Այդպիսիք հեշտությամբ կարելի է առանձնացնել, օրինակ, ի դեմս տարբեր կրոնների վանականների և միանձնուհիների, ովքեր հոգով ու սրտով իրենց կյանքը նվիրել են մյուս մարդ էակներին ծառայելուն: Կան բժիշկներ և բուժքույրեր, սոցիալական աշխատողներ և այլն: Եվ ապա կան մեզ այնքա՜ն մոտ տիպարներ, ում հաճախ չենք նկատում՝ մեր իսկ մայրերը, ընտանիքի մյուս անդամները կամ մեր լավագույն Ես-ով մենք ինքներս՝ հարազատների ու ընկերների շրջապատում:

Լավագույն դեպքում, համաձայն իր դրական ավանդույթի, համալսարանը կհոգա գիտելիքի մասին՝ բաց թողնելով մյուս երեք անհրաժեշտությունները: Վատագույն դեպքում այն անառարկելիության այնպիսի կեցվածք կընդունի, որ գիտելիքն ինքնին անօգուտ կլինի: Անկասկած, ընտանիքները, որոնցից մենք սերում ենք և որոնցում մենք բազմանում ենք, կարևորագույն համալսարաններն ու լաբորատորիաներն են. այստեղ ենք սովորում (կամ չենք սովորում) հիմնադրույթները և այստեղ է, որ ստուգում ենք անցնում: Սակայն սկզբնական խումբը ո՛չ մեր միակ վայրն է, ո՛չ էլ միակ փորձադաշտը:

Արդ, մենք բախվել ենք այն հիմնախնդրին, որ մեր համալսարանները պիտանի չեն խաղաղության աշխատողների ուսուցման համար: Հավանաբար, այստեղ շատ բան կարելի է սովորել մենաստաններից ու ռազմական ուսումնարաններից. երկու հաստատություններում էլ անհատն առավել լայնորեն է ներգրավված: Ակնհայտ է, որ ռազմական ուսումնարանը գիտելիք է հաղորդում այն մասին, թե ինչպես երկարացնել տառապանքն ու կարճացնել

կյանքը, և այդ ամենն արվում է լոկ սեփական կողմի հանդեպ կարեկցանք, իսկ մյուս կողմի հանդեպ ատելություն սերմանելով: Այդուհանդերձ, այստեղ երևակայությունն ու համառությունը կարևոր առաքինություններ են: Դրե՛ք զինվորների համար նախատեսված ձեռնարկը (որը հիմնականում սովորեցնում է, թե ինչպես կարելի է սպանել՝ նույն բախտին չարժանանալով) ոչ բռնի գործողությունների ձեռնարկի կողքին. տարբերությունները վեր հանելը դյուրին է, բայց ընդհանրությունները շատ ավելի քողարկված են: Իսկապես, այստեղ փոխադարձաբար սովորելու շատ բան կա, եթե հաջողվի զինվորականությանը հետ պահել բռնությունից և այլ ազգերի ու դասակարգերի վրա հարձակվելուց:

4. Պետական համակարգ և խաղաղության համակարգ. համատեղելի՞ են, թե՝ ոչ

Խաղաղության հետ արդի պետական համակարգի՝ հիմնականում անհամատեղելի բնույթի պատճառների շարքում պետությունների հայրիշխանականությունն է, ամբարտավանությունն ու գաղտնարարությունը, նրանց *causa sui* խառնվածքը, այսինքն ինքն իր սեփական պատճառը լինելու և ոչ որևէ ուրիշի (անշուշտ նաև ժողովրդավարության) կողմից դրդված լինելու դիրքորոշումը, բռնության վերջնագրային միջոցների նկատմամբ մենաշնորհն ու դրանք գործադրելու հակումը («մուրճով զինված մարդուն աշխարհը մեխ է թվում»): Այս ամենը չափազանց վատ է. նույնիսկ երբ ավելի նվազ արտահայտությամբ դրսևորվում է փոքր պետությունների, և շատ ավելի վատ՝ մեծ, առավել վատ՝ գերպետությունների դեպքում:

Բացի այդ, պետություններն ինքնապավինում են հավատքի ուրույն մի համակարգի շնորհիվ, որը, եթե կոպիտ գծերով ներկայացնենք, հետևյալ տրամաբանությունն ունի.

- համաշխարհային համակարգը հիմնականում պետությունների համակարգ է,
- պետություններն աշխարհի համակարգում ներկայացվում են միմիայն պետությունների ղեկավարների/կառավարությունների, արտաքին գործերի նախարարների և դիվանագետների կողմից,
- այդ ներկայացուցիչներն ունեն պետական շահերը (ազգային շահերը) սահմանելու մենաշնորհ, և նրանց խնդիրը հենց դրանց նպաստելն է,
- պետությունների շահերը երբեմն անհամատեղելի են լինում. այդ անհամատեղելիությունները վերացնելու հիմնական ճանապարհը բանակցություններն են. հումքը պետական շահերն են, արդյունքը՝ վավերացված պայմանագրերն ու կոնվենցիաները,
- աշխարհի և մարդկանց շահերը փոխհամաձայնեցված պետական շահերի հանրագումարն է (նման է «տղամարդկանց շահեր = մարդկանց շահեր» բանաձևին):

Հիմնական խնդիրներն առաջին ու վերջին նախադասություններում են: Երկուսն էլ ակնհայտորեն սխալ են և, հավանաբար, ներկայացվում են գերազանցապես այնպիսի հոգեկան տրամադրվածություն ունեցող մարդկանց

կողմից, ինչպիսիք նկարագրված են այս ենթագլխի առաջին նախադասության մեջ: Համոզմունքը, թե ազգային շահերն առաջ տանելու համար պատրաստված մարդիկ (ովքեր հենց դրա համար էլ վճարվում են) *ipso facto*[i] համապատասխանում են նաև աշխարհի ու մարդկանց շահերն առաջ տանելու համար, հավատքի դրսևորում է (կրկին անառարկելիություն):

5. Պարադիգմ I. Ուժերի հավասարակշռություն (առավելապես համակարգերի միջև)

Խաղաղության հետազոտությունը, ինչպիսին այն ուշ 50-ականներին է ինստիտուցիոնալացվել, ակնհայտորեն ինչ-որ չափով Սառը պատերազմի (Սառը խաղաղությա՞ն) զավակն է: Ուժերի հավասարակշռության պարադիգմը, որն Արևմուտքը մեկնաբանում է որպես գերազանցություն, իսկ Արևելքը՝ որպես հավասարություն, խաղաղության հետազոտողների կողմից մերժվել է ոչ թե որպես դերակատարների նպատակների ու մտադրությունների քայքայիչ մոդել, այլ իբրև խաղաղության նորմատիվային պարադիգմ:

Քննադատների մի խումբ կենտրոնացել էր «հավասարակշռություն» հասկացության վրա և պնդում էր, թե այն որևէ կիրառական հոմանիշ չունի, հետևաբար, սին է: Ո՛չ դերակատարները, ո՛չ երրորդները երբեք չեն կարողանա համաձայնության հասնել «հավասարակշռություն» բառի նշանակության շուրջ, եթե չեն ուզում հիմնվել խիստ անհիրատեսական այն ենթադրության վրա, թե խոսքը երկու երկրների կամ դաշինքների մասին է, որոնք երկուսն էլ հավասարապես տիրապետում են զենքերի՝ որակապես նույնանման և քանակապես համադրելի համակարգերի: Բավական է անտեսվի այդ ենթադրություններից գոնե մեկը, և բոլոր կողմերը կպնդեն, որ հենց իրենք են հետ մնում՝ ընդսմին հավակնելով որակապես և/կամ քանակապես սպառազինվելու (նույնիսկ՝ հանուն խաղաղության)՝ պարադիգմում ներկառուցված իրավունքին:[1]

«Ուժեր» հասկացության շուրջ առկա քննադատությունը կենտրոնացել էր այն բանի վրա, թե ինչ կլինի սպառազինությունների մրցավազքի պարույրի վերջում. «պատերազմ՝ բոլոր անհրաժեշտ միջոցներով»: Հնարավոր է, որ միջուկային պատերազմ ծրագրողների համար դրա սուբյեկտիվ հավանականությունն աննշան է եղել, բայց ամեն դեպքում զրո չի եղել, քանզի այդ դեպքում հակահարվածի հավանականությունը ևս զրո կլիներ: Իրականում ծրագրողներն աչքի տակ հոլոքոսթ ունեցել են, որը «ՆԱՏՕ-Վարշավայի պայմանագրի երկրներ» պատերազմի թատերաբեմում կխլեր, ասենք, 500 միլիոն մարդկային կյանք: Այդ ծրագրողների մեծ մասն այսօր շարունակում է ազատ ման գալ:

Քանի որ պատերազմ չեղավ, արդյո՞ք կարելի է պնդել, թե «վախեցնելն աշխատեց»: Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ նման պնդումը կանխադրում է, որ կողմերից մեկը (եթե ոչ՝ երկու կողմերն էլ) իսկապես պատերազմ ծրագրել է (են), բայց վախեցել է (են) հետևանքներից՝ հիմնական խնդիրն այն է, թե լեգիտիմացնելով մեգա-բռնությունը՝ ինչպես էր այն վայրագացրել ծրագրողներին ու ծրագրվածը:

---

[i] ipso facto (լատ.)- այդ փաստի հիմքով /թարգ./

Պատկերացնենք Օսվենցիմը՝ գազախցիկներով և դիակիզարանով, բայց կառուցված՝ մարդկանց (հրեաները ներառյալ) վախեցնելու, «շեղումից» հետ պահելու նպատակով: Մի՞թե մենք դա կներեինք՝ իբրև վերջին հաշվով անմեղ մի բան: Կամ կըմբռնեի՞նք, արդյոք, այն հսկայական հոգեբանական բռնությունը, որը կկիրառվեր պոտենցիալ զոհերի նկատմամբ՝ անգամ եթե սպառնալիքն ի կատար չածվեր, ինչպես նաև հրեշավոր այդ վարժության բոլոր մասնակիցների վայրագացումը:

6. Պարադիգմ II. Օրենքի իշխանություն (առավելապես համակարգի ներսում)

Սառը պատերազմի ավարտից հետո ասպարեզ մտավ պարադիգմ II-ը՝ մի պարադիգմ, որը ներքին հակամարտություններին մոտենում էր ավելի շուտ համակարգի ներսում կանոնները խախտողներին պատժելու, քան համակարգից դուրս գտնվողներին հետ պահելու տեսակետից: Պարադիգմը սկսում է լեգիտիմ կանոններից, և տանում է դեպի գործողություններ, որոնք բնորոշվում են որպես խախտումներ, իսկ խախտումները՝ որպես մարդկանց դատարանի առջև կանգնեցնելու պատճառներ, դատարաններն էլ օգտագործվում են ազատ արձակելու կամ դատապարտելու, դատավճիռները՝ ցավ պատճառելու, ցավը՝ տուժողների՝ վրեժի ենթադրյալ կարիքը բավարարելու և, միաժամանակ, անհատական և ընդհանուր կանխարգելման գործառույթներին ծառայելու համար: Այստեղ խոսքը կրոնական արմատներ ունեցող մի պարադիգմի մասին է, որը, սակայն, Աստծո դերում Պետությանն է տեսնում: Այն մեղավորի ու տուժողի միջև հաշտության եզր չի թողնում, բայց հոգ է տանում այն մասին, որ պատիժը կրելուց հետո հստակ հարաբերություններ ձևավորվեն:

Այս պարադիգմի միջազգայնացումը պահանջում է միջազգային նորմերի (օրենքների) ընդունում և համաշխարհային համակարգի՝ իբրև ներքին համակարգի հայեցակարգայնացում: Այնուհետև, հետևում են ՄԱԿ-ի խարտիայի VI և VII գլուխները, որոնք դիվանագիտական և տնտեսական պատժամիջոցներից խաղաղապահության միջոցով հասնում են մինչև խաղաղության պարտադրում: Դա այնուհետև երկրները մեկուսացնելու, մարգինալացնելու, իբրև մերժվածներ խարանելու, ծերերին ու հիվանդներին, կանանց ու երեխաներին դանդաղ սպանելու (կարճ ասած, հայրիշխանական/մերիտոկրատական հասարակությունների սահմանների երկայնքով սպանելու) արտոնություն է տալիս՝ ի վերջո ռմբահարելով հետ շպրտելով «նրանց» դեպի մինչարդյունաբերական կամ քարեդարյան շրջան: Ռազմական տեսակետից այս ամենը նշանակում է անպատժելի կերպով բռնություն սանձազերծելու հնարավորություն, քանի դեռ մյուս կողմը թույլ է. եթե վերջինս թույլ չլիներ՝ կօգտագործվեր պարադիգմ I-ը: Դեպի առավելագույն բռնություն հակվածների համար սա պիտի որ հրաշալի լինի՝ իրենց սովորածը գործնականում կիրառելու առիթ, ինչը նրանք գործադրելու իրավունք չեն ունեցել պարադիգմ I-ի գերիշխանության ժամանակ (ինչպես մի մենաստանում, որտեղ սեռական դաստիարակություն կա, բայց կա նաև փորձառելու ցանկություն):

Այս բռնի, վրեժով լի պարադիգմը (II) (Օրենքի իշխանության անառարկելի համոզմունքով) չպետք է ողջունել որպես պարադիգմ I-ի խաղաղ այլ-

ընտրանք: Ներերկրյա իրավահամակարգերի շրջանակներում անհատական և ընդհանուր կանխարգելման դրույթների էմպիրիկ հետազոտությունները ցույց են տալիս, որ պատժելը բացասական ներպետական ներգործություն ունի: Այդ դեպքում, ինչու՞ պետք է ենթադրել, թե այն ավելի լավ կգործի միջպետական մակարդակում, որտեղ նորմերն է՛լ ավելի քիչ են յուրացված: Դիվանագիտական պատժամիջոցները մեկուսացնում են այն դերակատարին, ում հետ մենք ամենաշատն ունենք երկխոսության կարիք: Տնտեսական պատժամիջոցները բոլորին (բացի այն ամրակազմ տղամարդկանցից, ովքեր կարող են սպանվել ուղղակի բռնությամբ) դանդաղորեն սպանելու ճանապարհն են: Երկուսը միասին խարանում են երկիրն իբրև մերժված՝ զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ դարձնելով այն «բոլոր անհրաժեշտ միջոցներով» շարժվող երկիր:

Պատերազմական հանցագործությունների տրիբունալները, ինչպիսին Հաագայում տեղակայված Նախկին Հարավսլավիայում կատարված հանցագործությունների միջազգային տրիբունալն է (International Crimes Tribunal for Former Yugoslavia /ICTFY/) իր 24 բանտախցերով, իրենցից հենց նահատակներ կերտելու միջոց են ներկայացնում: Այստեղ պատժվում են զարհուրելի ոճիրներ իրագործած ոճրագործները, եթե խոսքը ստորին կարգի երկրների («Բալկաններ») ստորին կարգի մարդկանց մասին է. նրանք սպանել են ուղղակիորեն՝ դեմ հանդիման, հաճախ մինչ այդ տանջահար անելուց և բռնաբարելուց հետո (ի տարբերություն նրանց, ովքեր սառնասրտորեն սպանում են հեռվից)՝ ի տարբերություն «ամենավերևներում» նստածների, ովքեր դրսից հրամաններ են արձակում կամ ներսում քաղաքական նենգափոխումներով են զբաղված: 1991թ. դեկտեմբերի կեսերին Սլովենիայի և Խորվաթիայի ճակատագրորեն վաղաժամ ճանաչումը Եվրոպական Միության (այն ժամանակ՝ համայնքի) Նախարարների խորհրդի կողմից, թերևս, երիցս առավել սխալ էր, քան 1919թ. Վերսալի հաշտության պայմանագրի սխալը: (Ի դեպ, նույն մեծության սխալ էր նաև մի քանի շաբաթ անց՝ 1991թ. դեկտեմբերի վերջին Ալժիրում անցկացված ընտրությունների արդյունքներն իբրև «ձախողված» ճանաչելը հօգուտ Ազատագրության իսլամական ճակատի): Թե՛ Եվրամիության և թե՛ Ալժիրում իշխողների դեպքում խոսքն ինքնակալ որոշումների մասին է, որոնք ողջունվեցին նենգափոխող և նենգափոխված լրատվամիջոցների կողմից:

Սակայն արդյո՞ք անուշադրության պիտի մատնենք անհատական հանցագործությունները և կենտրոնանանք միայն վատ, կոլեկտիվ *քարմայի* վրա, մեղքերը բացահայտելու փոխարեն երկխոսությունների ու հաշտեցման վարժանքների օգնությամբ կենտրոնանանք միայն սուզվող նավի և նրա բացվածքների վրա: Մի՞թե զոհերն արդարադատության իրավունք չունեն: Մի՞թե այդ հանցագործությունները իրականացնողների հայրենակիցներն իրավունք չունեն ազատվել կոլեկտիվ մեղքից՝ մատները ճիշտ ուղղությամբ պարզելով:

Սրանք խիստ արդիական հարցեր են և, ինչպես տեսնում ենք, չունեն լիովին գոհացնող պատասխաններ: Ուստի ես, ինչպես և քիչ առաջ պարադիգմ I-ի դեպքում, լիովին չեմ մերժի նաև պարադիգմ II-ը, այլ անձամբ կընդունեմ այն քննադատողի կեցվածք՝ կառուցողական պատասխաններ ներկայացնելու պարտավորությամբ:

Ի դեմս հետբռնապետական շրջանի Կենտրոնական և հարավային Ամերիկայում, ինչպես նաև Հարավային Աֆրիկայում գործող Ճշմարտության հանձնաժողովի՝ մենք կարող ենք այս ուղղությամբ աշխատող մի խոստում-

նալից գործիք ունենալ: Դիցուք, այդ հանձնաժողովներն էմպիրիկ աշխատանք ունեն անելու՝ պարզելու համար, թե ինչ է տեղի ունեցել, *wie es eigentlich gewesen*[i]՝ հոգևոր և աշխարհիկ հիմնարար արժեքների լույսի ներքո նշվածին ոչ անստույգ գնահատական տալու քննական աշխատանք և երկու հիմնական հարցեր առաջադրելու կառուցողական աշխատանք, այն է՝ անցյալի այս կամ այն խաչմերուկում ի՞նչ պետք է անեինք/ի՞նչ ենք արել (անցյալի բուժում) և ի՞նչ կարող ենք անել այժմ:

Բարդ խնդիր է: Սակայն ջրի երես դուրս եկող փաստաթղթերը քաջալերում են, հատկապես, երբ բազմաթիվ քաղաքացիներ են վկայություններ տալիս: Նույնիսկ եթե դա անանուն կերպով է արվում, միևնույն է, ամենքը կիմանան, թե ում մասին է խոսքը, իսկ դա էլ իրենց հերթին գիտեն նրանք, ում մասին է հենց խոսքը: Սակայն տվյալ պահին վերջիններն ավելի քիչ են պախարակված և ավելի ազատ են հասարակության մնացած մասի պես եզրակացություններ կատարելու համար: Եթե բանտի բաժանարար պարիսպները դնելու փոխարեն նրանց և զոհերի ու նրանց հարազատների միջև երկխոսություն խթանվի, ապա առավել խորը խաղաղությունը կարող է (կարո՞ղ է) հնարավոր դառնալ:

7. Խաղաղություն խաղաղ միջոցներով. երեք կետ

Եթե բռնությունը = ուղղակի + կառուցվածքային + մշակութային բռնություն, ապա, այդ դեպքում, բռնության դեմն առնելու կամ այն կանխելու համար հատկապես ի՞նչ կարող են անել խաղաղության աշխատողները: Անկասկած՝ ախտորոշել, կանխատեսել և բուժել. միայն թե՝ ինչպե՞ս:

Ուղղակի բռնության արմատները մեծամասամբ տանում են դեպի ուղղաձիգ կառուցվածքային բռնություն (ինչպիսիք շահագործումն ու ճնշումն են), որը ծառայում է ազատագրմանը կամ ազատագրման կանխմանը: Հիմքում մշակութային բռնությունն է, որը լեգիտիմացնում է կառուցվածքային և ուղղակի բռնությունը՝ ինչպես այն վերացնելու, այնպես էլ պահպանելու նպատակով: Հեռանկարը տխուր է. *բռնությունը բռնություն է ծնում՝* մասամբ վրեժի պարզունակ մեխանիզմի, մասամբ էլ այն իրողության պատճառով, որ բռնի գործողություններն օգտագործվում են բռնության հետևանքով առաջացած խղճի խայթից ազատվելու նպատակով:

Մոտեցումներից մեկը կարող է լինել դերակատարներին գործելու լայն դաշտ տալը, որպեսզի հակամարտության դեպքում նրանք կարողանան գործել առանց բռնության՝ ընդսմին *խաղաղապահության* մեջ ավելի շատ ոչ բռնի (կամ քիչ բռնի) դերեր ներկառուցելով:

Այստեղ մեծ դեր ունի բռնությունը սանձելուն ուղղված ռազմական պատրաստվածությունը: Անհրաժեշտ են բռնության միջոցների և դրանք կիրառելու հիմքում ընկած մտածելակերպի վերաբերյալ գիտելիքներ: Միևնույն ժամանակ, «ամբոխը վերահսկելու» ոստիկանական պատրաստվածությունն ավելի գերադասելի է, քանզի այն ավելի շուտ իշխանական կարողություններն ի ցույց դնելու և պակաս բռնի բնույթ ունի: Ավելին, բնակչության շրջանում ոչ-բռնությանն ուղղված ակտիվ վերապատրաստման ծրագրեր պետք է իրակա-

[i] wie es eigentlich gewesen (գերմ.)- ինչպես է դա իրականում պատահել /թարգ./

նացնել, ինչպես նաև հակամարտությունների ժամանակ միջնորդական մեթոդների կիրառման վերաբերյալ դասընթացներ անցկացնել, որպեսզի մարդիկ իմանան, թե ինչ պետք է ասել և անել, երբ միմյանց նկատմամբ փոխադարձ և հիմնավոր ատելությամբ լի հակամարտող կողմերի հետ հանկարծ հայտնվում են նույն վայրում:

Քանի որ կանայք ավելի են օժտված հարաբերություններ ստեղծելու ունակություններով և, միաժամանակ, ավելի քիչ են հակված ռազմական տեխնիկա կիրառելուն, ապա պետք է ապահովել, որ խաղաղապահների առնվազն 50 տոկոսը կանայք լինեն: Խաղաղապահությունն այժմ 40 տարեկան է, հաջորդ 40 տարվա ընթացքում շատ բան կարելի է բարելավել:

Խաղաղարարությունը կարելի է նույնացնել որևէ հակամարտության ստեղծագործական և միաժամանակ ընդունելի ու տևական արդյունքների փնտրտուքի հետ: Մենք միշտ նույն սխալն ենք անում, ինչն այլևս աններելի է. «գագաթնասեղանի»՝ ամենաբարձր մակարդակի, «առաջնորդների» հանդիպումների վրա կենտրոնանալը: Փոխարենը՝ թո՛ղ «փքթեն» համաժողովները, օգտագործե՛ք կապի ժամանակակից միջոցները՝ խաղաղության գաղափարների տեսանելի հոսքում ընդգրկելով ողջ հանրությունը: Առաջարկները կարող են հակասական լինել, բայց ինչու՞ պիտի խաղաղությունն ամենուրեք նույն դեմքն ունենա: Ճամփա՛ բացեք բոլոր տեսակետների համար, ոչ մեկին դուրս մի՛ թողեք և փորձե՛ք հենց խաղաղարարության գործընթացից կառուցվածքային խաղաղության մոդել կերտել: Ենթադրել, որ մի բուռ դիվանագետներ միայնակ կարող են այդ բանն անել, նմանվում է այն (հետ-)ստալինյան համոզմունքին, թե 400 «ապարատչիկները» կարող են տնտեսություն պլանավորել 400 միլիոն մարդկանց համար: Կամ նայե՛ք Իսրայելին ու Պաղեստինին, որտեղ երկու կողմերի առաջնորդներն ակնհայտորեն սառեցնում են խաղաղությանն ուղղված շարժումները: Այստեղ խնդիրները չափազանց բարդ են, բարդ են այն աստիճան, որ դրանց լուծման գործընթացում զանգվածների մասնակցությունն անհրաժեշտ է: Իսկ ստեղծագործականություն կարելի է գտնել ամենուր, մնում է ընդամենը համապատասխան ձևով խթանել այն:

Խաղաղաշինությունը կարելի է նմանեցնել կառուցվածքային և մշակութային խաղաղության կերտման հետ: Անհրաժեշտ է հասարակությունում գոյություն ունեցող չանդամակցված կառուցվածքային հակամարտությունները տեսնելու ունակություն, ինչը չի նշանակում, որ պետք է դրանք բոլորը փորձել լուծել (ինչն, ամեն դեպքում, անհնար կլիներ), սակայն գոնե տեսնել պետք է: Սա դրական փոխակերպման ուղղությամբ շատ կարևոր քայլ է: Այսպիսով, պետք է բացահայտել թե՛ շահագործումը, ճնշումն ու մարգինալացումը (ուղղաձիգ կառուցվածքային բռնություն), թե՛ այն խմբերը, որոնք իրար չափից ավելի են մոտ, որպեսզի իրարից գոհ լինեն, կամ չափից ավելի են հեռացված, որպեսզի սիմբիոտիկ փոխհարաբերություններ ունենան (հորիզոնական կառուցվածքային բռնություն): Ուղղաձիգը պետք է առավել հորիզոնական դարձնել, իսկ հորիզոնականը՝ օպտիմալացնել:

Առավել դժվար է վերացնել մշակութային բռնությունը: Այստեղ, ինչպես կառուցվածքային բռնության դեպքում էր, կարող է օգնել «այսբերգի գագաթ» փոխաբերությունը: Բայց ահա սառցալեռան թաքնված մասը խորը թաղված է ոչ թե սոցիալական կառուցվածքում, այլ մշակույթում՝ խորքային կոլեկտիվ ենթագիտակցության մեջ: Բանակցող դիվանագետների դեպքում, օրինակ, կարելի է վեր հանել չորս շերտ՝ ազգային շահերը, որ նրանք ենթադրաբար

ներկայացնում են (ասենք, արտերկրում բազաներ ունենալու ցանկությունը), անհատական շահերը (օրինակ, բանակցելու փայլուն որակների դրսևորում՝ կարիերայի նպատակներով), անհատական ենթագիտակցականը (օրինակ, թույլ լինելու զգացումը հաղթահարելու ցանկություն) և կոլեկտիվ ենթագիտակցականը՝ բնականոնի և բնականի մասին իր քողարկված ենթադրություններով (տիեզերաբանություն, մշակութային կոդեր, խորքային մշակույթ):

Վերցնենք ԵՄԱ համախտանիշը (երկփեղկում, մանիքեականություն, արմագեդոն): Այստեղ աշխարհն ընկալվում է որպես երկբևեռ (ասենք, Արևմուտքն ընդդեմ իսլամական-կոնֆուցիական դաշինքի)[2], մի կողմը համարվում է բարի, մյուսը՝ չար (գուշակեք, թե որը), և քարոզվում է սպասվելիք պայքարը (այսինքն, ավելի լա՛վ նախապատրաստվեք դրան): Եթե բանակցություններում ԵՄԱ-ն համատեղ կոլեկտիվ ենթագիտակցականն է, ապա հաջորդ բնական քայլն այն կլինի, որ դիվանագետները քանոններով գծեր կքաշեն քարտեզների վրա: Այդ գծերից յուրաքանչյուրը կարող է որևէ զինադադարի գիծ դառնալ: Այդ ձևով այն կարող է գոյատևել և, գուցե, մի օր նույնիսկ վերածվի խաղաղության գծի, եթե գործընթացի հիմքը իրական ինքնորոշումը լինի: Բայց այն կարող է նաև պատերազմի գիծ դառնալ՝ կողմերի տարածքային ամբողջականությունն ամրապնդելու համար դրա երկու կողմում էլ էթնիկ զտումներ հրահրելով:

Այսպիսով, կոլեկտիվ ենթագիտակցությունը կարող է հատկապես վտանգավոր լինել այն ժամանակ, երբ նրանում առկա ընդհանրական, սակայն չհնչեցված կանխադրումներն ավելի շատ պատերազմողական, քան խաղաղական են: Այդ իսկ պատճառով բանակցող վերնախավերը, որոնք փորձում են խոչընդոտել ոչ միայն արդյունքների (գաղտնի) արձանագրությունները, այլ նաև բուն բանակցային գործընթացը (գաղտնի «նուրբ» բանակցություններ) թափանցիկ դարձնելուն, խաղաղության հասնելու գլխավոր խոչընդոտներն են:

8. Խաղաղությանն ուղղված գործողությունների լեգիտիմացումը. դարձելիության սկզբունքը

«Որովհետև տանում է խաղաղության» արտահայտությունն, իբրև գործողության հիմնավորում, բավարար չէ, քանզի նախապես չենք կարող իմանալ, որ դա անառարկելի է: «Որովհետև կոչված է խաղաղության տանելու»՝ դարձյալ չի բավարարում. դա ամեն ոք կարող է պնդել իր դեպքի համար, և նույնիսկ զինվորականությունը, որ պատրաստ է չորս կողմում մահ սփռել, կարող է առարկել, թե՝ «խաղաղությունը մեր մասնագիտությունն է»: «Որովհետև պահանջարկ կա, և մենք կարող ենք առաջարկ ապահովել», կամ «քանի որ մենք առաջարկն ենք և ստեղծում ենք պահանջարկ» պնդումներն արտացոլում են շուկայի տրամաբանության երկու կողմերը, բայց արդարացնելու համար կրկին բավարար չեն, որովհետև երկու հիմնավորումներն էլ պատասխանատվությունը տեղայնացնում են պահանջարկի կողմում: Բայց եթե այդ պահանջարկը պետական համակարգից է գալիս, ապա ոմանց կթվա, թե դրանով լուծված է լեգիտիմացման խնդիրը, մասնավորապես, եթե կառավարությունը ժողովրդավարական է. կամ եթե Միացյալ ազգերի կազմակերպությունը ժողովրդավարական լիներ: Միացյալ ազգերի համակարգը, հավանաբար,

կզարգանա համաշխարհային ժողովրդավարության ուղղությամբ, բայց ոչ շատ արագ:

Տառապանքը նվազեցնելուն և կյանքը բարելավելուն ուղղված՝ սեփական կարեկցանքով պայմանավորված՝ սեփական գիտելիքների շրջանակում գործելու յուրաքանչյուրի իրավունքը քննարկման ենթակա չէ: Բայց որպես կենդանի էակներ, մենք անկատար ենք, և այդպիսին են նաև մեր կարեկցանքն ու իմացությունը: Սակայն այդ դեպքում, ելնելով ընդհանուր մարդկային սխալականության սկզբունքից, պետք է մի շատ հիմնարար հետևություն անել՝ *այնպե՛ս գործեք, որ ձեր արածի հետևանքներն անդառնալի չլինեն*: Գերադասեք ա՛յն գործողությունը, որը կարելի է հետ բերել: Զգուշությա՛մբ առաջ շարժվեք: Հնարավոր է, որ իրավացի չեք: Ձեր գիտելիքը կարող է անհամապատասխան լինել, ձեր կարեկցանքը՝ սխալ ուղղորդված:

Բայց մի՞թե դա հակահնտուիտիվ չէ: Մի՞թե խաղաղությունը չպետք է քանդակել քարի վրա կամ դաջել՝ պողպատին: Քանի որ դա կարող է սխալ խաղաղություն, իսկ եթե անգամ ճիշտ, ապա չափից ավելի ստատիկ խաղաղություն լինել: Խաղաղությունը գործընթաց է: Մենք կարող ենք ենթադրել, որ մարդ էակներն ընդհանուր առմամբ հակված են բարելավելու կյանքը կամ, առնվազն, խույս տալու տառապանքից: Պատշաճ խաղաղությունը, շարունակ բարելավվող խաղաղությունը կամ խաղաղության գործընթացը միշտ էլ պաշտպանություն կգտնեն: Այդուհանդերձ, այստեղ կատարյալ դեղատոմս կամ համադարման չկա:

Անդարձելիությունն, անշուշտ, չափ ունի: Մարդկանց մեծամասնությունը ֆիզիկական մահը մարմնի համար անդառնալի է համարում, վերջնական. ուժեղ փաստարկ է ոչ միայն մահվան դատավճռի, այլ նաև ցանկացած տիպի մահաբեր բռնության դեմ: «Դա չի կարող հետ բերվել»: Ավելին, «հնարավոր է՝ ոչ այն մարդուն սպանես»: Նման փաստարկները հիմնաքարեր են ոչ-բռնության սկզբունքային դիրքորոշման ճանապարհին. և, անշուշտ, տեղ ունեն նաև ներիմացական կրոնների կանխադրումներում. «ամեն մարդու մեջ Աստծուց ինչ-որ բան կա»: Ուրեմն, եղի՛ր պարբերական, ո՛չ գծային… մտքերում, թե գործերում:

Սա վերաբերում է նաև մարդու ձեռքով ստեղծված առարկաների նկատմամբ ֆիզիկական բռնությանը: Քանդված շենքն այլևս չի վերականգնվում: Այն որպես այդպիսին կարելի է սոսկ նմանակել, ինչպես կվկայի յուրաքանչյուրը, ով տեսել է Եվրոպայի վերականգնումը Երկրորդ աշխարհամարտի բռնություններից հետո: Ամեն փշրվող բան ենթարկվում է բռնության և մահվան բարձր էնտրոպիայի[i]՝ լիակատար անդարձելիության: Բռնությունն իռացիոնալ է:

Բայց ի՞նչ ասել այն բռնությանը, որը թեև վնասում ու վիրավորում, սակայն չի սպանում: Սա մեզ հայտնի է իբրև վնասվածք (տրավմա), և սրա անգամ ամենաորակյալ մշակումը, որ կանեն ֆիզիկական (մարմնին հասցված) և հոգեկան (հոգուն հասցված) վնասվածքների հարցերով զբաղվող մասնագետները, երբեք չի կարող լիովին անհետացնել այդ վնասվածքը: Սպիները մնում են՝ նաև մեռնողից հետո ապրող հարազատների մոտ, ովքեր ստիպված

[i] Էնտրոպիա (հուն. trope-շրջադարձ, փոխակերպում)- էներգիայի փոխակերպման կարողության արտացոլումը. որքան մեծ է համակարգի էնտրոպիան, այնքան քիչ էներգիա կա նրանում, որ կարող է փոխակերպվել: Համակարգում էնտրոպիայի աճը դրանում քաոսի, չհամակարգվածության աճի վկայությունն է /թարգ./:

են համակերպվել սիրված մարդու անընդունելի մահվան փաստի հետ: Ենթադրել, որ բոլոր սպիները հնարավոր է անհետացնել, նշանակում է հավակնել պահեստամասերի օգնությամբ բուժված մարմինների և հոգիների՝ առանց հիշողության:

Արդյո՞ք հնարավոր է հետ սովորել ուղղակի բռնության (զորավարժություն) կամ կառուցվածքային բռնության (օրինակ տիրապետող տնտեսագիտության կամ իրավագիտության կողմերը) մեթոդների վերաբերյալ սովորածը, թե՞ հասցված վնասն անդարձելի է, ինչպես միջուկային զենք ստեղծելու վերաբերյալ մեր գիտելիքի դեպքում է: Միգուցե, վերջինն է ճիշտ, բայց դա չի նշանակում, որ բոլոր գիտելիքները պետք է նաև իրականացվեն:[3]

Կա պատերազմի և բռնության էնտրոպիա, բայց կա նաև խաղաղության էնտրոպիա:[4] Ես արդեն փաստարկել եմ, որ քառասային, խիստ տարբեր կառուցվածքները (նա՛ն մշակույթները)՝ փոխկապվածության բոլոր ձևերով, իրենցից ներկայացնում են խաղաղ միջոցներով խաղաղության ավելի լավ կրողներ, քան վերջնամարտի պատրաստ, ցածր էնտրոպիա ու բարձր էներգիա ունեցող հստակ ուրվագծված կառուցվածքները (օրինակ, բևեռացված դաշինքները) և մշակույթները (ԵՄԱ համախտանիշներով): Հակասությո՞ն: Ո՛չ, քանզի խաղաղության էնտրոպիան ենթադրում է անեղծ, նույնիսկ բարելավված կյանք, բայց այնուհետև այնպես է կազմակերպվում, որ հնարավորություն ընձեռի համալիր Ես-ի հոգևոր էնտրոպիայի և գերհամալիր հասարակական ու համաշխարհային խառնաշփոթի հասարակական էնտրոպիայի մեծացման համար: Խաղաղության էնտրոպիան արգելապատնեշ է մահվան և բռնության ֆիզիկական ու հոգևոր էնտրոպիայի դեմ: Միաժամանակ գոյություն ունի նաև բնության էնտրոպիա, որը մեզ հայտնի է հասուն էկոհամակարգերի ձևով՝ հիմնված խորը էկոլոգիական բազմազանության և սիմբիոզի վրա: Այստեղ ևս բանաձևը բարձր էնտրոպիան է:

Հակամարտության ստեղծագործական, դրական փոխակերպման խնդիրը ոչ միայն բռնությունից խուսափելը և անդարձելիից ձեռնպահ մնալն է, այլ նաև էնտրոպիայի աճը՝ հակամարտության տվյալ փուլից առավել հասուն Ես-ով և առավել հասուն սոցիալական ձևավորմամբ դուրս գալը: Այս դեպքում, արդեն, հակամարտությունը դառնում է Մեծն ուսուցիչ՝ հոգևոր նվեր բոլորիս համար: Բայց հակամարտության փոխակերպումը կարող է նաև բացասական ընթացք ունենալ՝ հանգեցնելով ահռելի անդարձելի փոփոխությունների մարդոլորտում, կենսոլորտում, քարոլորտում, ջրոլորտում և տիեզերոլորտում, վնաս պատճառելով նաև հոգուն (ինչն այլևս դյուրին չի լինի վերացնելը) առաջացնելով ատելություն և վրեժի ու հատուցման ծարավ, որ կյանքը հետագայում կառուցում են մի անդարձելի փոփոխությունը մյուսով փոխարինելու շուրջ: Հակամարտության փոխակերպման ստեղծագործական և համալիր գործընթացից զատ ներողամտության շունչ է պետք, ինչպես կար Գանդիից հետո այս հարյուրամյակի երկրորդ հսկայի՝ Նելսոն Մանդելայի մոտ, ով, Գանդիի պես, իսկական նվեր է բոլորիս:

9. Բուժում անցյալի համար. Վերսալ և Հարավսլավիա

Հակամարտությունների պարզ և համալիր ձևավորումների ժամանակ օգտակար մոտեցումներից մեկը մասնակիցներին խնդրելն է՝ առանձնացնել անց-

յալի շրջադարձային պահերը և ապա նրանց հարց տալը, թե դեռ ի՞նչ էր մնում անելու և ի՞նչ կարելի էր անել: Այլ խոսքով՝ փաստերին հակառակ պատմություն: Սա Երկրորդ համաշխարհային պատերազմի համար կիրառելիս անխուսափելիորեն կհանգեցնի 1919թ. Վերսալի հաշտության պայմանագրի հիմնախնդրին: Դրանից, անշուշտ, կարելի էր խուսափել: Կարելի էր հինգ տարի անց կազմակերպել մի երկրորդ՝ վերանայման համաժողով, որի ժամանակ կվերացվեր մի երկրի այդ աստիճան ծայրահեղ, բռնի նվաստացումը, շահագործումը, ճնշումը և մարգինալացումը: Երկրի, որի մեղքը (եթե հավատարիմ մնանք պատմությանը) եվրոպական ազգերի սիրած զվարճանքին՝ իրար սպանելուն, մասնակցել էր: Պարգևն էական կլիներ՝ Հիտլերին իր լավագույն փաստարկից զրկելը և Երկրորդ համաշխարհային պատերազմից խուսափելը: Նացիստների հետ պատասխանատվությունը կիսում են նրանք, ովքեր այդ մասին չեն մտածել, բայց նմանապես և նրանք, ովքեր մտածել, բայց իրենց մտքերն, ի վերջո, չեն իրագործել: Իսկապես, պատասխանատվությունը միշտ կիսվում է՝ հենց կոլեկտիվ *քարմայի* մեջ:

Վերցնենք ավելի թարմ մի օրինակ: Ի՞նչ կարելի էր անել Հարավսլավիայի տարածքները որպես անկախ պետություններ հապշտապ ճանաչելու փոխարեն: Ինքնորոշումը, որպես այդպիսին, խնդրահարույց չէ, բայց որտե՞ղ էին համապատասխան Ես-երը, և այդ որոշումից հետո ինչպե՞ս էին դրանք հարաբերվում միմյանց հետ: Խորվաթների ինքնորոշումը ենթադրում է ինքնորոշում Խորվաթիայում ապրող սերբերի համար. նույնը վերաբերում է Բոսնիայում ապրող խորվաթներին ու սերբերին և Սերբիայում ու Մակեդոնիայում ապրող ալբանացիներին և այսպես շարունակ: Լուծումը, թերևս, համայնքների մակարդակով քվեարկությունն է, 1920թ. գերմանա-դանիական օրինակով. այդ ընթացքում առաջացող անկախությունները քվեարկությունից հետո այնուհետև կարող են միավորվել համադաշնության սկզբունքով: Բայց երբ Եվրամիությունը, ԱՄՆ-ը կամ Անվտանգության խորհուրդն են սխալ գործում, ապա դա հեշտությամբ չի վերացվում. այստեղ խաղի մեջ անսխալականության հավակնություններն են մտնում, մի բան, ինչը չի նշանակում ուրիշ ոչինչ, քան՝ անդարձելիություն:

10. Բուժում ապագայի համար. ոչ-տարածքային ֆեդերալիզմ

Շատ ավելի խոստումնալից է մեկ այլ՝ մշակույթների միջև, ասել է թե՝ ազգերի միջև հակամարտությունների կարևոր թեմային անդրադարձող առաջարկը: Ազգերը մշակութային կառուցարկներ են, որ կանգնեցվել են սրբագործված ժամանակների և սրբագործված վայրերի *կայրոսի* շուրջը և որոնք վնասվածքի և փառքի ժամանակներն ու վայրերը ներհյուսում են կրոնի, ինչպես և գաղափարախոսության ու լեզվի մեջ: Տարածական բաղադրիչը, որը սուրբ վայրերը՝ ինքնահարատ լինելու համար բավարար հարակից հողերով պաշտպանելու նպատակի իրագործման մեջ է, առաջ է բերում անհամատեղելիություններ, երբ էնտրոպիան խիստ բարձր է, երբ այդ տարածքում եղած բոլոր ազգերը պահանջներ են ներկայացնում նույն քառակուսի կիլոմետրի նկատմամբ, և ոչ ոք չի ուզում տեղից շարժվել: Եթե որևէ պետական համակարգի (որը որպես այդպիսին մարմնավորում է ԵՄԱ հայտանիշը) ներկայացուցիչներն իրենց իշխանությունն սկսեն գործադրել քանոնների օգնությամբ, քա-

ղաքական քարտեզների վրա կամ անապատի ավազներում[5] գծեր քաշելով, ապա համարեք, որ Ե-ն արդեն տեղի է ունեցել: Մ-ն և Ա-ն էլ արդեն հեռու չեն և աշխատանք են ապահովում դիվանագետների համար: Եթե աշխարհում կա 2000 ազգություն, որոնք կարող են այդօրինակ պահանջներ ներկայացնել, բայց ընդամենը 200 երկիր և 20 ազգային պետություն[6], ապա, դեռ 1980 ճակատամարտեր կան առջևում. ինքնասպանության պատրաստի դեղատոմս՝ հաշվի առնելով առկա զենքերի որակն ու քանակը: Մ-ն և Ա-ն պետք է կանգնեցվեն:

Այլընտրանքներից մեկը կլիներ կողք-կողքի ապրելու էնտրոպիան բարձր պահելը, սեփական խորհրդարանի շուրջ յուրաքանչյուր ազգային ընտրազանգվածի համար ինքնավարություն ապահովելը՝ միաժամանակ մենաշնորհ ապահովելով տարածական և ժամանակային սրբությունների կառավարման, լեզվի, կրոնի, գաղափարախոսության և խոսքի (այսինքն, դաստիարակության մեծ մասի), ոստիկանական իշխանության և դատարանների ինքնակառավարման, ինչպես նաև տնտեսության որոշ կողմերի նկատմամբ: Սա այն ձևն է, որով ԱՄՆ հանրապետականներն ու դեմոկրատներն ընտրում են նախնական ընտրությունների ժամանակ, կամ Նորվեգիայում ապրող սամիներն իրենց սամիական խորհրդարանն են ձևավորում:

Խաղաղությունը հեղափոխական գաղափար է. «Խաղաղություն՝ խաղաղ միջոցներով»-ն այդ հեղափոխությունն իբրև ոչ բռնի է սահմանում: Այն տեղի է ունենում անընդհատ. մեր գործն այդ հեղափոխությունն առարկայականորեն և աշխարհագրորեն ընդլայնելն է: Անելիքներն անվերջ են: Հարցն այն է, թե արդյո՞ք մենք ի զորու ենք իրականացնել դրանք:

Վերևում ես հանդես եկա այն բանի օգտին, որ մենք՝ հրավիրված թե անկոչ, ավելի խորը պետք է զբաղվենք հակամարտություններով՝ ընդսմին շրջանցելով պետական համակարգերը. օրինականությունը մասամբ դուրս բերելով զոհերի նկատմամբ կարեկցանքից եկող իրավունքից (որոնց շարքերում, ի վերջո, նաև մենք կարող ենք հայտնվել, քանի որ հակամարտությունները գնալով քիչ են սահմանազատելի դառնում), մասամբ էլ առաջ տանելով խաղաղ գործելու հիմնարար սկզբունքը՝ դարձելիությունը, համաձայն որի մենք անում ենք ընդամենն այն, ինչ վերստին կարելի է հետ բերել, քանզի մենք ևս կարող ենք սխալված լինել: Ավելորդ է անգամ նշել, որ դա ենթադրում է սխալներն ընդունելու ունակություն, ինչպես նաև մեր դատողության «ինքնաակնհայտ», անառարկելի ճշմարտությունների փոխարեն էմպիրիկ աշխարհի վճիռն ունկնդրելու ունակություն, որն իրականում շատ հազվագյուտ կարողություն է:

Բայց խաղաղությունը նաև համառության ցուցաբերում է: Հնարավոր է, որ տասնամյակներ անցնեն, մինչև լավ գաղափարն իրողություն դառնա, եթե ընդհանրապես դառնա: Եվ եթե անգամ այն իրականացվի, ապա հայտնի չէ, թե դրա հեղինակն արդյո՞ք երբևէ այդ մասին կիմանա: Գուցե այդ ժամանակ նա մահացած լինի. գուցե նրա գաղափարը վերցնի մեկը, ով «միշտ էլ այդ կարծիքին է եղել»: Խաղաղության աշխատանքը ճանապարհ չէ, որով գնալիս անմիջական վարձատրություն պետք է ակնկալել: Նպատակը խաղաղությունն է, ոչ թե՝ հռչակը:

Այդ իսկ պատճառով, խաղաղության աշխատողները, անկախ այն բանից, թե խաղաղության ընդունված և պոտենցիալ բազմաթիվ մասնագիտություններից (իսկ ներկայում շատ նորերն են ուրվագծվում), հատկապես որի կրողն են, վաղ թե ուշ կբախվեն վարքի որոշակի կանոնների հաստատման

խնդրին: Եթե իրենք դա չանեն, ապա հաստատ մեկ ուրիշը կանի, օրինակ՝ պետական որևէ համակարգ, որն ամենախանդոտ ձևով մտահոգված է հակամարտությունների նկատմամբ իր կարծեցյալ մենաշնորհով: Դա վճռական նշանակություն ունեցող խնդիր է, և դրանով ավելի լավ կլիներ հնարավորին չափ շուտ զբաղվել:

Ծանոթագրություններ

[1] Այս դեպքն առավել մանրամասն ուսումնասիրվում է իմ՝ *"There are Alternatives!"* գրքում, Նոթինգհեմ 1984թ., գլ. 3 և 4:

[2] Սա Սեմյուել Հանթինգթընի «ազգերի բախման» մասին դրույթի ապակառուցողական երևակայություններից մեկն է:

[3] Օրինակ, բուրգեր կառուցելու եղանակի վերաբերյալ գիտելիքները շարունակում են գոյություն ունենալ կամ առնվազն հեշտությամբ վերականգնելի են, բայց վերջին ժամանակներում, այդուհանդերձ, քիչ բուրգեր են կառուցվել:

[4] Այս հանգամանքի ուսումնասիրության համար տե՛ս՝ *"Entropy and General Therapy of Peace"*, էջ 47-75 իմ *"Essays in Peace Research"*-ի առաջին հատորում, Կոպենհագեն 1975թ.:

[5] Սրա օրինակ է, թերևս, այն գիծը, որը սըր Փերսի Քոքսը 1922թ. քաշեց անապատի ավազի մեջ՝ որպես Իրաքի և Քուվեյթի միջև սահման:

[6] Միայն մոտավորապես ճիշտ, բայց լավ մտապահելի այս թվերի համար ես երախտապարտ եմ Հեքան Վիբերգին:

Անգլերեն- հայերեն օժանդակ բառարան

abolition of war	պատերազմի բացառում
ageism	տարիքախտրություն
archetype	նախատիպ
articulation	անդամակցում
balance of power	ուժերի հավասարակշռություն
basic human needs	մարդկային հիմնական կարիքներ
belligerence	պատերազմողություն
bellicist	պատերազմական, պատերազմապաշտ
benchmark	ստուգանիշ, չափանիշ
behavior	վարքագիծ
destructive behaviour	ապակառուցողական վարքագիծ
bottom-line	հնարավորի սահման
classism	դասակարգախտրություն
cognition	ճանաչողություն, ընկալում, իմացություն
compromise	փոխզիջում
conflict	հակամարտություն, կոնֆլիկտ, բախում
conflict transformation	հակամարտության փոխակերպում
conflict-solving	կոնֆլիկտների հանգուցալուծում
conflict prevention	կոնֆլիկտի կանխարգելում
conflict processing machinery	կոնֆլիկտների մշակման համակարգ
conflict intervention	հակամարտության միջամտություն
conflicting interests	բախվող շահեր
(de)conscientisation	(ան)գիտակցականացում
consciousness	գիտակցություն
consensus	փոխհամաձայնություն

(in)considerateness	(ան)սրտացավություն, (ան)նրբանկատություն
cosmology	տիեզերաբանություն (խորը/ խորքային մշակույթ/ գաղափարախոսություն, աշխարհայացք).
	Արևմուտք I (հունահռոմեական, արդի), Արևմուտք II (միջնադարյան), Հինդիկ (հնդկական), Բուդդիկ (բուդդայական), Սինիկ (չինական), Նիպպոնիկ (ճապոնական)
culture	մշակույթ
transpersonal culture	անդրանձնային/վերանձնային մշակույթ
epistemological culture	իմացաբանական մշակույթ
currently perceived choice	տվյալ պահի հնարավոր ընտրության ընկալում
decoupling	կապերի խզում
despotism (oriental)	բռնակալություն (արևելյան)
determinism	պատճառապաշտություն
dichotomy	երկվություն
manichean dichotomy	մանիքեյան երկվություն
dictatorship	բռնատիրություն, հրամայավարություն
dis-integration	մասնատում
dissociation	տարաբաժանում
empathy	հուզակցում
equitable symbosis	անկանխակալ համակեցություն
existentialism	գոյութենապաշտություն
expancionism	նվաճողականություն, ընդլայնողականություն
exploitation	շահագործում
externality	արտաքին դրսևորումներ
extrapolation	արտարկում
fission	բաժանում
fourfold table	տրամաբանական քառակուսի

frustration	հիասթափություն
fusion	միաձուլում
gradient	աստիճանականություն
hierarchy	ստորակարգություն
holistic	հոլիստական, ամբողջական, ամբողջապաշտական
homomorfism	նմանաձևություն, հոմոմորֆիզմ
idiosyncracy	յուրօրինակություն (իդիոսիկրազիա, անհատական յուրօրինակ հատկանիշ)
imanent	ներիմացական, իմանենտ
integration	միավորում, ինտեգրացիա
isomorfism	միաձևություն, իզոմորֆիզմ
legitimize	լեգիտիմացնել
nationalism	ազգայնականություն
non-violent transformation	ոչ բռնի փոխակերպում
pacifist	խաղաղական
para-military	կիսառազմականացված
patriarchy	հայրիշխանություն
pattern	հիմնօրինակ
peace	խաղաղություն
positive peace	դրական խաղաղություն
negative peace	բացասական խաղաղություն
peace making	խաղաղարարություն
peace keeping	խաղաղապահություն
peace building	խաղաղաշինություն
peace brigades	խաղաղապահ զորախմբեր
peace worker	խաղաղության աշխատող
peace activist	խաղաղության ակտիվիստ
peace builder	խաղաղաշինարար
peace keeper	խաղաղապահ
peace maker	խաղաղարար

peace promoter	խաղաղապահպան
conflict assistant	հակամարտությունների հարցերով օգնական
conflict facilitator	հակամարտության օժանդակող
conflict helper	հակամարտություններում օգնող
conflict manager	հակամարտության կառավարիչ
conflict transformer	հակամարտության փոխակերպող
penetration	ներազդում
phenomenology	երևութաբանություն
recoupling	վերամիակցում
repression	ճնշում
rupture	խզում, խաթարում
self-reliance	ինքնապավինում
self-restoration	ինքնավերականգնում
sexism	սեռախտրություն
singularism	եզակիություն
space	հարթություն
Nature space	բնության հարթություն
Human space	մարդկային հարթություն
Social space	սոցիալական հարթություն
World space	համաշխարհային հարթություն
Time space	ժամանակային հարթություն
Culture space	մշակութային հարթություն
speciesism	տեսակապաշտություն
(super)statism	(գեր)պետությունապաշտություն
stereotype	կարծրատիպ
territorialism	տարածքականություն
teutonic	տեւտոնական
therapy	բուժում
curative therapy	առողջացնող բուժում

preventive therapy	կանխարգելող բուժում
trancendent	վերիմացական, արտափորձային, տրանս-ցենդենտ
trancendence	վերիմացականացում
universalism	համընդհանրություն
violence	բռնություն
direct violence	ուղղակի բռնություն
structural violence	կառուցվածքային բռնություն
indirect violence	անուղղակի բռնություն
cultural violence	մշակութային բռնություն
wise agreement	խոհեմ համաձայնություն
yin/yang	ին/յան

Անգլերեն բնօրինակում օգտագործված ոչ-անգլերեն բառերի, արտահայտությունների, ինչպես նաև առանձին հասկացությունների բացատրական

ՑԱՆԿ

abortus provocatus (լատ.) — հղիության արհեստական ընդհատում

absentia belli (լատ.) — պատերազմի բացակայություն

ad nauseam (լատ.) — «սրտխառնոց առաջացնելու աստիճան»

adiaphora (հուն.) — անտարբեր

Bellum omnium contra omnes (լատ.) — «բոլորի պատերազմը բոլորի դեմ»: Իր «Լևիաթան» աշխատության մեջ Թոմաս Հոբսն այսպես է բնութագրել մարդկանց գոյաձևը նախքան պետությունների առաջացումը:

Blut und Boden (գերմ.) — արյուն և հող

bone of contention — տարաձայնության առարկան

"Catch-22" problem — «Հնարք 22» հիմնախնդիր. իմաստային առումով շատ մոտ է հայտնի «հավի-ձվի պատմությանը» և ենթադրում է երկու երևույթների (գործոնների) փոխնախորդելիության հետևանքով առաջացող փակ շղթա:

Cet animal est très méchant; quand on l'attaque, il se défend (ֆր.) — այս կենդանին շատ կատաղի է. հենց հարձակվում ես՝ պաշտպանվում է

chronos (հուն.) — «ժամանակ»: Օգտագործվում է որպես ժամանակի քանակական ձև, որը չափելի է (վայրկյաններով, րոպեներով, ժամերով և այլն):

conditio sine qua non (լատ.) — անհրաժեշտ պայման, առանց որի հնարավոր չէ երևույթը

contradictio in adjecto (լատ.) — տրամաբանական անհամապատասխանություն գոյականի և այն բնորոշող ածականի միջև

dem Kurfürsten etwas in die Ohren flüstern (գերմ.) — «կուրֆյուրստի (իշխանի) ականջին ինչ-որ բան շշնջալ»: Համազոր արտահայտությունը՝ «ականջը լցնել»:

des Pudels Kern (գերմ.) — խսկց. հարցի էությունը: Դարձվածքը սկիզբ է առնում «Ֆաուստից» :

Deutschland über alles (գերմ.) — Գերմանիա՝ ամեն ինչից վեր

dichotomia (հուն.) — երկվություն, դիխոտոմիա

divide et impera (լատ.) — բաժանիր և տիրիր

élan vital (ֆր.) — կենսական մղում/էներգիա: Փիլիսոփայական հասկացություն, որ առաջ է քաշվել ֆրանսիացի ինտուիտիվիստ Հանրի Բերգսոնի կողմից:

Endzustand (գերմ.) — վերջնական վիճակ

Entropy (հուն. tropɛ-շրջադարձ, փոխակերպում) — Էնտրոպիա, էներգիայի փոխակերպման կարողության արտացոլում. որքան մեծ է համակարգի էնտրոպիան, այնքան քիչ էներգիա կա նրանում, որ կարող է փոխակերպվել: Համակարգում էնտրոպիայի աճը դրանում քաոսի, չհամակարգվածության աճի վկայությունն է:

episteme (հուն.) — իմացություն

España, una, grande, libre (իսպ.) — միացյալ, մեծ, ազատ Իսպանիա

essentialismus — Էութենականությունն

extra ecclesiam nulla salus (լատ.) — եկեղեցուց դուրս փրկություն չկա

Feindbild (գերմ.) — թշնամու կերպար

force motrice (ֆր.) — շարժիչ ուժ

Freundbilder (գերմ.) — բարեկամի կերպարներ

fundamentum divisionis (լատ.) — բաժանման հիմք, սկզբունք

fundamentum divisionis (լատ.) — բաժանման, տարանջատման հիմք, սկզբունք

gnothi seauton (հուն.) — ճանաչիր ինքդ քեզ

Herrenvolk (գերմ.) — տեր-ժողովրդի

homo americanus (լատ.) — ամերիկյան մարդ

homo hitlerensis (լատ.) — հիտլերյան մարդ

homo occidentalis in extremis (լատ.) — ծայրահեղ արևմտյան մարդ

homo reaganensis (լատ.) — ռեյգանյան մարդ

homo russicus/sovieticus (լատ.) — ռուսական/խորհրդային մարդ

homo stalinensis (լատ.) — ստալինյան մարդ

homo teutonikus (լատ.) — տևտոնյան մարդ

in medias res (լատ.) — դեպքերի ընթացքի մեջ

ipso facto (լատ.) — այդ փաստի հիմքով

kairos (հուն.) — «ճիշտ կամ պատեհ պահ»: Աստվածաբանության մեջ այն այժմ օգտագործվում է որպես ժամանակի որակական ձև:

kitab (արաբ.) — գիրք. օգտագործվում է նաև Աստվածաշնչի համար

Megalo-Paranoia-Syndrom — մեծամոլության համախտանիշ

Occident in extremis (լատ.) — ծայրահեղ Արևմուտք

panta rhei (հուն.) — ամեն ինչ հոսում է

pax (լատ.) — խաղաղություն

pax omnium cum omnibus (լատ.) — «բոլորի խաղաղությունը բոլորի համար»:

plus ça change, plus c'est la même chose (ֆրանս.) — որքան փոխվում, այնքան նույնն են մնում իրողությունները

primus inter pares (լատ.) — առաջինը հավասարների մեջ

raison d'être (ֆր.) — գոյության հիմք

reductio ad absurdum (լատ.) — հերքում ենթադրության հետևանքների անհեթեթությունը ցույց տալու ճանապարհով

rupture (ֆրանս.) — խզում, խաթարում

Self-righteousness — ինքդ քեզ արդարացի համարելը, անկախ այն բանից՝ ուրիշներն ինչ են ասում կամ մտածում քո/քո արարքների մասին

si vis pacem, para bellum (լատ.) — թե խաղաղություն ես ուզում, պատերազմի պատրաստվիր

sui generis (լատ.) — իր տեսակի, յուրօրինակ

Tabula rasa (լատ.) — մաքուր, չգրված տախտակ

tertium non datur (լատ.) — երրորդը տրված չէ

tertium (լատ) — երրորդ

tout comprendre c'est tout pardonner (ֆր.) — ամենը հասկանալն ամենը ներելն է

ultima ratio regis (լատ.) — արքայի (համոզիչ) վերջին փաստարկ

un peuple élu, mais par lui-même (ֆր.) — ընտրյալ ազգ, բայց իր իսկ կողմից

Vernichtung (գերմ.) — ոչնչացում

Verwüstung (գերմ.) — ամայացում

vox populi, vos dei (լատ.) — ձայն բազմաց, ձայն Աստծո

wie es eigentlich gewesen (գերմ.) — ինչպես է դա իրականում պատահել

առուտիզմ — այլոց հետ հաղորդակցվելու կամ հարաբերություններ հաստատելու՝ անհատի մտավոր անկարողությունը

ամբիվալենտականություն (լատ. ambo- երկուսն էլ, valentis- ուժ ունեցող) — երկդիմի համալիր, երբ միաժամանակ առկա է և՛ մերժելին, և՛ ընդունելին:

Օրինակ՝ խանդի մեջ միաժամանակ միավորվում են սիրո և ատելության զգացմունքները:

դիաքրոն — պատմական հաջորդականության մեջ

էկլեկտիկ — տարբեր տեսությունների, հայեցակարգերի, մեթոդների լավագույն դրույթներն առանձնացող ու համակցող

էստրոգեն — իգական սեռական հորմոն

Սցիլլա և Քարիբդիս — հունական դիցաբանության մեջ ամենահայտնի առասպելներից մեկի հերոսներն են՝ երկու հրեշ, որոնք ապրում էին նեղուցի երկու ափերին և կործանում անցնող նավերն ու ոչնչացնում նավաստիներին

տեստոստերոն — արական սեռական հորմոն

տրամաբանական քառակուսի — «հակադրությունների քառակուսի», ունի դիագրամի ձև և ծառայում է դատողությունների չորս հիմնական տեսակների միջև եղած հարաբերությունները դիտարկելու համար

օնտոգենեզ — անհատի, առանձին օրգանիզմի զարգացումը

ֆիլոգենեզ — տվյալ տեսակի զարգացումը էվոլյուցիայի ընթացքում

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն

ՅՈՀԱՆ ԳԱԼԹՈՒՆԳ

Խմբագիր՝	Ս. Վ. Լալայան
Սրբագրիչ՝	Ս. Կ. Կարապետյան
Էջադրող՝	Պ. Վ. Ամիրջանյան
Վերստուգող՝	Ա. Յու. Գալստյան

Յոհան Գալթունգը՝ խաղաղության ուսումնասիրությունների ժամանակակից դպրոցի հիմնադիրներից մեկը, այսպես է բնութագրում իր այս գիրքը գրելու նպատակը. «Համակարգված ջանքերով ստեղծել խաղաղության հետազոտությունների, խաղաղության ուսուցման և խաղաղարար գործողությունների տեսական հիմքերը»: Գիրքն, ըստ էության, այն գաղափարների, տեսական ու ենթադրական մոտեցումների լայն համայնապատկերն է, որոնց վրա հիմնվում են խաղաղության ուսումնասիրությունները:

Այս մեծածավալ աշխատության հիմքում խաղաղության երկու սահմանումներն են: Դրանցից առաջինը դիտարկում է խաղաղությունը որպես դինամիկ մի երևույթ. «Մի իրադրություն, որի շրջանակներում հակամարտությունը հնարավոր է կարգավորել բռնությունից զերծ և ստեղծագործական եղանակով», իսկ երկրորդը՝ ստատիկ. «Ուղղակի, կառուցվածքային և մշակութային բռնության բացակայություն»:

Գիրքը բաղկացած է չորս մասերից, որոնցից յուրաքանչյուրն անդրադառնում է խաղաղության չորս կարևորագույն տեսական մոտեցումներից մեկին:

1. Խաղաղության տեսություն, որի հետազոտության առարկա են հանդիսանում խաղաղության ուսումնասիրությունների իմացաբանական ենթադրությունները, ինչպես նաև բռնության էությունը և խաղաղության հասնելու երեք մասնավոր մոտեցումները. միջսեռային հարաբերությունների փոփոխում, ժողովրդավարացում և համաշխարհային առավել կատարյալ համակարգի ձևավորում:

2. Հակամարտության տեսություն, որն առանձին մանրամասնություններով անդրադառնում է հակամարտությունների ոչ բռնի և ստեղծագործական կարգավորմանը: Շեշտն այստեղ դրվում է հակամարտության մշակույթի վրա՝ ինչպես կարող է ընկալվել հակամարտությունն առավել խորքային մակարդակներում:

3. Զարգացման տեսություն, որը հետազոտում է կառուցվածքային բռնությունը հատկապես տնտեսության ոլորտում և այն հաղթահարելու ուղիները:

4. Քաղաքակրթության տեսություն, որը ներառում է մշակութային բռնության հետազոտությունը և սևեռվում մշակույթի՝ հավաքական ենթագիտակցության մեջ առավել խորքային խնդիրների (տիեզերաբանություն, կողեր, ծրագրեր) և խաղաղության ու զարգացման քաղաքականության նկատմամբ դրանց ազդեցության վրա:

Եվ վերջապես եզրակացություններ բաժնում Յոհան Գալթունգն ի մի է բերում այս մոտեցումների շղթան՝ կենտրոնանալով խաղաղ միջոցներով խաղաղարար գործողությունների վրա:

Այս հեղինակավոր և ինքնատիպ աշխատությունը, որպես հիմնական գրականություն, նախատեսված է խաղաղության, միջազգային հարաբերությունների, սոցիոլոգիայի, հոգեբանության, տնտեսագիտության և մշակույթի ասպարեզների ուսանողների, ինչպես նաև հակամարտությունների կարգավորման և խաղաղարար գործընթացներում ընդգրկված անձանց համար:

Յոհան Գալթունգը Հավայան (University of Hawaii), Վիթեն/Հերդեքի (Witten/Herdecke University) և Թրոմսոյի (Tromsø University) համալսարանների «Խաղաղության ուսումնասիրություններ» առարկայի դասախոս է: Նա 1959 թվականին Օսլոյում հիմնադրեց Խաղաղության հետազոտությունների միջազգային ինստիտուտը (International Peace Research Institute), իսկ 1964-ին՝ «Խաղաղության հետազոտությունների հանդեսը» (Journal of Peace Research): Նա հեղինակ է շուրջ 50 գրքերի, այդ թվում՝ «Հասարակական հետազոտությունների տեսությունն ու մեթոդները» (Theory and Methods of Social Research, 1967), «Ակնարկներ խաղաղության հետազոտությունների ոլորտում» (Essays in Peace Research, 6 vols, 1975-1988), «Ակնարկներ մեթոդաբանության շուրջ» (Essays in Methodology, 1977-88), «Մարդու իրավունքներն այլ տեսանկյունից» (Human Rights in Another Key, 1994) և «Ընտրիր խաղաղությունը» (Choose Peace, 1995):

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Եվրոպական Միության օժանդակությամբ

Երևան - 2005